Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. Հ. Գուարչ

«ՍՊԻՏԱԿ ԼԵՌԸ»

Ամալյային՝ կնոջս, ընկերուհուս, բարեկամուհուս

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 821.134.2-31 Գուարչ
ԳՄԴ 84(4 Իսպ)-44
Գ 940

Թարգմանիչ՝ Մերի Սուքիասյան
Խմբագիր-սրբագրիչ՝ Գեղամ Մելիքբեկյան

Գ. Հ. Գուարչ
Գ 940 ՍՊԻՏԱԿ ԼԵՌԸ/Գ. Գուարչ. -Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 596 էջ:

Հեղինակի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված առաջին և երկրորդ վեպերում՝ «Հայկական տոհմածառ»-ում և «Հայոց կտակ»-ում, նկարագրվում էր 1885-1920 թթ. հայ ժողովրդի պատմության եղերական շրջանն իր պատմական բնօրրանում: Ինչ վերաբերում է եռագրության երրորդ՝ «Սպիտակ լեռը» վեպին, ապա այն թեև ներկայացնում է Լիբանանի Հանրապետության անկախության հռչակման պատմությունը (1909–1935 թթ.), այդուհանդերձ ընթերցողի առջև բացում է մի բարդ ու անծանոթ աշխարհ՝ իր քաղաքական դավերով և Օսմանյան կայսրության քայքայման շրջանում ստեղծված իրադրությամբ, որտեղ մեծ տեղ են գտել նաև երիտթուրքերի կողմից իրագործված Հայոց եղեռնը, Կիլիկիայում հայերի զանգվածային կոտորածներն ու հայ բնակչության տեղահանությունը, Իսրայել պետության ստեղծումը և արաբական աշխարհում տիրող իրավիճակը:

«Սպիտակ լեռը» սրտառուչ և հրաշալի փաստագրական վեպ է, որում արտացոլված են հեղինակի՝ Գ. Գուարչի ջերմ կարեկցանքն ու վերաբերմունքը հայ ժողովրդի ու նրա մշակույթի նկատմամբ: Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 821.134.2-31 Գուարչ
ԳՄԴ 84(4 Իսպ)-44

ISBN 978-5-8084-1969-8

© ԵՊՀ հրատ., 2015
© Գուարչ Գ. Հ., 2015

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

«Լիբանան» բառը ծագում է քանանյան «Լուբնան» տերմինից, որը հազարամյակների ընթացքում փոխակերպվել և արաբականացվել է՝ դառնալով «Ջեբալ ալ-Լուբնան», ինչը նշանակում է «Սպիտակ լեռ»՝ նկատի ունենալով բարձր լեռները, որոնք տարվա մեծ մասը ծածկված են ձյունով և նշմարվում են երկրի գրեթե բոլոր ծայրերից:

«Լիբանանը» հիշատակվել է դեռևս շումերական և ասորաբաբելոնյան արձանագրություններում: Ինքը՝ Սնեֆրու փարավոնը՝ IV դինաստիայի հիմնադիրը, Քրիստոսից քսանվեց դար առաջ պատմում է Լիբանանի վրա կատարած իր հերոսական արշավանքի մասին. նպատակն այնտեղից մայրու թանկարժեք գերաններ բերելն էր: Մեր թվարկությունից երկու հազարամյակ առաջ գրված «Գիլգամեշ» դյուցազներգությունում հիշատակվում է նրա հերոսների՝ «Լիբանանի մայրու սաղարթախիտ անտառներ» կատարած ճամփորդության մասին: Աստվածաշնչում նշվում է, որ «Դաշինքի տապանը» կառուցվել է Լիբանանի մայրուց: «Երգ երգոց»-ում էլ ասվում է, որ Սողոմոն արքան իր համար գահ պատրաստեց Լիբանանի մայրուց, նա իր սիրած կնոջը կանչում է, որ գա այդ երկրից, և նրա գովքն է անում, քանզի նրա բույրը նույնն է, ինչ Լիբանանինը:

Լիբանան երկիրը հիշատակվում է դեռևս մարդկության հնագույն առասպելներում ու թերևս նրա ապագան շատ կարևոր է լինելու աշխարհի պատմության մեջ: Այնտեղ է ծնունդ առել գրավոր խոսքը, ու այնտեղ են գրի առնվել մարդկային ցեղի սխրագործությունները՝ մեզ տանելով այլ՝ ավելի բարեկեցիկ աշխարհ:

Սա մի պատմություն է XX դարի սկզբի բուռն տարիների մասին, երբ այդ հինավուրց ու սքանչելի երկիրը դարձավ Լիբանանի Հանրապետություն՝ «Ալ-Ջումհուրիա ալ-Լուբնանիա»: Այս վեպը մի մտերմիկ պատմություն է նրանում գործող մի քանի անձանց մասին, ովքեր ապրեցին Սպիտակ լեռան շուքի ու պաշտպանության ներքո:

Հեղինակ

Ի-ԻՆ ՄԱՍ

ԼԵՎԱՆՏԻ ԵՐԿԻՐԸ

Եկ Լիբանանից, ո՞վ հարս,
այսրե՛ղ եկ Լիբանանից.
արի՛, անցի՛ր Հաւապրքի գագաթից,
Սանիրի եւ Հերմոնի կատարներից,
առիւծների որջերից եւ ինձերի լեռներից:
Կարօտով լցրիր մեր սիրտը,
ո՞վ մեր քոյր հարս,
քո մի հայեացքով,
քո պարանոցի մի մանեակով
կարօտով լցրիր սիրտը մեր:

«Երգ երգոց»
Երրորդ գլխից

1. ԼԻԱԿԱՏԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1909թ.

1909 թվականի սեպտեմբերին Սաութամփթոնից դուրս եկած նավը Թոմաս Հարդինգին հասցրեց Բեյրութ. ուղևորություն, որը տևել էր գրեթե երեք ամիս, քանի որ նավը մի քանի շաբաթ կանգ էր առել Լիմասոլում: Միջերկրական ծովի հայտնությունը մեծ անակնկալ էր Թոմասի համար: Օրագրում նա ոգևորված գրեց, որ կյանքի մնացած մասը կանցկացներ Կիպրոսում, եթե առաջիկայում չստանձնի որևէ դժվարին աշխատանք:

Նոր էր լրացել նրա քսանհինը տարին, բայց նա Օքսֆորդի համալսարանում արդեն դարձել էր հնագույն արվեստի պատմության և հնագիտության պրոֆեսոր-ընթերակա, ինչի համար ինքը շատ հպարտ էր: Այդ՝ պրոֆեսոր-ընթերակա լինելու վերաբերյալ նա, անշուշտ, իր տեսակետն ուներ. համոզված էր, որ մի օր հանրաճանաչ կդառնա (ահա թե ինչու էր ժամանել Բեյրութ): Նրա երազանքների գագաթնակետն Արևելքի ափերին հասնելն էր: Նա չէր ուզում ողջ կյանքը դասավանդել ցուրտ ու մռայլ Անգլիայում: Ցանկանում էր մի օր իր սաներին պատմել, որ պատմության ողջ ընթացքում անթիվ մարդկանց հրապուրած արտասովոր Արևելքում՝ Լիբանանում, Պաղեստինում և Սիրիայում, իր ձեռքերով հպվել է հունահռոմեական կախարդական աշխարհի տաք ու ոսկեգույն քարերին:

Այդ պահը թերևս հատկանշական կլիներ գունատ և նիհարավուն երիտասարդի համար, ով ձգտում էր հետևել իր հորն ու պապին՝ Հարդինգներին, ովքեր, ժամանակին Կոստանդնուպոլսում, Կահիրեում դիվանագիտական մեծ պաշտոնների հասնելով և մոտիկից շփվելով դասական պատմության հետ, հնագույն մնացորդների ու Մերձավոր Արևելքի հանդեպ մեծ հետաքրքրություն էին հարուցել իրենց մերձավորների շրջանում:

Թոմասին այդ ժամանակ ամենևին չէր հուզում քաղաքականությունը: Նա իսկապես շատ ներփակ անձնավորություն էր, գերադասում էր խորհրդածել, քան խոսել: Այդուհանդերձ, նրան ճանաչողների կարծիքով՝ նա առանձնահատուկ էր ոչ միայն ազնվականին հատուկ իր կեցվածքով, այլև այնպիսի գրավչությամբ, որով անմիջապես շահում էր դիմացինի վստահությունը:

Նա սիրում էր ամեն ինչից տեղյակ լինել: Նրա երկչոտությունը ոչ մի աղերս չուներ վախի հետ: Մերձավոր Արևելքում տիրող իրադրության մասին Կիպրոսի միակ օրաթերթի լուրերը միմիայն անկարևոր բաներ

էին հայտնում, մինչդեռ նա փորձում էր ամեն կերպ պարզել, թե արդյոք իր առջև խնդիրներ կծագեն, երբ Սիրիայում իրականացներ իր ծրագիրն ու հասներ անգամ Միջագետք: Այդ ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունը «իմաստուն անգլիացիների» առջև մեծ արգելքներ չէր հարուցում Հալեպից մինչև Աքաբայի ծոց, ինչպես նաև Բեյրութից Բաղդադ գնալ-գալու հարցում: Չափազանց ընդարձակ, գրեթե դատարկ մի տարածք էր՝ անծանոթ ու վայրի անապատ, որտեղ սակավաթիվ եվրոպացիներ միայն տասնիններորդ դարի վերջերին համարձակվեցին ոտք դնել: Այդուհանդերձ, ոչ ոք չէր կարող ժխտել, որ ամեն բան արագ փոխվում էր: Ինքը՝ սուլթանը, Դոլմաբաղչե պալատում՝ Բարձր դռան առջև, դեսպաններին տրվող տարեվերջյան ընդունելությունում հայտարարել էր, որ Թուրքիան հպարտ է իր փառավոր անցյալով և գրկաբաց է նրանց հանդեպ, ովքեր ցանկացած վայրից կգային իրենց պատմությունն ուսումնասիրելու և իրենցից սովորելու՝ իհարկե խաղաղությամբ ու բարի կամքով: Իրականում դրանք օսմանյան ճշմարիտ զգացմունքներ չէին, սակայն ցանկանում էին ցույց տալ, որ իրենք էլ են բարձր գնահատում այն ողջ մշակույթը, որի ստեղծման գործում գուցե մասնակից չէին, բայց՝ ոչ էլ օտար, քանի որ ի վերջո յուրացրել էին այն:

Թոմաս Հարդինգն իր հետ տարել էր մի քանի հանձնարարական նամակներ Արտգործնախարարությունից, իր համալսարանից, Աշխարհագետների արքունական ընկերությունից և այլ հաստատություններից, ինչպես նաև հատուկ վիզայով դիվանագիտական մի անձնագիր, որը նրան լիազորում էր որպես Միացյալ Թագավորության մշակութային գործակալ Կոստանդնուպոլսում, երկու վավերացված այլ նամակներ, որոնց օգնությամբ նա տնօրինելու էր գիտահետազոտական իր ուսումնասիրությունների համար հատկացված անհրաժեշտ գումարը: Ուներ նաև Օքսֆորդի համալսարանի կողմից վավերացված վկայագիր՝ որպես պատմության պրոֆեսոր, Երուսաղեմում օսման կառավարչի կողմից տրված վիզա և մի շարք այլ փաստաթղթեր, որոնք նրա առջև հարկ եղած դեպքում ամենուրեք բացելու էին բոլոր դռները:

Ոչ ոքի թույլ չէր տվել, որ իրեն խորհուրդ տային հագուստների ընտրության գործում, քանի որ մտադիր էր աշխատանքային ուղևորության ընթացքում ոչ թե որպես լորդ հանդես գալ, այլ պրոֆեսոր, ում բաղձանքն իրեն սպասող հրաշալիքները մոտիկից ուսումնասիրելն էր՝ փորձելով հասնել իր երազանքների իրականացմանը: Չնայած դրան՝ նրա մորեղբայր Չարլզը պնդեց, որ հետը տանի իր նվերները՝ մի ատրճանակ և «Էնֆիելդ» կարաբինը, որով կրակելու առիթ դեռ չէր ունեցել և սրտի խորքում ցանկանում էր երբեք էլ չունենալ:

Թոմասին ուղեկցում էին պարոն Սթենսոնը՝ ընտանիքի վաղեմի ծանոթ, կոպիտ մի մարդ՝ անտաշ արտաքինով, բրիտանական բանակի զորացրված սերժանտ, ով գրեթե ողջ կյանքում ծառայել էր ընդհարումներով լի Հնդկաստանի հյուսիսում, և իր անձնական օգնական Ջեյմս Բաքերը, ով միաժամանակ և՛ սպասավոր էր, և՛ վստահելի մարդ՝ պատրաստ ամեն ինչի: Թոմասը որբացել էր տակավին տասնհինգ տարեկանում, երբ խորտակվեց այն շոգենավը, որով Միացյալ Նահանգներ կատարած ուղևորությունից վերադառնում էին նրա ծնողները: Այդ ժամանակվանից սկսած Չարլզ Ջերոմը՝ նրա մոր խորթ եղբայրը, մինչև տղայի չափահաս դառնալը ստանձնել էր նրա խնամակալի և բոլոր հարցերում խորհրդատուի պարտականությունը: Նա կիրթ և պատվախնդիր մարդ էր, ով հանուն տղայի միշտ էլ արել էր այն ամենը, ինչ կարող էր: Թոմասը նրա նկատմամբ լցված էր մեծ սիրով ու երախտագիտությամբ:

Անգլիայից դուրս գալուց առաջ Թոմասը որոշեց օրագիր պահել: Սկզբում դրանք հակիրճ, ահա այսպիսի գրառումներ էին. «14 սեպտեմբերի, 1909թ.: Նավարկել եմ հունական «Մերսին» շոգենավով, 12 ժամ է տևել Լիմասոլից մինչև Բեյրութ, հասանք լուսաբացին, լավ եղանակ էր, թեև ափից տասը մղոն հեռավորության վրա բարձրացավ տաք քամի՝ իր հետ մեծ քանակությամբ փոշի բերելով: Ես շատ գոհ եմ, որ ինձ հաջողվեց հասնել իմ երթուղու առաջին կայանին»:

Շարադրանքի տպավորությունն այնպիսին էր, որ արվեստի պատմության երիտասարդ պրոֆեսորը հազիվ թե աչքի ընկներ գրականության ասպարեզում: Այդ ժամանակ նա կարծում էր, թե վեց ամիս անց (ինքն էր իրեն տվել այդ առավելագույն ժամանակը), հայտնաբերելով մինչ այդ անհայտ որևէ կարևոր ավերակ, հաղթանակած կվերադառնա Լոնդոն. թեև ոչ շատ լավատեսական պահերին խորհում էր, որ ոչ ոք ի զորու չէ իմանալու, թե ինչ կկատարվի այնպիսի խառնաշփոթ աշխարհում, որում ինքն է ապրում:

Մինչ շոգենավը մտնում էր նավահանգիստ, նա դուրս եկավ նավեզր և տեսավ մի թիակամակույկ, որով գալիս էր նավապետը՝ հագին եվրոպական ոճի կոստյում՝ թեև մաշված ու վատ կարված, գլխին՝ հովարավոր տափակ գլխարկ, բայց, ինչ-որ ճիշտ է, անթերի սպիտակ մահուդից: Մարդը բարձրացավ պարաններով սանդուղքի փայտյա աստիճաններով՝ մագլցելով անհավատալի արագությամբ: Երբ նրանց հայացքները զուգադիպեցին, նավապետը, ի նշան հարգանքի, ձեռքը տարավ դեպի հովարը: Թոմասը մտածեց, որ սև աչքերի տակ մուգ փոսերով և արևից ու քամուց կոփված դեմքով այդ մարդը հույն է կամ թուրք: Նավն անմի-

ջապես սկսեց ափին մոտենալ, և քսան րոպե անց, չնայած ցամաքից փչող սաստիկ քամուն, որ փոշու ամպեր էր բարձրացնում և Թոմասի աչքերը լցնում արտասուքով, «Մերսինը» Բեյրութի նավահանգստում (մեկնելու և վերադառնալու մի այնպիսի կայանում, որ ինքնին մի փոքրիկ քաղաք էր՝ պարուրված ծովի, ժանգի, ներկի, խեժի յուրահատուկ բույրով, որը տարածվում էր ողջ տեղանքով) կանգ առավ տարատեսակ տասնյակ այլ նավերի՝ առևտրական շոգենավերի, մարդատար մոտորային հին նավակների (որոնցից մի քանիսը՝ անգլիական կամ ֆրանսիական դրոշով), երկու կամ երեք կայմով առագաստանավերի կողքին: Միջերկրականի կուրացուցիչ արևով ողողված այդ համայնապատկերում փոքրկուն քամուց ճռճռում էին կայմասյուները, և բախվում նավերի առաջամասերի կողերը: Նավամատույցի ներքևում կային մի խումբ մարդիկ՝ նավահանգստի սպաներ, բեռնաթափողներ, թավաբեղ մի մարդ՝ ճմռթված սպիտակ խալաթը հագին, ով հավանաբար սանիտարական բժիշկն էր, և ծնկները ծալած նստած չալմայավոր մի քանի արաբներ՝ սպասելով իրենց աշխատանքին. բոլորը՝ մթագնած դեմքերով, սուր դիմագծերով և անհաղորդ արտաքինով: Քիչ այն կողմ Թոմասը նկատեց, որ մտնում ու դուրս էին գալիս անխղճորեն բեռնված ջորիներ և ուղտերի՝ խայտաբղետ բեռներ կրող մի քարավան, որ մոտենում էր կիսակառույց և փոշոտ կայանին: Թոմասը ոգևորված մտածեց, որ հենց դա է Արևելքը. ճիշտ այնպես, ինչպես ինքն էր պատկերացրել: Նա շատ զղջաց, որ լուսանկարչական սարքը թողել է ճամպրուկում, թեև չէր ցանկանա առանց այդ էլ իր սուղ և արժեքավոր կադրերը փչացնել դատարկ բաների վրա: Նա որոշ չափով տիրապետում էր նաև ջրանկարի արվեստին, և այդ տարաշխարհիկ միջավայրը նրան ասես մղում էր որևէ ջրանկար վրձնելուն. մի գործ, որը ժամանակ էր պահանջում, մինչդեռ նա այդ պահին պետք է զբաղվեր առաջնահերթ խնդիրներով:

«Մերսինի» կապիտանը՝ ոմն Քրիստափոր Կավաֆիս՝ զմյուռնիացի մի հույն, ինչպես ինքն էր անթաքույց հպարտությամբ իր մասին ասել, երբ նավ բարձրանալիս ողջունել էր Թոմասին, մոտեցավ՝ հրաժեշտ տալու:

- Պարո՛ն Հարդինգ, Դուք արդեն հասել եք Արևելք, ինչպես որ ցանկանում էիք: Եթե գնաք Դամասկոս, շատ զգո՛ւյշ եղեք: Այդ արաբները մանավանդ երկրի խորքում երբեմն անկանխատեսելի են,- ասաց Կավաֆիսը՝ վեր ցցելով ծնոտը և ցույց տալով նրանց, ովքեր սպասում էին նավամատույցին,- Ձեզ դա ասում եմ իմ փորձից: Ոչ ոք չի իմանում, թե որտեղից կհայտնվեն: Դե՛ լավ, մնաք բարով, և Ձեզ համար թող ամեն

ինչ բարեհաջող լինի: Հա՛, իսկապես, մի ազգական ունեմ Հալեպում, հորս զարմիկն է՝ Արիստոտել Ստամոուրոս, իմ հիշելով զբաղվում է հնությունների արտահանմամբ, և քանի որ Դուք աշխատանքի բերմամբ հետաքրքրվում եք հնություններով, ես էլ Ձեզ ասում եմ: Լա՛վ, ամեն դեպքում՝ Ձեզ հաջողություն, մնա՛ք բարով:

Կապիտան Կավաֆիսը թեթևորեն իջավ աստիճաններով և վաղեմի բարեկամի պես ողջունեց սանիտարական աշխատողներին:

Թոմաս Հարդինգը շրջվեց ու տեսավ, որ Բաքերն ու պարոն Սթենսոնը վիճաբանում են մի քանի արաբների հետ, ովքեր նավաքթի կողմից մագլցել էին շոգենավ՝ տեր կանգնելու հսկա ուղեբեռի հետ կապված իրենց աշխատանքին:

- Պարո՛ն Սթենսոն, հենց որ ավարտենք մաքսատան ձևակերպումները, խնդրում եմ, ուղեբեռը տարե՛ք «Էքսելսիոր» հյուրանոց: Ինձ դա են խորհուրդ տվել: Կարծում եմ, որ առայժմ մի քանի օր կմնանք այնտեղ, մինչև որ կարողանանք ուղևորվել Դամասկոս:

Թոմասը հաճելիորեն զարմացավ՝ համոզվելով, որ այդ թվացյալ անկարգությունը չէր խանգարում, որ ամեն հարց սահուն լուծում ստանար: Մեկ ժամ անց՝ մաքսատան և ոստիկանության հետ ձևակերպումներն ավարտելուց հետո նկատելով, որ քամին մեղմացել է, առափնյա ճեմուղիով, որ իրականում ծովափին կարծրացրած հողե ճանապարհ էր, ցույց տված ուղղությամբ քայլեց դեպի հյուրանոց: Սթենսոնն ու Բաքերը կկազմակերպեին ուղեբեռի տեղափոխումը, իսկ այդ պահին ինքը ցանկանում էր մենակ մնալ՝ խորհելու իր անցած ճանապարհի ու Անգլիայից այնքան տարբեր այդ վայրում հայտնվելու մասին, սակայն շրջիկ վաճառողները նետվում էին նրա վրա՝ առաջարկելով ամեն տեսակի դատարկ բաներ՝ յուղոտ քաղցրավենիք, մեղրով կոնֆետներ կամ տապակած ձուկ: Մի քանիսն էլ հանդգնաբար միայն նայում էին՝ ասես նրան որևէ բան ծախելու կամ հետը սակարկելու հնարավորությունները ծանրութեթև անելով կամ պարզապես նրա հետևից այս ու այն կողմ գնալու համար: Նրա վճռական քայլվածքը և թվացյալ անտարբերությունը վկայում էին, որ այդ անգլիացին (անհնարին էր թաքցնել նրա ազգությունը) շատ լավ էլ գիտեր, թե ուր է գնում:

Թոմասն անում էր միայն այն, ինչ նրան խորհուրդ էին տվել: Հենց մաքսատանն էլ նրան զգուշացրին. «Պարո՛ն, ցո՛ւյց տվեք, իբրև թե Ձեզ ոչինչ չի հուզում, Ձեր գործին կացե՛ք, այդպես ավելի լավ է»: Մաքսատնից քիչ հեռու մի պահ կանգ առավ՝ հետաքրքրությամբ դիտելու մի խումբ երեխաների, ովքեր ժայռերից ջուրն էին նետվում, արևն էլ արձա-

կում էր շողշողուն ճառագայթներ՝ դիպչելով նրանց մերկ մարմիններին: Բոլորն ուրախությունից ճչում էին, ու Թոմասն այդ պահին խորհեց, որ թերևս հենց դա էր ամենամոտ երջանկությունը, որին մարդ արարածը կարող է հասնել: Երեխաներ էին՝ մի քանիսը հազիվ պատանյակ, ավելի մեծերը՝ հազիվ տասնչորս կամ տասնհինգ տարեկան, կյանքի հանդեպ անհոգ, իրենց տարիքին հատուկ անմեղությամբ: Այլ ժամանակներ էին, բայց՝ նույն արևը, նույն ծովը, նույն երիտասարդությունը, նույն անմեղությունը... Դա է, որ այնքան հետաքրքրական է դարձնում արվեստի գործերը. գեղեցիկի փնտրտուքը, ժամանակի հանդեպ հաղթանակ տանելու զգացողությունը, այն խորհրդածությունը, թե այդ պահերն ինչպես գրանցել քարի վրա, վերածել որմնանկարների, թե ինչով են դրանք դառնում հավերժ... Թոմաս Հարդինգը զսպեց հառաչանքը: Նա՝ թեև որպես զուտ հետազոտող, նույնպես երջանիկ էր, որ մասնիկն էր այդ շրջակայքի, շողացող այդ արևի, որն այնքան խուսափուն էր դուրս գալիս Անգլիայում: Տարբերությունը հանկարծահասի և կանխամտածվածի միջև... Արևելք ու Արևմուտք... Հետո, լուսատուների գեղեցկությամբ ցնցված, որոնք շողշողուն փրփուրով ողողել էին շրջակայքը, շարունակեց իրենից անկախ քայլել՝ մերթընդմերթ շրջվելով ու նախանձով լցված: Նա երբեք չէր պատկերացրել այդպիսի բացարձակ ազատություն:

Հյուրանոցը գտավ առանց դժվարության, նաև հաճելի անակնկալ ունեցավ: «Էքսելսիորը» ծովուղու անկյունում մի փոքրիկ պանսիոն[1] հիշեցնող, արտաքնապես երկու կամ երեք դարի վաղեմությամբ քարե փոքրիկ շինություն էր՝ կրով սպիտակեցված, իսկ տեղ-տեղ՝ կապույտ: Մաքսատան ծառայողները շինությանը փքուն անուն էին կպցրել՝ «Լա Կոռնիշ»: Շենքի ճակատի կողմից խաղողի մի փարթամ որթ էր բարձրացել դեպի երկաթակուռ վանդակապատ պատշգամբները, ու Թոմասը մտածեց, որ այնտեղից կհիանա նավահանգստի և ծովափի ցնցող տեսարանով: Կփորձի լուսանկարում ցույց տալ այդ ապշեցուցիչ լույսը, գույնե և ուրվագծի մի երկու ջրաներկ պատկերներ, որոնք իր ուղևորության հաշվետվության մասն էին կազմելու:

Մի մարդ՝ ճաղատ, հազիվ հինգ ու կես ոտնաչափ հասակով, ով, ինչպես պարզվեց, սեփականատերն էր, դուրս եկավ այդ շենքից՝ լայն ժպտալով ու ցուցադրելով իր հսկա փորը: Մոտեցավ Թոմասին ու ձեռքն այնպես սեղմեց, ասես իր հեռավոր բարեկամն էր, ում շատ ժամանակ անց կրկին տեսնում էր: Ակամայից հիշեց Օքսֆորդի՝ փիլիսոփայու-

[1] Արտասահմանյան երկրներում և մինչհեղափոխական Ռուսաստանում՝ փակ ուսումնադաստիարակչական հաստատություն:

թյան իր ծեր պրոֆեսորին՝ պարոն Հոմփքոնին, ով այդ մասին նրան զգուշացրել էր. «Թոմա՛ս, այնտեղ՝ Արևելքում, Դուք կհամոզվեք, որ «Ողիսականն» ու «Էնեյդան» անվախճան են: Հոմերոսն ինչ-որ ժամանակ վայր դրեց գրիչը, բայց եթե Դուք բացեք Ձեր աչքերը և ի վիճակի լինեք տեսնելու իրականությունը, կհանդիպեք Պենելոպեին, Ուլիսին և մյուս հերոսներին: Ամենևին չկասկածեք: Դեռ այնտեղ են՝ կյանքի նույն վտանգավոր փորձությունում, քանզի ճշմարիտն այն է, որ պատմությունը երբեք չի վերջանում: Դա մեզ է պետք, որ այն բաժանենք գլուխների, որպեսզի ըմբռնենք, սակայն դույզն-ինչ չկասկածեք, Արիադնեի առաջնորդող իսկական թելը դեռ այնտեղ է. Ձեզ մնում է միայն փնտրել այն ու գնալ հետևից: Այն Ձեզ կուղեկցի Ձեր բաղձալի վայրը, և հավատացե՛ք, հուսախաբ չեք լինի: Այդ թելն իրական է՝ լուսեղեն ու թրթռուն, և սպասում է այն մարդուն, ով ունակ կլինի գտնելու իրեն: Թոմա՛ս, Դուք պետք է գնաք այնտեղ և դա անեք իմ փոխարեն... Ես այլևս ի վիճակի չեմ, սակայն Ձեզ պես երիտասարդ և ուժեղ մեկը... Գնացե՛ք: Երբեք թո՛ւյլ չտաք, որ Ձեր կյանքում իշխի առօրեականությունը: Որքան եմ ես զղջում, որ կյանքումս ավելի վճռական չեմ եղել... Ամեն ինչ այնքան արագ է անցնում: Հիշե՛ք, թե ես Ձեզ ինչ ասացի դասին. «Carpe diem» («Օգտվե՛ք յուրաքանչյուր պահից»): Այն երբեք հետ չի գա: Օ՜հ, ասեմ Ձեզ, որ չեմ զգացել, թե ինչպես է կյանքս անցել, գնացել: Շատ ցավալի է. ինչքան բան կարող էի անել: Միայն պատկերացրի, սակայն դրանք իրականացնելու ի վիճակի չեղա»:

Թոմասն իրենից վանեց այդ հիշողությունները, որոնք երազի պես էին, մինչդեռ իր ուզածն իրականությանն առնչվելն էր: Սակայն, չգիտես ինչու, համոզված էր, որ հազիվ թե դա որևէ մեկին հաջողվեր: Կյանքն ինչ-որ պատրանքի հետևից գնացող երկար ու բարակ մտորումների մի շարան է, որն ավարտվում է երազում: Նա սիրում էր զուտ իրականը...

Հաստավոր մարդը Թոմասին զննում էր ժպտադեմ, նրա ոսկյա ատամնաշարը շողշողում էր կիսաճերմակ թավ բեղի տակ: Փայլայուղով ներծծված մազերը հետ էին սանրված՝ հետևելով մարսելցի և իտալացի այն բարեկազմ սպաների նորաձևությանը, ովքեր ամեն օր նավերով հասնում էին Բեյրութ: Մինչ Թոմասին ուղղահայաց աստիճանով ուղեկցում էր իր սենյակը, որը բացվում էր խաղողի որթով ծածկված բակի վրա, ծանր էր շնչում: Հետո, երբ բացեց դուռը, և միջանցքը ողողվեց լույսով, Թոմասը հասկացավ, որ իր համար հեշտ չէր լինի այդտեղից հեռանալը: Սենյակն առավել քան լուսավոր էր՝ ներկված կապույտին մոտ սպիտակ գույնով, ուներ բաց պատշգամբ, որը նայում էր երկար ծովածոցին, ծովեզերքին, որին հազիվ էր բախվում ծովը, հեռավոր ար-

մավենուտին՝ երիզված երկնագույն թովիչ կապույտով:

- Ի՞նչ կարծիքի եք: Այսինքն՝ Ձեզ դո՞ւր է գալիս այս սենյակը,- հարցրեց հյուրանոցատերը՝ համոզված լինելով, թե իր հյուրերի վրա ինչ տպավորություն էր թողնում սենյակը, և հպարտությունից ինքն իր մեջ փքվելով՝ շարունակեց,- այս սենյակը զբաղեցրել են բազմաթիվ մարդիկ, սակայն՝ շատ կարևոր՝ սկսած քրիստոնյա պատրիարքից մինչև եվրոպացի դիվանագետներ: Եթե սա Ձեզ դուր է եկել, հետո Ձեզ ցույց կտամ, թե ինչ ունեմ նկուղի տակ. բնական մի քարանձավ՝ ապառաժի վրա փորագրություններով: Ուզում եմ ասել, որ այս վայրը շատ վաղուց՝ հնուց ի վեր բնակեցված է եղել... Ձեզ դուր կգա: Իսկ հիմա ասացե՛ք ինձ, ուզո՞ւմ եք, որ Ձեզ համար ճաշելու կամ ընթրելու մի բան պատրաստենք: Ամեն ինչ թարմ է և բնական, ձուկը՝ մի քանի ժամվա, կանաչեղենը՝ մեր բանջարանոցից, համեմունքները՝ տնական:

Թոմասն աշխատում էր ցույց չտալ, որ ոգևորված է: Միայն այն, որ ինքն այդ անսպասելի գեղեցիկ վայրում կարող է որոշ ժամանակ անցկացնել, սիրտը լցնում էր բերկրանքով: Սկզբում նա մտադրվել էր դուրս գալ մի հանդարտ ուղևորության՝ տեղ-տեղ կանգ առնելով, օգտվելով ամեն ինչից, միջավայրից, ուսումնասիրելով տեղի բնակչությանը բնորոշ առանձնահատկությունները, բավականաչափ կատարելագործելով արաբերենի իր իմացությունը, որով այնքան հպարտ էր: Հենց այդ պահին էլ որոշեց ամենաքիչը մի երկու շաբաթ մնալ այդ վայրում: Գուցե և՝ մի փոքր ավելին:

Քիչ անց Սթենսոնն ու Ջեյմս Բաքերը եկան չորս արաբների ուղեկցությամբ, ովքեր ավանակին լծված սայլով բերում էին ուղեբեռը՝ փոքր ու մեծ ճամպրուկներ, արկղեր, անգամ վրանի երկար պատյաններ և տեղագրական սարքեր: Նրանց հետևում էին մեծ թվով հետաքրքրասեր երեխաներ, ովքեր շարունակ աղմկում էին, քանի որ անգլիացու ներկայությունը նորություն էր:

Ժոզեֆ Տանուկին՝ հյուրանոցի տերը, բարձրացնել տվեց ուղեբեռը և նրանց սենյակներ հատկացրեց: Հաստատությունն ուներ ընդամենը տասներկու համար: Սթենսոնը, դեմքին գոռոզ քմծիծաղով, զննում էր սենյակը, այնինչ Բաքերին մտահոգում էր ճամպրուկները բացելու և իր տիրոջ իրերը դասավորելու խնդիրը:

- Որքա՞ն ժամանակ ենք մնալու Բեյրութում, պարո՛ն Հարդինգ,- հարցրեց Բաքերը:

- Հ՜մմ... Տասնհինգ օրից ոչ պակաս, գուցե և՝ ավելին,- պատասխանեց Թոմասը՝ թեև ոչ լիովին համոզված: Իրականում նա արդեն մտածում էր, որ երկար մնա այդտեղ: Այդ փոքր քաղաքն ընդհանուր ոչինչ

չուներ եվրոպական ոչ մի մայրաքաղաքի հետ, և Թոմասի ներսում գնալով գլուխ էր բարձրացնում տարօրինակ այն զգացումը, որ նա ասես ոչ թե ժամեր առաջ էր եկել Բեյրութ, այլ բավականին վաղուց:

- Իրոք չգիտեմ, թե որքան ենք մնալու այստեղ, Ջե՛յմս: Սակայն կարող եմ Ձեզ վստահաբար ասել, որ այս պահին այստեղից շարժվելու ոչ մի ցանկություն չունեմ:

Բաքերը ժպտալով հավանության նշան արեց.

- Հասկանում եմ, պարո՛ն: Իսկապես սա շատ յուրատեսակ վայր է և, ինչ խոսք, Անգլիայից շատ տարբեր: Լոնդոնին առհասարակ նման չէ: Նայե՞լ եք այս լույսին:

Թոմասը համաձայնեց. Լոնդոնն ընկղմված էր մշուշում ու ածխամոխրով լի կպչուն ծխում, որն ամեն ինչ աղտոտում էր: Այնտեղ մարդիկ քայլում էին արագ և լուռ: Բեյրութն այդ առավոտյան թերևս նրան թվում էր երկրագնդի ամենալուսաշող վայրը:

Տանուկին, ով հազիվ թե այլ հյուրեր ունենար, կրկին գլուխը դռնից ներս մտցրեց.

- Պարո՛ն, ամեն ինչ Ձեր ճաշակո՞վ է:

Հյուրանոցատերը նրան դիմեց ֆրանսերեն, որին կարծես շատ ավելի լավ էր տիրապետում, քան թերի անգլերենին, որով դիմավորել էր Թոմասին:

- Իհարկե,- նույնպես ֆրանսերեն պատասխանեց Թոմասը,- Ձեր հյուրանոցը հրաշալի է, Տանուկի՛:

- Իրոք այդպես է: Ընտանիքս շատ վաղուց է այստեղ: Եթե ասում եմ շատ վաղուց, նկատի ունեմ Սուրբ Մարոնից սկսած: Լավ, գուցե դա չափազանցություն է, բայց հաստատ երկու հարյուր տարուց ավելի է: Լսե՛ք, պարո՛ն, այս քաղաքը հիմնադրվել է դեռևս հիսուն դար առաջ, իրոք, երբ նրա միջով անցնում էին հռոմեացիները, այստեղի բնակիչներն արդեն ամեն ինչից տեղյակ էին: Պարոնն ինձ հասկանո՞ւմ է: Ամեն ինչից:

Թոմասի հետաքրքրությունը շարժեց այն, ինչ իրեն պատմում էր այդ մարդը.

- Իսկ Դուք, Տանուկի՛, ներեցե՛ք ինձ հարցասիրության համար, քրիստոնյա՞ եք:

- Իհարկե, պարո՛ն, մարոն եմ: Խաչակրաց արշավանքներից հետո համարվում ենք Եվրոպայի մասերից մեկը: Դա նույնն է, ինչ Լևանտի ֆրանսիացիներ լինելը: Գիտե՞ք, թե Ձեզ ինչ եմ ուզում ասել: Ճշմարիտն ասած, մեզ համար երբեք հեշտ չի եղել թուրքերի հետ, բայց մենք դարեր ի վեր այստեղ էինք, երբ նրանք եկան, և նրանց գնալուց հետո էլ այստեղ

կլինենք: Դարեր շարունակ համբերել ենք և համակերպվել,- Տանուկին իջեցրեց ձայնի տոնը, կարծես մի բան էր խոստովանում,- բայց համոզված ենք, որ մեզ քիչ է մնում հանդուրժելու համար. թերևս ավելի, քան մենք կցանկանայինք, սակայն շատ ավելի քիչ, քան նրանք կարծում են: Դեռ մինչև վերջերս համոզված էին, որ Օսմանյան կայսրությունը հավերժ է և անփոփոխ, բայց հիմա՝ ոչ:

Թոմասը համաձայնեց՝ շնորհակալություն հայտնելով իր՝ գրեթե անծանոթի նկատմամբ նրա ցուցաբերած վստահության համար.

- Արդյո՞ք 1516 թվականին չէր, երբ այստեղ խուժեցին օսմանները: Դա անում է չորս դար, ավելի ճիշտ՝ երեք հարյուր իննսուներեք տարի, շատ երկար ժամանակ է:

- Այո՛, պարո՛ն: Արդեն չորս դար է, ինչ մենք՝ որպես քրիստոնյաներ, թուրքերի լծի տակ ենք, սակայն չկարծեք, թե արաբ մուսուլմանները մեզ շատ ավելի լավ են ընդունում... բացառությունները չհաշված: Սա շատ յուրահատուկ երկիր է, շուտով կհասկանաք: Տեսե՛ք, այստեղ կան հայեր, ուղղափառ հույներ, քանանացիներ, դրուզներ, հրեաներ, մարոնիներ, ինչպես ես, անշուշտ, թուրքեր, արաբ մուսուլմաններ, ովքեր իրենց հերթին կարող են լինել սուննիներ և շիաներ, չերքեզներ, մի քանի եվրոպացիներ, որ գալիս են այստեղ՝ օգտվելով մեր լավ եղանակից, ու հետո ծուլանում են հեռանալ, եգիպտացիներ... Սակայն այս մասին դեռ կխոսենք: Իսկ հիմա ուզո՞ւմ եք տեսնել այն քարանձավը, որի մասին Ձեզ ասացի: Ուրեմն ընկերակցե՛ք ինձ, Ձեզ դուր կգա:

Թոմաս Հարդինգին խորապես հետաքրքրում էր իրեն շրջապատող ամեն ինչ: Վերջապես նա Լիբանանում էր՝ համոզված, որ այլևս չէր կարող սանձել ամեն բան տեսնելու և հասկանալու իր բաղձանքը: Ի վերջո, նա մեկն էր անգլիացի, շոտլանդացի և ֆրանսիացի այն հանդուգն հետաքրքրասերներից, ովքեր ուզում էին ճանաչել աշխարհը և նրա հրաշալիքները: Գոհ ու երջանիկ նա հետևեց Տանուկիին, աստիճաններով ներքև իջան, անցան զով բակով և իջան մեկ այլ ուղղաձիգ պտուտակաձև քարաշեն աստիճաններով, որոնք հավանաբար շատ ավելի հին էին, և խոնավության հոտ էր փչում: Տանուկին փոքր-ինչ դժվարությամբ բացեց մի ճռռացող փայտե դուռ, և մտան մառան հիշեցնող, շշերով ու տակառներով լի մի նկուղ: Ժոզեֆ Տանուկին պտտեց մի լծակ, և դարակաշարքերից մեկը՝ բեռնված փոշոտ շշերով, սկսեց պտտվել: Հյուրանոցատերը վառեց մեկ այլ նավթավառ, և նրանց դիմաց հառնեց մի բնական քարանձավ:

- Շատ քիչ մարդկանց է հայտնի այս վայրը,- շշնջաց այնպես, ասես

եկեղեցում լինեին,- բայց ինչ-ինչ պատճառով Դուք ինձ վստահություն եք ներշնչում, հետևե՛ք ինձ, պարո՛ն:

Մտան մի նեղ՝ հազիվ վեց ոտնաչափ տրամագծով միջանցք, որտեղ լապտերները տարօրինակ ստվերներ էին արձակում: Թոմասը զարմանքից քար էր կտրել: Նոր էր տեղ հասել, բայց արդեն բուն պատմության մեջ էր:

- Պարո՛ն, հիմա մտնում ենք քարանձավ: Տեսնո՞ւմ եք արտացոլանքը: Դա ծովն է ներքևում, որ թափանցում է մինչև այստեղ: Տարիներ առաջ մեր կասկածները փարատվեցին այդ՝ քարանձավը ծովին իրոք հաղորդակից լինելու առումով: Բարեկամներիցս մեկի զարմիկը կարողացավ սուզվել և դուրս գալ բաց ծով: Ձեզ համար դժվար չէ պատկերացնել, որ ինքս երբեք դա չեմ արել. առնվազն երեսունից քառասուն մետր է, իսկ դրա համար հարկավոր է լավ թոքեր ունենալ: Մի բան հաստատ գիտեմ՝ այս քարանձավը բազմաթիվ կյանքեր է փրկել: Պատկերացրե՛ք նրանց, ովքեր հուսահատ փախել են: Դե՛ ինչ, Ձեզ դուր է գալի՞ս:

Թոմասի՝ մի երկու շաբաթ մնալու և հետո Սիրիայի խորքը գնալու, գուցե և մինչև Միջագետք հասնելու մտադրությունները փոփոխվում էին անցնող օրերի հետ: Նա գտնվում էր անհրաժեշտ ու պատշաճ վայրում՝ վերջապես անելով այն, ինչ միշտ ցանկացել էր՝ տնօրինել սեփական ճակատագիրը: Շրջելով Փյունիկիայի հողի վրա՝ ցանկանում էր այցելել Բիբլոս, Տյուրոս և Սիդոն. քաղաքներ, որոնք անգիր գիտեր… քարտեզի վրա:

Ընթրիքի ընթացքում Տանուկին՝ ոտքի վրա՝ դիմացից, աթոռին կառչած, երկար ժամանակ սևեռուն հայացքով զննում էր նրան: Այդ շիտակ և կենսասեր մարդը ճանճրանում էր, քանի որ միակ հաճախորդներն այդ երեքն էին: Բացի դրանից՝ թվում էր, թե Տանուկիին դուր էր գալիս իր հյուրերի հետ մտքեր փոխանակելը, և նա այդտեղից չէր հեռանում: Միայն մի քանի րոպեով բացակայեց, երբ իջավ նկուղ և բերեց գինու մի փոշոտ շիշ:

- Այո՛, պարո՛ն: Սա իսկական ֆրանսիական գինի է, իսկ և իսկ՝ Ֆրանսիայից, մի հրաշալի «Բորդո»: Լիբանանյան լեռներում նույնպես գիտեն գինի պատրաստել, բայց սա շատ յուրահատուկ բան է: Ձեզ դուր կգա: Այս շիշը Ձեզ եմ նվիրում, Ձեզ բարի գալուստ: Գրո՛ղը տանի, այսօրվանից լավ օր չկա: Իրոք, ինձ միշտ էլ դուր են եկել անգլիացիները, Ձեզ նման պրոֆեսորները, և ասեմ Ձեզ, որ այս համեստ տանը մնացել են հեռու-հեռվից եկած շատ իմաստուն մարդիկ: Երբևէ այցելե՞լ եք Լևանտ: Ո՞չ, ուրեմն արդեն ժամն է: Թո՛ւյլ տվեք, որ Ձեզ կարճ թվար-

կեմ, թե ինչեր եք տեսնելու: Այնտեղ՝ ծովափին զուգահեռ լեռնաշղթայի հետևում, Բեկաայի հովիտն է՝ այս երկրի հացահատիկի իսկական շտեմարանը: Որևէ անգլիացու սուտ կթվա, սակայն անգամ եթե սուտ թվա, ունենք երկու լավ գետեր. էլ-Ասին՝ հյուսիսում, իսկ էլ-Լիտանին՝ հարավում, երկուսն էլ թափվում են Միջերկրական ծով: Ինչպես գիտեք, Լիբանանը ծագել է արաբերեն «Գեբել Լուբնան»-ից, որը նշանակում է «Սպիտակ լեռ»: Պատճառը դրա գագաթներին նկատված ձյունն է: Այն մի ահռելի, ավելի քան երեք հազար մետր բարձրությամբ լեռ է, ինչպես Շվեյցարիայում: (Թոմասը նկատեց Տանուկիի հպարտ տոնը): Լավ, Ձեզ ասում էի, որ Բեկաայի հովտում ամեն ինչ մշակվում է: Անկասկած, մի իսկական դրախտ է: Միջագետքի մարդիկ կարծում են, թե երկրային դրախտը գտնվում է Եփրատի և Տիգրիսի միջև, մինչդեռ մենք, մեզ համարելով Լեռնային Լիբանանի զավակներ, համոզված ենք, որ գտնվում է Բեկաայում: Շուտով կտեսնեք: Եգիպտացորեն, որ ուղտից էլ բարձր է: Ցորեն, գարի, սեզամ, ամեն տեսակի համադամ բանջարեղեն, գետնասունկ, լոլիկ, էլ ինչ իմանամ՝ թե ինչ: Հովիտը մի կողմից մյուսն ունի յոթ, թե ութ կիլոմետր լայնություն, Աստծո իսկական պարգև է: Այդտեղ կային նաև մայրու անտառներ, հիմա քիչ են մնացել, սակայն կարելի է ամբողջական կարծիք կազմել այն մասին, թե ինչ է այս երկիրը: Գիտե՞ք, որ Ուխտի տապանակը պատրաստել են Լիբանանի մայրու փայտից: Իրոք որ աշխարհի լավագույն փայտն է,- Տանուկին, խանդավառությամբ համակված, իրեն մի բաժակ գինի լցրեց,- հանուն Ձեր առողջության, պարո՛ն: Ա՜հ, պետք է շատ անգլիացիներ գան, Դուք խոսքի վարպետներ եք:

Թոմաս Հարդինգը բարձրացրեց հայացքը՝ զարմանքից աչքերը թարթելով: Չէ՞ որ նա ոչ մի բառ չէր արտասանել: Վառ խառնվածքով միջերկրածովյան այդ բնակիչները սրտաբաց մարդիկ էին: Թոմասը լայն ժպտաց, ու տանտերը կրկին բարձրացրեց բաժակը.

- Հանուն Անգլիայի:

Թոմասն ուրիշ ելք չուներ, քան ոտքի կանգնելը և կենացին միանալը. այդպիսի բան կյանքում երբեք նրան չէր պատահել:

- Գիտե՞ք, թե ուր պետք է գնաք: Ես Ձեզ մի հրաշալի խորհուրդ կտամ, որը ողջ կյանքում հազիվ թե ստացած լինեք:

Թվում էր, թե Տանուկին մտադիր չէր թողնել, որ Թոմասը հանգիստ ընթրեր, ուտեր ջեռոցում տապակված և ախորժելի տեսք ունեցող խոզի միսը՝ համեմված նրբաճաշակ համեմունքներով:

- Գնացե՛ք Բաալբեկ, այսինքն՝ Բաալի տաճար: Երբ երիտասարդ

էի, մի անգամ եղա այնտեղ և զարմանքից քար կտրեցի: Աստվա՛ծ իմ, ա՛յ քեզ ահռելի չափեր, ի՞նչ հսկա սյուներ: Հիշում եմ, որ մի պրոֆեսոր, Ձեզ նման մեկը, գուցե քիչ ավելի տարիքով, սակայն՝ ձեռնահաս, ուզում եմ ասել... գերմանացի: Պատկերացնո՞ւմ եք: Հենց այնտեղ բացատրեց, իրոք, շատ հստակ, կարծես լսողներս ամեն ինչից անտեղյակ էինք: Լավ գիտեք, թե ինչպիսին են այդ պրուսացիները: Այդ վայրը հին Հելիոպոլիսն էր... Հեռու չէ, ձիով՝ մի երկու օր դեպի հյուսիս, գուցե և՝ երեք: Հարկավոր է գնալ այնտեղ՝ համոզվելու համար, որ իրական է՝ ապշահար պատկերացնելով, թե ինչպես են այդ հսկայածավալ քարե բեկորները բարձրացրել: Ձեմ չափազանցնում. քսան քայլ երկարությամբ, ամեն կտորը՝ երեքը չորսի վրա: Անհավատալի բան է: Մի հրաշք... Մի չքնաղ տաճար՝ նվիրված Յուպիտերին...

Տանուկին կրկին լցրեց իր գինու բաժակը և ըմպեց՝ կում-կում ըմբոշխնելով: Թոմասը համակերպված հոգոց հանեց:

- Այո՛, պարո՛ն: Ամեն մեկն ունի իր նեղ մասնագիտությունը: Ա՜հ, ինչեր ասես, որ չէի տա, որպեսզի Եվրոպայում սովորած լինեի: Դուք, սակայն, հաստատ քսան մետրից ավելի բարձրությամբ սյուներ չեք տեսել: Բաալբեկում գտնվում են նաև Բաքոսի և Վեներայի տաճարները,- Տանուկին կենաց առաջարկելու համար մինչ բարձրացնում էր ձեռքը, Թոմասին աչքով արեց՝ ի նշան գործակցության,- այո՛, պարո՛ն: Այստեղ մենք միշտ էլ եղել ենք լավ կյանքի սիրահար: Հավատացե՛ք ինձ, եթե որոշ ժամանակ մնաք այստեղ, կսիրահարվեք մի լավ աղջկա: Ա՜հ, այս լիբանանցի կանայք... Շատ լավն են սիրո մեջ և շատ տիրական: Այնպես որ՝ զգո՛ւյշ եղեք, պարո՛ն: Իսկ հիմա Ձեզ թողնեմ, որ ընթրիքն ավարտեք, թե չէ ափսոս է, որ խոզի միսը սառչի:

Տանուկին թեթևակի խոնարհեց գլուխն ու հեռացավ, մինչ անկյունի սեղանից Սթենսոնը և Բաքերն անթաքույց ծիծաղում էին: Նրանք արդեն ավարտել էին իրենց իրիկնաճաշը և զվարճանում էին՝ նայելով իրենց ղեկավարին, ով անօգուտ փորձում էր ընթրել:

Անկախ ամեն ինչից՝ Թոմասը լավ տրամադրության մեջ էր և բարձրացրեց իր գինու բաժակը՝ նույնպես ժպտալով.

- Մի՛ ծիծաղեք, ցանկացած մարդու հետ դա կարող է պատահել, և ինչպես գիտեք՝ վրիժառությունը մի ճաշատեսակ է, որն ուտում են սառը վիճակում:

Մթությունը մերթընդմերթ խզվում էր ծովափի հեռավոր խարույկներից որևէ մեկի՝ պատուհանից թափանցող ցոլանքով, իսկ լուսինը թրթռում էր ծովի վրա: Թոմասը խորհում էր Բաալի «տիրական» մա-

սին: Աստված, որը խորհրդանշում էր արևն ու բերրիությունը: Գիտեր, որ երբ հրեաները հասան Քանան, ընդունեցին դավանանքը: Նրանք իրենց միակ աստծուն կոչեցին Եհովա, սակայն անհուն էր Բաալի հանդեպ մարդկանց հրապուրանքը, և միակ աստծո պաշտամունքը սկսեց սիրո և սեռական հաճույքի ծեսերով այլասերվել: Թոմասը հիշեց Օքսֆորդի իր ծեր պրոֆեսորին, երբ նա, սևեռուն նայելով, իրեն զգուշացրեց. «Հեռո՛ւ մնացեք Բելսեբուից: Նա դեռ այնտեղ է և շարունակում է հետամուտ լինել հինավուրց քարերի միջից: Բելսեբու կամ Բաալ-Զեբուբ: Ամոթի և ճանճերի աստվածը»: «Այո՛»,- մտածեց Թոմասը՝ գինու բաժակը ձեռքին զննելով խավարը: Կգնար մինչև այնտեղ՝ հուսալով, թե հանդիպելու էր նրան՝ ծեր Ֆավնին:

2. ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԻՈՒԹՅՈՒՆ
ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1909թ.

Հաջորդ օրերի ընթացքում Թոմասին տիրեց ոգևորությունը: Սթենսոնին ասաց, որ եթե նա անպատեհ չի համարում, ապա ինքը նախընտրում է միայնակ զբոսնել: Սթենսոնը նայեց Թոմասին՝ կարծես ասելով, թե էլ ինչու էր ինքը հասել այդտեղ: Բայց և այնպես Սթենսոնը մտածեց, որ գուցե Թոմասն իրավացի է, և ինքը չպետք է նրան ուղեկցի: Այդ վայրում Թոմասին ոչինչ չէր պատահի, իսկ նա՝ տարիքն առած այդ զինվորականը, ով մի ողջ կյանք էր ապրել Հնդկաստանում՝ Դելիում, Սիմլայում, Դարյելինգում և Բոմբեյում, հավանաբար մի բան էր ցանկանում՝ վայելել քաղցր ու կանաչ Էքսետերում գտնվող իր փոքրիկ տունը:

Ինչ վերաբերում էր Բաքերին, ով շատ ավելի երիտասարդ էր, քան Սթենսոնը, և բնավորությամբ ավելի անկեղծ էր ու սրտաբաց, ապա թվում էր, թե Բեյրութում իրեն զգում էր այնպես, ինչպես ձուկը ջրում: Թոմասը ստիպված նրանց արգելեց, որ իրեն հետևեն, բայց լիովին համոզված չէր, որ իրեն կլսեն:

Այդ ժամանակաշրջանում Բեյրութը փոքրիկ քաղաք էր՝ մեծ գյուղից ոչ ավելի մի փոշոտ վայր, եռուն և կենսահորդ, որտեղ ցանկացած իր վաճառողները գնում էին փողոցներով և բղավելով իրենց ապրանքներն առաջարկում. այդտեղ մարդիկ սովոր չէին ցածր ձայնով խոսելուն: Օքսֆորդի հանգստավետ տարիներից հետո Թոմասի համար դա խորթ էր: Բեյրութցիները կա՛մ իրար ականջի ինչ-որ բան էին փսփսում՝ դեմքերը ծամածռելով ու չարակամորեն ժպտալով, կա՛մ էլ բարձրաձայն՝ ի լուր աշխարհի գովաբանում էին միմյանց, որպեսզի բոլորը լսեն: Թոմասի ականջին հասնում էին մի շարք արտահայտություններ. «Սալամ ալեյքում, Ամե՛ղ: Ուրախ եմ քեզ տեսնելու համար» կամ «Աստված քեզ ուղեկից» (եթե խոսքը քրիստոնյայի մասին էր), «Ալեյքում սալամ, Մուհամմե՛դ», «Աստված թո՛ղ քո կողքին լինի: Ես նույնպես ուրախ եմ... Մարո՛ն... Կոնրա՛դ... Հովսե՛փ...» (կամ էլ՝ մեկ այլ անուն): Ասես գոյություն չունեին ներանձնական զգացմունքներ, և բոլորն ուզում էին իրենց ապրումները ցուցադրել ու կիսել միմյանց հետ: Անշուշտ, խոսքը վերաբերում էր «միջերկրածովյան խառնվածքին»:

Թոմասը համոզվեց, որ Բեյրութում ամեն ինչ վերահսկում էին թուրքերը, թեև՝ զուսպ՝ ասես ցանկանալով տեսադաշտից դուրս մնալ: Տանուկին նրան պատմեց, որ 1843 թվականից սկսած կայմակամների՝ գա-

վառապետերի պաշտոնները վարում էին քրիստոնյա մարոնները, իսկ հարավում՝ դրուզները, ինչը նման էր սարդոստայնից կառչած մի բարդ գլուխկոտրուկի: Այդ հավասարակշռությունը թողնում էր այն թյուր կարծիքը, թե ուր որ է դա կխախտվի, բայց այդտեղ այդ քաղաքականությունը՝ լավ, թե վատ, շարունակվում էր դարեդար:

Իր երկար զբոսանքների ընթացքում Թոմասը գտավ մի ռեստորան, որի տերը քրիստոնյա մարոն էր: Մտավ՝ համտեսելու: Հարկ չեղավ, որ խնդրեր ճաշացուցակը: Տպավորությունն այնպիսին էր, որ նախապես գիտեին, թե հյուրն ինչ կցանկանար ուտել: Նրան մատուցեցին մի քանի նախուտեստներ, տասնյակից ավելի՝ առաջին հայացքից ախորժելի ու քիչ թե շատ ծանոթ խորտիկներ. ձիթապտուղ, աղցան, թթու դրած մանր վարունգ և այլ բաներ: Բոլոր կերակուրների համը փորձեց, հետո հարցրեց, թե ինչից է պատրաստված խյուսը: Ռեստորանի տերը, ում ուռուցիկ փորից կախված էր շողշողուն ոսկե մի մեծ ժամացույց, նրան բացատրեց, որ դա պատրաստված է սիսեռից՝ համեմված կիտրոնով և սպիտակաձավարի ձեթով: Թոմասի կարծիքով՝ համն ավելի լավն էր, քան տեսքը: Երբ տեսան, որ ավելին չէր կարող ուտել, նրան մատուցեցին մի քանի «մութթաբալ»՝ քացախի մեջ դրված սմբուկի երկարուկ շերտեր՝ ձիթապտղի յուղով և կիտրոնով, իսկ հետո՝ գառան խորոված, որ պատրաստում էին դրսում՝ երկաթացանցին լցրած և շիկացած ածուխների վրա: Ամեն ինչ համեղ էր, ու թեև խորոված ի սոխն ու մաղադանոսը չափազանց առատ էին, սակայն Թոմասին ավելի դուր եկավ, քան անգլիական ճարպոտ գառը: Նրան առատ գինի մատուցեցին, իսկ վերջում՝ տեղական «ասաբեհ», «բարազակ» և այլ քաղցրավենիք ու դաղձով թեյ: Այլևս ի վիճակի չէր շարունակել, պետք է իրեն զսպեր, քանի որ շուտով նմանվելու էր Տանուկիին կամ էլ այդ ռեստորանի տիրոջը:

Հյուրանոց էր վերադառնում՝ դանդաղ քայլելով, ծովափին երկար զբոսնելով: Այդ ընթացքում դա նրան ծանոթ ու վաղեմի սովորություն թվաց, բայց թե երբվանից սկսած՝ չգիտեր: Նույն բանն էր, եթե ինչ-որ մեկն արթուն երազեր՝ սկսելով հասկանալ, թե ինչ է կյանքը: Ամեն ինչ անցնում է սրընթաց, միայն ամենախելացիները գիտեն, թե ինչպես օգտվեն յուրաքանչյուր ակնթարթից:

Ռեստորանի տերը Թոմասին բացատրել էր, որ Բեյրութն անմահ քաղաք է, որ այն կոչում են «քաղաք, որը երբեք չի մահանա»: Պետք է հավատար նրան, քանզի գիտեր, որ քաղաքը գոյություն ունի արդեն հիսուն դար, գուցե և՝ շատ ավելի: Ամեն դեպքում ակնհայտ էր այդ քաղաքի կերպարը՝ իր անվերջանալի պատմությամբ և այն ճշմարտությամբ, որ

ոչ մի նվաճողի չի հաջողվի կործանել այն: Թերևս դա հաջողվեր նրանց՝ Լեռնային Լիբանանի բնակիչներին, ովքեր հայացքները հառում էին Բեյրութին՝ այն իրենց ինքնավարությանը միացնելու բաղձանքով:

Ուսումնառության ընթացքում սովորել էր, որ հռոմեացիները հաստատվել էին «Julia Augusta Felix Beyritus»-ում կամ պարզապես «Բեյրիթուսում», որն իր տեղը զիջել էր ներկայիս Բեյրութին:

Անգամ տարածաշրջանն ամայացրած ահավոր երկրաշարժերը քաղաքի համառ բնակիչներին՝ քրիստոնյաների և հատկապես սուննի մուսուլմանների տարբեր խմբավորումներին, հետ չպահեցին մշտական հակամարտությունից:

Առաջին հայացքից բոլոր մշակույթների համար մի բաց վայր էր թվում, որտեղ հավանաբար իրենց իսկ առաջնորդների միջև ծագող առօրյա փոքրիկ վեճերը, ընտանեկան վրեժխնդրությունների դրսևորումները, լավագույն թաղամասերին տիրանալու պայքարը մի օր կավարտվեին քաղաքացիական արյունալի ընդհարման կայծի բռնկմամբ: Սակայն առայժմ այդ ամենը սոսկ անհիմն դատողություններ էին միջերկրածովյան մի այնպիսի խաղաղ ու արևոտ քաղաքում, որն ամեն քայլափոխի հրավիրում էր այնտեղ ապրելու:

Թոմասը փորձեց հյուրանոցում փոքր-ինչ հանգստանալ՝ խորհելով այդ նոր աշխարհի մասին: Բավականին շոգ էր, և մի պահ մեկնվեց մահճակալին, սակայն չկարողացավ ննջել: Որոշեց դուրս գալ՝ այցելելու Բողոքական համալսարան, որը 1886 թվականին հիմնադրել էին հյուսիսամերիկյան միսիոներները (ինչպես որ իրեն էին ասել): Երբ դրա մասին մի քանի անգամ փողոցում հարցրեց, մարդիկ պատասխանում էին. «Ա՜հ, այո՛: Դուք նկատի ունեք Ամերիկյան համալսարանը»:

Հայր Թիմոտի Դոնելիին՝ ծագումով իռլանդացի, արամերենի և տարածաշրջանի հնագույն մշակույթի ամենախոշոր գիտակներից մեկին ներկայանալու համար մի նամակ ուներ իր մոտ: Երբ Թոմասը նրա մասին հարցուփորձ արեց դռնապանին, վերջինս տարօրինակ նայեց նրան:

- Հայր Դոնելի՞ն... Բայց նա ոչ ոքի չի ընդունում,- ֆրանսերենով և բավականին գոռոզ տոնով պատասխանեց դռնապանը,- եթե ուզում եք, կարող եմ Ձեր նամակը նրան հանձնել, գուցե այդպես ավելի լավ լինի:

Թոմասը համաձայնեց և մտախոհ դուրս եկավ: Ինչո՞ւ չէր կարող խոսել նրա հետ: Նամակը ստորագրված էր Դոնելիի վաղեմի ընկերոջ կողմից, ով հավաստիացրել էր, որ հայր Դոնելին ուրախ կլիներ Թոմասին տեսնելու համար: Երբ փողոցով իջնում էր՝ ուշադիր նայելով կապույտ հորիզոնին, որն աղոտ ուրվագծվում էր արմավենիների միջից, դռնապանը հևալով հասավ նրան.

- Պարո՛ն, պարո՛ն, հայր Դոնելին Ձեզ կընդունի: Խնդրում եմ, հետևե՛ք ինձ: Եթե աչքովս չտեսնեի, չէի հավատա, վաղուց ի վեր սա առաջին դեպքն է:

Անցան շքամուտքով և մտան արևոտ ու հանգստավետ մի պարտեզ, որի լճակում լողում էին ոսկեգօծ ծածաններ: Ամբողջ շենքում տիրում էին խաղաղություն ու լռություն, ինչն ավելի հատուկ էր վանքին, քան համալսարանին: Այնուհետև վեր խոյացող աստիճաններով բարձրացան մինչև ննջարանների հարկը: Քայլում էին բացարձակ լուռ: Թոմասը չէր հասկանում, թե ինչ է կատարվում: Հասան երկար, արևի առատ ցոլքերով ողողված մի սրահ, որտեղից նշմարվում էր կենտրոնական բակը: Երբևէ չէր տեսել այդպիսի լուռ ու դատարկ համալսարան:

Դռնապանը մատների հողերով թակեց դռներից մեկը, և մի թույլ ձայն ներսից պատասխանեց.

- Համեցե՛ք:

Մտավ սենյակ ու տեսավ անկողնում պառկած մի ծերունու՝ ճերմակ մաշկով, որի տակից թափանցում էին կապույտ երակները, պատված սպիտակ, դեղինին մոտ նոսր մազածածկույթով, ձեռքերի մատները չափազանց երկար էին: Գուցե երբևէ նրա տեսած ամենածեր մարդն էր: Հայր Դոնելին դեմքին մի նշան արեց՝ փորձելով ժպտալ Թոմասին.

- Պարոն Հարդի՞նգ: Դուք պրոֆեսոր Թոմաս Հարդի՞նգն եք: Սակայն Դուք դեռ երեխա եք:

Թոմասը համաձայնեց՝ փորձելով ժպտալ: Այդ մարդը խոսում էր ցածր ու խռպոտ ձայնով, կարծես թե այլևս անգամ խոսելու ուժ չուներ:

- Հայր Դոնելին եմ կամ այն, ինչ նրանից դեռ մնացել է: Ոչ ոքի չեմ ընդունում, քանզի, ինչպես տեսնում եք, ի վիճակի չեմ, սակայն ցանկացա Ձեզ բացառություն անել, քանի որ եկել եք շատ հեռվից: Այս նամակը բացատրում է, որ Դուք Օքսֆորդի համալսարանում անտիկ արվեստի պրոֆեսոր եք և շատ այլ բաների հետ մեկտեղ՝ լավ խոսում եք արաբերեն և գիտեք արամերեն: Շատ ուրախ եմ, քանզի շատերի կարծիքով՝ արամերենը մեռած լեզու է, սակայն Ձեզ ասեմ, լավ, Դուք էլ կիմանաք, որ մեր օրերում Դամասկոսին մոտ մի քանի գյուղերում դեռ խոսում են Հիսուս Քրիստոսի լեզվով: Երբ մարդ այն լսում է, փառավորվում է, նաև հասկանում, որ ամեն ինչ փոփոխական է՝ բացի մարդկանց ներքին աշխարհից: Հասկանո՞ւմ եք ինձ: Եթե ինձ թույլ տաք՝ Ձեզ մի գիրք կտամ, որը, եթե դժվար չէ, վերադառնալիս իմ կողմից հանձնե՛ք Օքսֆորդի համալսարանի գրադարանին: Խոսքը Յովնանի կողեքսի հնագույն մի պատճենի մասին է՝ գրված արամերեն: Իմ կարծիքով՝ առնվազն հա-

զար հինգ հարյուր տարվա է, գուցե և՝ ավելի: Կկատարե՞ք խնդրանքս: Ճիշտն ասած, անհանգստանում էի, թե ինչպե՞ս այն ուղարկեմ, ո՞ւմ հանձնարարեմ, իսկ Դուք ինձ վստահություն եք ներշնչում: Ես Օքսֆորդում եմ սովորել արամերեն և ուզում եմ այս փոքրիկ նվիրատվությամբ իմ երախտագիտությունն արտահայտել:

Թոմասը փորձեց մի քանի րոպե զրուցել հայր Դոնելիի հետ, բայց գլխի ընկավ, որ այդ մարդն արագ ուժասպառ է լինում, ուստի որոշեց հրաժեշտ տալ իմաստունին, ով նրան հանձնեց գիրքը՝ սքանչելի զարդանախշ, կաշեկազմ տուփով, մի փոքր ցեցոտված և գունաթափ, բայց արժեքի տեսանկյունից՝ անգին: Պատահականությունը Թոմասին դարձրել էր այդ մարդու կտակատարը: Հայր Դոնելին նրան խոստովանեց, որ օրենսգիրքը գտել է Հալեպի հնավաճառներից մեկի քրքրված գրքերի ահռելի կույտի տակից: Խոսքը գուցե Արիստոտել Ստամուրուսի՝ կապիտան Կավաֆիսի զարմիկի մասի՞ն էր: Ծերունին չկարողացավ նրան պատասխանել, ու Թոմասը որոշեց անձամբ տեղեկանալ, երբ գնար այնտեղ: Ձեռքը պարզելով հայր Դոնելիին՝ Թոմասը զգուշորեն նրա փխրուն մատներին հպվեց: Հրաժեշտ տվեց՝ դուրս գալիս գլուխը խոնարհելով և միաժամանակ մտածելով, որ չէր ուզենա կյանքի մայրամուտին այդ վիճակում հայտնվել:

Ամերիկյան համալսարանից նա ուղղվեց դեպի կենտրոն՝ շարունակ խորհելով հայր Դոնելիի մասին: Այդ մարդուն հազիվ մի քանի շաբաթվա կյանք էր մնացել: Մտածեց, որ ամենախոհեմն այն կլիներ, որ դիմեր անգլիական հյուպատոսարանին, որպեսզի գիրքն Անգլիա ուղարկեին դիվանագիտական փոստով: Այդպիսով կազատվեր մի պատասխանատվությունից: Ա՛յ քեզ տարօրինակ երկիր… Ամեն ինչ պարուրված էր պատմությամբ: Այն, ինչ ուսումնասիրում էին համալսարանում, ո՛չ ցնորք էր և ո՛չ էլ հեռավոր, այլ այնքան իրական մի բան, որը մարդկանց կողքին էր՝ ուղղակիորեն ազդելով նրանց կյանքի վրա: Գիրքը փաթեթավորելուն պես՝ անձամբ հյուպատոսին ուղղված մի գրությամբ, որով բացատրում էր խնդրի էությունը, պարոն Սթենսոնին ուղարկեց հյուպատոսարան: Այդ երկրից որևէ բան Անգլիա ուղարկելու ավելի ապահով միջոց գոյություն չուներ, և շատ վտանգավոր էր ուղևորության հետագա ընթացքում իր հետ կրել մի փխրուն և այդքան արժեքավոր մի իր:

Երեկոյան նախընտրեց չընթրել հյուրանոցում: Թեև Տանուկիին նա համակրում էր, սակայն տրամադրությունն այնպիսին չէր, որ հանդուրժեր ևս մեկ դասախոսություն՝ նվիրված Լիբանան լեռանն ու մարոնիներին: Այնպես որ՝ Սթենսոնին խնդրեց, որ ընկերակցի իրեն, և քայլելով

գտան մի փոքրիկ ռեստորան՝ տեղակայված ծովափին մոտ մի արահետի վրա, որտեղ նրանց համար ձուկ ու աղցան պատրաստեցին՝ մեկ շիշ լիբանանյան գինով հրամցնելով: Ավելի քան բավարար էր: Ծովափին էին դեռ՝ ունկնդրելով կամացուկ բախվող ալիքների շրշյունը, երբ մութն ընկավ: Միջօրեի արևի պես լիալուսինը լուսավորում էր տեղանքը՝ ստվերներ առաջացնելով:

- Ի՞նչ կարծիք ունեք այս վայրի մասին, Սթենսո՛ն: Ընդհանուր մի բան ունի՞ Հնդկաստանի հետ, որին Դուք քաջ տեղյակ եք: Ինչ-որ առումով նույն Արևելքը չէ՞:

Սթենսոնը մի պահ լուռ մնաց, կարծես փորձում էր հիշել.

- Ո՛չ, պարո՛ն Հարդինգ: Սա բոլորովին այլ վայր է: Առաջին հայացքից, անկախ ամեն ինչից, շատ մեծ է եվրոպական ազդեցությունը, որը շատ բաներում է իրեն զգացնել տալիս: Բացի դրանից՝ մարդկային այնպիսի խառնվածքներ են, որ իրար հետ համեմատվել չեն կարող: Միջերկրական ծովի այս մարդիկ դարեր ի վեր կրում են Արևմուտքի ազդեցությունը, և իմ կարծիքով՝ երբ տեսնում են մի եվրոպացու, մտաբերում են խաչակիրներին: Ձեզ մի բան ասեմ: Իրոք, մեր հանդեպ հավատ չեն ընծայում, և չեմ կարծում, որ երբևէ կհավատան: Նկատի չունեմ մուսուլմաններին և ոչ էլ քրիստոնյաներին. խնդիրն այն է, որ կարծես նրանք ամեն ինչ իրենց աչքով են տեսել: Որքան ինձ հայտնի է, նվաճված լինելով մեզ հայտնի գրեթե բոլոր ազգերի կողմից՝ հերթական ներխուժումներից հետո դարձել են անընդմիջելի խառնուրդի արգասիք: Չգիտեմ, գո՞ւցե նրանք քնում են՝ մի աչքը բաց, սակայն հետաքրքրասեր այն հայացքը, որով մեզ շրջապատում են, թերևս ասում է մեկ բան. «Բարի՛ գալուստ, բոլորի՛դ, կարող եք ուտել ու խմել մեզ հետ, որոշ ժամանակ մնալ, բայց հետո գնացե՛ք ու մեզ հանգի՛ստ թողեք»:

Սթենսոնի զգացողությունը շատ սուր էր:

- Իմ կարծիքով՝ Դուք արդարացի եք, Սթենսո՛ն: Իմ տպավորությունը նույնն է, կարծես այստեղի արաբներն ավելի մարդամոտ են, նրանց համարյա կհամարձակվեի որակել որպես կոսմոպոլիտներ… Պետք է հասկանալ, թե ի՞նչ կա նրանց հոգու խորքում, և ի՞նչ են մտածում ծովեզրից ընդամենը հիսուն մղոն այս կողմ: Ի վերջո, այստեղ ամեն օր նավեր են հասնում, և դա է նրանց դարձրել այնպիսին, ինչպիսին որ կան: Բացի դրանից՝ համալսարանը, որտեղ այս առավոտ եղա, և որը կոչվում է Ամերիկյան, կամ այն մյուսը՝ Սուրբ Հովսեփինը, որն իրականում եզվիտներինն է, ինձ այն համոզմանն են հանգեցնում, որ արաբական աշխարհում չկա սրա պես մի վայր, որտեղ այսքան շատ քրիստոնյաներ լինեն,

ովքեր, որոշ հանգամանքներով պայմանավորված, ավելի կաթոլիկ են, քան ինքը՝ Հռոմի Պապը:

- Լիովին համաձայն եմ Ձեզ հետ, պարո՛ն Հարդինգ: Սակայն Դուք էլ ինձ հետ համամիտ կլինեք, որ հենց այսպիսի վայրերում են համոզմունքներն արագ խմորվում: Ձեզ հավատացնում եմ, որ այստեղ շատ բաներ տեղի կունենան քիչ ժամանակ անց: Դա, սակայն, թո՛ւյլ տվեք ասել, իմ անձնական կարծիքն է:

- Լա՛վ, Սթենսո՛ն: Հյուրանոց վերադառնալու ժամանակը չէ՞: Այս կյանքում ամեն բան իմանալը ցանկացած մարդու կարող է սպառել:

Մի քանի օր անց Թոմասը որոշեց, որ երկարացնելու է իր ուղևորությունն Արևելքում: Չէր ուզում, որ մի շարք կարևոր բաներ չտեսած՝ վերադառնար Անգլիա՝ կրկին սուզվելով մի կյանքի մեջ, որը, նրա կարծիքով, միապաղաղ էր ու ձանձրալի:

Բեյրութը հետաքրքրական էր, մարդիկ չէին թաքցնում իրենց հույզերն ու զգացմունքները, ու բոլորն ապրում էին կենսուրախ կյանքով: Չնայած չէր կարող մի մշակույթը համեմատել մեկ այլ մշակույթի հետ, այդուհանդերձ նախանձով հասկացավ, որ այդ մարդիկ, ապրելով շատ ավելի համեստ ու հասարակ կյանքով, ավելի երջանիկ էին թվում:

Մյուս կողմից սկսում էր ըմբռնել Սթենսոնի մտածելակերպը, և հետաքրքիր էր նրա հետ կարծիքներ փոխանակելը, թեև ընդհանուր համաձայնությամբ և առանց պարտք ու պահանջի իրենցից յուրաքանչյուրն իր կյանքով էր ապրում: Սթենսոնն արևոտ առավոտներն անցկացնում էր՝ ծովափին դանդաղ զբոսնելով, հետո՝ կեսօրին՝ ձկնորսների՝ ավազի վրա պատրաստած խրճիթներից մեկում, որտեղ սովորաբար մի քիչ ձուկ էր ուտում: Մի քանիսի հետ ընկերացել էր և նրանց հետ զրուցում էր ֆրանսերեն, հետո վերադառնում էր հյուրանոց և նախասրահում նստած՝ մինչև ընթրիքի ժամը կարդում էր իր մաշված Աստվածաշունչը: Դա այն պահն էր, երբ սովորաբար մտքեր էին փոխանակում:

Ինչ վերաբերում էր Բաքերին, ապա երևում էր, որ ջերմորեն բարեկամացել էր այդ հաստատության սեփականատիրոջ հետ. շուկա գնալիս ընկերակցում էր նրան կամ ամբողջ օրն անցկացնում խոհանոցում՝ յուրացնելով այդ տարածաշրջանի ավանդական ճաշատեսակների բաղադրատոմսերը, որոնք Տանուկին մեծ ոգևորությամբ էր սովորեցնում նրան: Բաքերը խոստովանեց, որ միշտ ցանկացել էր խոհարար լինել և ոչ թե հասարակ սենեկապետ: Սակայն, ինչ խոսք, այդ առօրյայում իր դերն ուներ օղին՝ անիսոնից պատրաստված մի թունդ խմիչք, որը տղամարդկանց մղում է եղբայրական բարեկամության:

Բաքերի տաղանդը գովելուց բացի՝ այլ ճար չուներ, քանզի սեղանին մատուցեցին հենց նրա՝ նոր պատրաստած թաբուլեն, որը, Թոմասի կարծիքով, ընտիր էր: Գուցե դաղձը չափից մի փոքր ավելին էր, սակայն հարկ էր ընդունել, որ երբևէ նրանց կերած լավագույն աղցանն էր:

Թոմասի համար, ով սովոր էր ակադեմիական առօրյա կյանքին, այդ ամենը մի սքանչելի հայտնագործություն էր: Երջանիկ էր, որ կարող էր գնահատել ամենահասարակ, անկարևոր բանը՝ այն, ինչ Անգլիայում անում էր՝ առանց գլխի ընկնելու. առավոտյան զբոսանքները՝ դիտելով, թե ինչպես էին վերադառնում ձկնորսների նավակները, որոնց վերևում ծղրտում էին ճայերի երամները, երեխաների՝ կառուցվող, բայց այժմ լքված ծովապատնեշից ծով նետվելը, ովքեր ապրելու բերկրանքից արաբերեն անհասկանալի խոսվածքով անսովոր ճիչեր էին արձակում… Մի քանի աղջիկներ, հանդիպելով Թոմասին, հայացքները պահում էին նրա վրա, անթաքույց զննում: Թերևս նրանք քրիստոնյա աղջիկներ էին, իսկ ովքեր նրան ասես չէին տեսնում, մուսուլմանուհիներ էին: Անկախ հնությունների նկատմամբ ունեցած խանդավառությունից՝ նրա մեջ գնալով աճում էր շատ ավելի մեծ հետաքրքրություն իրականության և այն զգացողության հանդեպ, որ տրվեր կյանքի քաղցր ոռպեները վայելելուն: Կարծես իրեն թողել էր բախտի քմահաճույքին՝ մոռանալով ապագային առնչվող ծրագրերը, որոնք դեռ շատ հեռվում էին, ինչպես այն գագաթները, որ մի գեղեցիկ առավոտ ձյունով ծածկվեցին՝ երիզված անապական կապույտ երկնքով:

Գրեթե մեկ ամիս կլիներ, ինչ այդտեղ էր ու թեև ինքը չէր ընդունում այդ իրողությունը, սակայն, ըստ էության, պարապ թրև էր գալիս: Ո՞ւր էին չքացել նրա երկաթյա կարգապահությունը, նրա՝ բոլորին հայտնի կամքի ուժը: Օքսֆորդում նա ուներ շատ խիստ օրակարգ. վեր էր կենում ժամը յոթին, ութին նախաճաշում էր, ութն անց քառասունհինգից սկսում էր պարապել մինչև տասներկուսն անց քառասունհինգ, մի քառորդ ժամ զբոսնում էր ու վերադառնում ճաշասրահ… Եվ նույն բանը՝ ամեն օր, տարեցտարի, առնվազն մինչև դասընթացի ավարտը:

Մինչդեռ այն պահից ի վեր, ինչ Բեյրութում էր, այստեղից այնտեղ էր գնում՝ առանց ինչ-որ մի բան նախապես ծրագրելու, հետաքրքրվում էր ամեն ինչով, իսկ ամենազարմանալին այն էր, որ դեռ ոչ մի գիրք չէր բացել:

Բեյրութում անցնող այդ լուսավոր և հանգիստ օրերը նրան լիովին փոխեցին: Չէր կարողանում հասկանալ, թե ինչպես դա պատահեց, և թե ինչու վերջին շաբաթների ընթացքում ժամանակն այնպես էր հոսում,

ինչպես ջուրը՝ մատների արանքով: Նրա միակ զբաղմունքը դիտարկելն էր, որից, անշուշտ, չէր հոգնում: Գուցե պատճառը Լևանտի արևն էր, միջավայրի տարաշխարհիկ լինելը կամ մարդկանց սրտառուչ էությունը: Այդ ամենը չէր կարողանում ըմբռնել, բայց երջանիկ էր:

Մի առավոտ հայտնվեց Տանուկիի զարմուհին՝ Մերիամը՝ մի չքնաղ արարած, հազիվ տասնյոթ տարեկան, փոքրիկ աստվածուհու կուսական գեղեցկությամբ. մաշկը՝ սպիտակ, թեթև արևահարված, աչքերը՝ մեղրագույն, նշաձև, ու երիտասարդ աղջկան հատուկ՝ պիրկ կրծքեր: Սկզբում նրան թվաց, թե աղջիկը երկչոտ է ու զգուշավոր: Մերիամը պետք է զբաղվեր մաքրությամբ և կարգի բերեր սենյակները, այդ թվում՝ նաև Թոմասինը: Նաև լուռումունջ օգնում էր սեղան գցելիս, մինչ Տանուկին ճաշասրահի ծայրից, հոգոց հանելով, հպարտորեն հետևում էր նրան: Հետո հյուրանոցատերն անկեղծացավ Թոմասի հետ.

- Պարո՛ն Հարդինգ, տեսե՞լ եք, թե ինչ գեղեցիկ է իմ զարմուհի Մերիամը: Նա Տիրոյում ապրող քրոջս՝ Ռոզայի կրտսեր դուստրն է: Աղջկան ուղարկել է այստեղ, որպեսզի արհեստ սովորի և իր ապրուստը վաստակի: Մի ուտող բերան կպակասի այս դժվարին տարիներին: Միջերկրածովյան այս կանայք ասես մեր հող ու ջուրն են՝ կրքոտ ու երկչոտ:

Թոմասը քաղաքավարությամբ համաձայնեց, սակայն նրան անասելի հետաքրքրում էր, թե Տանուկին ինչ կպատմեր թուրքերի մասին, քանի որ ինքը Բեյրութում գրեթե չէր նկատում օսմանների ներկայությունը:

- Այստեղի կանայք, իրոք, գեղեցիկ են: Չե՞ք վախենում, որ նրանց փախցնեն և տանեն Կոստանդնուպոլսի հարեմները:

Թոմասի ասածը խոցեց Տանուկիին:

- Ո՛չ, պարո՛ն, ի սեր Աստծո: Երբեք չեն համարձակվի: Բացի դրանից՝ նրանք այստեղ երկար անելիք չունեն: Թուրքերը գիտեն, որ իրենց ժամը հասել է և շուտով կթողնեն, կգնան: Մենք նրանց երեսից շատ ենք տառապել: Մի՛ կարծեք այդպես, պարո՛ն: Դուք էլ գիտեք, որ դյուրին ժողովուրդ չեն, բայց պետք է ասեմ, որ ունեմ մի քանի թուրք բարեկամներ, և բոլորն էլ լավ մարդիկ են թվում… Թեև Բեյրութի կառավարիչը կրծելու համար պինդ ոսկոր է: Կարծում եմ, որ ֆրանսիացիների ներկայության պատճառով նրանք չափը չեն անցնում: Եթե ֆրանսիացիները չլինեին… Ասես մեր պահապաններն են: Սակայն դեռ շատ բաներ ենք տեսնելու: Կրոնական առումով մեր եղբայրների՝ հայերի համար է վատ լինելու: Մի բարեկամ ունեմ Թուրքիայում, և լուրերը, որ երբեմն գալիս են այնտեղից, բոլորովին հուսադրող չեն: Ի՜նչ բարդ ենք մենք՝ մարդկային արարածներս:

Տանուկին գնում ու գալիս էր, երբեք կանգ չէր առնում, ամեն ինչին ուզում էր ներկա գտնվել, նրա հետևից գնում էր Մուհամեդը՝ մի մուսուլման, ով նրան օգնում էր կահույքը տեղից տեղ տեղափոխելու գործում, վարագույր էր կախում, որևէ մետաղ էր հիմնովին մաքրում կամ ծաղկաման էր տեղադրում: Մի խոսքով՝ անում էր այն, ինչ կարգադրում էր իր տերը՝ անձայն և միշտ ժպիտով:

- Տեսնո՞ւմ եք, պարո՛ն: Սա Բեյրութի առանձնահատկություններից մեկն է: Այստեղ քրիստոնյաներս երբեմն ունենում ենք մուսուլման ծառաներ, ու թեև դա հակասում է օրենքներին, բայց թուրքերը նախընտրում են դա չնկատելու տալ: Ուրիշ ի՞նչ կարող են անել: Թուրքիայում քրիստոնյաները, բացառությամբ, իհարկե, եվրոպական ձեռնարկությունների և դեսպանատների, չեն կարող նույնն անել: Այս Մուհամմեդ էլ-Համրան իսկական գանձ է, կարող եմ այդ մասին հանգիստ Ձեզ ասել, քանի որ չի հասկանում ֆրանսերեն, և չեմ ուզում, որ գոռոզամտանա: Նա իսկապես ոնց որ իմ աջ ձեռքը լինի: Այստեղ բոլորս էլ քաջ գիտենք, որ գոյություն ունի միայն մեկ Աստված, ով բոլորիս հսկում է, և որ նույն սատանան է մեկիս դրդում մյուսի դեմ... Լա՛վ սատանան: Սիրիացիների, թուրքերի, դրուզների... դրանց բոլորի խելքն էլ տեղը չէ: Չէ՞ որ Դուք գիտեք, թե մենք՝ մարոններս, որքան վատ ենք դրուզների հետ: Կյանքի բաներ են:

Տանուկին այնքան շատ մոտեցավ Թովմասին, որ գրեթե հպվում էր. կարծես ցանկանում էր նրան մի գաղտնիք հայտնել և իրոք խոսում էր խիստ կամացուկ.

- Պարո՛ն, ես չգիտեմ, թե երբևէ կլինի Լիբանան անունով իսկապես ազատ մի երկիր, թե մենք միշտ կախված կլինենք սրանցից կամ նրանցից: Այսօր՝ թուրքերը, վաղը, եթե Դուք չեք կռահել, ֆրանսիացիները, վաղը չէ մյուս օրը՝ գուցե սիրիացիները, ովքեր ցանկանում են ստեղծել այն, ինչ որոշ ուսյալներ անվանում են «Մեծ Սիրիա»՝ մի հսկա երկիր՝ բաղկացած Սիրիայից, Անդրհորդանանից, Պաղեստինից, Կիպրոսից և, ինչո՞ւ չէ, Իրաքից... Ա՛հ, մայրաքաղաքն էլ՝ Դամասկոս: Այդ ժամանակ Բեյրութը կդառնա միայն նահանգների համար նավահանգիստ, որտեղով կմտնեն բեռները: Դա, սակայն, ավելի շատ մուսուլմանական գաղափար է, քան քրիստոնեական: Հավատացե՛ք ինձ: Այո՛, այո՛, այստեղ մարոններս ընտրյալներ ենք, և հենց որ նեղը գցեն հույն ուղղափառներին, կաթոլիկներին կամ սիրիացիներին, ամեն ինչի ընդունակ ենք: Ձեզ մի բան խոստովանեմ. այս բարդ խնդրում մեղքը ոչ թե կիսալուսնինն է, այլ խաչինը: Ինձ համար հաճելի չէ դա ասելը, բայց այդպես է: Լավ,

պարո՛ն, պետք է, որ ինձանից «կշտացած» լինեք, այնպես որ՝ Ձեզ մի պահ հանգիստ թողնեմ, բայց՝ միայն մի պահ,- Տանուկին հեռացավ՝ օրորելով գլուխը և զղջալով, որ մի օտարերկրացու այդքան բան էր խոստովանել:

Նստած բաց պատշգամբում, որ ծածկված էր սաղարթախիտ խաղողի որթով, Թոմասին թվում էր, թե ծանոթ է փյունիկեցիներին՝ այն գայթակղիչ ժողովրդին, որ ինչ-որ ժամանակ կանգ էր առել այդ ափին՝ նույն այդ վայրում, գուցե նույն այդ ժայռերի վրա, որտեղ գտնվում էր հյուրանոցը, այդ նույն ծովափին, որտեղ իրար հետևից անցել էին խեթերը, շումերները, ասորիները, բաբելոնացիները՝ թողնելով տարբեր մշակույթների նստվածք: Հառաչեց: Տանուկիի շիտակ և բարդ բնավորության հետևում գտնվում էին բոլորը՝ թերահավատները, խորամանկները, լպիրշները, խայթողները, խելացիները, բայց ամենից առաջ՝ զգայուն, խորապես մեծահոգի մարդիկ: Այդ ամենից մի փոքր գաղափար կազմելու համար պետք է այդտեղ տարիներով մնար, ու հազիվ թե մի կյանքը բավականացներ: Քանի՞ կյանք անհրաժեշտ կլիներ դրա համար: Մի բան էր Օքսֆորդի իր լուռ ու հանգստավետ աշխատասենյակը՝ մինչև առաստաղը լի գրքերով, քարտեզներով, փորագիր նկարներով, խեցու և քարի բեկորներով, և բոլորովին այլ բան էր այդ լուսաշող և եռանդուն իրականությունը, որը Թոմասին անդադար իրենով էր պարուրում: Սարսուռ զգաց: Ինչ-որ բան նրա հոգում փոխվում էր մեծ արագությամբ: Մեծ Բրիտանիայի՝ որպես մեծագույն փառքի համար ստեղծված վայրի վերաբերյալ նրա աշխարհընկալումը ներքուստ գնալով խարխլվում էր...

Մերիամն իսկապես գեղեցիկ էր, սակայն ավելի շատ՝ մի հախուռն պարմանուհի: Մի առավոտ՝ կեսօրից առաջ, նրան հանդիպեց իր սենյակում, երբ Մերիամն անկողինն էր հարդարում, և ուզեց նրա հետ պարզապես կատակել: Դա Թոմասի բնավորությանը հատուկ չէր. մի քանի ամիս առաջ այդպիսի բան երբեք մտքով չէր անցնի: Սակայն աղջկան տեսնելով այդքան չքնաղ ու անմեղ՝ նրա հոգում ինչ-որ բան մոռացնել տվեց իր բոլոր նախապաշարմունքները:

Աղջկան մոտեցավ թիկունքից և, որպեսզի վախեցներ, գոտկատեղից գրկեց նրան: Աղջիկը սուր ճչաց, իսկ Թոմասը սկսեց ծիծաղել. այդ պահին ոտքը գորգին դեմ առավ, և ցնցվելով միասին ընկան մահճակալին:

Նույն վայրկյանին Տանուկին չռված աչքերով կլոր դեմքը դռնից ներս մտցրեց.

- Բայց... Պարո՛ն... Ի՞նչ է կատարվում այստեղ, ի սեր Աստծո, Մերիա՛մ...

Շփոթահար Թոմասն ուղղվեց, շուռ եկավ, բայց դեռ շարունակում էր ժպտալ.

- Ոչի՛նչ, Տանուկի՛: Ընդամենը կատակ էր: Մի իսկական անհեթեթություն, իմ կողմից՝ մի հիմարություն: Նա թիկունքով կանգնած էր, ես էլ որոշեցի վախեցնել: Զուտ անկարևոր մի բան: Խնդրում եմ Ձեզ ներել ինձ, գուցե վախեցրել եմ աղջկան...

Սակայն Տանուկիի քրտնաթոր ու լուրջ դեմքը բոլորովին հակառակն էր հաստատում:

- Օ՜ֆ, պարո՛ն: Այստեղ չի կարելի կատակել կանանց հետ... Լսե՛ք, ես Ձեզ արդեն բացատրել եմ: Նա իմ խնամքի ներքո է, դեռ չափազանց երիտասարդ է, և ոչ մի տղամարդ նրան չպետք է դիպչի: Հասկանո՞ւմ եք՝ ո՛չ մի տղամարդ: Եթե նրա եղբայրներն իմանան հենց նոր կատարվածի մասին, հարցն այլ կերպ կմեկնաբանեն... Իսկ այդ ժամանակ... Այո՛, այո՛: Հարկ չկա, որ ինձանից ներողություն խնդրեք, պարո՛ն: Ես Ձեզ հավատում եմ: Սակայն Ձեր, այսպես ասած, հիմարության դիմաց աղջիկն իր կյանքով կհատուցեր: Ո՛չ, ո՛չ, մի՛ ծիծաղեք, պարո՛ն: Դուք ոչինչ չեք հասկանում այս ամենից: Եվ գուցե եվրոպացու համար իսկապես դժվար է դա հասկանալը,- Տանուկին այլայլված էր,- բայց մենք միմյանց փոխադարձաբար կօգնենք: Նախ պետք է մոռանանք տեղի ունեցածը: Ես կասկածի նշույլ անգամ չունեմ, որ Ձեր մտադրությունը բարի էր: Համոզված եմ, սակայն խնդրում եմ, որ ինձ սխալ չհասկանաք: Պետք է անհապաղ թողնեք իմ հյուրանոցը: Հենց հիմա՛: Ձեզ կօգնեմ, որ հավաքեք Ձեր իրերը, և Ձեզ համար կխնդրեմ մի կառք, որ Ձեզ տանի մեկ այլ հաստատություն: Ես իրոք շատ եմ ցավում: Մանավանդ Ձեզ այդքան հավանում եմ: Ի՜նչ ափսոս: Սակայն այլ բան չենք կարող անել: Դա և՛ աղջկա, և՛ բոլորիս օգտին է: Աստծու սիրուն, պատահածի մասին ոչ ոքի բան չասեք: Պարզապես մոռացե՛ք... Դա տեղի չի ունեցել... Չի պատահել...

Թոմաս Հարդինգը մնացել էր ապշահար, առանց մի բան հասկանալու: Այդ մարդն իրեն փողոց էր գցում մի անհեթեթ կատակի պատճառո՞վ: Չգիտեր՝ լո՞ւրջ էր, թե այդպիսի հանդիմանանքը կատակի շարունակությո՞ւնն էր, և միգուցե քիչ հետո Տանուկին իր վրա մաքուր սրտով ծիծաղելո՞ւ էր: Այլ կերպ չէր կարող լինել:

Բայց՝ ոչ, Տանուկին անձկորեն շփում էր ձեռքերը՝ միաժամանակ քրթմնջալով.

- Շատ վախեցած եմ, պարո՛ն: Ձեր անվանած այդ հիմարությունը կարող է բարդանալ: Դուք պետք է լրիվ մոռանաք այդ ամենը, ամե՛նը:

Ես արդեն ոչինչ չեմ հիշում: Սակայն գիտեք՝ կանայք երբեմն անզգույշ են, ու ես չգիտեմ, թե նա ընդունակ կլինի՞ գլխից հանել այդ պատմությունը: Պետք է հանգիստ խոսեմ Մերիամի հետ և հասկացնեմ, եթե ոչ՝ չգիտեմ, թե ինչ կարող է պատահել: Ու հիմա նորից Ձեզ խնդրում եմ, որ հավաքեք Ձեր իրերը: Սա լուրջ բան է: Ի՛նձ լսեք:

Թոմասը հասկացավ, որ այդ մարդը ոչ մի կատակ էլ չի անում: Մի քիչ շփոթահար թոթվեց ուսերը. ստեղծված անախորժ իրադրությունն իր մեղքով էր:

- Լավ, Տանուկի՛, իսկապես ցավում եմ: Այստեղ ինձ համար հրաշալի էր: Սակայն ի՞նչ կարող ես անել: Իմ կողմից թույլ տվածը մի ապուշություն է, և կրկին խնդրում եմ, որ ինձ ներեք: Բաքերին և պարոն Սթենսոնին կհայտնեմ, որ այստեղից գնում ենք: Նրանք, սակայն, կմտածեն, որ ես ինքս ինձնից էլ գլուխ չեմ հանում, քանի որ հենց այս առավոտ նրանց վստահեցրի, որ որոշ ժամանակ դեռ Բեյրութում ենք մնալու, և այս հյուրանոցը կատարյալ վայր է. այստեղ ես կարծես տանը լինեի:

Թոմասը տեսավ, որ արցունքի մի խոշոր կաթիլ սահում է Տանուկիի այտով, և սկսեց խորհել, որ էլի ինչ-որ մի բան կա, որից ինքն անտեղյակ է: Այդ ի՞նչ ծանր ու կտրուկ բան էր պատահել, որ ամեն ինչ այդ աստիճան փոխվեր:

Տանուկին հասկացավ, թե Թոմասի գլխում ինչ մտքեր են պտտվում:

- Ա՜խ, պարո՛ն: Դուք ծանոթ չեք մեր սովորույթներին, ոչ էլ՝ մեր բնավորությանը, հոգեղեն կերտվածքին: Տեսե՛ք, թե՛ լավ և թե՛ վատ առումով կինը ողջ ընտանիքի պատիվ պահողն է: Եվ դա միակ բանն է, որ, ի վերջո, կարևոր է: Ձեզ բացատրեմ: Կարող ենք լինել հարուստ կամ աղքատ, զորեղ կամ համեստ, հաջողակ կամ դժբախտ, սակայն այն, ինչ բոլորիս դարձնում է հավասար կամ տարբեր, պատիվն է: Եթե դա կորցնեն, մնացյալն ավելորդ է: Կնշանակի՝ դադարում են գոյություն ունենալուց կամ դեռ ավելի վատ՝ ոնց որ դժոխք ընկնելը: Եվ այդ արժեքի կրողը կինն է: Նա պետք է շատ պարկեշտ վարքագիծ ունենա: Եթե կուզեք իմանալ, ապա այդպես եղել է ի սկզբանե, և՝ ոչ միայն մուսուլմանների համար, թեև պետք է խոստովանեմ, որ նրանք ավելի խստապահանջ են: Մեզ՝ քրիստոնյաներիս համար էլ նույն բանն է. ցանկացած քրիստոնյա՝ լինի մարոն, ուղղափառ հույն, կաթոլիկ, կամ ինչ-որ կամենաք, ես ի՛նչ իմանամ: Գիտեք, եթե Մերիամը որևէ մեկին պատմի տեղի ունեցածը, գուցե և մահանա: Մի օտարերկրացու հետ ընկնել անկողնուն... Կվարկաբեկվի: Նրա եղբայրներից կամ զարմիկներից մեկը պարտավոր է սպանել աղջկան... նրա ընտանիքի մյուս անդամների հոժար կամ-

քով: Եթե Դուք ինձ հակաճառեք, որ դա բարբարոսություն է, կընդունեմ, բայց դրանով հետևանքներից չես խուսափի: Ինձ հասկանո՞ւմ եք: Դեռ ավելին՝ անախորժություն պատճառողին, տվյալ դեպքում՝ Ձեզ, նույնպես լուրջ վտանգ կսպառնա: Դա չի նշանակում, որ բոլորը, նույնիսկ ինքը՝ աղջկան սպանող ազգականը, չեն ողբա Մերիամի մահը: Իհարկե, կվշտանան: Կստացվի այնպես, որ մի պատահար է տեղի ունեցել, ճակատագրական մի բան: Ա՜հ, պարո՛ն: Երբեմն սովորույթները, որ, ի վերջո, օրենքների պես են, դաժան են, բայց հնարավոր չէ դրանք մեկ օրում փոխել: Դե՛ ինչ, գնացե՛ք, Ձեզանից նեղացած չեմ, սակայն այլընտրանք չունեմ: Ուրիշ ոչինչ չեմ կարող անել: Ձեզ միշտ ափսոսանքով կհիշեմ և Ձեր իսկ ապահովության համար աղաչում եմ Ձեզ, որ այս կողմերում կանանց հետ շփվելիս ծայրաստիճան զգուշավոր լինեք:

Այլևս խոսելու հարկ չեղավ: Թոմասը գնալու մասին որոշումն անմիջապես հայտնեց Սթենսոնին և Բաքերին, ովքեր շվարած ու քննախույզ նայեցին նրան, բայց ոչ մի խոսք չասացին: Ընդամենը երկու ժամ անց ջորուն լծված սայլը բեռնված էր նրանց իրերով: Մեծ ճամպրուկներում Թոմասի՝ բարձրաշխարհիկ հասարակություն դուրս գալու կոստյումներն ու օսլայած վերնաշապիկներն էին՝ կախիչներից կախված, ծանր արկղերում՝ գրքեր, հող փորելու գործիքներ, դաշտային վրանների կապոցներ և անհրաժեշտ այլ բաներ՝ պատյանի մեջ զենքեր, տեղանքագրական սարքը և եռոտանիով հեռադիտակը: Չնայած դիտարկելու և ստուգելու շատ բաներ կային, բայց դրանք դեռ չէին օգտագործվել: Այդտեղից լուռ ուղղվեցին մեկ այլ փոքր հյուրանոց, որի սեփականատերն ինչ-որ ֆրանսիացի էր: Այն տեղակայված էր նույն ծովափին՝ Բողոքական համալսարանի հարևանությամբ՝ նախկին հյուրանոցից մեկ մղոն հեռավորության վրա: Տանուկին, նրան հրաժեշտ տալով, արտասվաթոր աչքերով սեղմեց ձեռքը:

- Մնա՛ք բարով, պարո՛ն Հարդինգ, Աստված Ձեզ պահապան, ես Ձեզ կկարոտեմ:

- Մնա՛ք բարով, Տանուկի՛, ինձ հետ տանում եմ դառնանուշ մի հուշ և այն հույսը, որ, վերջ ի վերջո, ամեն ինչ կմոռացվի: Մնա՛ք բարով:

Նոր հաստատությունը՝ «Մարսելյեզը», բոլորովին այլ վայր էր՝ հավակնոտ, գավառական մի ցածրակարգ հյուրանոց՝ այնպիսի կահավորմամբ, որ վատ ճաշակի վկայություն էր: Իրեն տրամադրված ննջարանի մահճակալի ոսկեզօծ սնարը Թոմասին մտորելու տեղիք տվեց. դա ուրիշ Բեյրութ էր: Պարզվեց, որ հյուրանոցի կառավարիչը կիպրոսցի է: Նա պարզապես մի քանի տարի ապրել է Մարսելում և ամուսնացել մի

ֆրանսուհու հետ, ով դեռ նրա հետ էր. բանն այն էր, որ նա ամուսնու հետ շարունակ վիճում էր, երբեմն էլ՝ խոհանոցի ներսից: Ինչ վերաբերում էր ռեստորանին, ապա այն գերազանց էր՝ համեղ մսեղենով ու ձկնեղենով՝ պատրաստված այնպես, ինչպես Ֆրանսիայում: Գոնե այդ առումով չէր տուժել: Հետո այդ ամենի շուրջ մտքեր փոխանակեց Սթենսոնի հետ:

- Պարո՛ն Սթենսոն, իմ կարծիքով՝ այստեղ՝ Բեյրութում, մենք պետք է երեք ամսով մի տուն վարձեինք: Եթե ուզում եք, կարող ենք երբեմն գալ այստեղ՝ ճաշելու, բայց սա՝ որպես հյուրանոց, ինձ չի հրապուրում: Բացի դրանից՝ տանը շատ ավելի լավ կդասավորեինք մեր գործիքներն ու իրերը և կմեկնեինք այն վայրերը, որոնք մեզ հարկավոր է այցելել: Թվարկեմ. կուզենայի այցելել Նահր էլ-Կալբի գերեզմանոց, որն այստեղից շատ մոտ է, անշուշտ, Բիբլոս, որտեղ շատ հետաքրքիր բաներ կան, և ինքս էլ եմ ուզում տեսնել դրանք: Այնուհետև ես Ձեզ առաջարկում եմ մի ուղևորություն Տրիպոլիով, իսկ ավելի ուշ, իհարկե, Բաալբեկ այցելելու համար կկտրենք ու կանցնենք Բեկաայի հովիտը: Այդ տաճարները ցնցող են: Եվ գուցե մեզ օգնեն՝ ավելի լավ հասկանալու այն, թե ինչպես էին մտածում նրանք, ովքեր խիզախորեն նախագծել ու կառուցել են դրանք: Եվ վերջապես Ձեզ առաջարկում եմ, որ ուղևորվենք հարավ՝ դեպի Սիդոն: Որքան ինձ հայտնի է, ընդամենը տասը տարի առաջ թուրքերն այնտեղ գտել են փյունիկյան մի տաճարի մնացորդներ: Կուզենայի տեսնել դրանք, նաև այցելել Տյուրոս՝ հնագույն Փյունիկիայի մայրաքաղաքը: Այդ քաղաքն էր, որ գայթակղեց Նաբուգոդոնոսորին, իսկ հետո՝ Մեծն Ալեքսանդրին: Ինչպես տեսնում եք, Սթենսո՛ն, չեմ կամենում նրանցից հետ մնալ:

Սթենսոնն անվրդով նրան էր զննում.

- Ինչ-որ կասեք, պարո՛ն Հարդինգ: Ես գրեթե ոչինչ չեմ հասկանում այդ ամենից, և Դուք ինչ էլ հրամայեք, իմ սրտով կլինի: Սակայն ներողամի՛տ եղեք անհարկի միջամտությանս համար, բայց Ձեզ կասեմ, որ այդ Տանուկի ոչնչությունը շատ տհաճ ձևով մեզ իր հյուրանոցից դուրս արեց: Ինչպե՞ս հանդուրժեցիք:

Թոմասը հառաչեց, որոշ ժամանակ լուռ մնաց:

- Պարո՛ն Սթենսոն, հաճույքով կպատասխանեմ Ձեր հարցին: Գիտեք, այս մարդիկ ունեն իրենց առանձնահատկությունները: Եվ հավատացե՛ք ինձ, եթե Ձեզ ասեմ, որ այդ մարդն ինձ մեծ լավություն է արել, իսկ ես չեմ կարող ու չպետք է ի չարը գործադրեմ նրա վստահությունը: Նա մեզ դուրս չի արել, մեղավորն ինքս եմ... մի հիմարության պատճառով: Այլևս ասելիք չունեմ: Այստեղ կմնանք միայն մեզ անհրաժեշտ

ժամանակով, թեև ակնհայտ է, որ այս տեղանքը չունի այն հաստատությանն բնաշխարհի հմայքը: Այնպես որ՝ մոռացե՛ք այդ ամենը, Ձեզ շատ եմ խնդրում: Ձեզ երախտապարտ կլինեմ, եթե ինձ օգնեք, որ այցելենք Նահր էլ-Կալբ, որը, ինչպես ասում են, նշանակում է «Շան գետ»: Պատմությունը չի ներում, և եթե ինձ թույլ տաք, ապա Ձեզ մի խորհուրդ կտամ: Աշխատե՛ք օգտվել այս ուղևորությունից: Դուք ապրել եք Հնդկաստանի հյուսիսում, ծանոթ եք տարաշխարհիկ այլ վայրերի և կարող եք մի Արևելքը մյուսի հետ համեմատել շատ ավելի լավ, քան ես: Այնուամենայնիվ, մի՛ թերագնահատեք Լիբանանը. սա այն երկրներից մեկն է, որն իր մասնակցությունն է ունեցել այն աշխարհի ստեղծման գործում, որը ներկայումս մերն ենք համարում:

Սթենսոնը ժպտաց, մինչ կհամաձայներ:

- Այո՛, պարո՛ն Հարդինգ, համաձայն եմ, իսկ հիմա, եթե թույլ տաք, կխոստովանեմ՝ շատ գոհ եմ, որ այս ուղևորության ընթացքում Ձեզ ընկերակցելու պատեհ առիթ ներկայացավ: Սկզբում իմ կատարածը լավ փոխհատուցված աշխատանք էր, և անկեղծ ասած, երբ առաջարկը եղավ, ես Արևելք վերադառնալու ցանկություն չունեի: Հիմա շնորհակալ եմ, որ ինձ բերեցիք, թեև սահմանափակ մարդ եմ, բայց այս երկիրը շատ հետաքրքրական է, և հաշվի առնելով իմ տարիքը՝ կասեմ, որ եղանակն այստեղ շատ ավելի բարենպաստ է, քան Անգլիայում: Ոսկորներս քիչ են ցավում: Այնպես որ՝ ես գոհ եմ ու շնորհակալ:

Թոմասը փորձեց կրկին այցելել հայր Դոնելիին և քայլեց՝ զբոսնելով մինչև համալսարան: Դռնապանը բավականին հուսաբեկ նրան պատմեց, որ նոր են հայր Դոնելիի աճյունը հողին հանձնել.

- Ի՞նչ կարող ենք անել: Այդ մարդը մեծ իմաստուն էր, և նրա կորուստը ողբալի է բոլորիս համար:

Թոմասը համաձայնեց և հետ վերադարձավ. օրեր առաջ էր նրա հետ ծանոթանալու պատեհություն ունեցել:

Այդ պահին համալսարանի դռնից մի հասուն տարիքի մարդ էր դուրս գալիս՝ բարձրահասակ, շիկահեր, պեպենոտ դեմքով, ով ներկայացավ որպես Ավգուստուս Նյուման: Նրա արտասանությունից Թոմասը կռահեց, որ լեռնեցի մի շոտլանդացի է: Թվում էր, որ Նյումանը շատ ուրախ էր Թոմասի հետ ծանոթանալու և մտքեր փոխանակելու համար: Նրան հրավիրեց գրադարանի պատշգամբ՝ թեյ խմելու: Ավգուստուս Նյումանը բառերն արտասանում էր դանդաղ, մոլի ծխողի կոշտ ձայնով՝ պահպանելով շոտլանդական ընդգծված շեշտը, չնայած Թոմասին հավատացրեց, որ արդեն երկար տարիներ են, ինչ ինքն Արևելքում է:

- Այսպիսով՝ Դուք եք Թոմաս Հարդինգը: Ինձ արդեն պատմել են, որ Դուք այս տեղերով ման եք գալիս: Ի՜նչ պատահականություն... Ի՜նչ փոքր է աշխարհը: Մեծ գոհունակությամբ պետք է ասեմ, որ ես Կոստանդնուպոլսում ծանոթացել եմ Ձեր պապիկի՝ Հենրի Հարդինգի հետ: Այն ժամանակ ես մի անփորձ երիտասարդ էի, իսկ նա ուր որ է դեսպանատան քարտուղարի պաշտոնից պետք է թոշակի անցներ: Թուրքերը պնդում էին, որ այդ գեղեցիկ քաղաքը կոչենք Ստամբուլ, բայց չէի կարծում, որ դա նրանց կհաջողվի: Ինչպես գիտեք, «Էյս տան պոլին» հին թուրքերենով նշանակում է մոտավորապես «դեպի քաղաք». պատերազմական կոչ, որով օսմանները գրգռում էին իրենց զորքին, որպեսզի գրոհեին պարիսպների վրա, իսկ այդ ճիչը դարերի ընթացքում դարձավ մեզ այսօր ծանոթ Ստամբուլը: Ձեր պապն այնտեղ եղել է Մեծ Բրիտանիայի դեսպանատան քարտուղարը, և գիտեմ, որ վախճանվել է տասներկու տարի առաջ: Մեծ մարդ էր նա և շատ բան գիտեր այն կարևոր, լուրջ հարցի մասին, որն այսօր իրար տալիս են եվրոպական բոլոր կառավարությունները. ի՞նչ կլինի Օսմանյան կայսրության նավաբեկության մնացորդների հետ: Նա հմուտ փորձագետ էր և ամեն ինչ գրի էր առնում, իսկ Դուք շատ կարդացողի տպավորություն եք թողնում:

Թոմաս Հարդինգը հաճույքով համաձայնեց: Այո՛, իսկապես դա հրաշալի պատահականություն էր: Նյումանը նրան մանրամասն զննում էր, մինչ կվառեր ծխախոտը՝ թերևս փորձելով որևէ նմանություն գտնել պապի ու թոռան միջև: Թոմասն իր մեջ ուժ չէր գտնում՝ նրան բացատրելու, որ այդ գրառումներին տիրացել էր իր հայրը, և դրանք պահվում էին յոթ փակի տակ: Ինչպես իրեն հաջողվել էր եզրակացնել՝ գուցե և ինչ-որ տեղ դրանց «ամոթալի» լինելու պատճառով. այդ եզրակացությանը նա հանգել էր մի քանի խառնիխուռն նամակների շնորհիվ: Դրանք մի երեկո, երբ գտել էր տան ձեղնահարկում՝ մի փոշոտ ճամպրուկում՝ թաքցրած մեծ արկղերի տակ, կարդացել էր մեծ զարմանքով:

Նրա պապը Կոստանդնուպոլսում երկար ու վտանգներով լի հարաբերություն էր ունեցել մի հոմոսեքսուալ սիրեկանի հետ: Զննեց Նյումանի սառն ու կապույտ աչքերը՝ փորձելով դրանց մեջ որևէ նշան գտնել. գուցե Նյումանն էլ էր հոմոսեքսուալ: Նա արդեն տարիքով էր՝ գուցե քառասունն անց, ամուրի, շատ լավ խնամված ձեռքերով ու մազերով, համարյա զուգված-զարդարված, անթերի շարժուձևով, սակայն՝ փոքր-ինչ սեթևեթող: Այո՛, կարող էր կատարելապես հոմոսեքսուալիստ լինել: Կոստանդնուպոլսում էլ՝ այդ արևելյան ու կոսմոպոլիտ քաղաքում, որտեղ ոչ ոք ոչ մի բանի վրա չէր զարմանում, ոչ էլ այդպիսի բանի համար մեկը

մյուսին կմեղադրեր… ամեն բան հնարավոր էր:

Ինչ վերաբերում էր Նյումանին, ապա այդ առումով չէր էլ համարձակվի նրան դատապարտել: Հիշում էր Օքսֆորդի վարժարանի սենյակում իր պատահական կապը Ռոբերտ Մաքսվելի հետ: Է՜հ, երիտասարդության բաներ. սեքսի հետ կապված՝ ամեն ինչի հանդեպ հետաքրքրություն: Ճիշտ է, որոշ ժամանակ փոխադարձ գայթակղության պես մի բան էին տածում միմյանց նկատմամբ, և Ռոբերտն անգամ նրան ակնարկել էր սիրո մասին: Հետո, սակայն, մի բան եղավ, որ ցանկանում էր հիշողությունից ջնջել: Այդ բանն արդեն իսկ մոռացված էր: Հիմա, որքան իրեն հայտնի էր, Ռոբերտն ապրում էր Միացյալ Նահանգներում՝ Նոր Անգլիայում, որտեղ Հարվարդի համալսարանում որպես պրոֆեսոր գրականություն էր դասավանդում, իսկ այն, ինչ եղել էր, վերջնականապես մնացել էր անցյալում: Անցյալո՞ւմ… Չկարողանալով ինքն իրենից խույս տալ՝ երբեմն դեռ երազում էր տեսնում շաբաթ և կիրակի օրերին Միդլեսեքսում՝ Ռոբերտի հորեղբոր աներևակայելի դղյակում տեղի ունեցածը: Իրոք դժվար էր դա մոռանալը:

- Այո՛, իմ սիրելի՛ բարեկամ,- Նյումանը խզեց նրա մտածմունքները՝ խոսելով ջերմ ու սքանչելի ձայնով,- Հենրին՝ Ձեր պապը, մեծ մարդ էր: Հետագայում՝ մինչև նրա վախճանվելը, այլևս ոչ մի լուր չունեցա: Սակայն Ձեզ պետք է ասեմ, որ ինձ զարմացրել են նրա անսահման իմացությունը և մանավանդ մեծ նրբազգացությունը: Այն կարճ ժամանակում, որ եղա նրա կողքին, շատ հետաքրքիր բաներ սովորեցի: Այդ մարդն այնքան բան գիտեր:

Թերևս իր պապի հետ կապված պատմությունը ճիշտ էր: Թոմասի վերջին կասկածները ցրվեցին: Եղածը եղած էր: Իր պապն իր պապն էր, իսկ նա՝ նա: Այնուամենայնիվ, իր խոսակցի համառ հայացքը ստիպում էր մտածել, որ փնտրում էր ինչ-որ մեղսակցություն, կարծես գիտեր, թե ինչ էր անցնում դիմացինի մտքով:

- Այո՛, Թոմա՛ս, ասում էի, որ այստեղ դեռ շատ բաներ տեղի կունենան: Հիշե՛ք, երիտասա՛րդ իմ բարեկամ, անցյալ տարվա պետական հեղաշրջումը Կոստանդնուպոլսում և այդ «երիտթուրքերի»՝ իշխանության գլուխ անցնելը: Իրականում՝ իսկական աշխարհաքաղաքական ցնցում, որը մեզ ակնհայտ ազդանշաններ է հղում այն մասին, որ շուտով ամեն ինչ փոխվելու է: Մոտենում է Օսմանյան տիրապետության վերջը, սակայն նախքան դա շատ մեծ ողբերգություն կտեսնենք: Դա նույնը չէ, որ պարզապես ասեմ. «Լա՛վ, ներկայացումն ավարտվեց, ցտեսություն»: Ի դեպ, այս առավոտ ժամանակ ունե՞ք: Կուզե՞ք ինձ ընկերակցել: Այստեղ

գիտեմ մեկին, որին արժե և գուցե Ձեզ հետաքրքրի նրան լսելը: Ա՜խր, Դուք այնքան նման եք Ձեր պապին:

Թոմասը համաձայնեց: Ի վերջո, հենց դրա համար էր նա հասել այդտեղ՝ ոչ միայն զննելու Բաալբեկի և Բիբլոսի հինավուրց քարերը: Ամեն անցնող օրվա հետ մտածում էր, որ պատմության մեջ ամենակարևորը մեծ նավաբեկությունից մնացած հետքերի ուսումնասիրությունն է, այսինքն՝ թե ինչպես են առաջացել ժողովուրդները, ինչ փոփոխություններ են կրել դարերի ընթացքում: Հաճախ մտածում էր, որ ժամանակի հոսքն այն է, որ ցանկացած բան կարծես անցկացնում է հսկայական ջրաղացի քարերի միջով, որոնք, ամեն ինչ մանրացնելով, թողնում են այն թեթև ոսկե փոշին, որը, ի վերջո, նույնպես անհետանալու է՝ քշվելով պատմության քամու միջոցով: Մի խորթ ու ցնցող զգացողություն...

Էլ չհապաղեցին: Նյումանը մի պահ իր սենյակը բարձրացավ՝ վերցնելու թեթև բամբակյա վերնաշորը, քանի որ Բեյրութում սկսել էր զովանալ. արևմուտքից թույլ քամի էր փչում: Հետո արագ քայլեցին դեպի քաղաքի հին մասը: Ավգուստուս Նյումանն ամեն ինչ դիտարկում էր, ուշադրություն դարձնում ամենափոքր մանրուքին և բարձրաձայն մեկնաբանում, թե ինչ է մտածում դրա մասին.

- Տեսե՛ք, Թոմա՛ս: Այս մարդիկ, նկատի ունեմ տարբեր ժողովուրդներին, որոնք կազմում են Սիրիան, և մանավանդ այս տարածքում, որին կարող ենք կոչել Լևանտ, իրականում տարածագում բնակչություն են՝ շատ տարբեր արմատներով, երբեմն՝ նույնիսկ հակադիր մշակույթներով, և, այնուամենայնիվ, ահավասիկ կազմում են Մերձավոր Արևելքի ամենահիրապուրիչ երկրներից մեկը: Լեռան, այսինքն՝ «Ջեբալ»-ի՝ Լիբանանի լեռան վրա ուղղափառ հույներն են և մարոնականները, երկուսն էլ՝ քրիստոնյա, որ ապրում են, իմ կարծիքով, ամենաարտակարգ ժողովուրդներից մեկի՝ դրուզների կողքին: Երբևէ խոսե՞լ եք նրանցից մեկի հետ: Էթնիկապես արաբական ժողովուրդ են, սակայն իրականում մուսուլմաններ չեն: Իրենք իրենց կոչում են «ահլ ալ-Թավհիդ», այսինքն՝ միայն մեկ Աստծո ժողովուրդ: Իրենց միաստվածային կրոնը, բնականաբար, ընդունում է Մուհամմեդին, սակայն՝ նաև Քրիստոսին, Մովսեսին և հրեա քրիստոնյա մյուս բոլոր մարգարեներին: Իհարկե չկարծեք, թե իրենց հավատքից, որը շիիզմի մի հեռավոր ճյուղավորում է, Ձեզ ոչինչ չեն պատմի, սակայն հարելով նեոպլատոնյան աստվածաբանությանը՝ հավատում են մեկ Աստծո գոյությանը, որը շատ նման է գնոստիկական[2] ուսմունքին: Նրանց կրոնական մտածելակերպը շատ

[2] Գնոստիցիզմ՝ քրիստոնեության վաղ շրջանի կրոնա-փիլիսոփայական ուղղություն,

արմատական է, բայց նաև իսկապես հիմնված է մերձավորին օգնելու, մեծերին հարգելու, տված խոստումը չդրժելու, հայրենիքի և միակ՝ ամենազոր Աստծո վրա: Ոչինչ չեն ուզում լսել բազմակնության մասին և հիարկե զերծ են մնում թե՛ խոզի մսից և թե՛ ալկոհոլից... Լինելով խստապահանջ՝ անգամ չեն ծխում: Իրոք, ամենահետաքրքրականը մյուսների հետ նրանց վարվելակերպն է: Կհիմնավորեմ: Դարեր ի վեր նրանք «տակիայի[3]» հետևորդներ են, այսինքն՝ արտաքուստ ընդօրինակում են իրենց միջավայրում ապրող մուսուլմաններին, որպեսզի թաքցնեն իրենց իսկական համոզմունքները, քանի որ դրանց պատճառով բազմիցս նրանց կողմից ծեծվել են ու դաժանորեն արհամարհվել, անգամ՝ սպանվել: Թեև չեն հավատում աղոթքին, ո՛չ էլ՝ ծոմին, ո՛չ էլ՝ Ռամադանին, այնուամենայնիվ հավատարմորեն կատարում են այդ ծեսերը՝ ի ցույց բոլորի՝ ընդհարումներից խուսափելու համար: Նայե՛ք, հենց այն մարդիկ, որ այս կողմ են գալիս, «ուքքալ» դրուզներ են, այսինքն՝ նրանց իմաստունները կամ իրենց կրոնի գաղտնիքներին իրազեկ փոքրաթիվ հետևորդները: Նկատե՛ք, որ սև զգեստների հետ կրում են սպիտակ չալմա: Ինչպես գիտեք, ամեն բան գոյություն ունի աստվածային կամքով, իսկ գերագույն երջանկությունն Աստծո հետ միասնության մեջ լինելու զգացումն է, որը, ըստ նրանց, մեզ ամենուրեք շրջապատում է: Լավ, եթե այս հարցը Ձեզ հետաքրքրում է, մի օր Ձեզ կներկայացնեմ դրուզների որևէ խմբավորման առաջնորդի:

Նյումանը քայլելիս արագ էր խոսում, իսկ Թոմասը գնում էր նրա կողքից՝ հմայված այդ մարդու վառ անհատականությամբ:

- Արդեն հասնում ենք, այդտեղ է իմ ընկերոջ՝ Լևոն Աբրամյանի գործերի խանութը: Մտե՛ք: Նա իմ լավ ընկերն է, այնպես որ՝ նրա հետ կարող ենք հանգիստ խոսել: Բացի դրանից՝ անգլիամետ է: Այստեղ շատ չեն այդպիսիք:

Ավգուստուս Նյումանը և Թոմաս Հարդինգը հին շքամուտքից մտան մի մեծ ներքին բակ՝ ծածկված մուգ բրդյա մահուդով: Մի փոքրիկ շատրվան զովացնում էր շուրջը, իսկ բարձր արմավենին իր տերևներով հպվում էր վրանաձև առաստաղի վերին մասին: Մի սպիտակամաշկ մարդ՝ մեծ քթով ու սև մազերով, մոտեցավ նրանց:

- Ա՜հ, ի՜նչ անսպասելի ու հաճելի այցելություն, իմ սիրելի՛ բարեկամ,

---

որ ներկայացնում էր քրիստոնեական կրոնի դոգմաների, հունական իդեալիստական փիլիսոփայության և արևելյան կրոնական ուսմունքների խառնուրդը:

[3] Տակիա՝ իսլամական տերմին, որն արաբերեն նշանակում է ողջամտություն և զգուշավորություն, այսինքն՝ հրապարակավ հրաժարում կրոնից՝ սակայն հոգու խորքում հավատարիմ մնալով նրան:

Ավգուստո՛ւս Նյուման: Իրոք, որ Դուք Ձեզ սիրել եք տալիս: Իսկ Դո՞ւք... Դուք այն անգլիացին չեք, որ մի քանի շաբաթ մնացիք մեր լավ բարեկամ Տանուկիի հյուրանոցում:

Թոմասը, այդ մարդու իրազեկությունից շփոթված, համաձայնեց. մի՞թե կարող էր իմանալ այդ մասին:

- Ա՜հ, իհարկե... Այս Բեյրութն ընդամենը մեծ գյուղ է՝ քաղաքի սնապարծություններով: Պետք է զգուշացնեմ Ձեզ, որ այստեղ բոլորս միմյանց ճանաչում ենք, և ոչ ոքի չի հաջողվում աննկատ մնալ... Սա ունի իր լավ և վատ, շատ վատ կողմերը: Այստեղ քրիստոնյաները խոստովանության կարիք չունեն. բոլորն էլ գիտեն իրենց հարևանների չնչին մեղքերը... Ձեզ դրանք համառոտ կամփոփեմ՝ նախանձ, ցանկամոլություն և չարախոսություն: Ի՞նչ եք կարծում, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ մենք Աստծո շնորհածով չենք բավարարվում: Անցե՛ք և նստե՛ք: Կիտրոնով թե՞յ... Ա՜հ, անգլիացիների համար՝ կիտրոնով սառը թեյ... Աշխարհի լավագույն ըմպելիքը...

- Լևո՛ն,- այդ երկու տղամարդիկ վաղուց մտերիմներ էին,- իմ նոր բարեկամը՝ Թոմաս Հարդինգը, իսկ և իսկ Օքսֆորդի համալսարանի անտիկ արվեստի պրոֆեսոր... Իսկ Ձեզ, Թոմա՛ս, զգուշացնում եմ, որ Լևոն Աբրամյանն իսկական հայ է, սակայն ամենից առաջ և մանավանդ՝ Անգլիայի շատ լավ բարեկամ: Անշուշտ գիտեք, որ հայերն ավանդաբար Ֆրանսիայի բարեկամներն են, և կասեի, որ իրավացի են, բայց մեր Աբրամյանը հատուկ թուլություն ունի Մեծ Բրիտանիայի հանդեպ: Մի օր կիմանաք, թե՝ անգամ ինչ աստիճանի: Իսկ հիմա, Աբրամյա՛ն, ինչո՞ւ մեզ չեք մեկնաբանում վերջին նորությունները: Անհամբեր ուզում եմ Ձեզ լսել:

Նյումանն աչքով արեց Թոմասին՝ ասես նախապատրաստելով այն բանին, թե ինչ է իրենց սպասվում:

Տեղավորվեցին բակին նայող ամենամեծ սրահներից մեկում. գուցե փոքր-ինչ ծանրաբեռնված արևելյան ոճի մի սրահ՝ փայտյա բարձր առաստաղով՝ զարդարված ձեռանկար նախշերով, հողե հատակով՝ ծածկված գորգերով և բրոնզե շքեղ լուսամփոփներով:

- Ձեզ դուր է գալիս, այնպես չէ՞,- Աբրամյանն ասես հպարտ էր այդ հսկա տնով,- սա հին պալատից պահպանված մասն է, իմ կարծիքով՝ երեք հարյուրից չորս հարյուր տարվա: Ինձ համար սա իդեալական վայր է, որտեղ ամռանը զով է, իսկ ձմռանը՝ տաք, երբ վառում եմ բրոնզե մեծ կրակարանը, որը թերևս հենց նրանից՝ Սալադինից[4] է մեզ հասել:

[4] Սալադին՝ Սալահ ադ Դին Յուսուֆ Իբն Այուբ (մոտ 1138-1193), Եգիպտոսի և Սիրիայի առաջին սուլթանը, մուսուլմանական զորքերի առաջնորդը խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ:

Ես զբաղվում եմ արտահանմամբ և ներմուծմամբ, և ինձ բախտ վիճակվեց գնել այս պալատը, երբ դեռ քիչ փող արժեր: Հիմա բավականին թվով հայեր են գալիս Բեյրութ: Լսե՞լ եք Ադանայում տեղի ունեցած ջարդերի մասին: Գալիս են այստեղ, որովհետև կարծում են, որ Բեյրութը միակամ քրիստոնեության օրրանն է, թեև մեր իսկական մայր եկեղեցին Անտիոքում է: Այնքան շատ են գալիս, որ այստեղի մարդիկ, լինելով շատ հյուրընկալ, արդեն կուշտ են այդ խաղաղ, սակայն զանգվածային ներթափանցումից: Ձեզ կասեի, որ սա դեռ սկիզբն է: Սուլթան Աբդուլ Համիդը դեռ գահին է, չնայած երիտթուրքերի պետական հեղաշրջմանը: Թեև մեր հայրենակիցներից շատերը համոզված են, որ գնալով ամեն բան լավ է լինելու, սակայն մի քանիսս հակառակ կարծիքի ենք: Ավելի վատ է լինելու, քան երբեք, ու երանի ես սխալվեմ: Ի՞նչ կարծիք ունեք այս թեյի մասին: Ձեզ դո՞ւր է գալիս: Այն շատ հեռվից է՝ Հնդկաստանի հարավից, և ինչպես ինձ հավաստիացնում է վաճառականը, որից այն գնում եմ, հատուկ տեսակի է:

Աբրամյանը երկար կում արեց՝ ըմբոշխնելով և մի պահ մնալով մտահոգ, հայացքը՝ մոլոր: Այնուհետև դիմեց Թոմասին:

- Ինչպես կռահում եմ, Ձեզ հետ էլ է նույն բանը տեղի ունենում: Նոր եք եկել Բեյրութ և արդեն զգում եք այդ արտառոց գայթակղությունը, որին ոչ ոք չի կարողանում ընդդիմանալ: Ասեմ Ձեզ, որ չանհանգստանաք, միայն Ձեզ հետ չէ այդպես: Այս տարածքն ունի ինչ-որ տիրական, հրաշալի մի բան, որը վաղնջական ժամանակներից գերել է մարդկանց: Լեռնային Լիբանանը Սիրիայի նահանգի մի փոքրիկ տարածքն է, որն իր հերթին Օսմանյան կայսրության հիմնական մասերից է: Ինչպես որ Ձեզ ասացի, Ադանայում և ողջ Կիլիկիայում տեղի ունեցող հրեշավոր սպանդների պատճառով իմ հայրենակիցներից շատերը մեր օրերում գալիս են այստեղ, մյուսներն էլ գնում են Եգիպտոս կամ Պաղեստին: Ովքեր կարողանում են, գնում են Ֆրանսիա, Անգլիա կամ Միացյալ Նահանգներ:

- Աբրամյա՛ն, իսկ իրականում ի՞նչ է այնտեղ տեղի ունենում,- Նյումանը վառ հետաքրքրություն ցուցաբերեց՝ տեսնելով, որ այդ հարցը վշտացնում է իր ընկերոջը:

- Ա՜հ, սիրելի՛ Ավգուստուս: Ասեմ ձեզ, որ մեծ ջանք պետք է գործադրեմ, որպեսզի հանգիստ կարողանամ պատմել այդ մասին՝ զսպելով նողկանքս, քանզի որպես վկա պարտավոր եմ չմոռանալ, անգամ ցանկության դեպքում ինձ չի հաջողվի: Իրականում դա ցույց է տալիս քաղաքական իսկական մթնոլորտը, թե ինչպես են թուրքերը, արյուն հե-

ղելով ու զենքի ուժով, փորձում պահպանել մի կայսրություն, որը շաքարի պես հալվում է: Եթե Աբդուլ Համիդը մարդասպան բռնակալ էր, ապա սրանց, որ կոչվում են «երիտթուրքեր», բնորոշում է հայտնի ասացվածքը՝ «Մինչև չգա վերջինը, չի հիշվի առաջինը»: Սակայն ձեր թույլտվությամբ կանդրադառնամ անցյալ տարվա վերջերին՝ 1908 թ-ի նոյեմբերին տեղի ունեցած դեպքերին, որպեսզի ավելի լավ պատկերացնեք իրադրությունը:

Թոմաս Հարդինգը մնաց լուռ ու սպասողական: Նա այդ պահին Օքսֆորդի պրոֆեսորներից մեկի չոր ու ցամաք հին պատմությունը չէր ունկնդրում, ով փորձում էր որևէ բացատրություն տալ հազարամյակներ առաջ անհետացած աշխարհի մասին՝ պատմության մեջ փնտրելով պատճառներ, զննելով մի երկու հետքեր կամ մի քանի փոշոտ քարեր: Այնինչ Թոմասն այնտեղ էր՝ պատմության ուղիղ կենտրոնում, և լսում էր զոհերից մեկի ձայնը, ով ընկղմված էր մեծ հորձանուտում, որը բոպե առ բոպե կարող էր փոխել աշխարհը: Դրանում դույզն-ինչ կասկած չուներ առաջին իսկ պահից, երբ հայտնվեց նավակողին ու տեսավ հինավուրց քաղաքի ուրվագիծը՝ կտրտված եկեղեցիներով ու մզկիթներով:

- Թուրքերը շշուկներ էին տարածում այն մասին, որ հայերը մեծ ապստամբության են պատրաստվում ամբողջ Կիլիկիայով մեկ՝ հանուն «Փոքր Հայաստանի» անկախության: Իհարկե, այդ իմաստով կային շարժումներ, չեմ ժխտի: Սակայն, բարեկամնե՛ր իմ, այլևս անկարելի էր հանդուրժել նահանգապետի դաժանությունը, գավառապետերի նենգությունը և մուդիրների՝ տեղական կառավարիչների հարկային բռնագանձումները: Այդ հսկա կայսրությունը հիմնված է բաղկացուցիչ տարբեր ազգերի վրա. նկատի ունեմ կրոնական, ոչ տարածքային համայնքները: Ուրեմն, ո՞րն է Օսմանյան կայսրության էությունը: Բացի մահմեդական բոլոր թուրքերից՝ այնտեղ համատեղ ապրում են սուննիներ կամ շիաներ, դրուզներ, ալավիներ, քրիստոնյաներ, ուղղափառ հույներ, կաթոլիկներ, մարոններ, լուսավորչական հայեր, սեֆարդի հրեաներ կամ աշքենազներ և անգամ բողոքականներ: Եվ ձեզ մի բան կասեմ, օրինակ, մուսուլմանների մեջ թուրքերը շատ քիչ աղերսներ ունեն արաբների հետ, վերջիններս էլ՝ քրդերի հետ, թեկուզև երեքն էլ սուննիներ լինեն: Հիջազի՝ Արաբիայի արաբները համոզված են, որ իրենք են իսկական մուսուլմանները, որքան էլ որ իրեն որպես հավատացյալների խալիֆ է ցուցադրում Կոստանդնուպոլսի սուլթանը: Լուրեր են պտտվում, որ պատմականորեն օսմաններն ընդամենը նորեկներ են: Եվ այդ խոսակցությունները շրջում են թուրքական ողջ տերության մեջ: Սիրիայի այս

մասը, որն առ այսօր, իմ կարծիքով, Լիբանանի տարածաշրջանի մեջ է մտնում, շատ ավելի կարևոր է, քան որևէ մեկ այլ վայր: Գուցե մենք խոսում ենք փոքր, սակայն հսկա պատմություն ունեցող մի տարածքի մասին: Ներեցե՛ք ինձ այս մեկնաբանության համար, ես կշարունակեմ ձեզ պատմել, թե ինչ տեղի ունեցավ անցած նոյեմբերի վերջին:

Ինչպես Ավգուստուս Նյումանը, այնպես էլ Թոմաս Հարդինգը մնացին լուռ՝ չկամենալով միջամտել: Իրենց առջև տեսնում էին հանգամանքների զոհ դարձած մի մարդ արարածի, ով հուզված պատմում էր իր գլխին եկածը: Սենյակում միայն շարժվում էր մի կարմրակատարիկ՝ ցատկոտելով պատին կախված իր վանդակում և ժամանակ առ ժամանակ գեղգեղալով:

Այդ վայրը ժամանակից անկախ էր և չքնաղ: Միջավայրը ոչ այլ ինչ էր, եթե ոչ դարերի ընթացքում գոյություն ունեցած քաղաքակրթությունների նյութական համադրություն: Արևի մի ճառագայթ, որ ներթափանցում էր ծածկի կտորների միջով, պատերին ուրվագծում էր լույսի մի երկար գիծ, իսկ շատրվանը ժայթքում էր՝ շուրջը զովություն տարածելով:

Այդ վայրը սկզբից ևեթ սպասում էր Թոմասին: Այլ կերպ լինել չէր կարող: Փորձեց իր մեջ խեղդել հառաչանքը և նկատեց, որ իր նոր բարեկամ Նյումանը հասկանում է իր հոգեվիճակը:

Աբրամյանի աչքերը խոնավ էին: Ինքն իրեն խորը ցավ էր պատճառում՝ պատմելով այդ ամենը, և երկար, լուռ խորհրդածելուց հետո կրկին շարունակեց իր պատմությունը.

- Այդ ժամանակ արդեն տարածվել էր այն շշուկը, որ հայերս փորձում ենք անկախանալ Կիլիկիայում, բայց դա նշանակում էր սարսափելի մի ընդհարում, այսինքն՝ սցենարն արդեն պատրաստ էր: Այն ամենը, ինչ սկսվելու էր, արդարացման կարիք չուներ, և թուրքերի կարծիքով՝ հայերն արժանացան նրան, ինչին ձգտում էին: Ջևեդ վալին՝ նահանգապետը, ով միշտ էլ խորին ատելությամբ ու մեծ արհամարհանքով էր լցված հայերի հանդեպ, արքունիք՝ Կոստանդնուպոլիս, գնաց մի զեկույցով, որը որքան մանրամասն էր, այնքան էլ կեղծ և մեզ մեղադրում էր դավաճանության մեջ, իբր թե հավուր պատշաճի պատրաստվում ենք ապստամբության: Այդ գործում էլ որպես սադրիչներ մատնացույց էին արվել հայ եկեղեցու հովիվները: Կիլիկիան լինելու էր մեծ փորձարկում: Այդ ժամանակ երիտթուրքերի «Իթթիհադ վե թերաքի[5]» կոմիտեն գլխավորում էր ողջ Անատոլիայի տեղական քաղաքական գործունեությունը: Հետաքրքիրն այն էր, որ ընդամենը վեց ամիս առաջ՝ ապրիլի տասներե-

[5] «Միություն և առաջադիմություն»:

քին, սուլթանը հակահարված տվեց, և թվաց, թե մի քանի օրվա ընթացքում վերստին վերադառնալու էր գործադիր իշխանությանը: Այդ օրը սկսվեց Ադանայի կոտորածը: Քրդերին և թուրք տեղաբնակներին բանակի կողմից գաղտնի բաժանվել էին ամեն տեսակի զենքեր: Ձեզ հավատացնում եմ, որ մեծ ջանք պետք է գործադրեմ, որ չհուզվեմ, երբ հիշում եմ, թե ինչ տեղի ունեցավ: Գուցե և ինձ հասկանաք, եթե ձեզ ասեմ, որ ես իմ ընտանիքի միակ ողջ մնացած ներկայացուցիչն եմ: Սա դաժան և արնաներկ պատմություն է: Ադանայի երեսուն հազարից ավելի հայեր գառների պես մեռան գլխատված: Երեսուն հազար մարդ արարածներ... Տեսե՛ք, թե մինչև ուր են հասել դաժանությունն ու այլասերվածությունը: Հայ լիազոր ներկայացուցիչ, Էդիրնեի պատգամավոր Հակոբ Բաբիկյանը տեղի ունեցածի մասին մի երկար նամակ-զեկույց էր գրել և այդ իսկ պատճառով սպանվել Կոստանդնուպոլիս վերադառնալիս, որտեղ ամեն կերպ փորձեցին վերացնել նրա զեկույցը: Այնուամենայնիվ, դրա պատճեններից մեկն ընկավ Հայրապետի ձեռքը. գիտեմ, որ իրոք այդպես է, և վաղ թե ուշ կիմացվի կատարվածի մասին: Հետո թուրքերը ծաղրերգություն սարքեցին, որ ցուցադրեին կայսրության արդարադատությունը: Ի վերջո, մեղավորներն արդեն ազատության մեջ են, և որքան ինձ հայտնի է, «Իքտիդալ» օրաթերթի հրատարակիչը, այսինքն՝ Ադանայում հակահայկական քարոզարշավի սադրիչը, Կոստանդնուպոլսում արդեն աչքի է ընկնում իր ձեռք բերած հեղինակությամբ՝ բոլոր հայերի դեմ, անկասկած, կրկին կրքոտ պարսավագրեր հեղինակելով: Մինչդեռ այն քաղաքական կուսակցությունները, որ պետք է մեզ ներկայացնեին, ինչպես և այլ դեպքերում, դժբախտաբար իրարից մեկուսացած են, մի քանիսը՝ խաբված, մնացածներն էլ՝ իրար դեմ դուրս եկած, շատերը՝ շվարած՝ չիմանալով, թե ինչ անեն: Հայերս իմ իմացած ամենաանհատապաշտ և իրարից անջատ հայրենասերներն ենք: Տեսե՛ք, ինչպես սուլթանը, այնպես էլ նրանք, ովքեր ձգտում են իշխանության՝ ինչ-որ ազատություններից խոսելով, որոնց, անշուշտ, չեն էլ հավատում, այս օրերին ահավոր վախեցած են: Ի՞նչ կպատահի Օսմանյան կայսրությանը: Դուք՝ անգլիացիներդ, ձգտում եք մի մեծ կտորի, նույնը՝ ինչ-որ ֆրանսիացիները, գերմանացիները, ռուսները... Նույնիսկ իտալացիներն են հավակնում իրենց մասնաբաժնին: Մենք շուտով դա կտեսնենք: Մյուս կողմից հրեաները՝ խելացի և համբերատար մարդիկ, սպասում են իրենց պատեհ առիթին և ուզում են, որ իրենց տրվի Պաղեստինի մի մասը, որը երկու հազար տարուց ավելի իրենց հինավուրց բնօրրանն են համարում, մանավանդ՝ Խուդեան և Սամարիան: Այստեղ՝ Բեյրութում,

կա մի հրեական համայնք, որն ամուր կապերի մեջ է Սալոնիկի համայնքի հետ: Երբ թուրքերը հեռանան, հրեաներին այնտեղից շարժելու ձև չի լինի: Ի տարբերություն քրիստոնյա հայերի, ովքեր ուղղակիորեն թուրքերի հետ ընդհարվեցին, հրեաներն այն պահից ի վեր, երբ առաջին անգամ բախվեցին, ճկունորեն ներթափանցեցին Օսմանյան կայսրություն և նրանց հետ սկսեցին գոյակցել առանց ուժեղ ցնցումների: Եվ մի՛ մոռացեք, որ հենց Սալոնիկում է, որ դավեր են նյութում կայսրության իշխանության կառուցվածքը փոխելու համար: Լսած կա՞ք դյոնմեների կամ կեղծ իսլամացածների մասին: Լավ, ձեզ ասեմ, որ այնտեղից՝ հենց Սալոնիկի զորանոցներից և մասոնության արևելյան օթյակներից են դուրս եկել երիտթուրքերի շարժման սադրիչները: Այդ գաղափարներից շատերը գալիս են հրեաներից և ինչ-որ արաբից, ով ապրել է Փարիզում: Դրանք «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ստեղծողներն են՝ «Իթթիհադի» իսկական գաղափարախոսները, իսկ՝ ինչո՞ւ: Սիոնիզմը ձգտում է վերահսկել այն, ինչ կատարվում է Թուրքական Լևանտում, Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում, այսինքն՝ Կիլիկիայում և անշուշտ Սիրիայի նահանգում, Լեռնային Լիբանանում, Տրանսհորդանանում և Սինայում: Խաղի մեջ շատ բան կա, իսկ թուրք քաղաքական գործիչները կարծում են, որ վերացնելով հայերին և քրիստոնյա փոքրամասնություններին՝ Թուրքիան կդարձնեն միատարր և միանգամից կազատվեն անցանկալի վկաներից, ովքեր ամեն անգամ լույսը բացվելիս նրանց հիշեցնում են, որ այս հողն իրենցը չէ, որ երբեք էլ չի լինի, և եթե դեռ այդտեղ են, ապա դա իրենց կեռ թրերի սայրի շնորհիվ է, այլ ոչ թե իրավունքի: Իրավունքը մե՛րն է:

Մինչ Աբրամյանը մի քիչ տաքացած արտահայտում էր իր տեսակետները, Թոմասը սկսում էր դիրքորոշվել մի բանում, որ մինչ այդ երբեք մտքով չէր անցել. հասկանալ, որ պատմությունը ո՛չ ավելի, ո՛չ պակաս այն հենքն է, որն իր վրա կրում է իր ապրած բուն ու դաժան իրականությունը: Շնորհակալ էր Ավգուստուս Նյումանին՝ իրեն Լևոն Աբրամյանի տուն առաջնորդելու համար: Մինչ այդ պահը նա ոչինչ չգիտեր հայերի, թուրքական քաղաքականության, ինչ-որ բան սիոնիզմի մասին, քանի որ վերջինս սկզբից նեթ Անգլիայում մեծ վեճի տեղիք էր տալիս: Նա այդ երկրում էր՝ հանուն իր անձնական պատվախնդրության, այսինքն՝ որպեսզի զինվեր գիտելիքներով՝ հետագայում Օքսֆորդի համալսարանի հին պատմության ամբիոնը ղեկավարելու համար: Ավելի ուշ, ինչու չէ, անգամ կհամարձակվեր գրել հին ժողովուրդների, օրինակ՝ խեթերի, շումերների, աքքադների, փյունիկեցիների արվեստի և նրանց հետաքրքիր

աշխարհի մասին, ինչից շատ քիչ հետքեր էին մնացել, սակայն այդ աշխարհը ձևավորել էր այն հենքը, որից ծնունդ էր առել քաղաքակրթությունը: Նրան նաև բավականաչափ հետաքրքրում էին արևելյան և հելլենական աշխարհների փոխհարաբերությունները: Ինչպե՞ս և ի՞նչ ձևով էին միմյանց փոխազդել: Դա արտացոլված էր եզրազարդերի, սյունաշարերի, կիսանդրիների և արձանների մեջ, նույն ճարտարապետության, քաղաքն ընկալելու նույն կերպի մեջ: Օ՜, որքան հրապուրիչ է այդ ամենը: Թոմասին առնվազն այդպես էր թվում, երբ մտորում էր դրա շուրջ: Սակայն այդ ամենը սկսում էր անկարևոր դառնալ նրա այն խոհերում, որոնք վերաբերում էին հնադարյան գեղագիտության հանդեպ իր մեծագույն հակվածությանը, այն նախնական գեղեցկությանը, թե ինչպես էին այդ հինավուրց ժողովուրդները գեղեցիկը զուգակցել իրենց առօրյա կյանքին (դա իրոք ակնհայտ էր): Երբ նրան ցույց էին տալիս չորս կամ հինգ հազար տարի առաջ պատրաստված ոսկյա զարդ, շարունակ խորհում էր այդ ժողովուրդների աշխարհի, արվեստի ներքին բովանդակության շուրջ, որն առկա էր մարդկային իմաստնությունում, և այդ զարդն այնքան հոգեհարազատ էր իրեն, որ այն ասես նախորդ օրը կռած կամ պատրաստած լինեին: Այդ ամենը որքան անխախտ է մնում մարդու հոգու խորքում՝ անկախ ժամանակի ընթացքում տեղի ունեցող հսկայական փոփոխություններից:

Այդ պատճառով էր նա հասել այդտեղ: Սակայն պատմությունը տեղի էր տալիս առօրյա դաժան, խճճված իրականության առջև, և հիմա նրա հետաքրքրությունը բոլորովին այլ էր: Այնինչ Թոմասը մտադիր էր ուղևորվել Սիրիայի խորքը, Միջագետք, նաև փնտրել Փոքր Ասիայի արմատները, բացահայտել հնադարյան մարդկանց աշխարհընկալումը, որը Հոմերոսն արտացոլել է առասպելների ու դյուցազներգերի միջոցով:

Տպավորիչ քթով և սևաթույր աչքերով հայի ներկայությամբ արևելյան ամառանոցային դղյակը, որ թվում էր, թե ուր որ է քարուքանդ կլինի, վերևից աներևակայելի մի հմայք էր հաղորդում յուրաքանչյուր քարին: Լոկ հանգամանքներն էին վերափոխում Թոմասի ողջ մտածելակերպը: Այդպե՞ս պետք է լիներ: Նրան այլևս չէին հետաքրքրում ակադեմիական պարգևները, մրցանակները և ոչ էլ տիտղոսները, միայն թե ըմբռներ այն իրականությունը, որը նրան այդտեղ վերափոխում էր. խռովահույզ մի մարդ էր դառնում այն ապրումներից, որոնք մինչ այդ պահը չնչին դեր էին խաղացել իր հարմարավետ ու կանոնավոր կյանքում:

Զգում էր, որ բերանը չոր է, ուղեղում՝ փոթորկուն մտքեր, գլխապտույտ, որոնք ինչ-որ պահի սաստկանում էին ոչ միայն Աբրամյանի դրամատիկ

պատմությունից, ոչ էլ նոր փորձությունների տեսլականից: Դա ավելի խորը, շատ ավելի կարևոր բան էր: Աշխարհն իր շուրջը փոխվում էր ահռելի արագությամբ, և եթե ինչ-որ բան նրան մղում էր դեպի ավելի անկողմնակալ, ավելի դրական և ավելի մարդկային զգացողությանը, ապա նրանք՝ բոլորը, ներառյալ՝ ինքը, չպետք է ջանքեր խնայեին և առանց պայմանների ցուցաբերեին մեծահոգություն ու արիություն:

3. ԿԱՐՈԼԻՆ ՎԵՅԼԵՐ
ՀՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ, 1910թ.

1910 թվականի սկզբին Թոմաս Հարդինգը որոշեց, որ առայժմ չի վերադառնա Անգլիա: Նրան այնտեղ ոչ ոք չէր սպասում, և ինքն էլ ամբիոն ներկայանալու համար դեռ իրեն բավարար չափով պատրաստ չէր զգում: Ամբիոնը կարող էր և սպասել, քանի դեռ ինքը փորձում էր ընկալել Մերձավոր Արևելք կոչված հրապուրիչ աշխարհը: Չէր ցանկանում, որ իրեն զբոսաշրջիկի տեղ դնեն: Երբ ինչ-որ մեկը գալիս էր այդտեղ, անապատի աղավնիների պես կտցահարում էր այս ու այն կողմում, այնուհետև թռչելով դուրս գալիս՝ առանց իմանալու, թե որն է լինելու իր հաջորդ չվերթը: Մյուս կողմից էլ նկատում էր, որ այդտեղ ապրելու ազդեցությամբ օր օրի փոխվում էր իր աշխարհընկալումը. շատ էր ուզում իմանալ, թե դա որքան կտևի:

Դեկտեմբերի սկզբից գրական արաբերենի արագացված դասերի էր հաճախում՝ որակապես կատարելագործելով այն արաբերենը, որ ուսուցանել էին Օքսֆորդում: Ջանք չէր խնայել արաբի պես արտահայտվել կարողանալու համար, թեպետ գիտակցում էր, որ հեշտ չէր այդ նպատակին հասնելը. մարդիկ խոսում էին անհերևակայելի արագ, գործածում տեղական բազմաթիվ դարձվածքներ, խոսքը համեմում բազում փոխաբերություններով, խորհրդանշաններով, ինչպես նաև հեգնական արտահայտություններով, այն էլ՝ այդ հրաշալի լեզվում: Նրան ուսուցանում էր Սուրբ Հովսեփ համալսարանի՝ թոշակի անցած մի դասախոս, ում կոչում էին Աբդել Հակիմ: Դասերից զատ՝ նա Թոմասին պատմում էր շատ հետաքրքիր բաներ՝ մինչ այդ նրան մեծ մասամբ անծանոթ: Դրանք վերաբերում էին պատմության հիշարժան դեպքերին, դեղատոմսերին, բժշկական կպչուն վիրակապերին, խոսում էր նաև ժողովրդական ճարտարապետությունից: Պատումների մեջ տեղ էին գտնում նաև մանր-մունր նախանձություններով լեցուն բեյրության բամբասանքներ, սրա-նրա մասին հորինված հեքիաթներ, ինչը Թոմասին թույլ էր տալիս, որ հետզհետե ավելի ու ավելի լավ ընկալի միջերկրածովյան ժողովուրդների հարուստ ու յուրատեսակ հոգեկերտվածքը:

Ծեր դասախոսը պատկանում էր բոլորին ճանաչող մարդկանց դասին: Նրա անձնական փոխհարաբերությունները հիմնված էին կա՛մ սիրո, կա՛մ ատելության վրա: Ստեպ-ստեպ նա անդրադառնում էր այնպիսի իրողությունների, որոնց մասին բարձրաձայն չեն արտահայտվում: Հիմնականում նմանաբնույթ այդպիսի իրողություններից էին, օրինակ,

թե ում է պատկանում Բեյրութի կենտրոնի հին և առանձնահատուկ տներից յուրաքանչյուրը: Դրանք մեկ առ մեկ վերաբերում էին բոլոր երևելի ընտանիքներին՝ լինի թե՛ մուսուլման, քրիստոնյա, թե՛ թուրք կամ հրեա, այլ կերպ ասած՝ նրանց փառքին, ձախորդություններին, ազնվազարմությանը և առհասարակ այդ ընտանիքների ամեն ինչին: Ասում էր անգամ այն, թե ինչ կարծիքի էին սրա կամ նրա մասին, թե ինչ էին պատմում, երբ ինչ-որ մեկն իր բերանը մոտեցներ մյուսի ականջին՝ գունեղ գաղտնիքներ ինչ-որ մեկի մասին: Զուսպ, լուռ մթնոլորտում, կարգ ու կանոնով դաստիարակված Թոմաս Հարդինգն ինքն իր համար բացահայտում էր, թե ինչպիսի՜ հաճույք կարող էին պատճառել լևանտցիների ծանակիչ բամբասանքը և մշտաթարմ ասեկոսեները, որոնք նման էին թոնրից հանված, նոր թխված հացի: Սակայն միայն դա չէր: Այն ժամանակից ի վեր, ինչ ամիսներ առաջ նավը նրան տեղ էր հասցրել, ասես խաղալիքների խանութ մտած մանուկ լիներ: Հմայված ամեն բանով՝ սկսում էր ըմբռնել այդ հարուստ ու յուրօրինակ լեզվի խորությունը, նույնիսկ նետվում էր խոսելու. մի բան, որը նրան անասելի խրթին էր թվացել: Բեյրութցիների՝ տեղական անհասկանալի արտահայտություններով լեփ-լեցուն և սարսափելի արագ արաբերենը սկզբում նրան շփոթմունքի մեջ գցեց. նրան, ով տեղ էր հասել՝ համոզված լինելով, որ կարող է ոչ միայն հասկանալ, այլև կատարելապես արտահայտվել այդ լեզվով: Ինքն իրեն խոստացավ, որ առավելագույնը մեկ տարվա ընթացքում կհասկանա այն ամենը, ինչ ականջին հասներ:

Այդ ժամանակ էլ որոշեց մոռացության մատնել իր նախնական ծրագրերը: Երկար խորհելուց հետո ըմբռնեց, որ Անգլիայում ոչ մի հրատապ անելիք չունի, իսկ Աբդել Հակիմը սկսել էր իրեն դրսևորել որպես արտասովոր դասախոս՝ օժտված տաղանդով, մարդասիրությամբ, չափազանց կիրթ, ում օգնությամբ կարող էր լրացնել Բեյրութի առօրյայում գործածվող այդ գեղեցիկ լեզվի գիտելիքների պակասը, թեպետ իսկապես հանդիպում էր իր սպասածից շատ ավելի մարդկանց, ովքեր արտահայտվում էին ճիշտ ֆրանսերենով և մի քիչ էլ բլբլում անգլերեն: Մյուս կողմից Թոմասն ընդունակ աշակերտ էր: Գիտեր սովորել, հաստատուն էր, խելացի: Այդ առաքինություններից զատ՝ անգամ առարկելու դեպքում, միևնույնն է, օժտված էր Հարդինգներին հատուկ համառությամբ, ու ոչինչ չէր կարող կոտրել նրա կամքը:

Փետրվարի կեսին Սթենսոնը մի անսպասելի հեռախոսազանգ ստացավ հյուպատոսարանից: Անհրաժեշտ էր վերադառնալ Անգլիա, որտեղ հենց նոր մահացել էր նրա միակ քույրը: Նա Թոմասին հրաժեշտ տվեց

ոչ միայն ողբերգական լուրից, այլև նրան ստիպված լքելուց վշտացած: Թոմասը նրան հանգստացրեց՝ ասելով, որ տուն վերադառնա, որ ինքը դեռ բավականին ժամանակ մնալու է այդտեղ: Ուզում էր հնարավորինս հասկանալ այդ նոր երկիրը, որն իր գիտեցածից տարբեր էր. երկիր, որի հանդեպ անսպասելիորեն մեծագույն հրապուրանքով էր համակվել, ասես առանց իմանալու՝ իր ողջ կյանքի ընթացքում դրան էր նախապատրաստվել: Այդ ամենից զատ՝ նա հաշվի էր նստում Բաքերի՝ իր վստահելի մարդու հետ, առանց մոռանալու Ավգուստուս Նյումանին, ում հետ կապերը գնալով շատ ավելի բարեկամական էին դառնում:

Նյումանը լավ գիտեր այդ երկիրը: Նրան առանձնակի հաճույք էր պատճառում, երբ Թոմասին ցույց էր տալիս Բեյրութի ու նրա շրջակայքի ամենահետաքրքրական վայրերը: Նրանք վճռեցին գարնանը միասին ուղևորվել Բաալբեկ, ինչպես նաև հյուսիսի այլ վայրեր: Սթենսոնն Անգլիա ուղևորվեց «Սթար օֆ Ինդիա» նավով, որը պիտի ընթանար Բոմբեյից Սաութամփթոն երթուղով՝ կանգ առնելով Ադենում, Պորտ Սայիդում, Բեյրութում և Լիմասոլում, Պիրեայում, Պալերմոյում, Մալագայում և Լիսաբոնում՝ հինգ շաբաթից մի փոքր ավելի տևող ճանձրալի ուղևորությունն ավարտելով Սաութամփթոնում:

Սթենսոնը մեկնեց իրարամերժ՝ թե՛ դառը, թե՛ քաղցր զգացումներով: Թեպետ Հնդկաստանում անցկացրած երեսունվեց տարիներն ավելի քան բավարար էին նրա համար, այդուհանդերձ նա ընդառաջ էր գնացել Թոմասի՝ մինչ այդ ավելի քան փափկակենցաղ կյանքով ապրած մի լավ երիտասարդի գայթակղությանը, ով ապշահարվել էր արևելյան կենսաշխարհի յուրահատկություններից ու հայտնագործել դրախտը:

Մարտի կեսերին Նյումանը նրան հրավիրեց միասին ուղևորվել Ֆաքրա: Նշեց, որ միակ խնդիրն այն է, որ իրենց ընկերակցելու են նաև այլ մարդիկ. անպատեհ չէ՞ր լինի արդյոք ընդունել առաջարկվող ընկերակցությունը: Թոմասը, սակայն, վստահեցրեց, որ ընդհակառակը՝ ինքը մեծ հաճույքով կուղևորվեր անձանոթ զբոսաշրջիկների հետ: Խոսքը ոմն Չարլզ Վեյլերի, նրա տիկնոջ ու դստեր մասին էր: Նյումանը Թոմասին գաղտնի խոստովանեց, որ Վեյլերը Լոնդոնի ազդեցիկ և արտոնյալ մարդկանց հետ կապ ունեցող դրամատան տնօրենն է: Սան Խոսե համալսարանի ռեկտորն էր նրան խնդրել, որ ուղեկցի այդ մարդկանց և ցույց տա հունահռոմեական ավերակները: Նրանք նոր էին եկել Հռոմից և Նեապոլից ու իսկապես ոգևորված էին Միջերկրականով: Նյումանն ասաց, որ մի քանի զբոսաշրջիկներ էլ Բեյրութ են եկել... բուրգերը տեսնելու ցանկությամբ.

- Մի՛ զարմացեք, իմ սիրելի՛ բարեկամ: Ամեն տեսակի մարդիկ կան: Բավականին անհարմարավետ կառքով մինչև Բաալբեկ կգնանք՝ դիմանալով ճանապարհի դարուփոսերին, և տեղ կհասնենք երկու օրվա ընթացքում:

Նյումանը, այդուհանդերձ, համոզված էր, որ անկախ ամեն ինչից՝ նրանք գոհ կմնան:

Այդ գաղափարը սկզբից եթ ոգևորեց Թոմասին: Վաղուց էր մտադրվել ուղևորվել Բաալբեկ, սակայն չէր ցանկանում մենակ մեկնել, այնպես որ՝ Նյումանի ծրագրած էքսկուրսիան հենց այն պատեհ առիթն էր, ինչին սպասում էր: Նրա միակ անհանգստությունը դասերից երկու շաբաթ բացակայելն էր, և դա այն դեպքում, երբ նոր էր սկսել ազատ ու անկաշկանդ խոսել: Բայց և այնպես, նրան հրապուրում էին այն իրողությունները, որ անծանոթ հայրենակիցների հետ պիտի մասնակցեր այդ շրջագայությանը և Նյումանի պես կիրթ ու անչափ բացառիկ մարդու ընկերությունը վայելեր:

Երբ հաջորդ առավոտ եկան նրա հետևից, և Թոմասը նստեց չորս ձիերով լծված կառքը, զարմացած մնաց: Պարոն Վեյլերը հիսունն անց գեր տղամարդ էր՝ հագնված չափազանց նրբաճաշակ, Արևելքում ճանապարհորդելու համար՝ փոքր-ինչ անհամապատասխան: Նրա տիկինը՝ Կլարա Վեյլերը, գունատ, նիհար և նյարդային մի էակ էր, ով Թոմասի վրա հպանցիկ հայացք նետեց՝ թեթևակի խոնարհելով գլուխը և ցույց տալով, որ նրան նկատել է: Ինչ վերաբերում էր Կարոլին Վեյլերին՝ չքնաղ և սլացիկ մի աղջկա, ով քսան կամ քսաներկու տարեկան կլիներ, ապա նա Թոմասին լայն ժպտաց՝ հաճելիորեն զարմացած ուղևորության իր նոր ընկերակցից: Ամեն դեպքում կար մեկը, ում հետ կարող էր խոսել:

Անգամ կես ժամ չէր անցել, երբ Թոմասը զգաց, որ խորապես տարված է այդ չքնաղ, համակրելի, հետաքրքրասեր երիտասարդ օրիորդով: Նրա մոր՝ աղջկա հարցերի շարանը սանձելու ջանքերն ապարդյուն էին: Հաջորդ երկու ժամվա ընթացքում աղջիկը շարունակ դիմում էր Թոմասին, մինչև կառապանը որոշեց, որ իրենց կարճատև դադարի համար ամենահարմար վայրն են հասել: Դա նեղ խճուղու լայն ոլորանի բավականին բարձրադիր մի հատված էր, որտեղ ճանապարհը շեղակի բարձրանում էր ծովի չքնաղ տեսարանով ու կտրտված էր ափի համայնապատկերով: Բնանկարը մայրիներն էին եզրագծում: Կարոլինը քայլերն ուղղեց դեպի այնտեղ, որտեղ կանգնած էր Թոմասը՝ խորհելով այն մասին, որ մինչ այդ երբեք այդչափ հստակ լուսեղեն միջավայր չէր

տեսել: Արվեստի հրաշագործության միջոցով նրան ասես հաջողվել էր թափանցել Լոնդոնի իրենց տան հյուրասրահի դասական կտավներից ներս: Միջերկրականը մուգ կապույտ էր դեպի արևմուտք, ինչպես յուղանկարում. երիզելով հորիզոնը՝ կանգ էին առնում մի առագաստանավ ու մի շոգենավ՝ ընդգծելով այդ ամենի հսկայածավալ լինելը: Իսկ դեպի արևելք Լիբանանի լեռնաշղթայի մի քանի ահռելի գագաթներով ճյունածածկ լեռներն էին:

- Տպավորիչ է,- սրտանց ասաց Կարոլին Վեյլերը:

Իրոք այդպես էր, տերև անգամ չէր շարժվում:

Թոմասը մի պահ երկյուղեց, թվաց՝ իր ներկայությունը կարող է խախտել գերերկրային մի բան.

- Իսկապես այդպես է: Այո՛, ինչ խոսք: Չե՞ք կարծում, որ այսպիսի տեսարանի առջև մարդիկ պետք է խորհեն աստվածների մասին: Այստեղ Դուք նրանց Ձեզ ավելի մոտ չե՞ք զգում:

Թոմասը ոգևորված էր ու ներշնչված այդ գրավիչ օրիորդով: Նա վաղուց չէր խոսել որևէ կնոջ հետ:

- Այո՛, իրավացի եք: Իհարկե զգում եմ Պանին, Բաքոսին, ֆավնեերին և մնացած բոլոր աստվածներին,- աղջիկը շառագունեց,- այնպես չէ, ինչպես վարժարանում, որտեղ նրանց նայում են սոսկ որպես գրքի էջերում զետեղված արարածների: Այստեղ են, գուցե և թուլացել են ծիծաղից՝ տեսնելով մի քանի ցնորված զբոսաշրջիկների: Նեղված չեն լինի մեր ներկայությունից, այնպես չէ՞:

Թոմասը հրճվում էր նրա գիտելիքներով: Որոշեց Կարոլինի հետ շարունակել իր խաղը.

- Հ՞ըմմ, հավանաբար՝ ո՛չ: Տարօրինակը, սակայն, այն է, Կարոլի՛ն, որ ես նրանց չեմ տեսնում, բայց չէ՞ որ նրանք այստեղ են:

Թոմասը ցույց տվեց երկար եղջյուրներով մի խումբ այծերի, որոնք քարքարոտ զառիթափով իջնում էին ցած՝ թփուտների տերևներն արածելով.

- Սրանք, ահավասիկ, ֆավնի քարայծերն են, որոնց ճամփան քիչ առաջ կտրեց նա: Ինձ չասեք՝ իբր չեք տեսել նրանց... Լավ, գուցե Դուք նոր եք եկել այստեղ, գուցե սկզբում նրանք թաքնվում էին մեզնից: Ինձ հետ էլ էր նույնը կատարվում, ես անկարող էի տեսնել նրանց, մինչև որ մի օր վարագույրն ասես բացեցին:

Թոմասն աչքերը չէր կտրում Կարոլինի գեղեցիկ դեմքից, ուղղաձիգ կրծքերից ու նուրբ ձեռքերից: Ստիպված էր զսպել նրան հակվելու և համբուրելու իր բուռն ցանկությունը, որպեսզի հանկարծ անխոհեմ քայլ թույլ չտար:

- Նայի՛ր, Կարոլի՛ն, գնում ենք ջրի աստծո և Աստարտեի, Աստվածաշնչի Աստարոթի կամ, եթե կուզես, Բաբելոնի Իսթարի տաճարների ճանապարհով: Ավելի ուշ այն փոխակերպվեց Արտեմիսի՝ լուսնի հունական աստվածուհու, այնուհետև՝ Աֆրոդիտեի, Խունոյի (Հերայի), Վեներայի, իսկ հիմա... թո՛ւյլ տվեք Ձեզ ասել՝ Կարոլինի:

Հաճոյախոսությունից շոյված՝ աղջիկը հայացքն ուղղեց նրան՝ հիացմունքը թաքցնել չկարողանալով:

Թոմասը համաձայնության նշան արեց, կյանքում առաջին անգամ կարողացավ օգուտ քաղել իր՝ պատմության չոր ու ցամաք, բայց և հմուտ մասնագետ լինելուց (ինչպես այդ առիթով նրա տխմար բարեկամներից ոմանք էին չարակամորեն արտահայտվել):

- Դուք պրոֆեսո՞ր եք: Ա՜խր, դրա համար շատ երիտասարդ եք թվում, այնինչ շատ բան գիտեք: Ի՜նչ նախանձելի է:

- Այո՛, գուշակեցիք: Պրոֆեսոր եմ՝ Օքսֆորդի համալսարանի հնագույն արվեստի պրոֆեսոր: Պատկերացրե՛ք, դրանք այնքան ձանձրալի բաներ են, որ կա՛մ հայտնի չեն, կա՛մ մեկնաբանության կարիք չունեն: Իրականում ես դեռ շատ անելիք ունեմ, որպեսզի կարողանամ ասել, որ ինչ-որ բան գիտեմ:

Թոմասը լայն ժպտաց և շարունակեց.

- Հիշո՞ւմ եք նշանավոր իմաստուն Սոկրատեսի ասույթը. «Գիտեմ միայն մի բան, որ ոչինչ չգիտեմ»: Ես, այո՛, ոչինչ չգիտեմ:

Կարոլինը հախուռն ծիծաղեց՝ լսելով ասվածը.

- Ես այս շրջագայությունից կաշխատեմ մի բան սովորել: Ձեզ պես մարդու հետ ծանոթանալուց հետո չէի ուզենա թերարժեք զգալ ինձ:

Թոմասը շոյված զգաց:

- Աստարտեն չէ՞ արդյոք, որ տաճար ունի Ֆաքրայում,- հարցրեց Կարոլինը:

- Տաճար՝ ո՛չ:

Թոմասը ճակատագրից գոհ պրոֆեսորի դերում էր.

- Իրականում Աստարտեն տաճարից շատ ավելին ունի… Ձեզ պետք է խոստովանեմ, որ ես դեռ չեմ եղել այնտեղ, միայն տեսել եմ ձեռանկար ու մեկ լուսանկար: Շատ ազդեցիկ աստվածուհի էր՝ բերրիության, պտղաբերության և մի շարք այլ բաների, որոնց մասին երբեմն չի կարելի խոսել:

Կարոլինը մի տեսակ անդիմադրելի հայացքով նայեց նրա աչքերին.

- Ի՜նչ հետաքրքիր է: Ձեր օգնությամբ ես արագ կսերտեի հնագույն պատմությունը: Անչափ ուրախ եմ, որ որոշեցի գալ: Սկզբում ասացի՝ ո՛չ՝

մտածելով, որ ծնողներիս հետ շատ կձանձրանամ: Այս ամենը նրանց շատ քիչ է հուզում, իսկ այս մեծ զոհողությունը հանուն ինձ ընկերակցելու է արվում, քանի որ չէին ուզում, որ մենակ գայի: Իրականում նրանց հետ առաջին անգամ եմ ճամփորդում, սակայն գլխի ընկա, որ այս ամենը՝ քարերն ու ավերակները, այնքան էլ տաղտկալի չեն: Դուք ինձ օգնում եք, որ դրանք այլ կերպ ընկալեմ:

Կառապանը ձեռքերի ափերը երկու անգամ ուժգին իրար խփեց՝ ֆրանսերեն ասելով.

- Շարժվում ենք առաջ, բարձրացե՛ք, խնդրեմ, կառք:

Կարոլինը քայլեց դեպի ծածկակառք՝ վեց հոգու համար նախատեսված ծանրաշարժ մի փոխադրամիջոց՝ չորս անիվներով և չորս ձիերի լծված:

Բոլորը կրկին բարձրացան կառք, և Նյումանը, ում հետաքրքրասիրությունն ասես անսպառ էր, մինչ արագընթաց վարգով կհասնեին մի պանդոկ, որտեղ ճաշելու էին և ձիերը փոխարինելու նորերով, ֆինանսիստին անդադար հարցեր տվեց:

Ավելի ուշ Նյումանը Թոմասին խոստովանեց, որ իր հետաքրքրասիրության պատճառն այն գումարն էր, որի մեծ մասը դրել է բորսայում.

- Այս տիպը հրաշալի է գլուխ հանում ֆինանսներից: Նա ինձ մի մտահոգիչ բան ասաց: Կառավարությանը մոտ շրջանակներում հավանաբար վախենում են, որ սուլթանի իշխանության անկմանը կհաջորդի բորսային անկումների մի ամբողջ շարք: Եվ պատկերացրո՛ւ՝ այդ բաներից ես տեղյակ եմ, բայց մտքովս իսկ չէր անցնի, որ դա հենց ինձ հետ կպատահի: Ըստ Վեյլերի՝ Օսմանյան կայսրությանը շատ քիչ է մնացել, ինչի հետ համակարծիք ենք, քանի որ ճիշտ նույնն է վկայում նաև իմ ունեցած տեղեկատվությունը: Հիշո՞ւմ ես՝ մեզ ինչ էր պատմում Աբրամյանը: Ադանայում, Կոստանդնուպոլսում, ամբողջ Փոքր Ասիայում տեղի ունեցող այդ բոլոր խառնակչությունները, սպանդներն ու խռովությունները կարծես նման են նոր սկսված երկրաշարժի: Եթե խորն ես մտածում՝ փշաքաղվում ես: Այս երկիրը մի քաղցր տանձ է, որ Ֆրանսիան ուզում է խժռել երկու պատառով: Նապոլեոնից սկսած՝ ֆրանսիացիները մեծապես շահագրգռված են եղել Լևանտով: Ի՜նչ եմ ասում, դեռ շատ ավելի վաղուց... Խաչակրաց արշավանքներից սկսած՝ սրբազան վայրերն ուղևորվելիս, ուխտագնացները դժվարությունների էին հանդիպում: Պապերն էլ համոզվեցին, որ ամենաճիշտը դրանք նվաճելն է, որպեսզի քրիստոնյա պատերազմողներն էլ պահպանեին դրանք: Չգիտեմ, հիշո՞ւմ ես արդյոք՝ ինչ պատահեց, բայց երբ Ուրբանո II-ը մոտե-

ցավ Կլերմոնի դղյակի պատուհանին և այնտեղից հայցեց հավաքված հսկա բազմության կարծիքը, լսվեց միահամուռ մի ճիչ. «Աստված է դա կամենում»: Դա դառնալու էր խաչակիրների նշանաբանը. նրանց, ովքեր ընտրեցին խաչը՝ որպես խորհրդանիշ, և իրենց կանանց խնդրեցին այն ասեղնագործել իրենց ռազմական հանդերձանքին: Կարծես անասելի մի խորշակ էր սկսվել: Ֆեոդալ տերերի մեծ մասը հասկացավ, որ իր քրիստոնեական պարտքը իսլամի դեմ խաչակրաց արշավանքով պատերազմն էր: Բացի դրանից՝ դրված էր նաև պատվի հարցը, քանի որ ոչ ոք չէր ուզում մնալ տանը, երբ բոլորը՝ ծանոթ, բարեկամ, փառքի հետևից էին գնում: Պատկերացրո՛ւ հանպատրաստից մի իրավիճակ, երբ այնտեղ՝ Սուրբ հողի վրա, բղավում և պահանջում էին նրանց այնտեղ գալը, ընդ որում՝ վատ զինված, ծիծաղաշարժ և ծանր զենք ու զրահով, որոնք իսկապես դժվարացնում էին նրանց շարժումները, Լևանտի արևի տակ դառնում այրող հնոցներ, տառացիորեն եփում նրանց, ովքեր դրանք մեծ ջանքերի գնով էին կրում: Կատարյա՞լ աղետ... Իսկական քաոս՝ Աստծո անունից... Եվ վատթարն այն է, որ մենք այդ փորձությունից դաս չենք քաղել: Ահավասիկ՝ վերջերս Մահդիի հետ կապվածը... Թո՛ւյլ տուր, որ միտքս շարունակեմ. այդ հարցն ամբողջովին և մեկընդմիշտ փոխեց քրիստոնեության հարաբերություններն իսլամի հետ: Այնպես չէ, որ, ասենք, մինչ այդ մուսուլմանները խաղաղության տիպար էին, այդպիսին երբեք չեն էլ եղել, սակայն մուսուլմանական անընդմեջ նվաճումներից հետո (նվաճումներ, որ ահաբեկել ու զարմացրել էին Եվրոպան) երկուստեք գոյացել էր գոնե երկյուղի ու հարգանքի մի խառնուրդ: Մյուս կողմից առաջին խաչակիրները հանցագործներ էին. առանց որևէ կարգ ու կանոնի՝ սպանում ու թալանում էին այն, ինչ կարող էին, բռնաբարում կանանց ու աղջիկներին: Դեպի Պաղեստին ճանապարհին նրանք առանց խղճմտանքի հարձակվեցին մի քանի հրեական ու քրիստոնյա բնակավայրերի վրա: Նրանց անցած վայրերով ասես մորեխների պարսն էր անցել՝ ճանապարհին ամեն ինչ սրբելով ու տանելով: Բայց քեզ ասացի, որ դա ղեկավարում էին ֆրանսիացիները՝ Գոտֆրիդ Բուլյոնցին[6], Լորենի դուքսը, նրա եղբայր Բալդոինոն՝ Ռայմոն դը Տուլուզը և այլք: Սակայն քեզ չեմ պատմի մի բան, ինչին դու անտեղյակ ես, այլ ուշադրությունդ, ի թիվս այլ բաների, կհրավիրեմ այս տարածքում ֆրանսիական ազդեցության կարևորության վրա: Մյուս կողմից Ֆրանսիայում նույնպես չմոռացան Լևանտը: Պատմվածքներում, լեգենդնե-

[6] Գոտֆրիդ Բուլյոնցի, ում տիտղոսն էր «Տիրոջ գերեզմանի պահապան», 1-ին խաչակրաց արշավանքի ժամանակ գրավված տարածքներում ստեղծվեց Երուսաղեմի թագավորություն, որի առաջին թագավորն էր:

ռում, հեքիաթներում, թատրոնում, մնջախաղերում, փողոցում մշտապես հիշատակվում էին ֆրանսիացիների արյամբ ողողված հեռավոր տարածքներ, որտեղ կային ամրոցներ, ինչպես Կրալ դե Շվալիեն կամ այն, որ Գոտֆրիդ Բուլյոնցին, ասում են՝ իբր իր կամքին հակառակ, դարձավ Երուսաղեմի արքա: Թերևս դա է վկայում պատմությունը:

Նյումանն օժտված էր զարմանալի իմացականությամբ, և այն, ինչն առավել գրավիչ էր դարձնում նրան, ամեն բան բացատրել կարողանալու հանգիստ ոճն էր: Նրանից Օքսֆորդի հրաշալի պրոֆեսոր դուրս կգար.

- Իմ կարծիքով՝ այդ նույն պահին էլ հղացավ այն գաղափարը, որ Ֆրանսիան շատ ավելի մեծ է, քան նրա թագավորն է կարծում: Թվում էր՝ Դամասկոսից այն կողմ պիտի ծավալվեր Ֆրանսիան: Չնայած անգլիացիներս նույնպես չուզեցինք հետ մնալ, արդյունքում՝ մինչև այստեղ հասան այնպիսի լեգենդար կերպարներ, ինչպիսին, օրինակ, Առյուծասիրտ Ռիչարդ I էր: Ստացվեց հակառակը: Մինչ այդ պահը, քեզ որքան էլ դժվար լինի պատկերացնել, Սուրբ վայրերն աներկբայորեն քրիստոնեական էին՝ կատաղի վանականների տիրապետության ներքո գտնվելով, ովքեր դրանք մինչև իսկ ատամներով էին պաշտպանում: Սկսած 1187 թվականից՝ Սալադինի կողմից Երուսաղեմը նվաճելուց հետո, մուսուլմանները սփռվեցին Պաղեստինով մեկ՝ այդ հողերը հռչակելով որպես Դար Ալ Իսլամ՝ այսինքն՝ բոլոր մուսուլմանների տուն կամ վայր: Արդեն 1212 թվականին խաչակիրները հանդիպեցին քրիստոնյա մարոններին: Երկու կողմերի միջև անսպասելիորեն ստեղծվեց մի անեզր համակրանք: Չգիտեմ՝ տեղյա՞կ ես արդյոք, որ մարոնները հայտնի են որպես Արևելքի ֆրանսիացիներ: Նրանք իրենց հովանավորված զգացին խաչակիրների կողմից, իսկ ինչ վերաբերում է վերջիններիս, ապա նրանք տեսան իրենց պես մի ժողովուրդ, որն անծանոթ ու թշնամական վայրում ցուցաբերեց հավատարիմ ու անշահախնդիր օգնություն: Դա հարկ է ըմբռնել. վերջին դարերի ընթացքում մարոններն ապրում էին իրենց վայրագորեն կոտորած զուտ իսլամական աշխարհում: Այդ սպիտակամաշկ մարտնչողները, կրծքներին իրենց իսկ խորհրդանշանը՝ խաչը, խոնարհվեցին եվրոպացիների գերազանցության առջև և քիչ ժամանակ անց անգամ հրաժարվեցին հերետիկոս լինելուց ու դարձան հռոմեդավան կաթոլիկներ՝ հավատարիմ Վատիկանին և, ինչպես սովոր են այստեղ ասել, ավելի կաթոլիկ, քան ինքը՝ Պապը: Այս տարածաշրջանն ինչ-որ կերպ նույնպես փոխարկվեց Ֆրան-

սիայի հեռավոր ու արտասովոր մի նահանգի, որին, սկսած այդ ժամանակից, երկուստեք այլ կերպ չէին կարող համարել: Այստեղ հենց դա է, որ նկատել ես: Ես դա հասկացել եմ շատ տարիներ առաջ: Քեզ օտար չես զգացել մանավանդ Լեռնային Լիբանանի շրջակայքում ու Բեյրութում: Ասիայում այս տարածաշրջանը եղել է Եվրոպայի դուռը: Տե՛ս՝ մարոնական կղերականությունը, եպիսկոպոսները, հայրապետերը, բարձր դասի հոգևորականները սկսած XV դարից կրթվում են Հռոմում՝ մարոնական վարժարանում: Ավելի ստույգ՝ դա սկսվեց Պապ Գրիգոր VIII-ից: Դա յուրատեսակ համաձայնություն էր՝ հռոմեական եկեղեցու կողմից պարտադրանք, որպեսզի կրոնական հանդիսություններում զերծ մնային մոլորություններից, հերձվածությունից՝ մարոններին՝ Լևանտի քրիստոնյաներին ընձեռելով արևմտյան ու կաթոլիկ դաստիարակության հնարավորություն, ինչը ժամանակի ընթացքում ծավալվելու էր ողջ տարածաշրջանում: Նրանք ոչ թե ասիացի են, այլ նույնքան եվրոպացի, որքան իտալացիները կամ ֆրանսիացիները, շատ գոհ են իրենց կարգավիճակից և բնակչության մյուս հատվածին նայում են վերևից: Մարոններից զատ՝ այստեղ կան, անշուշտ, հռոմեդավան կաթոլիկներ, հույն ուղղափառներ, քրիստոնյա սիրիացիներ, խալդեր, հայեր և այլք, ներառյալ՝ բողոքականները, ինչպես, օրինակ, մենք, ինչպես անգլիկանները, ավետարանչականները, քանի որ տեսած կլինես՝ կան նաև որոշ հյուսիսամերիկյան միսիոներներ: Չենք կարող մոռանալ հրեաներին, ովքեր իրենց հերթին բաժանվել են խմբավորումների, քանզի ուղղափառ հրեաները չեն հանդուրժում լիբերալներին, ոչ էլ ռուսական ծագմամբ հրեաները՝ լեհական ծագմամբ հրեաներին, վերջիններս՝ գերմանական ծագմամբ հրեաներին, ինչը հաճախ ի հայտ է գալիս տարբեր հանդիսությունների ժամանակ: Թեև հրեաները կիրթ ժողովուրդ են և մեծ մասամբ կոսմոպոլիտ, բայց կան նաև այնպիսիք… Մի խոսքով՝ չենք կարող մոռանալ մուսուլմանների՝ սուննիների, շիաների, ալավիների, դրուզների և այլոց միջև եղած տարբերությունները: Ի վերջո, հենց դա էլ ստեղծել է այս առանձնահատուկ մշակույթը՝ հատկանշական միջավայրով: Իմ կարծիքով՝ դա է պատճառը, որ մենք այստեղ մեզ զգում ենք ինչպես մեր հարազատ տանը՝ քաջատեղյակ լինելով արաբական մուսուլմանական ազդեցությանը, որն ի վերջո կգտնի իր կարևոր տեղը:

Թխկթխկոցով ընթացող ճանապարհին բոլորը սպասում էին Նյումանի խոսքին: Վեյլերները գրեթե ոչինչ չգիտեին այդ ամենի մասին և բերանները բաց լսում էին Նյումանին, ում շատ էր դուր գալիս ուշադրու-

թյան կենտրոնում լինելը: Չարլզ Վեյլերը, ով համոզված էր, թե հրաշալի գիտեր աշխարհն ու նրա մութ անկյունները, բարձրացնում և իջեցնում էր հոնքերը՝ փորձելով նրա խոսքից պարզել Լևանտի՝ Ֆրանսիայի հետ ունեցած ծագումնաբանական կապը:

- Ի՜նչ հետաքրքիր է,- Կարոլինը՝ խմբի ամենաաչալուրջ «աշակերտը», ընդհատեց Նյումանին,- ես սովորել եմ Փարիզում, և ճիշտ է, որ ֆրանսիացիները խորը համակրանք են տածում Լեռնային Լիբանանի և Սիրիայի հանդեպ, և դա՝ այն աստիճան, որ կարծես իրենցը լինեն: Նաև ծանոթացա մի երիտասարդ հայուհու՝ Լիզա Մանուկյանի հետ: Նա ինձ խոստովանեց, որ իրեն այնքան ֆրանսիացի է զգում, որքան հայ, և ինձ վստահեցրեց, որ Ֆրանսիան միշտ էլ օգնել է հայերին:

- Այո՛... անկախ Ադանայում կատարվածից,- խոսակցությանը միջամտեց Չարլզ Վեյլերը, ով այն կարգի մարդկանցից չէր, որ լռելու սովորություն ունենար:

- Իսկ Դուք ի՞նչ կասեք Ադանայի սպանդի մասին,- Ավգուստուս Նյումանը զարմանքից վեր բարձրացրեց հոնքերը. նրան հետաքրքրեց Վեյլերի վարկածն այդ առթիվ: Ուզեց իմանալ, թե Անգլիայում ի՞նչ էին խոսում Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

- Բոլորը գիտեն, որ հայերը հարձակվել են թուրքերի վրա՝ կարծելով, թե իրենց կհաջողվի հռչակել ինքնավարություն,- Վեյլերն ընդգծված արտասանեց բառերը՝ հետևելով դրանց՝ ուղեկիցների վրա թողած ազդեցությանը,- իմ կարծիքով՝ ամբողջ մեղքն այդ հայերինն է, որոնց ըմբոստության է հրահրել Ֆրանսիան: Այսպես է հավաստիացնում Լոնդոնի ողջ մամուլը:

Ավգուստուս Նյումանը հոնքերը կիտեց և ընդդիմանալով Վեյլերին՝ հատուկ շեշտեց իր խոսքը.

- Ձեզ հարգելով հանդերձ՝ պետք է ասեմ, որ Ձեր հիշատակած թերթերը խորապես սխալվում են կամ, ինչն ավելի վատ է, միտումնավոր են այդպես մեկնաբանում: Եթե ինձ չեք հավատում, հարցրե՛ք, ահավասիկ, մեր երիտասարդ բարեկամին՝ Թոմաս Հարդինգին, թե անցած օրը մեզ ինչ պատմեց Աբրամյան ազգանունով երկուսիս ծանոթ մի հայ, ով եղել է հայերի կոտորածների ականատեսներից: Թեև կա մի բան, ինչի հետ պետք է համաձայնենք: Թուրքերն իրենց նախընտրած ձևով են տեղեկատվություն տարածում: Եվ, իրոք, առաջնորդվելով քաղաքական մեծ զգացողությամբ՝ ասում են այն, ինչը տվյալ պահին ձեռնտու է իրենց՝ առանց ուշադրություն դարձնելու, իրենց համոզմամբ, այնպիսի անհեթեթությունների վրա, ինչպիսիք ճշմարտությունը կամ կեղծիքն են՝ հաս-

տատելով վերջինը: Նրանց կարծիքով՝ հայերը ենենգամիտ հրոսակներ են, որ չարաշահում են օրինյալ թուրքերին: Կոստանդնուպոլսից լուրերը միշտ այդպիսին են: Պարզ է՝ իրենց օգտին: Սրախողխող են արվել երեսուն հազար հայեր: Ի՞նչ է իրականում կատարվել: Իսկ գիտե՞ք, թե դա ինչ է նշանակում արտասահմանյան մամուլի համար… Անգլիայում և Ֆրանսիայում ընթերցողը կարդում է ճիշտ հակառակը. «Երեսուն հազար թուրքեր՝ հայերի կողմից ենենգորեն սպանված»: Եվ ամեն ինչ՝ այսպես...

- Նայե՛ք այստեղ՝ այս աշտարակին,- Կարոլին Վեյլերը ոգևորված էր այն ամենով, ինչ տեսնում էր:

Ավգուստուս Նյումանը, առանց հապաղելու, պատասխանեց.

- Դա կայսր Կլավդիոսի աշտարակն է: Նրա ներսում դեռ պահպանվում է մի նեղ միջանցք՝ աստիճաններով ու խցիկներով: Նվիրված է Կլավդիոս կայսեր պաշտամունքին՝ կապված Բաալգալասի՝ տեղի մեծ աստծո հետ: Կան նաև այլ բաներ, որոնք ստեղծվել են հռոմեական ազնվականության կողմից և ըստ այդ ժամանակաշրջանի քաղաքականության՝ ժողովրդին հնազանդ պահելու միջոցներից են: Քիչ այն կողմ Ֆաքրայի հայտնի կամուրջն է, ինչպես տեսնում եք՝ ժայռեղեն կերտվածքով, քամու և ջրի ուժով արարված, գլխին՝ մի ցնցող կամար՝ համարյա հարյուր քսան ոտնաչափ երկարությամբ: Ձեզ առաջարկում եմ, որ մի քիչ պտտվենք, իսկ հետո կգտնենք մի հարմար տեղ՝ բացօթյա ճաշելու համար:

Թոմասն ինքն էլ շատ ոգևորված էր: Մինչ Նյումանն ուղեկցում էր Վեյլեր ամուսիններին, Կարոլինը գնաց նրա հետևից.

- Սպասե՛ք ինձ, Թոմա՛ս: Տպավորությունն այնպիսին է, ասես Դուք շատ ավելի քիչ եք խոսում, քան Ձեր ընկեր Նյումանը: Դուք ի՞նչ եք անում Բեյրութում, ներեցե՛ք հարցասիրությանս համար, բայց ուզում եմ իմանալ: Իսկ գուցե համամիտ չե՞ք ինձ հետ:

Թոմասը շոյված զգաց այդ անսպասելի հետաքրքրությունից:

- Կարոլի՛ն, ես Օքսֆորդի անտիկ արվեստի պրոֆեսոր եմ, սակայն Ձեզ պետք է խոստովանեմ, որ դեռ երբեք չեմ այցելել իսկական ավերակներ: Երբ սկսեցի դասավանդել, ինձ թվում էր՝ ես տոնավաճառի այն խաբեբաներից եմ, որ շատ անգամ չգիտեն, թե ինչ են խոսում և փորձում են վաճառել իրենց ապրանքը՝ հավաստիացնելով դրա կախարդական հատկությունների մասին: Չէի կարող շարունակել այդ կերպ՝ ջանալով ուսանողներիս բացատրել այն, ինչն անձամբ ինքս չգիտեի: Մասնագիտության առումով խնդիրն ամոթալի էր: Ինձ հասկանում եք, այնպես չէ՞:

Կարոլին Վեյլերը գլխով համաձայնության նշան արեց: Շատ էր տարված այդ կիրք ու համակրելի երիտասարդով և մտածեց, որ նրան շատ լավ կհասկանար, քանի որ ցանկանում էր գեղարվեստ ուսումնասիրել Ֆլորենցիայում՝ անկախ այն բանից, որ հայրը դրան կտրականապես դեմ էր:

- Իհարկե, ես Ձեզ հասկանում եմ: Միանգամայն: Այս վայրերն ինձ էլ են հրապուրում... Մոգական վայրեր են, որտեղ մարդ կհասկանա՝ տեղաբնակները ի՞նչ էին մտածում, ինչպե՞ս էին ապրում, ինչի՞ն հավատում: Համոզում էի ծնողներիս, որ Բաալբեկ այցելեի: Ձեզ պես ես էլ եմ ցանկանում իմ ձեռքերով հպվել Յուպիտերի, Բաքոսի և Վեներայի տաճարներին: Ի վերջո, նրանք փնթփնթալով համաձայնեցին՝ միայն թե ինձ ուղեկցելու պայմանով: Մայրս այնքան հետաքրքրասեր է, որքան ես, նա նաև օժտված է այսպիսի վայրերը նկարելու մեծ ձիրքով: Միայն մեկ այցը և որոշ գրառումներ բավական են, որպեսզի նա ստեղծի մի նկար: Ինչ վերաբերում է հորս, ապա նրա գլխում միայն գործարքներ են, անկարող է մտածել այլ բաների մասին, բայց բժիշկները վերջերս նրան խորհուրդ տվեցին հանգստի անցնել: Ահա և մենք այստեղ ենք:

Մինչ վճռական քայլ կատարելը Թոմասը ծանր շունչ քաշեց.

- Կարո՞ղ եմ Ձեզ հետ անկեղծ լինել:

Աղջիկը գլխի շարժմամբ դրական պատասխան տվեց՝ նրա խոսքերում հուզմունք նկատելով:

- Ինձ թվում է, որ Դուք չքնաղ եք, և այս պահին ասես ներկա է ջրի աստվածուհի Ատագարտիսը: Հարավում նշմարվող տաճարը նրան է նվիրված: Թո՛ւյլ տվեք ասել Ձեզ. չգիտեմ, թե ինձ հետ ինչ է կատարվում: Ասես Դուք և ես միմյանց իսկապես շատ վաղուց ենք ճանաչում: Իսկ գուցե դարեր առաջ մենք միասի՞ն ենք եղել այստեղ:

Կարոլինը նախաձեռնություն ցուցաբերեց: Մոտեցավ և մինչ կգրկեր, մեկեն համբուրեց այտը:

- Լավ, անկեղծության դիմաց՝ անկեղծություն, ինձ հետ էլ է նույնը կատարվում: Ինչպես ինձ էիր պատմում, դա այս վայրում տիրող մոգական ուժերի հետևանքն է,- Կարոլինը մեկեն դու-ի անցավ,- իսկ ի՞նչ ենք անելու հիմա:

- Չգիտեմ, Կարոլի՛ն,- Թոմասը հուզմունքից հազիվ էր բառերն արտասանում,- երդվում եմ՝ ինձ հետ առաջին անգամ է այսպիսի բան կատարվում: Տարիներ առաջ ունեցել եմ մի հարսնացու, սակայն հանգույն զգացողություն չեմ ունեցել: Անկեղծ լինեմ. քեզ տեսնելուն պես անչափ

հրապուրվեցի: Դա հիացմունքի և պատասխանատվության մի տարօրինակ զգացողություն է:

Թոմասը գրկեց նրան, համբուրեց շուրթերը: Աղջիկը կրքոտ փոխադարձեց համբույրը.

- Օ՜հ, Թոմա՛ս: Թերևս սա այն է, ինչ դասականներն անվանում են Կուպիդոնի նետ: Զգո՞ւմ ես՝ ինչ արագ է բաբախում սիրտդ:

Այնտեղ՝ Ֆաքրայում, Կարոլին Վեյլերը և Թոմաս Հարդինգն իրար սիրո երդում տվեցին՝ առանց ներածականների կամ կանխակալ մտորումների: 1910 թվականի մայիսի 15-ն էր, երբ աշխարհը նրանց շուրջ փոփոխվում էր մեծ արագությամբ: Ուզում էին վերագտնել այն երկար ժամանակը, որի ընթացքում իրենց զգացմունքները քնած էին մնացել:

Ի զարմանս Թոմասի՝ Վեյլերները բնականորեն ընդունեցին նոր իրավիճակը՝ առանց որևէ կարևորություն տալու:

- Ահա թե ինչ է ճակատագիրը,- շշնջաց Կլարա Վեյլերը,- մուսուլմանները չե՞ն ասում, որ ամեն ինչ գրված է:

Նա գիտեր՝ պատահական չէր Սիրիայում իրենց գտնվելը: Նրա ֆրանսիացի պապը՝ Էդուար դը Վինյին՝ ֆրանսիական բանակի մի բարետես հրամանատար, ով ծառայության ժամանակ՝ 1876 թվականին, զոհվել էր Դամասկոսի շրջակայքում, թաղված էր հենց այդտեղ՝ մոտակայքում: Եվ Կլարա Վեյլերը մինչև այդտեղ չէր հասել սոսկ Կարոլինի քմահաճույքը բավարարելու համար: Դա հարգանքի տուրք էր Էդուար պապի հիշատակին, ով ընտանիքի հերոսն էր, և ում մասին Կլարան իր կյանքում այնքա՜ն էր լսել: Նա զոհվել էր սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահի բարձրանալու հանդիսության ժամանակ: Էդուար դը Վինյին այդ շրջանում Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանատան ռազմական կցորդն էր: Ճակատագիրը նրան հասցրեց մինչև Դամասկոս, որտեղ ներգրավվեց քաղաքի քրիստոնյաների պաշտպանության գործում: Պատահական մի կրակոց նրա կյանքին վերջ տվեց պարիսպների մոտ՝ հենց Բաբ ալ-Սալամում, որ այլ կերպ կոչվում է Խաղաղության դուռ: Դա էր պատճառը, որ Կլարա Վեյլերը նույնպես ուզում էր հասնել այնտեղ, դռան վրա տեսնել փամփուշտի թողած հետքը. համենայն դեպս դա էր այն լեգենդը, որ ժամանակ առ ժամանակ պատմում էին իրենց ընտանիքում, երբ վերհիշում էին հախուռն կյանքով ապրած և հերոսաբար զոհված այդ մարդու սխրագործությունը: Դրա շնորհիվ նա միշտ հիշվում էր իր կյանքի լավագույն կողմերով: Նրան անմահացնող նկարներում ներկայանում է լուրջ, անքերի համազգեստով, ձախ ձեռքը՝ դա-

շույնի գեղակերտ բռնակին, գլխարկը՝ հենած նախաբազկին, խցիկին անվրդով նայելիս՝ առանց կանխազգալու առջևում սպասող փառավոր ճակատագիրը: Այդ ժամանակից սկսած՝ բոլոր դը Վինյի ազգանուն կրողները տենչում էին կյանքում գեթ մեկ անգամ լինել Դամասկոսում: Սակայն Կլարան առաջինն էր, ում դա հաջողվելու էր: Եվ ի լրումն այդ ամենի՝ Կարոլինն ինքնամոռաց սիրահարվում է այդ պրոֆեսորին՝ այնքան բրիտանացի, որքան իր ամուսինը: Պրոֆեսորին տեսնելով այդ արտառոց անհատի՝ Ավգուստուս Նյումանի, անկասկած, համասեռամոլի ընկերակցությամբ՝ վախեցավ վատթարից: Բարեբախտաբար պարզվեց, որ բոլորովին վերջերս էին իրար հետ ծանոթացել, իսկ Թոմաս Հարդինգը նման էր ցանկացած երիտասարդի: Գոնե Օքսֆորդի պրոֆեսոր էր, և դժվար չէր կռահել՝ լավ ընտանիքից: Կարոլինը նույնպես կարող էր պահանջել բարոնուհու տիտղոս, եթե նրանց հարաբերությունները խորանային:

Գիշերն անցկացրին Ֆաքրային մոտ գտնվող փոքրիկ ու հրապուրիչ հյուրանոցում, որը մի կաթոլիկ քրիստոնյա ընտանիքի սեփականությունն էր: Տղամարդուն կոչում էին Ժոզեֆ Մելքիադես: Նա ասաց, որ Բաղդադից են: Ըստ նրա պատմածի՝ բնակություն էր հաստատել Ֆաքրայում, քանի որ այդ վայրը նրան առաջին իսկ պահից շատ էր դուր եկել: Ձավակներ չունեին և մտադիր էին այդտեղ անցկացնել իրենց կյանքի վերջին օրերը: Միջագետքում տիրող իրավիճակի շուրջ Ավգուստուս Նյումանը մի ամբողջ շարք հարցերի տարափ տեղաց նրա գլխին: Մելքիադեսը պատասխանեց, որ ամեն բան օրեցօր բարդանում էր՝ ասածը հաստատելով գլխի բացասական շարժմամբ.

- Այնտեղ Բաղդադի վալու հովանավորությամբ գալիս են գերմանացի շատ ինժեներներ: Թուրքերի և գերմանացիների հարաբերությունները հիմա գերազանց են: Խոսում են այն մասին, որ իբր Եփրատի մոտակայքում հանքեր են շահագործելու, նույնիսկ երկաթուղի են կառուցելու Կոստանդնուպոլսից մինչև Բաղդադ, եթե անգամ դա մեծ դրամագլուխ արժենա: Սակայն ճանաչելով գերմանացիներին... գուցե և հաջողացնեն: Իրականությունն այն է, որ ամեն ինչ սրընթաց փոխվում է: Ի՞նչ իմանամ՝ ինչ կպատահի սուլթան Աբդուլ Համիդի գահընկեց լինելու և «Իթթիհադի»՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի քաղաքական գործիչների իշխանության գալու հետ: Այստեղ մեծ անհանգստություն է տիրում, անապատում շատ հրոսակներ են վխտում: Դուք չեք կարող պատկերացնել՝ ինչերի միջով անցանք Դամասկոս հասնելու համար:

Հետո ամեն ինչ հանդարտվեց: Գոնե լավ էր, որ ճանապարհորդության մի մասն անցկացրինք մի քանի ֆրանսիացի ինժեներների ուղեկցությամբ, հակառակ դեպքում՝ ճանապարհին մեզ արդեն սպանած կլինեին: Կեցցե՛ Ֆրանսիան: Ինչո՞ւ չէ, կեցցե՛ նաև Մեծ Բրիտանիան: Իսկ թե ի՞նչ են գերմանացիները… Նոր էինք դուրս եկել Բաղդադից, երբ մի խումբ բեդվիններ, կարծում եմ՝ հրոսակներ էին, թաքնվել էին մեզանից ոչ հեռու, վրան խփել՝ մեզ վրա հարձակվելու համար հարմար պահի սպասելով: Ճիշտ այդ ժամանակ վրա հասան գերմանացիները: Մենք նրանց բացատրեցինք, որ քրիստոնյաներ ենք և գնում ենք Դամասկոս: Գնդի հրամանատարը մեզ անգամ չպատասխանեց: Հրամայեց շարունակել: Նրանք կանգ չառան, փոխարենը կողքներովս անցան՝ փոշու ամպ բարձրացնելով: Փույթ չէր, եթե անգամ թալանելու համար այդ բեդվինները մեզ գլխատեին: Գոնե լավ է, որ Աստծո օգնությամբ մեկ-երկու ժամ անց հայտնվեցին ֆրանսիացիները: Օ՜, թեթևացած շունչ քաշեցինք, երբ բրիտանացի զինվորների ուղեկցությամբ ճամփա ընկած ֆրանսիացի ինժեներները մեզ թույլ տվեցին իրենց հետ շարունակել ճանապարհը: Պարոնա՛յք, մարդ արարածները, հիրավի, շատ տարբեր են: Այդպես է, որ կա:

Մինչ նրանց համար ընթրելու բան էին պատրաստում, Թոմասը և Կարոլինը որոշեցին խոսել աղջկա ծնողների հետ՝ բացատրելու, որ խոսքն ինչ-որ քմահաճույքի մասին չէ:

Դա սկզբում ասես լուրջ չընդունեցին, մանավանդ՝ այն, որ վերջում նշանվելու էին: Այդուհանդերձ, համաձայնեցին, թեպետ Չարլզ Վեյլերը դա արեց՝ կարծես չուզենալով, և նրա կինը ստիպված եղավ բավականին երկար առանձին խոսել նրա հետ: Հորը դուր չէր եկել, որ իր դուստրը նախաձեռնություն էր հանդես բերել՝ առանց հաշվի առնելու իր կարծիքը: Ո՛չ Կարոլինին և ո՛չ էլ Թոմասին ասես ոչինչ չէր հետաքրքրում: Նրանցից յուրաքանչյուրը մտածում էր միմիայն իր նոր սիրեցյալի մասին, այնպես որ՝ եթե անգամ աշխարհը շուռ գար, նրանց փույթ չէր: Ամենագոհը, թերևս, Ավգուստուս Նյումանն էր, ով, մինչ կընթրեին, չէր դադարում սուր մեկնաբանություններ անելուց.

- Մի տե՛ս, մի տե՛ս, բանից պարզվում է՝ իրար խոսք են տվել: Դա ինձ հասկանալի է: Անցած օրը Թոմասին բացատրում էի, որ այս անապատներում մի մոգական բան կա: Ես շատ ուրախ եմ ձեզ համար: Սա մի կատարյալ վայր է՝ շատ բան հասկանալ կարողանալու համար: Քչերը դրա պատեհությունն ունեն… Կամ ինչո՞ւ չասել՝ մինչև այստեղ իրենց վտանգելով գալ-հասնելու արիությունը: Այնպես որ՝ պարոն Վեյլերի

թույլտվությամբ՝ իմ բարեմաղթանքները: Էհ, տղա՛ս, կյանքի վիճակախաղում քեզ շատ գեղեցիկ գանձ է բաժին ընկել: Լավ, քանի որ բոլորս այստեղ ենք, շարունակենք մեր էքսկուրսիան մինչև Բիբլոս: Դա կլինի հարգանքի տուրք նշանվածներին... Թեև երթուղու մնացած հատվածը գուցե և գերադասեն երկուսով անցնել:

Հյուրանոցն ուներ միայն յոթ սենյակ: Չարլզ Վեյլերը կարգադրեց, որ Թոմասի ու Կարոլինի սենյակները հակառակ ծայրերում լինեն, չնայած միջանցքի երկարությունը հազիվ տասը մետր էր: Հետո, հուզումնալից օրվանից սպառված, բոլորը գնացին հանգստանալու: Թոմասը երջանիկ էր: Ամեն ինչ այնպես էր ստացվում, ասես լապտերից դուրս էր եկել մի բարի ոգի, որպեսզի հոգար իր և իր ապագայի մասին: Այնքան լարված էր, որ աչքին քուն չէր գալիս, և հանկարծ լսեց դռան կամացուկ թակոցը. վեր կացավ՝ տեսնելու, թե ինչ է պատահել: Զգույշ բացեց այն, քանի որ հյուրանոցում ամեն ինչ ճռռում էր. ոչ ոքի չուզեց անհանգստացնել: Եվ ահա Կարոլինը գիշերանոցով և ոտաբոբիկ մտավ սենյակ ու ձեռքով փակեց Թոմասի բերանը: Հետո, առանց խոսք ասելու, տեղավորվեց նրա անկողնում՝ շշնջալով.

- Փակի՛ր դուռը, հիմա՛ր, մտի՛ր անկողին, ցուրտ է:

Թոմասը հնազանդվեց՝ մտածելով, որ լապտերի ոգին չափազանց մեծահոգի է իր հանդեպ, և Նյումանն իրավացի էր. հիրավի այդ երկիրը մոգական էր:

4. ԿՅԱՆՔ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՅԻՍ - ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1910թ.

1910 թվականի մայիսին Թոմաս Հարդինգը և Կարոլին Վեյլերն ամուսնացան Բեյրութի Սուրբ Հովսեփ մարոնական տաճարում: Նրանց հարկ եղավ ձեռք բերել պատրիարքի թույլտվությունը, քանի որ երկուսն էլ անգլիական եկեղեցու անդամներ էին: Թոմասը խոսեց Անգլիայի եկեղեցու եպիսկոպոս Ֆիշերի հետ, ով այդ քաղաքում ապաքինվում էր թոքերի տարած հիվանդությունից և այդ ընթացքում դասավանդում Ամերիկյան համալսարանում՝ միաժամանակ մասնակցելով այդ համալսարանի հնագիտական թանգարանի հավաքածուի գույքագրման աշխատանքներին: Թոմասին նա թույլ տվեց ոչ միայն ծանոթանալ այդ արժեքավոր հավաքածուին, այլև խոստացավ գլուխ բերել հարսանիքը: Ոչ մի անպատեհ բան տեղի չունեցավ, և նա ի կատար ածեց հարսանյաց հանդիսությունը:

Մի քանի օր անց Կարոլինի ծնողներն ավելի հանգիստ սրտով վերադարձան Անգլիա: Նրանց դուստրը կարծես գտել էր իր կյանքի տղամարդուն: Կարոլինը զգաց, որ իր համար դյուրին է հնագիտական առարկաների մանրակրկիտ նկարագրումը: Նույնիսկ Ֆիշերը, ով շատ պահանջկոտ էր, գովեց նրա աշխատանքը.

- Հնագիտական նկարի համար Դուք օժտված եք արտասովոր տաղանդով: Ասեմ Ձեզ, որ դա ամենևին հեշտ չէ, եթե մեկն ուզում է հավատարիմ մնալ իր ոգուն, շարունակե՛ք այդ ճանապարհը, աղջի՛կս:

Կրկին շրջագայության գնացին Բաալբեկ, որոշեցին այնտեղ մնալ մի քանի ամիս՝ Սիրիայի Հելիոպոլիսը խորապես ուսումնասիրելու համար:

Վարձակալեցին ինչ-որ թուրքի սեփականության մի մասը: Դա մի հսկա տուն էր՝ կառուցված Բոսֆորի ավանդական առանձնատների ոճով. մի բան, որն այդտեղ անհարիր էր և անհեթեթ, սակայն մի քանի ամսվա համար նրանց հարմար թվաց: Միասին էին, անում էին այն, ինչ նրանց դուր էր գալիս: Թոմասը մի երկար նամակ էր գրել Օքսֆորդի համալսարանի ռեկտորին՝ բացատրելով, որ ուզում է վերլուծել փյունիկեցիների մշակույթը, որ նաև ցավում է, որ առայժմ չի կարող վերսկսել դասերը: Եվ դա այն բանից հետո, երբ այդքան պայքարել էր այդ պաշտոնի ձեռքբերման համար: Գիտեր, որ շատ դժվար կլիներ այն կրկին վերականգնելը:

Տան առավելությունը մեծ այգին էր՝ մի արաբ ընտանիքի կողմից

բարեխիղճ վարպետությամբ խնամված: Մշակում էին ցիտրուսային կուլտուրաներ՝ նարնջենիներ, մանդարինի ծառեր, բանջարեղեն, բուրումնավետ խոտեր, և ինչպես դժվար չէ կռահել, պահում էին հավեր, բաղեր և գառներ: Այդ ամենից զատ՝ նրանց տրամադրության ներքո էր արաբական ձիով լծված չորստեղանի բաց կառքը՝ «Կաբբալ» անունով, որով գնում-գալիս էին ավերակներից մինչև մոտակա գյուղերը՝ Նակլեհ, Չալսզ, Չելիֆա, Սերայն, Քաֆր, Զաբադ: Ամբողջ տարածաշրջանով մեկ թուրք սեփականատերերը վաճառում էին իրենց ունեցվածքը, կարծես ցանկանում էին լքել այդ վայրերը: Մահմուդ բեյը՝ այն թուրքը, որ նրանց վարձով էր տվել տան մի մասը, մի օր նրանց հրաժեշտ տվեց՝ ասելով.

- Այս պահից նեթ կարող եք ամբողջապես օգտագործել տունը: Ես իմ իրերը տարել եմ Դամասկոս: Շուտով կվերադառնամ, բայց մինչ այդ համարե՛ք, որ ձեր տանն եք:

Այդ մարդը, որ ամիսներ առաջ այրիացել էր, ինչ-ինչ պատճառով իրեն լավ չէր զգում Բաալբեկում: Ինչ-որ մեկը նրանց պատմել էր, որ իրավիճակը Թուրքիայում բարդ է, և «Իթթիհադի» կառավարությունն Անատոլիայի քրիստոնյաների դեմ ուղղված շատ դաժան վճիռներ է ընդունում:

Այդ հարցերի առումով որոշ հստակություն մտցրեց Ավգուստուս Նյումանի այցը, ում հետ շարունակում էին ջերմ հարաբերություններ պահպանել: Նյումանը բրիտանական հետախուզական ծառայությունների անդամ էր և շատ ավելին գիտեր, քան պատմում էր: Այդ մասին Նյումանն անձամբ խոստովանեց, երբ գլուխ էր գովում ամուսինների նկատմամբ իր տածած անկեղծության և բարեկամության մասին: Բացի դրանից՝ նրանց ասաց, որ ուղևորվելու է Սալոնիկ:

- Այնտեղ՝ այդ փոքրիկ քաղաքում են կերտում աշխարհի ապագան,- հաստատակամ ձայնով ասաց Նյումանը և շարունակեց,- այս ամռանը պատրաստվում են երիտթուրքերի գաղտնի համագումարին: Այնքան գաղտնի է, որ արդեն բոլորն այդ մասին գիտեն, սակայն՝ կատակը մի կողմ, այդ հարցը շատ լուրջ է: Խոսքը վերաբերում է Անատոլիայի ու ողջ Փոքր Ասիայի քրիստոնյաներին: Մի բան է պատահելու Փոքր Ասիայի հայերի, ուղղափառ հույների և այլ՝ ոչ մուսուլման, ավելի ճիշտ՝ ոչ թուրք փոքրամասնությունների հետ, անդառնալի մի ճանապարհ: Եվ գերմանացիներն են, որ տաքացնում են այդ երիտթուրքերի գլուխը: Լսած կա՞ք պանթյուրքիզմի մասին: (Թոմասը բացասաբար շարժեց գլուխը,

թեև վերջերս ոչ մի բանից այլևս չէր զարմանում): Դա շատ ավելին է, քան որևէ կուսակցություն, մի փիլիսոփայություն է, ըստ որի՝ միմիայն թուրքմեն ռասային պատկանողները, ովքեր, իրենց կարծիքով, ինչ-որ ժամանակ եկել են Թուրանից, որը Կենտրոնական Ասիայում հեռավոր ու առասպելական մի վայր է, իրավունք ունեն ապրել Թուրքիայում: Արաբները, հայերը, հույները, քրդերը, ասորիները և նրանք, ովքեր թուրք չեն, պետք է վերանան՝ ճանապարհ բացելով թուրք ռասայի համար, որը մի օր կտիրի Ասիային ու Եվրոպայի մեծ մասին: Դա է պատճառը, որ ուզում են վերացնել փոքրամասնություններին, ովքեր խանգարում են իրենց շահերին: Երբ Սալոնիկից վերադառնամ, լուրեր կբերեմ, թե ի՞նչ է սպասվում առաջիկայում, թեև առանձնապես որևէ լավ բանի հույս չունեմ:

Ավգուստուսն ուղևորվում էր մի քրիստոնյա արաբի՝ Յուսուֆ ալ-Ազմի հետ: Նրանց կապում էր համասեռամոլությունը, որը միայն անծանոթներից էին թաքուն պահում: Թոմասի և Կարոլինայի ներկայությամբ այլևս անհանգստանալու կարիք չունեին:

- Ի՞նչ կարող ես ասել, բարեկա՛մս, կյանքը չափազանց կարճ է, և այն վայելելու համար ով ինչ կարողանում է, դա էլ անում է: Այստեղ դա մի սարսափելի մեղք չէ, ինչպես որ համարում էին պարոնայք ճիզվիտները՝ կեղծավոր ու զզվելի սրիկաները: Իսլամը դա թույլ չի տալիս, սակայն հասարակությունն ընդունում է, իսկ ով մեղքից զուրկ է, թող առաջին քարը գցի,- ասաց Նյումանը:

Թոմասը թոթվեց ուսերը, առարկելու ոչինչ չուներ: Միգուցե իր պապի բիսեքսուալ լինելու մասին շշուկնե՞րն էին ազդել: Երբ հիշում էր Ռոբերտ Մաքսվելի հետ ունեցած իր իսկ հարաբերությունը, մտածում էր, որ թերևս կարող էր շարունակել «հաճույքի այդ արահետը», ինչպես Ռոբերտն էր այն անվանել: Ուշադիր նայեց Յուսուֆին՝ նուրբ արտաքինով ու երկար թարթիչներով երիտասարդին:

Նյումանը մի երկու օր մնաց նրանց հետ, ինչից օգտվեցին՝ այցելելով Բաալբեկի ավերակները:

- Օգտվի՛ր այս պահերից, տղա՛ս: Երբեք չեն կրկնվի: Իմ կարծիքով՝ ռոմանական այս տաճարի ներքո կա մեկ ուրիշը՝ հելլենական, և հնարավոր է՝ տակը քանանական նստվածք: Հինգ հազար տարուց ավելի պատմություն... Ինձ մի՛ հարցրու, թե հիմքին ինչպես են տեղադրել քարի այդ մեծ կտորները: «Բեկաայի տիրակալը» պետք է մեզ դա բացատրի: Պետք է, որ այս քարերի վրա շատ բաներ պատահած լինեն: Ինչեր

ասես որ չէի տա... այն ժամանակ ապրած լինելու համար: Այս վայրն իր մեջ մի մեծ առեղծված ունի: Ինչպե՞ս էին գրանիտի հսկայածավալ այդ կտորները բերում քարհանքից, որը գտնվում է կես մղոնից ավելի հեռավորության վրա: Իսկ այն ահռելի չօգտագործված կտո՞րը, որ դեռ մնում է այնտեղ: Անհնարին է այն շարժելը: Եթե կարողանայինք լծել հազար ձի, որպեսզի այն քարշ տալով տանեին, անգամ երկու միլիմետր չէին կարողանա շարժել: Ա՜հ, իմ երիտասա՛րդ բարեկամ: Հնագետներդ անցյալի խուզարկուներ եք: Ես ընդամենն արվեստասեր եմ և մեծ հիացմունք եմ տածում ձեր հանդեպ:

Սյունաշարքի ներքո նստած, տեղանքի տիրական գեղեցկությունից շփոթահար՝ մնացին լուռ՝ սպասելով մայրամուտին:

- Կար ժամանակ, երբ սա պաշտամունքի վայր էր՝ քահանաներով ու վեստալուհիներով,- Նյումանը կրկին շարունակեց թեման,- ժողովուրդը գալիս էր այստեղ՝ հաղորդակցվելու աստվածների հետ: Այստեղ խաչվում էին տարածաշրջանի առևտրական երկու կարևորագույն ճանապարհներ: Մեկը՝ Արևելքից Արևմուտք՝ Սիրիայի միջից դեպի Միջերկրական, մյուսը՝ Հյուսիսից Հարավ՝ Փոքր Ասիայից դեպի Պաղեստին: Այն, որ պատմում էի քանանական նստվածքների մասին, հնարավոր է: Սակայն ինչո՞ւ հենց այստեղ... Յուպիտերը, Մերկուրին, Վեներան... Իշխանությունը, առևտուրը, հաճույքը և գեղեցկությունը... Հելիոպոլիսը՝ արևի քաղաքը... Ներոնն ավարտեց Յուպիտերի տաճարը: Տրախանոն սկսեց կառուցել մեծ բակը: Անտոնիո Պիոն Բաքոսի պատվին տաճար կառուցեց: Հետո՝ շատ ավելի ուշ, Սուրբ Սոֆիայի տաճարի կառուցման համար իր հետ տարավ ութ սյուն՝ այս հսկաների նման, որ դեռ հպարտորեն նիրհում են: Ա՜հ, եթե պատերը խոսեին: Այստեղ եղել են բյուզանդացիները, օմայանները, աբբասյանները, ֆատիմիդները, սելջուկները, Սալադինի այյուբիները, մամելյուկները և մոնղոլները, ովքեր թալանեցին այդ քաղաքը: Լենկ Թեմուրը հենց այստեղ է վրան խփել, մինչ Դամասկոսի բնակչությանը սրի էր քաշում: Օսմանների կայսրության ժամանակաշրջանն իր ավարտին է մոտենում այնպես, ինչպես տեսնում ենք, թե ինչպես է արեգակը մայր մտնում հորիզոնում: Ռոբերտ Վոուդը հայտնագործել է այս ավերակները՝ դրանք համարելով հնագույն ժամանակների ամենախիզախ ստեղծագործություններ: Դևիդ Ռոբերտսը եկավ՝ դրանք նկարելու, և ասում են, որ մի երկու տարի առաջ կայսր Վիլհելմ II-ը, տեսնելով դրանք, լաց է եղել... Սակայն իմ կարծիքով՝ լաց է եղել նախանձից, իմ միամի՛տ բարեկամ: Այդ տիպը շատ անհոգի է, մեզ շատ անախորժություններ է պատճառելու... Շատ եմ կասկածում

արվեստագետին հատուկ նրա զգացողությանն ու պատմության վերաբերյալ գիտելիքներին: Նրան, ինչ խոսք, դուր կգար ժառանգել Օսմանյան կայսրության մեծ մասը, և գուցե այդ սյունաշարքը տեղադրեր Բեռլինի որևէ գողտրիկ զբոսայգում:

Թոմասը համաձայնեց: Երկրում որոշ անհանգստություն էր նկատվում: Օսմանների սահմանած կարգուկանոնը ճեղքվում էր մեծ արագությամբ: Մի՞թե միշտ այսպիսին էր լինելու որևէ ժամանակաշրջանի ավարտը: Նրան պատմել էին ոմն Անտոն Ջեմայելի՝ Լեռնային Լիբանանի մի ճանաչված ընտանիքի անդամի՝ «Լիբանանյան դաշինքի» գլխավոր քարտուղարի մասին. քաղաքական մի խմբակցություն, որն առաջին անգամ պահանջում էր «Լիբանանի բացարձակ ազատություն իր բնական սահմաններով և մեծ տերությունների երաշխիքների ներքո»:

Վերջապես արևը թաքնվել էր և կարմրավուն ցոլքերով վարդագույն երանգ էր տալիս այդ հին քարերին, ասես նրանց վերակենդանացնում էր: Կարոլինը, որ թվում էր մտքերով տարված՝ մի մեկնաբանություն արեց, ինչից բոլորը մեկեն վերադարձան իրականություն.

- Իսկ ի՞նչ կլինի այս բոլոր մարդկանց հետ: Նկատի ունեմ նրանց, ովքեր իրենց անվանում են լիբանանցիներ: Այնքան համակրելի են: Նրանք ասում են, որ չեն ուզում կախված լինել Դամասկոսից, և որ նրանց միակ մայրաքաղաքը Բեյրութն է: Դուք ի՞նչ կարծիքի եք, Ավգուստո՛ւս, կհասնե՞ն իրենց նպատակին:

- Իմ սիրելի՛ Կարոլին: Դամասկոսը և Բեյրութը Սիրիայի վիլայեթի մեջ են մտնում: Շատ կարևոր քաղաքներ են Օսմանյան կայսրության համար, որն ամենևին մտադիր չէ թողնել այս տարածաշրջանը: Պետք է ողջ աշխարհում երկրաշարժ լինի այդպիսի բան կատարվելուց առաջ: Այստեղ ապրող թուրքերը մի բան նկատել են, քանի որ շատերն են հիմա վերադառնում Կոստանդնուպոլիս կամ Զմյուռնիա: Կարծես զգում են, որ մթնոլորտը շիկացած է, և ուր որ է կճայթի փոթորիկը: Մյուս կողմից հիմա արաբները հանկարծ առաջ են քաշել ազգայնամոլությունը. մի մեծ պարադոքս, քանի որ ոչ թե հավատում են ազգ հասկացությանը, այլ նկատի ունեն «ումման[7]», այսինքն՝ այն ընդարձակ տարածքը, որում ապրում են անհիշելի ժամանակներից: Սիրիա, Պաղեստին, Իրաք, Տրանսիորդանան, Հիջազից մինչև Մեքքա, Եմեն, Եգիպտոս, Լիբիա... Ես ի՞նչ իմանամ՝ սա է իսկական արաբական աշխարհը, ու նրա միակ նպատակը թուրքերից ազատվելն է, ովքեր չնայած այստեղ դարերով հաստատվեցին, սակայն ընդունակ չեղան հարկ եղածի պես կառավա-

[7] Ումմա՝ համայնք՝ հասարակության կազմավորման իսլամական մոդել:

ռել: Բարձր դռան կոռուպցիան հասնում է մինչև հեռավոր անկյունները: Սակայն կա մի շատ ավելի կարևոր բան: Արաբներն արդեն այստեղ էին, երբ եկան թուրքերը և շրջվեցին իսլամի կողմը: Օսմաններն արաբական տառերով գրում են թուրքերեն: Ես ոչ մի հայտնություն արած չեմ լինի, եթե ասեմ, որ արաբներն ատում են թուրքերին նույնչափ, որքան վերջիններս արհամարհում են արաբներին: Շատ տարբեր մշակույթներ են, և եթե պատերազմ լինի, բոլոր արաբները կմիանան ընդհանուր թշնամու դեմ: Այստեղ առավելությունն անգլիացիներինն ու ֆրանսիացիներինն է, քանի որ Գերմանիան սուլթանի կողմից է, իսկ մենք՝ արաբ ժողովրդի: Այն, ինչ անվանում են Լիբանան, Սիրիայի վիլայեթի այս փոքրիկ տարածքն է՝ Նահարիայից սկսած քսան մղոն դեպի Հայֆայի հյուսիս, մինչև Տրիպոլիից փոքր-ինչ հյուսիս գտնվող վայրը՝ քսանից երեսուն մղոն խորանալով երկրի ներսում: Մի փոքրիկ, բայց միաժամանակ մեծ երկիր՝ այդ Լիբանան լեռով, Բեկաայի հովտով և շատ հետաքրքրական պատմություն ունեցող վայրերով: Շուտով՝ գուցե հինգ կամ տասը տարի հետո, ոչ թե թուրքերը, այլ հենց իրենց եղբայրակից արաբները նրանց համար խնդիրներ կհարուցեն: Սիրիացիները համոզված են, որ այս երկիրը, ներառյալ ողջ ծովեզերքը, մի նահանգ կլինի՝ Մեծ Սիրիա անվամբ: Նրանց հեշտ չի լինի համոզել հակառակը: Այս մարդկանց արյունը տաք է: Դեռ շատ գլուխներ կհատվեն, մինչև որ յուրաքանչյուրը լինի այնտեղ, ուր պետք է լիներ... Լավ, իմ սիրելի՛ բարեկամներ: Մութն ընկնում է, և պետք է վերադառնանք հյուրանոց: Առաջ այս վայրը խաղաղ էր, շատ անգլիացիներ ու ֆրանսիացիներ են վրան խփել այստեղ՝ այս սյունաշարի ներքո գիշերն անցկացնելու համար, սակայն այդ ժամանակն արդեն անցել է, ու մեզ համար ողջամիտ կլինի բնակելի վայր վերադառնալը:

Թոմասը տխրությամբ մտածեց, որ իր բարեկամն իրավացի է: Թուրքական կառավարման քայքայումը ստեղծել էր խիստ անապահով իրավիճակ: Քայքայումն անշրջելի էր: Տիրում էր սևամաղձության ճնշող զգացողություն, ոչ բոլոր արաբներն էին իրավիճակից գոհ, քանի որ կորցնում էին աշխատատեղեր, շատերն անգամ վախենում էին, որ կրկին հետ կգա դժվարին ժամանակաշրջանը:

Ընդամենը մեկ ժամ ուշացումով հասան իջևանատուն: Ավգուստուսը գնաց սեփականատիրոջ հետ խոսելու, թե ի՞նչ պետք է պատրաստվի ընթրիքին: Կյանքի նկատմամբ հակված լինելով էպիկուրյան զգացումով՝ նա ցանկացած պարագայում որևէ ճաշատեսակ կամ լավ գինի համտեսելու առիթը երբեք բաց չէր թողնում.

- Երբ չեմ կարող պահանջել ավելին, քան անհրաժեշտը, բավարարվում եմ: Սակայն երբ կռահում եմ, որ կարող եմ մի փոքր ավելի օգուտ քաղել, փորձում եմ: Ես ո՛չ միստիկ եմ, ո՛չ էլ նրանց պես սոփեստ, ովքեր բրդյա հագուստներ են կրում, իբր ուզում են ասել, որ մնացյալն իրենց համար ավելորդ է: Մի քանի տարի առաջ քառասուն օր մնացի անապատում: Գնացի այդ քայլին, որովհետև ուզում էի իմանալ, թե այդպիսի փորձության ընթացքում ի՞նչ զգացողություն կունենա մարդը, երբ ուտեր քիչ և այն էլ՝ ինչ գտներ, ջուրը խմեր որևէ կորած ակունքից կամ ժայռերի արանքում եղած փոքրիկ լճակներից: Մուհամմեդ մարգարեն ունեցել է հոգևոր մի հզոր փորձություն, ինչպես Քրիստոսը, Խուան Բաուտիստան, քրիստոնյա ճգնավորներն ու մուսուլման մենակյացները: Այդ օրերի ընթացքում քսանհինգ ֆունտ նիհարեցի, մաշկս չորացավ ու օձի պես այն փոխեցի: Սակայն իմ ներսում կարևոր մի բան կատարվեց: Որոշակի ինչ-որ պահից սկսած ամեն բան տեսնում էի մի ահռելի խոշորացույցի միջով, անհավատալի ճշգրտությամբ: Հանգամանքներն ընթանում էին ուրիշ «ժամանակով», միաժամանակ՝ դանդաղ ու արագ: Ցանկանում էի հասկանալ Ջաբիր Իբն-Հայյանի և Իբն-Ադհամի փորձությունները: Եվ ձեզ կասեմ, որ իրոք ճիշտ է. գալիս է մի պահ, երբ կամքը չքանում է, իսկ հոգին դառնում դերակատար: Անտարբերություն. ահա թե ինչ կարող է քեզ հետ պատահել: Ի վերջո, ապաստան գտա մի կորած քարայրում, ուր ապրում էին անապատի իժեր: Նրանք անցնում էին և անգամ բարձրանում ոտքերիս վրայով. իմ կարծիքով՝ ո՛չ իմ պետքն էր, ո՛չ էլ՝ նրանց: Այդ պասիվ հափշտակությունը հասցնում է նյութական կապանքների վերացմանը, փոխարենը՝ հզորանում են հոգևոր կապերը: Դրա համար էլ կարող եմ այդ մասին խոսել խելամտորեն: Դա եղավ կյանքիս ամենից ուժգին փորձությունը, իսկ վերջին օրերին տարօրինակ զգացողություն ունեի. ոտքերս ասես չէին դիպչում այրող գետնին, կարծես սահում էի: Ինչևէ... Չգիտեմ, արժե ձեզ նման խորհուրդ տալ: Ամեն մարդ չի կարող փախչել այդ վախճանից, և պատահել է, որ վերջում արևից սպիտակած նրա ոսկորները գտել են որևէ քարայրի մուտքի մոտ:

Կարոլինը կասկածանքով ու հարգանքով զննում էր Ավգուստուս Նյումանին.

- Ես չգիտեմ, թե արդյոք ընդունակ կլինեի նման բանի, սակայն նախանձում եմ Ձեզ: Կարծում եմ, որ մարդ արարածներս շատ բաներ ենք կորցնում զուտ անտեղի երկյուղելու պատճառով: Դրա համար էլ ես գոհ եմ այստեղ գտնվելուս համար՝ կիսելով այս պահերը. հիմա շատ բաներ եմ սկսում հասկանալ: Այս երեկո՝ Բաալբեկում մայրամուտի ժամանակ,

մինչ վերջին ճաճանչներն ընկնում էին սյունաշարքին, ինձ պատկերացնում էի, թե իբր վաղուց ի վեր այդտեղ եմ: Այն ժողովուրդները, ովքեր այդ հոգեցունց կառույցներով ցանկացան այնտեղ թողնել իրենց պատգամը, դեռ այնտեղ են՝ մարդ արարածի կարևորագույն տեղում՝ ոգում: Ինձ հասկանո՞ւմ եք:

Երկուսով նրան նայեցին հիացմունքով. Թոմասը՝ հպարտությամբ, Ավգուստուսը՝ հարգանքով:

- Սիրելի՛ս, Դուք յուրահատուկ անձնավորություն եք: Թոմա՛ս, ի սրտե շնորհավորում եմ Ձեր ընտրությունը: Ձեք սխալվել կյանքի ընկերուհի ընտրելիս:

- Երկուսով խենթ եք, որ ուզում եք վրաս ծիծաղել,- Կարոլինը լայն ժպտում էր,- էլ ձեզ ոչինչ չեմ ասի, որովհետև միայն ուզում եք ծաղրել ինձ: Գիտե՞ք, թե ամենից շատ ինչն է ինձ դուր եկել... Բաքոսի տաճարի դուռը: Բացե՛նք գինու մի շիշ՝ ուրախության աստվածների կենացը խմելու, որ մի քիչ երջանկություն են պարգևել տղամարդուն ու կնոջը:

- Ճիշտ է,- Թոմասը նույնպես համամիտ էր,- կյանքի լավագույն պահերի այդ չքնաղ այլաբանությանը... Կակաչները՝ ռուբինի պես կարմիր, որ ծնվում են արևի ջերմությամբ, ցորենի հասկերը, պտուղները, որ սնում են մարդուն, խաղողի որթերն ու ողկույզները, որ մեծարում են աստծուն, որը մեզ երկինք է տեղափոխում... թեև միայն հոգեպես: Բե՛ր այդ շիշը, խմենք Զևսի ու Սեմելայի որդու կենացը: Նրա մասին ասում էին, որ գիժ է: Սակայն ողջ աշխարհով մեկ նա զբաղվեց խաղողի դաշտերի մշակմամբ ու գինին դարձրեց ավելի մարդամոտ ու սրտակից: Ինձ պես նա էլ գտավ իր Արիադնեին: Այնպես որ՝ դառնում եմ նրա նման: Ես էլ նրա պես ուզում եմ ունենալ սատիրների, կենտավրոսների և բաքոսուհիների շքախումբ:

- Այո՛,- Ավգուստուսը նույնպես զգում էր այդ տարածքի կարմիր գինու ազդեցությունը,- աստվածների այս նեկտարը կյանքի ավիշն է: Շնորհակալությո՛ւն, Բաքո՛ս: Քեզ ենք պարտական: Գլխներիս կդնենք դափնե ու բաղեղի պսակ, քանի ըմպում ենք քո շնորհիվ:

Ավգուստուս Նյումանը մեկնեց Եգիպտոս, և նրանք մենակ մնացին: Ամռան ավարտին, մինչ երկուսով պատճենում էին Բաքոսի տաճարի դռան խորաքանդակները (վարձել էին մի քանի հմուտ ծեփագործների, քանի որ որոշել էին պատրաստել ծոփորների[8] և սյուների գիպսե կաղապարներ), Կարոլինը հղիացավ և երբ համոզվեց դրանում, հայտնեց

[8] Ծոփոր՝ ֆրիզ:

Թոմասին: Լսելով բարի լուրը՝ Թոմասը գրկեց աղջկան: Արտասովոր ու հավերժական այդ աշխարհում մի բան փոխվում էր, մի բան հաստատ էր՝ նրանք գտնվում էին համապատասխան վայրում: Պետք է հայր դառնար և ուրախության ու բերրիության աստծուն՝ Բաալին՝ «ամեն բանի տիրակալին», «ամենակարող տիրոջը», մի հատուկ աղոթք շշնջաց: Իրոք այդպես էր: Նա և Կարոլինն անձնատուր էին եղել գեղեցկության, սիրո և մարմնական ցանկության ոգուն: Աղջիկը մենակ այցելեց քարհանք ու խոնարհվեց «հագար ալ-հուբլա» կամ «հղիացման քարին». ուզում էր իր ապագա զավակին հաղորդել այդ ահռելի քարերի ուժն ու գեղեցկությունը: Թոմասը համոզված էր, որ իր կյանքը բոլորովին այլ կլիներ Օքսֆորդում՝ այն ցուրտ սրահներում, այն միջավայրում, որտեղ միակ բանը պայքարելն էր հանուն այն բանի, որ մնացածներին ցույց տրվի ակադեմիական իմացությունը: Հիշում էր առօրյա կյանքի անախորժությունները, կասկածանքներն ու խանդը, այն անվերջանալի մրցակցությունը, որպեսզի պարզեն, թե իրենցից ով էր ավելի գիտուն կամ ի վերջո արդարացին:

Այդտեղ՝ Բաալբեկում՝ Վեներայի ու Բաքոսի միջև՝ Յուպիտերի պաշտպանիչ ստվերի ներքո, ամեն ինչ տեսնում էին այլ կերպ: Գիշերամուտին Թոմասը և Կարոլինն այնպես էին տրվում սիրուն, ասես նրանց մնացել էին հաշված օրեր: Իրոք այդպես էր: Այն զգացողությունը, որ յուրաքանչյուր պահն անկրկնելի է, ունեցել էին բոլորը, ովքեր անցել էին այդ տեղով: Ինքը՝ Թամերլանը, երբ այդտեղ վրան խփեց, խնդրեց իր շքախմբին, որ իրեն մենակ թողնեն տաճարներում. պետք է հասկանար, որ դեռ իրեն շատ բան էր պակասում, որ խնդիրը միայն աշխարհ նվաճելը չէր, որ կային նրան տիրելու նաև այլ ձևեր, քան մարդկանց արնաթաթախ գլուխներից ոչ մնայուն բուրգեր սարքելը: Այդ փառահեղ ու սքանչելի ավերակները սարսափազդու նվաճողին ասացին, որ Արևմուտքից անդին գոյություն ունի մի մշակույթ, որին անհնար է ահաբեկելը:

Մտածեց, որ նա՝ Թամերլանը, Բաալ Զեբուբն էր՝ Բելսեբուն՝ նույն ինքը՝ սատանան, փողի ու մահվան տիրակալը: Ամեն օր՝ լուսաբացին, դեռ վարդագույն մշուշում Թոմասը կրկին տաճարներում էր՝ սպասելով արեգակի դուրս գալուն: Նա հիանում էր՝ նայելով, թե ինչպես է դուրս գալիս արեգակն ու սկսում լուսավորել քարերը, որոնք ասես սպասում էին նոր օրվան: Երջանիկ էր, կատարյալ այրամարդ... Հին պատմության բոլոր ուսանողները գոնե մեկ անգամ պետք է անցնեն այդտեղով, քանզի այդ ոսկեզօծ, հանգստավետ, խորհրդավոր տաճարներով զմայլվելը կնշանակեր մի ամբողջ ուսուցում՝ ժամանակին նետված մարտահրավեր:

Գյուղում ծանոթացավ մի արաբի՝ ոմն Քարիմ ալ-Ամիլաղի հետ: Հոգևոր առաջնորդ էր, բայց՝ ոչ թե որպես իսլամ դավանող, որքան էլ տարօրինակ թվա, այլ ազատության առաջնորդ: Շատ երիտասարդ հասակում եղել էր Փարիզում և այնտեղ համակվել այլ գաղափարներով: Տեղաբնակներին ասում էր, որ բավական է, հարկավոր է վերջ տալ դրուզների և մարոնականների միջև ընտանեկան փոքրոգի վեճերին: Բոլոր արաբները պետք է հայացքներն ուղղեն այնտեղ, որտեղից և սկիզբ են առնում խնդիրները. դեպի Կոստանդնուպոլիս: Նրա կարծիքով՝ Բարձր դուռը՝ սուլթանի կամ «Իթթիհադի» հետ, միակ և իսկական մեղավորն է: Այն տեսակետն էր պնդում, որ հնարավոր է ունենալ բազմակրոն երկիր՝ Ալ-Լիբանան անունով և Բեյրութ մայրաքաղաքով: Եվ պետք է սովորեին համատեղ գոյակցել ծովի, սարերի, Բեկաայի հովտի և մեծ լեռնաշղթայի միջև, որը նրանց բաժանում էր Սիրիայից: Կամ գուցե, երբ վերջին թուրքն այդտեղից հեռանար, կուզենային, որ իրենց Դամասկոսից կառավարեր մի սիրիացի՞: Դա՞ էր նրանց ուզածը: Թերևս դա միակ բանը կլիներ, որին կհասնեին, եթե շարունակեին առճակատումը: Ո՛չ... Գոչում էր Քարիմ ալ-Ամիլաղը՝ բռունցքով հարվածելով սեղանին: Ո՛չ, ո՛չ դրուզների արմատականությանը, ո՛չ մարոնների անհաշտվողականությանը:

Բավական չէ՞ր արդյոք երկարատև այդ պայքարը: Մարոնները չէին ընդունում դրուզներին, իսկ դրուզներն այլևս չէին հանդուրժում թուրքերի կողմից իրենց նվաստացումներին, գավառապետ դրուզը թուրք վալու արտոնությամբ ամեն կերպ ուզում էր կախաղան հանել տալ մարոնական դատախազին: Ա՜հ, ահռելի դժվարություններ երկիր կառուցելու ճանապարհին...

Եվ մինչ երկրի ներսում սիրիացիները ձեռքերն էին շփում, Մեծ Սիրիային՝ Դամասկոս մայրաքաղաքով, հարկավոր էր լավ նավահանգիստներով ծովեզերք, իսկ Ֆրանսիան՝ բոլոր հեղափոխությունների և ազատությունների մայրը, ամեն ինչ վերցնելով իր խնամակալության ներքո, այդ կոպիտ ու անհատապաշտ մարդկանց, ովքեր իրենց ցեղից այն կողմ բան չէին տեսնում, օրհնանքներ ու խորհուրդներ էր բաժանում:

Սակայն ո՞վ էր այդ ամենին կասկածում: Հնարավո՞ր էր արդյոք երկիր կառուցել այդ դալար ճյուղերով: Ուղղափառ հույներ, սուննիներ, շիաներ, դրուզներ. բոլորն էլ՝ հնագույն մշակույթի տեր, որ այդտեղ թողել էին իրենց հետքերը: Բյուզանդացիները, օմայանները, աբբասյանները, օսմանները… Խորքում՝ հեռվից լուսավորված էր հավասարությամբ, եղբայրությամբ ու ազատությամբ: Ֆրանսիան հսկում էր այն՝ համարելով

իր ամենասքանչելի նահանգն Արևելքում: Մի՞թե դա չէր ասել Պիեռ Լոտին[9]:

Այդտեղ իրենց պատեհ առիթին էին սպասում Սպիտակ լեռան երևելի ընտանիքները՝ Ջումբլատները, Քասեմները, Չեհաբները, նախընտրելով «Լեռնային Լիբանանը»: Եթե ավելի խորանանք՝ Ռուսաստանը հովանավորում էր ուղղափառներին, Ավստրիան՝ մելկիտականներին, Ֆրանսիան՝ մարոնիներին՝ իրենց մյուս «ֆրանսիացիներին», Անգլիան՝ դրուզներին: Թուրքերն ի վիճակի չէին միջամտել: Արաբներն էլ՝ իսկական մուսուլմանները, սկսում էին շարժվել: Ընդ որում՝ իրականում նրանք, ովքեր գործում էին, հենց արաբներն էին՝ անհամբեր սպասելով իրենց հերթին:

Այդ ամենի վերաբերյալ Թոմասն ինքն իրեն հարց էր տալիս. «Մինչև ե՞րբ այդ ճնշումներին կդիմանար իսլամը»: Բառն ինքնին նշանակում է՝ «ով ապավինում է Աստծուն»: Սիրիան, Պաղեստինը, Միջագետքն ու ողջ Արաբիան իրենց համարում էին «Դար Ալ Իսլամ»՝ հավատացյալների տարածք կամ երկիր: Արդեն լսելի էր փոթորկի հեռավոր արձագանքը, որ հասնում էր մինչև Դամասկոս ու Բեյրութ, այն էլ՝ Հնդկաստանից և Աֆղանստանի քարքարոտ հովիտներից:

1911 թվականի մայիսի առաջին օրերից մեկում ծնվեց Էթել Հարդինգը: Աշխարհ եկավ մի խարխուլ և ճռնչացող մետաղե մահճակալի վրա՝ Բաալբեկին շատ մոտ գտնվող այն տանը, որտեղ նրանք բնակվում էին: Շատ հանգիստ և չքնաղ երեխա էր: Կարոլինը ծննդաբերեց հեշտ ու հանգիստ: Տեսնելով իր նորածնին՝ երջանիկ շունչ քաշեց. նրա մեջ տաճարների ոգուց թափանցել էր մի նշխար: Ընդամենը մեկ շաբաթ անց Կարոլինն անցավ իր սովորական կյանքին՝ գեղջկուհիների պես երեխային մետաքսե շալով կապած մեջքին:

Հաջորդող ամիսների ընթացքում շարունակեցին նկարել և Յուպիտերի տաճարի վերին ծոփորներից պատրաստել գիպսե կաղապարներ, որոնց համար հարկ եղավ պատվիրել ահռելի փայտամածներ: Արաբներն ավանդաբար շատ հմուտ ատաղձագործներ էին և դրանք այնպես էին պատրաստում, որ ոչ միայն ամուր էին, այլև փայտերը դյուրին հավաքվում էին ու դյուրին առանձնացվում: Հետո ամբողջ գյուղը ներքաշվեց այդ գործում, և մինչև իսկ տարեցներն ու երեխաները ոտքի ելան, որպեսզի հագեցնեն իրենց հետաքրքրասիրությունը, տեսնեն այն, ինչ

[9] Պիեռ Լոտի՝ Լուի Մարիա Ժուլիեն Վիոյի կեղծանունը (1850-1923), «Գալիլեա» և այլ գրական ստեղծագործությունների հեղինակ:

հռոմեացիներն էին ընդօրինակել հույներից: Կաղապարները նրանց հիացրին: Նրանք նախշաքանդակների, գիպսե դեկորացիաների մեծ գիտակներ էին, կարող էին վերարտադրել երկրաչափական պատկերներով ցանկացած նախշ՝ ուրվագծելով որևէ գծանկար: «Կիրառական չափագրություն»,- շշնջաց Նյումանը, ով այդ ամենով հրճվողներից էր, սակայն հրաժարվեց վաթսուն ոտնաչափ բարձրություն ելնելուց՝ պատճառ բռնելով իր գլխապտույտները: Ինչ վերաբերում էր ձևերին ու կերպարներին, պտուղներին ու ծաղիկներին, որոնք այունաշարքի սկզբից մինչև վերջ հետզհետե փոփոխվում էին, բոլորովին այլ էին: Գետնի վրա կային երկրաշարժերից պոկված բեկորներ, որոնց մեջ կարող էին լինել նաև Թամերլանի մոնղոլների կողմից կամ էլ վերջին ժամանակներում մարդուն հատուկ զուտ նենգությունից ավերված, ջարդված կամ թալանված կտորներ:

Թոմասն ազատ բարձրանում և իջնում էր փայտամածներով: Երբ հերթական անգամ բարձրանում էր, ոտքը դրեց մի տախտակի վրա, որի հանգույցներից մեկը քանդված էր, և այն կոտրվեց: Նա ընկավ համարյա ութ մետր բարձրությունից և գիտակցությունը կորցրած՝ մնաց գետնին. գլխի մեծ բացվածքից արյուն էր հոսում: Արաբները պատգարակի վրա նրան տուն տարան, որտեղ նա անվերջանալի ու անձկալի վեց օր ուշքի չէր գալիս: Հետո աչքերը կիսաբաց հարցրեց, թե որտեղ է գտնվում:

Այդ ծանր պահին Կարոլինը կարծեց, թե Թոմասը մեռնելու է: Ավգուստուս Նյումանը, որ այդտեղ էր, բարեկամի պես իրեն պահեց և ամբողջ ժամանակ մնաց նրա կողքին՝ խոնավացնելով նրա շուրթերը և կաթիլ-կաթիլ ջուր տալով նրան, որ կոկորդին չկանգներ, քշելով կպչուն ճանճերին, որոնք շարունակ նրա շուրջն էին պտտվում:

Էթելն ուժգին կպչում էր մոր կրծքերից: Կարոլինը վախենում էր, որ իրեն համակած երկյուղից կարող է կաթից զրկվել: Սակայն բնությունն իմաստուն էր:

Երբ Թոմասն ապաքինվեց, Ավգուստուսը նրան ասաց, որ մի քանի օր նա անզգա վիճակում է եղել: Թոմասը գլուխը բացասաբար շարժեց, սակայն առաջին բանը, որ շշնջաց, այն էր, որ կուզենար Բիբլոս գնալ: Նրան հարկավոր էր այցելել այդ հնագույն քաղաքը, որտեղ հույներն ու հռոմեացիները պապիրուսները մշակում և որպես թուղթ էին հրամցնում: Թեև իմաստ չուներ, սակայն Կարոլինը նույնպես ցանկանում էր գնալ: Թոմասի օգնականը հավաքել էր վերջին գծանկարները, որ նրա հետ ընկել էին փայտամածից: Մի անավարտ նկար պատկերում էր, թե ինչ-

պես է արևը լուսավորում մի քանի պապիրուսներ: Որքան տարօրինակ է մարդկային միտքը: Թոմասն այդ օրերին մնացել էր այն նույն ժամանակակետում, երբ տեղի էր ունեցել պատահարը: Երբ գիտակցությունը տեղը եկավ, իր մտավոր գործունեությունը շարունակեց ճիշտ այն պահից, որում խզվել էր:

Ավգուստուսը, որ չէր դադարում գլուխ կոտրելուց, հանգեց հետևյալ բացատրությանը. ասաց, որ Բաալբեկի քարերի համար էլ ժամանակն ասես կանգ առած լիներ: Արվեստն անփոփոխելի է: Խորհրդանիշների, այն պատմությունների համար, որ պատմում են ծովորների, կակաչների, ականթների, հասկավոր ծաղկաբույլերի, նետերի ու նիզակների, պատերազմող մարտիկների, որսորդների, հերոսների մասին, ինչպես նաև աստվածների համար նույնպես ոչ մի վայրկյան չէր անցել: Ի սկզբանե այնտեղ էին և կմնան այնտեղ հավերժ՝ կանգ առած այլ ժամանակի մեջ: Դիտարկողներն էին, որ դրանք փոփոխում էին և կարծում էին, թե կարող են համեմատել իրենց ձեռք բերածն ու այն մարդկանց փորձառությունը, ովքեր գծագրել էին այդ սքանչելի հարթաքանդակները, որոնք և յուրօրինակ էին դարձրել այդ կոթողները: Նրանց արարող ոգին մնում էր անապական՝ իրենց ստեղծածն օժտելով հավիտենական գեղեցկությամբ, որով բոլորը հիանում էին և գնահատում: Ավգուստուսի գիտական միտքը, ինչ խոսք, դրանք հիացմունքով բացատրում էր կաղապարների, գետնից հավաքված բեկորների հիման վրա: Ահռելի քիվերին հպվելու համար Կարոլինը նույնպես բարձրացավ վերև՝ մի քանի րոպեով Էթելին թողնելով Նյումանի գրկում, ով չհամարձակվեց շարժվել, քանի դեռ երեխան իր մոտ էր: Այդ չափերից ցնցված՝ Կարոլինը ոգևորված բղավեց.

- Այստեղից՝ վերևից, շատ ավելի հասկանալի է, թե ինչ էին ուզում արտահայտել այդ մարդիկ:

Դա կարծես մարտահրավեր լիներ ձգողականությանը, ժամանակին, մարտահրավեր գծագրողների, շինարարների և արհեստավորների տաղանդին, որոնց հաջողվել էր այդ ամենն իրականացնել, մարտահրավեր այն բոլորին, ովքեր մի օր կանցնեն այդ վայրով:

- Ես այնքան զարմացած չեմ կառույցներից, որքան այն կամքից, որի շնորհիվ իրականացվել է այս ամենը,- Թոմասի և Նյումանի հետ իր մտքերն էր կիսում Կարոլինը,- Հռոմից եկող հրամանները վճռական էին: Այս վայրն էր, որ պետք է հյուրընկալեր Յուպիտերի և այլ աստվածների տաճարներին: Փոքորկի, անձրևի, որոտի և կայծակի աստվածն այստեղ կունենար իր տունը: Պլուվիուսը, Թոնանսը, Ֆուլգուրատորը,

Ֆուլմինատորը... Օպտիմուս Մաքսիմուսը պատասխանատու ճարտարագետներին ոգեշնչեց, որ գլուխ բերեն դրանք: Լավագույնը և ամենամեծը... Մի՞թե Հռոմի իսկական պահապանը Յուպիտերը չէր: Իմպերատոր, Վիկտոր, Ինվիցտուս, Ստատոր և Տրիումֆատոր... Չէր կարելի աստվածների աստծուն նեղացնել մի փոքրիկ տաճարով: Երբ շինարարն այդ ահռելի սյուները բարձրացնելու հրաման ստացավ, պետք է որ սաստիկ դողէրոցքի մեջ լիներ: Հավանաբար կարծեց, թե իրեն տվել էին սխալ մասշտաբով բազմաթիվ նախագծեր: Սակայն՝ ո՛չ: Գաղափարը հստակ էր. զարմացնել ժողովրդին, նրան ապշեցնել, ինչ-որ չափով երկյուղ ներշնչել...

Ահա այն, ինչ զգաց Կարոլին Հարդինգը՝ մայրու փայտամածի վերին աստիճանի վրա կանգնած. դա համարյա այն նույն փայտն էր, որ երկու հազար տարի առաջ օգտագործում էին հռոմեացի շինարարները՝ վրան կանգնելու համար:

Երբ Կարոլինը ներքև իջավ, արդեն նույն կինը չէր: Հղկված քարերը նրան հաղորդել էին շատ կարևոր մի բան. զմայլված և ապշահար էր այդ անհավատալի տաճարը նախագծողների իմաստնությունից, ովքեր, մուրճի ու բրիչի օգնությամբ հեռացնելով ավելորդ մասերը, արտացոլել էին քարերի գեղեցկությունը: Մտածեց, որ կյանքում նույնպես հարկավոր է հեռացնել այն ավելորդությունները, որոնք թաքցնում են գեղեցկությունը, սակայն՝ միայն հարկ եղած չափով, ոչ մի միլիմետր ավելին:

Կարոլինն Էթելին վերցրեց Նյումանի գրկից ու նրան հանգիստ պատմեց, թե ինչ էր զգացել: Երեխային մի հազար անգամ համբուրեց այն համոզմամբ, որ նա դա հասկանալու էր: Նրան տարավ Տրայանոսի օրոք կառուցված մեծ բակ՝ արևից տաքանալու և զբոսնելու: Շոյեց Ասուանից բերված գրանիտե սյուները: Ամենուրեք կային ուրիշ այցելուների թողած հետքերը՝ անուններ ու տարեթվեր: Մի հատիչով նա քարե հատակին դասական տառերով ու մի մատ բարձրությամբ փորագրեց՝ «ԷԹԵԼ, 1911», մինչ դուստրը ժպտալով զննում էր մորը:

Բաալբեկում դա եղավ նրանց վերջին օրը. տխուր էին, որ հեռանալու էին, բայց՝ նաև ոգևորված, որ կարողացել էին լիովին վայելել այդ վայրը: Բաժակ բարձրացրին հունական կարմիր գինով, որ Նյումանն էր բերել Բեյրութից, և հոգնաբեկ խոսեցին այն անելիքների մասին, որ պետք է իրականացնեին Լիբանանում:

- Առհասարակ մտադի՞ր չեք վերադառնալ Անգլիա,- որոշ հեգնանքով հարցրեց Ավգուստուսը:

Նա հասկանում էր իր բարեկամների ոգևորությունը: Նրա հետ այդ-

պիսի բան կատարվել էր ավելի քան տասը տարի առաջ, սակայն նա դեռ գտնվում էր այդտեղ՝ իրեն ծույլի տեղ դնելով, ամեն նոր օր շինծու պատրվակներ հնարելով, միայն թե չվերադառնար Էդինբուրգ:

- Ա՜հ, մտքովս չէր անցնի: Հիմա, երբ հիշում եմ, որ մի պահ հակառակ կարծիքի էի, երբ ստիպված եկա Լևանտ: Հիշում եմ, որ երբ ափ իջա Պիրեայում, նրա ուժեղ լույսն ինձ կուրացրեց: Իհարկե մտածեցի Յուպիտերի մասին: Արդյոք նա չէ՞ լույսի հայրը: Պետք է, որ ինձ հասկանաք, Ակրոպոլիսի ավերակների մեջ ծունր դրեցի, որ պաշտեմ Աստծուն՝ կյանք շնորհողին: Այնտեղ մնացի մի քանի ամիս՝ լրիվ շվարած, ասես չէի կարողանում հեռանալ Աթթիկայի լեռնաղաշտի վրա գտնվող այդ բլրից: Մի տուն վարձեցի այն թաղամասում, որը վեր էր բարձրանում քարքարոտ կիրճով: Իմ տանիքի վրայից կարող էի հիանալ Ակրոպոլիսի գագաթով և որքան ավելի էի տեսնում այն, ավելի շատ էի ուզում ըմբռնել այն ստեղծողների մտածողությունը: Այդ փորձությունից հետո ես ինձ փոքրացած զգացի: Հետո որոշեցի գեղեցկության հետևից գալ այստեղ: Չեմ կարողանում հագենալ: Ասես ես գտել էի իդեալական վայրը: Կարծում եմ, որ ինձ այստեղ կթաղեն, և իմ ոսկորները կխառնվեն անապատի փոշուն,- Նյումանը կռացավ և ցուցամատով ու բութ մատով մի պտղունց հող վերցրեց,- այստեղ կան ուրիշ ավգուստուսներ, գիտեմ, կանխազգում եմ, գիշերը ման են գալիս, այս ու այն կողմ թափառում, մինչև որ լուսաբացին՝ արևի առաջին ճաճանչների դուրս գալուն պես, թաքնվում են:

Երբ որոշեցին հեռանալ, այդժամ հասկացան, թե որքան մեծ ու կարևոր էին իրենց կատարած աշխատանքները: Գիպսե կաղապարներն արդեն Անգլիա գնալու ճանապարհին էին, սակայն, միևնույնն էր, դեռ բազմաթիվ ճամպրուկների և պարկերի կարիք ունեին. տարբեր տեղերից ձեռք բերված գրքեր, իրեր, լուսամփոփներ, վրաններ, ողջ անհրաժեշտ ուղեբեռը, մի քանի թամբ, տեղանքագրական սարքեր, անգամ կահույք, որից չէին ուզում բաժանվել: Ջորիներին լծված երեք սայլի կարիք ունեցան, որոնց Բաքերը քշելու էր մինչև իրենց նոր ապրելատեղին՝ մի անմարդաբնակ տուն, որը նրանց վեց ամսով վարձով տվեցին: Այն գտնվում էր մի հանգստավետ բլրի հարավային լանջին՝ խաղողի այգուց վերև՝ Բիբլոսի մոտ: Թոմասի կարծիքով՝ իր գտած տեղը հրաշալի էր, իսկ Կարոլինն այն դեռ չէր տեսել:

Բաալբեկը թողնելուց մի քանի ժամ առաջ լուր ստացան մոտակա բնակավայրում տեղի ունեցած անկարգությունների մասին: Երկու

թուրք պաշտոնյա՝ վիլայեթի հարկահավաքները, սպանվել էին ճանապարհին: Բոլորն էլ քաջ գիտակցում էին, որ դա իր հետևից բերելու է հալածանքներ, սակայն տեղաբնակներն ուսերն էին թոթվում՝ իրենցից տեղեկություն ստացողին հավաստիացնելով, որ իրենք դրա հետ ոչ մի առնչություն չունեն: Ամեն դեպքում դա տեղի էր ունեցել երիտթուրքերի իշխանության գալուց հետո, կարծես վրա էր հասնում կայսրության անկման վերջաբանը:

Ավգուստուսը և Թոմասը քշում էին ձիերը՝ հարմարվելով Կարոլինին ու Էթելին տանող կառքի ընթացքին, որի կառապանը Աբդել Մակիկն էր, ով իր հավատարմությամբ ու համակրանքով դարձել էր ցանկացած խնդիր լուծելու գործում ջանադիր ու անհրաժեշտ օգնական:

- Այդ օսմանները ստեղծել են մի դատարկ համակարգ,- սկսեց Ավգուստուսը,- մի կաշառու վարչակարգ և շատ դեպքերում՝ արաբների հետ դաժան: Այստեղ նրանց չեն սիրում, երբ գա այն օրը, որ բոլորը ստիպված հեռանան, նրանցից ոչ ոք չի մնա: Արաբները կուզենան վրեժ լուծել այդքան դարերի անպատվության՝ նվաստացումների ու դաժանությունների համար: Սակայն այս ահռելի կայսրության քայքայումը ոչ ոքի վրա էժան չի նստի: Չնայած Թալեաթի, Ջեմալի և Էնվեր փաշայի արած հայտարարություններին, որոնցում խոստանում են եղբայրություն, հավասարություն և ազատություն, այլևս ոչ ոք դրանց չի հավատում: Դարեր առաջ եկան այստեղ՝ հրով ու արյուն հեղելով, որի վերջնակետը եղավ Կոստանդնուպոլսի գրավումը, քանի որ դրան նախորդեց մի սարսափելի արյունոտ նախճիր: Մեհմետն ու նրա հետևորդները, ինչպես ինքը՝ Սելիմը կամ Օրենսդիր Սուլեյմանը՝ Արևմուտքում՝ Հրաշալին, պատերազմի այրեր էին, ովքեր իրենց ճամբարները փոխում էին այն պալատներով, որոնք նվաճում էին, իսկ այն պալատները, որ հենց իրենք էին կառուցում, ընդօրինակում էին գոյություն ունեցողներին: Այնուհետև օսմանյան իշխանությունը, որ համակարգի փոխարեն օգտագործեց օտարներից վերցրած տարրեր, հետզհետե այլասերվեց, կաշառվեց, մինչև հասավ այն վիճակին, որ այսօր մեր աչքի առաջ է: Տասնամյակներ ի վեր քայքայման մեջ է: Արաբական ազգայնամոլությունը հավակնում է այս կառավարմանը փոխարինելուն, սակայն հազիվ թե դա նրանց հաջողվի առանց ծանր խնդիրների: Տեսե՛ք, Օսմանյան կայսրությունը դարձել է «Եվրոպայի հիվանդը»: Հիմա երիտթուրքերը ստեղծել են քաղաքական կուսակցություն՝ «Իթթիհադ վե թերաքքի սեմիյեթի», որը թարգմանաբար նշանակում է «Միասնության և առաջադիմության կոմիտե», որի կազմում կան արաբներ, իրաքցիներ,

սիրիացիներ, եգիպտացիներ... Թեև ուժը և վերահսկողությունը թուրքերի ձեռքին է: Ինձ Ուայթհոլից[10] հանձնարարել են տեղեկանալ իրավիճակից, պարզել, թե ովքեր են շատ՝ արաբնե՞րը, թե՞ օսմանները: Եվ հարկավոր չէ աղվես լինել՝ կռահելու համար, թե ինչ է շուտով կատարվելու: Եթե հարցնեք նրանցից մեկին՝ ձեզ կասի, որ որպես հայրենասեր պարտավոր է պաշտպանել կայսրության ամբողջականությունը, բայց անմիջապես կհավատացնի, որ դա չի նշանակում, թե թուրքերը պետք է արտոնյալներ լինեն: Մյուս կողմից սուլթանը դեռ մեծ իշխանություն ունի և համոզված է, որ իրավիճակը շրջելի է: Կլինի՞ այդպես: Սա է իրական դրդապատճառը, որ մեր կառավարությունն ինձ ուղարկում է Սալոնիկ: Սուլթանը, ինչ խոսք, պահում է իր գաղտնի ծառայությունը, որը թաքուն դավեր է նյութում՝ փորձելով երիտթուրքերին զրկել իշխանությունից: Մինչ այդ մենք վկաներն ենք այն ամենի, ինչ տեղի է ունենում ողջ կայսրությունում: Երկու տարի առաջ լուծարվեց «Արաբա-օսմանյան եղբայրություն» ընկերությունը, և այն արաբները, ովքեր պահանջում էին հարգանք և ինքնավարություն, հետապնդվեցին, և նրանց միակ պաշտպանությունը գաղտնի ընկերություններում խմբավորվելն էր: Ձեզ մի անուն կարող եմ տալ՝ «Երիտարաբների միություն», թերևս ամենակարևորն այն է, որ Ալ-Քահիրամիայի ժառանգորդն է: Նա հավակնում էր թուրք-արաբական կայսրություն կազմավորելուն: Մի քիչ նման չէ՞ ավստրո-հունգարականին: Պատկերացրե՛ք, թե ինչ տեղի ունեցավ: Գաղտնի կազմակերպության մեջ ներքաշված արաբներն այն էլ գայլի երախում՝ Կոստանդնուպոլսում, փորձեցին շահել արաբ պաշտոնյաների վստահությունը: Նույնիսկ եկան դեսպանատուն՝ մեզ տեսնելու: Թուրքական գաղտնի ծառայությունները քաջ իրազեկված էին և երբ իմացան, սարսափելի հաշվեհարդար տեսան: Հիմա «Ալ-Ֆաթաթը» թերևս գործող լավագույն կազմակերպությունն է: Դու, Թոմա՛ս, զուսպ մարդ ես, սակայն եթե ինձ հարցնեիր, թե արդյոք մենք նրանց ձեռք մեկնո՞ւմ ենք... Կասեի, որ՝ այո՛: Թուրքերը գերմանամետ են, իսկ արաբները՝ անգլիամետ: Ֆրանսիացիները մեր դաշնակիցներն են ու միշտ կլինեն: Քեզ պետք է ասեմ, որ այստեղ դա քչերին է հայտնի, թեև մենք ենք աշխարհն առաջ շարժում: Բացի դրանից՝ ֆրանսիացիներն առաջամարտիկներ են առաջադեմ գաղափարների առումով:

Ուղևորությունն այնքան դանդաղ էր ընթանում, որ գրեթե երկու օրում հասան Բիբլոս: Կառքը չէր կարող ավելի արագ ընթանալ անհարթ ճա-

[10] Ուայթհոլ՝ լոնդոնյան փողոց, որտեղ 20-րդ դարի առաջին կեսին գտնվում էր Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության շենքը:

նապարհների պատճառով, որոնք վերջին անձրևների պատճառով ցեխակոլոլ էին դարձել, ջորիներին լծված սայլերն էլ մինչև վերջ բեռնված էին: Ի վերջո տեղ հասան: Այնտեղ էր՝ ծովափին, այբուբենի քաղաքը՝ հազարամյա Բիբլոսը: Թոմասը դողէրոցք զգաց: Նրա մասնագիտությունն անտիկ պատմությունն էր, մասնավորապես՝ Փյունիկիան: Եթե կար մի վայր, որում կարող էր համադրելով կենտրոնացնել այդ մշակույթը, Բիբլոսն էր: Փյունիկեցիներից դեռ շատ առաջ այդտեղ՝ այն ժամանակ ձկներով հարուստ մի ծովեզերքում, հաստատվել էին ջեբելները՝ ձկնորսությամբ զբաղվող մի ժողովուրդ, որն այնտեղ ապրել էր նեոլիթյան՝ նորքարեդարյան և բրոնզե դարաշրջանի միջակայքում՝ առանց իմանալու ստեղծելով մարդկային քաղաքակրթության հիմքերը:

Թոմասը նրանց հետ մտովի զրուցում էր, մինչ հանգստանում էին՝ վայելելով նոր պատրաստված թեյը: Նրանց բացատրեց, թե ինչպես էր այնտեղ հասել մի անհայտ ժողովուրդ՝ ավելի կիրթ և ավելի մշակված ավանդույթներով:

- Այդ նրանք,- համոզված հաստատեց,- բերեցին Բաալաթ-Ջեբալի՝ Բիբլոսի Տիկնոջ պաշտամունքը, ով շատ ավելի ուշ կոչվելու էր Աստարտե: Այնուհետև քանանացիները՝ մի քոչվոր բեդվին ժողովուրդ, հաստատվեց այնտեղ՝ գուցե և այն նույն վայրում, որը նրանք էին ընտրել: Այդ մարդիկ այդ ափը կոչեցին Քանան:

Ոգևորված պատմեց, թե ինչպես խեթերը նվաճեցին ամբողջ տարածքը, և թե ինչպես եղավ, որ այն ժամանակ եկան փյունիկեցիները՝ որպես նավագնացներ բերելով իրենց արտասովոր մշակույթը: Հավանաբար խոսքը կրետական մի ժողովրդի մասին էր, որը քաջատեղյակ էր Միջերկրական ծովի տարածաշրջանին և սկսեց Եգիպտոսից ներմուծել պապիրուս՝ այն տարածելով ողջ դասական աշխարհով մեկ, ինչպես նաև՝ առաջին հնչյունական այբուբենը:

Թոմասը հոգոց հանեց: Այդ հնագույն քաղաքը՝ այն ժամանակ արաբական մի գյուղ՝ Ջեբել, այսինքն՝ բլուր, նրան սպասում էր այն օրվանից սկսած, ինչ ինքը որոշեց ուսումնասիրել հին արվեստը:

Անցան մի դղյակի ավերակների կողքով, որը կառուցել էին խաչակիրները՝ օգտագործելով այն նույն քարերը, որոնցով հռոմեացիները կառուցել էին իրենց քաղաքը՝ մի թատրոնով և մի պողոտայով՝ որպես սյունաշարքի առանցք: Թոմասը կուզենար, որ աշխատած լիներ Էռնեստ Ռենանի՝ ֆրանսիացի գիտնականի հետ, ով 1860 թվականին խնամքով պրպտեց փյունիկյան մշակույթի վերջին մնացորդները: Հետագայում գալու էին ուրիշները, իսկ հիմա եկել էր ինքը: Դեռ շատ բան

կար հայտնաբերելու: Ավգուստուս Նյումանը նրան ցույց տվեց.

- Այս քաղաքները թերթանուշի՝ ֆրանսիական շերտավոր համեղ խմորեղենի պես են: Բարձրացնում ես մի շերտ, ու նրա տակ հայտնվում է մեկ ուրիշը, հետո՝ նորից մեկը, ու՝ էլի մեկը: Այստեղ հազիվ առաջինն են բացել: Չկասկածես, այնտեղ՝ ներքևում, մի ողջ աշխարհ կա: Այդ խաչակիրները, որ գալիս էին Եվրոպայից, իրականում անգրագետների մի գռեհիկ հրոսակախումբ էր, որ ամեն հարց լուծում էր բռնի ուժով: Ամրոցի այդ ավերակների քարերը բերվել են տաճարներից և շիրիմներից: Նրանց համար, սակայն, միևնույնն էր. դրանք պարզապես հարմար քարեր էին կրկին օգտագործելու և հնարավորինս արագ որևէ ամրոց կառուցելու համար: Բայց դեռ մնում է այն, ինչպես տեղին նկատեց Կարոլինը, ոգին: Թեև ինչպես ինձ տեղեկացրել են, մի սուննի արաբ ընտանիք կա, որ ժամանակ առ ժամանակ վաճառում է որևէ արժեքավոր մնացորդ:

Հասան այնտեղ, որտեղ իրենց նոր տունն էր գտնվում. մի ավանդական կացարան՝ կառուցված հում աղյուսից, հասարակ ու զով բակի կենտրոնում: Ամենալավը ծովափի վրա բացվող հրաշալի տեսարանն էր:

- Սա չքնաղ վայր է,- համոզված ասաց Կարոլինը:

Այդտեղ պետք է անցկացնեին առաջիկա ամիսները. այդպես էին մտադրված: Անհամբերությամբ ծանոթացան շրջակայքին: Հին նավահանգիստը մի իսկական գանձ էր, ինչպես և մարոնական եկեղեցին, մզկիթը: Հետո, թեև ճանապարհից հոգնած էին, սակայն ծովափ իջան հենց այն պահին, երբ վերադառնում էին ձկնորսական փոքրիկ առագաստանավերը: Տասը պեննիին համարժեք գնով երեք օմար[11] գնեցին. Բաքերը ոգևորված հավատացրեց, որ դրանք հատուկ ավանդական կաթսայում եփելու դեպքում շատ համեղ են ստացվում: Այդ մարդը գնալով համակվել էր այդ տարածքի տեղաբնակների ապրելակերպով և հավաստիացնում էր, որ եթե իր կամքին մնար, ապա երբեք չէր վերադառնա Անգլիա: Նրան ներքուստ թվում էր, թե ընդմիշտ մնալու էր այդտեղ:

Մի քանի օր անց Ավգուստուս Նյումանը երկուսին էլ հրաժեշտ տվեց: Իր աշխատանքի հետ կապված անելիքներ ուներ Սալոնիկում՝ «արտգործնախարարությունում», սակայն խոստացավ մի քանի ամիս հետո վերադառնալ:

- Եթե այստեղից հեռանաք, ինձ տեղյակ պահե՛ք: Ես ձեզ կգտնեմ,- այնուհետև նրանց գրկեց, ապա հեծավ ձիուն,- ա՜հ, բարեկամությունը... Դա միակ ճշմարիտ հավատամքն է:

[11] Ծովային տասնոտանի խեցգետին:

- Ձեզ կկարոտենք, Ավգուստո՛ւս,- Կարոլինը Նյումանի հետ շատ մտերիմ էր. այդ մարդու ներկայությամբ նա իրեն պաշտպանված էր զգում:

Ավգուստուսն արագ վարգով ուղղվեց դեպի ծովեզր՝ Բեյրութի ճամփան բռնելու, մինչև որ չնշմարվեց հեռվում:

Այդ օրը՝ վերջալույսին, մայրամուտը շլացուցիչ էր. արևի վերջին ճառագայթներն ամրոցի ավերակների վրա՝ ցնցող պատկեր էր: Թոմասը գրկեց Կարոլինին, Էթելը մոր գրկին էր:

- Սիրելի՛ Կարոլին, անչափ երջանիկ եմ Լիբանանում, սակայն մի՛ խանդիր: Դու ես այս զգացողության միակ պատճառը: Պետք է սովորենք վայելել յուրաքանչյուր պահը: Համաձա՞յն ես: Ուրեմն օգտվենք դրանից: «Carpe Diem» («Օգտվե՛ք յուրաքանչյուր պահից»):

5. ԿԱՐՈԼԻՆԻ ԵՐԱԶՆԵՐԸ
ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՄԱՅԻՍ, 1911-1912թթ.

Մի քանի շաբաթ անց Թոմասը որոշեց խնամքով հավաքել ու հանել խաչակիրների ամրոցի ավերակների նախագծերը և լուսանկարել ողջ շրջակայքի իրական պատկերը: Հետո նույն բանը փորձելու էր անել մյուս կառույցների հետ: Այդպիսի աշխատանք չէր կատարել, և այն չէր կարելի ավելին հետաձգել: Այդ միջոցին Կարոլինը մտածեց, որ լավ կլիներ մի դայակ գտնել՝ Էթելին խնամելու համար. ինքն այդ դեպքում ազատ կլիներ և կաշխատեր ամուսնու հետ: Նա տարվել էր հնագիտությամբ: Բացի դրանից՝ շատ ժամանակ էր ուզում անցկացնել Թոմասի հետ, ում այդ գաղափարը շատ ոգևորեց:

Ըստ Թոմասի վարկածի՝ ամրոցի ավերակների ներքո հեռավոր ժամանակներում թերևս մի տաճար է եղել, որը շինարարները հավանաբար օգտագործել են իրենց բերդի հիմքերն ամրացնելու նպատակով: Սակայն որևէ հետք գտնելու համար հարկավոր էր մանրամասն ուսումնասիրել ավերակները, ամեն ինչին հետամուտ լինել, մտածել, թե սկզբնական բնակիչներն ինչպես են կառուցել տաճարը:

Ծովի ալիքները լիզում էին այն ժայռերը, որոնց վրա նստել էր բերդն իր հիմքերով: Այդ վայրը, որ սփռում էր մելամաղձություն և անդորր, փոքրիկ ծովածոց էր՝ նախկինում նավահանգիստ, որի նավամատույցից կարծես թե նույնպես մնացել էին որոշ թույլ հետքեր: Թերևս հեռավոր ժամանակներում այդտեղ են հասել Ալեքսանդրիայից եկող պապիրուսի բեռները: Դրանք Եգիպտոսում վերամշակվում էին՝ վերածվելով թղթի, այնուհետև տարածվում միջերկրածովյան բոլոր երկրներով: Այդ վայրում ի հայտ եկավ մարդկության պատմության առաջին հնչյունական այբուբենը՝ տասներկու սկզբնական այն նշաններով, որոնք ներկայացնում էին տասներկու հնչյուններ, ինչը և թույլ էր տալիս փորագրել բառերը: Գրագիրները չէին պատկերացնում, թե որքան կարևոր էր իրենց կատարած աշխատանքը մշակույթի տարածման գործում: Իսկ գուցե և պատկերացնո՞ւմ էին:

Գրերի ստեղծումը հավասարազոր էր մոգական մի երևույթի՝ զուտ աստվածների միջամտությանը, իսկ այն եկեղեցականները, ովքեր վերահսկում էին այդ գործընթացը, թերևս գիտակցում էին դրա ունեցած վիթխարի նշանակությունը:

- Այնքան ահռելի էր այդ փոփոխությունը: Այդ պահից սկսած հնա-

բավոր էր գրի առնել լեգենդները, հին պատմությունները, որ մինչ այդ միայն բանավոր մշակույթից էին կախված: Երբ վախճանվում էր մի իմաստուն ծերունի, նրա մահվան հետ ջնջվում էին նրա ողջ փորձառությունը և գիտելիքները: Շատ դժվար էր պատմությունը վառ և հնարավորինս հավաստի պահպանելը: Մինչ գրերի գյուտը այն սերունդների հետ գնալով փոխվում էր՝ հարմարվելով նոր ժամանակներին: Երբ ստեղծվեց այբուբենը, այն մարդկանց համար արտասովոր նշանակություն ունեցավ: Գուցե և դա էր պատճառը, որ նրանք սկսեցին շատ ավելի արագ զարգանալ: Այդ ոգուց, որին դու շարունակ անդրադառնում ես, ինչ-որ բան կա այստեղ՝ Բիբլոսում, և ներծծված է ամեն ինչում: Ընդունում եմ, որ հավանաբար հրաշքը, այսինքն՝ գրերի ստեղծումը տեղի ունեցավ Նեղոսին մոտակա որևէ վայրում... կամ՝ գուցե հենց այստեղ: Հեշտ չի լինի դա ստուգել: Սակայն կա մի բան, որը ստույգ է. այդ ժամանակվանից սկսած միջերկրածովյան երկրների մշակույթը սկսեց տարածվել այս քաղաքից: Ռենանի նկատմամբ իմ ունեցած խորը հիացմունքի պատճառը դա է. նա, հետևելով Աստվածաշնչին, ունակ եղավ գտնելու այդ ամենի նշանները: Փյունիկիա՜... Ամեն անգամ այդ երկրի մասին մտածելիս նրա բնակիչներին հիշում ենք որպես հմուտ առևտրական ժողովրդի, բայց դա շատ կեղծ նկարագիր է: Նրանք եղան հին աշխարհի առաջին հետազոտողներն ու աշխարհագետները, ովքեր այստեղից ու այնտեղից տեղեկացան առաջընթացներին, հայտնագործություններին, հազիվ թոթովել սկսող, բայց և խավարից ու տգիտությունից ազատվել ցանկացող մարդկության գիտելիքներին...,- ոգևորված պատմում էր Թոմասը:

Կարոլինը ժպտալով նրան ընդհատեց.

- Կարծում եմ, որ եթե երբևէ վերադառնանք Անգլիա, առանց մեծ դժվարության կկարողանամ լիցենցիանտի կոչում ստանալ հին արվեստի բնագավառում: Էթելի բախտը կբերի, համալսարանն իր տանը կլինի:

- Ծիծաղո՞ւմ ես իմ գոռոզամտության վրա,- Թոմասը երկչոտ ժպտաց,- պարզապես ես մեծ ոգևորությամբ եմ համակվում, երբ մտքերս կիսում եմ ինձ նման մտածող մեկի հետ, որը դու ես: Գուցե ես ինչ-որ բան գիտեմ այս ամենի մասին, մինչդեռ դու դրան տիրապետում ես: Իմ Բաալաթն ես, իմ աստվածուհին: Իշխանուհի, ում հպատակն եմ ես: Իսկ հիմա սկսենք աշխատել:

Ոչ մեկին փնտրելու հարկ չեղավ: Արաբների մի ընտանիք՝ Աբդել Ղալիբներն ապրում էին շատ մոտ և առաջարկեցին իրենց օգնությու-

նը: Ավագ դուստրը՝ Նաղիման՝ չքնաղ երիտասարդուհին, զբաղվելու էր Էթելով, ում հետ առաջին իսկ պահից, երբ նրան իր գիրկն առավ, մտերմացավ: Նրա երկու եղբայրները զբաղվելու էին ձիերով և օգնելու էին այգու գործերին:

Արաբերենի դասախոս գտնելը նույնպես խնդիր չէր, որպեսզի Կարոլինը շարունակեր սովորել այդ լեզուն: Մաջիդ Աբդելն իր ոտքով եկավ, երբ իմացավ, որ փնտրում էին մեկին, ով այդ գործում իրենց կօգներ: Ինչ խոսք, Կարոլինը, օժտված լինելով հրաշալի լսողությամբ, կարճ ժամանակում շատ բաներ էր սովորել:

- Էթելն այն կսերտի առանց որևէ ջանքի...,- ոգևորված ասաց ամուսնուն,- ավելի ճիշտ, մենք պետք է հատուկ ուշադրություն դարձնենք, որ նա հետևի նաև անգլերենին: Այնպես որ՝ ես ուրիշ ելք չունեմ, քան արաբերենը սովորել արագացված դասընթացով, թեև հազիվ թե ինձ երբևէ հաջողվի քեզ պես խոսել:

Շուտով պարզեցին, որ «ուսուցիչը» (այդպես էին նրան կոչում) մի հրաշալի դասախոս է: Միակ խնդիրը նրա անհաղորդասեր լինելն էր. դեմ էր անկաշկանդ մթնոլորտին և կատակներին: Հենց դռնից ներս էր մտնում, անմիջապես սկսում էր Կարոլինին բացատրել օրվա դասը, բավականին երկար խոսում էր Թոմասի հետ, երբեմն ուղղում նրա արտասանությունը կամ բացատրում որոշ նոր կառույցներ, Կարոլինին տալիս էր նոր առաջադրանք և հեռանում: Ճշտապահ էր, չափավոր, հակիրճ և անհաղորդ: «Լավ,- մտածեց Թոմասը,- չէ՞ որ կյանքում բոլորս միատեսակ չենք, և եթե լավ է ուսուցանում, առարկելու ոչինչ չունեմ»:

Նաղիման տեղով հմայք էր, ու լիովին բավական էր, որ նրան համակրեին և ունենային լավ տրամադրություն:

Այսպես անցան Բիբլոսում նրանց առաջին շաբաթները: Բաալբեկի պես գեղեցիկ վայր չէր, փոխարենը՝ ծով ուներ և սքանչելի ափ: Այնտեղ Միջերկրականը մի իսկական գանձ էր. թանձր կապույտ, երբեմն հանգիստ ու խաղաղ, ասես հոկված հայելի, որ արտացոլում էր իրիկնամուտի արևը: Այդ ծովը բիբլիական ժամանակների պես լի էր ձկներով, որոնք ձկնորսներն ամեն օր՝ նախքան արևի մայր մտնելը, տանում էին իրենց տուն: Ձկները հուսահատ թպրտում էին ցանցերի մեջ: Դրանց շնորհիվ զուսպ Բաքերն իրեն դրսևորել էր որպես մի հրաշալի խոհարար՝ պատրաստելով համադամ կերակուրներ: Այդ մարդը վերահսկում էր ամեն բան: Նրանց կառավարիչն էր, խոհարարը, ամեն ինչ հայթայթողը, պահապանն ու բարեկամը: Թոմասը նրան անկեղծորեն ասում էր.

- Չգիտեմ, Բաքե՛ր, թե առանց քեզ ինչ կանեինք:

Իսկ նա գոհունակ ժպտում էր՝ զգալով, որ դրանք իր ապրած կյանքի լավագույն տարիներն են: Ընդ որում՝ Բաքերը շատ ընդունակ գտնվեց տեղանքագրական աշխատանքի համար, ազատ աշխատում էր թեոդոլիտով. դա մեծ օգնություն էր դաշտային պայմաններում: Այդ կապակցությամբ Թոմասը նրան շնորհակալություն հայտնեց, քանզի ինքը լիարժեք չէր տիրապետում այդ գործին: Բացի դրանից՝ այդ գործը շատ ժամանակատար էր, իսկ Թոմասն ավելի կարևոր գործառույթներ ուներ: Բաքերն ուսյալ մարդ չէր, սակայն ծայրաստիճան դաստիարակված էր և ճկուն: Նա նույնպես շատ էր առաջադիմել արաբերենի յուրացման գործում: Դասերի ժամերին, որոնք անցկացվում էին օրական երկու անգամ՝ բացի ուրբաթ օրերից, գալիս էր իր տետրով և մատիտով, որքան հարկ էր, այդքան կրկնում էր բառերը: Ուսուցիչը բերել էր մի քանի փոքրիկ գրատախտակներ՝ նույնը, ինչ օգտագործում էին կրթարաններում, որպեսզի երեխաները սովորեին գրել ու կարդալ Ղուրանը: Թոմասն օգտվում էր առիթից, որպեսզի կատարելագործի և հղկի իր արտասանությունը: Ուսուցիչն այնպես էր խոսում արաբերեն, որ իր լեզվի նկատմամբ ասես մեծ հարգանք էր տածում, ասես տիրապետում էր նրա բոլոր գաղտնիքներին:

Չնայած այդ ամենին՝ նրանց չհաջողվեց ուսուցչին համոզել, որ մեկնի Ղուրանը. այդ առումով նա անդրդվելի մնաց: Նա չէր ցանկանում խոսել կրոնի մասին, մանավանդ՝ քաղաքականության կտրվածքով: Ասում էր, որ իր՝ այդտեղ գտնվելու նպատակն արաբերեն սովորեցնելն է: Այնուամենայնիվ, այո՛, համաձայնեց, որ արտահայտվելու համար արաբերենն Աստծո ընտրած լեզուն է, ու հետևաբար դրանով ամեն ինչ ասված է:

Մի օր Նադիմայի հայրը ցածրաձայն ասաց, որ ուսուցիչը թրքամետ է և շատ քիչ բարեկամներ ունի Բիբլոսում: Օրերն անցնում էին, ու թուրքերը գնալով ավելի դաժան էին կառավարում՝ անկախ այն բանից, որ երիտթուրքերը երկխոսության առաջարկներ էին անում՝ Կոստանդնուպոլսում ազգային փոքրամասնությունների հետ խոսելով շփվելու մի նոր եղանակի մասին: Թվում էր, թե հետևում էին մնացել Աբդուլ Համիդ II-ի բռնակալությունն ու դաժան կառավարումը, ով իր մեղքերն էր ապաշխարում «Իթթիհադի» կառավարության կողմից նրա համար պատրաստված «ոսկյա վանդակում»՝ աքսորավայրի իր ապարանքում, որտեղից այլևս չէր վերադառնալու:

Տեղաբնակ ամենածեր մարդկանց արդեն մեկ անգամ բախտ էր վիճակվել «շփվելու այդ նոր եղանակով»: Դա վաթսուն տարի առաջ էր՝

XIX դարի կեսերին, երբ հրապարակվեց «Շեյխ էֆենդի» հռչակագիրը՝ Բարձր դռան և Լեռան միջև նոր հարաբերության սկզբի վերաբերյալ: Իրականում դա քրիստոնյա մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Պրուսիայի, Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ճնշմամբ էր: Մանավանդ Ֆրանսիայի՝ ագնոստիկ Ֆրանսիայի, որը շարունակում էր հսկել ու աչքի առաջ պահել նրանց, որոնց համարում էր իր հովանավորյալներ: Առաջին հերթին՝ մարոններին, այնուհետև՝ ըստ տարածքի՝ Սիրիային և Լիբանանին, ավելի ուշ՝ այն տարածաշրջանին, որի համար կիրառվում էր հատուկ հովանավորություն և երկաթյա պաշտպանություն սուլթանի սպառնալիքից, ով քաջ գիտակցում էր, որ իրեն մոտիկից են հետևում: Ֆրանսիան նաև հսկում էր թուրքերի վարքագիծը հայերի հանդեպ, ովքեր միշտ ֆրանսիացիների համար համակրելի են եղել, թեև նրանց պաշտպանությունը շատ ավելի բարդ էր, քանզի հայերը զբաղեցնում էին Անատոլիայի մեծ մասը, մինչև Կովկասի հեռավոր սահմանները, մինչդեռ ֆրանսիական նավատորմիղը խարիսխ էր նետում Բեյրութի դիմաց՝ ընդամենը երեք մղոն հեռավորության վրա: Եվ թուրքերը տեսնում էին, թե ինչպես էր նավատորմիղն աչալրջորեն հսկում՝ պահպանելով նրանց, որոնց համարում էր «Լևանտի ֆրանսիացիներ»:

Մեծ առումով այդ ուսուցիչը ճանաչված մարդ չէր: Աբդել Ղալիբը հայտնեց իր կարծիքը.

- Նրա մասին ոչ մի վատ բան չենք կարող ասել: Աստված գիտե, թե ով է նա: Ոչ էլ կարող ենք խոսել նրա հայրենասիրությունից: Նա թուրքերին է հավատում... Այստեղ պետք է, որ նա միակը լինի, ով Դամասկոսի վալու պես համոզված է, որ ոչ մի բան չի փոխվի: Սակայն այստեղ, պարո՛ն, շատ բաներ են փոխվելու: Այս երկու օրը գալու է կնոջս հեռավոր բարեկամներից մեկը՝ Աբդել Վահեդը: Այդ մարդը եղել է Ֆրանսիայում, հիմա ապրում է Դամասկոսում, թեև նախընտրում է, որ թուրքերը չիմանան, թե որտեղ է և ինչով է զբաղվում: Նա և նրա նմաններն արաբներին նախապատրաստում են այն օրվա համար, երբ թուրքերն այստեղից գնան: Ի՜նշ ալլահ... Դրա համար էլ Ձեզ ասում եմ, որ չվստահեք ուսուցչին: Միայն գիտե արաբերեն ուսուցանել, բայց դա նրան շատ պետք չի գա, երբ իր հովանավորներն այստեղից հեռանան:

Թոմասը նախազգուշացումն ընդունեց ըստ արժանվույն... 1911 թվականի ամռան ընթացքում նա և Կարոլինն այդ մարդու հետ պահպանեցին սառը, բայց հետաքրքիր հարաբերություն, քանի որ անկախ իր քաղաքական հայացքներից՝ լավ էր ուսուցանում և որպես ուսուցիչ շատ պահանջկոտ էր:

Մինչ Էթելն արագ մեծանում էր, Կարոլինը դարձավ հնագիտական նկարների հրաշալի մասնագետ: Թոմասն այդ վայրում բնակված ժողովուրդների թողած անընդմեջ ազդեցությունների մասին թեզ էր պատրաստում: Հազարաթերթիկի՝ իրար վրա դարսված մշակույթների տեսությունը, որում Ավգուստուս Նյումանն իր բաժինն ուներ, աշխարհի ոչ մի այլ վայրի այդքան համահունչ չէր, որքան այդ տարածքին:

Բեյրութի ճիզվիտների համալսարանից փետրվարի կեսերին երկու պրոֆեսորներ եկան: Ավստրիացի երկու կղերականներն էլ խոսում էին անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, թուրքերեն, ընդ որում՝ շատ վարժ: Երկուսն էլ՝ Դեմետրիուս Զայցբերգերը և Յոհան Ֆեդդերսոնը, պատկանում էին Հիսուս Քրիստոսի ընկերությանը և փյունիկյան մշակույթի գիտակներ էին:

Նրանք վրաններ խփեցին մոտակա այգում: Երկշերտ բրեզենտից մի քանի հրաշալի ու մեծ չափի վրաններ էին: Անկյուններից մեկում Թոմասը կարդաց գոթական տառերով գերմաներեն գրված «Ավստրիական բանակի սեփականություն» արտահայտությունը: Ունեին երկու օգնական՝ մելամաղձոտ տեսքով, լուռ և համեստ, ովքեր իրենց վրանն ունեին: Աշխատանքի սովոր մարդիկ էին՝ ծայրաստիճան կարգապահ, իրենց ճամբարը մաքրում էին ծայրեծայր, զինվորական կարգ ու կանոնով, թաղում էին բոլոր մնացորդներն ու իրենց պահում էին օտարոտի և անհաղորդ: Այդտեղ մնացին մինչև խոր աշուն: Թոմասը փորձեց նրանց հետ ինչ-որ կերպ շփվել, սակայն նրանք մարդամոտ չէին և ոչ էլ մատչելի: Պահպանում էին որոշակի հեռավորություն: Թեև տարբեր առիթներով իրար հետ խոսք փոխանակելիս թվում էր, թե նրանց այն աստիճան հետաքրքրում էր Թոմասի կատարած աշխատանքը, որ երբեմն խոսակցության ընթացքում նշումներ էին կատարում:

Մի երեկո ընդունեցին նրանց հետ ընթրելու հրավերը և հիացան Կարոլինի նկարներով:

- Աղջի՛կս,- բացականչեցին երկուսով՝ իսկապես զարմացած դրանց որակով,- հիրավի Դուք գիտակ եք: Այս նկարները Ձեր ամուսնու կատարած աշխատանքի կատարյալ լրացումներն են: Աղջի՛կս, Աստված թող օրհնի Ձեր այդ արտասովոր շնորհքը: Շարունակե՛ք, շարունակե՛ք: Մեծ գնահատականի են արժանի: Մենք դա հասկանում ենք:

Հետո խոսեցին Քանանում եգիպտական ակնհայտ ազդեցության մասին. հարց, որը Թոմասին շատ էր հետաքրքրում, և ցանկանում էր լսել այլ տեսակետներ:

Հայր Յոհան Ֆեդդերսոնը, ով ուսյալ և փորձառու վիեննացի էր, արտահայտեց իր տեսակետը.

- Չնայած շատ դարեր են անցել, քաղաքական ռազմավարության խաղում ոչինչ չի փոխվել: Բաբելոնի թագավորները գիտակցում էին այս տարածքների, ինչպես նաև Միջերկրական ծով տանող բնական ելքի կարևորությունը և փորձում էին խիստ վերահսկողություն սահմանել տարածաշրջանում: Սակայն եգիպտացիներն էլ նույնն էին ցանկանում: Նրանց համար այնքան կարևոր չէր ծովի ելք ունենալը, որքան ռազմավարական բազա հիմնելը, որը նրանց թույլ կտար մուտք գործել Անատոլիա և Բաբելոն: Հարկավոր է նկատի ունենալ, որ Փոքր Ասիան արդեն գաղութացվել էր առաջին հելլեններով: Այն ժամանակ այդ վայրն աշխարհի կենտրոնն էր, ինչ այսօր Ավստրիան է կամ Գերմանիան:

Թոմասը չէր դադարում այն մասին մտածելուց, որ այդ ավստրիացիները հավատացած էին ռասայական և մշակութային իրենց գերազանցությանը: Տարբեր առիթներով նա այդ մասին զրուցել էր Ավգուստուս Նյումանի հետ:

Հայր Ֆեդդերսոնը շարունակում էր իր իմաստասիրական դատողությունները.

- Մոտավորապես Թութմոս III-ի թագավորության ժամանակ էր, երբ Քանանը վերածվեց եգիպտական նահանգի: Այստեղից դուրս էին գալիս ու մտնում ռազմավարական ապրանքներ եգիպտացիների և միջերկրածովյան ժողովուրդների համար, նույնիսկ և ամենից շատ՝ Միջագետքի համար: Այնուհետև, արդեն Ձեզ հայտնի է, զավակնե՛րս, XVIII դինաստիայի անկումը, որը եգիպտացիներին ստիպեց նահանջել, մինչև որ եկան XIX դինաստիայի փարավոնները՝ Սեթին և մանավանդ Ռամզեսը: Այդ ընթացքում փյունիկեցիներն արդեն հասել էին Ատլանտյան օվկիանոս՝ հիմնադրելով արդյունաբերական կառույցներ և դառնալով հարուստ, կիրթ և ընդունակ ժողովուրդ: Պետք է նշեմ, որ ասորական պետությունները տենչում էին տիրանալ այդ հարստությանը: Տիրը մ.թ.ա. VI դարում շրջափակվեց Նաբուգոդոնոսորի կողմից, մինչև որ Էթբաիալ II թագավորը ծնկի եկավ Բաբելոնյան կայսրության առջև: Պարսիկներն օգտվեցին այդ ահռելի գիտությունից, և դա եղավ պատճառը, որ Մեծն Ալեքսանդրն ավերեց Տիրը: Ավելի ուշ՝ արդեն IV դարում, Արտաշիրն ավերեց Սիդոնը: Դա հանգեցրեց նրան, որ առևտուրն անցավ հույների ձեռքը: Նույնիսկ փյունիկյան ծագմամբ Կարթագենը հիմնահատակ ավերվեց հռոմեացիների կողմից: Հիշո՞ւմ եք՝ «Delenda est Cartago!»[12]:

[12] Փյունիկյան պատերազմների ընթացքում՝ մ.թ.ա. 150 թվականին, հռոմեական սենատում

Եվ շատ լավ գիտեք, թե ինչ է դրանից հետևում... որ ագահությունն ու նախանձը սկզբից ևեթ նախանշել են պատմության ընթացքը, և միշտ էլ կշարունակվի այդպես: Հիմա տարօրինակ ձևով թուրքերը քրիստոնեության կարիքն ունեն իրենց կայսրությունը պահպանելու համար: Ավստրիան և Գերմանիան թույլ չեն տա այն վարչակարգի կազմալուծումը, որն ապահովել է այլ մշակույթների համագոյակցությունը: Ի՞նչ եք կարծում, մեկ այլ դեպքում ի՞նչ տեղի կունենար Սուրբ վայրերի հետ: Ակնհայտ է, որ արաբները Երուսաղեմը կդարձնեին երկրորդ Մեքքա: Պետք է խոստովանեք ինձ, որ այս հարցում թուրքերը ճիշտ են վարվել:

Թոմասը բանավեճից հրաժարվեց: Նա այդ կարծիքին չէր, սակայն ոչ էլ նրանց ասելու էր, թե ինչ է մտածում Ավստրո-հունգարական կայսրության դիրքորոշման և մանավանդ գերմանացիների մասին: Նրան Ավգուստուս Նյումանը զգուշացրել էր՝ «Անկեղծությունը դիվանագիտության թշնամին է»:

Այնուհետև խոսեց հայր Դեմետրիուս Զայցբերգերը՝ ծննդյան վկայականով՝ Ժոզեֆ Զիլահի, հունգարացի, բայց կյանքը նրան ստիպել էր դառնալ մի նոր անձնավորություն, որն առավել քան համապատասխանում էր նրա նկրտումներին.

- Ա՜հ, բարեկամս, հայր Ֆեդդերսոնը թուրքերի մեծ պաշտպանն է... Գուցե այն յոթ տարիների պատճառով, որ որպես կրոնական խորհրդական անց է կացրել Կոստանդնուպոլսում՝ կայսրության դեսպանատանը: Այնտեղ շատերի հետ բարեկամացավ, չի ուզում խոսել Էնվեր փաշայի մասին, բայց լավ գիտե նրան, թողնենք դա: Ինքս Ձեզ կարող էի ինչ-որ բան ասել... սակայն՝ իրականում շատ քիչ բան փյունիկեցիների աստվածացվող կուռքերի մասին: Ինչպես գիտեք, նախնադարյան Քանանի գլխավոր աստվածուհին Աշերաթն էր՝ պտղաբերության աստվածուհին: Բաբելոնցիները բերեցին Իշթարին ու միաձուլման արդյունքը եղավ Աստարտեն՝ բիբլիական Ասթարոտը՝ բնության և բերրիության աստվածուհին: Նույնը, ինչ լուսնի հելլենուհի Արտեմիսը՝ կապված կնոջ լուսնային ցիկլի հետ, իսկ ավելի ուշ՝ Աֆրոդիտեն և Վեներան:

- Իսկ մի՞թե Սուրբ Մարիամի պաշտամունքը ոչ մի առնչություն չունի այդ ամենի հետ,- Կարոլինը որոշեց խոսակցությունից դուրս չմնալ:

Հայր Զայցբերգերը փոքր-ինչ անհանգիստ շունչ քաշեց.

- Աղջի՛կս, կյանքում մեկը կարող է ամեն բան իրար հետ կապել: Եթե Դուք ուզում եք ասել այն, որ մարդ արարածին հարկավոր է պաշտել

ծեր Կատոնի կողմից արտասանված նախադասությունը. «Կարթագենը պետք է կործանվի»:

աստվածների պանթեոնի իգական ներկայացուցիչներին, հնարավոր է: Սակայն անհեթեթ եմ համարում այդպիսի համեմատությունը: Ըստ էության, Կույսը բերրիության հակառակն է... Ինչևէ, շատ հաճելի էր ձեզ հետ տպավորություններ փոխանակելը, և կրկին Ձեզ շնորհավորում եմ Ձեր կատարած աշխատանքի առթիվ:

Ճիզվիտները քաղաքավարի, բայց սառը հրաժեշտ տվեցին: Անգլիացիների հետ համակարծիք չէին և անհարկի չէին բանավիճի Կույսի պաշտամունքի հետ կապված հին հավատալիքների շուրջ. մանավանդ մի կնոջ հետ, ով անգլիական եկեղեցու հետևորդ էր:

Ավելի ուշ Թոմասը Կարոլինին բացատրեց իրավիճակը.

- Նրանց վախեցրել ես: Ճիզվիտները կաթոլիկ հռոմեացիների ամրոցն են ու երբեք չեն ընդունի քո մարտահրավերը: Եթե ուզում ես մի անկեղծ և անկախ կարծիք, ապա հարցրո՛ւ Ավգուստուսին, երբ այս կողմերը վերադառնա: Նա իր տեսությունն ունի Աստարտեի և բերրիության մասին՝ կապված կուսության հետ: Բանն այն է, որ կարծես արուի դերն ավելորդ է: Խոստովանի՛ր, որ ցանկացար նրանց հրահրել, սակայն նրանք չուզեցին վեճի մեջ մտնել կնոջ հետ, այն էլ՝ բողոքական: Ինչևէ, ինձ հայտնել են, որ մի նամակ պետք է վերցնեմ Բեյրութում: Կարծում եմ, որ այն ինձ ուղարկել է Դոնալդ Պետերսոնը՝ Օքսֆորդի իմ դասախոսներից՝ պարսկական մշակույթի մասնագետ: Մի քանի օր՝ Դամասկոս գնալուց առաջ, նա կանցկացնի այստեղ, և կարծում եմ, որ այստեղից մի գիտարշավ կկազմակերպի դեպի Միջագետքի խորքը: Ճիշտն ասած, մի քիչ նախանձում եմ նրան, բայց հիմա թերևս հարմար պահ չէ: Այդպես չէ՞:

Կարոլինը քնքշանքով նայեց նրան՝ գիտենալով, թե իր ամուսինը որքան շատ էր երազում այդ գիտարշավին մասնակցելու մասին.

- Ինչո՞ւ ոչ: Տե՛ս, այստեղ ես լավ եմ ու հանգիստ: Բաքերը մեզ կօգնի, եթե Էթելը կամ ես կարիք ունենանք: Կարծում եմ, որ քո ընկեր Դոնալդի հետ պետք է գնաս ու ծանոթանաս այդ տեղանքին: Քեզ թույլ եմ տալիս երեք ամիս, ամենաշատը՝ չորս: Քեզ կկարոտեմ, բայց հասկանում եմ, թե դա որքան կարևոր կարող է լինել քեզ համար:

Թոմասը չէր ուզում ցույց տալ, թե որքան է ոգևորված:

- Իրո՞ք քեզ համար դժվար չի լինի: Չեմ կարծում, որ հիմա ամենահարմար պահն է: Լավ, բոլոր դեպքերում այդ մասին հետո կխոսենք: Ոչ էլ գիտեմ, թե պրոֆեսոր Պետերսոնին դուր կգա ինձ իր հետ տանելը, կամ գուցե ջանում է պահպանել պատշաճության կանոնները: Շատ լավ գիտես, թե հետազոտողներս երբեմն որքան նախանձախնդիր ենք

դառնում: Այնպես է, որ երբ, ի վերջո, ուզում ենք փորել տեղանքը, կարծես այն ինչ-որ առումով մերն է, տիրանում ենք ամեն ինչին՝ Հոմերոսից սկսած մինչև Դարեհ և խեթերից սկսած մինչև ասորիներ... Բացի դրանից՝ այդ մարդն իսկական իմաստուն է, իսկ ես՝ ընդամենը մի աշակերտ:

Կարոլինը կրկին ժպտաց՝ համոզված, որ Թոմասը երջանիկ է այն երեխայի պես, ում էքսկուրսիայի գնալու թույլտվություն էին տվել: Այդտեղ՝ Բիբլոսում, կյանքը շատ հանգիստ էր, մարդիկ բարի էին թվում: Նույնիսկ գտել էին Պիեռ Գուրոյին՝ թոշակի անցած ֆրանսիացի այրի մի բժշկի, ով շատ տարիներ Ֆրանսիայում ապրելուց հետո ցանկացել էր վերադառնալ Լիբանան: Մի լավ անձնավորություն էր և, ինչպես նրանց էին ասել, հրաշալի բժիշկ: Այդ ամենից զատ՝ Բիբլոսում ոչ մի բանի պակասություն չունեին, մրգերի և բանջարեղենի մատակարարումն արտասովոր էր, ընդ որում՝ լավ գնով, միսը՝ նույնպես, իհարկե՝ միայն այծի, գառան ու ժամանակ առ ժամանակ ուղտի: Ինչ վերաբերում է ձկնեղենին, ապա այն շատ առատ էր՝ սաղմոններ, կաղամարներ, ծովատառեխներ, տափակաձկներ, խխունջներ և մանր ծովախեցգետիններ... Դրանք միշտ թարմ էին և ծիծաղելի գներ ունեին: Երկուսն էլ սիրում էին ձուկ ուտել, իսկ Բաքերն արդեն հմուտ խոհարար էր դարձել:

Մոտակա մենաստանից նրանց այցի էին եկել երկու մարոն ճգնավորներ. ոչ թե քարոզչության համար, այլ զուտ հետաքրքրասիրությունից դրդված: Ճգնավորները նրանց նվիրեցին ֆրանսերեն Աստվածաշունչ: Թոմասն էլ նվիրեց իր դոկտորական թեզի կաշեկազմ մի օրինակ, իսկ Կարոլինը, չուզենալով հետ մնալ՝ Բաալբեկի ավերակներից ջրաներկով արված մի քանի նկար: Ճգնավորները գոհ ու բավարարված գնացին:

Երկու շաբաթ անց մենակյացները վերադարձան մուգ մազերով, խեցե ակնոցով մի միջահասակ, գուցե հիսունն անց տղամարդու ուղեկցությամբ: Նա ներկայացավ որպես Նագիբ Ազուրի՝ քրիստոնյա մարոն: Թևի տակ մի գիրք կար, որը նվիրեց Թոմասին՝ գլուխը խոնարհելով: Հրատարակված էր ֆրանսերեն. «Le Reveil de la Nation Arabe dans LAsie Turque»: Մինչ Էթելը հանգիստ խաղում էր գորգին, Կարոլինը թեյ մատուցեց: Բուխարին վառվում էր և շուրջն ընտանեկան միջավայր ստեղծում: Ազուրին նախքան խոսելն անձկորեն շունչ քաշեց.

- Պարո՛ն Հարդինգ, եղբայրներիս հորդորներն են ինձ բերել այստեղ: Նրանք հավատացրին, որ Բիբլոսում մի անգլիացի պրոֆեսոր է ապրում կնոջ և աղջկա հետ: Կարծում էի, թե կհանդիպեմ մի ծեր գիտունի ու

զարմացել եմ, որ այսքան երիտասարդ մարդու եմ ողջունում:

- Ճշմարիտ է, ես ընդամենը երեսուն տարեկան եմ, սակայն ամենևին չեմ հավակնում իմաստուն լինելուն, ընդամենը Օքսֆորդի պրոֆեսորի օգնական եմ, ով ցանկանում է առնչվել իրականությանը: Գիտեք, երբ հասա Բեյրութ, ինչ-որ առումով սիրահարվեցի այս երկրին, այնուհետև՝ այս գեղեցիկ ու համառ երիտասարդ անգլուհուն՝ Կարոլինին, իսկ հիմա մենք շատ ամուր ենք կապված, քանզի Էթելը ծնվել է այստեղ: Առայժմ մտադիր չենք վերադառնալ Անգլիա:

- Շատ լավ, շատ լավ: Իմաստուն որոշում է, իմ սիրելի՛ պրոֆեսոր,- Ազուրին գոհունակորեն համաձայնեց,- սա հյուրընկալ և բարդ երկիր է: Ինչպես նկատած կլինեք, այստեղ ապրում են տարբեր ժողովուրդներ, բոլորի համար էլ տեղ կա, կասեի առայժմ, քանի որ ամեն բան փոխվելու է, ընդ որում՝ շատ ավելի շուտ, քան սպասում ենք:

- Այո՛,- հաստատեց Թոմասը,- արդեն գլխի ենք ընկել: Ձեզ վստահեցնում եմ, որ մեծ հաճույքով կկարդանք Ձեր գիրքը, պարո՛ն Ազուրի: Ես լսել էի Ձեր մասին: Սակայն ինձ հետաքրքրում է այն, թե թուրքերն ինչ կարծիքի են արաբ մարոնների զարթոնքի մասին: Իրո՞ք դա ժողովուրդ է և որքա՞ն խորն է «քնած»: Մարոնները գիտե՞ն, որ պատկանում են արաբ ազգին:

- Սպասե՛ք, խնդրեմ,- Ազուրին բարձրացրեց ձեռքերը՝ փորձելով կանխել հետաքրքրասեր պրոֆեսորի հարցերի տարափը,- եթե ինձ թույլ տաք, նախ կխոսեմ տիրող իրավիճակի մասին... Շատ հարցերում հակադիր երկու մեծ համայնքների միջև անցյալ դարն ընդհարումների ժամանակաշրջան էր: Մենք քրիստոնյա արաբ մարոններ ենք: Ինչպես գիտեք, Սուրբ Մարոնը հինգերորդ դարի մի համեստ քրիստոնյա մենակյաց էր, ճգնավոր, ով որոշեց ապրել հեթանոսական տաճարներից մեկի ավերակներում: Մի սուրբ մարդ, ով գործել է շատ հրաշքներ, իսկ նրա աշակերտներին անվանել են մարոնականներ: Երբ մուսուլմանները նվաճեցին Սիրիան, նրանք ապաստանեցին Սպիտակ լեռան սպիտակ լանջերին: Այդտեղ էլ ծնվեց Սուրբ Մարոնի ժառանգորդը՝ Հայրապետ մարոնականը: Նա մուսուլմանական խիստ արմատական աշխարհում դարձավ իր ժողովրդի՝ քրիստոնյաների պաշտպանը: Հետո՝ XI դարի վերջերին, եկան խաչակիրները: Այդ ժամանակաշրջանում միացանք Հռոմին: Շատ ավելի ուշ՝ 1244 թվականին, Երուսաղեմն ընկավ իսլամի՝ օսման մամելյուկների ձեռքը: Կես դար առաջ՝ 1860 թվականին, դրուզները քրիստոնյա մարոնների սարսափելի կոտորած արեցին: Կհիշեք եվրոպացիների այցերը, որպեսզի կանխեին մեր ոչնչացումը: Հիմա

մենք ունենք մի կարգավիճակ, որին քիչ ժամանակ է մնում, քանզի եկել է փոփոխության պահը: Ի՞նչ է լինելու... Երիտթուրքերի կողմից իշխանության հասնելը, այդպես չէ՞: Գիտեք, ես անձամբ ճանաչում եմ Ջեմալ բեյին: Լավ անձնավորություն չէ: Նրան չի կարելի վստահել: Վախենամ՝ ոչ էլ Թալեաթին, առավել ևս՝ Էնվեր փաշային: Ջեմալ բեյը՝ գերմանացիների մեծ ազդեցությամբ, գերազանցության մարմաջներով տարված անհատ է: Թալեաթ բեյն արմատական է, անկոտրում, ծայրահեղ ազգայնամոլ, ով հավատում է Թուրանի՝ առասպելական այն վայրի գոյությանը, որտեղ սկիզբ է առել թուրքական ռասան, և չի վստահում նրանց, ովքեր թուրք չեն: Ինչ վերաբերում է Էնվեր փաշային, ապա օսմանյան արքայադստեր հետ ամուսնանալը նրան խելքահան է արել: Նոր հարուստ է՝ բարձրաշխարհիկ, սնապարծ շարժուձևերով: Երեքով կայսրությունը կտանեն կործանման: Նրանք այն եռյակն են, որ հավակնում են Կոստանդնուպոլսում կամ, ինչպես իրենք են պահանջում, Ստամբուլում իշխանության հասնելուն: Սուլթան Աբդուլ Համիդը՝ այժմ ազատազրկված և առանց իշխանության, իսկական մսագործ էր, մի հրեշ, և լավագույնն այն է, որ նա այնտեղ ցմահ փակված մնա: Ինչ վերաբերում է նոր սուլթանին՝ Ռեշալ V-ին, ապա նա իսկական խամաճիկ է առանց գործադիր իշխանության:

Նագիբ Ազուրին մի պահ լուռ մնաց, այնուհետև շարունակեց:

- Դժվարին ժամանակներ են գալիս, մարոնականներիս դա չի վախեցնում: Սուրբ Մարոնը, ինչպես միշտ, կշարունակի հոգալ մեր մասին: Խեղճ մարդը դրանով իսկ բավականին աշխատանք ունի անելու: Շատ դարեր անց արաբական մտածողությունը կրկին անկախություն է ձեռք բերում: Արաբերենը հսկայական տարածասփյուռ ժողովրդի լեզու է: Ժողովուրդ, որը նվաճվել է այլասերված կառավարության տեր թուրքերի և մի քանի խարդախ տերությունների կողմից, որոնք կասեցրել են մեր առաջընթացը: Լսե՞լ եք «Լիբանանյան զարթոնք»-ի («El Nahda ul Lubnanye») մասին: Միայն թուրքերը չեն, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեով ցանկանում են փոփոխություններ իրականացնել: Մենք նրանց չենք հավատում, չենք ցանկանում նրանց միությունը և չենք հավատում նրանց առաջադիմությանը: Թուրք վալիները, օսման կառավարիչները միշտ էլ արել են իրենց ասածի հակառակն ու ասել իրենց մտածածի հակառակը: Սակայն դա շուտով կփոխվի: Գիտենք, որ հեշտ չի լինի: Իսլամը տիրապետում է արաբական աշխարհին, սակայն չենք կարող մեկս մյուսին հաշվի չառնել: Մեզ միավորում է ռասան, բայց ամենից առաջ՝ լեզուն, մեր հինավուրց մշակույթը: Անգամ գիտակցում

ենք, որ քրիստոնյա արաբներս իրականում կազմում ենք փոքրամասնություն: Նկատի՛ ունեցեք, որ Ղուրանը ներառում է մարդկանց բնորոշ խառնվածքի մեծ մասը: Այդ պատճառով էլ վառոդի հոտի պես տարածվեց այնպես, ասես դրան էին սպասում: Քրիստոնյա արաբներս կարող ենք հասկանալ և ընդունել այն, ինչ ասում է այդ Սուրբ գիրքն անգամ մեզ համար: Մի օր կգա ամեն բան իր տեղը դնելու ժամանակը: Ո՞վ չէ ինձ հետ համակարծիք՝ կաթոլիկներ, ուղղափառներ, մարոնականներ, նույնիսկ բողոքականներ, մուսուլման սուննիներ և շիաներ, նաև ալավիներ, դրուզներ, քրդեր, սիրիացիներ, Լեռնային Լիբանանի մարդիկ, հրեաներ: Այո՛, նրանք նույնպես կուշտ են: Ահա դեռ այնտեղ մնում են Բուստանին, Քայրալահը, Ռաբաթը, Արսլանը, Ալ-Կավակիբին և շատ ուրիշներ,- Ազուրիի աչքերը խոսելիս գնալով ավելի կրակոտ ցոլքեր էին արձակում,- արաբ ժողովրդի զարթոնքը... Մի ժողովուրդ, որը քնած է մնացել, սակայն միշտ հպարտ՝ իր մշակույթով: Ահավասիկ թուրքական գիրը... մեր հիասքանչ արաբական այբուբենով: Այնտեղ՝ Իսպանիայում են գլուխգործոցները: Ա՜հ, ինչ գեղեցիկ է Իսպանիան՝ Կորդովան, Գրանադան, Սևիլյան: Աֆրիկայի հյուսիսում՝ նույնպես... Հիմա պետք է դիմակայենք իրականությանը: Ղայրալլահը հրաշալի է դա արտահայտել. «Արաբ գաղափարը վերստին հանել դարերի փոշու տակից»: Ճշմարիտ է, որ իսլամից շատ բան կա՝ կապված արաբ գաղափարի հետ, սակայն հուսով եմ, որ մեզ կապողը կլինի արաբին հարիրը, այլ ոչ թե իսլամը, հարգանքս մի կողմ, մեր ընդհանուր պատմությունը: Տեսե՛ք, պարո՛ն Հարդինգ, արաբական երկրները՝ արաբների համար, Քրդստանը՝ քրդերի համար, Հայաստանը՝ հայերի: Ընդունենք, որ թուրքերին մնում է Թուրքիան... Ես Լեռնային Լիբանանում չեմ ծնվել, այլ Երուսաղեմում, սակայն լինելով մարոնական՝ ինձ համարում եմ տեղացի: Իսկ հիմա լքելու եմ Ձեզ: Պետք է վերադառնամ մենաստան: Այնտեղ ինձ պահպանում են «Իթթիհադի» վտանգավոր ու դաժան ոստիկանությունից: Թուրքերին դուր չի գա այս ճառը: Նրանց ջարդեցին Լեպանտոյում, ու հիմա վերստին ջախջախման հոտ են առնում: Տրիպոլիտանիայում և Կիրենաիկայում ահա նրանց վրա հարձակվեցին իտալացիները: Այնտեղ թշնամի չունեին: Թուրքերը նրանց հակահարված տալու ի վիճակի չեղան: Ասում են, որ իտալացիների առջև մի անկազմակերպ բանակ էր, որն ավելի շատ մտածում էր ինչ-որ բան ուտելու, քան կռվելու մասին: Իտալացիները նրանց վրա ինքնաթիռից ռումբեր էին նետում, իսկ թուրքերը սարսափահար վազում էին անապատի եղնիկների պես: Հետո նրանց վրա հարձակվեցին Ռոդասում՝ Դոդեկանեսի արշիպելագում:

Արդիական պետության՝ Իտալիայի պայքարը հին, շարքից դուրս եկած կայսրության՝ Թուրքիայի դեմ: Դեռ Իբն Խալդունն էր ասում, որ հզոր կայսրությունները կփոխարինվեն... ու հասել է Թուրքիայի այդ պահը: Ցտեսությո՛ւն: Կրկին կտեսնվենք: Իսկապես ինձ մեծ հաճույք պատճառեց Ձեզ հետ ծանոթանալը: Իսկ այդ հրաշալի լիբանանցի աղջնակը՝ Ձեր երեխան, ապագայում ինչ էլ որ պատահի մեր ազգին, կլինի նրա մի մասնիկը: Մեծ Լիբանանի մասնիկը...

Ազուրին տնից դուրս եկավ երկու մենակյացների ուղեկցությամբ, ովքեր մինչ այդ ոչ մի ծպտուն չէին հանել: Թոմասն անգամ կասկածեց, թե նրանք արդյոք գիտեին ֆրանսերեն: Դուրս նայեց: Ազուրին, որ քայլում էր վճռական շարժուձևով, շրջվեց.

- Պարո՛ն Հարդինգ, մոտ օրերս եկե՛ք մենաստան՝ մեզ տեսնելու: Ձեզ շատ եմ խնդրում, մոտ է գտնվում, ընդամենը երեք ժամ՝ սովորական քայլքով, իսկ ձիով՝ մեկուկես ժամ: Ձեզ ծանոթացնելու եմ մեկի հետ: Դուք ինձ մի այց պարտ եք մնում: Մնա՛ք բարով: Շատ հաճելի էր:

Երեկոն արագ վերածվում էր մթնշաղի, ու Կարոլինը դուրս եկավ՝ էթելին գիրկն առած, շալով փաթաթված:

- Սիրելի՛ս, ինձ դուր է գալիս այստեղ: Այս երկիրը հրաշալի է, բայց ես վախենում եմ, որ մի բան հանկարծ չփչացնի այն: Մի տեսակ կանխազգացում ունեմ: Բոլորը խոսում են այն մասին, որ մոտալուտ է փոփոխությունը: Դու նույնպե՞ս այդ կարծիքին ես:

Թոմասը նրանց ուժգին գրկեց.

- Կարոլի՛ն, մենք արդեն ընկղմված ենք այդ փոփոխության մեջ, և թուրքերը դա գիտեն: Այլևս չեն գնում հողեր, անգամ էժան վաճառում են իրենց ունեցածները: Իրենց հետ տանում են կահույքը և այն, ինչ որ կարող են իրենց տներից տանել Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա: Լուռ հեռանում են Պաղեստինից, Սիրիայից, կամաց-կամաց գնում են անգամ Լեռնային Լիբանանի փոքրաթիվ թուրքերը: Պաշտոնյաներն իրենց ընտանիքներն ուղարկում են Թուրքիա: Սրանք սոսկ նշաններ չեն, հետադարձը բացառվում է: Երիտթուրքերի կառավարությունը դեմ է այս քաղաքականությանը և հավանություն չի տալիս նրանց՝ ժամանակից շուտ փախուստին՝ համարելով այն վատ և ոչ «թուրքամետ»: Ակնհայտ է, որ մի բան փոխվում է: Սակայն մի՛ անհանգստացիր, մենք ճիշտ ուղով ենք գնում: Տեսնո՞ւմ ես, թե որքան անկեղծ են մեզ հետ: Այլևս չեն թաքնվում: Ազուրին՝ այդ եզակի, համեստ արտաքինով մարդը, արաբ ազգայնականության գլխավոր առաջնորդներից է, և նրան լսելու առիթ ունեցանք... Երբ հեռանում էր, ինձ հրավիրեց մենաստան: Ցավոք, կանանց մուտքն այնտեղ արգելված է, քրիստոնյա մարոններ են, սակայն ամե-

նից առաջ՝ արաբ: Հիշո՞ւմ ես, թե քեզ ինչ պատմեցի առաջին շաբաթների իմ փորձության մասին: Մի քանի օրից կգնամ: Ինձ հետաքրքրում է, թե ի՞նչ են մտածում այդ մարդիկ... Նայի՛ր ծովի վրա այս անկրկնելի մայրամուտին: Ամրոցն ասես ամեն կողմից լուսավորված է: Կախարդական մի բան է: Նայի՛ր Էթելին, որքան հրապուրիչ է: Նա կհասցնի ապրել բոլորովին այլ և շատ ավելի լավ աշխարհում, սակայն տարիներ անց՝ մի օր, կարթնանա գիշերը՝ գուցե և հիշելով այս պահը, և չի իմանա, թե երբևէ ապրել է այդ պահը, թե՞ մի չքնաղ երազ է եղել:

6. ԳԻՏԱՐՇԱՎ ԴԵՊԻ ՄԻՋԱԳԵՏՔ
ՄԱՅԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1912թ.

1912 թվականի փետրվարի կեսերին իտալական նավատորմիղը ռմբակոծեց Բեյրութը: Անկասկած, դա իտալա-թուրքական պատերազմի վրեժն էր: Քաղաքացիները վրդովված էին: Իտալացիները շատ լավ գիտեին բեյրութցիների տեսակետը, և հնարավոր չէր հասկանալ այդ բարբարոսությունը: Ինչ խոսք, նյութական մեծ վնասներ չպատճառեցին. մի քանի վնասված տներ, խանութներ, նավահանգստի կրպակներ, որոնց տաշեղները քամին օդ էր բարձրացնում: Բայց և այնպես՝ տասնյակ արաբների անդառնալի կորուստը համայնքին խորը վշտով համակեց: Սակայն այդ օրը տեղի ունեցած միջադեպից ամենաշատը տուժեց Իտալիայի հեղինակությունը: Հռոմում այդ մասին ավելի ուշ իմացան, Վատիկանը պաշտոնական բողոք ներկայացրեց իտալական կառավարությանը: Փարիզում մամուլը դաժան քննադատության ենթարկեց անպաշտպան քաղաքի այդ «անհեթեթ ռմբակոծությունը»:

Մինչդեռ Բիբլոսում կյանքն ընթանում էր իր հունով: Պրոֆեսոր Դոնալդ Պետերսոնը, ընտանեկան հանգամանքներով պայմանավորված, ստիպված հետաձգեց իր ճանապարհորդությունը:

Ոչ էլ Թոմասը կարողացավ մենաստան գնալ մինչև 1912 թվականի գարնան վերջը: Էթելը կարմրուկ էր ընկել, իսկ Կարոլինը կրկին հղիացել էր: Կենսունակ ոգևորությամբ երկուսն էլ շարունակում էին ուսումնասիրել նոր նախագծերը: Արդեն նրանց բոլորն էլ ճանաչում էին և՛ Բիբլոսում, և՛ նրա շրջակայքում: Թոմասին վերաբերում էին որպես «պրոֆեսորի» և հավանություն էին տալիս ամրոցում և դրա շրջակայքի ավերակներում, ցանկացած այլ վայրում նրա կատարած պեղումներին: Ինքը՝ Բիբլոսի քաղաքապետը, պարզ ասաց.

- Եթե պրոֆեսորը գտնի որևէ կարևոր բան, ապա բոլորն իրենց հայացքները կուղղեն այստեղ:

Ինչ վերաբերում էր թուրք կառավարիչներին, ապա նրանք որևէ խոչընդոտ չէին հարուցում: Նույնիսկ այնտեղով անցնելիս վալին նրան ուշադրության արժանացրեց. եկավ ողջունելու: Նա գալիս էր Բեյրութից և Թոմասին հրավիրեց այնտեղ՝ իրեն այցելելու: Վալին մի գեր թուրք էր՝ դուրս պրծած փորով, հաստ բեղով, ճաղատ և խուսափող հայացքով: Այն տպավորությունն էր թողնում, ասես մշտապես հսկում էր իր շուրջբոլորը՝ կարծես վախենալով, թե մեկնումեկը թիկունքից իր վրա կհարձակ-

վի: Սակայն ընդհանուր առմամբ շատ սրտառուչ էր Թոմասի և հարգալից՝ Կարոլինի հետ:

Վալուն ուղեկցում էր մի փոքրիկ շքախումբ, որի կազմում էր նաև մի երիտասարդ գերմանացի հետևակային սպա՝ կապիտան Էռնեստ ֆոն Լյուդենդորֆը՝ Գլխավոր շտաբից Էրիխ Ֆրիդրիխ Լյուդենդորֆի զարմիկը: Թոմասին այդ մասին ասաց վալու քարտուղարը՝ ոմն Քեմալ Մահմուդ, ով այդ փաստին կարծես մեծ կարևորություն էր տալիս: Թոմասը համոզվեց, որ Ավգուստուս Նյումանի՝ թուրքական նորաստեղծ կառավարության վրա գերմանացիների աճող ազդեցության մասին պատմածը լրիվ ճիշտ էր: Քարտուղարը՝ շփվող և շատախոս մի մարդ, շատ ինքնագոհ էր թվում և ժպտալով շարունակեց շաղակրատել:

- Այո՛, Բեյրութում նավից իջել են գերմանական բանակի մի խումբ սպաներ: Դիվանագիտական առաքելությամբ են այնտեղ, խոսք կար այն մասին, որ հնարավոր է՝ Վիլհելմ II-ը կրկին այցելի Բաալբեկ և Պալմիրա: Թուրքերը գերմանացիների և ավստրիացիների շատ լավ բարեկամներն են: Իհարկե՝ նաև անգլիացիների և ֆրանսիացիների... Գոնե ես այդ առումով կասկած չունեմ: Դույզն-ինչ կասկած չկա,- հաստատեց վալու քարտուղարը՝ ցուցադրելով իր ոսկյա ատամները, որոնցից ցոլքեր էին արձակվում:

Թոմասին իրոք տանջում էր այն հարցը, թե որքան ժամանակ է մնում, որ կատարվեր այն, ինչ ցնցելու էր ողջ աշխարհը: Նույնն էր, ինչ փոթորկի կանխազգացումը:

Ինչ վերաբերում էր կապիտան Լյուդենդորֆին, ապա նա լուռ էր մնում՝ զննելով ամեն ինչ, արտաքուստ՝ անկողմնակալ և շատ անտարբեր, ասես զինվորական ակադեմիայի զինպատրաստության վարժանքներին մասնակցելիս լիներ: Վալու քարտուղարը հպարտության և հայրենասիրության խառը զգացումով, բայց և հստակորեն մեկնաբանեց առկա իրավիճակը՝ ասելով, որ գերմանացիները հետները բերում են չափագրման ժամանակակից գործիքներ և կառուցում նավահանգիստներ, ամրոցներ և այդ ժամանակ Կիլիկիայից մինչև Պորտ Սայիդ ավերված առափնյա ճանապարհներն ու խճուղիները: Ասում էին, որ այդ ամենը Լևանտի աշխարհագրական մեծ հանրագիտարան կազմելու համար է: Նման մի բան ժամանակին Նապոլեոնն իրականացրել էր Եգիպտոսում[13]:

Վալին կապիտանի և Թոմասի ուղեկցությամբ այցելեց ամրոց: Թոմասը նրան ֆրանսերեն և գերմաներեն ներկայացրեց կառույցի պատ-

[13] “Description de l´Egypte”, Institut d´Orient.

մությունը և իր այն համոզմունքը, որ Բիբլոսում հայտնագործելու դեռ շատ բաներ կան: Այնուհետև, արարողակարգի համաձայն, վալուն հրավիրեցին ճաշի: Մի քանի թուրք զինվորներ վուշե մի մեծ վրան էին խփել, իսկ խոհարարները և մի քանի օգնականներ բացօթյա կրակին մի երկու գառ էին խորովում և թուրքական ճաշատեսակներ եփում՝ տեղի իշխանավորներին հրամցնելու համար: Թոմասին նույնպես հրավիրեցին, իսկ Կարոլինին՝ ոչ: Ճաշին ոչ մի կին չմասնակցեց: Գինի չմատուցվեց, միայն՝ թեյ ու մաճառ, թեև սեղանակիցներից շատերը քրիստոնյաներ էին: Թուրքերը երկակի պահվածք ունեին. նրանք համոզված էին, որ վաղ թե ուշ հեռանալու են: Խոսում էին այն մասին, որ Բարձր դուռը սնանկացման եզրին է հայտնվել և ի վիճակի չէ իր գործակալներին պահել Սիրիայում ու Պաղեստինում: Այդուհանդերձ, նկատվում էին զորագնդերի տեղաշարժեր, զինվորական վարժանքներ, սպաների ժամանում և ռազմամթերքի տեղափոխում, ինչպես, օրինակ, հրետանու ծանր մասերը, որոնք երկաթուղին բերում էր մինչև Դամասկոս:

Խոսակցությունը շատ ավելին էր, քան պարզապես խոսք ու զրույց: Ի վերջո, պետք էր հաշվի առնել գերմանացի սպաների և փորձագետների այցերը, ինչպես նաև այն մարդկանց ներկայությունը, ովքեր այդ պահին ուղեկցում էին վալուն: Պետք չէր անտեսել նաև վալու՝ Թոմասին հյուրասիրելու հրավերները: Խոսակցությունը, իհարկե, ընթանում էր քողարկված ժպիտներով: Ճի՞շտ էր արդյոք, որ կայսրը վերադառնալու էր իր ժառանգորդ արքայազնի հետ. կարծես դրա համար պահը հարմար չէր, սակայն նա միայն ցանկանում էր իր անտարակույս աջակցությունը հայտնել Կոստանդնուպոլսի նոր կառավարությանը:

Մի քանի օր անց տեղ հասան տեղանքագիրները: Ինժեներների խմբի պետը լեյտենանտ Հայնրիխ Մանհեյմն էր՝ քառասունին մոտ մի ինքնամփոփ բեռլինցի, ով առաջին հերթին Կոնրադի՝ մարոն քրիստոնյայի մթերային խանութից գնեց մի արկղ գինի: Տեղանքագիրներն աշխատեցին մեծ նվիրումով և գերմանացիներին հատուկ բծախնդրությամբ: Հետո՝ երեկոյան, հարբեցին, սակայն հաջորդ օրը, հենց որ լույսը բացվեց, վերադարձան իրենց գործին: Այդպիսի առօրյայով աշխատեցին նաև հաջորդ օրերին: Թոմասը, անշուշտ, համոզվեց, որ գերմանացիները մեծ աշխատանք են կատարում: Նա նույնպես մեծ քայլերով առաջ գնացած կլիներ, սակայն իր թիմը՝ Բաքերն ու նոր օգնականը՝ Մուհամմեդ ալ-Մեղինին, նրանց զիջում էին իրենց ոչ բավարար փորձով և դանդաղ

առաջխաղացմամբ: Մինչդեռ գերմանացիներին ընդամենը երկու ամիս պետք եղավ, որպեսզի իրականացնեն հրաշալի նախագծեր, որոնք ոչ մի առնչություն չունեին Բոնապարտի իմաստունների քաղաքացիական աշխատանքի հետ: Հավանաբար այդ նախագծերը զինվորական պլաններ էին, քանի որ թուրքերն ու գերմանացիները նախապատրաստվում էին ողջ առափնյա հատվածի պաշտպանությանը՝ սկսած Պաղեստինի Մոնտե Կարմելոյից մինչև թուրքական սահմանը: Թոմասին դա տարօրինակ չթվաց. չէ՞ որ դրա մասին շարունակ խոսում էին վերջին ամիսներին և, բացի դրանից, ամեն ինչ շատ անամոթաբար և անթաքույց էին անում: Մտածեց, որ գուցե նրանց ձեռնտու էր, որ այդ աշխատանքների մասին լուրերը տարածվեն:

Մի առավոտ լեյտենանտ Մանհեյմի հետ Թոմասը վիճաբանություն ունեցավ. իր օգնականը՝ ալ-Մեդինին՝ մի աչքը կապտած և շրթունքը պատռված ու արյունածոր, հասավ այն վրանը, որտեղ աշխատում էր Թոմասը: Սկզբում ասաց, որ ընկել է փորված խրամատներից մեկի մեջ, սակայն երբ Թոմասը պնդեց, ասաց, որ գերմանացիներն իրեն ծեծել են: Թոմասը նրան զայրացած հարցրեց, թե որն է այդպիսի ագրեսիայի պատճառը:

- Լավ,- ալ-Մեդինին դեռ փորձում էր թաքցնել պատճառը,- նրանք ասում են, որ մենք խոչընդոտում ենք իրենց աշխատանքները, և միայն իրենց՝ գերմանացիներին է հողը փորելու և պեղումներ իրականացնելու իրավունք տրված, իրենք են՝ գերմանացիները և որ...

Այդ մարդն ասես ամոթից չէր ցանկանում մինչև վերջ պատմել տեղի ունեցածը:

- Ի՞նչ...,- Թոմասը չէր ուզում որևէ խնդիր ունենալ պրուսացի զինվորականների հետ, սակայն երբեք թույլ չէր տա, որ ստորացնեն ու ծեծեն իր մարդկանց,- ի սեր Աստծո, ասա՛, քեզ ի՞նչ են ասել:

- Լավ, պարո՛ն: Լեյտենանտն ասաց, որ իր կարծիքով՝ բոլոր անգլիացիները պետք է դժոխք գնան: Այդ ժամանակ էլ ես նրան պատասխանեցի, որ նա չէր համարձակվի այդ բանը Ձեզ ասել ու այդ պահին էլ հարվածեց ինձ: Բայց համարյա էլ չի ցավում,- Մուհամմեդը կռվի մեջ ընկնելու ցանկություն չուներ,- չարժե, պարո՛ն: Հայրս ասում է, որ բոլոր գերմանացիները քառակուսի գլուխներ են:

- Հնարավոր է, որ հայրդ իրավացի է,- Թոմասն ափերից դուրս էր եկել,- սակայն չեմ կարող հանդուրժել, որ գան այստեղ, որտեղ մենք ամիսներ շարունակ նախագծեր ենք մշակում, և դրան ավելացրած՝ քեզ ծեծեն: Այդ լեյտենանտին դեռ կասեմ ասելիքս, ու գուցե և նրան ժամանակավորապես բռնեն:

Թոմասը զգաց, որ արյունը եռում էր, ու փորձեց ինքն իրեն տիրապետել: Թամբեց ձին ու հաշվի չառնելով իր օգնականի զգուշացումները՝ քառատրոփ վարգով ուղղվեց դեպի գերմանացիների ճամբար: Կիրակնօրյա առավոտ էր, և նրանք չէին աշխատում: Լեյտենանտ Մանհեյմը, լսելով ձիու տեղ հասնելը, դուրս եկավ վրանից.

- Ի՞նչ է պատահել, պարո՛ն Հարդինգ: Որևէ խնդի՞ր ունեք գերմանական բանակի հետ:

Ակնհայտ էր, որ այդ մարդը դույզն-ինչ չէր զղջացել իր արարքի համար: Թոմասը որոշեց զուսպ անդրադառնալ նրա վարվելակերպին.

- Լսե՛ք, լեյտենա՛նտ: Դուք այդ համազգեստը կրելուն արժանի չեք: Սպան պարտավոր է ցանկացած իրավիճակում իրեն տիրապետել: Դուք ծեծել եք անպաշտպան մարդու՝ չարաշահելով Ձեր դիրքը, և եթե համոզված եք, թե Ձեր ասած բառերն ինձ կվիրավորեն, ապա ասեմ, որ վիրավորում է ոչ թե նա, ով ուզում է, այլ նա, ով կարող է: Բարի՛ եղեք Ձեզ հեռու պահել իմ ծառայողներից, եթե՝ ո՛չ, ապա զղջալու լուրջ պատճառներ կունենաք: Հարկ չեմ համարում Ձեր վարքագծից բողոքել կապիտան Լյուդենդորֆին: Այնպես որ՝ հանգի՛ստ եղեք:

Ինժեներների խմբի պետից, չնայած անպատեհ ժամին, ալկոհոլի հոտ էր փչում: Այդ մարդը, Թոմասի կարծիքով, խմիչքի հետ կապված լուրջ խնդիր ուներ:

- Անիծյա՛լ անգլիացիներ... Ձեզ թվում է, թե աշխարհի տերերն եք, այնինչ ընդամենը պոռնիկի զավակներ եք: Եթե համարձակվեք ձիուց իջնել, Ձեզ մի լավ կքոթակեմ: Թշվառակա՛ն...

Թոմասն այն մարդկանցից չէր, որ վախենար, թեև սկզբունքորեն երբեք բռնության չէր դիմում: Այդուհանդերձ, Օքսֆորդում ուսանելիս զբաղվել էր բռնցքամարտով ու բավականին ցուցադրաբար իջավ ձիուց: Լեյտենանտ Մանհեյմը կատաղորեն նետվեց նրա վրա, սակայն Թոմասը խույս տվեց՝ միաժամանակ աջ ձեռքով հարվածելով նրա ծնոտին: Ավելին անելու հարկ չեղավ: Մանհեյմն ամբողջ հասակով փռվեց գետնին, իսկ Թոմասը ոտքի վրա սպասում էր նրա պատասխանին, որն այդպես էլ չեղավ ոչ միայն լեյտենանտի, այլև նրա մարդկանց կողմից, ովքեր դուրս էին եկել վրաններից և լուռ հետևում էին իրադրությանը:

Թոմասը հեծավ ձին, և մինչ իր հակառակորդը կատարվածից ապշահար և դժվարությամբ ուղղվում էր, նրան կրկին զգուշացրեց.

- Լեյտենա՛նտ, հանգի՛ստ թողեք իմ մարդկանց: Ձեզ դարձյալ չկրկնեմ դրա մասին: Մնա՛ք բարով:

Քիչ անց գերմանացիները չքվեցին: Գիշերը հավաքեցին վրանները,

և ամեն ինչ նորից այնպես էր, կարծես նրանք երբեք այդտեղ չէին եղել: Այդ մեկը՝ աղբը, այո՛, թաղեցին հողում և մաքրեցին ողջ հարթ տարածքը: Իրենց հետևից ոչ մի հետք չթողեցին: Թոմասը մտածեց, որ պատերազմում անգլիական զորքերը, անկասկած, ավելի դիմացկուն են, սակայն, ինչ խոսք, ոչ այնքան բարեխիղճ և կարգապահ, որքան այդ գերմանացիները:

Ամառվա վերջին վերջապես եկավ պրոֆեսոր Դոնալդ Պետերսոնը՝ վաթսունհինգին մոտ մի տղամարդ, նիհար և թուխ, ֆիզիկապես լավ պահպանված: Շատ հետաքրքրվեց Թոմասի կատարած աշխատանքներով, սակայն շարունակ կրկնում էր, որ հնարավորինս շուտ ուզում է գնալ Դամասկոս: Երուսաղեմում, որտեղից նոր էր եկել, խոսք էր եղել այն մասին, որ թուրքերը ցանկացած պահի կարող են արգելել Սիրիա մուտք գործելը: «Ձայն բազմաց»-ն էր (vox populi), որը շատ արաբների մղում էր տարբեր՝ քիչ, թե շատ գաղտնի այն միություններին անդամակցելուն, որոնց նպատակն օսմանյան ղեկավարության առջև խոչընդոտներ հարուցելն էր: Ի պատասխան՝ թուրքերը դժվարեցրին արաբ բնակչության շարժը և կիրառեցին այլ՝ ավելի վայրագ և ուղղակի միջոցներ. օրինակ՝ այն, որ արաբներն իրենց բնակավայրերից առանց անցագրի չկարողանան տեղից տեղ շարժվել: Արաբների համար դա ստորացուցիչ էր: Ի վերջո, «արաբ» բառը նշանակում է քոչվոր: Ուզած պահին նրանք միշտ գնացել, եկել էին երկրի բարձրադիր ու ցածրադիր տարածքները, և թուրքերի քայլը շատերի համար տնտեսական լուրջ հարված էր:

Այդ ամբողջ ժամանակ Պետերսոնը չէր սպասում, որ վերջում մի տխմար որոշում կխանգարի իր աշխատանքի ավարտին: Նա, բավականին նյարդայնացած, իրավիճակը հետևյալ կերպ բացատրեց Թոմասին.

- Մեր դրությունը բավականին լուրջ է: Ինձ Միջագետքում անհրաժեշտ է մնալ առնվազն վեց ամիս, իսկ իրադրությունն այնպիսին է, որ չգիտեմ՝ դարձյալ կունենամ այդ հնարավորությունը... Արդեն մի քիչ մեծ եմ ու այս գիտարշավին շատ տարիներ եմ պատրաստվել: Ի վերջո, աշխարհում դրա պես վայր չկա: Կուզենայի՞ք ինձ ընկերակցել մինչև այնտեղ:

Թոմասը գլխով համաձայնության նշան արեց՝ իմանալով հանդերձ, որ պետք է ասեր՝ ո՛չ, չնայած երկար ժամանակ սպասել էր այդ հրավերին:

- Լավ,- Պետերսոնն ուզում էր ամեն ինչ հստակեցնել,- եթե այդպես է, ուրեմն շուտով կանենք այսպես: Եկող ամիս Դամասկոսի ճամփան

կբռնենք: Այդ քաղաքում կմնանք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ լինի պեղումների հետ կապված անգամ ամենափոքր մանրուքը պատրաստելու համար: Այնտեղ կհանդիպենք Հասան Աբու Մուֆայի հետ: Այդ տիպը վայելում է ամեն ինչ հայթայթողի համբավ: Հուսով եմ, որ գերմանացիները նրա հետ պայմանագիր չեն կնքել: Բեռլինի թանգարանը ցանկանում է ունենալ ամենալավ ցուցանմուշները, բայց դեռ վաղ է, որ կարողանա համեմատվել Բրիտանական թանգարանի հետ: Դրանում համոզված եմ:

Պրոֆեսոր Պետերսոնը տարիներ ի վեր հրաշալի կարծիք ուներ Թոմասի մասին և նրան հիշում էր որպես իր լավագույն սաներից մեկին: Երբ իմացել էր, որ նա Բիբլոսում է, որոշել էր գնալ այնտեղ և նրան համոզել, որ իրեն ուղեկցի: Չէր ուզում ընդունել, սակայն արդեն տարիքն առել էր, երբեմն գլխապտույտ էր ունենում, գնալով շոգն ավելի էր նրան նեղում: Անհրաժեշտ էր, որ երիտասարդ արյուն ներարկեր իր գիտական արշավախմբին, իսկ դրա համար Թոմաս Հարդինգը բոլոր տվյալներն ուներ: Բացի դրանից՝ Թոմասին տանելը նաև ֆինանսական լուրջ խնայողություն էր այն առումով, որ ստիպված չէր լինի Լոնդոնից Միջագետք հրավիրել մեկ այլ օգնականի: Նրան շատ էին հետաքրքրում Միջագետքի պեղումները, բայց շատ հոռետես էր տարածաշրջանում ձևավորվող քաղաքական իրավիճակի առնչությամբ: Ոչ ոք չէր կարող կանխատեսել կատարվելիքը: Հենց իրենք՝ Բիբլոսի արաբ կամ քրիստոնյա գյուղացիները հաստատում էին.

- Ոչ մի լավ բան, պարո՛ն, ոչինչ:

Դարեր շարունակ թուրքերի կառավարումը նրանց դարձրել էր վատատես: Ամեն անգամ, երբ այնտեղ հասնում էր որևէ օրենք կամ հրաման, դրանք հարկերը բարձրացնելու կամ մի նոր հարկ ավելացնելու վերաբերյալ էին: Ահա թե ինչու Սիրիայի բնակիչներն ատելությամբ էին լցվում օսման հարկահավաքների հանդեպ:

Մի քանի օր անց Թոմասը պրոֆեսոր Պետերսոնին առաջարկեց, որ միասին մարոնական մենաստան այցելեն: Պետք է հատուցեր Ազուրիի՝ ամիսներ առաջ կատարած այցի «պարտքը»: Բացի դրանից՝ նրան հետաքրքրում էր այդ վայրը: Պրոֆեսորը նույնպես հետաքրքրություն էր ցուցաբերել: Մենաստանն այնքան էլ մոտ չէր, որքան վստահեցրել էր Ազուրին. ձիու արագ վարգով և առանց կանգ առնելու՝ երկու ժամից ավելի, սարն ի վեր ճանապարհն էլ շատ հոգնեցուցիչ էր գրաստների համար: Նրանց բերանից փրփուր էր թափվում, զառիվեր ուղին հաղթահարելու համար ուժ գործադրելուց ահավոր քրտնում էին, շրթունքները՝

դողդողում: Մացառուտներից հետո սկսվեցին եղևնու անտառները, մի քանիսը՝ շլացուցիչ տեսքով: Տեսարանը ցնցող էր, մանավանդ՝ այդ օրը, երբ ջինջ ու վճիտ մթնոլորտը թույլ էր տալիս հստակորեն տեսնել քսան մղոն հեռավորության վրա: Նույնիսկ ինքը՝ Պետերսոնը, որ միայն իր պեղումների ծրագրերի հանդեպ էր ոգևորություն ցուցաբերում, անչափ հուզվել էր.

- Այո՛, կինս սովոր էր ինձ հետ ճանապարհորդելուն: Երկու տարի առաջ մահացավ մի պատահարից՝ Սուռեյում ձիուց ընկնելուց: Նա մեծ հաճույք կստանար այս ամենից: Գիտե՞ք՝ ինչ եմ մտածում, որ նրա հիշատակին լավագույն հարգանքի տուրք մատուցելը կլիներ ոչ մի վայրկյան չկորցնելը: Այնպես որ՝ գնանք այդ օրհնյալ մենաստանը, տեսնենք, թե մեզ ինչ կպատմեն մարոն ճգնավորները:

Եռանդուն խթանեցին ձիերը և շարունակեցին սարն ի վեր: Արամերեն մի քանի ցուցանակներ մերթընդմերթ նշում էին, որ ճիշտ ուղիով են գնում, և դա մինչ այն պահը, երբ արահետի վերջում նրանց առջև հառնեց մենաստանը՝ մայրիներով քողարկված, ձորապռնկին՝ կարծես մարտահրավեր նետելով ցածրիկ ամպերին, որոնք թեթև, սպիտակ քուլաներով սահում էին ցած ու մի ակնթարթում անհետանում:

- Պաշտպանության համար կատարյալ մի վայր է,- նկատեց Պետերսոնը, ով ժամանակին բանակի համար աշխատանքներ էր իրականացրել,- և հարկ է ասել՝ անառիկ մի տեղ: Լավ, գնանք այնտեղ:

Մոտենալիս հանդիպեցին մենաստան վերադարձող երկու մենակյացի, ովքեր կուչ էին եկել ուսերին առած ցախի մեծ կապերի տակ: Դարպասը բաց էր, Թոմասն ու Պետերսոնը ներս մտան՝ ձիերին, սանձափոկերից բռնած, իրենց հետևներից տանելով:

Կոպիտ արտաքինով վանական դռնապանը նրանց ողջունեց արաբերեն «Սուրբ Ավե Մարիա»-ով.

- Եկել եք այցի հայր Պրիորի՞ն:

Երկուսն էլ համաձայնեցին՝ առանց թաքցնելու թույլ ժպիտը: Այն զգացողությունն էր նրանց համակել, որ դարերով հետ են նահանջել:

Շինությունը քարից էր, աղյուսից և ձեռքով պատրաստված կղմինդրից, մայրու՝ ժամանակի ընթացքում սևացած մեծ գերաններից: Սպասեցին մի սրահում, որը կահավորված էր վեց աթոռով և մի սեղանով՝ նույնպես պատրաստված մայրուց, պատին էլ Սուրբ Մարոնի հնագույն կտավն էր, որտեղ նա ցուցամատով ցույց էր տալիս երկինքը. մի ոչ մեծարժեք և բավականին պարզամիտ, բյուզանդական ոճով նկար: Հայր Պրիորն անմիջապես եկավ՝ արագ քայլելուց հուզված, նրանց հետ խո-

սեց ֆրանսերեն՝ տեղ-տեղ արտաբերելով անգլերեն արտահայտություններ:

- Ա՜հ, այո՛, անգլիացիները... Որքան ժամանակ է՝ ձեզ անհամբեր սպասում ենք: Ձեր բախտը բերել է. պատրիարքը՝ Էլիաս Հոայեկ դե Հիլտան մեզ հետ է: Եկե՛ք: Ձեզ կներկայացնեմ նրան:

Ակնհայտ էր, որ այդ մարդը լավ չէր տիրապետում անգլերենին, սակայն ցանկանում էր հաճոյանալ նրանց: Անցան դարերի ընթացքում մաշված քարերով պատված ու սյունազարդ բակով: Տպավորությունն այնպիսին էր, որ ամեն բան հնագույն էր: Մենակյացների սքեմները հազար անգամ կարկատված էին, քրքրված և մաշված: Թոմասը վերևից սուր ճոճողոցներ լսեց. երկու արծիվներ խորհրդավորությամբ թևածում էին մենաստանի գլխին:

Պատրիարքը նրանց սպասում էր՝ նստած հանդիսավոր արարողությունների աթոռին՝ գեղջկական մի բազկաթոռ՝ վրան տարբեր մեծության խաչեր փորագրված:

- Օրհնյա՛լ լինեք: Ինձ զգուշացրել էին, որ մեզ այցելելու են անգլիացի պրոֆեսորներ: Բարի՛ գալուստ մեր մենաստան: Լա՞վ է անցել ձեր ճամփորդությունը: Ուրախ եմ: Պետք է ասեմ, որ մենք սաներն ենք «Ecclesia Maronitarum»-ի՝ հիմնադրված Սուրբ Մարոնի կողմից, և, ինչպես ձեզ հայտնի է, դեռևս խաչակիրների ժամանակաշրջանից մենք լիովին անդամակից ենք Հռոմի կաթոլիկ եկեղեցուն: Ես Անտիոքի և Արևելքի ողջ մարոնականների պատրիարքն եմ: Այս հնագույն կտավները ներկայացնում են Սուրբ Մարոնից հետո մեր գլխավոր սրբերին՝ Սուրբ Հովհաննես Մարոնին, Նիմաթուլլա ալ-Մարդինին, Ռաֆկա Չոբոֆին, Չարբել Մակլուֆին: Սա Ջուբայի, այսինքն՝ Բիբլոսի թեմն է, ու հիմա ես այս եկեղեցու խոնարհ ծառան եմ: Թո՛ւյլ տվեք, որ ձեզ մի փոքրիկ ներածական ներկայացնեմ: Այս գեղատեսիլ վայրում շատ դաժան պատմություն ենք ունեցել և մեզ համարում ենք Լեռնային Լիբանանի օրհնյալ հողի զավակներ: Հիմա կուտակվում են փոթորկաբեր քամիներ, և որպեսզի մեր ժողովուրդը դիմակայի դրանց, կօգնենք, ինչով կարող ենք: Քրիստոնյա լինեն, թե մուսուլման. հիմա դա երկրորդական է: Արաբներ ենք, խոսում և մտածում ենք արաբերեն, թեև մեր ծեսերն արամերեն են: Գիտեմ, որ Դուք,- պատրիարքը դիմեց Թոմասին,- ծանոթ եք Ազուրիին: Նա մեր՝ առավել աչքի ընկնող առաջնորդներից է: Ձեզ անկասկած ծանոթ է «Լիբանանի զարթոնքը»: Սակայն կան նաև այլ միություններ: Մի քանիսն արդեն կատարել են իրենց առաքելությունը, ինչպես, օրինակ, «Ալ-Քահթամիան»: Նրա հիմնադիրները՝ Ազիզ ալ-Մասրին և Սալիմ ալ-

Յազահիրին, փորձեցին կապեր հաստատել երիտթուրքերի հետ: Դա չկայացավ, և մերոնցից մի քանիսը մնացին ճանապարհին՝ որպես հերոսներ: Լսած կա՞ք «Երիտասարդ արաբներ» կազմակերպության մասին: Մենք այն անվանում ենք «Ալ-Ֆաթաթ»: Հիմնադրվել է Փարիզում: Էլ ուրիշ որտե՞ղ: Մի թերթ են հրատարակում Բեյրութում՝ «Ալ-Մուֆիդ»: Գիտեմ, որ Փարիզում պատրաստվում են համագումարի, սակայն օսմանների դեմ պայքարելու համար մեզ անհրաժեշտ է Լեռնային Լիբանանի և Սիրիայի ճյուղերի միացումը: Սակայն շատ ավելի կազմակերպություններ կան, որոնցից մեր գաղափարախոսությանն ամենամոտ կանգնածը թերևս «Բարեփոխական միությունն» է: Իմ իրազեկիչները գովաբանում են Ազիզ ալ-Մասրիին՝ բանակի մի սպայի, ով մասնակցել է Կիրենաիկայից թուրքերին դուրս մղելու պայքարին: Այդտեղ նույնպես սկսվել է խուճապը, թեև գերմանացիները պահանջում են, որ թուրքերը մնան իրենց տեղերում: Չեն ուզում թափուր իշխանություն, որ հանկարծ այն չբռնազավթվի ձեր՝ բրիտանացիների կամ ֆրանսիացիների կողմից... Սակայն դա թերևս անխուսափելի է: Այդ իսկ պատճառով ցանկանում էի ձեզ հետ զրուցել: Ձեզ, պարո՛ն Պետերսոն, սպասում էինք անհամբեր և ուրախ ենք, որ եկել եք մեր երիտասարդ պրոֆեսորի ընկերակցությամբ, ով իրոք շատ է սիրում այս երկիրը:

Պրոֆեսոր Պետերսոնն անհամբեր շարժվեց իր աթոռին:

- Այո՛, Ձերդ գերազանցություն,- այդպես էր մարոնական պատրիարքին՝ որպես Լեռնային Լիբանանի ամենաազդեցիկ փոքրամասնություններից մեկի քաղաքական առաջնորդին դիմելու ձևը,- Ձեզ համար մի նամակ եմ բերել Մեծ Բրիտանիայի վարչապետից:

Ի զարմանս Թոմասի, ով ոչ մի պատկերացում չուներ այդ ամենից, Պետերսոնն արձակեց իր պիջակի կոճակները և ներսի գրպանից հանեց զմռսված կաբնագույն մի ծրար՝ վրան Մեծ Բրիտանիայի զինանշանի պատկերը:

Պատրիարք Հոայեկը դեպի երկինք բարձրացրեց ձեռքերը՝ բացականչելով.

- Օրհնյա՛լ լինի Աստված և գովաբանված: Սիրելի՛դ իմ վարչապետ... Նրա հետ ծանոթացա Երուսաղեմում: Սկզբունքորեն երբեք քաղաքական գնահատականներ չեմ տալիս: Սակայն նա ինձ արտասովոր մի մարդ թվաց: Բացի դրանից՝ հստակ պատկերացումներ ունի արաբական աշխարհի ապագայի վերաբերյալ: Ձեզ մի բան կասեմ: Արաբներս երախտագետ ժողովուրդ ենք, և ժամանակը դա ցույց կտա: Եվ պետք է ձեզ ասեմ, որ կարևոր չէ, որ ոմանք մուսուլմաններ են, ոմանք՝

քրիստոնյա: Ի վերջո, երկու համայնքներն էլ հավատում են Աստծուն, և կարևորը, ինչ խոսք, դա է: Պատմականորեն, իսկապես, քրիստոնյա մարոններս շատ ենք տառապել իսլամի ձեռքից, սակայն հիմա, փառք քեզ, Աստվա՛ծ, սպասում ենք երկարատև խաղաղ ժամանակաշրջանի և փոխըմբռնման, սակայն մինչև այդպես լինի, որքան հնարավոր է, շուտ պետք է ազատվենք թուրքերից, ովքեր փորձում են բռնի տիրանալ մեր ինքնությանը: Այդ արյունարբու խալիֆը՝ Աբդուլ Համիդը՝ «կարմիր սուլթանը», հարյուր հազարավոր քրիստոնյա հայերի սպանդի ենթարկեց: Դժոխքում պետք է այրվի: Ինչևէ, հարկ չկա, որ ես անդրադառնամ այն տարբերություններին, որոնք մեզ բաժանում են քրիստոնեական այլ եկեղեցիների մեր եղբայրներից: Հիմա դրա ժամանակը չէ: Գիտե՞ք, որ թաքնվելով թուրքական կառավարության ոստիկանությունից՝ այստեղ է ապաստանել Նագիբ Ազուրին՝ արաբ առաջնորդներից մեկը, ով անխոնջ պայքարում է հանուն մեր՝ արաբներիս ինքնորոշման: Մեզ հետևել են, սկզբում փորձում էին պահպանել որոշ զսպվածություն, հետո, իմ կարծիքով, փորձեցին ահաբեկել մեզ, նույնիսկ բոլորովին վերջերս այստեղ՝ մոտերքում, թուրքական բանակի մի ստորաբաժանում ճամբար խփեց: Իմ կարծիքով՝ ինչ-որ մեկը լուր էր տարածել, որ Ազուրին այստեղ է գտնվում: Հետո, երբ Դամասկոսի թերթերը հավաստիացրին, որ նրան տեսել են Դամասկոսում, իսկ ավելի ուշ՝ Հայֆայում, ճամբարը հանեցին... Խնդրում եմ՝ ինձ մի քանի րոպե մենակ թողեք, որ վարչապետի նամակը կարդամ. գուցե հարկ լինի պատասխանել նրան: Ձեզ ճաշասրահում կտեսնեմ ճաշի ժամին: Մինչ այդ շրջե՛ք մենաստանում, դուք շատ սպասված հյուրեր եք: Եղբայր Պաուլոն ձեզ ցույց կտա այն, ինչ որ կամենաք: Նա մի քիչ խուլ է, բայց աստվածատուր հոգի ունի, և թող Տերն ինձ ների, ջորուց համառ է,- պատրիարքն անթաքույց ժպտաց,- սակայն ջորիները նույնպես մեր քույրերն են այս աշխարհում, որ Աստված արարել է մեզ համար:

Եղբայր Պաուլոն ուղեկցեց Թոմասին ու Պետերսոնին: Մարդը գնում էր իր սերտած ճամփով, ու այն փոխելու հնար չկար, և ասես ոչ էլ լսում էր, թե ինչ էին իրեն ասում: Այնպես որ՝ բավարարվեցին նրանով, ինչ որ ցույց տվեց: Բավականին ժամանակ մնացին մի երկար, բաց սրահում: Խորքում երևում էր Միջերկրականի արծաթավուն արտացոլանքը: Լիբանանի լեռները ժայռոտ էին, սակայն՝ սքանչելի, ու երկուսն էլ զմայլված հիանում էին զույգ արծիվներով, որոնք անխոնջ թռիչքներով պոկվում, ամպերից ցած էին իջնում:

- Որքան եմ նրանց նախանձում,- շշնջաց Պետերսոնը,- տեսե՛ք՝

նրանց հասանելի է կյանքի լավագույնը: Ակնհայտ է, որ վայելում են: Չգիտեն, որ մի օր ամեն բան կվերջանա, որ միայն այս ջինջ ու բուրավետ մթնոլորտն է նրանց պատկանում: Նրանց սերն իսկական է, ու կարող են թռչել: Գուցե և ձու են դրել կամ ճուտիկներ ունեն հեռվում՝ ժայռերի ծերպերին: Այո՛, նրանց իրոք նախանձում եմ, Դուք՝ ո՞չ:

- Անշուշտ, պրոֆեսո՛ր,- Թոմասը հիացած էր պրոֆեսորի հուզականությամբ և ներքին բանաստեղծական օժտվածությամբ,- այդ արծիվների համար այլ սահմաններ չկան, քան իրենց բնազդները: Երբ հասնում է իրենց անհրաժեշտ պահը, իջնում են Պաղեստինի ափի երկայնքով, կտրում անցնում են Սինայ լեռը, հասնում Եգիպտոսի հարավ: Իհարկե նրանց նախանձում եմ, մանավանդ՝ այսօր: Եթե հնարավոր լիներ նրանց պես թռչել…

- Մարդկային արարածը ձախողված կենդանի է,- Պետերսոնը լրջացավ,- Դարվինը մեզ բացատրել է միայն մի մասը: Չուզեց Մալթուսի[14] պես հոռետես լինել: Տեսե՛ք, մինչ նրանք թռչելով վայելում են իրենց ազատությունը, մարդը տարված է քաղաքական դաժան կռիվներով՝ մեծ մասամբ դավաճանության և կեղծ պատրանքների ուղեկցությամբ: Միշտ եղել է և կլինի այսպես՝ բացառությամբ այն երջանիկ՝ մատների վրա հաշված պահերի, որոնք մեզ պարգևում է կյանքը, ինչպես հիմա, որ ապրում ենք՝ զմայլվելով այս ցնցող բնաշխարհով... կամ թեկուզ այս ամենի շուրջ խորհրդածելով: Երջանկությունը կարդալ, խորհրդածել, եզրահանգել կարողանալն է... և հազվադեպ՝ գործել տեղին: Այո՛, եթե նույնիսկ, ի վերջո, եզրակացությունները լինեն բացասական:

- Ճշմարիտ է, պրոֆեսո՛ր,- Թոմասը վերհիշում էր իր վաղեմի դասերը,- Օքսֆորդում մեզ միշտ ստիպում էին հասնել մինչև վերջ: Իսկ Դուք ավելին եք, քան որևէ դասախոս: Դա է պատճառը, որ հիմա ես այստեղ եմ: Ինձ անհրաժեշտ էր բախվել իրականությանը: Ինձ չէին բավարարում գրքի պատկերները... Իսկ Դուք, պրոֆեսո՛ր, Դուք միշտ օրինակ եք ծառայել Արևելքը սիրողներիս համար: Տարիներ շարունակ եղել եք Պաղեստինում, մինչ այդ՝ Աֆրիկայի հյուսիսում...

- Այո՛, երիտասա՛րդ իմ բարեկամ: Շատ տարիներ առաջ ես անչափ նման էի Ձեզ... Անգամ չհասցրի գլխի ընկնել, թե ինչպես կյանքս անցավ-գնաց: Մարդը չի հասցնում օգտվել ի վերուստ իրեն տրված ողջ ժամանակից, հասկանալ, որ իրեն ընդամենը մնացել է այնքան, որ արժանավայել հրաժեշտ տա աշխարհին: Սակայն Դուք դեռ կարող եք դա հասկանալ: Դա տարօրինակ և մելամաղձոտ իրավիճակ է՝ անկա-

[14] Ռոբերտ Մալթուս (1766-1834), «Ազգաբնակչության տեսության փորձ» (1798):

ղողության և համակերպման խառնուրդ: Հետևո՞ւմ եք ինձ: Լսե՛ք, հիմա մի գիրք եմ գրում՝ նվիրված այն հարցին, թե ինչո՞ւ որոշ ժողովուրդներ կյանքն ու հետևաբար նաև արվեստը մեկնաբանել են այնպես, ինչպես որ մենք ենք ընկալում: Մեզ կհաջողվի՞ որոնել ու երևան բերել նմանություններ: Հիմա մեր ձեռքի տակ ունենք շատ մեծ տեղեկատվություն, որից նրանք զուրկ էին: Դույզն-ինչ չկասկածեք, որ հարյուր տարի անց, երբ որևէ մեկը խոսի մեր մասին, մեզ միամիտ մարդկանց տեղ կդնի՝ փորձելով բացատրել այն, ինչ մենք հիմա անում ենք այստեղ: Եվ գիտե՞ք՝ ինչ եմ մտածում, որ կգնանք այս աշխարհից... առանց այդ հարցն ըմբռնելու: Անշուշտ, նրանք՝ նույնպես, որքան էլ որ այդ ժամանակ աշխարհն առաջադիմած լինի:

Անկախ ամեն ինչից՝ պրոֆեսոր Պետերսոնը և նրա օգնական Հարդինգը մնացին՝ այդ միջավայրով գայթակղված: Մենաստանում ամեն բան ժամանակից դուրս էր. առարկաները, կոպիտ գործիքները, որոնցով ապահովում էին ապրուստը՝ մշակելով փոքրիկ պարտեզը, որը ճգնավորներին մատակարարում էր ամառվա բանջարեղենն ու միրգը և ոռոգվում էր սարից թափվող փոքրիկ ջրվեժի՝ միալար խոխոջացող վճիտ առվակով: Մրգատու ծառերն անհետանում էին փոքրիկ սարավանդների վրա, մինչ կմիահյուսվեին սաղարթախիտ սոճիների կամ մայրիների հետ: Այդ ճգնավորներն անմիջական հետնորդներն էին քրիստոնեական մի պարզունակ մշակույթի, որը կուլ չէր գնացել ահեղ իսլամին: Մենաստանները ստիպված էին ապաստանել քարքարոտ սարերում՝ փնտրելով ամենաթաքուն ու վայրի տեղերը, որոնք կապահովեին մենակյացների անվտանգությունը: Նրանց՝ նոր արած որմնանկարները բյուզանդական չէին, բայց շատ բան ունեին այդ առեղծվածային, պարզունակ և միաժամանակ հինավուրց գեղեցկությունից:

- Ըստ իմ սովորության՝ ես ոչ մի բանի հանդեպ հավատ չեմ ընծայում, սակայն չէի ուզենա ապրել եղբայր Բրուտուսի կյանքով,- Պետերսոնը մատնացույց էր անում եղբայր Պաուլոյին,- ես նույնպես կարող եմ լինել նրա պես պնդագլուխ և լռակյաց: (Դոնալդ Պետերսոնը որոշ հեգնանքով էր Պաուլոյի մասին խոսում, ինչ-որ դառնություն էր զգացվում): Լսե՛ք, Թոմա՛ս, իրականում շատ քչերին է հաջողվում ապրել իրենց երազած կյանքով: Նրանք կազմում են հաջողակ մարդկանց փոքրագույն տոկոսը: Գուցե և այդ լռակյաց կրոնավորներին դա հաջողվել է: Գնում են, գալիս, երբեմն իջնում են Բիբլոս, նրանցից մեկին թերևս հաջողվել է կյանքում մեկ անգամ լինել Բեյրութում: Այլ բան է հայրապետի պարա-

գան: Այդ մարդն ամենից առաջ քաղաքական գործիչ է բառի թե՛ դրական և թե՛ բացասական ողջ իմաստով: Օսմանյան կայսրությունը հիմա շաքարի պես տարրալուծվում է, իսկ այս ճգնավորները, այնուամենայնիվ, ինչպիսին եղել են, այժմ էլ նույնն են մնում: Մյուս կողմից նրանք բոլորիս պես ցանկանում են նույն բանը: Գրեթե հազար տարի առաջ, երբ նրանք՝ քրիստոնյա մարոնականները, հանդիպեցին առաջին խաչակիրներին, համոզված եմ, որ այդ ժամանակ՝ հանդիպման հենց նույն պահին, պետք է, որ երկու կողմերն էլ խիստ զարմացած լինեին: Այստեղ հասած եվրոպացիները համակված էին մի տարօրինակ՝ կոպտության ու խորհրդապաշտության խառնուրդով: Եկածների մեջ կային որոշ ազնվականներ, ովքեր թարմ օդի կարիք ունեին, սակայն նրանց առավելապես ընկերակցում էին խաբեբաները և արկածախնդիր զինվորները, ավելի ճիշտ՝ ավազակներ և սրիկաներ, քան Աստծո քաջակորով ռազմիկներ: Անկախ դրանից՝ հանդիպման առաջին իսկ պահից համոզվեցին, որ թերևս առկա է այն զգացողությունը, որ պատկանում են նույն աշխարհին: Մի քանիսը քրիստոնյաներ էին՝ հռոմեացի հովվապետի գլխավորությամբ, Հռոմի հարաճուն կարևոր նշանակությամբ, մյուսներն էլ գյուղացիներ՝ Սուրբ Մարոնի հավատքով: Այդ ճգնավորների պարզունակ հավատքին դեմ հանդիման դուրս եկան հավատացյալները՝ «Urbis et orbis»[15] («Հռոմ քաղաքին և աշխարհին»): Փառասիրություն և համակերպում... Երկու կողմերն էլ զննեցին կասկածամտորեն, սակայն երկու կողմերի միջև անմիջապես մի մեծ համակրանք ծագեց: Խաչակիրները կարիք ունեին ուղեկցողների, սննդամթերքի, կապերի, թարգմանիչների, այնպիսի մարդկանց, որոնց կարող էին վստահել, եթե չէին ուզում, որ բարկ արևի պատճառով իրենց ոսկորները սպիտակեցնեին այդ վայրերը, իսկ այդպիսի մարդիկ ոչ այլ ոք էին, եթե ոչ մարոնականները: Խաչակիրներն օրհնեցին իրենց բախտը, քանզի հանդիպել էին կատարյալ դաշնակիցների՝ քրիստոնյա արաբների, ովքեր մավրերի կողմից դուրս էին մղվել՝ քշվելով դեպի ափամերձ սարերը: Հավատացյալներ, ովքեր ատում էին իսլամը ու երբեք չէին դավաճանի եվրոպացի իրենց դաշնակիցներին: Նրանք՝ մարոնները, տարված էին, գերված ֆրանսիացիներով, թեև կային նաև անգլիացիներ ու իտալացիներ, ովքեր մեծ խմբերով հասնում էին մինչև Լևանտի ափերը՝ Պաղեստինից մինչև Փոքր Ասիա՝ փորձելով կրել խաչը և Սրբազան հողի ճամփաները մաքրել անհավատներից, պահպանել Սուրբ վայրերը, ամուր պահել

[15] Հռոմում այս նախադասությամբ էին սկսվում ուղերձները. ձևակերպում, որը մեծ հավանության արժանացավ Վատիկանի կողմից (ծանոթագրությունը՝ հեղինակի):

քրիստոնեության սահմանները: Այո՛, դա այն պահն էր, երբ Ֆրանսիան, որ արշավանքի հոգևոր առաջնորդն էր, ոտք դրեց արաբական աշխարհ, և այդ ժամանակից ի վեր՝ դարերի ընթացքում եղած բազմաթիվ փորձություններից ու փորձանքներից հետո՝ մամելյուկներից սկսած և օսմաններով վերջացրած, անշուշտ, հաղթահարելով նաև Նապոլեոնի արշավանքը, Մեծ Սիրիայի այս նահանգը կրում է Ֆրանսիայի անջնջելի հետքը: Շատ քրիստոնյա մարոնականներ, եթե չասենք նրանց մեծամասնությունը, խոսում կամ առնվազն հասկանում է ֆրանսերեն: Այսպիսով՝ նրանք դարձել են երկու աշխարհները կապող ամուր օղակ: Երբ Եվրոպան ու արաբները մշակույթների միահյուսման մեջ իրենց հետևից քարշ տվեցին մուսուլմաններին, վերջիններս նույնպես տարվեցին ֆրանսիական փայլուն մշակույթով և դրա ունեցած խոշոր նշանակությամբ: Նկատած կլինեք, որ վերջին տարիներին գնալով տարածվում են հեղափոխության՝ օսմանների դեմ արաբների մեծ խռովություն նախապատրաստելու գաղափարները: Դարեր շարունակ որոշ ժողովուրդների իրենց լծի տակ պահած արաբների կենսափիլիսոփայությունը հիմնվում է ֆրանսիական հեղափոխության երեք գաղափարներից առնվազն երկուսի՝ ազատության և եղբայրության վրա: Ինչ վերաբերում է հավասարությանը, ապա դրան կանդրադառնանք առանձին, քանզի արաբների շրջանում իշխանությունը և հեղինակությունը դրա հետ քիչ աղերս ունեն, թեև արաբ ժողովրդի մեծամասնությունն այդ գաղափարի կրողն է: Ինչպես ինձ, այնպես էլ քեզ քաջ հայտնի է, որ ցանկացած պահի արաբները պահանջելու են ազատություն: Փարիզում ապրած կամ այդ քաղաքին ծանոթ արաբների աչքերը բացվել են: Նրանք նույնպես իրենց իրավունքներն են պահանջում: Սուլթանն այլևս չէր տնօրինում նրանց կյանքը. նկատի չունեմ ներկայիս սուլթանին, ով ընդամենը մի խամաճիկ է երիտթուրքերի առաջնորդների՝ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ձեռքին: Ոչ էլ նրանց եմ ես հավատ ընծայում: Երեքից՝ ոչ մեկին: Տե՛ս, թե ընդամենը երեք տարի առաջ ինչ կատարվեց Ադանայում: Լսե՞լ ես որևէ բողոք եվրոպական մամուլում: Միմիայն Ֆրանսիան արձագանքեց, այն էլ՝ ուշ: Որևէ հանդիմանանք մեր երկրի կառավարությունի՞ց... Իհարկե՝ ոչ... Մի գուցե առանձին որևէ ձա՞յն... Ոչի՛նչ, որ հանկարծ չվիրավորի այդ թուրքերի առաջադեմ ու զգայուն հոգին: Ավելի քան երեսուն հազար մեռած քրիստոնյաներ... Մեզ ասում են սրա պես մի բան. «Աղոթե՛ք նրանց համար և մոռացե՛ք նրանց»: Մեղք գործելով՝ նաև ապաշխարում են: Հիմա Բարձր դռան անհանգստությունն Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումն է, որն անհնարին է:

Պրոֆեսոր Պետերսոնը զայրացած էր: Ջրույցում, ավելի ճիշտ, իր մենախոսությունում նա ձայնը բարձրացրեց: Թոմասը նրան զննում էր՝ երբեմն համամիտ լինելով նրա փաստարկների հետ, երբեմն էլ՝ ոչ այնքան. ցավալի էր, որ այդ մարդն իր դատողություններով մթագնում էր մենաստան կատարած այցը:

- Այդ ամենը, իրոք, ճիշտ է, պրոֆեսո՛ր, սակայն ինձ հետ կհամաձայնեք այն հարցում, որ այս մարդիկ, նկատի ունեմ մարոն մենակյացներին, ոչ միայն քաջատեղյակ էին այն բանին, թե ինչպես ընտրեն իրենց հաստատվելու վայրերը, այլև պահպանել են ժամանակից դուրս ապրելու իրենց ձևը: Ուշադրությո՛ւն դարձրեք մեզ շրջապատող ամեն բանի վրա: Նույնն է, ինչ հինգ կամ տասը դար առաջ: Ափսոս, որ ես Կարոլինին արգելեցի գալ: Պետք է լուսանկարչական խցիկը բերած լինեի, որ պատկերեի այս մթնոլորտը:

- Ճիշտ է: Տեսե՛ք, ունեցել են թշնամիներ: Նկատի ունեմ ոչ միայն նրանց առճակատումն իսլամի հետ: Ավելի քան հիսուն տարի առաջ՝ 1860 թվականին, դրուզները մեծ կոտորածներ կազմակերպեցին, որոնց զոհ գնացին հազարավոր մարոններ: Շատ մենաստաններ ավերվեցին ու հրո ճարակ դարձան: Ի վնաս գիտության՝ կորստի մատնվեցին հազարավոր փաստաթղթեր, ձեռագրեր, հնագույն գրերով չափազանց կարևոր մատյաններ: Դրանցից շատերը եզակի էին և ներառում էին քրիստոնեության սկզբնական շրջանի պատմությունը, իսլամի առաջին ժամանակաշրջանը, ներկայացնում էին պատմական կերպարներ, և այդ ամենն ընդմիշտ կորավ: Ա՜հ, պատմություն... Այն միշտ թաթախված է արյամբ ու կրակով: Որքան քիչ են խաղաղ պահերը: Տեսե՛ք, Թոմա՛ս, հենց հիմա մենք օգտվում ենք այդ հրաշալի պահերից: Ամենուր խաղաղություն է ու անդորր: Այդ անխոնջ արծիվները, աստվածների խաղով տարված, պոկվում, իջնում են ամպերից: Այդ անտառները, հորիզոնում արծաթագույն գիծը... «Mare nostrum»-ը՝ «Մեր ծովը», գերեզմանային լռությունը, որ տարածվում է ամենուր, մենակյացները՝ իրենց առօրյա, հազար անգամ կրկնված աշխատանքով... Նույն շարժուձևերը, զուտ ավանդական՝ արամերենով հնչեցրած նրանց երգերը, նույն լեզուն, ինչպես հավաստիացնում են, որ գործածել է Քրիստոսն իր աշակերտներին ուսուցանելիս, և, այնուամենայնիվ, այնտեղ՝ հեռվում՝ ինչ-որ տեղ, հասունանում է մարդկության՝ երբևէ չապրած ամենամեծ աղետը: Մեր շուրջը մենք ընդամենը զգում ենք դրա թույլ նախանշանները: Օրինակ՝ թուրքերի տարօրինակ պահվածքը. նրանք նույնպես երկյուղած են ընկալում փխրուն ու սպառնալի մթնոլորտը: Սկսել են լքել նավը, և վատ-

թարն այն է, որ չգիտենք, թե ով այն կվարի: Կարող եք ասել՝ ո՞վ, եթե՝ ոչ արաբները: Չգիտեմ, թե ինչպես բացատրեմ Ձեզ: Մենք՝ անգլիացիներս, տնտեսական և քաղաքական չափազանց մեծ շահեր ունենք աշխարհի այս մասում: Ֆրանսիացիները կարծում են, որ ունեն պատմական և մշակութային իրավունքներ, գերմանացիները գոռոզամտանում են իրենց կայսրությամբ և մյուսներին ճորտ ու կամակատար դարձնելու հավերժ քաղաքականությամբ: Ինչ վերաբերում է արաբներին, ես ունեմ իմ տարակուսանքները: Աննկուն ու հպարտ ժողովուրդ է, որ չափազանց երկար ժամանակ գտնվում է օսմանների լծի տակ: Ահավասիկ «Իթթիհադի» գաղափարախոս Նազըմ բեյն արաբներին անվանում է «թուրք ժողովրդի շներ»: Պարզ է, որ այդ մարդը վատ մոր զավակ է: Պատկերացրե՛ք, թե ինչ են մտածում արաբները թուրքերի մասին, և ինչ կարող է, ի վերջո, պատահել: Անգութ ձևով մի ազգը մյուսին կսպանի, արաբական այս երկրներում այնքան մեծ է թուրքական իշխանության հանդեպ կուտակված թույնը: Իսկ դա վաղ թե ուշ լինելու է, վախենում եմ, որ այդ ժամանակ մենք կլքենք այս վայրը:

Երբ հասավ ժամը, իջան ճաշասրահ: Այնտեղ նրանց սպասում էր հայրապետը: Լռության պահպանումը պարտադիր չէր, ինչպես եվրոպական միաբանություններում: Բացի դրանից՝ հայրապետը ցանկանում էր նրանց հետ զրուցել.

- Բանն այն է, որ այստեղ չէ իմ կացարանը, որտեղ սովորաբար ապրում եմ: Անցնելիս եմ մտել այստեղ, թերևս ինձ համարեք «փախստական»: Պաշտոնապես ես այս պահին որպես ուխտավոր պետք է գտնվեի Երուսաղեմում, սակայն հանգամանքներն ինձ ստիպեցին որոշ ժամանակ թաքնվել այս մենաստանում: Այստեղ պետք է շատ բաներ տեղի ունենան, ու ես պարտավոր եմ մերոնց հետ լինել, նախապատրաստել եղբայրներիս: Չեմ կարծում, որ դրուզները մեզ վրա հարձակվեն, ինչպես կես դար առաջ: Հիմա թուրքերը չեն հեռանա: Նրանք համոզված են, որ Օսմանյան կայսրությունը կդիմանա հարվածներին, և գերմանացիների հետ ունեցած դաշինքնն իրենց կօգնի, որ գոյատևեն: Ես շատ եմ կասկածում: Մեծամտության և փառասիրության ճամփան շատ կարճ է:

Հայրապետն իր բազկաթոռից անհանգիստ վեր կացավ՝ ձեռքի շարժումով ցույց տալով, որ տեղից չշարժվեն: Սրահով քայլեց վերից վար.

- Ես ձեզ ասում էի, որ դրուզները մեզ իրենց հիմնական թշնամի չեն համարում: Այստեղ ես միացել եմ դրուզների ամենազորեղ այնպիսի ընտանիքների ներկայացուցիչների հետ, ինչպիսիք են Ջումբլաթները, Աբու էլ-Լամահները, Նակաղները, Չեհաբները, էլ-Մասրիները...

Նրանց՝ բոլորի հետ: Դադարի համաձայնություն ենք ձեռք բերել, քանի որ հիմա մեր ընդհանուր թշնամին երիտթուրքերի կառավարությունն է: Երիտթուրքերը ցանկանում են արաբներին դրդել «ջիհադի»՝ սրբազան՝ կրոնական պատերազմի, անշուշտ՝ քրիստոնեության դեմ՝ բացառությամբ Գերմանիայի և Ավստրիայի: Դա կեղծ խայծ է: Արաբներիս, պնդում եմ, քրիստոնյա, թե մուսուլման, հարկավոր են Անգլիան և Ֆրանսիան, որպեսզի մեկընդմիշտ ազատվենք թուրքերից: Հետո, երբ ամեն ինչ գնա իր հունով, բոլորս, որ բնակվում ենք այս տարածքում, անկասկած կապրենք մի երկրում, որը կկոչվի Մեծ Լիբանան: Այդպես էլ կլինի՝ անկախ սիրիացիներից: Նրանք հավակնում են Մեծ Սիրիա ստեղծելուն և այն կարծիքին են, որ Լեռնային Լիբանանը... և ինչ-որ կավելացնեք, կլինի ընդամենը Դամասկոսի մի նահանգ: Սակայն դա հետո կպարզվի, ի վերջո, պատմությունը ոմանց արհամարհված վիճակում է թողնում:

Հայրապետը բացեց պատին ամրացված մոմլաթե քարտեզը: Երկուսն էլ տեղից վեր կացան՝ այն մանրամասն տեսնելու: Այնտեղ՝ Հայֆային մոտակա մի կետից, դեղին գույնով ներկել էին նախկինում գոյություն ունեցած մի պետության սահմանները: Հայրապետը շրջվեց նրանց կողմը՝ լայն ժպտալով.

- Սա է Մեծ Լիբանանը: Մեր Լիբանանը... Թուրքերն ուզեն, թե չուզեն, այն մերը կլինի: Չենք ատում թուրք ժողովրդին: Նրանք իրենց կոռումպացված ռեժիմի առաջին զոհերն են: Առգրավման հարկերը, ի վերջո, ամայացրին կայսրությունը, քրիստոնյա փոքրամասնությունների դեմ ուղղված նրանց դեկրետները մեզ հասցրել են հուսահատության: Եթե Աբդուլ Համիդը կարողանար փախչել իր բանտից, ապա կայսրության քրիստոնյաներիս կսպառնար մահվան վտանգը: Սակայն չենք կարծում, որ երիտթուրքերն այլ մտածելակերպ ունեն: Նրանք սուլթան Աբդուլ Համիդի պանիսլամիզմը փոխարինել են Թուրանի՝ ծայրահեղ արմատականների պանթյուրքիզմով: Ի վերջո, նույնն է:

Թոմասն ուշի-ուշով լսում էր այն, ինչ պատմում էր հայրապետը: Պետերսոնը փորձառու մարդ էր, թեև՝ ցինիկ, սակայն դա չէր պատճառը, որ այդքան էլ ապշահար չէր:

Ավելի ուշ հրաժեշտ տվեցին հայրապետին: Պետք է վերադառնային նախքան մութն ընկնելը, քանի որ տուն տանող նեղ ճանապարհն անհարմար էր մթության մեջ ձիով անցնելու համար: Իջան լռելյայն՝ իրենց մտքերում խորասուզված: Թոմասը տեսնում էր, որ գնալով ամեն ինչ բարդանում է: Պետերսոնն անգամ չէր ուզում պատկերացնել, որ ստիպված հետաձգելու է Միջագետք կատարելիք իր գիտարշավը: Բրիտա-

նիայի՝ Պաղեստինում տեղակայված Գլխավոր շտաբի հետ ունեցած կապերի շնորհիվ նա տեղեկանում էր, որ հնարավոր են մի շարք դժվարություններ, որոնց մասին, սակայն, նա ոչինչ չէր ուզում լսել:

Գիտեր, որ դա իր վերջին հնարավորությունն է: Եթե, ի վերջո, պատերազմ սկսվի թուրքերի և արաբների միջև, անգլիացիները պետք է հնարավորինս արագ դուրս գային այդտեղից: Բայց չէ՞ որ մեծ դժվարությամբ էր հաջողվել համալսարանում հաստատել նրա գիտարշավի բյուջեն և պեղումների համար ձեռք բերել անհրաժեշտ բոլոր թույլտվությունները: Թեկուզ և՝ միայն Սիպպարում՝ Ներքին Միջագետքում՝ Եփրատի արևելյան ափին, որտեղ Հորմուզդ Ռասամը 1881 թվականին գտել էր մի հնավայր, իսկ ավելի ուշ Ժան Վինսենթ Շեյլն այն մեծ հաջողությամբ պեղեց: Պետերսոնն այն կանխազգացումն ուներ, որ այնտեղ է գտնվում ամենախոշոր նշանակություն ունեցող հնագիտական վայրերից մեկը: Հազարավոր հնագիտական բեկորներ էին դուրս գալիս գետնի ցանկացած խորշից: Անհամբեր սպասում էր, թե երբ էր հասնելու այնտեղ: Ու հանկարծ կանխագուշակում էին մի մեծ խռովություն, որը խոչընդոտելու էր իր երազանքների իրականացմանը: Չպետք է հապաղեր:

Հասնելով տուն՝ Թոմասը լրջորեն խոսեց Կարոլինի հետ: Ինչ գնով էլ լիներ, նա ցանկանում էր ընկերակցել Պետերսոնին, բայց վախենում էր կնոջը մենակ թողնելուց: Կինը նրան հանգստացրեց: Ոչինչ տեղի չէր ունենա: Այդտեղ էին Աբդել Ղալիբները: Նաղիմա Ղալիբը քնում էր իրենց երեխայի մոտ: Բաքերը նույնպես այդտեղ էր, ով նրանց մասին կհոգար: Մյուս կողմից էլ ոչ ոք չէր համարձակվի հարձակվել անգլիացի ընտանիքի վրա: Շատ մտատանջվելուց հետո Թոմասը համոզվեց:

Երկու շաբաթ անց՝ 1912 թվականի հոկտեմբերի կեսերին, տասներկու ուղտերով, վեց ձիերով և ութ ջորիներով քարավանը դուրս եկավ Բիբլոսից՝ ուղևորվելով դեպի Արևելք: Պրոֆեսորի հաշվարկների համաձայն՝ մոտավորապես մեկ ամիս կտևեր մինչև Սիպպար հասնելը:

Այդ գիշեր մի աներևակայելի կայծակ լուսավորեց մթությունը: Թոմասը տագնապահար մտածեց, որ գուցե ինքը պետք է վերադառնար Կարոլինի մոտ: Հետո Պետերսոնի հետ խոսակցությունը ցրեց նրա մտածմունքները: Ի վերջո, Սիպպարում պեղելը նույնն էր, ինչ երկնքին դիպչելը:

7. ԴԱԺԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀՈԿՏԵՄԲԵՐ - ԱՊՐԻԼ, 1912-1913թթ.

Պետերսոնի գիտարշավախմբի՝ դեպի Եփրատ ուղևորության առաջին օրերը, երբ կտրում անցնում էին Սիրիայի անապատը, դանդաղ էին ու միալար: Թոմասը շատ էր կարոտում Կարոլինին և Էթելին: Խիղճը նրան տանջում էր, կինը հինգ ամսվա հղի էր ու թեև Էթելի ժամանակ հղիությունը շատ լավ էր տարել, այնուամենայնիվ ամեն բան կարող էր պատահել. Բիբլոսում բժշկական օգնությունը բավականին պարզունակ էր և վատ: Այնտեղ ոչ մի հիվանդանոց չկար, իսկ միակ բժիշկը, ում կարելի էր դիմել, Պիեռ Գուրոն էր, ով, սակայն, արդեն մեծահասակ էր և միայն ընդունում էր թեթև վերքերով ու վնասվածքներով հիվանդների. ավելին անել չէր համարձակվում: Ինչևէ, Թոմասը չէր կարող չմտածել Կարոլինի բարության և մեծահոգության մասին, ով իրեն օգնել էր, որ Պետերսոնի հետ մեկնելու որոշումն ընդուներ: Կարոլինին քաջ հայտնի էր, որ Թոմասը վաղուց էր երազում այդ գիտարշավին մասնակցելու մասին, նաև ուզում էր նրան ցույց տալ, որ ամուսնացած լինելը նրա ոչ մի ցանկությանը խոչընդոտ չի հարուցի: Ամուսնանալուց հետո ընդամենը մի երկու անգամ էին վիճել, և իրարից նեղացած մնալն ընդամենը ժամեր էր տևել: Երկուսով էլ համոզված էին, որ ընտրության հարցում բախտավոր էին... Եվ Թոմասը, աստղերին նայելով, խորհում էր այն մասին, որ երջանիկ էր Կարոլինին հանդիպելու համար:

Պետերսոնը մեծահասակ էր և ինչ-որ տեղ համառ՝ համոզված լինելով այն բանում, որ ցանկացած գործ անելու համար գոյություն ունի միայն մեկ եղանակ. գիտարշավի բոլոր մասնակիցներից, այդ թվում՝ և Թոմաս Հարդինգից, անշուշտ՝ նաև ինքն իրենից, պահանջում էր առավելագույն կարգապահություն: Նա միշտ վերջինն էր պառկում և արթնանում առաջինը... լուսաբացից առաջ: Չէր ընդունում անգամ աննշան թերացումը, նրա համար տհաճ էին արդարացումները: Խոսքը բավականին ներփակ անձնավորության մասին էր. միայն մի բան էր նրան անչափ հետաքրքրում, ու այդ ժամանակ նա թոթափում էր իր ինքնամփոփությունը: Նրա միակ նպատակն իր ողջ արշավախմբով հնարավորինս շուտ Սիպպար հասնելն էր՝ պեղումներ սկսելու համար կազմ ու պատրաստ: Մնացյալը նրան չէր հետաքրքրում:

Ուղևորությունը բավականին սովորական էր, թեև Թոմասը կարևորում էր ամեն վայրկյան: Տղամարդիկ պարտավոր էին ճամբար խփել, հավաքել ու դասավորել ամեն ինչ, աղբը հողի մեջ թաղել, հանգցնել

վառվող կրակները: Կրակի մարումը կարևոր էր նրանով, որ ողջ այն տարածքները, որ կտրում անցնում էին, մեծ մասամբ ծածկված էին չոր-ացած մոլախոտով. բացի այն վայրերից՝ ժայռուտներ, քարեղեն հսկա որևէ բլուր կամ ավազուտների վիթխարի տարածքներ, որտեղ թերևս ոչինչ չէր աճում:

Վրանները հավաքելուց հետո չորսից հինգ ժամ ճիավարում էին: Մի փոքր դադար էին առնում՝ անասուններին կեր տալու և հանգիստ թող-նելու համար, իսկ հետո շարունակում էին ճանապարհը՝ կանգ առնելով մթնշաղից մեկ ժամ առաջ, որպեսզի հասցնեին հարմար տեղում վրան խփել, խարույկ վառել և ընթրիք պատրաստել: Թոմասը զննում էր, թե ինչպես էին խորամանկ շնագայլերը փորձում որևէ բան թռցնել: Տարվա այդ եղանակին՝ գիշերները, անապատում բավականին ցուրտ էր, իսկ երկինքը՝ այնքան աստղազարդ, որ ասես կարելի էր ձեռքերով դիպչել: Երբ տիրում էր լռություն, խարույկը մարում էին, և մնում էին միայն շի-կացած ածուխները, երկնակամարն այնքան ճնշող էր դառնում, որ Թո-մասն իր քնապարկում երկյուղում էր:

Թեև Թոմասի նեղ մասնագիտացումը փյունիկյան մշակույթն էր, այ-դուհանդերձ նրան հետաքրքրում էր նաև Միջագետքը. ամեն ինչ սկսվել էր այդտեղից: Դեռևս նեոլիթից առաջ էին մարդ արարածներն արվեստի միջոցով արտահայտում իրենց անձկությունը, իրենց կամքը, իրենց սե-ը, իրենց վախը մահվան հանդեպ, իրենց աշխարհընկալումը... Նրանք որսից անցում կատարեցին դեպի գյուղատնտեսական բերքահավաք: Այդտեղ՝ երկու գետերի՝ Եփրատի՝ «ալ-Ֆուրատի» և Տիգրիսի՝ «էլ Դիջ-լայի» միջև ընկած տարածքի վրա վեր հառնեց դրախտը:

Պետք է, որ մի երկար ժամանակահատված մարդը խաղաղ կյանք վարած լիներ: Այդտեղ էլ, թերևս, ծնունդ առան քաղաքակրթությու-նը, սեպագիր գրերը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, դաշտը խնամքով մշակելու կարողությունը, կրոնական առաջին հավա-տալիքները, ծնվեցին առասպելներ, որոնք հազարամյակներ անց ար-տացոլվելու էին գրվածքներում: Այն, ինչ հետագայում հասավ Քանանի երկիր, որը շատ ավելի ուշ դառնալու էր Փյունիկիան, ի հայտ եկավ իր ճակատագրին շատ հարիր մի վայրում՝ Սիպպարում՝ թերևս առասպե-լական Միջագետքի հնագույն քաղաքներից մեկում: Հնարավոր է, որ համաշխարհային ջրհեղեղը հասել էր նաև մինչև այդտեղ, քանի որ Եփ-րատը սկիզբ է առնում այն հեռավոր տարածքից, որտեղ վեր է խոյանում Արարատ լեռը, և որտեղ Նոյը կառուցեց իր տապանը: Թոմասի սիրտը բաբախում էր. այն, ինչ կարող էր գոյություն ունենալ, հողի ու ավազի

տակ էր թաղված: Ամենամյա ջրհեղեղները, անապատի ավազի փոթորիկները սրբում, տանում էին մինչև իսկ այն վայրի՝ դրախտի հետքերը, որտեղ մի ժամանակ օձն էր կենում:

Երբ մտածում էր այդ ամենի մասին, մոռանում էր Կարոլինին ու Էթելին: Անգամ Օքսֆորդն էր մոռանում, ամբիոն ունենալու իր վաղեմի ցանկությունը, ավանդական պայքարը, այն է՝ ջախջախել ուրիշի կարծիքը, իսկ սեփականը համալսարանում հասցնել փառքի գագաթնակետին, մոռանում էր որպես հայտնի գիտակ, որպես հեղինակ, այդ նեղ մասնագիտացման մեջ իսկական իմաստուն դառնալու ձգտումը: Այդ ամենը՝ ցածրոգի և անիմաստ, մնացել էր հետևում: Այժմ նրան միմիայն հետաքրքրում էր մի կողմ տանել ավելորդ հողը, հասնել մինչև քարի պես ամուր կավի շերտերին, դուրս բերել նրա գաղտնիքները, փորձել հասկանալ այն, ինչ կատարվել էր շատ, բազմաթիվ դարեր առաջ, առաջինը կարդալ հին մատյանները, արխիվները, հուշագրերը, այնտեղ՝ մեծ գետի մոտ ապրած որևէ գրագրի թվային գործողությունները, ով տեսել էր նույն արեգակի, լուսնի, աղամանդե աստղերով ասեղնագործված գիշերվա անցնելը... Հենց այդ պահին ինքն էլ էր դիտում, թե ինչպես է սահում գիշերը:

Այսպիսով՝ Բիբլոսը լքելուց քսանվեց օր անց հասան Սիպպար՝ Թել էդ-Հաբբահ. այդպես էին կոչում: Ավելի քան երեսուն տարի առաջ Հորմուզդ Ռասամը պեղել էր Սամաշի տաճարը՝ հողից հանելով ավելի քան հիսուն հազար սեպագիր աղյուսներ: Գրեթե անհետացած տաճարի և աստիճանավոր աշտարակի մնացորդները ցույց էին տալիս, որ այդ վայրը չորս, թե հինգ հազարամյակ առաջ եղել է բավականին կարևոր բնակատեղի:

Երբ իմացան, որ հասել են իրենց նպատակակետին, Պետերսոնը ձիուց իջավ և առանց այլևայլությունների կավիճով նշեց պեղումների տարածքը: Անգամ մի բան ուտելու համար ժամանակ չվատնեց: Այրվում էր սրածայր մահակները չոր հողում խրելու անհամբերությունից, որպեսզի սահմանագծեր, իր իսկ խոսքերով ասած, «Պետերսոնի հնավայրը». ինչպես նախկին տարիներին ամերիկյան արևմուտքում՝ ասես հաստատ գիտենալով, որ գտնվում է ոսկու հարուստ երակի վրա: Նրա համար պատերի փլատակները, պարզագույն նշանները, երբեմն խեցու կամ հում կավի սակավաթիվ բեկորները ոսկուց էլ թանկ էին: Բարկությամբ լի այն կարծիքին էր, որ Ռասամին ընդամենը հաջողվել էր փչացնել և իրեն վերագրել պեղման վայրի տարեգրությունը, սակայն այդ եղանակով պեղումը երբեք չի կարելի կոչել հնագիտական: Նա պետք է

վերահաստատեր կարգը, գործնականում սկսեր զրոյից, պարզեր տարբեր շերտերի թվականությունը:

Շուտով այդ վայրը լցվեց հետաքրքրասեր մարդկանցով և արաբ բանվորներով, ովքեր շահագրգռված էին այդտեղ աշխատանք գտնելով: Մի քանիսը եկել էին իրենց բահերով ու բրիչներով՝ ասես կիսելով հնագետի՝ անհապաղ աշխատանքի անցնելու ցանկությունը:

Պետերսոնը լավ էր խոսում արաբերեն: Մի քանիսին հենց այդ երեկո հանձնարարեց մաքրման աշխատանքներ կատարել: Ամեն բան պետք է դասակարգեին, առանձնացնեին. ամենափոքր բեկորներն անգամ համարակալեին, նկարեին ու պահեին: Առանց ոչ մի բան մոռանալու... Նրանց բացատրեց, թե ինչպես պետք է կատարեին աշխատանքը, որպեսզի կարողանային հարկ եղած դեպքում ամեն քար կրկին դնել ճիշտ այն տեղում, որտեղից գտել էին: Հողաշերտից յուրաքանչյուր դյույմ իջնելը համապատասխանում էր քսանհինգ տարվա, երբեմն՝ շատ ավելի, իսկ ժամանակագրության մեջ դատարկ տեղեր չպետք է թողնեին: Դա էր խնդիրը: Հենց նույն երեկոյան հինգ հոգու նշանակեց որպես պատասխանատու, իսկ սև աշխատանք կատարելու համար վարձեց քառասունութ հոգու: Եվ դեռ շարունակ մարդիկ գալիս էին խմբերով՝ ցուցակագրվելու համար իրար հետ կռվելով: Ալի աբու Մուհամմեդ, Քեմալ Բաշիր, Քասսեմ աբու Հասան, Հուսեյն իբն Սաղամ... Իրիկնամուտին հարյուրից ավելի մարդկանց մի խումբ ջահերով մոտեցավ ճամբարին՝ աշխատանք խնդրելու: Հարցն այն էր, որ նրանք չէին ցանկանում լինել այն վերջինները, որոնց կասեին, թե այլևս աշխատողի կարիք չկա: Ոգևորության գագաթնակետին հասած Պետերսոնը կատակեց Թոմասի հետ: Նրա երազանքն այդքան տարի անց ի կատար էր ածվում, և որքան լուրջ բան պետք է տեղի ունենար, որ նա հրաժարվեր իր կյանքի նպատակից՝ այդ պեղումից:

Քիչ անց Սիպպարն ընկղմվեց լռության մեջ: Միայն լսվում էր թույլ շրշյուն. Եփրատի մոտերքում սահանքը տեղ-տեղ խզվում էր անապատի շնագայլերի ոռնոցով: Թոմասը երազում տեսավ Շամաշին՝ արևի աստծուն, ում պատվին մի հեռավոր օր կառուցվել էր տաճարը, որից հազիվ մի քանի բեկորներ էին մնացել. վաղնջական վկաներն այլ ժամանակների, երբ աշխարհը բոլորովին ուրիշ էր:

Երազում տեսավ նաև տաճարի քրմուհիներին: Նրանք՝ բոլորն էլ կրում էին ոսկեզօծ դիմակ և թափանցիկ, երկար զգեստներ, որոնք մատնում էին նրանց սլացիկ մարմինների ու ձիգ կրծքերի մասին: Այդ ծանր երազում մոտեցավ վերջին քրմուհուն ու պոկեց դիմակը. Կարոլինն էր...

Լուսաբացն իր հետ բերեց ուժեղ, չոր ու անողոք տապ: Անգամ մեծ գետն ի վիճակի չէր խոնավացնելու շրջակայքը: Հազիվ էր արևը բարձրացել կավե սյուներից վեր, երբ ջերմաստիճանն էլ սկսեց բարձրանալ: Ճանապարհորդության ընթացքում շոգ օրեր անցկացրել էին, սակայն այդ պահին ջեռոց էր:

- Տարօրինակ է,- ասաց Պետերսոնը,- այս եղանակին ջերմաստիճանը պետք է ավելի մեղմ լիներ:

Երբ այդ մասին ասաց տեղաբնակներին, նրանք գլուխները տարուբերեցին: Շո՞գ... Պետք է սպասեն մինչև մայիսի վերջերը. այդ ժամանակ կիմանան, թե ինչ բան է շոգը: Թոմասը հիշում էր ծովափնյա մեղմ կլիման: Բիբլոսում գիշերային ցուրտ խոնավությունը երբեմն նրանց ստիպում էր վառել բուխարին: Չնայած շոգին, փոշուն, փոքրիկ անպատեհություններին՝ պեղումները կազմակերպվեցին արդյունավետորեն, և օրեր անց սկսեցին գտնել պարիսպների մնացորդներ, խեցու կտորներ և շատ այլ բեկորներ: Պետերսոնը ոգևորված էր «իր» պեղումների վայրով: Անհանգիստ ելումուտ էր անում գլխավոր վրան, որտեղ տեղակայել էր իր գրասենյակը, արհեստանոցն ու լաբորատորիան: Գյուղի մի քանի ատաղձագործներ սարքեցին սեղաններ՝ գեղջկական, բայց՝ շատ հարմար, շարժական աստիճաններ, խողովակաշար, ցուցանակներ, փայտյա մեխեր և այն ամենը, ինչ անհրաժեշտ էր կենցաղի և հնագիտական աշխատանք կատարելու համար: Գիտարշավի անդամները ճամբարը բացազատեցին գլխավոր վրանի շուրջը: Հարյուր յարդ հեռավորության վրա անասունների համար ցանկապատ կառուցեցին: Շատ բանվորներ իրենց վրանները բացեցին մոտակայքում: Մի քանիսը բերեցին ոչխարներ, հավեր, որոնք օրն անց էին կացնում՝ այստեղ-այնտեղ կտցահարելով: Մեկ ամսվա ընթացքում այդ վայրը շատ ավելի կենսունակ դարձավ, քան արևմուտքում գտնվող Սիպպարը:

Պետերսոնն այդ ամենն անում էր ոչ միայն հանուն գիտության. նա նաև պատվախնդիր էր և փառամոլ: Հիանում էր Ռոուլինսոնով[16] և միաժամանակ նախանձում նրան, ով միջազգային փառքի էր հասել՝ վերծանելով սեպագրերը: Պետերսոնը նամակագրություն ուներ Ռոբերտ Կոլդեվեյի[17] հետ, ում հրավիրել էր Սիպպար, որպեսզի ցույց տար, թե ինքն ինչ էր իրականացնում: Այդ ներքին փառասիրության շնորհիվ էր, որ մի քանի շաբաթվա ընթացքում պեղումները նշանակալի ծավալի հասան:

[16] Հենրի Կրեշվիկ Ռոուլինսոն (1810-1895): Բրիտանացի դիվանագետ, հնագետ: Վերծանել է սեպագրերը: Գրել է «Կենտրոնական Ասիայի սեպագիր արձանագրությունները» աշխատությունը:

[17] Ռոբերտ Յոհան Կոլդեվեյ (1855-1925): Գերմանացի հնագետ և ճարտարապետ: Այլ բաների հետ մեկտեղ հայտնաբերել է նաև «Բաբելոնի կախովի այգիների» մնացորդները:

1913 թվականի հունվարի կեսերին՝ մի գիշեր, Թոմասը որոշեց վերադառնալ Բիբլոս: Երկուսուկես ամիս նա գտնվում էր ընտանիքից հեռու, և երբ իրականացել էր Միջագետքում պեղումներ կատարելու նրա բաղձանքը, հասել էր վերադառնալու պահը: Անհանգիստ էր, նաև մի փոքր հիասթափված Պետերսոնի չոր բնավորությունից: Օրերն անցնում էին, սակայն վերջինս չէր գտնում այն, ինչին հավակնում էր: Եվ ահա մի առիթով Պետերսոնի նյարդերը տեղի տվեցին, և երկուսով սկսեցին վիճել այն հարցի շուրջ, թե ինչպես և ինչ եղանակով պետք է շարունակել աշխատանքները: Այդ ժամանակ Պետերսոնը չոր տոնով նրան ընդհատեց՝ ասելով, որ այդտեղ ամեն բան պետք է արվի այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Դա շատ հարմար պահ էր վերջակետ դնելու համար: Անկախ վեճից՝ միմյանց անքինախնդիր ձեռք սեղմեցին: Թոմասը կռահեց, որ պրոֆեսորը նախընտրում էր ունենալ լիարժեք ազատություն, չէր ցանկանում մրցակցություն: Դա հետաքրքիր փորձություն էր, ինչից նա կօգտվեր ապագայում:

Թոմասը միացավ արաբ վաճառականների քարավանին, որը քսանից ավելի ուղտերով և վեց մարդկանց հետ Սիպպարով անցնում էր դեպի Դամասկոս տանող ճանապարհը: Նա ճանապարհ ընկավ՝ մի լավ ձի հեծած, հետը տանելով մի ջորի, որը գնել էր գյուղում:

Այդ վաճառականները գալիս էին Բաղդադից, թեև անմիջապես Թոմասին հպարտորեն ասացին, որ սիրիացիներ են: Նրանք քաջ ծանոթ էին ողջ տարածաշրջանին, և Թոմասը ստեղծված իրավիճակի վերաբերյալ նրանց շատ հարցեր տվեց, որոնց սիրիացիները սիրով պատասխանեցին: Նրանք՝ բոլորն էլ վատ կարծիք ունեին թուրքերի մասին, և հոգիներում ատելություն կար կուտակված: Նրանց ղեկավարը ոմն Զակի էլ-Ուաշն էր, ով պատկանում էր նուսայրիների ցեղին: Թոմասը չգիտեր այդ ցեղի մասին, և Ուաշը տարօրինակ հայացքով նայեց նրան՝ կամենալով հասկացնել, որ այդտեղ բոլորին էլ հայտնի է, թե ովքեր են նուսայրիները: Պարզվեց, որ նրանք բնակվում էին Սիրիայի հյուսիսում՝ ծովեզրի լեռներում, և տասնմեկերորդ իմամ շիա Իբն Նուսայրիի հետևորդներն էին, նաև հայտնի էին որպես ալավիներ: Թոմասին չհաջողվեց ավելին դուրս կորզել Ուաշից: Նա նախընտրում էր զուսպ լինել:

Ճանապարհ ընկնելուց մի քանի օր անց նրանց կանգնեցրեց թուրքական մի պարեկախումբ, որի կազմում կային գերմանացի մի քանի սպաներ: Իրենց բավականին ագրեսիվ պահեցին նուսայրիների հանդեպ: Հայհոյեցին, սպառնացին գերի վերցնել: Թոմասին տարակուսանքով հարցեր տվեցին՝ զարմացած, որ անգլիացին ընկերակցում էր այդ

մարդկանց: Այդ վայրը կասկած էր հարուցում: Գերմանացի սպաներից մեկն առանձին խոսեց թուրք կապիտանի հետ, ու նրանց թույլատրեցին շարունակել ճանապարհը: Թոմասը Զակի էլ-Ուաշին հարցրեց, թե որն էր թուրքերի այդ տարօրինակ վարքագծի պատճառը:

- Կարծում էին, թե կայսրության դավաճաններ ենք, իսկ դու՝ անգլիացիների կողմից ուղարկված լրտես՝ ներխուժում նախապատրաստելու համար: Նրանք վախենում են, որ բրիտանացիներդ ամբողջ տարածաշրջանի վերաբերյալ տվյալներ եք հավաքում: Այդ պատճառով էլ այդքան նյարդայնացած էին: Թոմասն ուսերը թոթվեց. այդ մարդը մեծ երևակայության տեր էր:

Նոր էր մութն ընկել, և մինչ ճամբար էին պատրաստում՝ գիշերն անցկացնելու համար, մոտիկից հնչեցին կրակոցներ. նուսայրիներից երեքն անշարժ ընկան: Թոմասն ու էլ-Ուաշը փոքր-ինչ հեռվում էին՝ երկու հարյուր մետրի վրա, որտեղ հոսող առվից թեյի համար ջուր էին վերցնում: Երկուսն էլ նետվեցին գետնին՝ թաքնվելով մացառուտների արանքում, իսկ կրակոցները դեռ շարունակվում էին: Ակնհայտ էր, որ թուրք զինվորներին քարավանի բոլոր մարդկանց վերջը տալու հրաման էր տրված: Թոմասը, ով ոչ թե վախենում էր, այլ հանկարծակիի էր եկել, մթության մեջ սողաց դեպի մոտակա ժայռերը: Կյանքում առաջին անգամ էին նրա վրա կրակում, ու շատ մոտիկից էր զգացել մահը: Էլ-Ուաշը գնաց նրա հետևից: Երկուսով մշուշի միջով վազեցին սարն ի վեր, մինչ ձորամիջում շարունակվում էին կրակոցները:

Երբ ամեն ինչ հանդարտվեց, երկար ժամանակ դեռ թաքնված ու լուռ մնացին: Այդ ժամանակ էլ-Ուաշը շշնջաց, որ ինքը վիրավոր է: Թոմասը մոտեցավ նրան և տեսավ, որ փամփուշտը վիրավորել է նրա ուսը, որտեղից արյուն էր հոսում: Հանեց իր վերնաշապիկը և տեղում վիրակապեց: Վիրավորը չէր բողոքում, բայց նրա այտերով հոսում էին արցունքի խոշոր կաթիլներ:

- Անգլիացի՛, ոչ թե ես վերքիս ցավից եմ լաց լինում, այլ իմ սպանված ընկերների վշտից: Նրանք ինձ համար եղբայր էին: Սա այսպես էլ պետք է վերջանար, նուսայրիներս երբեք թուրքերի հետ լավ չենք եղել: Նրանք մեր ժողովրդին թշվառության մեջ են պահում, չափից ավելի հարկեր են դնում, որ պարտավոր ենք վճարել: Վերջին ամիսներին մեզ մեղադրում էին Ֆրանսիայի օգտին, ի վնաս իրենց, լրտեսության մեջ: Դու վկա ես, թե մեզ հետ ինչպես են վարվում: Դու մեղավոր չես, անգլիացի՛: Կատարվածի հետ ոչ մի առնչություն չունես: Աստված մեծ է:

Թոմասն իրեն մեղադրում էր նրանց ընկերակցելու համար: Համոզ-

ված էր, որ իր ներկայությունը, որը չէր վրիպել գերմանացի զինվորականների աչքից, ազդել էր նրանց վերջը տալու որոշման կայացման վրա:

Ավգուստուս Նյումանը նրան պատմել էր, որ Սիրիայում ու Լեռնային Լիբանանում ինչպես բրիտանացի ու ֆրանսիացի, այնպես էլ գերմանացի և ավստրիացի լրտեսներ կան՝ տարածաշրջանում տիրող իրավիճակն ուսումնասիրելու նպատակով: Դա, իրոք, այդպես էր:

Թուրքերը նույնպես ունեին գերմանացիների կողմից կազմակերպված հետախուզական արդյունավետ ծառայություն. նրանք, բնականաբար, չէին ցանկանա ռիսկի դիմել: Ամեն բան Թոմասի համար բարդացել էր: Նրա կողքին վիրավոր կար, ում չէր կարող լքել: Վախենում էր, որ թուրքերն իրենց փնտրեն, այդ դեպքում լավագույնն այն կլիներ, որ Լիբանանից իրեն դուրս վռնդեին: Երբեք չէր մտածել, որ այդպիսի բան կարող էր պատահել: Նա միշտ ապրել էր բարեկեցիկ կյանքով՝ առանց ավելորդ հոգսեր ունենալու: Այն բանից հետո, ինչին ներկա էր գտնվել, այլևս երբեք թուրքերին առաջվա պես չէր կարող նայել:

Էլ-Ուաշը շատ ամրապինդ մարդ էր: Արձակված գնդակի վերքը, որ ցանկացած այլ մարդու տապալած կլիներ, նրան միայն այն առումով էր տհաճ, որ պետք է դիմանար ցավին: Նրանք մի գյուղի մոտ էին, որը կոչվում էր Մայադին և գտնվում էր Դեյր էզ-Զորի մարզում: Էլ-Ուաշը պետք է հասներ Ջեբել՝ Անսարիայի լեռներում՝ Լաթաքիայի հյուսիս-արևելքում՝ Բիբլոսից հարյուր մղոն դեպի հյուսիս գտնվող Յայլադաղ, որտեղ իր տունն էր: Դրա համար նա պետք է անցներ երկու հարյուր հիսուն մղոնից ավելի: Այնտեղ մթության մեջ տարածությունները թվում էին վիթխարի, անհաղթահարելի: Բացի դրանից՝ ճանապարհի անվտանգությունը կախված էր մի շարք գործոններից, որոնցից մեկն այն էր, այո՛, որ թուրքերը նրանց չհանդիպեին:

Առաջ գնալու կամքը էլ-Ուաշին թույլ տվեց, Թոմասին հենվելով, մշուշի միջով քայլել երեք մղոն, մինչև հասան մոտակա ճամբարը: Անապատի այդ մարդիկ մթության մեջ տեսնում էին, եկվորներին արաբերեն ասացին, որ կանգնեն, իսկ էլ-Ուաշն անմիջապես բղավեց իր անունը: Նրանց ընդունեցին չլսված հյուրընկալությամբ: Թոմասին հարկ չեղավ որևէ բան բացատրել: Ղեկավարը՝ ոմն Ահմեդ էլ-Մեդինին, տեսավ վերքը: Փամփուշտը մի տեղից մտել, մյուս կողմից դուրս էր եկել: Վերքը մաքուր էր, ոչ մի կարևոր զարկերակ չէր վնասվել:

- Աստված գթառատ է: Է՛լ-Ուաշ, բախտդ բերել է քո դժբախտության մեջ: Քեզ Աստված է պահպանել: Պետք է անշարժ մնաս մինչև հաջորդ լուսին, որպեսզի ներքին արյունահոսություն չունենաս: Հետո կարող ես գնալ: Ինչ վերաբերում է քեզ, անգլիացի՛, հանուն նրա քո արածով դու մեզ համար դառնում ես յուրային: Զգո՛ւյշ մնա թուրքերից:

Չնայած նախազգուշացումներին՝ Թոմասը որոշեց շարունակել իր ճամփան: Գոտու մեջ պահած ոսկեդրամներ ուներ, որոնցով փորձեց գնել մի ձի ու հրացան, սակայն նրանից փող չվերցրին: Ընդունեց, չէր ուզում ուշացնել իր վերադարձը, քանի որ այդ հինավուրց երկիրը, որը դեռ շատ թե քիչ կայուն էր, արագ գլորվում էր անդունդը, իսկ ինքը պետք է Կարոլինին ու Էթելին հաներ այդտեղից:

Հրաժեշտ տվեց էլ-Ուաշին և իրեն հյուրընկալած արաբներին: Էլ-Ուաշը սաստիկ հուզվեց նրա ձեռքը սեղմելիս, ու երբ Թոմասը ձի հեծավ, շշնջաց. «Թո՛ղ Աստված քեզ միշտ ուղեկից լինի, անգլիացի՛: Միշտ քո տեղը կունենաս մերոնց մեջ: Ու եթե Տերը կամենա, կրկին իրար կտեսնենք»:

Թոմաս Հարդինգն ուղղվեց դեպի Արևելք: Ահմեդ էլ-Մեդինին ասել էր, թե որ վայրերով պետք է անցնի, դեռ երկար ճամփա կար առջևում: Մտրակեց ձիուն՝ ուղղություն վերցնելով դեպի հեռավոր ափը: Ինքն իրեն կշտամբում էր Կարոլինին մենակ թողած լինելու համար, թեև ինքնասփոփանքն այն էր, որ չէր պատկերացրել, թե ամեն բան այդ աստիճան կփոխվի:

Կեսօրին մոտ, երբ հասավ մի կորած գյուղ՝ հազիվ մի քսան կավաշեն, ավազի ու ժայռերի գույներ ունեցող տներով, որոնք ձուլվում էին տեղանքին, դեմը ելավ թուրքական ջոկատը: Նրանք էին, ովքեր իրենց կանգնեցրել էին, և շատ հավանական էր, որ հենց այդ զինվորներն էին կրակել իրենց վրա: Զգաց, թե ինչպես է սիրտը տեղից դուրս թռչում:

Թուրք կապիտանը նրան կանգնեցրեց՝ բարձրացնելով աջ ձեռքը: Գերմանացի սպաները վերջում էին, Թոմասին թվաց, թե նրանք չէին ցանկանում միջամտել: Նրան թույլ չտվեցին, որ անգամ մի խոսք ասի, որևէ բացատրություն տա. ուղղակի ձերբակալեցին: Նրա հետ շատ կոպիտ էին վարվում՝ հրելով այս ու այն կողմ: Այնինչ գերմանացի սպաները, որոշ հեռավորության վրա կանգնած, անտարբեր տեսքով ծխում էին, դա նրանց չէր հուզում:

Թոմասն արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն, անգամ թուրքերեն սովորած մի քանի նախադասություններ արտաբերեց՝ պահանջելով, որ

իրեն տանեն Բեյրութի կամ Դամասկոսի բրիտանական հյուպատոսարան: Հետո նրան ձեռնաշղթա հագցրին ու կապեցին զինվորներից մեկի ձիու պարանից: Ոչինչ չէր կարողանում հասկանալ: Քաղաքականության հետ ինքը ոչ մի աղերս չուներ, ոչ մի խմբակցության չէր պատկանում, օտարերկրացի էր ու, իր կարծիքով, ուներ բոլոր իրավունքները: Շուտով հարցը կպարզվեր, ու իրեն բաց կթողնեին: Ուժասպառ էր, միայն ուզում էր հնարավորինս արագ իր տուն հասնել: Չէր հավատում, թե ինչ է իր հետ կատարվում:

Այդ գիշեր ստիպված անցկացրեց բաց երկնքի ներքո: Ցրտից դողում էր: Նրան անգամ ծածկոց չտվեցին: Հազիվ էր լույսը բացվել, երբ մի թուրք սպա եկավ, ով իր հետ ֆրանսերեն խոսեց: Նրան խիստ հանդիմանեց՝ ասելով, որ մեղադրվում է լրտեսության մեջ, որ ըստ իրենց հավաստի տեղեկությունների՝ նուսայրի արաբների խումբը, որի հետ ճամփա էր ընկել, ապստամբներ էին և Ֆրանսիայի օգտին լրտեսողներ: Վերջում նրան սպառնաց՝ հորդորելով, որ ավելի լավ կլիներ, եթե խոստովաներ նրանց հետ իր կապը, քանզի չեն ուզում անցնել այլ մեթոդների: Թոմասը, այդպիսի մեղադրանքներից զայրացած, պատասխանեց, որ Օքսֆորդի պրոֆեսորներից է և վերադառնում էր Բիբլոսի իր տունը, որտեղ ապրում է իր կնոջ ու դստեր հետ. մի բան, որը կարող էին շատ հեշտ ստուգել: Ասաց, որ Բրիտանիայի քաղաքացի է՝ սպառնալով դիվանագիտական կամ ավելի վատ ընդհարումով: Պնդեց, որ իրեն տանեն գլխավոր հրամանատարի մոտ, սակայն ոչնչի չհասավ: Սպան նրա վրա խորն արհամարհանքով լի մի հայացք ձգեց՝ թողնելով նրան հուսալքված: Դա կատարյալ խելագարություն էր:

Հաջորդ օրը նրան ստիպեցին ձի նստել և ուղղվեցին դեպի հարավարևմուտք: Մի օրից ավելի չէր դիմանա, եթե կապված քայլեր ձիերի հետևից: Լսեց, որ գնում էին Դամասկոս:

Վեց անվերջանալի օր տևեց, մինչև հասան: Ստիպված էր հարմարվել զինվորականների առօրյային: Փորձեց խոսել գերմանացի սպաների հետ, բղավեց գերմաներեն, որպեսզի մոտենան, սակայն՝ ապարդյուն: Նրանք մնում էին առանձին, նրանց ճամբարը հարյուրից հարյուր հիսուն յարդ հեռավորության վրա էին խփում՝ ջոկատի մյուս անդամներից մեկուսացված: Նրանք գերմանական բանակի դիտորդներ էին, ովքեր գրառումներ էին կատարում: Հիշեց երկու կողմերի մեկնաբանությունները. գերմանացի սպաների վարքագիծը նրան ապացուցեց, որ դրանք ճիշտ էին: Գերմանիան և նրա դաշնակիցները դիրքավորվում էին Մերձավոր Արևելքի ռազմավարական գոտիներում: Չգիտեր, թե Ֆրանսիան

ու Մեծ Բրիտանիան անո՞ւմ էին նույն բանը: Գերմանացիները գործում էին արդյունավետ, կազմակերպված, կանխամտածված: Գուցե փորձում էին բացահայտել իրավիճակը, քաջատեղյակ էին թուրքական բանակի և նավատորմիղի հիմնական կարիքներին: Չէին ցանկանում անգիտակ գնալ ավելի քան հնարավոր մի ընդհարման, որին գուցե և երբեք գործը չհասնի, սակայն հակառակ դեպքում այն կսանձազերծվի ահավոր վայրագությամբ:

Թոմասը չէր երկյուղում իր համար, կարծում էր, որ չեն համարձակվի դիպչել իրեն: Բացառությամբ մի քանի հրմշտոցների և ահավոր հոգնածության՝ իրեն ոչինչ չէր եղել. շատ անհանգստացած էր Կարոլինի և Էթելի համար, ուզում էր մտածել, որ նրանց ոչինչ չի պատահի: Իր հետ կատարվածը սխալմունքի, շփոթմունքի հետևանք էր: Գուցե և նուսայրիները թուրքերի համար խնդրահարույց մարդիկ են, սակայն ինքը կասկածելի ոչինչ չէր նկատել ու ոչ էլ մասնակցել էր թուրքերի շահերի դեմ որևէ դավադրության:

Դամասկոս հասնելուն պես նրան տարան ընդհանուր զորանոց, որտեղ հետախուզության սպաներից մեկի առջև ստիպված էր բազմիցս կրկնել նույն բանը, մանրամասն բացատրել այն, ինչ որ արել էր՝ սկսած այն բանից, որ Պետերսոնն էր որոշել, որ ինքը նրան ընկերակցեր: Իմացավ, որ արդեն արգելել էին Սիպպարի պեղումները. Պետերսոնի բոլոր վատ կանխագուշակումները կատարվել էին: Սպան իրավիճակը պարզող մի մեկնաբանություն արեց. «Անգլիացիները Միջագետքում պեղումներ կատարելու իրավունք չունեն: Դրանք մենք պահելու ենք մեր գերմանացի բարեկամների համար»: Ահա թե որն էր բուն հարցը: Թուրքերը վախենում էին, որ բրիտանացի հնագետները տեղեկություններ էին ուղարկում իրենց հետախուզական ծառայություններին, թեև պաշտոնապես ոչ մի հայտարարված ընդհարում գոյություն չուներ Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության միջև, սակայն գերմանացիները թուրքերին թելադրում էին, որ քաղաքականությանը հետևեին այն տեսանկյունից, որ ցանկացած պահի մի բան կարող էր պատահել: Ինչպես այդ խորհրդածությունները, այնպես էլ այն վայրենի վարքագիծը, որին ինքը ներկա էր եղել նուսայրիների սպանության ժամանակ, Թոմասին սաստիկ վախեցնում էին: Այդ ամենից բացի՝ նա նաև հարձակման շատ անհաճո վկա էր:

Հարցաքննությունների երրորդ օրը նրան տեղափոխեցին զինվորական բանտ, և ամեն ինչ վատթարացավ: Հայտնվեց տհաճ արտաքինով մի չերքեզ, ով ո՛չ թուրք էր, ո՛չ էլ գերմանացի, և նրա միակ առաքելու-

թյունը ցանկացած պարագայում հնարավորինս ավելի շատ տեղեկություններ կորզելն էր: Իջան Թոմասի քարե խուցը՝ դարավոր, հնամենի մի վայր, ու նրան մենակ թողեցին այդ անձնավորության հետ, ով նրան հարցրեց, թե արդյոք անգլիացիների լրտեսը չէ: Երբ Թոմասը դարձյալ կրկնեց, որ անգլիացի պրոֆեսոր է և ուսումնասիրում է անտիկ շրջանի պատմություն և ոչ մի առնչություն չունի անգլիական կառավարության գաղտնի ծառայությունների հետ, ծախու մարդասպանը նրան սարսափելի ապտակ հասցրեց: Դա արեց առանց որևէ այլևայլության: Թոմասը հարձակման չէր սպասում. դա նրան հանկարծակիի բերեց: Նրա ականջն ահավոր ցավեց, ծնոտի վրայով արնախառն թքի շիթ էր ծորում: Հարցաքննողը նայեց նրան ու կրկին հարցրեց զզվելի անգլերենով. «Աշխատո՞ւմ ես բրիտանական գաղտնի ծառայությունների համար»: Թոմասը կրկին հրաժարվեց՝ ստանալով ևս մեկ վայրենի ապտակ: Փորձեց հետ գնալ, սակայն հարվածների հեղեղ տեղաց այնքան, մինչև որ կորցրեց գիտակցությունը:

Ուշքի եկավ խցի քարե նստարանին: Օսմանյան բանակի՝ Դամասկոսում գտնվող զինվորական բանտը հաստ պատերով մի հին քարե շինություն էր: Նեղլիկ պատուհանն իր գլխավերևից վեց ոտնաչափ բարձր էր, և հազիվ այնքան լույս էր ընկնում, որ խցում թույլ մշուշ լիներ: Թոմասի դեմքն ահավոր ցավում էր, փորձեց բարձրացնել ձեռքը՝ դեմքը շոշափելու համար, բայց չկարողացավ: Թևը կոտրված էր կամ տեղից դուրս էր ընկել: Բերանում արյան դառնահամ կար, շրթունքներն այտուցված էին, լեզուն շարժելով՝ զգաց, որ մի ատամ է պակասում: Նրան ահավոր ծեծի էին ենթարկել, ուժասպառ էր, փորձեց քնել, սակայն ցավը չթողեց:

Երկու օր անց կրկին ենթարկվեց հարցաքննության: Դաժան վերաբերմունքը հուշում էր, որ ուզում են իր վերջը տալ: Նրան չէր հաջողվելու որևէ մեկին որևէ բան բացատրել: Այդ փաստը նրան վախեցրեց: Թուրքերը ոչ թե ցանկանում էին տեղեկություն կորզել, այլ մտադիր չէին նրան ազատ արձակել:

Այդ մղձավանջը դեռ երկու անգամ էլ կրկնվելու էր: Ավելի լավ էր մահվան գիրկն անցներ, քան այդ ահավոր ցավերին դիմանար: Սակայն հետո ասես մոռացան նրա մասին, ինչը Թոմասին թույլ տվեց քիչ-քիչ վերականգնվել: Նրա ձախ թևը կողքից կախված էր, ու զգալիորեն կաղում էր: Հազիվ տեսնում էր ձախ աչքով: Նրան անտանելի վատ կերակուր էին տալիս: Թերևս մի տասնհինգ կիլոգրամ նիհարել էր, թևերն ու ոտքերը խիստ բարակել էին: Գլուխը ցավում էր, հետևի մասում թարախակալված վերքեր կային:

Մինչ այդ դեպքը Թոմաս Հարդինգն ապրել էր հարմարավետ ու բարեկեցիկ կյանքով: Նրան անգամ խոսքով ոչ ոք չէր վիրավորել՝ բացառությամբ Բիբլոսում գերմանացի սպայի հետ ունեցած անհեթեթ միջադեպից: Ինչ վերաբերում էր թուրքերին, ապա նրանք կարծում էին, որ գործ ունեն լրտեսի հետ: Թերևս հրահանգ էին ստացել, որ նրանից տեղեկություն կորզեն և չէին հանգստանա, մինչև նա չխոստովաներ:

Մի գիշեր, մեկնված իր խցի քարե նստարանին, որը նաև որպես մահճակալ էր ծառայում, մտածեց, որ Կարոլինն ուր որ է պետք է լույս աշխարհ բերեր իր երկրորդ զավակին... Անմխիթար լաց եղավ: Ընկճվեց՝ մտածելով, որ երբեք չի տեսնի այդ մանկանը: Չարչարանքը, որին ենթարկվում էր, նրան հուշում էր, որ եթե ընդուներ մեղադրանքը, գուցե մի բան փոխվեր: Հետո կրկին կասկածեց. այսպես գոնե ողջ է մնում:

Դեռ հազիվ էր լուսացել, ներս մտան մի քանի թուրք սպաներ: Կարբիդային լապտերով էին: Այնքան սպիտակ լույս էր արձակում, որ Թոմասը մի պահ կուրացած մնաց: Թուրքերեն լսեց մի քանի մեկնաբանություններ, մի քանի անկապ շշնջոցներ. անհանգստացած էին իր վիճակով: Չգիտեր, թե պատճառն ինչ էր, ու մտածեց, որ գուցե իրեն տանում են սպանելու: Դա այդքան էլ կարևոր չէր, քանզի նախընտրում էր մեկեն մեռնել, քան շարունակվեր այդ սարսափելի իրավիճակը: Հետո երկու հոգով նրան քարշ տվեցին միջանցքով: Այդ սպաները դարձյալ շշուկով խոսում էին իր վիճակից. կասկածում էին, որ նա կարող է դիմանալ: Նրան տարան մինչև բանտի մուտքը: Այնտեղ տեսավ անգլիացի մի զինվորականի և քաղաքացիական հագուստով ևս երկու հոգու, ովքեր, անկասկած, նույնպես անգլիացիներ էին: Ոչ մի բառ չասվեց: Նրան պարզապես դրեցին մի ավտոմեքենայի մեջ ու շենքի բակից դուրս եկան այնպես, որ ոչ ոք նրանց չկանգնեցներ:

Լսեց, թե իր հայրենակիցներն ինչպես էին իրենց զայրույթն արտահայտում թուրքերի մասին.

- Ինչպիսի՜ բարբարոսություն են թույլ տվել այս մարդու հետ: Այս ի՜նչ վայրենիներ են: Դուք լա՞վ եք, պարո՛ն Հարդինգ:

Դժվարությամբ հասկացրեց, որ՝ այո՛: Նրա ողջ մարմինը ցավում էր, բայց բախտը նրան դարձյալ ժպտալու էր: 1913 թվականի ապրիլի 17-ն էր:

Նրան տարան Մեծ Բրիտանիայի հյուպատոսարան: Այնտեղ նրան ընդունեց զինվորական բժիշկը՝ հրամանատար Ջեյմս Ստյուարտը, ով բացասաբար շարժեց գլուխը՝ ասես կասկածելով նրա ապաքինման հնարավորություններին: Որպեսզի հաստատեր իրականությունը, բժիշ-

կը Թոմասի վիճակը բարձրաձայն գնահատեց այն մարդկանց ներկայությամբ, ովքեր նրան բերել էին մինչև այդտեղ:

- Լավ,- ասաց վերջում,- պարոն Հարդինգի ընդհանուր վիճակը մտահոգիչ է: Ձախ թևը կոտրված է և հավանաբար մի քանի շաբաթ առաջ տեղից դուրս ընկած: Չգիտեմ՝ կկարողանա՞նք նրան օգնել, որ վերականգնի իր շարժողական ֆունկցիան: Նրա մի քանի կողոսկրերը կոտրված են: Քաշել-հանել են ձախ ոտքի եղունգները: Առայժմ, իմ կարծիքով, այլ կոտրվածքներ չկան: Արյուն է կորցրել: Ձախ ականջի թմբկաթաղանթը ծակված է: Ամբողջ մարմնով մեկ կան բազմաթիվ քերծվածքներ ու հարվածների հետքեր: Հնարավոր է, որ անբավարար սննդի հետևանքով ունենա ստամոքսի խոց: Նրա վիճակն ինձ հուշում է, որ անհապաղ պետք է տեղափոխվի հիվանդանոց: Հուսանք, որ կկարողանա ապաքինվել: Տեսել եմ նման դեպքեր, և այս պարագայում ամեն ինչ կախված է նրա ներքին ուժից, ասենք, ապրելու իր ցանկությունից: Մի բան ակնհայտ է, որ մի քանի օր ուշացնելու դեպքում թերևս ոտքի չէր կանգնի: Հաստատ:

Ահավոր ջանք գործադրելուց հետո Թոմասը հարցրեց իր կնոջ ու դստեր մասին: Նրան ասացին, որ ոչինչ չգիտեն, սակայն խոստացան, որ կհետաքրքրվեն: Տեսնելով նրա՝ այդ աստիճան հյուծված վիճակը՝ որոշեցին չտեղափոխել. բժիշկ Ստյուարտի խնամքի ներքո կմնար տեղում՝ հյուպատոսարանում: Այդտեղ նա գոնե հսկողության ներքո կլիներ, և կհետևեին նրա սնվելուն:

Մեկ ամսից ավելի տևեց, մինչև որ նա մի փոքր կազդուրվեց: Մայիսի վերջերին Ստյուարտը, որ բացի արտասովոր բժիշկ լինելուց՝ նաև մարդկային հոգու մեծ գիտակ էր, Թոմասին հավաստիացրեց, որ դրական տեղաշարժ կունենա: Կոտրվածքը վիրահատելուց և ուղղելուց հետո կամաց-կամաց վերականգնվում էր թևի շարժումը, սակայն ակնհայտորեն որոշ հետքեր մնալու էին: Ամեն օր հարցնում էր Կարոլինի մասին, սակայն թվում էր, թե ոչ ոք ի վիճակի չէ պատասխանել նրան: Ասես ինչ-որ բան էին նրանից թաքցնում, և դա նրան ահավոր անձկության էր մատնում:

Նրան բացատրեցին, որ թուրքերն իր դեմ ոչ մի ապացույց չունեին: Բեյրութում անգլիական հյուպատոսն իրավիճակի մասին տեղեկացրել էր Կահիրեում գտնվող Բարձրագույն կոմիսարին, ով հրամայել էր, որ Թոմասին բանտից ողջ հանեն, ինչպես նաև թուրք զինվորականների այն երաշխիքով, որ նրա դեմ մեղադրանքներ չեն հարուցվի: Իրականում նրան խոստովանեցին, որ իրենց հերթին անգլիացիներն ազատ էին արձակել թուրք երկու կարևոր քաղաքացիների, որոնց կասկածում

էին լրտեսության մեջ. «Quid pro quod»[18]: Որոշ ժամանակ պետք է զգույշ լիներ, քանզի անգլիացիներն այլևս ցանկալի անձ չէին Օսմանյան կայսրությունում:

Մի առավոտ եկավ Ավգուստուս Նյումանը, ով մեծ հավատ ուներ իր ընկերոջ նկատմամբ: Նա նստեց Թոմասի կողքին ու ասաց, որ շատ բաներ ունի նրան պատմելու: Թոմասը նկատեց, որ Ավգուստուսն անհանգստությամբ զննում է իրեն, և ուղղակիորեն հարցրեց.

- Մի բան գիտե՞ս Կարոլինի մասին: Այն զգացողությունն ունեմ, որ ոչ ոք չի ուզում ասել, թե որտեղ է նա: Խնդրում եմ, Ավգուստո՛ւս...

Նյումանը նախքան նրան պատասխանելը թույլ հառաչեց.

- Թոմա՛ս: Կարծում եմ, որ եկել է ժամանակը, որ իմանաս իրադրությունը: Կարոլինը և Էթելը Բիբլոսի ձեր տնից անհետացան քո ձերբակալվելուց մի քանի օր անց: Այնտեղ չէր նաև Բաքերը: Ինչ-որ մեկը... Առայժմ չենք կարող հաստատ իմանալ, թե ովքեր են գնացել այնտեղ և ամեն ինչ տակնուվրա արել: Իրենց հետ տարել են քո գրքերը, թղթերը, ամեն փաստաթուղթ, ջարդուփշուր արել կահույքը, ասես ցանկացել են ինչ-որ թաքցրած բան գտնել՝ համոզված լինելով, որ դու մեր կառավարության համար իրոք լրտեսությամբ ես զբաղվել: Դու և ես գիտենք, որ դա ճիշտ չէ, սակայն նրանք բոլորովին հակառակն են կարծել: Պետք է իմանաս, որ քեզ գտանք ոմն էլ-Ուաշի շնորհիվ, ով վիրավորվել էր թուրք զինվորականների հարձակումներից մեկի ժամանակ: Երբ մի փոքր կազդուրվել էր, գնացել էր Բիբլոս և այնտեղ ասել, որ ձի նստած՝ հեռացել ես: Ինչ-որ մեկն ընկել է հետքիդ վրա: Այդ գործում նրանք շատ ճարպիկ են, ու ողջ նահանգով մեկ լուր է տարածվել, որ թուրքերը բռնել են մի անգլիացու:

Թոմասը չէր կարողանում հավատալ իր լսածին: Հուզմունքից խզված ձայնով հարցրեց իր բարեկամին.

- Ուզում ես ասել, որ անհետացե՞լ են, որ չգիտենք, թե նրանց հետ ի՞նչ է պատահել... Դա անհնարին է: Հավանաբար Կարոլինը, որ մոտ էր ծննդաբերելուն, որոշել է գնալ Բեյրութ... այնտեղ բժշկական ավելի լավ օգնություն ունենալու համար: Անիծված բախտ... Ավգուստո՛ւս, Բեյրութում որևէ մեկը հետաքրքրվել է՝ իմանալու համար, թե եղե՞լ են այնտեղ:

Նյումանը հասկանում էր Թոմասի կսկիծը, սակայն չէր ուզում, որ նա տարվեր կեղծ պատրանքներով:

- Թոմա՛ս, խոսել ենք Բեյրութում գտնվող եվրոպացի բոլոր հյուպա-

[18] «Ծառայություն ծառայության դիմաց»:

տոսների հետ: Ոչ ոք Կարոլինի մասին ոչինչ չգիտի: Կարծես նա գոլորշիացած լինի: Ոչ մի չնչին հետք: Համոզված ենք, որ եթե որոշել էր դուրս գալ երկրից, նստել Բեյրութ գնացող նավերից մեկը, ապա այդ մասին կասեր, կամ որևէ հետք մնացած կլիներ: Դարձյալ կրկնում եմ, որ ոչինչ հայտնի չէ ո՛չ նրանից, ո՛չ էլ ձեր դստերից: Սակայն հանգստացի՛ր: Շուտով կհայտնվի: Հավատա՛ ինձ, թուրքերը չէին համարձակվի նրան առևանգել, դա անհնարին է: Նրանց հետ մեր դիվանագիտական հարաբերությունները շատ սառն են, կարելի է ասել, որ վատ են... Սակայն հավատս չի գալիս, որ բռնեն կամ առևանգեն մի անգլուհու և նրա դստերը:

Թոմասն արդեն այն մարդն էր, որ հավատում էր դրան: Նա ինքը թուրքերի դեմ ոչինչ չէր արել, այնուամենայնիվ մեղադրվեց Մեծ Բրիտանիայի օգտին լրտեսություն անելու համար, և մի մազ էր մնում, որ ավանդեր հոգին: Իսկ Ավգուստուսը դեռ ասում է... Նրանց գտնելու համար Թոմասն իրեն անկարող էր զգում: Հուզմունքից խզված ձայնով դիմեց Ավգուստուսին.

- Ի՞նչ կարող ենք անել: Ավգուստո՛ւս, չգիտեմ անգամ՝ որտեղից սկսել... Գուցե Կարոլինը լքել է երկիրը... Ամեն օր նոր խնդիրներ, և ակնհայտ է, որ թուրքերի կողմից անքաքույց թշնամանք կա բրիտանացիների հանդեպ: Ես դա անձամբ եմ զգացել: Օ՜հ, չգիտեմ, թե ինչ մտածեմ, շատ երկյուղած եմ:

Ավգուստուս Նյումանը, ում դեմքին անհանգստության դառը ժպիտ կար, նույնպես երկյուղած էր: Նա իր անձնական վարկածն ուներ այդ իրադարձությունների առթիվ, սակայն ոչ մի կերպ դրանք չէր կիսի իր բարեկամի հետ:

Ինչպե՞ս ասեր նրան, որ թուրքերը գուցե և սպանել են Կարոլինին ու Էթելին: Չէ՞ որ անգլիացիների նկատմամբ արդեն իսկ անքաքույց էր թշնամանքը, ու Բարձր դռան կառավարությունը բրիտանացիներին խորհուրդ էր տալիս, որ հնարավորինս շուտ լքեն Օսմանյան կայսրությունը: Ոչ ոք չգիտեր, թե ցանկացած պահի ինչ կարող էր տեղի ունենալ: Թուրքիայի և Իտալիայի միջև պատերազմը բացել էր Պանդորայի արկղը: Իտալացիները տիրացել էին Տրիպոլիտանիային ու Կիրենաիկային, իսկ թուրքերն ընդամենը բավարարվում էին սպառնալով: Ընդ որում՝ Ֆրանսիան ու Ռուսաստանը սատարում էին Իտալիային:

Բրիտանական հետախուզության գաղտնի տեղեկությունները վկայում էին թուրքական բանակի անմարտունակության մասին: Նրանց ամենաընտրյալ զորագնդերը միայն պատրաստ էին Կոստանդնուպոլսի պողոտաներով շքերթ անցկացնելու համար: Ի՞նչ էր պատահել այն

կոփված ու վայրենի թուրք ռազմիկներին, ովքեր դարեր շարունակ ահ ու դողի մեջ էին պահում Եվրոպային:

Ավգուստուս Նյումանը, ըստ բրիտանական հետախուզական ծառայությունում իր ունեցած դիրքի, ճիշտ էր գնահատում իրականությունը: Երիտթուրքերի պետական հեղաշրջումը չէր կարող փոխել պատմական գործընթացը: Օսմանյան կայսրությունը կաթվածահար էր եղել: Արտաքին պարտքը կլանում էր Բարձր դռան ֆինանսները, իսկ կայսրության պաշտոնյաները կարող էին ապրել միայն կոռուպցիայի հաշվին: Թուրքական բանակում ընդունված էր, որ զինվորներն ապրեն ալան-թալանով և իրենց տներից ուղարկված գումարով, իսկ սպաները՝ կաշառքով ու ապառիկով: Բանակի սպառազինությունը՝ հին ու շարքից դուրս եկած, ոչ մի ընդհարման չէր դիմանա. այն, ինչ գալիս էր Գերմանիայից՝ կայսրի բանակի հնոտիքը, շատ ավելի ժամանակակից էր, քան թուրքերի ունեցածը:

Այդ ամենին քաջատեղյակ էին անգլիացիները, որոնց գաղտնի ծառայությունները թափանցել էին թուրքական բանակի բոլոր շերտերը: Ավգուստուսը նոր էր վերադարձել Սալոնիկից, որտեղ և անձամբ համոզվել էր դրանում: Այնտեղ պարզել էր, թե իրականում ով է Թալեաթը՝ «Իթթիհադի» կառավարության առաջին նախարարը, և նրա կողմնակիցները՝ Էնվերն ու Ջեմալը: Այդ եռյակն իր՝ մի երկու տարի առաջ Սալոնիկի համաժողովում հրապարակած խոստումներից և ոչ մեկը չի կատարելու: Նյումանը հանդիպում էր ունեցել Բեհաեդդին Շաքիրի հետ: Վերջինս, չնայած որոշումների քննարկումները գաղտնի պահելու երդումին, նրան պարզորոշ պատմել էր իրենց ծրագրերի մասին՝ համոզված լինելով, որ Ավգուստուս Նյումանն ավստրիական գաղտնի ծառայությունների անդամ է, ով շատ շռայլ է իր իրազեկիչների նկատմամբ:

Առանց ամոթի որևէ նշույլի՝ Բեհաեդդինը նրան ասել էր, որ հիմնական գաղափարը հայերից մեկընդմիշտ ազատվելն է: Նյումանը հարցրել է, թե արդյոք նրանց տեղահանելու են: «Այո՛,- չարախինդ ժպիտով պատասխանել է Շաքիրը,- տեղահանելու ենք... դժոխք: Եվրոպայի աչքի առաջ կլինի մարդկանց ապրելավայրի փոփոխություն: Ասենք, նրանց կտանենք Միջագետքի որևէ տարածք, որևէ բերրի նահանգ, որտեղ նրանք ամեն ինչ նորից կսկսեն... Նպատակը նրանց ոչնչացնելն է: Սպանել նրանց... Մեկընդմիշտ վերացնել... Պարզապես ժխտել ակնհայտը... Երբ մեզ հարցնեն, կասենք, որ այնտեղից գնացել են... Հարավային Ամերիկա: Հետո ամեն ինչ կմոռացվի, իսկ մենք՝ թուրքերս, շատ ավելի լավ կլինենք առանց այդ անիծյալ հայերի, ովքեր երբեք

չցանկացան թրքանալ: Նրանց պատճառով Եվրոպան միշտ իր քիթը խոթել է մեր քաղաքականության մեջ՝ առանց մեզ հանգիստ թողնելու»:

Ավգուստուս Նյումանը նրա հետ բաժակ էր բարձրացրել՝ հանուն այդ ամենի իրագործման: Բեհաեդդին Շաքիրը տեղեկատվության անհատակ հոր էր, բացի դրանից՝ կարևոր անձ էր կուսակցությունում, «Միություն և առաջադիմություն» գաղտնի կոմիտեում: Եվ Նյումանը նրանց շարքերն էր թափանցել, որպեսզի իմանար երիտթուրքերի հետագա գործողությունների մասին: Այդ առաքելությունն էր նրան հասցրել մինչև այդտեղ, նա երկար էր դրան նախապատրաստվել: Շաքիրը սնապարծ, իշխանության ու փողի ծարավ մարդ էր: Նյումանն էլ իր տրամադրության ներքո ուներ այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նրա բարեկամը դառնալու համար, թեև Շաքիրը երբեք չի իմացել, թե ինչ է բարեկամությունը: Նյումանը հասել էր իր նպատակին: Շաքիրը նրան պատմել էր բոլորի և հատկապես նրանց մասին, ովքեր կոմիտեի կազմում էին. Ահմեդ Նեսիմի մասին, ով զբաղեցնում էր էկոնոմիկայի նախարարի պաշտոնը և թաքցնում որոշ անհրապարակելի գաղտնիքներ, Նազըմ բեյի մասին, ով, ըստ տարածված շշուկների, ինչ-որ գաղտնի թելերից է քաշում, մի անգութ մարդ, որ ատում էր կայսրության քրիստոնյաներին ու մանավանդ հայերին, Բեդրի բեյի՝ ոստիկանության պետի, Հայրի բեյի՝ շեյխ-էլ-իսլամի և «Իթթիհադին» ղեկավարող կոմիտեում ընդգրկված մյուս անդամների մասին: Բոլորն էլ համաձայն էին, որ պետք է ոչնչացնել հայերին: Դա էր քաղաքական առաջնահերթությունը, պետք էր նրանց գետնի երեսից վերացնեին, իսկ հետո ժխտեին կատարվածը: Ժխտել, միշտ ժխտել՝ ապակողմնորոշելով նրանց, ովքեր մտահոգ էին հայերի ճակատագրով: Եթե որևէ վայրում սպանդն ակնհայտ լիներ, պարզապես կասեին, որ հայերն ապստամբել են զենքով, և զոհվածների մարմինները ոչ թե հայերինն են, այլ թուրքերինը, նույնիսկ՝ քրդերինը: Շաքիրը համոզված էր, որ այդ ռազմավարության շնորհիվ իրենք կազատվեն կայսրության ներքին թշնամիներից: Նյումանը ստիպված էր եղել կաշվից դուրս գալ, որպեսզի Բեհաեդդին Շաքիրին ապացուցեր, որ կիսում է նրանց գաղափարները, որ ինքն ու Շաքիրը շատ նման են իրար: Նյումանը նրան տվել էր բավականին մեծ գումարներ՝ դրանք փոխանցելով գաղտնի հաշվեհամարներին, որոնք Բեհաեդդինն ուներ Բեռլինի «Դոյչե բանկում» և Վիեննայում: Այդ մարդը սրիկա էր և մարդասպան: Մի՞թե գերմանացիները գլխի չէին ընկել: Նյումանը չէր հասկանում, թե հրաշալի իրազեկված լինելով հանդերձ՝ ինչպե՞ս էին շարունակում համագործակցել նրա հետ: Այդ ի՞նչ կարգի մարդիկ էին ղեկավարում

պրուսական տեղեկատվության ծառայությունները: Նա խոսակցություն ունեցավ Վանենհեյմի՝ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի հետ և տհաճ անակնկալի եկավ. այդ մարդը քաջատեղյակ էր թուրքերի ծրագրին՝ սպանել Օսմանյան կայսրության բոլոր հայերին: Այդուհանդերձ, աչքն անգամ չթարթեց: Այնքան անհավատալի էր, որ ցանկացավ համոզվել դրանում: Ուղևորվեց Բեռլին: Այնտեղ գործի դրեց իր կապերը: Գերմանիայի դեսպանն այդ ծրագրին անձամբ չէր առնչվում. դա ծրագրված գաղտնի դավադրություն էր, որին հավանություն էին տվել Բեռլինում. քրիստոնյա հայերը տեղ չունեին Գերմանիայի հեռահար ծրագրերում:

Նյումանը նույնպես խորապես անհանգստացած էր Կարոլինի անհետացմամբ: Վերջին տարիներին Թոմասին ու Կարոլինին համարում էր իր լավագույն բարեկամները: Առաջին հերթին նա Դամասկոսում ու Բեյրութում գործող Մեծ Բրիտանիայի հյուպատոսարաններին հանձնարարեց, որ պահանջեն առկա ողջ տեղեկատվությունը: Նույնն արեց Կոստանդնուպոլսում, ինչպես նաև Բեհաեդդին Շաքիրի միջոցով հասավ անգամ Բեդրի բեյին՝ ոստիկանության պետին: Պարզվեց, որ Բեդրի բեյն այդ ժամանակ գտնվում էր Սիրիայի վիլայեթում, ու Նյումանին հաջողվեց նրա հետ հանդիպել Դամասկոսում: Թոմասին առաջարկեց ուղեկցել իրեն, բայց թույլ չտվեց, որ մասնակցի հանդիպմանը: Վախեցավ, որ նրա նյարդերը տեղի կտան, ու նա թուրքերին կմեղադրի իր կնոջն առևանգելու մեջ. մի բան, որը դեռ պետք էր ապացուցել:

Հանդիպումը տեղի ունեցավ Դամասկոսում՝ Ավստրիայի հյուպատոսի առանձնատանը: Վերջինս համոզված էր, որ Նյումանն աշխատում է իրենց օգտին, թեև նրան կարգադրել էին հարցեր չտալ, բայց՝ օգնել, ինչով կարող էր: Ժամանակավոր հյուպատոսը՝ Հելմուտ ֆոն Շտաուֆբերգը, հստակորեն չգիտեր այդ հանդիպման առիթը, սակայն այն կազմակերպելու և Նյումանին հնարավորինս աջակցելու վերաբերյալ հրահանգ էր ստացել Կոստանդնուպոլսից: Թոմասին հաջողվեց ներկա գտնվել հանդիպմանը՝ մեծ դահլիճի վերին մասում կախված փայտե շերտավարագույրի հետևում թաքնված, որն այդ հսկա տան կենտրոնից կրկնակի բարձր էր: Նա իր ընկերոջը խոստացավ, որ չի մատնի իր ներկայությունը: Հակառակ դեպքում այն ամենը, ինչ Նյումանին հաջողվում էր անել բրիտանական հետախուզության ծառայությունների համար, կհավասարվեր հողին:

Բեդրի բեյը կլիներ քառասունհինգին մոտ տղամարդ՝ գեր, հաստ բեղով, նոսր մազերը պրուսական ոճով կտրված, ոսկեզօծ շրջանակ ունե-

ցող ակնոցով, որոնց նմանը Թոմասը տեսել էր Բեռլինում: Նա Բեդրի բեյի բոլոր ասածները լսում էր դահլիճի ակուստիկայի շնորհիվ. այդ մասին հյուպատոսը նրան սիրալիրությամբ ասել էր հանդիպումից առաջ:

Երաժիշտները տեղավորվում էին այնտեղ, որտեղից երաժշտությունն ավելի լավ էր տարածվում, որտեղից կարելի էր նաև ականջ դնել ցանկացած խոսակցության: Ասում են, որ այդտեղ թաքնվում էին կանայք, որպեսզի լսեն, թե տղամարդիկ ինչ են խոսում հավաքույթներին:

Բեդրի բեյը շատ համառ, խորամանկ ու դաժան մարդ էր: Նրա ձեռքը չէր դողում, երբ հրամայում էր վերացնել սրան կամ նրան, կամ էլ որևէ կասկածյալի լլկանքի ենթարկել: Նա կոմիտեի՝ Սալոնիկում անցկացված գաղտնի ժողովների ընթացքում հայտնել էր իր կարծիքն այն մասին, թե որն էր հայոց հարցը լուծելու լավագույն ուղին: Թոմասն անտեղյակ էր, որ այդ մարդն էր իրեն ձերբակալելու ու տանջելու հրամաններ տվել, քանի որ Բիբլոսի մոտ գտնվող մարոնական մենաստան կատարած իր այցից սկսած ինքը կասկածի տեղիք էր տվել: Պետերսոնի, ում առումով համոզված էին, որ անգլիական գործակալ էր, ընկերակցությամբ կայացած այդ այցն էլ թուրքերին մղեց վճռական քայլերի: Դա վտանգավոր էր, սակայն ցանկանում էին Մեծ Բրիտանիային պարզ նախազգուշացում անել: Անորոշությունն ավարտվել էր:

Նյումանն անձամբ ծանոթ չէր Բեդրի բեյին, թեև կարող էր մի ընդարձակ հաշվետվություն գրել՝ հիմնվելով այն ամենի վրա, ինչ լսել էր Շաքիրից:

Բեդրի բեյը հյուպատոսարան հասավ երեկոյան ժամը հինգին մոտ: Նրան հրավիրել էին թեյի: Դամասկոսում նրա ներկայությունը կապված էր պաղեստինյան հրեաների առաջնորդի հետ անցկացվելիք ժողովի հետ, քանի որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեին անհրաժեշտ էր ծանրութեթև անել սիոնիստների խոստումները: Նա ծանոթ էր հրեական բազմաթիվ գաղութների հետ, կապեր ուներ Հայֆայում, Սեն Ժան դ'Ակրում, Երուսաղեմում, ինչպես նաև Բեյրութում, Դամասկոսում և այլուր: Այդ ժողովը, որ գումարվելու էր ավստրիական հյուպատոսարանում, առայժմ պաշտոնական գաղտնիք էր, թեև տեղեկատվության որոշ մասը Նյումանը կորզում էր Դամասկոսում գործող արաբական գաղտնի և երկու ամենակարևոր միություններից: Այդ ժողովի անցկացումը բխում էր գերմանացիների ու թուրքերի ընդհանուր շահերից, ովքեր արաբներին նույնպես խոչընդոտ էին համարում իրենց ռազմավարության վերջնական իրագործման ճանապարհին, ըստ որի՝ Գերմանիան պետք է տիրեր Մերձավոր Արևելքին՝ մինչև Բաղդադ: Այդ

ռազմավարության կապակցությամբ Բեռլինում տեղի ունեցած մի քանի գաղտնի ժողովներում արդեն ընդունվել էին որոշումներ, որոնք արժանացել էին կայսեր հավանությանը:

Հյուպատոսը ներկայացրեց Ավգուստուս Նյումանին: Թոմաս Հարդինգն այդ միջոցին, փայտե շերտավարագույրի հետևում՝ մթության մեջ նստած, անշարժ լսում էր՝ փորձելով աչքերը չթարթել: Հյուպատոսի՝ հյուրերին միմյանց ներկայացնելուց հետո սպասավորը Ցեյլոնի լավագույն թեյ լցրեց ավստրո-հունգարական զինանշանով ճենապակյա գավաթների մեջ:

Նյումանն անկեղծության դիմակի ներքո սկսեց պատմել կոմիտեի մի քանի անդամների, այդ թվում՝ Ջեմալ փաշայի հետ ունեցած իր հրաշալի հարաբերությունների մասին, ում գիտեր դեռևս այն տարիներից, երբ նա Սիրիայի և Պաղեստինի կառավարիչն էր: Նրա խոսքերը մեծ տպավորություն էին գործում Բեդրի բեյի վրա, ով փորձում էր պատմել իր «սխրագործությունների» մասին: Դեռ հանդիպումից առաջ Նյումանը Թոմասին ասել էր, որ դահիճները միշտ էլ ձգտում են անհամեստ լինել: Իրավացի էր:

- Իհարկե, ցանկանում ենք ազատվել հայերից: Ներեցե՛ք արտահայտությանս համար, բայց մեզ համար հայերը նույնն են, ինչ պզուկը՝ հետույքին: Մենք այդ նպատակով որոշ բաներ ձեռնարկել ենք: Այսպես՝ սկզբում կմիավորենք մեր պետության բոլոր դատապարտյալներին, ու նրանք իրենց վրա կվերցնեն ողջ կեղտոտ գործը: Իրենք՝ հայերը, շատ անջատ են իրարից. դա նույնպես հեշտացնում է գործը: Բախտներս բերել է այդ յուրատեսակ բնութագրի տեր ժողովրդի հետ: Ամեն հայ իր տեսակետն ունի, ընդհանուր ոչ մի ռազմավարության կարիք չի եղել: Նրանք բաժան-բաժան են, իրար ատում են, ամեն րոպե ստեղծում են իրենց անձնական կազմակերպությունները, ու պարզ է, որ մեզ համար միանգամայն հեշտ կլինի: Բաժանի՛ր ու կտիրես… նրանք էլ հենց դա են անում: Եվրոպայում էլ միաբան չեն, չեմ կարծում, որ երբևէ միաբան էլ լինեն, զուտ աղաղակներ են, ինչ վերաբերում է ռուսներին, նրանք ուզում են ձեռք բերել տարածքային ռազմավարական առավելություններ: Հայերը նրանց բացարձակապես չեն հետաքրքրում և նրանց ինչի՞ն են պետք:

Նյումանը նրան հարցրեց, թե կարող էր իրեն օգնել մի հարցում. նրան հասե՞լ էր Բիբլոսում մի բրիտանացի կնոջ ու նրա դստեր անհետացման մասին տեղեկությունը: Բեդրի բեյն անգամ աչքը չթարթեց՝ դանդաղ կում անելով թեյը: Այդ հարցով նա չէր կարող օգնել: Ոչ մի հստակ բան չգի-

տեր: Նրա ականջին միայն հասել էր այն, որ մի անգլուհի, ով ապրում էր Բիբլոսում, անհետացել է: Գուցե գնացե՞լ է Երուսաղեմ: Լուր ուներ, թե մի պահակախումբ հայտնել էր, որ մի անգլուհի ավելի քան մեկ ամիս առաջ ուղևորվում էր այդ քաղաքը: Կասկած կար, որ այդ կինն ինչ-որ բան էր թաքցնում, քանզի նա մի բրիտանացու կին էր, ում կասկածում էին ընդդիմադիր արաբներին աջակցելու մեջ:

Այդ խոսակցությունը լսելու ընթացքում Թոմասը տեղից դուրս գալու ու Բեդրի բեյից ճշմարտությունը կորզելու ուժգին ցանկություն ունեցավ, բայց իր բարեկամին խոստացել էր, որ լուռ ու հանգիստ կմնա՝ առանց իր ներկայությունը մատնելու: Հակառակ դեպքում ամեն ինչ կձախողվեր:

Բեդրի բեյը շարունակում էր վատաբանել արաբներին, ովքեր նույնպես դեմ էին թուրքական կառավարության խաղին.

- Չէ՞ որ մեզ նման մուսուլմաններ են... Այդուհանդերձ, այդ քոսոտ շները ծախվել են անգլիացիներին: Երբ ժամանակը գա, նրանց հախից կգանք:

Նրանից այլ տեղեկություն իմանալու հնար չեղավ: Նյումանը հանգեց այն եզրակացությանը, որ նա կա՛մ ավելին չգիտեր, կա՛մ ինչ-որ բան էր կասկածում: Երբ հանդիպումը մոտեցավ ավարտին, Բեդրի բեյը, վատաբանելով հայերին և առանց անդրադառնալու անգլիացի կնոջը, դուրս եկավ ավստրիական հյուպատոսարանից: Ինչ վերաբերում էր ավստրիական հյուպատոսին, ապա նրանց հրաժեշտ տվեց՝ համոզված լինելով, որ Նյումանը Կլաուս Կրամերն էր՝ Մերձավոր Արևելքում Ավստրիական կայսրության հետախուզական ծառայության տնօրենը, իսկ Թոմասը՝ նրա տեղակալը: Հրաման էր տրված՝ այդ հարցի շուրջ ոչ մի մեկնաբանություն չանել, այլ՝ պարզապես մոռանալ:

Նյումանին հարկ եղավ մեծ ջանքեր գործադրել, որպեսզի Թոմաս Հարդինգին համոզեր, որ հնարավորինս շուտ վերադառնա Անգլիա: Նրան հավաստիացրեց, որ իրենք կփնտրեն Կարոլինին ու նրանց դստերը: Լիբանանում Թոմասի ներկայությունն այդ ժամանակ անցանկալի էր:

Թոմասը համաձայնեց գնալ Կիպրոս և այնտեղ մնալ որոշ ժամանակ: Մեկ շաբաթ անց նա նավից իջավ Ամախոստոսում, որտեղ՝ «Ֆամագոստա» հյուրանոցում, սենյակ վարձեց: Իր լավագույն բարեկամին խոստացել էր հեռու մնալ ամեն ինչից, թեև ինքն այլ կերպ էր մտածում. մտադիր չէր ընդունել այն կարծիքը, ինչ բոլորն անվանում էին դաժան իրականություն:

8. ՈՐՈՆՈՒՄԸ
ՍԱՅԻՍ - ՕԳՈՍՏՈՍ, 1913թ.

Մի հին ու քարուքանդ կառքով Թոմասն ուղևորվեց Լիմասոլ: Ճանապարհը, որով հանդիպակաց կառք չէր կարող անցնել, փոշոտ էր ու վտանգավոր: Երբ արդեն Լիմասոլում էր, որն իրեն հիշեցնում էր Բեյրութը, գնաց փնտրելու ֆրանսիացի հյուպատոսին՝ Պոլ Կասսելին, ով ավելի քան քսանհինգ տարի առաջ իր հոր հետ բարեկամական հարաբերություններ ուներ: Կարող էր վստահել նրան՝ համոզված լինելով, որ նրա առումով երբեք չէր սխալվի: Դեռևս 1909 թվականի հոկտեմբերին, երբ ինքն Անգլիայից ուղևորվում էր Բեյրութ, Կասսելն այցելեց իրեն ու ասաց, որ նրա տրամադրության ներքո է: Նա շատ շփվող մարդ էր՝ սրտագին և համակրելի, իր շարժուձևում փոքր-ինչ չհղկված, լավ գինու սիրահար, ինչին ի վիճակի չէր դիմադրել: Երբ Թոմասը ներկայացավ հյուպատոսարան, Կասսելը նրան գրկեց հարազատ որդու պես: Թոմասը նրան պատմեց այն ամենը, ինչ տեղի էր ունեցել վերջին տարիներին՝ չկարողանալով զսպել արցունքները, երբ խոսքը վերաբերում էր Կարոլինին կամ Էթելին: Պոլ Կասսելը նրան նայում էր հուզմունքով:

- Ուրեմն՝ ի՞նչ, քո կարծիքով՝ որտե՞ղ են գտնվում քո կինն ու դուստրը: Այդ թուրքերն անհասկանալի մարդիկ են, բայց ինչ-որ ինձ ես պատմում, հավատս չի գալիս: Կոստանդնուպոլսում ոչ ոքի չե՞ս ճանաչում: Ուզում եմ ասել՝ նոր կառավարությունից որևէ խոշոր ձկան, որ քեզ մի բան ասեր: Ի՞նչ կարող եմ անել քեզ համար:

Թոմասը հստակ գիտեր, թե Կասսելն ինչով կարող էր օգնել իրեն ու առանց հապաղելու պատասխանեց:

- Ինձ հարկավոր է ֆրանսիական մի անձնագիր՝ ցանկացած անունով, որ կարողանամ վերադառնալ այնտեղ: Պետք է փոխեմ իմ ինքնությունը, դառնամ մեկ այլ անձ: Միայն այդ դեպքում ընտանիքս գտնելու որևէ հնարավորություն կունենամ: Կօգնե՞ս ինձ այդ գործում:

Պոլ Կասսելը մեծ հնարավորությունների տեր մարդ էր: Շատ բաներով էր պարտական Հարդինգներին, ովքեր միշտ էլ մեծահոգաբար էին վարվել իր հետ: Չտատանվեց.

- Իհարկե՝ այո՛: Բախտդ բերել է: Մի քանի օր առաջ ծովը քշեց, ափ բերեց մի նավակ: Ֆրանսիացիներ էին, և այդ պատճառով էլ ինձ անմիջապես կանչեցին: Բոլորը մահացել էին՝ բացի մեկից, ով դեռ գտնվում է հիվանդանոցում: Նրանցից մեկը՝ ոմն Ֆրանսուա Վորան, պետք է, որ քո տարիքին լիներ: Իմ կարծիքով՝ դա Ջաֆֆա կամ գուցե Ալեքսանդրիա

գնացող մի փոքրիկ առագաստանավ էր: Հավանաբար մոլորվել էին ծովում: Նրանց հողին հանձնեցինք մի շաբաթ առաջ, և ինձ մոտ են նրանց անձնագրերը: Դու հենց նոր դարձար Ֆրանսուա Վոբան՝ ծագումով Բրեստից, առանց ստույգ մասնագիտության: Ամեն ինչ տեղը տեղին է: Սպասի՛ր, այստեղ է, վերցրո՛ւ և օգտագործի՛ր: Բնականաբար, ես ոչինչ չգիտեմ: Այդ անձնագրով դու միշտ կարող ես դիմել Բեյրութում գործող ֆրանսիական դեսպանատուն: Բախտդ բերել է, որ հրաշալի ֆրանսերեն ես խոսում, երեք տարի Փարիզում ես, չէ՞, ապրել: Խեղճ Վոբանի մտքով չէր էլ անցնի, որ իրեն կյանքի կոչելու ևս մի հնարավորություն կտրվի: Վաղը՝ լուսաբացին, մի առագաստանավ է գնալու Հայֆա, ես ճանաչում եմ տիրոջը: Լա՞վ է:

Միմյանց հրաժեշտ տվեցին ողջագուրվելով: Այնուհետև Թոմասը ճարեց ոսկեզօծ շրջանակով ոչ օպտիկական ակնոց և ուղղվեց վարսավիրի մոտ՝ գլուխը սափրելու: Մի քանի օր էր, ինչ երեսը չէր սափրում ու գոհունակորեն համոզվեց, որ իր արտաքինը բավականաչափ փոխվել էր, ու առաջին հայացքից իրեն հնարավոր չէր լինի ճանաչել:

Այդ երեկո մի տղա նրան երկտող բերեց ֆրանսիական հյուպատոսարանից, որում հակիրճ գրված էր. «Անհապաղ արի՛, խնդրում եմ: Պ. Կասսել»: Նա արագ վերադարձավ հյուպատոսարան, որտեղ Կասսելը ժպտադեմ նրան էր սպասում.

- Լավ նորություններ կան: Բարեկամս՝ Հալիլ Զինեն, ում ամբողջ կյանքում ճանաչում եմ, քաղաքում է: Նա «Նահդա Լուբանիյե»-ի՝ «Լիբանանյան զարթոնք» միության անդամ է, գուցե լսել ես դրա մասին: Չգիտեմ՝ խելամիտ է արդյո՞ք քեզ հայտնելը, որ Ֆրանսիան այս գործում իր դերն ունի: Դու լավ գիտես, թե ինչպիսին ենք մենք՝ ֆրանսիացիներս: Ի՞նչ կարող ես անել: Կարող ես վստահել նրան: Հիմա մենք բռնել ենք նույն ուղղությունը: Եթե կա մեկը, որ քեզ կարող է օգնել, որպեսզի գտնես Կարոլինին ու քո դստերը, այդ միության անդամներն են: Նրանք ամենուրեք են՝ լիբանանյան լեռներում, Սիրիայում, Պաղեստինում... Հիմա նրան կներկայանաս որպես Ֆրանսուա Վոբան, սակայն Հալիլ Զինեին քո մասին ես պետք է ասեմ ճշմարիտը: Այդպես դու նրանց կապացուցես, որ իրենց լիովին վստահում ես, և նրանք փոխադարձաբար կվստահեն քեզ: Համաձա՞յն ես: Դե՛, լավ, սպասենք մի քիչ, նրանք ուր որ է կգան:

Երկար չսպասեցին: Կես ժամ անց հայտնվեց միջահասակ, նիհար, եվրոպական արտաքինով մի մարդ՝ չհաշված նշաձև սև աչքերը և մեծ

քիթը: Սկզբում նա թողնում էր զուսպ, լռակյաց մարդու տպավորություն, մինչև որ Կասսելը նրան հանգստացրեց:

- Հալի՛լ, իմ ընկեր Հարդինգն է, թեև երեկ մենք նրան կնքեցինք որպես Ֆրանսուա Վոբան, նա քեզ այդ մասին կասի: Ինչ էլ որ լինի, համարե՛ք, որ նրա փոխարեն ես եմ: Եղա՞վ:

Թոմասը կրկին հակիրճ պատմեց իր պատմությունը: Հալիլ Զինեն նրան նայում էր մեծ հետաքրքրությամբ: Ակնհայտ էր նրա մեծ վստահությունը Պոլ Կասսելի հանդեպ: Երբ Թոմասը նրան պատմեց Կարոլինի ու Էթելի անհետացման մասին, նկատեց, որ դա Զինեին հոգեպես ցնցեց: Ավարտին տիրեց խորը լռություն:

- Պարո՛ն Հարդինգ կամ, եթե կուզեք, պարո՛ն Վոբան: Շնորհակալ եմ Ձեր վստահության համար: Ես մեր ընդհանուր բարեկամին՝ Կասսելին, համարում եմ եղբայր: «Լիբանանի զարթոնք» միության առաջին ժողովներից մի քանիսն այստեղ են տեղի ունեցել՝ այս քաղաքի ֆրանսիական հյուպատոսարանում: Չէինք կարող մեզ վտանգել ու դրանք գումարել Դամասկոսում, ոչ էլ՝ Բեյրութում: Այնտեղ անհնարին է որևէ գաղտնիք պահելը, մանավանդ, երբ շուրջդ պտտվում է թուրքական կառավարության ոստիկանությունը: Այստեղ էլ են նրանք գնում ու գալիս, սակայն դա ուրիշ բան է: Պետք է Ձեզ հետ անկեղծ լինեմ: Գիտեմ, թե Ձեզ հետ ինչ է պատահել: Դամասկոսում ասացին, որ բռնել են մի անգլիացու, ում կասկածում են լրտեսության մեջ և ուզում էին նրա միջոցով դուրս գալ այլ մարդկանց հետքի վրա: Ասեմ Ձեզ, որ գերմանական գաղտնի հետախուզական ծառայությունները շատ մարդկանց են անխտիր մատնանշել որպես Ֆրանսիայի և Անգլիայի վարձու լրտեսների: Կռահում եմ՝ այդ անգլիացին Դուք եք: Լավ, հիմա մեզ համար պարզ է, որ Ձեր կինն ու դուստրն անհետացել են: Բոլորս միասին Աստծո օգնությամբ կփորձենք գտնել նրանց: Բեյրութում Դուք ճանաչում եք մի փաստաբանի՝ Դայբես էլ-Մեր անունով, ով ինչ-որ թղթեր է Ձեզ համար ձևակերպել: Նա նույնպես մեր կազմակերպության անդամներից է: Սակայն թո՛ւյլ տվեք Ձեզ հայտնել իմ տեսակետը, որպեսզի իմանաք, թե ինչ գործի մեջ եք մտնում: Մեր կազմակերպությունը գաղտնի է: Դուք ինչ էլ որ լսեք կամ մտածեք դրա մասին, ոչ ոքի հետ մտքեր կիսել չեք կարող՝ բացառությամբ կոմիտեի թույլտվությամբ, որի անդամներից եմ ես: Կան այլ կազմակերպություններ, որոնք ձգտում են օսմանյան լծից ազատել մի երկիր, որն այսօր կոչվում է Լեռնային Լիբանանի Մութասառեֆաթ[19]:

[19] Մութասառեֆ կամ Մութաշառեֆ՝ Լիբանանի տարածաշրջանի անվանումը 1861-1920 թթ. (ծանոթագրությունը՝ հեղինակի):

Ինձ հետ Դուք գտնվում եք մի տարածքում, որն այսօրվա վիճակով անանցանելի է: Լեռը պետք է անցնելու տեղ ունենա, որ միանա ծովեզերքին, որպեսզի դառնա անցանելի: Սա միայն աշխարհագրության հարց չէ: Տեսե՛ք, թե ինչպես սկսվեց ամեն ինչ: Թուրքերը կիրառեցին իրենց հին կանոնը՝ «բաժանի՛ր, որ տիրես»: Ամեն շրջան կառավարվում է մի դավանանքով կամ դավանանքների խառնուրդով, որոնք հակադրվում են իրենց հարևաններին: Շուֆայի շրջանը ղեկավարվում է մեկ դրուզի կողմից: Լը Կուրան վերահսկում է օրթոդոքս մի հույն: Զահլեն վերահսկվում է կաթոլիկ մեկ այլ հույնի կողմից, Զեզինը՝ եռյակի՝ մեկ մարոնի, մեկ դրուզի ու մեկ մուսուլմանի կողմից, Մետենը՝ չորս առաջնորդների՝ կաթոլիկ հույնի, մեկ դրուզի, մեկ շիայի և մեկ մարոնի կողմից, Կեսրուանը՝ երկու մարոնականների կողմից: Ինչպես տեսնում եք, այսպես անհնարին է: Անհնարին... Անհավասարությունը սկիզբ է առել հենց իր ծագման հետ: Եվ այդ ամենը, իր հերթին, եվրոպական հինգ տերությունների վերահսկողության ներքո է: Տեսե՛ք, պարո՛ն Հարդինգ, Օսմանյան կայսրության ներսում կան շատ տարբեր երկրներ՝ Լեռնային Լիբանան, Սիրիա, Միջագետք, Պաղեստին, Արաբիա: Արևելյան եկեղեցիներն իրենց հերթին տարբեր կառույցներ են՝ մարոններ, մելկիտներ[20], սիրիացիներ, խալդեր, ուղղափառ հույներ, կաթոլիկներ, հիմա նաև բողոքականներ, հայեր, կոպտեր, իսկ Դուք արդեն սկսում եք ընկալել նրանց տարբերություններն ու իրար հանդեպ խանդը: Ավելացրե՛ք մուսուլմաններին՝ սուննիներին, շիաներին, դրուզներին, նուսայրիներին, չմոռանանք հրեաներին, որ ասում են, թե միայն մեկ կրոն ունեն, թեև մի ծայրահեղ ուղղափառ հրեան ոչ մի առնչություն չունի սովորական հրեայի հետ: Նրանց քաղաքական սկզբունքները շատ տարբեր են: Սակայն թո՛ւյլ տվեք ինձ շարունակել, որպեսզի Դուք հասկանաք, թե որքանով են պատմական տարբերությունները խոչընդոտում համաձայնության գալուն: Ձեզ մի օրինակ բերեմ՝ ուղղափառ քրիստոնյաները: Աշխարհի այս տարածքի պատմությունը կապված է Բյուզանդական կայսրության և քրիստոնեական եկեղեցուց անջատվելու հետ: Այսպես՝ հույն մելկիտ ունիոնիստներ՝ Բեյրութում իրենց պատրիարքարանով, ուղղափառ հույներ ու ուղղափառ սիրիացիներ, որոնց Եգիպտոսում անվանում են կոպտեր (նրանց պատրիարքի նստավայրը Դամասկոսում է): Ինչպես տեսնում եք, սա մի աներևակայելի գլուխկոտրուկ է: Ի՞նչը կարող է միավորել նրանց՝ արաբի՞զմը, բայց՝ ոչ իսլամը: Դուք կարող եք մերժել այս փաստարկը: Արդյոք մենք՝ քրիստոնյաներս ու մուսուլման-

[20] Մելկիտներ կամ «լատիններ»՝ լատինածես կաթոլիկներ:

ներս, համագործակցելու ընդունակ կլինե՞նք: Կարո՞ղ ենք ունենալ մի ընդհանուր ապագա: Կամ գուցե վերադառնալու են 1860 թվականի ուրվականները, այն ահավոր ատելությունն արաբ մուսուլմանների և արաբ քրիստոնյաների միջև, և երկուսն էլ իրենց հերթին՝ թուրքերի դեմ հավերժ պայքարում... Համատարած սարսափելի կոտորածներ էին, շատ քաղաքներում՝ հրդեհներ, դաժան սպանություններ դրուզների և քրիստոնյաների միջև, այնուհետև քրիստոնյաներին ոչնչացնելու նպատակով դրուզները կազմեցին ընդհանուր ճակատ: Բոլորը դավադրում էին բոլորին: Թուրքական կայազորը կոտորեց այն քրիստոնյաներին, ովքեր ապաստանել էին թուրք կառավարչի՝ Դեյր ալ-Քամարում գտնվող հարեմում: Բարձր դուռը Կոստանդնուպոլսից զորք ուղարկեց, սակայն անկարգությունները տարածվում էին, ու Բեյրութից երևում էին լեռնային շատ բնակավայրերում բռնկված հրդեհները: Երեսուն հազարից ավելի սպանվածներ, համարյա բոլորը՝ մարոններ: Այդ միջոցին Անգլիան իր խաղն էր տանում, Ֆրանսիան՝ իր: Նապոլեոն III-ը վեց հազար զինվոր ուղարկեց՝ պաշտպանելու, այսպես կոչված, «Արևելքի ֆրանսիացիներին», այսինքն՝ քրիստոնյա մարոնականներին: Տեսան, որ Թուրքիան ի վիճակի չէր պաշտպանել նրանց, ոչ էլ՝ պահպանել կարգուկանոնը: Դա իսկապես «Արևելքի հարցի» սկիզբն էր: Երբ եվրոպական տերությունները պաշտոնապես ընդունեցին, որ Եվրոպայի հիվանդ «մարդը»՝ Թուրքիան, վերանալու է որպես կայսրություն, նրանցից յուրաքանչյուրը հավակնում է ժառանգության իր մասը վերցնելուն: Դա կստեղծի նոր խնդիրներ: Լավ, պարո՛ն Հարդինգ, հիմա կարող եք գլխի ընկնել, թե ինչ է մեզ սպասվում: Մենք, այսինքն՝ ովքեր իրենց անվանում են լիբանանցիներ, ուզում ենք անկախ պետություն, որի մեջ կմտնեն Բեյրութը և Բեկաայի հովիտը, ինչպես նաև, այսպես կոչված, «պետության հողերը»[21]: Դրանից պակասի դեպքում մենք չենք համաձայնի: Ոչ էլ ուզում ենք, որ մեր մայրաքաղաքը լինի Դամասկոսը՝ մի պետության մայրաքաղաք, որի հետ մենք որևէ աղերս չունենք: Սիրիան և Լիբանանն ունեն տարբեր ճակատագրեր: Դրան հասնելու համար հիմա մեզ անհրաժեշտ են բոլոր արաբների ջանքերը և Ֆրանսիայի ու Անգլիայի բարի կամքը: Դրա համար էլ Ձեզ նման մարդիկ պետք է ներգրավվեն այս գործում: Դուք լավ եք ճանաչում մեր մարդկանց: Չէ՞ որ Դուք ինձ ասացիք, որ մի դուստր ունեք՝ ծնված Բիբլոսում: Մի՛ անհանգստացեք: Հայտնվելու է: Ա՜հ, իմ կարծիքով՝ Ձեր արյունը խառնվել է մերին, ինչը և ինձ թույլ տվեց, որ Ձեզ

[21] Պետության հողեր էին համարվում ծովեզերքը և Բեյրութը, որոնք գտնվում էին Օսմանյան տիրապետության ներքո, իսկ Լեռնային Լիբանանի ինքնավարությունը վերահսկվում էր Ֆրանսիայի կողմից (ծանոթագրությունը՝ հեղինակի):

հետ վստահորեն խոսեմ: Պարո՛ն Հարդինգ, մենք արաբներ ենք՝ արաբական մշակույթի տեր ու դրանով հպարտ, սակայն չենք ցանկանում ունենալ արաբական կենտրոնացված պետություն: Նորից կրկնվելու է հինը: Վերջին դարերում ունեցել ենք թուրք խալիֆ Կոստանդնուպոլսում: Չենք ուզում դարձյալ սխալվել և որպես մեր կառավարիչ Դամասկոսում ունենալ արաբ խալիֆ: Մեզ որպես «դհիմմիներ»՝[22] որպես օտարերկրացի կզգանք մեր իսկ երկրում: Հասկանո՞ւմ եք:

Թոմասը նրան զննում էր համբերությամբ և հիացմունքով: Այն, ինչ այդ մարդը նրան պատմում էր, շատ հետաքրքիր էր, բայց իր ուզածն այն էր, որ իրեն օգներ Կարոլինին գտնելու գործում: Թեև այլևս չէր կարող անտարբեր լինել այն անկրկնելի երկրի ճակատագրի հանդեպ, որն արդեն սիրելի էր դարձել նրա համար: Վերջին չորս տարիների ընթացքում նրան շատ բաներ էին պատահել, մի քանիսը՝ շատ լավ, մյուսները՝ ահավոր: Սակայն նա գիտեր, որ այլևս երբեք չէր մոռանա այդ տարիները:

Հալիլ Զինեն կիրթ մարդ էր, բայց ամենից առաջ՝ քաղաքագետ: Մի մարդ, ով ուզում էր անհապաղ, այդ պահից սկսած փոխել պատմական հանգամանքները: Նա նույնպես նվազագույն համակրանք չէր տածում թուրքերի նկատմամբ, ովքեր կոռուպցիա ու վայրագություն էին սերմանել այն երկրներում, որոնք իրենց կայսրության մաս էին կազմում, ու հիմա հավաքում էին իրենց դառը պտուղները: Բալկանների պատերազմը, որ բռնկվել էր Իտալիայի հետ ընդհարման պատճառով, Սերբիային, Մոնտենեգրոյին, Հունաստանին և Բուլղարիային ցույց էր տվել, որ Օսմանյան կայսրությունն այլևս ի վիճակի չէր, որ իրենց պահի իր բռնության ներքո:

Հեղափոխությունը երիտթուրքերին բերել էր իշխանության գլուխ, իսկ սուլթան Համիդին տարել էր իր ոսկեզօծ վանդակը՝ նախ Սալոնիկում գտնվող Բեյլերբեյի պալատը, ապա՝ 1912 թվականի վերջերին՝ հույների դեմ պատերազմի ժամանակ, որպեսզի նրան գերի չվերցնեն, անմիջապես տեղափոխել էին Կոնիայի Մագնեսիայում գտնվող մի ավելի համեստ դղյակ: Ասում էին, որ նա մտածմունքները վանելու նպատակով ժամանակն անց էր կացնում իր կահ-կարասին անձամբ հավաքելով, որն այնքան անճաշակ էր ու լի ավելորդ զարդարանքներով, որքան նրա իսկ անձը:

[22] Պատիվ, խիղճ, պաշտպանություն և ապահովություն դավանող մարդիկ:

Մեկ սրանց, մեկ նրանց հետ անվերջանալի ընդհարումները թուրքերին պահում էին նյարդային վիճակում: Այն լուրերը, որ Բալկաններում թուրքերը պատերազմը տանուլ են տվել, և դրա արդյունքում մի շարք երկրներ հռչակել են իրենց անկախությունը՝ պոկվելով ավերվող կայսրությունից, խրախուսում էին այլոց: Արաբական երկրների խռովությունն ընդգրկել էր մի վիթխարի տարածք՝ Հալեպի և Եմենի միջև, Միջագետքի արևելյան սահմանների և Արաբիայի Հիջազի միջև, որ հասնում էր մինչև Ադենի ծովածոցը: Մշակույթները տարբեր էին, սակայն անկախ ամեն ինչից՝ նրանց հիմնական կապող օղակն արաբերենն էր:

Թոմասը հասկանում էր, որ Լեռնային Լիբանանը և նրա հարակից հողատարածքները, ներառյալ՝ Բեյրութը, թերևս ամենափոքր տարածաշրջանն էր, բայց միևնույն ժամանակ՝ մտավոր ներուժով և խռովություն բարձրացնելու ունակությամբ՝ ամենաօժտվածը: Դամասկոսը միշտ էլ երկյուղով ու նախանձով էր լցված եղել Բեյրութի հանդեպ. մի փոքրիկ քաղաք, որը, սակայն, ներկայացնում էր արաբական աշխարհի ամենախոր և ամենաառաջավոր արժեքները: Զուր չէր, որ բեյրության թերթերը, որոնք շատ դեպքերում թեև մեծ ուշացումով էին տեղ հասնում, սակայն անհագորեն ընթերցվում էին ինչպես ուղտի բրդի համեստ խանութներում, անապատի խորքերում, այնպես էլ քաղաքի ամենաառաջադեմ ու բարձրաշխարհիկ շրջանակներում: Նրանց տպարաններում հրատարակված գրքերը՝ որպես թանկարժեք գանձ, նույնպես ձեռքից ձեռք էին անցնում, մեծ մասն էլ արգելված էր թուրքական Ներքին գործերի նախարարության կողմից, որի պարագլուխն այդ ժամանակներում մութ ու մռայլ կերպարն էր՝ Թալեաթ փաշա անունով, ում մասին ասում էին, որ ստում էր անգամ այն դեպքում, երբ լուռ էր մնում: Այդ հրատարակչությունները տարիներ շարունակ քարոզում, փոխանցում էին այն արժեքները, որոնցով Ֆրանսիան Արևելքում խթանում էր առաջխաղացումը: Իսկ մի՞թե արաբները միշտ չէին ձգտել ազատության: Իսկ արդյոք արաբների մի մասը նման չէ՞ր մյուսին: Արդյոք բոլոր արաբները եղբայրներ չէի՞ն... Խռովությունը զսպելու հնար չեղավ, ինչը և թուրքերին ահավոր նյարդայնացրեց այն հիվանդի պես, ով թույլ ժպտում է անցանկալի այցելուին՝ իմանալով, որ իր հիվանդությունն արագորեն սրվում է, որից ինքը փրկություն չունի, սակայն փորձում է մինչև վերջին շունչը պահպանել դեմքի հանգիստ արտահայտությունը:

Այդ ամենի շուրջ նրանք, ինչպես հին ընկերներ, դեռ երկար խոսեցին: Կասսելը, հանուն Թոմասի, պատրաստ էր գլուխը գրավ դնել, իսկ Հալիլն ուզում էր նրան ներգրավել իր շարժման մեջ:

Չէ՞ որ այլ ազգեր հասել էին ազատության և անկախ հայրենիք ունենալուն: Արաբները նույնպես կհասնեն: Սակայն դրա համար նրանց անհրաժեշտ էր օգնություն: Ահա Բուլղարիան 1910 թվականին Ռուսաստանի աջակցությամբ հռչակեց իր անկախությունը՝ անցնելով նրա պաշտպանության ներքո: Ավելի ուշ Չեռնոգորիան, որը զինված դուրս էր եկել օսմանների դեմ, ընդամենը մի քանի ամիս առաջ՝ 1912 թվականի հոկտեմբերին, նույնպես հռչակեց իր անկախությունը: Այնուհետև՝ հույները, որ վերանվաճել էին Սալոնիկը, Ալբանիան, Էպիրը, Մակեդոնիան և Թրակիան: Ջախջախիչ առաջխաղացման դեմ թուրքերը ստիպված եղան կազմակերպել Կոստանդնուպոլսի պաշտպանությունը: Հալիլն այնպես էր պատմում, ասես Պանագլիոտիս Դանգլիսն[23] էր կամ Վլադիմիր Վազովը[24]: Նա դեռևս հերոս չէր, սակայն ճակատագիրը գուցե նրա համար մի փառավոր էջ էր պահել:

Ի վերջո, պայմանավորվեցին, որ Թոմաս Հարդինգը կամ Ֆրանսուա Վոբանը, եթե անհրաժեշտ լինի, կուղեկցի Հալիլին և այլ յուրայիններին, որ Բեյրութին մոտ՝ որևէ տեղում, նավից ափ իջնեն: Այնտեղ նրանց կդիմավորեն ու կտանեն որևէ տուն՝ ապաստան, որտեղ մի քանի օր թաքնված կմնան: Այնուհետև նրանցից յուրաքանչյուրը կստանա իր հանձնարարությունը:

Հալիլը Թոմասին կրկին խոստացավ, որ իր կազմակերպությունն ամեն ջանք կթափի՝ նրա կնոջ ու դստեր վերաբերյալ որևէ տեղեկություն հայթայթելու համար: Նա այդ մասին ասաց հուզված՝ արցունքն աչքերին: Նա դիվանագետ էր և գիտեր, որ անգլիացիները հրաշալի հիշողություն ունեն:

Պայմանավորվեցին երկու օր անց՝ մթնշաղին, հանդիպել Լիմասոլի այն ափին, որտեղ տեղացի ձկնորսները թողնում էին իրենց նավակները՝ ափեզրին կապած: Լուսինը բավարար չափով թույլ լույս էր արձակում, ու իրար ողջունելուց հետո մի փոքրիկ նավակ նստեցին, որը նրանց հասցրեց Միջերկրականով նարինջ տեղափոխող մի եռակայմ հին առագաստանավին: Դրա տերը՝ մի չերքեզ մետիս, աջակցում էր արաբական հարցի լուծմանը՝ հանուն իր անձնական համոզմունքի: Կիպրոսի մութ ու կտրտված ուրվագիծն արագ մնաց հետևում, մինչ նավակողերը ճռռում էին ալեկոծությանը զուգընթաց: Թոմասը, փաթաթված Կասսելի նվիրած բրդյա շալով, խորհում էր այն մասին, որ թուրքերը չէին կարող կասեցնել այդ խռովությունը, քանի որ նախկինում որևէ խնդիր իր

[23] 1911-1913թթ. հունա-թուրքական պատերազմի հույն հերոս:

[24] 1911-1913թթ. բալկանյան պատերազմի բուլղար հերոս:

շուրջը երբեք չէր համախմբել արմատներով միմյանց հետ ամուր կապված արաբ մուսուլմաններին և արաբ քրիստոնյաներին. սակայն այս դեպքում թշնամին ընդհանուր էր, թեև՝ նույնպես մուսուլման: Այդ մասին խոսել էր որոշ արաբների հետ: Բոլորը նրան առարկել էին՝ փաստարկելով, որ թուրքերն իսկական մուսուլմաններ չեն համարվում: Ղուրանը ոչ թե թուրքերեն, այլ արաբերեն է թելադրվել Աստծո կողմից ուղարկված հրեշտակի միջոցով: Մարգարեն եղել է արաբ՝ հնագույն քուրայշի ցեղից: Մահոմայի[25] հետնորդներն արաբներ էին: Թուրքերը տիրացել են նրանց այբուբենին ու մշակույթի մեծ մասին: Մյուս կողմից Կոստանդնուպոլսում գոյություն ուներ ազգայնամոլական շարժում, որը փորձում էր թուրքերենից մաքրել պարսկական, արաբական, հայկական և, անշուշտ, արևմտյան ծագում ունեցող բառերը: Կարծես իսկապես կասկածներ ունեին իրենց իսկ ծագման վերաբերյալ: Այդ աշխատանքն իրագործելը շատ ծանր էր, անհնարին, քանի որ բուն թուրքերենը սուղ, աղքատ բառապաշարով ու անավարտ լեզու է:

Կենտրոնական Ասիայի տափաստաններում շատ բառերի կարիք չկար, ոչ էլ՝ ճոխ լեզվի: Ժամանակի ընթացքում թուրքերը դարձան գաղութարար ժողովուրդ, որին հաջողվել էր մեծ մասամբ յուրացնել այն երկրների մշակույթը, որոնց տիրել էր:

Թոմասը հասել էր այդտեղ, որպեսզի Օքսֆորդի պրոֆեսորին հատուկ աննկուն ոգով և կարգուկանոնով կարողանար ավելի լավ ըմբռնել հին ժողովուրդների պատմությունը: Ցանկանում էր նաև իր կատարելիք պեղումների հիման վրա ատենախոսություն գրել: Ուզում էր իր ձեռքերով դիպչել քարերին՝ պատմության վկաներին, հասկանալ, թե ինչպես էր մարդկությունն իր ծագման պահից բարեշրջմամբ զարգացել: Չէր ցանկանում ո՛չ այս, ո՛չ էլ մյուս կողմից համախոհներ ունենալ: Այդուհանդերձ, հանգամանքները նրան մի կողմից մյուսն էին հրում՝ ճիշտ այնտեղ՝ մինչև այն առագաստանավի քիթը, որը նրան տանում էր սիրիական ափ՝ կեղծ անվան ներքո, մի քանի արաբների ուղեկցությամբ, ովքեր թուրքերից արդարություն էին պահանջում: Չէր կարող զսպել իր հուզմունքը, երբ մտածում էր Կարոլինի ու Էթելի, նաև իր նոր զավակի՝ տղայի կամ աղջկա մասին, եթե, իհարկե, իր կինը բարեհաջող ծննդաբերած լիներ: Չէր ուզում հոռետես լինել, սակայն ոչ մի լուր չունենալը նրան ստիպում էր, որ վատթարը մտածի:

Հալիլ Զինեն մոտեցավ նրան՝ ամուր բռնվելով նավառեջքից: Նավաքիթը սուզվում ու բարձրանում էր ալեկոծությունից, այդ եղանակին

[25] Հեղինակը նկատի ունի Մուհամմեդ մարգարեին:

տախտակամածի վրայով քայլելու համար հարկավոր էր բռնվել բազրիքից կամ անվախ ջուրն ընկնել ու ընդմիշտ անհետանալ:

Հալիլը ստիպված բերանը մոտեցրեց Թոմասի ականջին, որ նա լսի.

- Ո՞նց եք, պարո՛ն Հարդինգ: Տեսնում եմ, որ տարված եք Ձեր մտորումներով: Գիտեմ, թե ինչ եք խորհում: Հիմա հարմար ժամանակ չէ այն օտարերկրացիների համար, ովքեր գալիս են աշխարհի այս մասը՝ հնագույն պատմություն փնտրելու: Փոխարենը՝ նրանց հանկարծակիի են բերում նոր ու ծանր իրադարձությունները: Անընդհատ գլխումս պտտվում է Ձեր կնոջ անհայտանալը, և այդ մասին ինչ-որ ասեմ, գուցե խիստ հնչի: Իմ կարծիքով՝ երիտթուրքերի քաղաքական ոստիկանությունը, անհանգստացած այն բանից, որ Դուք լրտեսում եք բրիտանացիների օգտին, գնացել է Բիբլոս՝ Ձեր տուն՝ փորձելով գտնել ապացույցներ: Կներեք անկեղծությանս համար, սակայն գուցե այնտեղ մի բան է պատահել, ու նրանք ցանկացել են վերացնել հանցանքի ապացույցն ու մեղքը գցել հանցագործների վրա:

Թոմասը նույնպես այդ կարծիքին էր: Խզված ձայնով, առանց աչքը ծովից կտրելու, նա պատասխանեց իր նոր ընկերոջը.

- Այո՛, դժբախտաբար ես էլ եմ նույն կարծիքին: Սակայն գիտեք, քանի դեռ ապացույցներ ի հայտ չեն եկել, ես չեմ դադարի նրանց փնտրելուց: Ես եմ մեղավոր. չպետք է նրանց մենակ թողնեի: Որքան ինքը, այնքան էլ ես համոզված էինք, որ ոչինչ չի պատահի: Չէ՞ որ այդքան ամիսներ ապրել էինք խաղաղ ու հանգիստ: Պետք է ընդունեմ, որ երկար ժամանակ ես սխալ եմ ապրել՝ թերևս ինքս ինձ խաբելով, որ այդտեղ հանգստավետ դրախտ է: Չեմ ցանկացել ընդունել ակնհայտը: Պրոֆեսոր Պետերսոնի հետ գնացի Միջագետք, կարծես Բիբլոսն Օքսֆորդ էր, ու ես տեղափոխվում էի Լոնդոն: Ի՜նչ սարսափելի սխալ... Երբեք ինքս ինձ չեմ նների:

- Սպասե՛ք,- Հալիլն ուզում էր հետ վերցնել իր խոսքերը և փոխել խոսակցության թեման,- Դուք իրավացի եք: Ապացույցներ չկան, հետևաբար մեր խոսելը զուր է: Թուրքերը գիտեն, որ ոչ մի բան առաջվանը չի լինի: Պարո՛ն Հարդինգ, վախենում եմ, որ Բալկանների պատերազմները տարածվեն ամենուրեք: Մենք այսպես շարունակել չենք կարող: Հենց այս օրերին Փարիզում տեղի է ունենում արաբական համագումարը: Ֆրանսիայի կառավարությունը, հարուցելով թուրքերի զայրույթը, համաձայնեց, որ այն անցկացվի հենց իրենց երկրում: Այդ գործում մեր դերակատարությունը մեծ է: Ես գիտեմ համարյա բոլոր ելույթ ունեցողներին: Տեսնելով, որ չեն կարող խոչընդոտել համաժողովի կա-

յացումը, օսմանյան կառավարությունը որոշեց, ի վերջո, իր ներկայացուցիչներին և լրտեսներին ուղարկել. իմ կարծիքով՝ իհարկե Միդհատ Չուրի բեյին ու Աբդուլ Քերիմ Հալիլին: Դրան ի պատասխան՝ արաբներս, ֆրանսիական կառավարության համաձայնությամբ, զուգահեռաբար անցկացնելու ենք այլ՝ գաղտնի համագումար, որտեղ աներկյուղ կարող ենք ներկայացնել մեր պահանջները: «Պաշտոնականում» միմիայն կխոսենք այն բարեփոխումների մասին, որոնք իրականացվելու են թուրքական կայսրությունում, իսկ «գաղտնի» համագումարում, որին, մեզանից՝ Բեյրութի կոմիտեից բացի, ներկա կլինեն նաև արաբական այլ կազմակերպություններ, ներկայացնելու ենք մեր տեսակետները: Եվ դեռ ավելին... Բեյրութի կոմիտեի տեսակետները չեն համընկնում և չեն էլ կարող համընկնել Հիջազի և Եմենի կամ Միջագետքի արաբների դիրքորոշումների հետ: Պարո՛ն Հարդինգ, մենք երազում ենք մի երկիր ունենալու մասին, որը կկոչվի Լիբանան ու կձգվի ափեզրից մինչև այն լեռները, որոնք արևելքից փակում են Բեկաայի հովիտը, Քունեյտրայի հարավից սկսած մինչև Լաթաքիայի հյուսիս: Դա բոլորովին շատ չէ: Լեռնային Լիբանանի բնակիչներիս համար դա կլիներ մեր երազանքների գագաթնակետը: Այդ դեպքում կկարողանայինք իրականացնել մեր երազանքները, այսինքն՝ ստեղծել մի երկիր, որը կապացուցեր, որ բոլոր դավանանքները կարող են խաղաղ գոյակցել: Մենք շատ բանով ենք պարտական Ֆրանսիային, որը միշտ եղել է ազատություն տենչացող ժողովուրդների կողքին: Նա է եղել մեր ուսուցանողը, ու մենք կապավինենք նրա աջակցությանը: Բրիտանիայի դեմ մենք ոչինչ չունենք: Սակայն, եթե անկեղծ լինենք, մենք ներծծված ենք ֆրանսիական մշակույթով:

Երկրորդ օրվա լուսաբացին, երբ սաստիկ քամուց ալեկոծված եղանակ էր, նրանք Բիբլոսին շատ մոտ ափ իջան: Հոսանքները նրանց քշել էին հյուսիս, և վտանգավոր էր ափի մերձակայքով լողալը:

Որոշեցին այդտեղ իրարից բաժանվել և պայմանավորվեցին մեկ շաբաթ անց հանդիպել Բեյրութում՝ Հալիլ Զինեի տանը:

Թոմասն ուղղվեց դեպի այն տունը, որտեղ ապրում էին: Հասավ մի երկու ժամ հետո, հանդիպեց ընդամենը մի քանի գյուղացու: Մտավ ավերակ դարձած տուն և զգաց, որ աչքերն արցունքակալվում են: Ամեն ինչ տակնուվրա էր արված, կահույքը՝ ջարդուփշուր եղած ու այրված: Անգամ այդ վիճակով նա ճանաչեց իրենց ապրած տունը ու Կարոլինի նկարներով մի քանի կիսաայրված թղթապանակներ հավաքեց: Հա-

տակին գտավ իրենց՝ երեքի մի դեղնավուն, տրորված լուսանկար ու էլ չկարողացավ զսպել արցունքները: Այլևս չկար ոչինչ, որ հետը տաներ և այդտեղից դուրս եկավ վշտաբեկ սրտով: Նա չէր դադարում Ադանայի հայերի մասին մտածելուց: Մինչ այդ պահը դեռ չէր հասկացել, որ ինքը չհայտարարված պատերազմի մեջ գտնվող երկրում է, և որ, ի վերջո, բոլորն էլ զոհ են գնալու: Նրա մեջ խառնվել էին զայրույթն ու անկարողությունը: Այդ պահին նա իր համար վճիռ կայացրեց. մինչ այդ նա թուրքերին չէր նայել որպես թշնամու: Նրա կարծիքով՝ տեղի ունեցածն անհաջող բախտի արդյունք էր: Ինչ վերաբերում էր Կարոլինի և Էթելի անհետացմանը, ուզում էր հավատալ, որ վաղ թե ուշ նրանց գտնելու է:

Հենց այդտեղ՝ այրված փայտի ծխահոտ ավերակներում, որոշեց, որ գնալու է Բեյրութ, միանա Հալիլին և ինչով կարող էր, օգնի արաբներին, որպեսզի վերջ տան թուրքական բռնապետությանը: Կրկին հիշեց Օքսֆորդի իր ծեր պրոֆեսորի խոսքերը. «Զգո՛ւյշ մնա Բելսեբուից, Թոմա՛ս: Նա դեռ այդտեղ է, հինավուրց քարերի արանքից շարունակում է հետևել»: Իսկապես այդպես էր: Թոմասը նրա ներկայությունը զգաց այրված ավերակների մեջ, որ մի ժամանակ իրենց տունն էր եղել:

9. ԲԵՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՑԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ԱՊՐԻԼ, 1913-1914թթ.

Թոմասը վերադարձավ Բեյրութ, որտեղ միացավ Հալիլ Ջինեին ու նրա յուրայիններին: Պայմանավորվեցին, որ նա կշարունակի ապրել իր առօրյա կյանքով, իսկ եթե իրենք Թոմասի կարիքը որևէ հարցում զգային, ապա կխնդրեին, որ նա օգնի: Արաբները նաև կրկին հավաստիացրին, որ Թոմասը վայելում է իրենց՝ բոլորի վստահությունը, և նրան կհրավիրեն մասնակցելու այն ժողովներին, որոնց նա հարկ կհամարեր, սակայն գուցե նրան ավելի հարմար լիներ կազմակերպության հետ համագործակցել դրսից, եթե ցանկանում էր անկախ մնալ: Թոմասն առարկելու ոչինչ չուներ: Նրան անհանգստացնում էր այն, թե ինչ էր պատահել իր կնոջն ու դստերը: Չէր ուզում մտատանջության մեջ ընկնել, սակայն նաև չէր կարողանում ձերբազատվել այն սարսափելի համոզմունքից, որ Կարոլինն ու Էթելը սպանված են: Երբեմն արթնանում էր տագնապահար, շնչակտուր՝ չիմանալով, թե որտեղ է գտնվում: Հանգեց այն մտքին, որ ցանկացած շոգենավով պետք է հասներ Մարսել կամ Ջիբրալթար ու այդ ամենը մոռանար կամ էլ, ի վերջո, խելագարվելու էր:

Չէր կարող այդպես վարվել… Չէր կարող լքել նրանց…

Ընկերակցելով Հալիլ Ջինեին՝ սկսեց ներկա գտնվել քաղաքական մի քանի գաղտնի ժողովների, որոնցում ֆրանսերենից անցնում էին արաբերենին: Սեպտեմբերի կեսերին արաբական համաժողովի մասնակիցներից շատերը վերադարձան Փարիզից. այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին՝ Միշել Տյուենին՝ ֆրանսիական հյուպատոսարանի թարգմանիչը, մի ուղղափառ հույն՝ վատ բնավորությամբ, բայց՝ ոսկեսիրտ մի մարդ, ով «Լիբանանյան զարթոնքի» հիմնադիրներից էր, Ժոզեֆ Հանին՝ հարուստ մարոն, ով Բեյրութում մի քանի շենքերի սեփականատեր էր, Ահմեդ էֆենդի Թաբբարահը՝ մուսուլման, ում մասնագիտությունն ու կյանքը լրագրությունն էր, մտածողությամբ՝ արմատական, և նրա միակ նպատակը Դամասկոսից անկախ Լիբանան ունենալն էր, բժիշկ Այուբ Թաբիթը՝ մարոնական, Բեյրութի հեղինակավոր բժիշկներից, երևելի ընտանիքից: Թոմաս Հարդինգը ցնցվել էր այդ արտասովոր անձնավորությամբ, իսկ Թաբիթը նրան առաջարկեց իր տունը: Թոմասն ապրելու ուրիշ տեղ չուներ և երկու շաբաթ հյուրընկալվեց բժշկի տանը: Նաև ծանոթացավ Ալբերտ Ժ. Սուրսոեկի՝ ուղղափառ հույնի ու մեկ այլ ուղղափառ հույնի՝ Շառլ Դեբբայի՝ խորամանկ ու հեղինակավոր փաստաբանի, «Բեյրութի ազատություն» թերթի սեփականատիրոջ հետ: Այդ թերթի

առաջին էջում նա տեղադրեց Կարոլինի ու Էթելի լուսանկարը՝ ներքևում արաբերեն ու ֆրանսերեն գրությամբ. «Դուք տեսե՞լ եք այս կնոջն ու այս աղջկան: Տեղեկությունը կհատուցվի վարձատրությամբ»: Ծանոթացավ նաև ամենաազդեցիկ մարդկանցից մեկի՝ Ռիզկալլահ Իրկաշի հետ, ով «Լիբանանյան զարթոնք» միության քարտուղարն էր ու գանձապահը:

Փարիզի համագումարից հետո Բեյրութում գումարված առաջին ժողովում ելույթով հանդես եկավ Շառլ Դեբբան: Հրավիրել էին նաև Թոմասին, ով բեղ ու մորուք էր պահել, արտաքնապես դարձել ավելի հասուն ու լուրջ: Բեյրութը հետևում էր Փարիզի նորաձևության վերջին միտումներին, թեև Թոմաս Հարդինգն իր կոստյումներն ու վերնաշապիկները շարունակում էր ստանալ Լոնդոնի իր դերձակից: Եվրոպական նորաձևությունը բոլորովին էլ թեթևսոլիկություն չէր, այլ ժամանակակից և անկախ լինելու խորհրդանիշ: Այդ իսկ պատճառով Ռիզկալլահ Իրկաշը Լիբանանի դերձակների միության նախագահի համար Փարիզից իր հետ բերել էր տղամարդու նորաձևության մոդելների նմուշներ, նաև կանանցի բարձրարվեստ կարուձևի ամսագրեր, որոնք երկար քննարկման առիթ հանդիսացան երկու կողմերի համար:

- Սիրելի՛ բարեկամներ,- իր ելույթը սկսեց Շառլ Դեբբան,- Փարիզի համաժողովն ի մի է բերել մեր գաղափարները և բացել մեր աչքերը: Նրանք, ովքեր ներկա են գտնվել համաժողովին, համաձայն են, որ հիմա ամեն բան ընկալում ենք ավելի հստակ: Սուլթանների վերջը եկել է. դա ընդամենը ժամանակի խնդիր է: Ով այսօր կրում է այդ տիտղոսը՝ այդ Մեհմեդ 5-րդը, ընդամենը խամաճիկ է: Թալեաթ փաշան, Էնվերը և Ջեմալը ոչ մի բան չեն փոխի: Մինչ օրս կյանքը ցույց է տվել, որ դեռ շատ խնդիրներ ենք ունենալու նրանց հետ: Ինչ վերաբերում է փարիզյան համաժողովին, ապա անկեղծորեն պետք է ասեմ, որ շատ հետաքրքիր էր այնպիսի մարդու, ինչպիսին Ֆայսալն է՝ շերիֆ Հուսեյնի սիրած որդու՝ Մեքքայի պահապանի հետ մտքեր փոխանակելը: Այդ հաշեմիթները գուցե որևէ գաղտնի համաձայնություն ունեն ֆրանսիացիների ու անգլիացիների հետ… թերևս չկարողանամ ապացուցել: Խոսեցինք նաև սիոնիստ պատվիրակների հետ: Ընդ որում՝ մենք կարող ենք նրանց հետ լուրջ խնդիր ունենալ, քանզի նրանց նկրտումը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ անիրական մի ցնորք՝ Պաղեստին վերադառնալը և այնտեղ հրեական պետություն հիմնադրելը, որի մասին խոսում էր Թեոդոր Հերցլը: Իմ կարծիքով՝ նրանք փորձում են համաձայնության գալ երիտթուրքերի կառավարության հետ, որպեսզի իրենց թույլ տան ունենալ, ինչպես իրենք են անվանում, «հրեական ազգային օջախ»: Սակայն գիտեն, որ այդ գործում

իրենք նաև արաբների կարիքն ունեն: Ինձ համար դա այնքան էլ հստակ չէ, թեև այդ սիոնիստական «Երիտասարդ թուրք» օրաթերթում առկա էր այն միտքը, որ Կահիրեի կոմիտեն կողմ է հրեական ներգաղթին Սիրիա և Պաղեստին: Անգամ համաժողովի նախագահ Աբդուլ Զահրավին հայտարարեց, որ հրեաները եղել են սիրիացի վտարանդիներ: Լավ, հասել է մաքրագործվելու, ոգեշնչման և հույսի պահը, և ով աջակից լինի այս գործին, ըստ արժանվույնս կգնահատվի: Այդ մասին՝ հետո... Փարիզի համաժողովի որոշումներն ընդունվեցին անգամ թուրքական կառավարության կողմից: Նրանք համաձայն են ապակենտրոնացման բարեփոխումներին: Բանից պարզվում է՝ հաղթել են Ղարայլլահի առաջադրած տեսակետները: «Լամարկազի»[26] ապակենտրոնացում...

Խոսք խնդրեց Հալիլ Զինեն: Նրա կողքին նստած Թոմասը զգաց, թե որքան լարված էր այդ մարդը:

- Դուք չպետք է հավատաք թուրքերի հավաստիացումներին: Դա միամտություն կլինի: Նրանք միշտ իրենց ասածի հակառակն են արել: Ձեր աչքի առաջ են խեղճ հայերը: Նրանք միշտ էլ հավատացել են թուրքերի խոստումներին: Վերջինը՝ Ադանայում, իսկ արդյունքում՝ երեսուն հազար սպանվածներ, հազարավոր ավերված տներ... Ներկայումս Իտալիայի հետ են պատերազմում, մինչ այդ՝ Սերբիայի, Բուլղարիայի, Հունաստանի հետ... Չեն կարող միաժամանակ կռիվ մղել այդքան ճակատներով: Ռուսներն էլ հետևում են դեպքերի ընթացքին, իսկ բրիտանական ու ֆրանսիական ռազմանավերը տեր են դարձել Միջերկրական ծովին: Նրանք միայն կարող են համաձայնության գալ ու սպասել ավելի բարենպաստ ժամանակների: Սակայն եթե կարողանային բավականաչափ զորք ու զենք հավաքել, ապա այդժամ կգային մեր հետևից ու առանց այլևայլության բոլորիս կկախեին այստեղի ծառերից: Զգուշացե՛ք Ջեմալ բեյից: Գալու է մեր հետևից՝ արաբական խռովությանը վերջ տալու համար: Թուրքերը դեռ չեն հասկացել, որ մուսուլման, թե քրիստոնյա արաբներին մահը չի վախեցնի:

- Լավ,- Շառլ Դեբբան բարձրացրեց ձեռքերը՝ ցանկանալով մեղմել նրա զայրույթը,- ամենազոր Աստված քեզ օժտել է խոսելու շնորհով և անհամբերությամբ: Սպասի՛ր մի քիչ, Հալի՛լ: Թո՛ւյլ տուր ինձ արտահայտել իմ եզրահանգումները: Ա՜հ, այս արաբները... Շատ անհամբերն եք: Չէ՞ որ սա ուղտերով վազքի մրցույթ չէ:

Լռություն տիրեց: Դեբբան շարունակեց.

- Գիտե՞ք, թե համաժողովում ի՞նչն ինձ ամենից շատ հուզեց: Դա

[26] «Ապակենտրոնացման արաբ կողմնակիցների միություն»:

այն էր, երբ Ահմեդ Թաբբարահն ասաց. «Մեզ համար ամեն մարդ, ով արաբերենը կհամարի իր մայրենի լեզուն, արաբ է՝ անկախ կրոնական դավանանքից»: Սա է կարևորը: Եվ այդ բանն ասողը ես եմ՝ ուղղափառ հույնս: Իմ լեզուն արաբերենն է, ունեմ հունական արմատներ ու ինձ խորապես համարում եմ լիբանանցի: Կարո՞ղ եք ինձ հասկանալ:

Բոլոր ներկաները ծափահարեցին, Թոմասն էլ գլուխը շարժեց՝ հավանություն տալով: Նրա կողմից դա իսկապես մեծ քաջություն էր, թեև ինքն իրեն անգլիացի էր համարում: Հալիլ Զինեն ընդհատեց իր բարեկամ Դեբբային.

- Շա՛ռ, չլսեցի՞ր Նաում Մուկարզալին: Քեզ կասեմ, թե ես ինչ լսեցի: Իսկապես գրական միջոցները շատ լավ են հեղափոխությունների մասին գրում, բառերով այդ ամենը կարելի է իրագործել: Սակայն նա ասաց, որ ապագայում արաբական խռովությունը կարող է արյունալի լինել: Ո՞վ է կառուցել այսօրվա Ֆրանսիան... Բարիկադների մարտիրոսները, Կոմունան, գիլյոտիններից առվակի պես հորդացող արյունը... Հարկ չկա, որ երկնչենք ճշմարտության առջև: Կամ գուցե կարծում եք, որ ձեր խռովությունը միշտ լինելու է այդպիսի՞ն: Ազատության հասնելուց առաջ պետք է մեր արյան մի մասը թափենք: Թե կարծո՞ւմ եք, որ թուրքերը խաղաղ կհեռանան: Ո՛չ: Երբե՛ք: Ստիպված են հեռանալու, որովհետև միասին նրանց վռնդելու ենք: Իսկ այնտեղ՝ Կոստանդնուպոլսում, ձեր կարծիքով, ի՞նչ է կատարվում... Այն անձանց ցուցակն են կազմել, ովքեր չեն լռում կամ չեն ենթարկվում, կգան և մեր հետևից: Վախենո՞ւմ եք մեռնելուց:

- Ո՜-ո՜-ո՜-չ,- միաձայն և ոգևորությամբ հնչեցրին ներկաները,- ո՛չ, երբե՛ք:

Իրենց ընկերոջ բոցավառ ելույթից ոգեշնչված՝ նրանք անխտիր կրկին ծափահարեցին: Այդ պահից ի վեր շատ դժվար էր վերահսկել ժողովը: Դեբբան բարձրացավ աթոռին և այնտեղից նրանց կշտամբեց.

- Չափից ավելի հայրենասեր եք, որ ձեզ հետ կարողանանք հեղափոխություն ծրագրել, և չափից ավելի հեղափոխական՝ լավ հայրենասեր լինելու համար:

Դուրս գալով և բժիշկ Այուբ Թաբիթի հետ քայլելով դեպի նրա տուն, որը գտնվում էր բլրի վրա, Թոմասը սիրտը բացեց նրա՝ իրեն մեծ վստահություն ներշնչող մարդու առջև.

- Չգիտեմ, թե ինչ մտածեմ, բժի՛շկ: Այստեղ բոլոր մարդիկ ընկղմված են քաղաքականության մեջ: Այն ժամանակից սկսած, երբ հասա Բեյրութ, զգացի, թե որքան կարևոր է այն ձեզ համար: Առաջ ես փորձում էի

խորհրդածել արվեստի, հին ժողովուրդների պատմության շուրջ, ավերակներից գծագրեր ու նկարներ էի անում, իսկ հիմա գուցե կնոջս ու դստերս անհետանալն ինձ չի թողնում, որ այլ բաների մասին մտածեմ: Դարձել եմ մտասևեռուն... Կարծում եմ, որ երբ թուրքերն այստեղից հեռանան, բոլորս թեթևացած շունչ կքաշենք:

Բժիշկ Թաբիթը համաձայնեց:

- Այո՛, Թոմա՛ս, թեև Դուք դեռ շատ երիտասարդ եք, բայց արդեն հասցրել եք Ձեր մաշկի վրա զգալ, թե ինչ է նշանակում օտար ժողովրդի լծի ներքո ապրելը: Թուրքերը երբեք չկարողացան բնականոն ձևով մերվել իրենց նվաճած մշակույթներին: Մեզ միշտ սպառնացել են, ահաբեկել, թալանել, չհաշված երջանիկ բացառությունները՝ մենք երբեք թուրքերի հետ նորմալ հարաբերություններ չենք ունեցել: Թեև ճիշտ չի լինի, եթե Ձեզ ասեմ, որ նրանց մեջ լավ մարդիկ չկան: Իհարկե, կան: Սակայն քաղաքական, վարչական, զինվորական կաշառակեր վարչակարգը բոլորիս խեղդում է, չի թողնում շնչել,- բժիշկ Թաբիթը մի պահ դադար տվեց,- լսե՛ք, Թոմա՛ս, Ձեզ մի բան պատմեմ: Իմ զարմիկ Հալիլը թուրք փեսա ունի: Անշուշտ, այս ամենից նա ոչ մի գաղափար չունի: Ինչպե՞ս պետք է իմանար, եթե նա Սիրիայի վիլայեթի կառավարչի քարտուղարն է: Բնակվում է Դամասկոսում և լիովին համոզված է, որ իրենք՝ թուրքերը, արաբների հետ հրաշալի հարաբերություն ունեն: Նաև մտածում է, որ եթե պատերազմ սանձազերծվի, ապա կայսրն իրենց նեղ վիճակից կհանի: Ճիշտ է, գերմանացիներն ու ավստրիացիներն ունեն վիթխարի բանակներ, և թուրքերն էլ կարող են անթիվ քանակով զինվորների զորակոչել իրենց շարքերը, սակայն տեսե՛ք... Չնայած գեներալ ֆոն դեր Գոլցը զինվորական գլխավոր հրամանատարն է Կոստանդնուպոլսում, չնայած գեներալ ֆոն Լիմանի շողշողուն, լավագույն պողպատյա թնդանոթներին՝ արտադրված «Կրուպի» գործարաններում, հրետանիով լցված իր նավերին, իր «Աբդուլ Համիդ» և «Աբդուլ Մեսիդ» սուզանավերին, որոնց վրա Կոստանդնուպոլսի նավագործական արհեստանոցներում տեղադրում են «Վիկկերսի»՝ Ձեր՝ բրիտանական թնդանոթները, անկախ այդ ամենից, իմ կարծիքով, եթե պատերազմ լինի, նրանք կպարտվեն: Գիտե՞ք, թե ինչու...

Թոմասը երկչոտ, բացասաբար շարժեց գլուխը:

- Մի բանի պատճառով, որը դժվար է բացատրել: Թուրքերը դարեր ի վեր դա գիտեն, թեև չեն ընդունում: Երբ 1663 թվականի սեպտեմբերի տասներեքին Յան Սոբիեսկին վերջ տվեց թուրքերի կողմից Վիեննայի պաշարմանը, Օսմանյան կայսրության բախտը վճռված էր: Գիտե՞ք, թե

դրանից հետո քանի տարի է անցել. ճիշտ երկու հարյուր հիսուն տարի՝ երկուսուկես դար, եթե կուզեք՝ հազարամյակի քառորդ մասը: Եկել է ժամը, որ նրանք հեռանան արաբական երկրներից: Թեև կարծես քրիստոնյա մարոններիս համար խալիֆաթը մեզ չվերաբերող բան է: Հալիլն իրավացի է: Նախքան մեր նպատակին հասնելը շատ արյուն ենք կորցնելու: Այս հարցը բոլորին է չարիք բերելու,- բժիշկ Թաբիթը դժգոհությամբ շարժում էր գլուխը:

Հավաքելով իր բոլոր ուժերը՝ Թոմասը սկսեց իր որոնումներն ու մի քանի օր անց վերադարձավ Բիբլոս: Նրան պատել էր կրկին իր տան ավերակները մտնելու ահավոր անձկություն, սակայն մտածեց, որ պետք է դա հաղթահարեր, որպեսզի տանը տեղի ունեցածից գուցե որևէ հետք գտնի: Հաստատ թուրքերն են եղել: Առևանգումը (ավելի վատ բանի մասին չէր ուզում մտածել) ուղղակիորեն կապված էր իր ձերբակալման հետ: Թուրքական քաղաքական ոստիկանությունը գործում էր ահավոր վայրագությամբ, քանի որ ամեն տեղ իրադրությունն իրենց վերահսկողությունից դուրս էր գալիս: Նա թուրքերի անկարողության և կատաղության զոհերից մեկն էր դարձել: Նրանք համոզվում էին, որ այլևս չեն կարողանում վերահսկել իրավիճակը, և դա եվրոպական մամուլում սկսում էր հայտնի դառնալ որպես «արաբական խռովություն»: Բեյրութի թերթերը, վալու հատուկ հրամանով, անգամ այդ մասին հիշատակել չէին կարող, իսկ Դամասկոսում դրությունը շատ ավելի վատ էր, քանի որ արգելված էր թուրքական կառավարության շահերին հակասող որևէ բան մեկնաբանելը:

Բիբլոսում նա ոչինչ չգտավ՝ բացի մի քանի արկղ գրքերից և անձրևից փչացած թղթերից, որոնք ավերված տան փլատակների տակ էին մնացել: Այն, ինչ մի ժամանակ քիչ թե շատ արժեքավոր էր, անհետացել էր, իսկ ինչ-որ մնացել էր, անհնարին էր վերականգնել: Հետքերը ցույց էին տալիս, որ հատուկ մտել էին տանելու այն, ինչ կարողանային: Ինքը՝ տունը՝ հրդեհից սևացած պատերով, քանդված տանիքով ու միջնապատերով, կատարյալ ավերակ էր: Ինչ վերաբերում էր իրենց կողքին ապրող հարևաններին, ոչ ոք այդ մասին չէր ուզում խոսել: Այնպես էր, որ կարծես ո՛չ լսել էին և ո՛չ էլ տեսել: Բիբլոսում նա էլ ոչ մի բան ո՛չ տեսավ, ո՛չ էլ լսեց. այդ պատճառով որոշեց կրկին գնալ Բեյրութ ու այլևս Բիբլոս չվերադառնալ: Մանր անձրևի ներքո նա վշտաբեկ ու դառնացած խթանում էր ձիուն: Երբ գտնվում էր Բիբլոսի հարավից մի երկու մղոն հեռու, ճանապարհի մեջտեղում նրա առաջ դուրս եկավ Նադիմա Ղալիբը՝ լաց

լինելուց կարմրած աչքերով, քարացած ու մինչև ոսկորները թրջված:

- Նադիմա՛,- հիշողություններից հուզված՝ ցատկեց ձիուց ու վազեց դեպի աղջիկը,- Նադիմա՛, ի՞նչ է եղել, որտե՞ղ են կինս ու Էթելը: Մի՞թե ինձ պատմելու ոչինչ չունես: Ի սեր Աստծո, Նադիմա՛...

Աղջիկը մնում էր լուռ, սակայն չէր կարողանում զսպել իր հառաչանքը: Թոմասը համբերատար զննում էր աղջկան՝ չկամենալով ճնշել նրան, որպեսզի չվախենա ու հանկարծ չթողնի և փախչի՝ ոչինչ չպատմելով: Աղջիկը հեծկլտալով ուղղվեց դեպի Թոմասը.

- Պարո՛ն Հարդինգ, տիկնոջը և աղջնակին առևանգեցին մի քանի արաբներ, թուրքեր չէին,- արտասուքը ողողում էր նրա այտերը,- այդ մարդիկ տեղացիներ չէին: Նրանց այս կողմերում չէինք տեսել: Երբ արդեն գրեթե մթնել էր, մի խումբ ձիավորներ եկան հյուսիսից: Ես վերադարձել էի մեր տուն, քանի որ եղբայրս՝ Հուսեյնը, վազեվազ եկել էր ինձ ասելու, որ մեր հորը մի քանի անծանոթներ վիրավորել են. նա միայն հիշում էր, որ դրանք թուրքեր չէին եղել: Ինչպես գիտեք, մորս մեռնելուց հետո նա մենակ էր ապրում տանը: Հուսեյնը ձկնորս է և քիչ է լինում տանը, իսկ ես համարյա միշտ Ձեր տանն էի մնում: Ի՜նչ դժբախտություն... Էթելին թողեցի Ձեր տիկնոջ հետ: Վախեցած դուրս վազեցի Հուսեյնի հետևից: Թեթևակի վիրավորել էին մեր հոր ճակատը, բայց առատ արյուն էր հոսում, փառք Աստծո, վերքը մակերեսային էր: Նրան վիրակապ դրեցինք: Ասաց, որ չգիտեր, թե ինչ է տեղի ունեցել: Միայն հիշում էր մի քանի ձիավորների: Այդ ժամանակ Հուսեյնն ու ես, նշմարելով Ձեր տնից բարձրացող եկող ծուխը, վազելով վերադարձանք այնտեղ: Երբ հասանք, ես ավելի վատ բան էի սպասում. տունն այրվում էր չորս կողմից, և ոչ ոք չէր երևում: Հուսեյնը փորձեց մտնել, սակայն չկարողացավ, միայն թևն այրեց: Այնուհետև վազեց գյուղի կողմը, մինչ ես ձայն էի տալիս տիկնոջն ու Էթելին: Ի՜նչ դժբախտություն... Ստիպված գրեթե երկու օր սպասեցինք, որ կարողանայինք մտնել տնից մնացած տեղը: Վախենում էինք, որ կգտնենք ածխացած մարմիններ: Գյուղի տղամարդիկ մեզ օգնեցին՝ տանիքի ավերակները մի կողմում կուտակելով: Ոչինչ չգտանք: Օգնողներից մի տղամարդ, ով նույնպես ձկնորս է, ասաց, որ Մաջիդ Աբդելին տեսել էր Ձեր տան կողմը վազելիս: Հետո, երբ գնացին նրա հետ խոսելու, այլևս չգտան: Չիմացանք, թե ինչ պատահեց: Պարո՛ն Հարդինգ, հայրս անցած ամիս մահացավ: Պատճառը վերքը չէր, ինչպես մեզ հայտնեց բժիշկը: Սրտի հետ էր կապված:

Նադիման չէր հանդարտվում, շարունակում էր արտասվել. հոր մահը խորացրել էր նրա վիշտը: Սակայն պնդում էր, որ թուրքեր չէին եղել, այլ անծանոթ արաբներ.

- Այդ պատճառով եմ այդքան տխուր: Ես շատ եմ սիրում Էթելին, ու ինձ սարսափեցնում է այն միտքը, թե ինչ կարող է նրան պատահած լինել:

Թոմասին չէր հաջողվի ավելին իմանալ Նաղիմայից: Նա պնդում էր, որ թուրքեր չէին եղել, այլ անծանոթ արաբներ: Ո՞վ էր ցանկացել առևանգել Կարոլինին ու Էթելին: Կարևորն այն էր, որ նրանք ողջ լինեին: Որոշեց գնալ Բեյրութ և խոսել ոստիկանության պետի հետ: Այդ դեպքում գուցե կարողանար առևանգումը կապել տարածաշրջանում գործող որևէ հրոսակախմբի հետ: Հրաժեշտ տվեց Նաղիմային՝ շնորհակալություն հայտնելով նրա տված տեղեկությունների համար: Նրան լուր կտար, եթե Կարոլինն ու Էթելը հայտնվեին: Աղջիկն ամեն խոսքի հետ հուզված հեծկլտում էր: Հետո հեռացավ Բիբլոսի ուղղությամբ՝ անձրևի տակ վազելով: Թոմասը մտախոհ, ձիուն հեծած, բռնեց Բեյրութի ճամփան:

Ոստիկանության պետը՝ Էսսադ Էֆենդին, որ զմյուռնիացի թուրք էր, անմիջապես անցավ ինքնապաշտպանության, հենց որ Թոմասը նրան պատմեց տեղի ունեցածը: Նախ նրան հանդիմանեց, թե ինչու նախապես չէր եկել ոստիկանություն, ինչու էր դեպքը թաքցրել: Ստիպված նրան պատմեց, որ այդ ժամանակ ինքը դեպքի վայրում չի եղել, բայց ոչ մի խոսք չասաց ո՛չ իր ձերբակալման, ո՛չ էլ մնացած բաների մասին: Թուրքերը, բացառությամբ գերմանացիների, գնալով չէին հավատում օտարերկրացիներին և իրենց բոլոր խնդիրների համար մեղադրում էին նրանց:

Թոմասը զայրացած դուրս եկավ ոստիկանությունից. նրան լուրջ չէին վերաբերել: Ուզում էին նրան թևաթափ անել, հասնել այն բանին, որ վերջ տար իր փնտրտուքներին: Նա գտնվում էր Լա Կոռնիշի մոտ և քայլեց արևմուտքից փչող ուժեղ քամուն հակառակ, որն իր հետ բերում էր ալիքների փրփուրը:

Հարդինգների մասին ասում էին, որ շատ համառ են, իսկ Թոմասը պետք է դա ապացուցեր: Նա ոչ միայն մտադիր չէր հեռանալ, այլև վճռել էր Բեյրութում մնալ դեռևս անորոշ ժամանակ. Կարոլինին այդ միտքը դուր կգար:

Այդ երեկո նա տուն փնտրեց: Գտավ մեկը, որը նրան սկզբից կեթ դուր եկավ. այն գտնվում էր քաղաքի հարավային հատվածում: Այնտեղից երևում էր ծովը, իսկ դեպի հյուսիս՝ ծովեզերքի հետևում, հառնում էին ձյունածածկ լեռների գագաթները: Դա ոմն Հասան Աղան բեյի տունն էր՝ ևս մի թուրք, ով վաճառում էր իր ողջ ունեցվածքը: Տան, ինչպես նաև

հարակից հողակտորների և մի ժայռոտ՝ ծառերից զուրկ բլրի համար նա Թոմասին լավ գին առաջարկեց: Վիթխարի տան առջևում արմավենիներով, մեկ մայրու ծառով, մի քանի սոճիներով ու վարդաստանով այգի էր: Դա եզակի ճարտարապետությամբ տուն էր՝ բաց ու փակ պատշգամբներով, այնպիսի սյունաշարերով, որոնք վերին երկու հարկերում կազմում էին գեղեցիկ կամարներ: Ուներ մի նկուղ, որի լուսամուտները բացվում էին պարտեզի վրա, մի մեծ աստիճանաշարք ու ըստ թուրքական դղյակների ավանդական սկզբունքի՝ ներքևի հարկում մի քանի սրահներ, մի հսկայական խոհանոց և ծառայողների սենյակներ, որոնք գտնվում էին ախոռների դիմաց: Վերին մասում կրկին սրահներ էին, մի աշխատասենյակ, ու երկու հարկերում էլ մի քանի ննջարաններ կային: Նա տան առքուվաճառքի գործարքը կնքեց կահավորանքով և այն վիճակով, որում գտնվում էր: Թուրքը, ով սուլթանի վարչակարգում եղել էր Լեռնային Լիբանանի ինքնավարության մաքսատների պետը, ասաց, որ Թոմասն իրեն վճարելու էր միայն տան համար, ինչը նույն գինն էր թե՛ կահավորանքով, թե՛ առանց դրա: Նաև ասաց, որ այդ ողջ կահույքը Զմյուռնիա տեղափոխելն անիմաստ է: Կահույքն օսմանյան ճաշակով էր՝ խեցեպատ մուգ փայտից, լավորակ բազմոցներ, բայց՝ չափից ավելի զարդաքանդակներով բեռնված: Անգամ մի գրադարան-սրահ կար՝ հատորներով լի գրադարակներով: Մի՞թե գրքերն էլ չէր տանում:

- Ոչ՛,- պատասխանեց Աղանը:

Նա դրանք, ըստ քաշի, գնել էր մաքսատանը: Ասաց, որ գրքերը գալիս էին Ալեքսանդրիայից, Եգիպտոսից, ու թեև ինքը չէր բացել արկղերը, սակայն գիտեր, որ դրանցից շատերը եվրոպական գրքեր էին: Թուրքը միայն ուզում էր վաճառել ու հեռանալ: Տան գինը գնահատեցին երեք հազար ֆունտ ստեռլինգի համարժեքով: Դա մեծ գումար էր, սակայն Թոմասի ֆինանսական միջոցներն ավելի քան բավարար էին, և տունն էլ նրա սրտով էր:

- Գիտեք, պարո՛ն Հարդինգ,- Աղանն ուզում էր անկեղծանալ նրա հետ,- մի քանի տարի առաջ կարծում էինք, թե այս վայրն իսկ և իսկ դրախտ է. կլիման, Անատոլիայի կենտրոնական մասի համեմատ, լավ է, շատ ավելի մեղմ, մարդիկ՝ հյուրասեր: Կինս հրաշալի տարիներ անցկացրեց այս տանը: Շատ լավ կին էր: Մենք գրեթե բարեկամներ չունեինք, կինս էլ գրեթե դուրս չէր գալիս տնից, որտեղ իրեն երջանիկ էր զգում... Ա՜հ, Աստված ողորմած է, սակայն պետք է մեզ ավելի երկար ժամանակ տար այս երկրի վրա: Այդպես չէ՞: Այն ժամանակ հասարա-

կության թուրք անդամներս արտոնյալներ էինք: Մաքսատների պետի իմ պաշտոնում ես շատ լավ վաստակեցի: Ձեզ հետ ուզում եմ անկեղծ լինել. ես այդ տարիներից, սակայն, ոչ մի հուշ չեմ ուզում ունենալ: Ես կուշտ եմ Բեյրութից և նրա հավակնոտ բնակիչներից: Այն, ինչ նախկինում հաճոյակատարություն էր և գլուխ խոնարհել, այժմ փոխարկվել է ատելության ու չարակամության: Ես արդեն մեծ տարիք ունեմ ու ցանկանում եմ վերադառնալ Զմյուռնիա, որտեղ և կանցկացնեմ գթառատ Աստծո կողմից ինձ շնորված կյանքի մնացած մասը: Այնտեղ դեռ ունեմ ծնողներիս պատկանող տունը: Այս կահույքի կարիքը չունեմ ու նախընտրում եմ, որ այն մնա իր տեղում, քան էժան գնով վաճառեմ: Գուցե վաճառեմ տան արժեքի հինգերորդ մասով, բայց ինձ համար միևնույնն է: Միակ բանը, որ ցանկանում եմ, հնարավորինս շուտ այստեղից հեռանալն է: Հազար անգամ նախընտրում եմ այն վաճառել մի անգլիացու, քան լիբանանցու: Տունը շատ ամուր է կառուցված, ու Դուք այն երկար տարիներ կվայելեք, դեռ երիտասարդ եք:

Թուրքը նրան նայեց վերևից ներքև: Նա համաձայնության էր գալիս բավականին երիտասարդ մեկի հետ, ում փողը բավականացնում էր, որ իրեն վճարեր: Թուրքը պետք է համոզվեր, որ իր խոսակիցն այն խենթ անգլիացիներից է, ովքեր թողնում են իրենց կանաչ հողն ու հարուստ երկիրը՝ մի թշնամական ու փոշոտ վայրում հաստատվելու համար: Ինչպե՞ս կարող էր փոշին այդքան դուր գալ անգլիացիներին:

- Եթե ինձ թույլ տաք, ապա՝ բարեկամական մի փոքրիկ խորհուրդ: Գնե՛ք իմ տունը, այնուհետև վերադարձե՛ք Լոնդոն: Ես մի անգամ եղել եմ Լոնդոնում: Վիթխարի քաղաք է: Այդ վայրը կվերածվի կրետի մի իսկական բնի: Մենք՝ թուրքերս, որ երկար դարեր անգլիացիներին միշտ վերաբերել ենք եղբոր պես, այժմ նրանց մեծագույն թշնամիներն ենք: Այսպիսին է կյանքը: Մի քանի տարի հետո նրանց թշնամիները դուք՝ այստեղ ապրողներդ կլինեք: Այստեղ կյանքը ժամանակ առ ժամանակ լավ է ու հրաշալի, բայց հիմա կգա միմյանց ատելու մի երկար ժամանակաշրջան: Կամ գուցե Դուք հավատո՞ւմ եք, թե արաբ մուսուլմանները կընդունեն արաբ քրիստոնյաներին... Որոշ ժամանակ, քանի դեռ մեզ այստեղից քշելու ընդհանուր շահ ունեն, Դուք նրանց կտեսնեք՝ ձեռք ձեռքի տված, իրար անվանելով եղբայր, ամեն քայլափոխի գրկախառնվելիս: Այն կարծիքին են, որ ամեն բանում մեղավորը մենք ենք՝ թուրքերս, ու երբ մենք վերջնականապես թողնենք Սիրիան, իբր ամեն ինչ կկարգավորվի... Նրանց ես շատ լավ գիտեմ: Գիտե՞ք, թե Ձեզ ինչ կասեմ: Տաքարյուն են ու միմյանց տանել չեն կարողանում: Մեկը մյու-

սին նախանձում է: Դա իրոք դժվար բան է՝ իրենց էության անբաժան մասը, հասկանո՞ւմ եք: Կռվարարությունն այդ մարդկանց արյան մեջ է, նրանց բնույթն է, ու այդպես էլ կշարունակեն իրենց ողջ գոյության ընթացքում: Ձեզ ասում էի, որ բոլորը մեզ մատնացույց են անում որպես մեղավորների: Տեսե՛ք, մենք շատ երկար ժամանակ կառավարել ենք աշխարհի այս մասը: Կարծում եք, թե առանց մեզ նրանք ավելի լա՞վ վիճակում կլինեին: Եվ ավելի լա՞վ կլինեն մեր գնալուց հետո: Ո՛չ, ոչ մի դեպքում: Հիմա մի ընդհանուր թշնամի ունեն՝ մեզ՝ թուրքերիս, ու կարծում են, թե հետո այստեղ դրախտ է լինելու: Չարաչար սխալվում են: Լսե՛ք, ընդունում եմ, որ մենք ավելի լավ կարող էինք մեր գործն արած լինել, որոշ դեպքերում թույլ է տրվել կոռուպցիա, որ կառավարումը դանդաղ է և խառնաշփոթ, բայց, բարեկա՛մս, չէ՞ որ սա Միջերկրականն է, որտեղ աշխարհընկալման մի հատուկ կերպ է՝ այլոց գործելակերպի հանդեպ ցինիզմի, հեգնանքի, պրագմատիզմի ու նախանձի մի յուրահատուկ խառնուրդ: Ա՜հ, այստեղ հարկավոր է օգտվել կյանքից: Ի՞նչ գործ ունի այստեղ Լյութերը: Ամեն ոք իր արժեքն ունի, և անշուշտ՝ թուրքերը նույնպես, ինչպես նաև հայերը, հույները, սիրիացիներն ու Լեռնալիբանանի մյուս բնակիչները՝ քրիստոնյա, թե մուսուլման: Ի վերջո, Ձեզ չպետք է բացատրեմ, թե ինչպես են այստեղ ապրում: Ներեցե՛ք ինձ շատախոսելուս համար: Եթե Ձեզ դուր է գալիս տունը և համաձայն եք գնին, ապա Ձերն է: Գնանք նոտարի մոտ: Ես Ձեզ համար կպատրաստեմ առքուվաճառքի պայմանագիրը, ու հետո, պնդում եմ, գնացե՛ք Անգլիա՝ այնտեղ կարոտով մտաբերելու Բեյրութի մեղմ արևը: Այս երկրից ես ցանկանում եմ միայն հիշողություններ ունենալ:

Այդ օրը Թոմասը ձեռք բերեց սեփականությունը: Չնայած թուրքի խորհուրդներին՝ նա Լոնդոն վերադառնալու ոչ մի մտադրություն չուներ, մանավանդ՝ առանց Կարոլինի և Էթելի ու գուցե էլի ինչ-որ երրորդ մեկի: Ինչ վերաբերում էր Բաքերին, համոզված էր, որ նրան սպանել են: Բաքերն ուժեղ տղամարդ էր ու անգամ եթե վերջին շնչում լիներ, թույլ չէր տա, որ առևանգեին կնոջն ու դստերը:

Բոլոր դեպքերում սեփական տուն ունենալն անհրաժեշտություն էր: Նրա համար հաճելի էր բժիշկ Թաբիթի տանը, սակայն կարծում էր, որ մոտեցել էր այնտեղից դուրս գալու պահը, թեև այդ մարդուն անչափ դուր էր գալիս իր ընկերակցությունը:

Բժիշկ Թաբիթն էր, որ նրան այդ տունը գնելու խորհուրդ տվեց: Այդ նա Թոմասին տեղեկացրեց, թե որքան պետք է վճարեր՝ միաժամանակ հավաստիացնելով, որ խոսքը մի հրաշալի գործարքի մասին է:

- Իրոք ճիշտ է, որ շատ թուրքեր ջրի գնով են վաճառում իրենց ունեցվածքը: Դա իջեցրել է առանձնատների գինը, սակայն այն, ինչ Դուք եք ձեռք բերում, հրաշալի անշարժ գույք է, ու եթե ուշադրություն չեք դարձրել, ապա բլրից, որ Ձեր տան կողքին է, երևում է ողջ ծովածոցը, և ընդամենը մի քանի տարի հետո տան համար Ձեր վճարած գումարը կկրկնապատկվի: Շնորհավորում եմ Ձեզ:

Այդ նույն օրը՝ երեկոյան, երբ նոտարական գրասենյակում ստորագրեցին առքուվաճառքի պայմանագիրը, Աղանը նրան հանձնեց բանալին: Թոմասը գնաց՝ ավելի մանրամասն ծանոթանալու իր տանը: Երբ դուռն էր բացում, տեսավ բժիշկ Թաբիթին ու մի անծանոթ մարդու, ովքեր դեպի իր կողմն էին վազում:

- Պարո՛ն Հարդինգ: Այս մարդը Հակոբ Բողոսյանն է: Ինձ հետ աշխատում է քաղաքային հիվանդանոցում: Ինձ ասում է, որ այնտեղ մի հիվանդ ունի՝ գլուխը փամփուշտից վիրավոր, ոմն Բաքեր: Այդպես չէ՞ին կոչում Ձեզ ծառայող անգլիացուն:

Թոմասի սիրտն ուժգին բաբախեց: Բաքե՛ր... Մինչ վազում էին դեպի հիվանդանոց, որը կես մղոն հեռավորությամբ բլուրներից մեկի վրա էր, գլխում հազար ու մի միտք էր պտտվում... Մի գուցե Բաքերը կասեր, թե որտեղ են կինն ու դուստրը, կամ առնվազն կպատմեր, թե ինչ է տեղի ունեցել...

Հիվանդանոցը լեփ-լեցուն էր մարդկանցով: Նրան զարմացրեց հիվանդասենյակների վիճակը: Շենքը շատ հին էր, նախկինում գուցե զորանոց էր եղել, առաստաղը խորանակապ էր՝ շերտ առ շերտ կրով սպիտակեցված, ինչը տարօրինակ տեսք էր հաղորդում պատերին: Բաքերը պառկած էր մի ժանգոտված մահճակալի վրա՝ անփութորեն ներկված սպիտակ գույնով: Անգիտակից վիճակում էր, նրա վիրակապված գլխին մի մեծ մուգ բիծ կար: Թոմասը, ոչ թե վազելուց, այլ սաստիկ հուզվելուց ծանր շնչելով, մոտեցավ նրան:

- Բաքե՛ր, Բաքե՛ր, Դուք ինձ լսո՞ւմ եք...

Հիվանդը մնաց լուռ ու անշարժ: Մոտեցավ բժիշկներից մեկը:

- Անօգուտ է, մի՛ փորձեք: Այս մարդը եկել է երեկ՝ առավոտյան: Ավելի ճիշտ, ինչ-որ մեկը նրան դրել էր հոսպիտալի ուղիղ դռան առջև: Չեմ կարող Ձեզ ասել, թե նա կոմատոզ վիճակում է, քանի որ բացի այլ ծանր վերքերից՝ նրա գլխին հասցրել են մի քանի հարված: Պետք է, որ շատ արյուն կորցրած լինի: Ինձ հայտնել են, որ այս մարդն անգլիացի է և աշխատում էր Ձեզ համար: Մենք նրան շիճուկ ենք ներարկում, որպեսզի

չջրազրկվի, բայց չեմ կարող Ձեզ վստահեցնել, որ նա կվերականգնվի, անգամ գիտակցության կգա... Պետք է հուսանք, նա ամուր կազմվածքի տեր է: Ինչ վերաբերում է ոստիկանությանը, ապա մենք պարտավոր ենք տեղեկացնել նրանց մասին, ովքեր գնդակից վիրավոր վիճակում հայտնվում են մեզ մոտ: Մենք չենք գտել ոչ մի փամփուշտի՝ գնդակի հետք, հետևաբար առայժմ չենք հայտնել: Դուք կասեք, թե ի՞նչ անենք, սակայն թո՛ւյլ տվեք ասել, որ իմ կարծիքով՝ դեռ քսանչորս ժամ պետք է սպասենք: Ի՞նչ կասեք, պարո՛ն Հարդինգ:

Բժիշկը հույն էր և ազդեցիկ արտաքին ուներ՝ թավ բեղեր ու ալեխառն ալիքավոր մազեր: Թոմասը միշտ հավատացել էր Հիպոկրատին, իսկ այդ պահին թվում էր, թե նա է իր առջև կանգնած:

- Համաձայն եմ, բժի՛շկ...

- Արիստոտել Պապապուլուս՝ Ձեր խոնարհ ծառան, այս հիվանդանոցի գլխավոր վիրաբույժը: Ինչպես տեսնում եք, սուղ միջոցներ ունենք ու շատ հիվանդներ: Ամեն օր գնալով իրավիճակը վատթարանում է: Ձեմ կարծում, որ շուտով ամեն բան իր տեղը կընկնի: Քանի տարի է՝ բյուջեի դատարկության պատճառով անգամ չենք կարողանում սպիտակեցնել հիվանդասենյակները:

Թվում էր, թե բժիշկը ներողամտություն էր հայցում: Հետո բավականին երկար ժամանակ խոսեցին, ու մի երկու ժամ անց Թոմասն ու բժիշկ Թաբիթն անտրամադիր հեռացան մռայլ հիվանդանոցից: Բժիշկ Թաբիթը լավատես չէր Բաքերի ապաքինման առումով:

- Գլխին հասցված այդ հարվածներն իսկապես լավ բան չեն կանխագուշակում, բայց սպասենք: Ես լիովին պատկերացնում եմ, թե Ձեզ համար ինչ է նշանակում այս ամենը: Այդ մարդը Ձեզ համար մնացած միակ հետքն է: Լավ: Բժիշկ Բողոսյանի հետ պայմանավորվել եմ, որ ինձ տեղյակ պահի Բաքերի վիճակի մասին, իսկ իմ ծառայի միջոցով գրություն կուղարկեմ Ձեր նոր տուն: Դուք իսկապե՞ս ուզում եք այս գիշեր Ձեր տանը քնել: Այդ հսկա տունը, անշուշտ, մի մեծ թերություն ունի. այն շատ մեծ է: Ինչևէ, մինչ վաղը, հանգիստ եղե՛ք: Մենք ուշադիր կհետևենք Բաքերի վիճակին:

Թոմասը բարձրացավ բլուրն ի վեր՝ դեպի իր նոր տունը: Հոգու խորքում մտածում էր, որ այդ պահին, երբ նոր էր գնել տունը, Բաքերի հայտնվելը ճակատագրի նշան է: Ուզում էր տունը կարգի բերել մինչև Կարոլինի և Էթելի գալը: Նրա աչքերից արցունքներ ցայտեցին:

Լուսաբացին վեր կացավ՝ զարմացած այն բանից, թե որքան լավ էր քնել և դուրս եկավ սյունազարդ նախասրահ, որը շրջապատում էր

ողջ առաջին հարկը: Նրա դիմաց Միջերկրական ծովը մի մութ բիծ էր, սակայն շուտով վերածվեց արծաթավուն փայլատակող սկավառակի: Բեյրութում արևը ծագում էր լեռների հետևից և հայտնվում ավելի ուշ, երբ արդեն ամեն ինչ ողողված էր լույսով: Ծովածոցն այնպիսի տեսարան էր, որով նա շարունակ զմայլվում էր. նրա աջ կողմում ձյունածածկ սպիտակ լեռները կտրատվում էին վառ կապույտի դիմաց: Թեև ամայի, բայց ընդարձակ պարտեզը խոստանում էր դառնալ մի չքնաղ վայր: Հողամասի մնացած՝ հարավին նայող մասը չոր ու քարքարոտ բլուր էր, որ իջնում էր դեպի ծով: Այնուամենայնիվ, նրա բարեկամը՝ բժիշկ Թաբիթը, համոզված էր, որ միայն այդ հողակտորն արժեր տասն անգամ ավելին, քան այն, որ դրա համար վճարվել էր: Թոմասը թոթվեց ուսերը, նա ո՛չ ցանկանում էր բիզնեսով զբաղվել և ո՛չ էլ ֆինանսական խնդիրներ ուներ: Ամենակարևորն այն էր, որ ոչ ոք նրա առաջ չէր կարողանալու փակել այդ հրաշալի տեսարանը: Ինչ վերաբերում էր մերձակա շինություններին՝ հարևան տներին, ապա դրանք նույնպես մեծ առանձնատներ էին: Դրանցից մի քանիսը զբաղեցրել էին թուրք մեծահարուստ ֆինանսիստներ, իսկ մեծ մասամբ՝ արաբ բարձրաստիճան զինվորականներ, գործարարներ: Քաղաքում լուրեր էին պտտվում, որ թուրքերը հեռանում են Թուրքիա. կարծես նրանք կանխատեսում էին, որ գնալով իրենց համար ամեն բան վատթարանալու էր: Հիմնականում այն կարծիքին էին, որ թուրքերն արդեն կողոպտել են երկրի բոլոր հարստությունները և հեռանում են, քանի դեռ ժողովուրդը դուրս չի եկել կողոպտիչների դեմ: Այդ ամենը, անշուշտ, հարաբերական էր, քանի որ Լեռնային Լիբանանն օգտվում էր լայն ինքնավարությունից, սակայն, ինչ խոսք, ի վերջո, դեռ թուրքերն էին այնտեղ տերերը: Լեռնալիբանանի Մութասառեֆն այնքան անկախ էր, որ նրա ներկայացուցիչներն օսմանյան խորհրդարանի վերջին նիստերին չէին մասնակցել: Բոլորը գիտեին, որ դա մարոնականների ճնշման հետևանքով էր, ովքեր ինքնավար կառավարությունում մեծամասնություն էին կազմում: Փաստարկն այն էր, որ Կոստանդնուպոլիս ուղևորվելը կնշանակեր կորցնել ինքնավարության մեծ մասը: Իրենք դրան պատրաստ չէին:

Թոմասը որոշեց երկու սպասավոր և մեկ այգեգործ վարձել՝ տունը խնամելու նպատակով: Հագնվեց և արագ քայլեց դեպի հիվանդանոց: Երբ նա մտավ, բժիշկ Բողոսյանը, ով այդ օրը հերթապահում էր, գնաց նրան ընդառաջ՝ մտահոգ շարժելով գլուխը.

- Շատ եմ ցավում, պարո՛ն Հարդինգ: Ձեր ծառան՝ պարոն Բաքերը, քիչ առաջ մահացավ: Նա անզոր գտնվեց ստացած հարվածների դեմ:

Գիտեմ, թե նրա հետ խոսելը որքան կարևոր էր Ձեզ համար: Ի՞նչ կարող ենք անել: Եթե թո՛ւյլ տաք, նրան հնարավորինս շուտ կթաղենք: Մենք նրան արդեն տեղափոխել ենք, հիվանդանոցի դիահերձարանում է, եթե ուզենաք ընկերակցել ինձ, ապա աճյունն այստեղ է:

Թոմասը լուռ համաձայնեց: Ընկճված էր, տխուր, չգիտեր, թե ինչ անի: Նրա միակ մխիթարանքն այն էր, որ գոնե մի մոտիկ նշան կար. ո՞վ էր խեղճ Բաքերին այդ վիճակով տարել մինչև հիվանդանոցի դուռը: Մյուս կողմից՝ օսմանյան ոստիկանության հետ նրա հարաբերությունն այնքան բացասական էր եղել, որ առայժմ նախընտրում էր չգնալ և նրանց ոչինչ չբացատրել: Դամասկոսի վալու բանակը, ոստիկանությունը և նրա ներկայացուցիչները միակ օղակներն էին, որոնց շրջանակում շփվում էին թուրքերն ու լիբանանցիները:

Նա բժիշկ Բողոսյանի հետ գնաց երկար ու դատարկ միջանցքով, որը տանում էր դեպի հիվանդանոցի դիարանը: Բոլոր իրադարձությունները միասին նրա դեմ էին դուրս եկել: Նա դառնացած մտավ դիարան, գուցե սխալվել էր, պետք էր հեռանար, վերջնականապես ամեն ինչ թողներ ու վերադառնար Օքսֆորդ, զբաղվեր՝ դաս տալով, ուսանողների հետ խոսեր պատմական մի հեռավոր վայրի մասին, որտեղ մի անգամ ինքն էր հայտնվել: Հիշում էր Բաալբեկում անցկացրած այն հրաշալի օրերը, երբ Կարոլինն իրենից ոչ հեռու նկարում էր ծովորները, ժպտում, երբ ինքը, գետնից համարյա քսան յարդ բարձրությամբ կանգնած, քիվի վրա որևէ քանդակի մաս գտնելիս ձայն էր տալիս նրան: Այդ օրերը, ավա՜ղ, անհետ չքացան: Մարդը երբեք չի եղել իր բախտի տերը: Նույնիսկ կարծր ու արտաքուստ հավերժ թվացող քարերը դարերի ընթացքում վերածվելու են մանր ավազի, որն ամեն ինչ իրենով է պատելու:

Բաքերի մերկ մարմինը դրված էր մարմարի սեղանի վրա, որտեղ կատարում էին դիահերձումները: Նրա գլուխը փաթաթված էր վիրակապով, վզից մինչև աճուկ ձգվում էր կոպիտ մի կար: Ծորակից մետաղյա դույլի մեջ ընկնող ջրի կաթոցն ու հատակին դրոշմված մուգ բիծը մթնոլորտը դարձնում էին ավելի ճնշող: Հառաչեց: Այդ մարդը՝ Բաքերը՝ բարեհոգի ու կաղնու պես ուժեղ, առանց որևէ պատճառի սպանվել էր մութ ուժերի կողմից: Թոմասը շուռ եկավ դեպի Բողոսյանը, ով նրան պատասխանեց դեմքի ըմբռնելու և կասկածամտության արտահայտությամբ: Թոմասը ցածրաձայն ասաց, որ նրան արժանավայել ձևով հանձնեն հողին և նրա անունով հուշաքար դնեն: Ավելացրեց նաև, որ չգիտի նրա ծննդյան տարեթիվը. Բաքերի անձնագիրն ու փաստաթղթերն անհետացել էին:

- Ո՛չ,- մի անսպասելի ձայն առարկեց սրահի խորքից,- անգլիացին

մի թուղթ ուներ իր տաբատի գրպանում:

Ձայն տվողն այն բուժակն էր, ով վիրակապել էր Բաքերի վերքերը:

- Մի թո՞ւղթ…,- նյարդային ձայնով հարցրեց Թոմասը:

- Այո՛, ձեռքով գրված: Ահավասիկ: Ճմռթված է, նրանից մի հատված պակասում է, բայց մի քանի տող կա, որ կարելի է կարդալ, անգլերեն է, հավանաբար գիտակցությունը կորցնելուց առաջ է գրել:

Թոմասը վերցրեց ճմռթված ու վրան արյան բծեր ունեցող թուղթն ու ալեկոծ սրտով մոտեցավ պատուհանին: Գրեթե անընթեռնելի էր, աղոտ, հազիվ կարողացավ վերծանել այն տողերը, որ մնացել էին անգլերեն տեքստից. «Մի խումբ ձիավորներ մեզ վրա հարձակվեցին մթնշաղին, իմ կարծիքով՝ համիդիեներ էին: Ինձ անջատեցին լեռի Կարոլինից, ով գիրկն էր առել իր դստերը: Ես մնացել եմ Բեյրութին մոտ մի վայրում՝ Յու… բեյի տանը: Նա…»:

Թոմասի հուզմունքն այնքան մեծ էր, որ նստեց: Տեքստը, թեև ծալծլված, բայց հստակ ասում էր՝ «իր դստերը»: Սիրտն այնքան արագ էր բաբախում: Բաքե՞ր… Անգամ այն աշխարհից էր իրեն հույսի մի ուղերձ ուղարկում: Կենդանի են: Գոնե չէր ասում, որ նրանք մահացել են կամ վիրավոր են: Անգամ մի բառ իսկ շշնջալու ի վիճակի չլինելով՝ թուղթը փոխանցեց բժիշկ Բողոսյանին, ով այն զննեց մեծ անհանգստությամբ: Մի հայացք ձգելով՝ կարդաց գրությունը:

- Իմ սիրելի՛ բարեկամ: Անշուշտ, համիդիեները թուրքերի անկանոն զորախմբերն են: Նրանք, առանց իմանալու, շատ դեպքերում կատարվող ոճրագործությունների հանցակիցներ են դառնում: Թուրքերը նրանց ստիպում են, հարկադրաբար մղում այն բանին, որ կատարեն հանցագործության ամենավայրագ ու դժնի մասը: Սակայն միշտ չէ, որ այդպես է: Ինչ վերաբերում է այդ Յու… բեյին, ապա հնարավոր է, որ նա Յուսուֆ բեյն է՝ եկամտահարկ հավաքողը: Մի զզվելի ու այլասերված մարդ է, մատնել է անգամ իր յուրայիններին: Սակայն այլևս այստեղ չէ, և ոչ ոք չի կարող հաստատել, որ նրա մատը խառն է այս գործում: Ամեն բան շատ տարօրինակ է: Ոչ ոք չէր համարձակվի առևանգել մի անգլուհու, հարձակվել օտարերկրացու տան վրա ու այրել այն: Հաստատ նրանց հրաման է տրվել: Յուսուֆ բեյը թերևս համագործակցել է քաղաքական ոստիկանության հետ: Ձեզ հետ կատարվածից հետո թվում է, թե համոզված են, որ Դուք անգլիական լրտես եք: Ձեզ կցանկանան ահաբեկել, որ Դուք հրաժարվեք նրանց փնտրելուց և հեռանաք երկրից: Ինչպես տեսնում եմ, Ձեր կնոջն ու դստերն առևանգել են: Դա պետք է, որ սպառ-

նալիք լինի: Նրանք կենդանի են: Ցանկացած պահի կհայտնվեն: Թուրքերն ուզում են Ձեզ ապացուցել, որ այստեղ իրենք են կառավարում, որ անհնարին է պայքարել իրենց իշխանության դեմ:

- Սակայն չէ՞ որ մինչև հիմա ես միայն ավերակներ եմ ուսումնասիրել,- Թոմասն ընդվզում էր իր և իր ընտանիքի հանդեպ թույլ տրված անարդարության դեմ:

- Պարո՛ն Հարդինգ, Դուք ինձ չասացի՞ք, որ հանդիպում եք ունեցել Ազուրիի հետ: Դուք պրոֆեսոր Պետերսոնի հետ չե՞ք բարձրացել մարոնական մենաստանը: Այնտեղ չայցելեցի՞ք պատրիարքին: Այդ տեսակ բաներն այստեղ այլ կերպ են մեկնաբանվում: Բարձր դռան քաղաքական ոստիկանությունը, հիմա էլ «Իթթիհադը» հանգիստ չունեն: Իրենց բոլոր չարիքները վերագրում են արտասահմանի ազդեցությանը, կատաղած են այն բանից, ինչ տեղի է ունենում ողջ կայսրությունով մեկ: Կարծում են, թե մի քանի անգլիացիներ ցանկանում են փոխել Մեծ Բրիտանիայի՝ մինչ այժմ ունեցած չափանիշը՝ կայսրությունը պետք է միացյալ լինի: Այդ առումով նրանք հրաշալի հարաբերություններ ունեն գերմանացիների հետ: Դուք ակամայից դարձել եք կասկածելի մի մարդ, ու թուրքերը հազիվ թե փոխեն իրենց կարծիքը: Սա ընդամենը ենթադրություն է:

Թոմասը սաստիկ զայրացած բացականչեց.

- Կփնտրեմ Յուսուֆ բեյին և կստիպեմ նրան, որ ինձ ասի, թե որտե՞ղ է իմ ընտանիքը: Կենդանի՞ են: Մինչև չգտնեմ նրանց, չեմ հանգստանա:

Բժիշկ Բողոսյանն անհանգստությամբ նրան նայեց:

- Ա՜հ, իմ սիրելի՛ բարեկամ: Օսմանյան կայսրությունը վիթխարի է: Եթե ուզենա, որ չգտնեք այդ մարդուն, երբեք էլ չեք գտնի: Նույնն է, որ դարմանի մեջ ասեղ փնտրեք: Թո՛ւյլ տվեք Ձեզ մի խորհուրդ տալ... Տեսե՛ք, ինձ նման հայեր կան՝ ցրված ողջ կայսրությունով մեկ: Ոմանք զբաղեցնում են կարևոր պաշտոններ, մի քանիսը խորհրդարանում են: Մի քանի հոգու ճանաչում եմ Կոստանդնուպոլսում: Նրանք կարող են մեզ տեղեկություն տալ Յուսուֆ բեյի մասին: Եթե գնացել է Կոստանդնուպոլիս, կկարողանանք հանդիպել նրան: Խորհուրդ չէի տա, որ ինքներդ Ձեզ վտանգեք: Արդեն մի դառը փորձ ունեք: Համաձա՞յն եք:

Թոմասը համաձայնեց՝ կրճտացնելով ատամները: Անկախ ամեն ինչից՝ իրեն մի փոքր թեթևացած էր զգում. կինն ու դուստրը Բիբլոսում իրենց տան վրա կատարված հարձակման ժամանակ չէին սպանվել: Բաքերն այդ մասին հստակորեն ասում էր իր գրությունում: Դեռևս իր ընտանիքը գտնելու հույս կար: Պատահականությունը նրան օգնել էր,

որ ընկնի կորած հետքի վրա: Թեև դրանք ընդամենը ենթադրություններ էին, այդուհանդերձ նրան հույս էին ներշնչում:

Այդ առավոտ Բաքերի մարմինը տեղափոխեցին քրիստոնեական գերեզմանոց, որտեղ նրան հուղարկավորեցին բողոքականներին հատկացված մասում: Այդտեղ թաղվածներից շատերը բրիտանացիներ էին: Թոմասը մի քանի անուններ կարդաց՝ Ջոն Ֆիլդինգ, Ջեյմս Քամերոն, Կարեն Արմսթրոնգ, Մերի Ուիսլի, Կլարկ Հոկնե: Մի քանի տապանաքարեր կոտրված էին կամ գետնին շուռ եկած. ազգականներ չկային, որ խնամեին շիրիմները: Թոմասը Բաքերին ճանաչում էր տարիներ ի վեր, ցավում էր նրա կորուստը: Գինու, կյանքի հաճույքների սիրահար Բաքերն այդ երկրում բացահայտել էր դրախտը, սակայն նրա համար ամեն ինչ վերջացել էր:

Բեյրութի շողշողուն արևի ներքո Թոմասն իր նոր տուն վերադարձավ գլխահակ ու տխուր, բայց վճռեց, որ չի հանձնվելու: Այդ պահից սկսած որոշեց խնամքով կարգավորել իր տունը: Ուզում էր փոխել կահույքը:

Նա գտավ Սլիմա Մելլի անունով մի հնաոճ և ամեն տեսակի իրեր ու կահույք վաճառողի, ինչպես նաև մի քանի անգլիացիների, ովքեր, քանի որ թողնում էին երկիրն ու վաճառում իրենց ունեցվածքը, նրան առաջարկեցին որոշ բաներ գնել: Թոմասին դուր եկավ այդ մարդկանց հետ շփումը, ու նա գնեց ամեն ինչ, ներառյալ՝ լուսամփոփները, երկու ապակյա սպասք, ամանեղեն, գորգեր: Թոմփսոնները գերադասում էին ունենալ փող և ոչ թե այն ամենը, որն արդեն վայելել էին: Բացի դրանից՝ դրանք Անգլիա տեղափոխելը շատ թանկ կարժենար: Արդեն մեծ տարիք ունեին, ու նրանց համար այդ ամենն ավելորդ էր: Այն փաստը, որ մեկ այլ անգլիացի էր գնում դրանք, մեղմացնում էր նրանց կսկիծը: Մյուս կողմից Մելլին լավ գնով ձեռք բերեց Աղաևի կահույքի մեծ մասը. նա կգտներ դրա գնորդին:

Թոմասի բախտը բերեց՝ գտնելով քրիստոնյա մարոններ Ժոզե և Մարիա Շաբրի ամուսիններին՝ ողջախոհ ու հարգալից մարդկանց, ովքեր նոր էին եկել Հալեպից և ապրուստի ու օթևանի կարիք ունեին: Համաձայնության եկան, և ընդամենը մեկ շաբաթ անց նրանք դարձան շատ անհրաժեշտ մարդիկ:

Այգեգործը՝ Ահմեդ էլ-Մանսուրը, տարիքով նուսայրի արաբ էր՝ այրի, շատ որդոց տեր, ովքեր իրենց կյանքն ունեին: Այնուամենայնիվ, դեռ բավականաչափ եռանդի տեր էր այգի մշակելու համար: Վեր էր կենում արևածագին ու ամբողջ օրն անցկացնում էտելով ու փորելով: Թոմասին ասաց, որ արևոտ կողմը շատ հարմար է մի փոքրիկ բանջարանոց ստեղ-

ծելու՝ լոլիկ, տաքդեղ, դդում, իսկ մյուս կողմում՝ հոտավետ բույսեր աճեցնելու համար: Թոմասը ոգևորությամբ ընդունեց այդ խորհուրդները:

Մի քանի շաբաթ անց տունը շատ էր փոխվել: Աննա Լեֆեբրը՝ ֆրանսերենի մի դասախոս, ում հետ պատահաբար ծանոթացել էր Ամերիկյան վարժարանում, որտեղ նա աշխատում էր որպես թարգմանիչ, կահավորելու մեծ ջիղ ուներ: Թոմասը հաճույքով ընդունեց նրա առաջարկները: Ինքը, բնականաբար, այնքան ժամանակ չուներ, որ Լևանտի ազդեցությամբ կառուցված թուրքական մեծ առանձնատունը վերափոխեր անգլիական դղյակի: Նրան զարմացրեց արդյունքը: 1914 թվականի փետրվարին տունն ուրիշ էր, Թոմաս Հարդինգը՝ նույնպես:

Թոմասին նրա բարեկամ Հալիլ Զինեի միջոցով հրավիրեցին մասնակցելու Բեյրութում անցկացվող «Լամարկազի» գաղտնի կազմակերպության ժողովներին: Սկզբում բոլորի համար դա ընդամենը մի սովորական մշակութային կազմակերպություն էր՝ գրականության հետ առնչվող հարցերով, որը հետագայում հենց իրենց՝ կազմակերպության անդամների շրջանում վերածվեց կատակների ու ծաղրի առարկայի: 1913 թվականի վերջերին այն փոխարկվեց իսկական քաղաքական կուսակցության: Մի օր Աբդուլ Գանի էլ-Ուրեսսիի և Աբդուլ Համիդ Զոհարարիայի ուղեկցությամբ Դամասկոսից եկան Ռաֆի և Հակի ալ-Ազամ եղբայրները. չորս արաբ առաջնորդներ, ովքեր եկել էին՝ համոզվելու, թե արդյոք կազմակերպության անդամները համաձայն էին այն վերածել քաղաքական կուսակցության: Որոշեցին, որ ժողովը տեղի ունենա Թոմասի տանը: Նրանք՝ բոլորը, թուրքական ոստիկանության հսկողության ներքո էին, ներառյալ՝ Թոմասը: Քաղաքով մեկ լուր տարածեցին, թե ժողովն այդ գիշեր տեղի է ունենալու բժիշկ Թաբիթի տանը, մինչդեռ ճաշելուց հետո՝ հետճաշյա հանգստի ժամին, երբ Բեյրութում ոչ ոք տեղից չէր շարժվում, սկսեցին հետևի ճանապարհով՝ եղեգնուտների միջով գնալ Թոմաս Հարդինգի տուն: Դա վտանգավոր էր, սակայն այլ ելք չունեին: Ինչ վերաբերում էր Թոմասին, նա լիովին համաձայն էր: Նա շատ լավ էր հասկանում այդ մարդկանց, ովքեր ցանկանում էին ազատվել թուրքական բռնապետությունից, ու նոր փորձության դիմելը նրան շատ չէր հուզում՝ անկախ արդեն իսկ ունեցած փորձությունից՝ «դժոխքից», ինչպես ինքն էր անվանում, երբ խոսում էր իր ընտանիքի հետ կատարվածից:

Ռաֆի ալ-Ազամը նրբակիրթ ու հղկված մարդ էր՝ խոսքի մեծ վարպետ, հագին եվրոպական ոճով սպիտակ բամբակյա կոստյում, որը

նրան բարձր դասի իտալացու կամ հույնի տեսք էր տալիս:

Հավաքվել էին Բեյրութի գրեթե ամենաազդեցիկ երեսուն ընտանիքներից: Սրահը լցվել էր ծխով, բոլորը տենդագին ծխում էին բաց գույնի ծխախոտ՝ Կահիրեում պատրաստված երկար գլանակներ: Թոմասը թեյ ու խմորեղեն մատուցել տվեց: Միմյանց ողջունելուց հետո Ռաֆի ալ-Ազամը սկսեց իր ելույթը.

- Սիրելի՛ բարեկամներ: Իմ եղբայր Հակիին ու անձամբ ինձ մեծ ուրախություն է պատճառում այս ժողովը, որը հավանաբար վաղուց պետք է անցկացրած լինեինք: Շնորհակալություն բոլորիդ՝ ներկա գտնվելու համար, և այս մեծահոգի ու նշանավոր տանտիրոջը՝ Թոմաս Հարդինգին, ով լիովին յուրային է դարձել: Անցնեմ մեր հարցին: «Լամարկազին» ունի հստակ ծրագիր՝ սիրիական ընդարձակ տարածքի ամբողջական անկախությունը: Չենք ուզում խոսել այլևս ինքնավարության մասին, ոչ էլ՝ ապակենտրոնացման: Արտահայտենք դա հստակ՝ անկախություն: Այն ժամանակից, ինչ Օսմանյան կայսրությունը կորցրեց Բալկանները, նրանք գիտեն, որ այն հիմքը, որի վրա հենվում է իրենց կայսրությունը, խժռվում է ցեցի՝ մեր կողմից: Շուտով դղրդյունով կխորտակվի՝ ճզմելով կայսրության մնացորդները: Հակիրճ ասած, երիտթուրքերը շփոթահար վիճակում են: Կայսրության անկումն անխուսափելի է: Նրանք խոսում են տարբեր նահանգների ինքնավարության իրավունքների մեծացման մասին: Սակայն իրականությունն այն է, որ Թուրքիան ինքն այլևս չունի ինքնավարություն: Բարձր դռան որոշումներն ընդունվում են Բեռլինում ու Վիեննայում: Նրա ֆինանսները հիփոթեքացված են, նրա բանակը ղեկավարում է այդ պրուսացին՝ ֆոն դեր Գոլցը, նրա արտաքին քաղաքականությունը մշակվում է Կոստանդնուպոլսի օտարերկրյա դեսպանատներում: Ֆրանսիական բանկը թողարկում և վերահսկում է փողի շրջանառությունը, հիմա՝ նաև «Դոյչե բանկը», որը գնանշում է տարադրամի փոխարժեքը: Ինչ վերաբերում է այն ազգերին, որոնք կազմում են այս կայսրությունը, կարծում եմ, որ բոլորս էլ համաձայն ենք վերջ տալ մեզ պարտադրված համատեղ գոյակցելուն: Ո՛չ Սիրիայի հույները, հայերը, արաբները, ո՛չ էլ Հիջազի մուսուլմանները, քրիստոնյաներն ու հրեաները այլևս չեն ուզում մնալ մի նավում, որն ուր որ է խորտակվելու է: Ինչ խոսք, թուրքերն այս վարկածի հետ համաձայն չեն: Իրենք խաղով շատ են տարվել, խաղաքարտի վրա է անգամ իրենց իսկ գոյությունը: Մենք Եվրոպայի խնամակալության կարիքը չունենք, չենք ուզում, որ մեզ խորհուրդներ տան, ոչ էլ մեզ ասեն, թե ինչպես մեզ պահենք: Եթե ընդունենք նրանց խորհուրդները, ապա օսմանյան տի-

ռապետությունը կվոխարինենք անգլիականով կամ ֆրանսիականով: Այստեղ՝ այս ժողովում, ինչպես արդեն նշել եմ, որպես տանտեր մեզ հետ է Թոմաս Հարդինգը՝ թուրքական հալածանքների ևս մեկ զոհ: Մեզ համար ամենից առաջ նա լավ բարեկամ է, բայց նաև՝ ճանապարհի լավ ընկեր: Մենք նրան լիովին վստահում ենք: Հուսով ենք, որ շուտով կգտնի իր ընտանիքը: Թոմա՛ս, դու թեև անգլիացի ես, բայց մերոնցից ես:

Թոմասը լսեց շեշտված ծափահարությունը, որն իրեն ընդունում էր որպես յուրայինի: Այդ մարդիկ դարձել էին իր բարեկամները, որոնց հետ ինքը փորձություն էր ապրում:

- Մեր միակ ապագան,- շարունակեց ալ-Ազամը,- արաբիզմն է. վեր հանել մեր պատմությունը, մեր մշակույթը, մեր ընդհանուր լեզուն: Առանց դրանց մենք ոչինչ ենք: Ինչ վերաբերում է կրոնին, կհարգենք մեզանից յուրաքանչյուրի դավանանքը: Այս ընդհարումը կրոնական պատերազմ չէ, ո՛չ ջիհադ է, ո՛չ էլ՝ խաչակրաց արշավանք, ինչպես որ շատերն են մեզ ուզում հավատացնել: Նա, ով կարծում է, թե իսլամը կամ քրիստոնեությունը պետք է բարձրացնի ապստամբության դրոշը, սխալվում է: Հիմա մեր կուսակցությունը գործում է Դամասկոսում, Հալեպում, Համայում, Հոմսում, Բաալբեկում, Բեյրութում, Մոսուլում, Բասորայում, Բաղդադում: Սակայն ձեզ պետք է մի բան զգուշացնեմ: Ո՛չ Ֆրանսիան, ո՛չ էլ Անգլիան մեզ չեն տա այն, ինչին ձգտում ենք: Մենք ինքներս ենք այն ձեռք բերելու: Լինելու է դժվարին ու փշոտ, տառապանքներով լի ճանապարհ: Պատրա՞ստ եք:

«Այո՛, պատրաստ ենք» միահամուռ ճիչը եզրափակեց նրա ելույթը: Թոմաս Հարդինգը նույնպես կիսում էր այդ ոգևորությունը: Սակայն կար մի բան, որում լիովին համոզված չէր. արդյո՞ք Բեյրութի առաջնորդները կցանկանային գնալ նույն ուղով, ինչ Դամասկոսի առաջնորդները:

Երկու շաբաթ անց Ծննդյան տոներն էին: Դամասկոսի վալին մի հույժ խիստ հրաման արձակեց, որով արգելվում էին քրիստոնյաների հասարակական միջոցառումները: Փողոցներում չէին կարող անցկացնել երթեր և ոչ էլ կրոնական այլ կարգի ծեսեր: Չէր կարելի նաև զանգեր հնչեցնել: Բեյրութի պատրիարքը փորձել էր հանդիպել վալուն և համոզել, որ նա դիրքորոշումը փոխի, սակայն նահանգապետը հրաժարվել էր նրան ընդունելուց: Ֆրանսիայի և Անգլիայի հյուպատոսները վճռական բողոք հայտնեցին, սակայն ոչնչի չհասան: Օսմանները գնալով ավելի էին կոշտացնում իրենց քաղաքականությունը, և բոլոր մեկնաբանությունները հանգում էին նրան, որ Կոստանդնուպոլսից հասնում էին խաղաղության ու համաձայնության ստահող ուղերձներ, մինչդեռ իրակա-

նում ամեն ինչ այլ էր: Նուսայրիների՝ Լեռնային Լիբանանի հյուսիսում ապրող ցեղերի նկատմամբ սկսված հալածանքները, ովքեր ընդվզել էին հարկահավաքների դեմ, կրկին ցույց տվեցին թուրքերի դաժան ու վայրագ դեմքը: Այնպես որ՝ 1913 թվականի վերջին տոնական օրերն անցան տխուր ու մռայլ:

Թոմասի համար՝ նույնպես, ով դարձյալ կորցնում էր Կարոլինի ու Էթելի մասին լուր ստանալու հույսը: Նա մի քանի անգամ մղձավանջային երազներ տեսավ, որոնցում նրանք երևում էին թանձր մշուշում, ու Թոմասը, երբ փորձում էր մոտենալ նրանց, արթնանում էր սրտի ուժեղ խփոցով, իսկ Կարոլինն ու Էթելը անհետանում էին մշուշում:

Այդուհանդերձ, նա շարունակում էր բարեփոխել տունը՝ վերին հարկում կառուցելով երկու լոգարան: Բավականաչափ մտերմացել էր Մելլիի՝ հնավաճառի հետ, ով նրա համար Հայֆայից կահույք, իսկ Ֆրանսիայից արտահանված զուգարանի հախճապակե թանկարժեք կոնքեր ու լվացարաններ բերեց՝ թուրքական անհարմար ու հնացած պետքանոթներից ազատվելու համար:

Նրան սկսեց ուժգին հրապուրել Աննա Լեֆեբրը, ով շատ տարբեր էր Կարոլինից, ու երբ Թոմասը սկսում էր համեմատել նրանց, տեսնում էր, որ համարյա իր կնոջ հակապատկերն է: Աննան ծնվել էր Լիոնում, հայրը ֆրանսիացի էր, իսկ մայրը՝ իտալուհի: Ինչպես Թոմասը, այնպես էլ ինքը՝ Աննան, հասկանում էին, որ իրենց միջև հարաբերությունը կարող էր քաղաքի քրիստոնյա ընտանիքների շրջանում անհաճո բամբասանքների տեղիք տալ. քաղաք, որը շատ ավելի նման էր Պալերմոյին, քան Փարիզին կամ Լոնդոնին: Թոմասը բոլորի համար շարունակում էր մնալ որպես ամուսնացած մարդ, թեև ոչ ոք չէր համարձակվի հավաստիացնել, որ նրա կինը կենդանի է: Աննան ամուսնացած չէր և ազատորեն մտնում ու դուրս էր գալիս մի տղամարդու տնից, ում հետ նրան կապում էր տան կահավորանքի աշխատանքը: Բեյրութում, սակայն, ոչ ոք նման բան չէր ընդունի, և այն շշուկը, որ անգլիացին տարփուհի ունի, տարածվեց ողջ քաղաքով մեկ: Թոմասը, դրանից շատ հուզված, մտածեց, որ եթե մարդիկ բամբասում են, ուրեմն հարկ է, որ մտածեն, թե կոնկրետ ինչ կարելի է անել:

Մի երեկո, երբ Աննան նրան բացատրում էր, թե նոր վերակառուցված աստիճանի համար ինչ գույն պետք է ընտրել, Թոմասը չկարողացավ իրեն զսպել ու ցատկեց իրենց բաժանող չորս աստիճանների վրայով՝ նրան գրկելու ու համբուրելու համար: Ի զարմանս Թոմասի՝ Աննան կրքոտությամբ իրեն վերադարձրեց համբույրը:

Ավելի ուշ այն ննջարանի կիսամթում, որտեղ փայտե շերտավարագույրից թափանցում էր երեկոյան Բեյրութի պայծառ լույսը, Թոմասն անթաքույց նայում էր Աննայի մերկ մարմնի պերճախոս ուրվագծին: Նա խղճի խայթ զգաց. հասկացավ, որ փորձել է խաբել ինքն իրեն: Աննան չքնաղ կին էր՝ երեսունհինգ տարեկան, շատ մեծ հմայքով օժտված անհատականություն: Հանկարծ գլխի ընկավ, որ նրա նկատմամբ իր զգացածը շատ ավելին էր, քան զուտ սեռական ձգտումը: Չգիտեր, թե արդյոք դա կարող էր անվանել սեր, սակայն իրեն անչափ հրապուրել էր այդ կինը, մինչդեռ իր ամենախորը զգացմունքների մի մասը շարունակում էր կապված մնալ Կարոլինի հետ: Հասկացավ, որ Աննայի հանդեպ տածած զգացմունքների մի մասը կիրք էր, իսկ մյուս մասը՝ խորը սիրո և կարոտի խառնուրդ:

Մտածեց, որ հարկավոր է շարունակել կյանքը: Չէր կարող խույս տալ այն բանից, ինչ կատարվում էր, ոչ էլ ուզում էր խորհել այն մասին, թե ինչ կարող էր տեղի ունենալ, եթե հանկարծ հայտնվեր Կարոլինը: Դրանք զուտ ենթադրություններ էին: Ինչ վերաբերում էր Աննային, նրան էլ նույն խոհերն էին պաշարել: Գուցե մի օր նա ցանկանար հեռանալ կամ պայքարել իր բռնած դիրքի համար, սակայն մինչ այդ ժամանակը նա նախընտրում էր օգտվել այն բանից, ինչ նրան ուղարկել էր ճակատագիրը: Աննայի կարծիքով՝ ինքը երբեք չէր ծանոթացել Թոմաս Հարդինգի պես հմայքի տեր մեկ այլ տղամարդու հետ: Այդ իրավիճակը նրան համակում էր անվստահությամբ ու միաժամանակ հիվանդագին ապրումներով. հետո, երբ Թոմասը գրկում էր իրեն ու ժպտում, մոռանում էր այդ ամենը ու որոշում նայել առաջ, օգտվել պահից: Չէ՞ որ հենց այդ նշանաբանն էր փորագրված իր ժամացույցին՝ «Carpe diem»:

Բեյրութը մի չքնաղ ու փոշոտ քաղաք էր. չափից ավելի արև ու երբեմն չափից ավելի ճանճեր, աղմկոտ ու լուռ: Հավերժ պայքարի մեջ էին մուեսինները, ովքեր, մզկիթներից երգելով, հրավիրում էին աղոթքի և անդադար հնչեցնում զանգերը: Կյանքով և անցած ժամանակների հանդեպ կարոտով լի մի քաղաք... Գյուղը մտնում էր քաղաքի տարածք, իսկ քաղաքը՝ գյուղի, պողոտաներն ավարտվում էին փողոցներով, դրանք էլ իրենց հերթին վերածվում էին ճանապարհների, այնուհետև՝ արահետների՝ եզրապատված խիտ եղեգնուտներով, որոնց միջով անցնում էին ոռոգող առուները: Այնպիսի քաղաք էր, որն աճում էր առանց կարգուկանոնի, բայց որում տեղավորվում էին բոլորը. շատ նորեկներ՝ սկսած սարերի հեռավոր գյուղերից եկած անգետ գյուղացիներից մինչև հայ փախստականները, ովքեր գալիս էին ավելի հարմար մի վայրում իրենց

կյանքը վերագտնելու մտադրությամբ, կամ էլ Արևելյան Լեհաստանից, Ուկրաինայից, Ռուսաստանի խորքից եկած հրեա աշքենազները՝ իրենց արտառոց հագուստներով ու գլխարկներով, որոնցից շատերն այդտեղ՝ Ավետյաց երկիր գնալու ճանապարհին էին, կամ մարոնները, որ Լիբանանի լեռներից իջնում էին այն ներքին համոզմունքով, որ վաղուց պետք է այդ քայլին դիմած լինեին: Կհասցնեի՞ն արդյոք ժամանակին այն մեծ տորթից, որը թխվում էր, վերցնել իրենց հասանելիք կտորը:

Մի հինավուրց քաղաք էր՝ լի կյանքով, խինդով ու ողբով, նախանձով, երկյուղով ու բամբասանքով, որի թերությունն այն էր, որ բոլորը՝ տարբեր խավի մարդիկ՝ հաջողակ առևտրականները, բանկիրները, քաղաքական գործիչները, մտավորականները, իրենց հեռու էին պահում մնացածներից: Դա տհաճ էր պաշտոնյաների և օսման բարձրաստիճան զինվորականների համար, ովքեր նրանց միշտ հրավիրում էին հանդիսություններին (այլ կերպ լինել չէր կարող)՝ գրեթե միշտ պահպանելով բռնազբոսիկ ու դժվարին հարաբերություններ: Իշխանություններն ընդունում էին նրանց հեղինակությունը, սակայն՝ ոչ նրանց համոզմունքները, ոչ էլ՝ այն, թե իրենք որքանով էին նրանց համար ցանկալի: Գնալով երկու կողմերի համար էլ իրադրությունն ավելի էր սրվում: «Իթթիհադի» կառավարությունն անկարող էր որևէ բան անել՝ կանխելու համար վերահաս աղետը:

Հունվարի կեսերին մութասարիֆը՝ գավառի կառավարիչը, պաշտոնական ընդունելության հրավիրեց Բեյրութի բարձր հասարակությանը: Դամասկոսի նահանգապետը գալիս էր Բեյրութ՝ ըստ արարողակարգի իր այցը կատարելու, և ըստ ստացած հրահանգների՝ պետք է լիցքաթափեր մթնոլորտը, շոշափեր տարբեր մարդկանց տրամադրությունը, ի վերջո իմանար, թե ում վրա կարելի է հույս դնել, իսկ ում վրա՝ ոչ:

Քաղաքում այլևս չկար նախկին տարիների ճնշող մթնոլորտը: Բալկանների պատերազմները ցույց էին տվել այն ժողովուրդների իսկական զգացմունքները, որոնք Օսմանյան կայսրության մաս էին կազմում: Արյունահեղ մարտերը, որ մղում էին ազատություն ձեռք բերելու համար, հերոսական սխրանքներն ու չեռնոգորցիների, սերբերի, բուլղարների ու, անշուշտ, հույների ազգային կամքը կասկածների տեղիք չէին տալիս. դա էր ազատության դաժան ճանապարհը:

Դամասկոսի վալին՝ Ջևեդ փաշան, քաղաքական խորին համոզմունք ուներ. կառավարության ու «Իթթիհադ» կուսակցության կողմից հովանավորված քաղաքական գաղտնի ժողովներում նա պետության տարբեր նահանգների կառավարիչներին բազմիցս կրկնել էր, որ ընդ-

հարումն անխուսափելի է: Նաև ասել էր, որ հարկավոր է հաղթել այն թշնամիներին, ովքեր արդեն կողմնորոշվել են իրենց դիրքորոշումներում, իսկ սուլթանը ոչ թե որպես դեկորատիվ կերպար է պահպանվում, այլ՝ հակառակը: Բանն այն էր, որ սուլթանն ամենից առաջ բոլոր հավատացյալների խալիֆն էր, իսկ պատերազմը, որ ամեն րոպե կարող էր բռնկվել, ըստ Ջնեդ փաշայի, կլինի նաև հանուն կրոնի. ջիհադ՝ ընդդեմ խալիֆի թշնամիների, հետևաբար՝ հանուն իսլամի: Սակայն մինչ այդ հարկավոր էր մնալ անխռով, ժպտալ պետության քրիստոնյաներին և դավաճան արաբներին, թեև մուսուլման են: Կգա նրանց՝ իրենց հասանելիք տեղը դնելու ժամը: Դամասկոսի վալին պանթյուրքիստական միության անդամ էր, թեև դրանով չէր պարծենում: Կայսրությունը պետք է լիներ թուրքերի, իսկական թուրքերի համար, բազմաթիվ թուրքմեն ցեղերի համար, ովքեր բնակվում էին Ասիայի սրտում: Գերմանացիները նրանց կօգնեն, որ հասնեն դրան, իսկ իրենք կմարտնչեն Գերմանիայի թշնամիների դեմ: Նրան «lebensraum»-ի (կենսատարածք) մասին առաջին անգամ պատմել էին Բեռլինում անցկացված զինվորական մի խորհրդակցության ժամանակ: Միակ բանը, որին ձգտում էին Գերմանիան ու Թուրքիան, իրենց կենսոլորտի ձեռք բերելն էր: Կայսրությունում շատ բաներ էին փոխվելու, բայց՝ ոչ այնպես, ինչպես շատերն էին սպասում: Գաղափարը պարզ էր, թափանցիկ ու հստակ: Մեկընդմիշտ անել այն, ինչ պետք է արած լինեին ի սկզբանե, այն է՝ կայսրության սահմանների ներսում վերացնել քրիստոնյաներին, վերջ տալ այդ հավերժ խնդրին, քանզի նրանց պատճառով Եվրոպայում Բարձր դուռը համարվել է որպես զավթիչ բռնակալ: Երբ տաք ջրի լոգանքներ էր ընդունում, ու նրա ծառան՝ սիրեկանն ու բարեկամը, ծովաքարով մերսում էր նրա մերկ մարմինը, ընկղմվում էր երևակայության գիրկն ու վերադառնում իր հինավուրց օջախը, որտեղ պետք է միայն թուրքերն ապրեն: Մյուսներն ավելորդ են:

Վալին բարեկամաբար ժպտում էր: Տարիներ անց առաջին անգամ էր նա իրեն սատարված զգում: Ժամանակին Դամասկոսի ժողովին մասնակցել էին այնպիսի կերպարներ, ինչպիսիք էին դոկտոր Նազըմը, Սուլեյման Ֆեհմին, Իսմայիլ Ջամփոլադը, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը՝ «Իթթիհադի» կարևոր դեմքերը, ովքեր նրա հետ խոսել էին անկեղծորեն ու բարեկամաբար՝ թփթփացնելով թիկունքին:

Այդ ամենով պայմանավորված՝ Բեյրութի Կառավարության տուն հրավերի մեջ կարելի էր նկատել երկակի ուղերձ՝ մի սրտառուչ ընդունելություն և մի ծածուկ սպառնալիք: Օսմանյան կայսրությանը նեղում

էին նրա որոշ անկյուններում, սակայն կայսրության թշնամիները չէին պատկերացնում ո՛չ նրա դաշնակիցների՝ Պրուսիայի և Ավստրո-Հունգարիայի հզորությունը, ո՛չ էլ իսլամական աշխարհի հզոր ուժը: Ոչ ոք չէր կասկածում, որ հավատի իսկական պաշտպանները միահամուռ սրբազան պատերազմի դուրս կգան նրանց դեմ, ովքեր կհանդգնեին հարձակվել բոլոր հավատացյալների խալիֆի վրա:

Թոմասը, ի զարմանս իրեն, նույնպես հրավեր ստացավ: Նրան ձերբակալել էին, տանջանքների ենթարկել, չարչարել: Չնայած այն բանին, որ նրա ընտանիքն առևանգված էր, և բոլոր նշանները տանում էին դեպի թուրքական կառավարության գաղտնի ոստիկանություն, այդուհանդերձ հենց ինքը՝ Բեյրութի մութասարիֆը, նրան հրավիրում էր ընդունելության: Անհեթեթ էր... Երբ կարողացավ խոսել երկար բացակայությունից հետո Բեյրութ վերադարձած Ավգուստուս Նյումանի հետ, վերջինս նրան խորհուրդ տվեց գնալ:

- Ինչո՞ւ ոչ: Նրանք այդպես են գործում, նրանց քաղաքականությունն է՝ միշտ անել իրենց իսկ ասածի հակառակը: Դու կարևոր օտարերկրացի ես, անգլիացի՝ բարձր հասարակությունից: Անգամ ներողություն կխնդրեն քո պարագայում «պարոն ոչ ոքի» կողմից թույլ տված սխալմունքի համար: Ինչ վերաբերում է Կարոլինի ու քո զավակի անհետացմանը, ապա դու ապացույցներ չունես, որ նրանք են դա արել: Իսկ եթե դու սխալվում ես, ու պարզվի, որ նրանք դրա հետ ոչ մի առնչություն չունե՞ն: Թուրքերը շատ թերություններ ունեն, բայց ո՛չ հիմար են, ո՛չ էլ՝ միամիտ: Հազիվ թե նրանք իրենց թույլ տային այդ աստիճանի բութ արարք, որը, եթե ապացուցվի, ապա Մեծ Բրիտանիային ուղղակիորեն նրանց դեմ կհանի: Այդ մասին ես շատ եմ խորհրդածել և չեմ կարողանում մինչև վերջ դրան հավատալ: Իսկ եթե դրանք սովորական հրոսակնե՞ր են եղել՝ պարզապես վախկոտներ, ովքեր՝ իմանալով, որ դու տանը չէիր, առիթից օգտվել են և թալանել ու առևանգել: Ների՛ր, Թոմա՛ս: Վարվի՛ր տեղաբնակներից մեկի պես՝ որպես լևանտեցի: Պետք է ներկա գտնվես և պահպանես քո կեցվածքը: Շուտով այդ մարդկանց հետ մենք բացահայտ պայքարի մեջ կմտնենք, եթե չասենք՝ փոխհրաձգության, սակայն մինչ այդ կյանքը պետք է շարունակվի: Պատկերացրո՛ւ, որ Կարոլինը դեռ ողջ է: Եթե ստացվի այնպես, ինչպես դու ես կասկածում, գուցե և շուտով տուն վերադառնա՝ որպես մի ընծա: Մեր հետախուզության ծառայությունները, որոնց դու չպետք է թերագնահատես, ոչ մի հետք չեն գտնում: Ասես հողը նրանց բառացիորեն կուլ է տվել: Բաքերն ինչ

վատ բախտ ունեցավ: Նա լույս կսփռեր այս պատմության վրա: Երբեմն մարդ մտածում է, որ անգամ երկնային ուժերն էլ են իրենից երես թեքել:

Աննա Լեֆեբրը հրաժարվեց նրան ընկերակցելուց, թեև այդ օրերին՝ գիշեր-ցերեկ, նրանք իրարից չէին բաժանվում: Թոմասը նրան պերճ զմրուխտե քարով մի մատանի նվիրեց: Աննային միշտ հիացրել էին զմրուխտյա քարերը, ու շարունակ մտածում էր, թե ինչպես էր նա այդ մասին իմացել: Դրանից հուզված՝ փոխարենը նա այնպիսի բուռն գիշեր նվիրեց Թոմասին, որ վերջինս երբեք դա չէր մոռանա: Սակայն քաղաքական ընդունելության գնալը բոլորովին այլ բան էր: Ինչո՞ւ չգնար իր բարեկամ Ավգուստուսի հետ: Նյումանն արձանագրեց, որ այդ ժամանակ Բեյրութում մարդկանց լեզուն ավելի երկար է և սուր, քան միջերկրածովյան ցանկացած այլ քաղաքում: Նաև Թոմասին ասաց, որ դա նրա համար կարևոր է, քանի որ խոսքը հենց նրան է վերաբերում: Սակայն հաշվի առնելով իր կարգավիճակը՝ Թոմասն ավելի խելամիտ էր համարում տանը մնալը:

Նյումանը նրա հետևից եկավ իր նոր՝ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայով: Այն վարելով բերել էր Երուսաղեմից՝ քաղաքում հիացմունք առաջացնելով, իր աղմկոտ սուր ազդանշանով սարսափահար անելով ձիերին և ուղտերին: Իհարկե, ողջ Լա Կոռնիշի երկայնքով այն վարում էր բազմաթիվ երեխաների ուղեկցությամբ, ովքեր զմայլվում էին այդ նորությամբ:

Ընդունելությանը ներկա էին շատ փոքրաթիվ կանայք: Հազիվ իրեն զսպելով՝ Թոմասը ողջունեց գավառապետին ու Դամասկոսի նահանգապետին, ովքեր նրա ձեռքը սեղմեցին գլխի խոնարհմամբ ու դիվանագիտական ժպիտով:

- Դու պետք է քեզ ամբողջովին զգոն պահես,- Նյումանը շրջապատը զննում էր բացարձակ սառնությամբ ու նշմարեց մի ժպիտ, մինչ շարունակում էր գլխի շարժումով ողջունել տարբեր մարդկանց,- «Իթթիհադը», կամ որ նույնն է, թուրքական կառավարությունն ընդունել է մի աներևակայելի որոշում՝ ոչնչացնել կայսրության բոլոր քրիստոնյաներին: Չգիտենք, թե ե՞րբ են ուզում սկսել և ինչպե՞ս են դա անելու: Կարծում ենք, որ վատթարագույնը չի կատարվի: Գուցե նրանց տանեն նավահանգիստներ և նավերով ուղարկեն Բուլղարիա, Հունաստան, Ռուսաստան կամ Միացյալ Նահանգներ: Ոչ ոք չգիտե: Թեև Աղանայում նրանց կատարած ոճրագործությունից հետո կարող ենք ցանկացած բան մտածել: Կոստանդնուպոլսում անվտանգության ծառայություններ-

որը ցուցակագրել են բոլոր երևելի հայերին՝ մտավորականներին: Քաղաքական ոստիկանությունն ունի երկու հազար մարդկանց անուններ: Ինչ-որ մեկը ոստիկանությունում ասաց, որ եթե այդ մարդիկ՝ քաղաքական գործիչները, արվեստագետները, գրողները, ճարտարապետները ու մյուսները, անհետանան, ապա հայերի համար մի սարսափելի աղետ կլինի: Մտավորականության ոչնչացումը մահացու հարված է ցանկացած ժողովրդի համար:

Այդ պահին դահլիճ մտավ մի բարձրահասակ, վայելուչ տեսքով, եվրոպական ոճով հագնված մի տղամարդ:

- Հալիլ Հիմադան է,- շշնջաց Նյումանը, ով շատ ավելի մեծաթիվ մարդկանց էր ճանաչում, քան Թոմասը,- հետո քեզ կպատմեմ:

Ինչպես բոլոր ներս մտնողները, նա նույնպես ձեռքսեղմամբ ողջունեց մութասարիֆին և վալուն, հետո գնաց դեպի Բեյրութի գործարար մարդկանց խմբի կողմը ու նրանցից մի քանիսի հետ շատ մտերմաբար գրկախառնվեց: Թվում էր, թե ընդունելության մթնոլորտն անբռնազբոսիկ էր, սակայն բոլորն էլ իրենց լեզուն ատամների տակ էին պահում: Ոչ ոք չէր կարող երաշխավորել, թե ինչ կարող էր պատահել առաջիկայում. լարվածությունն աճում էր օրեցօր: Մի ինչ-որ պահի Հիմադան, սառն օշարակի բաժակը ձեռքին, դուրս եկավ մեծ պատշգամբ ու մոտեցավ այնտեղ, որտեղ Նյումանն ու Թոմասն էին, և նրանց ողջունեց՝ գլուխը խոնարհելով:

- Իմ լա՛վ բարեկամ Ավգուստուս Նյուման, որքան ժամանակ է անցել,- այնուհետև ժպտաց Թոմասին,- ես չե՞մ սխալվի, եթե ասեմ, որ Դուք պարոն Թոմաս Հարդինգն եք: Ա՜հ, Աստված ողորմած է: Որտե՞ղ՝ մի ապահով վայրում, կարող ենք զրուցել: Այստեղ, անշուշտ, ո՛չ:

Հիմադան իջեցրեց ձայնը՝ շշնջալով.

- Արդեն տեսել եմ «Իթթիհադի» երկու վարձու լրտեսների, ովքեր գրառումներ էին կատարում: Այնպես որ՝ ծիծաղենք:

- Սիրելի՛ Հալիլ: Եթե դեմ չեք, վաղը՝ ժամը տասին, կարող ենք հանդիպել ու միասին նախաճաշել պարոն Հարդինգի առանձնատանը: Համաձա՞յն եք: Ձեր հետևից հյուրանոց գա՞մ:

Հիմադան նրան փոխադարձաբար ժպտաց և գլխով համաձայնության նշան արեց:

- Դուք ահավոր եք, Ավգուստո՛ւս: Լավ: Պայմանավորվեցինք: Ուրեմն՝ մինչև վաղը, և թող Աստված ձեզ պահապան լինի: Իմիջիայլոց, ինձ բարեկամներիցս մեկն ասել է, որ եթե Աստված կամենար նորից ստեղծել աշխարհը, երկու անգամ մի լավ կխորհեր Միջին Արևելքը տեղադրելուց

առաջ: Հետո մի գուցե մարոններին ուղիղ դներ Փարիզում,- Հիմադան ժպտաց և հեռացավ՝ ողջունելու ինչ-որ մերձավորի: Տպավորությունն այն էր, որ նա ճանաչում էր հավաքույթին ներկա բոլոր մարդկանց:

- Հալիլ Հիմադա էֆենդին իսկապես եզակի անձնավորություն է: Թուրքերը նրա հետևից են ման գալիս, իսկ ինքը գալիս է այստեղ՝ ապացուցելու, որ նրանցից չի վախենում: Նրան ոչ մի բանում չեն կարող մեղադրել, բայց ես քեզ հետո կասեմ: Այստեղ հարկավոր է զուսպ լինել: «Պատերն ականջներ ունեն» արտահայտությունը լոկ ասացվածք չէ:

Հաջորդ օրը՝ մեկը Բեյրութի այն հրաշալի առավոտներից, երբ անգամ մի տերև չի շարժվում, ուղիղ ժամը տասին, ըստ պայմանավորվածության, Նյումանը հասավ Թոմասի տուն:

- Երեկ գիշեր հավանաբար մտորել ես այն մասին, թե ինչու այստեղ ժամադրեցի Հալիլ Հիմադային: Ի դեպ, նա ինձ ուղարկել է մի գրություն՝ նախազգուշացնելով, որ լավ կլինի, եթե մենք առանձին-առանձին գանք: Ուզում եմ, որ նա քեզ ճանաչի, որ ըմբռնի, թե ով ես, ու թեև քեզ դժվար կլինի հասկանալ, թե ինչի մասին ենք խոսելու, սակայն պետք է ապահով մի վայր, որտեղ վստահ կլինենք, որ ոչ ոք մեզ չի լսում... Չնայած երկուսս էլ գիտենք, որ այս տունը թուրքերի հսկողության ներքո է, ինչպես նաև այն, որ նրան էլ են հետևում: Սակայն դու չգիտես մի հետաքրքիր բան: Այս տունը պատկանել է Հիմադա գերդաստանին՝ նրա հորեղբայրներից մեկին, ով վաճառել է այն թուրքին, ումից դու գնել ես: Երիտասարդ ժամանակ՝ մի քանի ամառ, նա այստեղ է ապրել, այնպես որ՝ մենք միշտ էլ կարող ենք հիմնավորել, որ նա փորձում է քեզնից հետ գնել տունը: Այդուհանդերձ, անխուսափելի է, որ չկասկածեն: Այնքան հիմար չեն, որ չընդունեն ակնհայտը: Բանն այն է, որ Հալիլ Հիմադան այլ հանրահայտ արաբ մտավորականների ու քաղաքագետների հետ մեկտեղ, ինչպիսիք են Սալիմ ալ-Յազահիրին՝ Դամասկոսից, Ամին Կազման՝ քրիստոնյա մարոնը Հոմսից, Ալի ալ-Նասասիբին՝ մի մուսուլման Երուսաղեմից, անգամ այնպիսի դրուզների հետ, ինչպիսիք են էմիրներ Ամիլ Արսլանը և Ադիլ Արսլանը, մի քանի ամիս առաջ հիմնել են, այսպես կոչված, «Համաձայնության միություն» (արաբերեն՝ «Ալ-Ահդ») գաղտնի կազմակերպությունը, որը փորձում է համախմբել բոլոր շարժումները: Դրանցից քեզ արդեն հայտնի են «Երիտասարդ արաբներ» կազմակերպությունը, որն այստեղ՝ Բեյրութում, հրատարակում է տեղական «Ալ-Մուֆիդ» թերթը, «Ապակենտրոնացման կուսակցությունը», «Ռեֆորմիստական միությունը»... Բոլորն էլ ծագել են «Գրական ակումբից»

(արաբերեն՝ «Ալ-Մունտադա ալ-Ադաբի»): Նրանք սկզբում համաձայն էին երիտթուրքերի հետ, երբ նրանք դավադրություն էին կազմակերպում սուլթան Աբդուլ Համիդին գահընկեց անելու համար: Թող քեզ զարմանալի չթվա, եթե իմանաս, որ մեր հայրենի կառավարությունն էլ է նրանց օգնել: Ահա թե ինչեր կան աշխարհում: Սկզբում եղբայրական գրկախառնություններ էին... ուղղված բռնակալի դեմ: Հավատացրին, որ այդ ժամանակից սկսած Օսմանյան կայսրությունում բոլորը՝ թուրքերը, հայերը, Փոքր Ասիայի հույները, արաբները... նույնիսկ քրդերը հավասար են լինելու: Ինչպես հասկանում ես, դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ ուտոպիայի ու երեսպաշտության խառնուրդ: «Իթթիհադի» ներկայիս գաղափարները շատ տարբեր են. դրանցում տեղ չունեն ո՛չ հույները և ո՛չ էլ, մանավանդ, հայերը: Հիմա ղեկավարում են թուրք ազգայնամոլները, ու նրանց համոզմամբ՝ Թուրքիայի միակ տերերը պետք է լինեն թուրքերը. մնացածներն ավելորդ են... Ես քեզ, սակայն, պատմում էի մեր բարեկամ Հալիլ Հիմադայի՝ արաբ իսկական հայրենասերի մասին: Նա գիտե, որ անգլիացիների կարիքն ունի, որպեսզի կարողանա իրագործել իր երազանքները: Նա միշտ հավատացել է Ֆրանսիային, մինչև գլխի է ընկել, որ անգլիական թնդանոթների կարիքն ունի: Շատ պարզ է... Ֆրանսիան նրանց տվել է գաղափարներ և հռետորություն, իսկ Անգլիան նրանց համար կրակից շագանակներ կհանի: Չգիտեմ, թե նա ինչ մեզ կառաջարկի, սակայն մեր երկրի համար կարևոր է, որ լսենք նրան: Շատ շուտով բոլորս կհանենք մեր դիմակները, ու կսկսվի ողբերգությունը:

Մի քանի րոպե անց տուն մտավ Ժոզե Շաբրին՝ սպասավորը՝ ասելու նրանց, որ Հալիլ Հիմադա էֆենդին եկել է: Նրան դիմավորելու համար դուրս եկան նախասրահ, որտեղ սպասում էր Հիմադան: Նրա դեմքին ուրվագծվեց մի թույլ ժպիտ, սակայն երկուսն էլ գլխի ընկան, որ նրան ինչ-որ բան է մտահոգում:

- Համեցե՛ք, պարո՛ն Հիմադա, Ձեզ զգացե՛ք, ինչպես Ձեր տանը: Թերևս դա հենց ճիշտ է, քանզի մեր սիրելի Ավգուստուսն ինձ պատմել է, որ այս տունը պատկանել է Ձեր հորեղբորը:

- Այո՛: Այդպես է, որ կա: Այն ժամանակ այս տունը Հիմադաների գերդաստանի կենտրոնն էր, և բոլորս էլ այս տան հետ կապված լավ հիշողություններ ունենք: Ես ուրախ եմ, որ Դուք եք այն ձեռք բերել, պրոֆեսո՛ր Հարդինգ: Հորեղբայրս գրող էր, ու նրան անկասկած դուր կգար, որ հիմա Դուք եք սեփականատերը: Նա այնքան էլ լավ հարաբերություններ չուներ թուրքերի հետ:

Երեք տղամարդիկ մտան պարտեզի վրա բացվող ընդարձակ պատշգամբ: Այնտեղ նրանց համար պատրաստել էին լիբանանյան նախաճաշ. համարյա ճաշի սեղան՝ մովրաշուքի ներքո:

- Չեմ հասկանում, թե ինչպես այդ թուրքը որոշեց Ձեզ վաճառել այս հրաշալի առանձնատունը, թեև դրանում իմաստ կա, քանի որ շուտով նրանց վերջնականապես այստեղից վռնդելու ենք: Այս հողը եղել և միշտ մնալու է արաբական: Օսմանների ներկայությունը, թեև այդքան դարեր տևեց, պատմության մեջ ոչ այլ ինչ է, եթե ոչ զուտ ցավալի պատահականություն,- Հալիլ Հիմադան կտրուկ էր իր համոզմունքներում,- ինձ քաջ հայտնի է, թե ով եք Դուք, պրոֆեսո՛ր, և թե ինչ է Ձեզ պատահել: Շատ եմ ցավում Ձեր ընտանիքի հետ կատարվածի համար, և գիտեք, որ Բեյրութի բոլոր բարի մարդիկ աղոթում են, որ նրանք գտնվեն, սակայն այստեղ կյանքն ունի երկու երես: Սիրալիր երեսն այս հանգստությունն է, այս խաղաղությունը Միջերկրական ծովի հետ, մյուսն այն բարդ աշխարհն է, որում մեզ վիճակվել է ապրել: Ես կլինեմ անկեղծ ու անմիջական: Դուք բարեկամներ եք ու ձեր երկիրը Ֆրանսիայի հետ մեկտեղ պետք է մեզ անպայման օգնի շատ բաներ փոխելու գործում, թեև դրա համար մեզ հարկ կլինի դիմանալ բազմաթիվ տառապանքների, վշտի ու այնպիսի դժվարին իրավիճակների, որում Դուք եք հիմա հայտնվել, պրոֆեսո՛ր:

Հիմադա էֆենդին հառաչեց և դադար տվեց՝ մի կում սուրճ ըմպելու համար:

- Հրաշալի է,- բացականչեց Հիմադան,- վաղուց այսպիսի սուրճ չէի խմել: Վատ չէր լինի, որ ամեն շաբաթ այստեղ հավաքվեինք, բայց հիմա անցնենք լուրջ խոսակցության: Պետք է խոսենք անկեղծորեն: Ես ձեզանից ոչինչ չեմ կարող թաքցնել ու համոզված եմ, որ ձեր կողմից դա փոխադարձ է: Դուք գիտեք, թե ես ինչ դժվարին կացության մեջ եմ: Բանն այն է, որ թուրքերը նույնպես որոշ բաներ գիտեն իմ մասին: Որոշ բաների առումով էլ միայն կասկածում են: Նրանք ցրեցին մեր «Գրական ակումբը»՝ մեր առաջին արաբական միությունը, ու սկսեցին հետապնդել մեզ: Հետո մենք ապաստան գտանք Փարիզում, մինչև որ անցած տարվա կեսերին կայացավ արաբական համագումարը: Իհարկե, նրանք ցանկացան ներկա գտնվել, լրտեսել, իմանալ, թե ինչի մասին էինք խոսում: Ստիպված անցկացրինք զուգահեռ՝ մեկ այլ համագումար: Պետք է, որ մեր բարեկամ Նյումանը քաջատեղյակ լինի, այդպես չէ՞, սիրելի՛ Ավգուստուս:

Նյումանը դեմքի անփոփոխ արտահայտությամբ հավանության

նշան արեց: Դիվանագիտական ծառայությունները գործում էին՝ սկզբունքորեն ժխտելով ակնհայտը, այնինչ հետախուզական ծառայություններն ավելի պրագմատիկ էին: Հիմադան ոչ միայն Ֆրանսիայի և Անգլիայի հավատարիմ բարեկամն էր, ինչպես ինքն էր ցույց տալիս այդ հաճելի հավաքույթում, այլև նա կարող էր անգամ նրանց իրազեկել, թե ինչ հունով են գնալու առաջիկա իրադարձությունները:

- «Առաջադիմություն և միություն» կոմիտեն ձգտում է մուսուլմաններին օգտագործել իր շահերի համար,- թվում էր՝ Հիմադան այդ մասին լարված էր խոսում,- ալ-Քահտանիայի, Ազիզ ալ-Մասրիի ու Սալիմ ալ-Յազահիրի՝ երիտթուրքերին միանալու ձախողված փորձը մեզ թույլ տվեց հասկանալ, որ դա տանում է դեպի փակուղի: Նրանք հասկացան, որ Ավստրո-հունգարական կայսրության օրինակով այդպես կարող էր ստեղծվել թուրք-արաբական կայսրություն: Հիշե՛ք այն դաժան հետապնդումները, որոնցից հետո երիտթուրքերն ընկալեցին, որ թույլ են տվել մեծ սխալ՝ հրաժարվելով երկխոսությունից: Այդ ժամանակ էր, որ ի հայտ եկավ «Ալ-Ֆաթաթը» («Երիտասարդ արաբների միություն», 1911-1920): Այն ժամանակ արաբ առաջնորդները նույնպես հավատում էին թուրքերի հետ միավորվելու հնարավորությանը՝ անհնարին մի բանի: Թուրքերն արաբական մշակույթը երբեք հավասարապես չեն ընդունի: Դուք գիտե՞ք, որ քաղաքական տեսանկյունից ամենաականառու քաղաքական գործիչն արքայազն Ֆայսալն է: Թուրքերն ահավասիկ Ֆայսալին են վկայակոչում նրանց, ովքեր փորձում են ազատվել իրենց լծից: Հարցրե՛ք գեներալ Յամալ Բազային, թե ով գնդակահարել տվեց կազմակերպության մի քանի կարևոր անդամների: Ինչ վերաբերում է «Ապակենտրոնացման կուսակցությանը», ապա վախենում եմ, որ ոչ մի լավ բանի չի բերի: Նրանց առաջնորդը՝ Ռազիդ Ռիդան, ատում է Ֆայսալին: Կարծում եմ, որ ընդունակ է ցանկացած բանի, միայն թե հարձակվի հաշեմիթական դինաստիայի վրա: Հետագայում ի հայտ եկավ «Ռեֆորմիստական միությունը»: Ես ինքս աշխատել եմ նրա հետ, մինչև որ գլխի ընկանք, որ եթե խմբակցությունների, կուսակցությունների, ցեղերի և մյուս կազմակերպությունների միջև լուրջ համաձայնություն ձեռք չբերվի, ապա արաբական աշխարհը կործանման է մատնված: Այստեղից էլ ծնունդ առավ «Ալ-Ահդը»՝ «Համաձայնության միությունը», որին ինքս եմ ներկայացնում: Որպեսզի ընդունեք ասածս, որը նորություն չէ Մեծ Բրիտանիայի համար, նշեմ, որ օսմանյան բանակի արաբ սպաների մեծամասնությունը պատկանում է մեր միությանը: Իսկ հիմա դուք կհասկանաք մեր այս հանդիպման իմ նպատակը: Մեր առաջնորդն ու

հիմնադիրը՝ Ազիզ ալ-Մասրին, երեկ ձերբակալվել է Դամասկոսում, ու մենք տագնապում ենք նրա կյանքի համար, եթե նրան արդեն չեն սպանել: Միայն Ֆրանսիան ու Անգլիան կարող են փրկել նրան: Ես լիազորված եմ ասելու, որ եթե մեզ օգնեք, որ փրկենք նրան, հանուն Մեծ Բրիտանիայի մենք կարևոր որևէ բան կանենք: Կօգնե՞ք մեզ:

Նյումանը զննում էր Միջերկրական ծովը: Թոմասը դառնում էր պատմական իրադարձության վկա: Երեքն էլ մի պահ բացարձակապես լուռ մնացին, մինչև որ Նյումանը վերջապես շրջվեց Հիմադայի կողմը՝ արտահայտելով համաձայնություն.

- Համաձայն ենք: Այդ հարցը լուծելու համար մենք ճնշում կգործադրենք Բարձր դռան վրա:

Թոմասը զարմացած էր իր բարեկամով, ով ասես պատրաստ էր ցանկացած հարց լուծելուն: Հիմադան նույնպես բացել էր իր խաղաքարտերը: Ի՞նչ էր նշանակում նրա՝ «հանուն Մեծ Բրիտանիայի համար կարևոր մի բան անել» արտահայտությունը:

Դա սկսեց հասկանալ մի քանի օր անց: Չնայած վալու նախազգուշացումներին՝ մամուլը լուսաբանեց այդ հարցը, քանի որ ալ-Մասրիի ձերբակալումը, որը Դամասկոսի գլխավոր հրապարակներից մեկում կատարվել էր ցնցող փոխհրաձգությունից հետո, հնարավոր չէր թաքցնել: Մյուս կողմից թուրքերն ուզում էին դաս տալ ոչ միայն Սիրիայի վիլայեթի արաբ բնակչությանը, այլև մեծ տերություններին ապացուցել, որ եթե կարծում են, թե իրենց ձեռքերում են ապստամբության լծակները, ապա պետք է իմանան, որ գոյություն ունի մի կետ, որից այն կողմ չեն կարող անցնել: Ալ-Մասրին զեկուցող էր՝ ռեֆերենտ, նախքան իրենց առաջին գաղտնի կազմակերպության՝ «Ալ-Քահիրամիայի» ստեղծումը, երբ «Առաջադիմություն ու միություն» կոմիտեն արաբներին ցույց տվեց իր իրական դեմքը: Առաջինները, ովքեր իրենց խաբված զգացին, օսմանյան բանակի արաբ սպաներն էին, որոնցից շատերը կրթվել էին Եվրոպայում, մասնավորապես՝ Գերմանիայում: Սկզբում բոլորն էլ զգացին երիտթուրքերի բարի վերաբերմունքը, բայց նրանք ընդամենն ըմբոստներ էին, ովքեր բացեիբաց ըմբոստացան սուլթանի՝ որպես հայտնի «բռնապետի» վարած քաղաքականության դեմ: Սակայն այդ ամենն արդեն դարձել էր ստի վրա հորինված հին պատմություն:

Ակնհայտ էր, որ երիտթուրքերը չէին ցանկանում ո՛չ հավասարություն, եղբայրություն, ո՛չ էլ՝ անգամ ազատություն: Միայն ցանկանում էին իշխանություն և հենց որ հասան իրենց նպատակին, նրանց ամ-

բողջ գործունեությունը փոխարկվեց արմատական պանթյուրանական քաղաքականության, որը միտված էր այն բանին, որ միայն թուրքերը և թուրք ժողովուրդները պետք է տիրեին մյուս ազգերին: Հիմադան, հուզմունքից թաց աչքերով, նրանց պատմել էր այդ մասին: Ծագումով արաբ սպաները մի քանի ժողով արեցին թուրք պաշտոնյաների հետ, ինչից հետո սկսվեցին ձերբակալությունները: Թուրքերը չէին ուզում հասկանալ, որ որքան վայրագ ու դաժան է հալածանքը, այնքան ավելի շատ արաբներ են ձգտում խռովության:

Թուրքերը ալ-Մասրիի առումով կրկին սխալվում էին հասարակական կարծիքի հարցում: Բեյրութում, որտեղ այդ մարդը պաշտամունքի առարկա էր, նրա ձերբակալումը հսկայական արձագանք հարուցեց: Թոմասը մասնակցեց մի քանի գաղտնի ժողովների, որոնց ընթացքում լսեց, որ եթե թուրքերը Սիրիայում կախաղան հանեն արաբական շարժման առաջնորդին, ապա հալածանքի ու վրեժխնդրության բախտին կարժանանան մի քանի կարևոր թուրք պաշտոնյաներ ու զինվորականներ, թեկուզև՝ մեծաթիվ արաբների կյանքի գնով: Այլևս բանակցելու ժամանակ չկար, ոչ էլ՝ հետադարձի ճանապարհ:

Սկսեցին խոսել ոչ թե ինքնավար, այլ անկախ Լեռնային Լիբանանի մասին, ու այդ գաղափարի ողջ ծանրությունն իրենց վրա էին վերցրել հատկապես մարոնները, թեև ո՛չ դրուզները և ո՛չ էլ սուննի մուսուլմանների մեծամասնությունը դեմ չէին դրան: Փոխարենը՝ շիաներն առավելապես համամիտ էին Դամասկոսի հետ միանալու գաղափարին:

Այդ ընթացքում ալ-Մասրիի հեղինակությունն օրեցօր գնալով աճում էր: Զինվորական տրիբունալը նրան դատապարտեց մահապատժի. մի բան, որն առաջացրեց համընդհանուր շանթահարություն: Դամասկոսում «Թայմս» թերթի թղթակիցը Լոնդոն ուղարկեց մի քանի զայրալից հոդվածներ, որոնցում թուրքերին ներկայացնում էր որպես դաժան կեղեքիչների: Դա հարուցեց թուրքերի զայրույթը, և այդ առթիվ նրանք իրենց դառը բողոքներն արտահայտեցին Դամասկոսում գործող բրիտանական հյուպատոսին, իսկ Ստամբուլում՝ անգլիացի դեսպանին: Սակայն ալ-Մասրին լավ կապեր ուներ: Նրան չլքեցին ո՛չ իր բարեկամ Եգիպտոսի Աբբաս Հիլմի II թագավորը և ո՛չ էլ բրիտանական կառավարությունը: Թուրքերը զգացին իրենց վրա գործադրված ճնշումը ու վերջին պահին որոշեցին, որ առայժմ ավելի նախընտրելի էր դատավճռի ի կատար չածելը, քան նահատակի կերպար ստեղծելը: Ըստ այդմ՝ ալ-Մասրիին ուղարկեցին Հաֆֆա, որտեղից էլ այնուհետև մի նավ նրան գաղտնի տեղափոխեց Ալեքսանդրիա:

Այդ պահից ի վեր Թոմասը լիովին հասկացավ, թե ինչ ներուժի տեր

է իր բարեկամ Ավգուստուսը, ով իրեն Ստամբուլում, Կահիրեում, Դամասկոսում, Երուսաղեմում ու Բեյրութում այնպես էր պահում, ինչպես ձուկը ջրում: Ասես նրա համար միևնույնն էր, թե թուրքերն ինչ կմտածեն իր մասին:

1914 թվականի մարտի կեսերին մի նոր հանդիպում կայացավ, որին մասնակցում էին նաև Հիմադա էֆենդին, օսմանյան բանակի սպա Ալի Ռիդան և Կահիրեում գտնվող ալ-Մասրիի պատվիրակը՝ Ահմեդ Թալիբը:

- Եկել ենք վերադարձնելու բարեկամության պարտքը,- Հիմադան նկատի ուներ անգլիացիների՝ ալ-Մասրիին ազատելու համար գործադրած ջանքերը,- հիշե՛ք, որ ես ձեզ խոստացա, որ կարևոր մի բան կանենք հանուն Անգլիայի: Հասել է այդ ժամը, ու Ֆայսալը պատրաստ է լսել Մեծ Բրիտանիայի առաջարկները: Նյումա՛ն, մեր բարեկա՛մ, Անգլիան ի՞նչ առաջարկ ունի այն մարդուն, ով լինելու է թուրքերի դեմ ապստամբության ղեկավարը:

Խաղաքարտերը բաց էին: Ներկաներից ոչ ոք ոչինչ չէր ուզում թաքցնել, բոլորին էլ համակել էր հուզմունքը:

- Լսե՛ք: Թո՛ւյլ տվեք ինձ հանդես գալ մի փոքրիկ ներածական խոսքով: Արքայազն Ֆայսալը իր հոր՝ Մեքքայի շերիֆի կողմից նշանակվել է ղեկավարելու թուրքերի դեմ արաբ ժողովուրդների ապստամբությունը: Շերիֆը՝ Հուսեյն իբն Ալին՝ որպես հաշեմիթների տոհմի այն ճյուղի անդամ, որը սկիզբ է առնում Մարգարեի հետնորդներից, կառավարում է իսլամի Սրբազան վայրերը: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը նրան վեց տարի գերի պահեց, իսկ 1908 թվականին նրան կրկին ուղարկեցին Մեքքա: Այդ ամենն այն մեքենայության հետևանքն էր, որ սուլթանն ի պաշտոնե ցանկանում էր հանդես գալ նաև որպես «խալիֆ»: Արաբները երբեք չեն ընդունել, թե որևէ թուրք կարող է խալիֆ լինել, փոխարենը՝ Հուսեյնը բնականաբար ընդունվում է որպես Մեքքայի պահապան, որպես «մալիկ բիլադ ալ-արաբ», ասել է թե՝ «արաբների երկրի թագավոր», թեև իբն Սաուդները՝ Նեխդ սուլթանության այդ վահաբիները, ովքեր շարունակում են ապրել Կենտրոնական Արաբիայում, միջնադարում փորձել են ուժի միջոցով հասնել դրան: Բարի՛: Քանի որ դուք ձեր խոսքի տերը եղաք, ու Ազիզ ալ-Մասրին ազատ արձակվեց, իրոք Աստված գթառատ է, մենք կօգնենք, որ շերիֆ Հուսեյնը լսի Մեծ Բրիտանիային: Ինձ համար հաճելի է հայտնել, որ ինձ հանձնարարվել է ձեզ ուղեկցել մինչև Մեքքա, որպեսզի դուք այնտեղ նրան ասեք ձեզ հետաքրքրող առաջարկությունները: Նա պատրաստ է ձեզ լսել, համաձա՞յն եք:

Ավգուստուս Նյումանը տեղից ցատկեց, շփեց ձեռքերը՝ փորձելով

հանգստացնել նյարդերը:

- Լավ: Ճշմարիտ է, որ Աստված մեծ է: Ձեզ հետ կխոսեմ նույն անկեղծությամբ: Ես լորդ Կիտչեների կողմից լիազորված եմ սկսելու այս բանակցությունները: Ե՞րբ կարող ենք մեկնել: Բեյրութից Սուեզի ջրանցքով տասից տասներկու օրում կհասնենք Մեքքա: Եթե մեկնենք մի երկու օրից, ասել է թե՝ երկու շաբաթ անց, մարտի վերջերին կամ ապրիլի սկզբներին կհանդիպենք շերիֆ Հուսեյնին: Համաձա՞յն եք: Թոմա՛ս, դու նույնպես կգաս մեզ հետ: Բեյրութի մարդիկ քեզ լիովին վստահում են: Հալի՛լ, մենք քո տրամադրության ներքո ենք: Դա արաբական աշխարհի համար կլինի շատ կարևոր, բախտորոշ պահ, և ինչու չընդունել՝ նաև Անգլիայի ու բարեկամ ազգերի համար:

Ավելի ուշ, երբ մենակ մնաց, Թոմասը խորհեց, որ այդ առաջարկը գուցե կդժվարացնի իր կյանքը: Թուրքերն ունեին արդյունավետ գործող քաղաքական ոստիկանություն. եթե նրանց ականջին հասներ, որ ինքը մասնակցել է այդ հանդիպմանը, ապա հաստատ լուրջ խնդիրներ կունենար: Գուցե նույնիսկ ստիպված ընդմիշտ թողներ Բեյրութը: Բացի դրանից՝ Աննան էր այդտեղ, ով ուզում էր, որ Թոմասն իրեն ուղեկցեր Փարիզ, որտեղ պետք է որոշ ժամանակ մնար իր ժառանգության հետ կապված խնդրի պատճառով: Նոտարը նրան հանդիպում էր նշանակել մայիսի առաջին օրերին, ու նա չէր կարող բաց թողնել այն. խաղաքարտի վրա մեծ գումար էր դրվել: Աննային ասել էր, որ կգնա նրա հետ: Եթե հիմա դիրքորոշումը փոխեր և ասեր, որ գնում է Արաբիա՝ Հիջազ, հայտնի չէր, թե նա ինչպես կարձագանքեր:

Սակայն արդեն վճռված էր: Փարիզ կամ Մեքքա գնալն իրար հետ համեմատել չէր կարելի, անգամ եթե այդ որոշումն Աննային անախորժություն պատճառեր:

Աղջկան այդ մասին պատմեց ընթրիքին: Նա Թոմասին նայեց այնպես, որ ասես չէր հասկանում, թե այդ ինչ անհեթեթ շահ էր, որ նրան մղում էր այդ վտանգավոր խաղերի մեջ: Բարկացած վեր կացավ ու գնաց ննջարան: Թոմասը նախընտրեց քնել այլ սենյակում, որտեղ դրել էր մի գրասեղան: Այդտեղ էին իր քարտեզները և իր սիրած գրքերը: Պատին կախված էր մատիտով արված, բայց խանձված մի նկար՝ շրջանակի մեջ դրված: Միակ բանն էր, որ նրան թողել էր Կարոլինը:

Թոմաս Հարդինգն այդպես էլ չիմացավ, որ Աննա Լեֆեբրը հղիացել էր: Ոչ էլ նա ցանկացավ, որ այդ մասին հայտնի Թոմասին ու մի քանի օր անց պարզապես թողեց Բեյրութն ու վերադարձավ Փարիզ:

Այնտեղ նա տնօրինում էր իր կյանքն ու ֆինանսական հրաշալի դիր-

քը, ինչը շատ էր լավացել իր հորաքրոջ՝ Լուիզ Լեֆեբրի թողած ժառանգությամբ: Հորաքրոջ հետ Աննան միշտ էլ ջերմ հարաբերություններ էր պահպանել: Նոտարի ընթերցանությունից սկսած՝ նա այլևս ոչ ոքից կախում չուներ:

Որոշեց չընդհատել հղիությունը: Միշտ էլ երազել էր զավակ ունենալու մասին, սակայն մինչ Թոմասին հանդիպելը դա նրան չէր հաջողվել: Փարիզում հղիությունը կարող էր աննկատ անցնել, և որևէ մեկին հաշիվ տալու կարիք չէր լինի:

Որոշ ժամանակ անց բեռլինցի հայտնի մի գործարար՝ Վիլհելմ ֆոն Գյոտցը, ում ճանաչում էր տարիներ ի վեր, նրան մի գրություն ուղարկեց՝ տեղեկացնելով, որ գտնվում է Փարիզում: Ա՜յ քեզ ճակատագիր... Նա ընդունեց ֆոն Գյոտցի՝ միասին ընթրելու հրավերը՝ Գերմանիայի հյուսիսում միասին անցկացրած ամառները սոսկ վերհիշելու պայմանով: Ֆոն Գյոտցը մի քանի ամիս առաջ տեղի ունեցած պատահարի հետևանքով կորցրել էր կնոջը: Երկու օր անց կրկին հանդիպեցին ու նա խռովահույզ խնդրեց Աննայի ձեռքը՝ ամուսնության առաջարկ անելով:

Աննա Լեֆեբրը կորցնելու ոչինչ չուներ: Խորհրդածելու համար նրանից երկու օր ժամանակ խնդրեց: Երկու շաբաթ անց Ժենևի դատարաններից մեկը վավերացրեց նրանց քաղաքացիական ամուսնությունը: Աննան նրան չասաց, որ երկու ամսվա հղի է: Ի՞նչ էր դրանից շահելու: Գուցե և տղամարդը հետ կանգներ առաջարկից: Նախընտրելի էին ողջախոհությունն ու գաղտնիքը: Ի վերջո, ֆոն Գյոտցը սիրում էր այդ առաքինությունները: Նա զբաղվում էր Գերմանիայում արտադրված զենքերի վաճառքով: Ֆոն Գյոտցը համոզված էր, որ ոչ ոք իր հայրենակիցների պես չի կարող այդպիսի զենքեր արտադրել: Ռուրում՝ Էսսենում գտնվող «Կրուպի» գործարանում, արտադրվում էր աշխարհի լավագույն պողպատը, որից պատրաստված յուրաքանչյուր գնդացիր, թնդանոթ կամ հրացան դառնում էր արհեստագործական բարձրորակ նմուշ, իսկ գերմանացիների համար՝ գրեթե արվեստի ստեղծագործություն: Թվում էր, թե աշխարհը գտնվում էր քաղաքական ու բարոյական անկման եզրին: Մի՞թե սպառազինվելու լավագույն ժամանակը չէր: «Կրուպը» վստահում էր նրա նման մարդկանց: Ֆոն Գյոտցն էլ բարձր էր գնահատում այն արժանիքները, որոնցով աչքի էր ընկնում իր նոր կինը:

Յոթ ամիս անց՝ 1914 թվականի հունիսին, Աննա Լեֆեբրը Բադեն-Բադենում լույս աշխարհ բերեց իր որդուն՝ Լյուդվիգ ֆոն Գյոտցին: Ամուսինը նրան մի սքանչելի զմրուխտակուռ ոսկյա վզնոց նվիրեց:

10. ՄԵՔՔԱ ԵՎ ՄԵԴԻՆԱ
ՄԱՅԻՍ, 1914թ.

Շարժիչային առագաստանավով ուղևորությունը Բեյրութից մինչև Ջեդդա տևեց երկու շաբաթ: Մինչև Պորտ Սայիդ Միջերկրական ծովի վրա ուժեղ փոթորիկներ եղան, իսկ հետո եղանակը կտրուկ փոխվեց: Կարմիր ծովը նման էր փայլեցված արծաթե հայելու, որը միայն բեկվում էր նրանց ուղեկցող դելֆինների՝ հաճախակի կատարվող ցատկերով: Թոմասը հեռադիտակով ու նոթատետրով նստած էր տախտակամածի ստվերոտ կողմում: Զարմանքով նկատեց, թե ինչպես էր «Ստավրոսը» ակոսում ծովի հանդարտ ջրերը, որոնցում տեսանելի էին բազմաթիվ կրիաներ: Ճայերը, ձկնկուլները, անգամ նրանց միացած մի հավալուսան, օդում ծփալով, հետևում էին նավին: Հեռվում Արաբիայի ափը հազիվ մի ոսկեգօծ գիծ էր, որը ծովի մուգ կապույտը բաժանում էր երկնքի փիրուզից: Միայն լսվում էին կայմերի ու առագաստափայտերի ճռճռոցը, շարժիչի թուլացած ու խուլ աղմուկը, ժամանակ առ ժամանակ՝ առագաստների շառաչյունն ու ճայերի սուր ծղրտոցները:

Թոմասը սիրում էր ծովը, սովոր էր նաև վատ եղանակին, ալեկոծությանը, Լա Մանշի ջրանցքի պողպատե մոխրագույն ջրերին, ցրտին: Այդ փորձությունը նրա համար մի նոր զգացողություն էր, նրա պատկերացմամբ՝ բացահայտող: «Ստավրոսը» երեք կայմ ունեցող առագաստանավ էր, որը վերափոխել էին՝ վրան հարմարեցնելով շոգու մի շարժիչ: Նրանից դուրս եկող մոխրագույն ծխի քուլան կեղտոտում էր կարկատված առագաստները և արագ տարրալուծվում օդում: Ծովում շոգը տանելի էր, անգամ ինչ-որ պահ ստվերում կարելի էր թեթև տաք շոր հագնել: Տարածվել էր խեժի, ներկի ու սելիտրայի խառնուրդի հոտը, որը, սակայն, Թոմասին չէր անհանգստացնում: Ավգուստուս Նյումանը փակվել էր իր նավախցիկում՝ կատարելով իր գրառումները և կազմելով այն խառնիխուռն հաշվետվությունը, որը վերադարձին պետք է ուղարկեր Կահիրե:

Ինչ վերաբերում էր Հիմադա էֆենդուն, ապա ծովն անբարենպաստ էր նրա համար. Բեյրութում նավ նստելուց սկսած սրտխառնոց ուներ և դուրս չէր գալիս իր նավախցից, որպեսզի իրեն այդ վիճակում չտեսնեին: Նա այն մարդկանցից էր, ովքեր շատ էին հետևում իրենց արտաքինին ու անհատականությանը և չէին ուզում հայտնվել ծիծաղելի վիճակում:

Մայիսի մեկին թեթև քամու ուղեկցությամբ, որը փչում էր ցամաքից՝ բերելով անապատի կիզիչ օդը, հասան Ջեդդա: Նավահանգիստը լեփ-

լեցուն էր մազութով ներծծված նավակներով, արաբական առագաստանավերով, ձկնորսական նավակներով, մակույկներով, որոնք անընդհատ հետ ու առաջ էին շարժվում: Մթնում էր, ու մայր մտնող արևի վառ կարմիր արտացոլանքը վարդագույն երանգ էր տալիս մարդկանց սպիտակ հագուստներին, ովքեր պտտվում էին, գնում-գալիս նավակայանով ու պահեստներով, որտեղ տեղակայված էր ձկան շուկան:

Թոմասը մտածեց, որ այդ պահը մոգական է՝ ժամանակից դուրս միջավայրով, ինչին անհարիր էին միմիայն փայտյա բարձր ամրությունները, որոնց վրա հողով լցված պարկեր էին՝ գնդացիրները պահելու համար: Ծովաբերանի երկու կողմերում տեղադրված էին պրուսական մեկական գնդացիրներ, որոնք պաշտպանում էին նավահանգիստը: Թուրքերը չէին ցանկանում անակնկալներ և միջոցներ էին ձեռք առել դրանցից խուսափելու համար: Մի քանի բեռնված ուղտեր մտնում էին նավահանգիստ: Թոմասն ափսոսաց, որ Լոնդոնից դեռ չէին ուղարկել իր պատվիրած լուսանկարչական նոր ապարատը: Թեև ինքը ցավում էր, որ օբյեկտիվը գերմանական էր, բայց այն տեխնիկայի մի իսկական հրաշալիք էր՝ մեկուկես դյույմանոց՝ թեք քառակուսի ֆոտոսալիկներով, և իդեալական այնպիսի տեղանքներ լուսանկարելու համար, ինչպիսիք էին Բաալբեկն ու Պալմիրան: Երբ նա մտաբերում էր այդ վայրերում ապրած իր երջանիկ պահերը, սիրտը ցավից կծկվում էր, իսկ աչքերը՝ խոնավանում: Աննա Լեֆեբրը վերջին ամիսներին նրա հետ քնքուշ ու նուրբ էր եղել, սակայն չէր կարողացել փոխարինել Կարոլինին, ով շարունակում էր գիշեր-ցերեկ զբաղեցնել Թոմասի կյանքը: Ինքը պետք է շարունակի նրա և Էթելի որոնումները:

Ջեդդայում նավից իջնելուց հետո թեև գտնվում էին ափին, Թոմասը, սակայն, զգաց, որ շոգը գրեթե անտանելի է. շատ ավելի վատ, քան ամռան ամենաշոգ օրը Սիրիայի կամ Միջագետքի խորքում: Մինչ նրանք ձիերով գնում էին Բահրահ՝ Ջեդդային մոտ և Մեքքա տանող ճանապարհին գտնվող մի բնակավայր, նա մտածեց, որ եթե Ավգուստուս Նյումանի նման ֆիզիկապես ավելի թույլ ու ավելի տարիքով մեկն ի վիճակի է տանել այդ շոգը, ապա ինքը չի կարող հանձնվել ու գոչել՝ «Այլևս չեմ կարող»: Այդ ժայռոտ երկրում, որտեղ մերթընդմերթ հանդիպում էին ոսկեգոծ մանրագույն ավազե վիթխարի բլուրներ, որոնք քամին այստեղից այնտեղ էր քշում, որոնցում խրվում էին ձիերի սմբակները, ընդամենը մի քանի հարյուր արմավենիներով օազիսն անապատը դրախտ էր դարձնում: Դա մի վայր էր, որտեղ գոյատևելը վերածվում էր ամենօրյա պայքարի:

Հանդիպեցին շերիֆի անձնական քարտուղարին, ով նրանց դիմավորելու համար քաղաքից հինգ մղոն դուրս էր եկել: Նրա շքախմբում կատաղի արտաքինով հիսուն բեդվիններ էին՝ բոլորն էլ ձի հեծած: Այդպիսի պատկեր գուցե կարելի էր տեսնել միայն մեկ կամ հազար դար առաջ: Շատ քիչ բաներ էին վկայում XX դարի մասին. թերևս հեռադիտակները, որոնք կախված էին Թոմասի պարանոցից, կամ այն ատրճանակները, որոնք իրենց պատյաններով ամրացված էին հեծյալների գոտուց:

Երբ հասան Մեքքայի շերիֆի՝ Հուսեյն իբն Ալու՝ Բահրահի մոտ գտնվող պալատ, Թոմասը ցնցվեց: Շերիֆին ճանաչում էին նաև որպես Հուսեյն Հաշեմիթի: Պալատը մի շինություն էր, որը գրեթե չէր տարբերվում մոտակա կառույցներից: Այն ուներ չթրծված աղյուսե պատերով բարձր ցանկապատներ՝ կրով սպիտակեցված, որոնք փակ էին պահում այգիները: Նրանց սպասում էին երկու սուդանցի սևամորթներ, ովքեր կրում էին կեռ թրեր ու շատ երկար հրացաններ: Նրանք հյուրերի առջև բացեցին դարպասները՝ առանց մի բառ արտասանելու և առանց նրանց վրա նայելու:

Նրանց ուղեկցեցին արմավենիների պուրակի միջով, որոնց ներքո աճում էին հոտավետ բույսեր: Բյուրեղյա մաքուր ջրով մի առվակ էր հոսում, որն իր կարկաչահոս ձայնով աստիճանաբար ավելի ցածր մակարդակի վրա էր թափվում՝ մեղմացնելով միջօրեի կիզիչ շոգը:

Մտան մի ընդարձակ նախասրահ, որի՝ կրով սպիտակեցված պատերը զարդարում էին տարբեր տեսակի հրացաններ և մի քանի տոհմական կաշվե հին վահաններ: Հատակը կավե անհամաչափ սալիկներից էր պատված, առաստաղը՝ բարձր, կառուցված մուգ փայտի տախտակներով: Նախասրահի ողջ ճոխությունը մի քանի հին, մաշված ու գունաթափ գորգեր էին և գեղջկական, փորագրված ոտքերով մի սեղան, որի վրա դրված էր պղնձե կրակակալ: Թոմասը ներս մտավ հարգանքի զգացողությամբ՝ հիշելով, թե մանուկ ժամանակ ինչպես էր գնում Օքսֆորդի մատուռ: Տիրում էր լուռ, խորհրդավոր մթնոլորտ, քանզի ամեն ինչ զուսպ էր ու հասարակ:

Ոտքի վրա սպասեցին նախասրահում, մինչ մի սևամորթ սպասավոր երեք անգամ ափերն իրար զարկեց, և մտավ ցածրահասակ, հիսունին մոտ մի տղամարդ՝ սպիտակամաշկ, թեև արևահար, ցից-ցից մորուքով, գլխին՝ շերիֆի գլխարկ: Հուսեյնն էր, ով ժպտաց Ավգուստուս Նյումանին, մոտեցավ նրան ու ձեռքը սեղմեց վաղեմի ծանոթի պես.

- Աստված ողորմած է, պարո՛ն Նյուման: Վերջին անգամ իրար տեսել ենք Ստամբուլում: Այն ժամանակ ես անուղղակի իմաստով, ան-

շուշտ, սուլթանի գերին էի… Ո՞նց է անցնում ժամանակը:

- Լավ եմ հիշում այդ օրը, Ձե՛րդ գերազանցություն: Պատիվ ունեմ Ձեզ ներկայացնելու բարեկամիս ու հայրենակցիս՝ Թոմաս Հարդինգին՝ Օքսֆորդի պրոֆեսոր և հնագետ, սիրահարված Լևանտին:

Շերիֆ Հուսեյնը սեղմեց Թոմասի ձեռքը՝ արաբերեն ասելով.

- Աստված գթառատ է, պարո՛ն Հարդինգ: Տեղյակ եմ Ձեր ընտանիքի հետ կատարվածին: Աղոթում ենք, որ Դուք գտնեք նրանց: Ձեր՝ իմ տուն գալը թող բարի լինի, ինչպես և իմ սիրելի բարեկամ Հիմադա էֆենդիինը: Հիմա ես ձեզ կխնդրեմ, որ անցնենք հավաքույթի սրահ, որտեղ ձեզ են սպասում իմ անվանի համախոհները և իմ զավակները: Նրանք պետք է տեղյակ լինեն մեր խոսակցությանը:

Այդ մարդը, ում մասին այնքան խոսում էին Անգլիայում, մագնիսականություն էր սփռում: Նրա հետևից մտան մի սրահ, որտեղ միակ զարդը Ղուրանի առաջին տողերն էին՝ սև ֆոնի վրա ոսկեզօծ տառերով գրված, երկու կողմում՝ երկու խաչված թուր: Արաբների մի խումբ՝ երկար ու սև տունիկաներով՝ սնդուսի ոսկեթել լայն երիզներով, փամփշտակալներ կրող գոտիներով, որոնցից կախված էին դրոշմվածքներով պատված կաշվե պատյաններով երկար թրեր, հետաքրքրությամբ զննում էին նրանց: Հուսեյնը սկսեց ներկայացնել նրանց՝ նախ և առաջ սկսելով իր որդիներից՝ իշխան Ֆայսալից՝ դեռ երիտասարդ, նիհար, խորունկ աչքերով, նրա կողքին Աբդուլլան էր, ով իրեն փոքր-ինչ հեռու էր պահում, և երրորդը՝ Ալին՝ թերևս անհանգիստ այն մտքից, թե այդ հանդիպման ընթացքում որն է իր անելիքը: Հետո ներկայացրեց անվանի համախոհներին՝ սկսած ամենաբարձրակարգից: Նրանք, ի նշան ողջույնի, թեթևակի խոնարհում էին գլուխները՝ արաբերեն ինչ-որ անհասկանալի բառեր շշնջալով:

Նստեցին սպահանյան մի հին գորգի վրա: Խնկի թեթևակի բույր էր զգացվում: Չնայած դրսում շոգ էր, սակայն սրահում ջերմաստիճանը տանելի էր, շատ ավելի զով: Թոմասը տեղ զբաղեցրեց Նյումանի և Հիմադայի մեջտեղում ու սկսեց ուշադրությամբ լսել:

- Աստծո անունից ձեզ բարի գալուստ հաշեմիթների տուն: Ինչպես գիտեք, մեր տոհմը հասնում է մինչև Մարգարե: Աստված նրան դրել է իր կողքին: Շերիֆի կոչումը, որը նաև Մեքքայի պահապանի կոչումն է, ինձ տրվել է արյամբ, քանզի այդպես է կամեցել ամենազոր Աստված: Կյանքիս տասնութ տարին անց եմ կացրել Ստամբուլում, մինչև որ սուլթան Աբդուլ Համիդն ինձ ազատություն տվեց՝ ինձ վերադարձնելով կառավարելու իմ իրավունքները: Հիմա կրկին այն տեղում եմ, որ իրավամբ

պատկանում է ինձ և իմ զավակներին: Ֆայսալը թուրքական խորհրդարանի անդամ է, իսկ Աբդուլլան՝ փոխնախագահ, բայց արդեն չեն զբաղեցնի այդ պաշտոնները. այդ ժամանակաշրջանն ընդմիշտ ավարտվել է: Հիմա նրանք այլ նպատակներ ունեն: Աստված գթառատ է: Հեշտ չի եղել: Սուլթան Աբդուլ Համիդը ցանկանում էր պարծենալ բոլոր հավատացյալների խալիֆը լինելու պատվավոր կոչմամբ: Ինձ սխալ չմեկնաբանեք, իրականում խալիֆը ձեր առջև է: Ես եմ Մեքքայի և Մեդինայի, իսլամի Սուրբ վայրերի պահապանը, և այդ կոչումը պետք է պատկանի արաբ իշխանին: Թուրքին՝ երբեք: Նրանք տիրացել են մեր մշակույթին, թուրքերեն գրում են արաբական այբուբենով, փոխեցին իրենց հավատաքն ու ընդունեցին իսլամ: Աստված ողորմած է: Դա նրանց պատիվ է բերում, սակայն նրանց չի դարձնում արաբ ու ոչ էլ շերիֆ: Թուրքերը միշտ էլ շահագործել են արաբներին՝ սկսած Օսմանի նվաճումներից: Ո՞րն էր մեր թուլությունը: Ասեմ ձեզ: Պատմության մեջ եղավ մի պահ, երբ արաբական բոլոր ցեղերն արշավում էին միևնույն ուղղությամբ: Այդ ժամանակ մենք նվաճեցինք ողջ աշխարհը: Հետո կրկին ի հայտ եկան ցեղային առանձնահատկությունները՝ մի մասի՝ մյուսից բաժանվելը: Ես ուզում եմ վերադառնալ փառքի ժամանակաշրջանին: Կրկին դառնալ արաբների երկրի թագավորը: Թեև առաջին հերթին հարկ կլինի կարգավորել այդ վահաբիների հարցը[27],- շերիֆ Հուսեյնը խորը հառաչեց,- թուրքերի դեմ ըմբոստանալուս համար ինձ դավաճան չեմ համարում: Նրանք այստեղ եկան ուժի միջոցով և ուժի միջոցով էլ պետք է հեռանան: Կարող եք ասել լորդ Կիտչեներին, որ գուցե կգա ժամանակ, երբ մենք դաշնակիցներ կլինենք: Արաբներս գրեթե միշտ էլ լավ հարաբերություններ ենք ունեցել անգլիացիների հետ: Նվաճեցինք Եվրոպայի մի մասն ու այնտեղ թողեցինք մի կարևոր «պատգամախոս»՝ ահավասիկ ալ-Անդալուզը՝ դրախտը երկրի վրա: Շուտով կսկսվի մի նոր ժամանակաշրջան, երբ թուրքերը հետ կգնան, քիչ ժամանակ է դրան մնացել, սակայն բերքը դեռ չի հասունացել: Գիտենք, որ Հիմադա էֆենդու պես մարդիկ հարթում են ճանապարհը, ու դա բարձր ենք գնահատում: Գիտենք, որ այդ ճանապարհին շատ նահատակներ կմնան, սակայն, վերջ ի վերջո, մենք կունենանք հատուցում: Աստված գթառատ է և ողորմած:

Նրա պատվելի համակիրները մնացին սպասողական վիճակում: Հուսեյնը դանդաղ խոսել էր անգլերեն, թեև նրանցից մի քանիսը հազիվ էին նրան հասկանում: Սակայն շերիֆը նրանց տերն էր, նրանց համերկ-

[27] Խոսքն Իբն Սաուդի՝ սաուդների մասին է, ովքեր, ի վերջո, հասան իշխանության, քշեցին հաշեմիթներին և ստեղծեցին Սաուդյան Արաբիան:

բացին, առաջնորդը ու նրան պետք է կուրորեն հետևեին:

Հուսեյնը ձեռքի բարեկիրթ շարժմամբ խոսքը փոխանցեց Նյումանին, ով մինչ կսկսեր նույնպես անգլերեն խոսել, թեթևակի հազաց.

- Տե՛ր իմ Հուսեյն իբն Ալի, հաշեմիթների պատվավոր ընտանիքի առաջնորդ: Մեր ընդհանուր ու լավ բարեկամ Հիմադա էֆենդին է կազմակերպել այս հանդիպումը, ու մենք նրան միշտ պարտական կլինենք: Մեծ Բրիտանիան երկար տարիներ շարունակ պաշտպանել է Օսմանյան կայսրության միասնությունը: Գուցե և մենք սխալվենք, սակայն Դուք ողջախոհ և իմաստուն ձևով արտահայտվեցիք՝ ասելով, որ պտուղը դեռ չի հասունացել: Մոտենում են դրամատիկ փոփոխությունների այն ժամանակաշրջանն ու այն պահը, երբ արաբներն ու բրիտանացիները պետք է միմյանց սատար լինեն: Օսմանյան կայսրությունը շատ է բարեկամացել ավստրիացիների ու պրուսացիների հետ, ու եթե շատ հենվի նրանց վրա, ի վերջո կտապալվի: Նույնը չի լինի արաբների հետ: Փոխադարձ բարեկամական զգացում կա արաբների ու մեր միջև, և այս հանդիպումը, անշուշտ, դրա վառ ապացույցն է: Այստեղ գտնվելով՝ մենք խոսում ենք միանգամայն անկեղծ՝ միմյանց անկասկած բարեկամ համարելով: Նույն բանը չէր լինի, եթե թուրքերի հետ խոսեինք: Նրանք շարունակում են բռնանալ ձեզ վրա, երբեք ձեզ չեն վերաբերել որպես հավասարը հավասարի, նրանց համար դուք ընդամենը «դհիմմիներ» եք, թեկուզ նրանց չափ կամ ավելի հավատացյալ լինեք: Մենք այստեղ ենք, որ ձեզ հավաստիացնենք, որ Մեծ Բրիտանիան կլինի ձեր բարեկամն ու դաշնակիցը: Մենք ո՛չ հողային տարածքների, ո՛չ նվաճումների ակնկալիք ունենք, ո՛չ էլ ցանկանում ենք բռնանալ արաբների կամքի վրա: Երբ մեր կարիքը զգաք, կանչե՛ք մեզ, կգանք: Դուք հիշեցիք լորդ Կիտչեներին, ով ոչ թե իսլամի դեմ է պայքարել, այլ կեղծ մարգարեի[28]: Մենք, ահա, ձեր առջև՝ Կարմիր ծովի մյուս ափին, կանգնած ենք, երբ մեզ ձայն տաք, ձեզ օգնության կհասնենք:

Շերիֆ Հուսեյնը բարձրացրեց իր աջ ձեռքը՝ գլխով համաձայնության նշան անելով:

- Աստված իմ, Դուք շատ պերճախոս մարդ եք, Ավգուստո՛ւս Նյուման,- այդ երկու տղամարդիկ իրար գիտեին տարիներ ի վեր, իրար հետ շատ մտերմիկ էին ու փոխադարձ մեծ համակրանքով լցված,- դեռ հիշում եմ, թե ինչպես մեզ ներկայացրին Բարձր դռան պալատում: Այն ժամանակ Դուք Մեծ Բրիտանիայի հատուկ ներկայացուցիչն էիք: Հիմա էլ

[28] Խոսքն էլ-Մահդիի մասին է, ում Օմդուրմանի մոտ 1898 թվականին բրիտանացիները, լորդ Կիտչեների գլխավորությամբ, պարտության են մատնել:

նույնն եք… ընդունակ եք համոզել ցանկացած մարդու: Ի սեր Աստծո, Դուք երբևէ իմ ճանաչած անգլիացիներից ամենաանգլիացին եք:

- Այո՛, իմ պարո՛ն: Իմ ողջ հարգանքով հանդերձ՝ Դուք երբևէ իմ տեսած ամենաարաբ և ամենավճռական շերիֆն եք:

Ի նշան բարեկամության՝ երկուսով լայն ժպտացին: Բոլոր պատվելիներն էլ, զգալով համակրանքի մթնոլորտը, նույն բանն արեցին: Այդ ժամանակ Հուսեյնը խոսք ասելու հնարավորություն տվեց Հիմադա էֆենդուն՝ այն մարդուն, ով կազմակերպել էր այդ հանդիպումը:

Հիմադան ավելի զուսպ էր ու չափավոր, նրա համար դժվար էր սկսել իր ելույթը: Այդուհանդերձ, նա իմացության տեր մարդ էր՝ առկա իրավիճակի վերաբերյալ մանրամասն վերլուծություն կատարելու ընդունակ: Նա ներկայացնում էր առաջին շարժումները, մինչ այդ գաղտնի արաբական ընդդիմությանը:

Թուրքական երկաթյա ոստիկանությունն աչալուրջ հետևում էր առաջնորդներին՝ գիտակցելով, որ եթե նրանց ձեռքից բաց թողնի, ապա բողոքի ալիքը, որը գնալով մեծանում էր, կտապալի կայսրությունը: Հիմադան թարթեց աչքերը: Բավական էր, որ նրա ասածներից ինչ-որ բան հասներ թուրքերին, նրան՝ որպես դավաճանի կախաղան կհանեին: Այնուամենայնիվ, նա խոսեց վճռական ձայնով.

- Տե՛ր իմ: Աստված ողորմած է, և մեզ թույլ է տվել անհրաժեշտ պահին հասնել մինչև այստեղ: Դավաճան է նա, ով գործում է իր իդեալների դեմ, իր մերձավորների դեմ, իր ժողովրդի դեմ: Մենք, ընդհակառակը, հայրենասեր ենք, թեև չունենք մեկ ընդհանուր հայրենիք: Ես ինձ համարում եմ Սպիտակ լեռան որդի: Իմ երկիրը Լեռնային Լիբանանն է: Դուք Հիջազի շերիֆն եք՝ մինչև Եմեն: Շատ հնարավոր է, որ շուտով դառնաք արաբների թագավոր: Այնուամենայնիվ, այն, ինչ մենք հիմա սկսում ենք միասին կիսել, մեր ընդհանուր գաղափարն է՝ «Նահդան»՝ մշակութային ու գաղափարական վերածնունդը, որն ընդամենը մեկ սերունդ առաջ է ի հայտ եկել արաբ ժողովուրդների շրջանում: Պետք է ասեմ ձեզ, որ մենք ոչ թե կապված ենք Օսմանյան կայսրությանը, այլ նրանց կողմից ենթարկված ենք բռնության: Դա նույնն է, ինչ կատարվում այդ կայսրության մաս կազմող այլ ազգերի՝ հայերի, Փոքր Ասիայի հույների, մարոնների, դրուզների, հրեաների և բոլոր արաբների՝ թե՛ Սիրիայի և Հիջազի, թե՛ բեդվինների կամ սուննի, շիաների կամ ալավիների քաղաքների բնակիչների հետ: Թուրքերը գիտեն այդ մասին, և նրանց համար անտանելի է, որ այսքան ժամանակ չեն կարողացել այդ ազգերի հետ հասնել գոնե նվազագույն փոխըմբռնման: Մենք չենք ուզում, որ մեզ ճանաչեն ո՛չ այդ

կեղծ խալիֆով, ո՛չ էլ ներկայիս «Իթթիհադի» կառավարությամբ: Մեր, ինչպես նաև ձեր կարծիքով՝ Դամասկոսի և Մեդինայի միջև այդ երկաթուղին իրականում իսկական սուր է՝ ուղղված արաբական աշխարհի սրտին: Տե՛ր իմ, Փարիզում կայացած արաբական աշխարհի համաժողովում պարզ դարձավ, որ չնայած վայրագ հետապնդումներին՝ այլևս ոչինչ և ոչ ոք չի կարող մեզ հետ պահել մեր ձգտումներն իրականացնելուց: Հիմա խամաճիկ սուլթան Մեհմետ V-ը՝ որպես խալիֆ, ղեկավարող կուսակցության աջակցությամբ փորձում է շարժել արաբ մուսուլմանների սիրտը և նրանց հրահրել օսմանների ընդդիմացողների դեմ: Իրենց թուլությունը նրանք փորձում են փոխարինել սրբազան պատերազմով՝ ջիհադով, նրանց դեմ, ովքեր կհրաժարվեն իրենց կամակատարները լինելուց, սակայն այդ ռազմավարությունն ի սկզբանե դատապարտված է ձախողման: Եվ մի՛ հավատացե՛ք այն գաղափարներին, որոնցով թուրքական կառավարությունը փորձում է համակել արաբ առաջնորդներին: Նրանք ասում են, որ հարկավոր է հետևել Ավստրո-հունգարական կայսրության օրինակին և հիմնել օսմանա-արաբական կայսրություն: Դրանք թուլության ակնհայտ նշաններ են, կամաց-կամաց արնաքամ եղող մահամերձ կենդանու վերջին խռխռոցներ: Եկել ենք այստեղ Ձեր հրավերով, որպեսզի Դուք երկու հարցում համոզված լինեք: Արաբները՝ մուսուլման, թե քրիստոնյա, ալավի, թե դրուզ, մի մարդու պես կհետևեն Ձեր կոչին: Անգլիայի կառավարության և Նորին գերազանցություն թագավորի ներկայացուցիչ մեծարգո Ավգուստուս Նյումանը Ձեզ նույնը կասի:

- Շնորհակալություն, սիրելի՛ Հիմադա,- Նյումանը շատ լուրջ էր:

- Ձե՛րդ մեծություն,- այդ մեծարանքով Նյումանն առաջին անգամ էր դիմում շերիֆ Հուսեյն իբն Ալուն, ով շոյվեց հաճույքից ու հպարտությունից,- պատիվ ունեմ պաշտոնապես Ձեզ փոխանցելու Անգլիայի թագավորի անձնական և կառավարության ողջույնը: Մեծ Բրիտանիան պաշտոնապես խոստանում է սատարել Ձեր՝ արաբների թագավոր դառնալու և արաբական թագավորություն ստեղծելու ձգտումներին: Նորից կրկնում եմ, որ մենք՝ բրիտանացիներս, չենք ցանկանում ո՛չ հողատարածքներ և ո՛չ էլ շահույթ, միայն ուզում ենք ապահովել փոխադարձ աջակցություն: Մենք հավատարիմ կլինենք արաբ ժողովրդին և հուսով ենք, որ Ձեր կողմից էլ դա փոխադարձ կլինի: Մոտենում են դժվարին ժամանակներ, ու ինչպես Ձեզ հայտնի դարձավ Փարիզի համաժողովից հետո, անգլիացիներն ու ֆրանսիացիները արաբական հարցի լուծման համար կտրամադրեն իրենց լիակատար ու անկողմնակալ օգնությունը:

Հուզված Հուսեյն իբն Ալին գլխով համաձայնության նշան արեց, տեղից վեր կացավ, անցավ գորգի վրայով և սեղմեց Ավգուստուս Նյումանի ձեռքը ու գրկեց նրան: Նույնն արեց նաև Թոմաս Հարդինգի հետ: Այդ միջոցին բոլորը տեղից վեր կացան:

Ավելի ուշ, երբ մութն ընկել էր, շերիֆ Հուսեյնը նրանց ընթրիքով հյուրասիրեց. տասներկու կաթնակեր գառներ, որոնք հոտավետ համեմունքներով եփվել էին բակում՝ պատերից մեկի մոտ հարմարեցված երկաթե ճաղերի վրա՝ տակը շիկացած ածուխներ: Մի քանի սուդանցի ստրուկներ զբաղվում էին այդ գործով, իսկ նրանք, ովքեր չէին մասնակցել հանդիպմանը, բայց հրավիրված էին ընթրիքին, խոսում էին առօրյա խնդիրներից:

Այդ ամենը կատարվում էր հենց թուրքերի քթի տակ: Մեքքայի և Մեդինայի կառավարիչն իրազեկված էր բոլոր անցուդարձերից: Շատ հավանական էր, որ թուրքերն իմանային այդ հանդիպման մասին: Ի դեպ, ուղևորության ընթացքում Նյումանն այդ մասին Թոմասին նախազգուշացրել էր. «Թուրքերը հավատացած են, որ ջիհադ հրահրելու ռազմավարությունն իրենց կփրկի. դա նրանց կողմից մի սարսափելի սխալմունք է: Այդուհանդերձ, անապատի խորքում ապրող արաբների համար թե՛ ավստրիացին ու գերմանացին, թե՛ ֆրանսիացին ու անգլիացին նույնն են. բոլորն էլ քրիստոնյաներ են: Բացի դրանից՝ այսօր մի անգլիական նավ կա Ջեդդայի դիմաց կանգնած, ու բավականին մեծաթիվ նավաստիներ մակույկներով գնում են ու գալիս: Թուրքերը շփոթահար են, չեն հասկանում, թե ինչ է կատարվում: Կարծում են, թե Հուսեյնը Ջեդդայում է և ոչ թե այստեղ: Թուրքերը կասկածամիտ են, իսկ արաբները՝ խորամանկ: Շուտով կերևա»:

Նավ վերադարձան լուսաբացին՝ ճանապարհի մի մեծ հատվածն անցնելով որոշ պատվելիների ուղեկցությամբ: Լիալուսնի լույսը, ինչպես նաև ուղեկիցների ներկայությունն ավելի քան բավարար էին ճանապարհից չշեղվելու, իսկ ժամը՝ պատեհ պահ՝ աննկատ անցնելու համար: Որոշ ժամանակ անց խումբը բաժանվեց, իսկ քիչ հետո բաժանվեց նաև այն խումբը, որտեղ Նյումանն ու Թոմասն էին: Լուսինը լուսավորում էր չորացած վտակի հունը, իսկ ուղեկցողները նրանց առաջնորդում էին Ջեդդա տանող հարավարևելյան ուղղությամբ, սակայն երեք մղոն առաջ՝ նախքան այնտեղ հասնելը, ճանապարհից շեղվեցին դեպի ափ, որտեղ նրանց սպասում էր մի մակույկ: Ջերմորեն միմյանց հրաժեշտ տվեցին ու տեղավորվեցին մակույկում: Կես մղոնից մի քիչ ավելի հեռավորության վրա՝ լուսնի լույսով ողողված շատ հանդարտ ծովում, երևում էր «Ստավրոսը»՝ խարիսխ գցած:

Քսան րոպե անց Թոմասը թեթևությամբ մեկնվեց նեղ ներքնակի վրա, որը գցված էր նավակողին մոտ՝ ծածկի տակ: Այդ միջոցին առագաստանավը գործի դրեց շարժիչը, բարենպաստ քամու հույսով հնարավորինս բարձրացրեց առագաստը և ուղղություն վերցրեց դեպի Պորտ Սայիդ: Նյումանը նրան ասել էր, որ այդտեղ երկուսով իջնելու են և ուղևորվելու Կահիրե, իսկ Հիմադա էֆենդին շարունակելու է իր ուղևորությունը դեպի Բեյրութ: Թոմասին ոչինչ չէր խանգարում, որ միանար Նյումանին:

Տախտակամածին մեկնված՝ նա դիտում էր աստղերը, որոնք երկնքի այդ հատվածում առավել քան շողշողուն էին: Դա հսկայական մի տեսարան էր. երկինքը կարծես մի վիթխարի գմբեթ լիներ՝ ծակծկված անթիվ, անհամար լուսատուներով, մանավանդ որ Կարմիր ծովում ու շրջակայքում ոչ մի լույս չէր նշմարվում: Իր երթուղին գտնելու համար նավավարը պետք է հետևեր Բևեռային աստղին: Կողմնորոշվելու այդ հնագույն եղանակը քաջարի նավաստիների համար շատ ավելի հուսալի էր, քան նավի կողմնացույցը: Հետո նա քնեց, իսկ անխոնջ Ավգուստուս Նյումանը ներքևում՝ նեղլիկ նավախցում, զբաղված էր՝ գրելով իր հաշվետվությունները:

Շատ շուտ լուսացավ: Ժամը հինգն անց կեսին արեգակն արդեն երևաց հորիզոնում: Նրա ծագելուն զուգահեռ՝ այնպիսի լուսավորություն տարածվեց, որ ստիպում էր կոպերը կիսաբաց պահել: Ամեն ինչ խաղաղ էր՝ բացի մի խումբ ձկնկուլներից, որոնք չորս, թե հինգ ոտնաչափ բարձրության վրա՝ նրանց գլխավերևով, թռչում էին դեպի արևմուտք՝ արագ թափահարելով թևերը:

Երեք տղամարդկանցով նախաճաշեցին ծածկի ներքո: Թվում էր՝ Ավգուստուսը գոհ էր հանդիպման արդյունքներից: Մինչդեռ Հիմադայի դեմքի ժպիտը սառն էր: Թոմասն այդ պահին մտածում էր այն մասին, թե կրկին գրկելու է արդյոք Կարոլինին և Էթելին: Երբեք չէր էլ կարողանում պատկերացնել այն աղջնակին կամ մանչուկին, որ պետք է ծնված լիներ: Սնամաղձությունը նրան պատում էր այն պահերին, երբ ինքն ավելի երջանիկ էր: Այդ ժամանակ նա գետնահար էր. չգիտեր, թե ինչ պետք է անի: Կարծում էր, որ շատ եսասեր է, երբ փորձում էր ուրախանալ այն պահերով, որոնք նա ապրում էր այդ հրաշալի ծովում՝ Արաբիայի վառ արևի ներքո:

Հիմադան մտասույզ, դանդաղ խմում էր իր սուրճը:

- Ի՞նչ է քեզ պատահել, Հիմադա՛ էֆենդի,- Նյումանը նրան դիմեց թուրքական ոճով՝ փորձելով շարժել նրա ժպիտը:

- Նյումա՛ն, դու պատվարժան մարդ ես, թեև անգլիացի բարձրաստի-

ճան պաշտոնյա ես,- Հիմադան իր բարեկամին պատասխանեց հեգնորեն՝ դեմքին դառը ժպիտ,- սակայն ես քեզ՝ որպես բարեկամ, մի հարց կտամ, ու դու կպատասխանես, եթե ուզենաս: Քո կարծիքով՝ բրիտանացիները կկատարե՞ն իրենց խոստումը, որ դու տվեցիր շերիֆի պալատում: Ես կասկածում եմ, և Աստված վկա, չեմ ցանկանում ձեզ նեղացնել: Մեծ Բրիտանիան շատ շահեր է հետապնդում, որոնցից մի քանիսն իրարամերժ են: Ո՞ւմ եք պաշտպանելու: Ակնհայտ է, որ թուրքերն իրենց հույսը դնում են Գերմանիայի, իսկ դուք՝ անգլիացիներդ, արաբների վրա: Սակայն հավատարիմ կլինե՞ք, երբ սկսեն զարգանալ դեպքերը: Ներող կլինեք, եթե ձեզ ասեմ, որ ես իմ կասկածներն ունեմ: Երեկ ես անչափ հուզված էի ու հոգուս խորքում մեծ հույս էի փայփայում: Այս գիշեր չեմ կարողացել քնել, մնացել եմ արթուն, շարունակ մտորումների մեջ էի… Արդյո՞ք չեք փորձի տիրանալ գործնականում գրեթե հսկա ու դատարկ, բայց բնական հարստություններով լեփ-լեցուն տարածքներին, որտեղ բնակվում են մի քանի հինավուրց ցեղեր, որոնք իրենց ապրելակերպով դեռ միջնադարում են: Չե՞ք փորձի նրանց օգնությամբ վտարել թուրքերին, որպեսզի նրանց տեղը զբաղեցնեք դուք... ու ֆրանսիացիները:

Մի երկար պահ լռություն տիրեց, որը խզեց միամիտ ու հոգնաբեկ ձկնկուլը՝ թառելով նավի կողեզրին: Հիմադան բացասաբար տարուբերեց գլուխը, ասես դեռ երկմտում էր ու շարունակեց բարձրաձայն խորհրդածել.

- Դուք համոզվե՞լ եք, որ արաբներն ունեն իրարից բավականին տարբեր երկու աշխարհ: Հաշեմիթ շերիֆը և նրա մերձավորները շատ քիչ կամ ոչ մի առնչություն չունեն արևմտաբնակ լիբանանցիների հետ: Հաշեմիթները բնակվում են Օսմանյան կայսրության արտաքին սահմանի վրա՝ հինավուրց ցեղերի և անվերջանալի անապատների մի աշխարհում, շարունակում են ապրել, ինչպես հազար տարի առաջ: Եվ այդ պարագայում բեդվինների հետ Փարիզի համաժողովի մասին խոսելը նույնն է, ինչ խոսել լուսնի չերևացող երեսի մասին: Մենք, որ մշակույթով պատկանում ենք բյուզանդա-օսմանյան աշխարհին, ակամայից ունենք այլ աշխարհայացք: Նրանք կառչած են Ղուրանին, իսկ մենք Լեռնային Լիբանանում նայում ենք Փարիզին ու Լոնդոնին: Մարոններս ու մուսուլմաններս ցանկանում ենք Մահանի ու Չեհաբի թողած էմիրությունը վերափոխել ու այն դարձնել ժամանակակից պետություն՝ իր Սահմանադրությամբ: Մենք մեզ համարում ենք եվրոպացի լևանտացիներ, այլ ոչ թե օսմաններ: Նրանք՝ Հիջազի մարդիկ, անհաղորդ են եվրոպա-

կան մշակույթին և դեռ շատ տարիներ կշարունակեն այդպես: Դուրանը նրանց խանգարում է, որ հասկանան այս բարդ աշխարհը, որտեղ Աստված ամեն արարքում ու պարագայում ներկա չէ: Նրանք էլ, մենք էլ արաբներ ենք, սակայն անհրաժեշտ պահին ամեն մեկս կընտրենք մեր ուղին: Ինչ մնում է Անգլիային ու Ֆրանսիային… Տեղի կունենա այն, ինչ դուք լավ գիտեք: Համարձակվում եմ գուշակել, որ Ֆրանսիան կընտրի Սիրիայի ընդարձակ նահանգը: Այնտեղ կլինենք մենք՝ լիբանանցիներս, թեև Բեյրութն ու Դամասկոսը երբեք իրար լեզու չեն հասկացել… դեռևս օմայաններից առաջ: Այն ժամանակ կային Տյուրոսը, Սիդոնը, Բիբլոսը, մենք փյունիկեցիներ էինք, իսկ իրենք՝ արաբներ: Հիմա բոլորս արաբներ ենք: Մտասույզ լինելուս պատճառը սա է: Հեշտ չի լինելու ո՛չ նրանց, ո՛չ էլ մեզ համար: Դամասկոսը հոգևոր առումով ավելի մոտ է Բաղդադին, քան Բեյրութին: Նրանք ընդունում են բյուզանդա-օսմանյան ժառանգությունը, արևելյան մշակույթը, չեն ցանկանում Արևմուտքի խնամակալությունը: Բեյրութում մենք ավելի անկաշկանդ ենք, նախընտրում ենք Փարիզը և Քէ դ՚Օրսեյը[29]:

Թոմասի կարծիքով՝ ինքը լավ գիտեր պատմություն ու պատրաստ էր երդվել, որ Հիմադա էֆենդու թերահավատությունը հիմք ուներ:

Երկու օր անց Ավգուստուս Նյումանը և Թոմաս Հարդինգը նավից իջան Պորտ Սայիդում, իսկ Հիմադան այդ առագաստանավով շարունակեց մինչև Բեյրութ: Նրան սրտագին հրաժեշտ տվեցին: Հիմադան Անգլիային մոտ կանգնած մարդկանցից էր: Բացի դրանից՝ անկեղծ էր, մտքերն արտահայտում էր համարձակ. մի բան, որ նրան պատիվ էր բերում: Պորտ Սայիդի նավակայանում նրանց սպասում էր մի փոշոտ ավտոմեքենա՝ անգլիական փոքրիկ դրոշով ու Բարձրագույն տեսչության խորհրդանիշով: Այն նրանց տեղափոխելու էր Կահիրեում գործող բրիտանական Գլխավոր շտաբ, ուր հասան վեց ժամ անց:

Սպայական զորանոցում մտնելիս Թոմասը նկատեց, որ զգաստ կանգնում էին իր բարեկամ Նյումանի առջև: Նրա զարմանքը նկատելով՝ Նյումանը ժպտաց.

- Ես քեզ չեմ ասել, որ Գլխավոր շտաբի արտահաստիքային գնդապետ եմ: Ներկայումս ես գործուղված եմ աշխատելու Արտգործնախարարության Արևելքի հարցերի բաժանմունքում: Ա՜հ, ինչեր ասես չեմ արել իմ կյանքում: Քեզ դրանց մասին չեմ ասել, որպեսզի խնդիրներից զերծ պահեմ: Բեյրութում ես մի տարօրինակ անգլիացի եմ, ում դուր է գալիս արևելյան միջավայրը: Այն արաբների համար, ովքեր կապված

[29] Ֆրանսիայի արտգործնախարարության նստավայրը:

են գաղտնի կազմակերպությունների հետ, ես Անգլիայում լավ կապեր ունեցող անձնավորություն եմ: Ավելի մտերիմ մարդկանց համար էլ, ինչպես Հիմադայի դեպքում է, ես դիվանագիտական բանակցություններ վարելու նպատակով լիազորված ներկայացուցիչ եմ: Մինչև վերջերս կարծել եմ, որ որքան քիչ բան իմանաս, այնքան ավելի լավ կլինի քեզ համար: Սակայն անկեղծորեն ասեմ, որ այն ամենից հետո, ինչ քեզ հետ պատահեց, սկսեցինք մտածել, որ կարող ես մեզ շատ օգտակար լինել: Թուրքերն իրապես համոզվել են, այսինքն՝ իրենց նպատակին հասնելու առումով սխալվել են: Նրանք դա հաստատեցին հենց առաջին ձեռքից: Տեղեկություն կորզելու նպատակով քեզ այդքան գազանաբար տանջելը վերջնական փորձությունն էր: Կարծում ենք, որ Բիբլոսում քո տան վրա հարձակվելը և ընտանիքիդ անհետանալը դրա մի մասն էին: Դեռևս հույս ունենք, որ կգտնենք նրանց, թեև դա նույնն է, ինչ դարմանի հսկա մարագում ասեղ փնտրելը: Սակայն չպետք է հուսահատվես: Քեզ բազմիցս եմ ասել, որ մենք աշխատում ենք առավելագույն չափով: Իսկ հիմա պատրաստվի՛ր, ծանոթանալու ես խոշոր ձկների հետ: Նրանցից մեկը լորդ Կիտչեներն է, ով թագավորի կողմից վերջերս նշանակվել է Խարտումի դուքս և ռազմական նախարար: Շուտով նա վերադառնալու է Լոնդոն, բայց նաև այստեղ են Ալենբին և մյուսները: Մեծ իրադարձություն է սպասվում:

Կահիրեում Թոմասը համոզվեց, որ Նյումանը շարժվում է այնպես, ինչպես ձուկը ջրում: Նա Թոմասին ներկայացրեց բրիտանացի շատ զինվորականների ու քաղաքացիական պաշտոնյաների: Թվում էր, թե բոլորն էլ տեղյակ էին իր ընտանիքի հետ կատարվածին: Ինքը՝ լորդ Կիտչեները, Թոմասին հուսադրեց և ասաց, որ պետք է հավատա Աստծո նախախնամությանը: Սպաների զորանոցում մատուցվող ընթրիքներից մեկի ժամանակ մայոր Ֆիլիպ Սթիմսոնը նստեց նրա կողքին և սկսեց բացատրել, թե այդտեղից՝ Կահիրեից, ինչպես էին ընկալում իրադրությունը.

- Տեսե՛ք, Հարդի՛նգ: Պատերազմն անխուսափելի է: Եվրոպան նստած է վառոդով լի տակառի վրա, որն ուր որ է պայթելու է, ու հենց պրուսացիներն էլ ուզում են վառել պատրույգը: Թուրք-իտալական, ինչպես նաև բալկանյան պատերազմները մեզ շատ բաներ են ուսուցանել: Սերբական զորքերում որպես դիտորդ լինելու բախտ եմ ունեցել ու այնտեղ գլխի ընկա, որ Օսմանյան կայսրությունն ընդամենը փուչ կեղև է: Թուրքերն ուժեղ են և ռազմաշունչ, լավ մարտնչողներ, նրանց միշտ էլ

դժվար է եղել հաղթելը, սակայն տասնամյակներ շարունակ վատ ղեկավարումը փչացրել է բանակը: Բոլորը պատմում են, որ Ջեմալ փաշայի և Էնվեր բեյի նմաններն ավելի շատ ծախսում են համազգեստի, մեդալների ու հրաշալի նժույգների, քան իրենց զորքերը պահելու համար: Բարեկա՛մս, վատ զինված, վատ կազմակերպված, հին զենքերով ու սուղ ռազմամթերքով չի կարելի պատերազմել: Ինձ կասեք, որ նրանց հետևում կանգնած են պրուսացիներն ու ավստրիացիները: Առաջիններն ունեն այնպիսի կազմակերպված բանակ, ինչպիսին ոչ ոք չունի. նրանք թշնամուն այնքան կջարդեն, մինչև լրիվ ջախջախեն: Ինչ վերաբերում է ավստրիացիներին, որոնց ճանաչում եմ, ընտիր մարդիկ են, սիրում են գեղեցիկ ապրել՝ առատ սեղան, շոկոլադ և տաքուկ անկողիններ: Հրաշալի սպաներ են, սակայն՝ բավականին վատ զինվորներ: Գերմանացիները… Օ՜ֆ, ահարկու թշնամի են, բայց ինչ-որ մեկն ասել է, որ ցանկացած համակարգ հուսալի է այնքան ժամանակ, մինչև որ խափանվում է նրա բաղկացուցիչ մասերից մեկը: Իսկ Դուք արդեն տեսել եք, թե թուրքերը, երբ գերմանական բանակի մաս են կազմում, ինչպես են մարտնչում: Մինչև հիմա հիշում եմ, երբ 1912 թվականի նոյեմբերին անցա ծառայության, մտա Սալոնիկ, որը հանձնվեց հույների և սերբերի միացյալ ճնշմամբ: Վերջում, երբ քաղաքն արդեն հանձնվել էր, եկան բուլղարները: Այդ ժամանակ գլուխ բարձրացրեց զայրույթը, որը, իրոք, մի անգութ «գեներալ է»: Թուրքերը Կոստանդնուպոլիսը պաշտպանելու համար իրար գլխի հավաքվեցին, սակայն սերբերն ու բուլղարները շրջափակեցին Ադրիանապոլիսը: Անցյալ տարվա մայիսին Թուրքիայի սահմանները հետ տարանք մինչև Էնոս-Միդիա գիծը: Այնուհետև դա սկսվեց նմանվել շների՝ լեշի մնացորդների պատճառով ծագած կռվի: Սերբերը, հույները և չեռնոգորցիները, իրենց կարծիքով, հանուն հաղթանակի շատ ավելին էին արել, քան բուլղարները, ովքեր իրենց մեդալներով ու ծնծղաներով հասնում էին վերջում: Եվ նրանք միահամուռ ելան բուլղարների դեմ: Թվում էր, թե Թուրքիան դիակ է, սակայն մեռած չէր ու 1913 թվականի հունիսին հետ նվաճեց Ադրիանապոլիսը: Մինչ այդ Ալբանիան նույնպես իր վրայից թոթափել էր թուրքական լուծը: Սերբիան այդ իրավիճակից իր համար կորզեց ամենալավ պատառը, քանի որ կրկնապատկեց իր տարածքը՝ իրեն միացնելով Մակեդոնիայի և Կոսովոյի մեծ մասը: Հունաստանն էլ ստացավ Մակեդոնիայի մյուս մասը, ինչպես նաև տարածքներ Թրակիայից ու Ալբանիայից: Չեռնոգորիան էլ մի բան շահեց, իսկ Ալբանիան՝ ազատություն: Ինչ վերաբերում է Բուլղարիային, ապա մնաց այնպես, ինչպես պատերազմից

առաջ էր՝ իր անթերի համազգեստներով, շողշողացող մեդալներով և իր նվագախմբերով: Բացի Բալկաններից՝ Թուրքիան կորցրեց իր հեղինակությունը: Արդեն առաջվանը չէր ու երբեք չէր լինի նախկինը: Ուր որ է պայթելու է մի ընդհարում, ու հավանաբար Թուրքիան խաղադրույք կկատարի Գերմանիայի ու Ավստրիայի վրա: Դա կնշանակի նրա թուլացած կայսրության լիակատար քայքայում: Սկզբում արաբները կկասկածեն, թե ինչ խաղաթուղթ պահեն, սակայն, անկեղծ ասած, վերջում կթեքվեն մեր կողմը: Նրանք թուրքերին տանել չեն կարողանում:

Թոմասը գլուխը շարժեց՝ ի նշան համաձայնության: Նա համամիտ էր այդ փայլուն վերլուծության հետ, և Արաբիայում շերիֆ Հուսեյնի հետ ունեցած հանդիպումն էլ արդեն իսկ նրան հստակ ցույց էր տվել, որ արաբներն ատում են թուրքերին: Նա չէր կարող խոսել այդ հանդիպման մասին, որին պարզապես հրավիրվել էր: Ընդ որում՝ չնայած Նյումանի՝ իրեն այդ գործի մեջ ներքաշելու ջանքերին՝ ինքը մտադիր էր հետևել իր սկզբունքներին ու զերծ մնալ զինվորական ռազմավարությունից: Այլ բան էր, որ Բեյրութում օգներ իր մտերիմ ընկերներին: Նա չէր դառնա Մեծ Բրիտանիայի լրտես, ոչ էլ՝ դրա պես մի բան: Այդպես էլ ասել էր Ավգուստուս Նյումանին, և դրա մասին խոսք լինել չէր կարող, անգամ եթե իրեն դա առաջարկեր հենց ինքը՝ լորդ Կիտչենները, ում հետ Թոմասը մայրական կողմով հեռավոր ազգակցական կապ ուներ:

Ի վերջո, չկարողացավ նրան հրաժեշտ տալ այնպես, ինչպես ինքն էր ցանկանում, քանի որ Կիտչենները ստիպված եղավ ուղևորվել Անգլիա: Կահիրեի Գլխավոր շտաբում բարձրաստիճան բոլոր ղեկավարները նյարդայնացած էին, իսկ մթնոլորտը՝ շիկացած: Հունիսի սկզբին Ավգուստուսը նրան ասաց, որ հասել է գնալու ժամը: Պորտ Սայիդում նստեցին մի խարխուլ առագաստանավ, որը նարինջ էր տեղափոխում Հայֆա: Եղանակը հրաշալի էր, ու նրանք, դեռ երեք օրը չլրացած, հասան այնտեղ: Ավգուստուսը նրան զգուշացրել էր, որ մնալու էր այդ քաղաքում, իսկ ինքն իր ուղևորությունը շարունակելու էր մինչև Բեյրութ:

Թոմասն իր ընկերոջը տեսավ աստիճանով իջնելիս, որը տեղադրել էին մի քանի ցնցոտիավոր արաբներ: Ավգուստուսը մի պահ շրջվեց ու նրան ժպտալով՝ ձեռքով ողջույնի նշան արեց: Այդ առավոտ ծովը հանդարտ էր, իսկ Պաղեստինի ափն ուրվագծվում էր մոտիկից: Եվ նրանք, երբ սրճում էին տախտակամածի վրա, Նյումանը խոստովանել էր, որ Եվրոպայի վերաբերյալ լուրերը շատ հոռետեսական են, ու գուցե ինքը գնար Սալոնիկ կամ Կոստանդնուպոլիս: Նյումանը միշտ էլ Թոմասի համար լինելու էր այն եզակի մարդկանցից մեկը, ում ինքը միշտ կկարոտեր:

Թոմասը ձեռքը տարավ իր պիջակի վերին գրպանին, որտեղ իր նոր անձնագիրն էր՝ ձեռք բերված Նյումանի ազդեցիկ կապերի շնորհիվ: Անձնագիրն ուներ վիզա, որը նրան զերծ էր պահելու զինված ուժերի շարքերն անցնելուց և ռազմական ընդհարման ժամանակ նշանակում ստանալուց: Նա չէր ուզում թողնել Բեյրութը, թեև այլ ելք գուցե և չունենար:

Հետո առագաստանավն արձակեց իր ճոպանները, ու ցամաքից եկող թեթև քամին նրան մի երկու մղոն ծովից արագ հեռացրեց: Մի քանի ճայեր նրանց անկաշկանդ ուղեկցում էին, ու Թոմասը հանկարծ նախանձով լցվեց այդ արծաթավուն թռչունների հանդեպ, որոնք գնումգալիս էին այնպես, ինչպես ուզում էին: Կտրտված ափը նույնն էր, ինչ դարեր առաջ: Դարեր, որոնց ընթացքում բազում մարդ արարածներ են եկել ու գնացել… կռվով կամ խաղաղությամբ: Ինչ-որ պատճառով, որը չէր կարող ըմբռնել, աշխարհի ճակատագիրը գրված էր այդ հինավուրց հողի վրա, որ գծագրվում էր հեռվում:

11. ՓՈԹՈՐԻԿ ՀՈՐԻԶՈՆՈՒՄ
ՀՈՒՆԻՍ, 1914թ.

Թոմասը Բեյրութում շարունակեց ապրել իր կյանքով: Երբ տուն վերադարձավ, Աննան ի կատար էր ածել իր սպառնալիքները և գնացել Փարիզ: Մի նամակ էր թողել, որում սառնորեն հրաժեշտ էր տալիս՝ նշելով, թե մի օր իրար կտեսնեն: Դա այն մարդու արտահայտվելու եղանակը չէր, ով կուզենար վերադառնալ: Սակայն Թոմասի խիղճն իրեն չէր տանջում: Այդ իրավիճակը երկար տևել չէր կարող, ու ինքն իրեն թեթևացած զգաց: Այդ տան մեջ Աննայից մի թույլ հետք անգամ չէր մնացել: Ասես նա այդտեղ առհասարակ չէր եղել, մինչդեռ Թոմասը մի քանի ամիս շարունակ կարծում էր, թե անգամ սիրահարված է նրան: Հիմա պարզ տեսնում էր, որ երկուսով ցանկանում էին մեղմել իրենց միայնությունը, ուրիշ՝ ոչինչ: Այդտեղ այլ կարգի հարաբերություն չէր կարող լինել:

Նրան պարուրեց ահավոր մի կարոտ Կարոլինի ու իր դստեր հանդեպ: Ուզում էր, որ իր կողքին լինեին, որ նրանց հետ կիսեր իր կյանքն ու երազանքները: Սենյակներից մեկը նորոգել էր տվել Էթելի համար: Այդ մեծ առանձնատունը գնալով դառնում էր շատ ինքնատիպ, թեև մթնոլորտը մնում էր փոքր-ինչ արևելյան, տարաշխարհիկ:

Ամեն անգամ ավելի ակնհայտ էր դառնում, որ կատարվելու էին իր բարեկամի՝ Նյումանի կանխազգացումները և այն, ինչ նրան Կահիրեում ասել էին իր հայրենակիցները: Գերմանիայի հետ զինված ընդհարումն անխուսափելի էր: Անգամ այնպիսի հեռավոր վայրում, ինչպիսին Բեյրութն էր, պարզորոշ երևում էին այդ ամենի հստակ նշանները: Թուրքերն ակնհայտորեն ցույց էին տալիս իրենց՝ ֆրանսիացիների ու անգլիացիների նկատմամբ ունեցած և օրեցօր մեծացող թշնամանքը: Գերմանացիները, ընդհակառակը, լիակատար օգուտ էին քաղում այն ամենից, ինչ տեղի էր ունենում Օսմանյան կայսրությունում:

Եթե նավահանգիստ էր հասնում անգլիական որևէ բեռնատար նավ, ամեն ինչ վերածվում էր բյուրոկրատական քաշքշուկի, դյուրին գործելակերպը դառնում էր բարդ ու դժվարին:

Եթե նավը գերմանական էր, ապա ամեն ինչ հիմնված էր բարեկիրթ վարվելակերպի վրա, իսկ նավահանգստի թուրք պաշտոնյաներն ընդառաջում էին կապիտանի ամենաչնչին ցանկություններին:

Քաղաքում Դամասկոսի վալու ներկայացուցիչը Թոմասին ժամանակ առ ժամանակ առաջվա պես հրավիրում էր տեղի ունեցող ընդունե-

լությունների, որոնցով ասես ներողություն էր հայցում տեղի ունեցածի համար:

Հունիսի քսանիններորդ լուսաբացին բժիշկ Այուբ Թաբիթը կարմրատակած եկավ Թոմասի տուն: Նա նախաճաշում էր պատշգամբում, երբ տեսավ, թե ինչպես էր քառանիվ կառքը բարձրանում բլուրն ի վեր: Թերևս կարևոր մի բան էր պատահել... Կարողի՞նը... Աստիճաններով վազելով՝ իջավ ու բժիշկ Թաբիթին հանդիպեց նախասրահում:

- Ո՛չ, Թոմա՛ս, դժբախտաբար այն չէ, ինչ Դուք եք կարծում: Ուզում էի Ձեզ տեղեկացնել Եվրոպայի վերջին նորությունների մասին: Սպանել են ավստրիական գահաժառանգին և նրա կնոջը: Մեծ իշխան Ֆրանց Ֆերդինանդը և հերցոգուհին երեկ մահացել են կրակոցներից: Դա նշանակում է պատերազմի սկիզբ: Բարեկա՛մս, հիմա ավստրիացիները մեղքը կգցեն սերբերի վրա, ու տեսնենք, թե ինչպես է ավարտվելու այս ներկայացումը: Թվում է, թե այս քաղաքը շատ հեռու է, սակայն ցանկացած տարածաշրջան իր խնդիրներն ունի, և, ամեն ինչ բարդանում է: Երանի ոչինչ չլինի:

Բժիշկ Թաբիթն ընդունեց նախաճաշելու հրավերը: Թոմասը պահպանում էր իր անգլիական սովորույթները. նրան սնունդը մատուցում էին սփռոցով սեղանին, սպասքով ու բյուրեղապակյա բաժակներով: Այն տպավորությունն էր, որ նա Օքսֆորդի իր տանն էր, միայն թե Բեյրութում արևը տասն անգամ ավելի վառ էր՝ իր կապույտ ծովով և հյուսիսում ձյունաճերմակ լեռնագագաթներով:

- Ա՜հ, սիրելի՛դ իմ բարեկամ,- Թոմասը ծանոթ էր Թաբիթի պոետական զեղումներին,- որքան ցավալի է, որ մարդ արարածներս ընդունակ չենք գնահատելու այն վսեմ գեղեցկությունը, որ Աստված է մեզ շնորհել: Իսկապես մեր կողմից մեծ ողբերգություն է, երբ ունենք բոլոր հնարավորությունները, բայց ջանում ենք կործանել այն, ինչ մեզ կյանքն է տալիս: Այդպես չէ՞: Պատասխանը կգտնեք այս սքանչելի հողի վրա: Մենք ամեն ինչ անում ենք, որպեսզի դժբախտ լինենք, կարծես ի վերուստ անեծքի տակ ենք: Ես չեմ համակերպվում: Ո՛չ, պարո՛ն: Պետք է փորձենք փոխել, համոզել քաղաքագետներին, զինվորականներին և նրանց, ովքեր ազդեցության տեր են, ամեն բան գուցե և այլ կերպ լինի: Մեր պատմությունն արնաշաղախ է: Թո՞ւյլ կտաք Ձեզ մի հուզիչ դեպք պատմել: Կպատմեմ սկզբից: Լսե՛ք, Թոմա՛ս: Հայրս մարտնչել է դրուզների դեմ: Այն ժամանակ նա ապրում էր Դամասկոսում, որտեղ աշխատում էր որպես բժիշկ՝ մեկը Փարիզում ուսում ստացած առաջին բժիշկներից (բժիշկ Թաբիթը հպարտ էր դրանով): Նա Սալպետրիերի հիվան-

դանոցում եղել է Ժան Էթիեն Դոմինիկ Էսկիրոլի աշակերտը: Հորս բախտը ժպտաց, նա արժանացավ Դամասկոսում Ֆրանսիայի հյուպատոսի համակրանքին: Ահա թե ինչ պատմություն է: Նրան հաջողվեց գնալ Փարիզ: Այնտեղ նրան հետաքրքրեցին մտավոր հիվանդությունները: Դժվար չէ պատկերացնել, թե դա ինչ էր նշանակում տասնիններորդ դարի սկզբներին: Ֆրանսիայում, որն առաջ էր անցել արդիականացման և ազատության գաղափարներով, խելագարներն այն արարածներն էին, ովքեր գրեթե ապրելու արժանի չէին: Լուսնոտները սարսափելի վայրերում իրենց մեջ խեղդում էին ցավը: Ահա թե ինչու բժիշկ Էսկիրոլն ուզեց հանրությանը համոզել, որ շատ դեպքերում խելագարները կարող են բուժվել, որ նրանց հարկավոր է հարգանքով վերաբերվել, որ չէր կարելի նրանց թողնել, որ իսպառ զրկվեն խելամտությունից... Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես էին նրանց վերաբերվում այստեղ և ողջ Արևելքում: Թեև Դամասկոսի հնագույն հոսպիտալը՝ Բիմարիստան Նուրին, հատուկ բաժանմունք ունի մտագարների համար: Որպեսզի ավելի հստակ գաղափար կազմեք, ասեմ, որ այն հիմնվել է 707 թվականին՝ տասներկու դար առաջ: Լավ, կներե՛ք ինձ թեմայից շեղվելու համար: Հայրս Փարիզից վերադարձավ՝ հոգեկան հիվանդներին բուժելու նոր գաղափարներով: Իրեն համարում էր մի նոր Նուր ալ-Դին Մահմուդ[30]: Սակայն ոչնչի չհասավ: Ես նախընտրեցի լինել մարմնի, ոչ թե ուղեղի բժիշկ, ես պիտանի չէի լինի այդ խեղճ մարդկանց: Սակայն ես կրկին մի կողմ թողեցի ասելիքս: Մենք, որ մեզ համարում ենք Սպիտակ լեռան զավակներ, յուրահատուկ մարդիկ ենք: Երբեմն շատ տաքարյուն ենք, իսկ երբեմն՝ շատ սառնարյուն: Մուսուլմանների և քրիստոնյաների միջև առկա խորն ատելությունը մնում է այնտեղ՝ այդ մարդկանց ներաշխարհում՝ նրանց ժպիտների ներքո քողարկված: Դա ցանկացած այլ զգացմունքից վեր է: Դե՛ ինչ, Դուք արդեն մեզ ճանաչում եք բավարար չափով: Այստեղ ընդամենը կես դար առաջ մենք իրար էինք սպանում: Դրանից բացի՝ և ընդհանուր պատկերն ավելի չբարդացնելով՝ հարկ է նշել, որ քրիստոնյաներն ու մուսուլմաններն ատել և հիմա էլ շարունակում են ատել թուրքերին: Օսմանյան այս նահանգը՝ Սիրիան, միշտ էլ կայսրությունից դուրս գալու և մի նոր պետություն ստեղծելու հույս է փայփայել: 1860 թվականին դրուզները հանկարծակի անցան հարձակման: Սկսեցին Սիդոնից, որտեղ գտնվում էր օսմանյան կառավարչի առանձնատունը, այնուհետև շարունակեցին Հալեպում: Դրուզ-

[30] 1157 թ.-ին Հալեպում նա հիմնել է հոգեկան հիվանդությամբ տառապողների հիվանդանոց:

ները հրոսակախմբերով և կոկորդապատառ աղմուկ-աղաղակով իջնում էին Հաուրան լեռից՝ սրի քաշելով բնակավայրերի բնակիչներին, մեծ մասամբ՝ քրիստոնյաներին: Քրիստոնյաների մի խումբ սպանեց կառավարչին: Սպանություններ տեղի ունեցան ողջ Լեռնային Լիբանանում, ու այդ իրավիճակը վերածվեց քաղաքացիական պատերազմի: Ամռան սկզբներին քրիստոնյաներին ամեն օր կոտորում էին, թալանում բնակավայրերը, բոլորը՝ բոլորի դեմ: Ֆրանսիական հյուպատոսը հուսահատ փորձում էր օգնել մարոններին: Դա էլ վառեց դրուզների ապստամբության պատրույգը: Այրեցին Դեյր ալ-Քամարը, Մարջայունը, Ռաշայան, Հազբայան, Զահլեն: Ամեն օր մեռնում էին հարյուրավոր, եթե չասենք՝ հազարավոր մարդիկ: Սակայն չկար մեկը, ով դրուզներին կանգնեցնելու ի վիճակի լիներ: Տպավորությունն այն էր, որ ուզում էին քրիստոնյաներից մեկընդմիշտ ազատվել: Դրուզներին միացան քրիստոնեական արյան ծարավ բեդվինները: Ոմանք ասում էին, որ դա ոչ թե ընդհարում էր մուսուլմանների և քրիստոնյաների միջև, այլ ուղղված էր օսմանյան տիրապետության դեմ:

Դեյր ալ-Քամարում՝ հենց թուրք կառավարչի հարեմում, ապաստանեցին մեծ թվով քրիստոնյաներ: Նրանց ոչ թե դրուզները, այլ հենց իրենք՝ թուրք զինվորները սպանեցին: Թուրքերն ատելությամբ լցվեցին Ֆրանսիայի հանդեպ: Այնտեղ ապրող եվրոպացիները ստիպված փախչում էին կամ թաքնվում: Բարձր դուռը զորքեր ուղարկեց իբր իրավիճակը հանդարտեցնելու, իսկ, ավելի ճիշտ, նրանք դա անվանում էին քրիստոնյաներին «զսպելու» համար: Օսմանյան տիրապետության ողջ ընթացքում այդպիսի բան երբեք տեղի չէր ունեցել՝ քրիստոնյա մարոնների սպանդ Լեռնային Լիբանանում: Դա ինչ-որ աներևակայելի բան էր: Ամեն ինչում մեղքը բարդում էին քրիստոնյաների վրա: Նրանց մեղադրում էին դրուզների թաղամասերը հրդեհելու համար, ինչը, անշուշտ, ճիշտ չէր: Ասում են, որ Բեթմերիում՝ հարավային զառիվայրին, այրվել էր դրուզների ողջ տարածքը: Դա արդեն հայտարարված պատերազմ էր: Հրդեհները պարզ երևում էին Բեյրութից, ասես այրվում էր ողջ լեռը: Մարոնները հյուպատոսի միջոցով անմիջապես օգնություն խնդրեցին Ֆրանսիայից: Մի քանի շաբաթ անց անգլիական և ֆրանսիական ռազմանավերը մոտեցան ափին: Ողջ Եվրոպայով մեկ սարսափով էին խոսում քրիստոնյաներին սպանդի ենթարկելու և սուլթանի բռնած երկակի դիրքի մասին: Հուլիսին դրուզների և մարոնների միջև կնքվեց խաղաղության պայմանագիր, սակայն մարոնական եկեղեցու ներկայացուցիչները մերժեցին այն: Չափից ավելի քրիստոնյաների արյուն էր թափվել, և

դա հնարավոր չէր գրչի մեկ հարվածով ջնջել: Իրադրությունը սրվեց Դամասկոսում: Ֆրանսիայի ու Ռուսաստանի հյուպատոսները ստիպված ապաստան փնտրեցին, Անգլիայի հյուպատոսը սպանվեց, իսկ ամերիկյան հյուպատոսը վիրավորվեց: Թուրքերը հավատացնում էին, թե այդ թշնամանքի հեղինակը մի քրիստոնյա էր: Նրանց քաղաքականությունն է՝ մերժել ակնհայտը և մեղքը գցել մյուսների վրա: Ֆրանսիայում այդ ամենը լուրջ ընդունեցին ու որոշեցին զորքեր ուղարկել: Անգլիան մտածեց, որ նախընտրելի է նավատորմիղը պահել պատրաստ վիճակում: Սուլթանը շարունակում էր զորքեր ուղարկել: Միջամտեց Վատիկանը: Հռոմի Պապը՝ Պիոս Իններորդը, հրապարակեց մի ուղերձ, որով խնդրում էր Ֆրանսիայի միջամտությունը: Ի՞նչ կարող էր անել Նապոլեոն Երրորդ կայսրը: Արդեն միայն Լեռնային Լիբանանի հարցը չէր, այլ հարկավոր էր վերքը խորքից բուժել: Նրանք կա՛մ պետք է մտնեին Սիրիա, որտեղ բնակվում էին շատ քրիստոնյաներ, և գոյություն ունեին մեծաթիվ տաճարներ ու մենաստաններ, կա՛մ էլ պետք է լսելու չտային իրենց իսկ պատրիարքի կոչը: Ի վերջո, Մարսելում ու Թուլոնում նավ նստեցին վեց հազար զինվորներ: Առկա էր նաև բրիտանացիների համաձայնությունը: Վերադառնում էին հին ժամանակները: Փարիզում թերթերը գովաբանում էին կայսեր որոշումը: Վատիկանն օրհնեց արշավանքը: Ընդդիմության որոշ ներկայացուցիչների կարծիքով՝ խնդիրն ընդամենը Սիրիան վերահսկելու ցանկությունն էր: Խոսում էին մի նոր խաչակրաց արշավանքի մասին: Բոլոր դեպքերում Ֆրանսիայում քրիստոնյա մարոններին համարում էին հոգևոր հայրենակիցներ, արյունակից եղբայրներ, «Լևանտի ֆրանսիացիներ»: Սկիզբ առավ Արևելքի հարցը: Թուրքիան այլևս ագրեսիվ կայսրություն չէր, այլ մի թույլ զոհ: Անգլիացիներն իրենց անհանգստությունը, իրենց դժգոհությունն արտահայտեցին գալիք վտանգի հանդեպ: Ընդ որում՝ Պալմերթսոնը՝ Մեծ Բրիտանիայի վարչապետն այն կարծիքին էր, որ հարկավոր էր պահպանել Օսմանյան կայսրությունը. դա Եվրոպայի խաղաղության երաշխիքն էր: Կոստանդնուպոլսում այդ ամենին նայում էին մեծ անհանգստությամբ: Խոսում էին այն մասին, որ կոտորածների պատրվակով ֆրանսիացիների ոտքի ելնելն իսկական սպառնալիք է կայսրության համար, և չէին արդարացնում եվրոպական տերությունների ռազմավարությունը: Սուլթան Աբդուլ Մեջիդն իր վստահված մարդուն ուղարկեց Ֆուադ փաշայի մոտ՝ Լեռնային Լիբանան: Ըստ սուլթանի հրամանագրի՝ բոլոր հպատակները հավասար էին արդարադատության առջև: Այլ կերպ նա չէր կարող արտահայտվել. նրան հետևում էր ողջ Եվրոպան: Ոչ էլ ցանկանում էր, որ ֆրանսիացիները գային և լուծեին

խնդիրը: Նա օրենքը տարածում էր կայսրության ներսում. նախքան օտարերկրյա զորքերի տեղ հասնելն ամեն ինչ պետք է կարգավորված լիներ: Այն օրը, երբ սուլթանի պատվիրակը հասավ Դամասկոս, դրուզներն արդեն գերի էին վերցրել հարյուրավոր մարդկանց: Սուլթանն արձակեց մի հրովարտակ, որտեղ նշված էր, որ հանցագործներին ներում չի շնորհվելու, պահանջվում էր, որ իրենց կամքով վերադարձնեն կողոպտածը, խրախուսվում էր, որ մատնեն նրանց, ովքեր մասնակցել են անկարգություններին: Պատիժն օրինակելի էր և արագ: Սուլթանը խաղի մեջ էր դրել իր հեղինակությունը, և սկսեցին գնդակահարել դրուզներին, նաև՝ հանրահայտ մարդկանց, հաշվի չէին առնվում ո՛չ մատուցած ծառայությունները և ո՛չ էլ արտոնությունները: Ֆրանսիացի հյուպատոսին տեղեկացրին, որ ամենևին էլ պարտադիր չէ, որ ֆրանսիացիները մտնեն Սիրիա: Սակայն մարոնները չէին համակերպվում այդ ամենի հետ. դա կեղծ ներկայացում էր, որը հետապնդում էր մի նպատակ՝ կանխել ֆրանսիական զինուժի մուտքը Սիրիա: Սեպտեմբերին «Լոնդոնյան կոնվենցիան» նիստ գումարեց, որտեղ վավերացվեց ֆրանսիական զորքերի՝ Սիրիա ուղարկելու որոշումը: Հոկտեմբերին Բեյրութում սկսվեցին դատավարությունները: Թուրքերը չէին ուզում, որ ֆրանսիացիներն այդ պատրվակով մտնեն Դամասկոս, հասկանո՞ւմ եք: Բեյրութում տեղի ունեցած իրադարձությունները շատ լուրջ էին: Վերջիվերջո միայն դատապարտվեց Լեռնային Լիբանանում տեղի ունեցածը: Ինչ վերաբերում էր Սիրիայում կատարվածին, ապա համարվեց, որ այն ավարտվել է թուրքերի կողմից պարտադրված կախաղաններով և դատ ու դատաստանով: Թուրքերը բնականաբար չէին ցանկանում, որ երրորդ կողմը թեկուզ չնչին չափով միջամտեր Դամասկոսի գործերին: Դատավարությունները թուրքերի և եվրոպական գերտերությունների միջև դարձան ուժերը չափելու հարթակ: Ֆրանսիան պահանջում էր խստություն, իսկ պատվավոր դրուզները՝ գթասրտություն: Ֆուադ փաշան գտնվում էր նրանց միջև, և ի վերջո ներում շնորհվեց՝ հաշտության հասնելու նպատակով: Ինչ վերաբերում էր երկարաժամկետ դատապարտվածներին, ապա նրանց պատիժը մեղմացվեց: Սկսվեց մի երկար սակարկում փոխհատուցումների շուրջ: Թուրքերն իրենց խորամանկությամբ կարողանում էին դիմակայել եվրոպացիների պարտադրանքներին: Կոստանդնուպոլսում հաշվի չէին առել ֆրանսիացիների բնավորությունը. նրանք այդտեղից գնալու ոչ մի ցանկություն չունեին: Ջումբլաթը՝ դրուզների առաջնորդը, ում դատապարտել էին մահվան, բանտում թոքաբորբից մահացավ, ինչից բոլորը թեթևացած շունչ քաշեցին, քանի որ եթե այդ

առինքնող մարդուն կախաղան հանած լինեին, ապա անկարգությունները չէին դադարի: Բանտարկյալ դրուզներին արտաքսեցին Ալժիր, գնահատվեցին փոխհատուցումները, պետականորեն իրենց հողատարածքներից սեփականազրկեցին դրուզներին, ովքեր ստիպված ապաստանեցին Հաուրանում: Թուրքերը փորձում էին չնվաստացնել դրուզներին, մուսուլմանները՝ նույնպես, իսկ ֆրանսիական հյուպատոսը զգուշացնում էր Ֆրանսիայի պատվիրակին՝ Տուվենելին, որ եթե մարոնեներին թողնեն բախտի քմահաճույքին, ապա դրուզները թուրքերի համաձայնությամբ կամ հանդուրժողականությամբ կրկին կանցնեն իրենց սև գործին: Ի՞նչ պատմեմ Ձեզ: Այդ հարցը վերածվեց սակարկելի առարկայի, որից ամեն մեկն ուզում էր վերցնել ընտիր մասը: Ակնհայտ էր, որ դրուզները մարոնների հետ խաղաղ չէին ապրի: Ոչ էլ վերջիններս էին դա ցանկանում՝ նախընտրելով, որ իրենց կողքին լինեն ֆրանսիական զորքերը: Նրանք իսկապես իրենց համարում էին Արևելքի ֆրանսիացիներ: Մենք հիմա նույնպես այդ կարծիքին ենք: Կավարտեմ: 1861 թվականին ընդունվեց մի օրենք, ըստ որի՝ Լեռնային Լիբանանը կառավարելու էր քրիստոնյա՝ անշուշտ նշանակված Բարձր դռան կողմից: Նրան կից գործելու էր խորհուրդը՝ կազմված մարոններից և մուսուլմաններից: Նրանք ղեկավարելու էին վեց շրջան, իսկ ծովեզերքը և Բեկաայի հովիտը մնալու էին օսմանյան կառավարման ներքո: Ինչ վերաբերում է Ֆուադին, ապա նոր սուլթանը նրան նշանակեց որպես Սիրիայի գլխավոր կառավարիչ՝ նստավայրը Դամասկոսում: Լեռնային Լիբանանը կառավարելու էր Դաուդ էֆենդին՝ կաթոլիկ հայ՝ Օսմանյան կայսրության հեռագրակապի տնօրենը, Անգլիայի վառ երկրպագու: Ահա և այդտեղից ի հայտ եկավ նոր անուն՝ մութաշառեֆ: Կոզի օսմանյան օվկիանոսում, թեև Բեյրութը և ծովեզերքը պատմականորեն շարունակվում են համարվել Լեռնային Լիբանանի մաս, իհարկե առայժմ մենք դեռ Դամասկոսի իշխանության ներքո ենք: Ահավասիկ այն պատմությունը և հիմքը, որոնց վրա տեղի են ունենում ոչ այնքան հաստատուն բարեփոխումները: Սակայն ինչ-որ կանք՝ կանք, մեզ այսպիսին դարձրել են հանգամանքները: Լավ, ես գնամ, հիմա իմ կաբինետը լեփ-լեցուն կլինի: Ինձ մեծ հաճույք պատճառեց Ձեզ հետ այս րոպեներն անցկացնելը: Թոմա՛ս, զգո՛ւյշ եղեք: Գուցե որոշ ժամանակով հեռանաք այստեղից, քանի դեռ մարդիկ խելքի չեն գալիս:

Թաբիթը գնաց նույն աճապարանքով, որով եկել էր: Թոմասը մի քիչ էլ մնաց պատշգամբում: Իր բարեկամն իրեն լավ խորհուրդ տվեց, սակայն նա առայժմ ցանկանում էր մնալ այդտեղ՝ Բեյրութի իր տանը՝ իր օջախում սպասելով Կարոլինի տուն վերադառնալուն:

12. ՈՐՈՇՈՒՄ
ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ, 1914թ.

Բեյրութը շարունակում էր ապրել իր հանգիստ առօրյայով: Մարոն հաստափոր վաճառականները շարունակում էին նստել իրենց խանութների դռանը՝ զննելով նրանց, ովքեր անցնում էին իրենց առջևով, ծխելով իրենց հսկա սիգարները, զրուցելով հարևանների հետ, բաժակ բաժակի հետևից թուրքական թանձր սուրճ խմելով:

Ինչ վերաբերում էր թուրքերին, ապա Բարձր դռան հայտարարությունները երկիմաստ էին. դրանցով փորձում էին հանգստացնել հանրությանը, սակայն բոլորն էլ գիտեին, թե դրանք ինչ էին նշանակում: Չափազանց շատ դարեր էին ապրել օսմանների լծի ներքո, որպեսզի ի վիճակի չլինեին մեկնաբանել, թե ինչ էին ուզում ասել անդադար հանգստացնող այդ ուղերձները:

Եվրոպայից եկող լուրերը հայտնում էին ավստրիացիների և սերբերի միջև տեղական ընդհարման մասին: Խոսքը դրանից այն կողմ չէր անցնում: Արդեն հայտնի էր ավստրիական կայսրության ժառանգորդի և նրա կնոջ վրա կատարած մահափորձի հեղինակը՝ ոմն Գավրիլո Պրինցիպ՝ մի իտալացի անարխիստ: Սերբերն այդ պարագայում կասկածից դուրս էին: Ֆրանսիացիները նախազգուշացրել էին, որ Սերբիան մենակ չէ, քանի որ Ռուսաստանը սլավոններին կպաշտպանի ցանկացած ագրեսիայից, իսկ բրիտանացիները թույլ չեն տա, որ Ֆրանսիայի վրա հարձակվեն: Բեմադրությունը մատուցված էր, իսկ երիտթուրքերի կառավարությունը հուսահատ խոստումներ էր տալիս մեկ այս, մեկ այն կողմին՝ առանց հստակ կողմնորոշվելու, թե որ կողմը կթեքվի:

Թոմասը հաճախ էր թեյ խմում պրոֆեսոր Պետերսոնի հետ, ով դեռ Բեյրութում էր և փորձում էր մի նոր թույլտվություն ձեռք բերել Միջագետքում պեղումներ կատարելու համար, թեև գրեթե համոզված էր, որ ոչ մի հնարավորություն չունի:

- Թոմա՛ս, ես բոլոր իրերս կապկպում եմ: Քիչ ժամանակ անց թուրքերը բրիտանացիներիս վատ աչքով են նայելու, ավելի լավ է դուրս գալ՝ առանց շտապելու, քան ստիպված վազելով: Եթե Դուք ողջախոհ գտնվեք, ապա նույնը կանեք: Վրա է հասնում մի երկարատև պատերազմ, որում դժվար է գուշակել, թե ո՞ւմ վրա կընկնի ողջ ծանրությունը: Պրուսացիները շատ լավ են պատրաստված: Ունեն հզոր գաղտնի զենք, որը կարող է առճակատող ուժերի հավասարակշռությունը խախտել: Սուզանավերը... Այո՛, ինձ մի նայե՛ք այդ հայացքով: Մեր հզոր զրահա-

նավերը և «դրեդնոուտները»[31] պատրաստ չեն նրանց հետ պատերազմելուն: Իմ բարեկամը՝ առաջին կարգի կապիտան Քրիստոֆեր Կլարկն է այդ մասին ինձ պատմել: Ռազմածովային գլխավոր վարչությունում շատ անհանգստացած են, պետք է, որ այստեղ էլ հանգիստ չլինեն: Բեյրութը սնվում է ծովով: Այս քաղաքին սպասում են լուրջ խնդիրներ, այնպես որ՝ մի քանի շաբաթ հետո ես վերադառնում եմ Անգլիա: Ես չէի ուզենա ծովով նավարկելիս մտածել այդ սուզանավերի մասին, որոնք կարող են խորտակել այն փաստաթղթերով, նյութերով ու առարկաներով լի արկղերը, որ խոստացել եմ նվիրել Բրիտանական թանգարանին: Դա մի իսկական աղետ կլիներ: Ինձ սպասում է հրատարակիչ Չարինգ Կրոսսը, ես նրան հուսախաբ չեմ անի: Եվ Դուք, Թոմա՛ս, չեք կարող մնալ Ձեր հիասքանչ առանձնատանը: Բացի դրանից՝ չէ՞ որ Ձեզ կարող են կանչել ծառայության:

- Ո՛չ,- պատասխանեց Թոմասը,- չեմ կարծում: Պրոֆեսո՛ր, մեկնումեկը պետք է միջնորդ դառնա ընդհարման երկու կողմերի միջև: Իմ կարծիքով՝ ուզում են, որ այստեղ ես կատարեմ այդ դերը: Ես վստահ չեմ՝ որքանով դա ինձ կհետաքրքրի: Սակայն դա ինձ առաջարկել են Կահիրեից, և ըստ իրենց ասածի՝ թուրքերը համաձայն են: Այնպես որ՝ նրանք ինձ ուղարկել են դիվանագիտական անձնագիր՝ որպես Նորին գերազանցության շահերի ներկայացուցիչ Դամասկոսում, և թուրք կառավարչի այն գրությունը, որով նա տալիս է իր հավանությունը: Դա հատուկ փոխհյուպատոսի պես մի բան է:

- Ա՛յ քեզ բան... Թոմա՛ս, չգիտեմ՝ շնորհավորեմ Ձեզ, թե արտահայտեմ իմ խորին անհանգստությունը: Այստեղ սարսափելի բաներ են կատարվելու, և այն, որ թուրքերը երաշխավորում են Ձեր անձեռնմխելիությունը, դա դեռ չի նշանակում, որ հետագայում չեն փոխի իրենց տեսակետը: Սակայն Ձեր գործն է: Նաև հասկանում եմ, որ չեք ուզենա այստեղից հեռանալ թեկուզ այն պատճառով, որ մի գուցե որևէ նորություն լինի Ձեր կնոջ ու դստեր մասին: Այնպես չէ՞: Ձեզ հասկանում եմ:

Թոմասը գլխի շարժումով համաձայնեց: Պետերսոնը վաղեմի բարեկամ էր, չնայած՝ բնավորությամբ կասկածամիտ: Հետո իրար հրաժեշտ տվեցին՝ միմյանց ձեռք սեղմելով, պրոֆեսորը նրան հաջողություն մաղթեց: Չգիտեին՝ կրկին երբ կտեսնվեին:

Մի քանի օր անց Ավստրիան պատերազմ հայտարարեց Սերբիային, թեև սերբերը մեծ ջանքեր էին գործադրել իրադրությունը մեղմելու համար: Գերմանացիները սպասում էին հարմար առիթի և թույլ չէին տա,

[31] 20-րդ դարի սկզբի բրիտանական ռազմածովային զրահանավեր:

որ իրադրությունը հարթվեր դիվանագիտական ճանապարհով: Նրանք հատուկ էին նախապատրաստվել, որպեսզի հարցը լուծեին ռազմական ուժի միջոցով՝ համոզված լինելով, որ դա է առավել համապատասխանում իրենց շահերին. բառերի ու դիվանագիտության ժամանակը մնացել էր հետևում: Հետո, երբ հավասարակշռությունը խախտվեց, ամեն ինչ բարդացավ: Օգոստոսի մեկին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, երկու օր անց՝ Ֆրանսիային: Լինելով հրաշալի նախապատրաստված և սպառազինված՝ նրանք սպասում էին հրամանի ու անցան բելգիական սահմանը: Մեծ Բրիտանիան պատերազմ հայտարարեց Գերմանիային: Իտալիան ու Ռումինիան չեզոք դիրք բռնեցին՝ միաժամանակ նախապատրաստվելով պատերազմին, քանի որ իրենց մասնակցությունն անխուսափելի էր:

Վերջերս նրանք սովորաբար հավաքվում էին բժիշկ Բողոսյանի տանը: Նա կիրթ և սրտառուչ մարդ էր ու Թոմասին վերաբերվում էր մեծ ջերմությամբ: Նա և բժիշկ Թաբիթը Թոմասի ոչ բրիտանացի լավագույն բարեկամներն էին դարձել: Բողոսյանը Հայ էր՝ հայ առաքելական եկեղեցու հետևորդ, իսկ Թաբիթը՝ արաբ, քրիստոնյա մարոն: Երկուսին կապում էր քաղաքային հիվանդանոցում համատեղ աշխատանքը և այն, որ եվրոպամետ էին, թեև Բողոսյանը ֆրանսամետ էր, իսկ Թաբիթը՝ անգլիամետ:

- Մենք նույն կողմից ենք,- Բողոսյանը նրանց թեյ էր մատուցում համեղ խմորեղենով և հայկական եղանակով պատրաստված փոքրիկ կարկանդակներով ու բլիթներով: Սեղանը լի էր մեծ քանակությամբ փոքրիկ ափսեներով: Էդուարդը՝ բժիշկ Բողոսյանի որդին, սովորում էր Փարիզում՝ բակալավրի կոչում ստանալու համար, սակայն հայրը նրան ստիպել էր վերադառնալ Բեյրութ՝ վախենալով, որ գուցե իրավիճակն այնքան սրվեր, որ անհնարին լիներ հետ գալը: Տասներկուամյա տղան հոր նկատմամբ գերագույն ակնածանք էր տածում: Բողոսյանն այդ հավաքույթին հրավիրել էր Օհաննես Դեմիրճյանին՝ բարձրորակ պարսկական գորգերի վաճառականի, ով ավանդաբար դրանք մատակարարում էր Գերմանիայի բարեկեցիկ ընտանիքներին:

- Դեմիրճյա՛ն, քո առևտուրը կործանելու են: Մենք՝ հայերս, առճակատման ենք դուրս գալու թուրքերի՝ ներկայումս լավագույն դաշնակիցների՝ գերմանացիների դեմ: Քեզ խորհուրդ կտայի լինել շատ զգույշ: Թեև պետք է ներողամիտ լինես իմ միամտության համար: Գիտե՞ք, Հարդի՛նգ, Դեմիրճյանը շատ տեղեկացված անձնավորություն է: Նա կարող է Ձեզ պատմել այն, ինչ տեղի է ունենում Բեռլինում, որտեղ պրու-

սացի քաղաքագետների շրջանում հրաշալի բարեկամներ ունի,- իր հայրենակցին ներկայացրեց Բողոսյանը:

Դեմիրճյանը համաձայնեց և ձայնն իջեցնելով՝ ասաց.

- Բեռլինում՝ չգիտեմ, բայց Կոստանդնուպոլսում Ռեշադ բեյը՝ քաղաքական ոստիկանության պետը, մի թղթապանակ ունի ազդեցիկ հայերի մասին: Դա ինձ անհանգստացնում է: Մյուս կողմից թուրքական ոստիկանության ու բանակի՝ աչքի ընկնող մի քանի ղեկավարներ մնացել են Բեռլինում՝ գաղտնի հրահանգներ ստանալու համար: Իմ բարեկամ ֆոն Կրամերն ինձ պատմել է, որ նրանց պատրաստում են մի ինչ-որ «զտման» գործողության համար: Երբ նրան հարցրի, թե ինչ ասել կուզի այդ արտահայտությամբ, ինձ պատասխանեց, որ թուրքերն ուզում են ազատվել Անատոլիայի բոլոր քրիստոնյաներից՝ հույներից, հայերից, ասորիներից: Մեզ մեղադրում են անհավատարմության մեջ, ու այդ առումով երիտթուրքերի կառավարությունն ուզում է վերջ տալ Ֆրանսիայի և Անգլիայի միջամտություններին: Եթե Թուրքիան պատերազմի մեջ մտնի, ապա կօգտվեն խառնաշփոթ իրավիճակից ու կփորձեն առնվազն ազդեցիկ հայերի վերջը տալ, գլխատել հայոց ազգին: Դեռ 1895 և 1896 թվականներին սուլթան Աբդուլ Համիդը փորձեց դա իրականացնել, բայց չհաջողվեց:

- Ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Անգլիան, ո՛չ էլ Միացյալ Նահանգները նման բան թույլ չեն տա,- հուզված պատասխանեց Բողոսյանը,- պարզապես հավատս չի գալիս: Դա անհեթեթություն է: Աբդուլ Համիդը կգնար այդ քայլին, եթե հնարավորություն ունենար, իսկ երիտթուրքե՞րը… Չեմ կարծում, որ գնան այդ ծայրահեղությանը: Նրանք չէի՞ն, որ հենց վերջերս խոսում էին հավասարության, եղբայրության ու ազատության մասին: Չեմ հավատում:

- Լավ կանեիր, որ ինձ հավատայիր, Բողոսյա՛ն: Մեզ հետ կատարվելու է նույնը, ինչպես միշտ,- Դեմիրճյանը լրջացել էր,- հիշի՛ր Ադանայում կատարվածը: Սակայն ես չեմ եկել այստեղ կյանքդ դառնացնելու համար: Գլխներիս կախված է պատերազմի վտանգը, ու բոլորս էլ տուժելու ենք: Այնքան էլ դյուրահավատ չենք, որ մտածենք, թե Լեռնային Լիբանանն ու Բեյրութը զերծ կմնան այդ ամենից:

Թոմասը վախենում էր, որ եթե պատերազմ հայտարարվեր, ապա թերևս ստիպված թողներ երկիրը՝ հակառակ իր դիվանագիտական շողշողուն անձնագրի և Նյումանի տված բոլոր խոստումների: Պատերազմը կլինի դաժան, բոլորը կկորցնեն ողջախոհությունը: Ուսերը թոթվեց: Չէր

կարողանալու հեռանալ, Ֆրանսիա կամ Անգլիա գնացող նավ նստել և խնդրել բժիշկ Թաբիթին ու Բողոսյանին, որ հսկեն իր սեփականությունը: Դա կնշանակեր վերջնականապես լքել Կարոլինին ու Էթելին: Չէր կարող այդպես վարվել: Կփորձի ապրել իր առօրյա կյանքով, քանի դեռ կարող է: Հետագայի մասին մտածել չէր ուզում:

Եվրոպայի քաղաքակիրթ համարվող ազգերը կորցրել էին ողջախոհությունը: Մի քանի շաբաթ անց խոսում էին այն բարբարոսություններիի մասին, որոնք գերմանացիներն իրականացնում էին խաղաղ Բելգիայում: Անդադար ռմբակոծություններն ավերում էին քաղաքների կենտրոնական թաղամասերը, եկեղեցիները, արկերից օդ էին թռչում պատմական հուշարձանները, մարդկանց թալանում ու գնդակահարում էին ֆրանսիացիների կամ անգլիացիների հետ համագործակցելու մեղադրանքով: Պատերազմի այնպիսի ռազմավարություն էր ընտրվել, որով գերմանական բարձրագույն հրամանատարությունը ցույց էր տալիս, որ բացառվում է հետադարձի ճանապարհը:

Անկախ այդ ամենից՝ Բեյրութում մարդիկ ջանք չէին խնայում, որ իրենց կյանքը շարունակեն սովորական ընթացքով, սակայն դա ակնհայտորեն անհնարին էր դառնում: Բոլորը գնումներ էին կատարում, ասես աշխարհի վերջն էր: Թուրք կառավարիչը մի հրաման արձակեց, որով արգելվում էին մեծաքանակ գնումները, բայց արդյունքում ստացվեց հակառակը: Գներն օրական աճում էին: Մի քանի շաբաթ հետո խանութները դատարկվեցին ու փակվեցին, սկիզբ առան անկարգություններն ու թալանը: Դրանք Եվրոպայում ծագած պատերազմի առաջին հետևանքներն էին Արևելքում:

Բժիշկ Թաբիթը հիվանդանոց գնալու ճանապարհին այդ հարցերի շուրջ զրուցում էր Թոմասի հետ.

- Այն, որ Թուրքիան պատերազմի մեջ չէ, ու դեռ ոչ մի այդպիսի բան չկա, Բեյրութն ու եզերքը շատ են տուժելու: Հենց որ Թուրքիան միանա մեծ տերություններից որևէ մեկին, կտեսնեք, թե որքան շուտ է մեր գլխին գալու ծովային շրջափակումը: Թերևս այս պահին Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի և Գերմանիայի դեսպանները Բարձր դռան առջև աճուրդի հանեն իրենց լավագույն առաջարկությունները: Լուր է տարածվել, թե գերմանացի գեներալներն արդեն իսկ ղեկավարում են օսմանյան զորքերը: Չե՞ք տեսել սպաների այն քանակը, որ գալիս են միանալու թուրքական զորքին: Թուրքերն ու գերմանացիները ամուր դաշնակիցներ են և կհաղթեն կամ կընկնեն միասին:

- Իմ կարծիքով՝ երկրորդը,- վրա բերեց Թոմասը,- ճիշտ է, գերմանա-

ցիները մեծ ջանքեր են գործադրել, որպեսզի թուրքերին իրենց արկածախնդրության մեջ ներքաշեն, բայց այն կանխազգացումն ունեմ, որ երկու երկրներին էլ ձախողում է սպասվում:

Երբ մտան հիվանդանոց, բժիշկ Բողոսյանը լուրջ տեսքով նրանց մոտեցավ:

- Այս թուրքերն էլի անցել են իրենց սև գործին: Ոչնչացնելու են մեր-ոնց: Հենց նոր մի քանի հայուհիներ եկան՝ բերելով երեխաների: Շատ վատ վիճակում են և հավատացնում են, որ թուրքերը կոտորել են իրենց գյուղի բոլոր տղամարդկանց:

Բողոսյանի հետ մտան մեծ սրահներից մեկը: Երկու միանձնուհիներ օգնում էին վեց կանանց ու մի քանի երեխաների: Երկու փոքր աղջնակ վիրավոր էին: Նրանցից մեկի գլխին մի մեծ ու նոր վիրակապ կար:

- Եկել են Հալեպից: Քանի որ ուժասպառ էին և այլևս չէին կարողանում քայլել, մի գթասիրտ մարդ նրանց սայլով բերել է մինչև այստեղ: Միևնույն բնակավայրից են, որը գտնվում է Աղանայի և Հալեպի միջև, իսկապես հայեր են: Թեև նրանք վախենում են խոսել, սակայն ասում են, որ թուրքերն ուզում են սպանել բոլոր հայերին,- Բողոսյանը թարգմանում էր նրանցից մեկի ասածները, ով պատմում էր հեծկլտալով,- ինձ հավատացնում են, որ սա պատահական դեպք չէ: Մեկ ամիս է, ինչ փախչում են սարերի վրա՝ Տավրոսի հարավային լանջին տեղակայված իրենց գյուղից: Ասում են, որ թուրքերն անխտիր հարձակվում են հայկական բնակավայրերի վրա: Այս կանայք տեսել են, թե ինչպես են սպանում իրենց ամուսիններին ու եղբայրներին: Չեն ուզում վերադառնալ: Սա թուրքերի առանձնահատուկ պատերազմն է կայսրության քրիստոնյաների դեմ: Չգիտեմ, թե ինչ պետք է անենք:

Բժիշկ Բողոսյանը նրանց հետ խոսում էր հուզված, անասելի հոռետեսությամբ: Թոմասը բարձր գնահատանքով էր լցված բժշկի հանդեպ, ով միշտ մտածում էր ուրիշներին օգնելու մասին՝ մոռանալով իր անձնական հոգսերը:

Քայլելով վերադարձավ իր տուն՝ առանց իմանալու, թե ինչ պետք է անի. հուզմունքից շվարած էր և այդ կանանց ու նրանց զավակների թշվառ վիճակից՝ անհանգստացած: Տեսնելով նրանց՝ հուզմունքով մտածել էր Կարոլինի ու Էթելի մասին: Մի քանի անգամ լվաց դեմքը: Հայելու մեջ նայելով իր խոնավ աչքերին՝ հասկացավ, որ չէր կարող շարունակել այդպես՝ առանց մի բան անելու: Որոշեց կրկին փնտրել նրանց՝ իմանալով հանդերձ, որ դա անհնարին է:

Այդ երեկո բժիշկ Թաբիթին ասաց, որ որոշ ժամանակով վերա-

դառնում է Բիբլոս, քանի որ եթե կա մի հետք, ապա դա այնտեղ է: Մի քանի անգամ, գուցե և ոչ անհրաժեշտ հաստատակամությամբ կամ ողջամտությամբ, արդեն փորձել էր գտնել այդ հետքը: Թաբիթը նրան խորհուրդ տվեց, որ լավ մտածի, քանի որ դա ամենալավ ժամանակը չէր, որ մի անգլիացի իր որոնումներով այս ու այն կողմ գնա ու գա: Սակայն ընդունում էր իր բարեկամի փաստարկները և համաձայնեց նրա որոշման հետ՝ իհարկե որոշ վերապահումներով:

- Պետք է շատ զգույշ լինես, Թոմա՛ս: Հիմա բոլորն իրենց միտքը սևեռել են լրտեսների վրա: Թուրքերը չեզոք չեն, թեև Ֆրանսիային ու Անգլիային հակառակն են ցույց տալիս. նրանք բացարձակ գերմանամետ են: Մյուս կողմից ընդհարման պատրվակը լինելու է մի ապացույց, որը թույլ կտա բացահայտել յուրաքանչյուր կողմի վատթարագույն դեմքը: Այս ինչ է կատարվում այս օրերին… Հարձակումներ են իրականացվում ոչ միայն հայերի հանդեպ… Փոքր Ասիայի հույներին իրենց բնակավայրերից դուրս են քշում առանց այլևայլության: Բոլորն էլ գիտեն, որ դա երիտթուրքերի ռազմավարությունն է, ովքեր զենք ու ռազմամթերք են տալիս արմատականների խմբավորումներին, անշուշտ նաև բանտարկյալներին ու աքսորյալներին, որպեսզի նրանք կատարեն կեղտոտ գործը: Էգեյան ծովի ափին գրեթե կես միլիոն հույն է կուտակվել: Պատմում են, որ տղամարդկանց զորակոչում են, որպեսզի հետո գնդակահարեն, իսկ կանայք, ծերերն ու երեխաները մնում են անպաշտպան: Հավատս չի գալիս, թեև թուրքերի մասին արդեն ամեն բան կարող եմ մտածել: Քեզ մի բան պատմեմ: Մի հայտնի թուրք արմատական, ով ինձ մոտ եկել էր ընդունելության, ասաց, որ իրենք՝ թուրքերը, պատմության ընթացքում չափազանց բարի են եղել փոքրամասնությունների, մանավանդ քրիստոնյաների նկատմամբ: Նա ինձ խոստովանեց, որ եթե ժամանակին, երբ գրավեցին տարածքները, իսպառ ոչնչացրած լինեին տեղաբնակներին, ապա հիմա ոչ մի խնդիր չէին ունենա: Միայն երջանիկ թուրքեր կլինեին, և ոչ մի կարողունակ թշնամի, որ նենգորեն դիմեր քրիստոնյա տերություններին՝ իրենց հանդեպ կիրառվող վատ վերաբերմունքից բողոքելու համար: Ա՜հ, պատմություն... Ոչ ոք դասեր չի քաղում դրանից: Հույներն ու հայերը դիմադրում են, որ չհեռանան իրենց հինավուրց հողերից: Անտիկ Հունաստանը սկզբնավորվել է Անատոլիայում: Հելլենական աշխարհը հիմնականում կազմավորվել է այժմյան Թուրքիայի տարածքում: Որտե՞ղ էին գտնվում Տրոյան, առասպելական Իլիոնը: Թուրքիայում ամենուրեք հայկական սրբավայրեր են ու մենաստաններ: Իսկ խաչքարե՞րը, որոնք արտահայտում են հայերի քրիս-

տոնական ինքնությունը: Իսկ Սիրիան մի՞թե արաբական չէ: Ուրեմն, որտե՞ղ մնացին թուրքերը: Հենց սա է նրանց պատող իրական երկյուղը: Շատ լավ գիտեն, որ սա նրանց հինավուրց հայրենիքը չէ, և մի օր որևէ մեկը միանգամայն իրավունք կունենա իրենցից պահանջելու այն: Զգո՛ւյշ եղիր, Թոմա՛ս, աշխարհը խառնաշփոթ վիճակում է, դու պետք է լինեիր Օքսֆորդի քո խաղաղ ամբիոնում ու դասավանդեիր: Ամեն ջանք թափեցիր լիբանանցի դառնալու համար, ու դա քեզ վրա ծանր է նստելու:

Երկու բարեկամներով գրկախառնվեցին:

Հաջորդ օրը՝ մթնշաղին, հասավ Բիբլոս: Գնում էր՝ իր ձին հեծած: Մի ձի էլ գնում էր կողքից, որի գավակին իր ուղեբեռն էր՝ մեջը՝ դաշտային վրան, բավարար չափով սնունդ՝ անհրաժեշտության դեպքում որոշ ժամանակ ապրելու համար: Պիջակի գրպանում իր նոր դիվանագիտական անձնագիրն էր, և հուսով էր, որ հարկ չէր լինի օգտագործել: Ներքուստ մի բան զգաց և ուղիղ գնաց ֆրանսիացի թոշակառու բժիշկ Պիեռ Գուրոյի տուն, ում հետ նա ու իր ընտանիքը շփվել էին Բիբլոսում ապրելիս:

Բժիշկ Գուրոն շատ գոհ ու զարմացած էր նրան տեսնելով: Հրավիրեց ճաշի և իր խոր վիշտն արտահայտեց կատարվածի առթիվ: Կարոլինի և Էթելի անհետանալուց հետո արդեն անցել էր երկու տարի: Բժիշկը կամացուկ շշնջաց, որ դա սարսափելի ու կյանքը կործանող բան էր: Թոմասն էլ ասաց, որ նրա օգնության կարիքն ունի, և գուցե հիշի, թե ինչ է կատարվել այն օրերին, քանի որ ցանկացած մանրուք կարող է կարևոր լինել:

Գուրոն նրան անկեղծորեն պատասխանեց, որ միշտ էլ կասկածել է արաբերենի դասախոսին՝ Մաջիդ Աբդելին: Մի մարդ, ով չէր վայելում տեղացիների համակրանքը և Բիբլոսից անհետացավ այդ դեպքից մի քանի շաբաթ անց: Սակայն ոչ մի ապացույց չկար: Բնակիչներից շատերն էին բերանից բաց թողել, որ Աբդելը թեև արաբ էր, բայց թուրքերի հանդեպ հատուկ հարգանք ուներ: Ոչ ոք նրա հետ լավ հարաբերության մեջ չէր, մյուս կողմից էլ հնարավոր չէր հաստատել, թե նա կատարվածին հանցակից էր: Բժիշկը ոչ մի գաղափար չուներ, թե նա ուր է գնացել: Ղալիբ ընտանիքի անդամները Գուրոյին պատմել էին, որ այդ գիշեր մի խումբ ձիավորներ են եկել: Սկզբում ինչ-որ մեկն ասել է, որ նրանք արաբներ էին, հետո էլ խոսել են, թե քրդեր էին: Սակայն բժիշկ Գուրոյի կարծիքով՝ նրանք համիդիեներ էին, ովքեր քաղաքային բնակչության հանդեպ իրականացնում էին ամենակեղտոտ ու վայրագ առաջադրանքները: Երբ օսմանյան բանակը ցանկանում էր ոմանց ցուցադրաբար պատժել, օգտագործում էր հենց նրանց:

Բժիշկ Գուրոն դառը ժպիտով զննում էր Թոմասին: Նա լավ գիտեր, թե ինչ է նշանակում կորցնել կնոջը: Նրա կինը, երբ նոր էին եկել Սիբիա, մահացել էր խոլերայի համաճարակից, ու բժիշկը դեռ չէր հաշտվել նրա կորստյան հետ:

Թոմասը որոշեց մի քանի օր մնալ Բիբլոսում, ու Գուրոն նրան առաջարկեց իր տունը: Էլ որտե՞ղ նա իրեն ավելի լավ կզգար: Ընդունեց առաջարկը:

Այնուհետև գնաց քաղաքապետարան, խոսեց քաղաքապետի հետ, ով նրան ջերմորեն ողջունեց: Թոմասը նրան ասաց, որ ինքը մեծ փոխհատուցում՝ քսան հազար թուրքական լիրա, կտա այն մարդուն, ով իրեն այնպիսի տեղեկություն կտար, որը կօգներ իր ընտանիքը գտնելու գործին: Ցանկացած մարդու համար դա մի հսկա կարողություն էր: Քաղաքապետը՝ մի քրիստոնյա մարոնական, սուլեց ատամների արանքից, թեև մինչ գումարի մասին խոսք լինելը պնդում էր, որ այդտեղ ոչ ոք չգիտի, թե ինչ է կատարվել, և չգիտեն այն դրդապատճառները, որոնք հանգեցրել են այդ չարագործությանը:

- Դրսի մարդիկ էին՝ գուցե համիդիեներ կամ նույնիսկ բանակում ծառայող թուրք տեղացիներ: Ասում են, որ դա գողության, այլ ոչ թե կանանց առևանգելու համար է արվել: Գուցե մայր ու աղջիկ մենակ էին, ու դրա համար իրենց հետ տարան: Աստված գթառատ է: Սակայն այս տեսակ բաները, թեև իսկական ողբերգություն են, բայց երբեմն պատահում են,- քաղաքապետը չէր հասկանում, թե այդքան ժամանակ անց անգլիացին ինչու էր դեռ փնտրում իր ընտանիքը:

Թոմասը պնդեց, որ հրապարակվեր մի ծանուցում, որում նշվեր իր մտադրությունը՝ վարձահատույց լինել այն մարդուն, ով իրեն հայտնի նրանց գտնվելու վայրը, իսկ քաղաքապետն ուսերը թոթվեց՝ կարծես ասելով՝ ոչ մի խնդիր չկա, սակայն ոչնչի չես հասնի:

Հաջորդ օրը քայլեց ծովափով: Հանդիպեց Նադիմա Ղալիբի եղբորը: Քիչ անց հայտնվեց Նադիման: Կրկին տեսնելով Թոմասին՝ հուզվեց: Հետո հանգստացավ և նրան ասաց, որ Աբդել Մակիկը՝ նախկին հավատարիմ ծառան, շարունակում է հայտնվել այդ կողմերում: Այդ մարդը նրանց հետ էր եղել Բաալբեկից սկսած, սակայն նրա նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով Թոմասը նրան վռնդել էր Բիբլոս գալուց մի քանի օր անց: Ոչ ոք նրան չէր սիրում: Աբդել Մակիկը Բաալբեկից էր, ու պետք է, որ վերադարձած լիներ իր սև գործերին, բայց ինչ-ինչ պատճառներով դեռ Բիբլոսում էր: Ապրում էր պետական տարածքի

վրա գտնվող մի խրճիթում: Ձուկ էր որսում իր ուտելու համար, երբեմն էլ անհետանում էր: Նրան ոչ ոք չէր վստահում, սակայն նա մնում էր այդտեղ՝ ասես սպասելով ինչ-որ մեկին: Թոմասը որոշեց գնալ և նրա հետ խոսել, թեև մտքով անգամ չէր անցել, որ Աբդելը կարող էր որևէ առնչություն ունենալ այդ գործի հետ, սակայն գուցե մի բան տեսած կամ իմացած լինի:

Աղջկան և նրա եղբորը հրաժեշտ տալուց հետո ուղղվեց այնտեղ, որտեղ ապրում էր Աբդելը: Հիշում էր, որ նրան հեռացրին այն բանից հետո, երբ համոզվեցին, որ անհայտացել էին որոշ իրեր, անգամ՝ փող: Սակայն այդ դեպքի և հաջորդ պատահարի միջև մի անդունդ գոյություն ուներ:

Նրան գտավ ուղտի բրդից պատրաստված փոքրիկ վրանի առջև բեդվիների ձևով նստած: Լսելով ձիու մոտենալը՝ Աբդելը տեղից միանգամից վեր թռավ, նայեց մարտահրավերն ընդունողի հայացքով, իսկ Թոմասը, ձիուն հեծած և մնալով որոշ հեռավորության վրա, նրան դիմեց արաբերեն.

- Աբդե՛լ Մակիկ: Աստված քեզ հետ: Պետք է քեզ մի հարց տամ: Հիշո՞ւմ ես, տեսե՞լ ես որևէ մեկին այս կողմերով շրջելիս այն օրը, երբ հարձակվեցին տանս վրա, հրդեհեցին այն, ու անհետացան կինս ու աղջիկս: Քեզ շնորհակալ կլինեմ, եթե ինչ-որ բան հիշես: Դա շատ կարևոր է ինձ համար:

- Միայն հիշում եմ, որ Ձեր տնից ինձ շան պես դուրս նետեցիք: Ուրիշ ոչինչ չեմ հիշում, ոչ էլ ուզում եմ դրա մասին մտածել: Ես այդ գործի հետ ոչ մի առնչություն չունեմ. սա է այն ամենը, ինչ պետք է Ձեզ ասեմ: Ինձ արդեն հարցաքննել են թուրք ոստիկանները: Ոչինչ չգիտեմ, Ձեզ ոչինչ պարտական չեմ,- նայելով նախկին տիրոջ աչքերին՝ չարությամբ պատասխանեց Աբդելը: Թոմասը հասկացավ, որ այդ մարդն ավելի նյարդայնացած էր, քան ցույց էր տալիս:

- Աբդե՛լ Մակիկ, Աստծուն հայտնի է, որ քեզ ոչ մի չարիք չեմ ցանկանում: Այն ժամանակ մենք միայն հրաժարվել ենք քո ծառայությունից, քեզ ո՛չ մատնել ենք ոստիկանությանը, ո՛չ էլ մի այնպիսի բան ենք արել, որ քեզ վնաս պատճառենք: Քեզ աշխատանք տվեցի, իսկ հետո ազատեցի: Այդպիսի բաներ պատահում են: Ի վերջո… Եթե մի բան հիշես ու ինձ պատմես, քեզ կհատուցեմ: Ես հատուցում եմ նշանակել այն մարդու համար, ով ինձ որևէ կարևոր տեղեկություն հայտնի: Քսան հազար թուրքական լիրա... Մեծ գումար է,- Թոմասը մի թեթև կայծ նկատեց այդ մարդու աչքերում,- դեռ որոշ ժամանակ մնալու եմ Բիբլոսում: Ինձ կարող ես գտնել բժիշկ Գուրոյի տանը:

Երկու օր անց, երբ իրիկնամուտին զբոսնում էր, տեսավ Նադիմային, ով մոտենում էր մի տարեց կնոջ հետ: Երկուսն էլ անհանգիստ էին երևում... Տարեց կնոջը, ով աղջկա մորաքույրն էր, Նադիման նյարդայնացած պնդում էր, որ ինչ-որ բան պատմի Թոմասին: Մորաքույրը, սակայն, լուռ էր մնում: Ի վերջո ստիպված Նադիման խոսեց.

- Պարո՛ն Թոմաս: Մենք չենք եկել հատուցում փնտրելու: Սակայն իմ ազգական Աբդել Ուահեդի՝ մորս զարմիկի միջոցով, ով հիմա ապրում է Տրիպոլիում, գիտեմ, որ ուսուցիչ Մաջիդ Աբդելը գտնվում է այնտեղ: Մորաքույրս պատմում է, որ այդ դեպքից մի քանի օր առաջ Բիբլոսի ճանապարհին նրան տեսել է մի քանի օտարերկրյա սպաների՝ հավանաբար գերմանացիների հետ խոսելիս, ովքեր նախքան այդ այստեղ էին: Նրանք ճամբար էին խփել արվարձաններում: Նրանց հետ նաև համազգեստ չկրող համիդիեների հեծելավաշտ է եղել: Մորաքույրս կարծում է, որ հաստատ այդ նրանք էին, որ հարձակվեցին Ձեր տան վրա, թեև իսկապես այդ գիշեր նա չի տեսել նրանց, սակայն հիմք ընդունելով նաև հորս պատմածը՝ ասում է, որ ուրիշ մարդիկ չէին կարող լինել: Մինչև հիմա չի ցանկացել ոչ մի բան պատմել, քանի որ շատ է վախենում թուրքական ոստիկանությունից: Ձեզ նաև թախանձագին խնդրում է, որ ոչ ոքի չասեք, թե ով է այդ մասին Ձեզ հայտնել: Նաև ինձ ասում է, որ ոչինչ չի ուզում լսել դրամական հատուցման մասին: Դա անում է, քանի որ Դուք լավ մարդ եք:

Մինչ լսում էր Նադիմա Ղալիբին, Թոմասին պատել էր զգացմունքների տարօրինակ մի խառնուրդ: Քանի որ կանայք շուռ եկան ու արագ հեռացան, հասկացավ, որ նրանք ավելացնելու ոչինչ չունեին: Մթնում էր, ուղղվեց դեպի բժիշկ Գուրոյի տուն, ում ոչինչ չէր պատմի այդ ամենից, ինչպես որ խնդրել էին Նադիման ու նրա մորաքույրը: Չէր ցանկանում, որ իր պատճառով նրանք խնդիրներ ունենան:

Գուրոյին ասաց, որ որոշել է ուղևորվել դեպի հյուսիս: Այդ մարդը նրան զննում էր մտախոհ՝ համոզված, որ իր բարեկամ Հարդինգն այլևս չէր կարող խույս տալ սևամաղձությունից, կանխազգացումներից ու կասկածանքներից, որոնք համակել էին նրա կյանքը: Ճակատագիրը որքան դաժան կարող էր լինել շատ մարդկանց հետ: Բժիշկը շատ լավ էր հիշում երիտասարդ ամուսիններին ու նրանց փոքրիկ դստերը, երբ եկան Բիբլոս: Շատ երջանիկ էին թվում, ու չէր ժխտի, որ այն ժամանակ խորը նախանձով էր լցվել՝ համեմատելով նրանց և իր վիճակը:

Նա հրաժեշտ տվեց Թոմասին՝ ասելով, որ իր տունը նրա տունն է, և եթե շուտ վերադառնա, կրկին կհանդիպեն իր տանը՝ Բիբլոսում: Թոմա-

սը սեղմեց նրա ձեռքը ու գրկեց նրան: Այդ մարդն իր հոր հասակակիցն էր, ու թեև քիչ էին շփվել, բայց իր նկատմամբ նա եղել էր մեծահոգի ու սրտառուչ:

Հաջորդ առավոտ՝ հազիվ լույսը բացված, նա թամբեց իր ձին, իսկ մյուս ձիու վրա դրեց ողջ ուղեբեռը: Հետո ողջունեց Գուրոյին, ով նույնպես շուտ էր վեր կացել՝ սուրճ պատրաստելու համար: Այնուհետև դեպի հյուսիս արշավեց այն համոզմամբ, որ այս անգամ ճիշտ ուղու վրա է գտնվում: Մեկ ժամ անց սարերի հետևում սկսեց լուսանալ: Ձյունաճերմակ գագաթներն արտացոլվում էին վարդագույն հորիզոնի վրա: Մի պահ կանգ առավ՝ զմայլված ծովեզերքի գեղատեսիլ բնապատկերով: Այդ պահին հասկացավ, թե ինչու էին այդքան մարդիկ կենաց ու մահու կռիվ տվել՝ արտոնյալ այդ վայրում հաստատվելու համար: Ոչ էլ ինքն էր մտադիր թողնել այն: Երբ գտներ իր ընտանիքը, կվերադառնան Բեյրութ, որպեսզի վերստին կազմեն իրենց ջերմ օջախը, որի մասին երազում էր ամեն գիշեր:

13. ՀՐԱՇՔԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1914թ.

Երկու օր անց նա հասավ Հալեպ: Գտավ այն հյուրանոցը, որը բժիշկ Գուրոն էր խորհուրդ տվել. հենց այդտեղ էլ ընթրիքին մի բան կուտեր: Մեկ ժամ հետո նրան մոտեցավ այդ հաստատության տնօրենը, ով կարծես շփոթված էր և Թոմասին ասաց, որ պետք է նրան ուղեկցի հյուրանոցի ընդունարան, որտեղ նրան է սպասում ինչ-որ անձնավորություն՝ ոստիկանության կողմից ուղարկված: Թոմասը վեր կացավ ու հետևեց տնօրենին: Մարմնեղ, հիսունին մոտ մի անձնավորություն մոտեցավ Թոմասին ու նրան մեկնեց ձեռքը, այնուհետև հրավիրեց նստել հենց այդտեղ՝ միաժամանակ առանց այլևայլության ներկայանալով որպես օսմանյան բանակի հետախուզական ծառայության գնդապետ:

- Պարո՛ն Հարդինգ: Ձեզ պետք է որոշ բացատրություններ տամ այն հարցի վերաբերյալ, որը Ձեզ բերել է մինչև այստեղ, թեև կսկսեմ նրանից, որ Ձեզ պես մարդը հիմա այս քաղաքում չպետք է գտնվեր: Սակայն դա, ինչ խոսք, ինձ չվերաբերող հարց է:

Գնդապետը նրան պատմեց այն, ինչ իրենց հայտնի էր Թոմասի կնոջ և դստեր անհետանալու մասին: Թոմասը չէր հավատում իր լսածին: Նրա բարեկամ Սլիմա Մելլին՝ Բեյրութի հնաոճ իրերի վաճառականը, առևտրական կապեր ուներ Մահմուդ էլ-Քանտարիի՝ Դամասկոսի մեկ այլ հնաոճ իրերի վաճառականի հետ, ում պատկանում էին ողջ Սիրիայով մեկ տեղակայված հնաոճ իրերի լավագույն խանութները: Մահմուդն իր բարեկամին ցույց է տալիս Բաալբեկի մի քանի նկարներ, որոնք հին չէին, բայց շատ բարձրարժեք էին և ստորագրված՝ Կ.Հ.Վ.: Սլիման, ով բացառիկ մարդ էր՝ օժտված մեծ նրբազգացությամբ և կանխազգացմամբ, նրան խնդրում է, որ իր մոտ թողնի նկարները: Սլիման համանման բան տեսել էր Թոմաս Հարդինգի տանը: Կասկածից վեր էր, որ դրանք Կարոլին Հարդինգինն էին. օրիորդական ազգանունը՝ Կարոլին Վեյլեր:

Մահմուդը հիշում էր, թե ով էր դրանք իրեն վաճառել. մի միջնորդ, ով իրեն այս ու այն կողմ էր գցում՝ չնչին գնով գնորդ փնտրելով: Հալեպից էլ մի արաբ Մահմուդին և Սլիմային տարել էր այն մարդու մոտ, ով դրանք գողացել էր Հարդինգների տնից: Այնուհետև թուրքական ոստիկանությունը զբաղվել էր նրանով: Չդիմանալով թուրքական հարցաքննության եղանակներին՝ այդ մարդը խոստովանել էր հանցանքը:

Նա պատմել է, որ Բիբլոսում՝ Հարդինգների տնից երեք մղոն հեռա-

վորության վրա աշխատում էին գերմանական բանակի տեղանքագիր-ներ, ովքեր տեղագրական քարտեզներ էին կազմում: Թուրքերը համի-դիեների մի ջոկատ էին տրամադրել նրանց պաշտպանության համար: Նրանց թվում եղել են նաև երեք նախկին բանտարկյալներ, ովքեր իրենց իսկ ընկերների հետ շարունակ ընդհարվում էին: Մի գիշեր բոլորն էլ, նույնիսկ սպան և ենթասպաները չափից դուրս հարբում են: Մի քանի համիդիեներ ձի են նստում ու գիշերով անհետանում: Նրանց այլևս չեն տեսնում՝ բացառությամբ մեկից, ով վերադարձել էր երեք ժամ հետո: Երբ իմացել են կատարվածի մասին, բոլոր կասկածներն ընկել են այն համիդիեների վրա, ովքեր հեռացել էին: Ինչ վերաբերում էր հետ վերա-դարձածին, ապա նրան հարկ եղածի պես հարցաքննել են, սակայն նա երդվել է, որ ոչինչ չգիտի, իսկ թուրքական ոստիկանության մի քննիչ, որ հայտնվել էր մի քանի օր հետո, պարտադրել է, որ բոլորը լուռ մնան: Բանն այն էր, որ չէին կարող ներքաշվել այնպիսի գործընթացի մեջ, որի առանցքում անգլիական ընտանիքի հարցն էր: Մյուս կողմից էլ ակն-հայտ էր զինվորական ստորաբաժանման հանցավորությունը. չնայած այն բանին, որ համիդիեները ոչ կանոնավոր ստորաբաժանումներ էին համարվում, այնուամենայնիվ օսմանյան բանակի մաս էին կազմում: Ընդ որում՝ այդ գործում ներքաշված էին նաև գերմանացի սպաներն ու ենթասպաները: Բոլորին էլ շտապ կարգով տեղափոխում են Դամասկոս ու հարցը փակում:

Այն համիդիեն, որ հետ էր վերադարձել ու երդվել, որ ոչինչ չգիտի, այն նույն մարդն էր, ով նկարները վաճառել էր Մահմուդ էլ-Քանտա-ռիին և հարցաքննության էր ենթարկվել զինվորական ոստիկանության կողմից:

Նա խոստովանել էր ողջ եղելությունը: Կինը և դուստրն ապշահար են եղել իր ընկերների ներխուժումից: Ինքը վախեցել է ու այնտեղից փախել, բայց հասցրել է տեսնել, թե ինչպես են, ձիուն դրած, իրենց հետ տանում մորն ու աղջկան: Հավատացրել է, որ ավելին ոչինչ չգիտի:

Երբ նրան ցույց են տվել այն նկարները, որ նա վաճառել էր հնավա-ճառին, իրեն լրիվ կորցրել է: Այդ ժամանակ էլ խոստովանել է, որ հա-միդիեները Գազիանթեպից էին՝ Հալեպից ութսուն մղոն դեպի հյուսիս: Նրա կարծիքով՝ թերևս հենց այնտեղ էլ տարել են մորն ու աղջկան: Ինքը միայն մի քանի անարժեք իրեր է գողացել ու թաքցրել անգլիացի-ների տան մոտակայքում գտնվող փլատակներում: Գլխի էր ընկել, որ եթե դրանցով հայտնվեր ճամբարում, ապա կատարվածի մեղսակիցը կդառնար:

Թոմասը լսեց ոստիկանության սպայի պատմածը՝ համոզված, որ այն ճշմարիտ է, սակայն վստահ էր, որ իրենից դեռ մի բան թաքցնում են: Ամեն ինչ համընկնում էր իր իմացած տվյալների՝ գերմանացի տեղանքագիրների, համիդիեների, Կարոլինի ստորագրությամբ նկարների հետ:

Նյարդայնացած էր և հուզված: Գլխով համաձայնության նշան արեց այդ մարդուն ու վճռեց անմիջապես գնալ Դամասկոս՝ էլ-Քանտարիի հետ խոսելու նպատակով:

Մի քանի օր անց գնդապետը, ում հանձնարարված էր այդ գործի քննությունը, այս անգամ Դամասկոսում կրկին խոսեց Թոմասի հետ՝ հավաստիացնելով, որ թուրքական բանակը պատասխանատու չէ փախուստի մեջ գտնվող ինչ-որ մարդկանց վարքագծի համար: Ավելացրեց նաև, որ հեռագրել էր Գազիանթեպի իշխանություններին, որպեսզի տեղեկանային այդ թափթփուկների մասին: Մի քանի օր հետո եկել էր պատասխանը, որում ասված էր, որ նրանք ոչինչ չգիտեն այդ համիդիեների վերաբերյալ: Նրանք այնտեղ չէին վերադարձել, ոչ էլ որևէ մեկը լսել էր անգլուհու և նրա դստեր մասին: Պատասխան հեռագիրը ողջ դաժանությամբ ակնարկում էր, որ հավանաբար մորն ու դստերը կա՛մ սպանել են, կա՛մ էլ անհետացրել:

Թոմասը զայրացած բողոքեց, որ այդ պատասխանը չի ընդունում: Բողոքեց, որ բոլոր դեպքերում օսմանյան բանակը պատասխանատու է իր ենթակաների համար, և իր կնոջն ու դստերը մահացած չի համարի այնքան ժամանակ, մինչև որ նրանց դիակներն իրեն ցույց չտան:

Գնդապետը թոթվեց ուսերը՝ ցածրաձայն ասելով, որ ինքը հաստատում է, որ բանակն արել է այն, ինչ պետք է աներ, և մտադիր չեն ոչ մի բան թաքցնել: Ասվածի վկայությունն էլ այն էր, որ ինքը պատասխան տալու համար գտնվում էր այդտեղ և ամենայն պատասխանատվությամբ էր վերաբերում հարցին: Սակայն դժվար էր այդ հսկա երկրում և մանավանդ այդ խառնաշփոթ ժամանակներում գտնել երկու մարդասպանի: Գնդապետը խոստացավ շարունակել հետաքննությունը և հանցագործների անուն-ազգանուններն ավելացնել փնտրվողների և ձերբակալման ենթակա անձանց ցուցակում: Հետո ձիգ կանգնեց՝ Թոմասի խոսքը բերանում թողնելով. վերջինս չէր հավատում, որ այդպիսի լուրջ խնդրին կարելի էր այդքան թեթևորեն նայել:

Մահմուդ էլ-Քանտարին՝ Դամասկոսի հնավաճառը, զայրացավ այդ դեպքերից: Նա կապեր ուներ քաղաքում տեղակայված օսմանյան զորագնդի վերնախավում, ու նրան որոշ տեղեկություններ ևս

հաղորդեցին: Պարզվեց, որ ձերբակալված համիդիեն տանջալից հարցաքննությունների ընթացքում ուշագնաց էր եղել և մահացել: Դա, իրոք, ցավալի էր, քանի որ եթե նա այլ բաներ էլ գիտեր, ապա հետը գերեզման էր տարել:

Թոմասը կրկին մտածեց, որ բարի ոգիներն իր կողմից չեն: Ահավոր լարված վիճակում էր: Սակայն Մահմուդ էլ-Քանտարին այն մարդը չէր, որ բավարարվեր նրանով, ինչ իրեն ասեին: Նա նույնպես ուզում էր իմանալ ճշմարտությունը և համոզված էր, որ դեռ կա մի նշան՝ հույսի մի ծվեն, որից կարող են կառչել: Սերժանտներից մեկը, ով զբաղվել էր մահացած համիդիեի հարցաքննությամբ, էլ-Քանտարիի սիրեկանի եղբայրն էր: Հնավաճառը, նախընտրելով ոչինչ ցույց չտալ, գաղտնի էր պահում իր հոմոսեքսուալ լինելը, ինչը բավականին տարածված էր Դամասկոսի որոշակի շրջանակներում: Երբ սիրեկանի եղբորը հարցրին այդ համիդիեի մասին, նա հաստատեց, որ, այո՛, չդիմանալով վայրագ հարցաքննություններին, ձերբակալվածը մահացել է, սակայն մահից առաջ հիշել է երկու հրոսակների անունները. մեկին կոչում էին Աբդել Ռազաք, մյուսին՝ Քարիմ Ֆաքիր: Կասկածները տեղին էին. Ռազաքը ծնունդով թերևս Գազիանթեպից էր, թեև գիտեին, որ նա հաճախ էր լինում Դիարբեքիրում՝ այդ քաղաքի հետ ինչ-որ կապեր պահպանելով:

Թոմասը գիտակցում էր, որ կնոջն ու դստերը գտնելու գրեթե հույս չկար: Անատոլիայի հարավ-արևմուտքը լեռնոտ ու հետամնաց վիթխարի մի տարածաշրջան էր: Այդ նոր տեղեկությամբ նա կփորձի իրականացնել իր մտադրությունը: Կգնա Գազիանթեպ, Դիարբեքիր, եթե հարկ լիներ՝ անգամ մինչև աշխարհի ծայրը, բայց այդ իրավիճակում մի օր ավելի չէր մնա: Թոմասը ներքուստ զգում էր ամեն հարցում իր սխալված լինելը և իր թույլ տված ահավոր սխալի բացարձակ փոխհատուցման անհրաժեշտությունը: Նա չէր հասկանում, թե վերջին երկու տարիների ընթացքում ինչպես է կարողացել այդքան եսասեր լինել:

Չէր ուզում ժամանակ կորցնել, ըստ այդմ՝ չարժեր վերադառնալ Բեյրութ: Ոչ մի վայրկյան չպետք է կորցներ: Անձամբ ներկայացավ Դամասկոսի «Օսմանյան բանկի» մասնաճյուղ և խոսեց տնօրենի հետ: Նրան ցույց տվեց իր անձնագիրը և այդ բանկի՝ Բեյրութում գործող մասնաճյուղի հաշվեհամարով գրքույկը: Այդ պահից սկսած նրա հետ վարվեցին ժպիտով ու մեծարանքով: Բանկիրն ինքն իրեն հարցնում էր, թե ով է այդ երիտասարդ անգլիացին, որ այդքան հարստության տեր է: «Օսմանյան բանկն» իր մասնաճյուղերն ուներ Հալեպում, Գազիանթեպում, Մալաթիայում, Դիարբեքիրում և կայսրության գլխավոր բնակա-

վայրերում: Դամասկոսի մասնաճյուղի տնօրենը Թոմասին մեկնեց մեծ գումարով անհետաձգելի վարկի մի գրքույկ և կանխիկ գումար, որը չափազանց մեծ չէր, սակայն գալիք շաբաթների համար լիուլի բավարար էր: Բանկիրը նրան ասաց, որ չպետք է ձեռքին մեծ գումար պահի, քանի որ դա հղի է մեծ վտանգներով: Ինքը՝ բանկիրը, ով մանավանդ անհանգստանում էր, որ թալանելու համար իրեն կարող են սպանել կամ առևանգել, Թոմասին խորհուրդ տվեց, որ մենակ չուղևորվի: Պետք է գնացք նստեր մինչև Ֆեզիպաս՝ Հալեպից հարյուր կիլոմետր դեպի հյուսիս, իսկ այնտեղից՝ կառքով մինչև Դիարբեքիր:

Իր նոր բարեկամ Մահմուդ էլ-Քանտարին նրան Հալեպում, Գազիանթեպում և Դիարբեքիրում ապրող մի քանի ծանոթների հասցեներ տվեց և արաբերեն ու թուրքերեն երաշխավորական նամակներ գրեց՝ Թոմասին միաժամանակ զգուշացնելով.

- Ինչ-որ շատ լուրջ բան է կատարվելու, քանի որ Անատոլիայի մի քանի հայ ազդեցիկ ընտանիքներ վերջին ամիսներին սկսել են լքել երկիրը: Մի քանիսը հաստատվել են Կահիրեում, մյուսները՝ Կիպրոսում, Հունաստանում, իսկ մեծամասնությունը՝ Ֆրանսիայում կամ Միացյալ Նահանգներում: Իմ գործունեությամբ՝ հնավաճառ իրերի առևտրով պայմանավորված՝ մեզ շատ բաներ են բերում՝ կահույք, գրքեր, երաժշտական գործիքներ, ամեն տեսակի առարկաներ, և մեծ մասամբ՝ հայերից: Իրերը հոգի ունեն, հավատացնում եմ Ձեզ, որ նրանցից մի քանիսը սահմռկեցուցիչ պատմություններ են պատմում: Ինձ նաև հունական շատ սրբապատկերներ են բերում: Ո՞վ դրանցից կբաժանվեր: Ո՜ւֆ, մազերս բիզ-բիզ են կանգնում: Եվ Դուք, պարո՛ն Հարդինգ, զգո՛ւյշ եղեք, չափազանց զգույշ: Հիմա այն ժամանակը չէ, որ տոհմիկ անգլիացին՝ ազնվական ընտանիքի ժառանգորդը, Անատոլիայով մեկ դեգերի՝ հարցնելով անհարկի բաներ: Հիմա այստեղ միակ քրիստոնյա եվրոպացիները, որոնց թուրքերը լավ աչքով են նայում, գերմանացիներն են ու ավստրիացիները: Ֆրանսիացիները համակրանք են վայելում միայն մարոնների և թերևս մեր՝ արաբների շրջանում: Ես ինձ արաբ եմ համարում, թեև իմ մեջ նաև թուրքական արյուն կա: Հավատացնում եմ Ձեզ, պետք է շատ ողջախոհ լինեք: Դուք անգլիացի եք, իսկ թուրքերն իրենց խաբված են զգում, քանի որ Մեծ Բրիտանիան միշտ եղել է նրանց քաղաքական, իսկ Ֆրանսիան՝ ֆինանսական աջակիցը: Մեզ՝ առաջադեմ արաբներիս համար Փարիզը համարյա սոցիալական առաջադիմության առասպելական վայր է: Այնպես որ, պարո՛ն, զգո՛ւյշ եղեք:

Միմյանց հրաժեշտ տվեցին: Պետք էր ուշադրություն դարձնել այդ

խելամիտ նախազգուշացումներին: Եթե նրան մի բան պատահեր, ուրեմն կիրականանար այն վարկածը, որ Կարոլինն ու Էթելը ողջ են, բայց այլևս չնչին իսկ հնարավորություն չէին ունենա փախչելու այնտեղից, որտեղ նրանց բռնի պահում են:

Հաշվի առնելով խորհուրդները՝ նստեց Դամասկոսից Հալեպ գնացող գնացքը: Ճանապարհը տասնչորս ժամ ձգվեց. ձիով ավելի շուտ կհասներ: Տեղ հասնելուն պես կապի մեջ մտավ բժիշկ Բողոսյանի ծանոթի՝ Արմեն Ագոպյան անուն-ազգանունով մի հայի հետ, ում Բողոսյանն արդեն հեռագրել էր այն մասին, որ Թոմասը հանդիպելու է իրեն:

Արմեն Ագոպյանը պատմության դասախոս էր, ընդհանուր շատ բան էր նրանց կապում, և առաջին իսկ պահից իրար շատ համակրեցին: Նա նիհար էր՝ դուրս ընկած քթով, նոսր մազերով, մի քիչ կարճատես: Նրանից մտավոր ու կենսունակ ուժերի էներգիա էր հորդում: Արմեն Ագոպյանը Թոմասին տարավ իր տուն, որը գտնվում էր քաղաքային ամրոցում: Քաղաքն ամրոցի հետևի կողմից բաժանված էր փոսով:

- Հալեպն ուսումնասիրության արժանի քաղաք է: Այստեղ պահպանվում են նրանց հետքերը, ովքեր նվաճել են Արևելքը՝ Թամերլանից մինչև Սալադին, կամ՝ ում որ Դուք կամենաք: Այս քաղաքը չեն կարողացել ծնկի բերել ո՛չ երկրաշարժերը, ո՛չ ժանտախտը, ո՛չ էլ պատերազմները: Այստեղ է իմ տունը, որը պատկանել է իմ մայրական պապին, ով այն ժառանգել է իր հորից, այնպես որ՝ մեր տոհմի շատ սերունդներ են ապրում Հալեպում: Իմ նախնիների կողմից գրքերի նկատմամբ միշտ էլ սեր է եղել, և ինչպես ինքներդ կհամոզվեք, տունը լի է արաբերեն, թուրքերեն, հայերեն, քրդերեն հին հատորներով… քանի որ իմ մի մորեղբայրը՝ քրիստոնյա հայ, դեմ գնալով ընտանիքի կամքին, ամուսնացավ մի քուրդ կնոջ հետ: Մի քանի գիրք էլ ունեմ ֆրանսերեն ու գերմաներեն, ցավոք սրտի, անգլերեն ընդամենը մի տասներկու գիրք ունեմ: Որպես դրա «փոխհատուցում»՝ ասեմ, որ հանդես եմ գալիս հօգուտ Անտանտի հաղթանակի, չնայած ըստ լուրերի՝ կարծես թե «բոշերի»[32] գործերն ավելի հաջող են, սակայն այս պատերազմը երկար է տևելու, և պետք է զինվենք համբերությամբ՝ սպասելով ավելի լավ լուրերի: Պրուսացիներն ունեն փայլուն գաղափարներ, սակայն դրանք վերանում են իրենց իսկ մեծամտությունից: Եթե համաձայն չեք, ապա կտեսնեք՝ գերմանացի գեներալներից յուրաքանչյուրը մեն-մենակ է ուզում հաղթել պատերազմը,- մինչ Թոմասին կիտրոնով թեյ էր մատուցում, Ագոպյանը մի փոքր

[32] Ֆրանս-պրուսական 1870-ականների ռազմական կոնֆլիկտների ժամանակ և Առաջին համաշխարհային պատերազմում գերմանացիներին տրվել է այդպիսի արհամարհական անուն:

ավելի լրջացավ,- Դուք այսպես չե՞ք խմում թեյը: Լավ: Ինչպես ինձ տեղեկացրեց մեր ընդհանուր բարեկամը՝ Բողոսյանը, Դուք տառապում եք Ձեր կնոջ ու դստրիկի առևանգման պատճառով: Թերևս ահավոր է Ձեր հոգեվիճակը: Միշտ պետք է պահպանել հավատը, որը և Ձեզ մղել է, որ մինչև այստեղ հասնեք: Հասկանում եմ Ձեզ: Քրոջս կորցրել եմ մի քանի տարի առաջ՝ Ադանայի կոտորածների ժամանակ: Իսկ թուրքերն արդեն նախ հույներից, ապա մեզանից ազատվելու քայլեր են ձեռնարկում: Այսքան տարի անց պետք է հեռանա՞մ Հալեպից: Ես համաձայն չեմ թողնել այսքան գիրքն ու այս սքանչելի քաղաքը՝ արաբական Հալեպը, որի կայացման գործում այնքա՜ն հայեր են իրենց ներդրումն ունեցել: Արաբներն ու հայերը միմյանց գիտեն դեռ վաղնջական ժամանակներից, ու թեև իսլամի ի հայտ գալուց հետո նրանց մեծ մասը դարձավ մուսուլման, սակայն նաև արաբ շատ քրիստոնյաներ կան: Թուրքերի հետ հարաբերությունը միշտ էլ եղել է բռնազբոսիկ, մեզ երբեք չի հաջողվել նրանց հետ բնականոն շփումներ հաստատել: Եկան այստեղ որպես հրեշավոր նվաճողներ, ուժի միջոցով տիրացան մեր և արաբների հողերին: Մենք կարո՞ղ ենք մեզ այնպես պահել, որ կարծես ոչինչ տեղի չի ունեցել: Սուլթաններից մի քանիսը, ինչպես Աբդուլ Համիդը, ում արյան մի մասը հայկական է, մեզ հետ փորձել են այրված երկրի քաղաքականություն վարել, այսինքն՝ մոռանալ պատմությունը, հողում թաղել անցյալը, ցույց տալ այնպես, որ հայ ժողովուրդն առհասարակ գոյություն չի ունեցել, կամ այն, որ Փոքր Ասիայի հելլենական մշակույթն ընդամենն առասպել է: Պատմությունը չի ներում, ու կգան ուրիշ հնագետներ, ովքեր կհայտնաբերեն այդ համառ քարերը, որոնք դիմադրում են անհետացման երևույթին: Ու կասկած չկա, որ կմնան այնտեղ, քանի դեռ ժամանակը չի սպառվել:

Ագոպյանի հին տունը գերեց Թոմասին: Ասես քարե հսկա աշտարակներից մեկն էր՝ ուղղաձիգ աստիճաններով, որոնք իջնում էին մինչև քարե կամարակապ գաղտնի նկուղը, ինչպես նաև բարձրանում երկու հարկ վերև՝ տանիք՝ ցնցող տեսարանով:

Սակայն նրա նոր բարեկամին շարունակ այն հարցն էր մտահոգում, թե ինչ կարող էր գլխներին գալ:

- Ես ինչպե՞ս թողնեմ ու գնամ այստեղից: Դա անհնարին է: Այստեղ է իմ աշխատանքը, հիմա մի ատենախոսություն եմ պատրաստում գոթական և խալիֆայական ճարտարապետության փոխազդեցության մասին: Դույզն-ինչ անգամ չկասկածեք, որ դրանք միմյանց վրա ներգործել են: Այստեղ այդ երևույթն ակնհայտ է, իհարկե՝ նաև Դամասկո-

սում ու Բեյրութում: Պատկերացրե՛ք, որ Մեծ մզկիթում են գտնվում Զաքարիայի՝ Սուրբ Խուան Բաուտիստայի մասունքները: Նրանից շատ առաջ էլ այստեղ ապրում էին եգիպտացիները, որոնց տիրապետության հետքերը դեռ մնում են: Լավ, պարո՛ն Հարդինգ, Դուք հիմա այլ մտածմունքներ ունեք: Համապատասխան տեղերում հարց ու փորձ եմ արել այդ թափթփուկների մասին: Համիդիեները վտանգավոր են, և մարդիկ նրանց հետ չեն ուզում առնչվել, սակայն քանի որ հարկավոր է բարեկամներ ունենալ անգամ դժոխքում, հարցրել եմ բարեկամիս բարեկամին, ով ժամանակին մտել է անկանոնավորների գումարտակ. նրանց նաև այդպես են անվանում: Նա չի լսել ո՛չ Աբդել Ռազաքի և ո՛չ էլ Քարիմ Ֆաքիրի մասին: Ձեզ ասեմ նաև, որ եթե անցած լինեին այս կողմերով, ես կիմանայի, մանավանդ եթե հետները տարած լինեին օտարազգի մի կնոջ և նրա դստերը: Հանցագործը միշտ էլ մի հետք թողնում է, եթե համոզված է, որ անպատիժ է մնալու, և ավելին՝ եթե փորձում է թաքցնել, ուրեմն կատարում է ծանր հանցանքներ: Ամեն դեպքում շատ տարօրինակ է այդ ամենը: Տեսե՛ք, եթե խոսքը վերաբերեր գողությանը, ապա ինչո՞ւ պետք է առևանգեին հղի կնոջ, ինչպես որ Դուք ինձ ասացիք, ու Ձեր փոքրիկ դստերը: Եթե խոսքն առևանգման մասին է, ապա նրանք վաղուց Ձեզանից փրկագին պահանջած կլինեին, այնպես չէ՞: Մնում է այլ դրդապատճառ՝ վրեժխնդրությունը: Սակայն ո՞վ պետք է Ձեզանից վրեժ լուծեր: Թուրքերն ունեն շատ թերություններ, բայց այլ կերպ են գործում: Ո՛չ, իսկապես չեմ կարողանում հասկանալ:

Թոմասը, ով վերլուծել էր բոլոր հնարավոր տարբերակները, նույն կարծիքին էր. վրեժխնդրության վարկածն անհիմաստ էր:

Սեպտեմբերի վերջերին հեռացավ Հալեպից, որտեղ մնացել էր մեկ շաբաթ: Գնացքով հասավ մինչև Ֆեզիպաս: Այնտեղ մի առևտրականից երկու ձի գնեց ու առանց ժամանակ կորցնելու ճամփա ընկավ դեպի Գազիանթեպ:

Այդ օրերին Եվրոպայում ծավալվում էր պատերազմը: Ծովակալ Ժոֆրեն դժվարությունների մեջ էր Մառն գետի շրջակայքում, իսկ բելգիացիները հերոսաբար դիմադրում էին Անտվերպենում: Ակնհայտ էր, որ թուրքերը ցանկացած պահի կարող էին պատերազմի մեջ մտնել, և ինչպես այդ մասին նրան զգուշացրել էր Բողոսյանը, Թուրքիան անգլիացիների համար կդառնար շատ անհարմար մի վայր:

Որոշեց հարմարվել միջավայրին: Իր ուղեբեռում ուներ արաբական ավանդական հագուստ: Մի՞թե Մեքքայում կամ Մեդինայում այդպես չէր

վարվել Բյորտոնը[33]: Թողել էր, որ մորուքն անխնամ աճի, դեմքի մաշկն արևից դաբաղվել էր: Նրա շագանակագույն աչքերն էլ կօգնեին, որ անկատ անցներ: Այդ ժամանակ արդեն շատ սահուն խոսում էր արաբերեն և ի վիճակի էր շատ լավ բացատրվել թուրքերեն: Գիտակցում էր, թե ինչ վտանգների կարող էր ենթարկվել: Միաժամանակ համոզվել էր, որ եթե գոյություն ունի մի երկիր, որտեղ կարելի է թաքնվել, ապա դա Թուրքիան է, ուր համատեղ գոյակցում էին բազմաթիվ ազգեր, դավանանքներ ու մշակույթներ:

Հոկտեմբերի յոթին մտավ Գազիանթեպ՝ Տավրոսի լեռնաշղթայի հարավային փեշերին գտնվող մի բնակավայր: Մթնոլորտն այնպիսին էր, որ ոչ ոք չէր ասի, թե աշխարհը պատերազմական մրրիկի սպառնալիքի ներքո էր: Անասնաշուկայում առևտրականները խմբվում էին՝ խոռասուզված իրենց քննարկումների ու անվերջանալի սակարկումների մեջ, թեև այդ քաղաքը նաև արհեստավորական էր. արհեստանոցները բացվում էին գլխավոր փողոցի վրա՝ առաջարկելով բամբակյա գործվածքներ, կաշվե իրեր, բուրդ ու ամեն տեսակ ապրանք: Գազիանթեպը փոքրիկ քաղաք էր, որտեղ իրենց անհրաժեշտ ապրանքի համար գալիս էին բազմաթիվ գյուղացիներ՝ հայ, քուրդ, արաբ ու թուրք: Նրանց, ըստ իրենց բնորոշ տարազների ու գլխարկների, կարելի էր տարբերել իրարից՝ առանց դույզն-ինչ կասկածի նշույլի: Այդ օրը տոնավաճառ կար, ու դա Թոմասի օգտին էր, որ աննկատ անցներ: Շատ տղամարդիկ էին վերև-ներքև անում, ուղտերի քարավաններով, ձիերով կամ ջորիներով մտնում ու դուրս գալիս քաղաքից: Եթե Դամասկոսը և Հալեպը Թոմասին զարմացրել էին իրենց պատմական կարևորությամբ ու ճարտարապետական գեղեցկությամբ, ապա Գազիանթեպն այն վայրն էր, որը մի երկու դար ժամանակից հետ էր մնացել:

Մահմուդ էլ-Քանտարին նրան տվել էր մի թուրքի՝ Աբդուլ Հալիլի հասցեն, ով ծխախոտի ֆաբրիկա ուներ Եփրատի վտակներից մեկի՝ Սախուր գետին շատ մոտ: Այդ մարդը ծխախոտ էր մատակարարում բանակին և ըստ էլ-Քանտարիի՝ ազդեցիկ կապեր ուներ: Թոմասը նրան ներկայացավ ֆաբրիկայում, որը մի հին շինություն էր՝ առաստաղը փայտե հարթ տախտակներից: Հենց դռան մոտ տիրոջն ասաց, որ նա պետք է հեռագիր ստացած լինի էլ-Քանտարիի «մտերիմ բարեկամի» գալստյան մասին: Ներկայանալուց հետո Հալիլն անկեղծացավ նրա հետ:

[33] Ռիչարդ Ֆրենսիս Բյորտոն (1821-1890), ով, լինելով Մեքքայում և Մեդինայում, գրել է «Իմ ուխտագնացությունը դեպի Մեքքա և Մեդինա» (1853) ստեղծագործությունը:

- Ամենազոր Աստված վկա, Ձեզ հաջողվել է խաբել իմ ծառայողին,- նա սահուն խոսում էր ֆրանսերեն՝ ի նշան իսկության շարժելով գլուխը,- ինձ ասել է. «Այնտեղ՝ դրսում, մի չերքեզ է Ձեզ սպասում»: Եթե Ձեզ հարցնեն, ապա ասե՛ք, որ Կովկասից եք: Այդ մարդիկ քչախոս են, բախտի բերմամբ Դուք նրանցից մեկի տեղ կանցնեք, թեև ավելի խոր-աքափանց մարդիկ հավանաբար կմտածեն, թե այստեղ ի՞նչ է անում այս կերպարանափոխված անգլիացին: Պարո՛ն Հարդինգ, նկատի ունեցեք, որ Անատոլիայում երկու փախստական համիդիեներ գտնելն անհնարին խնդիր է: Գիտեմ այստեղ գտնվելու Ձեր դրդապատճառներն ու հիանում եմ Ձեր վճռականությամբ: Սակայն համիդիեների համար հայրենիքն իրենց անձնական շահերն են, ու այդ երկու հոգին կարող են գտնվել ցանկացած վայրում: (Աբդուլ Հալիլն աչքերը կիսախուփ արեց): Նրանց կարող է գտնել մեկ այլ համիդիե, այնպես որ՝ ես Ձեզ կներկայացնեմ մեկին: Նեգի՛բ, արի՛ այստեղ: Գուցե Նեգիբը կարողանա մի բան անել Ձեզ համար:

Քառասունին մոտ մի տղամարդ՝ դեմքին մի մեծ շեղակի սպի, կանգնեց դռան մոտ:

- Նե՛րս արի, խնդրեմ: Աստված մեծ է ու գթառատ: Նեգի՛բ, իմ ընկերն է, աշխատի՛ր օգնել մեզ: Փորձում է գտնել երկու համիդիեների, որոնց հետ իր հաշիվներն ունի: Նրան ասել եմ, որ մի փախստական համիդիեի կարող է գտնել մեկ այլ համիդիե:

Նեգիբը ոչ մի շարժում չարեց: Նա կանգնած էր հանգիստ՝ առանց աչքը թարթելու, զննելով այդ տարօրինակ «չերքեզին», ում իր տերը շատ հարգալից էր վերաբերում: Նա համաձայնեց.

- Այո՛, ճիշտ է: Մենք՝ համիդիեներս, փողոցային շների պես ենք՝ միշտ ի վիճակի ցանկացած հետք գտնելու: Ամենազոր Աստված է մեզ տվել այդ հատկությունը: Ո՞ւմ է փնտրում քո բարեկամը:

Պատասխանեց Թոմասը՝ կռահելով, որ դա հենց իրեն անհրաժեշտ մարդն է:

- Երկու համիդիեների, ովքեր որպես թիկնապահներ աշխատում էին մի քանի գերմանացի տեղանքագիրների հետ: Քեզ ծանո՞թ են Աբդել Ռազաք կամ Քարիմ Ֆաքիր անունները:

Որոշ ժամանակ նա մնաց լուռ, ապա գլխի շարժումով հաստատեց.

- Այո՛: Աստված գթառատ է, և քեզ ճիշտ ուղու վրա է դրել: Ֆաքիրը մարդասպան է՝ Դիարբեքիրից: Ավելի ճիշտ, Լիսից է, որը սարերում է: Գուցե նա այնտեղ է, սակայն ոչ ոք չի կարող հաստատ ասել: Միայն Աստված գիտե:

Աբդուլ Հալիլը գոհունակորեն համաձայնեց, որովհետև կարողացել էր օգտակար լինել իր բարեկամի բարեկամին.

- Բարի: Արդեն Դուք հուսալի հետքի վրա եք: Նեգիբը Ձեզ կուղեկցի: Դա մենակ ճամփորդելու տարածք չէ: Դիարբեքիրը վտանգավոր տեղ է՝ սահմանամերձ քաղաք՝ լի մաքսանենգներով ու փախուստի մեջ գտնվող հանցագործներով: Ավելի լավ կլինի, որ գնաք նրա ուղեկցությամբ, նա լավ ծանոթ է այդ վայրերին ու գիտե, թե ինչպես պետք է վարվել այդ կարգի մարդկանց հետ:

- Աբդո՛ւլ Հալիլ, քո բարեկամ «չերքեզը» գիտե՞ արդյոք,- որոշ հեգնանքով հատուկ ընդգծելով բառերը՝ խոսեց Նեգիբը,- որ եթե գնում ենք այդ երկուսի հետևից, ուրեմն կա՛մ պետք է մենք սպանենք նրանց, կա՛մ իրենք մեզ կսպանեն:

- Այո՛: Չէ՞ որ դու գիտես, որ չես կարող ձախողել այս գործը: Համաձա՞յն ես: Աստված գթառատ է, իսկ ես՝ ոչ այնքան: Այնպես որ՝ աշխատի՛ր, որ իմ չերքեզ բարեկամին ոչինչ չպատահի, ու ոչ ոքի մտքով չանցնի նրան հարցեր տալ կամ անհանգստացնել: Թող քեզ ուղեկցեն քո մարդիկ: Բոլոր ծախսերն իմ հաշվին են, եթե կարիք լինի, նրան կաջակցես բոլոր հարցերում ու այստեղ կվերադառնաս նրա հետ: Եղա՞վ:

Նեգիբը գլխի շարժումով հաստատեց.

- Այդպես էլ կարվի, եթե դա Աստծո կամքը է:

Այդ մարդը հեռացավ, Աբդուլ Հալիլը ժպտում էր:

- Լավ, պարո՛ն Հարդինգ, Դուք միշտ էլ կարող եք բազմության միջով աննկատ անցնել, եթե միայն շատ չխոսեք: Դուք լավ առոգանություն ունեք, բայց խնդիրն այն է, որ մի կիլոմետր հեռավորության վրա իմացվում է Ձեր անգլիացի լինելը: Եթե ինձ թույլ տաք, ապա մի խորհուրդ կտամ. վե՛րջ տվեք այդքան հաճախ լվացվելուն ու հագուստը փոխելուն: Շարունակե՛ք օգտագործել դեմքի մաշկի ու ձեռքերի համար նախատեսված այդ քսուքը: Ձեզ համապատասխան է ու մի քանի օրից կանցնի, երբ այն այլևս չգործածեք: Հնարավորինս քիչ խոսե՛ք, մի՛ սանրվեք, մորուքը չկարճացնեք ու մանավանդ ջանացե՛ք մեզ նման շարժել մարմինն ու գլուխը: Դուք՝ անգլիացիներդ, փայտ կուլ տվածի պես եք քայլում, մի՛ նեղացեք դրանից, ի օգուտ Ձեզ եմ դա ասում, եթե՝ ոչ, ապա խնդիրներ կունենաք: Եթե հանդիպեք թուրք զինվորականների, երբեք չնայեք նրանց աչքերին, ցո՛ւյց տվեք, որ նրանց չեք տեսնում: Այս նախկին համիդիեն՝ Նեգիբը, շատ բաներով է ինձ պարտական, ու հիմա նրա ընտանիքն ինձնից է կախված, Դուք նրա հետ ձնականությունների հետևից չընկնեք: Նա Ձեզ չի դավաճանի, դա ես երաշխավորում եմ:

Չգիտեմ, թե ով եք, գիտեմ միայն, որ անգլիացի եք և փնտրում եք Ձեր կնոջն ու դստերը: Դուք տեղը տեղին ամեն բան մտածել եք, բայց ես Ձեզ ոչ մի երաշխիք տալ չեմ կարող: Երբ հանդիպեք այդ Ռազաքին կամ այդ Ֆաքիրին, շատ զգո՛ւյշ եղեք: Նրանք կփորձեն սպանել Ձեզ, բայց առանց այլևայլության կրակե՛ք նրանց ոտքերին: Պետք է ապրեն այնքան ժամանակ, որ նրանցից կարողանաք իմանալ, թե որտեղ են Ձեր կինն ու դուստրը: Դրանով կզբաղվի Նեգիբը, ու Ձեզ նախապես ասեմ, եթե նրան դա չհաջողվի, ուրեմն այդ մարդասպանները ոչինչ չգիտեն: Աստված Ձեզ ուղեկից: Ո՛չ, Դուք ինձ ոչինչ պարտք չեք: Ես խնդրանք ունեմ իմ բարեկամ Մահմուդ էլ-Քանտարիից, որ Ձեզ համար անեմ այն, ինչ կարող եմ: Նա ինձ հոր փոխարեն է գալիս:

Լուսաբացին նրանք բռնեցին Դիարբեքիր տանող ճամփան: Թոմասին ուղեկցում էին վեց հոգի՝ Նեգիբի առաջնորդությամբ: Իրեն ավելի վստահ էր զգում այդ շքախմբով: Նրան զգուշացրել էին, որ դա վտանգավոր տարածք է, մանավանդ՝ միայնակ օտարերկրացու համար: Թեթևակի ներկել էր մաշկը, Նեգիբի օգնությամբ կոպերին նեղ ու սև գիծ էր քաշել: Նրան խորհուրդ տվեցին, որ իրենց պես նույն հագուստը կրի, ու դա Թոմասին ամենաշատն անհանգստացրեց, որովհետև զգացել էր, որ այդ հագուստի հոտից սիրտ էր խառնում: Գիտեին, որ նա անգլիացի է, սակայն կարևորն այն էր, որ աննկատ անցներ թուրքերին կամ անծանոթ մարդկանց հանդիպելիս:

Փորձեց ձին քշել ու այնպես շարժվել, ինչպես նրան Հալիլն էր խորհուրդ տվել՝ ընդօրինակելով իրեն ուղեկցող մարդկանց: Վեր էին կենում լուսաբացին, թեյ պատրաստում ու խմում ինչ-որ աղի բլիթով: Ձիերն արագ վարգով քշում էին տասնհինգից քսան մղոն՝ կախված տեղանքի դժվարություններից, խուսափելով հիմնական ճանապարհներից: Գիտեին, որ իրենց բանակը համալրելու նպատակով թուրքերը ճանապարհներին ում տեսնեին, անխտիր զորակոչում էին: Սակայն դա չէր վերաբերում թաքնվելու վարպետ այդ փորձառու մարդկանց, որոնց այդքան էլ հեշտ չէր պատահաբար բռնեցնելը:

Երբ հանդիպում էին հայ կամ թուրք գյուղացիների, երկուստեք ցույց էին տալիս, որ միմյանց չեն նկատում: Այդ գործելակերպը ողջամիտ էր, քանի որ գյուղացիներն ատում ու վախենում էին համիդիեներից, իսկ եթե հանդիպեին զինվորականների, ապա պետք է փախչեին կամ անցնեին փոխհրաձգության:

Գազիանթեպից Դիարբեքիր ճամփորդությունը տևեց համարյա եր-

կու շաբաթ: Երբ հասան, մինչև մութն ընկնելը չուզեցին մտնել քաղաք: Երկու հոգի մնացին Թոմասի մոտ, մյուսները քաղաքի կենտրոնում հարց ու փորձ էին անում: Մի երկու ժամ հետո լուռ վերադարձան: Հետո ուղղվեցին քաղաքի արևմտյան մուտքի մոտ գտնվող իջևանատուն՝ գիշերելու: Մինչ իջևանատիրոջ՝ նրանց համար պատրաստած ոսպով ապուրն ու տարեկանի հացը կընթրեին, Նեգիբն առանձնացավ Թոմասի հետ:

- Պարո՛ն, կարծես Աստված է Ձեր քայլերն առաջնորդել այստեղ: Ռազաքը քաղաքում եղել է մեկ շաբաթ առաջ՝ մթերք գնելու համար: Եկել է մենակ ու գնել այնպիսի բաներ, ինչպես՝ կաթ ու սպիտակ ալյուր: Դա նշանակում է, որ նրա հետ կին կա, քանի որ համիդիեն իր համար երբեք այդպիսի բաներ չի գնի:

Թոմասի սիրտը սկսեց արագ բաբախել: Նա ավելի շատ կանխազգացմամբ, քան որևէ ստույգ հետքի նշանով էր եկել ու հասել Դիարբեքիր: Գուցե այդտե՞ղ են Կարոլինն ու Էթելը: Ուզում էր հավատալ, որ իրենից երես թեքած բախտը հիմա իր կողքին է, սակայն վախենում էր, որ դա ընդամենը ենթադրություն է, ու կրկին ձեռնունայն կվերադառնա:

- Այո՛, Նեգի՛բ,- պատասխանեց՝ ջանալով հանգիստ մնալ,- Աստված մեծ է և ամենազոր ու երբեմն լսում է մեր աղերսները: Եթե ինձ հաջողվի գտնել նրանց, քեզ կարող ես հարուստ մարդ համարել: Օգնի՛ր ինձ, ու ես քեզ վարձահատույց կլինեմ:

- Այո՛, պարո՛ն Հարդինգ: Կօգնեմ Ձեզ, քանզի ակնհայտ է, որ Աստված է առաջնորդում Ձեր քայլերը: Կյանքիս մի հատվածում ես նույնպես համիդիե եղա: Ինձ միայն հետաքրքրում էր ավարը, ինձ ոչ ոք չէր սովորեցրել լավը տարբերել վատից: Լքել էի Աստծուն, Աբդուլ Հալիլը փրկեց կյանքս և ինձ խելքի բերեց: Ես նրան հավիտյանս պարտք եմ: Եթե նա ինձ խնդրում է օգնել Ձեզ, ապա ես պարտավոր եմ դա անել: Տա՜ Աստված, որ մենք գտնենք նրանց: Կարծում եմ՝ մենք ճիշտ ուղու վրա ենք: Դեռ երկու օր չանցած կիմանանք՝ այստե՞ղ են նրանք: Համիդիեի ինչի՞ն էին պետք սպիտակ ալյուրն ու կաթը…

Թոմասն անօգուտ կերպով փորձում էր քնել, սակայն այդ լարված ժամերին վճռվում էր իր ճակատագիրը: Զգաց, որ նախանձում է նրանց, ովքեր մեծ հավատով ապավինում էին Աստծուն:

Լուսաբացին նրանք գնացին դեպի հյուսիս՝ արշավելով վաղորդյան մշուշի միջով: Այդ մարդիկ արդեն տեղյակ էին փոխհատուցման խոստման մասին, ու թեև Նեգիբը հավատացրել էր, որ թեկուզև անհատույց էլ կօգնեին, սակայն ակնհայտ էր, որ այդ խոստումը խթանել էր նրանց եռանդը:

Նրանք Լիս հասան հաջորդ օրը՝ վաղ կեսօրին մոտ: Չնայած նյարդայնացած լինելուն՝ Նեգիբը բոլորին ստիպեց, որ իջնեն ձիերից: Ըստ նրանց հասած տեղեկությունների՝ Ռազաքն ապրում էր մի կիսավեր տանը՝ դեպի արևմուտք՝ գյուղից մեկ մղոն հեռավորության վրա: Դա մեծ ծառերով ու ճնիալքից առաջացած վարար հորձանքներով մի վայրի տեղանք էր: Ձիերին, առջևի ոտքերը կապած, թողեցին մի մարգագետնում՝ արածելու, թեև վտանգավոր էր. որտեղից որտեղ նրանց վրա կարող էր արջ հարձակվել: Այնուհետև, զգուշորեն սահելով, իջան մինչև ավերված տան մոտ և դիրքավորվեցին մի ցածրադիր բլրակի վրա, որտեղից լավ նշմարվում էր տան մուտքը:

Տունը բնակելի էր: Ծխնելույզներից մեկից սպիտակ ծխի քուլա էր բարձրանում: Թեև տանիքի մի մասն ավերված էր, բայց դա մի մեծ ու հին շինություն էր՝ գուցե մի լքված ջրաղաց՝ տեղանքի ռելիեֆին համապատասխան կառուցված տարբեր մակարդակների վրա: Տղամարդիկ լուռ էին, անշարժ՝ սպասելով որևէ շարժման: Հանկարծ մի տղամարդ դուրս եկավ տնից: Նեգիբը նրան նայեց վզից կախված փոքրիկ հեռադիտակով.

- Ֆաքիրն է: Նրան լավ գիտեմ: Դա նշանակում է, որ Ռազաքը պետք է ներսում լինի: Սպասենք, որ դուրս գա:

Մինչ խոսում էր, նա և իր մարդկանցից մեկը լիցքավորում էին հրացանները.

- Լավ զենքեր են՝ պատրաստված Գերմանիայում, լավ պողպատ է,- քթի տակ ասաց Նեգիբը,- գործը մեզ թողե՛ք, մի՛ անհանգստացեք, մենք նրանց չենք սպանի, միայն անշարժունակ կդարձնենք: Մեզ պետք է, որ խոսեն:

Խոսքը դեռ բերանում էր, երբ տեսան, որ մյուսն էլ է տնից դուրս գալիս: Երկուսով ինչ-որ բան էին խոսում տան առջևում: Այդ վիթխարի անտառի մեջտեղում նրանք իրենց ապահով էին զգում:

Նեգիբն ու մյուս մարդը շարունակում էին հետևել՝ իրենց հրացանների նշանառության ներքո նրանց պահելով: Նեգիբը շշնջաց՝ «Հիմա», ու նույն վայրկյանին՝ միաժամանակ, հնչեց երկու կրակոց: Երկուսն էլ ընկան գետնին՝ ձեռքերը տանելով դեպի ոտքերը, իսկ հարձակվողները ծառերի արանքով վազեցին զառիթափն ի վար՝ հրացանները վեր պահած ու օդի մեջ կրակելով:

Թոմասը վազեց նրանց հետևից՝ մի քանի անգամ իրեն հազիվ պահելով, որ չընկնի: Նա հուզված էր ու բորբոքված, բայց և՝ համոզված, որ ժամանակին է հասել, թեև ցավում էր, որ այդ գործը կարող էր վաղուց ձեռնարկած լինել:

Նեգիբն ու իր մարդիկ վրա պրծան ընկածների վրա՝ նրանց ոտքերը կապելու և համոզվելու, որ անգեն են: Սակայն այլ համիդիեներ դուրս եկան տնից՝ կրակելով հարձակվողներից երկուսի վրա, թեև անմիջապես ընկան գրոհողների բացած կատաղի կրակից:

Թոմասը, առանց որևէ մեկին բան ասելու, մտավ տուն: Այնտեղ մի երիտասարդ կին՝ թուխ դեմքով, գրկել էր մի շիկահեր աղջնակի, ով վախեցած լալիս էր. բացի Էթելից՝ ուրիշ մեկը չէր կարող լինել: Թոմասը մոտեցավ:

Թվաց, որ աղջիկը ճանաչեց նրան: Հուզաթաթախ նա գրկեց երեխային ու համբուրեց: Այդ կինը նրա առաջը կտրելու ոչ մի փորձ չարեց, միայն հառաչում էր ողբալով, ասես կռահում էր կատարվածը:

Հետո Թոմասը նրան վերադարձրեց աղջկան: Ուզում էր գտնել Կարոլինին: Փնտրեց ողջ տնով մեկ, սակայն էլ ոչ ոք չկար: Այդ ժամանակ դուրս եկավ և ուղղվեց դեպի վիրավորները:

- Պարո՛ն Հարդինգ: Այս շան որդին Ռազաքն է՝ ամենավայրագ ու նշանավոր համիդիեներից մեկը: Մյուսը Ֆաքիրն է… Աստված գթառատ է, պարո՛ն: Ինձ ասացին, որ գտել եք Ձեր դստերը: Իսկ Ձեր կնո՞ջը… Հիմա կտեսնեք, թե սրանք ոնց են մեզ պատմելու, թե ինչ է տեղի ունեցել: Մենք ամրակապ ենք դրել, որ արնաքամ չլինեն, սակայն նրանք գիտեն, որ դատապարտված են մահվան:

Նեգիբը թուրքերեն դիմեց Ռազաքին.

- Ի՞նչ, խոսելու ես քո կամքո՞վ, թե՞ ուզում ես, որ ես քեզ հետ անեմ այն, ինչ դու շատ լավ գիտես անել:

Ռազաքը մնաց լուռ: Այդ ժամանակ Նեգիբը հանեց դանակն ու այն մոտեցրեց նրա աջ ականջին:

- Կա՛մ կխոսես, կա՛մ ականջդ կտրում եմ:

Վախից խոսեց Ռազաքի ընկերը՝ անկախ իր հրոսակապետի սպառնալիքներից, ով, ձայնը գլուխը գցած, նրան ահաբեկում էր անհասկանալի բարբառով՝ հավանաբար ստիպելով, որ լուռ մնա:

- Կխոսեմ, այդ աղջնակն անգլիացու դուստրն է, որ ապրում էր Բիբլոսում: Ինձ մի՛ սպանեք: Ամեն ինչ կպատմեմ,- նա հեծկլտում էր ոչ միայն վնասված ոտքի ցավից:

Թեև Ռազաքը ջանում էր ինքն իրեն տիրապետել, սակայն երևում էր, որ գնալով ուժերը դավաճանում էին նրան:

- Ի՞նչ եք արել այն գիշեր, անիծյալնե՛ր,- Նեգիբը համբերատար մարդ չէր, ոչ էլ՝ դույզն-ինչ գթասիրտ երկու վիրավորների հանդեպ: Եթե նրանցից տեղեկություն կորզելու խնդիրը չլիներ, ապա երկուսն էլ արդեն մեռած կլինեին:

- Որտե՞ղ է անգլուհին: Ավելի լավ կլինի, որ ինձ չփորձեք խաբել, թե չէ կզոջաք ծնված լինելու համար: Որտե՞ղ է:

- Արնաքամ եղավ, մահացավ: Լույս աշխարհ բերեց մահացած արու զավակին ու ինքն էլ շուտով հեռացավ կյանքից: Մենք նրան մատով էլ չենք կպել: Ահմեդն էր ուզում ամեն գնով նրան բռնաբարել: Երդվում եմ, Աստված վկա: Անիծվի այն ժամը, որ մենք խառնվեցինք այդ գործին:

Թոմասը հուզմունքից ցնցվել էր, ասես երազում կամ մղձավանջում լիներ: Չէր հավատում, որ գտել էր աղջկան, սակայն առաջին անգամ գիտակցում էր, որ Կարոլինը մահացած է, ու շատ ծանր էր դրան հավատալը: Ծփոթահար էր, գլխապտույտ ուներ, բայց լսեց, թե ինչպես էր Էթելին խնամող կինը լաց լինելով ողբում իր սև բախտն ու ճիչեր արձակում տան դռան ուղղությամբ, որը հսկում էր Նեգիբի մարդկանցից մեկը: Աղջնակը, լայն բացված աչքերով, սևեռուն նայում էր: Մութն արագ ընկնում էր այն գոգավորությունում, որտեղ Ռազաքի հրոսակախումբն էր ապաստանել: Թոմասը միայն մտածում էր այն մասին, որ այդ հանցագործի պատմածը ճիշտ չէր: Ներքուստ մի ահավոր ցավ էր նրան տանջում:

- Ոչ ոք չէր ուզում, որ այդ բանը կատարվեր,- Ֆաքիրն ամեն կերպ ուզում էր կաշին փրկել,- Աստված վկա, Նա գթառատ է, հավատացե՛ք ինձ: Մենք գնացինք այդ տունը, որովհետև գերմանացին ուզում էր վրեժխնդիր լինել անգլիացուց: Այդ սպան էր, որ մեզ հրահրեց, որ նրանց վախեցնենք, որպեսզի տեսներ, թե նրանք այդտեղից կհեռանա՞ն… Սակայն ամեն ինչ շատ վատ վերջացավ: Ագարակի գյուղացին մեզ տեսավ անցնելիս, ու Ռազաքը գնաց նրա հետևից, որ սպանի… Չէ՛, չէր ուզում սպանել, միայն՝ վախեցնել: Ամեն ինչ բարդացավ: Մտավ տուն ու երեխային վերցրած դուրս եկավ: Անգլուհին վազեց նրա հետևից: Ահմեդը՝ առանց մեզ ասելու, թե ուզածն ինչ էր, հարվածեց այդ կնոջն ու դրեց ձիուն, մինչ Ռազաքը երեխային էր վերցնում: Ա՜հ, թող Աստված ինձ ների: Ես չէի հասկանում, թե ինչ էր կատարվում: Մեզանից մեկը վախեցավ ու մնաց հետևում,- մարդը շնչակտուր լալիս էր, մինչդեռ սփրթնած Ռազաքը սպառնալիքներ էր մրմնջում: Ակնհայտ էր, որ Ֆաքիրն ուզում էր ապրել՝ համոզված, որ եթե խոսեր, կյանքը կխնայեին:

- Շարունակի՛ր: Եթե կյանքդ քեզ համար գոնե մի քիչ թանկ է, պատմի՛ր, ինչ որ գիտես,- Նեգիբը ձեռքում սեղմում էր փայլուն դանակը՝ մոտեցնելով նրա դեմքին,- շարունակի՛ր:

- Ինձ մի՛ սպանեք: Աղջնակը կենդանի է մնացել իմ ու կնոջս շնորհիվ: Ռազաքը սահմանի վրա նրան ուզում էր վաճառել մի առևտրակա-

նի: Սպասում էինք, որ այդ մարդը նրա ուզած փողը բերի, բայց ո՛չ ես էի դա ուզում, ո՛չ էլ՝ կինս, ով սիրով է կապվել աղջնակի հետ: Աստված է վկա ասածներիս, ահա նա ձեր առջև է՝ ողջ և առողջ:

- Երդվի՛ր, որ ինչ ասացիր, ճիշտ է: Կյանքդ դրանից է կախված,- Նեգիբը դանակի սուր ծայրը Ֆաքիրի կոկորդին մոտեցրեց:

- Ճիշտ է,- ծանր վիրավոր Ֆաքիրի գիտակցությունը մերթընդմերթ թուլանում էր,- ամենազոր Աստծուն է հայտնի, որ ճիշտ է: Հարցաքննե՛ք կնոջս: Նա այնտեղ չէր, բայց ձեզ կասի նույնը, ինչ՝ ես: Անգլուհին մահացավ ծննդաբերելիս: Ռազաքի մոտ է այն մատանին, որը նրա պայուսակում էր: Ա՜հ, մատանին…

Ռազաքը փորձեց վրա պրծնել ընկերոջ վրա, բայց ուժասպառ էր և ընկավ բերանքսիվայր.

- Անիծյալ լինես, դավաճա՛ն…

Նեգիբն ընկածին ճտքակոշիկով խփեց ու կատաղությամբ տրորեց թիկունքը, իսկ Թոմասն այս ու այն կողմ էր շրջվում, որպեսզի աղջկա աչքից վրիպեր այդ ամենը:

Քիչ անց Թոմասն ու Նեգիբը հարցաքննեցին կնոջը: Մատանին Ռազաքի մոտ չէր, այլ դրված էր այդ կնոջ մատնեմատին: Թոմասն անմիջապես ճանաչեց, ու երբ կինն այն նրան վերադարձրեց, դրա վրա կարդաց իրենց հարսանիքի ամսաթիվն ու չկարողացավ զսպել հեծկլտոցը:

Կարոլինը ուր որ էր ծննդաբերելու էր, սակայն հուզմունքը, տագնապը, հարվածները, գիշերային ձիարշավն արագացրին ծննդաբերությունը: Երեխան ծնվեց մահացած, գուցե՝ որևէ հարվածից, իսկ մայրը մահացավ արնաքամ լինելուց: Ներքուստ ահավոր ցավ էր զգում, կոկորդում՝ մի հորձանք, ու միևնույն ժամանակ՝ թեթևության անսահման զգացում՝ Էթելին կենդանի գտած լինելու համար: Միշտ հավատացել էր, որ վաղ թե ուշ գտնելու է նրանց, սակայն այդ ամենը շատ ավելի դաժան էր, քան նա երբևէ պատկերացրել էր: Գրկում էր Էթելին, ով հորը ճանաչել էր, սակայն երբեք չէր կարողանա գրկել Կարոլինին և ոչ էլ… նրա կողմից ներվել: Թոմասի համար այդ ամենը մի ցավալի խոստովանություն էր, բայց և՝ հասկանալի:

Նա ծարավի չէր վրեժի: Իրենն էր մեղքը, իր կարծիքով՝ ինքն էր այդ ամենի հիմնական մեղավորը: Հանձնարարեց, որ այդ երկու փախստական համիդիեների վերքերին վիրակապ դնեն ու կոտրվածքները տախտակներով անշարժ կապեն: Մեղքը Մանհեյմինն էր՝ ինժեներների այն լեյտենանտինը, ում հանդեպ սկզբից նեթ լցվել էր խորը հակակրանքով, ինչը, հավանաբար, փոխադարձ էր, մինչև իսկ՝ սարսափելի ողբերգու-

թյուն սանձազերծելու աստիճանի, որում հանգամանքներն իրենց հրեշավոր դերակատարությունն էին ունեցել: Կարոլինն անսպասելի զոհ էր:

Կրկին գրկեց դստերը, հուսահատության արցունքները գլորվում էին այտերով: Աստված գթառատ էր և ողորմած, ու վերջին պահին նրան թույլ տվեց գտնել աղջնակին: Դա հրաշք էր, հատուցում՝ իր հավատքի հանդեպ: Ուշ էր արձագանքել, սակայն ներումը նրան հասնում էր այդ փխրուն մարմնի միջոցով, ով ուզում էր ինչ-որ բան ասել՝ գործածելով արաբերեն բառեր. Էթելը, անկախ իր տարիքից և հանգամանքներից, կարծես հասկանում էր, որ պետք է մխիթարի այդ մարդուն, ում հիշում էր աղոտ, և ով հուսահատ լալիս էր՝ իրեն գիրկն առնելով:

14. ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ
ՀՈԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1914թ.

1914 թվականի հոկտեմբերի առաջին օրերին Թոմասը դստեր՝ Էթելի հետ վերադարձավ Բեյրութի իր տուն: Աղջկան գտնելը նրա համար իր երազանքի գագաթնակետն էր, իսկ Կարոլինին վերջնականորեն կորցնելը հուսահատությամբ, ինչպես նաև իրեն թերի մարդ համարելու սարսափելի զգացողությամբ էր համակում: Իր համար կյանքն այլևս երբեք նախկինը չի լինի: Ի դեմս Կարոլինի՝ նա գտել էր շատ ավելին, քան նրան թվացել էր ծանոթանալու ու խելահեղ սիրահարվելու առաջին օրերին: Սակայն հիմա դրա վերջն այն մելամաղձությունն էր, որ նրան պատում էր ամեն երեկո և չէր լքում մինչև այն պահը, երբ Էթելը, թևերը տարածած, վազելով գալիս էր իր մոտ:

Լուսաբացին նա արթնանում էր տարօրինակ զգացողությամբ, ասես այդ ամբողջը երազ էր եղել: Վեր էր կենում ու վազելով մտնում երեխայի՝ իր ննջարանին կից գտնվող սենյակը, որտեղ նա քնում էր, մնում էր այնտեղ՝ նրան նայելով, չկարողանալով նրանից բաժանվել, կարծես վախենում էր, որ ամեն վայրկյան նա կրկին կարող է անհայտանալ: Պետք է հեռանային այդտեղից, իրավիճակն օրեցօր սրվում էր:

Նա կանչել էր Նադիմա Ղալիբին, ով երեք տարի առաջ Բիբլոսում խնամել էր Էթելին: Տեսնելով աղջնակին՝ նա ուրախությունից լաց էր եղել: Թոմասի համար մեծ թեթևություն էր տանն ունենալ մեկին, ում կարող էր լիովին վստահել իր դստեր խնամքը:

Բեյրութում մթնոլորտը նրանց համար այլևս ապահով չէր: Մեծ Բրիտանիան գրեթե պատերազմի մեջ էր Թուրքիայի հետ, և բրիտանական նավաշինական գործարաններից մեկում օսմանյան ռազմածովային նավատորմիղի համար կառուցվող երկու նավերին անգլիական կառավարության կողմից տիրանալը նշանակում էր՝ «casus belli» («պատերազմի առիթ»): Բացի դրանից՝ Բեյրութում նկատվում էր մթերքի պակաս, ու Թոմասը չէր ուզում թուրքերի հույսին մնալ:

Այն նույն օրը, երբ գերմանական «Գյոբեն» և «Բրեսլաու» հածանավերը մտան Կոստանդնուպոլսի նավահանգիստ՝ հաշվի չառնելով ծովային շրջափակումը, մարտահրավեր նետելով ամբողջ աշխարհին ու նսեմացնելով բրիտանական ռազմածովային նավատորմին, որը ոչ մի կերպ ի վիճակի չեղավ խոչընդոտելու այդ հածանավերի առաջխաղացումը, Թոմասը, Էթելն ու Նադիման նստեցին Կահիրե գնացող նավը և հոկտեմբերի կեսերին հասան այդ քաղաք: Թոմասն այնտեղ տուն էր

վարձել քաղաքի կենտրոնում: Նա հեռագիր ստացավ Գլխավոր շտաբից, ըստ որի՝ հնարավորինս կարճ ժամկետում պետք է ներկայանար: Այդտեղ նրանց համար ավելի ապահով կլիներ, քան Լոնդոնում. լուրեր էին պտտվում այն մասին, որ գերմանացիները վիթխարի դիրիժաբլներ էին պատրաստում՝ այդ քաղաքը կործանելու համար: Չէ՞ որ նրանք կործանեցին խաղաղ ու անպաշտպան բելգիական քաղաքները:

Նա ներկայացավ Կահիրեի Գլխավոր շտաբ: Նրա բարեկամը՝ մայոր Սթիմսոնը, նրան աշխատանքի նշանակեց բրիտանական հետախուզական ծառայությունների գրասենյակում՝ նկատի ունենալով արաբերենի ու թուրքերենի նրա իմացությունը, տեղական կենսափորձը: Այդ աշխատանքը Թոմասին թույլ կտար, որ Էթելի կողքին լիներ, թեև պատահում էին օրեր, երբ նա չէր կարողանում թողնել ծառայության վայրը:

Եվ ահա հոկտեմբերի 29-ին Թուրքիան պատերազմ հայտարարեց Անտանտին: Թուրքական ռազմանավերը, գերմանացի սպաների գլխավորությամբ, ռմբակոծեցին Սև ծովի ռուսական նավահանգիստները՝ պատճառելով վիթխարի վնասներ: Կահիրեի Գլխավոր շտաբում ասում էին, որ դա կրակ բացելու փորձ էր, որով Գերմանիան Օսմանյան կայսրությանը վճռականապես հրահրում ու ներքաշում էր պատերազմի մեջ՝ ստիպելով հարձակվել Ռուսաստանի վրա: Այլևս հետադարձի ճանապարհ չկար: Երեկոյան բազմաթիվ անգլիացիներ ու ֆրանսիացիներ, ովքեր դեռ գտնվում էին Պաղեստինում ու Սիրիայում, ձերբակալվեցին: Թոմասը ճիշտ ժամանակին էր թողել Բեյրութը: Նոյեմբերի կեսերին մի նամակ ստացավ բժիշկ Թաբիթից, ով հայտնում էր, որ Թոմասի տունն օսմանյան իշխանությունները բռնագրավել էին ու գերմանական զինվորական վերնախավի նստավայր դարձրել Լիբանանում: Ոչ մի կերպ չէր կարող կանխել այդ գործընթացը, ոչ էլ գիտեր, թե երբ կրկին կվերադառնա այնտեղ: Ուսերը թոթվեց: Այդ տունն իր սրտով էր, բայց թե ինչ վախճան կունենար, չպետք է մտահոգության առարկա դառնար:

Սկսվեց սովորական առօրյան: Շաբաթական մեկ օր ազատ էր, իսկ մնացած ժամանակն անցկացնում էր՝ թուրքական ու արաբական թերթերից ուղերձներ ու լուրեր թարգմանելով: Պատերազմում Թուրքիայի ներքաշվելը շատ կասկածներ էր ցրել, թեև ոչ ոքի համար դա անակնկալ չէր:

Մեկ շաբաթ անց լուր ստացավ, որ բժիշկ Բողոսյանը գտնվում է Կահիրեում: Գնաց նրան տեսնելու: Բողոսյանը նրան պատմեց, որ թուրքերը սկսել էին խուզարկություններ կատարել Բեյրութում գործող բրիտանական և ֆրանսիական հյուպատոսարաններում և գտել էին մեծ

խմբաքանակով մաքսանենգ զենք, նաև ասաց քաղաքում տիրող մեծ անհանգստության մասին: Ֆրանսիական հյուպատոսարանում օսմանների դեմ կազմակերպվել էին շատ գաղտնի ժողովներ ու դավադրություններ: Եթե իմանային դրանց մասին, ապա շատ գլուխներ կթռչեին դավաճանության մեղադրանքով: Բանն այն է, որ ֆրանսիացի հյուպատոս Ժորժ Պիկոյի ջանքերով վերջին ամիսներին կապերը դարձել էին արդյունավետ, ու նա փորձել էր տարբեր մարդկանցից իմանալ, թե ընդդիմության գործիչները մինչև ուր կարող են գնալ: Դա պատահական չէր: Այդ օրերին Ֆրանսիայի հյուպատոսարանը Բեյրութում դարձել էր Օսմանյան կայսրության դեմ պարզված սուր, որը հրեշին պետք է այնպես խոցեր, որ արնաքամ աներ: Բողոսյանը Թոմասին պատմեց, որ բոլոր արաբ հայրենասերները, այսինքն՝ իրենց համախոհները, ինչպես նաև հայերը, ապստամբության էին պատրաստվում Ֆրանսիայի աջակցությամբ, որը խոշոր շահեր ուներ կայսրությունում և ուզում էր պահպանել դրանք:

- Ես լավ գիտեմ թուրքերին: Եթե նրանց ձեռքն անցնեն համապատասխան փաստաթղթերը, ապա դրանք Բեյրութի քաղաքացիական հանրության շատ անդամների դեմ ապացույց կդառնան: Չէ՞ որ ֆրանսիական հյուպատոսարանով անցել են բոլորը, ովքեր մինչև կոկորդները կուշտ էին այն բռնակալական իշխանությունից, որը նրանց արգելում է ազատ շունչ քաշել: Այդպես չի կարող շարունակվել, ոչ ոք և կայսրության մաս կազմող ոչ մի ժողովուրդ մի օր անգամ այլևս չի հանդուրժի: Եվ իրենք դա գիտեն,- Բողոսյանը նկատի ուներ այն, որ երիտթուրքերն այդ մասին լիովին իրազեկված էին,- այդ Ժորժ Պիկոն, ով մինչև վերջերս Ֆրանսիայի հյուպատոսն էր Բեյրութում, կարող էր պահած լինել այնպիսի ապացույցներ, որոնցով հարյուրավոր մարդկանց մեղավոր կճանաչեն Բեյրութում: Եթե դրանք ընկնեն թուրքերի ձեռքը, ապա ես չգիտեմ, թե ինչ կարող է տեղի ունենալ: Հիմա, երբ պատերազմ է հայտարարված, դրանք կարող են իրեղեն ապացույցներ դառնալ դավաճանության գործում, իսկ այդ Ջեմալ բեյը՝ ռազմածովային նավատորմիղի նախարարը և կայսրությունը կառավարող եռյակի անդամը, ահավոր կպատժի: Թեև հիմա դա չէ ինձ անհանգստացնողը:

Թոմասը տեղյակ էր, թե ինչ դժվարին իրավիճակում են հայերն ապրում իրենց պատմական հայրենիքում, ու շատերն իրեն ասել էին, որ վատթարը դեռ առջևում է: Մեկնաբանություններ կային այն մասին, որ «Իթթիհադը» ոչ թե պետք է կատարեր հավասարության ու եղբայրության իր խոստումները, որոնցով ուզում էր խաբել Եվրոպային, այլ

օգտվելու էր պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ իր բոլոր հաշիվները մեկընդմիշտ մաքրելով հայերի հետ:

Հոկտեմբերի վերջին Թոմասը լուրեր ստացավ Լոնդոնից: Իր երկու զարմիկները զոհվել էին պատերազմում. մեկը՝ Մառնում, որտեղ նա գտնվում էր որպես դիտորդ, մյուսը՝ Իպրում: Պատերազմը շատ բան էր փոխելու, աշխարհն այլևս նույնը չէր լինի: Ինչ վերաբերում էր Բեյրութից հասնող լուրերին, ապա դրանք տագնապահարույց էին: Անգլիական հեծելավաշտն արգելում էր պարենամթերքի մատակարարումը ծովով, ու Բողոսյանի ասելով շուտով վրա էր հասնելու սովը: Շուկաները մթերքի բացակայության հետևանքով փակ էին, ու ամեն օր ճաշելը դարձել էր իրադարձություն:

Բժիշկ Թաբիթն էլ էր նրա հետ կապի մեջ: Դեկտեմբերի կեսերին նրանից նամակ էր ստացել: Կարդալով այն՝ Թոմասը մտածեց, որ վատ չէր լինի, եթե այն հրապարակեր Լոնդոնի լավագույն թերթերում: Նամակում գրված էր.

«Սիրելի՛ բարեկամ,

Այստեղ՝ Բեյրութում, իրավիճակն օրեցօր գնալով բարդանում է, ու մարդիկ սկսում են նկատել անգլիական և ֆրանսիական շրջափակման հետևանքները: Ընդամենը երեք շաբաթ է անցել, ու արդեն զգացվում է հիմնական մթերքների պակասը: Դա է պատերազմի արդյունքը:

Լավատեղյակ լինելով մարտնչող կողմերի հնարավորություններին՝ սրա վերջը լինելու է այն, որ մեկը մյուսին ծնկի է բերելու: Գերմանացիները վստահ են իրենց ուժերին: Միշտ են այդպիսին եղել: Համոզված են, որ իրենք՝ որպես ռասա, ամենաարժանն են. հիվանդություն, որով վարակել են նաև ավստրիացիներին:

Ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանք այլ ելք չունեին, քան գերտերություններին սատարելը: Կարծում եմ, որ սխալվում են իրենց հաշվարկներում ու ի վերջո տանուլ կտան պատերազմը: Իսկական ռազմուժի տերն Անգլիան է, իսկ փիլիսոփայությունը և բարոյագիտական սկզբունքները Ֆրանսիայինն են: Այդ իսկ պատճառով կարծում եմ, որ կլինի մի երկար ու ձիգ, մթին ընդհարում, որում ի վերջո կհաղթեն բարի ուժերը, իսկ մարդկության թշնամիները կպարտվեն՝ թեև ոչնչացնելով մարդկանց:

Հիմա զորանում են պրուսացիները, և պատմում են, որ Կոստանդնուպոլսում շարունակ շքերթներ են անցկացնում փողային երաժշտության ուղեկցությամբ: «Իթթիհադը» համոզված է, որ Օսմանյան կայսրությունը կուժեղանա՝ տրվելով այն ցնորքին, որ կվերանվաճի բալկանյան այն

տարածքները, որոնք մի ժամանակ իրենց տիրապետության ներքո էին: Շարունակ խոսում են թուրքական ռասայի գերազանցությունից, Թուրան կոչված առասպելական մի վայրից, որտեղ սկիզբ են առել թուրքական ցեղերը: Այս հարցում մեծ է գերմանացի փիլիսոփաների մեղքը: Ձեզ կանխավ ասեմ, որ այդ բոլոր անհեթեթ տեսություններն աշխարհը կործանման կտանեն:

Ի վերջո, փառք Աստծո, Ֆրանսիայի հյուպատոսարանի խուզարկումը կեղծ տագնապ էր: Ընդամենը գտան զենքերի մի տեսականի, որոնց մեծ մասը կիետաքրքրեր հավաքածու ունեցողներին: Երևում է, որ մեր բարեկամ Պիկոն թոշակի գնալուց հետո ուզում էր Ֆրանսիայի իր ամառանոցում ունենալ պատերազմական հին զենքերի հավաքածու:

Այստեղ՝ Բեյրութում, բոլորը թեթևացած շունչ քաշեցին, քանի որ եթե գտնեին անվանարկող փաստաթղթեր, ապա շատ գլուխներ կթռչեին: Ջեմալ բեյն էլ ատամները հո՞ չէր կրճտացնի:

Ձեք պատկերացնի, թե որքան ենք ուրախացել, որ գտել եք Ձեր դստերը: Այստեղ պատմում են, որ հրաշք է տեղի ունեցել: Նաև կիսում ենք Ձեր կնոջ կորստյան վիշտը:

Հուսով եմ, որ այս սարսափելի պատերազմը կլինի վերջինը և հնարավորինս շուտ կավարտվի:

Եղբայրաբար գրկում եմ:

Ձեր բարեկամ՝ Այուբ Թաբիթ, բժշկագիտության դոկտոր»:

Մայոր Սթիմսոնը, ում հետ Թոմասը ընկերական հարաբերության մեջ էր, նրան հրավիրեց Գլխավոր շտաբի ղեկավարների հետ սպայական ճաշարանում ընթրելու: Ձինվորականները նրան նայում էին որպես հնագույն արվեստի պրոֆեսորի, այլ ոչ թե որպես իրենցից մեկի: Պատերազմը մարդկանց շպրտում էր մի տեղից մյուսը, իսկ նրան Ավգուստուս Նյումանի ազդեցիկ կապերի և Սթիմսոնի անկողմնակալ վերաբերմունքի շնորհիվ վիճակվեց Կահիրեն՝ մի վայր, որտեղ այն տպավորությունն էր, թե Օսմանյան կայսրության ճակատագիրը պետք է հստակեցվեր առնվազն Արաբիայում, Պաղեստինում և Միջագետքում: Ծանոթացավ գեներալ Թաունսհենդի հետ, ով անհապաղ մեկնում էր Իրաք՝ մարտական գործողություններ վարելու՝ փորձելով գրավել Բասորան և Բաղդադը՝ անցնելով Տիգրիսը: Թոմասի վրա նա, ով պետք է ղեկավարեր այլոց, չափազանց գոռոզամիտ մարդու տպավորություն թողեց. նրա նմանը երբեք չէր կարողանա հասկանալ իր զինվորներին:

Մի հարցում կարծես բոլորն էին համոզված. Ֆրանսիան ձգտում էր տիրանալ Սիրիային, մանավանդ ողջ ծովեզերքին՝ Բեյրութով ու Լեռ-

նային Լիբանանով հանդերձ:

- Շա՛տ լավ,- Թաունսհենդը, ով անտաշ և ուղիղ մտածող մարդ էր, տանել չէր կարող ֆրանսիացիներին,- այդ ֆրանսիացի կոչվածներին կտանք Սիրիայի վիլայեթը, որ զվարճանան: Մենք կբավարարվենք մնացյալով: Ի վերջո, նավքը Միջագետքում է: Թող նրանք զբաղվեն Բաալբեկի և Պալմիրայի պլանները գծելով, ինչպես Նապոլեոնն արեց այստեղ՝ Եգիպտոսում: Եղե՞լ եք այնտեղ, Հարդի՛նգ:

- Անշուշտ, իմ գեներա՛լ,- Թոմասը պետք է ջանք գործադրեր, որպեսզի ընդունված կարգով դիմեր իր ղեկավարներին: Նրա համար դժվար էր զինվորական կարգուկանոնին վարժվելը:

Ինքը՝ Սթիմսոնն էր նրա երեսին ասել, որ քիչ է հետևում իր կարգապահ լինելուն.

- Թո՛մաս, դուք՝ Օքսֆորդի պրոֆեսորներդ, ձեզ բոլորից բարձր եք դասում: Ապա տեսնենք, թե Ձեր գլուխը կմտնի՞, որ Դուք այստեղ եղածներից մեկն եք ու պետք է ընդունեք, որ բանակի համար կարևոր նշանակություն ունեն կարգուկանոնը, հարգանքը հրամանատարության հանդեպ, հրամանների՝ առանց քննարկելու կատարումը և ոչ անձնական հայեցողությամբ գործելը: Այո՛, դժվար է զինվորներ ձեզ դարձնելը: Սակայն, բարեկա՛մս, չեմ ուզում, որ մի առավոտ Ձեզ վրա կրակեն: Այնպես որ՝ աշխատե՛ք ինձ հետ հաշվի նստել: Ի դեպ, Կիտչեներն ուզում է, որ Դուք գնաք և խոսեք շերիֆ Հուսեյնի հետ: Նա իմացել է, որ Դուք վերջերս Ավգուստուս Նյումանի հետ տեսել եք նրան: Ա՜հ, այդ Նյումանն օժտված է ամենուրեք ներկա գտնվելու արտասովոր ձիրքով:

Թոմասն այլ ելք չուներ, պետք է կատարեր հրամանները: Նրան ոչ մի հաճույք չէր պատճառում Էթելից բաժանվելը, թեև Նադիման աղջնակին մոր պես էր խնամում: Նրան չէր մտահոգում, որ երեխայի հետ նա խոսում էր արաբերեն, որին Էթելը տիրապետում էր՝ անկախ իր փոքր տարիքից: Ուներ նաև անգլերենի ուսուցչուհի, ու Թոմասն ինքն էլ էր նրա հետ միշտ մայրենի լեզվով խոսում, սակայն աղջիկն առանց զգալու պատասխանում էր արաբերեն:

Թոմասն Արաբիա ուղևորվեց մայոր Սթիմսոնի հետ, ում նա դասում էր իր բարեկամների շարքում: Անկախ այն բանից, որ Թոմասը չէր փայլում զինվորական ոգով, այնուամենայնիվ երկուսն էլ միմյանց շատ լավ էին հասկանում: Սթիմսոնը ջանում էր թեթևացնել իր ընկերոջ կյանքը, թեև Թոմաս Հարդինգի նման մարդու համար Կահիրեում դա չպետք է դժվար լիներ: Նրա սոցիալական դիրքը, տնտեսական վիճակը, իմացության ու բարեկամական շրջանակն ավելի քան բավարար էին որոշ

բարձրաստիճան պաշտոնյաների հետ շփվելու առումով, սակայն եթե մայոր Սթիմսոնի պես մեկը նրան ձեռք էր մեկնում, ապա ամեն հարց ինքնին լուծվում էր, ու ամեն ինչ ավելի դյուրին էր ստացվում:

Թոմասը նաև բարեկամացավ ֆրանսիացի մի քանի հնագետների հետ, ովքեր ղեկավարում էին Եգիպտական թանգարանը: Նրան հրավիրեցին ներկա գտնվել Սֆինքսի մոտերքում կատարվող պեղումներին:

Բուրգերի անհավատալի չափերը ցնցել էին Թոմասին: Առանց հոգնության այնտեղ էր գնում ավտոմեքենաներից մեկով, որն իրեն տրամադրել էր Գլխավոր շտաբը: Ավտոմեքենան վարում էր մի երիտասարդ կապրալ, ով Պլիմուտից էր և նրան խոստովանեց, որ ինքն էլ էր երազում հնագետ դառնալու մասին: Այդ պահից սկսած կապրալը՝ Էդգար Կիրկպատրիկը, և Թոմաս Հարդինգը սրտառուչ բարեկամություն հաստատեցին, ու մինչ Էդգարը վարում էր մեքենան, Թոմասը նրան պատմում էր Միջագետքում Պետերսոնի հետ ունեցած արկածներից:

Իրեն լավ էր զգում Կահիրեում վարձակալած այն հրաշալի ու հինավուրց տանը՝ մեծ բակով, որի վրա բացվում էին պատուհանները՝ պաշտպանված այդ ժամանակին բնորոշ փայտյա շերտավարագույրով: Երկու մակարդակների վրա կառուցված գլխավոր դահլիճում կար խեցեպատ մի փոքրիկ շատրվան՝ զարդարված ակվարելով: Դեռ շատ վաղուց ձեռքով ներկված ու տաշված փայտե գերաններն այդ տանը ստեղծում էին անչափ հոգեպարար մթնոլորտ: Դա շատ ավելի գեղեցիկ շինություն էր, քան Բեյրութի իր տունը: Տարբերությունը հիմնականում այն էր, որ Բեյրութի տնից բացվում էին զմայլելի տեսարաններ, մինչդեռ Կահիրեի տունը գտնվում էր նեղ փողոցների միջև:

Բողոսյանը նրան տվել էր մի հայի՝ Հակոբ Արզումանյանի հասցեն, ում շատ վաղուց էր ճանաչում: Արզումանյանը գրքերի, ձեռագրերի և կավաշեն փորագրված սալիկների խանութ ուներ Խան էլ-Հալիլի թաղամասի՝ հազիվ հինգ ոտնաչափ լայնություն ունեցող նեղ նրբանցքներից մեկում՝ ալ-Ազհար համալսարանի մոտ: Երբեմն ներքև-վերև էր քայլում հին Կահիրեով՝ մտածելով Կարոլինի մասին: Ինչ ասես, որ չէր տա, միայն թե նրան ցույց տար Արզումանյանի խանութը, նրա հին գրքերը՝ գրված արաբերեն, հայերեն, եբրայերեն, արամերեն, մի քանիսը՝ ձեռքի գունազարդ նկարներով: Նա որքա՜ն կուրախանար այդ ամենով:

Այն բանից հետո, երբ թուրքերն օգոստոսի վերջերին թալանեցին Սիվասում ու Դիարբեքիրում ապրող հույների ու հայերի վաճառատները, ինչպես նաև Զեյթունում և այլ վայրերում սպանդի ենթարկեցին հայերին, նրանցից շատերն Ալեքսանդրիայի ու Բեյրութի միջով հասնում էին

Կահիրե: Ինչպես մինչ այդ Թոմասի ճանաչած բոլոր հայերը, այնպես էլ Արզումանյանն ակտիվորեն համագործակցում էր հայկական կազմակերպությունների հետ, ու նրան ասաց, որ Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ազատամարտ» ամսագրի թղթակիցն է: Նաև ասաց, որ այդ ամսագիրը ՀՅԴ-ի՝ հանուն Հայաստանի անկախության պայքարող Հայ հեղափոխական դաշնակցության օրգանն է:

Երբեմն երեկոյան գնում էր Արզումանյանի խանութ՝ եգիպտական ձևով թեյելու: Այնտեղ իրար գլխի էին հավաքվում այլ հայեր ու վերլուծում այն ծանր իրավիճակը, որում գտնվում էին Թուրքիայում ապրող իրենց ազգակիցները: Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ պատերազմ հայտարարելը կայսրության ձեռքերն ազատել էր կապանքներից, և արդեն խոսում էին հայերի սպանդներից, հայ երեխաների առևանգումից:

- Արդեն հանել են իրենց դիմակը, պարո՛ն Հարդինգ: Գիտե՞ք արդյոք, թե ովքեր են չեթեները: Նրանք մի հատուկ կազմակերպություն են հիմնում՝ «Թեշքիլաթ-ը մահուսե»՝ թուրքական բանտերի ամենահայտնի հանցագործներով: Նրանց հետ պայման են կապել: Պետք է հավատաք ինձ, թեև Ձեզ համար դա դժվար է: Նրանց հրահանգված է հարձակում գործել, բռնաբարել, սպանել, գողանալ, թալանել հայերի ողջ ունեցվածքը: Ջուտ ահաբեկչություն… Թուրքիայում մեզ չեն խնայի: Եթե մի թուրք օթևան տա (կարող եմ Ձեզ հավաստիացնել, որ շատ գթասիրտ ու բարի մարդիկ կան), իր ընտանիքի հետ կդատապարտվի մահվան: Շատ անհանգստացած ենք, չնայած գիտենք, որ կարող ենք ապավինել ֆրանսիացիներին ու անգլիացիներին: Սակայն Եվրոպան անտեղյակ է, թե հիմա ինչ է կատարվում: «Իթթիհադն» աղավաղում է իրականությունն ու լուրեր տարածում, թե հայերն են հարձակվում թուրքերի վրա: Ա՜հ, Աստված իմ, ինչ դաժան փորձության ես մեզ ենթարկում:

Թոմաս Հարդինգը տեղեկացված էր, թե ինչ է կատարվում: Դա նա զգացել էր իր մաշկի վրա ու իր ապրած անձնական ողբերգության համար մեղադրում էր երիտթուրքերի կառավարությանը: Ամեն անգամ, երբ նայում էր Էթելին, տեսնում էր Կարոլինի դիմագծերը, ու նրա համար անտանելի էր դառնում այն միտքը, որ մեղավորն ինքն էր, քանի որ Բիբլոսում նրանց մենակ էր թողել: Այդ դառը հուշերը նրան ուղեկցելու էին ողջ կյանքում, ու մտածեց, որ իր ցավը կկարողանար մեղմել և կատարվածի համար ինչ-որ կերպ փոխհատուցել՝ փորձելով օգնության ձեռք մեկնել նոր սկսվող պատերազմից տուժածներին: Կահիրեում գործող բրիտանական բանակի Գլխավոր շտաբում կանխագուշակում էին, որ

պատերազմը տևելու է երեքից հինգ տարի, իսկ այդ ժամանակահատվածում ամենաթույլերը կմնային ճանապարհին:

Շերիֆ Հուսեյնին կատարած այցն այնքան էլ նման չէր նախորդին, երբ թուրքերը դեռ չգիտեին, թե ում կողմն էին բռնելու և իրենց աչքերը փակում էին Մեծ Բրիտանիայի ու շերիֆի ունեցած հարաբերությունների վրա: Մայոր Սթիմսոնը և նա ստիպված էին թաքնվել, կերպարանափոխվել, ճանապարհ ընկնել գիշերով, անցնել ամայի որևէ ծովափով, որտեղ նրանց սպասում էին շերիֆի հավատարիմ մարդիկ: Այդ ճամփորդության ընթացքում նա գնահատեց իր բարեկամի կամքն ու սառնասրտությունը: Ամեն ինչի հետ համակերպվում էր անմռունչ: Եթե նրանց հաջողվում էր, ապա մի բան ուտում էին, եթե՝ ոչ, դիմանում էին: Միակ բանը, որ հետաքրքրում էր Սթիմսոնին, իրենց առաքելության հաջողությունն էր: Թոմասին խոստովանեց, որ մեծ համակրանք է տածում Եգիպտոսում գործող Բարձրագույն կոմիսարի՝ սըր Հենրի Մակ-Մահոնի նկատմամբ, ով հենց իրենց էր ընտրել շերիֆ Հուսեյնի հետ կապի մեջ մտնելու համար: Շերիֆն այն մարդն էր, ով ռազմավարական շատ կարևոր դերակատարություն կարող էր ունենալ Պաղեստինի ռազմարշավի գործում:

Ոչ էլ Թոմասն էր բողոքում շոգից կամ անհարմարություններից: Համարում էր, որ այդ դժվարությունները հատուցվում են իրեն վիճակված այն պատեհությամբ, որ ինքը մասնակցում է Մեծ Բրիտանիայի համար կարևոր առաքելությանը:

Գիշերը նայելով շողացող աստղերին՝ մտածում էր պատմության հավերժության մասին. մարդիկ միշտ էլ մեկը մյուսին սպանելու պատրվակ գտել էին, ու ո՛չ անցած դարերը և ո՛չ էլ առաջադիմությունը չէին կասեցրել այդ վայրենի ավանդույթը:

Հառաչեց՝ մտածելով Էթելի ու անհետացած Կարոլինի մասին: Մի ասուպ անցավ վիթխարի երկնակամարով. գուցե դա Կարոլինից լուր էր, որ իրեն հղվում էր ինչ-որ մի տեղից:

15. ԱՂԱՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ
ՀՈՒՆՎԱՐ - ՀՈՒԼԻՍ, 1915թ.

Նրանք շերիֆ Հուսեյնի հետ հանդիպեցին անապատի մի ինչ-որ տեղանքում: Մինչև այդտեղ գնացին ուղեկցորդների՝ բեդվինների հետ, ովքեր նրանց Հիջազի արաբների հանդերձանք տվեցին: Սթիմսոնը թերևս անցել էր այդ փորձության միջով, որովհետև երբ նրան հեծնելու կենդանի առաջարկեցին, նա արու ուղտ նախընտրեց: Թոմասի որոշումը կանգ առավ արտաքինից պնդակազմ ձիու վրա, որը նրան առավել վստահություն ներշնչեց, քան այդ համառ ու միասապատավոր ուղտերը:

Շերիֆը նրանց սրտագին ողջունեց, մանավանդ՝ Թոմասին, քանի որ նրան հիշում էր Ավգուստուս Նյումանի և Հիմադա էֆենդու հետ կատարած այցելությունից: Նա լավ հիշողությամբ և կիրթ շարժուձևով մարդ էր. հատկանիշներ, որոնք հմտորեն գործադրում էր՝ իր և իր շրջապատի միջև ակնհայտ տարբերությունն ընդգծելու համար: Հուսեյնն իրեն վստահ էր զգում Անգլիայի աջակցությամբ, թեև դեռ հրապարակավ չէր հայտնել իր ընդունած վճիռը: Այդ մարդը չափից ավելի լավ էր ճանաչում թուրքերին և չէր ուզում իր կյանքի վերջին օրն ավարտել Մեդինայի հրապարակում պատրաստված կախաղանին: Այդ պատճառով էլ գործում էր զգուշավոր:

Նրա շուրջ հավաքվել էին իր երևելի մարդիկ և օսմանյան բանակի պաշտոնաթող մի քանի արաբ սպաներ: Անկախ շերիֆի վերջնական որոշումից՝ այդ մարդիկ բռնել էին նրա կողմը: Ներկա էին նաև եվրոպական ոճով հագնված մի քանի սիրիացի քաղաքական գործիչներ: Մասնավորապես այնտեղ էին Աբդ ալ-Ղանի ալ-Ուրայսին՝ Դամասկոսից, հայտնի մի առաջնորդ, ով որոշել էր վերջնականապես հստակեցնել իր քաղաքական դիրքորոշումը, այնպիսի սպաներ, ինչպիսիք էին Ալի Ռիդան՝ Լեռնային Սիրիայից, ալ-Ահդը և ալ-Ֆաթահը, ինչպես նաև Իրաքի և Պաղեստինի առաջնորդները: Հրավիրվածներին ներկայացրեց ինքը՝ Հուսեյնը: Կասկած չկար, որ այդ հանդիպումն ավելին էր, քան զուտ իշխանափոխության հարցի քննարկումը: Թեև մյուս կողմից նրանցից մի քանիսն ամեն ինչի համար պարտական էին հենց բրիտանացիներին:

- Այս ժողովը,- տեսնելով հրավիրվածներին՝ Սթիմսոնը Թոմասի ականջին շշնջաց,- պետք է, որ խոստումնալից լինի:

Շերիֆի տված ճաշկերույթն անցավ անկաշկանդ մթնոլորտում:

Գլխավոր ճաշատեսակը գառան խորոված էր՝ պատրաստված շիկացած ածուխի վրա և համեմված սոխով ու անապատի ուտելի բույսերով: Նաև հրաշալի հաց մատուցվեց, որը հունցվել և մեծ վարպետությամբ թխվել էր շիկացած ածուխներից տաքացած ավազի տակ. հացի վրայից հեռացրին ավազի վերջին հատիկները՝ ձեռքի ափով մի քանի անգամ շուռումուռ տալով ու դանակով քերելով: Շերիֆը, երկար տարիներ ապրելով Կոստանդնուպոլսում, նախընտրում էր թուրքական սուրճը, ու հենց դա էլ հյուրերն ըմպեցին ճաշի ընթացքում: Աղանդերը բաղկացած էր հասուն, շատ քաղցր արմավապտուղներից ու փոքրիկ և թերևս չափազանց քաղցր մեղրաբլիթներից, որոնք շերիֆը գովեց որպես ընտիր քաղցրավենիք.

- Սա անապատի մեղր է: Դուք հասել եք այստեղ՝ արշավելով մեծ ժայռերի միջով և անտեղյակ այն ամենին, ինչ ծածուկ է պահում այս անծայրածիր երկիրը, որը տասն անգամ ավելի մեծ է, քան Մեծ Բրիտանիան: Մեր ամենամեծ դաշնակիցն արևն է, քանզի ոչ ոք չի կարող մարտնչել նրա դեմ: Մեր պարիսպներն այս քարե կամ ավազե լեռներն են, որոնք սկիզբ են առնում անապատից: Այստեղ բանակներն անտեսանելի են թշնամու համար: Աստված ամենամեծն է:

Թոմասը հայացքը ձգեց իրենց շրջապատող մուգ ոսկեգույն լեռներին: Նրանք գտնվում էին բնական ամֆիթատրոնում, որտեղ շերիֆը խփել էր իր ճամբարը: Մի քանի ժամապահներ՝ կանգնած ժայռերի վրա, հսկում էին ճանապարհները և մոտակա լեռնանցքերը: Թոմասին թվաց, թե իր կյանքն այդ պահին ժամանակից դուրս էր. կարող էր լինել և՛ 1915 թվականը, և՛ 1591 թվականը, երբ սպասում էին Մարգարեի զորքին: Ժամանակավրեպ էին միայն պատի ժամացույցը, որի ձայնը լսվում էր վրանի ներսից, և մեծ ատրճանակները, որ բոլորը կրում էին՝ գոտուց կախած:

Սպասում էին արքայազն Ֆայսալին, ով ճանապարհ էր ընկել Երուսաղեմից և գալիս էր մասնակցելու հանդիպմանը, իսկ շերիֆը, գլուխը շրջելով, անհանգիստ հայացքներ էր գցում ժամացույցին՝ իմանալով, թե կյանքը որքան ծանր ու դժվարին է այդ օրերին: Թուրքերը որոշել էին սատարել Գերմանիային և չէին կասկածում, որ բոլոր մուսուլմանները միահամուռ նույնը կանեն՝ սրբազան պատերազմ՝ ջիհադ հայտարարելով խալիֆի թշնամիներին, ինչը վիթխարի ալիքի պես անխափան կբարձրանա իսլամական աշխարհում:

Երեկոյան տեղ հասավ էմիր Ֆայսալը: Համբուրեց հոր ձեռքը, գրկեց նրան: Նա այն մարդն էր, ում կեցվածքից, յուրօրինակ և դանդաղ խոսելու եղանակից նրբագեղություն էր տարածվում շրջապատում: Հյուրերին

ողջունելու իր շրջայցը նա սկսեց՝ մայոր Սթիմսոնի և Թոմաս Հարդինգի ձեռքը սեղմելով: Նրանց շատ լավ էր հիշում ու մի տեսակ դավադրակից ժպտաց: Մինչ Ֆայսալը ողջունում էր մյուսներին, Սթիմսոնը Թոմասին ասաց.

- Նա է մեր թագավորը Սիրիայում: Կարծում եմ, որ ճիշտ ենք ընտրել: Համաձայն չե՞ս:

Թոմասը դրական պատասխան տվեց.

- Այո՛: Այդ մարդը, իրոք, վստահություն է ներշնչում: Պետք է պահպանենք նրան, քանի որ ֆրանսիացիներն ունեն իրենց «փիղը», որպեսզի մեզ «շախ-մատ» անեն:

Խոսքը Ֆրանսիայի՝ Սիրիային ու Լիբանանին տիրելու շահադիտական նպատակի մասին էր, ինչը Ֆրանսիային հանում էր բրիտանական թեկնածուի դեմ:

Ավելի ուշ՝ ընթրիքից հետո, սկսվեց քննարկումը: Դա երևելի մարդկանց խորհուրդ էր՝ շերիֆ Հուսեյնի գլխավորությամբ, ում աջ կողմում նստած էր նրա որդին՝ Ֆայսալը: Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներին խնդրել էին մասնակցել այդ ժողովին, որպեսզի հավաստեին իրենց վստահությունը և վերջնական երաշխիքներ տային այն որոշման առումով, որ ցանկանում են կապեր հաստատել Անտանտի հետ:

Երբ շերիֆը բարձրացրեց ձեռքերը, ու տիրեց բացարձակ լռություն, նա սկսեց իր խոսքը:

- Ամենազոր և ամենագթառատ Աստծո անունից: Եկել է որոշումներ ընդունելու ժամը: Շատ ժամանակ է անցել այն օրից ի վեր, ինչ օսմանյան մի սուլթան իրեն հռչակեց որպես բոլոր հավատացյալների խալիֆ: Հիմա երիտթուրքերը, որ այնքան բաներ էին խոստացել արաբներին, ցույց տվեցին իրենց իսկական դեմքը: Բոլորովին այն չէ, ինչ սպասում էինք. մենք հիասթափված ենք: Դուք շատ լավ գիտեք, որ Ղուրանը գրված է արաբերեն, այլ ոչ թե թուրքերեն՝ արաբական տառերով: Ես ձեզ ասում եմ այս մասին, քանի որ մինչև Մեքքա և Մեդինա են հասել սրբազան պատերազմի կոչերը: Հիմա մենք կրոնական պատերազմի մեջ չենք: Ունենք քրիստոնյա դաշնակիցներ և բարեկամներ: Հավատացյալներին ամենամոտ կանգնած բարեկամները նրանք են, ովքեր ասում են՝ «Մենք քրիստոնյաներ ենք» (Ղուրան, սուրան 5. այաթ 82): Այստեղ մեզ հետ են Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները: Ֆրանսիան ու Ռուսաստանը նույնպես արաբ ժողովրդի դաշնակիցներն են: Ո՛չ, մենք ջիհադի հետ գործ չունենք: Դուք լավ գիտեք, որ օսմաններն ուզում էին իսլամի սիրտը տեղափոխել Կոստանդնուպոլիս: Սակայն բոլորս էլ գիտենք, թե որտեղ

է գտնվում Կաաբան: Այդ երիտթուրքերը բոլոր արաբներին ջիհադի են կոչում զուտ իրենց շահի համար, այդ կառավարությունում չկան իսկական հավատացյալներ: Ուզում եմ՝ իմանաք, որ մենք՝ հաշեմիթներս, որոշում ենք ընդունել և համակարծիք չենք սուլթանի՝ երիտթուրքերի խամաճիկի հետ, ոչ էլ՝ Գերմանիայի կայսեր հետ, որ նրանց սատարում է, առավել ևս՝ ոչ էլ «Իթթիհադի» առաջնորդների հետ: Հավատացնում եմ ձեզ, որ թվարկածս երեքից և ոչ մեկը լավ մուսուլման չէ: Մենք հավատում ենք Աստծուն և Նրա կողմից մեզ ընձեռած ազատությանը, ու դա է նաև այն, ինչ մեզ խոստացել են անգլիացիները: Վստահում ենք նրանց ու դա անում մեր բարի կամքով: Ով փորձի խաբել արաբներին, ինքն իրեն կխաբի: Գիտենք, որ բրիտանացիներն ուզում են իրենցով անել Միջագետքը և Կահիրեում պատրաստվում են դեպի Պաղեստին արշավելուն: Մենք ձեզ կօգնենք, երբ ժամը գա: Դուք՝ անգլիացիներդ,- շերիֆը դիմեց Սթիմսոնին ու Թոմաս Հարդինգին,- պետք է իմանաք, որ օգտվում եք մեր բացարձակ վստահությունից: Փոխանցե՛ք Հենրի Մակ-Մահոնին, որ կարող է ապավինել Հիջազի արաբներին:

Ժողովը շարունակվեց խորհրդանշաններով ու փոխաբերություններով հագեցած լեզվով: Սակայն դա ճարտասանություն չէր, այլ Հուսեյնի՝ երկդիմությանը վերջ տալու կամքի արտահայտությունը: Այն պահին, երբ անում էր դա, ո՛չ անվստահ էր, ո՛չ էլ՝ զգուշավոր: Միակ մարդը, ով մնում էր լուռ ու իրեն փոքր-ինչ հեռու էր պահում, էմիր Ֆայսալն էր: Ասում էին, որ նա Դամասկոսից անհանգստացած էր վերադարձել ոչ այնքան իր եվրոպացի դաշնակիցներից, որքան այն բանից, որ այդ քաղաքի ազդեցիկ այրերը վճռականորեն չէին արտահայտել իրեն սատարելու հավաստիացումները: Նրան դառնություն էին պատճառում եվրոպականացած ու կիրթ արաբները, ովքեր իրեն նայում էին որպես բեդվինի: Բնականաբար նրանցից և ոչ մեկը չէր համարձակվի իր երեսին դա ասել: Նույն այդ ապրումներն ունեցել էր օմայանների խալիֆ Մուավիյան, երբ նրա մոտ էին եկել Հիջազի բանբերները: Անցնում են դարեր, սակայն մարդիկ ու մարդկային հույզերը, մոլությունները նույնն են մնում:

Ինչ վերաբերում է շերիֆ Հուսեյնին, այդ ընթացքում թողնում էր հստակ գաղափարների տեր մարդու տպավորություն: Նա, ում բրիտանացիներն ավելի հասարակ մարդ էին համարում, քան Դամասկոսի կամ Բեյրութի արաբներին, սակայն սակարկելու կամ Հիջազի արաբներին բնորոշ ոչ մի երկիմաստության տեղիք չտվեց:

- Զարմանալի է,- ասաց Սթիմսոնը, երբ ավազին մեկնված՝ հանգստա-

նում էին՝ դիտելով փայլատակող երկնակամարը,- կարծես այս արաբներին հանել են «Հազար ու մի գիշեր»-ից, ովքեր այնքան երկդիմի չեն քաղաքականապես, որքան Դամասկոսի առաջադեմ արաբները, որոնցից շատերը կրթվել են Ֆրանսիայում կամ կրում են այդ երկրի ազդեցությունը: Շերիֆ Հուսեյնը հավակնոտ մարդ է, սակայն ոչ ոք նրան չի կարող մեղադրել երկդիմության մեջ: Տարվա սկզբին մեզ հաջողվեց փոխանակում կատարել Ազիզ ալ-Մասրիի համար՝ նրան կախաղանից փրկելու համար: «Թայմս»-ի շնորհիվ է կենդանի մնացել: Քո բարեկամ Ավգուստուս Նյումանը Կոստանդնուպոլսում ու Սալոնիկում շատ ջանքեր գործադրեց, որպեսզի օսմանյան բանակի արաբ սպաներին համոզի, որ իրենց իսկական առաջնորդը շերիֆ Հուսեյնն է, և այն, որ արաբական գաղտնի կազմակերպությունները՝ «Ալ-Ահդը», «Ալ-Ֆաթաթը», «Լամարկազին», մեզ են աջակցելու: Այդ Ազիզ ալ-Մասրին մեզ հետ պայման կնքեց, որ մեզ կօգնի այն դեպքում, երբ Անգլիան պարզորոշ հայտարարի, որ կաջակցի արաբ ժողովուրդների անկախությանն ու միավորմանը: Ահա այդ մասին ենք հայտնել շերիֆին: Մակ-Մահոնն ուզում է համոզել նրան, որ միայն մեզ հետ նա կարող է ապագա ունենալ:

Թոմասն այդ օրվա հոգնությունից ուժասպառ էր եղել, սակայն արիություն ունեցավ առարկելու իր բարեկամին, քանի որ մտատանջությունն իրեն ուտում էր:

- Եվ դու, Սթիմսո՛ն, անկեղծորեն հավատում ես, որ մենք շերիֆ Հուսեյնին կարո՞ղ ենք փայլուն ապագա ապահովել, ինչպես նաև ինքնավար ապագա արաբ ժողովրդի՞ն:

Պատասխանելուց առաջ Սթիմսոնը մի պահ լռեց: Նա նույնպես կասկածներ ուներ այն անսովոր պայմանների առումով, որոնց շրջանակում իրենք պետք է գործունեություն ծավալեին:

- Հիմա՝ այո՛, երիտասա՛րդ: Հիմա՝ այո՛: Եվ կարևորը ներկա պահն է: Վաղն ուրիշ օր կլինի:

Մայոր Սթիմսոնն ու Թոմասը Կահիրե վերադարձան իրենց պարտքը կատարած լինելու զգացումով: Պատերազմի ռազմավարության համար շատ կարևոր էր արաբների դիրքորոշումը: Այդուհանդերձ, Մակ-Մահոնն ու արքայազն Ֆայսալը արաբական այնպիսի կազմակերպությունների վերաբերյալ, ինչպիսիք էին «Ալ-Ահդը կամ «Ալ-Ֆաթաթը», նույն կարծիքին էին: Վերջինս լավ իրազեկված էր, որ օսմանյան բանակի արաբական վերին սպայական կազմը՝ իրաքցի և սիրիացի սպաները, չէին ցանկանում ամեն ինչ դնել մեկ խաղաքարտի վրա: Երիտթուրքերը շա-

ռունակում էին ինքնավարության, հավատարմության ու իշխանության խոստումներ տալ նրանց, ովքեր ուզում էին իրենց լսել: Դրանք, սակայն, ապագայի երկիմաստ խոստումներ էին, և այլևս ոչ ոք չէր կասկածում, որ աշխարհն ընդմիշտ փոխվելու է:

Երբ տուն մտավ, Էթելը նրան ընդառաջ վազեց, որ հայրը նրան սեղմեր իր գրկում: Նա ասես մոռացել էր հոգեկան ցնցումները: Թոմասը համոզված էր, որ ճիշտ է վարվել նրան Կահիրե բերելու առումով: Էթելը հագնում էր բամբակյա թեթև տունիկաներ. նույնը, ինչ այլ աղջիկներ, ովքեր նրա հետ հաճախում էին վարժարան: Թոմասը որոշեց վարձավճարով հրավիրել մի անգլիացի դաստիարակչուհու, ով ապրում էր իրենց տան մոտերքում, քանի որ Նադիմա Ղալիբը, որ աղջկան մոր պես էր խնամում, չէր կարող նրան դաստիարակել Թոմասի նախընտրած չափանիշներով:

Սըր Հենրի Մակ-Մահոնը սկսեց հաճախակի նամակագրություն ունենալ շերիֆ Հուսեյնի հետ: Թոմասը թարգմանում էր շերիֆից ստացած նամակները. այդ նամակագրության վրա խիստ հսկողություն էր սահմանված, քանի որ պետական գաղտնիք էր: Թերևս բանակում կային ավելի փորձառու թարգմանիչներ, սակայն Գլխավոր շտաբում նրանց նկատմամբ չունեին այն վստահությունը, ինչ Թոմասի նկատմամբ, ու չէին կարող գործը վտանգել. ոչ մի տեղեկություն չպետք է դուրս գար այդ ոչ պաշտոնական նամակագրությունից: Մի կողմից դա Թոմասի համար հաճելի էր, բայց մյուս կողմից՝ մտահոգիչ: Խնամքով արաբերեն էր թարգմանում սըր Հենրիի՝ Հուսեյնին հղված նամակները, ինչպես նաև անգլերեն՝ շերիֆից ստացածները: Այդ նամակներից ակնհայտ էր, որ Մեծ Բրիտանիան այնպիսի խոստումներ էր տալիս, որոնց իրագործումը դժվար կլիներ: Մեծ հիացմունք ունեցավ սըր Հենրիի հանդեպ: Նա կիրթ և խելացի մարդ էր, ով ջանք չէր խնայում, որ իրեն «շերիֆի տեղը դներ» ու հասկանար, թե ինչ է խորհում այդ արաբ միապետը: Միաժամանակ նա պետք է այնպես աներ, որ շերիֆին հետաքրքրեին Անգլիայի շահերը՝ անկախ առկա դժվարություններից և այդ խաղում իր նկատմամբ եղած անվստահությունից:

Դարդանելից հասավ տեղի ունեցած աղետի լուրը: Կատարվել էր աներևակայելին. ծովակալության առաջին լորդը՝ Ուինսթոն Չերչիլը, չկարողանալով ճիշտ գնահատել ուժերի հարաբերակցությունը, բրիտանական նավատորմը հասցրել էր կործանման: Այդ հարցը Կահիրեի Գլխավոր շտաբում քննարկվում էր մեծ անհանգստությամբ, իսկ

երբ վերջապես ճակատամարտի մանրամասները պարզվեցին, բոլորի համար բացարձակապես անհավատալի էր բրիտանացիների և ֆրանսիացիների պարտությունն այն դեպքում, երբ նրանց շարքերը համալրվել էին Ավստրալիայի, Հնդկաստանի և Նոր Զելանդիայի զորքերով:

Թուրքերն այնպես էին կպել Գալլիպոլիից, կարծես նրանց կյանքը դրանից էր կախված: Եվ, իրոք, դա այդպես էր: 1915 թվականին բոլոր ռազմաճակատներից եկող լուրերն այնքան վիատեցնող էին, որ անգլիացիները վախենում էին արաբների վստահությունը կորցնելուց: Հայտնի էր, որ շատ արաբ սպաներ շարունակում էին մարտնչել թուրքերի կողմից՝ առանց ընդունելու և ոչ մի խայծ, որ նրանց ուղարկում էին Կահիրեից կամ Լոնդոնից:

Չնայած ստեղծված բարդ իրավիճակին՝ Փարիզն այնքան էլ չէր վստահում Լոնդոնին, ոչ էլ բրիտանացիներն էին առանձնապես օգնություն ակնկալում ֆրանսիացիներից: Նրանք այնպիսի դաշնակիցներ էին, որ պատմականորեն էին միմյանց ատում. քաղաքակրթություններ, որ միմյանց հետամուտ էին լինում վախով, կասկածով, մարդիկ, որ չէին վստահում միմյանց, թեև ինչպես Քէ դ՛ Օրսեյում[34], այնպես էլ Ուայթհոլում[35] գիտակցում էին, որ դատապարտված են փոխըմբռնման:

Կահիրեում «Լուզիտանիա»-յի անսպասելի ու սարսափելի խորտակումը և դրա՝ դաշնակիցների սպասելիքների առումով ունեցած կործանարար նշանակությունը, նույնիսկ Ժոֆրեի ձեռնարկած հարձակման ձախողումն ընդունեցին հարաբերաբար: Պատերազմը դեռ շատ հեռվում էր, մանավանդ՝ Թոմաս Հարդինգի համար, ով երեկոյան, երբ տուն էր վերադառնում և գրկում Էթելին, ասես այլ աշխարհում էր ապրում:

Նրան հաճախ այցի էր գալիս իր բարեկամ Արզումանյանը, ով տեղեկացնում էր ամեն շաբաթ տեղի ունեցող կոտորածների և տեղահանությունների մասին, որ թուրքերն իրագործում էին հայերի նկատմամբ: Նրան պատմում էր այնպիսի սարսափելի բաներ, որ երբեմն կասկածում էր՝ արդյոք իր բարեկամն այդ ամենը չէր չափազանցնում՝ հայերի հանդեպ թուրքերի գործադրած հրեշավորությունն ապացուցելու համար: Այնուամենայնիվ, տիրող իրավիճակից համակողմանի տեղեկացված և ծայրաստիճան անաչառ Ավգուստուս Նյումանից ստացվող նամակները հաստատում էին Արզումանյանի ասածները: Այդ ամենն ահավոր

[34] Այն հաստատությունը, որտեղ տեղակայված էր Ֆրանսիայի արտգործնախարարության նստավայրը:
[35] Այն փողոցը, որտեղ տեղակայված էր Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության շենքը:

ու դառը ճշմարտություն էր, որ անիրական էր թվում: Ինչպե՞ս էին որոշ մարդ արարածներ իրենց նմանների հանդեպ թույլ տալիս այդպիսի բարբարոսություններ… Թոմասին Արզումանյանը տանում էր հենց նոր տեղ հասած, լլկանքի ենթարկված ու սարսափելի վիճակում գտնվող հայերի՝ տղամարդկանց և կանանց, երիտասարդների ու մանուկների մոտ: Թոմաս Հարդինգը հասկացավ, որ պատերազմում հաղթանակը տնտեսական խնդիր չէ, ոչ էլ՝ քաղաքական. դա միլիոնավոր մարդկանց գոյատևման խնդիր է: Ի՞նչ կպատահի հայերին, եթե Գերմանիան ու Թուրքիան հաղթեին պատերազմում: Չէր ուզում մտածել այդ մասին:

Գլխավոր շտաբում ստացել էին մի գրություն, որը լորդ Գրեյի՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարի գաղտնի զեկույցն էր: Նա անհանգստություն էր արտահայտում թուրքերի կողմից ողջ Օսմանյան կայսրությունով մեկ գերի վերցված անգլիացիների ու ֆրանսիացիների համար: Զեկույցում նա խոսում էր նաև հայերի ողբերգության մասին: Բարձրագույն տեսչությունը որոշեց վերստուգիչ հանձնախումբ ուղարկել Հալեպ, որտեղ խոսում էին այն մասին, որ բռնագաղթի ենթարկվածներին քշում էին դեպի արևելք՝ Դեյր էզ-Զոր անապատում նրանց լքելու համար:

- Պետք է ստուգենք, թե դա որքանով է ճշմարիտ: Գուցե դա Հայ հեղափոխական դաշնակցության անդամների խեղաթյուրված երևակայության պտուղն է, ովքեր միշտ էլ արմատապես դեմ են եղել թուրքերին,- սըր Հենրին չէր կարողանում հավատալ այն ամենին, ինչ պատմում էին իրեն,- ամեն դեպքում նախարար Գրեյը ցանկանում է իմանալ ճշմարտությունը: Եկե՛ք ուղարկենք մի հայի՝ Աղայանին, ով աշխատում է հետախուզական ծառայությունում: Նրան կուղեկցի Ավգուստուս Նյումանը, ով բարեբախտաբար հենց հիմա Դամասկոսում է: Համաձա՞յն եք:

Թոմասը չկարողացավ իրեն զսպել ու ձեռքը բարձրացրեց, բայց և հաջորդ վայրկյանին զղջաց:

- Այո՛, Հարդի՛նգ: Դուք առաջարկելու բա՞ն ունեք,- սըր Հենրին նրան նայում էր սպասողական հայացքով:

- Պարո՛ն, Ավգուստուս Նյումանն իմ վաղեմի ընկերն է: Ես շատ հայ բարեկամներ ունեմ, եթե չեք առարկում, ես կուզենայի ընկերակցել նրանց: Ես մի լրացուցիչ զեկույց կպատրաստեի այնտեղ տիրող իրավիճակի վերաբերյալ:

- Հարդի՛նգ, այստեղ Ձեր կատարած գործը շատ անհրաժեշտ է: Այդ առաքելությունը կտևի մեկ ամսից ոչ պակաս: Ի՞նչ ենք անելու առանց

Ձեզ: Ինչպես գիտեք՝ բանակում մարդը չի կարող ազատ գործել: Իմ կարծիքով՝ դա լավ գաղափար չէ:

- Ես համոզված չեմ, պարո՛ն,- կարծես մայոր Սթիմսոնը նույնպես ասելիք ուներ,- մեզ համար շատ կարևոր է հենց դեպքի վայրից ևս մեկ տեսակետ ունենալը: Դուք լավ գիտեք, որ Նյումանն իր զեկույցներում հիմնվում է Լոնդոնից իրեն հասած նյութերի վրա, մինչդեռ մենք կունենայինք մեր տեղեկատվությունը, թե ի՞նչ է կատարվում այնտեղ, ի վերջո, հարկ է այդ ամենի մասին իմանալ առաջին ձեռքից: Չէ՞ որ այնքան բաներ են պատմում… Ձեզ այդպես չի՞ թվում, պարո՛ն:

- Լավ, գուցե Դուք արդարացի եք,- սըր Հենրին փոխեց կարծիքը,- ու մեզ համար թերևս օգտակար կլինի այնտեղի բնակչության բարոյական վիճակի մասին անմիջական տեղեկատվությունը: Համաձայն եմ, Հարդի՛նգ: Հասաք Ձեր նպատակին, սակայն՝ առանց հիմարությունների, չենք ուզում, որ թուրքերը Ձեզ գնդակահարեն լուսաբացին կամ նման մեկ այլ բան: Այնպես որ՝ գնացե՛ք Աղայանի ու Ձեր սրտակից բարեկամի հետ ու բերե՛ք ամբողջական ու հավաստի զեկույց: Եվ վերադարձե՛ք հնարավորինս շուտ:

Կահիրեում գործող Գլխավոր շտաբում 1915 թվականի մայիսին պատերազմին նայում էին վատատեսորեն: Բեյրութից բնակչության շրջանում դաժան սովի մասին լուրեր էին հասնում, իսկ թուրքերը դրանում մեղադրում էին անգլիացիներին ու ֆրանսիացիներին: Մյուս կողմից եվրոպական մամուլն արձագանքում էր Թուրքիայից եկող սարսափելի լուրերին՝ Փոքր Ասիայի հույներին ու հայերին կոտորածների և տեղահանությունների ենթարկելու վերաբերյալ, սակայն ոչ ոք չգիտեր, թե որքանով էին դրանք հավաստի:

Թոմասն ուներ մի քանի հայ լավ մտերիմներ, սակայն տուն վերադառնալիս ինքն իր հետ կռիվ էր տալիս: Մեն-մենակ մտնելու էր գայլի երախը: Իսկ եթե իրեն մի բան պատահի՞: Այդ դեպքում ի՞նչ կլինի Էթելի հետ: Մտածեց, որ նորից կխոսի Սթիմսոնի հետ, կասի նրան, որ երկար է խորհել այդ մասին և կխնդրի նրան, որ իրեն զերծ պահի այդ գործից, թեև դա արդեն շատ դյուրին չէր լինի: Բոլորը նրան մի տեսակ տարօրինակ կնայեն կամ՝ ավելի վատ: Ո՛չ, կարող էր անել միայն այն, ինչ արդեն որոշված էր: Ինքն իրեն պետք է ապտակներ հասցնի…

Սթիմսոնի հետ խոսեց, սակայն ոչ թե չգնալու, այլ այն մասին, որ եթե չվերադառնա, ապա նա ստանձնի Էթելի հետ կապված հոգսերը՝ երեխային ուղարկելով Լոնդոն՝ իր հորաքրոջ՝ Ալբերտինա Հարդինգի մոտ:

Նա հրաժեշտ տվեց Էթելին՝ չհամարձակվելով ասել, որ նրան կրկին ուշ էր տեսնելու. գլխում չարագուշակ մտքեր էին պտտվում: Երբ երեխան նրան գրկեց, զգաց, որ սիրտը կտոր-կտոր է լինում: Էթելը դեռ այնքան փոքր էր, որ ոչինչ չէր հասկանում: Հարդինգին մխիթարում էր այն միտքը, որ Նաղիման և օրիորդ Համիլտոնը նրան լավ կխնամեն: Սթիմսոնն էլ խոստացավ, որ Թոմասի բացակայության ընթացքում երբեմն կայցելի նրա տուն:

Իր նոր բարեկամ Հովհաննես Աղայանի հետ նա գնաց կայարան՝ Ալեքսանդրիա ուղևորվելու համար: Այնտեղ նրանք շոգենավ էին նստելու և հասնելու էին Ֆամագուստա, որտեղից էլ կիպրոսյան ձկնորսական նավակով՝ Անտիոքիա: Այդ քաղաքում հանդիպելու էին Նյումանին՝ միասին Հալեպ հասնելու համար: Ուղևորության ծրագիրը դա էր, ու Թոմասը հուսով էր, որ ամեն ինչ դյուրին կանցներ:

Քառասուներեք օր անց նա բարեհաջող վերադարձավ Կահիրե: Էթելը դուրս եկավ նրան դիմավորելու ու հորը գրկեց իր փոքրիկ թևերի ամբողջ ուժով: Այդ պահին նրա ներսում կատարվեց անսպասելի մի բան, ու նա սկսեց անմխիթար լաց լինել: Մի քանի օր անց իր զեկույցը հանձնեց զորակայանի Գլխավոր շտաբի արձանագրությունների բաժին: Զեկույցը սկսվում էր այսպես.

«Նրան, ում հետաքրքիր է այս մասին իմանալը: Ներքոստորագրյալ՝ Գլխավոր շտաբի կապիտան Թոմաս Հարդինգ, Օքսֆորդի համալսարանի հնագույն արվեստի և հնագիտության պրոֆեսոր:

Կահիրեում տեղակայված բրիտանական բանակի հրամանատարության կողմից ես գործուղվեցի Հալեպ՝ տեղեկատվություն հայթայթելու այն մասին, թե Օսմանյան կայսրությանը հպատակ քրիստոնյա փոքրամասնությունն ի՞նչ վիճակում է գտնվում պատերազմի ժամանակամիջոցում: Տեղեկատվությունը մասնավորապես վերաբերում է Հալեպ քաղաքին և նրա մերձակա տարածաշրջանին, որը գտնվում է Սիրիայի վիլայեթի հյուսիս-արևմուտքում, որտեղ երիտթուրքերի կառավարությունը շարունակում է իր նախկին գործելակերպը, այն է՝ համակենտրոնացնում է Թուրքիայից բռնի տեղահանված քրիստոնյաներին, ճնշող մեծամասնությամբ՝ հայերին»:

Երբ գրում էր զեկույցը, Թոմասը չէր կարողանում ձերբազատվել գլխում պտտվող մտքերից: Ինչ ասես որ նա չէր տեսել Հալեպում… Փոխվել էր մարդ արարածի վերաբերյալ նրա չափանիշը: Աղայանին

սպանեցին, երբ նրանք ուղևորվում էին այն ճամբարներից մեկը, որտեղ համակենտրոնացնում էին բռնի տեղահանվածներին: Կար արդյոք մի բան, որ թուրքերին մղում էր այդքան վայրագ և արյունարբու գործելակերպին… Թերևս դա երիտթուրքերի ծայրահեղ ազգայնամոլությունն էր. նրանք հասել էին բացարձակ իշխանության և կառավարում էին ահաբեկչության կիրառմամբ: Հալեպում կարծիքներ էր փոխանակել մի քանի թուրքերի՝ Արմեն Ագոպյանի ընկերների հետ, ովքեր սարսափահար էին այն ամենից, ինչ տեղի էր ունենում: Իմացավ, որ հայերին օգնության փորձ անող շատ թուրքեր սպանվել էին չեթեների՝ թուրքական բանտերից ու կալանավայրերից ազատ արձակված ոճրագործների կողմից, որոնցով կազմվել էին համիդեների ստորաբաժանումներ: Ըստ նրան հասած հավաստի տեղեկությունների՝ նաև սպանվել էին Փոքր Ասիայի հույները, ասորիները, քաղդեները, նույնիսկ քրիստոնյա մարոնները և որոշ կաթոլիկներ: Այլ կերպ ասած, սպանվել էին նրանք, ովքեր չէին պատկանում թուրքական էթնոսին, մանավանդ՝ Անատոլիայի քրիստոնյաները: Երբեք չէր պատկերացնի, որ իրեն առաջադեմ համարող մի պետություն կարող է հրաման տալ, որ սպանեն քրիստոնյա իր այն հպատակներին, ովքեր թուրք չեն: Ու միմիայն այդ պատճառով գործադրել այդքան վայրագ ու այդպիսի մեծ ծավալներով էթնիկ զտում… Այդ մասին պատմեցին աքսորյալները, երբ իրեն, Նյումանին և Աղայանին՝ որպես Միջազգային Կարմիր խաչի անդամներ, հաջողվեց մուտք գործել համակենտրոնացման ճամբարներից մեկը: Օսման զինվորականները ոչ ոքի չէին վստահում, եթե թուրք կամ գերմանացի չէին: Ճամբարում նրանք տեսան բազմաթիվ պրուսացի սպաների, ովքեր զբաղված էին վերահսկողությամբ, վերև-ներքև էին անում՝ ստուգելով ամեն ինչ: Հետախուզական ծառայությունների միջոցով իմացել էին, որ Կոստանդնուպոլսում գերմանացի դեսպանը կատարելապես տեղյակ էր, թե ինչ է կատարվում, սակայն դա նրան այնքան չէր անհանգստացնում, որքան այն, որ ընդհարումից հետո, ըստ իր արած մեկնաբանությունների, պատասխանատվության առումով կարող էին խնդիրներ ունենալ:

Աղայանի սպանվելուց երկու օր առաջ ուղղվեցին դեպի Ալ-Բաբ՝ մի փոքրիկ բնակավայր Հալեպի հյուսիս-արևելքում՝ հազիվ քսան մղոն հեռավորության վրա, որտեղ կար բռնագաղթվածների մի ճամբար: Ագոպյանը պնդել էր, որ պետք է անձամբ տեսնեին ճամբարը՝ այն վայրը, որտեղ ցցուն էր դաժան իրականության ամբողջ պատկերը: Վիթխարի ճամբարում, որն ամայի մի տարածք էր՝ շրջապատված կրկնակի փշալարերով, իրար գլխի էին լցնում կայսրության հայաբնակ վայրե-

րից՝ Տրապիզոնից, Թարսից, Քաթմայից, Չաթից, Էյլենջեից, Կում Կոյուից, Մարդինից, Ֆենդեյակից, Մարաշից, Էվերեկից, Ուրֆայից, Սասունից, Այնթապից, Քիլիսից, Ադիամանից, Էրմենից և այդպես երեք հարյուր այլ բնակավայրերից տեղահան արված հայերին, ովքեր ոչ միայն ենթարկվել էին բռնագաղթի, այլև կոտորածների ու լկանքների:

Թոմասը երբեք չէր կարողանա մոռանալ զոհերի դեմքերը, ակնախոռոչներից դուրս պրծած այն աչքերը, որոնք այլ մարդ արարածների կողմից իրենց նկատմամբ գործադրած անհավատալի վայրագությունների ականատեսն էին եղել: Մեծ մասամբ ծերեր էին, կանայք ու շատ երեխաներ: Նրանց ո՞ւր էին քշում: Խոսում էին Դեյր էզ-Զորի մասին, որն անապատի սրտում էր՝ Հալեպից երկու հարյուր մղոն դեպի արևելք, իսկ այնտեղից հետքը կորչում էր… Խոսում էին նաև այն մասին, որ ողջ մնացած մեծաքանակ խմբերի տարել են անապատի հեռավոր վայրերը. անողոք անապատ՝ առանց ջրի, առանց սննդի: Բոլոր բռնագաղթվածներն էլ գիտեին այդ մասին, քանի որ մահն ու հուսահատությունը նրանց ուղեկիցն էին այն պահից, երբ իրենց ստիպեցին լքել իրենց տներն ու առանց դադար տալու քայլել այն հագուստով, ինչ որ հագներին կար, առանց իմանալու, թե արդյոք իրենց կհասնեն հետ մնացած հարազատները: Դատարկ տներում մնացին վառ օջախները, խոհանոցները, ճաշը՝ կրակին, ծխացող բուխարին, անտերության մատնվեցին ու առանց կթվելու մնացին անասունները՝ կովերը, ոչխարները, այծերը… Շատ երեխաներ դեռ չէին հասցրել տուն գալ՝ դաշտում խաղով տարված կամ վախից թաքնված՝ տեսնելով, թե ինչ է կատարվում: Տղամարդիկ, ա՜հ, տղամարդիկ… Ասում էին, որ բոլորին հավաքել են ու սպանել… Նրանց բռնել են այնտեղ, որտեղ որ եղել են՝ վարուցանք անելիս, խոտ հնձելիս, փայտ հավաքելիս… Նրանց որսացել են գիշատիչ գազանի պես ու վայրագորեն գլխատել, երբեմն էլ՝ նախքան սպանելը, դաժանորեն լկել: Այդ ամենը և դեռ շատ ավելին հաստատում էին կանայք, ովքեր հուսահատ էին, շատերը՝ խելակորույս, ու կարծես չէին ուզում հավատալ, որ դա իրականություն էր, կառչում էին անհնարինից՝ հուսալով, որ դեռ փրկության դուռ կբացվի: Նրանցից շատերը տեսել էին, թե ինչպիսի դաժան մահ ունեցան իրենց սիրելի էակները, դեռատի դուստրերը՝ բռնաբարված լեռնցի ցեղերի, չեթեների կամ հենց այն զինվորների կողմից, ովքեր պետք է հսկեին նրանց:

Երբ Թոմասը, Նյումանն ու Աղայանը հասան ճամբար, երեքն էլ գիտեին, որ խաղում էին իրենց կյանքի հետ: Բախտները բերեց, որ հանդի-

պեցին օսմանյան բանակի մի կապիտանի՝ Միջագետքից մի արաբի, ով լիովին դեմ էր կայսրության քրիստոնյաների նկատմամբ իրականացվող ոճիրին:

Շատ արաբներ ջերմ հարաբերություններ ունեին հույների ու հայերի հետ, ընդ որում՝ նույն ճակատագրին վաղ թե ուշ կարող էին նաև իրենք արժանանալ: Բացի դրանից՝ արաբները հնուց եկող համակրանքի ու գթառատության խորը զգացումներ ունեին, որոնք նրանց հոգում սերմանվել էին իրենց մշակույթով, կրոնով: Նրանք իրենց զգացումներով թերևս որքան մուսուլման էին, այնքան էլ՝ քրիստոնյա:

Այդ կապիտանը նրանց խոստովանեց, որ անցած ամիս՝ ապրիլի 24 -ին, Կոստանդնուպոլսում ոստիկանությունը և բանակը ձերբակալել են հայ մտավորականության անվանի ներկայացուցիչներին՝ գրողներին, երաժիշտներին, քաղաքական գործիչներին, բժիշկներին, ճարտարապետներին, դասախոսներին, իրավաբաններին: Նրանց միակ հանցանքը հայ լինելն էր: Ասաց, որ մասնակցել է այդ գործին, սակայն օգնել է, որ մի քանիսը փախչեն, և իրեն սպառնացել են ու տեղափոխել այդ ճամբար:

Այդ զինվորականը խորապես ամոթահար էր, ի վիճակի չէր նայել նրանց աչքերին: Աղայանն էլ՝ հասկանալով իր ժողովրդի ողբերգության լրջությունը և համոզվելով, որ ոճրագործ դավադրությամբ իրենք ենթարկվում են բնաջնջման, և ոչ ոք չէր կարող կասեցնել այդ ընթացքը, հուսահատ հեկեկում էր: Կապիտանը նրանց հանձնեց հազիվ հինգ ամսական մի երեխայի, ում տեսքից երևում էր, որ լավ պահված, բայց թերսնված մանչուկ է.

- Ես միայն գիտեմ, որ ազգանունը Մոսկոֆյան է: Փորձե՛ք նրան տանել Բեյրութ: Կարծեմ՝ այնտեղ ազգականներ ունի: Նրա մայրը քիչ առաջ մահացավ, իսկ այստեղ երեխան գոյատևելու հնար չունի:

Աղայանն անմիջապես վերցրեց երեխային ու թաքցրեց, ինչպես կարող էր՝ մեծ ուսապարկի մեջ դնելով և ուսին գցելով: Այնուհետև կապիտանը, ցուցաբերելով մեծ քաջություն, նրանց օգնեց, որ դուրս գան ճամբարից: Երբ Հալեպ էին վերադառնում, անդադար տեղացող անձրևից անանցանելի և ցեխակոլոլ դարձած ճանապարհին նրանց կանգնեցրեց չեթեների պարեկախումբը: Աղայանը շատ նյարդայնացած էր, ու չեթեներից մեկը, ով կարծես թմրանյութի ազդեցության ներքո էր, բախվեց նրա հետ ու առանց մի բառ ասելու՝ կրակեց գլխին: Աղայանը, անշունչ տաշեղի պես, տապալվեց գետնին: Նյումանը հանեց ատրճանակն ու կրակեց չորս հոգու վրա. երկուսն ընկան, մյուս երկուսը փախան: Նյու-

մանն ու Թոմասը վերցրին ուսապարկը, որի մեջ տղան էր. անհավատալի էր, բայց նա չէր լալիս: Հնարավոր չէր Աղայանի աճյունը հողին հանձնել. վտանգավոր էր այդտեղ մնալը, քանի որ իրենց կարող էին սպանել: Քայլում էին՝ շարունակ խորհելով, թե ինչ է կատարվում իրենց շուրջը, թե որքան անարժեք է մարդկային կյանքը:

Աղայանը մահացավ՝ կատարելով իր պարտքը: Նրա արիության շնորհիվ փրկվելու էր այդ փոքրիկը: Թոմասը մտածում էր, որ անձնվեր կամ հերոսական արարքների մեծ մասը պատմության ընթացքում ընդմիշտ մնում է անանուն:

Երբ Գլխավոր շտաբի արձանագրությունների բաժին հանձնեց իր զեկույցը՝ վաթսուներկու մեքենագրված էջ, մտածեց, որ կատարել է իր առաքելությունը:

Կապիտան Թոմաս Հարդինգի զեկույցը Հայկական հարցի նկատմամբ արմատապես փոխեց բրիտանական Գլխավոր շտաբի սպաների վերաբերմունքը: Զեկույցը, ի պատիվ այն մարդու, ով իր պարտքն իր կյանքից վեր դասեց, անվանեցին «Աղայանի զեկույց»:

Գեներալ Շորը, ով հետագայում համագործակցելու էր Կովկասի և Ռուսաստանի հարավի հակահեղափոխական խմբավորումների հետ՝ նրանց խորհրդային կարգերի դեմ ապստամբության մղելու համար, մանրամասնորեն կարդաց այդ փաստաթուղթը:

Թոմասը որոշեց ավելի շատ խորամուխ լինել այդ կոնֆլիկտում: Այդ մասին նա հունիսի կեսերին խոսք բացեց սպայական ճաշարանում ճաշելու ժամանակ, երբ հրավիրել էին նաև Արզումանյանին, ով մտերմացել էր Սթիմսոնի հետ:

- Գալլիպոլիում մեզ հետ տեղի ունեցածը ցույց է տալիս, որ չենք կարող հանգիստ նստել: Մի ժամանակակից նավատորմի կործանում՝ հմուտ նավաստիներով, ներառյալ մեր դաշնակիցները, բազմափորձ հրամանատարները… ահա թե ինչ: Հույս դնելով այն բանի վրա, որ թուրքերը թույլ դիմադրություն ցույց կտան, սխալին հետևում է հաջորդ սխալը. այդ ճակատամարտին ուղարկվել էր ավելի քիչ զորք, քան անհրաժեշտ էր: Ո՛չ Կիտչեները և ո՛չ էլ Ֆիշերը սկզբից ևեթ լրջորեն չվերաբերեցին մարտական այդ գործողությանը: Ո՛չ Ուայթհոլից, ո՛չ էլ այստեղից՝ Կահիրեից, չաջակցեցին այդ ռազմական ձեռնարկին, ու հիմա մենք փակուղու առաջ ենք կանգնած: Չեմ կարծում, որ այնտեղ հեշտ կլինի թուրքերին ջարդելը: Այս անհիծյալ գործում առավել շատ տուժելու են Չերչիլը, Կիտչեներն ու Համիլտոնը, իսկ եթե ոչ՝ դուք ինձ մի քանի

ամիս հետո կասեք,- իրավիճակն էր վերլուծում Սթիմսոնը:

Արզումանյանն ավելի լավատես էր: Նա չէր հավատում, որ թուրքերը ջախջախել են անգլիական նավատորմը՝ ուժեղացված ֆրանսիացիներով, սակայն խոստովանեց, որ շատ անհանգստացած է պատերազմի երկարաձգմամբ, քանի որ երբ այն սկսվեց, բոլորին թվում էր, թե դա շաբաթների հարց է:

- Այս պատերազմը գնալով դժոխքի է վերածվում իմ ժողովրդի համար: Սարսափելի նորություններ ունեմ. հայկական քաղաքների ու գյուղերի բնակչությունը թուրքերի կողմից ենթարկվում է կոտորածների: Սա վերածվել է հանուն գոյատևման պայքարի: Մի բան էլ կասեմ: Մեծ Բրիտանիան պետք է աջակցի Անատոլիայի հայերին: Գիտեմ, որ հայերին համակրող բրիտանացի շատ սպաներ կան, սակայն անգլիական կառավարությունը չափազանց հեռու է ու չի լսում հայերի ճիչերը: Գիտենք, որ անգլիացի ժողովուրդը մեզ ավելի մոտ է, քան նրա քաղաքագետները: Սա է այս անիծյալ պատերազմի տրամաբանությունը:

Սթիմսոնը, փորձելով հանգստացնել, ընդհատեց իր բարեկամին.

- Այս պատերազմից բոլորս էլ տուժելու ենք: Սակայն հավատացնում եմ Ձեզ, որ ամենից շատ տուժելու են Գերմանիան, Ավստրիան ու Թուրքիան: Հայերին թերևս արյան, ցավի ու արցունքների գնով կհաջողվի ազատվել թուրքական լծից: Գուցե նրանց համար անտանելի լինի, գուցե սարսափելի գնով փոխհատուցեն իրենց ազատության համար, գուցե մտածեն, որ ոչ ոք իրենց չի օգնի, բայց հուսամ, որ այդպես չի լինի: Ձեմ կարծում, որ Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան անտարբեր մնան:

Այդ պահին Արզումանյանը զայրացած, ահավոր նյարդայնացած ոտքի կանգնեց, իսկ Թոմասն ու Սթիմսոնը շփոթահար նրան նայեցին:

- Ո՛չ, դրանք ընդամենը մխիթարանքի խոսքեր են,- բոլոր սպաները գլուխները շրջեցին դեպի Արզումանյանը. այդ վայրում ոչ ոք երբեք ձայն չէր բարձրացնում,- հայերս ո՛չ մխիթարանքի ու ո՛չ էլ խղճահարության կարիք ունենք: Մեզ թնդանոթներ, զինամթերք, ռազմավարական հմտություններ տվե՛ք: Ինչ է, դուք չե՞ք հասկանում, որ հայ ժողովուրդը ոչնչացվում է: Մտածե՛ք այն մասին, որ երբ իրար մեջ բաժանեք Օսմանյան կայսրության մնացորդները, մի մասը՝ Հայաստա՛նը, կունենա իր տերը: Ներեցե՛ք ինձ, ես պետք է գնամ, էլ չեմ կարող մնալ այստեղ, մնա՛ք բարով:

Արզումանյանը մեծ քայլերով հեռացավ սպաների ճաշարանից: Բոլորն իրենց հայացքներն ուղղել էին քաղաքացիական հագուստով, նիհար ու փայլատակող աչքերով այդ տղամարդուն:

Թոմասը պատրաստվում էր դուրս գալ նրա հետևից, բայց մի ձայն նրան կանգնեցրեց: Ինքը՝ սըր Մակ-Մահոնն էր, ով սրահի մյուս կողմից բղավեց.

- Նրան թողե՛ք, որ գնա, կապիտա՛ն Հարդինգ: Այդ մարդն իրավացի է: Հիմա նրանց բառեր չեն հարկավոր, այլ թնդանոթներ: Երբ պահը գա, հայերին կապացուցենք, որ Մեծ Բրիտանիան չի մոռացել նրանց:

Թոմասը վերադարձավ և նստեց ընկերոջ՝ Սթիմսոնի կողքին: Մի քանի րոպե անց խոսակցությունները վերստին շարունակվեցին թույլ շշնջոցով: Թոմասի գլխում պտտվում էին Արզումանյանի խոսքերը… Հայաստանը տեր ունի, բայց պատերազմի վերջում կմնան արդյոք հայեր, որպեսզի պահանջեն այն…

Սըր Հենրին մոտեցավ նրանց սեղանին, ու երկուսով տեղում զգաստ կանգնեցին:

- Նստեցե՛ք, պարոնա՛յք, խնդրում եմ: Խոսքն Արզումանյանի մասին չէ՞: Ես էլ եմ նրա խանութից գիրք գնել: Կուզենայի, որ մեր բանակի և բոլոր բրիտանացիների անունից նրան մեր ցավակցությունը հայտնեք Անատոլիայից հասած լուրերի առթիվ: Նաև ասացե՛ք նրան, որ Անգլիան ու նրա դաշնակից Ֆրանսիան տեղյակ են խնդրին ու լարված աշխատում են հայ ժողովրդին օգնելու համար: Սակայն հիմա մենք դաժան պատերազմի մեջ ենք, որը բոլորիս վնասում է, ու ոչ մի բան դյուրին չի ստացվում: Ինչևէ, պարոնա՛յք: Բարի՛ գիշեր:

Սըր Հենրին հեռացավ, բոլոր սպաները ոտքի կանգնեցին: Այդ մարդը բոլորին իր հանդեպ համակում էր հատուկ հարգանքով:

Սթիմսոնն իր սուրճն ավարտեց մի մեկնաբանությամբ.

- Բարի՛: Երբեմն հարկավոր է խոսել բարձրաձայն, որպեսզի քեզ լսեն, իսկ այդ Արզումանյանը… Ի սեր Աստծո, գիտե, թե որտեղ իրեն լսել տա:

16. ՍԱՅՔՍ-ՊԻԿՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ
ՕԳՈՍՏՈՍ - ՆՈՅԵՄԲԵՐ, 1915-1916թթ.

Այդ օրերին սկսեցին խոսել Սայքս-Պիկո համաձայնագրի մասին: Ժորժ Պիկոն՝ Բեյրութում Ֆրանսիայի նախկին հյուպատոսը, և բրիտանացի գեներալ-լեյտենանտ Մարկ Սայքսն իրենց կառավարությունների ցուցումով մի գաղտնի համաձայնագիր էին ստորագրել այն նպատակով, որ պատերազմի ավարտից ու Անտանտի հաղթանակից հետո կարողանան խույս տալ հետագա վիճահարույց խնդիրներից: Անկասկած ո՛չ Ֆրանսիան և ո՛չ էլ Մեծ Բրիտանիան ոչ մի կասկած չունեին հաղթանակի առումով, չնայած պատերազմում ցնցումներն անկանխատեսելի են:

Ֆրանսիացիները ձգտում էին վերահսկել Սիրիան, ներառյալ՝ Մոսուլին հարակից տարածքն ու Լեռնային Լիբանանը, իսկ բրիտանացիները՝ Պաղեստինը, Տրանսհորդանանը, Միջագետքը և Արաբիան:

Թոմասն այդ մասին անմիջականորեն տեղեկացավ, սակայն սըր Հենրի Մակ-Մահոնը չէր ցանկանում, որ շերիֆ Հուսեյնը լուր ունենար այդ գաղտնի համաձայնագրի մասին: Թոմասը մտածեց, որ դժվար կլիներ թաքցնել այդպիսի բանը, բայց սըր Հենրին նրան պարզաբանեց. «Սա քաղաքականություն է, զուտ քաղաքականություն, այնպես որ՝ մոռացե՛ք իրականության մասին: Համաձա՞յն եք»:

Երևում էր, որ տեղի ունեցող իրադարձությունները վատ էին անդրադառնում Թոմասի բեյրութցի բարեկամների վրա: Այնտեղից եկող լուրերն օրեցօր ավելի աղետալի էին դառնում: Համատարած սովը, որ իր ճիրանների մեջ էր առել բնակչության ճնշող մեծամասնությանը, ծովային շրջափակման հետևանքով էր: Թոմասն ինչով կարող էր, օգնում էր: Բժիշկներ Թաբիթի և Բողոսյանի հետ կապի մեջ մտնելուց հետո նրան հաջողվեց սննդամթերքով բեռնված երկու ձկնորսական նավ ուղարկել Բեյրութի հիվանդանոցի համար: Ինչ խոսք, դա նույնն էր, ինչ մի կաթիլն օվկիանոսում, իսկ Սթիմսոնը նրան զգուշացրեց, որ եթե դա կրկնվի, ապա կարող է քրեական հետախուզության ծառայությունների հետ լուրջ խնդիրներ ունենալ: Թոմասն առաջին հերթին չէր ուզում ռիսկի դիմել հանուն Էթելի, ով իր կարիքն օրեցօր ավելի շատ էր զգում: Միակ բանը, որ արեց բարեկամական սերտ կապերի մեջ գտնվող Արզումանյանի միջոցով, ֆունտ ստեռլինգներով որոշ գումար ուղարկելն էր:

Ապաստան փնտրելու հույսով շարունակում էին Բեյրութ հասնել բազմաթիվ հայեր՝ մանավանդ կանայք, երեխաներ և ծերեր: Արզու-

մանյանի հավաստմամբ՝ համարյա բոլորը գալիս էին հագներին եղած հագուստով, ու քանի որ Բեյրութում սովի պատճառով իրադրությունը սահմռկեցուցիչ էր, նրանց չէին ընդունում լևանտցիներին բնորոշ հյուրընկալությամբ: Հենց իրենք՝ հայերը, պետք է կարողանային ապահովել իրենց գոյությունը. մի բան, որն այդ ժամանակ անհնարին էր:

Անկախ այդ ամենից՝ Թոմասը կարոտում էր Բեյրութը: Կահիրեն չափազանց մեծ քաղաք էր ու եռուն, կյանքի այլ հատվածում գուցե և մնար այդտեղ, սակայն ցանկանում էր վերադառնալ Բեյրութի իր տուն:

Այդ ժամանակ հաստատ գիտեր, որ Անտանտը, այսինքն՝ դաշնակիցները հաղթելու են պատերազմում, հետևաբար վաղ թե ուշ Էթելի հետ վերադառնալու է այնտեղ: Քանի որ վաղուց էր ընդունել Բեյրութում վերջնականապես հաստատվելու վճիռը, ապա ցանկանում էր երեխային բացատրել, որ դա է իր իսկական օջախը:

Կահիրեում պետք է տեսնվեր Ժորժ Պիկոյի հետ, քանի որ սըր Մակ-Մահոնը ջուրն առանց եռացնելու խմելու հետևանքով մի փոքր վատառողջ էր. այդ օրերին դա սովորական երևույթ էր: Վերջին պահին նրան ասացին, որ գնա Նեղոսի ափին գտնվող Ֆրանսիայի դեսպանատուն: Հանդիպման շարժառիթն այն համաձայնագրի ստորագրումն էր, որը վերաբերում էր հետագա գործողություններին: Համաձայնագիրը, որը կազմել էին երկու երկրների մասնագետների՝ զինվորականների, աշխարհագրագետների, սոցիոլոգների և տեղանքագիրների խմբերը, ամիսներ շարունակ քննարկման առարկա էր ֆրանսիացիների ու անգլիացիների միջև, ովքեր թեև ոչ լրիվ ճշգրտությամբ, բայց նշել էին իրենց ենթակա ազդեցության ոլորտները, և դրանք տեղ էին գտել փաստաթղթում:

Թոմասը պետք է բացարձակ գաղտնի պահեր ինչպես այդ համաձայնագրում, այնպես էլ իր ձեռքի տակով անցնող ողջ թղթակցությունում և փաստաթղթերում առկա տեղեկատվությունը: Նա որևէ մեկնաբանություն անելու, ոչ էլ խորհուրդ կամ ցուցում տալու իրավունք չուներ, ոչ էլ կարող էր հրապարակավ կամ նեղ անձնական շրջանակում այդ ամենից որևէ բան ակնկալել: Սակայն ոչ ոք նրան չէր կարող արգելել, որ խորհրդածի տեղի ունեցող իրադարձությունների շուրջ՝ հանգելով անձնական եզրակացությունների:

Ֆրանսիան միշտ էլ հավակնություն էր ունեցել Կիլիկիայի տարածքների հանդեպ: Դա մի երկրամաս էր Փոքր Ասիայի հարավում՝ Սիրիայի հյուսիսում՝ Միջերկրական ծովի ափին: Այդ վայրում հեռավոր մի ժա-

մանակ խաչակիրներն էին ափ իջել: Եվ այդ պահից սկսած, ինչ եվրոպացի ռազմիկները, որոնցից շատերը ֆրանսիացիներ էին, հանդիպեցին քրիստոնյա մարոններին, ուրվագծվեց աշխարհի այդ մասի ճակատագիրը: Դարերի ընթացքում ֆրանսիացիները փորձում էին տիրանալ այնպիսի քաղաքների, ինչպիսիք էին Բեյրութը, Սիդոնը, Տյուրոսը, Բիբլոսը, Տրիպոլին: Նապոլեոնը նույնպես փորձեց՝ հասնելով մինչև Սեն Ժան դ՝Ակր: Նապոլեոն երրորդն էլ տասնիններորդ դարի երկրորդ կեսին իր զորքերն ուղարկեց՝ քրիստոնյա մարոններին դրուզներից պաշտպանելու համար: Սակայն, ի վերջո, այդ հաստաբեղ ու գավառական տեսքով պաշտոնյային՝ Ժորժ Պիկոյին է հաջողվում ստորագրել համաձայնագիրը, որը փոխելու էր Օսմանյան կայսրության զգալի մասը կազմող տարածաշրջանի ճակատագիրը:

Պիկոյին՝ Ֆրանսիայի նախկին հյուպատոսին, Թոմասը հանդիպեց Կահիրեում: Նա նստել էր Նեղոսի վրա բացվող հսկա պատուհաններից մեկի մոտ և ասես տարված նայում էր փոքրիկ առագաստանավերին, որոնք, առագաստները բացած, նավարկում էին հոսանքին հակառակ: Թոմասը մոտեցավ ու ֆրանսերեն ողջունեց դիվանագետին:

- Բարև Ձեզ, պարո՛ն Պիկո: Սըր Հենրին հայցում է Ձեր ներողամտությունը: Չէ՞ որ գիտեք, որ այստեղ միայն եռացրած ջուր կարելի է խմել: Եթե չեք առարկում, ապա կարող ենք կրկին աչքի անցկացնել այդ փաստաթուղթը, իսկ ես պարտավորվում եմ պատճենը հասցնել Գերագույն կոմիսարին, որպեսզի ստորագրի այն: Այնուհետև դա կուղարկեմ Ֆրանսիայի դեսպանատուն: Համաձա՞յն եք:

Պիկոն համաձայն էր, քանի որ արդեն արել էր այն, ինչ պետք է աներ և հավանությամբ ժպտաց: Նա դեռ անհանգիստ էր այն բանից, ինչ նրա մասին պատմում էին «հյուպատոսարանի գործի» առնչությամբ: Բանն այն է, որ շշուկներ էին տարածվել, թե Բեյրութի հյուպատոսարանում գտնված փաստաթղթերը տնօրինում է Ջեմալ բեյը: Պիկոն վատ էր զգում, քանի որ մարոնական խառնակչի՝ Ջալզալի մեղքով վտանգված էր իր մասնագիտական առաջխաղացումը: Համոզված էր, որ այդ Ջալզալան էր թուրքերին հանձնել ոչ միայն փաստաթղթերը, այլև լիբանանցի հայրենասերների ցուցակները: Օ՜հ, այդ ցուցակներն իսկապես պատճառ կդառնային, որ Ջեմալը դաժանորեն վրեժխնդիր լիներ իրեն դավաճանած արաբներից: Չէ՞ որ Ջեմալը ձախողվել էր նաև այն առումով, որ համոզվել էր՝ արաբները երբեք չեն միանա Կոստանդնուպոլսից հնչած ջիհադի կոչին:

Սակայն Պիկոն մասնավորապես անհանգստացած էր իր վաղեմի

բարեկամ Ժորժի Հադդադի, Աբդուլ Համիդ Զահրավիի համար, ովքեր հիմնադրել էին «Լամարկազին»… Նրան տեղեկացրել էին մահվան դատապարտված ութսունհինգ հոգու մասին: Նրանցից ավելի քան երեսունի վճիռը թուրքերն արդեն ի կատար էին ածել: Բոլորին նա անձամբ գիտեր, իսկ դա նրան ավելի էր վհատեցնում: Արևմտյան դիտորդների կարծիքով՝ բոլոր դատապարտվածները պայքարում էին հանուն նույն գաղափարների. մի բան, որը, Պիկոյի համոզմամբ, սակայն բավականին հեռու էր իրականությունից:

- Ուրախ եմ Ձեզ կրկին տեսնելու համար, պարո՛ն Հարդինգ: Ա՜հ, ցավալի է, թե ինչ է կատարվում Բեյրութում և Լեռնային Լիբանանում: Երբեք՝ անգամ Թամերլանի օրոք, այնտեղ այդպիսի սով չի եղել: Ողջ ցորենը, որ հավաքել էին Բեկաայում, ֆոն դեր Գոլցի և Լիմանի խնդրագրով թուրքերը կրել ու տարել են նրանց բանակի համար: Ցանկացած պատերազմի հետևում միշտ մի պրուսացի է կանգնած լինում: Սիրիական նավահանգիստները շրջափակված են պատերազմի պատճառով, որը, դեռ չգիտենք, երբ է վերջանալու: Այդ ամենին էլ ավելացնենք Աստծո ուղարկած պատիժները: Ըստ ինձ հասած տեղեկությունների՝ մորեխների հսկա մի պարս մթնեցրել է երկինքը: Ասում են, որ հարյուր հազարից ավելի մարդիկ են մահացել քաղցից: Ուզում ենք, որ այնտեղ գնա Կարմիր խաչը, սակայն հիմա դա անհնարին է: Այնտեղ ո՛չ հաց կա, ո՛չ էլ՝ ուտելու մի բան: Անհետացել են շները, կատուներն ու նույնիսկ առնետները: Ի՜նչ ահավոր վիճակ… Գիտեմ, որ Դուք էլ եք ինձ նման ցավում, սակայն չգիտեմ, կտեսնե՞նք կրկին երբեմնի հանգստավետ ու չքնաղ այն երկիրը, որ մեզ այնքան բերկրանք էր պարգևում:

Պիկոն շատ մտահոգ էր երևում: Թոմասի կարծիքով՝ այդ մարդը չափից ավելին գիտեր տեղի ունեցող իրադարձությունների մասին: Հետո խոսեցին սահմանների, գունավոր գոտիների և վերջնական քարտեզների մասին:

- Ի՞նչ եք կարծում, պարո՛ն Հարդինգ, իսկապես հնարավո՞ր է մի կարմիր ու մի կապույտ մատիտով քսան սանտիմետրանոց երկիր ստեղծել:

Թոմասի կարծիքով՝ ամեն ինչ պետք է այլ կերպ լիներ, սակայն պատմությունը ցույց էր տալիս, որ այդ ամենի հիմքում ընկած են մարդկային ամբարտավանությունն ու գոռոզամտությունը: Պատերազմն ու նրա սարսափելի հետևանքները ճակատագրական այն դրսևորումներն են, թե մարդիկ մինչև ուր կարող են հասնել՝ հանուն իրենց նպատակների իրագործման: Արդեն հանրահայտ էին այն բազմաթիվ ոճիրները, որոնք իրականացվել էին հայ բնակչության նկատմամբ. սկսած նրանից, որ

մեծաթիվ հայ պատանիներ գառների պես գլխատվել են արմատական-ների կողմից, մարդկանց նավերից նետել են ծովի խորքը, որ առանց ականատեսների մեռնեն, չեթեների ձեռքով՝ հազարավոր սպանվածներ ու անհետացածներ, գնդակահարված նորակոչիկներ՝ իրենց իսկ զինակից ընկերների կողմից, որոնց հետ ամիսներ առաջ բարեկամներ էին:

Թոմասն իր աչքերով էր տեսել այդ ամենն ու գիտեր, որ ինչ-որ պատմում էին, կատարվածի չնչին մասն էր: Մարդիկ, որոնց հաջողվել էր փախչել Ռաս-ուլ Այնից և Դեյր էզ-Զորից, այնպիսի հրեշավոր բաներ էին պատմում, որ նրանց ցնորվածների տեղ էին դնում:

Ժորժ Պիկոն մնաց լուռ՝ նայելով նրան:

- Թոմա՛ս, գիտե՞ք, որ ես գաղտնի հանդիպում եմ ունեցել Պողոս Նուբարի հետ, խոսել ենք հայ կամավորների մի խումբ ստեղծելու մասին, որը կգործի ֆրանսիական դրոշի ներքո: Ինձ ասել է, որ այն պետք է բոլորին հայտնի լինի որպես Հայկական լեգեոն (զորախումբ): Ինձ թվաց, թե Ձեզ համար հաճելի կլինի այդ մասին իմանալը: Ի դեպ, սրը Հենրիին փոխանցե՛ք իմ լավագույն բարեմաղթանքները, սակայն ավելացրե՛ք նաև, որ Քէ դ՛Օրսեյը համաձայն չէ ձեզ զիջել Մոսուլը: Հայտնի է, որ նավթի հարուստ պաշար կա Միջագետքի հարավում:

Երբ միմյանց հրաժեշտ տվեցին, Թոմասին չէր լքում այն միտքը, որ, ի վերջո, դիմազուրկ պաշտոնյաներ են նրանք, ովքեր, ըստ իրենց ղեկավարների ցանկության, գծում ու նկարում են քարտեզները: Պիկոն հանգիստ կարող էր մարոնական հաստավոր մի առնտրական լինել, մանավանդ դեռ խաղաղ ժամանակներում Բեյրութում շատերին էր ճանաչում: Միակ տարբերությունն այն էր, որ Պիկոն ուներ քսան սանտիմետրանոց մի կարմիր ու մի կապույտ մատիտ:

17. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԻՐԱՔ
ԴԵԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1916-1917թթ.

Նոբլուսում բրիտանական սպաները բաժակ բարձրացրին Միջագետքում անգլո-հնդկական բանակի նոր գլխավոր հրամանատարի՝ գեներալ, սըր Սթենլի Մոդի ղեկավարությամբ հեռավոր Կուտ ալ-Ամարայի գրավման առթիվ: Ոչ մի անգլիացի զինվոր չէր կարող հանգիստ լինել, քանի դեռ գեներալ Թաունսհենդի վրեժը չէր լուծել թուրքերից, ովքեր նրան նվաստացրել էին Քտեսիֆոնում, իսկ այնուհետև՝ դեպի Կուտ ալ-Ամարա նահանջելու ընթացքում: Դա այն ժամանակ էր, երբ երկրորդ մեծ ճակատամարտն ավարտվեց թուրքերի հաղթանակով և բրիտանացիների պարտությամբ: Ուայթհոլում չէին հավատում դրան, և Մեծ Բրիտանիան երբ արթնացավ, նախաճաշը կրկին կոկորդին էր կանգնում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր էր այն, ինչին հասել էր գեներալ Մոդը: Նրա երկրորդ նպատակակետը Բաղդադն էր, և հույս ուներ, որ այնտեղ կմտնի նախքան գարնանամուտը: Բոլորը կրկին բաժակ բարձրացրին՝ համոզված, որ մի օր կհասնեն դրան:

Սըր Հենրին դիմեց արդեն մայորի կոչում ստացած Թոմաս Հարդինգին:

- Մայո՛ր Հարդինգ, Ձեզ ուղարկելու եմ հատուկ առաքելության: Դուք թռչելու եք լեյտենանտ Ջեյմս Սելոմի հետ, ով քաջ ծանոթ է մի վայրի՝ Ան-Նահդա անունով տեղանքին, որը Եփրատի ափին է՝ Բաղդադից մոտավորապես հիսուն մղոն հարավ: Պետք է իմ անձնական նամակը հանձնեք տեղական առաջնորդներից մեկին՝ ոմն Ահմեդ ալ-Սավիին, ով իր հերթին այն կհասցնի տեղական ցեղերի մեջլիս, որպեսզի նրանք մեր զորքերին սատարելու պայմանագիր կնքեն: Այդ հուշագրում պարզաբանվում են մեզ հուզող հարցին առնչվող նախապատմությունն ու մեր հայեցակետը: Պետք է ասեմ Ձեզ, որ խոսքը մի շատ կարևոր հարցի մասին է, քանի որ սըր Սթենլի Մոդին շուտով կհաջողվի մտնել Բաղդադ: Տեսե՛ք, երիտասա՛րդ, այդ երկիրը՝ Իրաքը, ռազմավարական տեսանկյունից շատ կարևոր է Մեծ Բրիտանիայի շահերի համար: Ամեն ինչ ձգձգվում է, իսկ ես, Ձեզանից բացի, ուրիշ մեկին չեմ կարող այնտեղ ուղարկել, այնպես որ՝ ինձ լավ լուրեր բերե՛ք, իսկ ես Ձեր թեկնածությունը կառաջադրեմ ծառայության մեջ առաջխաղացում ունենալու համար: Համաձա՞յն եք:

Թոմասը գլխավոր զորակայանից դուրս եկավ՝ անիծելով իր բախտը: Այդ հռչակավոր մարդը, ում՝ շերիֆ Հուսեյնի հետ ունեցած նամա-

կագրությունը թարգմանում էր արաբերեն, նրան բարձր էր գնահատել, իսկ դա այն վատթարն էր, որ կարող էր պատահել: Սթիմսոնը, ով փորձառու էր, հենց սկզբից էր նրան զգուշացրել. «Աշխատի՛ր աննկատ մնալ, որպեսզի ոչ ոք վրադ հատուկ ուշադրություն չդարձնի, եթե՝ ոչ, ապա խնդիրներ կունենաս»:

Այդ պահին եթե կար մի բան, որը նա բոլորովին չէր ցանկանա, դա այդ նորելուկ, համարյա պատանի, բայց օդագնացության հրաշքն իրենց համար հենց նոր հայտնագործած լեյտենանտներից մեկի հետ մի քարուքանդ, թիթեղներով ու խեժապատ հյուսվածքի կտորներով մի կերպ գլուխ բերված ինքնաթիռով երեք հազար ոտնաչափ բարձրության վրա թռչելն էր: Փաստաթղթի ծրարի վրա կար մեծ կնիք՝ «ԳԱՂՏՆԻ» մակագրությամբ: Կահիրեից թռչելու էին դեպի Աքաբա, որտեղ վերջերս թռիչքուղի էին կառուցել, այնտեղից մեծ ցատկով հասնելու էին մի անմարդաբնակ՝ Բաղանա կոչված վայրը, որտեղից էլ՝ Եփրատի ափին գտնվող Ան-Նահդա: Այնտեղ մնալու էին մի երկու օր, կամ որքան անհրաժեշտ լիներ, ու վերադառնալու էին նույն ճանապարհով: Ութ հարյուր մղոն օդային ուղևորություն Արաբիայի վայրի ու վտանգավոր անապատով… Եթե ընկնեին, հավանաբար երբեք ու ոչ ոք նրանց չէր գտնի: Սպաների զորանոցում սարսափելի բաներ էին պատմում անապատում ծարավից մեռնելու մասին: Փորձեց գլխից հանել այդ հոռետես մտքերը ու երբ տուն մտավ, Էթելն ամուր գրկեց նրան: Միշտ, երբ տուն էր վերադառնում ու դստերը գտնում, ամեն անգամ նույնն էր կատարվում:

Վատը նաև այն էր, որ այդ առաջադրանքի մասին ոչ ոք չպետք է իմանար: Անգամ չէր կարող ասել Սթիմսոնին, ով դարձել էր նրա մտերիմ ընկերը: Այդ պատճառով էլ որոշեց նրան նամակ թողնել, որտեղ անհրաժեշտ ցուցումներ կային այն դեպքի համար, եթե իրեն որևէ բան պատահեր:

Կահիրեում Թոմասի սիրած զբաղմունքներից մեկը հնավաճառների խանութներում որևէ բան փնտրելն էր: Երբ գտնում էր որևէ իր՝ գիրք, կահույք կամ ցանկացած մի այլ բան, որն իրեն հետաքրքրում էր, գնում էր ու տուն տանում: Կահիրեում գտնվելու ժամանակ արդեն շատ հետաքրքրական բաներ էր հավաքել և ուզում էր դրանք տանել Բեյրութ, հենց որ խաղաղություն հաստատվեր: Այդ մասին նա բազմիցս ասել էր Արզումանյանին, ով նրան միշտ հակադարձել էր. «Այն Բեյրութը, որ տեսնես հիմա, ոչ մի աղերս չունի նախկինի հետ: Քաղաքները մարդկանց պես են. պատերազմները նրանց ծերացնում են, մաշում, երբեմն՝

անգամ սպանում»: Ցանկանում էր Բաալբեկն ուսումնասիրել այնպես, ինչպես ոչ ոք դեռ չէր փորձել, ինչպես նաև գիրք գրել այդ վայրի, աներևակայելի մոգականության մասին. դա կարևորագույն մի աշխատություն կլիներ բոլոր ուսումնատենչ մարդկանց համար: Մի՞թե Լևանտ չէր գնացել, որպեսզի իր ձեռքերով դիպչեր այդ քարերին: Մի քանի տարի անց Էթելը նրան այդ գործում կօգնի, թեև դա անհատնում խղճի խայթով կլինի, որովհետև երբ նրան էր նայում, հիշում էր Կարոլինին, նրա արծաթահնչուն ծիծաղը, նրա քնքշությունը, այն հսկա սյուների ներքո միասին ծրագրած բոլոր երազանքները: Սյուներ, որոնք շատ դարեր առաջ մի շատ բացառիկ արարածի հաջողվել էր նախագծել, որպեսզի ընդմիշտ զարմացնեն ճանապարհորդներին:

Երկու օր անց՝ դեկտեմբերի կեսերին՝ լուսաբացին, Կահիրեի նորակառույց ռազմական օդանավակայանից օդ բարձրացան: Թոմասը նստեց առջևի մասում: Ինքնաթիռն անմիջապես ուղղություն վերցրեց դեպի արևելք: Շարժիչը խլացուցիչ աղմուկ էր հանում, որը Թոմասին խանգարում էր խոսել լեյտենանտ Սելոմի հետ: Ներքևում տեսնում էր բուրգերի երկարավուն ստվերը: Նրան հավատացրել էին, որ այդ օդաչուն գիտի իր անելիքը. նա այն սպաների խմբի հրահանգիչն էր, ովքեր որոշել էին ծառայել օդաչուների զորախմբում, որը հետագայում կոչվելու էր Թագավորական օդային ուժեր: Մինչ այդ պահը Թոմասը չէր կարծում, թե թռչելը, բացի ժամանակակից լինելուց և, անշուշտ, մեծ արագությամբ տեղից տեղ գնալուց, այլ հրապուրիչ բան կարող էր ունենալ, եթե, իհարկե, ցանկացած պահի ինքնաթիռը չգահավիժեր:

Ուղևորությունը տևեց ուղիղ օրուկես՝ ներառյալ երթուղու երկու կանգառ-վայրէջքները: Կահիրեից դուրս էին եկել առավոտյան՝ ժամը հինգին, ու Ան-Նահդայում վայրէջք կատարեցին հաջորդ օրը՝ երեկոյան ժամը հինգին: Հոգոց հանեց, երբ մտածեց, որ հաջորդ օրը պետք է նույն փորձությանը դիմանար՝ արդեն հակառակ ուղղությամբ: Նրան իսկապես դուր էր եկել այն, որ կարող էր հիանալ վիթխարի անապատով, որն ամբողջովին անմարդաբնակ էր թվում. իրար հաջորդում էին ցնցող ժայռեղեն գոտիները, մեծ ու լերկ սարերն ու ոսկեգօծ ավազաբլուրները, որտեղ հորիզոնը միախառնվում էր երկնքին: Վերևից օդն այնքան թափանցիկ չէր, ինչպես ինքն էր կարծում: Մի թույլ մշուշ աղավաղում էր շրջակայքի ուրվագծերը: Նրան հիացմունք պատճառեց լեյտենանտ Ջեյմս Սելոմի վարպետությունը, ով ինքնաթիռի կողմնացույցի օգնությամբ գնում էր ճիշտ ուղղությամբ:

Երբ վայրէջք կատարեցին Ան-Նահդայում, չափազանց նեղ թռիչքուղու մոտ նրանց դիմավորեցին քրքրված հագուստներով մի քանի արաբներ: Ինքնաթիռի անվտանգությունն ապահովելու համար մնացին երկու ժամապահ հսկիչներ, իսկ մյուսները ձիերով արշավեցին դեպի հարավ՝ մի վայր, որը կոչվում էր Աբու-Սուվեյր: Այդտեղ հանդիպելու էին առաջնորդ Ահմեդ ալ-Սավիին՝ այն մարդուն, ում Թոմասը պետք է հանձներ սըր Հենրի Մակ-Մահոնի նամակը:

Աբու-Սուվեյր հասան կեսգիշերին մոտ: Նրան զարմանալի թվաց այն, թե ինչպես էին այդ մարդիկ ճամփորդում լրիվ մթության մեջ: Այնտեղ կերան այծի մսով ու ոսպով պատրաստված կերակուր, մի կտոր բարակ ու փափուկ հաց, խմեցին այնպիսի դառը թեյ, որը լիովին տարբերվում էր մինչ այդ իր ըմպած թեյերից: Հետո նրանց թողեցին վրաններից մեկում, որպեսզի հանգստանային: Երկուսն էլ իրենց գցեցին փոշոտ ու թելերը դուրս եկած գորգերի վրա ու ծածկվեցին ուղտի բրդյա կոշտ ծածկոցներով, քանի որ գիշերը ցուրտ էր:

Առավոտյան վեր կացան սոված գայլերի պես ու տեսան, որ արաբները կրակ են վառել, հաց են թխում ու թեյ պատրաստում: Մի բարձրահասակ ու նիհար մարդ մոտեցավ նրանց: Նրա կեցվածքից երևում էր, որ ինքն է առաջնորդը:

- Ես Ահմեդ ալ-Սավին եմ: Աստված ողորմած է: Եկել եք թռչող մեքենայով և ինձ ուղերձ բերել: Բարի՛ գալուստ ձեզ:

Թոմասը հավանության նշան արեց, բացեց պայուսակը, հանեց կաշվե թղթապանակը, որի մեջ փաստաթղթերն էին:

- Ալ-Սավի՛: Աստված ամենազոր է ու մեզ թույլ տվեց այստեղ հասնել անփորձանք: Ահա Ձեզ եմ հանձնում այն, ինչին Դուք սպասում եք: Եթե տարածաշրջանի երևելի մարդկանց խորհուրդը՝ մեջլիսը, ընդունի այս առաջարկը, ապա այդ պահից սկսած Միջագետքի արաբների ու բրիտանական բանակի միջև համագործակցությունը շատ ավելի սահուն կընթանա և երկուստեք կնպաստի թուրքերի դեմ մղվող պայքարին:

Ալ-Սավին վերցրեց փաստաթղթերը՝ գլուխը թեթևակի խոնարհելով և հիացած նայելով Թոմասին ու Ջեյմս Սելոմին:

- Ի սեր ողորմած Աստծո, դուք իսկապես համարձակ ու խիզախ մարդիկ եք: Ինձ պատմել են, որ դուք համարյա մայրամուտին հասել եք ինքնաթիռով, որը թռչում է, ինչպես ճահճուտի սագը: Իրաքի այս տարածաշրջանի ժողովուրդը ձեզ շնորհակալություն է հայտնում ձեր թափած ջանքերի համար: Իսկ հիմա նստեցե՛ք իմ վրանում՝ մի բան ուտելու, իսկ հետո ես ձեզ կուղեկցեմ մինչև ձեր թռչող մեքենան: Հիրավի, Աստված

մեծ է ու ամենազոր: Որքա՞ն ժամանակում Կահիրեից հասաք այստեղ:

Ջեյմս Սելոմը, իր կատարած սխրանքով հպարտ, ժպտալով ասաց.

- Ա՛լ-Սավի, այն պահից, ինչ Կահիրեում նստեցինք ինքնաթիռ ու վայրէջք կատարեցինք Ան-Նահդայում, անցավ մեկուկես օր, սակայն ուժերը վերականգնելու համար յոթ ժամ քնել ենք Բաղանա կոչվող մի վայրում՝ անապատի սրտում:

Ալ-Սավին մնաց զարմացած՝ նրանց նայելով լայն բացված աչքերով և չկարողանալով հավատալ լսածին:

- Մի օր և հաջորդ օրվա կեսը… Դա անհնարին է: Քարավանը, այն էլ՝ արագաքայլ, այդ ճանապարհն անցնում է երկու ամսից ավելի ժամանակում: Ձեզ հավատում եմ, որովհետև դուք եք ինձ ասում, սակայն դա կա՛մ հրաշք է, կա՛մ սատանայի կարողությունների գործը: Աստված ամենազոր է:

Քիչ հետո ալ-Սավին որոշեց, որ նրանք չպետք է մեկնեն, քանի որ պետք է մասնակցեն մեջլիսին՝ Իրաքի հարավի արաբական բոլոր ցեղերի նշանավոր մարդկանց՝ առաջնորդների հավաքին, որը տեղի էր ունենալու երկու օր հետո: Ջեյմս Սելոմը ոչ մի կերպ չառարկեց. նա գտնվում էր մայոր Հարդինգի հրամանատարության ներքո: Նա Թոմասին խոստովանեց, որ ինքն իրականում հրեա է, իսկական անունը Յակոբ Սալոմ է: Նրա ծնողները Սալոնիկից գաղթել էին Լոնդոն, երբ ինքը հինգ տարեկան է եղել: Սելոմը չէր վերադարձել հունական այդ քաղաք, բայց այնտեղ շատ մոտ ազգականներ ուներ և ուզեր, թե չուզեր՝ մի օր այցելելու էր նրանց: Նրանք պատկանում էին սեֆարդիներին, հետևաբար նրա նախնիները մոտավորապես XV դարի վերջին եկել էին Իսպանիայից՝ Տարագոնայի հարավում գտնվող Կոլ Ֆոր անունով մի բնակավայրից: Իր ծագմամբ նա շատ էր հպարտանում:

Ջեյմսը Թոմասին մի տարօրինակ դեպք պատմեց: Նրա կարծիքով՝ երիտթուրքերը իշխանության էին հասել Սալոնիկի հրեաների շնորհիվ: Թվում էր, թե դա նրան այնքան էլ պատիվ չէր բերում, թեև ո՛չ ինքը և ո՛չ էլ Լոնդոնում ապրող իր ընտանիքը նրանց հետ ոչ մի առնչություն չէին ունեցել: Նրա մորեղբայրներից մեկը՝ Աբրահամ Սալոմը, ով նամակագրություն ուներ իր հոր հետ, նրանց տեղեկացրել էր, թե ինչպես է դա տեղի ունեցել:

Թոմասը նրան խնդրեց, որ պատմի եղելության մասին: Ջեյմսն առանց այլևայլության սկսեց իր պատմությունը:

Ամեն ինչ սկիզբ է առել Սալոնիկում տեղակայված օսմանյան բա-

նակի գլխավոր զորակայանում: Դյոնմերը, այսինքն՝ իսլամացած, սակայն իրենց ավանդույթները գաղտնի պահպանող հրեաները, ինչպես նաև հասարակական նոր ու առաջադեմ գաղափարներով տարված մի քանի իսկական հրեաներ, խնդիրներից խուսափելու նպատակով փակ ժողովներ են ունեցել օսմանյան սպայական խմբակների հետ, որոնք աջակցության ու ֆինանսավորման կարիք ունեին:

Ազատության և հեղափոխության գաղափարները, որոնք ուղղված էին սուլթանի ու նրա՝ առաջադիմությունը կասեցնող այլասերված վարչակարգի դեմ, ծնվեցին հենց Սալոնիկի զորանոցներին մոտ գտնվող հին պահեստներում: Այդ գաղափարները վառոդի հոտի պես տարածվեցին բանակում և կայսրության որոշ պաշտոնյաների շրջանում, ինչպես, օրինակ, Թալեաթ փաշայի դեպքում էր, ով վերջում դարձել էր «Իթթիհադի» կառավարության առաջնորդը:

- Մենք մեղքից զուրկ չենք,- ժպտալով ասաց Սելոմը:

- Այո՛,- վրա բերեց Թոմասը,- չէ՞ որ ասում են՝ «Ցանկացած հեղափոխության հետևում մի հրեա կա կանգնած»:

Հաջորդ օրը տեղի էր ունենալու մեջլիսը, որը վարելու էր ալ-Սավին: Ընտրվել էր մի վիթխարի արմավենիների պուրակ՝ արևից պաշտպանվելու համար: Օազիսը սկսեց լցվել ուղտի բրդից պատրաստված մեծ վրաններով, որոնք բացազատում էին մի ակնթարթում: Վրանները տեղանքին բնակավայրի տեսք տվեցին: Մեջլիսին մասնակցելու էին շուրջ քառասուն ընտրյալներ: Թոմասը նկատեց, որ իրենց՝ երկու անգլիացիների ներկայությունը չէր ազդում ո՛չ նրանց, ո՛չ էլ նրանց սովորույթների վրա: Թեև սը Հենրին անհամբեր սպասում էր իրենց լուրերին՝ նշանավոր արաբների խորհրդի որոշմանը, բայց այդ քննարկմանն ուղղակի ներկա լինելն առավել հավաստի կդարձներ իր զեկույցը:

Երբ Թոմասն ու Սելոմը զբոսնում էին, արաբներից մեկը մոտեցավ նրանց.

- Ճի՞շտ է, որ դուք անգլիացիներ եք: Աստված ողորմած է ու ձեզ թույլ է տվել հասնել մինչև այստեղ, որտեղ, ասում են, մի ժամանակ դրախտն է եղել: Սակայն ձեզ մի բան կասեմ: Դուք՝ անհավատներդ, միայն կարող եք լինել Դար Ալ Իսլամում, այն էլ՝ այնտեղով անցնելիս: Այս հողը մուսուլմանական է, ու կգա ժամանակ, երբ ցանկացած անհավատի կարգելվի այստեղ մնալը:

Մարդն ավելի մոտեցավ նրանց և ցածրաձայն շշնջաց.
- Լսե՞լ եք ալ-Աֆղանիի մասին: Աստված իր ձեռքը դրել է նրա վրա, այս-

տեղ դեռ շատերը նրան չեն հասկանում: Մահացել է քսան տարի առաջ, սակայն հիմա է նրա ցանածը կանաչ բողբոջներ տալիս: Ես նրան չեմ ճանաչել, բայց հայրս, այո՛, նրան ճանաչել է, քանի դեռ ալ-Աֆղանին ստիպված Կոստանդնուպոլիս չէր փախել: Գիտենք, որ հետո հասել է Եվրոպայի այդ մեծ քաղաքը՝ Փարիզ: Մի անգամ ինձ ասացին, որ դա աշխարհի կենտրոնն է, բայց դա սուտ է, Մեքքան է: Այնտեղ՝ Փարիզում, ալ-Աֆղանին հասկացավ, որ իսկական մուսուլմաններս պետք է վերադառնանք մեր ակունքներին, թեև շատերն են իրենց հանձնում ժամանակի հորձանուտին: Ավելի հեշտ է ալ-Ֆուրատով իջնելը, քան բարձրանալը. պատկերացրե՛ք փոքրիկ ձկնկուլներին, որ սահում են հորձանքի քշած-բերած ճյուղերի վրա, մինչդեռ նրանց ակունքները ձյունածածկ վիթխարի լեռներում են: Մենք պետք է գտնենք Դուրանի, Հադիսների, Սուննիների ակնաղբյուրները, եթե չենք ուզում, որ անհավատները տիրեն Դար Ալ Իսլամին: Աստված չանի: Ես եղել եմ Մուհամմեդ Աբդուի աշակերտը, ու պետք է իմանաք, որ երբ թուրքերը հեռանան, դուք չեք կարող ընդմիշտ մնալ այստեղ, այնպես որ՝ դուք էլ եք այստեղից հեռանալու: Ինքներդ ձեզ չխաբեք, սա ձեզ ձեռնտու տարածք չէ: Չկարծեք, թե ձեզ կհաջողվի արաբների հողը դարձնել ձեր ընդարձակ կայսրության ևս մի նոր գաղութ: Աստված ձեզ հետ:

Տղամարդը հեռացավ՝ թեթևակի կաղալով: Մինչ այդ Թոմասը որևէ արաբից երբեք այդպիսի խոսակցություն չէր լսել: Այնպիսի մտածողներ, ինչպիսիք էին ալ-Աֆղանին ու նրա աշակերտները, փոխում էին արաբական նիրհուն աշխարհը: Ի վերջո, այն, ինչ կատարվում էր Բեյրութում կամ Մեդինայում, նույն մեդալի տարբեր երեսներն էին:

Մեջլիսն ավարտվեց ազգային մի պարով, որով բոլորն իրենց գոհունակությունն արտահայտեցին ձեռք բերված համաձայնության առթիվ: Թոմասը հիշեց Սայքս-Պիկո համաձայնագիրը. եթե այդ արաբներն իմանային դրա մասին, ապա հազիվ թե այդ աստիճան գոհ և ուրախ լինեին: Ուսերը թոթվեց: Շատ վտանգավոր էր խաղալ ժողովուրդների արժանապատվության հետ, մանավանդ՝ արաբների դեպքում, որոնց մեծամասնության պարագայում կրոնը, բացի հավատք լինելուց, նաև իրենց օրենքն էր, ավանդույթն ու քաղաքականությունը:

Ջեյմս Սելոմը և Թոմասն օդ բարձրացան լուսաբացին: Սավառնակն արագ չէր բարձրանում, սակայն կամաց-կամաց հաղթահարում էր ջերմային ուժեղ հոսանքները, որոնք կարող էին շատ ուժեղ ցնցել շարժիչը: Թռիչքն ավելի էր բարդանում անընդհատ փչող հանդիպակաց քա-

մուց: Այն պահին, երբ փորձում էին վայրէջք կատարել, շարժիչը կանգ առավ, իսկ պրոպելերը շատ աղմուկ, ճարճատյուն հանելուց հետո անշարժացավ: Սելոմը փորձառու օդաչու էր ու շատ սառնարյուն. առանց լուրջ վնասների նրան հաջողվեց վայրէջք կատարել Աքաբային մոտ մի վայրում: Այլ ելք չունեին. պետք էր կիզիչ արևի տակ քայլել տասնհինգ մղոն: Բարեբախտաբար, ջրի պաշար ունեին: Բախտը նրանց ժպտաց, հանդիպեցին մի խումբ բեդվինների, ովքեր, նրանց տեսնելով, զարմացան: Անմիջապես առաջարկեցին ուղեկցել մինչև Աքաբա, ուր հասան երկու օր անց, երբ բոլորը նրանց կորած էին համարում:

Ջեյմսը որոշեց մնալ ու հետ վերադարձավ զինված պարեկախմբի հետ՝ փորձելով վերանորոգել սավառնակը: Նա համոզված էր, որ իրեն կհաջողվեր կրկին օդ բարձրացնել ինքնաթիռը: Թոմասն էլ նստեց Նորին մեծության զրահանավը, որն ուղևորվեց դեպի Պորտ Սայիդ:

Երբ մի քանի օր անց կրկին տուն մտավ, Էթելը նրան գրկելուց հետո մտախոհ դեմքով հարցրեց, թե որտեղ էր այդքան ժամանակ: Նա դստերը բացատրեց, որ երկար ճամփորդություն էր կատարել փոքրիկ ինքնաթիռով, ուղտի վրա, ոտքով, նավով, գնացքով և վերջապես ավտոմեքենայով: Էթելը նրան նայեց սևեռուն հայացքով՝ առանց հասկանալու, թե արդյոք իրեն նոր հեքիաթ չէր պատմում… Միաժամանակ շշնջում էր՝ «Շարունակի՛ր, շարունակի՛ր…»:

Նա սըր Հենրիի համար շարադրեց հիսուն էջանոց մի զեկույց: Մանրամասնորեն նկարագրեց այն ամենը, ինչ տեղի էր ունեցել Կահիրեից թռչելուց սկսած մինչև իր վերադարձը: Նաև փորձեց բացատրել, թե ալ-Աֆղանիի և նրա դպրոցի մասին ինչ էր իրենց պատմել այն արաբը, որի անունն անգամ չգիտեր. «Շատ փոփոխություններ են կատարվելու իսլամում, և դրանցից ոչ մեկը չի նպաստի Արևմուտքի հետ արաբ մուսուլմանների հարաբերությունների բարելավմանը: Օսմանյան խալիֆայության ավարտը կարևոր, խոշոր փոփոխություն է ունենալու ներարաբական աշխարհի համար, որը ոչ միայն նոր է գտել ազատության իր ճանապարհը, այլև կորցրել է երկյուղը նրա հանդեպ, ով հավակնում է նրան պարտադրել իր կամքը»: Մի երկու օր անց, երբ սըր Հենրին նրան կանչեց, Թոմասը նկատեց, որ իր զեկույցը Բարձրագույն կոմիսարի վրա մեծ տպավորություն էր թողել:

- Մի տեսե՛ք, տեսե՛ք: Ես գաղափար անգամ չունեի, որ մեր շարքերում կա մի երկրորդ Քիփլինգ[36]: Չե՞ք կարծում, մայո՛ր, որ զեկույցը մի

[36] Ջոզեֆ Ռադյարդ Քիփլինգ (1865-1936), անգլիացի հայտնի գրող, բանաստեղծ և արձակագիր, 1907 թ-ին Նոբելյան մրցանակի է արժանացել գրականության ասպարեզում:

փոքր, ասենք, չափազանցված է: Չեմ ասում, որ շարադրանքը վատ է, սակայն եթե անկեղծ լինեմ, ապա ինձ թվում է, որ չափից ավելի գեղարվեստական է: Դուք իրո՞ք կարծում եք, թե մուսուլմանները մեր դեմ կպատերազմեն: Ես, անշուշտ, չեմ կարող հակաճառել Օքսֆորդի համալսարանի ականավոր պրոֆեսորին, բայց իմ համոզմամբ՝ այդ արաբներին իրենց ուղտերի մրցավազքն էլ է լիովին բավական:

Կարդալով զեկույցը՝ սըր Հենրին սահմանափակվել էր միայն մեջլիսի նշանավոր մարդկանց կողմից տրված հավանությամբ: Զեկույցում Թոմասի արտահայտած մտահոգությունները նրան բավարար չափով փաստարկված չէին թվում: Ինչպես Բարձրագույն կոմիսարը, այնպես էլ սակավաթիվ եվրոպացիներ էին հակված այն տեսակետին, որ արաբական աշխարհը կարող է արագ առաջընթաց ապրել: Թոմասը համոզված էր, որ երբ Արևմուտքն արձագանքեր դրան, այդ ժամանակ արդեն ուշ էր լինելու, քանի որ նրանք չէին ճանաչում Բեյրութի կիրթ և ուսյալ արաբներին:

Թոմաս Հարդինգը Կահիրեում մնաց մինչև Ջաֆֆայի բաղձալի գրավումը՝ 1917 թվականի նոյեմբերը: Այդ՝ Պաղեստինի արշավանքի բարդ իրադրության ընթացքում էր, երբ գեներալ Ալենբին նրան կանչեց Գլխավոր շտաբ: Այդ ժամանակ Թոմասն աշխատանքի էր նշանակվել հետախուզական ծառայությունում: Բանակի նկատմամբ նրա հետաքրքրությունը մեծ էր, թեև չէր հասկանում այն անձանց մտածելակերպը, ովքեր, ընդունելով ռազմական հիերարխիան, մի շարք նորմեր, հրամաններ և այլն, չէին կարող քննարկել դրանք: Զորանոցներում տիրող մթնոլորտը ցանկացած մարդու վերածում է վայրենու, անվերջանալի հերթապահությունները, որոնց ավարտին բոլորը հարբում են, փակ շինության ներսում առկա իրավիճակը, նոր ու անիմաստ հրամաններին սպասելը յուրաքանչյուրին զրկում են այլևս ազատ մտածելու կարողությունից, կյանքի իմաստը դառնում են եղջերաշեփորի ազդանշանները, նորակոչիկների հրացաններ մաքրելը, անհամ սնունդն ու շատերի՝ ցնցուղների ներքո ձեռնաշարժությամբ զբաղվելը:

Միայն այն ժամանակ, երբ վերադառնում էր տուն, իր ընտանեկան մթնոլորտում վերստին գտնում էր իր եսը: Էթելն արդեն վեց տարեկան էր ու դառնում էր խելացի, ուշիմ և կամային աղջիկ:

Եվրոպայում ընթացող պատերազմը կամ դրա մասին այն լուրերը, որ հասնում էին Կահիրե, վկայում էին մեկ բան. աշխարհամարտը փոխարկվել էր մահացու ճոճանակի, որը մի կողմից մյուսն էր տատանվում՝

առանց պարզորոշ ցույց տալու հաղթողին: Վերդենը փաստում էր այն մասին, որ թեև Ֆրանսիան պարտվեց ճակատամարտում, սակայն նրա նոր ռազմավարությունը հաջողությամբ էր պսակվելու: Դա պատերազմի բեկումն էր, ու թեև ուշ, սակայն նույնիսկ գերմանացիները դա հասկացան: Մյուս կողմից հոգնածությունը սկսել էր ազդել պատերազմող երկրների վրա: Արևելքում թե՛ մի կողմի և թե՛ մյուսի համար կարևորը Պաղեստինի արշավանքն էր:

Անգլիացիները գրավել էին Սինայի թերակղզին, Նեգևը և Պաղեստինի ողջ հարավը: Երբ գրավեցին Գազան, Ալենբին իր զորքերին կոչ արեց. «Հիմա՝ դեպի Ջաֆֆա»: Այդ զինվորականը, որ մտածում էր որպես մարդ-քաղաքացի ու գործում որպես քաղաքագետ, իրականում պրագմատիկ, օգտապաշտ անհատ էր, ու նրա համար կարևոր չէր այն, որ Ժոֆրեն ու Հեյգն անվեհեր մարտնչում էին ցեխակոլոլ խրամատներում: Պաղեստինի շողշողուն արևը կարծես շատ կենարար ազդեցություն էր ունենում անգլո-եգիպտական զորամիավորման մարտական զորախմբերի և նրանց աջակցող ֆրանսիական, հրեական, արաբական, հայկական, նույնիսկ վերջում նրանց միացած իտալական գումարտակների վրա, որոնք ասես պատրաստ էին կյանքի կոչել ևս մեկ խաչակրաց արշավանք, այս անգամ՝ թուրքերի դեմ:

1917 թվականի վերջին Ալենբին Երուսաղեմի դարպասների մոտ էր: Դեկտեմբերի 9-ին՝ թեև արևոտ, բայց մի սառնաշունչ օր, գրավեց արվարձանները, իսկ 11-ին այդ հինավուրց քաղաքում քայլում էր այնպես, ասես զբոսանքի էր դուրս եկել: Նրան ուղեկցող բազմաթիվ սպաների շարքում էր նաև Թոմաս Հարդինգը, ով խորհրդածում էր այն մասին, որ ընդամենը քսան տարի առաջ կայսեր Վիլհելմ Երկրորդն էր Ջաֆֆայի դարպասով ներս մտել՝ սպիտակ ձիուցքին հեծած, գլխին՝ շողշողուն սաղավարտ՝ թևերը բացած ոսկեհուռ արծվի քանդակը վրան: Իշխանության և ամբարտավանության իսկական անհեթեթ մի ցուցադրություն էր դա, որով ցանկանում էր դառնալ գերմանացիների կայսրն ու միաժամանակ քրիստոնյաների արքան, ով աշխարհը փոխելու համար ձեռքը մեծահոգաբար մեկնում էր իսլամին. աշխարհ, որից մնացել էին ավերակներ, քարուքանդ կամ այրված շենքեր և արագ փախուստի դիմած թուրքեր ու գերմանացի սպաներ:

Ալենբին, ով իմաստուն մարդ էր, սակայն գիտեր, որ այդ պահն արաբների համար կարևոր նշանակություն ուներ: Թուրքական լուծը պատմության գիրկն էր անցել: Սկսվում էր նոր դարաշրջան, որում Մեծ

Բրիտանիան շատ ասելիք էր ունենալու: Դա թերևս արվելու էր ալ-Աֆդանիի նման մարդկանց բարյացակամության օգնությամբ. մարդիկ, ովքեր աշխարհընկալման եղանակը փոխում էին իսլամի տեսանկյունից: Անկախ այն առաջադեմ գաղափարներից, որ Թոմասը որոշ ժամանակ առաջ Բեյրութում քննարկում էր մուսուլման ու քրիստոնյա իր արաբ բարեկամների հետ, հանգեց այն եզրակացությանը, որ դրա վերջը բախում էր լինելու արմատական իսլամի, որը չէր համաձայնում փոխել իր կանոնները, և նրանց միջև, ովքեր ցանկանում էին իսլամը հարմարեցնել արդի ժամանակներին:

Այդ ժամանակահատվածը շատ կարևոր էր բոլորի համար: Երուսաղեմի մուսուլման ու քրիստոնյա արաբներն ազատվել էին օսմաններից: Հրեաները ձգտում էին վերադառնալ Սիոն, իսկ քրիստոնյաները համոզված էին, որ Լեպանտոյից հետո դա պատմության ամենախաղաղ ժամանակաշրջանը կլինի:

Մինչ երկար ընդմիջումից հետո Թոմասը կվերադառնար Բեյրութ և կանցներ առօրյա կյանքին, դեռ շատ ժամանակ էր անհրաժեշտ: Ի՞նչ կլինի այդ ժամանակ… Ֆրանսիացիներն ուզում էին ձեռք բերել մանդատ՝ կառավարման իրավունք Կիլիկիայի հարավում և Մեծ Սիրիայում, ներառյալ՝ Լեռնային Լիբանանն ու ծովեզերքը՝ մինչև Պաղեստինի հետ սահմանը:

18. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ, 1918թ.

Ավգուստուս Նյումանը, ով միշտ հայտնվում էր ամենաանսպասելի պահերին, Թոմասի հետ կապի մեջ մտավ Գլխավոր շտաբի միջոցով: Իրար հանդիպեցին Երուսաղեմում՝ քաղաքի պարիսպների մոտ գտնվող նոր գլխավոր զորակայանում, որի կառուցումը Ալենբին շուտով ավարտին էր հասցնելու: Թոմասը գրկեց իր բարեկամին ու նրան հրավիրեց՝ իր հետ սպաների ճաշարանում ընթրելու: Բախտի բերմամբ գտել էին մի հայի, ով լավ խոհարար էր: Բոլորը գոհ էին նրանից: Ալենբին այդ հայ խոհարարին հանգստի մի քանի օր տվեց, երբ համոզվեց, որ իր տղաները լավ սնվելուց հետո բարձր տրամադրություն էին ունենում, իրար հետ մրցում էին, թե ով կճարեր ամենալավ ձուկը կամ Պաղեստինի լավագույն գառը:

Երբ Թոմասի հետ կարծիքներ էին փոխանակում, Ավգուստուսից լավատեսություն էր հորդում:

- Մի տե՛ս, լավ էլ տեղավորվել եք այստեղ: Երջանիկ մարդիկ եք: Կարծես այս հինավուրց քաղաքն ի սկզբանե ձեզ էր սպասում: Ինչ-որ առումով այդպես է: Այստեղ բոլորն էլ արդեն կուշտ էին թուրքերից: Այդ Ջեմալը շատ հավակնոտ մարդ է, ու բոլորովին էլ նրա սրտով չէ կորցնել թագի զարդը: Նրան լավ ճանաչելով՝ պատկերացնում եմ, թե ինչպես է այժմ փնտրում մեկին՝ քավության մի նոխազի, ում վրա բարդի իր անկարողության ողջ պատասխանատվությունը: Անշուշտ գիտես, թե Երուսաղեմն ինչ խոշոր նշանակություն է ունեցել Սուրբ գրքի երեք մեծ կրոնական դավանանքների՝ հրեաների, մուսուլմանների ու քրիստոնյաների համար… Պատահական չէ իմ այստեղ գալը: Ես Լոնդոնում էի, հանդիպել եմ արտգործնախարար սըր Արթուր Բալֆուրի հետ: Հանգամանքներն ընթանում են այնպես, որ կարծես սիոնիստները գործում են վաղօրոք մշակված սցենարով: Ամեն հարց լուծվում է՝ ըստ նրանց տեսանկյունի, ու մարդ մտածում է, որ պատահականությունից բացի՝ ինչ-որ մի բան էլ կա: Ուշադրությո՛ւն դարձրու, թե ինչպես պաշտոնաթող եղավ վարչապետը՝ Ասկվիտը: Քեզ մի քիչ կպատմեմ այդ մասին: Երբ պատերազմը սկսվեց, Ռուսաստանի հրեաները գերմանացիներին ողջունեցին որպես իրենց ազատարարների: Վերջին տարիներին Ցարական Ռուսաստանում հրեաների դեմ հալածանքները դարձել էին հաճախակի: Եվրոպայում հրեաներն ունեն շփման մի ընդհանուր լեզու՝ գեր-

մաներենը: Ինչ խոսք, կենցաղային մակարդակով «իդիշը»[37] կատարյալ լեզու է մեր խորհրդածությունների համար: Խնդիրն այն է, որ մենք դուր չենք գալիս գերմանացիներին: Հիմա Բեռլինում խոսում են միայն եվգենիկայի,[38] առաջնակարգ և երկրորդակարգ ռասաների մասին: Նրանց կարծիքով՝ հրեաներս չենք պատկանում անգամ երրորդ կարգին… Բայց թո՛ւյլ տուր շարունակել: Ես ճանաչում եմ այդ Շեյմ Վեյցմանին, նրա հետ խոսել եմ Լոնդոնում: Խելացի ու ճկուն անձնավորություն է, հասցրել է շահել Չերչիլի ու Լյոյդ Ջորջի վստահությունը: Ասկվիտը երբեք չի եղել հրեաների մեծ բարեկամը, եթե չասենք, որ հակասիոնիստ է, որը նույնը չէ, ինչ՝ հակասեմիտականը: Այնուհետև կաբինետ մտավ Հերբերտ Սամուելը: Իմ կարծիքով՝ Սայքսի և Պիկոյի միջև կնքված այդ նշանավոր համաձայնագրի գաղափարը ծագել է Լյոյդ Ջորջի և Հերբերտ Սամուելի հանդիպման ընթացքում՝ Վեյցմանի հետ ճաշկերույթից հետո: Սամուելն իր պլանը ներկայացրեց նախարարների խորհուրդ, և ո՛չ Ասկվիտը, ո՛չ Մոնտեգյուն և ո՛չ էլ մյուսներն այն սկզբում չընդունեցին: Սակայն գիտե՞ս՝ դա նման է երկրաշարժի. ոչ ոք չի կարող փոխել նրա ռիթմը: «Deux ex machina!»:[39] Անսպասելիորեն Լյոյդ Ջորջը նշանակվեց պետական պաշտպանության նախարար: Կահիրեին տրամադրվեցին մեծ միջոցներ, ինչի շնորհիվ Ալենբին հաղթում է Պաղեստինյան ռազմարշավում: Այնուհետև Ասկվիտը ստիպված թողեց պաշտոնը, իսկ Լյոյդ Ջորջը դարձավ վարչապետ, և տե՛ս, թե որտեղից որտեղ արտգործնախարար նշանակեց Բալֆուրին՝ ջերմեռանդ պրոսիոնիստին: Ի՞նչ ես կարծում,- Ավգուստուս Նյումանը հոգոց հանեց,- չգիտեմ՝ երբևէ քեզ ասե՞լ եմ, որ ես մորս կողմից նույնպես հրեական արյուն ունեմ: Այնպես որ՝ իմ գաղտնիքներից մեկն էլ իմացար: Սակայն շարունակենք: Ցարական վարչակարգն անցյալ տարվա սկզբներից անկում է ապրում, նրա հետ՝ նաև սիոնիստների մեծագույն թշնամիները: Գիտե՞ս, թե ինչ եմ մտածում: Հակասեմիտիզմը ծնունդ է առել Պրուսիայում: Պրուսացի յունկերները միշտ էլ համոզված են եղել իրենց ռասայական գերազանցության առումով: Նրանք սիրում են իրենց նախնյաց տոհմը, կարգուկանոնը, սեփականությունը, հիերարխիան. վախենում են նրանցից,

[37] Արևելյան Եվրոպայի հրեաների ավանդական ժողովրդական լեզուն: Այն եբրայերենի ու գերմաներենի խառնուրդ է, հանդիպում են նաև ռուսերեն ու լեհերեն բառեր: Գրվում է եբրայական այբուբենով (ծանոթագրությունը՝ հեղինակի):

[38] Ուսմունք «մարդկային բնությունը» կենսաբանական եղանակով «բարելավելու» մասին:

[39] Աստված՝ իջած մեքենայի միջոցով՝ ինչ-որ ողբերգական հարցի երջանիկ լուծում տալու համար:

ովքեր իրենց պես չեն՝ օտարերկրացիներից, նրանցից, ովքեր ուզում են ամեն ինչ փոխել, ովքեր միշտ անհանգիստ են՝ ինտերնացիոնալիստներից, մարքսիստներից, կոմունիստներից ու խորհրդային քաղաքացիներից: Ո՞վ է կանգնած այդ ամենի հետևում: Հրեաները, որոնց նախնյաց տոհմը, իրավամբ, ամենահինն է, սիրում են գրքեր, երազում են Ավետյաց երկրի մասին, քանզի նրանց թույլ չեն տվել, որ որևէ բան ունենան, ու ամենից շատ այն կարծիքին են, որ իրենց մտավոր ներուժի շնորհիվ է, որ հիերարխիան վերապահվել է իրենց: Գիտե՞ս, որոշ նմանություն կա հրեաների ու հայերի միջև. հրեաներն ամբողջ օրն իրար հետ են վիճում, իսկ հայերը՝ բոլորի: Ինչևէ: Երբ հյուսիսամերիկացիները մտան պատերազմի մեջ, հրեաների՝ իրենց համար պետություն ունենալու ակնկալիքը մեծացավ: Ֆրանսիացիներին շատ էլ դուր չի գալիս հրեաների՝ այստեղ՝ Պաղեստինում հաստատվելու գաղափարը, բայց այդ տեսակետը մյուս կողմից էլ ուժեղանում է անգլիացիների համաձայնությամբ: Ինչ վերաբերում է արաբներին, ապա ոչինչ չեն անում, որ կանխեն այդ գործընթացը: Նույնիսկ իրենց լավագույն հողերը վաճառում են նրանց, ովքեր վճարունակ են, այսինքն՝ հրեաներին, իսկ հետո բողոքելու են իրենց սև բախտից: Ինչ որ է: Արթուր Բալֆուրը սերտ կապերի մեջ է եղել լորդ Ռոտշիլդի՝ Մեծ Բրիտանիայի ու թերևս Եվրոպայի հրեական համայնքի մտքի առաջնորդի հետ: Ինչպես ինձ բացատրեց Բալֆուրը, Ռոտշիլդը նրանից երեք բան է խնդրել. Պաղեստինը պետք է վերածվի հրեական ազգային տան, հրեական ներգաղթին ոչ մի սահմանափակում չպետք է լինի, ու, վերջապես, հրեաները պետք է լինեն ինքնավար: Ոչ մեկից ոչ մի կախվածություն… Խելամիտ չէ՞: Կարծում եմ՝ այո՛, ու քանի որ ինձ համարում եմ հրեա, այս հարցում սուբյեկտիվ եմ… Բանն այն է, որ Լյոյդ Ջորջը, Բալֆուրը, Հերբերտ Սամուելը և լորդ Ռոտշիլդը կուլիսների հետևում հասան այն բանին, որ նախարարների խորհրդի մյուս անդամներին համոզեցին, որ համաձայնեն հրեաների պահանջների հետ, թեև սկզբում դեմ էին դրանց: Ասեմ, որ Ուայթհոլում փոխվել է տեսակետը, ու հիմա ամեն ինչ այլ կերպ է լինելու:

Նյումանն ինչ-որ բան փնտրեց իր պիջակի ներսի գրպանում:

- Ուզո՞ւմ ես կարդալ հայտարարությունը, ես ունեմ դրա պատճենը:

Թոմասն այնտեղ՝ Երուսաղեմի պարիսպների մոտ վերցրեց այդ փաստաթուղթը և բարձրաձայն կարդաց.

Արտգործնախարարություն, 2-ը նոյեմբերի, 1917թ.

Մեծարգո Լորդ Ռոտշիլդ,

Պատիվ ունեմ Նորին Բրիտանական Մեծության անունից Ձեզ փոխանցելու սիոնիստական հրեաների արտահայտած իղձերի վերաբերյալ հայտարարությունը, որի տեքստը ներկայացվել է նախարարների խորհուրդ, քննարկվել և արժանացել հավանության: Ըստ այդմ՝

«Նորին Մեծության կառավարությունը հավանություն է տալիս Պաղեստինում հրեա ժողովրդի համար հրեական ազգային տան ստեղծմանը և իրենից կախված ամեն ջանք կգործադրի, որպեսզի իրագործվի այդ նպատակը՝ հստակորեն նկատի ունենալով, որ երբեք չի ձեռնարկվի որևէ քայլ՝ ո՛չ ի վնաս Պաղեստինի, ո՛չ հրեաների քաղաքացիական և կրոնական իրավունքների և ո՛չ էլ քաղաքական այն կարգավիճակի, որից ցանկացած այլ երկրում օգտվում են հրեաները»:

Ես շատ շնորհապարտ կլինեմ Ձեզ, եթե ինձ օգնեք, որ Սիոնիստական Ֆեդերացիան տեղեկանա այս հայտարարությանը:

Հարգանքով՝ Արթուր Ջեյմս Բալֆուր

Թոմասը գլխով և երկար սուլոցով համաձայնության նշան արեց.

- Հը՜մմ… Զարմանալի է: Ասկվիտի հետ անհնարին կլիներ: Ասել է թե Պաղեստինի մեծ մասը կարող է ողջ աշխարհի հրեաների հայրենիքը դառնալ: Համաձայն եմ, սակայն չգիտեմ, թե ինչ կարող է պատահել, երբ շերիֆ Հուսեյնն իմանա այս մասին: Նրանք համոզված են, որ անգլիացիներն իրենց կօգնեն արաբական թագավորություն ստեղծելու գործում: Անշուշտ, Երուսաղեմն այդ հարցում գլխավոր դերակատարներից է: Մակ-Մահոնը նրանց խոստացավ, որ կհամագործակցի այդ առումով: Չգիտեմ, թե ինչ կլինի, սակայն այս ամենն արաբներին մեծ անախորժություն կպատճառի:

Ավգուստուս Նյումանն ուշադիր հետևում էր իր բարեկամի արձագանքին.

- Քեզ հետաքրքիր մի բան կպատմեմ, որ հասկանաս, թե ինչ է ճակատագրի ձեռքը: Գիտե՞ս, թե ով է ներկայացրել Շեյմ Վեյցմանին՝ «Մանչեսթեր Գարդիան»-ի հրատարակիչ Չ. Պ. Սկոտին: Եթե կուզես ավելի ճիշտ իմանալ՝ ես. մի փոքրիկ ծառայություն մի հրեայից մյուսին: Հետո Վեյցմանին Սկոտը ներկայացրեց Արթուր Բալֆուրին, Ուինսթոն Չերչիլին և Լյոյդ Ջորջին: Նրանք նախապես գաղափար էին կազմել այդ հարցի մասին, սակայն նախքան Վեյցմանի[40] հետ ծանոթանալը ոչ մեկը հստակ պատկերացում չուներ սիոնիզմի վերաբերյալ: Ճակատագիրն

[40] Նա հայտնագործել է Clostridium acetobutylicum մանրէի բակտերիալ ֆերմենտացիան՝ ացետոն ստանալու համար, որն անհրաժեշտ է կորդիտի արդյունաբերական արտադրանքում (ծանոթագրությունը՝ հեղինակի):

ընտրեց ինձ, որպեսզի ես նրանց աջակցեի այդ խաղում: Հիմա ասում են, որ Լյոյդ Ջորջը հիացած է այդ անձնավորությամբ, ում հաջողվել էր ստանալ ացետոն՝ պայթուցիկ նյութերի վիթխարի արտադրանք՝ ռումբեր ու արկեր պատրաստելու համար: «Դուք իսկական տաղանդ եք: Խնդրե՛ք ինձ, ինչ որ կամենաք, ինչ որ Ձեր մտքով անցնի». ինքդ էլ գիտես, որ սրանք շնորհակալական բացականչություններ են: Սակայն երբ մեկը քեզ ասում է՝ «Քեզ ողջ աշխարհը կնվիրեի», դա արդեն ուրիշ է: Եվ Վեյցմանն առիթը չկորցրեց. սևեռուն նրան նայեց ու առանց երկմտելու պատասխանեց. «Հրեական պետություն Պաղեստինում»: Ռուսական հրեաները, ինչպիսին Վեյցմանն է, մինչև կոկորդները կուշտ էին ցարական հալածանքներից, այդ պատճառով էլ ծափահարություններով ողջունեցին պատերազմը՝ ընդդեմ Ռուսաստանի: Տենչում էին գերմանացիների հաղթանակը: Սակայն Վեյցմանը, ով հստակ գաղափարների տեր մարդ է, հենց սկզբից խաղաքարտը դրեց Անգլիայի վրա: Քեզ հիշեցնեմ՝ գերմանացի հրեաները ցանկանում էին, որ անգլիացիները պարտվեն Պաղեստինի ռազմաբշավում: Սակայն մենք ահա այստեղ ենք, իսկ հիմա ամենակարևորն այն է, որ տեսնենք՝ ի վիճակի՞ ենք պահել հավասարակշռությունը: Բոլորովին էլ հեշտ չի լինի: Մերձավոր Արևելքն աշխարհի ամենասայթաքուն վայրն է:

Թոմասը համաձայն էր այդ դատողության հետ: Նա բոլորից լավ գիտեր, թե սըր Մակ-Մահոնը ինչ էր խոստացել շերիֆ Հուսեյնին, նաև այն, թե վերջինս ինչ էր խոստացել՝ հանուն բրիտանացիների: Լորդ Բալֆուրի այդ նամակը՝ ուղղված Ռոտշիլդին, ամեն ինչ բարդացնելու էր: Նա այնքան էլ լավատես չէր:

Նյումանը հանկարծ բղավեց.

- Նայի՛ր, երիտասա՛րդ, ձյուն է գալիս:

Իրոք այդպես էր, ընդամենը մի քանի րոպեում Երուսաղեմը ծածկվեց ձյունով: Փորձելով չսայթաքել՝ վազեցին դեպի բրիտանական զորանոց: Նյումանը քա՜հ-քա՜հ ծիծաղում էր.

- Երիտասա՛րդ, քեզ չէ՞ի ասում՝ աշխարհի ամենասայթաքուն վայրն է:

1918 թվականի առաջին օրերն էին: Մի քանի օր անց նրանք խորհրդակցություն ունեցան, որ հրավիրել էր Ալենբին: Խորհրդակցությանը մասնակցում էին նաև Լոնդոնից ժամանած բարձրաստիճան պաշտոնյաներ: Նպատակն այն էր, որ պատրաստեն մի փաստաթուղթ, որով փաստարկված ապացուցեն Պաղեստինի սահմանները: Ֆրանսիացիներն էլ լարված պատրաստում էին իրենց փաստաթուղթը, որի

միջոցով, ի շահ իրենց, փորձելու էին հնարավորինս առաջանալ դեպի հարավ: Ալենբին ասաց, որ Լիտանի գետը հյուսիսում կլիներ իսկապես հարմար սահման՝ ընդգրկելով Հորդանանի վտակները: Խնդրահարույց էր նաև Պաղեստինի հարավային սահմանը: Թոմաս Հարդինգն այն հանձնաժողովի մեջ էր, որը պետք է տրամաբանական սահման գծեր այն տարածաշրջանի հետ, որը դառնալու էր Մեծ Լիբանան և Սիրիա: Թերևս առաջին անգամ էր նա լսում «Մեծ Լիբանան» արտահայտությունը՝ որպես մի իրական հնարավորություն, որը կներառեր նաև Լիբանան լեռը, Լիտանի գետին ամենամոտ գտնվող առափնյա մասը՝ Հորդանան գետի արևելյան ափը: Խոսք եղավ նաև այն մասին, որ թուրքերից ազատագրեն Երուսաղեմի, Նոբլուսի և Ակրեի սանջակները: Ինչ վերաբերում էր Պաղեստինի ռազմարշավին, ապա տպավորությունն այնպիսին էր, թե կարծես թուրքական կառավարությանը բնավ չէր հետաքրքրում, որ իր բանակից հսկայական քանակով ռազմիկներ են զոհվում գեներալ Էդմունդ Ալենբիի զորքերին հուսահատ դիմադրություն ցույց տալու ժամանակ:

Թոմասը Թշնամի տարածքների վարչության անդամ էր (TEA)՝ բրիգադի գեներալ Բոլսի անմիջական ղեկավարության ներքո: Բոլորն էլ այն կարծիքին էին, որ երիտասարդ պրոֆեսորը մի շարք առումներով փորձագետ է: Այդ մասին նախ վկայում էր նրա առաջխաղացման՝ փոխգնդապետ դառնալու համար տրված այն երաշխավորագիրը, որը ստորագրել էր հենց ինքը՝ Մակ-Մահոնը, երկրորդը՝ արաբերենի նրա խորն իմացությունն էր, իսկ երրորդը՝ երկար տարիներ ապրած լինելով Բեյրութում՝ այդ տարածաշրջանում նրա ձեռք բերած կենսափորձը և ժողովուրդների հոգեբանությանն ու ավանդույթներին քաջատեղյակ լինելը: Սպաները նրա նկատմամբ հարգալից էին, թեև դեռ չէր լրացել նրա քառասուն տարին: Ինչ վերաբերում էր Ավգուստուս Նյումանին, ապա Ուայթհոլը նրան գործելու մեծ ազատություն էր տվել, և ինքը, իր ասելով, պատասխանատու էր միայն վարչապետի առջև: Նա հանգիստ չուներ, մոտենում էր անգամ խրամատներին, որտեղ անգլիացիները դեռ շարունակում էին մարտնչել Ջեմալ փաշայի բարոյալքված զորքերի դեմ: Միշտ որևէ գաղտնի ու դժվարին առաքելությամբ, որի համար իր պես մեկը չկար, կա՛մ գնում էր մի հեռավոր վայր, կա՛մ էլ՝ Բաղդադ ու Թեհրան: Ասում էին, որ Նյումանը մտել էր նույնիսկ Դամասկոս, որտեղ նրան ընդունել էր Ջեմալ փաշան ու կարծիքներ էին փոխանակել: Այդ ամենից զատ՝ նա գիտեր որոշ բարբառներ, ինչպես՝ իդիշը: Դրանով նա շատ պետքական և գնահատված մարդ էր Ուայթհոլում: Թոմասը

հիանում էր Նյումանով՝ որպես խելացի, սրտագին ու ազատ ոգու տեր անձնավորությամբ:

Մարտի կեսերին Նյումանը վերադարձավ Երուսաղեմ ու Թոմասին հրավիրեց սպաների ճաշարան՝ ընթրելու:

- Վաղն ինձ հետ կգաս Կահիրե, Թոմա՛ս: Այնտեղ քո կարիքն ունեմ,- ասաց Նյումանը:

Թոմասը կասկածամտորեն նայեց նրան, քանի որ ինչքան ասես կվճարեր՝ իր դստերը կրկին գրկելու համար: Նյումանը նրան մի գրավոր հրաման ցույց տվեց՝ ստորագրված գեներալ Բոլսի կողմից: Թոմասն ուսերը թոթվեց. նրա բարեկամը բնության տարերք էր, ու ոչ ոք նրան չէր կարող կանգնեցնել: Ընթրեցին ու բաժակ բարձրացրին «Աստված փրկի Անգլիային» մաղթանքով: Ալենբին կառավարիչ Սթորսի և այլ ղեկավար պաշտոնյաների ուղեկցությամբ մտավ սպաների ճաշարան: Բոլորն էլ ոգևորված էին ռազմարշավի զարգացման ընթացքից, ու եթե այդպես շարունակվեր, ապա հուսով էին, որ շուտով կգրավեն նաև Դամասկոսը և թուրքերին կվտարեն արաբական նահանգներից:

Նյումանը որոշեց գնալ գնացքով: Պորտ Սայիդում Լևանտից փչող քամու ուղեկցությամբ նրանք թիակավոր մեծ նավով կտրեցին անցան ջրանցքն ու ժամանակին հասան Կահիրե տանող գնացքին: Սըր Հենրին, լայն ժպտալով, դիմավորեց նրանց:

- Նյումա՛ն, ինչ լավ է, որ հիմա Դուք այստեղ եք: Լավ, գիտենք, որ թուրքերն ուր որ է պարտվելու են: Հիմա խնդիրը Թալեաթը, Էնվերն ու Ջեմալն են: Պետք է գլխով պատասխան տան ու չեն էլ ուզում հանձնվել: Սակայն քաղաքական գործիչների մեծ մասը և բարձրաստիճան հրամանատարներն արդեն հասկացել են, որ ոչինչ չեն կարող անել: Եվրոպայում՝ Բրեստ-Լիտովսկում[41], գերմանացիները հանդիպելու են ռուսների հետ, ովքեր դեռ համոզված են, թե կարող են հաղթող դուրս գալ: Իրականում դա փախս տալ է նշանակում, քանի որ խորհրդային քաղաքացիները շնչակտուր են լինում, Կարմիր բանակն ուտում է իր կոշիկները: Ինչ վերաբերում է ձեզ, ապա կանչել եմ, որ մի զեկույց պատրաստեք երկրի ներսից. պետք է մտնեք Թուրքիա և գնահատեք իրավիճակը: Վաղը կեթ կվերադառնաք Երուսաղեմ: Մինչ այդ կարող եք տնօրինել ձեր ազատ ժամանակը: Այնպես որ՝ հիմա, Թոմա՛ս, գնացե՛ք Ձեր տուն՝ տես-

[41] Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագիր՝ գերտերությունների կողմից պարտադրված Ռուսաստանին: Իր կրած պարտությունների և քաղաքացիական ավերիչ պատերազմի պատճառով Ռուսաստանը ստիպված խաղաղություն խնդրեց (3 մարտի, 1918թ.): Պայմանագիրը չեղյալ հայտարարվեց 1918թ. նոյեմբերի 11-ին կնքված զինադադարի պատճառով (ծանոթագրությունը՝ հեղինակի):

նելու Ձեր դստերը, Դուք արժանի եք դրան: Եվ ինձ հուսախաբ չանեք:

Զինվորական մի ավտոմեքենա Թոմասին տուն հասցրեց: Ստիպված էր սպասել, մինչև Էթելը վարժարանից վերադառնա: Մի քանի ամիս էր, ինչ նրան չէր տեսել, և թվաց՝ Էթելը, որ շուտով դառնալու էր յոթ տարեկան, իր տարիքից շատ էր մեծացել: Օրիորդ Սարա Համիլտոնը՝ նրա ուսուցչուհին, ով մի հմայիչ, երիտասարդ կին էր՝ Կահիրեի զորակայանի Գլխավոր շտաբում շատ տարիներ ի վեր ծառայության նշանակված գնդապետներից մեկի դուստրը, Թոմասին ասաց, որ աղջիկն իրեն շատ լավ է պահել.

- Էթելն ինձ ասում է, որ երբ մեծանա, զբաղվելու է նույն գործով, ինչ՝ Դուք: Ձեզ շատ է կարոտում, սակայն ինձ համոզված ասում է, որ շուտով միասին կլինեք Բեյրութի Ձեր տանը, ինչպես որ Դուք էիք այդ մասին նրան գրում Ձեր նամակներում: Մենք ուրիշ ելք չունենք, քան պատերազմում հաղթելը, այդպես չէ՞, պարո՛ն Հարդինգ:

- Անկասկած, օրիո՛րդ Համիլտոն: Հուսով ենք, որ գեներալ Ֆոշը Եվրոպայում մի լավ դաս կտա պրուսացիներին: Ինչ վերաբերում է Պաղեստինի ռազմաբշավին, ապա գեներալ Ալենբին հրաշալի է կատարում իր գործը: Շուտով բոլորս տուն կվերադառնանք:

Նախքան անկողին մտնելը Թոմասը հրաժեշտ տվեց Էթելին: Այլ ելք չուներ. խոստացավ հնարավորինս շուտ վերադառնալ: Էթելը նրան պինդ գրկեց, ու հայրը հուզվեց՝ տեսնելով դստեր արձագանքը:

Դեպի Երուսաղեմ ուղևորվեցին հաջորդ օրը՝ վաղ առավոտյան: Թոմասը գիտեր, որ Նյումանն իրեն Կահիրե էր տարել, որպեսզի ինքը մի փոքր ժամանակ անցկացներ Էթելի հետ: Եվս մի բան, որի համար պետք է շնորհակալ լիներ նրան:

Նստեցին գնացք, ու այդ գիշեր Թոմասը կրկին Երուսաղեմի զորակայանում էր: Երկու օր անց Նյումանը եկավ նրա հետևից, և մի զինվորական բեռնատար նրանց տարավ Դամասկոսին մոտակա մի վայր՝ մինչև բրիտանական խրամատները, որտեղից նշմարվում էին թուրքական դիրքերը: Այնտեղ կերպարանափոխվեցին բեդվինների նման, որպեսզի նրանց հետ գնան Բուրաֆից մինչև Տելլ Դեքովա կոչված բլուրը՝ քառասուն մղոն Դամասկոսից դեպի արևելք:

Տելլ Դեքովայում հանդիպեցին Ֆայսալի արաբների հետ, ովքեր հող էին նախապատրաստում իրենց առաջնորդի ժամանման համար: Նրանց տարան տասը մղոն դեպի արևելք գտնվող և վիթխարի ժայռերի միջև քողարկված մի ճամբար, որտեղ դյուրին չէր հասնելը. մուտքը

վերահսկվում էր կիրճի բարձրադիր մասում թաքնված ժամապահների կողմից:

Ստիպված սպասեցին մինչև թուրքերը գան: Դա բրիտանական հետախուզության ծառայությունների կողմից կազմակերպված գաղտնի հանդիպում էր, որին մասնակցում էին մի քանի թուրք սպաներ ու քաղաքական գործիչներ, ովքեր զինադադարի կողմնակից էին: Ավգուստուս Նյումանը վերցրեց նրանց հուշագրերն ու խնդրագրերը և հանձնեց իրենց պահանջագիրը: Թուրքիան գտնվում էր իր իրական հնարավորությունների սահմանին, ու բանակի մի մասը նախընտրում էր համաձայնություն կնքել, թեև Օտտո Լիման ֆոն Սանդերսն ու Ջեմալ փաշան խոսում էին «մինչև վերջին մարդը» կռվելու մասին:

Թուրքերից մեկը Նյումանին հարցրեց.

- Ինչո՞ւ են ֆրանսիացիները ցանկանում տիրանալ Սիրիային ու Լեռնային Լիբանանին: Չէ՞ որ դուք՝ անգլիացիներդ եք պատերազմող կողմը: Այնքան էլ հասկանալի չէ: Իսկ արաբնե՞րը… Դուք ի՞նչ եք տալու արաբներին:

Այդ մարդը նկատի ուներ Սայքս-Պիկո համաձայնագիրը, որը ռուսների շնորհիվ ի հայտ էր եկել մամուլում: Նյումանը ոչ մի մեկնաբանություն չարեց, թեև կիսում էր նույն անհանգստությունը, ինչ իր խոսակիցը: Չնայած Ֆայսալի՝ գեներալ Ալենբիին որպես «Արաբիայի հյուսիսային բանակ» սատարող արաբական զորքերի՝ Հորդանանից արևելք ունեցած առաջխաղացմանը՝ ոչ ոք չէր կարող երաշխավորել, թե ինչպես էր լուծվելու արաբների խնդիրը: Հայտնի էր միայն մի բան, որ երբ Դամասկոսի սիրիացի քաղաքական գործիչներից մեկն անձամբ հասել էր մինչև էմիր Ֆայսալի ճամբար և տեղեկացրել Սայքս-Պիկո համաձայնագրի մասին, նա մահու չափ գունատվել էր՝ քրքմնջալով. «Դա ընդամենը թուրքերի հերյուրանքն է…»: Այդ պատճառով էլ Նյումանը բարձրաձայնված հարցին չպատասխանեց, իսկ փոխգնդապետ Հարդինգը լուռ նայում էր նրան: Դժվար էր պատասխանելը:

Ինչ ուզում էին իմանալ, արդեն գիտեին: Թուրքերը ջլատված էին, և դիմադրությունն օր օրի նվազում էր: Ո՛չ ֆինանսական միջոցներ ունեին, ո՛չ էլ թիկունքում պահեստային զորք, ո՛չ էլ գերմանացիներն էին ի վիճակի նրանց ապահովել ռազմամթերքով: «Օտոման Բանկն» այլևս չէր կարող ֆինանսավորել, ու Թուրքիայի խնդիրը միայն պատերազմն ավարտելը չէր:

Նյումանն իր վերջին խոսքն ասաց.

- Ինձ համակել է մի տեսակ տրտմություն: «Sic transit gloria mundi»[42]: Այնպիսի կայսրություն, ինչպիսին Օսմանյանն է՝ մասնատված, ներծծված պատմության վայրիվերումներով, անհետացման եզրին է: Ո՞վ կմտածեր… Նրանց մնում է վերջին ճակատամարտը, որում Լիման ֆոն Սանդերսը ողջ թուրքական միսը կդնի պատմության շամփուրին: Դա կլինի ամառվա վերջին, մինչ մենք կուժեղացնենք թիկունքը, իսկ իրենք մի քիչ շունչ կքաշեն: Ուշադրությո՛ւն դարձրու այս «բանակին» (Նյումանն այդ բառն ընդգծեց որոշ հեգնանքով)՝ Ֆայսալի զինյալներին, ու սրանց՝ Առաբայի բանակին, ում հետ պայման չէի կապի անգամ մի ուղտ վարձով վերցնելու համար. «Imperial Camel Corps» (Կայսերական ուղտերի զորաբանակ): Մինչև հիմա հիշում եմ այն երեկոն, երբ գեներալ Էրիխ ֆոն Ֆալկենհայնի[43] բանակի ջախջախումից հետո մտանք Բերշեբա: Դա անցյալ տարվա հոկտեմբերին էր: Իհարկե, ինձ կասես, որ մեր բանակը ժամանակակից է՝ XX դարի, իսկ սրանք ընդամենը ցեղախումբ են, որ ուղղակի հետևում են Մարգարեին: Իրոք այդպես է: Չգիտեմ, թե ինչ կլինի, սակայն հիմա նրանք մեր ճանապարհի ընկերներն են… Մի պահ սկսեցի մտածել, որ երբ Ֆայսալն իմանա Սայքս-Պիկո համաձայնագրի մասին, կսկսի կռվել թուրքերի կողմից:

Թոմասը դիտում էր մեծ մասամբ ուղտերին հեծած, անշուշտ, առանց զինհամազգեստի, միայն իրենց փոշոտ ու քրքրված կապաներով հեծյալների երկարաձիգ երկու շարասյունը՝ զարդարված իրենց ցեղին բնորոշ գույներով, կանաչ դրոշի հետևում՝ հաշեմիթների Ղուրանից սև տառերով մի սուրահ գրված: Հեծյալների ձիգ ու վայրի կերպարանքներում Թոմասը տեսնում էր անհավատալի արժանապատվություն: Վաղորդյան արևը լուսավորում էր անվերջանալի շարքերը, ու ինչպես Նյումանը, այնպես էլ ինքը, յուրաքանչյուրն իր ձիուն հեծած, տեսնում էին մի ոսկեծուփ ամպ, որի մեջ անհետանում էին իրենցից առաջ ընթացող հեծյալները:

Թոմասն անասելի կարոտով էր հիշում Բեյրութում անցկացրած իր առաջին օրերը, կարծես դա տեղի էր ունեցել հազար տարի առաջ կամ էլ երազ էր: Այնտեղից նրան հասնող լուրերն օրեցօր ավելի տագնապալի էին դառնում: Ճիշտ է, քաղաքը գրեթե անվնաս էր, քանի որ նավատորմիղից արձակված հատուկենտ արկերից բացի՝ այդ տարածաշրջանը

[42] «Այդպես է անցնում երկրային փառքը»:
[43] Գերմանացի գեներալ, Պաղեստինի ռազմարշավանքի մասնակից (ծանոթագրությունը՝ հեղինակի):

զերծ էր մնացել մարտական գործողություններից: Այդուհանդերձ, ծովային շրջափակման հետևանքով սովամահ եղած մարդկանց կորուստը վիթխարի էր: Խոսում էին տասնյակ հազարավոր մահացածների և այն մասին, որ Բեյրութում չէր մնացել ոչ մի հատիկ ցորեն: Պատերազմին անուղղակի զոհ դարձած և անօգնական բնակչության համար ձիերը, ջորիները, անգամ շներն ու կատուները, նույնիսկ առնետներն էին մարդկային սննդին փոխարինում: Եվ չնայած այդ սահմռկեցուցիչ պատկերին՝ անասելի էր Թոմասի՝ իր տուն՝ Բեյրութ վերադառնալու բաղձանքը: Ընդ որում՝ երբեք չէր դիտարկում Լոնդոն՝ որպես իր հայրենի օջախ գնալու տարբերակը:

Չէր զղջում, որ այդտեղ էր՝ ընկղմված փոշու հսկայական ամպի մեջ, ձիավարելով չոր ու անբերրի հողերով, որոնք դեռ Սիրիայի վիլայեթի մասն էին իրենց մայրաքաղաքով՝ առասպելական Դամասկոսով: Քաղաքում դեռ կառավարում էին օսմանները՝ կայսերական նավատորմիղի նախարար ու գեներալ Ջեմալ փաշայի գլխավորությամբ, ով եռիշխանության անդամ էր ու բոլորին հայտնի որպես մարդկության դեմ գործած ամենամեծ զանգվածային ոճրագործության՝ հայ փոքրամասնության ոչնչացման հեղինակ: Թոմասն ինքն էր անձամբ տեսել, որ դա պատերազմական քարոզչություն չէր, ոչ էլ՝ տարբեր մարդկանց հնարանք, այլ սարսափելի իրականություն Եփրատի ափին գտնվող Դեյր էզ-Զոր չարագուշակ վայրով, որտեղ կենտրոնացնում էին հայերին նախքան նրանց կորստյան մատնելը՝ անապատի խորքն ուղարկելը:

Նա ի վիճակի չէր ըմբռնել այն, թե այնպիսի աչքի ընկնող ժողովուրդ, ինչպիսին էին օսմանները, լինելով նաև հողագնդի ամենաառաջավոր ազգերից մեկի՝ գերմանացիների դաշնակիցը, մարդկային այլ արարածների հանդեպ գործադրած իրենց վայրագությամբ ընկել են խայտառակության անհատակ անդունդը:

Կայանատեղիում, որտեղ ճամբար գնալուց առաջ քնելու էին, նա Ավգուստուս Նյումանի հետ կիսեց իր խոհերը, որոնց վերաբերյալ Նյումանն արտահայտեց իր կարծիքը.

- Լսի՛ր, Թոմա՛ս: Դու բարձրաշխարհիկ անգլիացի ես ու այդ հարցերն ինքդ քեզ համար պարզաբանելիս դառնում ես շատ զգայուն: Ես այդ ամենի վերաբերյալ խորհրդածել եմ իմ արյան հրեական մասով, որն իմ առջև շատ հարցադրումներ է անում, թեև խոստովանեմ, որ քիչ պատասխաններ եմ գտնում: Ես մի հրաշալի տուն ունեմ Լոնդոնում, մեկն էլ՝ գյուղում, նաև՝ այնքան փող, որ կարող եմ այս ամենը մի կողմ թողնել, մոռանալ: Ոչ էլ այն տարիքին եմ, որ ինձ զորակոչեն ծառայու-

թյան, ու վերածվեմ թնդանոթի մսի: Ի՞նչ եմ անում ես այստեղ: Ինքս ինձ ի՞նչ եմ ուզում ապացուցել: Եթե ինձ մատնացույց անեիր որպես հետաքրքրասեր մի անգլիացի, ապա ինչ-որ կերպ կմոտենայիր ճշմարտությանը: Անկախ ամեն ինչից՝ ինձ մինչև հիմա սաստիկ հետաքրքրում են մարդկային արարածների միջև եղած տարբերություններն ու օտար մշակույթները: Սակայն, ամենից շատ, իմ կարծիքով, դեռ կարող եմ ինչ-որ բան ներդնել, փորձել օգնել, որ ամեն ինչ ավելի դյուրին լուծվի, այսինքն՝ այն, ինչ վերջին օրերին, թեև ոչ արդյունավետորեն, բայց փորձեցինք անել: Ես նույնպես ջանում եմ վերլուծել մարդկանց վարքագիծը: Ինչո՞ւ են գերմանացիները գնում այդ արատավոր, պարսավելի ճանապարհով: Ինչո՞վ են նրանք համոզված, որ բոլորից բարձր են: Ինչո՞ւ կանցլեր Բիսմարկը սկսեց խոսել արիական ռասայի գերազանցության մասին: Ինչո՞ւ է կայսրն իրեն շրջապատել կեղծ փիլիսոփաներով ու գիտնականներով, ովքեր նրան համոզեցին, որ Գերմանիան կարող է տիրել աշխարհին: Ո՞վ է այդ Հյուստոն Ստյուարտ Չեմբերլենը, որ ամուսնացել է Վագների դստեր հետ: Ահա և նրանք՝ Նիցշեն ու նրա գերմարդ Ժորժ Վաշե դը Լապուժը և արիացիները, կոմս Գոբինոն ու նրա անհավասար ռասաները… Պրուսացի գեներալներն ու գերմանացի մեծ գործարարները խոսում են այդ ամենի և մի նոր հասկացության՝ հենց նոր թխած «lebensraum»-ի՝ կենսատարածքի մասին, այսինքն՝ անհրաժեշտ է, որ Գերմանիան ընդարձակվի մինչև այն տեղը, որը նրանք համարում են իրենց կենսոլորտը: Վագները գրել է երաժշտությունը, ստեղծել միֆեր ու այն կարծիքին է, որ հրեաներս զտարյուն մարդկության և մարդու մեջ եղած ամեն ազնիվ բանի իսկական թշնամիներ ենք: Գոբինոն ու Վաշե դը Լապուժը հավաստիացնում են, որ արիացիները պետք է տեր լինեն, իսկ «ստորին ռասաները»՝ բոլոր մնացածները, ստեղծված են նրանց ծառայելու համար: Մի անգամ Բեյրութում առիթ ունեցա ներկա գտնվելու «Նյուրնբերգի վարպետ երգիչները» ներկայացմանն ու ասես ես հրեա Սիքստուս Բեքմեսերն էի: Իսկ «Պարսիֆալո՞ւմ»… Քո առջև են հրեաներ Կլինգսորը և Կունդրին… Լսած կա՞ս Ռուսաստանում հայտնված «Սիոնի իմաստունների վարվելակերպի կանոնները» պամֆլետի մասին: Իմ պապի բախտը բերեց, որ կարողացավ Լոնդոն գաղթել Կիևի մոտ տեղի ունեցած մի ջարդից հետո, որին զոհ գնաց գրեթե իր ողջ ընտանիքը: Իր՝ «XIX դարի հիմքերը» գրքում Չեմբերլենը փորձում է բացատրել, որ գերմանացիները բարձրակարգ են, որ նրանցից ծագելու է գերմարդկանց ռասան: Կայսր Վիլհելմ II-ը՝ տպավորվող մի մարդ, նրան հրավիրեց պալատ և այնտեղ ցնցված ասաց, որ Աստ-

ված է այդ գիրքն ուղարկել գերմանացի ժողովրդին: Այնուհետև՝ Զինվորական ակադեմիայում կայսեր պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ, սպայական անձնակազմը Չեմբերլենին արժանացրեց տեղատարափ ծափահարությունների: Ի՞նչ կարող էինք սպասել. մոլեռանդների մի խումբ հիանում է պայծառատեսով: Այն, ինչ կատարվում է, պատահական չէ, և մի կողմից կապված չէ ո՛չ մեր երկրի ու Ֆրանսիայի, մյուս կողմից էլ՝ ո՛չ գերտերությունների միջև առկա որևէ լուրջ խնդրի հետ: Այս ամենը համահունչ է պատերազմական խորհրդապաշտությանը, ինչը հիմնվում է Գերմանիայի վերաբերյալ արտառոց տեսությունների վրա: Պրուսացի գեներալները խորը հակակրանքով են լցված բոլոր ոչ գերմանացիների հանդեպ: Ապա հիշի՛ր, թե պատերազմի սկզբին որքան վայրագորեն վարվեցին բելգիացիների հետ, ասես մարդ արարածներ չէին: Հետո հասան նրան, որ երիտթուրքերը հակվեն իրենց կողմը. Էնվեր փաշան, որ իր զինվորական կրթության մի մասը ստացել էր Բեռլինում, կամ Թալեաթ փաշան՝ Կոստանդնուպոլսում գերմանացի դեսպանի մտերիմ բարեկամը, կամ Ջեմալ փաշան՝ Լիման ֆոն Սանդերսի, ֆոն դեր Գոլցի ու մյուսների երկրպագուն: Նրանք այն կարգի մարդիկ են, ովքեր սիրում են կարգուկանոնն ու համերգները, խորդենիները, փողոցների մաքրությունը, տրամաբանական դատողությունն ու սիմֆոնիկ երաժշտությունը, սակայն իրենց նվաստ հոգում մոռանում են, թե ինչ կատարվեց հայ ժողովրդի հետ, և դա այն դեպքում, որ հենց Գերմանիան կարող էր կանխել այդ զարհուրելի սպանդը, բայց չարեց: Մինչև ո՞ւր կհասնեն այդ պատվելի, հղկված շարժուձևով պաշտոնյաները, սակայն ներքուստ՝ կեղծ ու եսասեր… Ժամանակն իր խոսքը կասի. Գերմանիան դաժան ձևով կուղղվի, իսկ Օսմանյան կայսրությունը կմասնատվի, ու այդ անիծյալ եռյակը վաղ թե ուշ կտարվի կառափնարան:

- Մի՞թե դու կարծում ես, որ դրանով կանհետանան այդ գաղափարները: Ո՛չ, կմնան այնտեղ՝ ստվերում՝ սպասելով ավելի բարենպաստ ժամանակների, երբ կրկին պարարտ հող լինի, որում կարողանան բազմանալ: Հենց դա է, որը և մեզ ցույց է տալիս, որ պատերազմն աշխարհը բարեփոխելու ճիշտ ուղին չէ:

Ավգուստուս Նյումանը հառաչեց՝ չկամենալով թաքցնել իր հուզմունքը:

- Ո՛չ, Թոմա՛ս, սա դեռ միայն առաջին գործողությունն է: Մենք միշտ կարծում ենք, թե արդեն տեսել ենք ամբողջը, և այլևս չեն կրկնվի ողբերգությունները, ինչպես հայերի հետ կատարվածը: Ո՛չ թուրք, ո՛չ էլ գեր-

մանացի ժողովուրդները չեն պատերազմի իսկական մեղավորները: Թե՛ մի և թե՛ մյուս դեպքում կան հստակ մարդիկ, որոնց կարելի է մատնացույց անել, ովքեր ջուր են խմել մտավորականության սնափառության, բարոյականության հարաբերականության, նվաճողականության ու պատերազմի էթիկայի ակունքներից: Ո՞վ է այդ Վիլհելմ II-ը, ում տեսա, երբ Երուսաղեմ էր մտնում ոսկեզօծ սաղավարտով՝ թևերը տարածած արծվի ոսկեզօծ քանդակը վրան: Ովքե՞ր են նրա սնափառ գեներալները: Ովքե՞ր են գերմանական ու ավստրիական հարյուր ամենամեծ ձեռնարկությունների կառավարման խորհուրդների ամբարտավան անդամները… Նրանք՝ բոլորը, առանց բացառության, խղճմտանքից զուրկ մարդիկ են, որ պատրաստ են իրենց նկրտումների համար ավելի հեռուն գնալուն, ովքեր ներքուստ բոցավառվում են շքերթներով, զինվորական քայլերգերով, Վագների օպերաներով, Չեմբերլենի կեղտոտ լեզվով և այլոց մթին փիլիսոփայությամբ: Ո՞ւմ կողմից և որտե՞ղ է հղացվել հայերի սպանդի գաղափարը: Լսե՞լ ես դոկտոր Նազըմի մասին, իսկ՝ Բեհաեդդին Շաքիրի՞… Քեզ ծանո՞թ է գաղափարախոս Թեքիմ Ալպի անունը, իսկ՝ Ահմեդ բեյ Աղաևի՞նը, որ հնարել է այդ առասպելական վայրը՝ Թուրանը, որտեղ, ըստ նրա, ծնունդ է առել իսկական թուրք ռասան: Գիտե՞ս, թե ինչ է ասում Յուսուֆ բեյ Աչկուրա Օղլուն: Ի՞նչ նշանակություն ունի՝ Կոստանդնուպոլսում, թե Բեռլինում. ի վերջո, ծայրահեղ արմատականների նպատակն է ոչնչացնել նրանց, ովքեր իրենց նման չեն կամ չեն ընդունում իրենց կենսակերպը: Թոմա՛ս, կարճ ժամանակ անց հաղթանակած կմտնենք Դամասկոս, այնուհետև՝ Կոստանդնուպոլիս, ու քեզ կթվա, թե ամեն ինչ ավարտվել է, որ ճշմարտությունը հաղթել է ստին, որ մեզ սպասում է ավելի լավ ու արդարացի աշխարհ: Ես չեմ հավատում դրան, թեև այս անգամ չար ուժերը չեն հաղթել:

Երկու օր անց կրկին մտնում էին Երուսաղեմի զորակայանի Գլխավոր շտաբ: Թոմասն իր զեկույցը գրեց և տվեց Նյումանին՝ նրա հավանությունը ստանալու համար:

- Ինչ խոսք, Թոմա՛ս,- ասաց նրան փոքր-ինչ հեգնանքով,- վատ չէ, սակայն ես չգիտեմ, թե Գլխավոր շտաբը կընդունի՞, որ դու նրանց խորհուրդներ տաս: Ես զեկույցը բավականին կթեթևացնեի: Կարևորն այն է, որ թուրքերն այլևս ի վիճակի չեն փոխելու պատերազմի ընթացքը, ոչ էլ գերմանացիները նրանց տրամադրելու միջոցներ ունեն: Թերևս նրանց պետք է խորհուրդ տաս, որ Ֆայսալին թույլ տան մտնել Դամասկոս, երբ գրավենք այդ քաղաքը: Հարկավոր է արաբներին փոխհատուցել այն

անախորժությունների դիմաց, որ նրանց պատճառել ենք Սայքս-Պիկո համաձայնությամբ ու Բալֆուրի հռչակագրով[44]: Այդ կարծիքին չե՞ս:

Թոմաս Հարդինգը ժպտալով ընդունեց խորհուրդը: Միջերկրական տարածաշրջանում անցկացրած տարիները նրան օժտել էին իմաստնությամբ: Այո՛: Ալենբին, որ խելացի մարդ է, կըմբռնի այդ խորհուրդը: Թոմասը դրա մասին զեկույցում գրեց հստակ շեշտադրմամբ: Հետո, երբ զեկույցը մեքենագրեց, հանեց շեշտադրված հատվածը՝ գտնելով, որ ավելի լավ է՝ այդ մասին հպանցիկ ակնարկի: Ի վերջո, բանակում նրա գտնվելը ժամանակավոր էր, և փորձում էր գլուխ բերել գործը, որպեսզի հնարավորինս շուտ վերստին դառնար այն պրոֆեսորը, ով ինչ-որ ժամանակ խենթացել էր Լևանտի ոսկեզօծ քարերով: Միայն այդքանը:

[44] Արթուր Ջեյմս Բալֆուր, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար, ով 1917 թվականի նոյեմբերի 2-ին հրապարակել է հրեաներին ուղղված հռչակագիր՝ հրեական «ազգային օջախ» ստեղծելու վերաբերյալ:

19. ԴԻՏՈՐԴԸ
ՄԱՅԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1918թ.

Թոմասը որոշեց, որ առավել նախընտրելի է դստերը՝ Էթելին, Կահիրեում պահելը, քան Երուսաղեմ տանելը, որտեղ ամեն ինչի պակաս կար, չկային սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ՝ չհաշված տիֆի ու խոլերայի համաճարակները: Նրան թույլ տվեցին ընդամենը երեք օրով վերադառնալ Կահիրե: Իր ստացած տպավորությամբ ամեն ինչ լավ էր դստեր, ուսուցչուհու՝ Սարայի ու դաստիարակչուհու՝ Նաղիմա Ղալիբի միջև, թեև Էթելին ընտանիք էր անհրաժեշտ:

Պատերազմը խախտել էր Թոմասի բոլոր ծրագրերը, սակայն կամաց-կամաց մոտենում էր ընդհարման վերջը: Գլխավոր շտաբում վերլուծում էին հետախուզական ծառայությունների վերջին զեկույցները, ներառյալ՝ իրենը. դրանք պարզորոշ ցույց էին տալիս, որ թուրքերը նոկաուտի են ենթարկվել:

Այդ ժամանակ Պաղեստինի ռազմարշավանքի գերագույն հրամանատարը՝ սըր Էդմունդ Ալենբին, վերջին ճակատամարտին էր նախապատրաստվում, որը տեղի էր ունենալու Գալիլեայի ու Լիտանի գետի միջև ընկած ինչ-որ վայրում: Հետո՝ Գլխավոր շտաբի ղեկավարների խորհրդակցության ժամանակ, մեկնաբանեց վայրի ընտրությունը՝ առանձնապես կարևորություն չտալով այն բանին, որ թերևս ավելի հարմար կլիներ այն վարել Իսրայելի հովտում: Արդյոք դա Արմագեդոնի[45] համար ընտրված վայրը չէր:

Այդ ամիսներին՝ Երուսաղեմի վերանվաճման ընթացքում, շատ բաներ տեղի ունեցան: Թոմասը մտերիմ հարաբերություններ ուներ Գլխավոր շտաբի ողջ ղեկավարության, անշուշտ Ալենբիի, ով իրեն հաճախ էր հարցուփորձ անում Լիբանանի ու Սիրիայի կարևոր վայրերի մասին, գեներալներ Չեստվուդի, Քլեյտոնի ու ավստրալիացիների հրամանատար, գեներալ Շովելի հետ: Բոլորն էլ նրա նկատմամբ հարգալից էին, իրենից ոչինչ չէին թաքցնում. կարծես թե նրանց յուրայիններից էր: Թոմասը հասկանում էր, որ իրեն նայում էին որպես մշակութային խորհրդականի, ու ինքը նրանց զարմացնում էր իր խորամտությամբ ու տեսակետներով: Նրան նաև հարցնում էին հաշեմիթների, շերիֆ Հուսեյնի ու նրա որդիների մասին:

Երուսաղեմում ցուրտ ձմեռ էր, մի քանի անգամ ձյուն տեղաց, սա-

[45] Ապոկալիպսիսը (16:16) խոսում է Արմագեդոնի՝ որպես մարտի դաշտի մասին, որտեղ վերջնական մարտ տեղի կունենա Բարու և Չարի միջև (ծանոթագրությունը՝ հեղինակի):

կայն երբ սկսվեց գարունը, եղանակը դարձավ արտասովոր: Այնտեղ մարդիկ շատ լավ էին զգում՝ մինչև իսկ վերջին մանրուքը նախապատրաստվելով թուրքերի դեմ լայնածավալ ճակատամարտին: Նրանք հուսով էին, որ դա լինելու էր վերջինը, թեև Ալենբիի ախոյանը՝ գեներալ Լիման ֆոն Սանդերսը, ինչպես ասում էին, չէր էլ պատկերացնում, որ բրիտանացիներն իրեն պարտության կմատնեն այն էլ խորհրդանշական Սուրբ հողում. նա նմանօրինակ հայտարարություններ էր արել Բեռլինի մամուլում:

Թոմասը՝ որպես թարգմանիչ և համակարգող, ստիպված էր մասնակցել Երուսաղեմից բոլոր գերմանացիների և ավստրիացիների արտաքսմանը և Կահիրեում ստեղծված հատուկ ճամբարում նրանց ներկայմանը: Բանն այն էր, որ հետախուզական ծառայությունների գեկույցները Երուսաղեմից ու գրավված այլ քաղաքներից նրանց հանելու խորհուրդ էին տալիս, քանի որ վտանգ կար, որ տեղեկատվություն կհաղորդեն թուրք կամ գերմանացի լրտեսներին:

Թոմասը ծանոթացավ դոկտոր Վեյցմանի հետ, ով եկել էր Սիոնիստական հանձնախմբի այլ անդամների հետ, որպեսզի դնեն առաջին քարն այն ուսումնական հաստատության, որը դառնալու էր Երուսաղեմի Հրեական համալսարանը: Ավգուստուս Նյումանը նրանց ծանոթացրեց, ու ձիեր հեծած՝ բարձրացան Սկոպուս լեռան այն հրաշալի հատվածը, որտեղից նշմարվում էր ողջ քաղաքը, և որտեղ կառուցվելու էր համալսարանը: Այդ ընթացքում Վեյցմանը երջանիկ մարդ էր թվում և արտասանեց հուզիչ մի ճառ ու կարդաց լորդ Բալֆուրի հռչակագիրը: Ավգուստուս Նյումանը արմունկով հպվեց Թոմասի կողքին՝ հիշեցնելով այն, ինչ պատմել էր նրան:

Սիոնիստական հանձնախմբի անդամներից մեկը՝ ոմն դոկտոր Էլիազար, Թոմասին ներկայացրեց Բեյրութից նոր եկած մի հրեայի՝ Դավիդ Շտեյնին, ով պատմեց շրջափակման հետևանքով քաղաքում տիրող սարսափելի իրավիճակի մասին: Ասաց, որ ճանաչում է բժիշկ Այուբ Թաբիթին, և նա ողջ-առողջ աշխատում է: Ինչ վերաբերում էր բժիշկ Բողոսյանին, ապա նա, ըստ լուրերի, գեներալիսիմուս Ջեմալ փաշայի անմիջական հրամանով արտաքսվել էր՝ մեղադրվելով այն բանում, որ Հալեպում կենտրոնացված որոշ հայերի օգնել է, որ փախուստի դիմեն: Սկզբում նրան դատապարտել են մահվան, որը պետք է իրագործվեր կախաղանի միջոցով, բայց հետո փոխել են հրամանն ու իր ողջ ընտանիքի՝ կնոջ, երկու դուստրերի ու որդու հետ Հալեպի միջով արտաքսել Դեյր էզ-Զոր: Թոմասը սաստիկ հուզվեց ու ցավեց, որ այնտեղ

չէր եղել, որպեսզի օգներ նրանց: Դա հրեշավոր վրեժխնդրություն էր մի հայի հանդեպ, ով ընդամենը փորձել էր աջակցել իր ազգակիցներին:

Գլխավոր շտաբը լավատեսորեն էր տրամադրված: Երբ ընթրում էին, հեռվից մերթընդմերթ լսվում էին որոտների ձայներ: Դրանք Լիման ֆոն Սանդերսի մարտկոցների հրանոթային համազարկերն էին, որոնք բրիտանացիներին կարծես հասկացնում էին, որ ինքը դեռ այնտեղ է, ու հեշտ չի լինի իրեն հաղթելը:

Սակայն Ալենբին այդքան էլ անհանգստացած չէր ուժի այդ ցուցադրությունից և ահա թե ինչպես դա մեկնաբանեց իր ենթականերին.

- Պետք է ընդունենք, որ այն ականանետները, որ խլեցինք թուրքերից, հրաշալի սարքեր են: Այդ «Կրուպն» արտադրում է իմ՝ երբևէ տեսած պողպատյա լավագույն զենքերից մեկը: Գտել ենք ցեխակոլոլ թնդանոթներ, որոնք ավելի փայլուն են, քան շաբաթներով մեր մաքրածները: Երբ հաղթենք պատերազմում, մի քանի փորձագետների կուղարկենք այնտեղ, որպեսզի խորամուխ լինեն դրանց արտադրման գործընթացում:

Երուսաղեմում դանդաղ էր ձգվում շոգ ամառը: Ամեն ինչ արվում էր վերջնական հարձակման նախապատրաստման համար: Թոմասը կամաց-կամաց բացահայտում էր մի զարմանալի քաղաք, սակայն՝ լուրջ թերություններով, քանզի երևում էր, որ օսմանները ոչինչ չէին արել իրենց բնակիչների առողջության պահպանման համար. մալարիան ու դիզենտերիան շատ մարդկանց էին իրենց հետևից տանում: Գեներալ Ալենբիի հրամանով՝ զինվորական բժիշկները սկսեցին զբաղվել ողջ քաղաքի մաքրությամբ, բայց այնքան ջրամբարներ, լճեր, ոռոգման ջրանցքեր ու փլատակներ կային… Դա անհնարին մի աշխատանք էր:

Հուլիսի կեսերին Ալենբին փոխգնդապետ Հարդինգին կրկին կանչեց Գլխավոր շտաբ: Նա մասնակցում էր այն խորհրդակցություններին, որոնցում մանրամասն քննարկվում էին հարձակմանն առնչվող հարցերը. պատերազմներում չեն հաղթանակում մի գեներալի շնորհիվ, ով, մի օր ներշնչված, փայլուն ղեկավարում է մարտական գործողությունը: Այդ հաղթանակը կշռադատված մի շարք քայլերի՝ բանակի նյութատեխնիկական բազայի, պարենավորման, հանդերձանքի ապահովման, ինչպես նաև ախոյանի նկատմամբ տածած հարգանքի ու նրա գործողությունների կանխատեսման արդյունքն է: Այդ ամենը պետք է հաշվի առնել ցանկացած ճակատամարտում՝ սկզբից մինչև վերջ:

Նրանք շարունակում էին թուրքերին դիտարկել որպես հրաշալի ախոյանների, ովքեր երբեք պարտություն չեն կրում: Ալենբիի ուժերի առավելությունն այն էր, որ օսմանյան զորքերին վատ էին ղեկավարում:

Գերմանացիներն այդպես էլ չէին հասկացել նրանց հոգեբանությունը: Վերջին պահին մարտի դաշտ նետված զինվորական ստորաբաժանումների մարտունակությունը սպասվածից ավելի վատ էր, իսկ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալ փաշայի կողմից ընտրված հրամանատարները չէին համապատասխանում իրենց զբաղեցրած պաշտոնին: Էնվեր բեյն իրեն ամեն կերպ ցույց էր տալիս որպես ժամանակակից անձնավորություն, սակայն նրա ամենամեծ «առաքինությունը» սուլթանի աղջկա հետ ամուսնանալն էր: Նրան շլացնում էին շքեղությունը, զտարյուն ձիերն ու շքանշանները: Նույնը վերաբերում էր նաև Ջեմալ փաշային, ով, նավատորմի նախարար լինելով հանդերձ, լողալ չգիտեր ու մի առիթով, երբ նոր նավ էին փորձարկում, գլխապտույտ ունեցավ: Նրանց համար զինվորների կյանքը ոչ մի արժեք չուներ, թերևս՝ մի փոքր ավելին, քան հայերինը, որոնց հարյուր հազարներով սպանել էին:

Բրիտանական գաղտնի հետախուզությունը շատ լավ գիտեր, թե ինչ էր կատարվում: Ամեն օր Երուսաղեմ էին հասնում տասնյակ հայեր, նրանցից շատերը՝ Հալեպի միջով, քանի որ օսմանյան երկաթուղիների պահպանության համակարգը կախված էր ծագումով հայ ծառայողներից: Երկաթուղու աշխատանքն ապահովող բարձրաստիճան ղեկավարները փորձել էին նրանց փոխարինել այլ աշխատողներով, սակայն գերմանական դեսպանատան մի զեկույցի շնորհիվ հասկացան, որ դա կնշանակեր երկաթուղային ողջ ցանցն անգործության մատնել: Եվ այդ համակարգում ծառայող հայերի մի մասը հնարավորության դեպքում օգնում էր, որ իրենց հայրենակիցները փախչեն: Թուրքերն էլ գիտակցում էին, որ եթե ուզում են օգտվել երկաթուղուց, ապա ոչինչ կամ քիչ բան կարող են անել. թեև երբ հայտնաբերում էին, որ որևէ հայ ծառայող խառնված է այդ գործում, ապա այնքան էին լլկում, մինչև մահանար, և այդ պատիժը մնացածների համար դաս լիներ:

Երուսաղեմում ապրում էին հազարավոր հայեր, ու անգլիացիներն ուշադրությամբ հետևում էին այն փաստին, որ հայ բնակչությունը պարբերաբար ավելանում էր կամ պակասում: Այդ քաղաքից հայ փախստականներն ուղղվում էին Կահիրե կամ Ալեքսանդրիա, այդ քաղաքներից էլ ցանկացած պատեհությունից օգտվելով՝ Եվրոպա կամ Միացյալ Նահանգներ:

Փոխգնդապետ Թոմաս Հարդինգն ծավալուն տեղեկատվություն հայթայթեց Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակի վերաբերյալ: Այդ տեղեկատվության համաձայն՝ սին էին «Իթթիհադի» կառավարության

այն փաստարկները, թե կոտորածները պատերազմական գործողությունների հետևանքով երկկողմանի կորուստներ էին կամ էլ անուղղակի զոհեր: Նույնը վերաբերում էր նաև պատերազմի ընթացքում Բեյրութում սովամահ եղած մարդկանց կամ բնակչության ընդվզումների կամ այլ պատճառով սպանվածներին: Ամեն ինչ սկսվել էր երիտթուրքերի ժողովներից, «Միություն և առաջադիմություն» կոմիտեի համաժողովներից, մի քանի անհատների մեղսավորությունից: Արդեն իսկ բոլորին էր հայտնի, թե նրանք որքան դավեր էին նյութել և ինչ հրեշավոր մտահղացումների իրականացման միջոցով էին մի ողջ ժողովրդի ոչնչացրել սոսկ այն պատճառով, որ հայ քրիստոնյա են: Մահացել էին նաև գրեթե երեք հարյուր հազար քրիստոնյա ասորիներ ու առնվազն նույնքան հույներ: Թուրքական կառավարությունը գնում էր ոճրագործության ուղով, ինչը երբեք չէր նպաստելու այն բանին, որ Արևմուտքը նրանց վերաբերյալ ավելի պատշաճ կարծիք ունենար:

Այս հարցերի շուրջ Հարդինգը խոսեց գեներալ Ալենբիի ու Գլխավոր շտաբի այլ ղեկավարների հետ: Նրանց ձեռքով անցան վարչապետ Թալեաթ փաշայի՝ իր կաբինետից ուղարկված և ծածկագրված հեռագրերը, Ջեմալ փաշայի անձնական նամակները: Եռյակի հետևում կանգնած էր մարդասպանների գումարտակ, որի ղեկավարներն էին դոկտոր Նազըմն ու դոկտոր Բեհաեդդին Շաքիրը: Հարդինգը հիշում էր այն ամենը, ինչ նրանց մասին պատմել էր Ավգուստուս Նյումանը: Խոսքը վերաբերում էր մի հրեշավոր դավադրությանը, այն է՝ ոչնչացնել մի ողջ ժողովրդի, որի հետ դարեր շարունակ գոյակցել էին՝ ոչ մի հետք չթողնելով նրանց գոյության վերաբերյալ: Եվրոպական կառավարությունների, նույնիսկ Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից արված նախազգուշացումները չկանխեցին մարդասպաններին: Մի քանիսի մեղքով թուրք ժողովրդի վրա դարերով կմնա այդ հրեշավոր ոճիրի խարանը:

Երբ խոսում էին այդ սարսափելի նախճիրից, Ալենբին, ով խելամիտ մարդ էր, շարժում էր գլուխը՝ ասես ցանկանալով համոզվել, թե իրոք Օսմանյան կայսրությունում ապրող հայ ժողովուրդն ամբողջովին զոհ էր դարձել կոտորածներին ու տեղահանություններին: Ապացույցները, սակայն, ակնհայտ էին: Եռյակը ոչ միայն ծրագրել էր այդ դժնի չարագործությունը, այլև կոչ էր անում և հրամայում ի կատար ածել այն: Թերևս կար մի բան, որ չէր ըմբռնում «Իթթիհադի» կառավարության վերնախավը. այն, որ իրենց իսկ թողած հետքերը նրանց տանելու են դեպի պատմության կառափնարան:

Երբ Թոմասը գեներալ Ալենբիին պատմեց իր բարեկամ Բողոսյանի մասին, նա հետևյալն ասաց.

- Չգիտեմ, թե արդյոք մի օր կհանդիպե՞մ այդ Ջեմալ փաշային, սակայն հենց որ բռնենք, կախելու ենք:

Օգոստոսի վերջերին բրիտանական զորքերը, ճնշելով թուրքերի դիմադրությունը, հասան Ժեզրեելի հովիտ, ինչպես որ ամառվա սկզբում նախատեսել էր Ալենբին: Այդտեղ՝ Հորդանան գետի արևմտյան մասում, տեղադրվեց ծանր հրետանին: Նրանց դիմաց գտնվում էին թուրքական չորրորդ, յոթերորդ և տասներեքերորդ բանակները, որոնց գլխավոր հրամանատարը գեներալ Օտտո Լիման ֆոն Սանդերսն էր: Այդտեղ էր նաև Ջեմալ փաշան՝ իր սպիտակ ձիով և իր մեդալներով, եվրոպական մամուլի լուսանկարիչների համար ոտքից գլուխ հարդարված և համոզված, որ Սալադինի ժամանակներից հետո իր պես ոչ մեկը դեռ չի եղել: Նաև այդտեղ էր լինելու այն երիտասարդ գեներալը՝ Մուստաֆա Քեմալը, ով մեծ փառքի էր արժանացել՝ Գալլիպոլիում նսեմացնելով Անտանտի նավատորմիղն ու Ուինսթոն Չերչիլին: Գուցե կրկին նա ստանձնի ճակատամարտի ողջ ծանրությունը: Շատ էին խոսում նրա մասին, ու անկախ նրա տարիքից՝ թվում էր՝ մարտերում կոփված առաջնորդ, ում զորքերն իրեն հետևում էին կուրորեն: Նույնիսկ Ալենբին անհանգստացավ՝ տեղեկանալով, որ նրա հետ կռվելու են դեմառդեմ: Ըստ հետախուզական ծառայությունների տվյալների՝ գիտեին, որ թուրքերը կազմում էին մոտավորապես հիսուն հազար զինվոր, մինչդեռ Ալենբիի հրամանատարությամբ զորքերը գրեթե յոթանասուն հազար էին: Հիմնական տարբերությունն այն էր, որ բրիտանական, ավստրալիական, նորզելանդական և հնդկական զորքերը նպատակաուղղված էին՝ բարոյական արժեքներով օժտված, լավ սնված, առողջ, կատարելապես զինված ու կարգուկանոնով: Թուրքերը խնդիրներ ունեին՝ կապված մատակարարման՝ հենց այն խափանարար աշխատանքի հետ, որն արդեն հեղինակություն ձեռք բերած հրամանատար Լոուրենսի և Ֆայսալի համագործակցության արդյունքում իրականացնում էին արաբական ցեղերը. նրանք տարբեր առիթներով կտրել էին թուրքական երկաթգիծը՝ խոչընդոտելով օսմանյան զորքերի մատակարարումը:

1918 թվականի սեպտեմբերի 19-ին լրացավ արդեն գնդապետ Հարդինգի քառասունամյակը: Ավազի պարկերով պաշտպանված վրանում, որ բացազատել էին Ալենբիի ընտրած բլրի վրա՝ որպես մարտը ղեկավարելու կետ, երգով շնորհավորեցին Թոմասի ծնունդը, իսկ հնդիկ համ-

հարզներից մեկը նույնիսկ տորթի մի կտոր մատուցեց՝ վրան փոքրիկ մոմեր: Այդ ամենը Թոմասին համակեց շնորհակալական զգացումով, ու տասնութ սպաներ ընդամենը մեկ շիշ «Խերեսով» խմեցին նրա կենացը:

Չորս ժամ անց սկսվեց ծրագրավորված ողբերգությունը՝ մարտը: Գեներալ Ալենբին նստած էր ծալովի բրեզենտե աթոռին՝ հազարամյա ձիթենիների ներքո, կողքին՝ եռոտանու վրա ամրացված մեծ հեռադիտակներ: Նա հրամայեց կատարել մի խորամանկ զորաշարժ՝ ուղղված Հորդանան գետի ափին տեղակայված օսմանյան զորքերի դեմ: Նրա մտադրությունն էր՝ հարձակվել ողջ ափի երկայնքով, որտեղ նախապես պատրաստել էր ռազմամթերքի պահեստներ, կուտակել էր քառասուն հազար զինվոր ու «Վիկկերս» արտադրության երեք հարյուրից ավելի հրանոթներ, որոնք գուցե և չունեին «Կրուպի» արտադրանքի որակը, սակայն երբեք չէին խցանվում:

Առավոտյան ժամը չորսը կլիներ, երբ կատարյալ մթության մեջ Ալենբին հրամայեց կրակ բացել: Ռազմաճակատի գիծը քսան մղոն երկարություն ուներ՝ կազմելով մի վիթխարի աղեղ: Հինգ անց կեսին արևի առաջին ճառագայթների հետ թուրքերը սկսեցին նահանջել՝ թողնելով մի վիթխարի ճեղքվածք, որտեղով Ալենբին ուղարկեց ուղտերի հեծելազորը, որն ուղղվեց դեպի Մեգիդո հին քաղաքը, որի անունով էլ կոչվեց ճակատամարտը: Ավիացիան անվրեպ ռմբակոծում էր երկաթուղին, որի մոտ էին գտնվում օսմանյան Գլխավոր շտաբի դիրքերը ու թերևս հենց ինքը՝ Լիման ֆոն Սանդերսը: Այդ միջոցին Ֆայսալի անկանոն զորքերը, վիթխարի ջանքեր գործադրելով, գալիս էին արևելքից՝ ժամանակին հասնելու և փառքից իրենց բաժինն ունենալու համար:

Այդ երեկո օսմանյան ութերորդ բանակը, որի հրամանատարը Ջեմալ փաշան էր, սրբվել էր իր դիրքերից: Մուստաֆա Քեմալի յոթերորդ բանակը նահանջեց դեպի արևելք: Բրիտանական ավիացիան հանգիստ չէր տալիս՝ շարունակ խանգարելով նրանց լիարժեք վերամիավորմանը:

Թոմասը գեներալ Ալենբիի հետ լուռ դիտում էր հունական մի ողբերգության բեմադրությունը: Ամեն ինչ տեղի էր ունենում այնպես, ինչպես նախատեսել էին Գլխավոր շտաբում: Ավելի ուշ լուրեր հասան, որ թուրքերը մազապուրծ փախչում են: Հաջորդ օրը՝ առավոտյան, Լիման ֆոն Սանդերսի գլխավորած չորրորդ բանակը հապշտապ հեռացավ Հորդանան գետի ափերից ու արագ ուղղվեց դեպի հյուսիս՝ փորձելով դիրքավորվել և կասեցնել բրիտանացիների առաջխաղացումը Դամասկոս տանող ուղղությամբ:

Գնդապետ Հարդինգն անձամբ գերագույն հրամանատարի՝ Էդ-

մունդ Ալենբիի կողմից նշանակվեց որպես Ֆայսալի արաբական անկանոն զորքերի դիտորդ: Թոմասը պատմության իսկական ականատես էր դարձել: Որոշել էին արաբներին թողնել վերջնական հաղթանակի գլխավոր դերակատարությունը: Ինքն էր իր զեկույցում այդ մասին հորդորել, թեև գաղափարն Ավգուստուս Նյումանինն էր: Հետևից՝ քսան մղոն հեռավորության վրա, գալիս էին արաբ հեծյալները՝ Մարգարեի կանաչ ռազմադրոշներով միջնադարյան մի բանակ, ահեղ ռազմիկներ՝ մեկանգամյա լիցքավորվող հրացաններով: Արդեն պատմության գիրկն անցած այդ զենքերը, սակայն, ունեին մահացու դիպուկություն: Նրանց հետևից գնում էին ավստրալիական երեք թեթև գումարտակների հեծյալները՝ հավուր պատշաճի զինված, համազգեստներով ու լրացուցիչ ռազմամթերքով:

Թոմասը պատահաբար հանդիպեց Ջեյմս Ստյուարտին՝ Դամասկոսում բրիտանական հյուպատոսարանի բժշկին, ով իրեն բուժել էր թուրքերի կողմից լկանքների ենթարկվելուց հետո: Նրան էր հանձնարարված արաբ զինյալներին բժշկական օգնության ցուցաբերումը, քանի որ տիրապետում էր և՛ արաբերենին, և՛ թուրքերենին: Նաև հանդիպեց ժամանակին օսմանյան բանակում ծառայած Ալի Ռիդային՝ սիրիացի արաբ սպային, իսկ ավելի ուշ՝ արդեն բրիգադի գեներալ դարձած Ֆիլիպ Սթիմսոնին, ով նրան ամուր գրկեց: Բոլորն էլ ուզում էին հնարավորինս շուտ մտնել Դամասկոս: Թուրքերի համար ռազմավարական այդ հենակետը կորցնելը, որը պաշտպանում էր Կիլիկիայի հարավային կողմը, կնշանակեր պատերազմը տանուլ տալ:

Ընդդիմադիր երկու կողմերն էլ դա քաջ գիտակցում էին: Ինչ վերաբերում էր ֆոն Սանդերսին, ապա նա հազարավոր զինվորների հետ բոլոր կողմերից շրջափակվել էր Նազարեթից ոչ հեռու մի վայրում:

Ակնհայտ էր, որ քիչ էր մնացել պատերազմի ավարտին, իսկ Թոմասին ավելի քիչ՝ Բեյրութում կրկին հանգրվանելու համար: Գեներալ Ալենբին խոստացավ, որ նրան որպես իր ներկայացուցիչ է նշանակելու այդ քաղաքում: Թոմասին, սակայն, տանջում էր այն միտքը, որ վերադառնալու էր ու չէր գտնելու իր վաղեմի բարեկամներին, ովքեր անհետացել էին, օրինակ՝ բժիշկ Բողոսյանը:

Մեկ շաբաթ անց, երբ ուր որ է մտնում էին Դամասկոս, արաբները պայթեցրին երկաթգիծը: Բլուրների վրա դեռ կային հրանոթներ, սակայն դիմադրությունն անօգուտ էր. թուրքերը մեկը մյուսի հետևից սկսեցին հանձնվել: Թոմասը տեսավ, թե պատերազմում ինչ ասել էր ձեռնամարտը. թուրքերը փորձում էին սարսափահար փախչել, սակայն արաբ

հեծյալները հասնում էին նրանց հետևից, կրակում դեմքերին, անգամ իջեցնում թամբից ու առանց խղճմտանքի գլխատում: Արաբները չէին ցանկանում գերեվարել, քանի որ չգիտեին, թե ինչ էին նրանց հետ անելու, իսկ թուրքերը նրանց սովորեցրել էին՝ լավագույնը, որ կարելի է անել թշնամու հետ, նրան ոչնչացնելն է:

Թոմասը չէր կարող որևէ կերպ միջամտել այդ սպանդին: Թվում էր, թե Սթիմսոնը զվարճանում էր դրանով: Տիրում էր ահավոր վայրագություն… Խոսքը ո՛չ թե տասնյակ և ո՛չ էլ հարյուրավոր, այլ հազարավոր թուրքերի ու առնվազն չորս հարյուրից հինգ հարյուր գերմանացիների ու ավստրիացիների մասին էր, ովքեր հուսահատ փորձում էին իրենց կյանքը փրկել:

Արաբներն անխտիր ու անդադար սպանում էին բոլորին, ովքեր հանձնվում էին: Վերջում թուրքերը ոչ էլ պայքարում էին. սպասում էին մահվան՝ համոզված, որ դա էր իրենց ճակատագիրը, որից խույս տալ չէին կարող:

Դա իրոք կոտորած էր: Սթիմսոնն այդ առթիվ հոգնած ասաց.

- Սա է բոլոր կայսրությունների վերջը: Մի ժամանակ սրանք՝ այս ցեղերը, Կենտրոնական Ասիայի տափաստաններից եկան և հիմնեցին իրենց կայսրությունը: Ահավասիկ…

Տեսարանը զարհուրելի էր. հազարավոր դիակներ, որոշ մարմիններ դեռ ցնցվում էին մահվան հոգեվարքում, մյուսները՝ գլխատված կամ փորոտիքը դուրս թափված: «Այդ տիպերը», ինչպես նրանց կոչել էր Սթիմսոնը, պետք է, որ ընտանիքներ ունենային, որոնք անհամբեր նրանց էին սպասելու: Այդ ամենն ուղղակի անտանելի էր: Թոմասը փսխեց… Այդպիսի տեսարանի երբեք ականատես չէր եղել: Հետո մի զինվորական ավտոմեքենա նրան տարավ Ալենբիի վրան: Ի՞նչ կարող էր պատմել նրան: Այն, որ հազարավոր թշնամիներ սպանդի՞ էին ենթարկվել արաբների կողմից: Դա՞ էր պատմությունը: Մի՞շտ էր այդպես եղել:

Ներքին սառնության դողով ու անասելի պրկված մարմնով ցնցուղ ընդունեց վրանային հոսպիտալում: Բժիշկ Ստյուարտը նրան ափիոնի մի հաբ տվեց, որից հետո նա մեռելի պես ընկավ ծալովի մահճակալներից մեկի վրա:

Երկու օր անց կրկին անցավ դիտորդի իր դերին: Գերմանացիները պարբերաբար պայթեցնում էին Դամասկոսում գտնվող զինամթերքի պահեստները, իսկ պայթյունները հրանոթի արկերի ձայն էին հանում: Ալենբին ավստրալիացիներին հրամայել էր չմտնել քաղաք. դա Ֆայսալի մենաշնորհն էր: Մինչ մոտենում էին քաղաքին, անհավատալի էր,

բայց արաբ գյուղացիները շարունակում էին մշակել իրենց ցանքատարածքները, որոնք գտնվում էին ճանապարհների երկայնքով՝ արմավենուտների ու ռռոգման ջրանցքերի միջև: Իսկական հովվերգական մի տեսարան էր, եթե քաղաքի տարբեր մասերից չբարձրանային սև ծխի թանձր ամպեր: Պետք է սպասեր այդտեղ, մինչև Դերայից գար Ֆայսալը, որպեսզի հաղթական մուտք գործեր Դամասկոս: Սակայն դրա համար պետք է վերանորոգեին երկաթգիծը, որն օրեր առաջ հենց նրա զինյալներն էին պայթեցրել:

Ալենբին Թոմասին ազատեց դիտորդի պաշտոնից և ուղարկեց Բեյրութ, որտեղ օսմանյան վարչակազմը հանձնվել էր, ընդ որում՝ աշխատակիցներից շատերը սպանվել էին փողոցներում՝ ի նշան վրեժխնդրության: Քաղաքի կենդանի մնացած բնակիչները գրկախառնվում էին՝ համոզված, որ ավարտվել է բռնակալությունը, և սկսվում է խաղաղության ու բարեկեցության նոր ժամանակաշրջան: Սակայն առաջին անգամ չէր, որ դա տեղի էր ունենում այդ քաղաքում:

20. ՄԵԾ ԼԻԲԱՆԱՆ
ՀՈԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1918թ.

Թոմասը Բեյրութ վերադարձավ այն օրը, երբ ֆրանսիական ռազմածովային նավատորմը խարիսխ նետեց քաղաքի դիմաց: Հոկտեմբերի յոթն էր, և իրադարձություններն արագ էին զարգանում բոլորի՝ և՛ հաղթողների, և՛ պարտվողների համար: Արդեն մեկ շաբաթ էր, ինչ էմիր Ֆայսալը Դամասկոսում էր, իսկ օսմանյան բանակներն արագորեն նահանջում էին դեպի Տավրոսի լեռները՝ քաջ գիտակցելով, որ չէին կարող պաշտպանել Հոմսը, Հալեպը, Համան, Տրիպոլին, որոնք մեկը մյուսի հետևից հանձնվում էին Անտանտի դաշնակիցների անկասելի առաջխաղացման հետևանքով:

Ալենբին թույլ էր տվել, որ հաշեմիթ Ֆայսալը հաղթական մուտք գործի Դամասկոս: Ֆրանսիական ռազմածովային ուժերի՝ Տարտուսից դեպի Բեյրութ և Սիդոն կատարված արագ տեղափոխումը վկայում էր այն մասին, որ Սայքս-Պիկո համաձայնությունը սկսում էր կյանքի կոչվել: Ըստ այդմ՝ Սիրիայի օսմանյան վիլայեթը, Բեյրութը, Հալեպը, Աղանան և հավանաբար Դեյր էզ-Զորը ընդգրկվելու էին ֆրանսիական մանդատի շրջանակում՝ հիմնվելով համաձայնագրում արձանագրված դրույթների վրա:

Ալենբին միայն ցանկանում էր այդ տարածքից դուրս քշել օսմաններին, գերմանացիներին, ավստրիացիներին՝ Պաղեստինի և Միջագետքի բրիտանական մանդատը պաշտպանելու համար: Նաև պաշտպանության ներքո էին առնելու Միջերկրական ծովից դեպի Երուսաղեմ բացվող մուտքն ու նավթային ռազմավարական ուղին՝ մինչև նավթի հանքերը: Մնացածը փառքի դափնիներ էին… Լլոյդ Ջորջը մի հեռագիր ուղարկեց Էդմունդ Ալենբիին. ազնվատոհմիկ ի՞նչ հավելում անել, որ «դերկոմսը» դառնա ամբողջական: Ալենբին ոչ մի վայրկյան չտատանվեց. Մեգիդոյի դերկոմս:

Սակայն այդ պահին մանդատներն ընդամենը ծրագրեր էին: Այդ ժամանակ կարևորը դիրքավորվելն էր, իշխանություն գործադրելը: Թոմասը Բեյրութում, անգամ դեռ իր տուն կրկին ոտք չդրած, ողջունեց ֆրանսիացի գեներալներին: Նրանց հանձնեց անձամբ Ալենբիի տված փաստաթուղթը, որով ընդունվում էր տարածաշրջանում ֆրանսիացիների տիրապետությունը՝ ըստ Մարկ Սայքսի ու Ժորժ Պիկոյի համաձայնագրի: Ֆրանսիացի զինվորականները ցնծության մեջ էին, սակայն քաղաքային բնակչությունը դեռ սովահար էր, դիմացել էր ահավոր մի աղետի, ու այն պահը չէր, որ դուրս գային և բուռն ճիչերով ու ծափող-

ջույններով դիմավորեին հաղթողներին:

Ալենբիի ցուցումով Թոմասը ֆրանկո-բրիտանական նոր իշխանավորներին ուղեկցեց դեպի Լեմոս կղզու Մուդրոս նավահանգիստ: Սիրիայի հյուսիսում դեռ չէին հանձնվել օսմանյան կայազորներից մի քանիսը, մինչդեռ հայտնի էին զինադադար կնքելու ճիշտ օրն ու ժամը. Մուդրոսում՝ քաղաքային իշխանությունների շենքում, 1918 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 11-ին: Այդ օրը՝ զինադադարի համաձայնագիրը ստորագրելուց մեկ ժամ առաջ, թուրքերն ու գերմանացիները հանձնվեցին Տրիպոլիում:

Մուդրոսում Թոմասը կրկին հանդիպեց Ավգուստուս Նյումանին. նա էր ընտրել այդ վայրը: Դա շատ բնորոշ էր նրա նման արտասովոր անձին: Ինչ-որ մեկը պե՞տք է ընդուներ այդ որոշումները: Թուրքական կառավարության կողմից զինադադարի համաձայնագիրը ստորագրեցին խորհրդարանի երկու անդամներ ու Գլխավոր շտաբի մի գեներալ: Պատմության կողմից իրենց վրա դրված այդ առաքելությունից նրանք ճնշված էին, հուսահատ: Բանն այն էր, որ նրանք արձանագրում էին երկարատև իշխանության ու փառքի ժամանակաշրջանի վախճանը, որը սկիզբ էր առել 1453 թվականի մարտի 29-ին, երբ Մեհմետ II-ը՝ Կոստանդնուպոլսի նվաճողը, մտավ քաղաք և ուղղվեց Սուրբ Սոֆիայի տաճար, որտեղ երդվել էր վերափոխել այն ու դարձնել իսլամի ամենամեծ մզկիթը:

Մուդրոսում թուրք ներկայացուցիչները լաց էին լինում: Նյումանը Թոմասին կամացուկ ասաց.

- Լավ նայի՛ր նրանց: Մինչև հիմա, իմ կարծիքով, ոչ ոք որևէ թուրքի լաց լինելիս չի տեսել:

Այդ մարդիկ ստորագրում էին Սիրիայում, Միջագետքում, Տրիպոլիտանիայում, Կիրենաիկայից մնացած մասում, հեռավոր Եմենում, Հիջազում գտնվող բոլոր կայազորների անձնատուր լինելու մասին փաստաթուղթը: Համաձայն էին նաև, որ դաշնակիցները գրավելու են Դարդանելն ու Բոսֆորը, Բաթումին, Տավրոսի լեռները, Անատոլիայի հյուսիսարևելյան նահանգները, ինչպես նաև վերահսկողություն են սահմանելու Ադրբեջանում, Կարսում, Աջարիայում ու ողջ Կովկասում:

- Չե՞ս կարծում, որ լաց լինելու պատճառ ունեն: Նման մի բան չկատարվեց Բոաբդիլի հետ, երբ նա Գրանադայի գրավման ժամանակ՝ 1492 թվականին, հեռացավ Ալհամբրայից: Ասում են, որ նրա մայրը նրան կշտամբել է՝ ասելով. «Լա՛ց եղիր կնոջ պես այն բանի համար, որ ի վիճակի չեղար պաշտպանել որպես տղամարդ»,- պատասխանեց Թոմասը:

Դա պատերազմ էր, ոչ թե մի թղթախաղ, որտեղ բոլորն էլ կարող էին ասել. «Սկսենք նորից, ինչ-որ մեկը խարդախություն է արել»: Այդտեղ բոլորն էին խարդախություն արել, իսկ թերևս գլխավոր խարդախը՝ կայսր Վիլհելմը, այդ պահին ճամպրուկներն էր հավաքում՝ մտածելով, թե ուր գնալ՝ Շվեդիա, Դանիա, թե Հոլանդիա: Ի վերջո, ռազմամոլների ու պատերազմ սանձազերծողների ապաստանը պատերազմին դեմ երկրներն են:

Բրիտանական մի ռազմանավով միասին վերադարձան Բեյրութ: Այդտեղից Ավգուստուսը կշարունակի վերև-ներքև անել առնվազն այնքան երկար ժամանակ, քանի դեռ աշխարհը կվորձի վերականգնել այն, ինչ երկարատև պատերազմն էր ավերել: Նյումանն ասաց, որ պետք է սկսի Դամասկոսից, որտեղ շատ անելիք ունի, սակայն հուսով էր, որ շուտով կլինի նաև Բեյրութում:

Ինչ վերաբերում էր Թոմասին, ապա ժամանակն էր, որ Էթելին տաներ իր օջախ: Նրան շատ էր կարոտում: Պետք է կրկին ամուսնանար, փորձեր հետ բերել կորցրած ժամանակը, կարգավորեր իր կյանքը, այնպես աներ, որ գոնե ամեն ինչ բնականոն թվար: Չափազանց շատ բաներ էին տեղի ունեցել 1909 թվականից ի վեր, երբ առաջին անգամ նավից Բեյրութի ափ էր իջել:

Այնուամենայնիվ, մինչև նոյեմբերի կեսերը՝ չորս օր անց այն բանից հետո, երբ գերմանացիները Կոմպյեենում[46] ստորագրեցին զինադադարի պայմանագիրը, նա չկարողացավ բռնել Կահիրեի ճանապարհը: Չէր ժխտում, որ նյարդային վիճակում էր՝ անհանգստացած այն բանից, թե այդ տեղափոխությունն ինչպես կընդունի Էթելը. չէ՞ որ նա այնտեղ իր կյանքն ուներ, իր տունն ու իր դասընկերուհիները: Հուսով էր, որ դա նրա համար դժվար չէր լինի: Անշուշտ, իրեն էլ էր դուր գալիս Կահիրեն, սակայն ցանկանում էր ապրել ոչ թե այնտեղ, այլ Բեյրութում:

Նոր նշանակված ֆրանսիական գերագույն հրամանատար Պիկոն իր մանդատի ներքո գտնվող տարածքն անվանեց Մեծ Լիբանան, այսինքն՝ Լեռնային Լիբանանը, ծովեզերքը, Բեկաայի հովիտը՝ տասնհինգ մղոն՝ սկսած Տիրի հարավից մինչև Տրիպոլիի հյուսիսը: Իհարկե՝ առայժմ: Պիկոն Թոմասին հավաստիացրեց, որ դա համաձայնեցրել են մարոնականների, դրուզների ու ծովեզերքի սուննիների հետ: Ինչ

[46] Կոմպյեենում՝ երկաթուղային վագոններից մեկում, ծովակալ Ֆոշի ներկայությամբ ստորագրվեց գերմանացիների հանձնման փաստաթուղթը (Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ ստորագրվում էր ֆրանսիացիների կապիտուլյացիան, նույն տեսարանը և նույնօրինակ վագոնն օգտագործեց Ադոլֆ Հիտլերը) (ծանոթագրությունը՝ հեղինակի):

վերաբերում էր շիաներին ու ալավիներին, ապա վաղ թե ուշ նրանք էլ կմիանան համաձայնությանը: Պիկոյի հետ պայմանավորվեց, որ այդ մասին իրեն տեղյակ պահեր, թեև ֆրանսիացին այդ հարցն արդեն լուծված էր համարում:

Թոմասը Կահիրեում մնաց համարյա երկու շաբաթ: Էթելը շատ էր ուզում գալ Բեյրութում գտնվող իրենց տուն, որի մասին շատ էր լսել, սակայն ցանկանում էր, որ իրեն ընկերակցեր իր ուսուցչուհին: Սարա Համիլտոնը չառարկեց: Նա արդեն երեսունն անց էր ու շատ էր մտերմացել աղջկա հետ: Նադիմա Ղալիբը նույնպես ուզում էր վերադառնալ հայրենի օջախ: Այնուհետև ընտրեցին այն ամենը, ինչ վերցնելու էին իրենց հետ: Մնացած իրերը ժամանակավորապես պահելու էին Սարայի հոր վստահելի ընկերներից մեկի սեփական պահեստում: Մի քանի զինվորական հյուսներ եկան՝ իրերը փաթեթավորելու: Դրանք եգիպտական որոշ հնություններ էին, ժամանակակից զարդանախշերով սափորներ, դեսպանատներին պատկանած կահույք, այլ իրերի հավաքածուներ, գրքեր ու արձանիկներ: Արդեն մտածել էր, թե այդ իրերն ինչպես էին տեղավորելու Բեյրութի ահռելի տանը: Հետո հարկ կլիներ հրավիրել դեփագործների, ներկարար-նկարիչների, ատաղձագործների. արդյունքը խոստումնալից էր լինելու:

Դեկտեմբերի կեսերին Բեյրութ վերադարձավ Էթելի, Սարայի ու Նադիմայի հետ: Գոհ էր, քանի որ աղջնակի համար մեծ ցնցում կլիներ, եթե Սարան չհամաձայներ թողնել Կահիրեն: Նա բարձրակարգ աղջիկ էր ու Էթելի հետ վարվում էր հարազատ երեխայի պես:

Թոմասը Սարային նայում էր այլ՝ գործնական տեսանկյունից: Նա Գլխավոր շտաբի գնդապետի աղջիկ էր՝ առանց ազնվական տիտղոսի, սակայն՝ բուրժուական բարեկեցիկ ընտանիքից, հրաշալի կրթությամբ, կատարելապես խոսում էր ֆրանսերեն ու արաբերեն, անկաշկանդ կարող էր զրուցել ցանկացած թեմայով ու կարող էր տնային տնտեսություն կառավարել: Երկար մտածելու հարկ չեղավ: Մի քանի օր անց նրան խնդրեց, որ իր հետ ամուսնանա: Ի վերջո, Սարան ընդամենը երեք տարով էր իրենից փոքր, սակայն համանման կրթություն էին ստացել՝ չհաշված որոշ տարբերություններ, որոնց շտկման գործը կստանձներ ժամանակը:

Ամուսնության առաջարկը Սարան ընդունեց հուզված: Երեք շաբաթ անց հայտնվեց նրա ավագ քույրը, ում Սարայի մայրն էր ուղարկել: Նա անկեղծորեն ասաց, որ բնական չէ, որ առանց ամուսնանալու ապրեին նույն հարկի ներքո, և ինքը պետք է ընկերակցի քրոջը՝ արտաքուստ

պատշաճություն պահպանելու համար: Չէ՞ որ խոսքը վերաբերում էր Բեյրութին, որտեղ բոլորը կարծես գիտեին, թե ինչ է կատարվում մյուսների տներում:

Էթելը նոր միջավայրին հարմարվեց կատարելապես: Նրան անչափ դուր եկան երկրորդ հարկում իրեն հատկացված ննջարանը՝ մեծ զգեստապահարանով, առանձին լոգասենյակը, նաև մի փոքրիկ առանձնասենյակն ու պատշգամբը: Այդ ամենը Բեյրութում շքեղություն էր: Թոմասն իր համար սենյակներ պատրաստել տվեց առաջին հարկում: Գետնահարկում տեղակայվեցին նախասրահը, ընդունարանը, ճաշասրահը, գրադարանը և խոհանոցը, որոնք նայում էին տան ներքին բակին՝ հետևի կողմից նրբանցքին հարող սայլերի մուտքին:

Տան դիմաց մեծ այգին էր՝ օսմանյան ոճով պատրաստված շատրվանով, թերևս՝ չափից ավելի շքեղազարդ, որը, սակայն, նա ափսոսում էր քանդել: Դրա տակ էլ ստորգետնյա մի զով նկուղ-քարանձավ էր, որը ձգվում էր մինչև տան հետևում գտնվող բլուրը և շատ հարմար էր ամռան կիզիչ օրերին:

Շուտով հայտնվեց բժիշկ Այուբ Թաբիթը, ով շատ էր ուրախացել նրանց՝ Բեյրութ վերադառնալով: Հետո եկան նրա վաղեմի ծանոթները՝ Ժոզեֆ Հանին, Ալբերտ Ժ. Սուրսոեկը, Շառլ Դեբբան, ով շարունակում էր հրատարակել «Բեյրութի ազատություն» թերթը, տան հին ծառայողները՝ Ժոզե Շաբրին և նրա կինը՝ Մարիան, ովքեր պատերազմի ընթացքում ապաստանել էին Բեկաայի հովտում: Բոլորն էլ շատ վշտացած էին Հակոբ Բողոսյանի ու նրա ընտանիքի հետ կատարվածի համար:

Մի քանի շաբաթ անց Նյումանը Դամասկոսից եկավ Բեյրութ: Ստիպված էր ուղևորվել Կոստանդնուպոլիս, քանի որ Դամասկոսը ցնցված էր ստեղծված իրավիճակից:

Նյումանը Թոմասին պատմեց արքայազն Ֆայսալի գործադրած ահռելի ջանքերի մասին, որոնք ուղղված էին Դամասկոս մայրաքաղաքով արաբական թագավորություն ստեղծելուն: Այնինչ ֆրանսիացիները խորապես դեմ էին դրան և համոզված, որ Ֆրանսիայի մանդատը ենթադրում է ողջ տարածաշրջանի արդիականացում, իսկ հաշեմիթներին նրանք համարում էին հետամնաց, ապագա չունեցող ֆեոդալ տիրակալներ: Նյումանը նրան պատմեց, որ, այնուամենայնիվ, Դամասկոսում Ֆայսալի մուտքը մեծ ցնծությամբ է ընդունվել: Թուրքերը քաղաքից հեռացել էին արաբների հետ համաձայնություն կնքելուց հետո, հետևաբար տեղի չունեցան ո՛չ ավերածություններ, ո՛չ թալան՝ իհարկե չհաշված գերմանացիների պատճառած վնասները, ովքեր ոչնչացրին իրենց

զինամթերքի ու ռազմական սարքավորումների պահեստները, որպեսզի ոչ մի բան բրիտանացիների ձեռքը չընկնի:

Նյումանը Ֆայսալի ու նրա՝ աչքի ընկնող յուրայինների հետ հանդիպում էր ունեցել: Ներկա էր եղել նաև գնդապետ Լոուրենսը, ով շարունակում էր կրել Հիջազի արաբների ավանդական հանդերձանքը: Ֆայսալը համոզված է եղել, որ տեղի ունեցած իրադարձությունները պետք է կարևոր նշանակություն ունենային իր երազանքի իրականացման համար: Նրան բացատրվել է, թե ինչպես է տեղի ունեցել Դամասկոսի անկումը: Բանն այն է, որ քաղաքի նշանավոր մարդիկ մի ուղերձ են ուղարկել օսմանյան գեներալ Ջեմալ փաշային՝ իրազեկելով, որ չեն ընդդիմանա, եթե Ֆայսալի զինյալները քաղաք մտնեն: Ջեմալը հասկացել է ուղերձի իմաստը, ցուցաբերել ողջախոհություն ու համաձայնել: Հաջորդ օրը թուրքերը հեռացել են Դամասկոսից՝ շարքերով անցնելով արաբական դրոշի առջևով. նրանք չեն ցանկացել հանձնվել բրիտանացիներին՝ նախընտրելով իրենց դուրս գալը համաձայնեցնել արաբների հետ:

Թոմասը Նյումանին ասաց, որ նման բան տեղի է ունեցել նաև Բեյրութում: Հանրահայտ քաղաքացիներից մի շիա ներկայացուցիչ գնացել է օսման վալի Իսմայիլ Հաքքիի պալատ ու նրան խորհուրդ տվել, որ հեռանա Բեյրութից: Նույն պահին նա ժամանակավոր վալի է նշանակում Օմար Դաուդին ու անհապաղ գնում Տրիպոլի՝ իր հետ տանելով քառասուն հսկայական ճամպրուկ, այնտեղից էլ ավստրիական նավով՝ Կոստանդնուպոլիս: Իր հերթին Դաուդը մի ուղերձ է ուղարկում Լեռնային Լիբանանի կառավարչին, որ հնարավորինս անհապաղ հեռանա, եթե չի ուզում վտանգել կյանքը: Կառավարիչը, առանց ժամանակ կորցնելու, մեկ ժամ հետո Լիման ֆոն Սանդերսի գլխավոր զորակայանում էր:

Սիրիայի բոլոր բնակավայրերում նույն բանն էր կատարվում: Նյումանը Թոմասին տեղեկացրեց, որ երբ Ալենբին մտավ Դամասկոս, այն արդեն արաբների իշխանության ներքո էր: Հետևաբար այն ոչ թե գրավված, այլ արաբների կողմից ազատագրված տարածք էր, ինչը սկզբունքորեն շատ կարևոր էր արաբների համար: Ընդ որում՝ նրանց չէր հետաքրքրում, թե ինչի շուրջ են համաձայնություն ձեռք բերել բրիտանացիները և ֆրանսիացիները: Սակայն բրիտանական Գլխավոր շտաբում կարծեցին, թե Ֆայսալը չափից ավելի էր առաջ գնում: Ֆայսալը վճռել էր, որ Լեռնային Լիբանանը և ծովեզերքը նույնպես պետք է պատկանեն Մեծ Սիրիային, ինչը Պիկոյին հունից հանեց: Դա էր պատճառը, որ Ռոդասից անմիջապես այդտեղ հասավ ֆրանսիական հեծելավաշտը.

չպետք է թույլ տային, որ արաբները ժամանակ շահեին և իրենց իշխանությունը հաստատեին ծովեզերքի վրա: Այդ հարցում ֆրանսիացիները շատ անհաշտ էին բրիտանացիների հետ: Արաբներն էլ Ալենբիի օգնության կարիքն ունեին, եթե պարզաբանումների կամ մեկնաբանությունների խնդիր ծագեր: Նրանց համար Սայքս-Պիկո համաձայնությունն ընդամենը թղթի մի կտոր էր:

Թոմասն իր տան պատշգամբում ընթրում էր Նյումանի ու Այուբ Թաբիթի հետ: Թաբիթի համար պարզ էր տեղի ունենալիքը:

- Իմ բարեկամնե՛ր: Ֆրանսիացիներն այս ծովեզերքին տիրում են արդեն մի քանի դար շարունակ, ու նրանց համար հստակ է, թե ում է այն պատկանում… Հակառակը նրանց ոչ ոք չի համոզի: Բացի դրանից՝ նրանք ցանկացած առիթով եկել են մեզ օգնելու: Մարոնականներս չենք ցանկանում ունենալ մուսուլման միապետ, ոչ էլ՝ շարիաթի վրա հիմնված Սահմանադրություն: Դեռևս մեծ պատերազմից առաջ մենք՝ արաբներս, օսմանյան բռնակալությունից ազատվելու համար միավորվել ենք՝ մի կողմ դնելով դավանանքի տարբերությունները: Սակայն տեսե՛ք, քաղաքականության մեջ յուրաքանչյուր պահ հստակ է: Թուրքերն ու խալիֆն արդեն հեռացել են, ու մենք կարիք ունենք ոչ թե արաբ խալիֆի, այլ աշխարհիկ հանրապետության. մի բան, որ մեզ կարող են ընձեռել ֆրանսիացիները: Պատկերացնո՞ւմ եք՝ իսլամական Մեծ Սիրիա: Այդ ժամանակ ի՞նչ կլինի քրիստոնյաների, մարոնականների, հայերի, ուղղափառ հույների, մելկիտների, հռոմեդավան կաթոլիկների, ասորիխալդեների, բողոքականների ու կոպտերի հետ: Իսկ ալավիների՞… Նույնիսկ դրուզների՞, իսկ շիաների՞… Գուցե ինձ չպետք է հուզի այն, թե ինչ կպատահի նրանց հետ, սակայն պետք է ընդունեմ, որ դարեր ի վեր ապրում են այստեղ: Բոլորին ենթարկել սուննի իսլամի՞… Հիմա դեռևս շշուկով խոսում են Մեծ Լիբանան կոչվող երկրի մասին, որտեղ բոլորս կտեղավորվենք: Կլինի՞ իրապես այդպես: Բոլորս միասին կապրե՞նք խաղաղ: Ես, որ արաբ եմ և ունեմ բազմաթիվ մուսուլման բարեկամներ, շատ եմ կասկածում: Հիշե՛ք, թե անցյալ օրն ինչպես էին ֆրանսիական ծովային հետևակի զինվորները շքերթով անցնում Բեյրութի կենտրոնով: Ո՞ւմ ենք վստահում այս քաղաքի բնակիչներս: Ֆայսալի արաբների՞ն… Ո՛չ: Այն երկու երկրների՞ն՝ Ֆրանսիային ու Մեծ Բրիտանիային, որոնք մեզ սովի են մատնել: Դամասկոսում իր արտասանած ճառում էմիր Ֆայսալը հայտարարեց, որ իր իշխանությունը կտարածվի Մեծ Սիրիայի վրա, իսկ դա ո՛չ ֆրանսիացիների, ո՛չ էլ բրիտանացիների սրտով է: Այնտեղ կա մի զինվորական կառավարիչ՝ Պիեպապը, ով ջանում էր հանել արաբական բոլոր դրոշները: Գիտե՞ք, թե ինչո՞ւ: Դուք

ուզում եք, որ այս տարածքները մնան որպես «զավթված թշնամական տարածք», այլ ոչ թե ձեր դաշնակիցների՝ արաբների կողմից կառավարվող երկրներ: Ի՞նչ կարող էին այդ դեպքում պահանջել: Ահավասիկ Բեյրութը, Լեռնային Լիբանանը, Տրիպոլին, Լաթաքիան, Դամասկոսը և մնացյալը ֆրանսիացիների ենթակայության ներքո են, իսկ Պաղեստինը, Երուսաղեմը և Նոբլուսը՝ անգլիացիների, մնացածն էլ, այսինքն՝ Արաբիան, Հիջազը՝ արաբների: Դուք շատ պարզ ակնարկեցիք, որ խոսքը ժամանակավոր ենթակայության մասին է, և Ֆայսալը համենայն դեպս իր զորքն արդեն մտցրել է Բեկաայի հովիտ: Կարծում է, թե դա իրենն է: Սակայն մենք՝ մարոնականներս, դա նրան թույլ չենք տա: Չենք ցանկանում արաբական ղեկավարություն. հազար անգամ ավելի լավ է ֆրանսիականը: Ինչևէ, մեր կարծիքը սա է: Այդուհանդերձ Ֆայսալը գործում է որպես Մեքքայի շերիֆի, այսինքն՝ իր հոր ներկայացուցիչ՝ համոզված, որ հայրն իրեն կկարգի Մեծ Սիրիայի միապետ: Ես հոռետես մարդ եմ: Ո՛չ դուք, ո՛չ էլ ֆրանսիացիները չպետք է նրան թույլ տաք, որ այդպես վարվի, եթե՝ ոչ, ապա ժամանակը ցույց կտա: Սակայն դուք թերևս համաձայնության եք եկել, քանի որ Ֆայսալը եղել է Ֆրանսիայում՝ փորձելով հանդես գալ բոլոր արաբների անունից, իսկ դա շատ ավելի անախորժ թվաց Կլեմանսոյի, քան բրիտանացիների կառավարությանը: Ի վերջո, ժամանակն իր խոսքը կասի:

Մի քանի օր անց Այուբ Թաբիթի հետ Թոմասն ու Ավգուստուս Նյումանը ներկա էին Ժամանակավոր խորհրդի նիստին: Ո՛չ ձայնի իրավունք ունեին, ո՛չ էլ՝ քվեի: Նրանք այնտեղ էին միայն դիտորդի կարգավիճակով: Նիստը նախագահեց Դաուդ Ամունը, ով վայելում էր մարոն պատրիարքի ու հետևաբար զինվորական կառավարչի՝ Պիեպապի վստահությունը: Նիստին յուրաքանչյուր դավանանքից մասնակցում էր մեկ ներկայացուցիչ՝ բացառությամբ շիաներից, ովքեր չէին կարող հանդուրժել, որ գլխավոր դերում հանդես են գալիս քրիստոնյաները:

Դաուդ Ամունը ճանաչված մարդ էր ողջ Բեյրութում: Լեզվով խայթել գիտեր, իսկ արաբները կարևորում էին խոսքի ոճը: Ամունը թույլ չէր տալիս, որ իրեն ընդհատեն, ոչ էլ այն, որ որևէ մեկը խոսեր նիստի օրակարգից դուրս: Շատ էր քրտնում ու դժվարությամբ էր խոսում, սակայն ոչ ոք չէր համարձակվում նրան միջամտել:

- Պարոնա՛յք, Աստծո կամոք մեր գործերն ընթանում են ճիշտ ուղղությամբ: Ներկա գտնվելու համար շնորհակալություն եմ հայտնում Էմիլ Էդիին, Աբբդալահ Քուրին ու Նեգիբ էլ-Մալեկին: Մեր շնորհակալությունը հայտնենք նաև զինվորական կառավարիչ Պիեպապին, բրիտանացի

դիտորդներին: Այստեղ բոլորիս ներկայությունն էլ կարևոր է, ու եթե ցանկանում ենք ունենալ կենսունակ Լիբանան, ապա պետք է աշխատենք՝ ուս ուսի տված: Եթե ինձ թույլ տաք, ապա կամփոփեմ: Սիրում ենք Լիբանանը, որից շատ սպասելիքներ ունենք, հանուն որի պայքարել ենք ու երազել երկար ժամանակ: Չափազանց երկար… Երազել ենք այնպիսի Լիբանան, որտեղ ազատությունը, հավասարությունն ու եղբայրությունը պետք է լինեն հիմնական նորմերը: Այլևս բռնակալների, դաժանությունների կարիքը չունենք, կառավարման մեջ էլ՝ կաշառակերության: Այդ ամենն արդեն անցյալ է: Մեկ րոպե լռությամբ հարգենք մեր նահատակների հիշատակը: Նրանցից շատերը «Լամարկազիից» էին. Աբդուլ Համիդ Զահրավին, Աբդուլ ալ-Գանին, Մահմուդ էլ-Մահմեսանին ու նրա եղբայրը՝ Մեհմեդը, Ժորժի Հադդադին, Ռեֆիկ Սելլումին… Բոլորն էլ Բեյրութի ու Լեռնային Լիբանանի հասարակության ճանաչված մարդիկ էին: Երեսուներեք նահատակներ՝ սպանված միմիայն իրենց ազատատենչ գաղափարների ու հայրենասիրության համար… Նաև կուզենայի հիշատակել Չեֆիկ բեյ էլ-Ազմին: Մինչև հիմա հիշում եմ, թե որքան քաջություն ունեցավ իր տնից Թալեաթ փաշային վռնդելիս: Հարկ է հիշատակել նաև ընդհարման զոհերին, Բեյրութում սովամահ եղած հազարավոր քաղաքացիներին: Երբեք չենք մոռանա այն, ինչ տեղի ունեցավ այստեղ: Մի Լիբանան, որը կընդգրկի ողջ ծովեզերքը, Լեռնային Լիբանանը, Բեկայի հովիտը, Անտիլիբանանի լեռնաշղթան, առնվազն դեպի հովիտ տանող թեքությունը:

Թոմասը հիշեց, թե ինչ էր իրեն բացատրել Թաբիթը. «Ուզում ենք լինել ինքնավար, իսկ դրա համար պետք է արտադրենք մեզ անհրաժեշտ սնունդը: Ինչ խոսք, քաղաքականությունում՝ նույնպես ինքնավարություն: Մեր ապագա երկրի խորհրդարանը պետք է լինի համամասնական՝ երաշխավորելով փոքրամասնությունների իրավունքները: Ցանկանում ենք, որ Ֆրանսիան մեզ օգնի, իսկ Մեծ Բրիտանիան դրան չխոչընդոտի: Մենք ուզում ենք, որ Ֆրանսիան մեզ հովանավորի, սակայն՝ միայն սկզբում և միայն այնքան ժամանակ, որ անհրաժեշտ կլինի մեր երկրի կայացմանը՝ որպես ինքնավար ու անկախ: Ոչ ավելին»:

Չնայած որոշ վերապահումներին՝ Դաուդ Ամունին հաջողվեց հասնել իր նպատակին: Գնալու էին Փարիզ՝ խորհրդակցելու և իրենց առաջարկը ներկայացնելու: Թոմասը նախընտրեց մնալ Բեյրութում, իսկ Նյումանը հրավիրվեց մասնակցելու խորհրդակցությանը: Ամեն ինչ փոխվելու էր, սակայն ոչինչ հեշտ չէր լինելու: Այդ չքնաղ երկիրն ակնկալում էր արյուն, քրտինք ու արցունք: Բաալբեկի աստվածները չէին բավարարվում խոստումներով:

21. ՍԱՐԱ
ՀՈՒՆՎԱՐ - ՄԱՐՏ, 1919թ.

1919 թվականի փետրվարին Սարա Համիլտոնն ու Թոմաս Հարդինգն ամուսնացան: Երկուսն էլ գիտեին, որ այդ ամուսնությունը հիմնված չէ սիրո վրա, փոխարենը՝ հրաշալի լուծում էր: Ամենակարևորն այն էր, որ Էթելը երջանիկ էր: Թոմասը կարծում էր, որ երբեք չէր կարողանալու մոռանալ Կարոլինին, սակայն չէր ուզում, որ իր դուստրն առանց մոր մեծանար: Ինչ վերաբերում էր Սարային, ապա նա գործնական կին էր և չէր ցանկանում պառաված օրիորդ դառնալ:

Հարսանիքը տոնեցին մտերիմների շրջանում: Մյուս կողմից Բեյրութում առկա մթնոլորտին հարիր չէին հանդիսություններն ու տոնակատարությունները. քանի դեռ մարդիկ վերականգնում էին իրենց կյանքը, նախընտրելի էր պահպանել զսպվածություն: Ապագա ամուսինները ողջախոհ գտնվեցին ու հրավիրեցին միայն իրենց մերձավորներին:

Թոմասը շատ շուտով զարմանքով նկատեց, որ իր նոր՝ ամուսնական կարգավիճակում կյանքը լավանում է բոլոր առումներով: Սարան լրջամիտ էր, զուսպ և խելացի. առաքինություններ, որոնք Թոմասը բարձր էր գնահատում: Ինչ-որ առումով Սարան նման էր Կարոլինին, բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, թեև նեղ մասնագիտացմամբ եգիպտագետ էր: Արաբերեն խոսում և գրում էր այնպես, ինչպես լեզվակիրը, կարող էր ցանկացած թեմայի շուրջ զրուցել, թեև խուսափում էր այն բանից, որ հավաքույթներում իր վրա ուշադրություն սևեռեն:

Գնդապետ Համիլտոնը հարսանիքի օրը Թոմասին ասաց. «Սարան հրաշալի աղջիկ է: Ձեզ համար իսկական գանձ եք գտել»: Նա դեռևս չգիտեր, թե ինչեր էր անելու Սարան՝ ամեն հարց դյուրին դարձնելու համար, իսկ Թոմասին հարկավոր էր իր կյանքը փոխել թե՛ բանակում, թե՛ առօրյա կենցաղում, հարկավոր էր մոռանալ որոշ սովորություններ ու հավակնություններ: Գուցե նա արդեն վարժվել էր մենակ ապրելուն: Սակայն այժմ այդ տանը, որն արդեն վճռականորեն իր օջախն էր համարում, Էթելի ու Սարայի հետ լուծելով բոլոր խնդիրները, ամեն բան լավանալու էր:

Այնուամենայնիվ, անցած տարիները կորած չէին: Նա մեծ կենսափորձ էր ձեռք բերել, շատ բաներ էր ըմբռնել՝ գիտակցելով, որ ավելի քան երբեք իր բախտը բերել է: Ամենակարևորն այն էր, որ նա ուղղակիորեն էր յուրացրել ֆրանսիացիներից ժառանգած իսկապես վսեմ գաղափարները՝ ազատությունը, հավասարությունն ու եղբայրությունը: Բոլո-

րին գնահատում էր նույն կերպ ու համոզված էր, որ կյանքի ընթացքում ինչ-որ պահի, ինչ-որ իրավիճակում ամենահասարակ մարդը կամ ամենաերևելին կարող է լինել ամենավատը կամ ամենալավը: Օգտվում էր մեծ առավելությունից. այնքան գումար ուներ, որ հանգամանքներից ոչ մի կախում չուներ, ու թեև պատերազմ էր, ու լոնդոնյան բորսայում կորուստները վիթխարի էին, բայց նա պահպանում էր բավականին մեծ ժառանգություն և ավելի քան հուսալի բանկային հաշիվներ:

Բեյրութում տիրում էր լավատեսական մթնոլորտ, չնայած պատերազմը բնակիչների մեծամասնությանը հասցրել էր գրեթե թշվառության: Բեյրութցիները ձեռներեց մարդիկ էին, առաջ շարժվելու ընդունակ: Կարողանում էին ստեղծել, միջոցներ հայթայթել չեղած տեղից, ու մի քանի ամիս անց՝ օսմանյան վարչակազմի հեռանալուց հետո, ամեն բան նկատելիորեն բարելավվեց: Շատ հայեր էին հաստատվել Բեյրութում, որոնց հետևում էին իրենց ազգականներն ու բարեկամները: Շատերն էլ այդտեղից գնում էին Ֆրանսիա կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Ինչ վերաբերում էր երկրի ապագա քաղաքականությանը, ապա մարոնները հստակ գիտակցում էին, որ պետք է նպաստեն Լիբանանի այն առաջխաղացմանը, որը վերահսկելու են քրիստոնյաները, որքան էլ Ֆայսալի կողմնակիցները փորձեին հակառակը համոզել: Այդ կարծիքին էին ոչ միայն մարոնները, այլև ուղղափառ հույները, թեև ավելի երկչոտ ձևով՝ նաև հայերն ու ասորի-խալդերը:

Գրեթե բոլոր սուննիները կողմնակից էին այն բանին, որ էմիր Ֆայսալի՝ որպես ինքնակալի գլխավորությամբ հռչակվեր արաբական միացյալ պետություն՝ Դամասկոս մայրաքաղաքով: Անկասկած, իսլամական Սահմանադրությունը հիմնվելու էր Ղուրանի վրա, ընդ որում՝ շարիաթին նույնպես պետք է անդրադառնային:

Թոմասը մասնակցեց որոշ հավաքույթների, որոնցում խոսում էին բացեիբաց: Նա իր առաքելությունը կատարում էր որպես Մեծ Բրիտանիայի դիտորդ, սակայն նաև գործընթացի մասնակից էր, քանի որ Լիբանանն իր երկիրն էր համարում և մտադիր չէր երբևէ Անգլիա վերադառնալ: Ցանկանում էր բավարար ժամանակ գտնել, որպեսզի պատրաստեր Բաալբեկի վերաբերյալ իր աշխատությունը՝ այն մեծացնելով Պալմիրայի ու այլ վայրերի նկարագրությամբ: Անշուշտ, չէր էլ կարող ձեռնպահ մնալ, համակերպվել, երբ ինչ-որ բան չէր ընթանում իր ուզած եղանակով, առանց իր մասնակցության:

Իր վերջին տարիների մեծ մասը Սարան անց էր կացրել Եգիպտո-

սում և լավ էր ընկալում ինչպես արաբների, այնպես էլ լիբանանցիների խառնվածքն ու բնավորությունը: Ընդ որում՝ օսմանների հեռանալուց հետո լիբանանցիներն ուզում էին, որ իրենց կոչեն Բեյրութի բնակիչներ: Նրանք շատ սերտ կապեր չունեին եգիպտացիների հետ, սակայն Սարան այն կարծիքին էր, որ Կահիրեի բնակիչներն ու բեյրութցիներն իրար շատ են նման: Ի դեպ, Եգիպտոսում էլ կատարվում էր համանման մի բան. հասարակության բարձր խավերը, որոնք վայելում էին մտավորականների ու զինվորականների աջակցությունը, ցանկանում էին ունենալ անգլիացիներից ազատ Եգիպտոս: Դամասկոսում խնդիրն այն էր, որ Հիջազի, Մեդինայի և Մեքքայի արաբները գրեթե առնչություն չունեին սիրիացիների, առավել ևս՝ ծովեզերքի բնակիչների հետ: Ասես երկու տարբեր մշակույթներ էին՝ միավորված բացառապես կրոնով ու լեզվով. Սիրիայում ամեն ինչ ավելի բաց էր, ավելի թույլ կապված իսլամական ավանդույթների հետ, քան Արաբիայում: Կնոջ դերն էլ բոլորովին այլ էր, և նա օգտվում էր իրեն ընձեռված ազատություններից:

Բեյրութը մի քաղաք էր, որը չէր արտացոլում Լեռնային Լիբանանի և ոչ էլ Բեկայայի հովտի կենսակերպը: Այդտեղ մարդիկ անկաշկանդ արտահայտվում էին եվրոպական, մանավանդ ֆրանսիական ոճով: Ֆրանսերենը գործածվում էր ամենուրեք և մանավանդ այն ժամանակ, երբ Լիբանանի՝ Մեծ Լիբանանի վերաբերյալ նոր գաղափարներ էին արծարծում:

Այդ ամենը շատ էր նյարդայնացնում սուննիներին, ովքեր համոզված էին, որ այն, ինչին ձգտում էին իրենց բարեկամները կամ թշնամիները, մուսուլմանական աշխարհի սրտում քրիստոնեական պետություն հռչակելն էր: Դա ճիշտ չէր, քանի որ լիբանանցիների նպատակը ժամանակակից ու աշխարհիկ հանրապետություն ստեղծելն էր: Թերևս դա սոսկ մի երազանք էր, որի համար, սակայն, արժեր պայքարել:

Այդ ընթացքում էլ Փարիզում մի մասը մյուսի հետ վիճաբանում էր Օսմանյան կայսրության այն տարածքի շուրջ, որի վրա, իրենց կարծիքով, լիազորություն ունի: Դա պայմանավորված էր թե՛ պատերազմում տարած հաղթանակով, թե՛ պատմությամբ: Ընդ որում՝ Ֆրանսիայի պարագայում երկրորդ հանգամանքն ավելի ծանրակշիռ էր: Անգլիացիներն էլ առաջ էին քաշում իրենց փաստարկները. միայն Պաղեստինի ռազմաբշավին մասնակցել էին կես միլիոնից ավելի հատուկ պատրաստված զինծառայողներ: Կլեմանսոն, այդ դիտարկմանն ի պատասխան, ասել է, որ եթե այդ զորքը մարտնչեր հարկ եղած տեղում, ապա պատերազմն ավելի շուտ կավարտվեր:

Անկախ ֆրանսիացիների բոյկոտից՝ էմիր Ֆայսալին, այնուամենայնիվ, հաջողվել էր մասնակցել Փարիզի խորհրդակցությանը՝ փորձելով պաշտպանել արաբների և իր դինաստիայի իրավունքները, որոնք, ըստ էության, նույնն էին: Պատմականորեն ո՞վ ավելի շատ իրավունք և արժանիքներ ուներ կառավարելու արաբներին, քան Մեքքայի շերիֆը: Մի՞թե այդ իրավունքը տրված է այդ մի բուռ բեդվին վահաբիներին, ովքեր իրենց ուզած ձևով փորձում են նվաճել ողջ Հիջազը: Իբն Սաուդի տոհմն այդ օրերին ոչ մի սպառնալիք չէր հաշեմիթների համար, կամ այդ կարծիքին էին Ֆայսալի կողմնակիցները: Այդ հարցի շուրջ Թոմասը Կահիրեում խոսել էր Իբն Սաուդի ներկայացուցիչներից մեկի հետ, ով հավաստիացրել էր, որ «վահաբի» տերմինն աղավաղում է իրականությունը: Բանն այն է, որ նրանք իրենց համարում էին սալաֆիստներ, ովքեր ձգտում էին գնալ առաջին հավատացյալների ճանապարհով: Սակայն առայժմ խոսակցությունը պտտվում էր միայն շերիֆ Հուսեյնի ու նրա որդու շուրջ: Նյումանն էլ իր նամակներից մեկում գրել էր, որ ֆրանսիացիները ոչինչ չէին ուզում լսել այդ էմիրի մասին, ում միշտ որպես վստահելի անձ ուղեկցում էր բրիտանական հետախուզական ծառայությունների սպա Թ. Հ. Լոուրենսը՝ արտառոց մի անգլիացի:

Ի դեպ, երբ Ֆայսալն իմացել էր Սայքս-Պիկո համաձայնագրի մասին, չէր հավատացել լսածին: Նա հավատում էր այն հրաշալի նամակներին, որոնք իր հայրը՝ շերիֆը, պահում էր Մեդինայի իր պալատի մի զարդատուփում ու երբ ուղևորվում էր որևէ տեղ, դրանք հետն էր վերցնում՝ վրանում պահելու համար: Սըր Հենրի Մակ-Մահոնը Մեծ Բրիտանիայի անունից նրանց խոստացել էր ցանկացած անհրաժեշտ աջակցություն, որպեսզի իրենց դինաստիան կառավարեր արաբներին: Ֆայսալն իրեն խաբված ու նսեմացված էր զգացել՝ իմանալով այդ համաձայնագրի մասին: Ազգականներից մեկը նրան ասել էր, որ դրա պատճառն անգլիացիներին հավատ ընծայելն էր:

Եվ քանի որ արդեն ոչ ոքի չէր կարող վստահել, նա անձամբ էր ուղևորվել Փարիզ՝ մասնակցելու Խաղաղության խորհրդակցությանը:

«Էմիր Ֆայսալը շփոթահար վիճակում է: Նա կարծում էր, թե արաբները սակարկելու ամենահմուտ վարպետներն են, ու հանկարծ հայտնվել է պարսկական շուկայի մթնոլորտում, որտեղ Լլոյդ Ջորջը Մոսուլը Կլեմանսոյին է տալիս, իսկ փոխարենն առաջարկում է ընդարձակել բրիտանական ազդեցության ոլորտը՝ ներառելով Աղանայի վիլայեթը, մինչդեռ իտալացիներն էլ ջանում են մի պատառ պոկել Անատոլիայից. այնքան անհեթեթ բաժանում, որ կարծես թուրքերն անհետացել

են աշխարհի քարտեզից: Սակայն ես պնդում եմ, որ նրանք դեռ այնտեղ են՝ ողջ և առողջ, ու սպասում են պատեհ առիթի՝ ցանկացած պահի կրկին ի հայտ գալու համար»,- գրել էր Նյումանը:

Թոմասը նամակի այդ հատվածը կարդում էր Հալեպում՝ «Բարոն» հյուրանոցում, ուր մեկնել էր Ալենբիի ցուցումով: Խոսեց հյուրանոցի տերերի՝ Մալումյան եղբայրների հետ. հայեր, որոնց թերևս Ջեմալ փաշայի հետ ունեցած իրենց քաղաքական շփումների շնորհիվ հաջողվել էր կենդանի մնալ ողբերգական օրերին: Եղբայրները Թոմասին պատմեցին Հալեպում ապրած իրենց սարսափների մասին. քաղաքի հայ համայնքի ինչնսուն տոկոսը բնաջնջվել կամ տարհանվել էր անհայտ ուղղությամբ: Այդ օրերին լուրերն իրարամերժ էին: Հունվարի սկզբներին Էնվեր բեյն ու Ջեմալ փաշան հեռացվեցին օսմանյան բանակից: Նոր կառավարությունն ընդունեց մի որոշում, ըստ որի՝ պետք է դատավարություն սկսեին բռնի տեղահանությունների համար պատասխանատու անձանց դեմ: Այդուհանդերձ, բոլորն էլ գիտեին, որ Անատոլիայի տարբեր վայրերում շարունակվում էին հայ համայնքների նկատմամբ իրականացվող դաժան ոճիրները. Հալեպում նույնպես վախենում էին մի նոր սպանդից:

Թոմասը չէր կարողանում հավատալ այն ամենին, ինչ նրան պատմում էին: Չէ՞ որ ամենուրեք ձերբակալում ու մեղադրում էին հանցավորներին: Այդ իրավիճակն անհեթեթ էր: Անգամ Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Yenigun» թուրքական թերթն էր հաստատում, որ երիտթուրքերի հարյուրավոր անդամներ մեղադրվում են որպես պատերազմի ոճրագործներ:

Թոմասը Բեյրութ վերադարձավ ընկճված սրտով. պատերազմը դեռ չէր ավարտվել, ու հավանաբար դեռ շատ ժամանակ կար առջևում:

Էթելը նրան հարցրեց.

- Քեզ ի՞նչ է պատահել, հայրի՛կ: Ինչո՞ւ ես այդքան տխուր:

Դեռ շատ վաղ էր նրան այդ ամենը բացատրելը, սակայն մտածեց, որ ամեն դեպքում Էթելը խորաթափանց է ու զգայունակ:

Այդտեղ՝ Բեյրութում, ձմռան արևը նուրբ էր ու դուրեկան, ծովը շողում էր արծաթյա սկուտեղի պես, իսկ սպիտակ լեռները՝ ուրվագծվում վառ կապույտի մեջ: Առայժմ գոնե դրան ոչ ոք չէր կարող տիրանալ: Թոմասը չէր կարող իմանալ, թե գալիքն ինչ էր մատուցելու այդ սքանչելի ու ողբերգական երկրին:

22. ԵՐԿԻՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԻԼ - ՕԳՈՍՏՈՍ, 1919թ.

Բեյրութն արագորեն վերականգնվում էր: Ֆրանսիական ժամանակավոր զինվորական վարչությունը քրիստոնյա մարոնների սրտով էր: Պատրիարքը Ֆրանսիայի օգտին անվարան հայտարարություններ էր անում, իսկ սուննիներն իրենց հերթին ոչ միայն մզկիթներում էին պահանջում արաբական իսլամական ղեկավարում: Այդ ընթացքում Ֆայսալը Դամասկոսում գործի է դնում իր բոլոր ծանոթությունները՝ խոստանալով բարձր վարձատրվող պաշտոններ, երբ դառնա Սիրիայի թագավոր. մի բան, որում դույզն-ինչ կասկած չուներ: Սակայն դա պարզ կդառնար Փարիզում անցկացվող խորհրդակցություններից և համապատասխան պայմանագրերի ստորագրումից հետո: Ընդ որում՝ Սևրում որոշվելու էր այն երկրների ապագան, որոնք ազատագրվել էին Օսմանյան կայսրության փլուզման արդյունքում, սակայն մինչ այդ դեռ շատ ամիսներ կային:

Այդ ժամանակ Ֆայսալը դեռևս հույսեր էր փայփայում բրիտանացիների աջակցության հետ: Նա իրադարձություններից առաջ էր ընկնում: Հաշեմիթների դրոշը ծածանվում էր հասարակական բոլոր շենքերի վրա, ու սկսեցին էմիրի դիմանկարով թռուցիկներ տարածել ոչ միայն Դամասկոսում, այլև Սիրիայի ու Լեռնային Լիբանանի բոլոր քաղաքներում ու գյուղերում: Այդ թռուցիկներն անգամ փակցնում էին Երուսաղեմի որոշ թաղամասերի շենքերի պատերին. բրիտանական հրամանատարությունը հրամայեց անմիջապես վերացնել դրանք:

Թոմասը շարունակում էր մնալ Ալենբիի ենթակայության ներքո՝ Գլխավոր շտաբին կից հետախուզության գնդապետի իր պաշտոնում: Ինչ խոսք, Բեյրութում՝ իր օջախում, պաշտոնավարելը նրան ընծեռում էր հանգստի որոշ պահեր, որոնք նա փորձում էր կիսել իր ընտանիքի հետ: Նա այդ ժամանակ հասկացավ այն, ինչ իտալացիներն ու կիպրոսցիներն անվանում էին «il dolce far niente»[47]: Կյանքում առաջին անգամ նրան հարկավոր չէր որևէ բան անել, որպեսզի իր շուրջը թևածեր երջանկությունը: Թվում էր, թե Սարան նույնպես այդ զգացողությունն ուներ, քանի որ սկզբնապես նպատակահարմար ամուսնությունը վերածվում էր եթե ոչ սիրո, ապա, այո՛, սրտառուչ ու գրեթե կատարյալ միության: Նա խաղաղ ու սիրառատ կին էր և լրացնում էր այն, ինչ պակասում էր Թոմասին: Էթելն էլ չէր կարոտում Կահիրեի իր ընկերուհիներին: Ամեն ինչ լավ էր:

[47] «Քաղցր անգործություն»:

Նյումանը Բեյրութ վերադարձավ մի ամերիկացու՝ Զակ Գրեյվսի հետ, ով իր կյանքում ինչով ասես չէր զբաղվել: Նա մոտավորապես հիսուն տարեկան էր ու վերջին տարիներին Երուսաղեմում որպես բողոքական քահանա էր աշխատել:

Երբ Թոմասը նրան այդ մասին հարցրեց, Գրեյվսը ժպտաց:

- Լավ,- առանց ոգևորության խոստովանեց, որ քահանայի քողի ներքո հետախուզական ծառայությունների գործակալ է եղել, աշխատել է հյուսիսամերիկյան կառավարության համար՝ անհրաժեշտ տեղեկատվություն փոխանցելով:

- Ուզում եք ասել, որ բողոքական մեծաթիվ քահանաներից շատերը գործակալնե՞ր են:

- Ինչ-որ տոկոս,- ավելացրեց ժպտալով,- թերևս հինգ տոկոսը: Մնացածները հավատում են իրենց գործին:

Գրեյվսն այլևս ոչինչ չէր ուզում իմանալ անցած-գնացած բաներից, սակայն խոսեց այն մասին, որ նախագահ Վիլսոնն ու նրա կառավարությունը հետաքրքրություն են ցուցաբերում ոչ միայն Սուրբ վայրերի, այլ ավելի շատ նավթի նկատմամբ, ինչպես նաև Բեյրութի, որը ռազմավարական տեսանկյունից հարմար էր Արևելյան Միջերկրականի ընդհարումները վերահսկելու առումով: Եթե հինգ հարյուր մղոն շառավիղով շրջանագիծ գծվի Բեյրութի շուրջ, ապա այն կներառի Կոստանդնուպոլիսը, Կահիրեն, Դամասկոսը, Երուսաղեմը և Բաղդադը: Ահա թե ինչու Ֆրանսիայի ու մարոնների տեսակետները համահունչ էին նրանց ծրագրերին: Դա նույնն էր, ինչ իսլամի սրտում նիզակ խրելը:

Այդ մարդը ցինիկ էր: Նրա համար միևնույնն էր թե՛ Երուսաղեմում Ավետարան, թե՛ Մեքքայում շարիաթ քարոզելը. նա պարզապես կատարում էր իր աշխատանքը: Նյումանը նրան բերել էր, որպեսզի հասկացներ, թե ինչ է կատարվում Փարիզի Խաղաղության խորհրդակցության կուլիսների հետևում, որտեղ ծնվելու էր նոր աշխարհը նկալումը: Խոսքն «ահեղ մարտի» մասին էր, թե ում է հասնելու մեծ բաժինը: Մեծ Բրիտանիան ցանկանում էր վերահսկել Պաղեստինը, Եգիպտոսը, Հիջազն ու Միջագետքը, Միջերկրականը, Հնդկաստան տանող ուղին և, անշուշտ, նավթը. որքան շատ, այնքան ավելի լավ: Իր շահերով էլ պայմանավորված՝ Ֆրանսիան չէր պատրաստվում զիջումների գնալ ո՛չ Լիբանանի և ո՛չ էլ Սիրիայի առումով: Արդեն նրա տիրապետության ներքո էին Ալժիրը, Մարոկկոն, Թունիսը: Բրիտանացիներն ուզում էին մորթին, իսկ Ֆրանսիան՝ արաբական աշխարհի սիրտը: Ինչ վերաբերում էր ամերիկացիներին, ապա Վուդրո Վիլսոնը ցանկանում էր աշխարհին ցույց

տալ իր անկողմնակալ ու անշահախնդիր դեմքը: Նրա վարած քաղաքականությունը հիասթափեցնում էր բոլորին՝ հայերին, քրդերին, արաբներին ու թուրքերին: Ընդ որում՝ թուրքերը, հասկանալով հաղթանակած տերությունների դիրքորոշումն իրենց հանդեպ, զղջում էին, որ չէին մահացել կռվի դաշտում՝ աջ ու ձախ սպանելով:

Թոմասն ամեն օր շրջում էր Բեյրութով՝ շոշափելով մթնոլորտը: Քաղաքն աճում էր մեծ արագությամբ: Նրան հրավիրեցին մի հավաքույթի, որին մասնակցում էին ոչ միայն ծովեզերքի, այլև Լեռնային Լիբանանի հայտնի գործարարներ, անվանի մարդիկ, քաղաքական ու կրոնական գործիչներ: Դա քաղաքացիական հասարակության առաջին իսկական իրադարձությունն էր: Այնտեղ նա լսեց Ջեմայել, Կասսեմ, Չեհաբ և Ջումբլաթ եղբայրների մասին: Արդեն գիտեր Նագիբ Ազուրիին՝ այն մարոնին, ով մասնակցել էր «Լիբանանյան զարթոնքի» հիմնադրմանը, ինչպես նաև Ղարայլահին և Ռաբաթին: Նա ողջունեց պատրիարք Էլիաս Հոայեկին, ում հետ տարիներ առաջ ծանոթացել էր լեռան վրա գտնվող մենաստանում, Նաքաղին, Աբու էլ-Լամահ ընտանիքի ներկայացուցիչներին:

Այուբ Թաբիթն այդ ժողովի պատասխանատու կազմակերպիչն էր ու նախագահության սեղանի շուրջ նստել էր Ալբերտ Ժ. Սուրսոեկի՝ ուղղափառ հույնի, Շառլ Դեբբայի հետ, ով անխոնջ շարունակում էր հրատարակել «Բեյրութի ազատությունը» և միշտ ասում էր. «Ազատությունն այնպիսի ձգտում է, որին երբեք հնարավոր չէ հասնել»: Նրանց կողքին էր նաև Ռիզկալլահ Իրկաշին, ով միշտ ընկերակցում էր նրանց՝ փորձելով ամեն ինչ վերահսկել:

Վերջին պահին հայտնվեց Ամին Կազման՝ իր հետ բերելով դրուզ Արսլան եղբայրներին: Թատրոնի սրահը լեփ-լեցուն էր, և այդ բազմության մեջ, բնականաբար, կային մարդիկ, որոնց Թոմասը ծանոթ չէր կամ պարզապես ինքն էր այդպես կարծում: Հանկարծ նրա դիմաց կանգնեց Ժոզեֆ Տանուկին ու նրան գրկեց երկար տարիներ չտեսած ազգականի պես:

- Ես արդեն գիտեմ, որ Դուք հիմա լիբանանցի եք: Չէ՞ որ Ձեզ ասել էի… Այս հողի կախարդանքից է: Այնքա՜ն ուրախ եմ Ձեզ տեսնելու համար: Ձեր մասին շատ լավ բաներ եմ լսել:

Ծխախոտի ծխի թանձր ամպի միջից հնչեց Ռաֆի ալ-Ազամի ձայնը: Սպասողական լռություն տիրեց: Հավաքվածները վաղուց էին սպասում այդ ելույթին. ժողովը կարող էր կարևոր հետևանքներ ունենալ այդ տա-

ռածաշրջանի և իրենց երազած երկրի համար:

- Իմ սիրելի՛ բարեկամներ,- ալ-Ազամն ուներ խռպոտ և թավ ձայն, և ինչպես չար լեզուներն էին ասում, խոսում էր անգամ քնած ժամանակ, բացի դրանից՝ նաև մոլի ծխող էր,- ձեզանից շատերին ես ճանաչել եմ ողջ կյանքում: Իմ ծնվելու տարվանից՝ 1861 թվականից՝ հիսունինը տարի ի վեր, գործի է դրվել Մութասառեֆի ռեժիմը: Հայրս վերապրել է դրուզների ու մարոնների միջև ծագած դժնի ընդհարումները, այնուհետև՝ Նապոլեոն երրորդի զորքերի մուտքը՝ «Լևանտի ֆրանսիացիներին» պաշտպանելու համար: Ինչեր ասես, որ չտեսանք այս սքանչելի երկրում, սակայն այն չեմ փոխի ոչ մի այլ երկրով: Հիմա թուրքերն ուժի ճնշմամբ հեռացել են, այլևս չկան, ոչ էլ հետ կգան: (Դահլիճով մեկ տարածվեց Ռաֆի ալ-Ազամի խոսքերին հավանություն տալու աղմկալի ողջույնը:) Երբեք չեն վերադառնա:

Մի պահ լռություն տիրեց, որից հետո բանախոսը շարունակեց.

- Գիտեմ, թե հիմա ինչ եք մտածում: Գիտեմ: Ասել կուզի, որ մենք հիմա ազա՞տ ենք: Ո՛չ, սիրելի՛ բարեկամներս, ցավում եմ, որ նորեն պետք է ձեզ երկնքից վար իջեցնեմ: Դուք՝ մուսուլմաններդ, կուզենայիք հիմա Բուրակի[48] մեջքին նստած լինել, իսկ քրիստոնյաներդ ձեռքերով էիք ուզում դիպչել երկնքին, դրուզներդ՝ մի ձեռքով դիպչել Բուրակի մեջքին, մյուսով՝ երկնքին: (Մի քանի զրնգուն քրքիջներ վերացրին դահլիճում տիրող ճնշող մթնոլորտը:) Այո՛, սիրելի՛ բարեկամներս, իրականությունն ամենակարևորն է: Կոշիկներիս վրայի փոշին Լիբանանի հողն է ու շատ ավելի իրական է, քան մեր մտքի փայլատակումներն են: Ուզում եմ ձեզ այդ մասին ասել, քանի որ վերջերս էմիրի մասին խոսում են այնպես, կարծես նա անապատի վրա վերևից թափվող մանանա լինի: Այս օրվան ես ամիսներ շարունակ եմ սպասել, հաղթահարել ենք սովը, վերջում… ստիպված կերանք կատվին: Ոչ ոքի չասեք. կինս ինձ կսպանի:

Թոմասը ժպտաց: Ծանոթ էր Ռաֆիի խայթող հումորին, բայց նրա խոսքում նկատում էր հեգնանքը վերացնելու ձգտում, որպեսզի ներկաներին ավելի մատչելի ներկայացներ այն մարտահրավերը, որ նրանց սպասում էր առջևում:

- Լավ, հանգի՛ստ մնացեք: Ես ձեզ ճառով չեմ հոգնեցնի: Դա կթողնեմ իմ լավ բարեկամին՝ Դաուդ Ամունին: Շնորհակալություն բոլորին:

Մի աղմկալի ծափահարություն եզրափակեց Ռաֆիի ելույթը: Նա կատարել էր ամենադժվարինը. ներկաների մեծամասնությանը տրամադրել էր լսելուն: Բեյրութում դա հարգանքի արժանի բան էր:

[48] Բուրակն այն ձին է, որը Մարգարեին Մեքքայից տարել է Երուսաղեմ և հետ բերել:

Դաուդ Ամունը ոչ միայն ներկայացնում էր պատրիարք Հոայեկին, այլև այդ ժամանակ Բեյրութի ու ծովեզերքի կառավարիչն էր. մի մարդ, ում ծայրահեղ այդ ժամանակահատվածում ընտրել էին թուրքերը, անգլիացիներն ու ֆրանսիացիները: Նա չուներ Ռաֆիի հումորի զգացումը, բայց վայելում էր բոլորի հարգանքը: Ոչ ոք չէր համարձակվի վիճարկել նրա հեղինակությունը, ու բացարձակ լռության մեջ բոլորը սկսեցին լսել նրան: Քաջ ծանոթ էին նրա պահվածքին:

- Բարեկամնե՛ր… Եվ թշնամինե՛ր: Աստված ողորմած է: Նրանք, ովքեր ներկա են, և նրանք, ովքեր չեն կարողացել կամ չեն ցանկացել գալ այստեղ, բոլորը համաձայն են այս դիրքորոշման հետ: Ռաֆին, ինչպես միշտ, իրավացի է. թուրքերը գոնե այստեղ չեն վերադառնա: Լեռնային Լիբանանում նրանք երկար ժամանակ որպես «հրավիրյալներ» էին, իսկ Լիբանանի ծովեզերքում՝ ոչ այնքան սիրված: Հիմա պետք է քննարկենք, թե ինչ ենք ուզում լինել ապագայում: Դամասկոսի մի նահա՞նգ… Սպասե՛ք, սպասե՛ք: Ո՛չ: Դա ոչ էլ իմ սրտով է: Էմիրը մեծ մարդ է, մեծ արաբ ու մեծ հայրենասեր, սակայն ես չեմ ուզում Կոստանդնուպոլիսը փոխել Դամասկոսով: Մենք ցանկանում ենք ունենալ վարչական կենտրոն ոչ թե Դամասկոսում, այլ այստեղ՝ Բեյրութում: Երազանք, որի մասին տարիներ շարունակ խոսել ենք շշուկով, իսկ վերջերս՝ ճչալով: Մեծ Լիբանա՛ն... Մե՛ր Լիբանանը...

Բուռն ծափահարությունը հատուկ ընդգծեց Ամունի խոսքերը: Որոշ մարդիկ, սակայն, իրենց զուսպ պահեցին: Նրանցից ոմանք էմիր Ֆայսալի ներկայացուցիչներն էին, որոնց հատուկ հրահանգված էր, որ հանդուրժեն ցանկացած հանդիմանանք. դա որքան էլ տհաճ լիներ, նրանք պետք է իրենց ոգևորված ցույց տային:

- Այո՛, սիրելի՛ բարեկամներ, ձեզանից շատերն ինձ համար ավելին են, քան բարեկամը: Ձեզ ճանաչել եմ իմ ողջ կյանքում, միասին կատարել ենք հարսանիքներ, կնունքներ, թլփատություններ, նշել տարեդարձեր, մասնակցել պատարագների, մզկիթներում լսել քարոզներ, իսկ թաղումներին՝ ճառեր: Մենք չափազանց լավ ենք միմյանց ճանաչում, գուցե և ո՞չ,- Ամունը սկսեց մատնացույց անել շատերին,- Քե՞զ… Քե՞զ… Քե՞զ… Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ նույնպես, նա՛: Այո՛, բոլորի՛ն: Դե՛ ինչ, Բեյրութը շատ է մեծացել, սակայն դեռ գիտենք միմյանց: Իհարկե՝ ոչ բոլորին: Ա՜հ, ինչ վրիպում... Մի լավ նորություն ունեմ: Կպատմեմ ձեզ: Այո՛, այո՛, այո՛… Բժիշկ Հագոպ Բողոսյանն ու նրա ընտանիքը հայտնվել են: Նրանք ողջ են: Իսկական հրա՜շք... Այստեղ մտնելուց մի քանի րոպե առաջ եմ իմացել:

Թոմաս Հարդինգը հուզվեց: Բողոսյա՜ն... Բոլորը նրան մեռած էին համարում: Թուրքիայում հարյուր հազարավոր հայեր են սպանվել, իսկ Բողոսյանին հաջողվել էր կենդանի մնալ ու փրկել իր ընտանիքը: Իսկական հրաշք էր:

Սակայն այդ նորությամբ Դաուդ Ամունը չէր ուզում հավաքվածների ուշադրությունը շեղել գլխավորից:

- Լավ, հրաշալի է: Շուտով կկարողանանք ողջունել նրան: Ձեզ ասում էի, որ չենք ուզում, որ մեզ կառավարեն Դամասկոսից, ո՛չ էլ՝ Լոնդոնից, ո՛չ էլ՝ անգամ Փարիզից: Թեև այս վերջին դեպքում թույլ կտայինք, որ նրանք մեզ ձեռք մեկնեն… Ինքներս ենք ցանկանում այստեղից՝ Բեյրութից, կառավարել մեր կյանքը, մեր ճակատագիրը: Երբ որևէ մեկը գա և մեզ առաջարկի, թե «Ավելի լավ կլիներ, որ…», նրան կպատասխանեք, որ ցանկանում ենք ունենալ մի մեծ Լիբանան: Այո՛, բնականաբար Բեկայայի հովիտով... Մի կենսունակ, ինքնավար Լիբանան, որտեղ բոլորս մեր տեղը գտնենք, հարգենք միմյանց, որտեղ ոչ ոք ավելորդ չլինի: Մի կիրթ, ուսյալ, ժամանակակից Լիբանան... Սա է այն Մեծ Լիբանանը, որ պետք է երազենք ու հասցնենք իրագործել Աստծո օգնությամբ: Նախքան այդ Լիբանանի ծնվելն այն արդեն ունի թշնամիներ: Այս գաղափարը Դամասկոսում հավանության չի արժանանա: Բազմակրոն հասարակությո՞ւն… Սա չի կարող կենսունակ լինել: Առաջավոր ու ժամանակակից հասարակությո՞ւն… Մեծ Սիրիայի ներսո՞ւմ… Ո՛չ: Հարգում ենք սիրիացիներին որպես եղբայրների, բարեկամների ու հարևանների, սակայն նրանք թող այնտեղ լինեն, մենք՝ այստեղ. ամեն մեկը՝ իր տանը, իսկ Աստված՝ յուրաքանչյուրիս տանը: Համաձա՞յն եք:

Դաուդ Ամունին բուռն ծափահարությունների արժանացրին: Միայն Ֆայսալի կողմնակիցներն այդ միջոցին բարկացած հեռացան դահլիճից: Բրիտանացիները նրանց խաբել էին, իսկ ֆրանսիացիների մոդելն ուրիշ էր, մարոններն էլ իրենց հերթին գցում էին այնպիսի պետության հիմքեր, որը բավականին տարբեր էր Ֆայսալի երազած պետությունից:

Երբ ժողովն ավարտվեց, Թոմաս Հարդինգը դուրս եկավ Այուբ Թաբիթի հետ: Արագ քայլերով նրանք ուղղվեցին Բողոսյանների տուն, գնում էին լուռ ու մունջ: Բժիշկ Թաբիթի գլխում միտք ծագեց:

- Նրանք հաստատ հիվանդանոցում են: Ինչո՞ւ միանգամից չգնանք այնտեղ:

Ուրիշ ոչինչ չասացին: Արագաքայլ, գրեթե վազելով գնացին: Երբ հասան, բախվեցին Արիստոտելես Պապապուլոսի՝ հիվանդանոցի տնօրենի հետ:

- Բժի՛շկ Թաբիթ, պարո՛ն Հարդինգ, գիտե՞ք նորությունը: Ուրեմն՝ այո՛, ահա այստեղ են Բողոսյանները, չգիտեմ, թե ինչպես են տեղ հասել, սակայն երբեմն հավատը սարեր է շուռ տալիս: Նրանց վիճակը ծանր է: Կինը, չգիտեմ, կդիմանա՞ արդյոք: Զավակները ջահել են, բայց շատ են տանջվել: Ինչ վերաբերում է բժիշկ Բողոսյանին, ապա այդ մարդն արտասովոր է: Կշռում է իր նախկին քաշի կեսը, սակայն մնում է այն կարծիքին, որ բոլորով լինելու ենք առաջվա պես: Իմ ողջ կյանքում նման բան չեմ տեսել:

Նրանք վազեցին դեպի այնտեղ, որտեղ գտնվում էին ծանր ու անհույս հիվանդների սենյակները: Երեք կանայք ու տղան գտնվում էին մեկում, Բողոսյանը՝ հարակից սենյակում:

Նրան տեսնելով՝ զարմացան. ահավոր նիհար էր, աչքերը՝ կարմրած, գրեթե անատամ, մաշկը՝ արևահարված և խոցերով ու այրվածքներով պատված: Ցնցում էր իր բարեկամներին, իսկ այտերով առատ արցունք էր հոսում: Նրանք էլ էին հուզված, չգիտեին՝ ինչ ասեին: Բողոսյանը խզեց լռությունը. ձայնն էլ ծերունական էր ու թույլ, շնչում էր դժվարությամբ:

- Ուրախ եմ, որ կրկին Բեյրութում եմ… Չեք պատկերացնի, թե ձեզ տեսնելով՝ ինչ եմ զգում: Հիմա մեզ միայն անհրաժեշտ է հանգստանալ, ու մի քանի օր անց ձեզ կպատմեմ մեր գլխին եկածը: Աստված մեզ օգնեց:

Ուրիշ ոչինչ չասաց: Չէր էլ կարող, ուժասպառ փակեց աչքերը, միայն ցանկանում էր քնել: Սենյակից դուրս եկան սաստիկ հուզված: Բժիշկ Պապապուլոսն ասաց.

- Մենք հրաշքի ականատեսներ ենք:

Նրանք լռելյայն իջան դեպի նավահանգիստ: Մուդրոսում դաշնակիցների ու Թուրքիայի միջև ստորագրվել էր զինադադարի պայմանագիրը, արդեն մի քանի ամիս էր, ինչ շարունակվում էր Խաղաղության կոնֆերանսը, համաշխարհային առաջնորդները թատերական ճառեր էին արտասանում խաղաղության, առաջադիմության ու ապագայի մասին: Սակայն դաժան ճշմարտությունն այն էր, որ Անատոլիայի մեծ մասում դեռ շարունակվում էր հայերի սպանդը: Այդ՝ Անատոլիայի հեռավոր բնակավայրերում տեղի ունեցող նոր կոտորածների մասին նրանց հայտնեց բժիշկ Պապապուլոսը:

- Սրա վերջը չի երևում,- զայրացած ասաց Թոմասը: Բեյրութ հասնող տեղեկատվությունը բավականին իրարամերժ էր: Մի կողմից թվում էր, թե թուրքական դատական ատյաններն արդարության կողմն էին: Այդ

առումով նրանց վրա ահռելի ճնշում էին գործադրում Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան: Ինչպե՞ս են նրանք ապացուցելու, որ հաղթել են պատերազմում, եթե երիտթուրք ոճրագործները և «Իթթիհադն» ազատության մեջ էին: Մի քանի ամենամեծ պատասխանատուները, որոնց թվում՝ սրիկա եռյակը, փախել էին Բեռլին, որտեղ նրանց պաշտպանում էին ու նոր փաստաթղթեր տալիս: Այդ մասին բոլորն էին խոսում: Գերմանական բանակի բարձրաստիճան հրամանատարությունն ուղղակիորեն ներքաշված էր կոտորածների գործընթացում, երբեմն էլ՝ ոչ ուղղակիորեն կամ ձեռնպահ մնալով, ու նրանց չէին հուզում հասարակական կարծիքները:

Բեռլինը դարձել էր պատերազմի ոճրագործների ապաստարան, ու շատ դժվար էր լինելու նրանց այնտեղից հանելը:

Երբ նրանք զբոսնում էին նավահանգստի նավամատույցով, այդ ամենի մասին բժիշկ Թաբիթը պատմում էր Թոմասին: Օրը պայծառ էր ու արևոտ, ճայերը, ծուլորեն թռչելով, մի կերպ հեռանում էին շարժիչային նավակներից, որոնք կայանած էին և շարված՝ նարինջ բեռնելու կամ ցորեն բեռնաթափելու համար: Ծովն էլ ողորկ էր ու շողարձակ: Պատերա՞զմ… Ի՞նչ պատերազմ… Դա շատ մարդկանց համար մնացել էր հետևում: Թուրքերը ժխտում էին կատարվածը, իսկ մարդիկ կասկածում էին: Զոհերն այլևս չէին կարող պաշտպանվել, իսկ գրեթե բոլոր ոճրագործներն ազատության մեջ էին:

- Սա խայտառակություն է: Դուք և ես ու շատ-շատերը նույնպես գիտեն տեղի ունեցածի մասին, բայց կգա մի պահ, երբ բոլորն էլ կսկսեն կասկածել: Ովքեր ձգտում են դահիճ դառնալ, հիմա գիտեն դրա եղանակը. ժխտել, միշտ ժխտել: Մե՞նք… Մենք ոչինչ չգիտենք, ոչինչ չենք արել, այնտեղ չենք եղել: Իսկ զոհե՞րը… Հայե՞րը… Որտե՞ղ են հայերը…,- Թաբիթը տաքացած ձեռքերն էր շարժում. դժվար էր այդ դժնի ու կնճռոտ հարցերի շուրջ խոսել այդտեղ՝ Բեյրութի նավահանգստի նավամատույցում, որտեղ մի քանի մերկ երեխաներ, ուրախությունից քրքջալով, ջուրն էին նետվում, սակայն Թաբիթը շարունակեց,- այդ իսկ պատճառով հարկավոր է գործի անցնել: Չպետք է թույլ տանք, որ երբևէ կրկնվի այսպիսի բան: Տպավորությունն այն է, որ մեծ տերությունները միայն մտահոգված են տարածքներն իրար մեջ կիսելու խնդրով. սա իմն է, սա քոնն է, սա էլ է իմը… Բյուզանդական ձևով անվերջանալի վիճաբանություն… Հայերին ոչինչ էլ չի հասնի, ոչ էլ՝ քրդերին, հույներին դուրս կվռնդեն Փոքր Ասիայից, ասորիներն էլ ստիպված կթողնեն այն վայրերը, որտեղ դեռ մնում են մի քանի ընտանիքներ: Ես չեմ

կարծում, որ հիմա պատրաստվող բոլոր համաձայնագրերը, թեկուզ և՝ Վերսալինը, որը ստորագրվելու է եկող ամիս, մի բանի ծառայեն, իսկ գերմանացիները մի քանի սերունդ դեռ սնանկացած կմնան: Եթե այդպես է, դա վատ համաձայնագիր է ու իր հետևից կբերի ընդհարումներ: Այն միայն կքայքայի տնտեսությունը ու կմասնատի պարտության մատնված երկրները, ինչպես որ ենթադրում են Տիտո Լիվիոն ու մյուս պատմաբանները: Սակայն գլխավորն այն է, որ արդարության հասնեն, փնտրեն մեղավորներին՝ սկսած կայսր Վիլհելմից, ով հավանաբար քաղաքական ապաստան է խնդրել Հոլանդիայից, ու «Իթթիհադի» գլխավոր մարդասպաններին՝ Թալեաթին, Ջեմալին, Նազըմին, Թեքիմ Ալպին, Ահմեդ բեյ Աղաին, Բեդրի բեյին և այլ ոճրագործների, ովքեր մնացել են անպատիժ և շարունակում են գործել ստվերում: Ի՜նչ ամոթ ու ի՜նչ խայտառակություն… Հայերը ստիպված իրենց ձեռքով պետք է ստահակներին պատժեն, հակառակ դեպքում՝ շատ ոճրագործություններ անպատիժ կմնան: Ես չեմ հավատում Թալիոնի օրենքին, սակայն որևէ մեկը պետք է արդարադատության արյուն հեղի: Ձեր աչքի առաջ է Բողոսյանների ընտանիքը, մենք իրար շնորհավորում ենք, որ նրանք ողջ են մնացել: Սակայն կարծես ուղիղ դժոխքից են վերադարձել: Ինձ չի թվում, թե բոլորին էլ հաջողվելու է ապրել: Ինչո՞ւ… Միայն հայ լինելու պատճառո՞վ… Քրիստոնյա լինելու պատճառո՞վ… Որովհետև «Իթթիհադի» զինվորականների ու ծայրահեղ ազգայնամոլների համար ատելի արժեքներ են ներկայացնում: Ահա այդ բռնակալների վարքագիծը… Ջեմալ փաշան՝ մեր նահատակների դահիճը… Իսկ Թալեաթ փաշա՞ն… Ո՞ւր է թաքնվել: Բախտը չի բերի, եթե հայերը գտնեն նրան:

Մեկ ամիս անց Վերսալի պալատի հայելապատ սրահում ստորագրվեց երկար սպասված խաղաղության համաձայնագիրը, որը պաշտոնապես վերջ դրեց Անտանտի երկրների և Գերմանիայի միջև պատերազմական վիճակին: Արքայազն Ֆրանց Ֆերդինանդի սպանությունից հետո անցել էր հինգ տարի: Համաձայնագիրն ուժի մեջ էր մտնելու 1920 թվականի հունվարից, քանի որ դեռ շատ հարցեր կային, որոնք պետք է պարզաբանվեին, այսինքն՝ դեռ բանակցելու կարիք կար: Ըստ համաձայնագրի կետերի՝ Գերմանիան ու նրա դաշնակիցները հռչակվեցին որպես այդ պատերազմի հրձիգներ ու միակ մեղավորներ և պարտավոր էին զինաթափվել, փոխհատուցում վճարել հաղթանակած երկրներին ու գնալ տարածքային զիջումների: Գերմանիան չէր կարող մտնել Ազգերի լիգա և կորցնում էր իր գաղութները:

Գերմանիան բանակցելու հնարավորություն չուներ: Պրուսացի արիստոկրատ Ուլրիխ Բրոկդորֆ ֆոն Ռանտցաուն՝ գերմանական պատվիրակության ղեկավարը, իր յուրայիններին ասել էր, որ այդ ստորացուցիչ վիճակից դուրս գալու միակ պատվավոր ելքն այն է, որ այդ առավոտ՝ համաձայնագիրը ստորագրելուց հետո, միասին ինքնասպան լինեն: Ի վերջո, փաստաթուղթը ստիպված ստորագրեցին, ոչ ոք չդիմեց այդ «պատվավոր» ելքին, բայց Գերմանիայում եկեղեցիների զանգերն այդ միջոցին սուգ էին ազդարարում: Սակայն հետաքրքիրն այն էր, որ ստորագրված համաձայնագրի հետ ո՛չ հաղթողներն էին համաձայն, ո՛չ էլ՝ պարտվածները:

Բեյրութում, այդուհանդերձ, ծափահարեցին համաձայնագրի ընդունումը: Գերմանացիները՝ որպես թուրքերի դաշնակիցներ, ցույց էին տվել իրենց իսկական դեմքը: Գեներալ Լիման ֆոն Սանդերսը և ողջ Գլխավոր շտաբն արաբներին զուտ արհամարհանքով էին վերաբերվել: Գերմանացի սպաները, ասես զգացմունքից զրկված լինելով, խաղաղ ու անզեն բնակավայրեր ռմբակոծելու սառնասիրտ հրամաններ էին տվել կամ գնդակահարել նրանց, որոնց թշնամի էին համարել: Դա՞ էր մարդկության ամենաառաջավոր մշակույթներից մեկի իսկական բնույթը: Նրանց ավելի շատ հուզում էր զինվորական նվագախմբերի երաժշտությունը, մանավանդ՝ Վագների ստեղծագործությունները, որոնք ուսուցանող էին, ճշգրիտ, ծրագրված, հստակ կանոնակարգված և մաքուր հարդարված: Սակայն նրանք միշտ անվրդով տալիս էին սարսափելի հրամաններ, երբ դրանք իրենց ռազմավարության օգտին էին:

Ահա թե ինչու Բեյրութի բնակիչները, որ մինչ պատերազմը համակրանքով էին լցված Գերմանիայի նկատմամբ, հավանությամբ ընդունեցին համաձայնագրով նրանց վրա դրված պատիժը: Ընդ որում՝ կայսրը պետք է պատժվեր խստորեն, ինչպես որ նախատեսված էր հենց համաձայնագրով: Մի՞թե արքաներն անպատիժ չեն գործում…

Բեյրութում բոլորը խոսում էին այն համաձայնագրի մասին, որ դաշնակիցները պետք է ստորագրեին Օսմանյան կայսրության հետ: Եթե դա այնքան խիստ լիներ, որքան Վերսալինը գերմանացիների համար, ապա Թուրքիան մահացու հարված կստանար, անգամ կդադարեր որպես երկիր լինելուց: Նրանք, ովքեր իրենց մաշկի վրա էին կրել թուրքական բռնությունը, ինչպես «Բեյրութի նահատակների» բարեկամներն ու ընտանիքները, երանությամբ էին սպասում այդ օրվան: Այդ համաձայնագրի առնչությամբ մի քանի անգամ հիշեցին հին ասացվածքը՝ «Վրեժխնդրությունն այնպիսի կերակրատեսակ է, որն ուտում են սառը վիճակում»:

Սակայն Բեյրութն ինքն ուներ իր խնդիրները: Ընդհարումներից ավերվել էր երկիրը, մարդկությանը երբևէ հայտնի սարսափելի աղետի՝ սովի պատճառով զրկվել էր իր անհամար բնակիչներից: Բոլորն էլ գիտակցում էին, որ իրենց երազանքի իրականացումը երկար տարիների անձկալի սպասում էր պահանջելու:

Թոմասը ժամանակ առ ժամանակ ուղևորվում էր Երուսաղեմ՝ Պաղեստինում Բարձրագույն հրամանատարության և Մերձավոր Արևելքում բրիտանական զորքերի նոր ղեկավար, գեներալ Սթորսի հետ կարծիքներ փոխանակելու նպատակով: Նա համոզվեց այն բանում, որ սիոնիստներն իրենց երկրի կառուցումը գործնականում շատ լավ էին կազմակերպում: Այդ մարդիկ միշտ էլ աշխատել են համախմբված՝ որպես մի նվագախումբ, որում յուրաքանչյուրը կատարում է իր բաժին երաժշտական հատվածը: Նույն բանը շատ դժվար էր հաջողվում արաբներին, ովքեր շատ ավելի տաքարյուն էին և անհատապաշտ: Սիոնիստներին դժվար չէր կառուցել այն երկիրը, որ Հերցլն ուրվագծել էր իր «Հրեական պետություն» գրքում: Ինչ վերաբերում էր Բեյրութի բնակիչներին, ապա նրանք ուզում էին ստեղծել իրենց երկիրը, սակայն չէին կարողանում կազմակերպել այդ գործը, կամ գուցե այդպես էր թվում:

Թոմասը հառաչեց: Նա ցանկանում էր համագործակցել, մասնակցել այդ գործին: Թեև նա բրիտանացի էր, բայց բեյրութցիները նրան իրենց շարքերն էին ընդունել ու վերաբերվում էին մեծ հարգանքով:

Սակայն նա հորիզոնում ամպերի կուտակում էր տեսնում: Արաբները գլխի էին ընկել, որ ի վիճակի են դիմակայել գաղութարար տերություններին: Ոչ մի երկիր, այդ թվում՝ Մեծ Բրիտանիան կամ Ֆրանսիան, անպարտելի չէ: Ով գրազ կգար, որ Գերմանիան պատերազմը տանուլ էր տալու: Թվում էր՝ դա անհնարին է, բայց այդուհանդերձ… Հիմա գիտեին, որ կարող էին դիմակայել: Հարցն այն էր, որ ամեն բան հասցնեին այն աստիճանի, որ եվրոպացիների ու հյուսիսամերիկացիների համար դառնար բացարձակապես անտանելի: Դա էր ալ-Աֆղանիի պատգամը:

Երբ վերադարձավ Բեյրութ, մտածեց, որ պետք է ավելի շատ ընդգրկվի Լիբանանին առնչվող գործերում՝ ըմբռնելու համար այն, ինչ սքողված էր արաբական մտքի խորքում:

23. ԱՔԱՂԱՂԸ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈՒԼԻՍ, 1919-1920թթ.

Դա տեղի ունեցավ բժիշկ Այուբ Թաբիթի տանը, որտեղ հավաքվել էին նրա ամենամտերիմ մարդիկ: Ու ինչպես հաճախ էր պատահում Բեյրութում, նրանցից մի քանիսը մուսուլմաններ էին, մյուսները՝ քրիստոնյա մարոններ կամ ուղղափառ հույներ, կամ էլ, ինչպես Թոմաս Հարդինգը, բողոքական, թեև նա իրեն ագնոստիկ էր համարում: Այդուհանդերձ, մանավանդ մասնավոր հավաքույթներում տարբեր մշակույթների պատկանելը չէր խանգարում, որ մարդիկ, առանց որևէ մեկին վիրավորելու, անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը, սակայն երբեմն՝ որոշ խայթոցով: Դա պայմանավորված էր համատեղ ապրելու ձգտմամբ, և բոլորի կարծիքով՝ եթե պահպանեին ընդգծված ձևականությունը, ապա միասին գոյակցելով՝ շատ չէին առաջադիմի: Բժիշկ Թաբիթի հավաքույթում մթնոլորտն այդպիսին էր մինչև այն պահը, երբ հայտնվեց վերջին հյուրը՝ Ռաշիդ Ռեդհան, ով մտածող էր և Կահիրեի «Ալ-Մանար» ամսագրի խմբագիրը, սիրիացի ու արմատական: Բժիշկ Թաբիթն ուզում էր իմանալ, թե ինչ է կատարվում կուլիսների հետևում: Այդ առումով Ռեդհանն ամենահարմար մարդն էր:

Երբ նրան ներկայացրին Թոմասին, Ռեդհան սեղմեց նրա ձեռքը՝ ասելով.

- Աստված ամենակարող է: Ես պարոն Հարդինգի հետ մի գիշեր ծանոթացել եմ շերիֆ Հուսեյնի վրանում՝ Մեդինայի մոտ: Հիշո՞ւմ եք ինձ:

Թոմասն իրեն անկեղծ պահեց և գլխով բացասական նշան արեց՝ մի կերպ ասելով՝ ո՛չ: Նրան բացարձակապես չէր հիշում: Հավաքույթը, այո՛, հիշում էր, բայց այնտեղ՝ կիսախավար վրանում, որը լուսավորում էին շիկացած ածուխներն ու մի քանի ծխացող լամպեր, դժվար էր որևէ մեկին հստակ տարբերելը: Հիշում էր, որ բարևել էր հաշեմիթների պալատական մի քանի նշանավոր մարդկանց, բայց նրանց դեմքերը՝ ոչ: Ռեդհան, որ փոքր-ինչ լարված էր, զննում էր նրա հայացքը՝ համոզվելու համար, թե Թոմասն ի վերջո կհիշի իրեն: Նա հիսունին մոտ տղամարդ էր՝ սպիտակ, կարճ կտրած մորուքով ու ոսկեզօծ շրջանակ ունեցող ակնոցով, որը նրան միջերկրածովյան մտավորականի տեսք էր տալիս:

Բավականին երկար խոսեցին իսլամին առնչվող հարցերից: Թոմասը հասկացավ, որ գործ ուներ մի կարևոր անձնավորության հետ:

- Այո՛, պարո՛ն Հարդինգ,- Ռեդհան խոսում էր արաբերեն,- Աստված ամենազոր է, իսկ դուք՝ բրիտանացիներդ չգիտեք, թե նա ինչ է ձեզ մա-

տուցելու ապագայում: Եթե ինձ թույլ տաք, ապա կասեմ Ձեզ, թե ինչ եմ կանխագուշակում: Ժամանակը ցույց կտա, թե ես որ հարցում եմ սխալվում: Դուք լսած կլինեք «Նահդա»-յի, այսինքն՝ վերածննդի մասին: Մենք նախընտրում ենք այդպես անվանել, թեև եվրոպացիների կարծիքով՝ մենք ընտրել ենք սուֆիզմի ուղին: Դուք հավանաբար գիտեք, թե ով էր Յամալ Էդ-դին ալ-Աֆղանին. նա մահացել է քսաներկու տարի առաջ: Ունեցել է մի աչքի ընկնող աշակերտ՝ եգիպտացի Մուհամմեդ Աբդու անունով, ով գրեթե տասնհինգ տարի առաջ նույնպես վախճանվեց: Ալ-Աֆղանին հասկացել էր, որ աստվածաբանությունը կարող է ծառայել քաղաքական նպատակներին հասնելու համար: Քաղաքականություն՝ հանուն ազգային ազատագրության… Ու նա իր կյանքը նվիրեց քաղաքական նպատակների իրագործմանը՝ գաղութարարության դեմ մղվող պայքարին: Այնուհետև Աբդուն կարևորեց կրթությունը՝ որպես ազատագրական պայքարի զենք: Կարող էինք օգտվել առաջադիմության այլ պտուղներից, սակայն չէի կամենա Ձեզ ձանձրացնել տեսություններով, միայն ասեմ, որ Աբդուն ու ես հիմնեցինք «Ալ-Մանար» ամսագիրը: Օսմանները մատը մատին չէին տա՝ հանուն արաբների առաջադիմության, իսկ մենք խանգարող հանգամանք էինք խալիֆի համար, ով իրեն սուլթան էր հորջորջում: Այդ իսկ պատճառով օգնությունս առաջարկեցի շերիֆ Հուսեյնին ու անկեղծորեն Ձեզ կասեմ, որ նրանից հեռացա, երբ հասկացա, որ թեև բրիտանացիները մեզ շարունակ խաբված վիճակում են պահում, միևնույնն է, հույսը նրանց վրա է դնում: Այդ մարդու հետ ոչինչ հնարավոր չէ անել, սակայն Աստված ողորմած է: Պարո՛ն Հարդինգ, ավելի շատ անգլիացիները, քան ֆրանսիացիները, ներող կլինեք անկեղծությանս համար, համոզված էին, որ կխաբեն մեզ, ու եթե անգամ հասկանայինք, որ մեզ խաբում են, ոչինչ էլ չենք կարող անել կամ չենք անի: Մեզ նայում եք որպես տգետների, անհասկացողների, ովքեր չեն կարող հարմարվել նոր ժամանակներին: (Ռեդիայի սև բիբերը կայծկլտում էին:) Մենք այն չենք, ինչ դուք եք կարծում: Դուք ձեզ համար Արևելքի վերաբերյալ կեղծ կարծրատիպ եք կազմել՝ ներառելով ամբողջ «արևելյանը»: Դա վերաբերում է նաև արաբներիս: Անգամ եթե մարոկկոցիները գտնվեին Անգլիայի արևմուտքում, միևնույնն է, նրանք կմնային արևելցիներ: Սակայն հիմա դա չէ կարևորը: Աստծո կամքով մոտենում է փոփոխությունների ժամանակաշրջանը, և իսլամի մեջ նոր ուղղություններ ի հայտ կգան... Անգլիացիները կարոտով կհիշեն այն, թե նախկինում ինչպիսին էր աշխարհը:

Թոմասն ուշադիր լսում էր: Ներկաներից շատերն էին մոտեցել, ու մի

քանիսը գլուխները շարժում էին՝ համաձայն լինելով հյուրի ասածների հետ: Դա Բեյրութն էր, այդտեղ ամեն բան թույլատրվում էր, իսկ Դամասկոսը, իհարկե, այլ էր:

Ռաշիդ Ռեդիան շարունակում էր սևեռուն նայել Թոմասին՝ որևէ պատասխան ակնկալելով: Անգլիացին, բնականաբար, նրա հետ համաձայն էր և համամիտ, որ իր հայրենակիցներն առաջնորդվում են կարծրատիպերով և թյուր կարծիք ունեն Մերձավոր Արևելքի հանդեպ, ինչը և նրանց խանգարում էր, որ ճիշտ ընկալեն իրականությունը: Իր դեպքն ուրիշ էր, քանի որ անձնական կյանքի իրողությունները նպաստել էին, որ ինքն առանց աղավաղման կամ նվազագույն աղավաղմամբ ընկալեր իրավիճակը: Այդ գործում իր դերն էր ունեցել Բեյրութը:

Ռեդիան ի՞նչ էր ուզում ասել այն նախադասությամբ, որ անգլիացիները դեռ կհիշեն, թե նախկինում ինչպիսին էր աշխարհը: Թոմասի կարծիքով՝ դա նման էր սպառնալիքի: Հին ռազմավարության համաձայն՝ երբ արաբներն ուզում էին վախեցնել իրենց ախոյանին, սկսում էին պարծենալ:

- Այո՛, պարո՛ն Հարդինգ,- Ռեդիան կարդում էր նրա մտքերը,- Դուք փորձում եք մեզ ավելի լավ հասկանալ՝ հենվելով Ձեր անձնական փորձի վրա: Սակայն չկարծեք, թե դրանով Դուք տարբերվում եք Ձեր հայրենակիցներից: Դուք մնում եք որպես անգլիացի՝ անգլիացի մի պրոֆեսոր, ով հետաքրքրվում է իր երկրից այնքան տարբեր ու արտասովոր մի աշխարհով:

Թոմասը համաձայնեց: Այո՛, Ռեդիան չէր սխալվում, սակայն անկախ ամեն ինչից՝ նա չէր վախենում այն բանից, թե արաբները կարող են Մեծ Բրիտանիայի համար լուրջ խնդիր դառնալ:

Մեկ ամիս անց Թոմասն ու բժիշկ Թաբիթը գնացին հիվանդանոց՝ իմանալու, թե ինչպես էր Բողոսյանը: Նրան արդեն պետք է դուրս գրեին: Այդ ընթացքում մահացել էր նրա կինը: Ինչ վերաբերում էր նրա երկու դուստրերին ու որդուն, ապա նրանք արդեն դուրս էին եկել հիվանդանոցից: Իրենց ցավակցությունը հայտնեցին վշտից ցնցված Բողոսյանին ու դանդաղ քայլելով՝ նրան ուղեկցեցին մինչև նրա տուն՝ հիվանդանոցից ընդամենը երեք թաղամաս այն կողմ:

Դուստրերը՝ Մարին ու Սոֆյան, ջանք չէին խնայել տունը կարգի բերելու համար, ու բժիշկ Բողոսյանը մտնելուց առաջ սրբեց արցունքները:

- Գիտեք,- ասաց՝ կարծես ներողություն խնդրելով,- գրեթե երեսունութ տարի էր, ինչ ամուսնացած էինք:

Այդուհանդերձ, նա ուրախ էր կրկին իր օջախում գտնվելու համար: Մինչ նրանց բուրավետ թեյ և հայկական համեմունքներով պատրաստված կարկանդակներ կմատուցեին, Բողոսյանը սկսեց պատմել իր գլխով անցած փորձությունները:

- Դուք գիտեք, որ ես փորձում էի բոլորին օգնել: Սակայն այն, ինչ հայերի հետ էր կատարվում... Իմ զարմիկներից մեկի հետ, ով Հալեպում որպես օսմանյան երկաթուղու հսկիչ էր աշխատում, սկսեցինք նրանց, որոնց կարող էինք, դուրս բերել տեղահանված բազմությունից: Նրանցից շատերը մի քանի օր ալավիների կամ դրուզների հետ պատսպարվում էին լեռներում, քանի որ թուրքերը նրանց այդ կողմերում չէին փնտրի, հետո ձկնորսական որևէ փոքրիկ նավակայանից նրանցից ոմանց ուղարկում էինք Կիպրոս, ոմանց՝ Պաղեստին, այլոց՝ Եգիպտոս: Մի գիշեր թուրքական ոստիկանությունը եկավ մեր տուն: Ոչինչ չասացին: Միայն ստիպեցին, որ գնանք իրենց հետ: Փորձեցի փաստարկել, որ զավակներս ոչ մի մեղք չունեն: Ինձ անգամ չպատասխանեցին: Հետները բերել էին գերմանական այդ փոքր բեռնատար մեքենաներից: Մեզ հենց այդպես, ինչ որ հագներիս կար, դրեցին այդ մեքենան ու տեղափոխեցին Հալեպ: Ես ահավոր անհանգիստ էի այն մտքից, թե ինչ կարող էր տեղի ունենալ կնոջս ու զավակներիս հետ: Ինձ մեղավոր էի զգում, պետք է ավելի ողջախոհ լինեի: Մինչ այդ պահը գլխի չէի ընկել: Հալեպ հասնելուն պես աղջիկներիս, կնոջս ու որդուս տարան մի կողմ, իսկ ինձ՝ այլ: Ականջներիս մեջ դեռ լսվում են երեխաներիս ճիչերը: Ինձ տարան հին բանտ: Այնտեղ էր իմ զարմիկը՝ մերկ, կապկպված ու կախված ինչ-որ երկաթյա ձողերից, մարմնին՝ մտրակի հետքեր: Նրա գլխին մի քանի դույլ ջուր լցրին, որ ուշքի գար: Ես սարսափահար էի… Ինձ համար միևնույնն էր, թե հետս ինչ կարող էր պատահել: Չէի դադարում զավակներիս ու կնոջս մասին մտածելուց: Եթե նրանց որևէ բան պատահեր, ինձ չէի ների: Զարմիկս հաջորդ օրը մահացավ: Ինձ տանջեցին այնքան, մինչև որ խոստովանեցի այն, ինչ նրանք ուզում էին իմանալ: Հետո ինձ տարան հայերով լի և փշալարերով պատված մի ճամբար ու թողեցին այդտեղ: Ստացած հարվածների պատճառով հազիվ էի շարժվում: Բոլոր հայ աքսորյալները տղամարդիկ էին, մեծ մասը՝ ծերեր, մի քանի երիտասարդներ ու երեխաներ: Բոլորս էլ հայեր էինք: Ինչ-որ մեկը փորձեց ինձ օգնել, բայց այդտեղ ոչինչ չկար: Միայն մի կեղտոտ ու գարշահոտ գուռ էր, որից ջուր էինք խմում: Չկար որևէ շինություն, ցերեկը բարկ արևի տակ էինք, գիշերը՝ երբեմն անձրևի, երբեմն էլ՝ ձյան, միշտ սառցակալած: Անվերջանալի չարչարանքներ… Մեզ մեկ անգամ

էին ուտելու բան տալիս. գետնին ցեխակոլոլ ինչ-որ աղբի զանգված էին շուռ տալիս: Մենք դա ուտում էինք ու քաղցից մեռնում: Երբ մի փոքր ուշքի եկա, փորձեցի օգնել մյուսներին. ի վերջո ես բժիշկ եմ: Օգնում էի մեռնողներին: Շատերն էին այնտեղ մահանում… առանց օգնության ու մխիթարանքի, անասունների պես: Այդպես անցան մի քանի ամիս: Ամենավատ տանջանքս այն էր, որ ընտանիքիցս ոչ մի լուր չունեի: Հետո կայազորը փոխվեց: Թուրք սպան, ով ղեկավարում էր կերակուր բերողներին, ինձ հետ ընդհարվեց այն պատճառով, որ փորձում էի վիրակապել մի ծերունու՝ խոցերով պատված ոտքը: Մոտեցավ՝ վրաս գոռալով: Գլուխս բարձրացրի, ու նա միանգամից քար կտրեց: Ինձ տեղն էր բերել. հենց այստեղ՝ Բեյրութի հիվանդանոցում, ես նրա բժիշկն եմ եղել: Պատերազմից մի քանի տարի առաջ նրա կյանքն էի փրկել, երբ ոտքերից մեկում ոսկրախտ էր սկսվել: Զարմացավ՝ ինձ այդտեղ տեսնելով, մոտեցավ ու արդեն այլ տոնով ինձ ասաց.

- Բժի՛շկ Բողոսյան: Ինձ չե՞ք հիշում: Ալի Էսրադն եմ: Ի՞նչ եք անում այստեղ:

- Հայ եմ,- ասացի: Նա չիմացավ՝ ինչ պատասխանի, սակայն տեսա, որ ամաչում էր, քիչ հետո բոլորը հեռացան:

Հաջորդ օրն ուտելիք բերեցին, բայց՝ արդեն ուրիշ տեսակի, մի փոքր ավելի լավը և առատ, գոնե չլցրին գետնին, թողեցին սայլակի վրա: Նաև մաքրեցին գուռը, ջուրը համարյա ամեն օր փոխում էին: Ինձ թողեցին վուշե մի տոպրակ, որում ես գտա առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայք: Հետո ամեն բան ավելի լավացավ: Առաջվա պես վայրագ չէին: Ալի Էսրադը մոտ չէր գալիս, բայց ես նրան տեսնում էի. ձիու վրա նստած՝ մոտենում էր փշալարերին ու հայացքով ինձ փնտրում: Պարզվեց, որ օսմանյան հետախուզական ծառայության սպա էր, պատասխանատու հսկիչ, որպեսզի ամեն ինչ արվեր այնպես, ինչպես կառավարությունն էր ծրագրել: Անշուշտ, Հալեպի հայկական ճամբարների պատասխանատու սպաները, որ ավելի բարձր կոչում ունեին, նրանից վախենում էին: Մի օր նրան տեսա փշալարերի մոտ, մոտեցա: Նա դեռ հեռվից նկատել էր, որ ես կաղալով մոտենում եմ, ու հետ-հետ գնաց, որ հեռանար, բայց ես նրան ձայն տվեցի. «Ալի՛ Էսրադ բեյ, Ալի՛ Էսրադ բեյ, լսի՛ր քո բժիշկ Բողոսյանին»: Գիտեի, որ կարող էի գլխիս փորձանք բերել, սակայն մյուս կողմից եթե ցույց տայի երկյուղս, գուցե ամեն բան դառնար առաջվա պես կամ շատ ավելի վատ: Նա արձագանքեց և հետ եկավ մինչև ցանկապատ: Լռելյայն ինձ էր նայում: Իմ կարծիքով՝ ներքուստ մեծ ամոթ էր զգում, քանզի դեռ մինչ պատերազմը գիտեի նրա

ընտանիքին և ձեզ պետք է ասեմ, որ լավ մարդիկ էին: Նրա հայրն ընկերս էր, ու Աստված նրան տարավ պատերազմի սկսվելուց մեկ տարի առաջ: Այդպես նա գոնե ստիպված չեղավ դիմանալ այդ ամենին: Ես նրան ասացի. «Ալի՛ Էսրադ: Ես ոչ մի բան չեմ ուզում, բայց ուզում եմ քեզ խնդրել, որ օգնես կնոջս ու երեք զավակներիս: Եթե ողջ են ու գտնվում են Հալեպում, օգնի՛ր նրանց, իսկ ես քեզ միշտ կօրհնեմ: Ես օգնեցի քո մորը, երբ նրա կոնքոսկրը կոտրվեց, քո մորաքույր Ֆաթիմային, երբ նրա ոտքերը սայլի տակ կոտրվեցին: Օգնի՛ր ինձ, փրկի՛ր իմ ընտանիքը, Ալի՛ Էսրադ բեյ, ու ես երբեք չեմ ասի, որ թուրքերի շնորհիվ դա եղավ, օգնի՛ր ինձ»: Ոչ մի բառ չասաց: Դա եղավ մոտ մեկուկես ամիս առաջ: Երեք օր անց եկան իմ հետևից: Նա այնտեղ չէր, ու դա ինձ ահավոր վախեցրեց: Սակայն ինձ այնտեղից հանեցին ու փոքր բեռնատարով տարան Հալեպ, որտեղ՝ Կարմիր խաչի ճամբարներից մեկի մի վրանում, բժիշկ սպաների հետ գտնվում էր իմ ընտանիքը: Այնտեղից բոլորիս կրկին բեռնատար նստեցրին ու բերեցին այստեղ՝ Բեյրութի հիվանդանոց: Իսկապես հրաշք է: Պետք է հավատարիմ մնամ իմ խոստմանը. նրանք թուրքեր չէին: Ինչպես մյուս, այնպես էլ այդ ժողովրդի մեջ կան լավ և վատ մարդիկ, շատերն էլ՝ անտեղյակ կատարվածին: Մեղավորները գաղափարախոսներն են, զինվորական հրամանատարությունը, «Իթթիհադի» կառավարությունը, իսկ ամենից շատ՝ երեք չարանենգ սրիկաները՝ Թալեաթը, Ջեմալն ու Էնվերը, նաև՝ մի խումբ անգութ մարդատյացներ, ինչպիսիք դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաեդդին Շաքիրն են և նրանք, ովքեր մասնակցում էին այն ժողովներին, որտեղ ծրագրվեց այս ամեհի ոճիրը: Այդուհանդերձ, Թուրքիայում էլ կան մարդիկ, որ սխալ են մտածում, կա՛մ առաջնորդվում են վատ խորհուրդներով, կա՛մ վախենում են այն բանից, որ իրենց կամ իրենց յուրայիններին կարող է վտանգ սպառնալ, սակայն կան նաև այնքան բարի մարդիկ, ինչպես մեր շրջապատում եղած լավագույնները: Եվ գիտեք, թե ինչ հասկացա. բոլոր մարդիկ նույնն են և՛ լավ, և՛ վատ առումներով, և գոյություն ունեցող մարդկանց ցեղը միակն է, որքան էլ որ բաժանվել է ըստ դրոշների ու հանդերձանքի: Այդ Ալի Էսրադ բեյը մարդ արարած է, ում համար ինձ օգնելը կարող էր շատ թանկ նստել: Վարձու հսկիչները, ովքեր ղեկավարում էին այդ ճամբարները, ատում էին իրենց ղեկավարներին, ու հենց առիթ ներկայանա, ապա նրանցից վրեժ կլուծեն: Էսրադը ոչ միայն փրկել է իմ ընտանիքը, այլև փոխել է իմ՝ թուրք ժողովրդի վերաբերյալ ունեցած համոզմունքը: Հասկանո՞ւմ եք… Այդ մարդն ինձ համար արեց այն, ինչ մեկ ուրիշը, գուցե և բարոյական առումով ավելի քաջ և ազնիվ լինելով, չհամարձակ-

վեր անել: Այլևս չենք կարող ասել, թե հայերն ավելի լավն են կամ վատը, քան թուրքերը, քրդերը, արաբները կամ եվրոպացիները: Ի վերջո, բոլորս էլ մարդ արարածներ ենք: Սակայն մեկ բոպե. եթե ինձ հարցնեն, թե ինչ եմ մտածում «Իթթիհադի» կառավարության, նրանց մեղսակիցների կամ նրանց մասին, ովքեր փորձեցին մեզ բնաջնջել, քանի որ թուրք զտարյուն ժողովրդի գաղափարի առումով խանգարում էինք իրենց, կասեմ ձեզ հստակ. նրանք այնպիսի ոճրագործներ են, որ արժանի են կախաղանի:

Բժիշկ Բողոսյանն աստիճանաբար մտավ կյանքի սովորական հունի մեջ, թեև՝ ոչ լիարժեք: Դոկտոր Պապապուլոսը նրան ազատ գրաֆիկով և առանց մեծ պատասխանատվության կրկին աշխատանքի ընդունեց հիվանդանոցում, ինչի համար Բողոսյանը շնորհակալ էր. ուզում էր իրեն ցույց տալ լրիվ կազդուրված, սակայն ուժերը դեռևս դավաճանում էին նրան:

Այդ ընթացքում Ֆայսալի կողմնակիցները ողջ ծովեզերքով քարոզչություն էին անում, նույնիսկ որոշել էին սարերը բարձրանալ: Նրանց լավ չէին դիմավորում դրուզները, ոչ էլ՝ ալավիները, ովքեր ուզում էին ապրել այնպես, ինչպես նախկինում, ու չէին վստահում արաբ սուննիներին, ոչ էլ ձգտում էին Դամասկոս մայրաքաղաքով մի այնպիսի պետություն ունենալուն, որը գլխավորելու էին սուննիները, թեև այդպես ավելի մոտ կգտնվեին իսլամին, քան քրիստոնեությանը:

Ֆայսալն իրեն հռչակել էր Սիրիայի թագավոր ու մտադիր չէր հետ կանգնել այդ որոշումից: Դա պատմական պատեհ առիթ էր հաշեմիթների համար. մի բան, որ երազել էին սերնդեսերունդ: Միշտ ապրել էին դանակի սայրին, ու նրանց չէր վախեցնում մարտահրավերը: Աստված նրանց հետ կլիներ, երբ մարտի ելնելու անհրաժեշտություն ծագեր:

Այդպես սկսվեց մարոնների ու սուննիների՝ միմյանցից բաժանվելը, թեև ծովեզերքի մուսուլմաններից շատերը գերադասում էին անկախ Լիբանան, քան Դամասկոսում Հիջազի արաբ թագավոր: Սա էր խնդիրը: Հիջազի արաբները, ի տարբերություն Բեյրութի արաբների, այլ պատկերացում ունեին առաջադիմության վերաբերյալ: Շերիֆ Հուսեյնին նայում էին որպես միջնադարյան միապետի՝ շրջապատված ավագանիներով, ովքեր կապրեին թեկուզ օմայանների հետ: Մինչդեռ Լիբանանում մամուլն անդրադառնում էր ֆրանսիական ցանկացած լրագրում արծարծված այնպիսի թեմաների, որոնք գրեթե հերետիկոսություն էին մզկիթների իմամների համար. օրինակ՝ կինը՝ որպես լիիրավ քաղա-

քացի՝ բոլոր իրավունքներով, մամուլի ազատություն, ամուսնություն՝ առանց ամուսնացող զույգերի ընտանիքների ընտրության, Սահմանադրություն՝ հիմնված հավասարության, եղբայրության ու ազատության վրա… Կամ՝ դա ի՞նչ բան է, որ երիտասարդ աղջիկը սովորի համալսարանում… Եվ դեռ այնքան ու այնպիսի թեմաներ, որ Մեքքայում կամ Մեդինայում, նույնիսկ Սիրիայի կենտրոնական մասում չէին ընդունում կամ չէին ըմբռնում ու համարում էին հերձվածություն կամ ֆրանսամետություն: Այնինչ եվրոպական առաջադեմ Բեյրութում դրանք սովորական երևույթներ էին:

Թոմասն իրավիճակը հենց այդպես էլ մեկնաբանեց Միացյալ Նահանգների նախագահի կողմից ուղարկված Կինգ-Կրեյն հանձնախմբի անդամներին, ովքեր ուզում էին հասկանալ Մերձավոր Արևելքի հետ կապված խնդիրները: Նրանց հիմնականում հետաքրքրում էր այն ամենը, ինչ վերաբերում էր Բալֆուրի հռչակագրին և սիոնիզմին, այն հնարավորությանը, թե որքանով էր իրական, որ հրեաներն իրենց հրեական պետությունը կառուցեն այնպես, ինչպես Թեոդոր Հերցլը երազել էր ու գրել: «Ազգային օջախ» կոչված երևույթը մեղմ էր ասված, իսկ իրականում դա ավելի արդյունավետ ուղի գտնելու նպատակ էր հետապնդում: Վիլսոնը համաձայն չէր դրա հետ կամ չգիտեր՝ ինչի հետ համաձայնել, ու ինչպես Կինգը, այնպես էլ Կրեյնը փորձում էին իմանալ, թե այդ ամենի վերաբերյալ ինչ դիրքորոշում ունեն տարբեր մարդիկ:

Ինքը՝ Ֆայսալը, զղջում էր, որ սիոնիստ ներկայացուցչի՝ Վեյցմանի հետ հանդիպման ընթացքում հավանություն է տվել Բալֆուրի հռչակագրին և սիոնիստական նկրտումներին: Միաժամանակ նա Վեյցմանին մեղադրում էր, որ այդ հանդիպման մասին լուրը տարածել էր համաշխարհային մամուլում: Դրա պատճառով նա զրկվել էր շատերի, անգամ իր որոշ յուրայինների աջակցությունից:

Յուսուֆ էլ-Ազմայի պատվիրակներից մեկը, ով հայտնի էր որպես «Ֆայսալի սուր», եկավ Բեյրութ՝ խոսելու դեռ գոյություն ունեցող «Լիբանանյան զարթոնք» շարժման առաջնորդների հետ: Սակայն գնաց հիասթափված, թեև հայտնի փաստաբան Դայբե էլ-Մերի միջոցով վերջին փորձն էր արել՝ նրան հանձնարարելով, որ հանդիպում կազմակերպի գնդապետ Թոմաս Հարդինգի՝ Բեյրութում ուժեղ բրիտանացու հետ:

Մարտի ութին էմիր Ֆայսալը՝ որպես Ֆայսալ I, թագադրվեց Սիրիայի թագավոր: Դամասկոսում տեղի ունեցած հանդիսավոր արարողությանը չմասնակցեցին ո՛չ բրիտանացիները և ո՛չ էլ ֆրանսիացիները, թեև հրավիրված էին:

Անգլիացիներին թվում էր, թե նա չեղյալ էր հայտարարել իր լիազորությունները, որ չէր էլ ունեցել, իսկ ֆրանսիացիների կարծիքով, որն արտահայտվեց նաև Բեյրութի թերթերում, այդ հանդիսությունը վերածվել էր օպերետային ներկայացման: Թոմաս Հարդինգին Ֆայսալը հատուկ և անձամբ էր հրավիրել, քանի որ բարեկամ էր համարվում և մի քանի անգամ այցելել էր շերիֆ Հուսեյնին: Բացի դրանից՝ նա բրիտանական բարձրաստիճան սպա էր ու մարոնների սերտ բարեկամը. նոր միապետի համար հատկապես շահեկան էր նրա ներկայությունը:

Երուսաղեմից, սակայն, մի հեռագիր եկավ, որը Հարդինգին արգելում էր, որ մասնակցի թագադրման արարողությանը: Բրիտանացիները խուսափում էին ֆրանսիացիների հետ քաղաքական կոնֆլիկտ ունենալուց: Հեռագիրը ստորագրել էր բրիգադի գեներալ Ֆիլիպ Սթիմսոնը, ով փակագծերում ավելացրել էր. «Զգո՛ւյշ եղիր: Իրավիճակը չափազանց լարված է»: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Թոմասն էլ Ֆայսալին ստիպված ուղարկեց մի հակիրճ հեռագիր:

8.3. 1920

Նորին արքայական գերազանցություն Ֆայսալ I, Սիրիայի թագավոր, այդ հին ու նոր երկրին մաղթում եմ լավագույնը:

Ինձանից անկախ հանգամանքների պատճառով իմ մասնակցությունը բացառվում է:

Իմ շնորհավորանքներն ու երկար կյանք Ձերդ գերազանցությանը:

Թոմաս Հարդինգ, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր:

Նա ուզում էր ընդգծել իրենց միջև եղած հեռավորությունը: Այդ պատճառով ստորագրեց ոչ թե որպես տարածաշրջանում բրիտանական շահերի ներկայացուցիչ, գնդապետ Թ. Հարդինգ, այլ որպես անձնական բարեկամ:

Նրա համար դժվար չէր պատկերացնել նորընծա միապետի դառնությունը, ում ամենակարևոր պահին լքել էին նրանք, ովքեր համարվում էին արաբների բարեկամները: Կարո՞ղ էր արդյոք առանց նրանց անցնել այդ փշոտ ճանապարհը:

Մի քանի օր անց հավաքվեցին Ահմեդ էֆենդի Թաբբարահի՝ մուսուլման լրագրողի տանը, ով անկախ Լիբանանի գաղափարի կողմնակից էր: Այդուհանդերձ, նրա համար առաջնային էին նաև թե՛ իրենց կրոնը, թե՛ իրենց մշակույթը:

Գեներալ Յուսուֆ էլ-Ազմայի բանբերը Դամասկոսի հեղինակավոր փաստաբաններից էր, ով ուսանել էր Փարիզում: Ժամանակակից

մարդու տպավորություն էր թողնում, հագնված էր եվրոպական ոճով, շարժուձևը՝ բարեկիրթ, «մարոնական եղանակով» խոսակցություն վարելու ունակ, օժտված ճիշտ այն ամենով, ինչ հարկավոր էր Ֆայսալ թագավորին հետաղեմ չհամարելու համար: Սակայն ի տարբերություն իր կողմնակից փաստաբանի՝ Փարիզում անցկացված Խաղաղության կոնֆերանսի օրերին Ֆայսալը չէր համաձայնել, որ դ՚Օպերայի փողոցի լավագույն դերձակներից մեկն իր համար վերջին նորաձևության կոստյումներ կարեր: Նրա խորհրդականները պնդել էին, սակայն նա մատնացույց էր արել իր բրիտանացի բարեկամ ու խորհրդական Թ. Հ. Լոուրենսին. «Լոուրենսն արդյոք չի՞ կրում Հիջազի էմիրի գլխարկ, և թվում է, որ դրանով շատ հպարտ է»:

Նա չէր ուզում ցույց տալ, թե հրաժարվում է իրենց ավանդույթներից. չէ՞ որ ինքը Հիջազի էմիրն է՝ հաշեմիթների ժառանգորդը: Փարիզեցի դերձակին չհաջողվեց նրան համոզել, իսկ Ֆայսալի կողմնակիցները հասկացան, որ կորցնում են արքայազնի կերպարը ներկայացնելու հրաշալի հնարավորություն: Արքայազն, ով հավակնում էր Դամասկոսում թագավոր կարգվելուն, ով՝ որպես ժամանակակից ու առաջադեմ մարդ, կարող էր իր երկրի զարգացումը դնել եվրոպական ուղու վրա:

Գեներալ Յուսուֆ էլ-Ազմայի փաստաբանը, առանց սար ու ձոր ընկնելու, Թոմաս Հարդինգին ուղղակիորեն հարցրեց, թե արդյոք բրիտանացիները դեմ դուրս կգան ֆրանսիացիներին, եթե վերջիններս Ֆայսալի դեմ զենք գործադրեն: Թոմասն ակնդետ նայեց հմուտ փաստաբանի աչքերին և ասաց.

- Ո՛չ, երբեք չեն հարձակվի ֆրանսիացիների՝ իրենց վստահելի դաշնակիցների վրա:

Դա նշանակում էր, որ ֆրանսիացի գեներալներ Գուրոն, Գուբեն և այլք սպառնում էին արաբական ինքնավարության հռչակմանը, որը 1919 թվականի հուլիսին տեղի էր ունեցել Դամասկոսում և ընդգրկել էր Սիրիան, Լիբանանը, Հորդանանն ու Պաղեստինը: Բրիտանացիները ոչ միայն աջակցել, այլև Մակ-Մահոնի նամակագրությամբ և տեղի ունեցած հանդիպումների ընթացքում հովանավորել էին սահմանադրական միապետության ստեղծմանը, որի գլուխ կանգնելու էր Ֆայսալը: Ըստ այդմ՝ Մեծ Բրիտանիան տեր էր լինելո՞ւ արաբներին տված իր խոստումներին:

Թոմաս Հարդինգը հայացքը չիջեցրեց ու շարունակեց.

- Մեծ Բրիտանիան միշտ էլ իր տված խոստումների տերն է:

Այլևս ասելիք չկար, փաստաբանը փակեց իր սև կաշվե թղթապա-

նակն ու իր դժգոհությունն արտահայտեց՝ տեղից կտրուկ վեր կենալով: Գլուխը թեթևակի խոնարհելով՝ հրաժեշտ տվեց ու դուրս եկավ: Այդ պահից ի վեր Ֆայսալը պետք է ըմբռներ, որ եվրոպացիների քաղաքականությունը հիմնված է իրենց իսկ շահերի վրա, այլ ոչ թե ի պաշտպանություն առանձին անհատների կամ դինաստիաների:

1920 թվականի ամռան սկզբին շոգ էր հատկապես այդ տարածաշրջանում: Բեյրութում մարդիկ բողոքում էին բարկ արևից: Քաղաքի արվարձաններում Անրի Գուրոն ամեն առավոտ ռազմական ստուգատես էր անցկացնում, ինչն ավելի շատ զինուժի ցուցադրություն էր և պարծանքի դրսևորում. «Ռենո» ընկերության արտադրած շողշողուն թնդանոթներ, հրանոթներ, փայլփլուն սվիններով սենեգալցի հրացանակիրների զորախմբեր: Դա էմիրին ուղղակի նախազգուշացում էր առ այն, որ Ֆրանսիան նրան թագավոր չի ճանաչում ու հետ չի կանգնի իր մտադրություններից:

Ֆրանսիան տարածաշրջան տեղափոխեց թնդանոթներով բեռնված մի քանի նավեր: Թուլոնի ու Մարսելի զինապահեստները լի էին թնդանոթներով, ու Մարիանո Գուբեն Սիրիայի համար օժանդակ սպառազինություն շտապ պահանջեց: Ֆայսալ թագավորի լրտեսները նրան նախազգուշացրին, որ ֆրանսիացիները գործի են դնելու իրենց ողջ զինուժը: Գեներալ Յուսուֆ էլ-Ազման նույնպես նախապատրաստում էր արաբական զորաբանակը, մանավանդ՝ ուղտերի և ձիերի հեծելազորները: Ֆայսալը չպետք է մասնակցեր մարտին, եթե անգամ այն տեղի ունենար. չէ՞ որ կարող էր պատահական մի փամփուշտի զոհ դառնալ: Թագավորն ամեն կերպ պնդում էր, որ ինքը պետք է մասնակցի հավանական մարտին, ու միայն նրա հոր՝ շերիֆի հրահանգը կասեցրեց Ֆայսալի մտադրությունը: Անկախ այդ ամենից՝ անգլիացիների հետ հարաբերությունները դեռ սահուն էին, թեև՝ շատ լարված: Արաբները նրանց չէին կարող հաշվի չառնել, սակայն անգլիացիները Ֆրանսիայի դեմ դույզն-ինչ շարժում չէին անի:

Այդ իրավիճակը հուսահատեցնում էր Ֆայսալին: Նա հասկանում էր, որ իրեն դավաճանել են, սակայն ի վիճակի չէր այդ մասին ասել անգլիացիներին: Թոմասն Աբդ ալ-Ղանի ալ-Ուրայսիի՝ «Լամարկազի» գաղտնի կազմակերպության (այդ կազմակերպությունն արաբական ապստամբության պատճառ էր հանդիսացել) հիմնադիրներից մեկի միջոցով բարեկամական մի նախազգուշացում ստացավ, որն ուներ հետևյալ բովանդակությունը. «Արաբների հանդեպ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը շատ վտանգավոր է: Պատմական մի

ժամանակահատվածում, երբ կարող էին կնքել հավերժ բարեկամություն, այդ քաղաքականությունը գործում է ի վնաս արաբների շահերի և իսլամի: Բրիտանացիները ոչ միայն Ֆայսալին են դնում կասկածելի դրության մեջ, այլև Բալֆուրի հռչակագիրը և սիոնիստական ծրագրերը: Սիոնիստներին երբեք չի հաջողվի Պաղեստինում հիմնել հրեական պետություն, քանզի արաբական աշխարհը դա չի հանդուրժի: Եվ երբեք չի լինի քրիստոնեական մեծամասնությամբ բազմակրոն Մեծ Լիբանան պետությունը, որին ձգտում են մարոններն ու Ֆրանսիան: Դա պատմական սխալ է, որի համար ապագայում զղջալու են»:

Այդ գաղտնի նախազգուշացումը Թոմասին հիշեցրեց Ռաշիդ Ռեդհայի դաժան խոսքերը, այն է՝ անգլիացիները կմտաբերեն, թե նախկինում ինչպիսին էր աշխարհը:

Չնայած այն բանին, որ Թոմաս Հարդինգն արդեն չէր առնչվում հետախուզական ծառայություններին, սակայն դեռ որոշակի կապեր ուներ: Ըստ իր ստացած հաղորդագրությունների՝ ալ-Աֆղանիի ու եգիպտացի Մուհամմեդ Աբդուի ազդեցությունը տարածվում էր մինչև մուսուլմանական աշխարհի հեռավոր անկյունները: Ձևավորվում էր այն քաղաքական իսլամը, որը միտված էր գաղութարար տերություններին դիմակայելուն:

Թոմասն այդ մասին խոսեց իր որոշ բարեկամների հետ, սակայն ոչ ոք դա վտանգավոր չհամարեց: Սկսած առաջին խալիֆից մինչև ներկայիս պահը իսլամում միշտ էլ նման բան տեղի է ունեցել. այսպիսին էր պատասխանը: Իսլամն ուներ իր քաղաքական ուղղությունները: Մարգարեի մահից հետո նրա հաջորդի փնտրտուքը հրահրեց առաջին ընդհարումը: Ամենամոտ կանգնածներն ունեին ավելի՞ շատ իրավունքներ: Գուցե պետք է ընտրվեին լավագույնները, թեև՝ առանց արնակցական կապի: Սուննիներ՞ը, թե՞ շիաներ… Այդ ամենը նորություն չէր: Թոմասն ասաց, որ խոսքը դրա մասին չէր: Դա այլ դիրքորոշում էր, որը նախատեսում էր այնպիսի վայրագ ուղիներ, ինչպիսին, օրինակ, հարկ եղած պահին օտարերկրացիներին Դար Ալ Իսլամից բռնի դուրս քշելն էր: Անսպասելիորեն ի հայտ էր եկել իսլամական մի սպառնացող գաղափարախոսություն, որը ոչ թե հրավիրում էր երկխոսության, այլ միայն ներկայացնում էր պահանջներ և խոսում հետապնդումների մասին: Սակայն ո՛չ Ուայթհոլում, ո՛չ էլ Քէ դ՛Օրսեյում ասես չէին հասկանում, որ ամեն բան փոխվել է:

Մայիսի քսանին հավաքվեց Լեռնային Լիբանանի Խորհուրդը: Նիստն անձամբ հրավիրեց մարոն պատրիարքը՝ Էլիաս Հոայեկը: Չէր

կարելի ժամանակ կորցնել: Բոլորը գրգռված էին, այլևս չէին պահպանում ձևական կողմերը, ինչպես մի քանի ամիս առաջ: Օրերն էին հաշվում, և բոլորի նյարդերն ահավոր պրկված էին: Թոմասին հրավիրեցին մասնակցելու նիստին, սակայն՝ առանց ձայնի ու քվեի իրավունքի. անհրաժեշտ էր, որ ինչ-որ մեկը հնարավորինս անաչառ կերպով կազմեր նիստի արձանագրությունը:

Ելույթով հանդես եկավ Դաուդ Ամունը: Պատրիարքը նրան զգուշացրեց, որ հակիրճ խոսի: Դա այն պահն էր, որ ոչ մի սխալ չէր կարելի թույլ տալ:

- Սիրելի՛ բարեկամներ: Խորհուրդը գումարվել է ամրագրելու համար այն գաղափարները, որոնք մենք քննարկել ենք: Ուզո՞ւմ ենք Մեծ Լիբանան՝ քաղաքականապես ու վարչական տեսանկյունից անկախ մի պետություն, մի ամբողջական երկիր, որի առնչությամբ համաձայնության եկանք այն ժամանակ:

Գրեթե բոլոր ներկաները ձեռք բարձրացրին՝ ցույց տալով կանաչ քարտեր: Նրանք, ովքեր երազում էին Դամասկոս կենտրոնով մի Մեծ Լիբանանի մասին և համարվում էին Ֆայսալի հպատակներ, չէին մասնակցում Խորհրդի աշխատանքին: Ոչ ոք չգիտեր, թե ինչպես է վերջանալու այդ նիստը, ու ոչ ոք չէր ուզում դառնալ առաջին նահատակը, եթե որևէ անախորժություն ծագեր:

- Բարի, առաջին կետն ընդունված է: Ուզո՞ւմ ենք ունենալ ժողովրդավարական իշխանություն, երբ մեր ժողովրդի մեծամասնության քվեների միջոցով կընտրվեն առաջնորդները:

Կրկին կանաչ քարտերը հայտնվեցին համարյա բոլորի ձեռքերին: Դաուդ Ամունը չէր ուզում ձգձգել:

- Համաձայն եք: Երկրորդ կետն ընդունված է: Ուզո՞ւմ ենք, որ ձեռնամուխ լինենք Սահմանադրություն մշակելու աշխատանքներին: Այո՞... Լավ, ընդունված է նաև այս կետը:

Ամունը թերևս այդ պահին նրանց չէր կարող ասել, որ պատրիարքը Վատիկանից արդեն ստացել է Սահմանադրության մի քանի նմուշներ. այդ հարցը վաղուց էր դարձել ուսումնասիրության առարկա:

- Ցանկանո՞ւմ ենք Ֆրանսիայի հետ ունենալ մի հիմնավոր համաձայնագիր, որպեսզի մեր ձեռնարկած գործը խթանվի:

Մարոններն իրենց առաջնորդին արձագանքեցին ծափահարություններով: Կանաչ քարտերը մեծամասնություն էին կազմում:

- Լավ, համաձայն եք: Ձեր կարծիքով՝ ճի՞շտ կլինի, որ բոլոր այս հարցերը տեղափոխենք Փարիզի Խաղաղության կոնֆերանս:

Կանաչ քարտերն օդ թռան: Բոլորն էլ ուզում էին, որ մինչ ֆրան-

սիացիներն իրենց թնդանոթներից կրակ կբացեին, այդ հարցերը լուծվեին հստակորեն ու առանց երկիմաստության: Դաուդ Ամունն ավարտեց.

- Իմացա՛ծ եղեք, որ այս ամենի մասին մենք խոսել ենք դեռ մեկ տարի առաջ, սակայն այն ժամանակ այս հարցերը քվեարկության չդրեցինք: Հիմա մենք առաջին աստիճանի վրա ենք: Այնպես որ՝ ձեզ հրավիրում եմ բարձրանալ աստիճաններով, դեռ շատ ճամփա ենք անցնելու՝ Սպիտակ լեռը ելնելու համար:

Հուլիսին ֆրանսիացիների ու Ֆայսալի սիրիական ուժերի միջև առճակատումն անխուսափելի դարձավ: Գուրոն այդ մասին հայտնեց Թոմաս Հարդինգին: Այդ ընդհարման մեջ նրանք ոչ մի արտառոց բան չէին սպասում բրիտանացիներից, սակայն չէին հանդուրժի, որ Սան Ռեմոյի կոնֆերանսի համաձայնագրերը, որոնցով Ազգերի լիգան Ֆրանսիային լիազորություններ էր ընձեռել Սիրիայի նկատմամբ, վերածվեին անպետք թղթերի:

Չնայած նախազգուշացմանը՝ Մեծ Բրիտանիան պարտավոր էր ամեն կերպ ջանալ, որ Ֆրանսիան ու Ֆայսալն ի վերջո բարեկամական համաձայնության գային, սակայն Գուրոն արդեն ո՛չ համաձայնագիր էր ուզում, ո՛չ էլ՝ ուսին թփթփացնել: Նա այդտեղ էր, որ պաշտպաներ Ֆրանսիայի շահերը, ու նրան աջակցում էին ինը հազար զինվորներ՝ ծանր զենքերով ու մի դյուժին ինքնաթիռներով:

Թոմասը գեներալ Ալենբիին ուղարկեց ծածկագրված հեռագիր, ըստ որի՝ ֆրանսիացիները գնալու են առաջ՝ նկատի ունենալով բոլոր հետևանքները: Բեյրութում նրանց աջակցում էին քրիստոնյաներն ու մարոն պատրիարքը, Պիկոյի միջոցով նրանք տեղեկացված էին, թե ինչ կարող էր տեղի ունենալ.

«Գլխավոր հրամանատար, սրբ Էդմունդ Ալենբիին.

Սը՛ր, ամեն բան վկայում է այն մասին, որ պասնիհնգ օրվա ընթացքում ֆրանսիացիները կհարձակվեն Սիրիայի նորընծա թագավոր Ֆայսալ I-ի զորքերի վրա: Ֆրանսիական բանակն ունի զգալի առավելություն, 9000 ռազմիկներ, 72 միավոր հրետանային զենք, թեթև տանկեր ու հրանոթներով զինված 12 ինքնաթիռ. այդ ամենը՝ գեներալ Անրի Գուրոյի հրամանատարությամբ:

Ըստ տեղեկությունների՝ մարտը տեղի կունենա Մեյսալունի մոտ:

Սա այն ամենն է, ինչի մասին պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ գերազանցությանը:

Բեյրութ, 15 հուլիսի, 1920թ.

Գնդապետ՝ Թ. Հարդինգ»:

Թոմասը չէր սխալվել. հուլիսի 23-ին ֆրանսիական զորքերն առաջին իսկ մարտում ջախջախեցին սիրիական բանակը, որը ցանկանում էր փրկել իր նոր թագավորությունը: Ֆայսալը հրամայել էր չպաշտպանվել և մարտի դաշտը թողնել ֆրանսիացիներին՝ իմանալով հանդերձ, որ այդ հրամանը հավասարազոր է իր թագավորության անկմանը: Սակայն նա չէր ցանկանում ստանձնել նաև ռազմական ձախողման և հարյուրավոր զոհերի պատասխանատվությունը:

Այդուհանդերձ, նրա գեներալ Յուսուֆ էլ-Ազման այլ կերպ էր մտածում: Նա համոզված էր, որ եթե ֆրանսիացիներին հակահարված տային, թերևս նրանք կնահանջեին: Ինչպե՞ս էին հարձակվելու, եթե ֆրանսիացիներն ունեին ճնշող գերազանցություն. ծանր հրետանի, թեթև տանկեր, ինքնաթիռներ, ժամանակակից զենքեր՝ հին հրացաններ կրող, բայց քաջարի արաբների բանակի դիմաց… Ի զորու չէին, սակայն համոզված էին, որ Ֆրանսիան իրենց նկատմամբ կոտորած թույլ չէր տա:

Գեներալ Անրի Գուրոյի համար նույնպես ցանկալի չէր անհավասար ուժերի բախման պարագայում տարած հաղթանակը:

Սակայն Ֆրանսիան չէր կարող այդ խնդիրներն առանց լուծման թողնել: Եթե հավասարությունը, եղբայրությունն ու ազատությունը Դամասկոս տեղափոխելու համար անհրաժեշտ լինեին թնդանոթներ, ապա նրանք գործի կդնեին դրանք: Նպատակին հասնելու համար ոչ մի բանի առջև չեն կանգնում:

Մարոնները մի մարդու պես սատարեցին Ֆրանսիային: Թոմասի համար ամոթալի էր, որ բրիտանացիները լվացին իրենց ձեռքերը:

Մեյսալունի ճակատամարտը տևեց ութ ժամ: Մասնակիցների համար դա մի ամբողջ հավերժություն թվաց: Մարտի ավարտին համարյա չորս հարյուր հոգի՝ արաբ հեծյալներ ու նորակոչիկ զինվորներ, հանգչում էին մարտադաշտի փոշու մեջ՝ Անտիլիբանանի լեռների ստորոտում՝ Դամասկոսից ընդամենը քսան կիլոմետր հեռավորության վրա, որտեղ կես ժամ անց փոստային աղավնու միջոցով լուր ստացան մարտի ավարտի մասին:

Երեկոյան Ֆայսալն իր շքախմբով անապատի միջով փախուստի ճամփան բռնեց: Ձիերի, ուղտերի, բրիտանացիների տված մի քանի բեռնատարների երկար քարավանը տանում էր վերջերս ստեղծված արխիվային նյութերը, որպեսզի այդ արժեքավոր տեղեկությունները չթողնեին ֆրանսիացիներին:

Գուրոն այդ ամենի մասին պատմել էր Բեյրութի երևելի մարդկանց:

Չպետք է հետապնդեին Ֆայսալին: Փախչող թշնամուն՝ կանաչ ճանապարհ... Նրանց ո՛չ նահատակ էր հարկավոր, ո՛չ էլ՝ ավելորդ գլխացավանք: Գլխացավանքը թող բրիտանացիներին մնա:

Թոմասն էլ այդ նույն օրը, երբ Բեյրութում սկսում էր մթնել, իմացավ մարտի ավարտի մասին: Նա ստացավ մի փակ ու զմուռսով կնքված նամակ՝ Այուբ Թաբիթի ստորագրությամբ: Նա նամակը բացեց՝ Էթելի դիմաց կանգնած. աղջիկը նրան էր նայում իր խոշոր աչքերով: Նամակը գաղտնագիր չէր: Թաբիթը լիբանանցի էր՝ հին մշակույթի կրող: Ծալված այդ թղթի վրա ընդամենը գրված էր. «Աքաղաղը՝ Դամասկոսում: Բազեն՝ դեպի անապատ»:

Այդ պահից սկսած հնարավոր էր Մեծ Լիբանան պետության ստեղծումը. գուցե և իրականանար այդ վաղեմի երազանքը:

24. ՈՒՄՄԱՆ
ՕԳՈՍՏՈՍ, 1920թ.

Բեյրութում լավ, անգամ շատ լավ գիտեին, որ առջևում իրենց մի բարդ ժամանակաշրջան է սպասվում: Լեռնային Լիբանանը համաձայն կլինե՞ր, որ իրեն միացնեին, այսպես կոչված, «պետության հողերը»: Այդ հարուստ քրիստոնյա մարոններն ու նրանց մերձավոր թշնամի դրուզների բազմանդամ գերդաստանները կուզենայի՞ն հրաժարվել իրենց ավանդական կարգավիճակից: Բեյրութում, գրեթե ինչպես միշտ, իրերն այլ կերպ էին ընկալվում:

Դաուդ Ամունը և մարոնական իր գլխավոր շտաբը, իսկ իրականում պատրիարքի գլխավորությամբ կառավարության կազմը հստակ գիտեին իրենց անելիքը: Թոմաս Հարդինգն ամեն ինչից տեղյակ էր իր բարեկամ Այուբ Թաբիթի շնորհիվ:

- Լսի՛ր, Թոմա՛ս, պատրիարք Հոայեկն անմիջական նամակագրություն ունի Պապի հետ: Վատիկանի կաբինետներից մեկում՝ Սուրբ Հոր առանձնասենյակների մոտ, կա քարտեզներով մի սրահ: Շատ ճշգրիտ քարտեզներ են՝ հրաշալի քարտեզագրումներ ողջ Պաղեստինից մինչև Կիլիկիա և Դամասկոսից այն կողմ: Այնտեղ ծավալուն տեղեկատվություն են հավաքել մենաստանների, կաթոլիկ վարժարանների, ճգնավորների ու միանձնուհիների, մատուռների ու սրբավայրերի մասին, նաև Երուսաղեմի մի քարտեզ՝ իր չորս թաղամասերով. քրիստոնյա կաթոլիկ, քրիստոնյա ուղղափառ, այնտեղ առաջնորդում են հայ, արաբ և հրեա պատրիարքները: Ունեն մի քարտեզ, որն ընդգրկում է ողջ այդ տարածաշրջանը. պետության հողերը և ամբողջ ծովեզերքը՝ մինչև Իսկենդերունը, Լեռնային Լիբանանը, ողջ Բեկաայի հովիտը, ներառյալ Անտիլիբանանի լեռները, Էրմոնը, Տրիպոլին, իսկ հարավից Սիդոնի գավառը՝ մինչև Պաղեստինի հետ սահմանը: Վատիկանը գրում է մարոնական պատրիարքին և նրան ուղարկում քարտեզների ծալված պատճենները, որոնց վրա տարբեր գույներով հատուկ նշված են որոշակի տարածքներ. «Սա պետք է լինի մարոններինը, սա՝ դրուզներինը, սա՝ սուննիներինը...»: Եվ մեր պատրիարքը՝ երանելի Էլիաս Հոայեկը, իր ցուցումներն է տալիս, դիմում է Սուրբ Մարոնին, աղոթում է, այնուհետև մի նամակ է թելադրում իր անձնական քարտուղարին՝ իմ հորեղբոր տղային, ով ինձ պատմում է որոշ բաներ, որպեսզի ես հասկանամ, թե ինչ աստիճանի ազդեցիկ մարդ է: Դրանք թերևս ընտանեկան գաղտնիքներ են, սակայն Բեյրութում մեկ շաբաթ անց ձկնավաճառը կնոջս պատմում է, թե որ-

տեղով են անցնելու նոր սահմանները: Սա շատ յուրատեսակ երկիր է: Ինչպե՞ս ես Ձեզ չպատմեմ այդ մասին: Ահա այսպես էլ պատրաստվում է խճանկարը: Այսօր այստեղից հանում, վաղն այնտեղ են դնում: Օրինակ՝ Զահլեի՝ Բեկաայի հովտի ամենամեծ բնակավայրի բնակիչներն ուզում են միավորվել՝ իրենց միացնելով Բաալբեկը՝ որպես թագի զարդ, Հազբայան, Բեկաան… Անշուշտ, շատերն ուզում են միանալ, իսկ մյուսները՝ ոչ: Սակայն ամենակարևորն այն է, որ ոչ ոք ոչ մի համաձայնություն չի կնքել օսմանների հետ: Գերմանացիները կնքեցին Վերսալի պայմանագիրը, միայն թե դա ո՛չ այս կողմին է ձեռնտու, ո՛չ էլ՝ այն: Իսկ օսմանների հե՞տ… Առայժմ ոչինչ չի կնքվել, քանի որ Մուդրոսի զինադադարի համաձայնագիրը դատարկ բան է, իսկ Ֆրանսիան հանգիստ առաջ է գնում: Կայացած փաստերի քաղաքականություն... Այս ընթացքում գեներալ Գուրոն, ով արդեն շատ ավելի մարոն է, քան կաթոլիկ, մտադիր է իր համար առանձնատուն կառուցել Բեյրութում ու այստեղ գնալ թոշակի: Ու իհարկե պետք է, որ ամեն ինչ լավ, տեղը տեղին անի: Ամեն օր պետք է հեռագրեր ուղարկվեն Քէ դ՚Օրսեյ: Վատիկանից էլ ստացվող և ուղարկվող նամակների պատճենները հասցնում են Միլյերանին[49], որպեսզի վերջինս Վատիկանին հայտնի իր կարծիքը: Ահա և Ձեզ եռանկյունի՝ Վատիկան-Փարիզ-Բեյրութ: Ահավասիկ մայրու փայտից նստարանի երեք ոտք, որոնց վրա կառուցվելու է Մեծ Լիբանանը: Իհարկե, դուք՝ բրիտանացիներդ, նույնպես զբաղմունք ունեք Վեյցմանի սիոնիստների հետ՝ ամեն օր մի բան ավելին պահանջելով: Չէ՞ որ Լոնդոնից նոր բարձրագույն հրամանատար է նշանակվել՝ սըր Հերբերտ Սամուելը: Այդ մարդը Լոնդոնում իսկական լորդ է, Երուսաղեմում՝ ավելի հրեա, քան ռաբբին, իսկ արաբների հետ խոսելիս՝ բեդվին: Ազգերի լիգան կարծես առաջ է քաշում այդ հարցը... Ի վերջո, բոլորիս կոշիկի մեջ էլ ինչ-որ ժամանակ մեխ է հայտնվում:

Սուննիները եկան Թոմասի հետ բանակցելու: Հիմնական դերակատարությունը ստանձնել էր տարածաշրջանի ամենաազդեցիկ մուսուլմանը՝ Աբդ ալ-Հալիմ Հաջարին: Հանդիպմանը ոչ մի մարոն չկար, ու կարելի էր ազատ խոսել:

- Այո՛, պարո՛ն Հարդինգ, մենք՝ մուսուլմաններս, եկել ենք մեր կամքով: Կան բաներ, որոնց վերաբերյալ կուզենայինք առանձին խոսել: Եթե ինձ թույլ տաք, կհայտնեմ իմ կարծիքը, իսկ Դուք կպատկերացնեք

[49] Ֆրանսիայի կառավարության նոր նախագահը, ով 1920 թվականին փոխարինեց Կլեմանսոյին:

հարցի ողջ էությունը:

Այդ մարդը հրաշալի էր խոսում ֆրանսերեն, իսկ արտաքնապես կարող էր ներկայանալ որպես մարսելցի վաճառական, թեև շոգի ու նյարդայնության պատճառով շատ էր քրտնում:

- Պարո՛ն Հարդինգ, Դուք բարի մարդ եք: Աստված ողորմած է և Ձեզ ուղարկել է այստեղ, որ մեզ ձեռք մեկնեք: Մենք՝ մուսուլմաններս, իրարից բաժան ենք, ոմանց դուր էր գալիս Ֆայսալի ընտրած ուղին: Շատերն էլ գերադասում են անկախ Լիբանանը: Սակայն կլինի՞ արդյոք անկախ, թե՞ մեր դռների հետևում լինելու է Վատիկանը, թե՞ ֆրանսիացիներն են մեզ թելադրելու օրակարգը: Կամ գուցե մեզ վերահսկելո՞ւ եք դուք՝ բրիտանացիներդ: Մեյսալունից հետո անցել է մի քանի շաբաթ, ու արդեն լսվում է, որ բրիտանացիները բաժանելու են Պաղեստինից դեպի արևելք ընկած այս տարածքը՝ այն անվանելով Տրանսիորդանան: Եվ մենք այստեղ ապրելու ենք սիոնիստների հետ, ովքեր մեր կյանքը բարդացնելու են Պաղեստինում, ֆրանսիացիների հետ, ովքեր արդեն դիրքավորվել են, և սպասվում են Գուրոյի նոր խաչակրաց արշավանքները: Օսմաններին համարում են մեռած, բայց դեռ հարկավոր է սպասել: Լսե՞լ եք ոմն Մուստաֆա Քեմալի մասին: Դուք կրկին, ներեցե՛ք ինձ անկեղծ լինելուս համար, առատաձեռնորեն բաժանեցիք այն, ինչ ձեզ չէր պատկանում: Ինչո՞ւ դուք Վեյցմանին չտվեցիք Սուեզյի կոմսությունը: Դուք մի՛ վիրավորվեք ինձանից, արաբներս երբեմն չափից ավելի անկեղծ ենք: Այն օրը, երբ գեներալ Գուբեն մտավ Դամասկոս, չկար մեկը, որ տեսներ նրա հանդիսավոր երթը: Գիտե՞ք, թե ինչու... Քանի որ արդարությունը չէր տարել հաղթանակը, այլ, ինչպես չար լեզուներն են ասում, գերմանացիներից բռնագրավված հրաշալի թնդանոթները: Իհարկե, այստեղ՝ Բեյրութում, մեր սիրելի բարեկամներ մարոնները հրճվանքից գլխարկները օդ էին նետում, և թերևս կաթոլիկ եպիսկոպոսն էլ իր թագը նետել է ընդունելությունների սրահի ջահին: Վատիկանում ողողանջեցին զանգերը: Այնպես էր, որ ասես Գոտֆրիդ Բուլյոնցին ի վերջո ասել էր իր վերջին խոսքը. «Sancti Sepulchri Advocatus» («Տիրոջ գերեզմանի պահապան»): Մուսուլմաններս դա կհիշենք ողջ կյանքում: Գեներալ Գուբեն իր ճառում առաջին հերթին ասաց, որ Դամասկոսն ազատագրվեց արաբական հետադեմ, այսինքն՝ ուզում էր ասել իսլամական լծից: Հավաստիացրեց, որ Ֆրանսիան կբերի առաջադիմություն ու քաղաքակրթություն: Ֆրանսիային անչափ հարգելով հանդերձ՝ արաբներս հնագույն քաղաքակրթության տեր ժողովուրդ ենք… Իրոք այդպես է: Մենք ֆրանսիացիներից շատ բան կարող ենք սովորել: Սակայն

նրանք էլ շատ բան ունեն սովորելու արաբներից: Հետո նրանք Ֆայսալին ստիպեցին փախուստի դիմել: Դա մեծ նսեմացում էր: Անապատում արաբն ազատ մարդ է, երբ նստում է իր ձիուն կամ ուղտին: Հիմա ֆրանսիացի զինվորականները կուզենան կասեցնել Ֆայսալի վարչակազմի ձեռնարկած բոլոր ծրագրերը, սակայն բարձրաստիճան պաշտոնյաները՝ բոլորն էլ Politecnique-ի սաներ, նրանց դա անելու խորհուրդ չեն տվել: Ինչպե՞ս են Դամասկոսում փակելու Արաբական գրադարանը, կա՛մ Բժշկական դպրոցը, կա՛մ էլ Արաբական հնագիտական հնությունների թանգարանը: Չպե՞տք է մի բան մնա Ֆայսալի պետությունից: Դուք ինձ ճիշտ կհասկանաք, քանի որ անկախ, կիրթ ու բառիս լայն իմաստով բարոյական զգացում ունեցող և մեծ հեղինակություն վայելող անձնավորություն եք: Դուք լավ գիտեք արաբերեն՝ ամենակիրթ ու գեղեցիկ, ամենից հարուստ նրբերանգներով ու ամենազգայուն լեզուն: Հիմա Դուք զինվորական եք, ինչպես գրեթե բոլորը, սակայն ժամանակն ամեն բան կուղղի: Ուզում եմ նշել, որ արաբներս կազմում ենք «ումմա» հասկացությունը: Մենք բոլորս նույն մոր զավակներն ենք, իսկ դա մեզ դարձնում է եղբայրներ: Հիմա՝ 1920 թվականին, արաբական աշխարհը նոր է զարթոնք ապրում, վերջին դարերում նրան պատել էր նինջը, ու հիմա իր վրայից թոթափում է այդ թմբիրը: Լիբանանը՝ «Մեծ Լիբանանը», կարևորագույն վայր է արաբական ոգու համար: Այստեղ վերջիվերջո բոլորս կարող ենք խոսել ֆրանսերեն ու անգլերեն, սակայն մեր սիրտը միշտ կլինի արաբական: Այդ մարոններն էլ հավերժ կմնան արաբներ, որքան էլ որ եզվիտներն ու Վատիկանը համոզված են, թե նրանք նախ և առաջ իսկական քրիստոնյաներ են: Մարոնները կարող են քրիստոնյա լինել, սակայն իրենց արյան մի մասը նրանց հուշում է, որ պատկանում են իսլամին, թեև նրանք անգիտակ են դրան: Դուք ծանո՞թ եք Ղուրանին: Յոթերորդ՝ «Ալ-ՄԱԷԴԵ» սուրահի ութսուներեքերորդ այաթում հստակորեն դա ասվում է. «Եվ երբ լսեն (իսլամի) Մարգարեին իջեցված պատգամները, կտեսնես նրանց աչքերը, որ (հրճվանքից) արցունք են թափում այն ճշմարտության համար, որն ըմբռնել են: Նրանք ասում են. «Տե՛ր, հավատք ընծայեցինք, ուրեմն մեզ վկաներով (և ճշմարտության ականատեսներով Մուհամմեդի ընկերների դասին) գրանցե՛ք»»: Եթե Ֆրանսիան ցանկանում է իր ներդրումն ունենալ, ապա պետք է առավել քան հաշվի նստի մուսուլմանների հետ… Մենք այցի եկանք մեր մարդասեր բարեկամին, որպեսզի լսի մեզ: Շնորհակալություն, պարո՛ն Հարդինգ: Մեր՝ բոլորիս ցանկությունն է, որ Դուք մնաք այստեղ: Մինչ նոր հանդիպում, և Աստված Ձեզ հետ:

Հալիմ Հաջարին և նրա լռակյաց ուղեկիցները լքեցին Թոմասի առանձնասենյակը: Նա դուրս եկավ պատշգամբ՝ ձեռքով նրանց հրաժեշտ տալու համար: Մայր մտնող արևը թաքնվում էր ամպերի հետևում. այդ տխրաշուք մայրամուտը երկինքը դարձնում էր բոսորագույն: Սարան նույնպես գնաց պատշգամբ:

- Թոմա՛ս, այստե՞ղ ես: Լսեցի, որ հյուրերդ գնում են: Շուտով կդառնաս Աստծո նվիրյալ: Բոլորը գալիս են քեզնից խորհուրդ հարցնելու: Մեր օրերի Բեյրութը քեզ գնահատում է, թերևս նոր ժամանակներում մեզ սպասվող Բեյրութը չունենա այս հմայքը, բայց միևնույնն է, թող լինի:

- Ո՛չ, Սարա՛, սխալվում ես: Գալիս են, որ ոչ թե ինձ, այլ Մեծ Բրիտանիային պատմեն իրենց խնդիրները: Ի դեմս ինձ՝ նրանք տեսնում են «Յունիոն Ջեկ»-ին (Մեծ Բրիտանիայի դրոշի ժողովրդական իմաստը): Երկու կողմերն էլ ֆրանսիացիներից զգուշանում են: Քրիստոնյաները վախենում են արջի ողջագուրումից: Ինչ վերաբերում է մուսուլմաններին, ապա նրանք կարծում են, որ բաց են թողել պատմական կարևոր հնարավորությունը: Նայի՛ր, թե ինչպես է ծածկվում արևը: Պատկերը ցնցող է, այդպես չէ՞: Այսպիսի պահերին Բեյրութը չեմ փոխի աշխարհի և ոչ մի վայրով:

25. ՃԱՆՃԵՐԻ ՏԻՐԱԿԱԼԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1920թ.

Սպիտակավուն բարակ ստվարաթղթի վրա Ֆրանսիայի դրոշի գույներով տպված հրավիրատոմսը չէր պահանջում տոնական հանդերձանք, ոչ էլ՝ կանանցի երեկոյան զգեստ, սակայն ըստ այստեղ-այնտեղ արված մեկնաբանությունների՝ բոլոր հրավիրվածները գիտեին, որ խոսքը վերաբերում էր պատմական նշանակալից իրադարձությանը: Հրավերն արդեն իսկ վկայում էր, որ գեներալ Գուրոն ցանկանում է այդ իրադարձությունը հատուկ շուքով նշել: Նրա համար օրինակ էր Փարիզի համաշխարհային ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը:

Օգոստոսի մեկից սկսած բոլոր արհեստավարժ ձևարարները, գլխարկ կարողները, դերձակները, կոշկակարները, վարսահարդարները զբաղված էին՝ հրավիրյալներին նախապատրաստելով պաշտոնական ընդունելությանը, որը տեղի էր ունենալու Անրի Գուրոյի՝ ըստ համապատասխան դեկրետի ֆրանսիական պաշտոնական տարածք հռչակված առանձնատանը: Հանդիսավոր ընդունելության առիթը Մեծ Լիբանանի՝ իր բոլոր տարածքներն ու նահանգներն ընդգրկող պետության հռչակումն էր:

Թոմաս ու Սարա Հարդինգները պատվավոր հյուրեր էին: Ստանալով հրավերը՝ Թոմասը դիմեց Երուսաղեմին՝ ըստ համապատասխան հրահանգի շարժվելու համար: Պատասխանը չուշացավ՝ «Խնդիր չկա»:

Մեծ Բրիտանիան չէր ուզում վիրավորել իր լավագույն դաշնակցին: Դա ոչ մի աղերս չուներ երկու ժողովուրդների միջև առկա բնական տարբերությունների, ոչ էլ երկու երկրների հպատակների բարեկամության ու հին ատելության հետ: Երկուսով ձեռք ձեռքի տված՝ պատերազմում հաղթել էին իրենց թշնամիներին՝ պրուսացիներին ու Օսմանյան կայսրությանը:

Սարա Հարդինգն իր հատուկ դերձակն ուներ Կահիրեում: Ամուսնու համաձայնությամբ՝ նա որոշեց Էթելի հետ մի քանի օրով այցելել իր ծնողներին: Իրականում Սարան տանել չէր կարողանում Բեյրութի՝ ֆրանսիական հովերով տարված տիկնանց, ովքեր շարունակ պայքարում էին բարձր հասարակության լավագույն դերձակների համար: Նա շատ լավ գիտեր, թե որտեղ է գտնվում ոգևորության աղբյուրը. «Ար Նուվո» ամսագրի հագուստի նոր գծագրերը Եվրոպայից հասնում էին Կահիրե, որտեղ դրանք ոճավորվում ու հղկվում էին տվյալ հասարակու-

թյան ճաշակին համապատասխան: Սարան վերադառնալու էր ընդունելությունից մեկ շաբաթ առաջ:

Թոմաս Հարդինգն ըմբռնումով էր մոտենում այդ փոքրիկ քմահաճություններին: Կյանքը նրան ցույց էր տվել, որ կարևոր է յուրաքանչյուր րոպեն, հետևաբար տրված ամեն մի պահից անհրաժեշտ է օգտվել: Թոմասն իր կնոջն ու դստերն ուղեկցեց հունական «Ալեքսանդրիա» ջերմանավ, որի երթուղին Բեյրութից ձգվում էր դեպի Ալեքսանդրիա և հակառակը: Տեղ հասնելուն պես բրիտանացիների կառուցած երկաթուղով մինչև Կահիրե կհասնեն ամենաքիչը հինգ ժամվա ընթացքում:

Թոմասն ուզում էր պարզել, թե Ֆրանսիան ինչ սկզբունքով է այդ տարածաշրջանը բաժանելու «նահանգների»: Իրեն լուրեր էին հասել այն մասին, որ Գուրոն ու Միլյերանը երկար էին սակարկել՝ դնելով ու վերցնելով այդ անվերջանալի խճանկարի մասերը: Սեղանի այդ խաղը բուռն հետաքրքրություն էր հարուցել Բեյրութի տիկնանց շրջանում, ովքեր հինգ հարյուր, հազար, նույնիսկ երեք հազար գումարով խաղաքարտեր էին փոխանակում: Քաղաքում խոսակցություններ էին պտտվում, որ Գուրոյի կինը միակն է, ում բախտը խաղի մեջ բերում է, ով դառնում է ընկերուհիների ուշադրության ու նախանձի առարկան: Այն ընկերուհիների, ովքեր անգամ վարսավիրանոցում հարդարվելիս նրան խորհուրդներ էին տալիս:

Ահա թե ինչպես էր ընթանում խաղը: Ասում էին. «Բեկաան՝ այո՛, Բեկաան՝ ո՛չ, Անտիլիբանանը՝ այո՛… Տրիպոլին՝ ո՛չ: Սանջակ դե Սայդան ու նրա շիաները՝ այո՛, իսկ գուցե՝ ո՞չ: Իսկ եթե մայրաքաղաքը լինի՞ Դամասկոսը: Դա կապացուցի, որ Ֆայսալն իրավացի է: Իսկ Բեյրո՞ւթը… Բայց չէ՞ որ այնտեղ մեծամասնությունը սուննիներ են: Այլ ելք չկար»:

Այսպիսին էին գեներալ Գուրոյի ճաշկերույթներին ուղեկցող և հետճաշյա քննարկումները: Իհարկե, լինում էին նաև հանրապետական, անգամ վոլտերյան սեղաններ՝ ծածկված Մալինեսի նուրբ ժանյակազարդ սփռոցներով, ոսկեզօծ արծաթյա սկուտեղներով, սպասքը՝ «la Flor de Lis» փորագրությամբ, Լիոնի բյուրեղապակիով և Նանտի սպասքով: Մատուցում էին կարճ տաբատներով սենեգալցի սպասավորներ: Լավագույն գինին, համադամ թռչնամիսը, կարկանդակները, տորթերն ու սոուսները պատրաստվում էին համբավավոր մի խոհարարի ձեռքով, ով Նիցայից էր և եկել էր Գուրոյի հետ ու չէր ցանկանում կիսել իր խոհարարական գաղտնիքները: Դաուդ Ամունի՝ մարոնական առաջնորդի կնոջ կարծիքով՝ նա «հակակրելիի» մեկն էր, ում շուկայում տեսնելով՝ զուր տեղը բաղադրատոմսեր էր խնդրել:

Լիբանանում տեղի ունենալիք ամենակարևոր իրադարձությունից առաջ բոլորը նյարդայնացած էին, ոչ ոք չէր ուզում խոսել, անգամ ակնարկել «ծովեզերքի հողերի» մասին. խաչակիրների գալուց սկսած՝ ինը դար ի վեր, կարգն այդպիսին էր:

Ամեն ինչ վճռված էր, ու որոշումը՝ ընդունված: Դրա հիման վրա Ֆրանսիայից նոր եկած պետական փաստաբանները, Ֆրանսիայի Հանրապետության Ստորին պալատի ներկայացուցիչները, Ժամանակավոր օրենսդիր մարմինը, լիազոր ներկայացուցիչ, գեներալ Գուրոյի գլխավորությամբ, 1920 թվականի սեպտեմբերի 1-ին իրենց օրհնությունը տվեցին 336-րդ հիմնական օրենքին: Օրենքի քառասուն դրույթ, որ պատրիարք Էլիաս Հոայեկն իրեն ստիպում էր քնելուց առաջ կարդալ՝ բովանդակությունը մինչև վերջ յուրացնելու և մինչև իսկ կետ առ կետ սերտելու համար: Մայրաքաղաքը Բեյրութն էր. այդքան տարակուսանքներից հետո այլ ելք չկար:

Փողոց դուրս գալով՝ Թոմաս Հարդինգը տեսավ Սպիրոս Պոլիտիսին՝ մի հարուստ ուղղափառ հույնի, ով կես ժամ ճարտարաբանելուց հետո նրան առաջարկեց վաճառել այն քարքարոտ զառիվայրը, որը Թոմասի տան մոտ էր: Ասաց, որ քաղաքապետի հրամանով, ում խորհրդականն էր ինքը, տեղանքագիրներն այն չափել են՝ երեք հեկտար չորս հարյուր քսաներկու քառակուսի մետր մակերես: Թոմասը նրանից մի կերպ ազատվեց՝ հավաստիացնելով, որ եթե որոշի վաճառել, ապա նկատի կունենա նրա առաջարկը: Պոլիտիսը ժպտաց՝ ցուցադրելով իր ոսկյա ատամնաշարը, և ձեռքը տանելով գլխարկին՝ հրաժեշտ տվեց:

Թոմասը հասկացավ, որ արդիական առաջընթացը հասել է նիրհող Բեյրութին: Փյունիկեցիների ժառանգորդները, թողնելով դամբարանները, սկսեցին հոգ տանել իրենց նոր կյանքի մասին: Արդյունաբերողներն ու գործարարները ցանկանում էին եվրոպական արժեքները տեղափոխել Քանանացոց եզերք. փյունիկյան մշակույթը կրող քաղաքացիական հասարակությունն ամեն ջանք կգործադրեր՝ ցանկացած գնով ապահովելու իր զավակների բարեկեցությունը:

Մեծ Լիբանանի նոր «փաշան» Անրի Գուրոն էր: Նրա կյանքի մակարդակը, որն ապահովում էր Բարձրագույն հրամանատարությունը, ուրիշ ոչ ոքի հետ չէր կարող համեմատվել: Ոչ թե հեռավոր Փարիզից նշանակված ֆրանսիացի կառավարիչը, այլ հենց նա պետք է հետևեր օրենքի կատարմանը, հաշիվ տար Պետական խորհրդի առջև և ստանձներ հարկերի հավաքման գործը: Նախարարությունները ղեկավարելու էին լիբանանցիները, որոնց պարտադիր աջակցելու էին ֆրանսիացի

խորհրդականները:

Բժիշկ Թաբիթը զարմացած էր:

- Բայց չէ՞ որ սա նույն վարչակարգն է: Կարծես թե օսմաններն են դեռ այստեղ, հիմա՝ ֆրանսիական անձնագրով: Հուսով եմ, որ վարչակազմը կգործի առանց կոռուպցիայի, թեև դա այստեղ…

Թաբիթն իր բարեկամ Թոմասին տարավ այն ժամանակ Բեյրութի ամենահարուստ ու ազդեցիկ մարդկանցից մեկի՝ Ժոզեֆ Հանիի տուն, ով նրանց դիմավորեց տան ներքին բակում՝ մովրաշուքի ներքո: Փողոցի համեմատությամբ՝ դա մի զով տեղ էր, որտեղ քամի էր փչում և չորսից հինգ աստիճան նվազեցնում օդի ջերմաստիճանը:

Ժոզեֆ Հանին ցանկանում էր ապրել այնպես, ինչպես իր հայրն ու պապը: Նրան ամենևին դուր չէին գալիս արդիականությունը և դրա հետ եկող ամեն բան: Նա սեղանի շուրջ շրջապատված էր իր ամբողջ ընտանիքով, աներորդիներով, զարմիկներով՝ համտեսելու այն համեղ կերակուրները, որոնք լիբանանցիները ճարում էին այստեղից-այնտեղից: Կանայք հենց նոր էին գցել մի երկար սեղան՝ առնվազն երեսուն հոգու համար նախատեսված: Այնպես որ՝ այլ ելք չկար, քան ճաշին մասնակցելու սրտառուչ հրավերն ընդունելը: Հանին լավ տրամադրությամբ բացականչում էր. «Կուտենք շատ, կուտենք քիչ»:

Տարվա նորությունը, որ Բեյրութի թերթերը զետեղում էին առաջին էջին, Սևրի պայմանագրի ստորագրումն էր: Հասել էին նրան, որ օսմաններն այն ստորագրեցին, թեև ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Միացյալ Նահանգները չէին հաստատել: Հանին երջանիկ էր, սակայն՝ մի փոքր հոռետես:

- Չեմ հասկանում, թե թուրքերն ինչպես են այդ պայմանագիրը ստորագրել: Որտե՞ղ են նրանք տեղավորելու թուրք բնակչությանը: Դա անիմաստ է: Հիմա հայերին հանկարծ տալու են մի երկիր: Դա արդարացի է: Ավելի քան արդարացի է. չէ՞ որ Անատոլիայի մեծ մասը դարեր ի վեր՝ նախքան Օսմանի[50] մարդկանց այնտեղ հասնելը, հայերի սեփականությունն էր: Բացի դրանից՝ մի լավ տարածք է քրդերի համար: Պաղեստինը, Տրանսհորդանանն ու Միջագետքը՝ մինչև Մոսուլ, Նորին գերազանցություն Բրիտանիայի հավատարիմ հպատակների համար են: Իմ շնորհավորանքները Ձեզ, պարո՛ն Հարդինգ: Ձեզ հասել է բրիտանական առյուծի բաժինը, իսկ Սիրիան, Լիբանանը, Ալեքսանդրիան ու Կիլիկիայի մի մասը՝ Գուրոյին ու նրա յուրայիններին: Ոտքի՛, ճաշից առաջ

[50] Օսման I (1259-1326), Օսմանյան կայսրության հիմնադիրը, ով 1301թ. բյուզանդացիներից զգալի տարածքներ է նվաճել:

երգենք «Մարսելյեզը»: Հույները, որոնց հանդեպ բուռն թշնամանք եմ տածում, իրենցով են արել Արևելյան Թրակիան, Թենեդոսը, Իմբրոսը և Սմիռնան: Փոքր Ասիայի լավագույն մասը… Ո՞ւմ մտքով կանցներ: Այսօր ազգային տոնի մեջ են, իսկ վաղն այն կվաճառեն, կգնեն ու կվոխանակեն հողեր: Ի՜նչ տեսակ մարդիկ են հույները: Անշուշտ, պայմանագիրը նախատեսում էր նաև Եգիպտոսի անջատումը… իհարկե բրիտանական մանդատի ներքո: Հիջազը՝ հաշեմիթներին, ովքեր հիմա ատում են ֆրանսիացիներին ու չեն դադարում ձեզ հավատալուց,- մատնացույց արեց Թոմասին,- ու Եմենը՝ խնկի ու բազմաթիվ խնդիրներով երկիրը: Եթե չգիտեք, ապա ասեմ, որ բոլոր առաքինությունները, դժվարությունները, մուսուլման իմաստունները, պոետները, ռազմայրերը, խաղաղատենչները ծագումով Եմենից են: Երջանկավետ Արաբիա… Ոչ մի եվրոպական տերություն չի ցանկացել տիրանալ նրան. մի բան, որը ցույց է տալիս, որ նրա ղեկավարները ողջախոհ ու գիտակից մարդիկ են: Քուրայշիաները, աբբասյանները, օմայանները, ֆատիմները… բոլորն էլ սերում են Եմենի ցեղերից: Ի՞նչ ունի այդ վայրը... Կոստանդնուպոլիսը թողնում են թուրքերին, սակայն, անշուշտ, միջազգային վերահսկողությամբ՝ նեղուցներով նավագնացության համար: Իսկ թուրքե՞րը… Ի՞նչ անենք թուրքերի հետ: Ձեզ ուզում էի կենաց առաջարկել՝ հանուն Սևրի, սակայն մի լավ խորհելուց հետո թերևս թողնենք, որ պայմանագիրը հաստատվի ու իրականանա: Հավատս չի գալիս: Քիչ էր մնում մոռանայի. Կիպրոսը նույնպես ձերը կլինի: Իտալիային էլ նվիրել են Անթալիայի նահանգի մեծ մասը, Դոդեկանես կղզիներից մի քանիսը: Ա՜յ քեզ բախտ... Ինձ ինչ փույթ... Ռոսինիի երկիրն ավելին է արժանի: Ինձ ասացին, որ սուլթանի՝ Մեհմեդ VI-ի հավանությամբ Օսմանյան կայսրության կողմից պայմանագիրը ստորագրել են մեծ վեզիր Դամաթ Ֆերիդ փաշան, դեսպան Հաղի փաշան, կրթության նախարար Ռեզիդ Հալիսը և ազդեցիկ մի մարդ՝ Ռիզա Թեֆիկը: Եթե նրանց ծանոթ լինեի, ապա խորհուրդ կտայի, որ չվերադառնան Ստամբուլ: (Ժոզեֆ Հանին բարձրացրեց բաժակը:) Բարի: Թող եվրոպացիներն անեն այն, ինչ կուզեն: Իրավունքն իրենցն է: Հիմա ես առաջարկում եմ խմել բժիշկ Բողոսյանի կենացը: Նա ուզում էր ունենալ անկախ Հայաստան: Ահավասիկ, Ավետիս Ահարոնյանը ձեռք է բերել նրա ուզածը: Սակայն եկե՛ք լրջորեն խորհենք: Թուրքերին ոչինչ չեն թողել: Ի՞նչ ենք անելու քսան միլիոն ժողովրդի հետ: Իսկ նրանց ֆինանսների, ներմուծումների ու արտահանումների, հատկացումների, նավերի տրանզիտի, կողմնակի հարկերի, շրջանառվող դրամի վերահսկողության հարցե՞ր: Նրանց

զրկել են բանակից, նավատորմիղից… Մեկը կա այնտեղ՝ Մուստաֆա Քեմալ անունով, ով Չերչիլին Գալլիպոլիի պարտիայում հաղթեց: Նա երդվել է, որ այդ մեծության կողոպուտ չի հանդուրժի: Թերևս կարող եմ նրան հասկանալ: Այսինքն՝ թուրքերը չեն ցանկանա խաբվել: Սիրիայի արաբները ոչինչ չեն ուզում լսել ֆրանսիացիների մասին, իսկ Միջագետքի ժողովուրդը, տեսնենք, լեզու կգտնի՞ ձեզ հետ… Մի բան գիտեմ, որ Սևրի հախճապակին շատ փխրուն է:

Ժոզեֆ Հանին սեղանից վերցրեց սոուսի դատարկ ամանն ու ներկաների ծիծաղի ներքո գցեց հատակին. այն ջարդուփշուր եղավ:

- Հիմա,- շարունակեց նա,- փաստորեն անհնարին է կրկին գործածել այն:

Խմեցին Լեռնային Լիբանանի թունդ, մուգ կարմիր գինին ու կուշտ կերան. ասես այդ երկրին պատած սովի տեղն էին հանում: Ճաշկերույթն ավարտեցին մովրաշուքի ներքո:

Անկախ այն բանից, որ ներկաները սրամտում և հանուն Մեծ Լիբանանի կենացներ էին առաջարկում, Թոմասն ինչ-որ լարվածություն էր զգում: Այուբ Թաբիթին, ով ննջում էր իր կողքին, հարցրեց.

- Ինչ-որ բա՞ն է պատահել: Ինձ թվում է, թե այս ամենի մեջ կա մի բան, որից ես անտեղյակ եմ:

- Հանգստացե՛ք, Թոմա՛ս, մեր՝ փյունիկեցիներիս արյունից է: Այստեղ բոլորս էլ ճակատագրապաշտներ ենք, և հենց որ հանդիսությունը մոտենա ավարտին, մտածելու ենք, թե ո՞րն է լինելու հաջորդ կռվի պատճառը: Չափազանց մեծ է մեր կենսափորձը… Ահա թե ինչու մեր բարեկամ Հանին քիչ առաջ ասաց, որ ոչ մի հավատ չունի այդ պայմանագրերի, համաձայնագրերի ու խոստումների հանդեպ: Դա վերաբերում է նաև մեզ՝ այստեղ նստածներիս: Պատմությունը մեզ դա ապացուցել է բազմաթիվ անգամ և կարճատև շունչ առնելու պահեր է միայն ընձեռել: Երբ ամեն ինչ գնում է իր հունով, մենք աշխատում ենք անկատ մնալ, որ չլինի այնպես, որ ճանճերի տիրակալ Բելսեբուն[51] մեզ մատնացույց անի… Լավ, բավական է, ուշադրություն մի՛ դարձրեք ինձ վրա, և վայելենք այս լավ պահերը: Դրանք այն պահերն են, որ դրախտ գնալիս մեզ հետ կտանենք:

Այդ գիշեր, երբ Սարային պատմեց տեղի ունեցած խոսակցությունը, նա տարուբերեց գլուխը՝ հաստատելով.

- Այո՛, քո բարեկամ Թաբիթն իրավացի է: Դա միջերկրածովյան

[51] Բելսեբու, փղշտացի աստված, «Սատանաների արքա» և «Ճանճերի տիրակալ», որի տաճարը գտնվում է Էկրոնում (ծանոթագրությունը՝ հեղինակի):

բնավորության մաս է: Ցանկացած ուրախություն հարաբերական է, և ամենակարևորն այն է, որ այդ ուրախությունն արտահայտեն ու կիսեն իրենց շրջապատողների հետ: Եգիպտոսում բնավորության այդ գիծն առավել չափազանցված է: Երբևէ մտածե՞լ ես, որ այդ երկիրը դամբարանների անսահման վայր է: Երջանկությունն ու ծիծաղն ընդամենը օդ են, մինչդեռ մահը հավերժ է, քարեղեն: Եվ Թաբիթն իրավացի է, հարկավոր է օգտվել ցանկացած պահից, մնացյալը, արաբների կարծիքով, կբերի ճակատագիրը:

Մի քանի օր անց՝ 1920 թվականի սեպտեմբերի մեկին, Մեծ Լիբանան պետությունը, գեներալ Գուրոյի նախաձեռնությամբ ստորագրված հռչակագրի համաձայն, բաժանվեց չորս գավառների՝ Հյուսիսային Լիբանանի, Լեռնային Լիբանանի, Հարավային Լիբանանի և Բեկաայի, ինչպես նաև երկու՝ Բեյրութի ու Տրիպոլիի ինքնավար քաղաքային շրջանների:

Բեյրութի մի քանի չար լեզուներ տարածեցին, թե Գուրոն «Ճանճերի տիրակալն» է՝ նկատի առնելով այդ միջատների վերջը տալու նրա մոլուցքը: Բանն այն է, որ ընդունելությունների ժամանակ նրա երկու սպասավորներից յուրաքանչյուրն իր ճանճասպանով ոչնչացնում էր իրենց կողմը թռչող ճանճերին: Թոմասը գիտեր, թե ով էր այդ մականվան հեղինակը՝ Այուբ Թաբիթը:

26. ՀԵՌԱՎՈՐ ԵՐԱՉ
ՀՈՒՆՎԱՐ - ՀՈՒԼԻՍ, 1921թ.

Հետագա ամիսները դժվարին էին: Գեներալ Մուստաֆա Քեմալը՝ թուրք ազգայնամոլների առաջնորդն ու Դարդանելի հերոսը, ջանք չէր խնայում մարտերում հաղթանակների հասնելու համար: Բարձրագույն հրամանատարությունն ու թուրք քաղաքական գործիչները, որ սկզբում նրա մասին ոչինչ չէին ուզում լսել, այժմ նրա մասին աղաղակում էին որպես իրենց ազգային հերոսի: Բեյրութում էլ շշուկներ էին պտտվում այն մասին (ոչ ոք չէր համարձակվում դրանք բարձրաձայնել), թե արդյոք չի կրկնվի Նապոլեոնի հետ տեղի ունեցածը, երբ նա Էլբա կղզուց փախավ՝ գահին վերստին տիրելու նպատակով, այսինքն՝ թուրքերը կվերադառնա՞ն Դամասկոսն ու Բեյրութը նորից գրավելու համար:

Գեներալ Գուրոն վարանում էր. ի՞նչ անել: Ֆրանսիայի Հանրապետության նախագահն անչափ հեռվում էր, և թերևս նա էլ ուներ այնպիսի դժվարին խնդիրներ, ինչպիսիք ուներ նաև Լեռնային Լիբանանը: Ոմանք ստեղծված իրավիճակում հստակորեն չէին պատկերացնում ֆրանսիական մանդատի նշանակությունն ու դերը:

Թոմասը դիվանագիտական ջանքեր էր թափում հավասարակշռությունը պահելու համար: Ֆրանսիական վարչակազմը կոշտ էր, փակ և պահանջկոտ: Նրանք թույլ չէին տալիս, որ անգլիացիներն անգամ նվազագույն միջամտություն ունենան, թեև անձնական հարաբերությունների տեսանկյունից բոլորն էլ գոհ էին: Ինչ վերաբերում էր Պաղեստինում ու Միջագետքում գործող բրիտանական վարչակարգին, ապա կարծես նույն բանն էր, և վերջինիս համար էլ նույնպես դյուրին չէր:

Միայն մարոնները էին գոհ տեղի ունեցող փոփոխություններից: Նրանք կորցրել էին գործադիր իշխանությունը, սակայն դեպքերի զարգացմանը զուգընթաց՝ ֆրանսիացիների աջակցությունը նրանց անվտանգություն էր ընձեռում:

Աբդ ալ-Հալիմ Հաջարը՝ Բեյրութի սուննիների առաջնորդներից մեկը, երբեմն այցելում էր Թոմասին ու գրեթե միշտ բողոքում մուսուլմանների վիճակից, որը, իր կարծիքով, մարոնների համեմատ՝ վատթար էր:

- Պարո՛ն Հարդինգ, ովքեր այստեղ զրկվել են հասարակության մեջ ունեցած դիրքից, մենք ենք՝ մուսուլմաններս: Տեսե՛ք, ֆրանսիացիները, որ աշխարհիկ հանրապետության տեր են, առանց այլևայլության մեզ միացրել են Վատիկանին: Ու Դուք մի՛ ժխտեք, թե դա այդպես չէ: Պատրիարք Հոայեկն այստեղ հանդես է գալիս որպես արքեպիսկոպոս՝

կաթոլիկ եկեղեցու կարդինալ. վերադարձել ենք անցյալ դարի կեսերին: Ամեն ինչ պետք է արվի միայն գաղութային տերության համաձայնությամբ: Օսմանների օրոք ավելի ինքնավար էինք: Անհամեմատ... Հիմա բոլոր արտոնությունները մարոններինն են, այսինքն՝ քրիստոնյա հպատակներինը, ֆրանսիացիների համար միակ վստահելի արաբներինը, իսկ մնացածնե՞րը... Շիաներին առհասարակ բանի տեղ չեն դնում: Թուրքական պետությունը չի ստորագրել Սևրի պայմանագիրը. այս ամենն իրավաբանական կեղծիք է: Սիրիան՝ սուննիական, Լաթաքիայի նահանգը՝ ալավիական, Մեծ Լիբանանը՝ բազմազգ, բայց՝ քրիստոնյա, թեև հավատացնում են, որ մնացածներս այստեղ մի բան նշանակում ենք, Ջեբելը՝ դրուզական, և ահավասիկ Մուստաֆա Քեմալն է թնդանոթի զարկերով թակում դուռը: Դուք և ֆրանսիացիները ստացաք այն, ինչ ուզում էիք, մնացածները... թող դիմանան:

Բեյրութում իրավիճակը փոփոխական էր, ուղղափառ հույները զբաղված էին իրենց գործով, այսինքն՝ հողամասերի ու կալվածքների առք ու վաճառքով, մարոն ընտանիքներն իրար հետ միավորվում և ֆինանսական մեծ ընկերություններ էին հիմնում՝ արդիականացնելով ավանդական բանկը, քանի որ ներմուծման և արտահանման ծավալները տասնապատիկ բազմապատկվել էին: Ավանդաբար լեռնաբնակ շատ ընտանիքների մեծ հոսք կար դեպի Բեյրութ: Դրուզները համեմատաբար հակված չէին փոփոխության. իրենց կենսակերպը փոխելու առումով պարտադրանքներ չէին ընդունում:

Ինչ վերաբերում էր սուննիներին, ապա նրանք հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ: Եվ պատահական չէր, որ ալ-Հալիմ Հաջարը Թոմասին ասաց.

- Դուք արդեն տեսել եք այն, ինչ պատերազմի ընթացքում կատարվեց այստեղ: Սովը մեր պարագայում ավելի մեղմ էր, քան մարոնների: Բանն այն է, որ ի վերջո հնարավոր չէ ուտել բանկային թղթադրամները: Դրանք չեն մարսվում:

Թոմասը մտածեց վերստին իր հնագիտական ուսումնասիրություններին անցնելու մասին: Կարոտում էր ավելի հանգիստ կյանք վարելուն: Նա դիմեց տեղի ղեկավարությանը՝ Բաալբեկում պեղումներ սկսելու խնդրանքով, և առանց որևէ դժվարության ստացավ այդ իրավունքը:

Նա մի լրացուցիչ այց կատարեց Բաալբեկ՝ այդ ավերակները պեղելու համար նոր գիտարշավախումբ ստեղծելու նպատակով: Սարան նրան օգնեց նախապատրաստական աշխատանքներում՝ դրսևորելով կազմակերպչական մեծ հմտություն:

Բեյրութ վերադառնալուց հետո նրան հրավիրեցին Ժոզեֆ Հանիի առանձնատուն՝ ժողովի: Այդտեղ նա ծանոթացավ Նաում Մուկարզալի հետ, ով եկել էր երկրի դրոշը մեկ ուրիշով փոխելու առաջարկով, որի հիմքում լինելու էր ֆրանսիական դրոշը՝ կենտրոնում մայրի: Նախագահ Պուանկարեին անչափ դուր էր եկել այդ միտքը, ու որոշեցին այդ առաջարկը դնել քննարկման: Իսկ Գուրո՞ն… Ոչ մի խնդիր. նա առաջինն էր հավանություն տվել: Առանց նրա այնտեղ ոչ մի հարց չէր լուծվում:

Ավելի քան տասներկու տարի էր, ինչ Թոմասը Մերձավոր Արևելքում էր՝ Բեյրութի ու Կահիրեի միջև: Բազմիցս մտածել էր Անգլիա վերադառնալու մասին, սակայն հանգամանքները խանգարել էին: Այժմ Լոնդոնի նրա փաստաբանները կանչում էին՝ այնտեղ մի շարք հարցեր լուծելու համար, ու նա որոշեց վերադառնալ: Բրիտանական բարձրագույ հրամանատարությունը ոչ մի խոչընդոտ չհարուցեց այդ ուղևորության համար. մինչ նա Անգլիայում կլինի, մեկին կուղարկեն՝ նրան փոխարինելու:

Սարայի ու Էթելի հետ բարձրացավ «Սթար օֆ Ինդիա»՝ Բոմբեյից Սաութամփթոն երթուղով շարժվող նավը, որը կանգառ ուներ Բեյրութում:

Լոնդոնը նույնպես դարձել էր ուրիշ քաղաք՝ վեր ու վար սլացող շատ ավտոմեքենաներով: Թեև դեռ կային բազմաթիվ կառքեր ու հեծյալներ, սակայն արդիականացումն օրըստօրե իրենն էր պարտադրում:

Երբ մտավ հայրական տուն, զգաց, որ ժամանակի մեջ հետ է գնում: Առանձնատունը փակ էր մնացել Մերձավոր Արևելք կատարած իր ուղևորությունից ի վեր: Նրա՝ Անգլիայից հեռանալու պատճառներից մեկը լայն մտահորիզոն ունենալն էր, ու Բեյրութն ու այդ տարածաշրջանը նրան գերեցին: Կհավաքի իր անձնական իրերը, մի քանի արժեքավոր առարկաներ ու իրեն ամենից շատ հետաքրքրող գրքերը, մնացածը կթողնի Օքսֆորդի համալսարանի գրադարանին: Սարան կընտրի իրեն դուր եկած կահույքն ու նկարները՝ Բեյրութ ուղարկելու համար, մնացած իրերն ու տունը կդրվեն աճուրդի: Տան դիմաց նրան արդեն բավականին մեծ գումար էին առաջարկել:

Ինչ վերաբերում էր Սուռեյում գտնվող իր ամառանոցին, կթողնի իր կառավարիչների տրամադրության ներքո: Գուցե մի գեղեցիկ օր Էթելը կամենա վերադառնալ Անգլիա ու ապրել այդտեղ: Դղյակն ընտանիքի երեք հարյուր տարվա սեփականությունն էր, ու իրեն իրավունք չէր վերապահում այն վաճառել բոլորովին կողմնակի որևէ անձի:

Առայժմ նա չէր ցանկանում ապրել Անգլիայում: Կմնար միայն այնքան ժամանակ, որ կարգավորեր իր փաստաթղթերն ու նշանակեր նոր կառավարիչների, այնուհետև կվերադառնային Բեյրութ: Շատերը կմտածեին, որ դա անհեթեթ որոշում է, բայց ինքը չէր պատրաստվում քննարկել այդ կարծիքները: Դա շատ ներքին, նեղ անձնական հարց էր՝ երկար մտորումների արդյունք ու առանց հետադարձ ճանապարհի: Լեռնային Լիբանանը նրան գայթակղում էր անդիմադրելի կերպով, անգամ՝ ինքնորոշման իր լուրջ խնդիրներով, հանգամանքներով պայմանավորված դժվարին իրավիճակով ու վտանգներով հանդերձ: Ավգուստուս Նյումանի հետ նույնպես նման բան էր կատարվել. թեև նա ժամանակ առ ժամանակ գալիս էր Լոնդոն, հանդիպում Արտգործնախարարության քարտուղարի հետ ու միշտ վերադառնում Բեյրութ:

Գործերն այնքան էլ դյուրին չէին ընթանում, ու նրանք ստիպված երկար մնացին Լոնդոնում: Էթելն ընդունվեց աղջիկների վարժարան: Իր նոր ընկերուհիների համար նա արտասովոր էր ու այնպիսի բաներ գիտեր, որոնցից նրանք անտեղյակ էին:

Իր կառավարիչն այնքան սրտացավ չէր եղել, որքան կցանկանար Թոմասը: Խոսքը ոչ թե խարդախության, այլ անփույթ կառավարման մասին էր: Նա պետք է կարգավորեր գործերը: Այլևս չէր կարող այդ պարտականությունները թողնել անծանոթ մարդկանց հույսին:

Սարայի հետ եկան համաձայնության, որ Լոնդոնի տունը չդնեն վաճառքի: Կնոջն ամենևին չէր անհանգստացնում այնտեղ մնալը, ու նա շուտով վարժվեց մայրաքաղաքային կյանքին: Թոմասը վաղուց թողած կլիներ կառավարության հետ կապված իր պարտականությունները, սակայն Արտգործնախարարությունում և Պաշտպանության նախարարությունում ցանկանում էին, որ նա շարունակեր աշխատակցել:

Մերձավոր ու Միջին Արևելքում, անգամ՝ մինչև Աֆղանստան, իրավիճակն օրեցօր բարդանում էր: Անատոլիայում Մուստաֆա Քեմալին հաջողվել էր միավորել անդունդի եզրին գտնվող ժողովրդին, իսկ Եվրոպայում ի վիճակի չեղան համախմբվել՝ իրագործելու Սևրի պայմանագիրը, ինչը բոլորին տագնապի մեջ էր պահում:

Լուր հասավ Բեռլինում Թալեաթ փաշայի՝ երիտթուրքերի կառավարության նախկին վարչապետի սպանության մասին: Մի հայ ուսանող՝ Սողոմոն Թեհլերյանն էր նրան սպանել՝ դառնալով բոլոր հայերի հերոսը: Հայերի զանգվածային կոտորածների գլխավոր պատասխանատուն ապաստանել էր գերմանական մայրաքաղաքում, և այդ դեպքը

կրկին օրակարգ մտցրեց «Հայկական հարցը», որը գնալով բարդանում էր:

Թոմասը հրավեր ստացավ հայերի մի խմբից, ովքեր ղեկավարում էին Լոնդոնի հայ համայնքը: Նա մասնակցելու էր մի հանդիպման, որը տեղի էր ունենալու Վեստ-Էնդում՝ մի հին պահեստում. այն հայերի համար հավաքատեղի էր դարձել: Նրան այնտեղ տարավ Հագոպ Ագոպյանը՝ Լևոն Աբրամյանի զարմիկը, մի վաճառական, ում հետ Ավգուստուս Նյումանի միջոցով ծանոթացել էր Բեյրութում: Հագոպ Ագոպյանը, ով հարկ եղած դեպքում ժամանակ առ ժամանակ աշխատում էր բրիտանական հետախուզական ծառայությունների համար, կիրթ մարդ էր՝ ներկայանալի արտաքինով, օգտվում էր կառավարական բարձր ոլորտների ազդեցիկ մարդկանց հովանավորությունից, ապրել էր Հալեպում ու Կահիրեում: Լոնդոնում հայկական համայնքն օրեցօր մեծանում էր, թեև եկողներից շատերը չունեին ներգաղթի պաշտոնական թույլտվություն: Անգլիացի ծառայողները հատուկ հրահանգ էին ստացել առ այն, որ ավելորդ խոչընդոտներ չհարուցեն և թույլ տան, որ նրանք մտնեն երկիր:

Բրիտանական կառավարությունը տեղյակ էր, որ անգամ Սևրի պայմանագրից հետո թուրքերը շարունակում են հայերին ոչնչացնելու իրենց քաղաքականությունը: Թուրքերը հարձակվել էին նույնիսկ Հայաստանի նոր հանրապետության վրա: Քեմալի համախոհները հայերի սպանդի մեղավորներին մահվան դատապարտած վճիռները չեղյալ էին հայտարարում: Մոսկվայում թուրք զինվորականների հետ ստորագրվել էր մի նոր պայմանագիր, և դա էր անհապաղ քննարկում կազմակերպելու պատճառը: Թոմասի ներկայությունը պաշտոնական բնույթ չէր կրում. նրան հրավիրել էին Բեյրութի ու Հալեպի շատ հայերի խորհրդով, ինչը պայմանավորված էր նրա՝ հայերի հանդեպ ունեցած համակրանքով:

Քննարկման խնդիրը նույնն էր՝ տարբեր կուսակցությունների ու խմբակցությունների միջև անհամաձայնությունը: Հայերից ոմանք Ֆրանսիայի կողմնակիցներն էին, մյուսները՝ Անգլիայի, իսկ մեծամասնությունը, գտնվելով նյութական ու առողջական վատթար պայմաններում, միակ բանը, որ ցանկանում էր, ապաստան գտնելն էր ու հնարավորության դեպքում թուրքերից ու Եվրոպայից հնարավորինս հեռու գաղթել: Հավասարապես ո՛չ բարեկամներն էին նրանց հավատ ներշնչում, ո՛չ էլ՝ թշնամիները:

Վեստ-Էնդի պահեստում մեծ թվով նյարդայնացած հայեր էին սպասում, նրանցից շատերը հյուծված էին, քրքրված հագուստներով ու հնամաշ կոշիկներով: Բոլորն էլ ողջ մնացած նավաբեկյալներ էին. նրանց

այդպես ներկայացրեց առաջին ելույթ ունեցողը՝ Ստամբուլից եկած լրագրող Արմեն Դիրադյանը:

- Բարեկամնե՛ր, անգլիացիները բոլորովին խիղճ չունեն և առավելապես ցանկանում են, որ մենք գաղթենք կա՛մ Միացյալ Նահանգներ, կա՛մ էլ Հարավային Ամերիկա: Նրանց համար միևնույնն է: Ազգայնամոլ առաջնորդ Մուստաֆա Քեմալը շարունակում է նույն քաղաքականությունը, և ով կհավատա, թե Սևրի պայմանագիրը մի բանի ծառայելու է, նրան կառաջարկեի գնալ Աղանա, որտեղ և մեծ պատերազմի սկզբին ամեն ինչ սկսվեց, կամ՝ այլ բնակավայրեր, որ երբևէ մեր օրրանն էին: Ո՛չ, Սևրն ընդամենն արդարացում էր: Մեզ ոչ մի հայրենիք էլ չեն տա Անատոլիայում: Եվ ինչի էլ որ հասնելու լինենք, կլինի հայերիս արյան ու զոհաբերությունների գնով: Դեռ շատ բաների ականատես կլինենք… Թուրքերը կհասնեն իրենց նպատակին, բոլշևիկները չեն ցանկանում շարունակել հնուց եկած ընդհարումները և կստորագրեն այն, ինչ որ նրանց առաջարկեն: Ցարի հետ մեր գործերն այնքան էլ լավ չէին, բայց կոմունիստների օրոք մեզ համար ռուսական սահմանի վրա այլևս ապաստան չկա: Քեմալականները կշարունակեն հրի ու սրի իրենց քաղաքականությունը, իսկ մեր ժողովրդի մնացորդները կուլ կգնան տերությունների գեոռազմավարական քաղաքականությանը: Արդեն մեկ միլիոնից ավելի հայեր են սպանվել: Ովքեր էլ մնում են Անատոլիայի քաղաքներում ու գյուղերում, շուտով կոչնչացվեն կամ կարտաքսվեն: Մուստաֆա Քեմալի ժամանակավոր կառավարության ներկայացուցիչներն արդեն Փարիզում են կամ այստեղ՝ Լոնդոնում, նրանք պատրաստում են նոր պայմանագիր, քանի որ Սևրի պայմանագիրը համարում են մեռած: Մի քանի հոգով մենք ուզում էինք վերադառնալ, բայց անզեն էինք, ոչ ոք չուզեց մեզ ֆինանսապես օգնել, որպեսզի զենքեր ձեռք բերենք: Մենք պատմության զոհերն ենք: Պետք է միայնակ դիմակայենք ճակատագրի փորձություններին: Պատմե՛ք ձեր զավակներին, որ օրհասական պահին ոչ ոք մեզ չօգնեց: Ֆրանսիան ու Անգլիան մեզ թշնամի չեն եղել, սակայն շատ բան կարող էին մեզ համար անել: Բեյրութում և այլ քաղաքներում մեր եղբայրները հոտի պես կուտակվում են նավահանգիստներում, երկաթուղային կայարաններում: Ֆրանսիական ուժերը սկսել են դուրս գալ Կիլիկիայից, ու մենք կրկին անպաշտպան կմնանք Անատոլիայում: Սա մեր ճակատագիրն է: Հայաստանը երբեք չի մեռնի: Նա կմնա մենաստանների ավերակներում, խաչքարերի վրա, վաղեմի գյուղերում, լեռների այգիների հինավուրց քարե ցանկապատներին: Այդ հողը մերն է, թեև չլսված վայրագությամբ մեզանից այն խլեցին: Եթե նույնիսկ քարը

քարին չմնա, նույնիսկ մեր հին ավերակները փոշիանան, Անատոլիայի ժայռոտ լեռներում կշարունակի հնչել հին դուդուկի ողբը: Չթողնեք, որ ժամանակը ջնջի այդ վերջին հիշատակները, քանզի դրանց մեջ է ապրում Հայաստանի ոգին:

Մի երկչոտ ծափահարությամբ ավարտվեց Դիրադյանի ելույթը, որը կամաց-կամաց փոխարկվեց փայտյա պատերին, հատակին, իրարից անջատ աթոռներին հարվածելուն: Տղամարդիկ սկսեցին լաց լինել, ինչը նմանվում էր դուդուկի խորն ու մելամաղձոտ ձայնին: Ագոպյանը կանգնած էր երդիկի տակ: Արևի վերջին ճառագայթները լուսավորում էին նրա ալեհեր մազերը:

Թոմաս Հարդինգը կոկորդում մի հեղձուցիչ բան զգաց՝ հիշելով իր բարեկամ Բողոսյանի ու նրա պես շատերի անհավատալի ողիսականը: Ամոթ էր զգում Մեծ Բրիտանիայի բռնած դիրքից: Գիտեր, որ օսմանյան նախկին վարչապետ Սայիդ Հալիմն ազատվել էր բրիտանական կառավարության որոշմամբ ու այժմ գտնվում էր Հռոմում՝ վայելելով կյանքը: Անգլիացիները չէին ցանկանում իրենց զորքերն ուղարկել ու գումար ներդնել հեռավոր մի հակամարտության մեջ, որից ոչ մի օգուտ չէին սպասում:

Մուստաֆա Քեմալն ուզում էր Եվրոպային ցույց տալ, որ նրա ճնշումները, պայմանագրերն ու սպառնալիքները նոր թուրքերի համար ոչ մի արժեք չունեն: Բոլոր հույները, ասորիները, հայերը, քրիստոնյա կաթոլիկները պետք է ոչնչացվեին կամ վտարվեին: Քրդերն էլ դարձել էին երրորդ կարգի մարդիկ, չունեին ուսում ստանալու իրավունք և ստորադասված էին նրանց, ովքեր իրենց համարում էին Թուրքիայի միակ ու իսկական քաղաքացիները: Թուրքերը…

Թոմասը մի զեկույց պատրաստեց հետախուզական ծառայությունների ու Արտգործնախարարության համար: Նրան հրավեր ուղարկեցին, որ ներկայանա Ուայթհոլ: Խոսքը վերաբերում էր անհապաղ խորհրդակցություն անցկացնելուն:

Ինքը՝ Գաղութների գործերի նախարար Ուինսթոն Չերչիլը, նրան անձամբ դիմավորեց սրահում: Նախարարին ուղեկցում էին սըր Հերբերտ Սամուելը և գեներալ Ալենբին, ում հետ շարունակվում էր բարեկամական կապը:

Թոմասին հրավիրեցին թեյի, թեև նախարար Չերչիլն իրեն մի մեծ բաժակ գինի լցրեց: Ալենբին գովասանական մի փոքրիկ ելույթ ունեցավ Թոմաս Հարդինգի պատվին ու խորհրդակցությունը սկսվեց արևոտ մի

առավոտ, որն ավելի շատ հրավիրում էր զբոսնել Հայդ Պարկով, քան մնալ Ուայթհոլի սառը սրահներում: Սակայն Չերչիլի ձայնը սթափեցրեց նրան:

- Դուք հրաշալի հովանավորներ ունեք, գնդապե՛տ Հարդինգ: Գո՞ւցե Դուք նախընտրում եք, որ Ձեզ դիմեմ որպես պրոֆեսոր: Մեր ֆրանսիացի բարեկամներն ուզում են իրենց դիրքերն ամրապնդել Լիբանանում ու Սիրիայում: Շուտով Քեմալը նրանց դուրս կքշի Կիլիկիայից, իսկ մեզ չի հաջողվի դա կանխել: Համարում են, որ պատերազմում երկու երկրներս էլ հաղթող ենք դուրս եկել: Սակայն ինչպե՞ս հիմա պաշտպանվենք նրանից, ով այն տանուլ է տվել: Ճակատագրի հեգնանք… Այդ Քեմալ կոչվածը հույներին է հաղթել, ովքեր գերագնահատել էին իրենց ուժերը: Սևրի պայմանագրով սաստիկ վրդովեցրինք թուրքերին, որոնց կարծիքով՝ այդ պայմանագիրն ընդամենը թղթի անպետք կտոր է: Այնպես որ՝ անհնարին է կռվել Անատոլիայի ժայռոտ լեռներում: Ահավասիկ, իտալացիներն արդեն հետ են քաշվում: Չեն ցանկանում թաղվել նման երկրում: Շատ շուտով հույների հարցն էլ կլուծվի Սակարիայում, ֆրանսիացիներից հետո նրանք էլ դուրս կգան: Մենք՝ ինչպես միշտ... Ես, անշուշտ, չեմ ցանկանում Գալլիպոլիի կրկնությունը: Լլոյդ Ջորջն ուզում է թուրքերի դեմն առնել: Չենք կարող: Ո՞վ կարող է այս պահին հարց բարձրացնել միլիոններով գինեաներ[52] ներդնելու և Անատոլիայում քսան կամ երեսուն հազար բրիտանացիներ զոհելու մասին: Ո՛չ: Սրա վերջը շուտով կգա: Սևրի պայմանագիրը մեռած է ու թաղված, այնպես որ՝ հիմա մեր գործն ավելի իրատեսական պայմանագիր պատրաստելն է: Մեզ դեռ շատ անելիքներ են սպասվում Քարբալայում, Նայաֆում և այլ վայրերում: Դուք գիտեք, որ իսլամն այլևս երբեք այն չի լինի, ինչ ընդամենը տասը տարի առաջ էր: Ճշմարիտն այն է, որ պատերազմում հաղթել ենք, սակայն կորցրել ենք կայսրությունը: Մեր բարեկամ Հերբերտ Սամուելը բոլորից լավ գիտի, թե ինչ կրետի բույն է մեզ բաժին ընկել Պաղեստինում. արաբները մեզ մեղադրում են բոլոր սխալների համար, լուրջ խնդիրներ են սպասվում Եգիպտոսում, Միջագետքում ու Տրանսհորդանանում: Ազգերի լիգայի ի հայտ գալով՝ աշխարհը շատ է փոխվել, ու պետք է կամաց-կամաց առագաստները փակել: Մեր բարեկամները՝ հայերը, մեզ մեղադրում են իրենց չպաշտպանելու համար: Նրանց արդեն բացատրել եմ, որ սա նոր խաչակրաց արշավանք ձեռնարկելու պահը չէ: Ըստ այդմ՝ պետք է լինենք ավելի գործնական և կարողանանք լուծել մեր առջև ծառացած խնդիրները: Դուք կվերադառնաք Բեյրութ: Պետական ոչ մի պաշտոն չեք ունենա, դա լավագույն

[52] 21 շիլլինգ արժեքով անգլիական հին ոսկեդրամ:

շնորհն է, որ մենք կարող ենք Ձեզ մատուցել, սակայն տարածաշրջանում կլինեք մեր վստահված անձը: Ֆրանսիացիները շատ անելիքներ ունեն, բավական է, որ «քաղաքակրթեն» Սիրիան ու պաշտպանեն Լիբանանի քրիստոնյաներին:

Թոմասը տուն վերադարձավ այն զգացողությամբ, որ հովվերգական Արևելքը, որն արդեն հասցրել էր անգիր սերտել, հավերժ հոդս է ցնդել: Գուցե այդ ամենն ընդամենը երկար երազ է եղել: Սարայի հետ թերևս պետք է քննարկել Անգլիայում երկար ժամանակ մնալու հարցը:

27. ԱՐԵՎԵԼՔԻ ՄՈԳԱԿԱՆ ՀՄԱՅՔԸ
ՀՈՒԼԻՍ - ՆՈՅԵՄԲԵՐ, 1921թ.

Հուլիսի սկզբներին Թոմաս Հարդինգը մենակ վերադարձավ Բեյրութ: Սարան վճռեց, որ առայժմ Էթելի ու իր համար ավելի լավ կլիներ Լոնդոնում մնալը:

Չերչիլի մեկնաբանությունները դառնում էին իրականություն: Իտալացիները Փոքր Ասիան, ոչ էլ Աղալիան զավթելու ոչ մի պատրանք չունեին: Բեյրութում էլ ֆրանսիական վարչակազմն իրեն ապահով չէր զգում: Մուստաֆա Քեմալի զորքերն անհավատալի դիմադրություն ու անձնազոհություն էին ցուցաբերում հույների դեմ մղվող մարտերում: Մի քանի օր անց՝ օգոստոս ամսվա ամենաթեժ պահին, Անկարայի վիլայեթում սկսվեց Սակարիայի համար մարտը: Կրկին՝ հույները թուրքերի դեմ...

Զմյուռնիայի հույները գիտեին, թե ինչ խաղադրույք էր դրված սեղանին, իսկ Բեյրութի ուղղափառ հույների անգամ մելկիտյան եկեղեցիներում մոմեր էին վառում՝ խնդրելով, որպեսզի բոլոր սրբավայրերի սրբերն առաջնորդեն հույն ռազմիկներին՝ սկսած իրենց գեներալ Անաստասիոս Պապուլասից մինչև վերջին փողհարը:

Դաժան կռվից հետո հույները լքեցին մարտի դաշտը. առաջին հարձակումը, իհարկե, հաջող էր անցել: Երբ արքա Կոնստանտինն Անտանտին միասնության կոչ արեց, ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Իտալիան ու ո՛չ էլ Մեծ Բրիտանիան չարձագանքեցին: Սևրի պայմանագիրը թաղված էր, և առաջին անգամ լսվեց թուրք առաջնորդ Մուստաֆա Քեմալ «Աթաթուրքի»՝ «թուրքերի հոր» ձայնը:

Դա նշանավորվեց փոփոխությամբ: Բեյրութում Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսար Անրի Գուրոն որոշեց զորքերը դուրս բերել Կիլիկիայից: Քէ դ՚Օրսեյն այլևս չէր ուզում թեկուզ մեկ զոհ ունենալ. Անատոլիան՝ թուրքերին, իսկ Սիրիան ու Լիբանանը՝ ֆրանսիացիներին:

Թոմաս Հարդինգին հրավիրեցին ժողովի: Նրան ընկերակցեց Ավգուստուս Նյումանը, ով նոր էր վերադարձել Երուսաղեմից: Գուրոն նրանց ընդունեց Լիբանանի ինքնավարության ընդունելությունների սրահում: Գուրոն իր դերի մեջ էր: Մարտինիկայից սևամորթ ու մուլատ զինվորների մի վաշտ զգաստ շարքով կանգնեց Ֆրանսիայի Հանրապետության դրոշի հետևում, որի կողքին Մեծ Լիբանանի՝ ավելի փոքր չափ ունեցող նոր դրոշն էր:

Ընդունելությունը լարված էր: Թոմասը սկսեց կասկածել, թե արդյոք նրանք իրենց դաշնակիցներն են: Մեծ Բրիտանիան ու Լլոյդ Ջորջը

կարող էին անել այն, ինչ որ ցանկանային, սակայն Ֆրանսիան չէր մարտնչի թուրքերի դեմ: Իսկ Սևրի պայմանագի՞րը… Գուրոն թոթվեց ուսերը:

Ավգուստուս Նյումանը ժպտաց՝ առանց նյարդայնանալու: Դա մի հրաշալի օրինակ էր, թե ինչպես է պետք վարվել: Ֆրանսիան ու նույնիսկ Իտալիան, անշուշտ, իրավունք ունեին պաշտպանելու իրենց սկզբունքը: Առայժմ Մեծ Բրիտանիան գործելու էր իր՝ վաղուց մշակած պլաններով:

Լսելով այդ մասին՝ Գուրոն փոքր-ինչ հանդարտվեց: Նրանց ներկայացրեց Սիրիան մի քանի տարածքների բաժանելու իր ծրագիրը: Այո՛, գիտեր, որ բողոքելու են, սակայն դրանք անհիմն կասկածներ էին արդիականացման հանդեպ: Չպետք է թույլ տան, որ դրուզներն ու մարոնները կրկին ընդհարվեն: Գուրոն բացականչելով հավաստիացրեց. «Պետք է միշտ հաշվի նստենք պատմության հետ»:

Ֆրանսիայի ու Անգլիայի միջև այլևս ընդհանուր շահեր գոյություն չունեին: Ավգուստուս Նյումանն անկեղծ պոռթկման պահին Թոմասին խոստովանեց, որ Լյոյդ Ջորջն այլևս չի հավատում Անտանտին, ու նրան անհանգստացնում է Ֆրանսիայի բռնած դիրքը: Ի վերջո, ովքեր թուրքերին չափի մեջ էին պահում, կրկին նրանք էին՝ անգլիացիները:

Մի քանի օր անց Ավգուստուսն ու Թոմասն ուղևորվեցին Երուսաղեմ՝ հանդիպելու արտաքին գործերի պետքարտուղար, լորդ Ջորջ Ն. Քերզոնին[53], ում հետ Նյումանը մտերիմ հարաբերություն էր պահպանում: Նախքան հանդիպումը նա Թոմասին ասաց.

- Այդ մարդը հիմնել է «Քերզոնի գիծը»՝ նշելով Լեհաստանի ու Ռուսաստանի միջև սահմանը: Նա Արևելքի մեծ գիտակ է: Ինչպես գիտես, Հնդկաստանում իր փոխարքա եղած ժամանակ, երբ քչերն էին նրան հավատ ընծայում, իրեն դրսևորեց որպես արտասովոր անձնավորություն: Հիմա նա շատ անելիքներ ունի Մերձավոր Արևելքում. այս վայրը բոլորի գլխին պատուհաս է դարձել:

Առաջին իսկ հանդիպումից հետո Թոմասն այն զգացողությունն ունեցավ, որ նրան ասես ամբողջ կյանքում է ճանաչել: Քերզոնի վրա նույնպես զգացվում էր Օքսֆորդի թողած կնիքը. նրան մեծապես հետաքրքրում էին հնագույն արվեստն ու ճարտարապետությունը: Նա հատկապես հպարտ էր նրանով, որ մասնակցել էր Թաջ Մահալի վերականգնման աշխատանքներին:

[53] Ջորջ Նաթանիել Քերզոն, Քելդսթոնի առաջին մարկիզ (1859-1925): Նշանավոր ճանապարհորդ և ուսումնասիրող, քաղաքական գործիչ: Պարգևատրվել է Աշխարհագետների արքայական ընկերության ոսկե մեդալով (ծանոթագրությունը՝ հեղինակի):

- Հարդի՛նգ, ես լավ էի ճանաչում Ձեր մորը, հմայիչ տիկին էր: Ձեք պատկերացնի, թե ինձ ինչ ցավ պատճառեց նրա կորուստը: Նրան անչափ դուր էին գալիս վաղեմի ժամանակների շուրջ զրույցները, մեծ հետաքրքրությամբ լսում էր Սիամ, Լհաս կատարած իմ ուղևորությունների, Պամիրի լեռնաշղթայի ուսումնասիրության և Ամու-Դարիայի ակունքները գտնելու վերաբերյալ իմ պատմությունները: Ա՜հ, ինչ հրաշալի պահեր էին: Իսկ հիմա ես, ահա, Երուսաղեմում եմ. քաղաք, որն Աստված ստեղծեց, որպեսզի մուսուլմանները, քրիստոնյաներն ու հրեաները իրարից հեռու մնան: Ես այնքան էլ հպարտ չեմ վերջին տարիներին մեր վարած արտաքին քաղաքականությամբ: Հիմա պետք է մտածենք այն մասին, թե ինչպե՞ս փոխհատուցենք հաշեմիթներին, թե ի՞նչ կկատարվի թուրքերի հետ, թե ի՞նչ ապագա է սպասվում հրեաներին՝ շրջապատված մուսուլմանների փոքրաթիվ հարևանությամբ… Աշխարհն արդեն իսկ չափազանց խճճված էր նախքան մեր՝ բրիտանացի քաղաքագետներիս այստեղ գալը, իսկ հիմա քաոսային վիճակ է: Ես ամենից շատ հայերի համար եմ ցավում, ամենից շատ նրանք կտուժեն Վիլսոնի ճարտասանության ձախողումից: Մենք՝ բրիտանացիներս, կարող ենք նույն բանը խոստանալ մեր վաղեմի երկու թշնամիներին: Ամերիկացիները, սակայն, անգամ չգիտեն, թե ինչ են խոստանում: Հիմա ինձ պատմե՛ք, թե ինչ է կատարվում Լիբանանում: Իրար հետ տեղավորե՛ք հինգ կամ վեց տարբեր կրոնական ավանդույթներ ունեցող քրիստոնյաների, չորս կամ հինգ միանգամայն տարբեր աղանդավոր մուսուլմանների, մի քանի հրեաների, մի քանի ֆրանսիացի մեծապետական հայացքների տեր զինվորականների՝ ուղարկված աշխարհիկ հանրապետական կառավարության կողմից, բոլորին միասին ուժգին թափահարե՛ք, եթե հնարավոր է, Սպիտակ լեռան ձյունով, ու հյուրասիրվե՛ք: Լավ, հետո ինձ կպատմեք:

Թոմասին հիացրեց Քերզոնի նուրբ հեգնանքը: Պետական քարտուղարը լավ տրամադրություն ուներ: Պատճառն այն էր, որ հրեական ծագմամբ ռուս բժիշկը նրա մեջքի ցավերի համար կպչուն վիրակապ էր պատրաստել, որը բավականին թեթևացրել էր նրա վիճակը, սակայն խնդիրն այն էր, որ նա դեղը պետք է պատրաստեր Հուդեայի անապատում՝ Մեռյալ ծովի շրջակայքում աճող որոշ բույսերից:

Քերզոնը նրանց հրավիրեց ընթրիքի: Վերադարձան հյուրանոց և հագնվեցին ընթրիքին համապատասխան: Ժամը յոթին քառորդ պակաս Բարձրագույն կոմիսարի «Ռոլս-Ռոյս»-ը եկավ՝ նրանց տանելու:

Ընթրիքին հրավիրված էին նաև բրիտանացի մի քանի քաղաքագետներ ու զինվորականներ, Սիոնիստական հանձնաժողովի և «Ամերիկյան սիոնիստական բժշկական ընկերության» ներկայացուցիչներ: Մթնոլորտը լարված էր: Ֆրանսիացի դիվանագետները, Անգլիայի փքուն դերակատարումից վիրավորված, իրենց հեռու էին պահում: Մեծն մուֆտին[54] անսպասելիորեն լքեց ճաշկերույթը՝ եվրոպացիների ազատ պահվածքից նվաստացած և մանավանդ չհանդուրժելով նրանց տիկնանց զգեստների համարձակ բացվածքները: Քերզոնի մեկնաբանությունը շատ պարզ էր. «Եթե տղամարդը հանդիպում է զգեստի տակից կրծքերը երևացող կանանց և բարկացած շարժում ձեռքերը, ապա մուսուլման է, եթե նայում է առաստաղին, ապա հրեա է, իսկ եթե ուղիղ նայում է կրծքերի կտրվածքին, ապա իտալացի է: Ամեն ինչ շատ հեշտ է»:

Բոլորը բաժակ բարձրացրին՝ իմանալով նորությունը, այն է՝ թագավորը Քերզոնին արժանացրել էր Քելդսթոնի մարկիզ տիտղոսին:

Հրաշալի գիշեր էր, Երուսաղեմում տերև անգամ չէր շարժվում, և աստղերը կայծկլտում էին երկնքում: Դուրս եկան բաց պատշգամբ ու նստեցին, նրանց մի-մի ըմպանակ կոնյակ մատուցեցին:

Խոսեցին Ֆայսալից և Դամասկոսում արաբական ձախողված թագավորությունից: Քերզոնը հմուտ զրուցակից էր ու պատմության մեծ գիտակ:

- Ծանո՞թ եք պրոֆեսոր Ավգուստուս Մյուլլերի «Իսլամիզմի պատմություն» աշխատությանը: Բացատրում է, թե ինչ բան է արաբ համայն ժողովրդի խառնվածքը. չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունեն հարյուրավոր ցեղեր՝ ահռելի տարածքով մեկ ցրված, անկախ իրենց մշակույթից ու կրթությունից, լինելով գյուղացիներ, բեդվիններ, առևտրականներ, փիլիսոփաներ կամ բանաստեղծներ, կա մի հզոր բան, որ նրանց համախմբում և դարձնում է մեկ ժողովուրդ, մեկ համայնք՝ առանձնահատուկ իմաստ հաղորդելով նրանց կեցությանը: Դուք ինձ կասեք, որ դա Ղուրանն է, ես էլ ձեզ կպատասխանեմ՝ այո՛, անշուշտ, բայց՝ մանավանդ արաբերենը՝ ամենաարտահայտիչ լեզուներից մեկը: Մենք գտնվում ենք արաբական վերածննդի սկզբնական փուլում: Արաբական ազգայնամոլությունը, ի վերջո, բոլորիս վնասելու է: Այստեղ դա առավելապես է զգացվելու, մանավանդ՝ առավոտյան, երբ տեղանքի խորքում հառնում է ժայռի ոսկեզօծ գմբեթը: Ըստ արաբ մուսուլմանների՝ մենք՝ բրիտանացիներս, պատերազմում հաղթեցինք թուրքերին չպատկանող, սակայն նրանց կողմից ապօրինաբար տիրացած

[54] Մահմեդական բարձրաստիճան կրոնավոր և Ղուրանի մեկնաբան:

ժառանգության՝ խալիֆայության շնորհիվ: Արաբները շուտով կպահանջեն, որ անգլիացիներս հեռանանք իսլամի տարածքներից: Ինքս ո՛չ լավատես եմ, ո՛չ էլ՝ ռեալիստ: Միայն քաղաքագետ եմ ու գործնական անձնավորություն: Ժամանակը ցույց կտա, թե ով է արդարացի:

Նյումանն ուղևորվեց Կահիրե, իսկ Թոմասը վերադարձավ Բեյրութ: Չնայած նրան, որ մարոն Շաբրի ամուսինները ծառայում էին տանը, նուսայրի այգեպան Ահմեդ էլ-Մանսուրն էլ խնամքով մշակում էր պարտեզը, Թոմասին տունը միայն իր համար դատարկ ու մեծ էր թվում: Սարան ու Էթելը դեռ մնալու էին Լոնդոնում, քանի դեռ Մերձավոր Արևելքում իրավիճակը չէր հանդարտվել:

Նա շատ լավ իրազեկված էր ամեն ինչից, շատ հաճախ էր հանդիպում բժիշկներ Բողոսյանի, Արիստոտելես Պապապուլոսի հետ: Վերջինս, բացի լավ վիրաբույժ լինելուց, նաև արտակարգ խոհարար էր և ժամանակ առ ժամանակ, հունական, հայկական, թուրքական և արաբական կերակուրներին զուգահեռ, նրանց հյուրասիրում էր լիբանանյան ճաշատեսակներով: Բեյրութում հարգի էին ֆրանսիական հացը, մուգ գինին ու պանիրները: Դա գաղութացման հաճելի կողմն էր: Որ Բեյրութում ավելի լավ էին ապրում, քան Դամասկոսում, կասկածից դուրս էր:

Գուրոն ու նրա վարչակազմը փորձում էին տեսնել, թե նախկին՝ օսմանյան կառավարման որ օղակն է պիտանի, Քէ դ՛Օրսեյի որ հրամանները պետք է կենսագործվեն, մինչև ուր կձգվի ֆրանսիական լիազորությունը:

Գուրոն էլ էր Թոմասին հաճախ ճաշի հրավիրում:

- Տեսե՛ք, Հարդի՛նգ: Տեղական խորհրդակցական Վեհաժողովը շատ ավելի բարդ է, քան Ֆրանսիայի Ազգային վեհաժողովը: Բեյրութի քաղաքային ինքնակառավարումը ներկայացնում են մեկ մարոնական, մեկ ուղղափառ ու երկու սուննիներ: Լեռնային Լիբանանը՝ ամենաավանդական գավառն ու ամենադժվարինը, ունի երեք մարոններ ու մեկ դրուզ, Հյուսիսային Լիբանանը՝ մեկ մարոն ու երկու ուղղափառ հույն, Հարավայինը՝ մեկ մարոն, մեկ սուննի և մեկ շիա, Բեկաան՝ մեկ ուղղափառ հույն և մեկ շիա, Տրիպոլին՝ մեկ սուննի... Դուք ինձ կասեք, որ ինչ-որ բան կարելի է փոխել, բայց մենք անում ենք մեր ուժերի ներածին չափով: Մենք կարող ենք ընտրել ոչ թե անհատներ, այլ դավանանքներ: Այլ բան չի ընդունվի:

Թոմասի կարծիքով՝ ինքնավարությունը, որը ստեղծվում էր ֆրանսիացիների կողմից, այն չէր, ինչ խոստացել էին այն ժամանակ, երբ Ազգերի լիգան նրանց շնորհեց մանդատը: Դա հատկապես Դամասկոսում

և Սիրիայի ներսում շատ ավելի խորը խնդիրներ էր հարուցում: Արաբները դավեր էին նյութում ֆրանսիական խնամակալության դեմ, հաշեմիթներն էլ դեռ համոզված էին, թե անգլիացիներն այս կամ այն ձևով պարտավոր են իրենց փոխհատուցել:

Բժիշկ Բողոսյանը, ով Հալեպի հետ ամուր կապեր ուներ, նրան գրավոր տեղեկություն հղեց: Դա փակ ու զմռսված ծրարով մի երկտող էր՝ ուղարկված անձամբ Թոմասին: Շփման այդ ձևը տարօրինակ թվաց, քանի որ նա հաճախ էր տեսնում Բողոսյանին, և արդյոք կարիք կար դիմելու այդ եղանակին. ինչո՞ւ, ինչպես միշտ, չէր եկել իրեն տեսնելու:

Բեյրութ, 12 նոյեմբերի, 1921թ.

Պրոֆեսոր Թ. Հարդինգին

Սիրելի՛ Թոմաս, եթե Ձեզ հետաքրքիր է, ապա հավաստի տեղեկություն ունեմ այն մասին, որ Ձեր վաղեմի բարեկամուհին՝ տիկին Աննա Լեֆեբրը, որոշ ժամանակով գտնվում է Հալեպի «Բարոն» հյուրանոցում:

Խնդրում եմ Ձեզ ներողամտորեն ընդունել իմ բարեկամական միջամտությունը: Սրտագին ողջույնով՝ Հ. Բողոսյան, բժշկագիտության դոկտոր:

Այդ տողերը կարդալով՝ զարմացավ հրաշալի տեղեկությունից: Ի՞նչ գործ ուներ Աննա Լեֆեբրը Հալեպում: Ինչո՞ւ իրեն տեղյակ չէր պահել: Գրեթե յոթ տարի էր, ինչ իրար չէին տեսել:

Որոշեց գնալ նրան տեսության: Մի փոքրիկ ճամպրուկ պատրաստեց ու երկու օր անց Հալեպում էր՝ «Բարոն» հյուրանոցի սրահում, որտեղ եղել էր մի քանի տարի առաջ:

Սպասեց բակում՝ հովանոցի ներքո նստած: Քիչ այն կողմում զրուցում էին ֆրանսիացի զինվորականներ: Ինչ-որ ամերիկացի ամուսիններ, որ հավանաբար քարոզիչներ էին, լուռ ճաշում էին: Հեռվում՝ արմավենիների պուրակում, որ հիշեցնում էր Եգիպտոսը, բաղերի երամներ էին թռչում: Մի քանի արաբներ, ուղտերին հեծած, դանդաղ գնում էին: Արևելքն էր… Թոմասը չէր դադարում զարմանալուց. տարիներն անցնում էին, ու աշխարհն առաջ էր ընթանում, բայց Արևելքը նույնն էր մնում:

Հայտնվեց Աննան՝ արևադարձային եղեգնահյուս գլխարկով, մարմաշե վզնոցով, հագին՝ Հալեպի համար բավականին համարձակ զգեստ, փեշը՝ սրունքի կեսից: Աննան լուռ մոտեցավ նրան: Մի պահ նայեց, ապա առանց զգուշացնելու՝ կռացավ ու համբուրեց նրա շուրթերը: Ֆրանսիացի զինվորականները, բավականին ապշած, դիտում էին այդ տեսարանը:

Թոմասը տեղից վեր կացավ, բռնեց կնոջ ձեռքից, ու միասին լուռ քայլեցին սրահով՝ իրենց հետևից մի թույլ շշուկ թողնելով: Ուղիղ գնացին դեպի Աննայի սենյակ: Նա ոչ մի խղճի խայթ չէր զգում. Սարան շատ հեռու էր գտնվում, իսկ Աննան հրաշալի ընկերուհի էր, թեև չէր համարում, որ սիրահարված էր նրան:

Կարոտել էր Աննային՝ հմայիչ ու զգայունակ: Յոթ տարին բավականին երկար ժամանակ էր, նաև՝ շատ կարճ՝ կախված շատ գործոններից: Նրանք մոլեգնորեն տրվեցին սիրուն: Այնուհետև աղջիկը Թոմասին պատմեց, որ ամուսնացել էր գերմանացի մի գործարարի հետ, ով մի քանի ամիս առաջ Բեռլինում մահացել է սրտի կաթվածից: Թոմասը ոչ մի բան չասաց, ու Աննան խոսքն անմիջապես փոխեց ու հարցրեց, թե արդյոք Թոմասն ամուսնացել է: Վերջինս գլխի շարժումով հաստատեց՝ նշելով, որ շարունակում է իր ընտանիքի հետ ապրել Բեյրութում, սակայն վերջին տարիներին ձմեռն անցկացնում էին Անգլիայում, որպեսզի իրենց դուստրը շարունակի ակադեմիական դասընթացները:

Ինչո՞ւ էր վերադարձել Արևելք: «Ջուտ կարոտից»,- պատասխանեց Աննան: Շատ բաներ էր վերհիշել ու Փարիզում մտածել էր իր ցանկություններն ի կատար ածելու մասին. որոշել էր այցելել Պալմիրա, ինչը մանավանդ այդ ժամանակ շատ թանկ հաճույք էր: Թոմասն արդյոք կցանկանա՞ր ընկերակցել իրեն: Թոմասը ոչ մի պահ չվարանեց: Որոշեցին նախապատրաստվելուն պես ճամփա ընկնել:

Երեք օր անց թողեցին Հալեպը՝ ուղղվելով դեպի հարավ-արևելք: Հետևում մնացին պարտեզները, այգիները, բանջարանոցները, մշակված հողը՝ ժայռոտ անապատում խորանալու համար: Նրանց ուղեկցում էին տասներկու արաբներ, բոլորն էլ՝ զինված: Այդ տեղերում դեռևս անպակաս էին հրոսակները, անգամ պատերազմը չկարողացավ նրանց վերջը տալ: Արաբները նրանց նայում էին որպես ամուսինների: Ոչ ոքի մտքով այլ բան չէր անցնում. իսլամական բարոյականություն: Թոմասը քաջատեղյակ էր այդ աշխարհին, իսկ ինչ վերաբերում էր Աննային, ապա նա էլ պատահական զբոսաշրջիկ չէր:

Հինգ օր անց հասան Պալմիրա՝ Թադմիր գյուղի մոտ: Մշուշի պատճառով այնտեղ տեղի ունեցավ անսպասելի մի բան. սյուները՝ վիթխարի կառույցների ավերակները, ցածր ամպերի միջով վեր էին խոյանում ոսկեզօծ երանգներով: Երկուսն էլ լուռ մնացին՝ յուրաքանչյուրն իր ուղտին նստած: Այդտեղ էր գտնվում Բաալի կամ Բելի տաճարը՝ տերն ու տիրակալն այն անդորրի, որում միայն մի քանի բեդվիններ տաճարի մոտ ճամբար էին խփում: Դանդաղաքայլ ներս մտան, ասես ուղտերն

անգամ վախի զգացում էին ապրում սալահատակ, լայնահուն ճանապարհից:

- Ինձ թվում է, թե ես Զենոբիան եմ՝ անապատների թագուհին,- ոչ վերամբարձ տոնով ասաց Աննան, երբ ուղտի վրայից իջնում էր հնագույն թատրոնի դիմաց:

Հիացած շրջեցին այդ վայրով: Արաբներն էլ վրաններն էին բացազատում՝ գիշերվան նախապատրաստվելով ավերակներից քիչ հեռու՝ մի բավականին լավ պահպանված հրաշալի տաճարում, որը շողարձակում էր մայր մտնող արևի ճաճանչներով:

Պալմիրայում նրանք անցկացրին անմոռանալի չորս օրեր, այցելեցին հովտում գտնվող գերեզմանները, ցիրուցան աշտարակները: Բեդվինները նրանց հետևում էին հեռվից՝ հարգելով նրանց առանձնությունը:

Թոմասը, երբ Աննան զբոսնում էր, ջրաներկով մի քանի նկարներ վրձնեց, գրառումներ կատարեց տետրում: Այդտեղ ժամանակն էր թագավորը, որ մինչև արևի մայր մտնելու ժամն անցնում էր շատ դանդաղ:

Հալեպ վերադարձան դառն ու քաղցր զգացողությամբ: Աննան պետք է վերադառնար Փարիզ: Նրան սպասում էր մի երկար ուղևորություն՝ որոշ դադարներով. շոգենավով մեկնելու էր Աթենք, մի քանի օր հետո Պիրեայում կրկին շոգենավ էր նստելու՝ Մարսել գնալու համար, իսկ այնտեղից՝ գնացքով Փարիզ: Թոմասն էլ, ձի հեծած, առափնյա ճանապարհի երկայնքով վերադառնալու էր Բեյրութ: Նրանցից ոչ մեկը ներքուստ չէր խորհում այն մասին, թե երբևէ կտեսնվեն կրկին: Ոչ մի բանի համար մեկմեկու կշտամբելու առիթ չունեին: Պատահականությունն ավելի քան շռայլ ու տեղին էր գտնվել նրանց հանդեպ:

Թոմասը նրան ուղեկցեց մինչև կայարան: Այնտեղ նրանք գրկախառնվեցին, այնուհետև Աննան հոգոց հանեց ու վագոն բարձրացավ: Պատուհանից դուրս նայեց ու ձեռքով հրաժեշտ տվեց: Փոքր-ինչ ցրտել էր, նոյեմբեր ամիսն էր: Գնացքն անիվների ճռռոցով տեղից պոկվեց: Թոմասը թափահարեց ձեռքը՝ հրաժեշտ տալով մինչև վերջին վագոնի անհետանալը:

Մեկ շաբաթ անց, երբ Բեյրութի իր տանն արթնացավ, կասկածեց. արդյո՞ք այդ ամենը երազ չէր եղել… Երբեք չի մոռանա իր ճանաչած առաջին լիբանանցու՝ Ժոզեֆ Տանուկիի խոսքերը. «Այս երկիրը յուրահատուկ բան ունի՝ մագիա, պարո՛ն, Արևելքի մագիան: Երբևէ կհասկանաք ասածիս իմաստը»:

28. ԿԱՍԿԱԾՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ
1922թ.

Ավգուստուս Նյումանն իր ակտիվ գործունեությունն էր շարունակում ողջ Մերձավոր Արևելքում: Ֆիզիկապես պահպանում էր իր հրաշալի արտաքինը և արտասովոր կամքը: «Նրանց չի հաջողվի ինձ խեղճացնել»,- ասում էր Նյումանը, և Թոմասի կարծիքով՝ նա իրավացի էր: Ավգուստուսն Ալեքսանդրիայից Բեյրութ հասավ մարտի առաջին շաբաթվա ընթացքում: Անձամբ ներկա էր եղել Եգիպտոսի անկախության հռչակմանը և Կահիրեում նոր թագավորի՝ Ֆուադի իշխանության գալուն:

- Մենք դեռ շատ անելիք ունենք այնտեղ: Թվում է, թե իսկ և իսկ Գորդոնի ուրվականն է գերեզմանից դուրս եկել: Եգիպտացիները չեն ուզում ձեռքներից բաց թողնել Սուդանը, իսկ մենք պետք է համոզենք նրանց: Բացի դրանից՝ առկա է նաև Սուեզի ջրանցքի հարցը: Մի՞շտ այդ ջրանցքը… Ուրիշ խնդիր էլ ունենք՝ կապված «Վաֆդ» կուսակցության հետ: Այդ ազգայնական կուսակցությունը բացարձակապես դեմ է մեզ՝ չնայած այն բանին, թե Ալենբին որքան բան է արել այդ կուսակցության հիմնադիր Սաադ Զաղլուլի համար: Թոմա՛ս, արաբական աշխարհում ինչ-որ բան է փոխվում, և հնարավոր է, որ եվրոպացիները՝ բրիտանացիներս ու ֆրանսիացիները, մեծ պատասխանատվություն կրենք այդ ամենի համար: Այդ շարժումը բխում է իսլամի ներսից: «Վաֆդ» կուսակցությունը սերում է նախորդ երկու՝ «Հիզբ ալ-Ումմա» և «Հիզբ էլ-Վաթան» կուսակցությունների ձուլումից, որոնց գաղափարախոսներն իրենց գիտելիքները քաղել են ալ-Աֆղանիի ու Մուհամմեդ Աբդուի աղբյուրներից: Իսլամի փորձագետները, որոնց հետ ես խորհրդակցեցի, ինձ մատնանշեցին, որ այդ ամենը սկսվել է Իբն Խալդունից: Դրա մասին ասված է «Ալ-Մուկադիմմահում»[55]: Մենք խոսում ենք XIV դարում ապրած մարդու մասին: Շարժումը փոխարկվել է անկասելի ալիքի, որը քշում ու տանում է նկուղներում ձևավորված հին կառույցները, որոնցում հավաքվում էին Դամասկոսի, Բեյրութի ու արաբական աշխարհի մեծ քաղաքների դավադիրները: Գերմանացիները չհասկացան, թե ուր են մտնում, սակայն, ճիշտն ասած, ֆրանսիացիներն ու մենք գտնվում ենք կրետների վիթխարի բնում: Այստեղ՝ Բեյրութում, չնայած արաբ քրիստոնյաների ջանքերին, երբեք ոչ մի բան առաջվա պես չի լինի: Երբ շրջում ենք ծովափով կամ նավահանգստով, ինձ դեռ համակում է խաղաղության ու ներդաշ-

[55] «Համաշխարհային պատմության ներածություն»:

նակության զգացողությունը. արևը, ճայերը, ծովի բուրմունքը, ուղտերը՝ ապրանքներով բեռնված, լիբանանցի հմուտ առևտրականները՝ պատրաստ հաջող առևտրի, ռեստորանները՝ լի մարդկանցով, ովքեր ծիծաղում ու չարաբանում են այլոց ու իրենց ազգականներին, մարդ արարածներ, որ ձգտում են ապրել: Երբեմն խորհում եմ, թե ինձ համար որքան լավ կլիներ Լոնդոնում՝ իմ հանգիստ տանը: Մինչ Գուրոն փորձում է ֆրանսիական մշակույթն արմատավորել այստեղ՝ Բեյրութում ու Դամասկոսում, արաբները, ինչպես նաև մարոններն ու ուղղափառ հույները թաքուն հավաքվում են նկուղներում՝ լսելու համար նրանց, ովքեր պատմում են նոր իսլամի մասին. հնազանդվել միայն Ալլահին, Ալլահ Աքբար, իսկ գաղութարարներին՝ անտանելի կյանք… Ու դու դեռ ցանկանում ես այստե՞ղ մնալ: Մենք խենթ ենք… Ես չգիտեմ, թե որքան ժամանակ հետո այս ամբողջը երկինք կթռչի, բայց դույզն-ինչ չկասկածես. վերջը դա է: Դու 1909 թվականից այստեղ ես, հիմա 1922 թվականն է սկսվել, ու դու տեսել ես, թե այս տասներեք տարում ինչքան բան է փոխվել:

Մարտի սկզբներին «Սթար օֆ Ինդիա»-ն հանդիսավոր մտավ նավահանգիստ՝ Լոնդոնից բերելով Սարային ու Էթելին: Անգլիայում ապրած ամիսների ընթացքում Էթելը դարձել էր հմայիչ աղջիկ: Լավ ճանաչելով արաբ երիտասարդներին և իմանալով, թե որքան հեշտ են նրանք սիրահարվում, Թոմասը մտածեց, որ ավելի լավ կլիներ, եթե Էթելը մնար Անգլիայում: Նա սկսել էր մտածել ոչ թե որպես Էթելի հոր, այլ Էթելի պապիկի՝ Չարլզ Վեյլերի պես, ով պնդում էր, որ աղջիկն իրենց հետ մնա: Սակայն նա Բեյրութում դեռ ապրելու էր հոր և Սարայի հետ:

Մարտին ֆրանսիացիները ցրեցին Լիբանանի վեհաժողովը: Փարիզից եկած հրահանգների համաձայն՝ համընդհանուր ընտրությունների միջոցով այն պետք է վերածվեր ներկայացուցչական խորհրդի: Դա մեկ քայլ առաջ էր Ֆրանսիայի՝ մինչ այդ ունեցած դիրքորոշման մեջ: Մյուս կողմից էլ Ազգերի լիգային պետք է ցույց տար, որ կատարում է համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները: Խնդիրն այն էր, որ թուրքերը ոչ միայն չէին ընդունել Սևրի պայմանագիրը, այլև այն ուզում էին փոխել զենքի ուժով: Ստեղծված իրավիճակն անհանգստացնում էր ոչ միայն առաջատար տերություններին, այլև քաղաքացիական հասարակությանը, որը դեմ էր նոր տառապանքներին: Կարո՞ղ էր պատահել այնպես, որ թուրքերը կրկին վերադառնան Լիբանան: Բեյրութի փորձագետներն այն կարծիքին էին, որ Մուստաֆա Քեմալի զորքերն անկասելի են, իսկ գերտերությունները մտադիր չէին կրկին զորքեր ուղարկել

տարածաշրջան: Ո՛չ Ուայթհոլում և ո՛չ էլ Քէ դ՚Օրսեյում չէին հանդուրժի, որ թեկուզ մեկ զինվոր զոհվի Անատոլիայում: Ոչ ոք չէր համարձակվում Գուրոյին ու Տրաբոյին հարցնել հետևյալ վարկածի մասին. «Ֆրանսիական զորքերն արդյոք ստիպված չեղա՞ն լքել Կիլիկիան»:

Թոմասի հետ ունեցած հանդիպումներից մեկի ժամանակ Ռիզկալլահ Իրկաշը, ով առաջվա պես գլխավորում էր «Լիբանանի զարթոնքը», նրան պատմեց, որ Տրաբոն իր հետ խոսել է բնակչությանը քաղաքացիական դաստիարակություն տալու անհրաժեշտության մասին: Սակայն ի՞նչ դաստիարակություն՝ ֆրանսիակա՞ն, թե՞ արաբական… Անխոս, դրանք նույնը չէին, և Ռիզկալլահայի խոսքերով՝ ինքն ու Տրաբոն այդ հարցի շուրջ վիճաբանել էին: Դա այն չէր, ինչ սպասում էին լիբանանցիները: Ֆրանսիան ավելի շատ նման էր գաղութային տերության, քան բարեկամ պետության, որը կցանկանար անշահախնդիր օգնություն տրամադրել: Մյուս կողմից այլ համայնքների կարծիքով՝ մարոնները չափազանց մեծ դերակատարություն ունեին:

Մի քանի շաբաթ անց վեհաժողովն ապստամբեց Տրաբոյի՝ ֆրանսիացի նահանգապետի զարմացած հայացքի առջև, ում անհանդուրժելի թվաց «իր յուրայինների» այդպիսի պահվածքը: Տրաբոն փորձեց նրանց կարգի հրավիրել, սակայն դա հակառակ արդյունքը տվեց, անգամ Դաուդ Ամունը նրան ասաց, որ իրենք կուշտ են անհարկի միջամտություններից:

Դա հանգեցրեց այն բանին, որ անհապաղ ժողով գումարեն: Հրավիրեցին նաև Թոմաս Հարդինգին: Գուրոն նրան ասաց, որ Ֆրանսիան Ազգերի լիգայում կաջակցի Մեծ Բրիտանիային, և բնականաբար իրենք սպասում են, որ դա կլինի փոխադարձաբար: Պետք է անցկացնեին համընդհանուր ընտրություններ: Հետո նա նշեց, որ դա կարող են անել Լիբանանում, բայց՝ ոչ Սիրիայում: Ոչ էլ բրիտանացիները կհամարձակվեին այդպիսի ընտրություն անցկացնել Պաղեստինում: Ըստ այդմ՝ մեկ-մեկու հանդիմանելու բոլորովին հարկ չկար:

Թոմասը հասկանում էր, թե որն էր խնդիրը: Հաջողության հասնելու համար Ֆրանսիան մեծ թվով քրիստոնյաների կարիք ուներ: Բողոսյանը նրան բացատրեց, թե ֆրանսիացիներն ինչպես կարող են դրան հասնել՝ միևնույն ժամանակ մարդասիրական քայլ կատարելով: Բոլորին էլ դա ձեռնտու կլիներ:

Հարցը դեռ հնուց էր գալիս: Ֆրանսիացիները Կիլիկիայում ավարտին էին հասցնում տեղահանությունը: Մի գաղտնի համաձայնություն գոյություն ուներ թուրք ազգայնամոլների, ավելի ճիշտ՝ Մուստաֆա Քե-

մալի հետ, ըստ որի՝ Ֆրանսիան ընդունում էր, որ Թուրքիան որոշ չափով վերադառնար իր նախկին սահմաններին: Օսմանյան կայսրությունը կսահմանափակվեր Անատոլիայով, Փոքր Ասիայի ծովեզերքով և Կիլիկիայով: Իսկ «Վիլսոնյան Հայաստա՞նը»… Ո՞ւր կմնա Սևրի պայմանագիրը: Բոլորը թոթվեցին ուսերը, և Ֆրանսիան պնդեց, որ թույլ չի տա Կիլիկիայի հայերի զանգվածային կոտորած: Այդ դեպքում՝ ի՞նչ անել նրանց հետ… Բժիշկ Բողոսյանն առաջարկով դիմեց նահանգապետ Տրաբոյին, ում հաճախ էր բժշկում շնչարգելության նոպաների ժամանակ, և նա էլ իր հերթին լսում էր բժշկին. «Իսկ եթե նրանց բերեք Լիբանան, Բեյրութ, ոմանք էլ կնախընտրեն Հալեպը»:

Այդ լուծումը բոլորն էլ կատարյալ համարեցին: Թուրք ազգայնամոլներն ազատվում էին հայերից՝ առանց զանգվածային նոր կոտորածների. մի բան, որը ոչ միայն նրանց կտաներ միջազգային դատարան, որը դեռ դատապարտում էր «Իթթիհադի» կառավարության կատարած ոճիրները, այլև Թուրքիային պատերազմի մեջ կներքաշեր՝ ընդդեմ Ֆրանսիայի ու Անգլիայի: Եվրոպայի հասարակական կարծիքը հայերի կողմից էր, ու եթե կրկին չէր ուզում լսել ո՛չ խրամատների և ո՛չ էլ հայրենիք բերվող զինվորների դիակների մասին, ապա չէր էլ համաձայնի, որ մահանան ավելի մեծ թվով հայեր:

Ըստ Սևրի պայմանագրի՝ հայկական պետականության ստեղծումն ուտոպիա էր: Այն պետք է ներառեր Էրզրումի, Բիթլիսի, Վանի նահանգները, իսկ հյուսիսում ձգվեր մինչև Տրապիզոն՝ հայկական հինավուրց նավահանգիստը Սև ծովում: Սակայն դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Փարիզի Խաղաղության կոնֆերանսի ժամանակ՝ խանդավառության պահին տրված քաղաքական խոստում, երբ Վիլսոնը, Լոյդ Ջորջը, Օռլանդոն[56] ու Կլեմանսոնը, կոնյակից ջերմացած, Օլիմպոսի աստվածների պես քննարկում էին աշխարհի ապագան: Ա՜հ, այո՛, հայե՛ր… Այն ամենից հետո, ինչ նրանց պատահեց, պետք է մի բանով կարողանային հատուցել, թեև աշխարհի չորս առաջնորդներն էլ գիտեին, որ դա անհնարին էր: Ոչ մի ժողովուրդ այդքան չէր կորցրել՝ իր հողը, իր մարդկանց, իր հին քարերը… Միայն մի բան կար, որ չկարողացան հայերից խլել՝ արժանապատվությունը:

Այդ պատճառով էլ բարեկամների հետ այդ «անվերջանալի զրույցներում», ինչպես ասել էր Օռլանդոն, չհամարձակվեցին այդ հարցն արմատապես լուծել: Հայերին թողեցին բախտի քմահաճույքին, թեև Ֆրան-

[56] Օռլանդո Վիտորիո Էմմանուելե (1860-1952), իտալացի քաղաքական գործիչ և իրավաբան, 1917-1919թթ.՝ վարչապետ, 1919-1920թթ.՝ խորհրդարանի նախագահ:

սիան մի քանի անգամ փորձեց օգնել, ինչ-որ բան անել նրանց համար, Վիլսոնը նույնպես հարյուր անգամ կրկնեց, որ իրականում մեղքը պրուսացիներինն է. նրանք կարող էին կանխել հայերի սարսափազդու կոտորածները, աներևակայելի քանակով մարդկանց տեղահանությունը, նրանց թալանելը, բռնաբարելը, լկանքների ենթարկելն ու սպանելը ողջ Անատոլիայով մեկ: Աշխարհն այլ կողմ էր նայում, իսկ գերմանացիները, որ այդ ամենը կանխելու իրավունք և ուժ ունեին, կանգնեցին դահիճների կողքին:

Հարկավոր էր փոխհատուցել հայերին, նրանց տալ բոլոր իրավունքները՝ իրենց հինավուրց հողի վրա ապրելու համար: Իրավունք, որի մասին էին վկայում ուղեցույց սահմանաքարերը, խաչքարերը, մատուռները, մենաստաններն ու գերեզմանոցները: Փարիզից Անատոլիա ուղարկված հանձնաժողովները հաստատեցին այդ տարածաշրջանի սահմանները: Վիլսոնը ստորագրեց այն քարտեզը, որի վրա կարմիր թանաքով սահմանազատվում էր «Վիլսոնյան Հայաստանը»: Այդ երեկո Փարիզում հայ պատվիրակները հուզմունքից լաց եղան:

Ինչ վերաբերում էր Կիլիկիայի հայերին, ապա նրանք գերադասեցին գաղթել, քան մեռնել թուրք ազգայնամոլների զորքերի կողմից, որոնք նվաճված բնակավայրեր էին մտնում՝ աղաղակելով. «Թուրքիան թուրքերի համար»: Կիլիկիայի երկու հարյուր հազար հայերից գրեթե վաթսուն հազարը կարող էին հաստատվել Լիբանանում, ինչը երկիրը կհարստացներ աշխատասեր, ընդունակ և գործունյա համայնքով: Նույնքանն էլ կգնար Հալեպ, մնացածը՝ Միացյալ Նահանգներ կամ Եվրոպա: Հայերի մի փոքրաթիվ խումբ էլ կգնար դեպի արևելք, որտեղ պետք է վերածնվեր Հայաստան երկիրը, թեև այլևս ոչ ոք չէր հավատում Վուդրո Վիլսոնի պերճալեզու խոստումներին: Պայմանագիր, որը չէր ստորագրվել ո՛չ Ամերիկայի Միացյալ Նահանգների և ո՛չ էլ վավերացվել էր թուրքերի կողմից: Այն թղթի մի կտոր էր՝ ողողված հայերի արցունքներով:

Մուստաֆա Քեմալի զորքերն ամեն ինչին պատրաստ էին այն նույն դաժանությամբ, ինչ նախկին թուրք ռազմամոլները, ովքեր հրով ու սրով նվաճեցին քրիստոնյաների հողերը. առանց խղճմտանքի, առանց դույզն-ինչ գթասրտության… Այն հայերը, ովքեր դեռ մնացել էին Կիլիկիայում, ապշահար նայել էին, թե ինչպես էին հետ քաշվում ֆրանսիական զորքերը: Ինչպե՞ս էին պայքարելու ազգայնամոլ բանակի դեմ: Ո՞վ էր իրենց պաշտպան կանգնելու: Հույսը դրեցին Աստծո ողորմածության վրա:

Թոմասը միացավ բժիշկ Բողոսյանին, ով նահանգապետ Տրաբոյի կազմած հանձնախմբին ուղեկցեց Կիլիկիա: Հավաքվեցին հատուկ նշանակված հայերի հետ և քննարկեցին Լիբանանի ծովեզերք տեղափոխվելու հարցը: Շատերը դա համարեցին իրենց վերջին հնարավորությունը:

Բողոսյանն անձամբ ճանաչում էր նրանցից շատերին, մի քանիսն էլ հեռավոր ազգականներ էին: Պետք է հեռանային իրենց գյուղերից ու քաղաքներից, իրենց դաշտերից, տներից, որոնցից շատերը՝ հարյուրամյա, թողնեին եկեղեցիներն ու իրենց ննջեցյալներին՝ ամեն ինչ նորից սկսելու համար: Այդուհանդերձ, դա միակ ելքն էր: Շատ տղամարդիկ էին դեռ սպանվում ու անհետ կորչում: Լիբանանը հյուրընկալ վայր կլիներ նրանց համար: Հանձնախմբում ընդգրկված մարոնները նրանց հավաստիացնում էին, որ այնտեղ նոր կյանքով կապրեն: Լիբանանում հայ գաղութն արդեն խոշոր նշանակություն էր ձեռք բերել: Մի՞թե նրանք ուզում են նստել ու սպասել Մուստաֆա Քեմալի զորքերի ներխուժմանը:

Բոլորը գնացին եկեղեցիներում աղոթելու: Ծերերը հեծկլտում էին՝ չկարողանալով զսպել հուզմունքը: Մայրերը գրկում էին իրենց զավակներին: Վերջին անգամ էին մտնում այդ տաճարները, վառում իրենց հինավուրց տների օջախները: Մի աղջիկ սկսեց հայկական մի հին երգ կատարել.

Կուզեի կրկին ոտք դնել իմ հողին,
Քայլել ինձ ծանոթ այն արահետով,
Կրկին լսել դողանջն իմ եկեղեցու,
Երեխաներին տեսնել անիվ գլորելիս
Ու երգել մեր երգը հինավուրց,
Լսել ձայնը դուդուկի, որ նվագում էր մեկը
Իմ գյուղի դանդաղ իրիկնամուտին:
Միայն ուզում եմ կրկին լինել այնտեղ
Թեկուզև մեկ անգամ ու միայն երազում,
Տեսնեմ, թե ինչպես է ջուրը վազում առվով,
Տեսնեմ, որ ամեն ինչ առաջվա պես է,
Որ կրկին այնտեղ եմ, կարո՞ղ եմ դա տեսնել:
Չգիտեմ, կհասկանա՞ս, թե ինձ ինչ է պատել,
Բայց մի ակնթարթ եմ միայն ես այնտեղ եղել,
Ու դա երազ չէր: Կրկին բաց արի աչքերս,
Ու դեռ այնտեղ է դուդուկն այն թրթռուն՝
Իմ գյուղի դանդաղ իրիկնամուտին:

Բողոսյանն ի վիճակի չէր դիմանալու այդքան մեծ լարվածությանը. կրծքում ուժեղ ցավ զգալով՝ նստեց ու սկսեց անմխիթար հեծկլտալ:

Շատ հայեր եկան Բեյրութ, ոմանք մնացին Տրիպոլիում և ծովեզերքի այլ մասերում: Մարոնները գոհ էին, քանի որ հայերի հետ նրանց հարաբերությունները վաղուց ի վեր լավ էին, և քաղաքական առումով դա նրանց օգտին էր, քանզի մուսուլմանների համեմատությամբ՝ քրիստոնյաների թիվն ավելանում էր: Նրանք ցավով խոստովանեցին, որ վախենում էին ոչ այնքան թուրքերի գալուց, ովքեր չէին հարձակվի, որքան Դամասկոսից, որտեղ գնալով աճում էր ֆրանսիացիների դեմ ուղղված դժգոհությունը, և կարող էր կատարվել նույն բանը, ինչ Կիլիկիայում: Իսկ եթե ֆրանսիացիները հոգնեն ստեղծված իրավիճակից ու նավերը նստած՝ լքե՞ն իրենց: Որքան էլ որ մարոնները համաձայնագրեր կնքեն դրուզների, շիաների ու սուննիների հետ, միևնույնն է, իրենց ասելիքը կասեն ումման ու մզկիթները: Դա չէր լինի իրենց երազած Լիբանանը: Ամեն կերպ նրանք կխոչընդոտեն Սիրիայի հետ դաշնությանը, ինչին ամեն կերպ ձգտում էր Անրի Գուրոն: Նրան զգուշացրել էին, որ Դամասկոսի ամենաարմատական մուսուլմաններին պետք է հենց ֆրանսիացի նահանգապետի գլուխը. նրան մեղադրում էին երկակի խաղի մեջ:

Այդ ժամանակ Թոմասն անհանգստությամբ զննում էր իրադրությունը: Հիշում էր պատերազմի ավարտը՝ որպես մի հույս, որը, սակայն, չէր արդարանում: Ինքը ֆրանսիացիներից ավելի լավ էր իրազեկված, և ըստ նրա՝ առկա իրավիճակը կարող էր դառնալ անվերահսկելի: Այդուհանդերձ, մանավանդ Բեյրութում բոլորը շարունակում էին իրենց առևտուրը, կարծես թե ոչինչ չէր կարող ազդել լիբանանցիների խառնվածքի ու տրամադրության վրա: Կառուցում էին շատ տներ, քաղաքը գնալով մեծանում էր, Ժոզեֆ Հանին ու Շառլ Դեբբան մի հոդված հրապարակեցին «Բեյրութի ազատություն» թերթում՝ խնդրելով մի պլան, որը կկարգավորեր քաղաքի՝ խառնիճաղանջ ընթացող աճը:

Հունիսին հռչակվեց Սիրիական Պետությունների Դաշնությունը: Մայրաքաղաք Դամասկոսով Սիրիայի պետությունը կազմված էր Հալեպի ու Դամասկոսի գավառներից, որոնց հետագայում միանալու էր Ալեքսանդրիայի գավառը: Ալավիների պետությունը բաղկացած էր լինելու երկու՝ Լաթաքիայի ու Տարտուսի գավառներից, մայրաքաղաքը՝ Լաթաքիան: Դրուզներինն էլ Ջեբել պետությունն էր՝ Սուեիդա մայրաքաղաքով: Ինչ վերաբերում էր Մեծ Լիբանան պետությանը, ապա այն բաժանված էր չորս գավառների՝ Հյուսիսային Լիբանան, Լեռնային Լիբանան, Հարավային Լիբանան ու Բեկաան, բացի երկու՝ Բեյրութ ու

Տրիպոլի քաղաքային ինքնավարություններից: Տվյալ բաժանման ողջ բարդությունն այն էր, որ ոչ ոք հավանություն չէր տալիս դրան. հեշտ չէր բոլորին գոհացնելը:

Թոմասին կանչեցին Երուսաղեմ: Այնտեղ նրան հաջողվեց կարդալ Չերչիլի պատրաստած «Սպիտակ թուղթ»-ը[57]: Ըստ դրա՝ Տրանսիորդանանը մնալու էր «Հրեական ազգային օջախից» դուրս. դրանով զիջում էին անում հաշեմիթներին: Հարցի այլ լուծումը կհանգեցներ թշնամական գործողության:

Այնտեղից նա գնաց Հայֆա, որտեղ նստեց դեպի Ջիբրալթար ուղղվող ռազմածովային նավը: Տասնհինգ օր անց Լոնդոնում էր և մասնակցեց պաշտոնական մի նիստի: Պնդեցին, որ նա ստանձնի Մերձավոր Արևելքում հետախուզական ծառայության պետի պաշտոնը: Թոմասը կտրականապես մերժեց: Նա իրեն համարում էր հայրենասեր և որպես այդպիսին էլ դրսևորել էր իրեն, բայց ուզում էր վերադառնալ քաղաքացիական ապրելակերպին: Պարզապես ցանկանում էր կրկին լինել Օքսֆորդի պրոֆեսոր, վերականգնել իր նախկին ես-ը, վերադառնալ նախկին ժամանակներին: Անասելի կարոտով էր համակված այդ ամենի հանդեպ: Բացի դրանից՝ պատերազմը վաղուց էր վերջացել, ու նա առարկեց՝ ասելով, որ այդ պաշտոնի համար ինքն իրեն հարմար թեկնածու չի համարում:

Երեք լարված նիստերից հետո նա ազատվեց ակտիվ ծառայությունից և կրկին դարձավ պրոֆեսոր Թոմաս Հարդինգ: Օգոստոսին վերադարձավ Երուսաղեմ: Նյումանը նրան պատմեց, որ բոլորովին վերջերս ստացել էին Պաղեստինի Սահմանադրության տեքստը: Ամենավիճահարույցն այն հոդվածն էր, որը ներառում էր Բալֆուրի տված խոստումը: Մի քանի օր շարունակ Պաղեստինով մեկ անկարգություններ տեղի ունեցան: Արաբները բացարձակապես դեմ էին, հրեաներն էլ չէին ընդունում Սահմանադրության տեքստը, որը, իրենց կարծիքով, աղավաղում էր Բալֆուրի հռչակագրի իմաստը, ինչի հետ մեծ հույսեր էին փայփայում:

Հոկտեմբերին Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսար Գուրոյին կանչեցին Փարիզ: Բոլորն ազատ շունչ քաշեցին, երբ իմացան, որ նրան նոր՝ Փարիզի ռազմական նահանգապետի պաշտոնին են նշանակում: Այդ կապակցությամբ մարոնները մտերիմների շրջանում միմյանց շնորհավորեցին՝ շամպայնի բաժակ բարձրացնելով: Նրանց կարծիքով՝ Գու-

[57] 1922թ. հունիսի 3-ին բրիտանական կառավարության կողմից հրապարակված փաստաթուղթ, որը հստակեցնում էր հրեաների՝ Պաղեստին ներգաղթելու պայմանները:

ռոյին ավելի բնորոշ էր պրուսացու, քան ֆրանսիացու խառնվածքը, և այդքան ոչ ճկուն մարդու ղեկավարությամբ գործող ֆրանսիական մանդատը ոչ մի հեռանկար չուներ:

Դամասկոսում նույն բանը կատարվեց, սակայն՝ առանց բաժակ բարձրացնելու: Մի քանիսին թվաց, թե իրենց հաջողվել է ֆրանսիացիներին կոտրել, և երազը կարող է իրականություն դառնալ:

Թոմասը Բեյրութ գնաց՝ անձնական իր նոր վիճակից շատ գոհ, սակայն՝ շատ անհանգստացած ամբողջ Մերձավոր Արևելքին վերաբերող իր կանխատեսումներից: Որոշեց Էթելին ու Սարային կրկին ուղարկել Անգլիա: Աղջիկն այնտեղ կմնա, կապրի իր տատիկի ու պապիկի հետ, մինչև իրավիճակը հանդարտվի: Սարան մի շարք փաստաթղթեր հավաքելուց ու ձևակերպելուց հետո կվերադառնա իր մոտ: Անկախ ամեն ինչից՝ Թոմասը չէր ցանկանում հեռանալ Բեյրութից. այդքան դժվարին կացությունում չէր կարող լքել իր բարեկամներին:

Սեպտեմբերին սկսվեց ճգնաժամը: Թուրքական զորքերն ընդդիմացան ու նույնիսկ հասան նրան, որ սկսեցին կրակել Դարդանելում, Կանակկալեի մոտ և Չանակում չեզոք գոտին հսկող ֆրանսիական ու անգլիական ստորաբաժանումների ուղղությամբ: Թուրքերը ոգևորված էին հունական բանակի դեմ տարած իրենց հաղթական գործողություններով: Նրանք ոչ միայն անտեսել էին Սևրի պայմանագիրը, այլև իրենց հակառակորդներին կանգնեցրել էին փակուղու առջև: Մուստաֆա Քեմալին հաջողվել էր փոխել թուրքերի տրամադրությունը. նրանք այլևս իրենց ձախորդ չէին համարում:

Թոմասը Երուսաղեմից մի հեռագիր ստացավ: Բրիտանական հրամանատարության համար միևնույնն էր, որ նա արդեն քաղաքացիական կարգավիճակ ուներ: Նրանց համար Թոմասը տարածաշրջանում միակ վստահելի մարդն էր ու շարունակում էին դիմել նրան: Ուսերը թոթվեց: Երբ ամերիկյան զորքերը գրեթե տուն էին վերադարձել, իսկ ֆրանսիացիներն ու բրիտանացիները հետ էին ուղարկում իրենց զինվորներին, պարզվեց, որ Անատոլիան փոխարկվում է վառոդի տակառի, որն ուր որ է պայթելու էր:

Բեյրութում նահանգապետը զորքերը բերեց ռազմական դրության: Ոչ ոք չէր կարող անտեսել այն փաստը, որ թուրքերը կարող էին անցնել իրենց սև գործին, ինչպես Կիլիկիայում: Ադանայում մնացած փոքրաթիվ հայերը պաշտպանություն խնդրեցին: Հալեպում ֆրանսիացիները սկսեցին կրկին պատյաններից հանել թնդանոթները, փողերը մաքրել և դրանք տեղադրել քաղաքի շուրջբոլորը՝ նախօրոք պատրաստած ավա-

զապարկերի և զինամթերքի կողքին: Դա սոսկ ուժի ցուցադրություն չէր, այլ ավելի շուտ՝ Ֆրանսիայի պաշտպանության նախարարից ստացած հրամանների կատարում:

Կանադական զորքերին նախազգուշացրել էին, որ իրավունք չունեն մարտի բռնվել, մինչև Կանադայի կառավարությունը որոշում չկայացնի: Դա իր հերթին Ուայթհոլում նույնպես ճգնաժամ հարուցեց. սառնարյուն ու լավատես Լյոյդ Ջորջին չհաջողվեց պահպանել իր կոալիցիոն կառավարությունը, և նա ստիպված թողեց վարչապետի պաշտոնը:

Բեյրութում շատերը նույնպես ըմբռնեցին, որ այժմյան թուրքերը նույնը չեն, ինչ նրանք, ովքեր ստորագրել էին Սևրի պայմանագիրը: Մարոնիներին, հայերին և հույն ուղղափառներին պատեց դողէրոցքը: Գլխավոր հրապարակից Ջեմալ փաշայի ուրվականն ու կախաղաններն ուղղվեցին դեպի Բեյրութի փողոցները: Ոչ ոք չէր ցանկանում մեծացնել նահատակների ցուցակը:

Թոմասը ստացավ մեկ այլ շտապ հեռագիր: Նա չպետք է իրեն անտեղյակ ձևացներ և չպետք է ենթարկվեր որևէ սադրանքի: Մեծ Լիբանանում մի բան էին ֆրանսիական մանդատը և նրա ներկայացուցիչները, այլ բան էր Քէ դ՚Օրսեյը:

Հաճախ խոսքը ոչ մի աղերս չուներ գործի հետ, մանավանդ՝ Լիբանանում, որտեղ սպասվելիք իրողությունը նախապես կանխորոշված էր ինչպես մուսուլմանների, այնպես էլ քրիստոնյաների համար:

29. ԿՐԿԻՆ ԲԱԱԼԲԵԿ
ՀՈՒՆՎԱՐ - ՀՈՒՆԻՍ, 1923թ.

Էթելն ու Սարան Անգլիայից Թոմասին գրում էին, որ իրենց գործերը լավ են, բայց կարոտում են Բեյրութը:

Քաղաքին երկար ժամանակ էր հարկավոր սթափվելու համար, և անգամ ֆրանսիական վարչակազմի երկաթյա կարգապահությունն ի վիճակի չէր զսպել կրքերը: Ֆրանսիացի նահանգապետը Թոմասին ասաց, որ Լիբանանն աշխարհի ամենաանօրինական վայրն է: Ու չէր կատակում:

Վեհաժողովի որոշումները հազվադեպ էին համընկնում բնակիչների ակնկալիքների հետ: Չնայած նրան, որ մեծ թվով հայեր ու քրիստոնյա մարոնների բազմանդամ գերդաստաններ էին եկել Բեյրութ, որոնք փորձում էին առաջ շարժվել նոր ժամանակներին համընթաց, այդուհանդերձ մուսուլման սուննիները դեռ գերակշռող մեծամասնություն էին կազմում: Միակ բանը, որ բոլորին միավորում ու համակարծիք էր դարձնում, այն էր, որ ոչ ոք թուրքերին չէր կարոտում, թեև օսմանական կենսակերպը զգացվում էր ամենուրեք՝ սկսած հենց կառավարումից մինչև հագնվելու ձևը. համարյա բոլոր տղամարդիկ կարմիր ֆես էին կրում: Միայն օտարերկրացիներն ու ավելի եվրոպականացվածներն էին ծղոտե լայնեզր, տափակ կամ ֆետրե գլխարկներ դնում, ինչպես Թոմասը:

Այդ քաղաքը ֆրանսիական վարչակարգի գործունեության վերաբերյալ դատարկ բամբասանքներ, շինծու լուրեր և շշուկներ տարածող մշտահոս աղբյուր էր: Պաղեստինում Լիբանանին մատնացույց էին անում որպես համակեցության նմուշի, իսկ Լիբանանում հավաստիացնում էին, որ պետք է ուշի-ուշով հետևել, թե ինչ ապրելակերպ էին վարում Երուսաղեմում:

Հրեաները ոգևորությամբ էին ընդունել բրիտանացիների հաղթանակը: Բոլորն էլ հիշում էին, երբ Ալենբին Գլխավոր շտաբի և քաղաքային վարչակազմի ուղեկցությամբ մտավ քաղաք. հրեա երաժիշտների նվագախումբը փայլուն կատարել էր հնագույն հասիդյան[58] «Հավա Նագիլա»[59] մեղեդին, որն արաբներին հավասարակշռությունից հանում էր:

Շարունակում էին տեղ հասնել հարյուրավոր հրեաներ տարբեր երկրներից, մանավանդ՝ վիթխարի Ռուսաստանից: Մի ներգաղթ, որն իր

[58] Հասիդիզմը կրոնական, ուղղափառ և միստիկ շարժում է հուդայիզմի մեջ, ծագել է «հասիդ»՝ գթասրտություն բառից:

[59] «Եկեք ուրախանանք»՝ Մոշե Նաթանզոնի թեմայով և Ալբերտ Համզեի երաժշտությամբ հրեական ժողովրդական երգ:

հետ բերում էր բազմաթիվ մշակույթներ, գեղարվեստի վերջին միտումները՝ ներառելով արվեստների ու գիտությունների ողջ խորապատկերը. պարուսույցներ, նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ, թատրոնի ռեժիսորներ, գրողներ, բանաստեղծներ, բոլոր բնագավառներից գիտնականներ, մաթեմատիկոսներ, ինժեներներ, գյուտարարներ, մտածողներ, բժիշկներ… Երրորդ ալիյան[60] փոխում էր ողջ համայնապատկերը…

Մինչ այդ Պաղեստինը գրեթե մնացել էր ամայի, անբնակ: Հրեաները՝ իշուվները, որ անհիշելի ժամանակներից սկսած ապրում էին այդտեղ, վառ էին պահել հետ վերադառնալու հավատը, սակայն այդ ընթացքում տարածաշրջանը խստորեն պահպանել էր իր սովորույթներն ու ավանդույթները: Մարդկանց զանգվածային ներգաղթը հարուցում էր խնդիրներ, մանավանդ շատ փոփոխություններ մտցնելու ցանկություններ, ու Երուսաղեմը դարձել էր հասարակական-քաղաքական փորձարկումների թատերաբեմ: Տեղի հրեաները, որ ամուր կառչած էին իրենց ավանդույթներին, շատ էին անհանգստացած ստեղծված իրավիճակից: Անհանգիստ էին նաև արաբները: Նրանք նյարդայնացած էին նայում այն կանանց շարժուձևերին, ովքեր ծխում էին, ցուցադրում մերկ թևերն ու սրունքները, շպարվում… Այդ ամենը ստեղծում էր այնպիսի իրավիճակ, որը կործանում էր արաբների ավանդույթներն ու մտածելակերպը՝ իրենց քաղաքը դարձնելով մի վայր, որը բոլորովին այն չէր, ինչ իրենք էին ուզում ունենալ:

Սակայն այդ մարդիկ այդտեղ էին և Մոնտ Սկոպուսում հիմնում էին Երուսաղեմի վրա վեր խոյացող Հրեական համալսարանը, թափանցում էին շրջակայքի դաշտերն ու այգիները՝ բնակատեղեր, վարչական կենտրոններ, թանգարաններ ու թատրոններ կառուցելու համար: Նույնը կատարվում էր նաև Հայֆայում ու նոր Թել Ավիվում:

Թեոդոր Հերցլն իր «Althneuland»[61] վեպում արդյո՞ք կանխազգում էր հրեական պետության ապագան: Մի՞թե ուտոպիան դառնում էր իրականություն:

Մեծ Լիբանանի վեհաժողովի անդամները, երբ այցելեցին Պաղեստին, նախանձով լցվեցին: Այո՛, այդտեղ արաբները հիասթափված էին, ինչպես իրենք էին ասում, «սիոնիստական ներխուժումից», սակայն ողջ երկիրն անշեղորեն առաջ էր գնում: Բրիտանացիները շատ թերություններ կարող էին ունենալ, սակայն այդտեղ կառուցել էին երկաթուղի, մայրուղիներ, ջրուղիներ, վերացրել էին մալարիան, ապահովել էին սա-

[60] 1919-1923թթ. հրեաների վերաբնակեցման (հայրենադարձության) երրորդ ալիքը Պաղեստինում:
[61] «Հին ու նոր երկիր»:

նիտարական պայմաններ՝ խոլերայից խուսափելու համար: Արաբները, ատամները կրճտացնելով, պետք է ընդունեին անխուսափելին՝ ժամանակակից պետության կառուցումը հրեաների կողմից:

Մինչդեռ Մեծ Լիբանանում, Սիրիայում ու նրանց հարակից դաշնային տարածքներում խոսքն այլ բանի՝ գաղափարական պայքարի մասին էր: Դա վերաբերում էր մի Սահմանադրության, որին հնարավոր չէր այլ կերպ անվանել, քան՝ «Օրգանական դեկրետ»: Անշուշտ, այն հիմնված էր «Ֆրանսիական մանդատ Սիրիայի ու Լիբանանի համար» որոշման վրա, որն ի վերջո 1922 թվականին հաստատվել էր Ազգերի լիգայի կողմից, սակայն դեռ ուժի մեջ չէր մտել:

Ամեն օր նոր լուրեր էին պտտվում: Բոլորը հավաքվում էին «Բեյրութի ազատություն» թերթի խմբագրատանը և դրանք քննարկում՝ երբեմն բղավելով, երբեմն՝ ոգևորված: Շառլ Դեբբան՝ թերթի սեփականատերը և հեղինակավոր փաստաբանը, գլխավոր դերակատարն էր: Նա բավականին ծեր էր դոգմատիկ չլինելու համար և անկախ ամեն ինչից՝ շարունակում էր ֆրանսասեր մնալ:

- Սա մեր ուզածը չէ,- ասում էր՝ շարժումներ անելով,- որ ճկուն քաղաքական գործիչների փոխարեն ուղարկել են անտաշ զինվորականների: Սակայն ի՞նչ կանեինք առանց ֆրանսիացիների: Առաջին հերթին գուցե և այստեղ լիներ այդ չարագործը՝ Ջեմալ փաշան, և բոլորիս կախաղան հաներ որպես Օսմանյան կայսրության դավաճաններ: Դու, Ամմե՛դ էֆենդի Թաբբարահ՝ առաջինը, իսկ դու, Ռիզկալլահ՝ երկրորդը, հետո՝ մյուսները: Այստեղ միակ կենդանի մնացող մարդը կլինի մեր սիրելի բարեկամ Թոմաս Հարդինգը. նրան ցանկացած վտանգից փրկում է իր բրիտանական անձնագիրը:

Շառլ Դեբբան իրավացի էր: Թուրքերը ոչ միայն վճարում էին պատմականորեն իրենց սխալ կառավարման և հայերի կոտորածների, այլև նրանց երբեք չէին ների անգլիացի կամ հնդիկ ռազմագերիների նկատմամբ ցուցաբերած նվաստացուցիչ վերաբերմունքի համար: Թոմասի ընկերներին անհանգստացնում էին ոչ միայն Գուրոյի ու Տրաբոյի փոխարինումները գեներալ Ուեյգանդով ու նոր կառավարիչ Վանդերբերգով, այլև այն, որ ֆրանսիացիների հնարավորություններն արդեն սպառվել էին:

Ինչ վերաբերում էր ֆրանսիացիների հետ ունեցած հարաբերություններին, ապա Թոմաս Հարդինգը գիտեր, որ նրանք իրեն պատմում են միայն այն, ինչն իրենց էր ձեռնտու: Դա զուտ քաղաքականություն էր, քանի որ բրիտանացիները ևս ֆրանսիացիների հետ նույն կերպ էին

վարվում: Նահանգապետ Վանդերբերգը նրան հրավիրեց՝ բացատրելու, թե ինչպես էր իրականացվելու տարածաշրջանային նոր բաժանումը: Ցույց տվեց գունավորված պլանը:

Մեծ Լիբանան պետությունը՝ գործնական նպատակներով ֆրանսիական նահանգը, քրիստոնեական առումով մեծ կարևորություն էր ունենալու: Մարոններն այլ բան չէին ընդունի, ուստի դուռը լայնորեն բացված էր հայերի ներգաղթի առջև: Դրուզական Ջեբելը, ինչպես նաև Լաթաքիան և ալավիները հիմնականում ունեին հարկահավաքային նպատակներ և հեռու էին վարչակազմից: Ինչ վերաբերում էր Հալեպին, ապա այն միանալու էր Սիրիային: Դա այն էր, ինչ երազում էին սուննիները և ընդունել էին Փարիզում: Անհեթեթ էր ծախսերը կրկնակի դարձնելը, ինչպես նաև թշնամիներին բազմապատկելը:

Վանդերբերգը խոսում էր դանդաղ՝ բառերն իրարից անջատելով, համարյա շշնջալով: Ֆրանսիայի համար իսկապես վտանգավոր էին Մեծ Լիբանանում գաղտնի գործող իսլամիստ ապստամբների շարժումները: Ինչպես սուննիները, այնպես էլ շիաները և դրուզները ցանկանում էին միանալ Սիրիային: Այդ ցանկությանն աջակցում էին անգամ ուղղափառ հույները: Վանդերբերգը խոստովանեց, որ չի կարողանում ընկալել նրանց. ո՛չ մարոնների հետ էին լավ հարաբերության մեջ, ո՛չ էլ՝ հայերի, իսկ սուննիների հետ՝ այո՛:

Դրա բացատրությունը տվեց Ալբերտ Սուրսոեկը, ով Բեյրութով մեկ հայտնի էր որպես շատ ավելի հույն և ավելի նվազ ուղղափառ անձնավորություն: Նա ասաց, որ նրանք՝ ուղղափառ հույները, իրենց համարում են բյուզանդացիներ և ավելի մոտ են Արևելքին, քան Արևմուտքին: Մելկիտները Քաղկեդոնի տիեզերաժողովի ժառանգորդներն էին, իրականում՝ միասնականության կողմնակիցներ՝ միասնապաշտ մելկիտներ, ովքեր 1774 թվականին միացան Հռոմին՝ իհարկե պահպանելով իրենց ավանդույթները: Ալբերտ Սուրսոեկը Թոմասին հրավիրեց այցելել պատրիարքին, ում առանձնատունն ավանդաբար Բեյրութում էր, թեև ըստ իր տիտղոսի՝ նա Անտիոքի, Ալեքսանդրիայի ու Երուսաղեմի պատրիարքն էր:

- Նա այնպիսի մարդ է, ով միշտ ճիշտ ընտրություն է կատարում,- ասաց Ալբերտ Սուրսոեկը, ով շատ հպարտ էր, որ միասնապաշտ չէր: Նա պարզաբանեց, որ նրանք մոնոֆիստներ են: Քրիստոսն օժտված էր աստվածատուր բնույթով. հենց դա էլ նրանց մղեց, որ Քաղկեդոնում ընդդիմության դիրքերից հանդես գան: Նրանց պատրիարքը Բեյրութում էր, իսկ դա շատ բան էր նշանակում:

- Լսե՛ք, թե Ձեզ ինչ եմ ասում, հունարենը՝ որպես բանավոր ու գրավոր լեզու, շատ ավելի հին է, քան լատիներենը: Հունարենը դատողություններ անելու լեզու է, իսկ լատիներենը՝ ճարտախոսության: Հիմա դատե՛ք ինքներդ. ուղղափառներ, այսինքն՝ ուղիղ ուսմունք:

Ահա թե ինչու նահանգապետ Վանդերբերգը չէր կարողանում հասկանալ ուղղափառ հույների դիրքորոշումը: Նրանց ավելի մոտ էր համարում մուսուլմաններին, քան իսկական քրիստոնյաներին, ովքեր, իր կարծիքով, հռոմեացի կաթոլիկներն էին:

Թոմասը նահանգապետին հրավիրեց իր տուն՝ զրուցելու, սակայն նախապես զգուշացրեց, որ չմտնի մյուսների վիճաբանության մեջ, ինչպես նաև թախանձագին խնդրեց, որ իրեն զսպի և լսի, եթե ուզում է հասկանալ երկու կողմերի դիրքորոշումների տարբերությունները, որոնք պայմանավորված էին լիբանանյան մշակույթի սկզբնական նրբերանգներով: Ըստ այդմ՝ առաջին խաչակրաց արշավանքը հասավ այն բանին, որ ուղղափառ քրիստոնյաները վերջնականապես ընդդիմանան մարոններին ու մելկիտներին: Այդ պայքարի խորքում շարունակվում էր Արևելքն ընդդեմ Արևմուտքի հակամարտությունը: Այդ իսկ պատճառով ուղղափառ հույները նախընտրում էին Դամասկոսի հետ միությունը:

Վանդերբերգը ներկա գտնվեց մի քանի հավաքույթների, որոնց ընթացքում բոլորը բուռն վիճաբանում էին. Այուբ Թաբիթն ու Ժոզեֆ Հանին ներկայացնում էին մարոնական կողմը, Ալբերտ Սուրսոեկը միացել էր «Անկախ Լիբանանի» լրագրող Ահմեդ Թաբբարահին, Շառլ Դեբբան ու Ռիզկալլահ Իրկաշն էլ կրքոտ ճառեր էին ասում՝ դեմ դուրս գալով այն ամենին, ինչի մասին խոսվում էր: Այդ ամենը լսելուց հետո Վանդերբերգը, ով որոշ չափով հուսալքվել էր, Թոմաս Հարդինգին խոստովանեց. «Այս մարդիկ ինչպե՞ս կարող են համագոյակցել՝ արմատապես այսքան հակադիր դիրքորոշումներ ունենալով»: Թոմասը հակառակն էր մտածում. դա Արևելքն էր՝ Միջերկրական Լևանտը՝ իր այնքան առանձնահատուկ խառնվածքով, որը կուլ չէր գնում Վատիկանի մշակութային ուղղորդմանը:

- Այստեղ ամեն ինչ անկայուն է…,- Վանդերբերգը սկսում էր ըմբռնել, թե որտեղից են ծագում առկա խոչընդոտներն ու սահմանափակումները: Հրաժեշտ տալիս նա Թոմասին շնորհակալություն հայտնեց իր նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար:

Որոշ ժամանակ անց ստացան Լոզանի համաձայնագրի վերջնական տեքստը: Հունաստանի վարչապետ Էլեֆտերիոս Վենիզելոսը հաշտվեց իրականության հետ: Ինչ վերաբերում էր Իսմեթ Ինոնյուին՝

Մուստաֆա Քեմալի պատվիրակին, ապա առաջին իսկ պահից նա ցույց տվեց իր գոհունակությունը: Թուրքիան ամբողջապես պահպանելու էր Անատոլիան, որը համարում էր իր ազգային տարածքը, որից ինքը մտադիր չէր անգամ մի միլիմետր զիջել: Բացի դրանից՝ ըստ պայմանագրի, Թուրքիային էին պատկանում Արևելյան Թրակիան, Էգեյան ծովում գտնվող Իմբրոս ու Տենեդոս կղզիները, ինչպես նաև վերականգնելու էին Ստամբուլի նկատմամբ ունեցած իշխանությունը: Չընդունեցին, որ փաստաթղթում Կոստանդնուպոլիս գրվեր: «Դա սոսկ պատմություն է»,- քթի տակ ասաց Ինոնյուն:

Օգոստոսի կեսերին Ավգուստուս Նյումանը թարմ նորություններով վերադարձավ Բեյրութ: Նա Լոզանում ներկա էր գտնվել հակամարտ երկու կողմերի՝ Հունաստանի ու Թուրքիայի միջև պայմանագրի ստորագրմանը:

Երբ պատշգամբում ավարտեցին ընթրիքը, նա հայտնեց իր մտահոգությունը.

- Լսի՛ր, Թոմա՛ս, Փոքր Ասիայի հույները, ովքեր դեռ մնում են այնտեղ, ստիպված են լինելու հնարավորինս շուտ փախչել, թեև Հունաստանում գտնվող թուրքերն էլ, եթե ողջամիտ լինեն, պետք է ճամպրուկները հավաքեն: Այս պայմանագրի խնդիրը վերաբերում է հայերին: Մենք կրկին սխալվեցինք: Այլևս ոչ ոք թեկուզ մեկ զինվոր չի ուզում ուղարկել Կովկաս, ոչ էլ թեկուզև մեկ լումա ծախսել՝ այդքան հեռավոր մի ժողովրդի, ում պատմությունը շատ քչերին է հայտնի, իրավունքները պաշտպանելու համար: Ոմանց հաջողվել է հասնել այն բանին, որ Թուրքիայում ոչ թե կրոնական, այլ աշխարհիկ պետություն կկառուցվի, սակայն վերջում հայերն իրենց խաբված կզգան, ինչպես Ֆայսալի արաբները, իսկ շատ շուտով՝ պաղեստինցիները: Հիմա վավերացվել են Ալեքսանդրապոլի ու Կարսի պայմանագրերը, իսկ «Վիլսոնյան Հայաստանը» շուտով կդառնա ընդամենը մի դառը հուշ, նվաստացում մեր հայ բարեկամների համար: Այսպիսին է քաղաքականությունը: Հիմա մտնելու եմ մի հանձնախմբի մեջ, որը պետք է շերիֆ Հուսեյնին համոզի, որպեսզի նա ընդունի Պաղեստինի հետ կապված սիոնիստական նկրտումները, սակայն վախենամ, որ անօգուտ լինի՝ անկախ Բալֆուրի փայփայած այն հույսերից, որ ինքն ատելի չէ արաբական աշխարհում: Որքան դժվար է բոլոր մարդկանց հարմար չափերով աշխարհ կառուցելը: Շատերը կնախանձեն բրիտանացիներիս, բայց մենք մինչև վերջ դեռ չենք խմել դառնության բաժակը: Հիմա մենք գնալու ենք Ջեդա, սակայն

եթե Հուսեյնը չընդունի առաջարկը, ապա բարձր քաղաքականության ցուցատախտակին թերևս հաշեմիթներին փոխենք այդ Աբդելազիզ Իբն Սաուդի վահաբիներով:

Ընթրիքին ըմպել էին Նյումանի բերած մեկ շիշ «Բորդո» գինին և ոգևորված ընդունեցին մի «իմաստուն որոշում»՝ ուղևորվել Բաալբեկ: Ուզում էին համոզվել, որ օսմանների հետ ունեցած ընդհարումից այդ վայրը չէր տուժել:

Երկու օր անց, ինչպես անցած-գնացած ժամանակներում, ձի նստեցին ու ճանապարհ ընկան, թեև Անգլիայից Թոմասի՝ նոր տեղ հասած նոր ավտոմեքենան իրենց տրամադրության ներքո էր: Այն հատուկ նախատեսված էր Լիբանանի փոշոտ ճանապարհների համար, ներկված էր կաթնագույն, գեղագիտական առումով՝ անթերի: Սակայն դեռ խնդիրներ կային բենզինի մատակարարման հետ կապված, ու եթե իրենց հետ վերցնեին անհրաժեշտ բենզինի ողջ պաշարը, ապա տեղ չէր մնա գործիքների ու անձնական իրերի համար: Ի վերջո, իրենց հետ տարան վեց օգնական տղամարդկանց, տասներկու ուղտ և չորս ձի, երկուսը՝ իրենց համար:

Նյումանը հիասքանչ տրամադրություն ուներ, ասես տասնհինգ կամ քսան տարով երիտասարդացել էր: Թվում էր՝ հոգին անխռով թևածում էր: Կայտառ ռիթմով նրանք երրորդ օրը՝ իրիկնամուտին, հասան Բաալբեկ: Առաջ ընկան մյուսներից ու հիացան դրամատիկ մայրամուտով, տաճարներով և սյուներով, որոնք ուրվագծվում էին ոսկեգույն մշուշի վրա: Նյումանը, տեսարանից հուզված, շշնջաց.

- Մի ողջ կյանք արժե:

Ձիերից իջան ու քայլեցին դեպի Բաքոսի տաճարից հարավ՝ Յուպիտերի տաճարի կողմը: Անհավատալի սյուները, որ դիմացել էին ժամանակի բեռին, Թոմասին գրեթե ստիպեցին, որ հուզմունքից աչքերը լցնի: Նրա ականջներում դեռ Կարուլինի ձայնն էր, երբ բավականին վաղուց երկուսով այդտեղ էին, սակայն ասես դա երեկ էր տեղի ունեցել: Վերադարձան արաբների մոտ, ովքեր վրան խփելու գործում մեծ վարպետներ էին և վայելում էին այդ պահերը: Նրանք արդեն պատրաստել էին վրանները, խարույկներ վառել՝ միս եփելու ու խորովելու համար:

- Ուշադրություն դարձրի՞ր Բաքոսի տաճարի դռան վերնասեմին, այդ կորնթարդ զարդաքանդակներին, այդ ծաղիկների գեղեցկությանը և այդ սքանչելի մրգերին… Այդ ամենը ցույց է տալիս, որ մարդ արարածը միշտ էլ գեղեցկության ու խորհրդանիշների կարիք է ունեցել: Գեղեցկությունը մարդուն շնորհել է ներքին անդորր, իսկ խորհրդանիշները նրան հիշեցրել են տիեզերքում ունեցած իր տեղի մասին. ո՛չ, այնքան չենք

առաջադիմել, որքան էլ որ մեզ թվա, թե արդիականացումը մեզ դարձրել է բարձրակարգ: Հարյուր տարի անց մենք ընդամենը կդառնանք ոչ այլ ինչ, եթե ոչ՝ մի դեղնավուն հուշ, մինչդեռ Բաքոսին կամ Ադոնիսին նվիրված այս տաճարը կմնա այստեղ,- խորհում էր Նյումանը:

Վերհիշելով այդ վայրում Կարոլինի հետ անցկացրած պահերը՝ ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա կրկին բաժակ բարձրացրին՝ հանուն Բաալի, Վեներայի, Յուպիտերի, Բաքոսի և Ադոնիսի: Ավարտելով կենացները՝ Թոմասը գինովցած իր բարեկամին ուղեկցեց վրան: «Իսկական բարեկամությունը սա է»,- ասաց Նյումանը՝ հազիվ իրեն գցելով մեկտեղանի նեղ մահճակալին:

Նրանք այդտեղ մնացին երկու ամբողջ օր: Նյումանն արվեստի պատմության մասին մի գիրք էր կարդում՝ նշումներ կատարելով, իսկ ազատ ժամանակ՝ «ներշնչանքի» պահերին, որևէ հաշվետվություն էր շարադրում Արտգործնախարարության համար: Երբեմն իր գրածը տալիս էր Թոմասին, որպեսզի կարդա և հայտնի իր կարծիքը:

Նյումանի հաշվետվություններում Թոմասը նկատում էր շատ ավելին, քան որևէ կարծիքի բովանդակություն: Դրանք կենսափորձի ու իմաստնության խառնուրդ էին. հատկանիշներ, որոնք Ավգուստուս Նյումանին թերևս դարձնում էին ծառայության ամենակարևոր մարդկանցից մեկը: Նա Թոմասին պատմել էր, որ երբ ինքը թոշակի անցնելու առաջարկ էր արել, ապա իրեն պաշտոնապես պատասխանել են, որ ավելացնում են նրա աշխատավարձը, շնորհում են ազնվականի տիտղոս ու ներկայացնում են Բրիտանական կայսրության շքանշան ստանալու համար: Նյումանն ասել էր նաև, որ լավագույն շքանշանը գնահատված լինելն է և վաղուց ի վեր իր սիրած գործը շարունակելու հնարավորություն ունենալը:

Թոմասը վարպետորեն նկարում էր տաճարների ուղղաձիգ պատկերները: Չէր գործածում Նապոլեոնի ռազմարշավի մանրակրկիտ հնարներից, որոնք թեև ճշգրիտ էին, սակայն՝ չափազանց սառը: Փոխարենը՝ ջրաներկով ու ազոտական թթվով հապճեպորեն ուրվագծեր էր անում, իսկ լուսանցքում՝ նշումներ, և արդյունքում իսկապես ստացվում էին դաշտային գեղեցիկ, արտահայտիչ և ուսուցողական նկարներ: Նա ընդունում էր, որ ինքն առաջին հերթին պրոֆեսոր էր, այլ ոչ թե նկարիչ:

Այդ նկարները Նյումանին ցույց տալով՝ ասաց, որ մտադիր է դրանք զետեղել իր գրքում, սակայն անգամ ինքը չէր հավատում իր կտրուկ որոշմանը: Գիտեր, որ գիրքը ո՛չ ավարտելու է, ո՛չ էլ՝ հրատարակելու. այն պահից ի վեր, ինչ իր կյանքից անհետացավ Կարոլինը, այդ գիրքը մնաց որպես ճախողված մտահղացում:

30. ԱՄԵՆ ԻՆՉ ԳՐՎԱԾ Է
ՀՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1923թ.

Վրա հասավ փոփոխությունների ժամանակաշրջանը, ու Բեյրութում մարդիկ ձեռնամուխ էին եղել դրանց իրականացմանը: Այնինչ Դամասկոսում դեռ նոր էին զգում այդ ժամանակաշրջանի շունչը: Խոսքը մի վաղեմի, պատմական պայքարի մասին էր, որը գրեթե կապված չէր կրոնական դավանանքների հետ, թեև, ի վերջո, դրանք ի հայտ էին գալիս որպես բռնազբոս ինքնության պարտադրված դրսևորում:

Սարան և Էթելն Անգլիայից վերադարձան՝ ամառը Բեյրութում անցկացնելու համար: Չնայած Բեյրութում նույնպես շոգ էր, բայց ավելի տանելի էր, մանավանդ որ կարելի էր զովանալ ծովում: Նրանք գնում էին ծովափի այն հատվածը, որն անվանում էին «ֆրանսիացիների լողափ», չնայած իրականում խոսքը քրիստոնյաների լողափի մասին էր: Այդտեղ կանայք կարող էին Ֆրանսիայից ներկրված նորաձև ու ավելի լանջաբաց լողազգեստներով լողալ տղամարդկանց հետ: Իրենց փակ լողափում այդ նույն լողազգեստներն օգտագործում էին նաև մուսուլման կանայք՝ դրանք, անշուշտ, հագնելով սև ու երկար տունիկայի տակից, որը հասնում էր մինչև նրանց ոտքերի կոճերը: Մի քանի ժամ լողափում՝ արևի ներքո մնալուց հետո Ժոզե Շաբրին նրանց ավտոմեքենայով տուն էր տանում: Երեքով ճաշում էին փակ պատշգամբում, երբեմն էլ, երբ մանավանդ հյուրեր էին ունենում, պարտեզում՝ մովրաշուքի ներքո: Իհարկե, այդտեղից չէր երևում վերին դարավանդի տեսարանը, բայց շոգ օրերին ավելի զով էր: Այնուհետև, միջերկրածովյան սովորույթի համաձայն, տրվում էին հետճաշյա հանգստին, իսկ մայրամուտին նրանք երկար զբոսնում էին Լա Կոռնիշում՝ ծովափում, որտեղ հանդիպում էին իրենց բարեկամներին: Օրվա ավարտին էլ ընթրում էին բավականին բազմաթիվ էլեգանտ ռեստորաններից մեկում, որտեղ կարելի էր օգտվել ձկներով ու ծովի ընտիր բարիքներով պատրաստված լիբանանյան լավագույն ճաշատեսակներից:

Իրիկնային զբոսանքի ժամանակ Թոմաս Հարդինգը, նրա կինն ու դուստրն ամեն քայլափոխի ստիպված էին կանգ առնել՝ ողջունելու մեկ այս, մեկ այն մարդուն: Տղամարդիկ խոսում էին շոգ եղանակից ու միջերկրածովյան գիշերվա բարությունից: Կանայք զննում էին այլ տիկնանց շրջազգեստները: Բեյրութում շատ էին հմուտ դերձակներն ու նորաձևության վարպետները, ովքեր ունակ էին վերարտադրելու Փարիզի նորաձևության վերջին միտումները և ընդամենը մի քանի օր հետո

պատրաստի նմուշները ցույց տալ Բեյրութի փողոցներում: Այո՛, բոլորը պետք է քաջ գիտակցեին, որ նորաձևության հարցում Ֆրանսիան իր վեհությամբ ու մանավանդ հմայքով հաղթել է իր բոլոր թշնամիներին ու դաշնակիցներին: Լիբանանյան իմամները դրա հետ համաձայն չէին, սակայն դա արդեն տանուլ տրված մարտ էր: Կուզենային, որ հաշեմիթ էմիրը կառավարեր Դամասկոսում, բայց օմայանների հզորությունը վերականգնելու անփառունակ հնարավորությունը մնացել էր անցյալում, թեև՝ ցավալիորեն:

Մեծ Լիբանանում բոլորը՝ որպես բարեհոգի փյունիկեցիներ, շատ սնահավատ էին ու թխկթխկացնում էին փայտին: Նախընտրում էին մայրու նրբաճաշակ, բուրավետ և այն միակ փայտը, որով ողորմած Աստված թե՛ մուսուլմաններին և թե՛ քրիստոնյաներին բարգավաճ կյանք էր պարգևել այդ հիասքանչ երկրում: Անկախ սիրիացիների՝ ֆրանսիացիների նկատմամբ ունեցած դժգոհությունից՝ երկրում ակնհայտ էին կենսամակարդակի բարձրացումը, ենթակառուցվածքների բարելավումը, մշակույթի զարգացումը, քաղաքացիական ազատությունները, ապահովության զգացողությունը, որոնք բոլորովին այլ էին օսմանների իշխանության օրոք: Ֆրանսիացի իշխանավորների ոչ հրապարակային կարծիքով՝ լիբանանցիներն ու մյուսները օսմաններից ժառանգել էին մի շարք արատներ, օրինակ՝ ինքնակառավարման անկարողությունը, հովանավորչությունը, կոռուպցիան, իշխանավորների կողմից պաշտոնական դիրքի չարաշահումը: Հավասարությունը սոսկ հռետորաբանություն էր. մի գեղեցիկ բառ՝ ամբոխավարության համար: Ոչ ավելին...

Այդտեղ ուղղություն նշողները, տիրապետողները, կառուցողներն ու քանդողները տեր ու տիրակալ ֆեոդալներն էին: Ոմանք զարմանում էին. «Չէ՞ որ դա ժամանակավրեպ երևույթ է»: Այդ բարդ հանրությունը հիմնված էր մեծ գերդաստանների միջև հնուց եկող ամուր կապերի վրա. նրանք դառնալու էին Լևանտի ազնվականությունը: Այդ մշտահունչ անունները, ընտանիքները դարեր ի վեր կառավարում էին երկիրը, իրենց ամուր էին պահում, երբ հավասարակշռությունը հաճախ դառնում էր անկայուն, և իրականացնում էին Բեյրութի վարչակազմի կողմից պարտադրվող փոփոխությունները: Ահա այդ ընտանիքները. Ջեմայելները և բոլոր քրիստոնյա մարոնները, ովքեր առաջադիմության մեջ ներգրավվելու համար իջել էին սարերից, Ֆրանժիները, Լահուդները, Էդերը, Շամունները, Սուլեյմանները, Թաբիթները, Հանիները, Ազուրիները և շատ ուրիշներ: Գերդաստանների միջև ամուսնական

կապերը նպաստում էին հավատքը և արյունը մաքուր պահելուն: Սունիների գերդաստաններն էլ իշխում էին Բեյրութի քաղաքամերձ շրջակայքում և առափնյա քաղաքներում՝ միաժամանակ երկնչելով իրենց գերիշխանության վտանգից: Այդ ընտանիքներն էին՝ Քարամեները, Սոլիերը, Սալամները, Հարիրիները, Բահիրները, Քասեմները, ալ-Մասրիները: Անշուշտ, պետք չէր մոռանալ դրուզներին, ովքեր իրենց համարում էին իրենց հողատարածքների իշխաններ՝ ուժեղ բնավորությամբ ու արժանապատվության չափազանց մեծ զգացումով: Ահավասիկ այդ ընտանիքներից էին Ջումբլաթները, Արսլանները, Չեբաբները, Աբու էլ-Լամահները, Նաքադները, Շուֆա ժայռոտ լեռների բնիկները, ովքեր վերջին տարիներին որոշել էին հաստատվել Բեյրութում՝ համոզված լինելով, որ այդտեղ է գտնվում երկրի տնտեսական ու քաղաքական իշխանության ապագան: Հասարակության մեջ որոշակի դիրք ունեին նաև այնպիսի մտավորականներ, ինչպիսիք էին Սուրսոեկները, Ֆարաոնները, Տոենիները, թեև պնդաճակատ ուղղափառ հույներ էին: Պետք չէր անտեսել նաև անտաշ ու լռակյաց ալավիներին՝ Հբուսներին, Ուաշներին, ովքեր հայտնի էին նաև որպես ալ-Նուսայրիյահներ կամ նուսայրիներ: Նրանք թեև բանում էին սուննիների հողերում, այդուհանդերձ այն կարծիքին էին, որ իրենց տոհմն ամենազտարյունն է: Անհիմն չէր նրանց այն պնդումը, որ իրենք միակն էին, ովքեր չէին ենթարկվել թուրքերին: Չնայած դրա դիմաց նրանք թանկ վճարեցին՝ դաժան կյանքով ապրելով հասարակությունից դուրս, բայց մնում էին այնտեղ՝ սպասելով ճակատագրի կանչին: «Աստված ողորմած է, և վաղ թե ուշ մեզ էլ կհասնի»,- շշնջում էին շիաները՝ ատամները սեղմած և համոզված, որ շուտով բախտը բերելու իրենց ժամն էլ կգա:

Ահա այսպիսին էր իրականում Մեծ Լիբանանում ստեղծված բազմահյուս հենքը՝ այն շիվերը, որոնցով Ֆրանսիան պետք է կառուցեր մի անկախ երկիր: Ֆրանսիացիներն այնտեղ էին փոխադրում հեղափոխական մշակույթը՝ եղբայրությունը, հավասարությունը, ազատությունը, սակայն դեմ էին առնում ֆեոդալիզմի դարավոր խճճված այնպիսի հանգույցների, որոնք իրարից անջատելն անհնարին էր, որոնք և խոչընդոտում էին առաջադրված նպատակների իրականացմանը: Նույն պատկերը չէր Պաղեստինում, որտեղ բեդվիններն ու արաբները, իրոք, երբեք իշխանության գլուխ չէին կանգնել իշուվների[62] առկայությամբ, ովքեր Ռուսաստանից, Լեհաստանից ու Արևելյան Եվրոպայից զանգվածային խմբերով տեղափոխված փակ քրիստոնյաներ էին՝ իրենց մենաստան-

[62] Իշուվ բառը գործածվել է մինչև Իսրայելի ստեղծվելը:

ներով ու վանքերով, դպրոցներով ու սրբազան վայրերով: Բողոքականներն էլ դարեր շարունակ մտնում ու դուրս էին գալիս՝ խանգարելով որևէ կոնկրետ մշակույթի ամրապնդմանը:

Դամասկոսում էլ բոլորովին հակառակն էր. այդ քաղաքը մուսուլման արաբների մշակույթի հնոցն էր՝ այն թովիչ միջավայրը, որտեղ՝ լեռնային ժայռեղեն հենասյուների հետևում, ռազմատենչ առաջնորդները փրկում էին իրենց կյանքը՝ պահպանելով իրենց հինավուրց մշակույթը, իրենց անունն ու վարկը: Շատ ավելի ուշ այնտեղ Արևմուտքից եկան մարդիկ, անգամ հայեր ու հրեաներ, ովքեր թեև երդվեցին, որ մնալու են այդտեղ, սակայն բոլորն էլ գիտեին, որ իրենք այդտեղ շատ կարճ ժամանակով են և իրենց վերջնական հանգրվանը լինելու է Պաղեստինը կամ ուրիշ մի վայր:

Մեծ Լիբանանում նահանգապետի պարտականությունները ստանձնեց Ռոբերտ դը Կայը, ում ոչ ոք հավատ չէր ընծայում: Նա Գուրոյի ո՛չ ուժն ուներ, ո՛չ էլ՝ մեծամտությունը, չէր էլ համարձակվում նիստ գումարել: Հուլիսին էլ դիմավորեցին Ֆրանսիայի Բարձրագույն նոր կոմիսարին՝ գեներալ Վեյգանին:

Թոմասն արդեն բավականաչափ փորձ ուներ՝ խորամանկ հնարքներն ըմբռնելու համար: Նոր «փաշայի» ուղերձն ուղղված էր նրանց, ովքեր շարունակում էին առաջ մղել Դամասկոսի ընդհատակյա խռովությունը, նրանց, ովքեր անօրինական էին համարում ֆրանսիական վարչակազմի ընդունած որոշումները, օրենքներն ու դեկրետները:

Թոմասը ստիպված ուղևորվեց Դամասկոս՝ կապ հաստատելու արաբական հեղափոխական շարժման հետ: Նրան դիմավորեցին բրիտանական հյուպատոսարանում և նրբանցքների, վերելքների ու զառիվայրերի լաբիրինթոսով տարան խռովության առաջնորդի մոտ, ով թաքնվում էր ֆրանսիացիներից: Առաջնորդը՝ փաշա ալ-Ատրաշը, դրուզ էր, պայքարել էր օսմաններին երկրից դուրս քշելու համար ու հիմա ցանկանում էր նույն բանն անել ֆրանսիացիների հետ:

Նրան ուղեկցեցին մի ներքին բակ՝ ծածկված այն նույն հյուսվածքով, ինչից որ պատրաստում էին բեդվինների մեծ վրանները և ժամանակ առ ժամանակ խոնավացնում էին՝ շրջապատը զովացնելու նպատակով: Ինչպես նմանօրինակ այլ բակերում, կար մարմարե շատրվան, ինչպես նաև՝ բույսերով լի մի քանի սափորներ, որոնք այդ վայրը դարձնում էին մի փոքրիկ օազիս: Օսմանյան ոճի բեղերով, տեղական ավանդական հագուստով մի երիտասարդ Թոմասին զննեց հեգնախառն ու հարգալից:

- Աստված ողորմած է: Դու այն անգլիացին ես, ով որոշել է ապրել Բեյրութում: Դա վկայում է կյանքի հանդեպ քո ունեցած ճաշակի մասին, բայց չեմ ուզում քեզ նեղացնել՝ ասելով, որ առողջ դատողությունից զուրկ ես: Ի վերջո, ամեն մարդ իր ճակատագիրն ընտրելու իրավունք ունի: Եթե հարմարավետ, բայց սովորական կյանք ես ուզում, ապա կվերադառնաս Լոնդոն, իսկ եթե ուզածդ արտասովոր պահերից օգտվելն է, նկատի ունեմ վտանգները, ապա Բեյրութում կունենաս այն, ինչ փնտրում ես: Բոլորովին չկասկածես, քեզ հասկանում եմ: Ինձ համար թերևս ավելի լավ կլիներ, եթե շարունակեի առևտուրս, բազմապատկեի հարստությունս, վայելեի կյանքս՝ առանց այլ բանի մասին մտածելու: Այնուամենայնիվ, ես էլ եմ զուրկ առողջ դատողությունից: Բարով եկար, անգլիացի՛:

Թոմասը ժպտաց և պատասխանեց նույն տոնով: Ինքն էլ չէր կամենում նեղացնել ալ-Ատրաշին:

- Այո՛, Աստված ողորմած է և գթառատ ու ինձ թույլ է տալիս օգտվել դրախտից: Ապրելն ինքնին վտանգ է, ու բոլոր դեպքերում բոլորս էլ պետք է մեռնենք: Գիտեմ, թե ով ես, և ինչպես ինձ են ասել, հանուն արաբների ազատության համար իր կյանքը զոհած հորդ արժանի զավակն ես: Ես այստեղ եմ, որ իմանամ, թե ո՞րն է քո ժողովրդի իսկական դիրքորոշումը:

- Լսի՛ր, անգլիացի՛,- ալ-Ատրաշը նրան ընդհատեց,- այս իրավիճակի մեղավորը բրիտանացիները չեն, այլ արաբները, որ ձեզ են վստահել: Խոստացաք այն՝ արաբական անկախ ու ազատ թագավորություն, ինչը մեզ չպետք է տայիք: Մենք էլ ձեզ օգնելու էինք օսմանացիների դեմ պայքարում: Թուրքերը հիմա մեզ այնքան էլ բռնակալ չեն թվում, ոչ էլ այնքան խարդախ, որքան դուք էիք մեզ հավատացրել: Հիմա նրանք նոր պայմանագիր են կնքել, որին հասել են զենքի ուժով, քանզի ժամանակին հասկացան, որ այլ կերպ ստորագրելու են իրենց պետության լուծարումն ազդարարող թղթի վրա: Խնդիրն այն է, որ այլևս չենք կարող հավատալ ձեր խոստումներին: Հիմա Մուստաֆա Քեմալն էլ է մեզ դավաճանել, ու մենք կորցրինք մեր անկախությունը: Եվ դեռ պնդում եք, որ նորից հավատա՞նք նոր խոստումներին: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա հայտարարում է, որ աշխարհիկ երկիր է և իշխանությունը տալիս է մարոններին, որպեսզի ստիպողաբար քրիստոնեական երկիր ստեղծեն Հռոմի Պապի գլխավորությամբ: Դա տասը դարեր անց խաչակրաց արշավանքների վրեժն է: Ասում է, որ ազատություն է բերում, բայց մեզ շղթայում է: Հավատացնում է, որ բերում է եղբայրություն և հավասարություն, սակայն ես պետք է թաքնվեմ իմ գաղափարների պատ-

ճառով, եթե չեմ ցանկանում, որ լուսաբացին ինձ գնդակահարեն:

Ալ-Ատրաշը հառաչեց, ապա շարունակեց.

- Քո դեմ ոչինչ չունեմ: Գիտեմ, թե ով ես, ու մենք քեզ ընդունում ենք, քանի որ ինձ պատմել են, որ դու քեզ միշտ պահել ես այնպես, ինչպես հարկն է, թեև դու այլևս անգլիացի չես, այլ լիբանանցի, իսկ ես՝ որպես դրուզ, երբեք զիջման չեմ գնա: Ո՛չ, մեղքը ձերը չէ, այլ դյուրահավատ արաբներինը, հավակնոտ հաշեմիթներինը, ովքեր գայթակղվեցին Հալեպից մինչև Մեդինա թագավորելու հեռանկարով: Ո՞ւմ մտքով կանցներ, որ ես երբևէ կարոտելու եմ օսմանյան խալիֆի գահակալության տարիները: Եվ հարցը միայն կարոտը չէ այդ ժամանակաշրջանի հանդեպ, որն ընդմիշտ հեռացել է: Չկարծես, թե արդիականացումը, որը խոստանում են ֆրանսիացիները, մեզ երջանկություն է բերելու: Երջանկությունը միշտ մնում է հետևում: Ինչ վերաբերում է Մեծ Լիբանանին, ապա դա ընդամենը սիրիական նահանգ է և այդպիսին է լինելու դարեդար, ու երբեք չի հաստատվի խաղաղություն, քանի դեռ նրա մայրաքաղաքը գտնվելու է Փարիզի ու Հռոմի միջև, այնինչ Դամասկոսը պետք է լիներ: Մեծ Լիբանանի սուննիներին, շիաներին, մեզ՝ դրուզներիս, ալավիներին, հենց իրենց՝ ուղղափառներին, հարցրո՛ւ՝ արդյոք նախընտրում են սիրիացիներ, թե լիբանանցիներ լինել: Կպատասխանեն. «Ուզում ենք սիրիացիներ, սիրիացիներ լինել... Դամասկոս մայրաքաղաքով և իսլամական օրենսդրությամբ»: Այստեղ մենք միշտ հարգել ենք քրիստոնյաներին: Մենք միշտ հանդուրժող ենք եղել քրիստոնյաների ու հրեաների հանդեպ, քանզի ի ծնե այդպիսին ենք: Հիմա բաներ կան, որ հնարավոր է՝ փոխվեն: Արդեն վերացել են վստահությունն ու բարեկամությունը, հնարավոր է, որ շուտով ի հայտ գա ատելությունը: Եվ այդ ամենը կլինի ոչ այլ ինչ, եթե ոչ խաբեության ու դավաճանության արդյունք, որին մենք կուլ ենք գնացել:

Թոմասը խմեց անանուխով թեյը, որը մատուցել էին մի քանի սպասավորներ: Ալ-Ատրաշն իմաստուն մարդ էր՝ անկախ իր երիտասարդ տարիքից: Երբ Թոմասը Բեյրութ վերադառնալու համար տեղից վեր կացավ, իրար ձեռք սեղմեցին:

- Գնա՛, Աստված քեզ հետ, անգլիացի՛: Եվ ասա՛ յուրայիններիդ, որ մի անգամ դրախտի բանալին իրենց մոտ էր: Երբ փորձեն կրկին այնտեղ մտնել ուժի միջոցով, հավանաբար կհանդիպեն օձերով բնակեցված ամայի մի վայրի: Ի վերջո, ինքներս ենք փնտրում մեր վախճանը:

Թոմասը Դամասկոս էր հասել իր ավտոմեքենայով: Երկու անգամ անվադողերը ծակվեցին, սակայն ինքը մենակ փոխեց դրանք, թեև երկու

դեպքում էլ անցորդ արաբները, հետաքրքրասիրության ու անվստահության խառը զգացումով համակված, նրան առաջարկեցին իրենց օգնությունը: Նրանք մոտիկից հիանում էին այդ ավտոմեքենայով, որը շարժվում էր առանց որևէ կենդանու միջամտության: Արդեն Բեկաայի հովտի մոտակայքում ֆրանսիական մի ստորաբաժանում անցավ նրա կողքով: Հրամանատարը մոտեցավ և քաղաքավարությամբ հարցրեց, թե արդյոք օգնության կարիք չունի: Բոլորին էլ ծանոթ էր անգլիացու ավտոմեքենան, որի առջևի աջ կողմում դրոշ էր ամրացված:

Թոմասը գլխի շարժումով մերժեց օգնության առաջարկը՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով դրա համար: Մինչ նայում էր նրանց հետևից, խորհեց, որ զինվորները՝ իրենց համազգեստներով, և բրիտանական իր նորաձև ավտոմեքենան միակ ոչ ներդաշնակ տարրերն էին այդ բնապատկերում:

Հասնելով Բեյրութ՝ նա սկսեց պատրաստել ճամպրուկները. երկար ժամանակով վերադառնում էր Լոնդոն: Ժոզե Շաբրին զբաղվելու էր բոլոր գործերով: Հաջորդ օրը նավարկելու էին դեպի Սաութամփթոն՝ կանգ առնելով Ջիբրալթարում: Կվերադառնար Ծննդյան տոներից հետո. պետք է մի քանի ֆինանսական հարցեր լուծեր, ու Սարան նրան գրել ու զգուշացրել էր, որ հնարավորինս շուտ աներ դա:

Այդ երեկո արևն ասես դժկամորեն էր իջնում՝ հորիզոնի հետևում թաքնվելու համար: Բնապատկերը ցնցող էր իր գեղեցկությամբ: Կապույտ ծովը հսկայածավալ վարագույրի տպավորություն էր թողնում. նրա աջ կողմում Սպիտակ լեռն էր: Ճոճղացող ճայերի մի վիթխարի երամ անցնում էր իր տան դիմացով:

Ամեն բան փոխվում էր շատ մեծ արագությամբ, որին տարածաշրջանի բնակիչներն արդեն վարժվել էին: Նրանք կարծես արթնացել էին երկարատև լեթարգյան քնից, որի ընթացքում օսմանյան իշխանությունը թույլ չէր տվել, որ որևէ բան շարժվեր:

Հարավում՝ Պաղեստինում, պատմությունն այլ ուղով էր ընթանում: Հրեական ներգաղթն օրեցօր աճում էր, իսկ տարածաշրջանի արաբներին գնալով ավելի էր անհանգստացնում ստեղծված իրավիճակը. չէին հաշտվում կատարվող իրադարձությունների հետ: Թոմաս Հարդինգը հենց նոր էր մասնակցել Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցած փոխանակությանը, այն է՝ Գոլանի բարձունքներն անցան Ֆրանսիայի մանդատի ներքո, փոխարենը, ի շահ Անգլիայի, Մետուլայի տարածաշրջանը մտավ Պաղեստինի կազմի մեջ: Պաղեստինի բուն բնակիչը համառորեն կառչում էր իր հողին, իր ավանդույթներին,

մինչդեռ ամեն ինչից անիրազեկ և անթերի հագուկապով պաշտոնյաները քաղաքական գործիչների թելադրանքով գունավոր ներկերով սահմաններ էին գծում՝ ըստ իրենց շահերի:

Ավելի ուշ արևն ավարտեց իր երկար պտույտն ու սկսեց դանդաղ սուզվել ծովում: Ամեն ինչ կարմիր ներկվեց, միայն ամպերի մի քանի վարդագույն ծվեններ մնացին արևմուտքում: Լևանտի երկար պատմությունից անցավ ևս մեկ օր:

Թոմասը երկար ժամանակ անշարժ ու մտախոհ մնաց պատշգամբում, մինչև ամեն ինչ պատվեց մթությամբ: Մարիա Շաբրին դուրս եկավ պատշգամբ ու իր ջերմ ձայնով, մաքուր ֆրանսերենով սովորականի պես հարցրեց.

- Դուք տա՞նն եք ընթրելու:

Գլխի շարժումով մերժեց: Ո՛չ, ընթրելու էր այդտեղ՝ պատշգամբում՝ արաբեսկներով նախշազարդ բրոնզե մոմակալի լույսի ներքո, որը ձեռք էր բերել իր բարեկամ Սլիմա Մելլիից, ով, տեսնելով նրա հետաքրքրությունն այդ իրի հանդեպ, գումարը չէր վերցրել:

Սեպտեմբերի կեսերին վերջապես ուժի մեջ մտավ միջազգային մանդատը: Միակ մութ կետն այն էր, որ ԱՄՆ-ը դեռևս այն չէր ընդունում: Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսար Վեյգանը զգուշացրեց, որ ցանկանում է միավորել Հալեպի և Դամասկոսի նահանգները՝ վերջնականապես ստեղծելով Սիրիայի պետություն:

Դա այն ժամանակ էր, երբ ֆրանսիացիները կուշտ էին առկա դժվարություններից ու սուննիներից: Նրանք իրենց համարում էին իսլամական աշխարհի գիտակներ, և իրոք դա այդպես էր մինչև այն պահը, երբ դեմառդեմ հանդիպեցին ագրեսիվ, հարձակողական իսլամին, անբացատրելի ֆրանկոֆոբիային, Դամասկոսում քամահրաբար գործածվող «պրեֆեկտուրայի»՝ իրականում զինվորական հրամանատարության կողմից ընդունված ցանկացած որոշման դեմ թշնամանքին: Դա մի արհամարհական վերաբերմունք էր Ֆրանսիայի թափած ջանքերի հանդեպ, որը փորձում էր արդիականությունը հասցնել Մերձավոր Արևելք:

Թոմաս Հարդինգը հարցը դիտարկում էր երկու տեսանկյունից: Փաշա ալ-Ատրաշի հետ Դամասկոսում ունեցած հանդիպումը նրա համար բացահայտել էր արաբների քաղաքական նոր դիրքորոշումը: Որքան անգլիացիները, այնքան էլ ֆրանսիացիները կորցրել էին պատմական պատեհ առիթը. արդեն դժվար էր լինելու վերականգնել արաբների վստահությունը:

Նյումանն այդ մասին Թոմասին խոստովանեց մի գիշեր, երբ չափից ավելի էր խմել: Ի վերջո, հրեաները կունենան հայրենիք, մինչդեռ անգլիացիները կորցրել էին իրենց լավ բարեկամներին՝ արաբներին: Այնտեղ՝ Մեծ Լիբանանում էլ մարոնները կորցրել էին այն ինքնավարությունը, որը ժամանակին նրանց տվել էր Օսմանյան կայսրությունը, իսկ հիմա նրանք ամեն հարցի դեպքում պետք է հաշվետու լինեին ֆրանսիացիներին: Ընդ որում՝ շատ ձայներ ապահովելու նպատակով յուրաքանչյուր հանրաքվեի ընթացքում կարող էին օգտագործվել նաև արտասահմանում ապրող մարոնների քվեները: Սուննիների աղաղակը զայրույթից երկինք էր հասնում, սակայն ոչինչ չփոխվեց:

1923 թվականն աննշանակալի եղավ: Բոլորը սպասողական դրության մեջ էին, սակայն օրերն անցնում էին, ու ոչինչ տեղի չէր ունենում: Հայերը շարունակում էին հանգրվանել Լիբանանում: Գալիս էին նաև հրեաներ, ովքեր մեծ մասամբ իրենց ճանապարհը շարունակում էին դեպի հարավ՝ մինչև Պաղեստին: Մի հրեա՝ Բենջամին Լևինը, Թոմասին ասաց.

- Պարո՛ն Հարդինգ, Եվրոպայում մեզ չեն սիրում, ոչ էլ՝ Ռուսաստանում, այնպես որ՝ հարկ է խոստովանել, որ իրավացի էր Թեոդոր Հերցլը: Երբ ամիսներ անց որդիս ծնվի, հուսամ, որ երբևէ նա ապրելու է Իսրայելի պետությունում: Դա է ինձ ուժ և հույս տալիս առաջ գնալու համար: Ես այն հրեաներից եմ, ովքեր ցանկանում են ունենալ իրենց պետությունը:

31. ԼՈՆԴՈՆ
ՀՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ, 1924թ.

Թոմասը Լոնդոն հասավ 1924 թվականի սկզբներին: Նա շարունակ հետաձգել էր իր ուղևորությունը, մինչև որ մեկեն որոշեց ճամփա ընկնել: Արևելքում երբեք չի մոտենում այն պահը, երբ հարկավոր է մի բան անել: Միայն կարելի է մտածել, գլուխ կոտրել, ծանր ու թեթև անել: Երբեմն նա իր արաբ բարեկամներին ասում էր, որ ցանկացած նախաձեռնությունում «մենք պետք է անենք այս կամ այն բանը», տեղից շարժվելու միակ ելքն օրինակ ծառայելն է, մինչ մնացածները, գլուխը ցավի տակ դնելով, մտածում են, ճգնում: Իրականությունը կարևոր չէ: Կարևորը մնացածն է. երկար ու ձիգ մտածմունքներ, ինչ-որ հարցերի շուրջ ընդհատումներով վիճաբանություններ, որոնք ժամեր են տևում ու չեն վերջանում: Դա նույնն է, ինչ կյանքի հետ անվերջ սակարկելը:

Փոխարենը՝ Անգլիայում ամեն բան բոլորովին այլ կերպ է: Բոլորը մտածում են բիզնեսի, արտադրություն հիմնելու և ապրանքն արտահանելու մասին: Ոչ ոք չէր ցանկանում կրկին լսել պատերազմ ու զինվոր բառերը, ոչ էլ թեկուզ մեկ լումա ծախսել ինչ-որ բան կարգի գցելու կամ բարելավման համար, եթե իհարկե այդ ամենն իրենց երկրից դուրս է:

Հայ համայնքն իրեն ճախողված ու լքված էր զգում: Նրանք հավատացել էին որոշ առաջնորդների՝ Լյոյդ Ջորջին, Վուդրո Վիլսոնին, Կլեմանսոյին: Նրանցից և ոչ մեկն արդեն իշխանության մեջ չէր: Իսկ խոստումնե՞րը... Իսկ համաձայնագրե՞րը... Երբ կնքում էին Սևրի պայմանագիրը, բոլոր զանգերը ղողանջելով դա էին ավետում: Պարզվեց՝ ցնորք է, ուրիշ ոչինչ:

Թոմասը տեսավ, որ հայերը հոգնել են պայքարելուց, սպառվել թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես: Նրանք այլևս չէին հավատում ո՛չ բրիտանացիներին, ո՛չ էլ ֆրանսիացիներին: Կիլիկիայում տեղի ունեցածը նրանց ապացուցեց, որ ոչ մի բան իրենցից չեն ներկայացնում, ոչ էլ առանձնապես կշիռ ունեն: Ընդամենը փոխզիջման առարկա են: Այս մասին Թոմասին ասում էր հայերից մեկը:

- Պարո՛ն Հարդինգ: Հայ լինելու համար հարկավոր է հավատալ հրաշքների: Երկու հազար տարի իրենց հայրենիքից դուրս ապրելուց հետո հրեաները հասնում են իրենց նպատակին, իսկ մենք մեր հողի վրա ապրել ենք մինչև երեկ չէ առաջին օրը: Նրանք ավելի խորամանկ գտնվեցին, քան հայերը: Բալֆուրի, Ռոտշիլդի, Ջորջի, Սամուելի և Վեյցմանի հետ նախանձելի ռազմավարություն մշակեցին: Մենք մնա-

ցինք բաժան-բաժան, ավերված, յուրաքանչյուր երեք հոգուց երկուսն անհետացել են: Հավատում ենք Աստծուն, սակայն, ինչպես երևում է, նա մեզ չի հավատում:

Թոմասը չգիտեր, թե ինչ պատասխանի նրան: Նա շատ մոտիկից էր ապրել հայ ժողովրդի անհուն ողբերգությունը, ու խոսքերն ավելորդ էին:

Այցի գնաց լորդ Քերզոնին: Ժամանակից շուտ էր ծերացել ու հիվանդագին տեսք ուներ, թեև պահպանել էր մտքի արագությունը: Լուրջ կասկածներ ուներ Պաղեստինում կատարվելիք իրադարձությունների առումով ու բոլորովին համամիտ չէր Մերձավոր Արևելքում ֆրանսիացիների դերակատարության հետ. «Մի անսպասելի օր դա կպայթի: Մենք սխալվեցինք՝ նրանց տալով այն, ինչ ուզում էին»: Քերզոնը նկատի ուներ այն, որ անգլիացիներն էին նվաճել Պաղեստինը և հրահրել արաբների ապստամբությունը: Ֆրանսիացիները սոսկ իրենց դաշնակիցներն էին, ովքեր, ի վերջո, բանակցությունների սեղանին պարտադրեցին իրենց տեսակետը:

Հավանաբար մարդկության պատմության ողջ ընթացքում սակավաթիվ են եղել լավագույն կառավարիչները: Պատմությունը թաթախված է աղանդավորականության շահերով, քաղաքական կարճատեսությամբ, կաշառակերությամբ, կասկածներով ու անվստահելիության մթնոլորտով և ոմանց վախկոտությամբ, ինչպես նաև արյամբ ու դավաճանությամբ:

Նա համամիտ էր Քեմալ Մահմուդի կարծիքին, ով հյուպատոսական բաժնի ղեկավարն էր և մտադիր էր Լոնդոնում վերստին Թուրքիայի դեսպանատուն բացել: Նրա հետ տասներկու տարի առաջ ծանոթացել էր Բիբլոսում, երբ Մահմուդը Բեյրութի վալիի քարտուղարն էր:

Սրճեցին Ռիջենթ Սթրիթում և հիշեցին հին ժամանակները, երբ տարածաշրջանում գերմանացիներն էին իշխանության տերը: Մահմուդը նրան հավաստիացրեց, որ Գերմանիայում շուտով շատ բաներ են տեղի ունենալու:

- Պարո՛ն Հարդինգ, երբևէ մեր՝ թուրքերիս թույլ տված մեծագույն հիմարությունը եղել է գերտերություններին միանալը, վերջին դեպքում՝ Գերմանիային տրվելը: Նրանք հրահրեցին պատերազմը՝ համոզված լինելով, որ հաղթելու են և ստեղծելու են մի վիթխարի կայսրություն՝ Բեռլին մայրաքաղաքով: Այս ամենի մեղավորը կայսրի վնասված (ի ծնե արատավոր) ձեռքն էր: Այն ժամանակ ես սովորում էի Հեյդելբերգի համալսարանում, այնուհետև բավականին երկար ժամանակ ապ-

ռեցի Բեռլինում: Այդ տարիներին ես նույնպես հավատացի, որ նրանք հաղթելու են, որ ոչինչ ու ոչ ոք չէին կարող կանգնեցնել նրանց: Այնքան վստահ էին իրենց գերազանցության առումով: Ինչ-որ մեկը նրանց գլուխը մտցրել էր, որ գերմանական ռասան ընտրյալ էր: Նրանք այդ ճառը բերեցին Ստամբուլ ու մեզ համոզեցին, որ մոռանանք Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հետ ունեցած մեր հին կապերը: Խոստացան, որ մեզ տալու են ռազմանավեր, «Կրուպի» թնդանոթներ, բարելավելու են մեր առևտուրը, որ երկաթուղի են կառուցելու մինչև Բաղդադ, որ ուսուցանելու են մեր զորքերին, որ կուղարկեն իրենց լավագույն գեներալներին... Ու վերջիվերջո՝ իսկական աղետ... Հետո՝ Վերսալի պայմանագիրը... Իսկ գիտե՞ք, թե ինչ եմ զգացել Բեռլինում... Ատելություն... Գերմանացիներն ատում են ֆրանսիացիներին ու անգլիացիներին: Հիմա նրանք ֆինանսական դժվարությունների մեջ են, պետք է ապրեն ավելի համեստ կյանքով և ամեն ինչում մեղադրում են այլոց: Չեն հիշում, թե յուրաքանչյուր ռազմատենչ ճառից հետո որքան բուռն էին ծափահարում իրենց կայսրին: Իսկ մենք Մուստաֆա Քեմալի շնորհիվ դարձանք ինչ-որ մեկը: Հիմա՝ Լոզանից հետո, մեզ մարդու տեղ են դնում: Սևրի պայմանագրից հետո ոչինչ էինք...

- Այո՛, Մահմո՛ւդ,- Թոմասի հետաքրքրությունը շարժվեց,- դա ճիշտ է, և եթե այդքան անկեղծ եք ինձ հետ, ապա ասացե՛ք, իսկ հայե՞րը... Ի՞նչ էր պատահել, որ թուրքերն այդպես վարվեցին նրանց հետ: Եվ ինձ չասեք, թե ճիշտ չէ, քանի որ ինքս եմ ականատես եղել:

Քեմալ Մահմուդը խորը հոգոց հանեց: Ապակիների հետևից երևում էր, որ Լոնդոնում ձմռան բարակ ու ցուրտ անձրև էր մաղում:

- Հայե՛րը... Դուք ինձ դժվար հարցեր եք տալիս, սակայն ես չեմ խուսափի պատասխանելուց,- հանգիստ շարժվեց իր բազկաթոռին,- նախ ասեմ, որ մի հայուհու զավակ եմ, անշուշտ՝ մուսուլմանուհու: Նա մտավ հորս տուն, երբ տասնվեց տարեկան էր, իսկ հայրս՝ հիսունին մոտ: Դուք կարող եք մտածել՝ ինչ-որ կամենաք, բայց եթե այդպես չլիներ, նա մեռած կլիներ: Բանն այն է, որ 1878 թվականին հայրս՝ որպես մուհաջիր[63] էր եկել Ստամբուլ, որտեղ մասնակցել էր Ալի Սուավիի գլխավորած ապստամբությանը: Ինչպես իր նման շատերը, այնպես էլ նա Բալկաններից Ստամբուլ էր հասել բոլորովին չունևոր, ունեցել է այն, ինչ որ հագին կար: Այնուհետև նրան ուղարկել են Մուշ, որտեղ նրան հաջողվել է տուն ձեռք բերել: Հետագայում շատ բաներ տեղի ունեցան, սակայն, պարո՛ն Հարդինգ, ես թուրք եմ: Այն ժամանակ ես ամաչում էի իմ հայ-

[63] Այդպես էին անվանում Բալկաններից Թուրքիա վերադարձող թուրք փախստականներին:

կական արյան համար: Իմ հարևանները, ընկերները ծիծաղում էին ինձ վրա: Ասում էին, որ արյունս անմաքուր է: Անմաքո՜ւր... Ես սիրում էի մորս, նա մի լռակյաց, տխուր ու աշխատող կին էր: Տունը միշտ մաքուր էր պահում, ամեն բան իր տեղում էր: Խելացի էր ու բարի: Հայրս նրա հետ խոսում էր խիստ անհրաժեշտության դեպքում. ուրիշ կին էլ ուներ: Նա շատ չոր ու դաժան բնավորությամբ մարդ էր, ինչը թերևս գալիս էր նրա դժվարին երիտասարդությունից, երբ նրանց դուրս էին քշել Սերբիայից: Ա՜հ, պատերազմը... Այն որքան վնաս է բերում մարդկանց: Ինձ հետ հայերից մի՛ խոսեք: Ես թուրք եմ: Իրենք են իրենց գլխին բերել այդ ամենը: Արյունս թուրքի է: Ամենահսկական թուրքի... Կայսրության օրոք արյունները խառնվում էին՝ ժողովուրդներ Բալկաններից՝ ալբանացիներ, հույներ, չերքեզներ... Նրանցից շատերն ընդգրկվեցին օսմանյան վարչակազմում, բոլորն էլ՝ իսլամացած: Որքա՜ն հայկական արյուն է հոսում թուրքերի երակներով: Սակայն, ի վերջո, մենք թուրք ենք, թո՛ւրք, Թուրանի զավակներ: Մնացածը կարևոր չէ: Արաբների հետ էլ է նույնը կատարվում: Ո՞ւմ որդին էր Աբդեռահման երկրորդը՝ Կորդովայի սուլթանը: Արաբ իշխանների հարեմները լի էին գերուհիներով, քրիստոնյա իշխանուհիներինը՝ նույնպես: Այո՛, քրիստոնյաներն էլ ունեն իրենց հարեմները, թեև դրանց ուրիշ անուն են տալիս: Բոլորս էլ Ադամի ու Եվայի զավակներն ենք, նույն արյան մակարդուկից:

Թոմասն ուզում էր, որ Քեմալ Մահմուդն իրեն սար ու ձոր չգցեր, թեև շարունակում էր հետաքրքրությամբ հետևել նրա խոսքին:

- Այո՛, Քեմա՛լ: Բոլորս էլ մարդ արարածներ ենք: Այդ պատճառով էլ նորից եմ հարցնում, իսկ հայե՞րը... Ինչո՞ւ են թուրքերը հայերին զանգվածաբար կոտորել ողջ Անատոլիայով մեկ: Դարեր շարունակ միասին էին կողք կողքի ապրում... Իսկ հիմա՞...

- Ուզում եք բերանիցս խոսք քաշել: Ձեզ կարող եմ հավատացնել, որ այդ ամենի հետ ոչ մի առնչություն չունեմ: Կարող էի ինչ-որ բան արած լինել, բայց չեմ արել: Սակայն դա ի վերուստ էր գրված... Ես ոչ մի հայի չեմ սպանել, թեև նրանց ատում էի: Ամեն անգամ նրանցից մեկին հանդիպելիս ես հիշում էի իմ անմաքուր արյունը: Ես թուրք եմ, պարո՛ն Հարդինգ,- Քեմալ Մահմուդը հուզված լալիս էր՝ աչքերը հառած Ռիջենթ Սթրիթի՝ գազի լապտերների լույսով ողողված անձրևի ցոլքերին,- ինչո՞ւ պետք է այդպիսի բան կատարվեր: Օսմանյան կայսրությունում բոլորիս համար էլ տեղ կար, ու բոլորս էլ միմյանց կարիքն ունեինք: Թուրքերս արտոնյալ դիրք էինք զբաղեցնում, սակայն բոլորն էլ կարող էին ապրել: Մուշում մենք ապրում էինք արաբների, ասորացի-խալդերի,

հրեաների, թաթարների, չերքեզների, քրդերի լազերի, հույների ու, անշուշտ, շատ հայերի հետ: Ոչ ոք չի կարող փոխել պատմությունը: Սակայն եթե Աբդուլ Համիդն այդքան չատեր, եթե 1877 թվականին չցրեր խորհրդարանը... 1890 թվականին սուլթանը Զեքքի փաշային հրաման տվեց և ուղարկեց՝ խստորեն պատժելու հայերին: Այո՛, պարո՛ն: Հենց այդ ժամանակ էլ ես գիտակցեցի, որ արյանս մի մասը հայկական է: Օգնեցի, որ մի քանի հայ կանայք փախչեն համիդիեներից. նրանց ուզում էին բռնաբարել ու սպանել: Կարող եմ Ձեզ երդվել, որ երբեք չէի հավատա, որ այդպիսի բան կարող էր տեղի ունենալ: 1896 թվականին ընդունվեցի «Իթթիհադի» շարքերը: Տարիներ անց, երբ Դուք ինձ հանդիպեցիք Բեյրութում, ես Մուստաֆա Թուրքիի քարտուղարն էի: Վստահելի անձնավորություն էի, և Ստամբուլից ինձանից տեղեկություն էին խնդրում տարբեր մարդիկ: Այնտեղ՝ Բեյրութում, ես ամուսնացա Թուրքիի աղջկա հետ. կինս երեք տարի անց անսպասելիորեն մահացավ: Ի՞նչ դաժան է կյանքը: Կյանքը չքնաղ դարձնող միակ բանը Միջերկրական ծովի դիմաց՝ այդ հրաշագեղ քաղաքում ապրելն էր: Ժամանակ առ ժամանակ ես պետք է լեռ բարձրանայի՝ մեր իրազեկիչների հետ տեղեկություններ փոխանակելու համար: Նախանձում էի այդ մարոնոներին, նրանց խաղաղ կյանքին, նրանց խնամված ագարակներին, խաղողի այգիներին, ցորենի դաշտերին... Իսկ գիտե՞ք՝ թե ինչու: Նրանք ապրում էին Ֆրանսիայի հետ կնքած ինքնավարության պայմաններում: Կայսրությունը նրանց կայունություն էր ընձեռում: Նրանք՝ որպես քրիստոնյա տեր ու տիրակալներ, գնում ու գալիս էին իրենց կառքերով ու ձիերով՝ անվտանգ ապրելով իսլամի մեջ: Հարգում ենք նաև Լաթաքիայի ուղղափառներին, Բեյրութի, ծովեզերքի քաղաքների հայերին: Հետո գնում էի Շուֆա: Այնտեղ ամեն ինչ այնքան էլ հանգիստ չէր: Դրուզները մեզ պակաս գլխացավանք չէին պատճառում. ապստամբ ժողովուրդ են, դժվարին բնավորությամբ ու դաշույնի գիժ: Սակայն ապրում էին այնտեղ՝ իրենց ժայռեղեն բլուրներում, նրանց համար ժամանակն ասես առաջ չէր գնում: Իշխողները մի քանի ընտանիքներ էին, հիմա էլ նույն բանն են անում այդ տարածաշրջանում: Ի դեպ, վատ չէին ապրում: Ա՜հ, այդ Լիբանանը... Կարող էր իսկական դրախտ լինել: Այնտեղ առատ ջուր կա, հավերժական ձյունն ապահովում է հորձանքներն ու գետերը, այդ բազմազան կլիման, որ ծովեզերքից սկսած հիշեցնում է արևադարձայինը, պտղատու դաշտերը: Բեկաայի հովի՜տը... Լե՜ռը... Դրուզները յուրօրինակ են, չկա մեկը, որ հասկանա նրանց դավանանքը. իսլամի տարօրինակ խառնուրդ: Մեզ համար նրանք հերետիկոսներ են՝ հրեական

և քրիստոնեական մշակույթի մնացորդներով, պարսիկների և հույների հինավուրց կրոնի որոշ նրբերանգներով: Նրանց ոչ ոք չի ըմբռնի: Նրանք միշտ կեղծում, ձևացնում են տակիայով: Ես ուզում էի կյանքիս վերջին օրերն անցկացնել այնտեղ, որ հիմա կոչում են Մեծ Լիբանան: Սակայն մենք՝ թուրքերս, հիմա միայն կարող ենք ապրել խաղաղ Թուրքիայում: Չէի ցանկանա կյանքիս վերջին օրերն անցկացնել Գերմանիայում, ինչպես հիմա ստիպված անում են թուրք զինվորականներից և քաղաքագետներից շատերը: Այժմ դա ուրիշ երկիր է, այնտեղ չեն սիրում նրանց, ովքեր գերմանացի չեն: Սակայն ես Ձեզ պատմում էի Մուստաֆա Թուրքիի մասին: Բեյրութի վալին ենթարկվում էր Դամասկոսի վալուն: Շատ տարիներ առաջ մենք հասկացանք, որ վաղ թե ուշ պետք է ստիպված հեռանանք: Դուք դա լավ գիտեք, չէ՞ որ Աղան բեյից գնեցիք նրա տունը և որոշ հողակտորներ: Դա հակասում էր մեր՝ ունեցվածքը ոչ թուրքերին վաճառելու քաղաքականությանը, սակայն այդպիսի խախտում տարբեր մարդկանց կողմից միշտ էլ տեղի էր ունենում այս կամ այն պատճառով. բոլորն էլ առաջին հերթին իրենց շահն են հետապնդում: Անվերջանալի զիջումները նյարդայնացնում էին սուլթանին ու նրա կառավարությանը: Շատ թուրքեր համոզված էին, որ Թուրքիայի վերջնական սահմանն անցնելու էր Տավրոսի լեռներով, իսկ Կիլիկիայի ծովեզերքի մեծ մասը լինելու էր հայերինը: Աղանայում նրանց թիվը զգալիորեն մեծացել էր: Այո՛, ես գիտեմ, թե հիմա Դուք ինձ ինչ եք ասելու. այն, որ դա կոտորածի պատճառ չէր կարող լինել: Սակայն ես չեմ ուզում խոսել այդ անիծված հարցի շուրջ: Թուրքերի համար Երուսաղեմի ու Դամասկոսի կորուստն անասելի նվաստացում էր: Ինձ կասեք, որ ի վերջո կարողացանք պահպանել Անատոլիան, Փոքր Ասիան ու Ստամբուլը, բայց թուրքերս, պարո՛ն Հարդինգ, շատ ավելին ենք կորցրել, քան իմ թվարկածը: Կորցրել ենք մեր արժանապատվությունը, և առնվազն մեկ դար կտևի, մինչև կարողանանք այն վերականգնել:

Քեմալ Մահմուդը դեմքը ծածկեց ափերով: Թոմասը հասկացավ այդ մարդու տառապանքը, ում ցավ էին պատճառում թե՛ թուրքական պատվախնդրության կորուստը, թե՛ կատարված եղեռնագործությունը:

Նա ասում էր, որ ինքը թուրք է, բայց եթե նայեր իր հոգու խորքը, գուցե հիշեր իր հայուհի մոր տխուր աչքերը:

32. ՃԻՇՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ
ՄԱՅԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1924թ.

Մայիսին Թոմասը վերադարձավ Բեյրութ: Սարան ու Էթելը ժամանելու էին դասընթացի ավարտին՝ հունիսի վերջին: Ստիպված համաձայնել էր ընդունել Մեծ Լիբանանում բրիտանական հյուպատոսի պաշտոնը: Նրան խոստացան, որ պաշտոնավարումը մի քանի ամսվա հարց է լինելու: Նա Բարձրագույն կոմիսար Վեյգանի հետ հանդիպեց արաբների բարձրացրած խռովության թեժ պահին, որը տեղի էր ունենում ոչ միայն Դամասկոսում: Անգլիացիները հարկադրված էին զորքեր ուղարկել, բայց այդ քաղաքը վերահսկելը հեշտ չէր, ըստ այդմ՝ գործեցին դաժանորեն: Մոտ հարյուր մարդ զոհվեց: Ըստ ֆրանսիացիների՝ զոհերի թիվը քսանհինգից մի փոքր ավելին էր, սակայն Երուսաղեմի բրիտանական հրամանատարությունը հստակ տվյալներ ուներ: Խռովությունը կարող էր պայթուցիչի վերածվել ողջ Մերձավոր Արևելքի համար, բայց ոչ ոք չէր ուզում առկա խնդիրներին նորն ավելացնել:

Ֆրանսիացիներն անգլիացիներին մեղադրում էին ողջախոհ չլինելու համար. ինչո՞ւ Բալֆուրն ուղևորվեց Դամասկոս: Մի մարդ, ում ստորագրած հռչակագիրը հրեաների առաջ բացեց Պաղեստինի դռները: Բոլոր արաբների համար նա առաջին մեղավորն էր. մարդ, ով իր բարեկամների՝ լորդ Ռոտշիլդի և սըր Հերբերտ Սամուելի միջոցով բորբոքել էր սիոնիստական շահերը: Բալֆուրի՝ Դամասկոսի հյուրանոցներից մեկում գտնվելը վառոդի հոտի պես տարածվեց քաղաքով մեկ, ու հազարավոր արաբներ իրենց զայրույթն արտահայտեցին՝ քարեր շպրտելով, սպառնալով ինքնադատաստանով, եթե համարձակվի շրջել քաղաքում, ինչպես որ մտադրվել էր: Եթե այդ ամենը բրիտանացիների մեղքով էր, ապա պետք է ֆրանսիացիներին օգնեին, որպեսզի կարգավորեին իրավիճակը: Դա անհնարին էր, անկարգությունները շարունակվում էին, և Թոմասը ստիպված հանդիպեց փաշա ալ-Ատրաշին ու արաբ այլ առաջնորդների, ովքեր ահավոր զայրացած էին ֆրանսիացիների ու անգլիացիների վրա:

Թոմասը Բեյրութ վերադարձավ բավականին ծանր ապրումներով: Օրեցօր ակնհայտ էր դառնում արաբների, նույնիսկ Մեծ Լիբանանի բնակչության զայրույթը: Նրանք իրենց ելույթներում սպառնում էին ավելի մեծ խռովությամբ: Արաբները հասկացել էին, որ իրենց ոչինչ չէր խանգարում իշխող տերությունների դեմ դուրս գալուն: Օսմանյան տիրապետության ժամանակ դա չարեցին: Իսլամի ներսում ինչ-որ բան էր տեղի ունենում: Թոմասը համակվեց տագնապով: Ոչ ոք նրանց չէր կա-

րող կանգնեցնել, երբ իրենց մեծ, կանաչ դրոշները ձեռքերին՝ բղավում էին «Ալլահ Աքբար, Ալլահ Աքբար»: Ի՞նչ տեղի կունենար ապագայում:

Չնայած այդ ամենին՝ ամառն անցավ ավելի հանգիստ, քան սպասում էին: Երեքով՝ Թոմասը, Սարան ու Էթելը, գնացին Բաալբեկ, իսկ հետո վերադարձան ծովեզերքով: Շրջագայությունը հուզումնալից էր. Էթելը գիտեր, որ իր մայրը հատուկ ուշադրությամբ էր վերաբերվել այդ վայրերին, ու հորը շարունակ հարցեր էր տալիս: Սարան, հոր և աղջկա մտերմիկ խոսակցությունը չխանգարելու նպատակով նրբանկատությունն դրսևորելով, որոշ պահերի, իբր ինչ-որ բանով հետաքրքրվելով, մի կողմ էր քաշվում՝ նրանց մենակ թողնելով:

Ոչ միայն Բեյրութը, այլև Մեծ Լիբանանի բոլոր բնակավայրերն էլ օրեցօր ընդարձակվում էին այնպիսի արագությամբ, որն անհանգստացնում էր ֆրանսիական վարչակազմին: Շատ հայեր իրենց համար նոր տներ էին կառուցում, հիմնում էին իրենց գործը, ինչը, անշուշտ, ինչ-որ առումով շարժում էր մարոնների և ուղղափառ հույների նախանձը: Նրանք տեսնում էին, թե ինչպես են նոր եկածները հաստատվում, նկատում էին, որ բանիմաց են, ընդունակ և միշտ որևէ ելք են գտնում՝ իրենց առևտրական գործարքներն իրականացնելու համար: Ընդ որում՝ հայերը դատարկաձեռն չէին գալիս: Եթե անգամ մեկ լումա չունեին, ապա իրենց գործերը կարգավորում էին՝ վարկ վերցնելով այլ հայերից կամ նոր բացված բանկերից, որոնք փորձում էին նոր գործարքներ կնքել: Հայերը ներմուծման ու արտահանման գործի իսկապես հմուտ մասնագետներ էին:

Ծովեզերքի հարթավայրերում ծաղկեց արդյունաբերության նոր ճյուղը՝ ծխախոտի մշակումը: Այն՝ որպես հումք, մշակման համար այլևս չէր արտահանվում Եգիպտոս, այլ այդ նպատակով կառուցում էին նոր ձեռնարկություններ: Բացվեցին նաև նոր քարհանքեր, հանքարդյունաբերական և մանածագործական ձեռնարկություններ:

Մրցակցությունը դաժան էր, թեև հայերն անկեղծորեն խոստովանում էին, որ մարոնները երկար ճանապարհ են անցել, ու «փյունիկեցիները» (ոչ վիրավորելու մտադրությամբ հայերն այդպես էին նրանց անվանում) ունեն բացառիկ խելք: Դա նորություն չէր: Արտագաղթած լիբանանցիներին կարելի էր հանդիպել Միացյալ Նահանգներում, Մեքսիկայում, ողջ Լատինական Ամերիկայում և Եվրոպայի մեծ մասում: Որտեղ էլ որ գտնվեին, նրանք բիզնեսի ասպարեզում աչքի էին ընկնում իրենց մեծ կարողությամբ ու գումար վաստակելու հոտառությամբ՝ մշտապես առատաձեռն լինելով Լիբանանում գտնվող իրենց ընտանիքների և արտեր-

կիր եկած այլ լիբանանցիների հանդեպ:

Թոմաս Հարդինգը հարգում էր կյանքն ընկալելու այդ կերպը: Փյունիկեցիներն իրենց աշխատունակության մշակույթի հետքերն էին թողել ողջ Միջերկրական տարածաշրջանում՝ սկսած իրենց երեք հինավուրց քաղաքներից՝ Բիբլոսից, Սիդոնից ու Տյուրոսից: Իրենց բազմաթիվ գաղութներից և ձեռնարկություններից նրանք այնտեղ էին տարել առևտրի արվեստը: Նրանց «ցածրադիր հողերում»՝ Քանանում, ի հայտ եկան այբուբենը և տառերի անունները: Այդ ամենը սոսկ հարգանքի տուրք չէր պատմությանը: Երբ Թոմասը քայլում էր Բեյրութի փողոցներով, տեսնում էր, թե ինչպես են բոլորը զբաղվում իրենց գործերով: Եվրոպական ոճով հագնված այդ առևտրականները՝ համարյա միշտ սև ու սպիտակ վերնաշապիկներով ու թիթեռնիկ-փողկապներով, իրենց խանութների առջև նստած, երբեմն ցուցադրում էին ատամնաշարի ոսկեզօծ մասը, իսկ առավելապես՝ իրենց շողշողացող մեծ ոսկյա ժամացույցը՝ որպես իրենց կարգավիճակի խորհրդանիշ: Երբեք անգործ չէին մնում: Քարավաններն արտասովոր ապրանքներ էին բերում հեռավոր երկրներից: Բարեկարգ խճուղիների ու բենզինի պակասի պատճառով դեռևս հազվադեպ էին երևում անապատի խորքը գնացող բեռնատարներ: Վարձում էին որևէ նավ ու իրենց ապրանքները տանում Հալեպ, Դամասկոս, նույնիսկ Բաղդադ կամ մասնակցում էին ֆինանսական որևէ գործարքի, աշխատում նորաբաց բանկերից որևէ մեկում: Ընդ որում՝ բանկերը հիմնվել էին դեռևս պատերազմից առաջ և արդեն ճյուղավորվել ողջ Լիբանանով ու Սիրիայով մեկ:

Եթե փյունիկեցիները եղել էին հին ժամանակների ամենահարուստ ժողովուրդը, ապա Մեծ Լիբանանի բնակիչները փորձում էին նմանվել նրանց: Դա դժվարին մրցակցություն էր, քանի որ ոչ ոք չէր ցանկանում հետ մնալ: Դա բարգավաճման ժամանակաշրջան էր, երբ ամեն ոք անում էր այն, ինչ կարող էր: Տղամարդիկ անդադար, գիշեր-ցերեկ առևտուր էին անում, կանայք տան հոգսերով էին զբաղվում և, ի տարբերություն մուսուլման կանանց, նաև փողոց էին դուրս գալիս: Երեկոյան զբոսանքներին նրանք, իրենց ամուսիններին թևանցուկ արած կամ զավակների ընկերակցությամբ, քայլում էին հպարտության ու արժանապատվության զգացումով: Ի՞նչ հարկ կար այդքան աշխատելու, եթե տվյալ անձը մյուսներին չպետք է ցույց տար, թե ինչի տեր է դարձել: Լիբանանցու համար, անկասկած, ընտանիքը լավագույն ներդրումն էր:

Նրանք վախենում էին, որ հանկարծ չկրկնվի Փյունիկիայի ժառանգորդի՝ վեհաշուք ու նշանավոր քաղաք Կարթագենի ճակատագիրը:

Կատոն Ավագը «Կարթագենը պետք է կործանվի» արտահայտությունն այնքան կրկնեց հռոմեական Սենատում, մինչև որ հասավ այն բանին, որ կարթագենյան քաղաքակրթությունն իսպառ վերացավ: Մեծ Լիբանանի բնակիչները նույն բանն էին մտածում, երբ Ջեմալ փաշան կախաղան հանել տվեց նրանց, ովքեր ցանկացել էին օսմաններից անկախանալ:

Սակայն նրանք այնքան չէին տագնապում թուրքերից, որոնց լավ էին ճանաչում, որքան նոր Հռոմ կոչվելու նկրտումներ փայփայող Բեռլինից: Հենց այնտեղ էին կռել Լեռնային Լիբանանի, Ծովեզերքի, Մեծ Սիրիայի, ինչպես նաև Պաղեստինի ճակատագիրը: Հատկապես մարոնները, լինելով «Լևանտի ֆրանսիացիներ», վախենում էին գերմանական մշակույթին դեմ հանդիման դուրս գալուց: Քաղաքակրթությունների բախման դեպքում մարոնների բախտը չէր բերի:

Բժիշկ Թաբիթը դարձավ Թոմասի խորհրդատուն այն դեպքերում, երբ արծարծվում էին լիբանանյան աշխարհի ներքին հարցերը: Որպես բժիշկ՝ նա շատերին էր ճանաչում: Շատ հիվանդներ էին դիմել նրա օգնությանը, կամ ինքն էր գնացել նրանց տները, և տարիների ընթացքում Բեյրութից ու նրա արվարձաններից բժշկին դիմածների թիվը հասել էր հազարների: Անհնարին բան էր, որ նա անցներ որևէ թաղամասով և հանդիպեր մեկին, ով նրան չճանաչեր: Դա պայմանավորված էր նաև նրա քաղաքական գործունեությամբ, քանի որ օսմանների հեռանալուց առաջ նա վարչակազմի առջև հանդես էր գալիս որպես մարոնների ներկայացուցիչ: Չէր մոռանում, որ Ջեմալ փաշան իրեն համարյա կախել էր տալիս, երբ փորձեց համառորեն ու հախուռն ձևով պաշտպանել մի քանի հոգու, ովքեր, ի վերջո, կախաղան բարձրացան, ինչպես Ռեֆիկ Ռիզկ Սելումը և Ժորժի Հադդադը:

- Ջեմալ փաշան դատավորներից պահանջեց, որ մահվան դատապարտեն: Գիտե՞ք՝ թե ինչու: Նրա հետևում կանգնած գերմանացիները քաշում էին թելերը: «Լամարկազի»-ի անդամներն այն ժամանակ ուզում էին ստեղծել արաբական պետություն, մինչդեռ պրուսացիները ցանկանում էին պահպանել Օսմանյան կայսրությունը: Կարծում էին, թե բրիտանացիները և նույնիսկ ֆրանսիացիները կարող էին ազդեցություն ունենալ արաբների վրա և ձախողել իրենց ռազմավարական ծրագիրը: Ինչպե՞ս թույլ կտային, որ Պաղեստինը, Միջագետքն ու Սիրիան անջատվեն Օսմանյան կայսրությունից: Ոմանց արտաքսեցին՝ ուղարկելով Անատոլիայի խորքը: Սիրիացու կամ լիբանանցու համար դա սարսափելի պատիժ էր, քանզի նրանք համոզված էին, որ Աստված

Լիբանանը՝ այս հրաշքը, արարել է իրենց համար: Հարցրե՛ք մեր ընդհանուր բարեկամ Ամունին, ում մի քանի տարով ուղարկեցին Անատոլիայի լեռները՝ կորած մի տեղ: Հիշել անգամ չէր կամենում: Օսմանյան կառավարությանը գերմանացիներն էին թելադրում, թե ինչ քաղաքականություն վարի: Բացարձակապես վերահսկում էին արտաքին քաղաքականության, բանակի և ֆինանսական հարցերին առնչվող վարչական բոլոր գործողությունները: Բեռլինը բոլոր հարցերի առումով իրազեկված էր, և գերմանական կառավարության մեղսակցությունը՝ կապված Փոքր Ասիայի հույների, մանավանդ հայերի կոտորածների հետ, ահավոր էր: Գերմանացի դեսպան ֆոն Վանգենհեյմը կայսրից ուղղակի հրամաններ ուներ և հետևում էր, թե ամեն օր ինչ էր տեղի ունենում Թուրքիայում: Գերմանացիներն այդ մասին ժողովրդին չէին պատմում, սակայն իրենց կարծիքով՝ ճիշտ քայլեր էին անում՝ իրենց կայսրությունն ունենալու համար: Եվ Թուրքիան կդառնար Ասիայի դարպասը: Թուրքերն իրենց հերթին կլինեին այն սուրը, որով Գերմանիայի համար կնվաճեին վիթխարի տարածքներ: Իմ բարեկամներից մեկը Կոստանդնուպոլսում էր այն օրերին, երբ ուղեղի արյան զեղումից մահացավ գերմանացի դեսպանը: Իմ այդ ընկերը պատմության պրոֆեսոր էր ու միշտ ինձ ասում էր, որ գերմանացիների համար իսլամի դուռը բացեց ոչ այլ ոք, եթե ոչ Գյոթեն, ով կարդաց Շեհերեզադեի «Հազար ու մեկ գիշեր»-ը, որն իր հետքը թողեց նրա ողջ կյանքի վրա: Նաև կարդաց և ուսումնասիրեց Ղուրանը, որն արտացոլվեց գերմանական մշակույթում: Դեսպան Վանգենհեյմի թաղումը վերածվեց շատ ավելի նշանակալից երևույթի, քան կարող էր լինել օսմանա-գերմանական պետության հուղարկավորությունը: Թալեաթը՝ վարչապետը, ուզում էր ցուցադրել, թե որքան խորն էին երկու երկրների միջև հարաբերությունները, պայմանագրերի մակարդակը, սակայն չխոսեց իր և դեսպանի միջև տեղի ունեցած գաղտնի զրույցների մասին, որոնց ընթացքում համաձայնության էին եկել, որ թուրքերն իրենց ձեռքերին ազատություն կտան ու «կտնօրինեն» քրիստոնյա փոքրամասնությունների ճակատագիրը՝ բռնագաղթ, զանգվածային բնաջնջում, պատմական հիշողության ոչնչացում... Եվ այդ ամենի ականատեսը լինելով՝ Գերմանիան կլռի, ոչ մի մեկնաբանություն չի անի, ընդհակառակը՝ միշտ կպաշտպանի իր դաշնակցին՝ Թուրքիային: Նրան փող կտա, շա՜տ փող, տեխնոլոգիա, նավեր, սուզանավեր, նորագույն զենքեր, Գերմանիայում ղեկավարների քաղաքական դասընթացներ և հրահանգավորում կկազմակերպի, պատերազմական գործողությունների համար անհրաժեշտ սպառազինություն ու ռազմական աջակցություն, զինվորներ, պարեն կտրամաղրի, տնտեսական պայմանագրեր

կկնքի, անհրաժեշտ տեխնիկական զինում կիրականացնի, որպես կայսեր թագի ամենաթանկարժեք քար՝ Բեռլին-Բաղդադ երկաթուղին կկառուցի: Նաև հանդես կգա ակտիվ քարոզչությամբ, գյուղատնտեսության ոլորտի որակյալ մասնագետներ, գերմաներենի ուսուցիչներ, հետախուզության ծառայողներ, քաղաքական ոստիկաններ և լրտեսներ կպատրաստի: Այդպիսով Գերմանիան ցանկանում էր նվաճել Ասիան, իսկ Թուրքիան՝ ժամանակակից երկիր դառնալ և ապահովել իր պանթուրանական ապագան: Մեկը մյուսին արժեն: Թուրքիան թուրքերի համար է, մնացածները, այդ թվում՝ հայերը և մանավանդ հայերը, կվոխարինվեն թուրքերով կամ թրքացածներով: Երբ Վանգենհեյմը հասկացավ, որ Թալեաթն իրեն ակնարկում էր միլիոնավոր մարդկանց ֆիզիկական բնաջնջման մասին, աչքն անգամ չթարթեց: Զուտ պրուսական ձև՝ կատարել ցանկացած կարգադրություն՝ ի օգուտ Գերմանիայի բարգավաճման: Նրանց համար ռազմամոլությունն իրենց նպատակին հասնելու ամենակարճ, ամենաարագ և արդյունավետ ուղին էր, որտեղ թերևս տեղ չունեին երկխոսությունն ու ողջախոհությունը: Հիմա հասկանո՞ւմ եք, թե ինչու Ջեմալ փաշան մահվան դատապարտեց այդ մարդկանց: Նա հեռագիր ուղարկեց ոչ թե Կոստանդնուպոլիս, այլ Բեռլին: Այնտեղից էին նրա որոշմանը հավանություն տալու. այդպես էլ եղավ:

Թաբիթը գերմանացիների նկատմամբ մեծ համակրանք չէր տածում: Նա նրանց տեսել էր Բեյրութի հիվանդանոցում և չէր ուզում, որ այն, ինչ տեղի էր ունեցել, նորից կրկնվեր: Նրա մտերիմ ընկերը՝ բժիշկ Բողոսյանը, նրան պատմել էր Հալեպում իր տեսածի մասին, թե հայերի նկատմամբ իրականացված սպանդի ժամանակ ինչպես էին իրենց պահել գերմանացիները՝ չհաշված չնչին բացառությունները: Նա ոչ մի կերպ դա չէր կարողանում հասկանալ: Մի՞թե երկու կողմերն էլ քրիստոնյաներ չէին: Այդուհանդերձ, հայերի դեպքում օսմանյան բանակի գերմանացի սպաների պահվածքը սահմռկեցուցիչ էր: Բոլորին էր հայտնի, որ Գերմանիայից ուղարկել էին դիակիզարաններ՝ մարդկանց աճյուններն անհետացնելու համար:

Երբ ամառը մոտենում էր ավարտին, հաճախակի դարձան լուրերն այն մասին, որ Դամասկոսում ֆրանսիացիների ու արաբների միջև լարվածության աճը հանգեցրել է բողոքի ցույցերի բռնկումների, ինչը տարածվել է ողջ Սիրիայով մեկ: Այդ ցույցերն այնքան էին նյարդայնացրել ֆրանսիացի կառավարչին, որ կանչեց Թոմաս Հարդինգին՝ նրան մեղադրելով այն բանի համար, որ բրիտանացիները երկակի խաղ են խաղում: Թոմասը նրան պատասխանեց չոր քաղաքավարությամբ: Դա

անգլիացիների խնդիրը չէր, այլ ֆրանսիացիների ոչ ճիշտ գործելակերպի արդյունքը, քանի որ նրանք, մյուս համայնքների հետ համեմատությամբ, շարունակում էին առավել բարձր դասել մարոնների հետ ունեցած իրենց հարաբերությունները:

Սեպտեմբերի կեսերին Էթելն ու Սարան Բեյրութից ուղևորվեցին Անգլիա: Թոմասը նրանց հետ նույնպես պետք է մեկներ, բայց վերջին պահին որոշեց մնալ Բեյրութում՝ խոստանալով հնարավորինս շուտ նրանց միանալ Լոնդոնում: Սակայն Լոնդոնում ապրելը Թոմասի սրտով չէր:

Երբ որևէ մեկն ինչ-որ ժամանակ ծառայել է հետախուզությունում, այլևս անհնարին է այնտեղից դուրս գալը: Նյումանը դրա ապացույցն էր. նա մնում էր նույն ակտիվ մարդը, թեև ամեն անգամ Թոմասին հանդիպելիս հավատացնում էր, որ ցանկանում է վերադառնալ ու առանձնանալ անգլիական իր կալվածքում: Դրանք սոսկ խոսքեր էին, այդ մարդը մահանալու էր ոտքի վրա:

Թոմաս Հարդինգը Վեյգանի վստահելի մարդու՝ ֆրանսիացի գնդապետ Պիեռ Մարտենի ուղեկցությամբ գնաց խոսելու Շուֆա տարածաշրջանի դրուզների առաջնորդներից մեկի՝ ոմն Ջումբլաթի հետ: Ֆրանսիացիներն ուզում էին ցույց տալ, որ կարևորում են անգլիացիների հետ ունեցած իրենց փոխգործակցությունը: Անգլիացիներն էլ փոխադարձաբար ցանկանում էին իրենց բարեկամներին ու դաշնակիցներին հավատացնել, որ ոչ մի գաղտնի դավեր նրանց դեմ չեն նյութում:

Դրուզները եզակի մարդիկ էին, թեև եվրոպացիների կարծիքով՝ նրանց խոսքին չէր կարելի հավատալ: Ո՛չ մուսուլմաններն էին դրուզներին հավատում, ո՛չ էլ՝ քրիստոնյաները. երկուսն էլ նրանց համարում էին հերետիկոսներ:

Երբ բարձրացան Շուֆայի լեռները, Մուխթարա կոչված մի բնակավայրի մոտ տեսան, թե մի քանի ձիավորներ ինչպես են հեռվից իրենց հսկում: Դրուզները ողջամիտ մարդիկ էին, մանավանդ՝ ֆրանսիացիների հետ ունեցած դժվարին պատմությունից հետո: Չէին ցանկանում, որ դա դարձյալ կրկնվեր: Նրանք հասան հանդիպման վայր՝ ճանապարհների մի խաչմերուկ, որտեղով ցած էր թափվում լեռնային ջրերի հորձանքը: Ասես ոչ ոք նրանց չէր սպասում, մինչև որ մի խումբ հեծյալներ իջան մոտակա զառիվայրից: Անհնարին էր թվում, որ ձիերը կհամարձակվեն իջնել այդ գահավեժ ճանապարհով, սակայն մի քանի րոպե անց անխնամ մորուքով, խորաթափանց հայացքով և ավանդական ոճով հագնված մի մարդ մոտեցավ նրանց: Խոսեց շատ գրագետ արա-

բերենով, ինչը մատնում էր նրա ուսյալ լինելը.

- Աստծո անունից բարի գալուստ ձեզ: Ես էմիր Ջումբլաթն եմ ու ներկայացնում եմ Շուֆայի դրուզներին, թեև կան նաև ուրիշները, ովքեր դա թերևս ավելի արժանավայել կանեին, քան ես:

Էմիրը մատնացույց արեց Թոմաս Հարդինգին.

- Քեզ ճանաչում եմ, անգլիացի՛: Տարիներ առաջ մենք հանդիպել ենք: Թերևս Դուք էլ գնդապետ Մարտենն եք՝ Ֆրանսիան ներկայացնողը:

Մարտենը գլխով համաձայնության նշան արեց: Նա շարունակ զսպում էր իր ձիուն, որը նյարդայնորեն մի կողմից մյուսն էր շուռ գալիս:

- Գնդապե՛տ, փոխանցե՛ք ձեր Բարձրագույն կոմիսարին, որ մենք Ֆրանսիայի դեմ ոչինչ չունենք: Սակայն մեր կարծիքով՝ Ֆրանսիան շատ բան ունի մեր դեմ: Դարեր շարունակ մարոնների հետ ապրել ենք Լեռնային Լիբանանում, հետևաբար մենք պետք է նրանց հետ հավասար օգտվենք նույն իրավունքներից: Այնինչ Ֆրանսիան Սուրբ Մարոնի հետևորդներին ընդունում է որպես սիրելի որդյակների ու նրանց շնորհում է այն ամենը, ինչ նրանք խնդրում են: Փոխարենը մեզ՝ դրուզներիս, նայում է կասկածանքով: Կրկնում եմ՝ Ֆրանսիայի հետ մենք ոչ մի ընդհարում չենք փնտրում, սակայն չենք կարող հանդուրժել, որ մեզ վերաբերվեն այնպես, որ ասես գոյություն չունենք: Այս լեռը դրուզներինն է, և մենք այստեղ ենք վաղուց ի վեր՝ նախքան մարոնների գալը, այնպես որ՝ ամեն ինչից վեր պաշտպանելու ենք մեր իրավունքները: Հաղորդե՛ք Ֆրանսիայի Հանրապետության պարոն նախագահին, որ եթե ձգտում է Լիբանանում խաղաղություն հաստատել, ապա դրուզներին վերաբերվի այնպես, ինչպես դա անում է մարոնների պարագայում: Մեծ Լիբանան ստեղծելիս նա հաշվի չառավ մեր կարծիքը: Մենք նախընտրում էինք դրուզական Ջեբելի լիակատար անկախությունը:

Գնդապետ Մարտենը բարձրացրեց ձեռքն ու պատասխանեց ֆրանսերեն:

- Էմի՛ր Ջումբլաթ: Ֆրանսիան այստեղ է գտնվում ոչ որպես կեղեքիչ, այլ որպես ազատարար: Մենք օսմանների նման չենք: Ջանում ենք առաջադիմություն և հավասարություն բերել բոլորի համար: Ֆրանսիայի համար մարոնների ձայներն ավելի արժեքավոր չեն, քան դրուզներինը, ալավիներինը կամ սուննիներինը: Մենք բերում ենք հավասարություն, եղբայրություն և ազատություն: Ես Ձեզ լսում էի առանց ընդհատելու: Արդյոք թուրքերի հետ նո՞ւյնն էր: Իմ կարծիքով՝ ո՛չ,- գնդապետը մի պահ դադար տվեց՝ կոշտացնելով ձայնը,- էմի՛ր Ջումբլաթ, Ֆրանսիան սպառնալիք չի ընդունում ո՛չ դրուզներից, ո՛չ էլ՝ մեկ ուրիշից: Մեր դեպքում չսխալվեք: Մենք նախընտրում ենք երկխոսության ուղին,

սակայն եթե հարկ լինի դիմել այլ... Չենք երկմտի: Մենք խնդիր ունենք ոչ թե Շուֆայում, այլ Հորանում: Եթե դրուզները, սուննիները կամ հենց մարոնները համարում են, որ Ֆրանսիան չի կարող կատարել Ազգերի լիգայի կողմից իրեն տրված հանձնագրի պարտավորությունները, ապա նշանակում է, որ մեզ չեն ճանաչում, հետևաբար կհաշտվեն դրա հետևանքների հետ:

Էմիր Ջումբլաթը բարկությունից դողում էր: Ոչ ոք՝ ո՛չ Բարձրագույն կոմիսարը, ո՛չ էլ Ֆրանսիայի Հանրապետության նոր նախագահը, չէր համարձակվի այդ տոնով խոսել որևէ դրուզ էմիրի հետ:

- Ամենակարող Աստված է վկա, որ ես այստեղ եմ եկել բարի մտադրությամբ,- էմիրը պատասխանում էր հրաշալի ֆրանսերենով,- ես էլ եմ ձեզ նույն բանն ասում: Եթե Ֆրանսիան այլ համայնքների հետ չընդունի դրուզների ձայնի հավասարության իրավունքը, ապա ստիպված կլինի կրել դրա հետևանքները:

Էմիրը ժամանակ չտվեց, որ Մարտենը նրան պատասխանի. խթանեց ձին և իր յուրայինների ուղեկցությամբ ուղղվեց դեպի այն զառիթափը, որով իջել էին: Թոմասը մտածեց, որ դժվար էր լինելու հաղթահարել այդ վերելքը, սակայն բոլոր հեծյալներին անհավատալիորեն դա հաջողվեց, թեև վերջին հեծյալն ընկավ բերանքսիվայր, սակայն անմիջապես վեր ելավ, մի քիչ հետ գնաց, ու այդ անգամ ձին բարձրացավ ուղղահայաց պատով:

Գնդապետ Մարտենը մի պահ լուռ մնաց:

- Այդպես էլ կլինի: Թոմա՛ս, Դուք մեր բարյացակամության ականատեսը եղաք: Ո՛չ այդ դրուզներն են ի վիճակի փոխել մեր ընդունած համաձայնագրերը, ո՛չ էլ՝ մենք, ինչ ուզում է՝ թող լինի: Հաղորդե՛ք Ձեր կառավարությանը, որ նորընտիր նախագահ Դումերգի[64] ցանկությունը բարգավաճ ու ազատ Լիբանան ստեղծելն է: Ոչ ոք չի կարող խանգարել դրան, քանի որ չի կարելի ժամանակի ընթացքին հակառակ գնալ: Բացի անհեթեթ լինելուց՝ դա անհնարին է:

Թոմասը համաձայնեց: Նա իր անձնական փորձով գիտեր բոլորին գոհացնելու հետ կապված մեծ դժվարությունները: Աշխարհն արագ փոփոխվում էր, սակայն գնդապետի խոսքերից անկախ՝ Թոմասն այնքան էլ վստահ չէր, որ աշխարհը փոխվում էր ճիշտ ուղղությամբ: Հիշեց Ղուրանի առաջին սուրահի 6-րդ այաթը. «Առաջնորդի՛ր մեզ ճիշտ ուղով»: Այդ օրերին վերընթերցում էր մուսուլմանների Սուրբ գիրքը՝ ջանալով հասկանալ դրա խորիմաստությունը:

[64] 1924-1931թթ. Ֆրանսիայի Հանրապետության նախագահ:

33. ԳԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ՏԱՐԱԾՔԸ
ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ, 1924թ.

1924 թվականի հոկտեմբերի սկզբներին, երբ Ավգուստուս Նյումանը վերադարձավ Բեյրութ, ցանկություն հայտնեց, որ Թոմասն իր հետ այցելի Ֆադի Աբու Ջամիլ թաղամասում գտնվող սինագոգ: Թոմասը զարմացավ, քանի որ Նյումանին աստվածավախ հրեա չէր համարում, սակայն նրան ընկերակցելու առումով ոչ մի անպատեհություն չկար: Վերջին հաշվով Լիբանանում գոյություն ուներ մշակութային ավանդություն. բոլոր դավանանքներն էլ ընդունելի էին: Ցանկացած մարդ, ինչ հավատք էլ ունենար, մերժված չէր լինի: Հրեական համայնքն էլ, որում ընդգրկված էին ոչ միայն Բեյրութի, այլև Դեյր ալ-Քամարի, Բհամդունի, Հազբայայի և այլ բնակավայրերի հրեաներ, կազմում էր շուրջ տասներկու հազար մարդ:

Քայլեցին մինչև Ֆադի Աբու Ջամիլ և սինագոգի դռան մոտ հանդիպեցին Լիբանանում հրեական համայնքի նախագահ Ժոզեֆ Դ. Ֆարչիին և Ժոզեֆ Դիչի բեյին: Նրանք ջերմորեն ողջունեցին Նյումանին: Մտան սինագոգ, որն իր թուրքական գորգերով, բրոնզե մոմակալներով ու ձեթի ճրագներով հինավուրց տպավորություն էր թողնում: Ընդ որում՝ տեղադրվել էին նաև էլեկտրական լամպեր, որոնք պետք է միանային, երբ Բեյրութում իրականացվող էլեկտրաֆիկացիան հասներ այնտեղ: Պատի հին ժամացույցը միակ ժամանակավրեպ իրն էր, որն իր միալար թիկ-թակով խախտում էր սինագոգի ներքին լռությունը: Սինագոգում նրանց սպասում էր համայնքի ռաբբին՝ Շապտայ Բահիբուտը, ով երկուսին էլ ողջունեց որպես վաղեմի բարեկամների:

Թոմասը մեծ կարծիք ուներ հրեաների մասին. նրանք հստակ գաղափարներով և մանավանդ իրենց նպատակներին հասնելու համար, որքան էլ որ դժվարին լիներ այդ ճանապարհը, չափազանց վճռական մարդիկ էին:

Ավգուստուսը Թոմասին խնդրել էր ընկերակցել, որպեսզի լիբանանյան հրեաների վիճակի մասին տեղեկանար առաջին ձեռքից: Հրեաների համայնքը վերջին տարիներին բավականին աճել էր Հունաստանից, Սիրիայից, Միջագետքից և Թուրքիայից եկածների հաշվին: Ի տարբերություն հայերի՝ այդ տարածաշրջանի հրեաները տնտեսապես բարվոք վիճակում էին: Սակայն, չնայած այդ հանգամանքին, Լիբանանում նրանց ներկայությունը որոշ խնդիրներ էր հարուցում:

Խոսքը վերաբերում էր բարգավաճ համայնքի մասին, որը կազմված

էր տարբեր երկրներից եկած հրեաներով: Նրանց տնտեսական ազդեցությունը գնալով աճում էր: Բացի դրանից՝ նրանք լավ հարաբերություններ ունեին ֆրանսիացիների հետ: Այդ մասին նշեց Ժոզեֆ Դիչին՝ խելացի մի մարդ՝ շիտակ հայացքով և հպարտ նրանով, որ հրեա էր.

- Ձեր ոտքը թող բարի լինի այս դարավոր սինագոգում՝ մի տարածքում, որը մի ժամանակ պատկանել է Իսրայելի թագավորությանը: Մեծ պատերազմը շատ հրեաների է երկրից դուրս հանել, ովքեր, դարեր շարունակ ապրելով այլ երկրներում, այժմ եկել են Բեյրութ: Գուցե մտածեք, թե խոսքը մարտավարական շարժման մասին է, այսինքն՝ կոնֆլիկտային վայրերից նրանց դուրս գալը և Պաղեստինին մոտենալը, որը պետք է հրեաների ազգային օջախը դառնա: Սակայն նրանց, ովքեր այսօր հաստատվում են այստեղ՝ Լիբանանում, թերևս այս պահին առանձնապես չի ոգևորում սիոնիստական կոչերին հետևելը: Ձեզ նրանց օրինակը բերեմ, ովքեր գալիս են Միջագետքից, Բաղդադից կամ այդ տարածաշրջանի այլ բնակավայրերից, որտեղ դրությունը շատ անկայուն է: Այնտեղ մենք մի կորած փոքրամասնություն ենք մուսուլմանական եռացող օվկիանոսում: Իսլամը խմորման մեջ է, և դա է պատճառը, որ շատերը փակում են իրենց խանութները, իրենց ունեցվածքը վաճառում են այն գնով, ինչ կտան, ու գալիս են այստեղ՝ համոզված, որ Մեծ Լիբանանն իրենց ընտանիքների համար լավագույն վայրը կլինի: Նույն բանը կատարվում է նաև Հունաստանում, որտեղ ամենամեծ հրեական համայնքը Սալոնիկում է: Սակայն այդ համայնքը սահմանափակված է, հեշտ չէ այնտեղ մտնելը, և շատերը նախընտրում են գալ այստեղ: Մյուս կողմից մեզ՝ հրեաներիս, ուրիշ աչքով են նայում այն ժամանակից ի վեր, ինչ հայտնի դարձավ Բալֆուրի հռչակագիրը: Մենք շատ վայրերում դարեր շարունակ մուսուլմանների հետ ապրել ենք որպես եղբայրներ: Ու հանկարծ դարձանք ժանտախտավոր: Չգիտենք, թե մինչև ուր կհասնի այս իրավիճակը, բայց մենք արդեն կանգնած ենք այդ խնդրի առջև: Քանի որ այստեղ ապրում են քրիստոնյաներ, տարբեր բնույթի աղանդավորներ և ամեն տեսակ մուսուլմաններ, եկող հրեաներին վատ չեն ընդունում: Բացի դրանից՝ մենք ֆինանսական միջոցներ ենք ներդնում, համագործակցում ենք զարգացման ոլորտում: Մեծ Լիբանանում հրատարակում ենք հրեական երկու թերթ՝ «Իսրայելական աշխարհ» («Al-Aslam al Israili»), մյուսն էլ ֆրանսերեն է՝ «Le commerce de Levant» («Լևանտի առևտուր»): Մեզ մոտ Պաղեստինից պատվիրակներ եկան, որպեսզի գաղթենք այնտեղ: Սիոնիստները ցանկանում են, որ Լևանտի հրեաներս հաստատվենք Պաղեստինում, որն ի վերջո դառնալու է

մեր ազգային օջախը, ինչպես ասվում է Բալֆուրի հռչակագրում: Մեր ավանդույթներով մենք ենք ամենից շատ նրանց նման: Նրանց շատ է անհանգստացնում ռուս աշքենազների և Թուրքիայից սեֆարդիների զանգվածային ներգաղթը: Սակայն այստեղ՝ Լիբանանում, մենք հանգեցինք այն մտքին, որ նախքան լորդ Բալֆուրի ծնվելը մենք դարեր շարունակ ապրել ենք այստեղ: Եվ դեռ կշարունակենք ապրել:

Նյումանն ընդհատեց Դիչիի մենախոսությունը.

- Իսկ եթե որոշ ժամանակ անց Մեծ Լիբանանում իրավիճակը բարդանա, և այստեղ նույնպես սկսեն երկրից դուրս հանել հրեաների՞ն:

Դիչին մնաց անդրդվելի.

- Մեր հոգսն Աստված կքաշի, այդ ժամանակ էլ կմտածենք, թե ինչ անենք: Լիբանանցիներին ճանաչելով՝ հուսով եմ, որ այդ օրը չի գա, ու մենք կմնանք այստեղ:

Երբ երկուսով քայլում էին դեպի Լա Կոռնիշ զբոսայգին, Նյումանը, ով առանձնապես լավատես չէր, Թոմասին ասաց.

- Ես համոզված չեմ, որ Լիբանանի հրեաներին կհաջողվի դարեդար հաստատվել այս երկրում: Սակայն եթե դեպի Պաղեստին արտագաղթը շարունակվի նույն թափով, ինչ վերջին տարիներին էր, ապա ինչպես արաբների, այնպես էլ հրեաների միջև մի ահռելի անդունդ կբացվի, որն անհնարին կլինի փակել: Ի վերջո, Դիչին ու մյուսները ստիպված կլինեն գնալ Ավետյաց երկիր: Իրենց լիբանանցի համարողները մեծ մասամբ արաբներ են ու թեև գոհ են հրեական ներգաղթից, ինչը բարձրացնում է Լիբանանի հեղինակությունն ու կշիռը, սակայն երբ որոշ ժամանակ անցնի, կուզենան, որ հրեաները հեռանան: Ճանր է այս մասին խոսելը, բայց դա այդպես է: Եթե դու հարցնես այս մարոններին (Նյումանը մատնացույց արեց խանութի մոտ խմբվածներին), ապա քեզ կասեն, որ հրեաների գալուն դեմ չեն: Անշուշտ, վերջիվերջո նրանց լուրջ մտահոգության թեման մուսուլմաններն են: Պետք է, որ թուրքերի հեռանալը հաներ լարվածությունը, սակայն այդպես չեղավ: Դամասկոսում և Հալեպում արաբ ազգայնամոլները մշտական գլխացավանք կդառնան ֆրանսիացիների համար, որոնց կարծիքով՝ արաբները շնորհակալություն են հայտնելու առաջադիմության ու ազատության կոչերի համար: Գուցե դա տեղի ունենա այստեղ՝ Մեծ Լիբանանում, բայց՝ ոչ բոլոր նահանգներում, իսկ Սիրիայում դա բացառված է:

Նյումանը, համառ ջանքեր թափելով, Թոմասին համոզեց, որ միասին գնան Միջագետք, որտեղ Նյումանը պետք է կապեր հաստատեր Քար-

բալա, Նայաֆ և ալ-Կազիմայն քաղաքների շեյխերի հետ:

Օսմանները տարածաշրջանում ստեղծել էին կլիենտելիզմի[65] և կաշառակերության փթթուն ցանց: Ֆայսալի հաշեմիթական նոր դինաստիան չուներ ո՛չ ֆինանսական և ո՛չ էլ ռազմական միջոցներ, որոնցից թուրքերն այնտեղ զուրկ չէին եղել: Մեծ Բրիտանիան տնտեսական ու ռազմական լուրջ ջանքեր էր գործադրում, որպեսզի կանխեր այդ երկրի՝ կրետների բույնի վերածվելը:

Թոմասն ընդունեց առաջարկը: Պետք է գնային ռազմական նոր ագույն՝ կրկնաթև ինքնաթիռով, որը կարող էր փոխադրել մինչև վեց ուղևոր: Թոմասը հիշեց Պաղեստինի ռազմարշավի ժամանակ իր կատարած թռիչքն ու թոթվեց ուսերը: Այլևս ոչ մի բանից չէր վախենում: Նյումանը նույնպես ինքնաթիռով թռչելու փորձ ուներ: Բացի դրանից՝ ուզում էր ամեն նոր բան փորձել:

Նրանք թռան Հայֆայից ոչ հեռու գտնվող բրիտանական ռազմակայանից: Թռչելու էին ավելի քան հինգ հարյուր մղոն, և օդաչուն՝ լեյտենանտ Մարտին Վոհը, նրանց հայտնեց, որ այդ կարգի ինքնաթիռի համար դա գրեթե առավելագույն հեռավորությունն է: Նրանց վայրէջքի համար միակ հարմար վայրը Քարբալայի շրջակայքում էր: Անապատի վրայով թռան համարյա յոթ ժամ, մինչև որ օդաչուն ցույց տվեց վառելիքի պաշարի ցուցիչը և զգուշացրեց, որ պատրաստվեն վայրէջքի: Մառախլասույզ մի ամպ շփոթեցնում ու թույլ չէր տալիս երկինքը տարբերել գետնից: Թոմասը նայեց Նյումանի դեմքին, ով պատուհանից հիանում էր քարքարոտ լեռներով, որոնք վերածվում էին ոսկեգույն ավազաբլուրների: Վերևից ժայռերն ասես ծփում էին անապատի անիրական փոշու մշուշում:

Նրանք չէին նախատեսել, որ այդտեղ վայրէջք կկատարեն, սակայն օդաչուն, ով շատ վճռական անձնավորություն էր, սկսեց իջնել՝ ավելի հարմար վայր փնտրելով: Տագնապին չտրվելով՝ նա լոնդոնյան նավահանգստային անգլերենին հատուկ փակ շեշտով ուղևորներին խնդրեց ամրացնել ամրագոտիները:

Վայրէջքն այնքան էլ վատ չէր, սակայն վերջին պահին ինքնաթիռը թեքվեց՝ ձախ թևը համարյա քսելով գետնին: Կոտրվել էր վայրէջքի անիվներից մեկը: Վերջապես ինքնաթիռը կանգ առավ, և լեյտենանտ Վոհն աճապարանքով ասաց. «Հասանք, Աստված մեծ է»: Ավգուստուսը ծուլորեն ժպտաց և գլխով համաձայնության նշան արեց: Ավիացիան

[65] Այն երևույթը, երբ աջակցում են անհատներին, քաղաքական կուսակցություններին և կազմակերպություններին՝ փոխադարձ աջակցություն ստանալու նպատակով:

առաջադիմելու համար դեռ շատ անելիքներ ուներ, այդուհանդերձ վերևից նշմարված ուղտերի քարավանով այդպիսի ուղևորությունը շաբաթներ էր տևելու:

Երբ դուրս եկան ինքնաթիռից, կանգնեցին տափարակ, քարքարոտ տարածության մեջ: Ըստ օդաչուի՝ գտնվում էին Բիր Զաիբ կոչված տեղանքում՝ Քարբալայից քսան կամ երեսուն մղոն դեպի հյուսիս: Օդաչուն ասաց, որ հարկավոր է փոխել անիվը. իհարկե, խնդիր չկար, քանի որ պահեստային երկու անիվ ուներ: Այն, ինչ տեղի ունեցավ, նրա վրա բացասական ազդեցություն չէր թողել: Չէ՞ որ ինքնաթիռը կարող էր ջարդուփշուր լինել վիթխարի անապատի որևէ անհասանելի հատվածում: Պետք է գոհ մնային ճակատագրից:

Մեկ ժամ անց սկսեցին այդտեղ հասնել բեդվիններ՝ ոտքով, ուղտով, ձիով. մարդիկ, որ հայտնի չէր, թե որտեղից հայտնվեցին: Նրանցից ոչ ոք չմոտեցավ անգլիացիներին: Այնուհետև, երբ արևն արդեն մայր էր մտնում, եկան մի քանի շեյխեր: Նյումանը հաջողացրել էր փոքրիկ սպիրտայրոցի վրա թեյ պատրաստել: Ինչ-որ տեղից նա հանեց մի քանի արծնապատ թիթեղյա ըմպանակներ և առանց հապաղելու՝ ձեռքով հրավիրելու նշան արեց երկու շեյխերի, ովքեր, մարդկանց մոտ կանգնած, լուռ նայում էին:

Նյումանը նրանց դիմեց արաբերեն.

- Աստված ողորմած է ու մեզ թույլ տվեց վայրէջք կատարել: Վաղը կփոխենք այդ անիվը, և եթե մեզ օգնեն ձեր մարդիկ, քարերից կազատենք այս բաց տարածքը, որպեսզի այստեղից ինքնաթիռն ավելի ապահով օդ բարձրանա: Հիմա մենք ձեզ ողջունում ենք և ցանկանում, որ մեզ հետ մի բաժակ թեյ խմեք: Գալիս ենք Հայֆայից, որը Պաղեստինում է՝ ծովի ափին, այս առավոտ ենք դուրս եկել:

Նյումանի խոսքերը մեծ տպավորություն թողեցին շեյխերի վրա: Մի քանիսը մոտեցան ու ձեռքերը հպեցին ինքնաթիռին:

Չնախատեսված վայրէջքի վայրը հեռու չէր այն քաղաքից, ուր ուղևորվում էին: Մարդիկ իրար լուր էին տալիս, որ այդ վայրում, որը սև երկնաքարի պես մեծ քար լինելու պատճառով հայտնի էր որպես Լուսնային ժայռակտոր, անգլիացիներ են հասել:

Շեյխերն իրենց մարդկանց ուղարկեցին գործիքների հետևից, որպեսզի վայրէջքի վայրում՝ այդ հարթ, բայց քարեղեն տարածքի վրա ճամբար խփեն: Մի քանի խարույկներ վառեցին ու դրանց շիկացած ածուխների վրա մի երկու ուլ խորովեցին՝ ի նշան բարի գալուստի: Նյու-

մանը նրանց պատմում էր վերջին նորությունները: Շեյխերը կեսգիշերին գնացին իրենց վրանները: Պայմանավորվեցին, որ կիանդիպեն հաջորդ օրը՝ իրիկնամուտին, որպեսզի հենց այդտեղ տեղի ունենա նահանգի երևելի մարդկանց հավաքը:

- Կարծում եմ, որ այս մարդիկ այնքան էլ գոհ չեն հաշեմիթ թագավորից,- սկսեց խոսել Նյումանը,- նրանք կգերադասեին ընտրել իրենց առաջնորդներից մեկին, այլ ոչ թե մեր կողմից պարտադրված մի միապետի: Ճիշտ է, նախքան թագադրումը՝ 1921 թվականին, լրացուցիչ խորհրդակցություն անցկացրինք, սակայն ինչ-որ մեկը թվերի տեղերը փոխել էր, և հասկանալի չէր, թե ինչու տեղաբնակների մեծ մասը հրաժարվում էր նրան թագավոր ճանաչելուց: Այս երկիրը՝ Իրաքը, որ վերստին կրում է իր հին անունը, Սիրիայի լրիվ հակապատկերն է: Պատմականորեն պայքար է գնում Դամասկոս և Բաղդադ քաղաքների՝ օմայանների ու աբբասյանների միջև: Այն փաստը, որ ֆրանսիացիները Դամասկոսում Ֆայսալին գահընկեց արեցին, վնասեց Բաղդադում նրա թագավոր կարգվելու նկրտումներին: Նրանց շրջանում շշուկներ են պտտվում, որ անհավատներից փախած մի թագավորի որպես մրցանակ տրվել է մի գահ, որն իրաքցիների համար շատ ավելի արժեքավոր է, քան Դամասկոսի գահը: Աբբասյանների և օմայանների միջև շարունակվում է հակամարտությունը, իսկ մենք մի մարդու կրկին կապում ենք նրանց գլխին՝ բազմեցնելով մեկ մի գահին, մեկ՝ մյուսին: Դա նրանց համար նվաստացուցիչ է, ու թեև առերես մեզ ընդունում են որպես բարեկամի, սակայն նրանց սրտի խորքում մենք տեղ չունենք: Նրանք՝ բոլորն էլ, ինչպես համոզվեցիր, սուննիներ են, իսկ շիաները Քարբալայի իրենց բարեպաշտների՝ Նայաֆի և ալ-Կազիմայնի ազդեցությամբ ավելի արմատական են: Եկել ենք իրականությունը շոշափելու, և տեսնում եմ, որ հաշեմիթներն այստեղ ապագա չունեն, առավել ևս մենք՝ բրիտանացիներս:

Թոմասը նույն կարծիքին էր, թեև չէր համարձակվում իր բարեկամի պես կտրուկ լինել: Վրան մտնելուն պես ընկավ իր ներքնակին ու անմիջապես քնեց:

Նա արթնացավ խոսակցության ձայներից ու աղմուկից: Գլուխը դուրս հանեց վրանից և տեսավ, որ մի հոծ բազմություն շրջապատել է ինքնաթիռը: Շարունակում էին գալ հարյուրավոր արաբներ՝ ոտքով, ավանակին, ձիուն կամ ուղտին հեծած: Շատերն իրենց վրաններն էին խփել ու փոքրիկ խարույկներ էին վառում՝ թեյ պատրաստելու համար, ոմանք էլ զրուցում էին ազգականների կամ ծանոթների հետ:

Նկատելով Թոմասին՝ Նյումանը ժպտաց.

- Տեսնո՞ւմ ես՝ ինչ է կատարվում: Իսկական ուխտագնացություն է, և դա այն դեպքում, որ մենք գաղտնի ենք եկել: Փա՜ռք քեզ, Աստվա՛ծ: Եթե հայտնած լինեիք մեր գալու մասին, բոլորը կգային: Հիմա մենք կփոխենք ինքնաթիռի անիվը ու այս երեկո որպես հրավիրվածներ կմասնակցենք Քարբալայի տարածաշրջանի երևելիների հավաքին:

Անիվի նորոգումը շատ ավելի ժամանակ պահանջեց, քան սկզբում կարծում էին: Մի քանի կամավորների ջանքերի շնորհիվ հաջողվեց բարձրացնել ինքնաթիռն ու տակը մի մեծ քար դնել, որ չշարժվի: Ապա մեծ դժվարությամբ հանեցին կոտրված անիվն ու փոխարինեցին նորով: Չնայած շատ եռանդ վատնեցին, բայց ամբողջովին չէր կարգավորվում: Այդուհանդերձ, լեյտենանտ Վոհի կարծիքով՝ դա բավարար էր թռչելու համար:

Քարերից մաքրել տվեցին չորս հարյուր յարդ տարածք, ինչը նվազագույնն էր հարավ-արևմուտքից փչող թեթև զեփյուռի պարագայում թռիչք իրականացնելու համար: Բոլորը սկսեցին ոգևորությամբ օգնել, երբ հասկացան, թե ինչ է իրենցից պահանջվում: Թռիչքուղու համար պատրաստվեց ոչ շատ հարթ մակերես, սակայն, լավ, թե վատ, այն պիտանի էր թռիչքի համար: Մնում էր միայն, որ տեղ հասներ Բաղդադից վառելանյութ բերող քարավանը, ինչպես որ պայմանավորվել էին Գլխավոր շտաբի հետ:

Նրանց հրավիրեցին մի անվերջանալի ճաշկերույթի, որը կազմակերպել էին տեղի բնիկները: Ստիպված էին համտեսել իրենց առաջարկված բոլոր ուտեստներից, որոնցից ամենահամեղները, ըստ արաբների, ուլերի աչքերն էին, լեզուն և ուղեղը:

Այդ տափարակի մի մասը զբաղեցրել էին սուննիները, իսկ մյուս մասը՝ շիաները: Չէին խառնվում իրար հետ, ասես գոյություն ուներ համակեցության լուռ համաձայնություն, որը երկուստեք առերևույթ հարգում էին:

Թոմասն ուներ համանման մթնոլորտում գտնվելու փորձ, սակայն այդ մարդիկ ավելի պարզունակ էին, քան սիրիացիները, թեև անապատով գնացող-եկող քարավանների շնորհիվ մշտական շփում կար երկու երկրների միջև: Օսմանյան մշակույթը Դամասկոսում և Հալեպում կրելով Եվրոպայի խորն ազդեցությունը՝ իր հետևից թողել էր կիրթ և եվրոպականացած արաբների, ովքեր, ինչպես նկատել էին ֆրանսիացիները, քաղաքականապես շատ պատրաստված էին և ամենևին ոչ հնազանդ:

Իրաքում ընդհակառակն էր, թեև մայրաքաղաքում՝ Բաղդադում, Ֆայսալի դեմ ձևավորված ընդդիմությունն ընդհանուր գծեր ուներ: Բնակչությունն էլ, մանավանդ՝ գյուղերում, շատ հետամնաց էր ու պահպանում էր տոհմական դարավոր ավանդույթները:

Ընտրյալների հավաքում ընդամենը մի բան պարզեցին, որ բնակչության մեծամասնությունը դեմ է նոր թագավորին, բրիտանացիներին, ինչպես նաև մի մասը դեմ էր մյուսին: Ընդ որում՝ ներքին խմորումներ կային ոչ միայն շիաների և սուննիների, այլև իրենց իսկ խմբավորումների միջև: Նյումանն ասաց, որ ստեղծվել է նախահեղափոխական մթնոլորտ, և շատ ժամանակ չի մնացել արյուն հեղելուն.

- Նրանք չափազանց հուզված են և արմատականորեն տրամադրված: Իմ տպավորությունն այն է, որ ալ-Աֆղանիի և մյուս առաջնորդների հեղափոխական տեսությունները սնվում են իրենց հինավուրց մշակույթից: Մեր երկիրը նույնպես, հնարավորինս աջակցելով սուննիներին, քայքայում է բնականոն հավասարակշռությունը: Մենք նպաստեցինք նոր արքային շրջապատող օլիգարխիայի[66] և նրանց ատող, բայց և կարիքն ունեցող շեյխերի միջև կլիենտելիզմի ի հայտ գալուն: Այս իրավիճակը, իմ կարծիքով, անկայուն է: Աստված ողորմած է, բայց այստեղ հարկավոր է հավելյալ ջանքեր գործադրել:

Նրանք թռան հաջորդ օրը՝ առավոտյան: Այդ ընթացքում գրեթե բոլոր արաբները գնացել էին՝ աննշան հետքեր թողնելով հանպատրաստից սարքված մեծ ճամբարից: Լեյտենանտ Վոհը դժոխային աղմուկով վեր բարձրացավ և աղոթեց, որ ամեն ինչ բարեհաջող անցնի.

- Տեսնենք, թե արդյոք տուն կհասնենք:

Թոմասը զննեց Ավգուստուս Նյումանի կիսադեմը, ով, իր կողքին նստած, աչքերը փակ երանավետ ժպտում էր: Ամեն ինչ գրված էր ի վերուստ, հետևաբար անհանգստանալու կարիք չկար: Թոմասը նայեց օդանավի պատուհանից ու տեսավ, թե ինչպես է արեգակը դուրս գալիս հորիզոնից, որտեղ գետը միահյուսվում էր ճահիճներին: Չկարողացավ իրենից վանել այն միտքը, որ գետերի միջև ընկած տարածքում՝ Միջագետքում, երբևէ հյուրընկալվել է դրախտը:

[66] Արիստոկրատական շահագործողական փոքրամասնության իշխանություն:

34. ԴԱՄԱՍԿՈՍԻ ՌՄԲԱԿՈԾՈՒՄԸ
ՀՈՒՆՎԱՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1925թ.

Սարան ժպտալով իջավ շոգենավից, որը տարվա սկզբին նրան բերել էր Անգլիայից: Էթելը, որ դառնում էր մի չքնաղ դեռատի կին, մնացել էր Անգլիայում: Թվում էր, թե նա ինչքան ասես կմնար Բեյրութում՝ առանց Լոնդոն վերադառնալու մտադրության, որտեղ մեծ էր օդի աղտոտվածությունը, անձրևներ էին, գորշ օրեր: Էթելը նույնպես կարոտում էր Լևանտը, նրա կլիման… Նա ուզում էր վերադառնալ ամռանը՝ արևոտ եղանակին, երբ Միջերկրական ծովը կապույտին էր տալիս:

Թոմասը երբեմն Սարային ընկերակցում էր գնումներ կատարելու ընթացքում, իսկ երեկոյան միասին երկար զբոսնում էին: Բեյրութն այլևս գյուղաքաղաք չէր: Օրեցօր դառնում էր մի աշխույժ քաղաք այնպիսի նավահանգստով, որտեղ խարիսխ էին գցում ծովային խոշոր ընկերությունների մեծ շոգենավերը: Իհարկե, բավական էր հեռանալ քաղաքի կենտրոնից, և ի հայտ էին գալիս ավանդական մշակույթի նշանները: Նույնիսկ ուղտերի երկար քարավաններն առաջվա պես մտնում էին մինչև իսկ նավահանգստի վիթխարի պահեստները: Ոմանք ասում էին, որ դրա վերջը երբեք չէր գա, քանի որ անապատը կտրել անցնելը բեռնատարների համար լուրջ խնդիր էր. հաճախ ծակվում էին անվադողերը, ավազային փոթորկի ժամանակ գրեթե անկարելի էր առաջ շարժվելը, երկար ճանապարհների վրա չկային վառելանյութի լիցքավորման ու պահեստամասերի վաճառքի կետեր: Ահա թե ինչու առևտրականները շարունակում էին վստահել ավանդական միջոցին՝ քարավանին, որին ոչինչ չէր կարող փոխարինել, թեև ֆրանսիացիները ներմուծել էին «Ռենո», «Սիտրոեն» և «Պանար» մակնիշի շատ փոխադրամիջոցներ: Բեյրութում նաև կառուցում էին խմելու ջրի համակարգ և անցկացնում էին հեռախոսային նոր ցանց, որը միանալու էր Տրիպոլիին, իսկ այնտեղից՝ Լաթաքիային ու Հալեպին: Այդ ամենն առաջընթաց էր, ու ոչ ոք չէր կարող այն կասեցնել:

1925 թվականի սկզբներին գեներալ Սեռայը եկավ փոխարինելու գեներալ Վեյգանին, ով իր ծառայողական պարտականությունները կատարել էր՝ որևէ աչքի ընկնող բան չանելով: Սեռայն անմիջապես Վանդերբերգին փոխեց իր վստահելի մարդով՝ Գլխավոր շտաբի գեներալներից մեկով, ում կոչում էին Վերշեր դը Ռեֆի: Այդ ամենին հաջորդեց կազմակերպված ընդունելությունը, որի ընթացքում Թոմաս և Սարա Հար-

դինգներն առիթ ունեցան ողջունելու լիբանանյան բարձրաշխարհիկ հասարակության անդամներին: Կիսաձայն արված մեկնաբանություններն այնքան էլ նպաստավոր չէին ֆրանսիական մանդատի համար: Ամենահամարձակներն ակնարկում էին Դամասկոսում և առհասարակ Սիրիայի հարավում տիրող անկայուն վիճակի մասին: Ֆրանսիացի կառավարիչների դեմ առճակատման էին դուրս գալիս ոչ միայն դրուզները, այլև արաբ ազգայնամոլները, ովքեր վերջին շրջանում անելանելի մթնոլորտ էին ստեղծել: Այդ պատճառով ֆրանսիական զորքերն այդ օրերին Բեյրութի նավահանգիստ էին բերում զինվորական բեռնատարներ, հրասայլեր և ծանր հրետանի: Բոլորը մտաբերում էին Մեյսալունի ճակատամարտը, որն ի չիք դարձրեց արաբական թագավորություն ունենալու բոլոր հույսերը: Թագավորություն, որը պետք է Թուրքիայի հետ սահմանից ձգվեր մինչև Աքաբա: Թե ինչ տեղի կունենար ապագայում, միայն Աստծուն էր հայտնի, չնայած մի բան ակնհայտ էր. Պաղեստինում սիոնիստ վերաբնակիչները գիշեր-ցերեկ աշխատում էին մրջյունների պես: Արտասովոր արագությամբ փայտե ցանկապատներ, դիտակետերով աշտարակներ էին կառուցում, լիցքավորում էին հրացաններն ու կրակում նրանց վրա, ովքեր մոտենում էին առանց թույլտվության: Ստեղծված իրավիճակի համար արաբները մեղադրում էին բրիտանական ոստիկանությանը, որը հրեաներին այդպիսի իրավունքներ էր տվել: Սակայն այդ ամենը տեղավորվում էր Ազգերի լիգայի կողմից Մեծ Բրիտանիային տրված մանդատի շրջանակում, որով այդ երկիրը ստանձնել էր Բալֆուրի հռչակագրի կատարման պատասխանատվությունը:

Առկա իրավիճակից զայրացած՝ արաբները չէին ընդունում այդ մանդատը, և Պաղեստինի քաղաքների պատերին ի հայտ եկան բազմաթիվ թռուցիկներ, որոնք բրիտանացիներին մեղադրում էին դավաճանության համար, իսկ պատվարժան Բալֆուրին բնորոշում էին որպես գող ու ավազակ: Անգլիական ոստիկանության կողմից այդ թռուցիկներն անմիջապես հանվեցին:

Մեծ Լիբանանում էլ խնդիրներն այլ բնույթ ունեին: Այդտեղ հայերի հաստատվելը մեծ չափերի էր հասնում: Մարոնների՝ նրանց հանդեպ ունեցած համակրանքը որոշ չափով նվազել էր, ինչի պատճառները ձգվում էին դեպի պատրիարքարան: Վատիկանը չպետք է այդքան մեծահոգություն ցուցաբերեր այլադավան՝ առաքելական հայերի հանդեպ, թեև նրանցից ոմանք դարձել էին կաթոլիկ:

Դրուզները շարունակում էին ապրել իրենց քարքարոտ լեռներում՝

Մեծ Լիբանանի՝ ի սկզբանե իրենց ապրած վայրերում: Ոչինչ չէին ուզում լսել ֆրանսիական մանդատի մասին: Այդ առնչությամբ Թոմաս Հարդինգը մի քանի լարված հանդիպումներ ունեցավ, որոնց ընթացքում ֆրանսիացի նոր նահանգապետը Մեծ Բրիտանիային շարունակ մեղադրում էր դրուզներին խռովության և անկարգությունների դրդելու համար:

Թոմասը գիտեր, որ այդ մեղադրանքներն անհիմն են, թեև մյուս կողմից չէր կարող ժխտել դրուզ առաջնորդների և բրիտանացիների միջև գոյություն ունեցող բարեկամական կապը: Նյումանը նրան հավաստիացրեց, որ Ֆրանսիայի հետ թշնամանալու ոչ մի շահ չունեն. «Մենք միմյանց կարիքն ունենք, իսկ ապագայում՝ շատ ավելի»: Այդ մտքից տարակուսած՝ Թոմասն իր բարեկամին հարցրեց, թե կա արդյոք մի բան, որից ինքն անտեղյակ է: «Ո՛չ: Ոչ մի հստակ բան,- պատասխանեց Նյումանը,- միայն այն կանխազգացումը, որ բոլորի համար վրա են հասնում դժվարին ժամանակներ»: Համաշխարհային պատերազմն ավարտվեց ոչ թե այն պատճառով, որ դեմ էին պատերազմին, այլ որովհետև բոլորն էլ ուժասպառ էին եղել: Թոմասը գիտեր արդյոք, թե ինչ է տեղի ունենում Գերմանիայում: Վերսալի պայմանագիրը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի թղթի կտոր, ու գերմանացիները վերադառնում էին իրենց սև գործին՝ վերազինվելով, կրկին բանակ ստեղծելով... Ֆրանսիան ու Անգլիան դեպի այլ կողմ էին նայում:

Սեռայը Թոմաս Հարդինգին հանդիպման հրավիրեց: Նրան բավականին սառն ընդունեց, սակայն հյուրասիրեց հրաշալի թեյով: Լինելով հանրապետական ու ագնոստիկ՝ նա սխալ էր համարում կրոնական դավանանքներին այդքան մեծ տեղ տալը. ավելի քիչ կրոն և ավելի շատ քաղաքացիական հասարակություն, ավելի շատ՝ հանրապետական գաղափարակցություն:

Ֆրանսիացիները ժամանակի ընթացքում ցանկանում էին Մեծ Լիբանանը դարձնել Լիբանանի Հանրապետություն: Դա ամենևին էլ նորություն չէր, ոչ էլ՝ Սեռայի գլխում փայլատակած գաղափար, այլ երևույթների բնականոն բարեշրջման արդյունք: Այդ գաղափարի հրահրողը Ֆրանսիայի Հանրապետության նախագահն էր: Այնտեղ՝ Սիրիայում և Լիբանանում, ստեղծվել էին նպաստավոր պայմաններ, որպեսզի առանց պատմական բեռի կյանքի կոչվեր նոր հասարակարգը: Այդ մասին Սեռայը խոսել էր արաբ առաջնորդներից մի քանիսի հետ, ու բոլորն էլ համաձայնել էին, որ նոր խորհրդարանի պատգամավորների ընտրություններն անցկացվեն դավանանքից անկախ: Սակայն Սեռայի համար

շատ կասկածելի էր այն, թե արդյոք արաբները ճիշտ են ընկալում «ժողովրդավարություն» հասկացությունը:

- Իսկ մարոնն՞ը… Այդ մասին Դուք խոսե՞լ եք քրիստոնյա մարոնների հետ,- Թոմաս Հարդինգին հետաքրքրում էր մյուս կողմի դիրքորոշումը:

- Ա՜հ, այո՛, մարոնները: Դե՛ ինչ, այդ առթիվ մեծ ոգևորություն չարտահայտեցին: Սակայն դա պետք է արվի ու լինելու է անշրջելի: Իհարկե, մարոնների պատրիարքը համամիտ չէ դավանանքից անկախ ընտրություններին,- ասաց Սեռայը՝ հավելելով, որ իր համար միևնույնն է, և չի պատրաստվում խոնարհվել Մեծ Լիբանանի բազմաթիվ դավանանքների ու եկեղեցիներից մեկի ներկայացուցչի առջև: Դա էր պակաս: Ամեն դեպքում հետևելով Սոկրատեսին՝ պետության իսկական ղեկավարները պետք է լինեն փիլիսոփաներ, բայց՝ ոչ երբեք հոգևորականներ:

Թոմասը նրան ակնարկեց, որ իր ծրագիրը ներկայացնելու համար կարող է հրավիրել մարոն պատրիարքին և մյուս առաջնորդներին:

- Ո՛չ,- ասաց Սեռայը՝ գլուխը շարժելով,- երբ ժամանակը գա: Հիմա դեռ չի հասել:

Գարունն անցավ անհանգիստ, Սիրիայի որոշ վայրերում՝ ցնցումներով, որոնք վառոդի հոտի պես կարող էին տարածվել: Ինչ վերաբերում էր դրուզներին, ապա նրանք հեշտորեն փոխզիջման գնացողներից չէին, իսկ դրուզական Ջեբելը լարված էր պահում ֆրանսիական բանակին: Գնդապետը՝ զորքերի հրամանատարը, ասաց, որ իրեն այնքան էլ դուր չի գալիս բռնկումներ հանգցնողի իր դերը. «Ես զինվորական եմ, ոչ թե հրշեջ»:

Հուլիսին՝ մի երեկո, երբ լեռներում շոգն անգութ էր ու հեղձուցիչ, պայթուցիկ նյութերի «պահեստն» ի վերջո պայթեց: Օրեր առաջ Թոմասը հնարավոր ընդհարման շուրջ խոսել էր դրուզ առաջնորդներից մեկի՝ Ջեմայել Ջումբլաթի հետ, ով ասել էր. «Դրուզները երբեք չեն հանձնվի, կնախընտրեն մեռնել մարտի դաշտում»:

Իրոք այդպես էր: Նրանք կամակոր ժողովրդի համբավ ունեին: Եթե մի բան մտցնեին գլուխները, ապա դրանից ազատվելու ոչ մի հնար չկար:

Հետո դրուզներին միացան ալավիները: Այդ ժամանակ Թոմասին դիմեցին մի տարօրինակ խնդրանքով. նրանք ցանկանում էին, որ Մեծ Բրիտանիան իրենց զենք մատակարարեր: Խնդրանքը կտրուկ մերժվեց: Ֆրանսիան իր յուրօրինակ բնույթն ուներ, սակայն, ի վերջո, այն

մնում էր որպես Մեծ Բրիտանիայի լավագույն դաշնակիցը: Խառնակության ժամանակաշրջանն ավարտվել էր: Դրուզ լրատարը, շատ նեղվելով խնդրանքի մերժումից, բողոքեց՝ փաստելով, որ Մեծ Բրիտանիան իրենց պետք է օգներ, որպեսզի վերականգնեին արաբական թագավորությունը, որին խոչընդոտել էին ֆրանսիացիները:

Սեռայը Թոմասին կրկին հրավիրեց իր մոտ: Նա դժվարին կացության մեջ էր: Ֆրանսիային միակ սատարողները մարոններն էին, բայց նրանք էլ ֆրանսիացիների նկատմամբ որոշակի կասկածամտությամբ էին համակվել: Մյուսներն ամբողջովին տարված էին ապստամբությամբ: Սեռայը Թոմասին խնդրեց, որ ֆրանսիացիներին աջակցելու հարցով բարեխոսի մարոն պատրիարքին: Հարդինգը համաձայնեց, գնաց պատրիարքարան և երկար զրույց ունեցավ Էլիաս Հոայեկի հետ, ով նրան ասաց.

- Սեռայը ո՛չ լավագույնն է, ո՛չ էլ վատագույնն է իրեն նախորդածներից, և Ֆրանսիան, իհարկե, մեզ համար երաշխիք է: Եթե հենց հիմա մեզ լքեն, կկրկնվեն 1860 թվականի ողբերգական անցքերը: Ասացե՛ք Սեռային, որ ցանկացած իրավիճակում միշտ կունենա մեր աջակցությունը:

Երբ Թոմասը հրաժեշտ էր տալիս, պատրիարքը նրան վստահաբար հարցրեց.

- Ձեզ հետաքրքրական չի՞ թվում, որ աշխարհիկ Ֆրանսիայի Հանրապետությունը Վատիկանի հետ հաղորդակցման ուղի գտնի այս համեստ պատրիարքարանի միջոցով:

Հոկտեմբերին Դամասկոսի խռովարարներն ու դրուզները Սեռային համբերությունից հանեցին, ու նա հրամայեց ուժեղ ռմբակոծության ենթարկել քաղաքը: Երբ դրուզները Դամասկոսի համար Հորանից զենք էին տեղափոխում, ձերբակալվեցին ֆրանսիական բանակի մի գումարտակի կողմից: Նրանց մի մասը զոհվեց ընդհարման ժամանակ, շատերն էլ մեղադրվեցին զենքի տեղափոխման, դավաճանության, մաքսանենգության և ֆրանսիական բանակի վրա հարձակում գործելու համար: Ֆրանսիական բանակի հրամանատարը հրամայեց, որ շուրջ քսանհինգ զոհվածների դիակները կապեն ուղտերի թամբերին.

- Նրանց մի՛ անվանեք ապստամբներ, նրանք ավազակներ են: Ուրիշ ոչինչ…

Զոհված ապստամբներին այդպես տարան Դամասկոս, ու դա առավել բորբոքեց կրքերը: Բանն այն էր, որ դրուզները ոչ միայն օգտվում էին

բնակչության մեծ մասի համակրանքից, այլև ազգայնամոլները ցանկացած առիթ օգտագործում էին ֆրանսիացիներին տապալելու համար:

Սեռայը չընդունեց իրավիճակի լրջությունը: Եթե որևէ մեկը ցանկանար համախմբել դրուզներին, ալավիներին, սուննիներին և շիաներին, ինչպես նաև քրիստոնյա արաբներին, ապա կվարվեր այնպես, ինչպես Բարձրագույն կոմիսարը, ով երկուսուկես օր անդադար ռմբակոծեց Դամասկոսը:

Թոմաս Հարդինգը, որ այդ ժամանակ անձնական այցով գտնվում էր Տրիպոլիում, իմացավ, թե ինչ է կատարվում Դամասկոսում, քանի որ ժողովուրդը բոլոր փողոցներով մեկ բողոքի ցույցի դուրս եկավ Ֆրանսիայի դեմ: Քաղաքագլուխը նրան ասաց, որ Ֆրանսիայից այդպիսի բան երբեք չէր սպասում: Թոմասը Սեռային հեռագիր ուղարկեց՝ պահանջելով, որ հանուն Մեծ Բրիտանիայի հետ բարեկամական հարաբերությունների՝ դադարեցնի ռմբակոծությունը, որն իրականացնում էր գեներալ Գամելինը: Երբ թնդանոթները լռեցին, պարզվեց, որ քաղաքի պատմական շենքերի մի մասն ավերվել է: Մինչդեռ ապստամբությունն առաջ էր ընթանում. հարձակվում էին ոստիկանական կետերի և վարչական շենքերի վրա:

Թոմասի կարծիքով՝ արաբ ազգայնամոլները հասնում էին իրենց նպատակին, իսկ Ֆրանսիան, որ հավակնում էր ազատություն և առաջադիմություն բերելուն, իր բարի անունն իսպառ կորցրեց Սեռայի պես մարդու մեղքով, ով չկարողացավ հասկանալ արաբների առանձնահատուկ խառնվածքը:

Մի քանի օր անց Թոմասն ուղևորվեց Դամասկոս, որտեղ խոսեց իր մի քանի ծանոթների հետ: Բոլորը, նույնիսկ տարբեր ուղղությունների քրիստոնյաները շատ էին վրդովված Ֆրանսիայի գործելակերպից: Ամենախիստ զայրացածներն ուղղափառ հույներն էին: Նրանք խոսում էին Ֆրանսիայի դեմ այնպիսի քայքայիչ գործունեություն ծավալելու մասին, մինչև նրանց դուրս մղեն Սիրիայից: Այդտեղ Թոմասն իմացավ դրուզների առաջնորդի՝ Ջումբլաթի մահվան մասին ու մտածեց, որ ֆրանսիացիներն արաբական ազգայնական հարցի համար մի նահատակի կերպար են ստեղծել: Շուֆա տարածքը միշտ էլ դժվարամատչելի էր եղել, սակայն առաջնորդներից մեկի մահը ֆրանսիացիների համար ամեն բան ավելի էր բարդացնելու:

Սարան նրան պատմեց, որ Բեյրութում նույնպես մարդիկ ռմբակոծությանը դեմ էին արտահայտվում: Մարոնների կարծիքով՝ դա նման էր

կրակին փայտ ավելացնելուն: Անգամ նրանց բարեկամ Այուբ Թաբիթն էր զայրացել: Բոլորի համոզմամբ էլ՝ Դամասկոսն աշխարհի պատմական կարևորագույն քաղաքներից էր: Կարծում էին, որ Ֆրանսիայի նախագահ Դումերգը Սեռային հնարավորինս շուտ պաշտոնանկ կանի, քանի որ ըստ հասած լուրերի՝ եվրոպական թերթերը նրա դեմ հանդես էին եկել քննադատական հոդվածներով:

Հեռագիր ստացան. Կլարա Վեյլերը՝ Էթելի տատիկն էր վախճանվել: Որոշեցին շուտ մեկնել Անգլիա: Երկու օր անց նավ նստեցին: Երբ ուղևորներով լի նավը հեռացավ եզերքից, Սարան նրան խոստովանեց, որ այդ ծանր բռնկումների օրերին ինքն առաջին անգամ համակվել էր վախով:

Թոմասը երկար ժամանակ մտախոհ մնաց տախտակամածին՝ դիտելով, թե ինչպես է անհետանում ափը: Արաբական աշխարհում իրավիճակը գնալով բարդանում էր: Դամասկոսի ռմբակոծումը փոխելու էր աշխարհընկալման կերպը: Ալ-Աֆղանին դա բոլորից շուտ էր կռահել: Իսլամը դառնում էր անքակտելի մի հանգույց:

35. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆՈՅԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1925-1926թթ.

Լոնդոնը նրանց դիմավորեց ցուրտ ու անձրևոտ եղանակով, որն ավելի ընկճեց Թոմասին: Նա ավելի մեղմ եղանակ, մի քիչ արևոտ առավոտներ տեսնելու և արևմտյան քաղաքակրթության բոլոր առավելությունները ճաշակելու հույս ուներ, մինչդեռ նրա դիմաց մրի բարակ շերտով պատված քաղաք էր, մարդիկ էլ անհաղորդ տեսքով վազում էին խոնավ փողոցներով, և ոչ ոք ոչ մեկին չէր ողջունում: Հառաչեց՝ կարոտելով Բեյրութը:

Նրա ամենամեծ ուրախությունն Էթելն էր, ով չքնաղ օրիորդ էր դարձել: Դառնորեն մտածեց, որ աղջիկն օրեցօր ավելի է նմանվում մորը, դիմագծերով ու շարժումներով հիշեցնում է Կարոլինին: Դստեր հետ գնաց ցավակցելու իր աներոջը՝ Չարլզ Վեյլերին, ով լավ էր պահպանվել, սակայն նրա համար կնոջ մահը շատ ծանր հարված էր: «Կարծես իմ մի կեսն է մահացել»,- ցավագին շշնջաց Թոմասին:

Վեյլերը հարցրեց, թե ինչ իրավիճակ է տիրում Մերձավոր Արևելքում: Թոմասը պարզաբանեց, որ ազգայնամոլության տարբեր ուղղությունները, որոնք տարբեր վայրերում ի հայտ են գալիս ի պատասխան գաղութարարության կամ արևմտյան տերությունների տիրապետության, այն գործոններն են, որոնք կարող են մասնատել Բրիտանիայի կայսրությունը:

- Անշուշտ,- Վեյլերը չէր կարող և չէր ուզում թաքցնել իր վատ տրամադրությունը,- մենք այդ բոլոր վայրեր ենք տարել մեր՝ արևմտյան ուսուցումը, կրթել ենք բնիկներին, որպեսզի հասարակական դաս ձևավորեն, դառնան վարչական ասպարեզի աշխատողներ ու ծառայողներ, իսկ հիմա՝ ահավասիկ արդյունքը: Նրանց սովորեցնում ենք լեզուն, քաղաքացիական հասարակության գաղափարներն ու գաղտնիքները: Ի՞նչ սպասելիքներ պետք է ունենայինք:

Նրա կարծիքով՝ այդ ամենի մեղավորները հնագետներն էին:

- Գնում եք այնտեղ, մի քանի քար եք շարժում ու նրանց ասում, որ փառավոր անցյալ ունեն,- Վեյլերը չափազանց հուզված էր,- վիթխարի ջանքերի գնով մարդիկ կայսրություն են ստեղծում, որպեսզի վերջում այդտեղից նրանց դուրս քշեն: Միակ ելքն ամուր ձեռքն է:

Թոմասը փորձեց խոսակցությունն այլ ուղղությամբ տանել, սակայն աներոջ զայրույթն ավելի էր մեծանում: Իսկ ի՞նչ է լինելու Յունիոն Ջեքի[67] հետ:

[67] Միացյալ թագավորության պետական դրոշը:

Թոմասը հիշում էր Օքսֆորդի համալսարանի իր վերջին դասընթացները, որոնք ավարտեց՝ համոզված լինելով, որ ապագայում պահպանողականների կայսրությունը վերածվելու էր լիբերալների կայսրության: Մինչ այդ նա չէր գիտակցել, թե ինչ դժվարություններ են սպասվում առջևում:

Ազատությունը՝ որպես մեծահոգության արտահայտչամիջոց. մի՞թե դա հնարավոր բան էր: Չէր կարողանում մոռանալ այն հոռետեսական մտածմունքները, որոնք իրեն համակել էին Բեյրութից դուրս գալիս: Խնդիրը Բուրկեի Կրուգերին դեմ լինելը չէր, այլ իսլամի արմատները ցնցած ալ-Աֆղանիի, Մուհամմեդ Իքբալի և նրանց հետնորդների հեղափոխական գաղափարները, որոնք որպես բոլոր չարիքների մեղավոր մատնացույց էին անում Արևմուտքին: Դա այն մարդկանց անվերջանալի պայքարն էր, ովքեր պատկանում էին բրիտանական կայսրությանը, իրենց համարում էին ազատազուրկ և անգամ իրենց առաջարկվող բազմաթիվ բարեփոխումների փոխարեն՝ ցանկացած գնով ուզում էին ազատ լինել:

Թոմասն այնքան քաջատեղյակ էր Լիբանանից, որ գիտեր՝ ո՛չ բրիտանացիները և ո՛չ էլ ֆրանսիացիներն ի վիճակի չէին փոխելու նրանց մշակութային ավանդույթները: Օսմաններն այլևս այնտեղ չէին, և նրանց հետ հօդս էր ցնդել կարգուկանոնի ու վերահսկողության մի արդյունավետ համակարգ, որի կարիքը հանկարծ զգացին թե՛ ֆրանսիացիները, թե՛ անգլիացիները: Ընդ որում՝ իշխանական այդ համակարգը հիմնված էր ահաբեկչության, բարեկամական կապերի և կաշառակերության վրա:

Ֆրանսիացիներն ունեին շատ տաք մի կարտոֆիլ, որն այրում էր նրանց ձեռքերը: Ինչ վերաբերում էր անգլիացիներին, ապա ապաշխարում էին իրենց գործած մեղքի համար:

Արևելքը երջանիկ ավարտով արտառոց հեքիաթ չէր, այլ բարդ իրականություն, որն անհնարին էր վերահսկել Արևմուտքի կողմից պարտադրված ժողովրդավարական արժեքներով ու ազատություններով:

Թոմասն Անգլիայում մնաց մինչև 1926 թվականի ապրիլը: Արևելքին նվիրված երկու դասախոսություն կարդաց Օքսֆորդի համալսարանում, և նույն հանդիսության շրջանակում նրան և Ավգուստուս Նյումանին պարգևատրեցին Մեծ Բրիտանիայի բարձրագույն շքանշանով: Կրծքին զգալով այդ շքանշանի թեթև քաշը՝ մտածեց, որ դա ժամանակավրեպ էր, մարող իշխանության շողշողուն ցոլք, թեև դրան հակառակ՝ Հա-

մայնքների պալատի սրահից լսվում էին հրավիրվածների ամպագոռգոռ խոսքերը:

Նրան հրավիրեցին պաշտոնական ընդունելությունների և ոչ պաշտոնական երեկույթների: Սարան ուղեկցում էր նրան ու նկատում, որ ամուսինը հոգով գտնվում էր Բեյրութի իրենց տան պատշգամբում: Նրան տալիս էին անհամեստ, երբեմն էլ անհարկի հարցեր. «Մի՞թե հնարավոր է, որ Ձեզ նման մեկը կարողանա ապրել Մերձավոր Արևելքում՝ այդ արտասովոր, ճանճերով ու տարբեր խնդիրներով լի վայրում»:

Դժվար էր բացատրել, նույնիսկ չփորձեց: Ամեն մեկն ընտրում է իր կյանքի ուղին և սպառում ի վերուստ իրեն տրված սուղ ժամանակը: Ո՛չ Բաալբեկում անցկացրած փառավոր օրերը, ո՛չ էլ Պալմիրայի այն իրիկնամուտը, երբ Աննայի հետ տրվել էին սիրո վայելքին, նա չէր փոխի աշխարհի ողջ ոսկու հետ:

Ո՛չ, հեշտ չէր բացատրել, թե ինչու էին ընդունում այս կամ այն վճիռը, սակայն միակ բանը, որի համար զղջում էր այդ տարիքում, այն էր, որ տեղի էր տվել իր քմահաճույքին, այն է՝ պրոֆեսոր Պետերսոնի հետ մեկնել էր Միջագետք: Մի որոշում, որը տակնուվրա արեց իր կյանքը:

1926 թվականի ապրիլի վերջին Պորտսմութում նա նստեց Բեյրութ տանող շոգենավը: Դա ժամանակակից նավով ուղևորություն էր՝ առանց կանգառների: Արտգործնախարարությունից խնդրեցին, որ նա մասնակցի Մեծ Լիբանանի պետությունը Լիբանանի Հանրապետություն վերանվանմանը նվիրված փողփողուն հանդիսությանը: Այդ նախաձեռնության հեղինակները վերջին Բարձրագույն կոմիսար, սենատոր, մասնագիտությամբ լրագրող Ժուվենելը և նոր նահանգապետ Լեոն Անրի Շառլ Կայլան էին: Արևելքում Ժուվենելի կենսագրական տվյալներում միակ բիծը Սուեիդայի ճակատամարտն էր, որը տեղի էր ունեցել ընդամենը մեկ շաբաթ առաջ: Ֆրանսիացիները կրկին հաղթել էին արաբներին: Մոտավորապես հարյուր հազար զինվորներով և արդիական զինտեխնիկայով զինված եվրոպական հզոր տերության հետ ոտք մեկնելու հետևանքն այլ կերպ չէր էլ կարող լինել: Դամասկոսում դա որակվեց որպես ևս մի ողբերգություն գաղութարարների դեմ մղվող հերոսական պայքարում, իսկ Փարիզում՝ որպես Ֆրանսիայի Հանրապետության կողմից հավասարություն, ազատություն և եղբայրություն հաստատելու վճռականություն՝ անկախ այն բանից, որ պահպանողականների պարտադրմամբ շատերը նախընտրում էին առաջվա պես ապրել խավարում:

Հրաշալի եղանակ էր, և երկու շաբաթ անց նավը խարիսխ ձգեց Բեյրութի նավահանգստում: Միջերկրական ծովը ցույց էր տվել իր հյուրընկ-

կալ դեմքը. դելֆինները նրանց ուղեկցեցին մինչև նավահանգիստ՝ ասես Քնոսոսի չքնաղ ծովորներից պոկված ու ալիքների միջից հայտնված աստվածների սուրհանդակներ: Նույն փառասիրությունը, նույն խորհրդանիշները, նույն գեղեցկության նրբաճաշակ զգացողությունը... Արդյոք մարդը չէ՞ր ստեղծել աստվածներին, թե՞ իրենք՝ աստվածներն էին մարդու կարիքը զգում, որպեսզի գոյություն ունենան:

Բարձրագույն կոմիսարը՝ Ժուվենելը, չկարողացավ ճնշել ապստամբությունը: Անհանգիստ էր, բայց՝ միաժամանակ գոհունակ, քանի որ ծնվում էր Լիբանանի Հանրապետությունը, որն ամրապնդելու էր այդ իրավիճակը: Մեծ Սիրիայի արաբական թագավորությունը մնաց որպես ձախողված երազանք: Դա էր ժամանակների նախանշանը:

Ֆրանսիական զորքերը երևում էին ամենուրեք: Կանաչավուն զինհանդերձանքով ու նավատորմիղի՝ անթերի սպիտակ գույն ունեցող համազգեստներով սպաների երեկոյան զբոսանքների ժամանակ թվում էր, թե Բեյրութը ռազմական է: Մարոն առևտրականներն իրենց դուստրերին արգելեցին զբոսնել ու զրուցել ֆրանսիացի այն երիտասարդ զինծառայողների հետ, ովքեր Բեյրութում սիրային արկածներ էին փնտրում:

Մայիսի 23-ին ընդունվեց Լիբանանի Հանրապետության Սահմանադրությունը, որն ուժի մեջ էր մտնելու 1926 թվականի սեպտեմբերի 1-ից: Երկու օր անց Թոմասի բարեկամը՝ Շառլ Դեբբան, նշանակվեց հանրապետության առաջին նախագահ: Դեռևս օսմանների օրոք նրա հիմնած թերթի՝ այդ օրվա առաջին էջի խորագիրն արդեն ամեն ինչ ասում էր՝ «Կեցցե՛ Հանրապետությունը»:

Շառլ Դեբբան ուղղափառ հույն էր, հետևաբար լավ էր ճանաչում մուսուլմաններին, ովքեր նրան շատ մոտ էին կանգնած: Արևելքը՝ ընդդեմ Հռոմի: Ամեն ինչից անկախ՝ արաբ ազգայնամոլները, որ շարունակում էին դավեր նյութել Դամասկոսի նկուղներում, ընդունեցին, որ Դեբբան կարող է հրաշալի նախագահ լինել: Խելամիտ զիջում էր՝ թերևս Ժուվենելի կողմից կատարված միակ խելացի քայլը: Չար լեզուների կարծիքով՝ Ժուվենելը, լինելով լրագրող, միայն վստահում էր մեկ այլ լրագրողի: Ընդդիմությունն էլ ավելացրեց, որ թերթերի լուրերն ընդամենը կանխամտածված ստերի շարան են:

Իր ղեկավարելու ընթացքում Ժուվենելը, ով ներկայացնում էր ավելի աշխարհիկ ու ավելի հանրապետական Ֆրանսիան, չէր այցելել մարոն պատրիարքին: Խնդիրներից խուսափելու նպատակով նա պատրիարքի մոտ ուղարկեց Դեբբային, ով համարվում էր ագնոստիկ, աշխարհիկ, իսկ ամենից առաջ՝ ուղղափառ հույն: Ի՞նչ էր նշանակում այդ այցը. հա-

վատքի՞, թե՞ քաղաքականության ապաշխարանք: Պատրիարքը հավանություն տվեց Լիբանանի նորընծա նախագահին: Այլընտրանքի դեպքում կարող էր լինել Դամասկոսը՝ իսլամը:

Պարադոքսը դավանանքի գաղափարախոսությունն էր. աշխարհիկ անձնավորություն Ժուվենելը մի սուննիի էր նշանակել որպես Սենատի նախագահ: Այդ սուննին՝ Մուհամմեդ էլ-Ժիրզրը, Թոմաս Հարդինգի վաղեմի ծանոթն էր: Դեռևս Մեծ Լիբանանի օրոք եղել էր ներքին գործերի խորհրդական: Սիրիացի ազգայնամոլների ապստամբությունը դառնացրել էր նրա կյանքը, քանի որ նրանք իր եղբայրներն էին, սակայն կյանքում միշտ էլ հնարավոր է գտնել որևէ այլ ուղի:

Դեբբան Թոմասին պատմել էր, որ իր կյանքի ամենաերջանիկ պահերը եղել են այն ժամանակ, երբ ինքն ապրել է պատրանքներով.

- Իրականությունը գրեթե միշտ դառն է: Այն ժամանակ կարծում էինք, որ եթե կառուցենք անկախ ու ինքնավար Լիբանան, կհասնենք մեր ուղու վերջին: Գիտե՞ք, թե ինչ կասեմ Ձեզ. մանդատը մինչև հիմա Սահմանադրությունից վեր է կանգնած: Մարդուն երբևէ հաջողվե՞լ է նշմարել ազատությունը: Կասկածում եմ:

Արդեն տասնյոթ տարի էր, ինչ Թոմաս Հարդինգն Արևելքում էր և այն զգացողությունն ուներ, որ այդտեղ է ծնվել: Երբ հետադարձ հայացք էր ձգում իր մանկությանը, Լոնդոնի իր վարժարանին, Օքսֆորդի տարիներին… ամեն բան աղոտ էր:

Նա կատարել էր իրեն առաջադրված խնդիրները: Հավաքեց իր անձնական իրերը, իր սիրած գրքերը, որոշ հնաոճ պարագաներ: Նա կարևոր քայլ էր կատարում իր կյանքում. չէր ուզում իր ընտանիքից կտրված ապրել, թեև վստահ չէր, թե ճիշտ է վարվում: Ուզում էր տեսնել Էթելի հասունանալը, լինել Սարայի կողքին: Հոգնած էր, հիասթափված: Խոսեց Շաբրիների հետ, ովքեր առայժմ մնալու էին՝ տունը հսկելու: Չգիտեր, թե երբ կվերադառնա: Անգամ չէր կարող վստահեցնել, թե երբևէ կվերադառնա:

Մեկ շաբաթ անց նավ նստեց: Վերջին տպավորությունն այն էր, թե Բեյրութը հորդառատ անձրևի տակ էր, իսկ հեռվում որոտում էր մեծ կայծակը: Հուզված էր, փակվում էր նրա անձնական տխուր կենսափորձի շրջանակը: Նա մտաբերում էր Տանուկիի հեռավոր խոսքերը. «Սա մի մոգական վայր է: Այնպես որ՝ զգո՛ւյշ եղեք, որ Ձեզ իրենով չանի»: Հայացքը շուռ տվեց դեպի ծովեզերքը: Կայծակն այդ պահին ծածկում էր Սպիտակ լեռը: Սիրտը փոքր-ինչ սեղմվեց: Նավն ուղղվում էր դեպի մթություն:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵԾ ԼԻԲԱՆԱՆԸ

36. ՄՈՐԵԽԻ ՏԱՐԻՆ
ՀՈՒՆԻՍ, 1930թ.

1930 թվականին Էթել Հարդինգի ծննդյան օրվա տոնակատարությունը դարձավ Լոնդոնի հասարակական ամենանշանակալից իրադարձություններից մեկը: Բանն այն էր, որ Էթելը դառնում էր տասնինը տարեկան, և նրա պապը՝ ֆինանսիստ Չարլզ Վեյլերը, այդ կապակցությամբ ձեռնամուխ եղավ մի անմոռանալի հանդիսության կազմակերպմանը:

Էթելը նոր էր ընդունվել Լոնդոնի համալսարան: Նա ընտրել էր Հասարակական գիտությունների ֆակուլտետը, թեև մտադիր էր փոխել այն և սովորել Սուրբ Անտոնիոսի քոլեջում՝ Օքսֆորդի համալսարանում, բայց իր դիմումի պատասխանը դեռ չէր ստացել: Էթելը գիտեր, որ Մերձավոր Արևելքում իր հայրն աշխատում էր բրիտանական հետախուզական ծառայությունների համար, թեև այդ մասին իրեն ոչինչ չէր ասել: Այդ մարդն օժտված էր պատասխանատվության խորը զգացումով, ուներ հստակ գաղափարներ, գուցե և որոշ չափով ռոմանտիկ էր այն առումով, որ կարող էր իր ավանդը ներդնել Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի միջև հարաբերությունների բարելավման գործում: Էթելն էլ նույն կարծիքին էր: Նա մեծ հետաքրքրությամբ էր համակված արաբական մշակույթի ու լեզվի հանդեպ, այդ վայրերի հետ կապված էր սրտառուչ հուզականությամբ: Արաբերենի ու արևելյան մշակույթի դասախոսները նրան հարգանքով էին վերաբերվում: Նա չէր բավարարվում սոսկ դասընթացներով, այլ ցանկանում էր խորամուխ լինել այն ամենում, ինչ ուսումնասիրում էր:

Ավգուստուս Նյումանն էլ մասնակցեց նրա ծննդյան տարեդարձին: Նա Էթելին նայում էր որպես զարմուհու՝ դուստրը մի մարդու, ով իր լավագույն բարեկամն էր: Նյումանը նաև քաջատեղյակ էր, թե որքան դժվարություններ էր հաղթահարել հայրը, որպեսզի գտնի իր կորսված երեխային: Այդ հեռավոր օրվանից սկսած Թոմաս Հարդինգն այլ կերպ էր ընկալում «ամեն ինչ հնարավոր է» արտահայտությունը, քանի որ, նրա կարծիքով, կարևորը կամքն է, որպեսզի մարդը հասնի իր առջև դրված նպատակներին:

Սարան հպարտ էր այդ չքնաղ դեռատի աղջկա կայացման ու ձեռքբերումների գործում ունեցած իր դերով՝ իրեն համարելով որպես նրա հարազատ մայր:

Էթելի ծննդյան օրը հետախուզական ծառայություններում իր ստանձնած գործառույթների պատճառով Թոմասը Լոնդոնում չէր:

Այդուհանդերձ, Էթելն այդ առավոտ Երուսաղեմից հեռագիր ստացավ, որն իրեն մաղթում էր երջանկություն և բոլոր իդձերի իրականացում:

Արդեն բավական ժամանակ էր, ինչ ծեր Չարլզ Վեյլերը չէր աշխատում, սակայն շարունակում էր զբաղվել շահութաբեր բիզնեսով՝ օգտվելով բնակարանաշինության մասին նոր օրենքից, որի համաձայն՝ քանդում էր հին ու խարխուլ թաղամասերը՝ փոխարենը կառուցելով նորերը՝ ողջ անհրաժեշտ ենթակառույցներով: Վեյլերի մտքով երբեք չէր անցնի, որ այդքան դժվարին ժամանակներում իրեն կհաջողվեր բավականին եկամտաբեր գործարքներ կնքել: Եվ քանի որ նա բիզնեսն այլ կերպ էր պատկերացնում, ապա քթի տակ ասում էր, որ դա օդից փող աշխատել է:

Վերջերս լրացել էր Ավգուստուս Նյումանի վաթսուն տարին: Հետախուզությունում նրան պահում էին այն դեպքերի համար, երբ անհրաժեշտ էին նրա վիթխարի փորձն ու մանևրունակությունը: Բոլորը, այդ թվում՝ նաև քաղաքական առաջնորդները գիտեին, թե նա որքան ճկուն է գործում: Երբ արաբական աշխարհում իրավիճակը բարդանում էր, երբ արդյունավետ ու նուրբ գործելակերպի անհրաժեշտություն էր ծագում, Ավգուստուս Նյումանին էին ուղարկում: Էլ ուրիշ՝ ո՞ւմ, եթե՝ ոչ նրան: Նյումանը միշտ հենվում էր իր հիմնական գործընկերների, իր վստահելի մարդկանց վրա, գրեթե միշտ խորհրդակցում էր Թոմաս Հարդինգի հետ, ում դիրքորոշումն ու առողջ մտածելակերպը նրան հիացնում էին:

Էթելը երազում էր այնպիսի մարդ դառնալու մասին, ինչպիսին իր հայրն էր կամ իր «կնքահայրը». նա քնքշորեն այդպես էր կոչում Նյումանին: Դրան հասնելու համար նրան հարկավոր էր գիտելիքների մեծ պաշար ունենալ: Փորձը միայն այն դեպքում է արժեքավոր, երբ հիմնվում է գիտելիքների, ուսումնառության այնպիսի ամուր հենքի վրա, ինչպիսին ինքն էր ստանում: Նա հասկանում էր, որ դեռ շատ անելիքներ ունի, որ շատ կարևոր է ամեն օր մի նոր բան սովորելը: Մշակույթը պետք է ստեղծվի՝ աղյուսն աղյուսի վրա դնելով, աստիճանաբար, ինչպես կառուցում են տաճարներն ու պալատները, որոնց ավերակներն այցելելու պատեհ առիթ էր ունեցել այն երկու մարդկանց ուղեկցությամբ, ովքեր աշխարհում իրեն ամենաշատն էին հիացմունք պատճառում:

Ավգուստուսը նույնպես գոհ էր: Նա անչափ ուրախ էր, որ Էթելի նման յուրահատուկ անձնավորությունը երբևէ իր տեղը կզբաղեցնի: Նրա կարծիքով՝ դա վաղ թե ուշ տեղի էր ունենալու: Այդ հարցով ինքը զբաղվում էր և արդեն գաղտնի հաշվետվություն էր պատրաստել. ըստ այդմ՝ Պետական քարտուղարությունում հատուկ ընդգծված էր «Էթել Հարդինգ» անուն-ազգանունը:

1930 թվականին ո՛չ Անգլիայում, ո՛չ էլ մյուս երկրներում գործերը շատ լավ չէին ընթանում: Անցած տարում համաշխարհային տնտեսության ժամանակակից պատմության մեջ մեծ դեր ունեցավ «ամենասև երեքշաբթին», երբ Ուոլ Սթրիթը[68] գլորվեց ներքև, և սկսվեց մեծ ճգնաժամը: Վերջին տասնամյակի ֆինանսական վատթար դրության հետևանքով Մեծ Բրիտանիայում այդ ճգնաժամը կայուն՝ տեղային բնույթ էր կրում:

Էթելի ծննդյան օրը մամուլի առաջին էջերից տեղեկացվում էր, որ գործազուրկների թիվը հասել է երկու միլիոնի, և հայտնի չէ, թե դեռ որքան է ձգվելու տնտեսության անկումը: Մքդոնալդի լեյբորիստական կառավարությունը, որքան կարող էր, պաշտպանվում էր՝ հենվելով լիբերալ պատգամավորների վրա, ովքեր թեև ցույց էին տալիս իրենց կուսակցության փլուզումը, բայց նաև ունեին այնքան անհրաժեշտ քվեներ, որ կարող էին կշեռքի նժարը թեքել իրենց օգտին: Այդ ընթացքում Պահպանողական կուսակցության անդամները հաստատում էին այն միտքը, որ սոցիալիզմն իր հետ կբերի ավելի շատ գործազրկություն, ավելի քիչ ազատություն և ոչ մի ապագա:

Ֆրանսիայում էլ կառավարության աջակողմյան ներկայացուցիչները կարծում էին, թե կարող են թավշյա եղանակով հաղթահարել այդ ծանր ժամանակները: Պուանկարեն ու Տարդյոն համոզված էին, որ ֆինանսական կարգուկանոնը կանի անհնարինը, արմատականները «հանրապետական կարգապահության» հետ կխզեն կապերը և կքվեարկեն իրենց օգտին:

Մամուլում լույս տեսավ մի հոդված՝ «Մորեխի տարին» վերնագրով, որը պատմում էր դեռևս ոչ շոշափելի, բայց Եվրոպայի ու ողջ աշխարհի վրա կախված իրական սպառնալիքի մասին: Այն, ինչ կատարվում էր Եվրոպայում, ցնցող էր: Գործազրկությունը Գերմանիայում ավելի մեծ էր, քան Ֆրանսիայում և Անգլիայում: 1929 թվականին Գերմանիայի արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնող Գուստավ Սթրեսմանի՝ Ռեյխի նախկին կանցլերի մահը ճակատագրի նախանշան էր: ԱՄՆ-ը սկսեց չվստահել գերմանական ֆինանսական ու արդյունաբերական համակարգին, և արտասահմանյան կապիտալն արագ դուրս եկավ այդ երկրից, ինչի արդյունքում սրվեց գործազրկությունը: Արդյունաբերության՝ վերջին տարիներին արձանագրված աճը միանգամից գոլորշիացավ: Կանցլեր Մյուլլերը հրաժարական տվեց, իսկ նախագահ Գինդերբունգը շտապ հրավիրեց քաղկուսակցական կենտրոնի առաջնորդ

[68] Ամերիկյան գլխավոր բորսայի՝ Նյու Յորքում գտնվող կենտրոնը:

Բրյունինգին՝ կառավարություն ձևավորելու համար:

Էթելի ծննդյան օրը կանցլեր Բրյունինգը ստիպված ցրեց խորհրդարանը՝ Ռայխստագը: 1930 թվականի սեպտեմբերի տասնչորսին Գերմանիայում տեղի ունեցան նոր ընտրություններ: Ազգային սոցիալիստական կուսակցությունը, որը գլխավորում էր մինչ այդ գրեթե անհայտ Ադոլֆ Հիտլերը, նախկինում ունեցած տասներկու պատգամավորի փոխարեն այդ ընտրություններում ձեռք բերեց հարյուր յոթ մանդատ՝ սոցիալ-դեմոկրատներից հետո դառնալով երկրորդ կուսակցությունը: Ինչպե՞ս կարող էին իրենց վստահության քվեն տալ ծիծաղելի բեղով ու փայլեցրած սանրվածքով այդ մարդուն…

Ավգուստուսն այն քչերից մեկն էր, որ հիշեց. այդ Հիտլեր կոչվածն այն նույն մարդն էր, ով 1923 թվականի նոյեմբերին Մյունխենում փորձել էր «խռովություն» կազմակերպել: Բրիտանիայի հետախուզության ծառայության՝ Բեռլինում գործող կապավորներից մեկն իրեն ուղարկել էր Ադոլֆ Հիտլերի հեղինակած «Իմ պայքարը» գրքից մեկ օրինակ, որը նա գրել էր բանտում եղած ժամանակ: Գործազուրկներն ու գերմանացի երիտասարդները, ովքեր որևէ աշխատանք գտնելու, առանց դրամական միջոցների ընտանիք կազմելու հնարավորություն չունեին, ելքը գտան՝ անդամագրվելով այդ կուսակցության ռազմականացված կազմակերպությանը, որը նրանց համազգեստ և աշխատավարձ էր տալիս: Այդ կազմակերպությունը՝ SA[69]-ն, գործում էր Էռնստ Ռյոմի գլխավորությամբ:

Ավգուստուսն իր կարծիքը հայտնեց Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի երիտասարդության առանձնահատկությունների մասին: Դա հանպատրաստից զրույց էր, որը, բնականաբար, հետաքրքրեց Էթելին:

Նյումանը հոռետես չէր, ընդհակառակը՝ սովոր էր հաղթահարել դժվարությունները, ժպտալ վատ տրամադրությամբ, գտնել որևէ ելք, երբ իրավիճակն անելանելի էր թվում: Սակայն անկարող էր որևէ բան ներկայացնել տասնութից քսանմեկ տարեկան երիտասարդ տղաներին, որոնցից շատերը պետք է վտանգեին իրենց կյանքը, եթե փոքորիկը, որն ինքը կանխազգում էր, պատեր Եվրոպան:

Էթելը գիտեր, որ Ավգուստուսն այն տեսակ մարդկանցից չէր, որ հենց այնպես խոսում են: Տեսնում էր, որ նա շատ մտահոգ էր, փորձում էր բոլորին բացատրել, որ ամենայն լրջությամբ վերաբերեն վերահաս վտանգին: Ուոլ Սթրիթի անկումը փոխել էր աշխարհի սպասումները: Աշխարհ, որ դեռ պետք է դեմ հանդիման դուրս գար դաժան իրադար-

[69] SA՝ Sturmabteilung՝ հարձակման զորքեր (հղումը՝ հեղինակի):

ձությունների, ու ոչ ոք չէր կարող խուսափել մոտալուտ աղետից:

- Դուք, տղանե՛ր և աղջիկնե՛ր,- դիմելով զրույցի մասնակիցներին՝ ասաց Նյումանը,- պետք է շարունակեք անել ձեր անելիքը՝ սովորել, աշխատել շատ ու լարված: Մեծ Բրիտանիան վաղ թե ուշ ձեր կարիքը կզգա: Ինձ սխալ չհասկանաք: Չեմ ուզում ասել, թե վաղը ևեթ պատերազմ կսկսվի: Գուցե և՝ երբեք: Սակայն դուք սերուցքն եք այն երկրի, որը պետք է ողջ աշխարհում պաշտպանի ազատությունը: Դուք եք դա անելու, ու ձեր հետևում ոչ ոք չի լինի: Ամեն ինչ կախված կլինի ձեզանից, տոկալու ձեր ունակությունից և ձեր անձնական քաջությունից: Ուրիշ՝ ոչնչից...

Այդ խոսքերը, որ նաև համընկնում էին իր հոր փիլիսոփայության հետ, խորապես ազդեցին Էթելի վրա: Երբեք դրանք չի մոռանա: Անհամբերությամբ սպասում էր ամսվա վերջին, որ կարողանար Բեյրութում միանալ իր հորը: Պայմանավորվել էին, որ շրջագայության էին գնալու Բաալբեկ և Պալմիրա. իսկական շրջագայություն՝ Զահլեից ուղտերի քարավանով շարժվել դեպի Բեկաայի հովիտ, այդտեղ մնալ երկու կամ երեք օր, իսկ այնուհետև ճանապարհը շարունակել դեպի հյուսիս-արևելք՝ Պալմիրա, որտեղից էլ սավառնակով կվերադառնան Բեյրութ: Դա կլիներ մի շատ տպավորիչ շրջագայություն, որի մասին նա արդեն երազում էր: Սարան նրան ժպտալով ասաց, որ ինքը նախընտրում է մնալ Բեյրութի իրենց հարմարավետ տանը, որտեղ շատ գործեր ունի անելու: Դա մի նուրբ պատրվակ էր հորն ու աղջկան մենակ թողնելու համար, որպեսզի ոչ ոք ու ոչ մի բան նրանց չխանգարեն:

Դա Էթելի ծննդյան տոնի ամենայուրօրինակ նվերը կլիներ: Երբ նա այդ մասին պատմեց իր ընկեր-ընկերուհիներին, նրանց դեմքին տարակուսանք տեսավ: Ստիպված միջամտեց Ավգուստուս Նյումանը՝ Էթելի պատմածները հաստատելու համար:

- Այդ շրջագայությունը տարիներ առաջ ես կատարել եմ քո հոր հետ, բայց՝ մինչև Բաալբեկ: Ուղտերի քարավան էր, սակայն Թոմասն ու ես գնում էինք ձիով: Ի՜նչ ժամանակներ էին... Բաալբեկը հրաշալի վայր է, այնպես որ՝ եթե հիմա կարող եք գնալ նաև մինչև Պալմիրա, ապա անմոռանալի ճամփորդություն կլինի: Էթելի առավելությունն այն է, որ նա շատ լավ է արաբերեն խոսում, իսկ ուղտերը միայն այդ լեզուն են հասկանում,- Էթելի ընկերներին ասաց Նյումանը՝ խոսքի ավարտին աչքով անելով նրան: Ներկաները չգիտեին, թե ինչ մտածեին:

- Ճի՞շտ է, Էթե՛լ:

1930 թվականին ողջ Եվրոպայի հիմքերը ճռճռում էին, և դաշնակիցների զորքերը տարհանում էին Ռեյնի նահանգը: Վերսալի պայմանագիրն ընդամենը մի տխուր հուշ էր գերմանացիների համար: Շատ քչերն էին, որ համարձակվում էին խոսել գալիք աղետի մասին: Նրանցից մեկն Ուինսթոն Չերչիլն էր, ով իր ընկերներին ու Նյումանին հայտնեց իր կարծիքը՝ խնդրելով, որ իր կանխատեսումներից ողջամիտ հետևություններ անեն:

- Նայելով աստղերին՝ ոչ ոք չի կարող գուշակել ապագան, որը շատ, ավելի քան մոտալուտ է,- հեգնանքով եզրափակեց Չերչիլը:

37. ԷԹԵԼ ՀԱՐԴԻՆԳ
ՀՈՒԼԻՍ - ՆՈՅԵՄԲԵՐ, 1930թ.

Երբ Էթելը հասավ Բեյրութ, շոգը հեղձուցիչ էր, սակայն հորը համոզեց, որ ճանապարհվեն Բաալբեկ: Ճամփա էին ընկնելու լուսաբացից առաջ և շարժվելու էին մինչև տոթի վրա հասնելը, իսկ ամենաշոգ ժամերին ճամբար էին խփելու և հանգստանալու:

Թոմաս Հարդինգը, որ լավ էր ճանաչում իր դստերը, ամեն ինչ նախապես պատրաստել էր: Նրանք մինչև Զահլե գնալու էին ավտոմեքենայով, իսկ այնտեղ հասնելուն պես ճանապարհը շարունակելու էին քարավանով՝ տասնհինգ ուղտերով և մի քանի դիմացկուն ձիերով: Նրանց ուղեկցելու էին տասներկու վստահելի մարդիկ: Զահլեից չորս օրում գնալու էին մինչև Բաալբեկ, որտեղ անց էին կացնելու երեք օր, այնուհետև՝ հինգ օր ճամփորդելուց հետո, Բաալբեկից հասնելու էին Պալմիրա և երկու օր ու գիշեր մնալու էին այդտեղ: Մի խոսքով՝ երկու շաբաթից մի քիչ ավելի էր տևելու ուժեղ շոգի ուղեկցությամբ նախատեսված ուղևորությունը, որը տոգորված էր անցյալից հիշարժան պահեր մտաբերելու մեծ ակնկալիքով:

Թոմասի համար կարևորն այն էր, որ կարողանար իր դստեր հետ վերականգնել այն ջերմ հարաբերությունը, որը հեռավորության հետևանքով խամրել էր: Նույն բանը կատարվում էր Էթելի հետ, ով մեծ քնքշանք էր տածում հոր հանդեպ, բողոքում էր, որ չափազանց քիչ են տեսնվում: Գիտեր, թե այդ հին քարերն ինչ նշանակություն ունեն նրա համար, և ուզում էր հոր հետ կիսել որոշ անկրկնելի պահեր:

Էթելը բավականաչափ զգայուն էր և նկատում էր, որ իր հայրն առաջվա ուրախ ու ինքնավստահ այն մարդը չէ, ում ինքը հիշում է: Ինչ-որ բան էր նրա հոգում կատարվում, քանի որ վերջերս նա լռակյաց էր ու անհաղորդ: Աղջիկը հասկանում էր, որ իր հոր ու Սարայի միջև լուռ համաձայնություն կա, սակայն՝ ոչ իսկական սեր: Հավանաբար դա երբեք գոյություն էլ չէր ունեցել: Սարան փոխարինեց Կարոլինին, լցրեց մի բաց, որն անչափ կարևոր էր Էթելի համար, քանի որ այդ կինը միշտ էլ նրան պարուրել է սիրով ու հոգատարությամբ:

Էթելն ի վերջո չէր հասկանում իր հորը: Նա պրոֆեսոր էր, սակայն երբեք չէր աշխատել որպես այդպիսին, ձախողված հնագետ էր, սակայն՝ հանգամանքների բերումով զինվորական, քաղաքագետ, ով ուզում էր ստվերում մնալ, նրան չէր հետաքրքրում փողը, չէր ուզում պատկանել այն աշխարհներից և ոչ մեկին, որոնցում անց էր կացրել իր կյանքը:

Անգլիայում գրեթե ընկերներ չուներ: Նրան համարում էին տարօրինակ մի մարդ, ով նախընտրում է ապրել փոշոտ ու հետամնաց Բեյրութում, քան թե առաջավոր ու կոսմոպոլիտ Լոնդոնում: Լիբանանում նա հեղինակավոր անձնավորություն էր, գրեթե բոլորը նրան գնահատում էին, սակայն նա երբեք չէր եղել և չէր լինելու նրանց յուրայիններից մեկը:

Թոմասի անգլիական բաց գույնի մաշկին Լևանտի ուժեղ արևի հետևանքով ի հայտ էին գալիս անջնջելի դաջվածքների նման մուգ բծեր, որոնք պատմում էին Արևելքում նրա անցկացրած կյանքի մասին: Նա մի անհատ էր, ով ընտրեց ազատությունը, ով սիրահարվեց գոյությունն ընկալելու որոշակի կերպին, ով դարձավ իր իսկ ընտրության գերին:

Էթելը չէր ցանկանում կրկնել այդ նույն սխալները: Վստահ չէր, որ կցանկանար ապրել Բեյրութում, գուցե՝ ժամանակ առ ժամանակ, սակայն չէր կարծում, թե իր օջախն այդտեղ կկառուցի:

Թոմասին քաջածանոթ էին այդ որոշման առավելություններն ու անպատեհությունները. նա դրանք զգացել էր իր մաշկի վրա ու տառապել: Վերջին տարիներին նա այնքան ժամանակ էր անցկացնում Արևելքում, որքան Անգլիայում: Խոսքը ոչ թե հոգնածության, այլ կորցրած ժամանակը վերագտնելու մասին էր:

Ահա թե ինչու անկախ շոգից ու անպատեհ լինելուց՝ երկուսով որոշեցին առանց ժամանակ կորցնելու կատարել այդ շրջագայությունը: Բուն հանդիպման վայրը Բաալբեկն էր: Էթելը գիտեր, թե իր հոր համար ինչ նշանակություն ունեն այդ ոսկեգօծ քարերը, ընդամենը մի երկու շաբաթվա ընթացքում այդտեղ ծնված այն մոգական պահերը, որոնք անջնջելի հետք էին թողել նրա կյանքում:

Չհամարձակվելով ուղիղ նայել դստեր աչքերին՝ նրան պատմեց իր թույլ տված ողբերգական սխալի՝ Պետերսոնի հետ Միջագետքի պեղումներին մասնակցելու իր սաստիկ մեծ ցանկության մասին: Սակայն ի՞նչ կատարվեց… Նրա գլխին եկած աղետի՝ Կարոլինի անհետանալու և մահանալու մեղքն իրենն էր համարում: Եվ ամեն անգամ, երբ այցելում էր Բաալբեկ, ինքնամաքրվում էր ու վերագտնում իր զգացմունքները, որոնք երբեմն կորած կամ մոռացված էր համարում: Երբ Թոմասն այդ ամենը պատմեց, Էթելը նկատեց հոր խոնավ աչքերը, որոնք ասես իրենից ներողամտություն էին հայցում: Աղջիկը համբուրեց նրա այտերը, իսկ հայրը փորձեց ժպտալ աղջկան, թեև չհաջողվեց:

Սաստիկ շոգն իր տեղը զիջեց ավելի զով եղանակին: Գիշերները հարկավոր էր քնել ծածկոցով: Էթելը սովոր չէր հաճախ ձիավարելուն,

սակայն դեռևս մանկուց նրան դուր էր գալիս ձի հեծնելը: Նրա համար ընտրեցին մի հեզ և խոնարհ երիվար, քանի որ անփորձ մարդու համար ուղտի վրա ավելի անհարմար էր և դժվար: Արաբները նրանց ուղեկցում էին քարավանով, իսկ իրենք՝ երկուսով, մեկ առաջ էին ընկնում, մեկ՝ հետ՝ տվյալ պահին որևէ տեսարանով հիանալով:

Լիբանանն իրոք մի հրաշագեղ վայր էր: Ինչպես մի անգամ ասաց Տանուկին, անկասկած ինչ-որ ժամանակ Բեկաայի հովտում է եղել դրախտը: Այնտեղ օդը մաքուր էր, հստակ, թափանցիկ, ու հեռավորության վրա նկատվում էին անգամ աննշան մանրուքները, պաշտպանիչ սարերը հովտում ստեղծում էին մի եզակի կլիմա, հոյակապ ու արտասովոր գեղեցկությամբ օժտված մի վայր:

Երբ մոտեցան, միանգամից վեր հառնեց Բաալբեկը: Բացի մի քանի բեդվիններից ու մի գերմանացի հնագետից՝ այնտեղ ուրիշ ոչ ոք չկար: Հնագետը՝ Մաքս Շտեյնբերգը, մոտեցավ նրանց, ողջունեց և հրավիրեց իր վրանը: Այդ պահին նա հատուկ լուսանկարչական ապարատով ֆոտոռեպորտաժ էր պատրաստում: Մի քանի վայրի բաղեր, գոհունակությունից շարունակ ծղրտոցներ արձակելով, արագ այս ու այն կողմ էին թռչում՝ հատելով երկինքը:

Մաքս Շտեյնբերգը, ով բաց ու ընկերասեր, բարեկիրթ և ուսյալ, գրեթե Թոմասի տարիքի մի անձնավորություն էր, նրանց հրավիրեց՝ իր հետ ընթրելու: Նա ճամփորդում էր երկու արաբ սպասավորների ուղեկցությամբ, և նրան անչափ դուր էր գալիս լիբանանյան խոհանոցը:

Դեռ նոր էին տեղավորվել վրանում, երբ Մաքս Շտեյնբերգը նրանց ասաց, որ հրեա է: Մի բան, որը Բեռլինում, որտեղ նա արվեստի պատմության դասախոս էր, մեծ խնդիրներ էր հարուցում նրա համար:

Գերմանիայի մշակույթի նախարարությունը ցանկանում էր Բաալբեկի նման հնագույն վայրերի վերաբերյալ հրատարակել պատկերազարդ գիրք. հնագույն կոթողները պետք է նպաստեին Ռեյխի կողմից իրականացվող պետական վիթխարի ճարտարապետությանը: Նա դիմել էր այդ տեղի համար ու քանի որ հրաշալի լուսանկարչի համբավ ուներ, նրան ուղարկել էին Բաալբեկ: Անշուշտ, նա հնարավորինս մեծ որակով կավարտեր իր աշխատանքը, բայց նշեց, որ գոնե առայժմ չի մտածում Գերմանիա վերադառնալու մասին: Մթնոլորտն այնտեղ շատ էր լարվել: Մատնացույց էին անում հրեաներին՝ որպես ամեն ինչում մեղավորների: Ընդ որում՝ Գերմանիայում անվանի բժիշկներից, դասախոսներից, փաստաբաններից և գիտնականներից շատերը հրեաներ էին: Շտեյնբերգի կարծիքով՝ դա ստեղծել էր նախանձի մթնոլորտ, մաս-

նագիտական խանդի ու ռասայական ատելության խառնուրդ: Շարունակ խոսում են այն մասին, որ դրամական բոլոր միջոցները հրեաների ձեռքին են, ովքեր իրենց գործարքներով կասեցնում են, որ փողը հասնի աշխատավորներին, որ վերահսկում են լրատվության միջոցները, մենաշնորհում են փաստաբանական գրասենյակներն ու բժշկական լավագույն հաստատությունները: Այդ ամբողջ ստահող, թյուր ու վնասակար քարոզչությունը տալիս էր իր պտուղները: Այդ ժամանակներում Գերմանիայում հրեա լինելը վտանգավոր երևույթ էր դարձել:

Ավելացրեց, որ գնալու է Սալոնիկ[70]*: Այդ քաղաքի՝ Եվրոպայի հրեական ամենայուրօրինակ ու հնագույն համայնքներից մեկին նվիրված լուսանկարչական ռեպորտաժ պատրաստելու մեծ ցանկություն ուներ: Ավելի ուշ մեկնելու էր Պաղեստին՝ պարզելու համար, թե ինչպես էր ավարտին հասցվելու Թեոդոր Հերցլի երազանքը՝ հրեական պետության ստեղծումը:

Վրանից դուրս գալուց առաջ Մաքս Շտեյնբերգն Էթելին նվիրեց Բաալբեկի երկու հրաշալի լուսանկար: Նրանցից մեկի վրա երևում էր դարավանդը, իսկ խորքում՝ սյունաշարը՝ ցնցող արևամուտի խորապատկերում: Մյուսի վրա արաբներից մեկը կանգնած ցույց էր տալիս «Հարավի քարը»՝ վիթխարի չափերով կառույցը՝ ասես աստվածների կողմից քանդակված: Էթելը հաճելի նվերի համար շնորհակալություն հայտնեց և խոստացավ, որ դրանք կկախի իր աշխատասենյակում՝ որպես այդտեղ անցկացված երկու երեկոների հուշ:

Հաջորդ օրը՝ առավոտյան, ուղևորվեցին դեպի Պալմիրա: Առջևում տանջալից չորս օրեր կային, որպեսզի անցնեին քարքարոտ անապատով՝ Անտիլիբանանյան լեռնաշղթայի հյուսիսով, որտեղ ժայռոտ լեռներն աստիճանաբար փոխարկվում էին փափուկ բլուրների: Թոմասը հիշում էր այդտեղ կատարած իր վերջին ճամփորդությունը: Պալմիրան կործանել էին մարդիկ ու երկրաշարժերը: Երբ տեղ հասան, Թոմասը նայեց իր դստեր թերահավատ աչքերին, որոնք անհավատալի համայնապատկերի վրա զննում էին ավերակները: Ինչպիսի՞ն էր եղել քաղաքն իր ողջ ճոխությամբ... Հետո նրանք լուռ արշավեցին մեծ պողոտայի պես ձգվող սյունաշարի երկայնքով: Թոմասը չէր ուզում ընդհատել Էթելի մտորումները. անձնական փորձից գիտեր, որ այդպիսի պահերը կյանքում եզակի են:

[70] Սալոնիկում գոյություն ուներ սեֆարդի հրեական կարևոր համայնք, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գրեթե ամբողջովին ոչնչացվեց նացիստների կողմից: XVI դարից սկսած Սալոնիկը դարձել էր միջերկրածովյան տարածաշրջանի հրեական ամենակարևոր քաղաքը: Այն հայտնի էր որպես «Բալկանների Երուսաղեմ»:

Այդտեղ մնացին երկու ցերեկ ու երկու գիշեր: Էթելը քայլում էր վիթխարի ավերակների միջով, որոնք օրվա ընթացքում կարծես փոփոխվում էին. լուսաբացին՝ ոսկեզօծ ցոլանք, իսկ մայրամուտին՝ մուգ կարմիր: Այդ վայրով անցել էին բազմաթիվ նվաճողներ՝ գոռոզամիտ մարդիկ՝ Մարկոս Անտոնիոսից սկսած մինչև Ադրիանո: Եվ նրանք համոզված են եղել, որ ապագայում իրենց անունը միայն փառքով է պսակվելու:

Արևը, քամին, բնության ուժերը փոխակերպում էին այդ վայրը: Սյունաշարերը, Բելի, Նեբոյի տաճարները և մյուս կոթողները մի օր վերածվելու են քամուց քշված անապատի փոշու: Մաքս Շտեյնբերգը նրանց ասել էր, որ մտադիր էր գնալ Պալմիրա և այդ ամենը լուսանկարել: Գուցե հեռավոր մի օր այդ լուսանկարները պատմեն Սիրիայի անապատում գոյություն ունեցած մի մոգական թագավորության մասին:

Ինչպես հայրն էր նրան խոստացել, գնացին մոտակա մի վայր, որտեղ Ալենբիի կողմից կառուցված օդանավակայանն էր՝ նախատեսված նրա ռազմարշավանքի համար: Խոսքը վերաբերում էր քարերից մաքրված քիչ թե շատ հարթ տարածության մասին, որտեղ միայն փշոտ մացառներ էին աճում: Հաջորդ օրը մոտեցող ինքնաթիռի հռնդյուն լսեցին: Դա Թոմ Ֆլագերտի ինքնաթիռն էր, որը ֆրանսիացիների համաձայնությամբ օդից նկարահանում էր ողջ տարածաշրջանը, և երկու երկրները կիսում էին տեղեկատվությունը: Որոշեցին հետ վերադառնալ ինքնաթիռով, իսկ իրենց ուղեկցող արաբները կգնային Զահլե ու այնտեղից Բեյրութ կուղարկեին ուղեբեռը: Էթելն ու Թոմասը տեղավորվեցին ինքնաթիռում, որն օդ բարձրացավ՝ փոշու ամպ հանելով: Էթելը, աչքերը չորս արած, թռչունի թռիչքի բարձրությունից զննում էր զարմանահրաշ տեսարանը՝ անապատ, լեռներ ու ծովեզերք...

Մեկուկես ժամ անց վայրէջք կատարեցին Բեյրութի մոտակայքում, որտեղ նրանց սպասում էր ավտոմեքենան: Էթելը ոգևորված էր, ինքնաթիռով թռչելը նրան հրաշք էր թվացել. մինչ այդ նա թռիչքի զգացողություն չէր ունեցել:

Նրա հայրն իր խոստումն ամբողջությամբ կատարել էր: Բաալբեկ ու Պալմիրա կատարած ուղևորությունը նրան հարստացրել էր հոգեպես, ասես ուրիշ մարդ էր դարձել: Հայրը նրան հորդորեց, որ «Թայմս» թերթի համար լրագրային ոճով մի հոդված գրի: Ճանաչում էր հրատարակչին, ով խոստացավ, որ հոդվածը կհրապարակի «Ուղևորություններ» բաժնում: Դա այն անակնկալն էր, որ Թոմասը պատրաստել էր իր դստեր համար:

Սեպտեմբերին Էթելն ու Սարան, արդեն սովորականի պես, նստեցին Լոնդոն գնացող նավ: Թոմասը մի քանի օր մնալու էր Բեյրութում,

ապա մտադիր էր մինչև տարեվերջ մնալ Կահիրեում, որտեղից էլ կմեկներ Լոնդոն՝ Ծննդյան տոները տանն անցկացնելու համար:

«Թայմս»-ում տպագրված հոդվածը մեծ հաջողություն ունեցավ, ու հրատարակիչը՝ Դոուսոնը, Էթելին առաջարկեց համագործակցել. առաջարկն ընդունվեց: Վճռված էր: Նա իրապես գիտեր Արևելքը, և նրան խորթ էին Արևելքի վերաբերյալ հյուսված ամեն կարգի կեղծ պատկերացումները: Նա իրոք սիրում էր արևելյան այդ երկրները, մանավանդ՝ իրեն որդեգրած Լիբանանը, որտեղ իրեն զգում էր այնպես, ինչպես տանը:

Էթելին հասել էր այն լուրը, որ մոտենում է մի մեծ փոթորիկ՝ աշխարհի համար ավելի վատթար ու կործանարար, քան Առաջին համաշխարհային պատերազմը: Նա ուզում էր պատրաստ լինել դրան:

Էթելն իրեն համարում էր ժամանակակից կին և ուզում էր ապացուցել, որ ոչ մի բանով չի զիջում տղամարդկանց: Ավգուստուս Նյումանն այդ մասին նրան շատ հստակ ասել էր. «Կգա այն օրը, երբ կանայք կունենան այն նույն պարտավորությունները, ինչ տղամարդիկ, սակայն դրա համար կանանցից մի քանիսը պետք է նշեն այդ ուղին»: Էթելի համար դա դարձել էր պատվի խնդիր: Մի քանի գիշեր նա երազում տեսնում էր մորը՝ Կարոլինին, ում լուսանկարն իր գրասեղանին էր: Մորը Բաալբեկում 1911 թվականին լուսանկարել էր իր հայրը:

38. ԷԴՈՒԱՐԴ ԲՈՂՈՍՅԱՆ
ԴԵԿՏԵՄԲԵՐ - ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1930-1931թթ.

Լոնդոնի պատմության մեջ այդ տարվա ձմեռն ամենացրտաշունչներից մեկն էր: Էթելը համակերպվում էր այդ վատ եղանակին և դեպի իր ֆակուլտետ քայլելիս շարունակ մտածում էր Միջերկրական ծովի մեղմ կլիմայի մասին: Սակայն Լոնդոնն էլ իր առանձնահատկություններն ուներ: Այն աշխարհի կենտրոններից էր, որտեղ կատարվող իրադարձությունները իրենց հետքն էին թողնում բոլոր ազգերի ճակատագրերի վրա: Այդ քաղաքում ապրող գիտնականները, գրողները, մտածողներն ուրվագծում ու հարթում էին դեպի ապագա տանող ուղին: Թերևս այդպես էր մինչ այդ պահը: Թերթերը գնալով ավելի հաճախակի էին անդրադառնում Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններին: Մանավանդ Գերմանիայում կատարվում էին շատ ցնցող դեպքեր: Գերմանիան ու Ավստրիան պահանջում էին, որ իրենք էլ ընդգրկվեն մաքսային միության մեջ: Ֆրանսիան ու Անգլիան դեմ էին «Mitteleuropa»-յի[71] գաղափարին: Չէին ցանկանում վերադառնալ հնին:

Էթելն ուներ մի գաղտնիք, որն առայժմ ոչ ոքի հետ չէր ուզում կիսել: Նա պատահմամբ հանդիպել էր բժիշկ Բողոսյանի որդուն, և ապագայի հետ կապված նրա բոլոր ծրագրերը փոխվել էին:

Նրանք միմյանց ճանաչում էին հեռակա կարգով, մի առիթով իրար տեսել էին Բեյրութում: Մինչ այդ էլ, երբ դեռ փոքր էին, զբոսանքի ժամանակ հանդիպել էին Լա Կոռնիշում, բայց այդ ամենը մնացել էր անցյալում: Էդուարդը համարյա վեց տարով մեծ էր Էթելից, իսկ կյանքի տասնյոթ-տասնութ տարեկան ժամանակահատվածում այդ տարբերությունը խորն անդունդ է թվում:

Էդուարդը խելահեղորեն տարված էր խոհուն հայացքով և շագանակագույն մազերով այդ գեղանի աղջկանով: Էթել Հարդինգը բոլորից տարբերվում էր, և ովքեր նրան ճանաչում էին, նկատում էին նրա արտասովոր հմայքն ու մարդկանց հետ վարվեցողության ձիրքը: Էդուարդը նույնպես անմիջապես զգաց նրանից հորդող յուրատեսակ ճգողականությունը ու երբ իմացավ, որ նա Թոմաս Հարդինգի դուստրն է, դիմեց նրան.

- Էթե՛լ, Էթե՛լ Հարդինգ, հիշո՞ւմ ես ինձ: Գիտե՞ս, թե ես ով եմ:

Լրացել էր Էթելի քսանմեկամյակը, իսկ Էդուարդը քսանյոթ տարե-

[71] Կառլոս Մեծի կայսրության շուրջ ձևավորված Կենտրոնական Եվրոպա, այսինքն՝ Գերմանիան որպես Եվրոպայի կենտրոն:

կան էր: Էդուարդը նրան պատմեց, որ ինչպես իր հայրը, այնպես էլ ինքը բժշկական բարձրագույն կրթություն է ստացել, իսկ հիմա մասնագիտանում է հոգեբուժության ոլորտում, թեև բժիշկ Բողոսյանի կարծիքով՝ նրանից հրաշալի վիրաբույժ դուրս կգար:

Հաջորդ, ինչպես նաև մյուս օրերին նրանք կրկին հանդիպեցին: Ընդամենը մեկ ամիս անց Էդուարդը նրան սեր խոստովանեց, Էթելը դա ըմբռնումով ընդունեց: Այդուհանդերձ, նրանք իրենց հարաբերությունները գաղտնի պահեցին:

Թոմաս Հարդինգը Լոնդոնում էր և մինչ իր տիկնոջ՝ Սարայի ու Էթելի հետ Բեյրութ վերադառնալն այցելելու էր ակնաբույժին ու սրտաբանին: Դուստրը շուտով ավարտելու էր դասերը, և նրան շատ դուր կգար կրկին Բաալբեկ կամ իր ծնողների հետ Հալեպի ու Դամասկոսի մեծ տոնավաճառներն այցելելը:

Էդուարդը չէր կարող Լոնդոնից հեռանալ: Նա իր ուսման վարձը վճարելու համար աշխատում էր Սուրբ Թոմասի հիվանդանոցում. չէր ուզում հոր վզին բեռ լինել, քանի որ նա իր սուղ միջոցներով դեռ երկու դուստրերի ուսման հարցերը պետք է լուծեր:

Էթելն ու Էդուարդը գիտակցում էին, որ իրենց միջև ծագած սերն անհաղթահարելի այնպիսի մի ուժ է, որ իրենց կախարդել է երջանկությամբ, ինչպես նաև՝ կարճատև բաժանման տվայտանքով:

Հարդինգները պատկանում էին Անգլիայի հասարակության ամենաբարձր դասին: Նրանք հարուստ էին ու զորեղ: Ունեին սեփականություն և կապեր, նրանց ազգանունն անգլիական ազնվականության ամենաընտրյալների շարքում էր: Ծննդով սասունցի Բողոսյանների ընտանիքը սկզբում եկել էր Հալեպ, այնուհետև հաստատվել էր Բեյրութում: Նրանք էլ այն եզակի հայերից էին, որոնց հաջողվել էր հաղթահարել բազմաթիվ փորձություններ, կորուստներ ու աղետներ: Եվ Բողոսյաններն ամեն օր շնորհակալություն էին հայտնում Աստծուն, որ իրենց գոյատևելու հնարավորություն է տվել:

Այն, որ Էդուարդ Բողոսյանն ու նրա քույր Մարին Լոնդոնում ավարտում էին ուսումնառությունը, իրենց հայրենակիցներից շատերի երազանքն էր: Հայրենակիցներ, ովքեր ցանկանում էին նոր կյանք սկսել այն վայրերից հեռու, որտեղ տեղի էր ունեցել իրենց յուրայինների անասելի ողբերգությունը:

Էդուարդ Բողոսյանը հստակ գաղափարների տեր երիտասարդ էր: Հայրը նրան ու քույրերին բացատրել էր, որ կարող է հոգալ նրանց ուղևո-

ության ծախսերը, ինչպես նաև՝ մի փոքր ավելին, իսկ մնացածն իրենք պետք է լրացնեին՝ իրենց դրսևորելու հնարավորություն ունենալով: Ինչպես Էդուարդը, այնպես էլ Մարին, որ մեկուկես տարով մեծ էր եղբորից, խելամիտ էին և արդեն գիտակից տարիքում սարսափելի իրավիճակներում հայտնվելով՝ լիովին ըմբռնում էին իրականությունը: Նրանք հիշում էին իրենց այն զարմուհիներին, ովքեր ծնողներին ու հարազատներին կորցնելուց հետո գալիս էին Բեյրութ: Հալեպում իրենք նույնպես ամբողջ ընտանիքով իրենց մաշկի վրա կրել էին այդ դառը փորձությունը՝ վերջին պահին մի կերպ դուրս պրծնելով մահվան ճիրաններից:

Էթելը ցանկանում էր բոլորից գաղտնի պահել իրենց սիրավեպը: Ուզում էր լիովին վստահ լինել, որ իր զգացմունքները ճշմարիտ են ու անկեղծ, քանզի անկախ իր տարիքից՝ սթափ միտք ուներ և չէր ցանկանում սխալվել: Ինչ վերաբերում էր Էդուարդին, ապա նա ոչ միայն իր սիրո մասին էր խորհրդածում, այլև գոյություն ունեցող հակասությունների: Նա ոչ մի կերպ չէր հանդուրժի, որ որևէ մեկը մտածեր, թե իր սերը շահադիտական է՝ պայմանավորված հասարակական կամ սոցիալական վերելքով: Հարդինգ ազգանվանը միանալը նրա առջև կբացեր Լոնդոնի բարձր հասարակության դռները: Նա համոզված էր, որ իրեն կհաջողվեր դառնալ լավ բժիշկ, մեծ հոգեբույժ, և ուզում էր դրան հասնել անձնական արժանիքներով: Այնքա՜ն անելիքներ կային այդ բնագավառում:

Առաջին համաշխարհային պատերազմը թողել էր բազմաթիվ հետևանքներ, տուժած մեծաթիվ մարդկանց, ովքեր անգամ տարիներ անց չէին հասկանում, թե ինչ էր տեղի ունեցել: Դեռ ավելին՝ նրանք չէին ըմբռնում բնականոն հարաբերություններ ունենալու, սիրելու և սիրվելու իրենց անկարողությունը, ոչ էլ կարողանում էին ձերբազատվել սարսափելի մղձավանջներից: Ընդ որում՝ այդ ամենը նրանց թույլ չէր տալիս, որ իրենց տեղը գտնեն, ընդգրկվեն հասարակական կյանքում:

Էդուարդը Սուրբ Թոմասի անվան հիվանդանոցում տարբեր հիվանդների էր ընդունում՝ նրանց բուժման գործընթացում ցուցաբերելով իր գիտելիքների ողջ զինանոցն ու դրսևորելով գերագույն ձգտում: Հիվանդներից նրան հատկապես հետաքրքրեց մի հայուհի, ով իր ընտանիքի հետ Լոնդոն էր եկել 1916 թվականին: Այդ ժամանակից ի վեր նա տառապում էր ընկճախտով, որը տարիներին զուգընթաց սրվում էր, մինչև իսկ հասել էր խելագարության, քանի որ սկսել էր հարձակվել յուրաքանչյուր համազգեստ կրողի վրա, անգամ՝ փոստատարի: Հիվանդը գրեթե չէր խոսում, ամուսնու հետ ոչ մի հարաբերություն չուներ, ոչ էլ կարող էր մենակ մնալ, քանի որ սկսում էր հուսահատ ողբալ: Այդ դեպքը մարտահրավեր

էր Էդուարդ Բողոսյանի ու նրա դասախոսների համար, ովքեր տեսնում էին այդ հայ երիտասարդի լայն հնարավորությունները: Մյուս բժիշկների համեմատությամբ՝ տվյալ պարագայում նրա առավելությունն այն էր, որ կարող էր հիվանդի հետ խոսել մայրենի լեզվով, ինչը բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ վստահության և մտերմության հիմքի վրա առաջին հաղորդակցական կապը հաստատելու առումով:

Էթելը չափազանց երիտասարդ էր որոշ բաներ խորապես ընկալելու համար, սակայն երբ Էդուարդն ասաց, որ սիրում է նրան, աղջիկը հասկացավ, որ եթե համաձայներ, ապա այդ պահից սկսած իր կյանքը փոխվելու է, և հանուն դրա՝ պետք է ջանքեր գործադրի: Նա, ուրախությամբ համակված, համաձայնեց, ու երկուսով հուզմունքից արտասվեցին:

Անցան ամիսներ, ու Էթելը հոր և Սարայի հետ սովորականի պես մեկնեց Բեյրութ, սակայն այդ ամառն այլ էր: Նա գրում էր երկար նամակներ՝ լի սիրով, խոստումներով և երազանքներով, ու Էդուարդից ստանում նույնպիսի պատասխաններ, որոնք երիտասարդն ուղարկում էր Բեյրութի իրենց տան հասցեով ու իր քրոջ՝ Թերեզայի անունով:

Այդ ամառ առավել քան շոգ էր, տոթահեղձ, իսկ Թոմասի տան միակ վայրը, որտեղ տանելի մթնոլորտ էր, նկուղի հետնամասն էր՝ անմիջականորեն տան կողքի բլրի ստորոտի ներքո: Թոմասն այդտեղ պատրաստել էր մի քարանձավ, որտեղից ամռանը զով, իսկ ձմռանը տաք հոսանք էր փչում: Հենց այդտեղ էր առանձնանում Էթելը՝ իր հախուռն նամակները գրելու և ցերեկվա ամենատոթ ժամերին զովանալու համար:

Անկախ այն բանից, որ ամռանն անտանելի շոգ էր, նա սիրում էր Բեյրութում լինել և որոշ ժամանակ հոր հետ անցկացնել: Սարային նա ավելի շատ էր տեսնում, քանի որ Լոնդոնում միասին էին լինում:

Այդ ամառ Թոմասը դեռ չգիտեր, որ իր դուստր Էթելն ամուսնության խոսք էր տվել: Նա հիանում էր իր դստեր առողջ դատողությամբ և համոզված էր, որ նա դառնալու է վառ անհատականությամբ օժտված հմայիչ կին: Բավական էր այն, որ նա մայրենի լեզվի պես խոսում էր արաբերեն. գրեթե տասներկու տարի նրան դաստիարակել էր Նաղիմա Ղալիբը՝ ամեն ինչ անելով, որ նա խորապես ընկալի այն աշխարհը, որն այնքան տարբեր էր եվրոպականից:

Իր նամակներից մեկում Էդուարդը նրան պատմում էր, որ հաջորդ ուսումնական տարում գուցե իրեն՝ որպես ընթերակա, հաջողվի սովորել Վիեննայի նեյրովիրաբուժական ինստիտուտի հոգեբուժության բա-

ժանմունքում, որը ղեկավարում է Զիգմունդ Ֆրոյդը: Թափուր տեղերը խիստ սահմանափակ էին, սակայն գուցե իրեն օգնի գերմաներենի լավ իմացությունը: Նրա խոսքերից ոգևորություն էր հորդում: Էթելը պատասխանեց, որ հպարտ է նրանով և համոզված, որ այդ գործը հաջողությամբ կպսակվի:

Այդ ժամանակ էր, որ Էթելը որոշեց խոսել իր ընտանիքի հետ: Այնտեղ՝ վերին պատշգամբում, ընթրիքից հետո իր հորն ու Սարային պատմեց Էդուարդ Բողոսյանի նկատմամբ տածած իր զգացմունքների մասին: Նրան չընդհատեցին, թույլ տվեցին, որ խոսքն ավարտի: Այդ ընթացքում Թոմաս Հարդինգն ըմբոշխնում էր իր մեկ գավաթ կոնյակը: Ինչ խոսք, նա կնախընտրեր, որ իր դուստրն ասեր, որ սիրում է այլ՝ երիտասարդ անգլիացու՝ սոցիալական ու ֆինանսական իրենց դասից: Սակայն լավ գիտեր, որ ցանկությունը մեկ բան է, իսկ սերը՝ բոլորովին այլ բան: Մի պահ բոլորը լուռ մնացին, մինչև որ Սարան տեղից վեր ելավ ու համբուրեց Էթելի ճակատը: Թոմասը՝ համոզված լինելով, որ հնարավոր չէ պայքարել բնության ուժերի դեմ, տեղի տվեց և ուղղվեց դեպի Էթելը՝ գրկելով նրան:

- Էթե՛լ, դա քո ընտրությունն է, քեզ միայն կարող ենք ցանկանալ ամենայն երջանկություն: Ճանաչում եմ այդ տղային: Էդուարդ Բողոսյանն իմ լավ բարեկամի որդին է: Մի մարդու, ով դժվար պահերին, երբ իր ժողովուրդը ենթարկվում էր սարսափելի լլկանքների ու կտտանքների, ցուցաբերեց հոգու անվեհերություն ու խիզախություն, ինչպես և իր ընտանիքի անդամները: Բացի դրանից՝ քեզ լավ ճանաչելով՝ համոզված եմ, որ դու նրանով չէիր հրապուրվի, եթե նա մի բացառիկ մարդ չլիներ: Իմ շնորհավորանքները, Էթե՛լ, չէ՞ որ գիտես, որ մենք միշտ քո կողքին ենք:

Էթելը հուզված գրկեց հորը, և Սարան միացավ նրանց: Հարկ չկար ավելին ասելու, թեև Թոմաս Հարդինգը գրեթե մինչև լուսաբաց մտասույզ մնաց պատշգամբում: Տարբեր պահեր էր մտաբերում բժիշկ Բողոսյանի հետ ունեցած երկար տարիների բարեկամությունից: Բժիշկը բարի ու շռայլ հոգու տեր անձնավորություն էր, ով բազմիցս ապացուցել էր, թե հանուն այլոց՝ ինչերի է ընդունակ՝ վտանգելով իր իսկ կյանքը:

1931 թվականի սեպտեմբերի կեսերին Սարան ու Էթելը նավով ուղևորվեցին Սաութամփթոն: Ճամփորդությունն անցավ հանգիստ, և նրանք հասան Լոնդոն: Էթելն ամբողջ ժամանակ մտածում էր իր փեսացուի և այն մասին, թե ինչ է ասելու, երբ հանդիպի նրա հետ:

Այնինչ նրան սպասում էր Էդուարդի նամակը, որում երիտասարդը

նրան բացատրում էր, որ ստիպված անհապաղ մեկնել է Վիեննա, ուր նրան և մյուս թեկնածուներին հրավիրել էին քննության, որպեսզի որոշվեր, թե ով է զբաղեցնելու թափուր տեղը: Էդուարդ Բողոսյանի գերմաներենը հրաշալի էր, սակայն չէր կարող մրցել այնտեղ ծնված ուրիշ մեկի հետ և իր հարսնացուին հուզված գրում էր, որ այնքան էլ համոզված չէ, որ իրեն կընտրեն: Բացի դրանից՝ դոկտոր Զիգմունդ Ֆրոյդը շատ խստապահանջ մարդու համբավ ուներ, իսկ ինքը չգիտեր, թե արդյոք կարող է մրցունակ լինել հոգեվերլուծության պես նրբին բնագավառում: Նամակի վերջում գրել էր, որ հենց որ կարողանա, կվերադառնա Բեյրութ, և այն, որ նրան շատ է սիրում:

Էթելը կասկածի մի նշույլ անգամ չուներ նրա որոշման վերաբերյալ: Հիշում էր Բեյրութում անցկացրած իր մանկության պահերից, երբ հոր հետ քայլում էր Լա Կոռնիշում և առաջին անգամ տեսավ բժշկին ու նրա որդուն՝ Էդուարդին: Այդ ժամանակ իր հայրը բժշկի մասին ասել էր հետևյալը. «Նա իմ լավագույն բարեկամներից է և իմ կյանքում երբևէ ճանաչած ամենախիզախ ու պատվախնդիր մարդկանցից մեկը»:

39. ՎԻԵՆՆԱ
1932թ.

«Ի վերջո, զոհերը մնում են որպես հերոսներ, իսկ դահիճները՝ դահիճներ»:

Էդուարդ Բողոսյանի բախտը բերեց. նա արժանացավ դոկտոր Ֆրոյդի համակրանքին, ում չափազանց հետաքրքրել էր երիտասարդ հայ բժշկի՝ հոգեբուժության տեսանկյունից յուրօրինակ «Զոհեր և դահիճներ» թեմայով փայլուն աշխատանքը: Նա լսեց Էդուարդ Բողոսյանի պատմածը Անատոլիայում տեղի ունեցած ողբերգական դեպքերի մասին, և այն, թե ինչ էր տեղի ունենում մարդկային արարածների՝ զոհերի ու դահիճների ներաշխարհում: Դա այնպիսի նոր բան էր, որ դոկտոր Ֆրոյդը ժամանակ չխնայեց՝ շարունակ հարցեր տալով երիտասարդին:

Այսպիսով՝ դոկտորը Վիեննայի նեյրովիրաբուժական ինստիտուտի հոգեբուժության բաժանմունքում Էդուարդ Բողոսյանին որպես ընթերակա նշանակեց, ինչպես նաև Վիեննայի գլխավոր հիվանդանոցում աշխատանք տվեց: Էդուարդն ինքն անգամ չէր հավատում այդպիսի հաջողությանը: Այդ ժամանակ գիտության այդ բնագավառը կոչվում էր «հրեական գիտություն», քանի որ մասնագետների գերակշիռ մասը հրեական ծագում ուներ:

- Ես երեք տարի անց եմ կացրել այդ հիվանդանոցում,- պատմում էր Ֆրոյդը Էդուարդին,- և պատկերացրե՛ք՝ ամեն ինչով զբաղվել եմ՝ որպես թերապևտ, որպես մաշկաբան և վնասվածքաբան: Հիվանդանոցում շատ բաներ կսովորեք: Հետո՝ երեկոյան ժամերին, շաբաթական երկու անգամ կաշխատեք Նեյրովիրաբուժական ինստիտուտում, ինչպես իմ մյուս ընթերակաները:

Հակաճառելու հարկ չկար: Դոկտոր Ֆրոյդը չէր ընդունում անգամ չնչին առարկություն:

Էդուարդը նրան թուրքական մի փոքրիկ գորգ նվիրեց, որը գնել էր Ստամբուլից գորգեր ներկրող հայ վաճառականի խանութից: Գորգը փռեցին այն բազմոցին, որի վրա դոկտոր Ֆրոյդն անց էր կացնում հոգեվերլուծության իր սեանսները: Այն Ֆրոյդին անչափ դուր եկավ:

1932 թվականի սկզբներին Էդուարդը երկշաբաթյա արձակուրդ ունեցավ և առիթից օգտվելով՝ ուղևորվեց Լոնդոն: Ժամանակի մեծ մասը խլելու էր ճանապարհը, սակայն կարևորն այն էր, որ նա հանդիպե-

լու էր իր հարսնացուին: Քանի որ Էդուարդը նրան չէր տեղեկացրել իր գալստյան մասին, Էթելը, նրան տեսնելով, հուզվեց: Հինգ օր միասին անցկացրին: Էթելը որոշեց, որ ոչինչ չի պատահի, եթե ինքը մի քանի օր դասերից բացակայի, իսկ Էդուարդը նրան կրկին սեր խոստովանեց՝ համոզված, որ Էթելն իր կյանքի ընկերուհին է: Նա նաև մտածում էր, որ Էթելին հանդիպելն իր համար անհավատալի բախտավորություն է:

Հենց այդ օրերին էր, որ նրանք որոշեցին իրենց հարսանիքի ժամանակը՝ 1932 թվականի ամռանը: Էթելը չէր ցանկանում այնպիսի հարսանիք, որը վերածվեր հասարակական իրադարձության, ու նրանք որոշեցին հանդիսությունն ընտանեկան շրջանակով կազմակերպել Հարդինգների՝ Սուռեյում գտնվող առանձնատանը: Էթելն այդ մասին խոսեց հոր հետ, ով, ոչ մի առարկություն չհայտնելով, միայն ասաց.

- Քեզ համար դեռ վաղ չէ՞ ամուսնությունը:

Աղջիկը գլուխը բացասաբար շարժեց: Ո՛չ, շուտ չէր: Բացի դրանից՝ ուզում էր ամուսնանալ Էդուարդի հետ: Ինչո՞ւ պետք է սպասեր: Հայրը հասկացավ: Չէ՞ որ ինքը ժամացույցի վրա տարիներ առաջ փորագրել էր «Carpe Diem» արտահայտությունը: Նա չէր ուզում արտահայտել իր մտածմունքները, սակայն հոռետեսությամբ էր նայում ապագային: Այն, ինչ կատարվում էր Գերմանիայում, նրան անհանգստացնում էր: Թոմասն ականատեսն էր եղել այն բանի, թե Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ինչի էին ընդունակ գերմանացիները: Հիշում էր, թե նրանք ինչ սառնարյունությամբ էին մեղսակցում այն կառավարության հետ, որն այլ ռասայի և կրոնի պատկանելիության պատճառներով սահմռկեցուցիչ սպանդի էր ենթարկում իր հպատակներին, առավելապես՝ քրիստոնյա, կիրթ և քաղաքակիրթ հայերին:

Այդ ժամանակից ի վեր Թոմասը հավատ չէր ընծայում Գերմանիայի նկատմամբ: Այդ անհատը՝ Ադոլֆ Հիտլերը, նրա կարծիքով, արգահատելի, իր նպատակներին հասնելու համար ամեն ինչի ընդունակ մարդ էր: Հիտլերը նրան շատ էր հիշեցնում Թալեաթ փաշայի գործելակերպն ու էությունը: Մտաբերեց, որ Թալեաթին Բեռլինի կենտրոնում սպանեց մի հայ ուսանող՝ Սողոմոն Թեհլերյանը՝ վրեժ լուծելով իր ազգակիցների կոտորածների համար: Դատարանը նրան անմեղսունակ ճանաչեց, քանի որ նրա գործողություններն արդարացված էին:

Էթելի ծնողներն Էդուարդին ընդունեցին Լոնդոնի իրենց տանն ու ոչ միայն շնորհավորեցին նրան, այլև ասացին, որ գոհ են իրենց դստեր ընտրությունից: Էդուարդը վախենում էր, որ իրենց միջև եղած սոցիալական ու ֆինանսական տարբերություններն անհաղթահարելի խոչընդոտ

կհարուցեն, սակայն նա հանդիպեց այնպիսի մարդկանց, ովքեր ի զորու էին հեռուն տեսնել և չէին պատկանում այն շահագրգիռ խավին, որ իրենից ցածր դասի առջև փակում էր դռները:

Վիեննա վերադառնալուց հետո նա շարունակեց իր աշխատանքը Վիեննայի գլխավոր հիվանդանոցում: Մի քանի ամիս անհամբերությամբ սպասում էր իրենց հարսանիքին: Եվ ահա օգտվելով հերթական արձակուրդից՝ կրկին ուղևորվեց Լոնդոն՝ Էթելի հետ ամուսնանալու:

1932 թվականի հունիսի 15-ին Միլֆորդի քաղաքապետարանում գրանցեցին իրենց քաղաքացիական ամուսնությունը, որից հետո Հարդինգների առանձնատանն ընտանեկան ճաշկերույթով նշեցին այդ իրադարձությունը: Ընդունելով իրենց դստեր՝ Էթելի ցանկությունը, շքեղ հարսանիք չարեցին, ինչը նաև կվերածվեր հարստության և իշխանության ցուցադրության: Փեսացուի կողմից ներկա էին միայն նրա երկու քույրերը: Բժիշկ Բողոսյանը նորապսակներին մի հուզիչ նամակ էր ուղարկել, որում երիտասարդ զույգին մաղթում էր երջանկություն: Վերջում ներողություն էր խնդրում հանդիսությանը չմասնակցելու համար և հույս հայտնում, որ նրանց ամուր գրկելու է Բեյրութում: Ինքն իրեն բավականին մեծահասակ էր համարում և երկար ու հոգնեցուցիչ ուղևորության համար այնքան էլ առողջ չէր:

Էթելն ու Էդուարդը մեղրամիսն անցկացրին Շոտլանդիայում: Հունիսի վերջերին վերադարձան Լոնդոն և չորս օր անց ուղևորվեցին Վիեննա: Վարձակալած մի փոքրիկ բնակարանում ապրելու էին այնքան ժամանակ, որքան Էդուարդին հարկավոր էր մասնագիտական կրթություն ստանալու համար. դա կտևեր երկու տարուց ավելի:

Ուսումնառությունն ավարտելուց անմիջապես հետո Էդուարդ Բողոսյանը մտադիր էր Ժենևում կամ Բաղեն-Բաղենում բացել բժշկական մասնավոր կլինիկա: Արժանավայել ապրելու համար չպետք է կախում ունենար աներոջից: Շատ էր սիրում Էթելին և ուզում էր, որ նա իրենով հպարտանար:

Էթելի համար փողը մի բան էր, որ կյանքում օգնում էր նպատակների իրագործմանը, սակայն դա նրա համար կարևորություն չուներ: Նրանցից և ոչ մեկը չուներ ո՛չ պերճանքի, ո՛չ էլ քմահաճույքներ բավարարելու հակում: Էթելը ցանկանում էր շարունակել ուսումը և ընդունվեց Վիեննայի համալսարան: Ուզում էր կատարելագործել իր գերմաներենը:

Վիեննան առաջվա պես կոսմոպոլիտ քաղաք էր, որտեղ շատ եվրոպացիներ էին գալիս՝ պատմություն ու երաժշտություն ուսումնասիրելու:

Անկախ ամեն ինչից՝ դա մի ցնցող քաղաք էր իր առասպելական անցյալով: Այդտեղ լավ էին ապրում, և կյանքն էլ գնալով ավելի բարեկեցիկ էր դառնում: 1932 թվականի ամռան վերջին զբոսայգիները լի էին կյանքը վայելելու փափագով համակված մարդկանցով, և օրվա ցանկացած ժամին քաղաքի բոլոր անկյուններում հնչում էր Շտրաուսի երաժշտությունը: Նրանց՝ Տաբորշտրասսեի անկյունում վարձակալած բնակարանը ճակատով նայում էր Դոնաուկանալին, ինչը թույլ էր տալիս, որ Էթելը հեծանվով գնա համալսարան:

Ցերեկով նրանցից յուրաքանչյուրը զբաղվում էր իր գործով: Էդուարդը տրամվայով գնում էր հիվանդանոց և այնտեղ մնում համարյա ողջ աշխատանքային օրը: Ճաշում էր մոտակա ռեստորանում և ժամը հինգին վերադառնում տուն, որտեղ նրան սպասում էր Էթելը՝ թեթև ընթրիքով: Հետո նրանք դուրս էին գալիս զբոսանքի և կիսվում օրվա տպավորություններով:

Հոկտեմբերի սկզբներին Էթելը նրան ասաց, որ պրոֆեսոր Մաքս Շտեյնբերգը խնդրել է, որ իրեն տեղափոխեն Վիեննա, որտեղ նա տուն ուներ և հավանաբար լինելու էր արվեստի իր դասախոսը: Շտեյնբերգին չէր հաջողվել իրականացնել իր երազանքը՝ Բաալբեկի ու Պալմիրայի լուսանկարներով ալբոմ հրատարակելը: Հրեա լինելը Բեռլինում շատ դռներ էր փակել նրա առջև: Ընդ որում՝ օրըստօրե հրեաների վիճակը վատթարանում էր՝ անկախ հասարակության մեջ նրանց ունեցած մտավոր և ֆինանսական դիրքից:

Նրանք բարեկամացան պրոֆեսոր Շտեյնբերգի հետ, ով հիսուն տարեկանին մոտ էր և շատ լավ պահպանված: Հոկտեմբերի կեսերին՝ մի երեկո, նրան իրենց տուն հրավիրեցին՝ ընթրելու: Շտեյնբերգը նրանց նվեր բերեց Բաալբեկում գտնվող Վեներայի տաճարի հիասքանչ լուսանկարը, որի վրա՝ ավերակների ներքևում, պարզորոշ երևում էին երկու մարդու ուրվագծեր. Թոմաս Հարդինգն ու Էթելն էին: Լուսանկարիչն այն դրել էր շրջանակի մեջ, ու արտասովոր մի լուսանկար էր ստացվել:

Էթելի համոզմամբ՝ հրաշալի աշխատանք էր, և ուշադիր զննելուց հետո գրկեց պրոֆեսորին: Շտեյնբերգը նկարին առանձնապես ուշադրություն չդարձրեց, սակայն երբ Էդուարդն այն կախեց պատին, ակնհայտ էր, որ հեղինակին հաջողվել էր վեր հանել Վեներայի տաճարի հիասքանչ գեղեցկությունը, մթնոլորտում տիրող անդորրը և անկումը: Պակաս կարևոր չէր նաև այն, որ լուսանկարում միաժամանակ արտացոլված էր Հարդինգների հախուռն սերն Արևելքում գտնվող այդ վայրի հանդեպ: Վայր, որը դարեդար շարունակում էր հմայել դասական աշխար-

հով տարված զգայուն մարդկանց, վայր, որտեղ արևն ամեն առավոտ հուրհրում էր՝ կրկին լուսավորելու համար իր սիրասուն քաղաքը[72]:

Հանդիպումը նշելու և բարեկամություն հաստատելու կապակցությամբ բացեցին մի շիշ գինի՝ պատրաստված Կենտրոնական Եվրոպայի ոսկեգույն խաղողից, և բաժակ բարձրացրին ի պատիվ Վենեբրայի, Բաքոսի և Յուպիտերի:

Էթելը հիշում էր այնտեղ կատարած իր այցը, երբ մանրամասնորեն զննում էր Բաքոսի մուտքի մեծ դռան բարավորները, գեղաշուք զարդանախշ քանդակները՝ խաղողի որթերը, ցորենի հասկերը, ծաղիկները, խորհրդանիշները: Անկախ իր կամքից՝ աչքերը խոնավացան, և իր կարոտաբաղձ հուշերով վարակեց պրոֆեսորին:

- Հուզմունքիս պատճառը Դուք եք, պրոֆեսո՛ր: Մեղքն այս հրաշալի լուսանկարինն է: Երբեք չեմ տեսել նման բան:

Շտեյնբերգը փորձեց մեղմել իր ունեցած դերակատարությունը և հավաստիացրեց, որ լուսանկարված օբյեկտին է վերապահվում այդ պատիվը, ինչպես նաև՝ լուսանկարչական ոսպնյակին ու ժապավենին, որոնք ապահովում են վերջնական որակը և հստակությունը:

Ավելացրեց նաև, որ Արևելքում կատարած իր ուղևորությունների ընթացքում ստեղծել է լուսանկարչական հրաշալի հավաքածու, իսկ այդ լուսանկարն ամենահաջողվածներից մեկն էր:

«Riesling» նուրբ գինին բացեց Շտեյնբերգի լեզուն: Նրա գլխավոր խնդիրը մենակությունն էր, թեև խոստովանեց, որ ինչ-որ մեկը կա իր կյանքում: Սկսել էր մտածել, որ մարդիկ իրենից խույս են տալիս, ոչ ոք չի ուզում իր հետ շատ մտերմանալ, ինչը կապված էր իր՝ հրեա լինելու հանգամանքով: Բեռլինի համալսարանի նրա գործընկերների, պրոֆեսորների ու գիտնականների ճնշող մեծամասնությունը համակված էր կատաղի հակասեմիտիզմով, և նրանք ամենուրեք քննադատում էին հրեաներին, ովքեր, այսպես ասած, «զավթում էին» իրավունքի, բժշկագիտության և գիտական հետազոտությունների ամբիոնները:

- Ես ավստրիացի եմ,- ասաց պրոֆեսորը,- իմ ծնողները՝ նույնպես: Իմ գերդաստանը դարեր ի վեր ապրում է այս երկրում: Սակայն հիմա ես հակասեմիտիզմի պատճառով ստիպված թողել եմ Բեռլինի համալսարանը. դա թունավորում է իմ գոյությունը:

Էթելը չէր կարողանում ըմբռնել, թե այդ ինչ է կատարվում Գերմանիայում, որ Շտեյնբերգի պես կիրթ և լայն մտահորիզոնի տեր մարդը

[72] «Արևի քաղաք». Բաաղ՝ փյունիկեցիների արևի աստվածը և քաղաք Բակի (Բաալբեկ):

ստիպված էր հեռանալ այդ երկրից, թե հրեաների դեմ այդ ինչ աճող թշնամանք է, որ տարածվել է նաև Բեռլինի պես հեղինակավոր համալսարանում: Սակայն կամաց-կամաց սկսեց հասկանալ, որ Վիեննայում նույնպես ի հայտ են գալիս այդ նույն երևույթի նախանշանները:

Այդ ժամանակ Էդուարդը նրան պատմեց, թե ինչ խոսակցություն է տեղի ունեցել իրեն դասավանդող բժիշկներից մեկի հետ: Այդ մարդն ատում էր հրեաներին ու երբ ծանոթացել է Էդուարդի հետ, հարցրել է.

- Լսել եմ, որ ձեզ՝ հայերիդ, երբեմն անվանում են Ասիայի հրեաներ: Մի՞թե դուք հրեաներ եք:

Էդուարդը պատասխանել է, որ իրենք հրեաներ չեն, սակայն ամեն դեպքում հայերի մեծ մասը խորապես համակրում է հրեաներին:

- Այդ պահին ինձ այդ բժիշկն անպատվեց՝ ասելով, որ Ավստրիայում տեղ չունեն հրեաներով հիացողները, և հրեաներն ու նրանց համակրողները պետք է հեռանան:

Էդուարդը նրա խոսքն անպատասխան է թողել՝ մտածելով՝ իրոք ցավալի է, որ Ավստրիայի պես հրաշալի ու առաջադեմ երկրում այդպիսի տրամադրություն է տիրում:

Հոկտեմբերի կեսերին հեռագիր ստացան. վախճանվել էր բժիշկ Բողոսյանը: Լուրը շատ տխուր էր: Էդուարդը, սաստիկ ճնշված, անմխիթար լաց եղավ: Նրա հայրն ամիսներ ի վեր հիվանդ էր, բայց ով կարող էր կանխատեսել այդքան արագ վախճան: Փոխադարձ համաձայնությամբ որոշեցին ուղևորվել Բեյրութ: Դա հարգանքի տուրք կլիներ այդ մարդու հիշատակին:

Հաջորդ օրը գնացք նստեցին և ուղևորվեցին մինչև Տրիեստ, որն Ադրիատիկ ծովում Վիեննային ամենամոտ նավահանգիստն էր: Այդտեղից էլ նավ նստեցին ու երկու օր անց հասան Պիրեա: Բեյրութ գնացող նավ նստելու համար երեք օր սպասեցին և տեղ հասան նոյեմբերի սկզբներին:

Բժիշկ Բողոսյանի աճյունը երկու շաբաթ առաջ արդեն հողին էին հանձնել: Նրա շիրիմին այցի գնացին: Արևմուտքից փչող քամուց ծաղկեպսակները կորցրել էին իրենց թառամած ծաղկաթերթերի մեծ մասը: Մանր անձրև էր տեղում, մթնոլորտը տխուր էր ու ճնշող: Էդուարդը, Էթելի ձեռքը բռնած, սկսեց լաց լինել: Այլևս երբեք չէր կարող այդ բարի մարդուն ասել, որ սիրում էր նրան:

Երբ վերադարձան Բեյրութի կենտրոն, հորիզոնում պայթեց կայծակնային ամպրոպը: Անձրևի ու քամու ուժեղ բռնկումները նրանց ստիպեցին, որ վազեն Հարդինգների տուն, որտեղ մնալու էին, քանի դեռ

գտնվում էին Բեյրութում: Հետո եկավ իր հոր մտերիմ ընկերների խումբը: Այուբ Թաբիթը խոսեց բոլորի անունից: Էդուարդին ասաց, որ հպարտ էին նրա նման մարդուն ճանաչելու համար: Բոլորն էլ այն կարծիքին էին, որ Հալեպում՝ աքսորյալների ճամբարում ապրած տառապանքը կարճացրել էր բժիշկ Բողոսյանի կյանքը: Թաբիթն ավելացրեց, որ Բեյրութի քաղաքապետարանը փողոցներից մեկը կոչելու է նրա անունով: Այնուհետև հերթով լռելյայն սեղմեցին Էդուարդի ձեռքն ու գլխի թեթևակի խոնարհմամբ հրաժեշտ տվեցին Էթել Հարդինգին: Այդպիսին էր սովորույթը…

Հաջորդ օրը բժիշկ Թաբիթը կրկին եկավ, այս անգամ՝ դոկտոր Պապապուլոսի՝ գլխավոր հիվանդանոցի տնօրենի ընկերակցությամբ: Հանգուցյալի հասցեին լավագույն խոսքեր ասելուց հետո տնօրենը երիտասարդ բժշկին՝ Էդուարդ Բողոսյանին, հիվանդանոցում աշխատանք առաջարկեց: Գիտեին նրա հրաշալի պատրաստվածության մասին, թեև ավելի շատ թերապևտի կարիք ունեին: Նրա հայրը թերապևտ էր, և իրենք համոզված էին, որ Էդուարդն արժանիորեն կգբաղեցներ այդ տեղը:

Բժիշկ Թաբիթը նրան պատմեց Բեյրութում տիրող իրավիճակի, Ֆրանսիայի նախաձեռնությամբ ու վերահսկողությամբ անցկացված նոր մարդահամարի տվյալների մասին: Ի դեպ, այդ տվյալների համաձայն՝ հայկական համայնքի շնորհիվ քրիստոնյաները, թեև ոչ մեծ տարբերությամբ, մեծամասնություն են կազմել: Անշուշտ, բողոքներ են եղել մուսուլմանների կողմից, ովքեր փաստարկել են, որ հայերը լիբանանցի չեն: Սակայն՝ ո՛չ, լիբանանցիներ են, դեռ մի բան էլ՝ ավելին: Լիբանանին սպասվում է փայլուն ապագա: Գնալով ավելի շատ եվրոպացիներ, մանավանդ ֆրանսիացի պաշտոնյաներ ու զինվորականներ են հաստատվում այդ երկրում: Առաջադիմությունն իրենն է անում: Բոլորի համար ակնհայտ էր, որ այլևս հետադարձի ճանապարհ չկա:

Էդուարդը պատասխանեց, որ այդ ծանր պահին իր նկատմամբ հոգատար լինելու համար անչափ շնորհակալ է, սակայն պետք է ավարտի իր ուսումնառությունը, թեև բացառված չէ, որ կվերադառնա Լիբանան: Նաև ավելացրեց, որ ինչպես ինքը, այնպես էլ Էթելը Բեյրութն ու Լիբանանը համարում են իրենց իսկական օրրանը: Դոկտոր Պապապուլոսը չպնդեց իր առաջարկը, քանի որ պահը հարմար չէր, սակայն վստահ էր, որ երիտասարդ Էդուարդ Բողոսյանը, ի վերջո, հաստատվելու է իրենց մոտ:

Մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի կեսին, Էդուարդն ու Էթելը վերադար-

ձան Վիեննա: Երբ հասան, եղանակը ցուրտ էր, ու բարակ անձրև էր տեղում: Այդ քաղաքը նրանց ավելի տխուր և օտար թվաց, քան երբևէ: Սակայն Էդուարդի ապագան այդտեղ էր, և սրտնեղությունն ավելորդ էր:

Էթելը երազում էր Միջերկրական ծովի, մի օր Բեյրութ վերադառնալու մասին: Մշտապես կիսավարտ ու փոշոտ այդ քաղաքը, որը նրա համար հարազատ տուն էր, այնքան տարբեր էր կայացած և մշակութային Վիեննայից: Ուղևորության ընթացքում ահավոր մղձավանջ ապրեց: Վիեննայում սարսափելի բան էր տեղի ունենալու, որից ոչ ոք չէր փրկվելու:

40. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ
ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1932թ.

Էդուարդ Բողոսյանը գրեթե չէր շփվում դոկտոր Ֆրոյդի հետ, երկու կամ երեք ամիսը մեկ նրան մի քանի րոպեով տեսնում էր որևէ ժողովի ընթացքում: Դա այն չէր, ինչ ինքը սպասում էր, սակայն անկախ ամեն ինչից՝ նա զգում էր, թե որքան է առաջադիմում իր ուսումնառության մեջ: Վիեննայում շատ բարձր էր բժշկագիտության մակարդակը, իսկ Նեյրովիրաբուժական ինստիտուտը համաշխարհային կտրվածքով համարվում էր լավագույն հաստատություններից մեկը: Իր մասնագիտության մեջ դոկտոր Ֆրոյդը համար առաջինն էր, ու Էդուարդը նրա նկատմամբ ակնածանք էր տածում: Դոկտորը հեշտ բնավորության տեր մարդ չէր, ոչ էլ սիրալիր էր, բայց նա Ֆրոյդն էր:

Էդուարդը հպարտ էր, որ ամուսնացել էր մի կնոջ հետ, ում սիրում էր՝ անկախ տարբեր դիրքի, սոցիալական կարգի և այլ խնդիրներից: Պետք է իրեն համարեր ամենաբախտավոր մարդկանցից մեկը, սակայն սկսում էր զգալ, թե ինչպես է հասունանում Վիեննայից՝ «կատարյալ քաղաքից» հեռանալու գաղափարը: Ինքն էր այդ քաղաքն այդպես կոչել այն օրից ի վեր, երբ հաստատվել էր այդտեղ, սակայն ինչ էր կատարվում այդ «կատարյալ քաղաքում»:

Նա հանդիպեց պրոֆեսոր Շտեյնբերգին ու միասին սրճեցին «Կլայնես Կաֆե»-ում՝ քաղաքի կենտրոնի լավագույն սրճարաններից մեկում:

- Էդուա՛րդ, այս հանդիպումը կանխորոշված է: Քեզ մի գաղտնիք կասեմ, սակայն դու ոչ ոքի չպետք է պատմես: Այս գիշեր գնացքով գնում եմ Բեռլին, իսկ տասնհինգ օրից նավով գնալու եմ Բեյրութ: Որոշել ենք ավարտել տարիներ առաջ ձեռնարկած իմ աշխատանքը: (Էդուարդը լայն բացված աչքերով նայում էր պրոֆեսորին:) Պետք է հնարավորինս շուտ գնամ, վախենում եմ այստեղ մնալուց: Ես գնում եմ սեմագիտության մի պրոֆեսորի՝ Ալբերտ Շտերնի հետ. տարիներ ի վեր մեզ կապում է ջերմ բարեկամությունը: Նա պետք է Բեռլինով անցնի, իսկ ես նրան մենակ չեմ ուզում թողնել: Նրա անձնագիրն անվավեր է: Նախարարությունում մի լավ ընկեր ունի, արդեն հետը խոսել է, նրա համար անձնագիր է պատրաստել՝ ելքի թույլտվությամբ: Միայն պետք է գնա և վերցնի: Հետո գնալու ենք Համբուրգ, իսկ այդտեղից՝ նավով Բեյրութ: Ուզում եմ Շտերնին ցույց տալ այն ամենը, ինչի մասին այնքան եմ պատմել նրան, որ կարծում է, թե տեսել է դրանք: Մեր կարծիքով՝ եթե Գերմանիայում նացիստները գան իշխանության, ապա ահավոր բաներ տեղի

կունենան: Լսի՛ր, Էդուա՛րդ, Շտերնը նույնպես հրեա է: Գրեթե մեկ տարի առաջ Բեռլինում էինք, երբ սինագոգից[73] դուրս գալիս ենթարկվեցինք նացիստական կուսակցության անդամների հարձակմանը: Շտերնը բազմաթիվ հարվածներ ստացավ գլխին, դրանից հետո շատ է փոխվել, շարունակ մղձավանջների և տագնապի նոպաների մեջ է: Դու և Էթելը պետք է մտածեք այստեղից հեռանալու մասին: Սա այն Վիեննան չէ, որի մասին երազում էր ողջ Եվրոպան: Սա դարձել է մի վայր, որտեղ օձն է բնավորվել: Հիտլերն ավստրիացի է ու այստեղ է այդքան վատ դաստիարակվել: Նայի՛ր, թե ինչ է կատարվում Գերմանիայում, օրինականացրել են կուսակցական գրոհայինների խմբավորումները: Փոստային արկղում քեզ կթողնեմ իմ տան բանալին, եթե ուզենաս այնտեղից որևէ բան վերցնել, ապա վերցրո՛ւ: Մտադիր չեմ երբևէ վերադառնալ: Երբ ավարտին հասցնենք Բաալբեկի և Պալմիրայի ուսումնասիրությունը, կփորձենք նավով գնալ Նյու Յորք: Սա է այն ամենը, ինչ ուզում էի քեզ ասել: Երանի մի օր կրկին իրար տեսնենք: Նորից եմ կրկնում, չամաչես, բնակարանիցս կվերցնես այն, ինչ որ կամենաս: Այդ բնակարանը հայրս գնել է վաթսուն տարի առաջ և լի է հիշողություններով: Ո՛չ ժամանակ ունեմ տեղափոխվելու, ո՛չ էլ՝ ցանկություն: Ոչ ոք թող չմտածի, թե հեռանում եմ երկրից: Քեզ ցանկանում եմ լավագույնը: Մնաս բարով, հաջողություն քեզ:

Պրոֆեսոր Շտեյնբերգն արագ վեր կացավ տեղից, կրկին ձեռքը մեկնեց Էդուարդին՝ գլուխը թեթևակի խոնարհելով: Էդուարդը կրկին նստեց: Ցնցված էր: Ռադիոյով լսել էր Հիտլերի ելույթներից, որոնցում ժայթքում էր նրա ատելությունն այն գերմանացիների հասցեին, ովքեր իր կուսակցությանը չէին պատկանում: Էդուարդին շատ էր հետաքրքրում, թե ի՞նչ էր անցնում այդ մարդու մտքով, որ հանկարծակի հայտնվել էր Գերմանիայում և ուզում էր ամեն ինչ փոխել: Խոսում էր Ռեյխն այդ գարշելի հրեա արարածներից՝ հրեական բացիլներից ազատելու, համալսարանը, իրավաբանության ու բժշկության ոլորտները հրեա մակաբույծներից մաքրելու մասին: Գործածում էր բժշկական բնույթի որակումներ՝ «հեռացնել փտախտը», «վերացնել չարիքը», «մաքրել պալարը»... Էդուարդը շատ անգամ մտածում էր, որ այդ մարդու խելքը տեղը չէ: Խոսքը մեծարված լինելու մտագարությամբ տարված հիվանդի, հրեաների և զտարյունության հանդեպ սեռռուն խելացնորի մասին էր: Շատ տարօրինակ էր, որ գերմանացի ու ավստրիացի ոչ մի հոգեբույժ այդ մասին ոչ

[73] 1931թ. սեպտեմբերի 12-ի գիշերը (ըստ հրեաների օրացույցի՝ Նոր տարի) Կուրֆյուրստենդամում՝ Բեռլինում, նացիստները դաժանորեն հարձակվեցին հրեաների վրա, ովքեր սինագոգում մասնակցել էին հանդիսությանը (հղումը՝ հեղինակի):

մի մեկնաբանություն չէր արել: Իսկ Ֆրո՞յդը... Պետք է նրա հետ խոսեր Հիտլերի՝ որպես անհատի մասին: Էդուարդը չէր հասկանում, թե ինքը, որ նոր էր դիպլոմ ստացել, սոսկ իր բազային գիտելիքներով ինչպես էր այդքան հստակ ախտորոշել այդ հիվանդությունը: Հարկ էր կրկին լսել ռադիոյով եթեր արձակվող նրա ելույթները, որպեսզի համոզվեր՝ արդյոք ճիշտ է կռահել, թե դա իր սուբյեկտիվ գնահատականն է:

Նա մի գարշահոտ էություն է, որ թաքնվում էր զբոսայգիների աշխույժ համերգների, գարեջրատներում հնչող երգերի, ցանկացած պատրվակով փողոցներով անցնող փողային նվագախմբերի երաժշտության, վարժարաններում սովորող և զինվորներին ընդօրինակող երիտասարդ տղաների հետևում: Շտրաուսին գալիս էին փոխարինելու զինվորական քայլերգերը: Վիեննացիներն ու առհասարակ ավստրիացիները շատ հպարտ էին, որ իրենց համերկրացի Ադոլֆ Հիտլերը Գերմանիայի հավանական տիրակալն էր լինելու:

Էդուարդին սառը քրտինք պատեց: Նա չէր կարողանում մոռանալ այն, ինչ իրեն, երբ ընդամենը երեխա էր, և իր ողջ ընտանիքին պատահեց Հալեպում: Հիշում էր աքսորյալների՝ հազարավոր հայ կանանցով ու երեխաներով լցված ճամբարը, որտեղ նաև ինքը, մայրն ու քույրերն էին և որևէ տեղեկություն չունեին հորից, ում մահացած էին համարում: Չէր կարողանում մոռանալ գերմանացի այն սպաներին, ովքեր հեռվից՝ փշալարերից դուրս, ձի հեծած, հետևում էին թուրքերի գործելակերպին:

Այդ ամենը հիմք էր հանդիսացել, որ նա գրի «Զոհեր և դահիճներ» թեմայով իր ատենախոսությունը: Նաև դրա՝ մարդկային հոգին հասկանալու համար էր այդտեղ՝ Զիգմունդ Ֆրոյդի մոտ: Նա զոհ էր, ու նրա ողջ կյանքը շարունակվելու էր այդպես: Միակ հնարավոր փախուստն այդ վախից ու սարսափներից, որոնց մասին ոչ ոքի չէր կարող պատմել, այն էր, որ ձերբազատվեր դրանցից: Նա անգամ չէր համարձակվել, որ դիմի Էթելի օգնությանը: Սկսեց շատ վատ զգալ, հեծկլտաց: Ստիպված ձեռքերով ծածկեց դեմքը՝ նկատելով, որ հարևան սեղանների շուրջ նստածները տարօրինակ հայացքով են իրեն նայում: Շտեյնբերգի խոստովանությունը տակնուվրա էր արել իր հիշողությունները, իր ապրած հոգեցունց սարսափները: Նա համոզված էր, որ իր ծնողները վախճանվել են այդ դժոխքի միջով անցնելու հետևանքով, և ինչպես ինքը, այնպես էլ իր քույրերը երբեք չեն կարողանալու ազատվել այն տեսարաններից, որոնց ականատեսն են եղել: Դա մի ահավոր մղձավանջ էր, հոգեկան սարսափելի ցնցում, որը շարունակ խանգարում էր իր երջանիկ լինելուն:

Ու երբ կարծում էր, որ իրեն հաջողվելու էր հասկանալ, թե ինչու են

մարդկային որոշ արարածներ վերածվում դահիճների, և կարծում էր, թե ինքը պետք է մյուսներին փրկի այդ դահիճների ձեռքից, հանկարծ նրա սարսափելի մղձավանջները դառնում էին իրականություն, և նրա առջև կրկին հայտնվում էին այն ուրվականները, որոնց նա մոռացված էր համարում:

Գրոհայինների խմբավորումները, որոնց նա տեսել էր ավտոբուսով Բեռլին կատարած շրջագայության ժամանակ, ազատորեն շրջում էին այդ քաղաքում՝ ագրեսիվ վարք դրսևորելով այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց դուր չէին գալիս:

Մինչ տուն վերադառնալը չէր դադարում Շտեյնբերգի մասին մտածելուց: Նա արտասովոր մի անձնավորություն էր, առավել քան կիրթ, չափազանց զգայուն և իր իմացածն ուրիշներին փոխանցելու մեծ պատրաստակամությամբ: Հավանաբար նրա ընկեր Շտերնն էլ այդպիսի անձնավորություն է: Հրեա լինելու իրողությունը նրանց մղում էր, որ լքեն իրենց ծննդավայրը, հրաժարվեն իրենց մշակույթից, մոռանան իրենց համալսարանը, իրենց կյանքը: Բաալբեկ վերադառնալը մի հրաշալի պատրվակ էր, որպեսզի փախչեին մի մթնոլորտից, որը նրանց համար դառնում էր հեղձուցիչ:

Երբ նա տուն վերադարձավ, Էթելն անմիջապես նկատեց նրա հոգեկան վիճակը: Հարցրեց, թե ինչ է պատահել, ու Էդուարդը չկարողացավ կեղծել: Այնքան անպաշտպան էր, այնքան փխրուն, որ իր համոզմամբ՝ Էթելն իրեն տեսնում էր ներսից: Այդպես չէր կարող շարունակվել, ու նա մեծ ճիգ գործադրեց, որպեսզի Էթելին բացատրի, որ ինքը ներքուստ ուրիշ մարդ է՝ խոշտանգված, մորմոքված, սևեռամիտ, որ անկախ անցած տարիներից, իր ստացած կրթությունից և իր թափած ջանքերից՝ չի կարողանում ձերբազատվել այն հին ուրվականներից, որոնք իրեն շարունակ ահաբեկում են այն ժամանակ, երբ փորձում է քնել, որ մթության նկատմամբ ունեցած վախն իրեն ուղեկցում է մանկությունից: Էթելը նրան գրկեց և համբուրեց: Հետո կնոջն ասաց, որ պրոֆեսոր Շտեյնբերգը հեռանում է երկրից, նշեց նաև դրա պատճառները: Ինչպե՞ս կարող էր Էթելից ինչ-որ բան թաքցնել...

Էթելը շատ բախտավոր էր եղել կյանքում, չնայած ինքն էլ չէր կարողանում մոռանալ այն, որ մանուկ հասակում առևանգել էին իրեն: Համարյա երեքուկես տարեկան էր, երբ հայրը գտավ իրեն, ու ներքուստ մի բան անվերջ հիշեցնում էր այդ պահը:

Գիշերվա պատահարից, երբ առևանգեցին իրեն, հիշողության մեջ

միայն աղոտ պատկերներ էին մնացել, որոնք, սակայն, որոշակի ընդմիջումներով անվերջ գնում-գալիս էին: Երբեմն նրան մի տարօրինակ մղձավանջ թույլ չէր տալիս, որ հանգստանա, վախենում էր անտառներից: Այդ ամենը կապված էր Բիբլոսի իրենց տան վրա կատարված հարձակման հետ, իր մոր մահվան հետ, իր իսկ առևանգման հետ: Նա այդ մասին մեղմորեն պատմեց ամուսնուն: Ո՛չ ամաչելու, ո՛չ էլ վախենալու բան ուներ, և ինքը կարող էր հասկանալ ամուսնու ցավի մորմոքը:

Հետո նրանք գրկախառնվեցին, և Էդուարդը նրան հախուռն կրքով տիրեց:

Այնուհետև ննջարանում Էթելը բռնեց ամուսնու ձեռքը և շշնջաց.

- Քեզ մի բան պետք է ասեմ: Վստահ չէի... մինչև այսօր: Ես հղի եմ: Մենք երեխա ենք ունենալու:

Էդուարդը նրան կրկին գրկեց:

- Չես կարող պատկերացնել, թե որքան ինձ երջանկացրիր քո լուրով: Հիմա ես քեզ մի բան կառաջարկեմ: Ես կուզենայի, որ մեր մանչուկը կամ աղջնակը ծնվի Բեյրութում: Համաձա՞յն ես: Այստեղ ես կավարտեմ դասընթացս, ու վեց ամիս հետո կմեկնենք: Չկա մի բան, որ ուղղակիորեն ինձ վրա ազդի, երդվում եմ քեզ, բայց այս քաղաքում կա մի բան, որ ինձ անհանգստացնում է, չեմ ուզում, որ մեր զավակն այստեղ ծնվի: Համամիտ ե՞ս:

Էթելը համաձայնեց, հասկանում էր, թե խոսքն ինչի մասին է, քանի որ ինքն էլ որոշ բաներ նկատել էր. մարդկանց դեմքի արտահայտությունն աշխատանքի գնալիս, գերմանական քաղաքականության օգտին անցկացվող ցույցերը, ռադիոյի ու մամուլի խայթող հարձակումները հրեաների դեմ: Նրանք այդ ամենից ուղղակիորեն զերծ էին, սակայն տիրում էր պղտոր ու տարօրինակ մթնոլորտ: Քաղաքը փոխակերպվում էր, այլակերպվում, պայքարում սեփական ճակատագրի դեմ, իսկ իր բնակիչները չէին հասկանում, թե ինչ է տեղի ունենում:

Եվ պատահական չէր, որ այդ շրջանում Վիեննայի նկարիչները կանխազգում և յուրահատուկ ձևով էին մեկնաբանում այն սարսափելին, որ կատարվելու էր առաջիկայում. մութ նկարներ, որոնցում մարդիկ փախչում էին իրենց ճակատագրից, ցնցող գծապատկերներ, որոնցում նկատվում էին սարսափ, մթություն, ապագայի բացակայություն, խարդախություն ու մոլագարություն: Այդ մասին էին վկայում արվեստի բազմաթիվ պատկերասրահները, որոնք լցվում էին իմպրեսիոնիստների հոռետեսական, ստվերներով ու անձկություններով լի կտավներով: Դա նորաձևություն չէր, ոչ էլ՝ պատահականություն, այլ այնպիսի աշ-

խարհրնկալում, որում տեղ չկար ո՛չ բերկրանքի և ո՛չ էլ հույսի համար:

Այո՛, ավելի լավ կլիներ, որ նրանց զավակը ծնվեր Բեյրութում՝ իրենց տանը: Հայրն ասել էր իրեն. «Եթե մի օր ցանկանաս վերադառնալ Բեյրութ, ապա վերադարձի՛ր քո տուն: Երբեմն ես էլ կգամ, սակայն կուզենայի, որ այդ տունը մնար մեր ընտանիքինը: Գիտե՞ս, ես տունը քո մոր՝ Կարոլինի համար գնել ու բարեփոխել եմ այն հույսով, որ մի օր նա կվերադառնա: Շատ երեկոներ եմ անցկացրել պատշգամբում՝ դիտելով Միջերկրական ծովն ու Սպիտակ լեռը՝ համոզված լինելով, որ նա կգա: Հիմա տունը քոնն է: Եթե մի օր վերադառնաս այնտեղ, կհասկանաս՝ վայրեր կան, որ հոգի ունեն»:

Էթելը համբուրեց ամուսնուն. դա կլիներ լավագույն ընտրությունը:

- Համաձայն եմ: Մի քանի ամիս հետո մեր երեխան կծնվի այնտեղ՝ Սպիտակ լեռան հովանու ներքո:

41. ԿԱՀՈՒՅՔՆԵՐԻ ՊԱՀՈՑԸ
ՀՈՒՆՎԱՐ - ՀՈՒՆԻՍ, 1933թ.

Հունվարի կեսերին՝ մի մռայլ ու ցրտաշունչ երեկո, Էթելը հեծանվով գնաց պրոֆեսոր Շտեյնբերգի՝ օպերայի մոտ գտնվող տունը: Երբ տեղ հասավ, վերելակը չէր գործում, ոտքով բարձրացավ վերջին հարկ: Բնակարանի մուտքը շքեղ էր: Իր մոտ էին Շտեյնբերգի բանալիները, որոնք նա թողել էր փոստարկղում: Էթելը բանալին մտցրեց փականի անցքի մեջ, ու դուռը կամացուկ բացվեց: Բնակարանում մութ էր, նա դռան մոտ գտավ անջատիչը, սակայն լույսը չվառվեց: Մտածեց, որ Շտեյնբերգը խզել է պայմանագիրը: Քայլեց կիսախավարում. պատշգամբի կողմի պատուհաններից փոքր-ինչ լույս էր թափանցում: Փեղկերը բաց արեց Վիեննայի երեկոյան թույլ լույսի առջև: Տեսավ, որ բնակարանի կահավորանքը նրբաճաշակ է, բայց՝ մի քիչ հնաոճ: Շտեյնբերգը նրանց պատմել էր, որ ծնվել է այդ տանը, որն իր ծնողներինն է եղել, և ինքը չի ցանկացել որևէ բան փոխել: Դարավերջյան վիեննական նուրբ ճաշակով կահավորված այդ բուրժուական բնակարանում նրանք հավանաբար ապրել են կյանքի լավագույն պահերը: Շտեյնբերգը, ըստ իր պատմածի, ընդամենը քսան տարեկանում, այսինքն՝ մոտավորապես 1900 թվականին, ստիպված գնացել է Բեռլին: Երեսուներեք տարի էր անցել, և նա արդեն հասուն մարդ էր, սակայն՝ վախեցած այն բանից, ինչ աշխարհը բացում էր նրա առջև:

Էթելը չէր համարձակվում որևէ բանի դիպչել. մտել էր իրեն չպատկանող, բայց՝ հոգեհարազատ ոլորտ: Դանդաղ քայլեց միջանցքով, ակամայից սեղմեց այլ անջատիչ, ու լույսը վառվեց, ինչը վախեցրեց իրեն: Նա մտավ մի ոչ մեծ սրահ: Այնտեղ տեսավ մի հիանալի ֆրանսիական հայելի, դաշնամուր, կարմիր մետաքսապատ բազմոց, մի ապակեպատ պահարան՝ լցված ճոխ մանրակերտ քանդակապատկերներով: Ո՛չ, ոչ ոք այդտեղ չէր մտել: Պետք է, որ իր վճիռը կայացնելիս Շտեյնբերգը երկար խորհած լիներ. նա թողել էր իր ողջ ունեցվածքը: Նա թերևս վերցրել էր մի փոքրիկ ճամպրուկ ու իր թանկագին ֆոտոխցիկը: Այդ սրահի մթնոլորտն այնքան բեռնված չէր, որքան հյուրասենյակինը: Զգացվում էր, որ բնակարանում ապրել են կիրթ և նրբաճաշակ մարդիկ: Հոգոց հանեց: Մեծ կարեկցանքով էր համակված Շտեյնբերգի հանդեպ: Այդ մարդը հավանաբար շատ էր տանջվել այդ ամենը թողնելու և գնալու պատճառով: Մի՞թե այդքան դաժան ու մոտալուտ էր Հիտլերի ազգայնամոլներից եկող սպառնալիքը:

Ի՞նչն էր ստիպել, որ Շտեյնբերգն այդպիսի արմատական որոշում ընդունի: Դուրս եկավ մի ապակեպատ դռնով, որը բացվում էր դեպի աշխատասենյակ: Այդտեղ բոլորովին այլ մթնոլորտ էր. պատերը լի էին լուսանկարներով, մի քանիսը՝ գունավոր, իսկ մեծ մասը՝ սև ու սպիտակ:

Թավշապատ պատի վրա՝ լաքապատ սև շրջանակի մեջ, Բաալբեկն էր՝ Յուպիտերի տաճարը, մեծ ծառուղին, ինչպես ինքն էր հիշում ամենայն մանրամասնությամբ: Կային նաև Բեյրութի հրաշալի տեսարանների լուսանկարներ, ինչպես՝ Լա Կոռնիշը՝ խորքում՝ ձյունածածկ սարերը: Աչքերը խոնավացան: Շտեյնբերգն իսկական արվեստագետ էր. գնահատում էր գեղեցիկն ու արտացոլում լուսանկարների միջոցով: Սիրտը գրեթե կանգ առավ, երբ նկարներից մեկում՝ ցնցող սյուների ներքևում, տեսավ իր հորը: Շատ հստակ էին երևում դիմագծերը՝ հմայիչ, նրբաճաշակ և ուժեղ խառնվածքով անձնավորություն: Չէր կարող այդ լուսանկարը թողնել այդտեղ, բայց ոչ էլ համարձակվեց տեղից պոկել այն: Ինքն ընդամենը հյուր էր այդ բնակարանում, այդ վայրին ու նրա պատմությանը՝ օտար: Դուրս եկավ աշխատասենյակից, սեղանին տեսավ թղթի մի քանի կտորներ: Ամեն ինչ այն տպավորությունն էր թողնում, որ ուր որ է մտնելու է պրոֆեսորն ու շարունակելու է աշխատել:

Վախվորած մտավ ննջասենյակ: Անկողինը հավաքված չէր: Մահճակալի գլխից կախված էր արևելյան կիմոնոյի տիպի կարմիր մետաքսե խալաթ: Սենյակում տարածված էր օծանելիքի սուր հոտ, թեև՝ ոչ տհաճ: Գիշերային սեղանիկի բաց դարակում տեսավ քնաբեր հաբերի տուփեր: Սենյակը չափից ավելի ծանրաբեռնված էր: Պատին մի քանի լուսանկարներ կային, որոնցում Շտեյնբերգն էր՝ հագին խալաթ, իսկ կողքին՝ մեկ այլ տղամարդ՝ կուրծքը բաց: Հասկացավ. Շտեյնբերգը համասեռամոլ էր: Ի՞նչ էր այն մարդու անունը, ով նրա հետ գնում էր երկրից դուրս. Ալբերտ Շտե՞րն… Նա նույնպես պրոֆեսոր չէ՞ր: Իհարկե: Շտեյնբերգը երբեք ամուսնացած չէր եղել: Բեռլինում մթնոլորտը գնալով անտանելի էր դառնում, ամենուրեք գլուխ էր բարձրացնում հակահրեականությունը: Այդ ամենին գումարվում էր նաև այն, որ ըստ նացիստների՝ համասեռամոլները հիվանդ, արատավոր մարդիկ են, ովքեր քայքայում են գերմանական պետության՝ Ռեյխի ամուր հիմքերը: Հարձակումը, որին Նոր տարվա գիշերը ենթարկվեցին հրեաները, նրանց իրենց գլխին գալիք աղետի մասին մտածելու տեղիք տվեց: Էթելը քաշեց հեշտադարանի (կոմոդի) վերին կիսաբաց դարակը: Գտավ նուրբ սպիտակեղեն, կողքին՝ լուսանկարների ալբոմ: Մի պահ վարանեց, սակայն վերցրեց ու այն բացելով՝ տեսավ մի մերկ, իրեն անծանոթ, ննջարանի

նույն մահճակալի վրա մեկնված տղամարդու լուսանկար:

Լուսանկարն արտասովոր էր, արտաքուստ՝ շատ գեղեցիկ, լուսավորությունը՝ խնամքով ընտրված, որի վրա մոխրագույն երանգներից սևին անցումը կատարյալ էր: Շրջեց մի քանի էջ: Մեկ այլ լուսանկարում Մաքսը և անծանոթը մահճակալի վրա գրկախառնված էին: Անհարմար զգաց և միանգամից ալբոմը փակեց: Ծանր էր շնչում: Այդպիսի բան երբեք իր հետ չէր կատարվել:

Շտեյնբերգը համոզված էր, որ այլևս չի կարողանալու վերադառնալ և, ըստ այդմ, իր հետ տարել էր միայն իր ապրած կյանքի հուշը և ոչ մի բան չէր ոչնչացրել: Որոշել էր փախչել: Չէր կարող հանդուրժել այն մարդկանց բռնությունն ու դաժանությունը, որոնց կարծիքով՝ մյուսների դեմ տարվող քաղաքականությունը կառուցվում է արյամբ, վշտով ու արցունքներով: Վիեննան չեղավ իրենց երազած ապաստանը:

Շտեյնբերգն ուզում էր Ալբերտ Շտերնին տանել իր դրախտը՝ Լիբանան, Բաալբեկ, գուցե և Պալմիրա: Ուզում էր այլ մթնոլորտում շնչել, մաշկի վրա զգալ արևի ջերմությունը, բոլորովին այլ միջավայրում ազատ լինել: Գեղեցկագույն լուսանկարներն ամեն ինչ ասում էին: Դրախտը գոյություն ուներ և դեռ հասանելի էր նրանց: Հանգիստ շունչ քաշեց: Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, և տարվա կեսին ամուսնու հետ գնան Բեյրութ, ապա կհանդիպեն Շտեյնբերգին ու Շտերնին:

Էթելը համարձակ որոշում ընդունեց, պետք է խորհրդակցեր Էդուարդի հետ: Պրոֆեսորը լավ էր գիտակցել, թե ում մոտ է թողնում բանալիները:

Երբ տուն վերադարձավ, Էդուարդն անհամբեր նրան էր սպասում: Պատմեց, որ համալսարանի հարակից տարածքներում տեղի են ունեցել մի քանի ցույցեր, ու ոստիկանությունը միջամտել է արտառոց դաժանությամբ: Ունեցել էր նաև ցնցող հանդիպում մի գերմանացու՝ Բեռլինից ժամանած ոմն Կառլ Բրանդտի հետ, ով կարճատև այցով եկել էր Ֆիզիոլոգիայի ինստիտուտ: Դասախոսության պես մի բան է կարդացել, որն ավելի շատ նման է եղել քաղաքական միտինգի, քան ակադեմիական ելույթի: Նա նշել է, որ մտավոր հիվանդներն անբուժելի են, և պետությունը չպետք է նրանց համար փող ծախսի:

Նրա՝ որպես բժշկի արտասանած այդ խոսքերը ոմանց զայրույթն են հարուցել: Էդուարդը նույնպես աջակցել է նրանց: Սակայն դոկտոր Բրանդտը շատ հախուռն ձևով պաշտպանել է իր դիրքորոշումը: Այն տպավորությունն է եղել, որ նա ոչ մի զգացմունք չունի, ու պրոֆեսոր

Վիզեն այդ մասին ասել է նրա երեսին: Բրանդտն էլ պատասխանել է, որ զգացմունքները տեղ չունեն հոգեբուժական հիվանդանոցներում, և միայն պետք է ախտորոշել՝ հիվանդները բուժման ենթակա են, թե՝ ոչ: Երբ դոկտոր Վիզեն էլ հարցրել է, թե ինչ պետք է անեն անբուժելի հիվանդների հետ, Բրանդտը սառնարյուն պատասխանել է.

- Վերացնել, պարզապես վերացնել նրանց: Ուրիշ ի՞նչ կարելի է նրանց հետ անել:

Այդ խոսակցությամբ էլ ավարտվել է շինծու դասախոսությունը: Բոլոր մասնակիցները սկսել են միմյանց հետ վիճել քողարկված ատելությամբ: Երբեք ներկա չէր եղել այդպիսի տեսարանի: Էդուարդը երկու բան էր նկատել. առաջինը՝ ներկաներից շատերը, գուցե և կեսից ավելին համաձայնել են Բրանդտի արմատական դիրքորոշման հետ:

- Էթե՛լ, պետք է տեսնեիր այդ մարդու հաղթանակած չարախինդ ժպիտը: Նրան հաջողվել էր իրար դեմ հրահրել դասախոսական կազմին՝ գիտնականներին, եվրոպական մակարդակի մասնագետներին, որոնցից շատերը երկրի լավագույն հոգեբույժներն են: Գոնե լավ է, որ դոկտոր Ֆրոյդը հրաժարվում է այդպիսի միջոցառումներին մասնակցելուց: Չգիտեմ, թե ինչ կպատահեր, եթե նա այնտեղ լիներ: Նա այն մարդկանցից չէ, ովքեր վախից լռում են: Այստեղ սանձազերծվելու է մի ահավոր փոթորիկ: Գնալով ինձ թվում է, որ դասընթացի ավարտից հետո այստեղից հեռանալն ամենաճիշտ որոշումն է:

Երբ Էդուարդն ավարտեց իր խոսքը, Էթելը նրան պատմեց Շտեյնբերգի տուն կատարած իր այցի և այն մասին, թե ինչ էր հայտնաբերել այնտեղ:

- Վերցրի հեծանիվը և մի պտույտ տվեցի: Վարանում էի՝ բարձրանա՞լ նրա տուն, թե՞ չէ: Մտածեցի, որ միայն կմոտենամ նրա տանը: Երևի չհավատաս ու ինձ երկչոտ համարես, բայց վախենում էի նրա բնակարան մենակ մտնելուց: Եթե այնտեղ ինչ-որ մեկը լինե՞ր... Որևէ ազգական այնտեղ ապրելիս լինե՞ր կամ գնացած լինե՞ր բնակարանը նայելու... Հապաղում էի, մինչև որ մի երիտասարդ զույգ եկավ, բացեցին մուտքի մեծ դուռն ու մտան: Մտածեցի, որ ես հիմարի մեկն եմ, որ ինձ այդքան վախ ու կասկածանք եմ ներշնչում: Այնպես որ՝ հեծանիվը թողեցի փողոցում և հանգիստ ձևանալով՝ ուղղվեցի դեպի մուտքը: Սիրտս այնպես էր բաբախում, որ ուր որ է տեղից դուրս էր թռչելու: Բացեցի դուռն ու ստիպված բարձրացա ոտքով: Վերելակի վրա կար մի ցուցանակ՝ «Վերանորոգում», սակայն հետ դառնալ չէի կարող: Ոչ ոքի չհանդիպեցի, սակայն երբ ուզում էի շրջվել, արդեն բնակարանի դռան

մոտ լսեցի, որ ներքևում՝ մուտքի դռան մոտ, ինչ-որ մարդիկ էին զրուցում: Որոշեցի մտնել, բանալին մտցրի, ու դուռը բացվեց: Չծիծաղես, բայց սարսափելի վախեցած էի:

Էթելը պատմեց, թե ինչ էր գտել բնակարանում, թե ինչ կարծիքի էր Շտեյնբերգի ու նրա ընկերոջ մասին:

- Խե՜ղճ մարդիկ... Շատ վախեցած էին այն ամենից, ինչ նացիստներն ասում են համասեռամոլների վերաբերյալ: Նրանց մեղադրում են այլասերված հիվանդներ լինելու համար: Դա սուտ է: Նրանք նորմալ մարդիկ են, պարզապես դա է իրենց ընտրությունը: Դու ճանաչում ես Ավգուստուս Նյումանին: Նա դա չի թաքցնում և հրաշալի անձնավորություն է՝ կիրթ, խիզախ և պատվախնդիր… Նրան ձգում են տղամարդիկ: Հետո ինչ...

Էդուարդը նրան ընդհատեց.

- Ես չհասցրի քեզ պատմել, որ Բրանդտի կարծիքով՝ համասեռամոլներն անբուժելի հիվանդներ են, այլասերվածներ, որոնց նկատմամբ պետք է կիրառվի վերացման միջոցը, այլ կերպ ասած՝ նրանց հարկավոր է ոչնչացնել: Այդ շանորդին և Հիտլերն իսկապես խենթացել են:

- Թո՛ւյլ տուր ինձ ավարտել խոսքս, Էդուա՛րդ: Շտեյնբերգի բնակարանը նրա ողջ կյանքի արտացոլումն է: Այնտեղ է թողել իր ամբողջ ունեցածը: Որևէ բանի ձեռք չի տվել, ասես մտածել է, որ այդ բնակարանը, որտեղ հավանաբար ծնվել է ու մեծացել, կմնա նույնը՝ որպես ապաստան, ու մի օր, երբ փոթորիկն անցնի, կկարողանա այդտեղ վերադառնալ Շտերնի հետ:

Էդուարդը հիացած ժպտաց:

- Էթե՛լ, դու ինձ ցնցում ես: Դու շատ ճիշտ ասացիր: Բոլորս էլ ունենք մի տեղ, որն ամբողջ կյանքի ընթացքում մեր ուղեկիցն է մնում: Շատ անգամ դա մեր հայրական օջախն է, որտեղ մանուկ հասակում ապրում ենք ընտանիքով: Այն ժամանակ, երբ մենք փոքր ենք և խաղում ենք մեր քույր ու եղբայրների հետ, մեր տները մեզ վիթխարի են թվում, այդտեղ մեզ պաշտպանված ենք զգում մեր ծնողների կողմից: Պետք է, որ պրոֆեսոր Շտեյնբերգը հիսունն անց լինի, բայց ոչ թե տարիքն է կարևոր, այլ այն հարստությունը, որ մեր մեջ ենք կրում: Ինձ իրոք հետաքրքրեց, կուզենայի տեսնել պրոֆեսորի բնակարանը: Դա նույնն է, ինչ մեկը թափանցի նրա ներաշխարհի մեջ: Ֆրոյդը հենց այդ երևույթն է անվանում հոգեվերլուծություն: Իրերից յուրաքանչյուրն ինչ-որ բան է ասում դրանք գործածողի մասին. պատերն ինչո՞վ են պատված, յուղանկարները, լուսանկարները, կահույքն ինչպիսի՞ն են… Առավել ևս՝

գրքերն ու լուսանկարները... Այդ ամենը մեզ ինչ-որ բան է հուշում տվյալ տեղում բնակվողի մասին: Ըստ քո պատմածի՝ այդտեղ դեռ իշխում է նրա նախնիների շունչը: Այո՛, միասին կգնանք նրա բնակարանը տեսնելու: Ի վերջո, հենց ինքն է մեզ թողել բանալիները: Թեկուզ քո հոր լուսանկարը վերցնելով՝ մեր մուտքն արդարացված կլինի: Եթե կուզես, վաղը կգնանք:

- Այո՛, հոգի՛ս, բայց չես թողնում, որ վերջացնեմ: Մի բան եմ մտածել, քանի որ գլխի եմ ընկել, որ Շտեյնբերգը Վիեննայից ու իր տնից հեռացել է հանգամանքների ճնշմամբ: Նա այստեղից չէր գնա: Բեռլինից փախչելը նրա համար մեծ հարված է եղել, սակայն Վիեննայից, մանավանդ իր հարազատ օթևանից ստիպված հեռանալը թերևս նրան այնպես է ցնցել, որից նա հազիվ թե կարողանա վերականգնվել: Մտածեցի, որ ի վերջո մեզ կհաջողվի մի բան անել նրա համար…

- Գլխումդ ի՞նչ միտք է ծագել: Ի՞նչ քայլ ես ուզում ձեռնարկել,- Էդուարդը նրան նայում էր ժպտալով, սակայն՝ փոքր-ինչ լարված:

- Այո՛, սիրելի՛ս: Շատ լավ կհասկանաս: Բանալին, ինչպես նաև այնտեղից ինչ-որ բան վերցնելու թույլտվությունն ունենք: Արի՛, նրա կամքը կատարենք: Անենք այն, ինչ ինքը չհամարձակվեց… Մի խոսքով, ես մտածեցի, որ կարող ենք պայմանագիր կնքել որևէ մասնագիտացված գործակալության հետ և ոչ գաղտնի պայմաններում նրա ունեցվածքը տեղափոխել. ընդամենն այն, ինչ ինքն էր մեզ ակնարկում, բայց ի վիճակի չեղավ բացահայտ ասել: Նրա ողջ ունեցվածքը կթողնենք քաղաքից դուրս՝ որևէ կահույքապահոցում: Պետք է, որ այդպիսի որևէ հեղինակավոր գործակալություն լինի: Բոլոր իրերը պետք է շատ լավ փաթեթավորվեն: Սիրելի՛ս, Շտեյնբերգը վախից դա չարեց, որ ինքն իրեն չմատներ: Այնքան սարսափահար էր, որ նախընտրեց ռիսկի գնալ ու ամեն ինչ կորցնել, թեև հենց այդպես էլ կլիներ. քաղաքապետարանին կից ոստիկանական ծառայությունը նրան դուրս կհաներ բնակարանից: Ի՞նչ իմանանք, անգամ գալիք ժամանակներին չի կարելի ապավինել: Սակայն մեր ջանքերով նրա ողջ ունեցվածքը կմնա ապահով վայրում, ու երբ անցնի փոթորիկը, գուցե զղջա, որ կորցրել է հիշողություններ արթնացնող այդ իրերը, լուսանկարները, իր ողջ կյանքը: Ի՞նչ կարծիքի ես:

Էդուարդը երկար ժամանակ նայում էր նրան՝ չիմանալով, թե ինչ ասի: Նա լավ գիտեր կնոջ բնավորությունը, որով էլ սկզբից ևեթ հրապուրվել էր, բայց չէր պատկերացնում, որ նա այդպիսի եռանդուն մտքի ու անկոտրում կամքի տեր անձնավորություն է և կարող է անհավատալի որոշումներ կայացնել:

Չհամարձակվեց նրան առարկել: Էթելն այդ պրոֆեսորի համար հրաշալի բան էր անելու: Ոչ մի վախ չուներ, նրան ոչինչ չէր կարող հետ պահել: Համաձայնեց:

- Հառա՛ջ, Էթե՛լ: Ինչ հրաշալի խելահեղություն է թվում, ու քանի որ ես հոգեբուժություն եմ ուսումնասիրում, քեզ ո՛չ ասելու ուժ չունեմ: Ի դեպ, մինչ այս պահը դու ինձ երբեք ոչինչ չես խնդրել, անգամ՝ որևէ չնչին քմահաճույք… Ինչպե՞ս քեզ մերժեմ… Այդպես էլ կանենք, առանց թաքնվելու, օրը ցերեկով գործակալության աշխատողների հետ շենքի ճակատային մասով կահույքը կիջեցնենք: Ճշմարիտն ասած, ուրիշ լուծում էլ չունենք: Եղավ, վաղը նեթ կգնանք այնտեղ ու կվճռենք, թե ինչպես ենք այդ ամենը գլուխ բերելու: Գիտես, ես էլ չէի ուզենա կորցնել մեր օջախի հիշատակ հանդիսացող իրերն ու կահույքը: Դրանք դեռ կրում են բժիշկ Բողոսյանի ու մորս ոգին: Այդպես էլ կանենք: Սիրում եմ քեզ, Էթե՛լ…

Հաջորդ օրը շաբաթ էր: Վիեննան լուսաբացին շողշողուն էր: Էթելը, Էդուարդի կողքով վարելով հեծանիվը, մտածում էր, որ գուցե իրենք շտապում են: Չէ՞ որ պրոֆեսոր Շտեյնբերգը գրեթե անծանոթ մարդ էր, և նրան առնչվող այդ հարցը կարող էր մեծ գումարների հետ կապված լինել: Մյուս կողմից էլ այդ հրաշալի քաղաքը գուցե և շատ չտուժի Հիտլեր անունով այդ մտագարի պատճառով, ով խելագարվել էր ինքն իրեն արտասովոր համարելու զառանցանքներից:

Թերթի կրպակի մոտ ինչ-որ իրարանցում նկատեցին ու կանգ առան: Մարդիկ ցնծությունից գոռում էին, ոմանք ուրախությունից նույնիսկ վեր էին ցատկում, գլխարկներն օդ նետում:

- Ի՞նչ է պատահել, բարեկա՛մս,- Էդուարդը հարցրեց մի մարդու, ով, թերթը ձեռքին, դուրս էր գալիս ամբոխի միջից:

- Հի՛տլերը, Ադո՛լֆ Հիտլերը… Ֆյո՛ւրերը… Հռչակվել է Գերմանիայի կանցլեր: Իսկ նա ավստրիացի է: Հիմա Եվրոպայում գործերը լա՛վ առաջ կգնան:

Բարձրացան բնակարան, ուշադրությամբ զննեցին գույքը, որպեսզի մոտավորապես կողմնորոշվեին, թե որքան կարժենար այն, և ըստ այդմ՝ խոսեին գործակալության հետ: Որոշեցին պահել լուսանկարները և, ըստ իրենց հայեցողության, այն իրերը, որոնք անվնաս տեղափոխություն իրականացնելու նպատակով հարմար կտեղավորվեին արկղերում:

Էդուարդը բնակարանում եղածը զննում էր մտախոհ ու համակ ուշադրությամբ: Նախկինում երբեք այդպիսի գործողությամբ զբաղվելու առիթ չէր ունեցել:

- Էթե՛լ, ինձ համար անչափ կարևոր է մի շատ առանձնահատուկ անհատի ներաշխարհի մեջ թափանցելը: Գիտես, ոչ մի նախապաշարում չունեմ համասեռամոլների առումով, սակայն նրանք հավանաբար տարբեր են այլ տղամարդկանց համեմատությամբ: Եվ այստեղ՝ այս բնակարանում, ինձ հաջողվում է ընկալել այդ տարբերությունները: Անգամ չխոսելով նրանցից որևէ մեկի հետ՝ դա շատ լավ հասկանալի է: Իրավացի ես. համասեռամոլությունը հիվանդություն չէ: Կուզենայի ինձ համար պարզել, թե ինչպես է սկսում գործել զուգընկերոջ ընտրության մեխանիզմը: Այստեղ ես նրան դիտարկում եմ ներաշխարհից: Դե՛ ինչ, շնորհակալ եմ քեզ այս պատեհ առիթի համար, քանի որ դու ես այս գործին ձեռնամուխ եղել:

Երկու օր անց արդեն եկան արկղերով և դրանց մեջ սկսեցին տեղավորել այն ամենը, ինչ հարմար էին գտնում. չգիտեին գործակալության աշխատակիցների գործելակերպը: Շտեյնբերգի բնակարանում այդ գործով զբաղվեցին մի քանի երեկոներ: Փորձեցին իրենց պահել հնարավորինս բնական՝ առանց թաքնվելու և խուճապի: Ծանոթ էին վիենացիների պահվածքին: Այդպես ավելի լավ էր:

Երկու շաբաթ անց, երբ արդեն ամեն ինչ պատրաստ էր, պայմանավորվեցին բեռներ տեղափոխող գործակալության աշխատակիցների հետ: Էդուարդն ու Էթելը ժամը ութին Շտեյնբերգի բնակարանում էին: Իրենց աշխատանքը կատարելու համար գործակալության աշխատակիցներն արդեն եկել էին երկու բեռնատարներով և անհրաժեշտ պարագաներով: «Տեղափոխություն Բելվեդերե» գործակալությունն ուղարկել էր վեց ամրակուռ տղամարդ ու չորս կին: Կանայք պետք է խնամքով փաթեթավորեին փոքր իրերը՝ գրքերը, նուրբ առարկաները, իսկ տղամարդիկ գլխավոր պատշգամբում, որը միակ հարմար տեղն էր, տեղադրում էին շարժանիվը, որպեսզի իջեցնեն դաշնամուրը և պահարանների՝ նախապես իրարից անջատած կտորները:

Որոշ հարևաններ հետաքրքրությամբ նայում էին, որոշ անցորդներ էլ փողոցից էին կանգնած դիտում՝ համոզված, որ կահույքի մեծ կտորներից մեկն ընկնելու և ջարդուփշուր է լինելու փողոցի սալահատակին: Էթելն այդ գործընթացը ղեկավարեց տիրուհու և իշխանուհու պես: Աստիճանների վրա հարևանուհիներից մեկն Էթելին ինչ-որ բան հարցրեց, նա էլ ժպտալով պատասխանեց, որ պրոֆեսոր Շտեյնբերգը թողնում է այդ տունը, և նրանք կորցրել են մի շատ լավ հարևանի: Էթելին այլևս հարց տվող չեղավ, և երեկոյան՝ ժամը չորսին, բնակարանն արդեն դատարկ էր: Մնացել էին մի քանի կատալոգներ, դատարկ արկղեր, մի

քանի շշեր, թերթեր ու հին լաթի կտորներ: Մի լիարժեք կյանքի վերջին մնացորդներ… Էթելը փակեց բնակարանի դուռը, ու մինչ Էդուարդի հետ ուրախ զրուցելով իջնում էին, դիմացի հարևանուհին կիսաբաց դռնից լրտեսում էր նրանց: Բեռնատարներն ուղղվեցին դեպի կահույքապահոց, իսկ իրենք, վերցնելով իրենց հեծանիվները, նստեցին տրամվայ և գնացին այն մոտակա վայրը, որտեղից հեծանիվներով շարժվեցին դեպի Մայահիլֆ՝ Շյոնբրունի պալատի ուղղությամբ, քանի որ այդտեղ՝ մոտակայքում էր գույքը պահվելու: Համոզվեցին, որ բոլոր իրերը տեղավորվում են մի ոչ մեծ անհատական պահատեղերից մեկում, ու երեք ժամ հետո գործակալության ներկայացուցիչը, ըստ գործակալության աշխատակիցների կազմած ցուցակի, նրանց համար ստորագրեց մի ստացական առ այն, թե ինչ էին հանձնել՝ կահույքը, հայելիները, դաշնամուրը, նաև առարկաներով լի քսաներկու արկղեր: Սեփականության ու կարգուկանոնի հանդեպ նկատվում էր հարգանքի արտասովոր դրսևորում: Նրանց տվեցին պահոցի բանալու պատճենը, իսկ մյուս՝ համարակալված բանալին պահվելու էր չիրկիզվող պահարանում: Այնուհետև Էդուարդը ստորագրեց երկու վճարագիր՝ տեղափոխման ծառայության գումարային հաշիվը և պահոցի առաջին տարվա վարձավճարը, որը պետք է գանձվեր Վիեննայում գործող «Դոյչե բանկի» մասնաճյուղում բացված իր հաշվեհամարից:

Էդուարդը սեղմեց գործակալության ներկայացուցչի ձեռքը, շնորհակալություն հայտնեց ծառայության համար, և հարցը դրանով փակվեց: Հետո նրանք հեծանիվներով կատարված երկար ու հանգիստ զբոսանքով քաղաքի կենտրոն վերադարձան. արել էին այն, ինչ պետք է անեին հանուն բարեկամի: Որպես հայի՝ Էդուարդի համար հատուկ իմաստ ուներ բարեկամություն բառը: Նա և իր ընտանիքի անդամները կենդանի էին մնացել, որովհետև մեկը՝ մի թուրք, նրանց փրկելու համար վտանգել էր իր կյանքը: Հայերի համար բարեկամները նույնքան կարևոր են, որքան իրենց ընտանիքի անդամները: Ինչ վերաբերում էր Էթելին, ապա նա, անցնելով իր հոր դպրոցը, լավ էր յուրացրել բարեկամության արժեքը: Հեծանիվի ոտնակները պտտելով՝ միայն մտածում էր այն մասին, որ մի օր, թեև հայտնի չէր, թե՝ երբ, Շտեյնբերգը շատ կհուզվի՝ վերագտնելով կորցրած կյանքը:

Վիեննայի ցուրտ ձմռան հաջորդ շաբաթներին Գերմանիայում ժողովրդավարությունը հոգեվարք ապրեց: Նրանք ներկա գտնվեցին համալսարանում տեղի ունեցող տեղեկատվական ժողովներին և իմացան,

թե ինչ է կատարվում ողջ Գերմանիայով մեկ: Համընդհանուր ցնծություն էր տիրում Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության առաջնորդի՝ Ադոլֆ Հիտլերի կանցլեր ընտրվելու կապակցությամբ: Գիշերները գորշ վերնաշապիկներով գրոհայինները սկսեցին հայտնվել Գերմանիայի բոլոր քաղաքներում՝ հարձակվելով նրանց վրա, որոնց համարում էին քաղաքական թշնամի, հրահրելով անկարգություններ ու քաշքշուկներ: Հիտլերն էլ շարունակում էր իր հակասեմիտական բոցավառ ճառերը: Թերթերում հրապարակվում էր այն մասին, որ շատերը, ովքեր համարվում էին Երրորդ Ռեյխի թշնամիներ, ուղարկվում էին աքսորյալների ճամբարներ. որոշ թերթերում դրանք անվանվում էին համակենտրոնացման ճամբարներ:

Փետրվարի 28-ին Վիեննայի թերթերի առաջին էջերն ազդարարում էին՝ «Կոմունիստները հրդեհում են Ռայխստագը», «Ոստիկանությունը ձերբակալում է հրձիգին ու նրա կոմունիստ մեղսակիցներին», «Ռայխստագում ձերբակալված են Կոմունիստական կուսակցության անդամները»:

Վիեննայում՝ Շտեյնհոֆի հոգեբուժական հիվանդանոցում, Էդուարդը նշանակվեց որպես ներքին հիվանդությունների բժիշկ: Առանց որևէ բացատրություն տալու՝ նրան մի կնքված թուղթ տվեցին, որի վրա գրված էր իր նոր աշխատավայրը: Դոկտոր Ֆրոյդի համար դա նույնպես անհասկանալի էր, սակայն եթե Էդուարդն ուզում էր շարունակել ուսումնառությունը, ապա պետք է դա աներ Շտեյնհոֆի հոսպիտալում, որն Օտտո Վագները նախագծել էր Վիեննայի համար: Դա Եվրոպայի ամենամեծ ու ժամանակակից հոգեբուժարանն էր՝ նախատեսված հազար երկու հարյուր հիվանդների համար, և գտնվում էր քաղաքից դուրս: Էդուարդը տրամվայով պետք է ամեն օր գնար այնտեղ, ընդ որում՝ վերջին կանգառից հետո դեռ կես կիլոմետր անցնելու էր ոտքով:

Դոկտոր Կառլ Բրանդտի արմատական գաղափարները գնալով մեծ արձագանք էին գտնում: Շտեյնհոֆի բժիշկներից շատերը գտնում էին, որ անհեթեթ է այն, ինչ անում էին հոգեկան հիվանդների համար: Նրանց կարծիքով՝ հարկավոր էր այլ լուծումներ գտնել, որպեսզի պետական միջոցները զուր չծախսվեն: Թերապիայի մասին առհասարակ խոսք չկար:

Այդ օրերին Էթելի գինեկոլոգն ասաց, որ նրա հղիությունը բարդ է ընթանում, ու եթե ցանկանում է պահպանել երեխային, ապա չպետք է

ճիգեր գործադրի և ոչ էլ հեծանիվ վարի: Էդուարդը որոշեց, որ հարկ է հնարավորինս արագ Բեյրութ ուղևորվել: Նրա վրա ազդում էր նաև համալսարանում և իր աշխատանքային ընկերների շրջանում տիրող մթնոլորտը: Նրանցից մեկն իր ներկայությամբ արհամարհանքով պատմեց, որ հրեաները ցանկալի մարդիկ չեն, և շուտով կարգելվի նրանց մուտքը պաշտոնական հաստատություններ, ինչպես նաև նրանց գործունեությունը որպես բժիշկ: Էդուարդն իր գործընկերոջն ասաց, որ ինքը հրեա չէ, հայ է, սակայն ամեն դեպքում հրեաների դեմ ոչինչ չունի: Հանդիմանող բժիշկն ուշադրություն չդարձրեց և շարունակեց խոսել նույն կերպ:

Մայիսի կեսերին վերջին անգամ փակեցին իրենց բնակարանի դուռը: Այն ամենը՝ գրքերը, լուսանկարները, նկարները, ինչ ուզում էին իրենց հետ տանել, արդեն փաթեթավորել և պատրաստել էին ճամպրուկները: Բեռլինի համալսարանի դիմաց գտնվող Ունտեր դեն Լինդեն զբոսայգում «հակագերմանական» գրքերն այրելուց հետո մի քանի օր էր անցել: Նստեցին գնացք՝ Տրիեստե ուղևորվելու համար: Այնտեղից նավով գնալու էին Կիպրոս, որտեղից էլ ուրիշ նավով հասնելու էին Բեյրութ:

Ստեղծված իրավիճակից նրանք հիասթափված էին ու զայրացած, գիտեին նաև, որ ճիշտ որոշում են ընդունել: Նրանք այլևս չէին կարող մնալ Վիեննայում տիրող քաղաքական ճնշման այդ մթնոլորտում: Ցանկանում էին, որ իրենց զավակը ծնվի Բեյրութում՝ այն տանը, որն Էթելը համարում էր իր հարազատ օջախը: Որքան ավելի էին հեռանում Վիեննայից, Էդուարդն ավելի հանգիստ էր դառնում, թեև գիտակցում էր, որ հնարավոր էր՝ գուցե և զղջար այդ որոշումն ընդունելու համար: Դոկտոր Ֆրոյդին նա նամակ էր գրել՝ բացատրելով իր հեռանալու պատճառները: Հույս ուներ, որ նա կըմբռներ իր՝ մեկնելու հետ կապված հանգամանքները: Սակայն Ֆրոյդը չէր ներելու նրան:

Այդուհանդերձ, մեկնելը երկուսի համար էլ լավագույն լուծումն էր և ամենաապահովը նրա համար, ով շուտով լույս աշխարհ էր գալու: Այդ երեխան պետք է ծնվեր, ինչպես Էթելն էր երազում, Սպիտակ լեռան հովանու ներքո:

42. ԱՇԽԱՐՀԸ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ
ՀՈՒՆԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1933թ.

Ջոն Բոդոսյանը 1933 թվականի հունիսի 15-ին ծնվեց այն առանձնատան գլխավոր ննջասենյակում, որն իր պապը՝ Թոմաս Հարդինգը, բոլորովին վերջերս հանձնել էր իր դստերը: Թոմասը միշտ երազել էր, որ այդ տունը լիներ իր ընտանիքի հարազատ օջախը, ինչը, ի վերջո, իրականանալու էր իր դստեր՝ Էթելի շնորհիվ:

Այդ երեկո, երբ Բեյրութով մեկ տարածվեց այն լուրը, որ Թոմաս Հարդինգի դուստրը տղա է ունեցել, իրենց տունը ողողվեց ծաղկեփնջերով, շոկոլադի տուփերով, խմորեղենի սկուտեղներով, իսկ ֆրանսիացի Բարձրագույն կոմիսարի՝ Պուսոյի կողմից մի արծաթյա հրաշալի զանգակ ուղարկվեց: Այդ ամենը բարեկամության ու բարձր ճաշակի մասին էր վկայում մանավանդ այնպիսի բարդ իրադրությունում, երբ Սահմանադրությունը չէր գործում, մուսուլմաններն էլ իրենց հերթին ընդվզում էին: Նրանք ցանկանում էին Սիրիայի հետ միություն, իսկ Ֆրանսիան այդպիսի բան երբեք թույլ չէր տա: Դա կնշանակեր դավաճանել մարոններին: Լիբանանի Հանրապետության նախագահը պետք է լիներ քրիստոնյա մարոն: Հայերը շարունակում էին զանգվածաբար գալ, ինչը նպաստեց, որ մարդահամարի պաշտոնական տվյալներով գերակշռեն քրիստոնյաները:

Այուբ Թաբիթի ջանքերով Էդուարդը՝ որպես գլխավոր թերապևտ, աշխատանքի անցավ «Դյո դը Ֆրանս» հիվանդանոցում: Դա նրան չէր խանգարում, որ ընդուներ Բեյրութի կենտրոնից մի տասը կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ասֆուրյեի հոգեբուժարանի հիվանդներին: Հիվանդանոց, որը հիմնադրվել էր մի կվակերի՝[74] Թեոֆիլ Վալդեմեյրի կողմից:

Էդուարդ Բոդոսյանն ավելի շատ հափշտակված էր այդ հիվանդանոցով, քան իր գլխավոր թերապևտի պաշտոնով, բայց ստիպված ընդունել էր այդ առաջարկը, որպեսզի մտախանգարում ունեցող հիվանդների հետ շարունակեր իր աշխատանքը: Դոկտոր Արիստոտել Պապապուլոսը խոստացավ, որ առաջին իսկ հնարավորության դեպքում նրան կհանձնարարեն գլխավորել հոգեբուժարանի աշխատանքները: Ոչ ոք այն չէր ուզում անվանել գժանոց, թեև դա էր ժողովրդի կողմից ընդունված անվանումը՝ Ասֆուրյեի գժանոցը: Ասֆուրյե կատարած իր այցե-

[74] Կվակերներ՝ բողոքական աղանդի հետևորդներ Անգլիայում, 17-րդ դար:

լությունը նման էր դեպի անցյալ կատարած ճամփորդությանը, թեև հիմնադիր կվակերի նախաձեռնությունն արժանի է գովեստի. հիվանդների թիվը 10-ից հասել էր 350-ի: Մի՞թե այդքան խելագարներ էին ապրում Լիբանանում...

Էդուարդն իրեն շատ ավելի ապահով էր զգում Բեյրութում, քան Վիեննայում, թեև երբեմն խորհում էր մեծ հնարավորություն կորցրած լինելու մասին: Այդուհանդերձ, միշտ էլ կարող էր ասել, որ Ֆրոյդի հետ աշխատել է մի քանի ամիս՝ բավականաչափ ժամանակ, որպեսզի հասցներ ճանաչել նրան ու հասկանալ նրա մտածելակերպը:

Երկու ամիս անց դոկտոր Պապապուլոսը նրան խնդրեց, որ ստանձնի Ասֆուրյեի գլխավոր բժշկի պաշտոնը: Էդուարդին այդ մասին ասաց՝ լայն ժպտալով, ասես նրան մեծ շնորհ էր անում, թեև լավ գիտեր, որ հենց դա էր Էդուարդ Բողոսյանի երազանքը: Երկար քննարկելու հարկ չեղավ: Էդուարդը, սակայն, ներքուստ կասկածում էր, թե արդյոք իր ստացած կրթությունը բավարար էր գլխավոր բժիշկ աշխատելու համար: Այնինչ, այլ բժիշկների կարծիքով՝ նա այն մարդն էր, որ Լոնդոնում էր կրթություն ստացել ու մասնագիտացել՝ այն էլ՝ ո՞ւմ՝ հենց Ֆրոյդի հետ Վիեննայում աշխատելով: Բոլորն էլ համաձայն էին՝ սկսած Բարձրագույն կոմիսարից, ով առաջվա պես ամենայն մանրամասնությամբ և ուշի-ուշով հետևում էր նորաստեղծ հանրապետության առաջխաղացմանը:

Լիբանանի մտավոր ու նյարդային համակարգի խախտումների հիվանդանոցը սերտ կապի մեջ էր Բեյրութի Ամերիկյան համալսարանի հետ. համալսարանական հիվանդանոցի բաժանմունքն էր ու բուժքույրերի և բուժակների պատրաստման կենտրոնը:

Բժիշկ Բողոսյանը դարձավ համալսարանի հոգեբուժության պրոֆեսոր: Նա շատ ուսանողներ չուներ, սակայն այդ աշխատանքը, բացի լրացուցիչ աշխատավարձից, նրան մասնագիտական և հասարակական հեղինակություն էր ապահովում: Վերջին տարիներին գժերը, նրանց այդպես էին անվանում, ասում էին. «Եկե՛ք այս ու այն կողմ չընկենենք, կարճ կապենք, բժի՛շկ», ու այդտեղ էլ ավանդում էին հոգին: Միայն մեկ ձեռքի մատների վրա կարելի էր հաշվել նրանց, որոնց հաջողվում էր դուրս գրվել Դամասկոսի Մարիստան հիվանդանոցից: Կվակեր Վալդեմեյրն այնպիսի համակարգ էր ստեղծել, որը հիմնված էր ինչ-որ տարօրինակ՝ կղերական ուսմունքների, այլասիրության և մարդկային գթասրտության խառնուրդի վրա: Էդուարդը գտնվում էր իր երազած տե-

ղում. երանի՜ իր հայրը կենդանի լիներ ու հպարտանար իրենով: Իսկ ո՞ւմ մտքով կանցներ, որ այդ բարի մարդու՝ Հագոպ Բողոսյանի որդին ամուսնանալու է Թոմաս Հարդինգի դստեր հետ և մի քանի տարի անց ապրելու է մի մեծ առանձնատանը: Իսկ այն, որ լինելու էր Ասֆուրյեի տնօրե՞նը... Իսկապես, ոչ ոքի մտքով չէր անցնի:

Էթելը երջանկությունից փայլում էր: Վերադառնալով իր մանկության օրրան՝ իրեն պաշտպանված էր զգում: Կահիրեի տունը նա հիշում էր որպես երազ, իսկ Բեյրութն ու նրա շրջակայքը գիտեր իր հինգ մատի պես: Այն տղամարդու հետ էր, ում սիրում էր: Ոչ թե կարծում էր, թե սիրում է, այլ իրոք սիրում էր Էդուարդին՝ այդ կայացած, շիտակ երիտասարդին, ով այլոց օգնելու համար ձգտում էր առավելագույնս խորամուխ լինել այնպիսի բարդ ու գիտության կողմից քիչ ուսումնասիրված ոլորտում, ինչպիսին մարդկային ներաշխարհի մանրազնին վերլուծությունն է:

Այդտեղ նա կարող էր խոսակցական արաբերենով խոսել Շաբրիների ընտանիքի հետ, ովքեր ծառայում էին իրենց տանը: Էթելը հարգալից էր նրանց հանդեպ: Նրանք էլ, ի պատասխան, կրկնակի վստահությամբ էին նրան վերաբերվում: Կարծես ազգականներ էին՝ ամեն ինչի պատրաստ: Նույնը կարելի էր ասել Նադիմա Ղալիբի համար, ով սկսել էր խնամել Ջոնին, ինչպես որ պահել էր իրեն: Դա Էթելին դուրս ու ներս անելու վստահություն ու ազատություն էր տալիս: Նա իր չորսուկես մետրանոց բարձրություն ունեցող զով նկուղում ստեղծել էր արվեստանոց: Այդտեղ էր հավաքում իր կտավները, նկարները: Իր ծնողներից ժառանգել էր սեր դեպի արվեստն ու գեղեցիկը, դրանք ըմբռնելու մեծ զգացողություն ու կարողություն, իմացության ու գիտելիքի անհագ ցանկություն, ինչպես նաև նկարելու անհավատալի ձիրք:

Լոնդոնում մի երեկո հայրը նրան խոստովանել էր, որ ի վիճակի չի եղել ավարտին հասցնել իր վաղեմի երազանքը՝ Բաալբեկի մասին մի ծավալուն գիրք գրելը: Բեյրութում էին պրոֆեսոր Շտեյնբերգի հրաշալի ու հիացմունքի արժանի լուսանկարները, և Էթելը գիտեր, թե ինչ պետք է աներ, որ իր հետ չկատարվեր այն, ինչ տեղի էր ունեցել իր հոր հետ, ով այդ մասին խոսում էր դառնությամբ ու ափսոսանքի զգացումով՝ ընդգծելով, որ չի հասկացել, թե ինչպես է կյանքն իր կողքով անցել: Որտե՞ղ էին այն հրաշալի օրերը... «Carpe Diem». ահա ամենամեծ ճշմարտությունը և այդ ամենի եզրահանգումը:

Այդուհանդերձ, Էթելը գիտեր, որ հոր հարցերին կարող էր պատասխանել այն գծագրերով և օրագրի այն գրառումներով, որոնք անցած

տարիներին արել էր հայրը: Դրանցում ծխի վերածված օրերն էին, սակայն մոխրի տակ դեռ կար այն կայծը, որին շունչ տալու դեպքում կբռնկվեր կրակը:

Էթելը հանգամանալից կարդացել էր սև գույնի կաշեկազմ օրագրի էջերը, որոնք սկսել էին դեղնել ու իրարից պոկվել: Օրագրում գրված էր Լիբանանի՝ որպես պետության ստեղծման պատմությունը, այն մարդկանց անուններն ու նրանց դերակատարությունը, որոնց շնորհիվ Օսմանյան կայսրության հեռավոր մի վիլայեթ դարձել էր Լիբանանի Հանրապետություն: Այդ մարդկանցից շատերին ինքը ճանաչում էր: Նրանցից ոմանք առաջվա պես այցի էին գալիս «անգլիացու տուն», երբ իր հայրը Բեյրութում էր լինում:

Ո՛չ, Էթելը չէր ուզում, որ իր հետ էլ նույն բանը կատարվի, ինչ՝ իր հոր հետ: Ո՛չ, իր հետ դա չի լինի: Նա արդեն ուներ մեծ ծավալի երկու կիսավարտ նկար, ինչպես նաև Բաալբեկի գծանկարներ ու լուսանկարներ: Թոմասի հավաքած բոլոր նյութերն էլ ձեռքի տակ էին, թեև՝ ոչ այնքան բարվոք վիճակում: Նա մտադիր էր ավարտին հասցնել գիրքը և այն ստորագրել իր հոր անունով, իսկ ինքը՝ որպես համահեղինակ: Ուզում էր հորը հաճելի անակնկալ մատուցել:

Սակայն հարցը միայն դա չէր: Կյանքը Բեյրութի պես արևելյան քաղաքում՝ Միջերկրական ծովի ափին, ավելի մեծ հնարավորություններ էր ընձեռում: Ֆրանսիացիները չէին մոռանում, թե այդտեղ որքան կարևոր էր եղել իրենց առաքելությունը և սիրով դա ցուցադրում էին: Նրանք Լիբանան էին բերել ոչ միայն իրավունք, ժողովրդավարություն, մշակույթ, ժամանակակից առաջադիմություն, այլև խոհանոց, նորաձևություն… Եվ թեև Դամասկոսում դա անհնարին էր, բայց այդտեղ, մանավանդ Բեյրութում ամեն ինչ փորձում էին սովորել: Երիտասարդները բավականին վարժ խոսում էին ֆրանսերեն և ուզում էին իմանալ այն ամենը, ինչ տեղի էր ունենում Փարիզում: Դա, սակայն, այնքան էլ դյուրին չէր: Էթելը, լինելով ընտանիքի մայր և ընդամենը քսաներկու տարեկան, լավ էր հասկանում այդ իրավիճակը: Իսկ մարոն ընտանիքի հա՞յրը... Ճիզվիտները (հիսուսականները) նրանց ականջին շշնջում էին, որ նրանց դուստրերը պետք է լինեն շատ ավելի համեստ, և անգամ մարոն տղաների հետ մենակ զբոսանքի դուրս գալը թույլատրելի չէ: Վատիկանի ոգին՝ պահպանողական և անթափանց, հսկող և դիտարկող, շրջում էր ամենուրեք՝ եկեղեցիներում, վանքերում, կրթօջախներում, համալսարաններում, մենաստաններում, բարեգործական հաստատություններում, անգամ բանկերում: Սուննիները համամիտ չէին այդ իրավիճակի հետ, թեև

այդտեղ իրադրությունը վերահսկվում էր իրենց իսկ ընտանեկան ավանդույթների միջոցով:

Բեյրութն այնպիսի արագությամբ էր փոփոխվում, որ ոչ ոք չէր կարող պատկերացնել: Կարծես արդեն որևէ առնչություն չուներ այն նիրհուն քաղաքի հետ, որտեղից տասնհինգ տարի առաջ հեռացան օսմանները: Այդ ժամանակամիջոցում ասես մեկ դար էր անցել, և Բեյրութը, անշուշտ, դարձել էր եռուն, կոսմոպոլիտ և ուրախ քաղաք, որ հառնում էր մոխիրներից:

Դրանով էլ պարծենում էին ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաները: Նրանց այդտեղ գալու նպատակն այն էր, որ թույլ չտային՝ Լիբանանն ընկնի Դամասկոսի մուսուլմանների կամ հաշեմիթների ձեռքը, ովքեր, հայտնի չէր, թե ինչի կվերածեին երկիրը:

Երբ Էթելն ու Էդուարդն ընթրում էին պատշգամբում, հաճախ էին մտածում այն մասին, թե իրենց կյանքն ինչպես կընթանար այդ ժամանակվա Վիեննայում, որտեղ Ադոլֆ Հիտլերի ազգայնամոլների ազդեցությամբ մթագնվել էր այդ քաղաքի փայլուն ու փառավոր անցյալը: Խեղդամահ էր արվում ազատությունը, ոչնչացվում էր մշակույթը՝ իսկական մշակույթը, այն, որ ո՛չ տեր ու տիրակալ ուներ, ո՛չ էլ՝ պարտադրանքներ: Էդուարդն Էթելին զայրացած պատմում էր, որ իր համոզմամբ՝ ավստրիացի Հիտլերը, ով հասկացողությունից հեռու մարդ է, վերադառնալու է Ավստրիա՝ այն նվաճելու, իսկ ովքեր հավանություն չտան իր ձեռնարկած գործընթացին ու հակառակվեն, նրանց վերացնելու է:

Էդուարդը հիշում էր, որ դոկտոր Բրանդտն անգամ աչքը չթարթեց վիեննացի բժշկի զայրույթից: Հավանաբար նրանք արդեն մտածել էին եվգենիկայի կիրառության մասին: Զտարյուն արիացիները պետք է լինեն «ազգի գլխավոր վերարտադրողնե՞րը»... Բրանդտն անվրդով շարունակել էր՝ ասելով, որ կարող է ցանկացած անուն տալ դրան, սակայն ճիշտ ուղին դա է: Տաղանդը և այլասերումը ժառանգական են: Վիեննացի բժիշկը լքել էր դահլիճը՝ Բրանդտի վրա բղավելով, որ համաձայն չէ, որ այդ ամենը հրեշավորություն է, որ բժիշկների պարտքը կյանք փրկելն է, այլ ոչ թե անմեղ մարդկանց սպանելը: Սիսին[75] իր ամուսնուն խնդրել էր, որ իր ծննդյան օրվա առթիվ իրեն նվիրի Շտայնհոֆի հոգեբուժարա-

[75] Կայսրուհի Էլիզաբեթը՝ Սիսին՝ կայսր Ֆրանց Իոսիֆի կինը, ով իր ամուսնուն խնդրեց, որ իր ծննդյան տարեդարձի առթիվ իրեն նվիրի սարքավորումներով հագեցած մի գժանոց: Վիտելսբախների տոհմում արձանագրված հոգեկան հիվանդության բազմաթիվ դեպքերի հետևանքով նա խելագարության հանդեպ սևեռամտություն էր ձեռք բերել:

նը: Եվ այդ հաստատության հիվանդներն էլ կարող էին դառնալ նրանց զոհերը:

Էդուարդի դիտարկմամբ՝ իր երկիրը՝ Լիբանանի Հանրապետությունը, սոցիոլոգիական փորձարկման դաշտ էր: Կրոնական բազմազան հավատքները մարդկանց բաժանում էին դավանական տարբեր խմբավորումների, ինչը, սակայն, ամենևին չէր խանգարում նրանց փոխհարաբերություններին: Ինչ վերաբերում էր հայ համայնքին, ապա նրանք եռանդուն ու միահամուռ մարդիկ էին, ովքեր իրենց նոր՝ օթևան տված երկրին միանալու բուռն ցանկություն ունեին, և ստեղծվել էր այն տպավորությունը, թե դարեր ի վեր նրանք այդտեղ էին ապրում: Որոշակի հանգամանքների հետևանքով նրանք կամուրջ էին դարձել քրիստոնյաների, սուննիների ու շիաների միջև: Հայերի ու արաբների ընդհանուր պատմությունը՝ օսմանների տիրապետության ներքո գտնվելը, միացրել էր նրանց, և նրանք միշտ էլ միմյանց օգնել էին՝ անգամ իրենց կյանքը վտանգելով: Դա բարեկամության ու արժանապատվության պատմություն էր երկու ժողովուրդների միջև: Ընդ որում՝ արաբ մուսուլմաններն ավելի շատ վստահում էին հայերին, քան քրիստոնյա մարոններին, թեև երկուսն էլ՝ և՛ մուսուլմանները, և՛ մարոնները, արաբներ էին:

Բեյրութում գրեթե բոլորը գիտեին, թե ով է անգլիացին: Միաժամանակ սկսել էին խոսել «անգլիացու դստեր» մասին, ով նաև ամուսնացել էր բժիշկ Բողոսյանի որդու հետ: Իսկ ո՞վ չէր դիմել բժշկին... Այդ սրտառուչ մարդն իսկական ժողովրդական հերոս էր, ով մինչև իր կյանքի վերջն ամեն ինչ արեց մարդկանց օգնելու համար: Նրա որդին նույնպես ցանկալի անձնավորություն էր, թեև դժվար էին ընկալում նրա համակրանքը հոգեկան հիվանդների՝ Աստծո այդ արարածների հանդեպ, որոնցից շատերն անբուժելի էին: Թերևս այդպիսին էին այն մարդկանց տպավորությունները, ովքեր ընտանիքում հոգեկան հիվանդ էին ունեցել:

Էդուարդ Բողոսյանը հույս ուներ, որ կապացուցի՝ հոգեկան հիվանդները կարող են, ի վերջո, բուժվել կամ գոնե մեծ մասամբ բավականին ապաքինվել:

Նրա երազանքների իրականացմանը սպառնացող վտանգը բխում էր Լիբանանի Հանրապետության Սահմանադրությունից և այն բանից, որ ֆրանսիական հովանավորությունը մի օր կհասներ իր վախճանին. վերջին տարիներին խորապես սրվել էին քաղաքական հակասությունները:

Մուսուլմանները համառորեն պնդում էին իրենց տեսակետը, և գերակշիռ մեծամասնության կարծիքով՝ երկրի համար միակ իրական ելքը Սիրիայի հետ միանալն էր: Մի քանիսը խոսում էին համադաշնության, իսկ մյուսները՝ Սիրիայի հետ միավորվելու և մեկ երկիր դառնալու մասին: Այդ դիրքորոշումները հարուցում էին քրիստոնյա մարոնների ընդվզումը, ովքեր ամեն կերպ հրաժարվում էին Դամասկոսի ենթակայությունից և մանավանդ իսլամական Սահմանադրությունից: Ամենաարմատական մարոններն ասում էին. «Երբեք չենք համաձայնի, որ մեր զավակներն ապրեն շարիաթի օրենքներով, երբե՛ք»: Մուսուլմաններն էլ իրենց հայրենակիցների, շատ դեպքերում բարեկամների ու հարևանների կողմից արված այդ հայտարարությունները մեկնաբանում էին իրենց տեսանկյունից և դրանք վիրավորական համարում: Ամեն ինչից անկախ՝ հույսի ժամանակներ էին: Բեյրութն արագորեն մեծանում էր: Բազմաթիվ շինարարներ Էդուարդին առաջարկում էին, որ գնեն կամ փոխանակեն առանձնատանը հարող հողամասերը, որոնք օրեցօր ավելի մեծ հետաքրքրության առարկա էին դառնում: Էդուարդը նրանցից օձիքն ազատում էր՝ ասելով, որ դա ո՛չ իր տունն է, ո՛չ էլ՝ իր կնոջ, այլ՝ իր աներոջ, ով առայժմ մտադիր չէ վաճառել այն, հետագայում՝ գուցե: Շինարարությամբ զբաղվողների մեծամասնությունը մարոններ էին կամ ուղղափառ հույներ, թեև բոլորը գիտեին, որ փողը հիմնականում սունների մուսուլմանների ձեռքում էր, ինչը նրանց մեծ շահույթ էր բերում:

Իսկ Ղուրա՞նը… Իսկ մի՞թե նրանք չէին ուզում ստանալ կրկնակին[76]… Իհարկե ուզում էին, սակայն փողը պարտքով տալու հարցում…

Ովքեր տեղյակ էին պատմությանը, ասում էին, որ վերադարձել են փյունիկեցիների ժամանակները: Նրանց արյունն էր հոսում լիբանանցիների երակներով, ովքեր, ըստ իրենց կարողությունների, լավ գործարքներ էին կատարում: Մինչդեռ Դամասկոսում զբաղվում էին քաղաքականությամբ կամ գաղափարախոսությամբ, կամ էլ արտահայտում էին իրենց ատելությունը եվրոպացիների նկատմամբ, քանի որ նրանցից և ոչ ոք չէր կատարում տված խոստումները: Սիրիացիների կարծիքով՝ գրեթե ամեն ինչի համար մեղավոր էին ֆրանսիացիները, ովքեր քարուքանդ էին արել հաշեմիթների թագավորությունը. դա նրանք չէին կարող ներել: Ընդ որում՝ սիրիացիներն իրենք այդ թագավորությունից կիրաժարվեին, երբ իսլամական հանրապետություն հռչակելու ժամանակը գար: Խնդիրը ոչ թե Մեյսալունն էր կամ Ֆայսալի փախուստը, այլ Դամասկոսում ֆրանսիական մանդատը, որը նրանց համար անտանելի էր

[76] Ղուրան, սուրան 30, այաթ 39. «…Սրանք են, որ կստանան կրկնակին»:

դառնում: Բեյրութում այլ էր. նրանք բողոքում էին՝ մի բան ասած լինելու համար, առանց սրտին մոտ ընդունելու: Դա էր սուննիների ու մարոնների միջև հաճախակի տեղի ունեցող մեծ ու փոքր անախորժությունների՝ ընդհարումների, փողոցային ծեծկռտուքների, հայհոյանքների պատճառը: Դրանք, սակայն, շուտ մոռացվում էին, քանի որ հարկավոր էր նայել դեպի առաջ:

Լիբանանի Հանրապետության նախագահը նշանակվել էր Բարձրագույն կոմիսարի, այլ ոչ թե Ներկայացուցիչների պալատի կողմից: Շառլ Դեբբան հավաստիացնում էր, որ այլևս չի ուզում աշխատել. այդ աշխատանքը նրան խանգարում էր, որ ապրի այնպես, ինչպես ինքն էր ցանկանում: Բանն այն էր, որ ցանկանում էր կյանքը վատնել ոչ թե դահլիճներում ու գրասենյակներում, այլ փողոցում, իսկ հետճաշյա քունն անցկացնել տանը: Ո՞վ նրան կփոխարիներ… Գուցե Էմիլ Է՞դը կամ Հաբիբ Սաա՞դը… Շառլ Դեբբային շրջապատողներից որևէ մեկը՝ անկասկած մի քրիստոնյա մարոն:

Թոմասն իր դստերն ուղարկել էր հեռագիր՝ հայտնելով, որ սեպտեմբերի վերջերին Սարայի հետ հասնելու է Բեյրութ, և մնալու են մինչև Ծննդյան տոները, այնուհետև մտադիր են ուղևորվել Երուսաղեմ ու Կահիրե: Այնտեղից էլ վարձով վերցնելու են մի առագաստանավ ու Նեղոսով նավարկելու են դեպի վեր՝ մինչև Ասսուան. մի բան, որը միշտ ցանկացել էր անել:

Ամռանը եղանակը շատ շոգ չէր, ինչը երեխայի համար բավականին լավ էր. Էթելը գոհ էր: Ջոնն աշխույժ ու առողջ երեխա էր՝ Վեյլերների պես կապույտ աչքերով ու ժպտադեմ: Նադիմա Ղալիբը նրան խնամում էր գիշեր-ցերեկ, միշտ ուշադիր էր Էթելի ցանկությունների նկատմամբ, գիտեր, թե մորն ու մանկիկին երբ պետք է մենակ թողնի: Նրանց օգնում էր նաև Շաբրիների դուստրը, ով Թոմաս Հարդինգի հատուկ խորհրդով սովորում էր Ֆրանսիայի կողմից բացված հասարակական քոլեջում: Այդ կրթօջախի բացումն արժանացել էր համընդհանուր հավանության, թեև դրուզներն ու ալավիները և առհասարակ շիաներն ավելի ձեռնպահ էին իրենց աղջիկներին այդ դպրոցն ուղարկելու առումով: Այլ կերպ էին մտածում Բեյրութի և գլխավոր բնակավայրերի կիրթ ու ողջախոհ մարդիկ, ովքեր հետևում էին Գալիլեյին՝ նույնպես համոզված, որ երկրագունդը պտտվում է: Այն էլ ինչպե՜ս է պտտվում…

43. ԱՆԳԼԻԱՑՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1933թ.

Դոկտոր Էդուարդ Բողոսյանին սկսեցին հրավիրել երեկոյան հավաքների: Շառլ Դեբբան առաջվա պես դրանց մասնակիցն էր և բոլորին համոզում էր, որ իրեն դիմեն ոչ թե «պարոն նախագահ», այլ պարզապես կոչեն Շառլի, ինչպես մանկուց սովոր էին իր ընկերները:

Էդուարդին նրանք համարում էին վաղեմի ընկեր, ու բոլորի համար նա դարձել էր դոկտոր Բողոսյան: Անկախ նրանց միջև առկա տարիքային տարբերությունից՝ նրանք գոհ էին, որ չնայած խիստ զբաղված լինելուն՝ Էդուարդը կարողանում էր մասնակցել որոշ հավաքների:

Ասֆուրյեում՝ «գժանոցում», շատ անելիքներ ուներ: Հետևում էր, որ «գժանոցի» պես հաստատությունում հնարավորինս մաքրություն ապահովվեր: Հիվանդանոցի կարիքները բարեգործության միջոցով որոշ չափով հոգում էին հիվանդների ազգականները: Մանդատի՝ ուժի մեջ մտնելու առաջին իսկ օրերից Ֆրանսիան փորձում էր այդ հաստատությանն արժանավայել տեսք տալ:

Այդպիսի վերաբերմունքն ամենևին չէր զարմացնում դոկտոր Բողոսյանին, սակայն խորհրդածելու տեղիք էր տալիս: Ֆրանսիայում հոգեկան հիվանդները մարդկային արարածներ էին: Նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայում ամեն բան այլ կերպ էր, ինչում նա անձամբ էր համոզվել: Այնտեղ ամենայն սառնասրտությամբ խոսում էին հոգեկան հիվանդների վերացման մասին: Ֆրանսիայում, որտեղ մարդիկ արարում էին, հղանում գաղափարներ և մշակում այնպիսի էթիկա, որը բոլոր մարդկանց հավասարություն էր ընձեռում, երբեք այդպիսի բան չէր կատարվի:

Առաջին հերթին նա բոլոր հիվանդներին ցուցակագրեց ու յուրաքանչյուրին մի քարտ հատկացրեց՝ իրենց տվյալների համաձայն: Նա տեսավ, որ որոշակի դեղորայքային բուժումից հետո երեք հարյուր հիվանդների երեսուն տոկոսը կարող է վերադառնալ ընտանիք, անցնել նորմալ կյանքի և առանց որևէ խնդրի զբոսնել փողոցում: Նույնը մյուսների հետ չէր կարող անել: Ուներ մի քանի ծանր դեպքեր՝ մտագարությամբ տառապող մի քանի հիվանդներ, որոնց ավելի նպատակահարմար էր փակ տարածքում պահել: Կային նաև այլ դեպքեր, որոնց վերաբերյալ նախքան լուրջ որոշում ընդունելը պետք է լավ ուսումնասիրեր:

Հիվանդների շրջանում հանդիպեց անհայտ անունով մի հայուհու, ում կոչում էին Մարի: Նա ոչ ոքի հետ չէր խոսում ու չէր շփվում, միայն հուսահատ գոռում էր: Մի քանի անգամ նրա հետ զրուցելու փորձ կա-

տարելուց հետո որոշեց հոգեվերլուծության սեանս անցկացնել: Մարին հայերի նկատմամբ իրագործված զանգվածային սպանդի զոհերից էր. կին, ում աչքի առաջ սպանել էին չորս որդիներին ու բռնաբարել երկու աղջիկներին, գլխատել ամուսնուն ու հորը: Այդքան դաժան հոգեկան ցնցում էր տարել... Երբ բժշկին հաջողվեց նրա հետ զրուցել, կինը բացատրեց, որ այլևս չի ուզում ապրել: Նրա հետ մտերմանալուց հետո Էդուարդը հույս ուներ, որ կկարողանա օգնել, սակայն հաջորդ օրը Մարին կտրեց իր երակները, ու լուսաբացին նրան արնաշաղախ ու արնաքամ գտան: Այդ քայլը ոչ թե խելագարության, այլ սահմռկեցուցիչ ողբերգության, այն ծայրահեղ համոզմունքի, որ այս աշխարհում ոչ մի արժեք գոյություն չունի, և ոչ ոքի չի կարելի վստահել, հետևանքն էր: Ստիպված այրեցին նրա արյամբ ներծծված բրդյա ներքնակը...

Էդուարդն ուզեց իմանալ, թե կային արդյոք նույն սինդրոմով տառապող այլ հիվանդներ, ու շատերին գտավ. բոլորը հայեր էին՝ հուսաբեկ մարդիկ, ովքեր միայն կամենում էին մեռնել: Բժիշկ Այուբ Թաբիթը նույնպես զննեց այդ հիվանդներին ու նույն բանն ախտորոշեց, ինչ Էդուարդը. սևամաղձություն, բացարձակ ու խորին տխրություն, կյանքին վերջ տալու մորմոք, կյանքի հանդեպ բացարձակ անտարբերություն: Ինչպե՞ս էին վարվել նրանց հետ, որ ընկել էին այդ մառախլապատ անդունդը... Ինչպե՞ս էր հողը հանդուրժում այդպիսի դժնի արարքներ գործած մարդկանց... Եղան մարդիկ, ովքեր կարողացան գոյատևել իրենց անասելի կամքի շնորհիվ, ինչպես բժիշկ Հագոպ Բողոսյանը, սակայն մեծամասնությունը չէր կարող դիմադրել հոգեցունց տառապանքին:

Դոկտոր Բողոսյանի հաշվետվության հիման վրա հոգեբուժարանի բժշկական հանձնաժողովն ընդունեց որոշում՝ ավելացնել հատկացումները և համալրել բուժանձնակազմը: Ողջ Լիբանանում մեծ հարգանք էր վայելում այդ բժիշկը, ով նոր գաղափարներ ու տեսակետներ էր առաջ քաշում հոգեբուժության բնագավառում և ցանկանում էր, որ երբ խոսքը վերաբերեր «գժանոցին», ապա մարդիկ դրա մասին խոսեն արժանապատվությամբ ու հուսառատ: Դա առաջադիմության կարևոր բաղադրիչներից էր, որ Ֆրանսիան ջանում էր ներդնել Արևելքի այդ առաջին աշխարհիկ երկրում, որը պետք է օրինակ ծառայեր մյուսների համար:

Սակայն առաջադիմությունը չէր հակասում միջերկրածովյան ժողովուրդների խառնվածքին, որին միահյուսված էր ամենահին երկրին պատկանելու զգացումը: Շատ ժողովուրդների պատմությունը սկսվել է միմիայն նեոլիթով՝ քարե դարի վերջին շրջանով: Լիբանանցիները գիտեին դա և չքմեղաբար ժպտում էին նրանց, ովքեր իրենց հետ խոսում

էին հովանավորի տոնով: Ինքը՝ Բարձրագույն կոմիսար Պուսոն, որ թողել էր իր պաշտոնը, Փարիզ վերադարձավ այն համոզմամբ, որ իր քայլերը լրջորեն չէին ընդունել: Ֆրանսիային, այո՛, ընդունում էին, նրա գաղափարները՝ նույնպես: Սակայն բոլորովին այլ հարց էր Բարձրագույն կոմիսարին ընդունելը, ով իր պարտքն էր համարում հին ու նոր ժամանակների միջև զուտ տարբերություններ նշելը:

Կյանքը եռում էր Լիբանանում ու նոր Բեյրութում: Նախկին փոքրիկ ու խաղաղ բնակավայրի փոխարեն վեր էր հառնում նոր քաղաքը: Կլիենտելիզմի, փոխադարձ շահի, խարդախությունների, գաղտնի գործարքների, կաշառակերության և միջերկրածովյան կենսակերպին հատուկ այլ սովորույթների փոխարեն Բեյրութում կամաց-կամաց սկսում էին գործել օրենքներն ու կանոնակարգերը: Դա Ֆրանսիայի լիազորության շրջանակում այդ երկրի կողմից ներդրված մեծ ջանքերի շնորհիվ էր: Ջանքեր, որոնք երբեմն դժվար հաղթահարելի խոչընդոտների էին դեմ առնում: Բանն այն էր, որ բնակչությունը պահանջում էր ծառայություններ, սակայն հրաժարվում էր հարկեր վճարելուց, բոլորն ուզում էին կարգուկանոն ու անվտանգություն, սակայն շարունակ դժգոհում էին հասարակական կարգը խաթարող ազատությունների սահմանափակումներից, ցանկանում էին հասնել որոշակի առաջադիմության, սակայն՝ իրենց ավանդույթները չխախտելու պայմանով: Ընդ որում՝ հպարտանում էին, որ արաբ են, բայց երբ գնում էին Դամասկոս, կամ երբ մեկը գալիս էր այնտեղից, ապա հասարակ ժողովրդից տարբերվելու համար ոչ միայն մյուսների, այլև իրենց զավակների հետ էին ֆրանսերեն խոսում:

Սեպտեմբերի վերջին Թոմասն ու Սարան նավով հասան Բեյրութ: Իրենց որդու՝ Ջոնի հետ նրանց դիմավորելու էին գնացել Էթելն ու ամուսինը՝ դոկտոր Բողոսյանը: Ամիսներ ի վեր միմյանց չէին տեսել, ու հանդիպման պահը սրտառուչ էր: Հարազատներից բացի՝ Թոմասին ու Սարային դիմավորում էին նաև Շառլ Դեբբան՝ Լիբանանի Հանրապետության նախագահը, բժիշկ Թաբիթը և մյուս վաղեմի բարեկամները:

Նվագախմբով նրանց դիմավորելու գաղափարը քաղաքապետարանինն էր: Բոլորն էլ ուզում էին մեծարել այդ մարդուն, ով այնքա՜ն էր համագործակցել այն դժվարին ժամանակներում, երբ բոլորն ապրում էին արդեն իրականություն դարձած երազով: Ինքն իր համար երբեք ոչինչ չէր խնդրել, ու այդ մասին Բեյրութում բոլորը գիտեին: Թերևս հասել էր Թոմասին երախտահատույց լինելու պահը: Ի՞նչ կարող էին նրան առաջարկել: Ո՛չ պատիվ, ո՛չ փող, ո՛չ նյութական հատուցում. երբեք չէր

ձգտել այդ ամենին, ու մտքով անգամ չէր էլ անցել: Ի վերջո, ինչ-որ մի բան, անշուշտ, կանեին, իսկ հիմա, երբ նա վերադարձել է շատ ժամանակ անց, եկել է նրա գալուստը տոնելու պահը, նրա՝ նավից իջնելու առթիվ ուրախությունն արտահայտելու պահը:

Նավահանգստի տարածքում այնքան էլ շոգ չէր: Արևմուտքից փչող քամին, որ երբեմն ուժգին էր լինում, ամռանն ընդունվում էր գոհունակությամբ. զովացնում էր տեղանքը, իսկ երեկոյան շնչելու հնարավորություն էր տալիս, առանց դրա օդը հեղձուցիչ էր:

Թոմաս Հարդինգն ապշահար էր: Առաջին անգամ Բեյրութ էր եկել քսանչորս տարի առաջ: Այն ժամանակ քսանինը տարեկան էր, հիմա՝ հիսուներեք: Սարան հպարտ էր ու երջանիկ: Լավ գիտեր Բեյրութի բնակիչներին: Գիտեր, թե ինչ դժվարությամբ էին նրանք որևէ հարցի շուրջ համաձայնության գալիս:

Բեյրութցիները մեծահոգի և մարդասեր արարածներ էին, սակայն յուրաքանչյուրն ուներ իր տեսակետը: Ո՛չ, փոխադարձ համաձայնության գալը բոլորովին հեշտ չէր նրանց պարագայում: Եվ այդուհանդերձ, դիմավորման հանդիսությանը մասնակցելու համար այդտեղ էին՝ իրենց տոնական հագուստներով, ժպտադեմ, սրտառուչ, ինչպես հատուկ էր միջերկրածովյան բնակիչներին, ովքեր դարեդար պահպանել էին իրենց խառնվածքը: Ընդ որում՝ դա՝ պատմական խառնվածքի պահպանումը ոչ միայն Բեյրութին էր հատուկ: Նույնը տեղի էր ունեցել նաև Ալեքսանդրիայում, Թունիսում, Նեապոլում, Ջենովայում, Մարսելում, Բարսելոնում կամ Մալագայում ապրողների հետ: Այդ յուրահատուկ խառնվածքը ձևավորվել էր դարեդար՝ որպես մշակույթի, ցինիզմի, փորձառության ու փառասիրության միահյուսում:

Նրանք շատ սրտառուչ ողջունեցին Թոմաս Հարդինգին ու նրա տիկնոջը: Դիմավորողներից շատերի հետ էր «անգլիացին» վիճել, որևէ բան քննարկել, համաձայնության եկել, անգամ զայրացել, սակայն՝ միշտ էլ բարյացակամորեն ու հանուն այդ հողի հանդեպ ունեցած իր խորը սիրո: Հող, որի վրա ուզում էր ապրել նրանց հետ:

Մեկ շաբաթ անց նրանց պատվին ընթրիք կազմակերպեցին: Մասնակցելու էին մոտավորապես վեց հարյուր հյուրեր՝ իրենց կանանց ընկերակցությամբ: Թոմասն ուղղակի զարմացած էր: Նա անդորր սիրող ու համեստ կյանք վարելու կողմնակից անձնավորություն էր, իսկ այդ հանդիսությունը նրան հանկարծակիի էր բերել: Նա ուսերը թոթվեց. չէր կարող խուսափել ընթրիքից, ոչ էլ ուզում էր նեղացնել իր լավագույն բարեկամներին: Չէ՞ որ նրանց պես ընկերներ ունենալը պարզապես բախտավորություն էր:

44. ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԴԱՍ
ՀՈՒՆՎԱՐ, 1934թ.

Էթելի ծնողների գալը ոչ մի խնդիր չհարուցեց: Առանձնատունն այնքան ընդարձակ էր, որ յուրաքանչյուրը կարող էր իր գործով զբաղվել՝ առանց միջամտելու մյուսների գործերին: Տունը բարեփոխել էին նոր ժամանակների պահանջներին համապատասխան: Առաջին հարկում կային երկու սրահ, մի մեծ ճաշասրահ և մի ընդարձակ խոհանոց, որն իր մեծությամբ չէր զիջում Անգլիայում՝ Սուռեյում գտնվող առանձնատան խոհանոցին: Առաջին հարկում էին նաև զուգարաններն ու լոգարանները, սպասավորների և Շաբրիների զբաղեցրած սենյակները: Մուտքի հետնամասում գտնվող քարայրին տեր էր կանգնել Էթելը: Բացի այլ հարմարություններից՝ քարայրում կառուցել էին մի մեծ մառան, որտեղ մշտապես պահպանվում էր սառը ջերմաստիճան: Երկրորդ հարկում գտնվում էին Թոմասի առանձնասենյակը և գրադարանը, մի ընդունարան ու ծնողների ննջասենյակը: Դիմացի սյունասրահը նույնպես ծածկել էին՝ հարկ եղած դեպքում դրանից օգտվելու համար: Երրորդ հարկը մի ամբողջ տուն էր երիտասարդ ամուսինների համար. չորս ննջարաններ, ճաշասենյակ, խոհանոց, սրահ, Էդուարդի աշխատասենյակ, զուգարան և լոգարան: Որպեսզի բոլորի համար տունն ավելի հարմարավետ դառնար, որոշեցին վերելակ տեղադրել. այդ աշխատանքը պետք է կատարեր տարածաշրջանում գործող ֆրանսիական մի փոքրաքանակ ընկերություն:

Թեև Թոմասը ոչ ոքի չէր ասել, բայց սրտաբանը նրան զգուշացրել էր, որ սիրտ-անոթային անբավարարություն ունի: Չպետք է իրեն ծանրաբեռներ, եթե երկար քայլում էր, շատ էր հոգնում: Որոշեց, որ կյանքը պետք է հարմարեցնի նոր պայմաններին, ու գուցե դա էր պատճառը, որ նա սկսել էր քիչ լինել Լիբանանում: Ավելի ապահով էր զգում Լոնդոնում, թեև Արևելքում երկարատև բնակությունն իրեն՝ այդ երդվյալ ագնոստիկին համոզել էր, որ բոլոր մարդկանց ճակատագիրն Աստծո ձեռքին է: Նրան չէր անհանգստացնում այն, թե ինչ կարող էր իրեն պատահել, սակայն երբ կրծքավանդակը ցավում էր և ուժգին ճնշում, թվում էր, թե հասել է կյանքի վերջին պահը, ու երբեմն ստիպված ահավոր ճիգ էր գործադրում՝ խոսակցությունը շարունակելու կամ, եթե հարկ կար, ժպտալու համար:

Թոմասից ու Լոնդոնի Պարկ Ավենյուի սրտաբանից բացի՝ ոչ ոք

այդ խնդրի մասին տեղյակ չէր: Ինչո՞ւ պետք է այդ մանրուքներով անհանգստացներ իր ընտանիքին... Անչափ մեծ բավականություն էր Սարային երջանիկ տեսնելը, ու չէր ուզում նրա կյանքը մթագնել իր առողջական գանգատներով: Մի բան կար, որ անում էր մշտապես. հայացքը գցում էր ժամացույցին ու կարդում. «Carpe Diem»:

Ժոզե Շաբրին նրան ավտոմեքենայով տարավ Բեյրութի քրիստոնյաների գերեզմանոց. Թոմասն ուզում էր այցելել իր բարեկամի՝ Հագոպ Բողոսյանի շիրիմին: Շաբրին գերեզմանի մոտ նրան մենակ թողեց, միայն կրետներն էին բզզում: Գերեզմանաքարերն անկանոն էին դրված, բայց մաքուր էին ու սպիտակեցված, քանի որ բեյրութցիները մեծ հարգանք էին տածում ննջեցյալների հանդեպ, և մի քանի վարձու աշխատողներ զբաղվում էին գերեզմանոցների պահպանմամբ: Մեծ անպատվություն կլիներ, եթե մտնեին մուսուլմանների գերեզմանոց ու այնտեղ ավելի բարվոք պայմաններ տեսնեին: Ընդհակառակը՝ որոշ փոքրաթիվ մարոն ընտանիքներ ունեին իրենց քարե և մարմարյա պանթեոնները, սակայն սովորաբար քրիստոնյաների շիրիմները հողից էին՝ վրան մի համեստ տապանաքար: Այդպես էր ցանկացել նաև Հագոպ Բողոսյանը, ու այդպես էլ արել էին: Մահվանից մի քանի օր առաջ նա թողել էր մի գրություն՝ նշելով. քանի որ թուրքերն իրեն զրկել են իր հողից, ու ինքն էլ երբեք բավականաչափ հարուստ չի եղել, ապա իր շիրմի հողն իրեն ամենամոտը կլինի, ու ինքը հոգին կավանդի՝ դառնալով իրեն օթևան տված Լիբանանի՝ իր սիրած երկրի հողի մի մասնիկը:

Կողքի շիրիմներից մեկին այցի եկան ամբողջովին սևազգեստ կանայք՝ ծաղիկներով ու արցունքներն աչքերին: Թոմասը քայլեց դեպի երկաթյա դուռը՝ հետևելով աշխատասեր մրջյունների երկար շարքին ու կրծքավանդակում սուր ծակոց զգալով: Երիցս համոզվեց, թե որքան ճիշտ է իր մուսուլման բարեկամների այն միտքը, որ բոլորի ճակատագիրն Աստծո ձեռքին է: Սակայն Աստված ամենագթառատն է ու նրան այդտեղ՝ վեհաշուք Սպիտակ լեռան հովանու ներքո ապրելու որոշ ժամանակ դեռ կշնորհի:

Ավտոմեքենայով իջան մինչև նավահանգիստ: Ձկնորսական նավակների վերադառնալու ժամն էր, և բիբլիական նույն ծովը շարունակում էր առատ ձուկ մատակարարել տեղի բնակիչներին, որոնց նախնիները հազարավոր տարիներ առաջ նույնպես գցել ու հանել էին շողշողուն ձկներով լցված իրենց ձկնորսական ցանցերը: Թոմասին իսկապես հմայում էր այդ եռուզեռը, երբ ձկնորսները բերնեբերան լի արկղերը ծածկի տակ շարում էին կողք կողքի՝ վաճառքի հանելու համար: Արևա-

հար դեմքով արաբը՝ ոսկե մատանիներով ու հաստ մատներով, երգեցիկ ձայնով ու նվազող կարգով սակարկում էր ձկներով լի որևէ արկղի գինը, և երբ վաճառողներից մեկնումեկը ձեռքով թույլ նշան էր անում, ապա նա բարձրացնում էր ձեռքը կամ ձեռքը տանում էր գլխարկին՝ գնելով այդ խմբաքանակը: Թոմասը գնեց կաղամարի, արքայաձկան ու տափակաձկան մի-մի արկղ, որոնք Ժոզե Շաբրին դրեց ավտոմեքենայի բեռնախցիկում: Այդ երեկո նրա կինը ձկնեղենի մի մասը կպատրաստի լիբանանյան համեմունքներով, իսկ մնացածը կթողնեն հաջորդ օրվա համար:

Լոնդոնում Թոմաս Հարդինգը շատ բաների էր կարոտում, իսկ ամենաշատը՝ լիբանանյան խոհանոցը: Իրենք՝ ֆրանսիացիներն էին անգամ դա ընդունում: Ընդ որում՝ Ֆրանսիան իսկապես այն երկրներից էր, որտեղ համեղ էին պատրաստում, սակայն Լիբանանը հատուկ վայր էր համադամ կերակուրների սիրահարների համար:

Նավահանգստի ձկնավաճառներից ձուկ գնելը Թոմասի համար շատ հաճելի արարողություն էր: Հետո՝ ընթրիքի ժամին, բոլորը գովելու էին խոհարարուհուն և նրան, ով ձեռնարկել էր այդ գործը՝ հացի ու ձկների նոր հրաշքը:

Կյանքը Բեյրութում ընթանում էր սովորականի պես: Մարդիկ խոսում էին գերմանացիների մասին, ովքեր կրկին գլուխ էին բարձրացնում: Բեյրութում նրանց այնքան էլ չէին համակրում, այնինչ Դամասկոսում նրանց համարում էին արաբների լավ բարեկամներ: Նույն բանը կատարվում էր Պաղեստինում, ինչպես նաև՝ Երուսաղեմում, որտեղ Ամին ալ-Հուսեյնին միշտ մատնացույց էր անում գերմանացիներին՝ կարծիք հայտնելով, որ միայն նրանք կարող են որոշ փոփոխություններ իրականացնել:

Ոմանք դեռ հիշում էին օսմանների տիրապետության ժամանակ գործող արաբական գաղտնի կազմակերպություններին: Ֆրանսիացիներն ունեին հետախուզական այնպիսի համակարգ, որը կանխում էր իրենց դեմ ուղղված խռովության նոր տրամադրությունների զարգացումը: Ուրիշներն էլ կարևորում էին ոչ թե գաղտնի կազմակերպությունների, այլ առաջադիմական գաղափարներ ունեցող քաղաքական ուժեղ կուսակցությունների առկայությունը: Ի՞նչ էին Պաղեստինը, Իրաքը, Սիրիան կամ Լիբանանը, եթե ոչ՝ արաբների հայրենիք:

Նմանօրինակ հայտարարությունները զայրացնում էին մարոնիներին, քանզի հենց որ ֆրանսիացիները թողնեին մանդատը, ինչը վաղ թե ուշ տեղի էր ունենալու, ջրերը կրկին կհոսեին իրենց նախկին հունով,

և Լիբանանը կվերադառնար իր մոր՝ հինավուրց Սիրիայի գիրկը, որն օմայաններից շատ ավելի վաղ էր պետություն դարձել:

Թոմասին իր մարոն բարեկամները հրավիրեցին մի հավաքույթի, որպեսզի նրա հետ արծարծեն իրենց հուզող որոշ հարցեր: Նա կամեցավ, որ իրեն ընկերակցի իր փեսան, ով թեկուզ հայ էր, բայց համարվում էր աշխարհի քաղաքացի, ևս մեկ եվրոպացի: Թոմասին հավաստիացրին, որ ոչ մի առարկություն չունեն, ու Էդուարդի ներկայությունը նույնիսկ հաճելի կլինի: Անգամ հրավիրեցին Ալբերտ Սուրսոեկին՝ ուղղափառ հույնին, ով շատ մոտ էր մուսուլմանների դիրքորոշմանը, սակայն անձնվեր բարեկամ էր և հավատարիմ անձնավորություն: Հավաքույթի մասնակիցները գրեթե քառասուն հոգի էին: Նրանց իսկապես համարում էին Բեյրութի շունչն ու ոգին, թերևս՝ քրիստոնեական ոգին, բայց նրանց մեկ երրորդ մասն անգամ իսկական հավատացյալներ չէին: Իհարկե, ժամերգության ու հաղորդություն ստանալու համար բոլորն էլ գնում էին եկեղեցի՝ գիտենալով, որ Վատիկանը նրանց գաղտնի հետևում է: Այուբ Թաբիթը մի օր Թոմասի հետ անկեղծացավ՝ այդ երևույթը համարելով «խաղի մի մաս»: Թոմասն էլ իր հերթին անգիտակ ձևացավ ու հարցրեց, թե որ խաղի: «Իշխանության ու փառքի»... Նույն բանն էր Հռոմից ու Բյուզանդիայից սկսած. կա՛մ ինձ հետ ես, կա՛մ իմ դեմ: Ըստ այդմ՝ ինչո՞ւ անախորժություն ունենալ: Պետք չէր… Բացի դրանից՝ բժիշկ Թաբիթին քաջ հայտնի էր, որ անախորժությունները նվազեցնում են կյանքի տևողությունն ու հաճախ խաթարում անգամ ամուսնական ներդաշնակությունը: Ավելի լավ է խուսափել անախորժություններից:

Հարցերն արծարծեցին՝ գրեթե բղավելով: Սակայն ոչ թե վիճում էին, այլ՝ ընդհակառակը. եթե բանը վեճին հասներ, ապա իրենց կողքինի հետ կխոսեին շշուկով կամ չէին խոսի ու ամեն ինչ մեջքերը կպահեին: Եթե անգամ բղավում էին, ապա դա անում էին հանգիստ. նրանց այդ իրավունքն ընձեռել էին բարեկամությունն ու հավատարմությունը: Վախենում էին, որ ֆրանսիացիները կհեռանան այդտեղից: Ինչ վերաբերում էր բրիտանացիներին, ապա բոլորն էլ գիտեին, որ նրանք կուշտ են Պաղեստինից ու Իրաքից: Եգիպտոսի պարագայում էլ ավելի լավ էր լռելը: Այնպես որ՝ համոզված էին, որ հանուն ոչ մի բանի ու որևէ մեկի կրակից շագանակներ հանելու համար անգլիացիները չէին վերադառնա ո՛չ Սիրիա և ո՛չ էլ Լիբանան: Ուրե՞մն… Ի՞նչ կպատահի, երբ ֆրանսիացիները հոգնեն վիրավորանքներից, անախորժություններից ու անհատույց աշխատանքից: Նրանք եկել էին բարի կամքով, թեև չար լեզուները նրանց

անվանում էին իմպերիալիստներ: Դեբբան հավաստիացրեց, որ առանց ֆրանսիացիների Լիբանանը գոյություն չէր ունենա, ու գուցե այնպես լինի, որ դադարի գոյություն ունենալուց: Մի խոսքով, ինչի՞ համար էին իրենք պարտական ֆրանսիացիներին, ովքեր ամբողջ երկրով մեկ ստեղծել էին ենթակառուցվածքներ՝ նոր հիվանդանոցներ, կրթական համակարգ, իրավական երաշխիքներ, հին մշակույթների հանդեպ հարգանք և հավասարություն ու եղբայրություն գաղափարներն էին սերմանել: Այնուամենայնիվ, առաջին հերթին պարտական էին նրանց ընձեռած ազատության համար. մի բան, որից օգտվում էին, բայց չէին նկատում, սակայն դա այնքան էր կարևոր, որքան շնչելը: Էդուարդ Բողոսյանը համաձայնեց՝ հիշելով, թե ինչ էր կատարվում Վիեննայում և իր բարեկամ, պրոֆեսոր Շտեյնբերգին, ումից ոչ մի նորություն դեռևս չունեին: Նրա կարծիքով՝ պրոֆեսորն ի վերջո գնացել էր Նյու Յորք՝ առանց Լիբանան այցելելու:

Էդուարդը երեք տարի սովորել էր Սորբոնի համալսարանում, իսկ երեկոյան ժամերին որպես մատուցող էր աշխատել՝ ուսման վարձը վճարելու համար: Դա ուսումնառության սկզբին էր, երբ չգիտեր՝ բժիշկ էր դառնալու, թե փիլիսոփայություն էր սովորելու: Այնտեղ՝ Փարիզում, նա հասու էր եղել ֆրանսիական մշակույթի էությանը՝ համակվելով ահավոր նախանձի զգացումով: Եվ այժմ ինքն առավել քան լավ գիտեր, թե ինչ է ֆրանսիական ազատությունը…

Հավաքույթից դուրս եկան վիատված: Թոմաս Հարդինգից ավելի լավ ոչ ոք չգիտեր, թե Արևելքի հետ կապված ինչ էր մտածում Մեծ Բրիտանիան, որը երբեք չի միջամտի, մինչև որ Ֆրանսիան իրեն չխնդրի: Անկախ չարակամ ակնարկներից՝ Ֆրանսիան ու Անգլիան առաջ էին գնում նույն նավով, դաշնակից և բարեկամ երկրներ էին և ունեին համընդհանուր գաղափարներ՝ հանուն ողջ աշխարհում ազատության հաղթանակի: Դա նշանակում էր, որ անգամ որևէ տարաձայնություն ունենալու դեպքում նրանք կարող էին վստահել մեկը մյուսին:

Այդուհանդերձ, եթե Ֆրանսիան որոշեր դուրս գալ Արևելքից, ապա ամեն բան կարող էր պատահել, մինչև իսկ կվտանգվեր Լիբանանի գոյությունը: Խառնակ ժամանակներ էին, Եվրոպայում շատ անկայուն էր տնտեսական իրավիճակը, ֆինանսական ճգնաժամի հետևանքներն իրենց զգացնել էին տալիս:

Լիբանանում բոլորն էլ տեղյակ էին առկա դրությունից: Հյուսիսում գլուխ էր բարձրացնում Թուրքիան, որը տարածքներ էր պահանջում ու սահմանների շուրջ վիճաբանում Աթաթուրքի պես առաջնորդի գլխավո-

ռությամբ, ով իր գործունեությամբ ստիպել էր, որ մեծ տերությունները հարգեն իրեն: Այդ կռվում պարտվողները հայերն էին: Նրանց համար ո՛չ ուտոպիական՝ անիրական «Վիլսոնյան Հայաստան» կար, որ գծել էր այն ժամանակվա ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը, ո՛չ էլ գոյություն ունեին Կիլիկիայի մի մասն ու Վանի, Սասունի, Տրապիզոնի և հայկական պատմական մյուս տարածքները: Ի վերջո, հայերին հասավ իրենց պատմական տարածքի միայն նվազագույն մասը՝ Երևանին հարող անհյուրընկալ սարերով: Միաժամանակ շնորհակալություն Խորհրդային Միությանը, որ նրանց փրկեց վերջնական աղետից: Առաջին աշխարհամարտի տարիներն ահավոր էին Հայաստանի պես երկրի համար, որն ունեցավ մարդկային ու տարածքային վիթխարի կորուստներ, ամբողջ աշխարհով մեկ սփյուռք: Մինչ քաղաքակիրթ ու ժողովրդավարական աշխարհի առաջնորդները ժամանակը վատնում էին՝ սնամեջ ճառեր ասելով, ասես պատմությունը ջանում էր պատժել այդ անպաշտպան երկրին:

Հայերի ճակատագրի շուրջ Էդուարդը խոսում էր իր աներոջ հետ, ով, համամիտ լինելով հանդերձ, միայն պնդում էր, որ այդ ամենի մեղքը ո՛չ Մեծ Բրիտանիայինն է, ո՛չ էլ՝ Ֆրանսիայինը: Գերմանիան է եղել օսմանների ոճրագործության ակտիվ հանցակիցը: Ռուսաստանը պաշտպանում էր իր ռազմավարական շահերը, ԱՄՆ-ը չէր ցանկանում մտնել իրենից շատ հեռու գտնվող մի հակամարտության մեջ, ոչ էլ՝ զինվոր ուղարկել այդտեղ՝ հանուն այլոց շահերի մարտնչելու: Թոմասի կարծիքով՝ կգար մի օր, երբ բոլորը կհիշեն, որ ոչինչ չեն արել հայ ժողովրդի համար. այն ժողովրդի համար, որն իրենց այնքան հարազատ է թե՛ հավատքով, թե՛ մշակույթով:

Այդ աշնանը Հարդինգների տունը դարձել էր հանդիպումների վայր: Երեկոյան տարբեր մարդիկ էին հյուրընկալվում այդ առանձնատանը: Համարվում էր, որ Բեյրութում առավոտյան ժամերը, այսպես ասած, ավելի ընտանեկան էին, իսկ հետճաշյա հանգստի ընթացքում ոչ ոք չէր համարձակվի խանգարել որևէ հարևանի կամ ազգականի քունը: Երեկոյան՝ ժամը յոթի սահմաններում, որևէ մեկն անպայման հայտնվում էր՝ ասելով. «Անցնում էի այս կողմերով…»: Այդ այցելությունները Թոմաս Հարդինգին չէին խանգարում, այլ՝ ընդհակառակը: Հոկտեմբերի կեսերին՝ մի երեկո, նրա համար մեծ անակնկալ եղավ, երբ Ժոզե Շաբրին բարձրացավ և ասաց, որ մի անծանոթ մարդ ուզում է նրան տեսնել: Չէր ասել իր անունը, սակայն Շաբրիի կարծիքով՝ խոսքը մի նուսայ-

րիի մասին է: Թոմասն իջավ ներքև: Ո՞վ կարող էր լինել: Հանդիպեց մի մարմնեղ արաբի, ով թեև հագնված էր եվրոպական ոճով, սակայն՝ տեղացի դերձակների կողմից վատ կարված և նորաձևությունից դուրս եկած կոստյումով:

Այդ մարդը, որ Թոմասին աղոտ ծանոթ թվաց, մոտեցավ, սեղմեց նրա ձեռքն ու ժպտալով ասաց.

- Անգլիացի՛, Աստված մեծ է, դու ինձ չես մտաբերում, մինչդեռ կյանքով քեզ եմ պարտական: Ես Զակի էլ-Ուաշն եմ, ում կյանքը դու փրկեցիր շատ տարիներ առաջ:

Մի պահ Թոմաս Հարդինգը կասկածեց, հետո մի քայլ առաջ գնաց ու գրկեց նուսայրիին:

- Քեզ չճանաչեցի: Տեսողությունս առաջվանը չէ, բայց շատ եմ քեզ հիշել: Իհարկե, հիշում եմ քեզ:

Թոմասն իր հին ընկերոջը հրավիրեց նստելու խնամված մովրաշուքի ներքո. խաղողի որթերը տարածվել և տունը միացրել էին այգուն: Մինչ Մարիան սառը թեյ կմատուցեր, երկու տղամարդիկ զննում էին միմյանց:

- Քսան տարի է անցել, բայց դու նույնն ես մնացել, Զակի՛ էլ-Ուաշ: Ողորմած Աստված քեզ ուժ է տվել: Ես ավելի ծեր եմ: Իմ նկատմամբ նույնպես ժամանակն անողոք է գտնվել:

- Մի՛ բողոքիր, անգլիացի՛: Աստված շատ գթասիրտ է եղել քո հանդեպ: Դատելով իմ արտաքինից՝ գուցե քեզ թվա, թե կարող եմ իշուկ բարձրացնել, բայց քո գլուխը, իմ գլխի համեմատությամբ, շատ առավելություն ունի: Հենց հիմա իմը քոնի հետ կփոխեի, թեև դա գուցե Աստծուն հաճո չլինի: Շատ եմ մտածել քո մասին: Այն օրը դու ցույց տվեցիր քո քաջությունը, մարդկությունն ու արժանապատվությունը: Քո շնորհիվ եմ օգտվել կյանքից:

- Զակի՛ էլ-Ուաշ, քո մասին ես նույն կարծիքին եմ,- ասաց Թոմասը և նրան պատմեց իր ձերբակալման, շաբաթներ շարունակ լլկանքի ու խոշտանգման ենթարկվելու և հուսահատությունից մեռնելու ցանկության մասին:

- Այո՛, ի՜նչ սարսափելի ժամանակներ էին: Սակայն քեզ մի բան կասեմ, անգլիացի՛: Թուրքերին այլասերել են գերմանացիները: Ես գործ եմ ունեցել շատ թուրքերի հետ, նրանք այդպիսին չէին: Չգիտեմ, թե ինչ պայման կնքեցին նրանց հետ, բայց թուրքերն անճանաչելի դարձան: Միշտ մտածել եմ քո մասին: Դեռևս մեկ ամիս առաջ չգիտեի, որ այս տունը քոնն է: Որոշեցի Բեյրութ գալ՝ քեզ ողջունելու և ասելու, որ Լաթաքիայի մոտ՝ սարերում, որտեղ նուսայրիներս ենք բնակվում, քո

տունն ունես և միշտ ցանկալի կլինես: Ինչպես գիտես, մենք երբեք լավ չենք եղել թուրքերի, բոլոր զավթիչների հետ, ովքեր ցանկացել են մեզ ստրկացնել: Նուսայրիներս երբեք ոչ ոքի առաջ ծնկի չենք իջել: Թուրքերը ոչ միայն ուզում էին տիրանալ մեր սարերին, այլև չէին հարգում մեր դավանանքը: Մեզ անվանում էին անհավատներ, քանի որ նրանց կարծիքով՝ մենք երկնքին, արևին ու լուսնին նայում ենք այն նույն ակնածանքով, որը կարելի է տածել միայն միակ Աստծո հանդեպ: Նաև հավատում ենք Ալի իբն Աբու Թալիբին՝ Մարգարեի համախոհին՝ որպես աստվածային էակի: Դժվար է համառոտ ներկայացնել մեր հավատքը, սակայն ակնհայտ է, որ իսլամի հետ համեմատած՝ շատ տարբերություններ կան: Դա էր պատճառը, որ թուրքերը մեզ չէին ընդունում, ու մեր կյանքը շատ էր բարդանում: Հիմա ֆրանսիացիների հետ ամեն բան ավելի լավ է, թեև նրանք փորձում են փոխել մեր կենսակերպը: Նրանց համար դա հեշտ չի լինի: Եկել եմ ասելու, որ ուզում եմ քեզ ներկայացնել իմ գերդաստանին: Դու մեզ մեծ պատվի կարժանացնես, եթե ընտանիքով գաս: Լսի՛ր, անգլիացի՛, այս կյանքում շատ մարդիկ են քեզ հավատացնում, որ քո բարեկամներն են, քեզ գրկում են, ժպտում, հետդ որպես հարազատ վարվում, տուն են հրավիրում, պատվում: Գիտե՞ս, թե մինչև երբ… Մինչև այն պահը, երբ առաջին անգամ իրենց կարիքը զգաս: Այդ պահից սկսած ամեն ինչ փոխվում է, թաքնվում են, ասես չեն ուզում քեզ տեսնել: Դու ինձ բոլորովին չէիր ճանաչում: Դու անգլիացի ես, իսկ ես՝ նուսայրի, ընդհանուր քիչ բան ունենք, գուցե՝ ամենակարևորը. երկուսս էլ մարդ արարածներ ենք: Երբ ինձ տեսար վիրավոր, ասես եղբորդ էին վիրավորել, տագնապեցիր ինձ համար և չհանգստացար, մինչև ինձ հուսալի ձեռքերում չթողեցիր: Գիտե՞ս, անգլիացի՛, ինձ միշտ ասում էին, որ եվրոպացիներն ատում են արաբներին, որ անհավատներն ատում են մուսուլմաններին: Դու ինձ ապացուցեցիր հակառակը ու փոխեցիր իմ կարծիքը: Այդ պահից ի վեր կարծում եմ, որ ո՛չ ռասան, ո՛չ կրոնը և ո՛չ էլ մաշկի գույնը կարևոր չեն: Ինձ համար կարևորն այն է, ինչ դու քո արարքով ինձ սովորեցրիր: Շատ տարիներ են անցել, ու երկուսով ծերացել ենք: Ես թույլ չէի տա, որ ժամանակն անցներ, ու առանց քեզ տեսնելու և այս ամենը քեզ ասելու՝ ես հեռանայի այս աշխարհից: Տեղեկացել եմ, թե ով ես, և գիտեմ, որ ուզում ես ավելի լավ ճանաչել այս երկիրն ու արաբներին: Դու հեղինակավոր մարդ ես, ում նկատմամբ հարգանք են տածում: Միայն ուզում էի, որ իմանաս՝ սարերում ապրող նուսայրիներս երախտապարտ մարդիկ ենք, ու դու միշտ ցանկալի կլինես:

Զակի էլ-Ուաշը տեղից վեր կացավ:

- Հիմա պետք է գնամ: Քեզ գործից կտրել եմ՝ առանց գալուս մասին իմաց տալու: Աստված քեզ պահապան, անգլիացի՛, դու լավ մարդ ես, ու Տերը քեզ, անկասկած, կհատուցի:

Թոմասն իսկապես հուզվել էր: Իր համար անակնկալ էր դա: Նա էլ էր հիշում, թե ինչ էր կատարվել այդքան տարի առաջ:

- Զակի՛ էլ-Ուաշ, քո խոսքերն ինձ ապշահար արեցին: Ես նույնպես չեմ մոռացել այդ պահերը, քանի որ բազմիցս մտածել եմ, որ տեղեկանամ քո մասին: Դու առաջ ես ընկել և արել այն, ինչ ես սոսկ մտածել եմ: Այնպես որ՝ ես քեզ պարտք եմ մնացել: Եթե Աստված կամենա, կգամ քո տուն՝ քեզ տեսնելու: Հենց նոր ինձ համար դու արեցիր այն, ինչ շատ քչերն են արել: Ինձ ապացուցեցիր, թե որն է իսկական՝ անշահախնդիր բարեկամությունը: Շնորհակալություն:

Զակի էլ-Ուաշը սեղմեց նրա ձեռքն ու գրկեց: Մարդն ուրիշ ոչինչ չասաց ու դուրս եկավ: Խոսքերն ավելորդ էին: Զակի էլ-Ուաշը Թոմասին անմոռանալի դաս տվեց:

45. ԱՆՊԵՏՔ ԹՂԹԻ ԿՏՈՐ
ՓԵՏՐՎԱՐ - ՀՈՒՆԻՍ, 1934թ.

Փետրվարի կեսերին Թոմաս Հարդինգը սկսեց ավելի սուր ցավեր զգալ: «Դյո դե Ֆրանս» հիվանդանոցի սրտաբանը նույնպես սիրտ-անոթային սուր անբավարարություն ախտորոշեց: Նշանակեց մի դեղամիջոց, որը փոքր-ինչ թեթևացրեց ցավերը, սակայն Թոմասը չպետք է ժամանակ կորցներ ու որոշեց վերադառնալ Լոնդոն: Մի քանի օր անց նրանք նստեցին Պորտսմութ տանող «Նեպտուն» բեռնամարդատար շոգենավը: Սարան ոչ մի առարկություն չարեց: Դեռ ավելին՝ ուզում էր, որ հնարավորինս շուտ հասնեն Անգլիա: Թոմասը վատառողջ էր, թեև ինքը ջանում էր թաքցնել իր վիճակը:

Նավարկեցին եղանակային վատ պայմաններում, փոթորիկը դեռ հապաղում էր, սակայն ծովն այնքան ալեկոծ էր, որ անհնարին էին տախտակամածին զբոսնելը, սրահ կամ ռեստորան գնալը, քանի որ մի կողմից դեպի մյուս կողմը կտրուկ ճոճվելը ստիպում էր բռնվել ինչ-որ տեղից, ու բոլոր ուղևորները սրտխառնոց ու գլխապտույտ ունեին:

Թոմասը հիվանդ էր ու ընկճված, և եղանակը պատրվակ էր, որ դուրս չգար նավախցիկից: Ուղևորության մեծ փորձ ունեին և վերցնում էին կից նավախցիկներ, հնարավորության դեպքում՝ հաղորդակցվող: Սարան լավ էր դիմանում այդ եղանակին ու բազրիքներից բռնվելով՝ մատուցողների հիացկոտ հայացքների ներքո հասնում էր դատարկ միջանցք: Երբ անցան Ջիբրալթարի մոտով, եղանակը լավացավ, բայց՝ ոչ Թոմասի տրամադրությունը, ով անհամբեր սպասում էր Անգլիա հասնելուն: Երկար տարիներ ի վեր կատարել էր այդ ուղևորությունը, սակայն երբեք այդքան վատ եղանակ չէր եղել, ոչ էլ որևէ նավ էր այդքան ճոճվել: Նա խիստ զղջում էր, որ մի շաբաթ ավելի չէր սպասել, որպեսզի ուղևորվեին «Սթար օֆ Ինդիա» նավով, որն ավելի տարողունակ էր, ավելի հին, բայց՝ ավելի շքեղ ու կայուն:

Միակ սփոփանքն այն էր, որ շուտով հասնելու էին Անգլիա, ու իրեն շատ չէր նեղում անոթային անբավարարությունը: «Դյո դե Ֆրանս»-ի հայ բժիշկը նրան շատ համապատասխան դեղ էր նշանակել: Պետք է խորհրդակցեր բժիշկ Կաֆլինի՝ Լոնդոնի իր սրտաբանի հետ: Ինչ վերաբերում էր Սարային, ապա գրեթե չէին տեսնվում: Կինը մի պահ մտնում էր առավոտյան, մի պահ էլ՝ ուշ երեկոյան՝ բարի գիշեր մաղթելու: Թոմասին լավ էր ճանաչում ու գիտեր, որ նրան դուր չէր գալիս, երբ հարցնում էր, թե ինչպես է: Եղանակի բարելավվելուց և իր տրամադրության՝

դեպի լավը փոխվելուց հետո Թոմասը քաջություն ունեցավ և կեսօրին Սարայի հետ գնաց ռեստորանում ճաշելու:

Տասներկու օր նավարկելուց հետո հասան Պորտսմութ, որտեղից գնացք նստեցին՝ Լոնդոն մեկնելու համար, և երբ վերջապես ոտք դրեց իր տան շեմին, երդվեց, որ այլևս նավ չի նստի:

Մի քանի օր անց Թոմասն այցելեց բժիշկ Կաֆլինին, ով նրան հանգամանալից քննեց:

- Իմ սիրելի՛ բարեկամ, Ձեր սիրտը դեռ երկար տարիներ Ձեզ կտանջի: Դուք ունեք անոթային խրոնիկ հիվանդություն: Ձեք կարող մեծ ճիգեր գործադրել, խորը հուզմունք ապրել, սակայն կարող եմ Ձեզ հավատացնել, որ գոնե առայժմ դա Ձեր կյանքին չի սպառնում: Դուք շարունակելու եք ընդունել բեյրութցի իմ գործընկերոջ՝ բժիշկ Թամասյանի՝ տեղին նշանակած դեղամիջոցը և պետք է բավականին հանգիստ կյանք վարեք, թեև ճանաչելով Ձեզ՝ գիտեմ, որ Ձեզ համար շատ դժվար կլինի: Դե՛ ինչ, ապրե՛ք սովորական կյանքով, ավելի հանգիստ ու պահպանե՛ք Ձեզ:

Տուն վերադարձավ ավելի բարձր տրամադրությամբ: Սարան ընկերուհիների հետ տեղ էր գնացել: Թոմասը որոշեց, որ դա հարմար պահ էր իր գրառումները կարգի բերելու համար: Սկսել էր հավելյալ գրառումներ կատարել՝ հիմնվելով իր օրագրերի վրա, որոնք գրել էր ողջ կյանքի ընթացքում: Դրանք կոչում էր «Նավի տետրեր» ու կարդալով մի քանի էջ՝ մտածեց, որ կարող է վերականգնել կորցրած ժամանակը: Լավ զբաղմունք կլիներ. մի բան, որ վաղուց էր ուզում անել:

Ավգուստուս Նյումանի՝ կեսօրից հետո հնչած հեռախոսազանգն անակնկալ էր: Ասաց, որ երեկոյան՝ վեցն անց կեսին, ուզում է նրա հետ ընթրել Ռիցում: Ժամանակը բավականացնում էր, հագնվեց, որ գնա ընթրիքի: Քսանհինգ րոպե անց վարորդը նրան թողեց Պիկադիլիի մոտ: Ավգուստուս Նյումանն արդեն այնտեղ էր ու պարծեցավ՝ ասելով, որ ինքը ոչ ոքի չի սպասեցնում, բայց ինքն էլ միշտ սպասում է ամենաշատը հինգ րոպե:

Երկուսով գրկախառնվեցին, գրեթե երկու տարի իրար չէին տեսել: Երբ Նյումանն Արևելքում էր, Թոմասը Լոնդոնում էր, և՝ հակառակը: Ավգուստուսն առաջվանն էր: Թոմասն ուշադիր զննեց իր լավագույն բարեկամի դեմքն ու նկատեց անցած օրերի թողած աննշան հետքերը: Նյումանը նայեց Թոմաս Հարդինգի կոպերի կնճիռներին ու դեմքի սմքածությանը: Որևէ անծանոթի կարծիքով՝ նրանք տարեկիցներ պետք է լինեին:

- Ձեմ հասկանում, թե ինչպե՞ս է քեզ հաջողվում միշտ նույնը մնալ:

Ժամանակը քեզ համար մնում է անփոփոխ, Ավգուստո՛ւս: Որտե՞ղ ես ստացել այդ սիրուն գույնը:

Նյումանը ժպտաց:

- Ի՜նչ արած, իմ հասակի մարդը թերևս պետք է գոլֆ խաղա ու դասականներին ընթերցի, բայց քեզ հետ անկեղծ կլինեմ: Վերջին տասներկու ամիսների ընթացքում եղել եմ Բեռլինում, Թեհրանում, Բաղդադում, Կահիրեում, Երուսաղեմում, Դամասկոսում, Ստամբուլում, կրկին Բեռլինում, իսկ հիմա՝ այստեղ: Ջրի, հողի վրա ու օդի միջով… Ինքնաթիռները, որ կառավարությունը տրամադրում է ինձ, մի ակնթարթում քեզ մի տեղից մյուսը կտանեն: Արտգործնախարարությունն էլ փող չի խնայում, երբ իրեն մի բան է հետաքրքրում: Ի դեպ, ի՞նչ կա աղջկանիցդ: Ինչ-որ մեկն ինձ ասաց, որ Էթելը տղա է ունեցել, դու էլ արդեն պապիկ ես: Անշուշտ, ժամանակը մեզ էլ մեր հասանելիք տեղում է դնում: Ընդունի՛ր իմ շնորհավորանքները, սիրելի՛ բարեկամս: Ի՞նչ կա Բեյրութում: Լիբանանցիները երբեք չեն կարողանա Ֆրանսիային ըստ արժանվույնս երախտահատույց լինել այն ամենի համար, ինչ այդ երկիրն արեց հանուն նրանց: Սիրիացիներին հավաստիացնում են, որ ֆրանսիացիներն ընդամենը տուրք են տալիս իրենց իմպերիալիստական նկրտումներին, սակայն մենք՝ որպես դիտորդ, գիտենք, որ դա ճիշտ չէ: Իր ձեռնարկած այդ դոնկիխոտյան ծրագրի իրականացումը Ֆրանսիային պատճառել է միմիայն աշխատանք, ծախսեր ու անախորժություններ: Գերմանացիները կրկին վերադարձել են իրենց սև գործերին: Վերսալի պայմանագիրն արդեն մի թղթի կտոր է, իսկ Հիտլերը, բացի արտառոց սնապարծ լինելուց, նաև արգահատելի կերպար է: Դարձել է Գերմանիայի իսկական տիրակալը: Անգամ կայսր Վիլհելմն այդպիսի իշխանությունից չէր օգտվում: Ի դեպ, նա շատ վատ է վարվում հրեաների հետ: Այնտեղ ես անգլիացի դիվանագետ եմ, ու ինձ վերաբերում են որպես այդպիսին, բայց եթե ներկայիս Գերմանիայում ես լինեի հրեա ընտանիքի հայր… Կփորձեի շատ արագ հեռանալ այդտեղից: Ինչ վերաբերում է արաբներին, ապա նրանք մեզ չեն ներել ո՛չ Բալֆուրի հռչակագրի, ո՛չ էլ Սայքս-Պիկո համաձայնագրի համար: Եվ իմ կարծիքով՝ վատթարն այն է, որ մեզ երբեք էլ չեն ների: Եթե ապագայում այլ կոնֆլիկտ ունենանք, ապա նրանք թերևս կանցնեն Գերմանիայի կողմը: Պրուսացիների համոզմամբ՝ գաղութների առումով իրենց ձեռքերը մաքուր են, ինչը ճիշտ չէ, և իրենք էլ դա գիտեն: Նրանց այն մտադրությունը, որ թուրքերին ներքաշեցին Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, նողկալի էր: Նրանք ուզում էին Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան ներառել Օս-

մանյան կայսրության հսկա տարածքում: Սակայն դա նրանց չհաջողվեց, բայց չկարծես, թե նրանք դրա հետ համակերպվել են: Եթե ասեմ, հավատդ չի գա. վերջերս նացիստների լրտեսական ցանց ենք գտել Ստամբուլում ու Դամասկոսում: Թեհրանում՝ նույնպես: Ստամբուլում Գերմանիայի կամ, ինչպես իրենք են իրենց սիրով անվանում, Երրորդ Ռեյխի դեսպանատունը նույն պատմության շարունակությունն է: Ոչինչ չսովորեցին: Նրանց գեներալները մի քիչ ծերացել են, միայն՝ այդքանը, սակայն ցանկանում են կրկին մեր գլխին փորձանք բերել: Դամասկոսում կան շատ ազգայնամոլ արաբներ, ովքեր ատում են ֆրանսիացիներին, քանզի նրանց խանգարեցին, որ միանան Լիբանանի հետ: Մեզ էլ ատում են մյուս խնդիրների պատճառով: Բավականին հաճախ նրանք հանդիպում են Գերմանիայի մշակույթի կցորդի և նացիստական կուսակցության չորս կամ հինգ անդամների հետ, ովքեր գնում են Դամասկոս ու տարբեր դավեր նյութում: Հետախուզական ծառայությանը դա շատ չի անհանգստացնում: Բոլոր տվյալները մեզ հայտնի են, կարևոր բոլոր վայրերում ունենք վստահելի մարդիկ: Պատմությունը կրկնվում է: Նույն բանը մեզ հետ պատահում է Տանժերից մինչև Կահիրե, Թեհրանից մինչև Բաղդադ: Վերսալը գերմանացիների սրտով չէ: Գիտենք, որ նրանք վերազինվում են, ի դեպ՝ անպատիժ ձևով: Ունեն մի քառորդ միլիոն ենթասպաներ, թեև իրականում բոլորն էլ սպաներ են: Տարիներ անց դա ակնհայտ կդառնա, բայց հիմա ավելորդ է այդ հարցը բարձրացնել նախարարների կաբինետում: Մեզ չեն ուզում լսել: Միակ մարդը, ով տեղյակ է այդ ամենին, մեր բարեկամ Չերչիլն է: Հետաքրքրականն այն է, որ Մերձավոր Արևելքի սակավաթիվ երկրներից մեկը, որտեղ գերմանացիներին չի հաջողվել ստեղծել իրենց ցանցը, Լիբանանն է: Այնտեղ նրանք ցանկալի չեն, և իրենք էլ դա գիտեն: Մարոնները նրանց նայում են որպես թուրքերի բարեկամի, հայերը՝ որպես կոտորածների ու բռնագաղթի մեղսակիցների, իսկ ծովեզերքի արաբները՝ որպես պատերազմը տանուլ տվածների: Արաբի համար դա, բարեկա՛մս, վերջնական դատավճիռ է: Ամեն անգամ, երբ գերմանացիները փորձել են իրենց գործը գլուխ բերել, մնացել են շվարած, քանի որ ինչ-որ մեկը ջանացել է, որ ֆրանսիացիներն իմանան այդ մասին: Դամասկոսում նրանք իրենց զգում են այնպես, ինչպես ձուկը ջրում, իսկ Բեյրութում անընդունակ են որևէ բան անելու համար: Ա՜հ, Լիբանան… Ի՜նչ յուրահատուկ ու յուրօրինակ երկիր է: Այնտեղ մեզ՝ անգլիացիներիս, հանդուրժում են, ինքդ էլ նկատած կլինես, մինչդեռ ֆրանսիացիների կարիքը նրանք զգում են: Ինձ ասել են, որ ուրիշ ոչ մի երկրում գեղեցկության այդքան սրահներ

չկան: Կեցցե՜ Ֆրանսիան… Ինչ վերաբերում է գերմանացիներին… Բեյրութում ո՞վ ունի կարգուկանոնի կարիք:

Թոմասը գլուխը դրականորեն շարժեց՝ հաստատելով, որ իր բարեկամն իրավացի է: Բեյրութն ու ողջ Լիբանանը մարդասիրության նմուշ էին: Միջերկրածովյան մարդկանց, մշակույթների, մտավորականների, վաճառականների ու կոսմոպոլիտների պարագայում ո՞ւմ է պետք պրուսացիների կարգուկանոնը: Բեյրութը քաոսային է, բարդ ու հրաշալի:

Ֆրանսիացի պաշտոնյաներն այնտեղ խենթանում էին: Պոլիտեխնիկական համալսարանում նրանց կրթել էին դեկարտյան ոգով ու դարձրել կարգուկանոնով օժտված մարդիկ: Լիբանանում, սակայն, այլ կերպ էր: «Ողջախոհությունն այն բանն է, որ լավագույնս բաժանված է աշխարհում…», սակայն «Մեթոդի խորհրդածությունը»[77] հաստատում է, որ միմյանցից չէին կարող բաժանվել հովիտն ու լեռը[78], ինչի հետ լիովին համաձայն էին բոլոր լիբանանցիները: Հովիտը հովիտ էր, իսկ լեռը… Ա՜հ, լե՛ռ...

Պայմանավորվեցին, որ Նյումանի՝ Լոնդոնում մնալու օրերի ընթացքում կրկին հանդիպեն: Նյումանը վաթսունն անց տղամարդ էր՝ օժտված շոտլանդացի լեռնցի երիտասարդին հատուկ կենսունակությամբ: Թոմասն իրեն ավելի լավ էր զգում, սակայն առաջվա պես չէր կարող լինել. նրան խանգարում էր ֆունկցիոնալ հոգնածությունը: Մի օր նա Նյումանին հարցրեց, թե երբ է պատրաստվում թոշակի գնալ: Նյումանը գլուխը բացասաբար շարժեց. այն օրը, երբ իրեն վեց ոտնաչափ հողի տակ թաղեն: Դրանից ավելի շուտ՝ ոչ մի վայրկյան: Բաժակ բարձրացրին՝ հանուն անցած-գնացած ժամանակների:

[77] Ռենե Դեկարտ, «Մեթոդի Խորհրդածությունը» (սկիզբը):
[78] «Մետաֆիզիկական խորհրդածություններ» (խորհրդածություն հինգերորդ):

46. ՊԱՆԴՈՐԱՅԻ ԱՐԿՂԸ
ՀՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1934թ.

Ասֆուրյեի հոգեբուժարանի բժիշկ Էդուարդ Բողոսյանին հասցեագրված նամակը բերեց Շապտայ Բահիբուտը՝ Լիբանանում հրեական համայնքի ռաբբին: Ծրարի վրա ո՛չ ուղարկողի հասցեն կար, ո՛չ էլ՝ կնիք. ինչ-որ մեկն իր ձեռքով բերել ու թողել էր Մագեն Աբրահամ սինագոգում: Էդուարդն այդ մարդուն ընդունեց իր կաբինետում: Նրան առաջին անգամ չէր տեսնում, քանի որ ռաբբին հաճախ էր այցելում այնտեղ բուժվող շուրջ վեց հրեաներին, որոնց համար հագուստ և ուտելիք էր բերում: Սակայն դա առավելապես խորհրդանշական այց էր, քանի որ բուժվող հրեաները սովորականի պես ուտում էին այն նույն սնունդը, ինչ մյուս հիվանդները: Համենայն դեպս, ռաբբիի այցը նրանց չէր խանգարում, այլ՝ ճիշտ հակառակը: Նամակի մասին ռաբբին ավելին չգիտեր: Այն դրել էին սինագոգում. թե՛ նամակ բերողը, թե՛ նա, ով ուղարկել էր, գուցե հրեաներ էին:

Կեղտոտ ու ճմռթված ծրարի մեջ կար մեկ այլ ծրար՝ ավելի բարվոք տեսքով, վրան՝ Էդուարդի՝ Վիեննայում բնակված տան հասցեն: Ինչպե՞ս էր ծրարը հասել մինչև Բեյրութ: Առաջին ծրարի վրա միայն գրված էր՝ «Դոկտոր Էդուարդ Բողոսյան, Բեյրութ»: Մինչ ռաբբին նրան զննում էր հետաքրքրությամբ, Էդուարդը երկրորդ ծրարը նույնպես բացեց: Ի նշան նամակը բերած ռաբբիի հանդեպ տածած հարգանքի՝ կարդաց բարձրաձայն.

«Սիրելի՛ Էթել ու Էդուարդ: Չգիտեմ, արդյո՞ք երբևէ կհասնի ձեզ այս նամակը: Ես գտնվում եմ Էստերվեգենի համակենտրոնացման ճամբարում: Գրում եմ ծանրոցի համար օգտագործված թղթի կտորի վրա: Հասկանում եմ, որ դա այնքան էլ հարմար չէ, սակայն այստեղ՝ ձեռքի տակ, ոչինչ չունենք: Իմ ընկերոջը՝ Ալբերտ Շտերնին, տեղափոխել են այլ ճամբար: Նրա մասին ոչինչ չգիտեմ. դա ինձ շատ է հուսահատեցնում: Ճամբարը հսկում են էսէսականները, իսկ դա նշանակում է, որ ամեն օր մարդկանց իրար հետևից կախաղան են հանում և շատ դաժան են վարվում բանտարկյալների հետ: Մեզ բռնեցին այն պահին, երբ մենք վերցնում էինք Ալբերտի անձնագիրը: Մտնելով Գերմանիա՝ մենք մեծ սխալ և ահավոր նախվություն թույլ տվեցինք՝ կարծելով, թե ինչ-որ հրեայի անձնագիր կտան: Մեզ տարան Գեստապոյի գլխավոր շտաբ, իսկ այնուհետև՝ մի սարսափելի հարցաքննությունից հետո, բերեցին այստեղ: Երկու օր անց Ալբերտին տարան, այդ մասին ինձ ասաց

անվտանգության պահակներից մեկը, ով Բեռլինի համալսարանում, որտեղ ես էի դասավանդում, հսկիչ էր աշխատում: Նրան տարան ուրիշ ճամբար. սովորաբար այդպես են անում, երբ կասկածում են, որ գործ ունեն զուգընկերների հետ: Ինձ վրա կպցրել են վարդագույն աստղ: Դա նշանակում է, որ ինձ համարում են համասեռամոլ. նրանց համար դա վատթարագույն խարաններից մեկն է: Ասում են, որ Էռնստ Ռյոմը և նրա օգնականները (SA) սպանվեցին համասեռամոլ լինելու պատճառով: Նացիստների կարծիքով՝ համասեռամոլներն այլասերվածներ են, որոնց հարկավոր է վերացնել:

Ես չգիտեմ, թե կկարողանա՞մ արդյոք կենդանի մնալ այստեղ: Շատ եմ վախենում մեռնելուց: Ես դեռ այնքան անելիքներ ունեմ: Այստեղից փախչելն անհնարին է: Չգիտեմ, թե ինչ է ինձ սպասում, բայց ապավինում եմ Աստծուն:

Ձեր՝ Մաքս Շտեյնբերգ (011704):

Սա այն թիվն է, որ դաջել են նախաբազկիս վրա»:

Նամակը կարդալուց հետո Էդուարդի ձեռքերը հուզմունքից դողում էին: Ռաբբի Բահիրուտը, ով ոչ միայն լսել, այլև նույնպես ընթերցել էր նամակը՝ նրա ուսի վրայից նայելով, իր ոսկեզօծ ակնոցի հաստ ապակիների տակից հետևում էր Էդուարդին ու նյարդայնությունից սեղմում մատները:

- Ի՞նչ պետք է անենք, բժի՛շկ: Ի՜նչ սարսափելի բաներ են Գերմանիայում տեղի ունենում: Չէի ուզում հավատալ այդ ամենին, սակայն մի քանի հրեաներ են եկել Բեյրութ ու համանման բաներ են պատմում: Ի՞նչ է պատահել գերմանացիներին: Ինչպե՞ս են թույլ տալիս, որ այդպիսի բաներ կատարվեն փիլիսոփաների ու մշակույթի երկրում: Դա նման է վարակի. գերմանացիներն ասես վարակվել են մի հարուցիչով ու ի վիճակի չեն լավը տարբերել վատից:

- Հենց այսպես էլ տեղի է ունենում,- Էդուարդը դա տեսել էր Վիեննայում,- ռաբբի՛ Բահիրուտ, նախքան այստեղ գալն ապրել ենք Ավստրիայում՝ Վիեննայում, ու ես հասկացա, թե ինչ է կատարվում: Դա եղավ պատճառը, որ որոշեցինք արագացնել մեր այստեղ գալը: Խե՜ղճ Մաքս... Մենք չենք կարող թույլ տալ, որ նա մահանա ճամբարում: Միակ բանը, որ մտքովս անցնում է, աներոջս դիմելն է: Նա քաղաքական բարձր ոլորտներում լավ կապեր ունի ու տարիներ առաջ հենց այստեղ՝ Լիբանանում՝ Բաալբեկում, ծանոթացել է Մաքս Շտեյնբերգի հետ: Ես նրան հեռագիր ու նամակի պատճենը կուղարկեմ: Այս մասին կպատմեմ կնոջս, նա շատ կվշտանա: Ա՜հ, ինչ ահավոր բան է: Շտեյնբերգն

ուզում էր այստեղ բերել իր բարեկամին՝ Ալբերտ Շտերնին՝ Բաալբեկ ու Պալմիրա այցելելու համար: Շնորհակալություն, ռաբբի՛: Ես Ձեզ միշտ տեղյակ կպահեմ գործի ընթացքից: Գոնե հիմա մենք գիտենք, թե որտեղ է նա գտնվում, և կփորձեմ որևէ բան նախաձեռնել՝ նրան այնտեղից դուրս բերելու համար: Հուսով եմ, որ կհասցնենք:

Էդուարդն իր աներոջից Վոլվերհեմպթոնում արտադրված «AJS» մակնիշի մի մոտոցիկլետ էր նվեր ստացել, որով շատ հարմար էր աշխատանքի գնալ-գալը: Նա ռետինե եզրերով ակնոց էր դնում, հագնում հաստ ձեռնոցներ և բռնում «գժանոց» տանող փոշոտ ճանապարհը: Գյուղացիները նրան տեսնում էին անցնելիս, ու շուտով բոլորն իմացան, որ մոտոցիկլետը հոգեբուժարանի նոր տնօրենինն է: Նա ուղղվեց դեպի տուն, ու Էթելը, լսելով մոտոցիկլետի ձայնը, երեխան գրկած, դուրս եկավ պատշգամբ:

Էդուարդը, թափահարելով նամակը, երեք-երեք աստիճաններով էր բարձրանում վերև:

- Էթե՛լ, Էթե՛լ, Մաքս Շտեյնբերգից է: Այդ անիծյալ նացիստները նրան պահում են համակենտրոնացման ճամբարում:

Էթելը երեխային նրան տվեց ու մի քանի անգամ կարդաց նամակը: Հետո, նորությունների ապշահար, նստեց:

- Թո՛ղ անիծված լինեն,- խոսելիս Էթելը միշտ զուսպ էր, բայց երբ զայրանում էր, գլուխ էր բարձրացնում Վեյլերների ոգին, ովքեր ձևականությունների հետևից շատ չէին ընկնում,- իսկ հիմա ի՞նչ ենք անելու: Թույլ չենք տա, որ Մաքսն ու նրա բարեկամը՝ Ալբերտը, մնան փակված...

- Իհարկե՝ ո՛չ, Էթե՛լ: Մտածեցի, որ գուցե հայրդ Արտգործնախարարության միջոցով մի բան կանի: Նա կարող մարդ է ու մի բան կձեռնարկի: Խե՜ղճ Մաքս, ինչպիսի մղձավանջի մեջ է ընկել: Գնամ, հայրիկիդ հեռագիր ուղարկեմ, առայժմ ուրիշ բան չենք կարող անել: Անիծյա՜լ նացիստներ... Հիտլերը Եվրոպան քայքայելու նպատակ է դրել:

Էդուարդը մոտոցիկլետով ուղղվեց դեպի հեռագրատուն, որը տեղակայված էր կենտրոնական փոստում: Հեռագիրը շատ երկար ստացվեց: Բավականին թանկ էր արժենալու, սակայն դա կարևոր չէր: Հարկ էր, որ իր աները մանրամասնորեն հասկանար, թե ինչ է պատահել Մաքս Շտեյնբերգին՝ այն մարդուն, ում հետ ինքը քիչ էր առնչվել, ով, սակայն, իր մարդասիրությամբ, զգայունությամբ ու մեծահոգությամբ արժանացել էր նրա հարգանքին. հատկանիշներ, որոնք, անշուշտ, ոչ մի նշանակություն չունեին նացիստների համար:

Էդուարդին անհանգստացնում էր այն, որ Մաքսն ու Ալբերտը հանկարծ ինքնասպան չլինեն: Շատերի համար, ովքեր անելանելի ու անհույս վիճակում են, ֆիզիկական ու հոգեկան լկանքներից ազատվելու արագ միջոցը դա է:

Էթելը չէր կարողանում գլխից հանել այն բյուրավոր մարդկանց, ովքեր դատապարտված էին այդ ողբերգական ճակատագրին. համասեռամոլներ, հոգեկան հիվանդներ, կոմունիստներ, քաղաքական թշնամիներ, մարմնավաճառներ, վարքագծի հետ կապված խնդիր ունեցող դեռահասներ, գնչուներ, «ստորին» ռասաների պատկանող կամ «անընդունելի» մարդիկ, ըստ նացիստների՝ մտավոր թերզարգացած մարդիկ, շարքային հանցագործներ, ոճրագործներ, ավազակներ, թափառաշրջիկներ, մասոններ, «այլասերված» արվեստագետներ կամ նրանք, ովքեր չէին ընդունում նացիստական գաղափարները և անշուշտ հրեաները, որոնց նացիստական քարոզչությունը համառորեն դասում էր ստորակարգ մարդկանց թվին, ովքեր առանց որևէ արդարացման կարող էին սպանվել: Հրեային պատկանող ցանկացած խանութ կարող էր թալանվել կամ ջարդուփշուր արվել, իսկ գործարքը՝ չեղյալ հայտարարվել, ու աննշան թվով գերմանացիներ էին մատը մատին խփում՝ հանուն որևէ հրեայի փրկության: 1934 թվականի օգոստոսի հանրաքվեի ընթացքում ընտրողների իննսուն տոկոսն իր ձայնը տվեց Հիտլերի օգտին:

Էթելը զայրույթից այնքան կատաղեց, որ ի վերջո մտածեց, որ Վիեննայից հեռանալով՝ մեծ սխալ են թույլ տվել: Բեյրութում ամեն ինչ ընկալվում էր այլ կերպ, թեև իրենց զավակն արդարացումն էր այն բանի, որ ամուսիններով վտանգից զերծ մնային: Նրանք Վիեննայում, ողջ Ավստրիայում ճնշվածներին, զոհերին, հազարավոր մարդկանց դեմ հանդիման էին թողել իրենց ճակատագրին: Այդ մասին Էթելը խոսեց Էդուարդի հետ, ով նրան բացատրեց, որ այդ զգացողությունը ներքին կոնֆլիկտ է՝ հատուկ այն մարդկանց, որոնց հաջողվել է փախչել որևէ ահավոր իրավիճակից, ովքեր ողջ են մնացել հրդեհից, նավաբեկությունից, ջարդերից հետո, անգամ բնորոշ է զինվորներին, ովքեր կռվի դաշտում տեսնում են իրենց զինակիցների մահը:

Միայն Վիեննայում ապրում էին գրեթե երկու հարյուր հազար հրեաներ, ովքեր կուզենային փախչել: Սակայն ո՞ւր գնային: Մեծ Բրիտանիան սահմանափակել էր հրեաների ներգաղթը, ԱՄՆ-ը հրեա կամ այլ ազգության խիստ սահմանափակ թվով փախստականներ էր ընդունում, և գրեթե նույն վիճակն էր բոլոր երկրներում: Անգամ իրենք՝ Էթելն

ու Էդուարդը, մինչև Մաքս Շտեյնբերգի խնդրին առնչվելը չէին պատկերացնում այդ աղետի իսկական չափերը:

Ամեն ամիս հարյուրավոր հրեաներ, նաև շատ հայեր էին գալիս Լիբանան: Թեև ոմանք դժգոհում էին, այդուհանդերձ Լիբանանի բնակիչների մեծ մասը մեծահոգաբար էր ընդունում այդ փախստականներին:

Մի օր, երբ Այուբ Թաբիթին հրավիրել էին ճաշի, նա այդ առիթով շատ հստակ արտահայտվեց.

- Իմ սիրելի՛ բարեկամներ: «Փյունիկեցիներս» շատ գործնական մարդիկ ենք, մեզ համար կարևորն այնքան այլասիրությունը չէ, որքան այն համոզմունքը, որ այստեղ եկողները մեծացնում են մեր հնարավորությունները: Ոչ ոք մեզ համար ավելորդ չէ, իսկ ովքեր տեղավորվում են Լիբանանի որևէ տարածքում, նրանց «բարի գալուստ» ենք ասում: Ինչ-որ մեկն էլ թող բողոքի, դա անխուսափելի է: Տեսե՛ք, այս ամիս եկել են համարյա երեք հարյուր հայեր, որոնցից քսանը բժիշկներ ու բուժքույրեր են, չորսը՝ ինժեներներ, տարբեր դասախոսներ, մի վիպասան, երեք նկարիչ, մի ճարտարապետ… Ի՞նչ կասեք: Ինչի՞ց բողոքենք: Մուսուլմանները, որ պահանջում են միավորվել Սիրիայի հետ, դրանից չեն բողոքում: Բոլորի համար էլ լավ է: Այն բոլոր հրեաները, որոնց չի հաջողվում դուրս գալ Գերմանիայից, արժանավոր մարդիկ են: Ի՞նչ եմ ուզում ասել. քաղաքագետները, շատ հաճախ գլխի չընկնելով, կորցնում են օգուտ քաղելու առիթները:

Երկու շաբաթ անց Էդուարդն ու Էթելը Լոնդոնից Թոմասի ստորագրությամբ հեռագիր ստացան: Նրանց հայտնում էր, որ իր կապերի միջոցով արդեն փորձում է Մաքս Շտեյնբերգին դուրս բերել համակենտրոնացման ճամբարից: Ինչ վերաբերում էր Ալբերտ Շտերնին, ապա հետախուզական ծառայությունների տվյալների համաձայն՝ նա մահացել է թոքախտից կամ հավանաբար նրան սպանել են: Շտեյնբերգի պարագայում էլ չպետք է շատ լավատես լինել, քանի որ գերմանական կառավարությունը դժկամորեն է տրամադրված քաղբանտարկյալների օգտին որևէ բան անելու առումով: Այդուհանդերձ, Թոմասը նրանց հայտնում էր, որ բարձր մակարդակով լուրջ քայլեր է ձեռնարկել, որոնց մասին նախընտրում է լռել. կտեղեկացներ վերջնական արդյունքների մասին:

Լուրերը դառն էին, բայց՝ ինչ-որ առումով հուսադրող: Ամառվա մնացած մասն անցավ առանց որևէ նորության: Բեյրութում քաղաքագետները շարունակում էին վիճել ամենահիրատապ հարցերի շուրջ: Ֆրանսիական մանդատն անվեհեր պաշտպանում էին մարոնները, իսկ սուն-

նիներն ու ուղղափառ հույները դրան նայում էին կասկածամտորեն: Շիաներն առհասարակ այդ հարցի մասին չէին ուզում խոսել. նրանց կարծիքով՝ ֆրանսիացիները զավթիչներ էին, իսկ անգլիացիները՝ դավաճաններ:

Լիբանանի հրեական համայնքը կտրականապես մերժում էր սիոնիստների՝ Իսրայել ներգաղթելու հրավերը: Ո՛չ Ֆաղի Աբու Ջամիլում, ո՛չ Ռաս Բեյրութում, ո՛չ էլ Դեյր ալ-Քամարում, Ալեյ Բհամդումում կամ Հազբայայում ապրող հրեաներից ոչ մեկը չէր ուզում գնալ Իսրայել: Անկախ այն բանից, որ նրանց խոստումներ էին շռայլում, Լիբանանում նրանց կյանքը լավ էր ընթանում, նաև համարում էին, որ Լիբանանը նույնպես իրենց հինավուրց հողի մի մասն է: Հրեական համայնքի նախագահը՝ Սելիմ Հարարին, ու գլխավոր ռաբբիները՝ Շապտայ Բահբուտն ու Բենցիոն Լիխտմանը, հանդիպեցին պատգամավորների հետ՝ կասկածներն ու թյուրիմացությունները պարզաբանելու համար: Լիբանանի հրեաները մնալու էին այդտեղ: Մի՞թե նրանք այդտեղ չէին ապրում Բար Կոխբայի[79] խռովությունից շատ ավելի վաղ:

Հրեական երկու թերթերը՝ «Al-Aslam al Israili»-ն ու «Le commerce de Levant»-ը, համապատասխանաբար արաբերեն և ֆրանսերեն լայն տեղեկատվություն էին տալիս քաղաքական, մշակութային ու տնտեսական բնագավառներից ու իրենց գաղափարներով շատ մոտ էին քրիստոնյա մարոններին և հրաշալի հարաբերություններ ունեին հայերի հետ: Ընդ որում՝ անկախ հայերի հետ ունեցած մասնագիտական ու մտավոր որոշ մրցակցությունից՝ փոխադարձաբար հարգում էին միմյանց:

Ռաբբի Շապտայը մի քանի անգամ հանդիպեց Էդուարդին: Նրան ասաց, որ սինագոգում աղոթել են Մաքս Շտեյնբերգի և այն բոլոր հրեաների ազատության համար, ովքեր նացիստների ու նրանց մեղսակիցների կողմից շարունակ ենթարկվում են հետապնդման ու հալածանքի: Ռաբբին հատկապես նշեց Երուսաղեմի գլխավոր մուֆտի Ամին ալ-Հուսեյնին ու նրա ազգականներին, ովքեր ահաբեկչական արշավ էին սկսել Պաղեստինի հրեաների դեմ: Այդ մարդը 1929 թվականին հրահրեց Հեբրոնի կոտորածը, նրա բոցաշունչ ելույթներն ուղղված էին հրեական բնակավայրերի դեմ, նա խոստանում էր ոչնչացնել դրանք, նաև հավանություն էր տալիս գերմանական կառավարության քաղաքականությանը: Բոլորին քաջ հայտնի էր, որ նա սերտ կապեր էր հաստատել նացիստների հետ. մի բան, որի պատճառով անգլիացիների

79 Բար Կոխբայի ղեկավարությամբ մ.թ. 132 թ. բռնկված հրեաների ապստամբությունը՝ ուղղված հռոմեական կայսեր Ադրիանոսի դեմ (ծանոթագրությունը՝ հեղինակի):

հետ շարունակ կոնֆլիկտների մեջ էր:

Հոկտեմբերի կեսերին Էդուարդն իր աներոջից նամակ ստացավ: Մաքս Շտեյնբերգին ազատելու առումով ոչ մի դրական արդյունքի չէին հասել: Էստերվեգենի համակենտրոնացման ճամբարից եկող լուրերն անչափ հոռետեսական էին: Հայտնի էր, որ ձերբակալվածներից շատերը մահանում էին, թեև նացիստները չէին ընդունում, որ նրանց մահվան պատճառը լլկանքն էր, վատ վերաբերմունքն ու ուղղակի սպանությունները: Անգլիայում մամուլն անթաքույց գրում էր նացիստների հրեշավոր բարբարոսությունների մասին:

Թոմասը նամակն ավարտել էր՝ նրանց խոստանալով, որ տեղյակ կպահի հետագա իրադարձությունների վերաբերյալ:

1934 թվականի նոյեմբերի վերջերին Էդուարդն այս անգամ նամակ ստացավ՝ Ցյուրիխի փոստային բաժանմունքի կնիքով: Դոկտոր Լուիս Վիզեից էր՝ այն մարդուց, ով Վիեննայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտում դեմ էր դուրս եկել դոկտոր Կառլ Բրանդտի տեսակետներին: Էդուարդը նրան թողել էր Բեյրութի իր հասցեն: Լուիս Վիզեն նույնպես հրեա էր ու նամակում պատմում էր Գերմանիայում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով պայմանավորված իր հուսահատության ու ավստրիական քաղաքացիական հասարակության շրջանում տիրող «վարակի» մասին:

«Շատերն են վարակվել նացիստական ոգով: Վիեննայում մթնոլորտը ճնշող է, և շատ դժվար է նրանց համար, ովքեր գերմանական ռասային չեն պատկանում: Բախտի բերմամբ ինձ հաջողվեց այդտեղից դուրս գալ, փորձում եմ գաղթել Միացյալ Նահանգներ: Անկեղծ ասած, ես մի հաղթաթուղթ ունեմ ձեռքիս՝ Ֆրոյդի անձնական նամակը, ով ոչինչ չի ուզում լսել Վիեննան թողնելու վերաբերյալ: Խոսք կա այն մասին, որ մի քանի հոգեկան հիվանդների տեղափոխել են առողջարան: Նրանց վերահսկող բժիշկները նացիստական գաղափարների կրողներ են, ու այդ հիվանդներն այնտեղ հայտնվելուն պես անհետացել են: Անձամբ չեմ կարծում, որ համարձակվել են դիմել այդ քայլին, սակայն վախենում եմ, որ գործը դրան է հասել:

Գուցե և ապագայում մեզ հաջողվի կրկին հանդիպել: Առայժմ Ձեզ լավագույնն եմ մաղթում այդ սքանչելի երկրում՝ Լիբանանում:

Ձեր՝ Լ. Վիզե Դ. Մ.»:

Էդուարդը նամակը տվեց, որ կինն էլ կարդա: Դրսում եղանակը քա-

մոտ էր, իսկ Միջերկրական ծովը՝ անբարյացակամ: Ամպերը լողում էին դեպի հյուսիս, ու ճայերի մի երամ խաղում էր ալիքների փրփուրների հետ: Աշխարհը դեպի քաոս էր գնում, ու միակը, որ մնում էր անվրդով ու խորհրդավոր, Սպիտակ լեռն էր՝ ուրվագծված մուգ համայնապատկերի վրա: Տեսարանը ցնցող էր, ամուսինները մի պահ լուռ մնացին՝ հայացքները սևեռած այդ հոգեհմա պատկերին: Բելսեբուին հաջողվել էր դուրս պրծնել Պանդորայի արկղից:

47. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ
1935թ.

1935 թվականը վրա հասավ աննկատ: Այլևս ոչ ոք չէր հիշում Առաջին համաշխարհային պատերազմը: Վերջին հաշվով, դա մարդկային արարածների միջև տեղի ունեցած մահասփյուռ և ատելություն սերմանող անհամար հակամարտություններից մեկն էր:

Սակայն հայերը չէին կարող մոռանալ իրենց հարյուր հազարավոր հայրենակիցներին, ովքեր սպանվել էին կամ, ինչպես բժիշկ Բողոսյանը, մահացել էին հետո՝ այդպես էլ չհաղթահարելով կրած սահմռկեցուցիչ փորձությունների կամ ֆիզիկական լլկանքների ու չարչարանքների հետևանքները: Ժամանակ առ ժամանակ Էդուարդը բարձրանում էր գերեզմանոց, շիրմաքարերը մաքրում, ծաղիկներ էր տանում ու աղոթք շշնջում ծնողների հոգու հանգստության համար, թեև դա անում էր ներքին մղումով. նա հավատացյալ չէր: Դա հարգանքի տուրք էր իր ծնողների հիշատակին, ովքեր սիրել և շատ բան էին արել իրենց երեխաների համար: Այդտեղ՝ քրիստոնյաների գերեզմանոցում, Վատիկանի կողմից մի փոքրիկ տարածք էր հատկացված հայերին: Երբեմն նա հանդիպում էր ուրիշ հայերի, ու միասին քայլելով՝ իջնում էին դեպի քաղաքի կենտրոն՝ տեղեկություններ փոխանակելով, խոսելով այն մասին, թե ինչպես էր Լոզանի պայմանագիրը հայերին թողել առանց իրենց հինավուրց հողերի, առանց Հայաստանի պատմական տարածքի մեծ մասի, այն տեղանքների և բնակավայրերի, որոնք եղել էին իրենց հայրենիքի սիրտը: Հիմա այդ տարածքները թուրքական նահանգներ էին, որտեղ անհնարին էր դարձել հայերի ապրելը: Այդ պայմանագիրը թիկունքից հարված էր մի քրիստոնյա ժողովրդի համար, որը միշտ վստահել էր Եվրոպային:

Ո՛չ, պատմությունը երբեք արդարացի չէր եղել Հայաստանի հետ: Ինչպես Էդուարդը, այնպես էլ Լիբանանի հայ համայնքի մյուս երիտասարդները գիտեին, որ ժամանակը գործելու է թուրքերի օգտին, ովքեր ողջ Անատոլիայում և հատկապես Կիլիկիայում պարբերաբար ոչնչացնում էին հայկական մշակույթի անգամ ամենաչնչին հետքերը:

Դա էր պատճառը, որ հայերը քիչ էին ժպտում: Ոչ ոք չգիտեր, որ այդ լուրջ ու ինչ-որ առումով սառը ժողովուրդն Ասիայի ամենաուրախ ու սրտառուչ ժողովուրդներից մեկն է: Ապրած ողբերգական իրադարձությունների հետևանքն էր, որ նրանք ակամա չէին դրսևորում իրենց իսկական բնավորությունը:

Էդուարդն ըմբռնում էր, թե ինչ է կատարվում իր հիվանդների գլխում,

հասկանում էր նրանց հոգեվիճակը: Բեյրութով մեկ լուր տարածվեց, որ այդ բժիշկն այնքան զգայուն է, որ հոգեկան հիվանդները նրա հետ իրենց ապաքինված են զգում: Օգտագործում էր քիչ դեղորայք ու շատ հոգեթերապիա: Արդյունքը մեծ էր: Այն մարդիկ, ովքեր չէին ուզում ասել, թե ինչ է իրենց հետ կատարվել, նրա հետ կիսվում էին, մյուսներն էլ, ովքեր տարիներ շարունակ լուռ էին մնացել, իրենց սիրտն էին բացում այդ երիտասարդ բժշկի առջև, ում աչքերը երբեմն խոնավանում էին, երբ լսում էր նրանց զգայացունց պատմությունները: Կային նաև այնպիսիք, ովքեր փակվում էին իրենց խեցու մեջ ու խուսափում իրենց հետ կատարված բռնություններին անդրադառնալուց, սակայն բժիշկ Բողոսյանի խոսքերի ներգործությամբ դառնում էին հնազանդ և ընդունում նրա ասածները: Նրանք սովոր չէին այդպիսի վերաբերմունքի:

Միակը, ով զարմացած չէր, Էթելն էր՝ Բողոսյանի անգլուհի կինը, լիբանանցի ժողովրդի լավ բարեկամի՝ «անգլիացու» դուստրը: Նա գիտեր, թե որն էր դրա գաղտնիքը. մարդու ներքին պայքարը՝ հաղթահարելու համար մանուկ ժամանակ տարած հոգեկան այն ցնցումը, որը տարիներ շարունակ նրան դարձրել էր ինքնամփոփ, մինչև որ հասնում է այն պահը, երբ սկահակն արդեն լեփ-լեցուն է և չի կարողանում ամփոփել ավելին, ու տառապանքը դուրս է հորդում: Էթելը հասկանում էր ամուսնու վիշտը:

Հանրապետության նախագահը՝ Հաբիբ էլ-Սահաղը, հարգալից այց կատարեց Ասֆուրյե: Էդուարդին ասաց, որ իրենց համար պատիվ է, որ նրա պես անձնավորություն է ղեկավարում հոգեբուժարանը: Բարձր գնահատելով նրա կատարած աշխատանքը՝ խոստացավ, որ կավելացնեն հատկացումները, քանի որ Էդուարդին հաջողվել էր ոչ միայն հոգեբուժարանի հիվանդներին լուրջ բուժօգնություն ցուցաբերել, այլև թեթևացնել նրանց հարազատների ու հասարակության հոգսերը: Ինչ խոսք, դրանք սոսկ խոստումներ էին, սակայն Էդուարդը գոհ էր ինչ-որ բանի հասած լինելու համար:

Հետո իմացան, որ Թոմասը բրիտանական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ դիվանագիտական առաքելությամբ գտնվում է Գերմանիայում: Բանն այն է, որ այդ երկրի հետ հարաբերությունները չէին խզվել, ու սպասվում էին միջազգային խոշոր իրադարձություններ (ինչպես՝ 1936 թվականի օլիմպիադան), որոնց աշխատանքները պետք է համակարգվեին: Մարտին նրանից ստացան նամակ՝ կնքված Լոնդոնում:

«Սիրելիներ՛ս, Էթե՛լ ու Էդուա՛րդ,

Նոր եմ վերադարձել Գերմանիայից: Պետք է ասեմ՝ Գերմանիաներից, քանի որ առնվազն երկու Գերմանիաներ կան՝ իրարից շատ տարբեր: Այն, որ նրանք ցույց են տալիս, երևում է, որ այդ երկիրը հաղթահարել է Առաջին համաշխարհային պատերազմի բոլոր հետևանքները: Վերսալի պայմանագիրը նրանք համարում են մեռած ու թաղված: Հիմա նրանք կառուցում են ճեպընթաց հիանալի ճանապարհներ, որոնց անվանում են մայրուղիներ, երթևեկության համար թողարկում են «Ֆոլցվագեն» մակնիշի ավտոմեքենաներ, որոնց գործարանները մեծ վերելք են ապրում: Նրանք առաջիկա օլիմպիադայի համար կառուցում են ստադիոններ, ջրավազաններ ու մարզական կենտրոններ՝ հավատացնելով, որ գերմանացի մարզիկներն աննախադեպ հաջողությունների կհասնեն: Գլխավոր ստադիոնը Բեռլինում է. այն ցնցող է: Տեսա, որ կառուցվում են բազմաթիվ բնակելի շենքեր, տարբեր ֆաբրիկաներ, քաղաքները բարեփոխվում են: Այն, ինչ մեզ ցույց տվեցին պաշտոնական իշխանությունները, բարգավաճող ազգի տպավորություն էր թողնում: Ազգ, որը ձգտում է ապագայում լինել աշխարհի գերտերություններից մեկը:

Բնականաբար ոչինչ չէին ասում այն մասին, թե ինչ էր կատարվում ուտոպիական տեսարանից դուրս՝ կուլիսների հետևում: Ոչ էլ խոսում էին «համակենտրոնացման ճամբարների» մասին, ուր նրանք ուղարկում են ընդդիմադիր կուսակցությունների անդամներին, կոմունիստներին, ձախականներին և վերջապես նրանց, ովքեր չեն մտածում ու խորհում իրենց ուզած ձևով: Ոչինչ չէին ասում այն մասին, թե ինչ է տեղի ունենում գերմանացի հրեաների հետ, որոնց նրանք զրկում են քաղաքացիական կարևոր բոլոր իրավունքներից: Նրանց դուրս են քշում մասնագիտական վարժարաններից, համալսարանների ամբիոններից՝ արգելելով աշխատել ըստ մասնագիտության, նվաստացնում ու բռնանում են նրանց վրա: Եվ այդ ամենը՝ սկսած մանկապարտեզների երեխաներից մինչև ծերանոցների տարեցներ… Ողջ Գերմանիայում չկա մի տեղ, որտեղ հրեաները կարողանան հանգիստ ապրել:

Հանգիստ չեն թողնում նաև գնչուական հիմնական ցեղերին[80]: Նրանց քշում են իրենց բնակատեղիներից, հալածում են, խոշտանգում, և համարձակվում եմ ասել, որ սպանում են, ու շատերն են փախչում Գերմանիայից:

---

[80] 1935 թվականին Գերմանիայում գնչուական հիմնական ցեղերը երկուսն էին՝ «սինտի»-ն և «ռոմա»-ն: Գնչուների ցեղասպանությունը ստացավ «Մեծ ավերում» կամ «Պոռաֆմոս» անունը:

Բեռլինում մեզ հրավիրեցին դիտելու գերմանացի ռեժիսոր Լենի Ռիֆենշտալի «Կամքի հաղթանակը» ֆիլմը: Դա նացիստական կուսակցության՝ անցյալ տարի կայացած միտինգի վիթխարի արտահայտությունն էր: Ֆիլմը դիտելուց հետո զգացողությունս այն էր, որ Եվրոպան մտածելու լուրջ բան ունի: Գերմանացիները ոչ մի բանի առաջ կանգ չեն առնի:

Բեռլինում ես ապրեցի ծանր, ցնցող որոշ պահեր: Գերմանացիները մեր խմբին սովորաբար ավտոբուսով տանում էին որևէ տեղ և ցույց տալիս այն, ինչ իրենք էին ուզում, ուրիշ՝ ոչինչ: Սակայն մի առավոտ կանչեցի հյուրանոցի բժշկին ու նրան բացատրեցի, որ ինձ այնքան էլ լավ չեմ զգում ու մնալու եմ սենյակում: Հետո արտակարգ իրավիճակների համար նախատեսված աստիճաններով դուրս եկա փողոց ու տրամվայով գնացի հարավարևելյան թաղամասերից մեկը: Սկսեցի զբոսնել փողոցներով ու ամեն ինչ պարզ դարձավ ինձ համար: Ամենուրեք հակասեմիտական լոզունգներ էին, որոնք մեղադրում ու հայհոյում էին հրեաներին: Տեսա էսէսականների իրական դեմքը, որը թաքցնում են արտասահմանցիներից: Համազգեստ հագած այդ մարդիկ գրավել են փողոցներն ու բռնանում են ցանկացած մարդու վրա: Տեսա, թե ինչպես են կանգնեցնում մի քանի երիտասարդների, հարձակվում նրանց վրա ու ծեծում: Կարծում եմ, որ այդ երիտասարդները հրեաներ էին, սակայն չեմ կարող հաստատ պնդել: Հետո Բեռլինում հանդիպեցի հրեա առաջնորդներից մեկի՝ Լեո Բաեկի հետ: Այդ մարդն ահավոր անհանգստացած էր: Նա տեղական իշխանություններում հրեա ներկայացուցիչներից մեկն էր ու կարողացավ ինձ տրամադրել մի քանի րոպե: Ես շատ հոռետես եմ հրեաների ապագայի առումով: Իմ կարծիքով՝ մեր բարեկամ Մաքս Շտեյնբերգն արեց այն, ինչ անհրաժեշտ էր փախչելու համար: Ռաբբի Բաեկն ինձ մի այցեքարտ տվեց՝ հաստատված նաև հրեերեն հատվածով ու հասցեով: Հետևելով նրա տված ցուցումներին՝ գնացի երկու տաքսիներով, այնուհետև կես մղոնից ավելի քայլեցի այն թաղամասերից մեկով, որտեղ հրեաներն են ապրում: Այդ մասերով անցնելիս ոստիկանության շատ ավտոմեքենաներ տեսա, սակայն հասա այնտեղ, որտեղ հարկավոր էր: Դա մի հին շենք էր՝ թերևս անցած դարի կեսերի կառույց, բավականին վնասված ու մի քանի մուտքերով: Ինձ նայում էին, բայց ոչ ոք ոչինչ չասաց: Չէին ուզում ուշադրություն գրավել, կանայք ու երեխաները լուռ անցուդարձ էին անում ու փակվում իրենց բնակարաններում: Ոչ ոք չէր խոսում, ոչ ոք չէր ծիծաղում, ոչ մի երեխա չէր խաղում:

Վերելակով բարձրացա վերջին հարկի բնակարանը: Այնտեղ պետք

է հանդիպեի Նաֆտալի Վիզեին: Այդ հանդիպումը մենք ծրագրել էինք դեռևս Լոնդոնում, ու այդ աշխատանքը համակարգել էր ռաբբի Բաեկը:

Վիզեն բեռլինցի հրեա է՝ վաթսունն անց, հազվագյուտ կիրթ մարդ, շատ բան տեսած, աչքերը՝ թափանցող: Նրա բնակարանը, բառի բուն իմաստով, ծածկված էր գրքերով: Երբ ներկայացա ու նրան տվեցի ռաբբիի անձնական այցեքարտը՝ նա ուղղվեց դեպի գրապահարանն ու հրեց այն: Այնտեղից՝ մի ուրիշ տեսակ գրապահարանից, դուրս եկավ մի մարդ և ողջունելու համար ձեռքը մեկնեց ինձ: Ես անասելի զարմացած էի: Նա Յակոբ Ֆրանկն էր՝ մի հրեա, ում հաջողվել էր փախչել Էստերվեգենից ու փորձում էր դուրս գալ Գերմանիայից: Ինձ պատմեց, որ ճանաչում է Մաքս Շտեյնբերգին, բայց նրան տեղափոխել էին այլ ճամբար, կամ այնտեղ այդպես էին ասում: Ոչ ոք չգիտեր, թե որտեղ է նա, ոչ էլ որևէ լուր ունեին նրանից: Յակոբ Ֆրանկին ուղղակի հարցրի, թե արդյոք չի կարծում, որ Շտեյնբերգը մահացել է: Նա չկարողացավ ոչինչ ասել, թեև նշեց, որ եթե ուզենային նրան սպանել, ապա կսպանեին բոլորի աչքի առաջ, ինչպես շատերին: Էստերվեգենում դա կատարվում էր օրական մի քանի անգամ: Այդուհանդերձ, ձերբակալվածների միջից ընտրված հսկիչներից մեկն ասել էր, որ Մաքս Շտեյնբերգի տեղափոխման հետ կապված պատճառներն անհայտ են:

Ըստ պայմանավորվածության՝ ես կատարեցի իմ ստանձնած առաքելությունը և, ինչպես մեզ խնդրել էին, Նաֆտալի Վիզեին ու Յակոբ Ֆրանկին հանձնեցի բրիտանական անձնագիր և վիզա: Հուսով եմ, որ դրանց օգնությամբ նրանք կկարողանան փախչել այդտեղից:

Ինձ շատ է անհանգստացնում այն, որ Մաքս Շտեյնբերգից ոչ մի լուր չունեմ, բայց նրան գտնելու համար մենք ջանք չենք խնայում: Խնդիրն այն է, որ շատ հրեաներ են առանց ստույգ հասցեի փախել Գերմանիայից, ուրիշներն էլ ստիպված են եղել փոխել տունը, թաղամասն ու բնակավայրը: Շատերն անհայտացել են, իսկ նրանց մեծ մասը կենտրոնացվել է համակենտրոնացման ճամբարներում: Վաղ թե ուշ մենք նրան կգտնենք: Երբեք չլքել. սա է իսկական բարեկամությունը:

Ես գրկում ու սիրում եմ ձեզ: Թոմաս Հ.»:

Էթելը գիտեր, որ իր հայրը երբեք կանգ չէր առնի, մինչև որ չիմանար, թե ինչ է եղել Մաքս Շտեյնբերգի հետ: Հպարտ էր իր հայրիկով, ով, առանց հույսը կորցնելու, իր դստերը նույնպես գտավ բավականին ժամանակ անց:

Բեյրութում հիասքանչ գարունը սփռվեց ամբողջ ուժով: Փոշոտ քա-

ղաքը ցուցադրում էր իր այգիները: Էթելին անչափ դուր էր գալիս, երբ գնում էր իր այգին, տան համար ծաղիկներ կտրում, այգեպանին օգնում կիտրոնի ծառ տնկելու կամ խորդենիները խնամելու գործում:

Ջոնն իջնում էր նրա հետ, իսկ Նադիման հետևում էր երեխային, ում հետ Էթելը խոսում էր անգլերեն, իսկ Նադիման՝ արաբերեն: Ջոնը ոչ միայն դիմագծերով, այլև բնավորությամբ շատ նման էր իր պապ Թոմասին: Ժամանակ առ ժամանակ բժիշկ Թաբիթը մի թռուցիկ հայացք էր գցում երեխայի վրա ու ասում. «Այս երեխան շատ լավ է աճում»: Տանը տիրող հանգստավետ մթնոլորտը, անդորրը, որ վայելում էին այդ առանձնացած թաղամասում, շատ նպաստավոր էին: Պարզվեց, որ Վիեննայից հեռանալու նրանց որոշումը ճիշտ էր, մանավանդ երբ լսում էին այնտեղից եկող լուրերը:

Լիբանանում խնդիրներն այլ էին: Ոչ ոք չէր ցանկանում զիջման գնալ: Արաբ սուննիներն իրենց էին վերապահում պատմական իրավունքը: Եվրոպացիները կարող էին հասնել այն բանին, որ կիսեն Մեծ Սիրիան: Սակայն Պաղեստինը, Տրանսիորդանանը, նույն ինքը՝ Լիբանանը, ոչ այլ ինչ էին, եթե ոչ նրա մասերը: Գուցե և հաշեմիթ թագավորը հարցի լավագույն լուծումը չէր: Սակայն նրանց կարծիքով՝ այն, ինչ տեղի էր ունենում, իրար հետևից ձգվող անհեթեթությունների շարան էր: Ֆրանսիական և անգլիական հետախուզական ծառայությունները համատեղ հաստատում էին, որ ըստ իրենց հասած հավաստի տեղեկությունների՝ դավեր էին նյութվում այդ երկու երկրների մանդատների դեմ:

Այդ ամենը դեռևս հնուց եկող վեճի մի մասն էր: Նույն բանը կատարվել էր հռոմեացիների հետ: Մի՞թե դրան չի անդրադարձել Ֆլավիուս Ժոսեֆը[81]: Տիտո Ֆլավիուսը նույնպես բողոքում էր՝ ասելով, որ հրեաները «վայրի օձերի պես իրենց թույնը թափում էին նրանց վրա, ովքեր իրենց բարությամբ էին վերաբերում»: Ո՛չ, այդ հարցը նոր չէր երկու կողմերից և ոչ մեկի՝ արաբների, հրեաների և «նոր Հռոմը» նվաճողների համար»:

Անգամ խենթություն կոչվածն էլ էր տարբեր: Էդուարդ Բողոսյանը կարող էր մի քանի հիվանդների համեմատել մյուսների հետ: Վիեննայի հիվանդները, նրա կարծիքով, հիմա շատ ավելի դժբախտ էին, քանի որ նացիստները, քաղաքացիների դռները թակելով, նրանց համոզում էին, որ հոգեկան հիվանդներն անբուժելի են ու պետք է կյանքից զրկվեն: Այդ ամենի արձագանքները հասնում էին մինչև Բեյրութ: Հիշում էր այն դժգույն հիվանդներին, ովքեր սառած նստած էին իրենց

[81] Ֆլավիուս Ժոսեֆ, «Հրեաների պատերազմը:

խցիկներում, որտեղ երբեք արև չէր թափանցում, որտեղ հոգեբանական դաժանությունը նորմալ վարվելաձև էր: Ինչպե՞ս կարող էր նրանց համեմատել Ասֆուրյեի հիվանդների հետ: «Գժանոցում» արևը հեղեղում էր իր ճառագայթները, բաց կապույտով ներկել էր տվել բոլոր հիվանդասենյակները, մի արաբ բուժքույր նրանց առավոտյան երգեցնում էր: Թերևս իր՝ այդտեղ գտնվելուց սկսած մարդիկ հիվանդների նկատմամբ շատ մեծահոգի էին ու նրանց համար անվճար բերում էին լոլիկ, տաքդեղ, դդում, նաև՝ ձուկ: Երբեմն Էդուարդը մնում էր հիվանդանոցում և նրանց հետ ճաշում՝ գիտենալով, թե խոհարարուհի Հուիսան ինչ կարող էր պատրաստել այդ ամենով: Բժիշկն ուսումնասիրում էր մի նոր թերապիա՝ նրանց հետ վարվել որպես մարդ արարածների, ուրիշ՝ ոչինչ: Եվ հետաքրքրականն այն էր, որ դրական արդյունքներն ակնհայտ էին:

Հոգեբուժարանում շատ կարևոր էր մթնոլորտը, իսկ վերաբերմունքը՝ ավելի շատ: Էդուարդը ցանկանում էր հոգեբուժական հիվանդանոցը վերածել օրինակելի հաստատության, ապացուցել, որ հիվանդների մեծամասնությունը ենթակա է բուժման, իսկ ագրեսիվությունը, բռնությունը, ինչպես նաև վատ վերաբերմունքը հիվանդության վատթարացման գործոններ են: Այդ ամենին հակառակ՝ լավ սնունդը, բարյացակամ վերաբերմունքն ու մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքը նպաստում են հիվանդների ապաքինմանը:

Այդ ամռան շոգը բավականին ծանր էր ու հեղձուցիչ, որը թույլ չէր տալիս հանգստանալ: Էթելն իրեն արտակարգ լավ էր զգում ընդարձակ առանձնատանը, որտեղ նոր էին տեղադրել «Սթար օֆ Ինդիա» նավի կապիտանի ավագ օգնականի միջոցով Բոմբեյից բերված մեծ օդափոխիչները:

Ժամը յոթին Էթելը նստում էր ավտոմեքենան, որը Բեյրութում շարունակում էր զարմանքի առարկա լինել, ու Ջոնի հետ իջնում էր ձկնորսական նավահանգիստ: Մեծ մասամբ նրան Նադիման էր ուղեկցում, երբեմն էլ՝ Էդուարդը: Այնտեղ սպասում էր ձկնորսական նավերի գալուն և ավանդական վաճառքին:

Սեպտեմբերի կեսերին իմացան, որ Նյուրնբերգում նացիստներն ընդունել են երեք օրենքներ, որոնք կարող էին մի շարք փոփոխությունների հանգեցնել. Ռեյխի դրոշի օրենքը, որն արդեն լինելու էր կարմիր՝ վրան սև սվաստիկա, Ռեյխի քաղաքացիության օրենքը, որը սահմանում էր քաղաքացիների՝ գերմանական արյուն ունեցողների և հրեաների կամ գնչուների միջև տարբերությունները, և «Գերմանական արյան ու ար-

ժանապատվության պահպանման մասին» օրենքը, որն առանձնացնում էր հրեաներին: Նացիստների կարծիքով՝ հրեաների արյունը ստորակարգ էր և աղտոտում էր գերմանական արյան մաքրությունը: Երբ «Le commerce de Levant»-ից Էդուարդն այդ մասին իմացավ, միայն մի մեկնաբանություն արեց. «Այդ նացիստներն ամբողջ աշխարհին պատերազմ են հայտարարել»:

Մաքս Շտեյնբերգից ոչ մի լուր չկար: Ո՛չ Էթելը և ո՛չ էլ Էդուարդը չէին ուզում հավատալ իրենց տանջող կասկածին, այն է՝ թերևս սպանվել է Էստերվեգենում ու այլևս երբեք չի այցելի Բաալբեկ: Նախընտրում էին մտածել, որ նա Ամերիկա է փախել:

Հեռագիր ստացան Ավգուստուս Նյումանից, ով գտնվում էր Երուսաղեմում և մի երկու օր անց հասնելու էր Բեյրութ: Նրանք պատրաստեցին այն սենյակը, որտեղ նա սովորաբար մնում էր իր այցելությունների ժամանակ: Երկու օր անց պարտեզի մուտքի մոտ մի ավտոմեքենա կանգնեց. Ավգուստուս Նյումանն էր, ով նրանց ողջունում էր՝ ձեռքը թափահարելով: Նյումանը ծերանում էր՝ չկորցնելով արժանապատվությունը: Քիչ անց իջավ ընթրելու ու ժպտաց ամուսիններին: Երկուսն էլ նրա դեմքի արտահայտությունից զգացին, որ նրան ինչ-որ բան է անհանգստացնում: Նա կիտրոնով սառը թեյից մի մեծ կում արեց և իր խելացի ու ցինիկ աչքերով սկսեց նայել Էթելին ու Էդուարդին:

- Դե՛ լավ, բարեկամնե՛րս: Լավ նորությունն այն է, որ Մաքս Շտեյնբերգը կենդանի է, իսկ վատը՝ որ նրան տեղափոխել են հոգեբուժարան: Գտնվում է Գերմանիայի գժանոցներից մեկում: Խնդիրն այն է, որ չգիտենք, թե՝ ո՞ր:

Էթելն անհամբերությամբ ընդհատեց նրան:

- Ինչպե՞ս իմացար: Հաստատ գիտե՞ս:

- Ա՜հ, իմ փոքրիկ հետաքրքրասեր… Ես քո առաջ բոլոր գաղտնիքները չեմ բացի: Սակայն, այո՛, ողջ է: Ձեզ կարող եմ հավատացնել, որ աղբյուրը հավաստի է, ու հիմա փորձում ենք տվյալներ հայթայթել հոգեկան հիվանդների հաշվառման մատյանից: Ըստ գերմանական բյուրոկրատական մեքենայի՝ Գերմանիայում բոլորը հաշվառման մեջ են: Շուտով կիմանանք, թե որտեղ են նրան փակի տակ պահում:

Էթելն ու Էդուարդը հանգիստ շունչ քաշեցին: Այն լուրը, որ Մաքսի համար դեռ փրկության հույս կա, երկուսի համար էլ կարևոր էր:

Ավգուստուսը մի շաբաթից ավելի մնաց Բեյրութում: Արձակուրդի մեջ էր, նախաճաշելուց հետո մի գիրք կամ իր թղթերն էր վերցնում ու մինչև

ճաշելը նստում պատշգամբում: Նրան շատ էր դուր գալիս Ջոնի պապիկի դերում լինելը: Օրվա վերջին նա երկար զբոսանքի էր դուրս գալիս և իջնում Լա Կոռնիշ՝ ողջունելու իր վաղեմի բարեկամներին, որոնց պատմում էր այն, ինչ ուզում էր, որ իմանային: Նա շատ լավ գիտեր լուրերի տարածման գործընթացը և գործում էր հստակ նպատակադրությամբ:

Մի քանի օր անց նրան հրավիրեցին Լիբանանի Հանրապետության նորընտիր նախագահ Էմիլ Էդի՝ պաշտոնը ստանձնելու հանդիսավոր արարողությանը: Նա ներողություն խնդրեց, որ չի կարող մասնակցել, քանի որ պետք է վերադառնար Եվրոպա, բայց այցելեց նրա տուն: Էդը Նյումանին ասաց, որ իրեն ճնշում է այդ պատասխանատվությունը, ինչպես նաև այն, որ Այուբ Թաբիթին մտադիր է նշանակել վարչապետ.

- Թվում է, թե հասել ենք մեր նպատակին: Հիմա պետք է լիբանանցիներին համոզենք, որ երազն արդեն ավարտվել է, ու մենք պետք է բախվենք բարդ ու դաժան իրականությանը: Ձեզ այդպես չի՞ թվում:

Նյումանը գլխի շարժումով համաձայնեց: Էդը չէր սխալվում:

Բեյրութից նա նավ նստեց, որպեսզի գնա Պորտ Սայիդ: Նա ասում էր, որ իր եռանդը նվազել է, սակայն իրականում այդպես չէր: Նրա նպատակը գործունեություն ծավալելը չէր, այլ այն, թե արդյոք կարո՞ղ էր իր իմացությունը ծառայեցնել իր սկզբունքներին:

1935 թվականի վերջերին Գերմանիայում ամեն ինչ վատթարանում էր նրանց համար, ովքեր գերմանացիներ չէին, մանավանդ՝ հրեաների համար, ովքեր դարձել էին անհայտ և առանց որևէ իրավունքի հպատակներ: Ծննդյան տոներին Ավգուստուսը կրկին վերադարձավ Բեյրութ. Մաքս Շտեյնբերգի հետքը կորել էր:

Էդուարդը որոշեց գնալ այլ ուղիով: Դա այն տեսությունն էր, որի մասին միշտ խոսում էր իր աները՝ Թոմասը: Ճակատագրին պետք է մարտահրավեր նետել:

48. ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԼ-ԲԱՆՆԱՅԻ ՀԵՏ
ՀՈՒՆՎԱՐ, 1936թ.

Թոմաս Հարդինգն իմացավ, որ Աննա Լեֆեբրը մահացել է: Նա իր կնոջ հետ Փարիզում էր և թերթը կարդալիս պատահաբար տեսավ մի մահազդ: Նա հազիվ զսպեց իրեն, որ չգոռար: Սարան այդ մասին ոչինչ չգիտեր, ու Թոմասն աշխատում էր նրան անտեղյակ պահել: Ուշադիր կարդաց մահազդը: Այն տպագրվել էր Փարիզում, որպեսզի նրա ազգականներն ու բարեկամները տեղեկանան այդ մասին: Նշվում էր, որ նա 1936 թվականի հունվարի տասին մահացել է Բեռլինում և 1918 թվականին վախճանված գործարար Վիլհելմ ֆոն Գյոտցի այրին էր: Նշված էր նաև նրանց միակ որդու՝ քսանմեկամյա Լյուդվիգ ֆոն Գյոտցի՝ գերմանական բանակի սպայի մասին: Թոմասն այնպիսի կեցվածք ընդունեց, թե իբր սովորականի պես թերթ է կարդում, մինչդեռ գլխում տարբեր մտքեր էին պտտվում: Շատ լավ հիշում էր, որ Աննան Բեյրութից հեռացավ 1914 թվականի կեսերին, և եթե տղան քսանմեկ տարեկան է, ապա ծնվել է 1915 թվականին, այսինքն՝ Աննան ամուսնացել է իրենից հեռանալուց ամիսներ կամ շաբաթներ անց: Սակայն այն ժամանակ Աննան չէր ասել, որ մեկ ուրիշ տղամարդու հետ կապ ունի, ըստ այդմ՝ անհնարին էր, որ նա այդքան շուտ ամուսնացած լիներ: Ինչ վերաբերում է Աննայի՝ վերջին անգամ Հալեպ գալուն և Թոմասի հետ Պալմիրայում հրաշալի ժամանակ անցկացնելուն, ապա այդ ժամանակ նա ոչինչ չի ասել ո՛չ ամուսնացած լինելու, ո՛չ էլ երեխա ունենալու մասին: Ի՞նչ իմաստ ուներ նրա՝ մենակ Հալեպ գալը: Ո՛չ, նա ամուսնացած չի եղել: Եթե կար մի ճշմարիտ բան, ապա դա Պալմիրայում նրանց միջև տեղի ունեցածն էր: Չէ՛, ինչ-որ մի սխալ բան կար նրա որդու տարիքի հետ կապված: Ուսերը թոթվեց: Ոչինչ չէր կարող անել: Նրան համակում էին հոգեպարար հիշողությունները: Շատ ժամանակ էր անցել: Այդուհանդերձ, ասես երեկ էր այդ ամենը տեղի ունեցել: Աննան չկարողացավ փոխարինել Կարոլինին, բայց այն ժամանակ շատ լավ ընկեր եղավ և օգնեց, որ ինքը հաղթահարի կսկիծը:

Նա կուզենար ճանաչել Աննայի որդուն՝ Լյուդվիգին, ինչպես որ նշված էր մահազդում: Որքան տարօրինակ է կյանքը. այդ տղան կարող էր իր որդին լինել, եթե իր և Աննայի մտերմությունը լավ վախճան ունենար, թեև Սարան, ում ինքը երբեք սիրահարված չի եղել, անկասկած իր կյանքի լավագույն ուղեկիցն է:

Մի քանի օր անց Թոմասն ու Սարան Հավրում նավ նստեցին՝ Ալեքսանդրիա գնալու համար, որտեղից էլ գնացքով ուղևորվելու էին Կահիրե: Ուզում էին մինչև գարնան սկիզբը մնալ այդտեղ, իսկ հետո գնալ Բեյրութ և այնտեղ մնալ մինչև հունիս: ԱԳՆ-ից Թոմասը գաղտնի հանձնարարություն ուներ: Նա պետք է կապ հաստատեր Հասան ալ-Բաննայի՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության հիմնադիր առաջնորդի հետ: Երկու կողմերն էլ հրադադարի կարիք ունեին, իսկ բացի «պրոֆեսորից»՝ ո՞ւմ կհաջողվեր հասնել դրան:

Կահիրեում Սարան շատ բարեկամներ ուներ և վարում էր ուրույն կյանք: Ուշ երեկոյան նրանք հավաքվում էին ընթրելու և միմյանց պատմում նորությունները:

Ալ-Բաննան զուսպ և համեստ մարդ էր, ոչ ոքի չէր վստահում, եթե մուսուլման չէին: «Մուսուլման եղբայրներ»-ը գաղտնի կազմակերպություն էր, որը, սակայն, բոլորի խոսակցության առարկան էր: Ալ-Բաննան կազմակերպությունը հիմնել էր ութ տարի առաջ, և այն արդեն ճյուղավորվել էր ոչ միայն Եգիպտոսում, այլև Սիրիայում, Պաղեստինում, Լիբանանում ու նույնիսկ Իրաքում:

Բրիտանական հետախուզական ծառայություններին հաջողվեց կազմակերպել այդ հանդիպումը, որը տեղի էր ունենալու ալ-Ահզար համալսարանի շրջակայքում գտնվող ինչ-որ վայրում: Ալ-Բաննան թույլ չտվեց, որ Թոմաս Հարդինգին որևէ մեկն ուղեկցի: Հավաստիացրեց, որ ինքն էլ մենակ կլինի, սակայն հանդիպումը պետք է կայանա իր տարածքում: Եթե ինչ-որ բան չլիներ պայմանավորվածության համաձայն, ապա ինքն անմիջապես հեռանալու էր: Ոչ էլ նախապես հստակ վայրն էին նշել: Ուլեմներից[82] մեկը Թոմաս Հարդինգին լաբիրինթոսներով տանելու էր մինչև պայմանավորված կետը, որը վերջին պահին էր նշվելու:

Հիսունվեց տարեկանում Թոմասը, աշխատանքը լավագույնս կատարելուց բացի, այլ հավակնություն չուներ, իսկ ազատ ժամանակ վայելում էր կյանքը: Կահիրեում հաճախ էր այցելում Եգիպտական թանգարան ու քաղաքին հարակից հնավայրերը: Անգլիացի, ֆրանսիացի կամ եգիպտացի հնագետները նրան ճանաչում էին ու վերաբերում որպես իրենցից մեկին: Ի վերջո, իր այցեքարտի վրա նա դեռ պահպանում էր «Պրոֆեսոր-Օքսֆորդի համալսարան» արտահայտությունը և մասնագիտացված ամսագրերի համար մի շարք հոդվածներ էր գրել Բաալբեկի, Տյուրոսի ու Պալմիրայի մասին: Ինչպես ինքն էր ասում, դա իր երկրորդ «ես»-ն էր, որի շնորհիվ առնչվում էր իր այն մասի հետ, որը չէր կարողացել զարգացնել:

[82] Հոգևոր դասի կրթված ներկայացուցիչ, ով նաև օրենսգետ է:

Ալ-Բաննայի պես մարդու հետ հանդիպումը նրա համար բուռն հետաքրքրություն էր ներկայացնում. կիմանար, թե ինչ է կատարվում մուսուլմանական աշխարհում, որտեղ դեպքերը զարգանում էին այլ ռիթմով: Ինչ խոսք, այդ աշխարհում էլ նույն ումման էր, սակայն շատ երևույթներ սկզբունքային տարբերություններով էին ընկալվում Դամասկոսում, Բաղդադում, Կահիրեում և Մեդինայում:

Ավտոմեքենան նրա հետևից տուն եկավ ու նրան տարավ Խան էլ-Հալիլի շուկայի թաղամաս՝ ալ-Ահզարի մոտ: Երբ վարորդը նվազեցրեց ավտոմեքենայի արագությունը, մի ուլեմ մոտեցավ: Գլուխը թեթևակի խոնարհեց՝ արաբերեն քրթմնջալով «Սալամ ալեյքում»: Թոմասը նրան պատասխանեց նույն կերպ, և մտան մզկիթ, որտեղ կոշիկները հանեց ու դրանք, կապիչներից բռնած, վերցրեց՝ հետևելով իր ուղեկցորդին: Անցան մզկիթը, հետո կտրեցին հետևի մեծ բակը, մի երկար միջանցք ու մտան մի մեծ սրահ, այնտեղից էլ՝ հետնամասի գրասենյակը, որը բացվում էր մի խնամված այգու վրա: Մի փոքրիկ ճաղապատ դուռ բացվում էր դեպի հասմիկներով ծածկված նրբանցքը: Ուլեմը, առանց որևէ բան ասելու, անցավ դռնով, նրբանցքով քայլեց դեպի ցած: Թոմասն էլ, որ հագել էր կոշիկները, հետևում էր նրան: Հետո երկար սանդուղքով բարձրացան մի երկարավուն, գորգապատ սենյակ, որտեղ գտնվում էր համեմատաբար երիտասարդ և ուշիմ հայացքով մի տղամարդ: Ալ-Բաննան էր, ով, ի նշան մեծարանքի, թեթևորեն ոտքի կանգնեց ու խոսեց հարավի շեշտով, բայց գրագետ արաբերենով.

- Աստված ողորմած է: Դուք պրոֆեսոր Հարդինգն եք: Ես ուսուցիչ ալ-Բաննան եմ՝ մարդկանց մտքի որմնադիրը: Աստված յուրաքանչյուրիս իր տեղն է դնում ու մեզ այս երեկո բերել է այստեղ, որպեսզի հստակեցնենք մեր դիրքորոշումը: Ես ներկայացնում եմ «Մուսուլման եղբայրներ»-ին, այսինքն՝ նրանց, ովքեր այդ կազմակերպության անդամ են, ինչպես նաև նրանց, ովքեր կազմակերպությունից դուրս են: Նրանք եղբայրներ չե՞ն… Մուսուլմաններ չե՞ն… Դուք ներկայացնում եք Մեծ Բրիտանիան: Աստված ողորմած է, սակայն անգլիացիները չպետք է սպառեն իրենց համբերությունը, ոչ էլ՝ մերը: Դուք խաղում եք երկու ճակատով: Արքա Ֆուադը հիվանդ է, այս աշխարհում տանջվելու համար նրան քիչ ժամանակ է մնացել: Արքայազն Ֆարուկը չի կարող Եգիպտոսի լավագույն կառավարիչը լինել, այդուհանդերձ ձեզ ձեռնտու է խամաճիկային կառավարությունը, իսկ Եգիպտոսի ժողովրդին՝ ո՛չ: Մենք կատարենք այն շարժումներին, որոնք կփորձեն տապալել արքայազն Ֆարուկին: Մենք ցանկանում ենք ունենալ իսլամական հանրապետություն: Դուք՝ եվրո-

պացիներդ, խոսում եք ազատությունից, ժողովրդավարությունից և խաղաղությունից: Մենք՝ արաբներս, խոսում ենք ազատությունից, Աստծուց և արդարությունից: «Մուսուլման եղբայրներ» շարժումը հիմնված է Ղուրանի վրա, սակայն պահանջում է սոցիալական արդարություն և ոչ թե բարեգործություն, պահանջում է ոչ թե եվրոպացիների ընկալած, այլ Մարգարեի ցույց տված ազատությունը: Ինչ վերաբերում է խաղաղությանը, ապա դա միշտ էլ երկուստեք քննարկվող խնդիր է: Դուք այստեղ ունեք ձեր զորանոցներն ու թնդանոթները: Մի՞թե դրանք չեն վկայում ձեր մտադրությունների մասին: Մեզ՝ երկու կողմերիս էլ անհրաժեշտ է լինել ողջախոհ: Գուցե և մեզ կործանի մեր իսկ ձեռքբերումը՝ հաջողությունը: Երբեք չէի պատկերացնի, որ մեր շարժումը կտարածվի շատ արագ, ինչպես կրակը չոր խոտի վրա: Այնպես որ՝ ասացե՛ք, թե ինչպես կարող ենք համաձայնության գալ ու դա կուսումնասիրենք:

Թոմաս Հարդինգն այն մարդկանցից չէր, ում դյուրին էր զարմացնելը: Այդուհանդերձ, ալ-Բաննային դա հաջողվել էր: Թոմասի դիմաց կանգնած էր կիրթ, խելացի մի մարդ, ով քաջ գիտեր և՛ իր յուրայիններին, և՛ իր հնարավոր հակառակորդներին: Թոմասը նրա հետ խոսեց արժանապատվորեն, հնարավորինս հստակ և առանց խարդախության:

- Աստված գթառատ է, ուսուցի՛չ ալ-Բաննա: Երկուսս էլ մարդկային մտքի որմնադիրներ ենք: Ցանկանում ենք կառուցել մի ապագա, որն ի վիճակի չենք պատկերացնել, ու դժվար է իմանալ, թե որտեղից ենք սկսելու: Ես անգլիացի եմ, իրոք այդպես է: Սակայն կյանքիս մեծ մասն ապրել եմ արաբների շրջանում: Նրանց շարքերում ունեմ լավ բարեկամներ ու թերևս ոչ մի թշնամի: Կարողանում եմ ձեր լեզվով ազատ արտահայտվել, լավ գիտեմ Ղուրանը, ինձ համար լավ է այստեղ՝ թե՛ Կահիրեում, թե՛ Բեյրութում: Ձեր կազմակերպությունն ուղենշելու է ումմայի ապագան: Դուք թելերը շարժում եք Պաղեստինում: Մի՛ սատարեք մուֆտի ալ-Հուսեյնին: Նա ձեր համախոհը չէ: Նա միայն առճակատման կողմնակից է և ցանկանում է այնպիսի բարենպաստ միջավայր, որպեսզի հասնի իր նպատակներին: Ասեմ Ձեզ, որ ես նրա տեսակետներին համակարծիք չեմ: Եվ որքան ինձ հայտնի է, գաղափարական տեսանկյունից նա շատ քիչ ընդհանուր բան ունի Ձեր համախոհների հետ: Դուք արդարամիտ մարդ եք և Ձեր նպատակների իրագործմանը գնում եք արմատական միջոցներով: Ալ-Հուսեյնին բոլորովին անարդար մարդ է: Նա ուզում է հրեաների ու մեր նկատմամբ բռնություն կիրառել: Նա չի կարողանա հասնել իր ուզածին: Մի՛ օգնեք նրան Ջաֆֆայում ու Երուսաղեմում շուտով կազմակերպվելիք խժդժություններում: Ինչ վերաբերում է Մեծ

Սիրիա ստեղծելու կողմնակից արաբներին, ապա Դուք լավ գիտեք, որ նրանք Ձեզ հետ առնչություն չունեն: Դուք ողջ ումմայի համար ձգտում եք արդարության: Դամասկոսի առաջնորդները սիրիացի ազգայնամոլներ են, ովքեր ումման մեկնաբանում են՝ ըստ իրենց շահի: Ուսուցի՛չ ալ-Բաննա, արաբները հավակնում են անկախ Լիբանան ունենալուն: Ճշմարիտ է, Լիբանանը կդառնա այն դուռը, որով կներթափանցեն եվրոպական գաղափարները, սակայն այդ նույն դուռը կծառայի որպես ելք, որով դեպի Եվրոպա կուղղվեն արաբական աշխարհի գաղափարները: Դա կվկայի այն մասին, որ արաբները բաց ժողովուրդ են ու պատրաստ մշակութային փոխանակման: Լիբանանում դարեր ի վեր խաղաղ գոյակցում են արաբներ, քրիստոնյաներ, մուսուլմաններ, և գոյություն ունի փոխադարձ մեծ հարգանք: Խնդրում եմ, որ Դուք դա ի նկատի ունենաք: Հակառակ դեպքում դա աղետի կհանգեցնի: Ուսուցի՛չ, Դուք լավ գիտեք, որ «Մուսուլման եղբայրներ»-ն ունեն քրիստոնյա եղբայրներ: Գիտենք, որ ինչ վերաբերում է սուննիներին, այդ փոխադարձ ըմբռնումը միշտ եղել է, իսկ շիաների դեպքում նրանց առաջնորդներն արաբներ չեն, այլ պարսիկներ, ովքեր խոսում են պարսկերեն՝ ֆարսի, այլ ոչ թե արաբերեն: Մեզ համար հեշտ չէ, բայց թո՛ւյլ տվեք ասել՝ ոչ էլ ձեզ համար: Մենք զինադադարը կպահպանենք առնվազն այնքան ժամանակ, մինչև դուք այն կխախտեք: Մենք ձեր թշնամիները չենք, ոչ էլ դեմ ենք իսլամին: Ժամանակը ցույց կտա, թե ովքեր են իսկական թշնամիները: Մենք՝ բրիտանացիներս, չենք պատրաստվում ընդմիշտ մնալ այստեղ: Կգա մի օր, երբ մենք կվերադառնանք Անգլիա: Մինչ այդ պետք է խաղաղ գոյակցենք: Դրա ապացույցն այս հանդիպումն է՝ շատերի համար անհավատալի: Դուք դա կժխտեք ձեր իսկ խորհրդի առջև, ես էլ հրապարակավ որևէ հայտարարություն չեմ անի: Սակայն լսե՛ք, ուսուցի՛չ ալ-Բաննա: Երկուսս էլ մարդ արարածներ ենք, դավանում ենք այնպիսի կրոնների, որոնք ունեն ընդհանուր մարգարեներ, լինելով նույն ժամանակի ծնունդ՝ ես ամեն դեպքում խորը հետաքրքրությամբ ու մեծագույն հարգանքով եմ լցված իսլամի ու այն դավանողների հանդեպ: Արաբերենը, իմ կարծիքով, հրաշալի լեզու է, որը, ավելի քան թերևս մեկ այլ լեզու, օժտված է մարդկային զգացմունքներն առավել լավ արտահայտելու ունակությամբ: Ի վերջո, ինձ համար մեծ պատիվ եմ համարում Ձեզ հետ մեր դիրքորոշումները հստակեցնելը: Եթե երբևէ ուզենաք ինձ հետ կապի մեջ մտնել, ահավասիկ թողնում եմ իմ այցեքարտը, որի վրա կան Լոնդոնի, Բեյրութի և Կահիրեի իմ հեռախոսահամարները:

Ալ-Բաննան կրկին ոտքի կանգնեց՝ իր հյուրին հրաժեշտ տալու համար:

- Գիտեք, պարո՛ն Հարդինգ: Եթե բոլոր անգլիացիները Ձեզ նման լինեին, ոչ մի կոնֆլիկտ տեղի չէր ունենա: Աստված Ձեզ հետ, ու եթե Նա կամենա, գուցե մի օր կրկին իրար տեսնենք:

Միմյանց ձեռք սեղմեցին: Հետո՝ դուրս գալիս, ուլեմը նրան ուղեկցեց նույն ճանապարհով ու հրաժեշտ տվեց՝ գլուխը թեթևակի խոնարհելով ու առանց մի բառ արտասանելու:

Թոմասը տեղավորվեց իրեն սպասող ավտոմեքենայում, որն առանց համարանիշի էր, որպեսզի թաքցվեր բրիտանական կառավարության հետ որևէ առնչություն ունենալը: Կահիրեում ամենառողջամիտ բանն առավելագույն զգվածությունն էր:

Ավտոմեքենայում կրկին սկսեց կարդալ տասներկու օրվա վաղեմության «Հերալդ Տրիբյուն»-ի էջերը, որտեղ դեռ ինչ-որ նորություններ կային: Երկնքում ուրուրներն անխոնջ թռչում էին՝ հսկելով մեծ գետի ափերը:

49. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

ՓԵՏՐՎԱՐ - ՄԱՅԻՍ, 1936թ.

Բրիտանական հետախուզական ծառայությունների տեղեկատվության համաձայն՝ Ջաֆֆայում տեղի էին ունեցել լուրջ ընդվզումներ: Նավը, որ Թոմասին ու Սարային Ալեքսանդրիայից տանում էր Բեյրութ, մի փոքր դադար էր առնում Ջաֆֆայում: Նրանց թույլ չտվեցին նավից իջնել, քանի որ Երուսաղեմի մուֆտի ալ-Հուսեյնին արաբներին հրահրել էր հրեաների դեմ, և այդտեղ խժդժություններ էին ծավալվում: Ալ-Հուսեյնի գործելակերպը համբերությունից հանել էր Մեծ Բրիտանիայի Բարձրագույն կոմիսարին, ով մուֆտիին փնտրելու և ձերբակալելու հրաման էր ստորագրել: Նա մեղադրվում էր ոչ միայն Ջաֆֆայում, այլև Պաղեստինի գրեթե բոլոր բնակավայրերում տեղի ունեցող հասարակական լուրջ անկարգությունների համար: Ամենուրեք պաստառներ էին հայտնվել հրեաների ու անգլիացիների ներգաղթի դեմ՝ նրանց մեղադրելով ամեն հարցում հանցակից լինելու համար, ըստ այդմ՝ ակնարկելով լորդ Բալֆուրին ու մյուսներին:

Ալ-Հուսեյնին հաջողվում էր թշնամական մթնոլորտ ստեղծել հրեաների դեմ, ովքեր ավանդաբար խաղաղ գոյակցել էին արաբների հետ: Հենց Լիբանանում՝ բաց և հյուրընկալ այդ երկրում, հրեաների դեմ նկատվում էր ճնշող լարվածություն: Սուննիները Բեյրութում ժխտում էին, որ այդպիսի բան կարող է լինել, իսկ քրիստոնյա արաբները, մանավանդ՝ մարոնները, անգամ հայտարարությամբ հանդես եկան՝ հօգուտ Լիբանանի հրեաների. համայնք, որը պատմականորեն էր գոյություն ունեցել և վերջին տարիներին առավել ստվարացել էր:

Ապրիլի վերջերին Թոմասն ու Սարան նավով Բեյրութ հասան: Նրանց սպասում էր ավտոմեքենան, թեև Էդուարդն ու Էթելը գտնվում էին Բիբլոսում: Դա Թոմասին տխուր հիշողությունների գիրկը նետեց, քանի որ Բիբլոսն առանձնահատուկ վայր էր իր համար: Չէր ուզում վերադառնալ այնտեղ. իր նախկին տան ավերակները տեսնելը ցավագին էր ընդունում: Նոր տուն կառուցելու համար ոչ ոք չէր քանդել հրդեհից հետո մնացած պատերը:

Այդուհանդերձ, Թոմասը սիրում էր Բեյրութ վերադառնալ: Սարան լավ գիտեր, թե իր ամուսինն ինչ հեղինակություն է վայելում այդ քաղաքում: Նա հասարակական մի գործիչ էր՝ մեկն այն անձանցից, որոնց հաջողվել էր հասնել Լիբանանի անկախությանը, չնայած ուներ սուննի

շատ բարեկամներ, ովքեր ճնշման էին ենթարկվում Դամասկոսի իրենց իսկ հայրենակիցների՝ արաբների կողմից:

Թոմաս Հարդինգն ինքն իրեն չէր խաբում: Նրանց համար ինքն «անգլիացին» էր, ու միշտ էլ այդպես էր լինելու: Դա ուներ իր առավելությունը՝ մեծ հարգանք նրա նկատմամբ: Քչերը կհամարձակվեին հակառակվել «անգլիացուն», սակայն այդ հանգամանքը խանգարում էր, որ արաբների շրջանում իսկական ընկերներ ունենար: Այդտեղ՝ Բեյրութում, նրա լավագույն ընկերը, ինչպես նախկինում, Այուբ Թաբիթն էր, թեև ուներ նաև կայուն ընկերների մի խումբ, ովքեր նրան բարձր էին գնահատում և հանուն իր պես անգլիացու՝ պատրաստ էին ամեն ինչի:

Այն օրը, երբ կարդաց Ֆուադ թագավորի վախճանման և նրա որդու՝ Ֆարուկ I-ի գահ բարձրանալու մասին լուրը, հիշեց ալ-Բաննայի դառը խոսքերը: Արաբները եվրոպացիների՝ մանավանդ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հանդեպ սկսել էին փոխել իրենց վերաբերմունքը և կորցրել էին հարգանքը: Արաբները հասկանում էին, որ ժամանակն իրենց օգտին է գործում: Արաբ, մանավանդ մուսուլման գաղափարախոսների տեսակետները տարածաշրջանում ակնհայտորեն փոխում էին իրադրությունը: Քառորդ դար առաջ ամեն բան շատ տարբեր էր: Թոմասը հիշում էր իր աներոջ՝ Չարլզ Վեյլերի ասածները, ով զայրացել էր Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններից:

Իմպերիալիզմը գնալով իր տեղը զիջում էր որոշակի պրագմատիզմի, կամաց-կամաց սկսում էին խոսել մարդու իրավունքների մասին: Արաբներն այլևս ո՛չ մանդատ էին ընդունելու, ո՛չ էլ՝ խնամակալների, որոնք ամեն դեպքում անցողիկ էին, ժամանակավոր: Դեռ որքա՞ն ժամանակ ֆրանսիացիները կդիմանային Լիբանանում կամ Սիրիայում, իսկ բրիտանացիները՝ Պաղեստինում և Միջագետքում: Թոմասը կանխատեսում էր, որ նրանց ներկայության համար կարճ ժամանակ է մնացել: Անգամ օսմանները, մուսուլման լինելով հանդերձ, ստիպված հանձնվել էին: Ի վերջո, նույնն էր վիճակված նաև ֆրանսիացիներին ու անգլիացիներին. նրանք վերջում նույնպես սրբիչ կնետեն:

Երկու օր անց Էթելն ու Էդուարդը վերադարձան Բիբլոս կատարած իրենց շրջագայությունից: Ողջունելուց հետո Էդուարդն ասաց, որ իրեն հրավիրել են Բեռլին՝ մասնակցելու հոգեկան հիվանդություններին վերաբերող համաժողովին, և ինքը մտադիր է գնալ: Էթելը ոչ մի մեկնաբանություն չարեց, բայց նկատելի էր նրա նյարդային վիճակը: Թերևս պետք է քննարկեին այդ ուղևորության նպատակահարմարությունը, սակայն Էդուարդը կարծիք հայտնելուց ձեռնպահ մնաց:

Եթե կարծիք հայտնող մեկը կար, ապա նա բժիշկ Թաբիթն էր: Այդ մարդը երբեք լեզուն ատամների տակ չէր պահում և Էդուարդին ասաց, որ ներկա դրությամբ Բեռլինը բոլորովին հարմար վայր չէ հոգեբուժության համաժողովի համար: Էդուարդը հակադարձեց, որ հենց այդ պատճառով է ինքն ուզում այնտեղ լինել, որպեսզի նրանց երեսին ասի, թե ովքեր են այդ բժիշկները, որ Հիպոկրատի երդում են տվել, սակայն իրենց մարդկային ու մասնագիտական արժանապատվությունից վեր էին դասում նացիստական կուսակցության տեսակետները: Վիճաբանությունն ավարտվեց, սակայն Բեռլին գնալ-չգնալու հարցը մնաց առկախ: Դժվարությունն այն էր, որ հայտնի չէր, թե նացիստներն ինչպես են վարվում նրանց հետ, ովքեր չեն կիսում իրենց գաղափարները: Այնուամենայնիվ, մայիսի սկզբներին Էդուարդը Ստամբուլ գնացող նավ նստեց, որտեղից էլ Արևելյան ճեպընթացով մեկնելու էր Վիեննա: Ավստրիայի մայրաքաղաքի ու Բեռլինի միջև էլ օրական երկու գնացք էր աշխատում:

Էթելն ու Ջոնը նրան ուղեկցեցին մինչև նավահանգիստ: Էթելը գիտեր, որ Էդուարդը փորձում է գտնել Մաքս Շտեյնբերգի հետքը, ինչն ամենևին հեշտ չէր լինելու առկա իրավիճակում: Այդ հարցը չէին քննարկել Էթելի հոր հետ՝ խնդիրներից խուսափելու նպատակով. նա դեմ էր լինելու:

Էդուարդ Բողոսյանը երկու նպատակ ուներ. նախ՝ մի բան անել հանուն այն մարդու, ում հազիվ էր ճանաչում, բայց ով իր բարությամբ ու նրբազգացությամբ գրավել էր իր և Էթելի սրտերը: Սակայն ամենակարևորն այն էր, որ ինքն իրեն ապացուցեր, որ առանց որևէ մեկի օգնությանը դիմելու՝ կարող է մտնել իսկ և իսկ գայլի որջը՝ հաղթահարելով դեռ մանուկ հասակից իր հոգին կեղեքող վախը:

Այդ ժամանակից ի վեր նրան հաճախ էին տանջում սարսափելի մղձավանջները, որոնցում իրեն շարունակ հետապնդում էին զինվորական համազգեստ հագած մարդիկ. թուրքերն ու գերմանացիներն էին, ովքեր հսկում էին տեղահանվածների այն ճամբարը, որտեղ գտնվում էին իր մայրը, երկու քույրերն ու ինքը: Հիշում էր այն երկար ամիսները, երբ ոչինչ չգիտեին իրենց հոր մասին, երբ գրեթե ուտելու ոչինչ չէին տալիս, երբ ժամանակ առ ժամանակ մտնում էին հսկիչները, ընտրում որևէ երիտասարդ աղջկա ու հետները տանում, իսկ աղջիկն ու նրա ազգականները հուսահատ գոռում էին ու հեծկլտում: Շատ անգամ այդ աղջիկներից այլևս ոչ մի լուր չէին ունենում: Հիշում էր, թե ինչպես էր իր մայրը վախից քարանում, երբ մտածում էր, որ նույն բանն իր տասներկու և

տասնչորսամյա դուստրերին կարող է պատահել: Դա մի սարսափելի վախ էր, որը բոլորին համակեց: Մի օր էլ եկան երկու հսկիչներ, մոտեցան իրենց ու առանց այլևայլության տարան իր երկու քույրերին: Մայրը փորձեց նրանց պաշտպանել, սակայն նրան վայրենաբար հրեցին, ու նա բերանքսիվայր ընկավ ցեխի մեջ: Այդ ժամանակ ինքը նետվեց նրանց հետևից, բայց ոչինչ չէր կարող անել կրկնակի քաշով ու տարիքով իրենից մեծ երկու տղամարդու դեմ: Մնաց մոր մոտ, ով ասես կորցրել էր գիտակցությունը, չէր կարողանում տեղից շարժվել: Հսկիչները քարշ էին տալիս իր քույրերին, իսկ մոտեցող երկրորդ խումբը մատնացույց էր անում իրենց ու քրքջում: Փորձեց ուշքի բերել մորը. երկար տանջվելուց հետո, ի վերջո, հաջողվեց: Մայրը, որ կորցրել էր զգայունակությունը, մնաց լուռ՝ ցեխի վրա կծկված, առանց լաց լինելու, առանց արձագանքելու: Ինքը սարսափահար նստեց մոր կողքին, չգիտեր՝ ինչ անի ու չէր ցանկանում մտածել, թե ուր էին տարել իր քույրերին, և նրանց հետ ինչ տեղի ունեցած կլիներ: Ինքը խոսում էր մոր հետ, ուզում էր լսել նրա ձայնը, ուզում էր իմանալ, թե ինչ է մտածում: Շատ ցուրտ էր, ու սկսեց անձրև տեղալ: Փշալարերով ցանկապատված տարածքում պատսպարվելու տեղ չկար: Ժամանակ առ ժամանակ ինքը լիզում էր շուրթերը՝ մի քիչ մաքուր ջուր խմելու համար:

Դժոխքը, սակայն, չէր ավարտվել: Հաջորդ օրը մայրը նույն՝ անշարժ վիճակում էր, երբ եկավ, եթե կարելի է այդպես անվանել, ուտելիք բերող սայլը: Հսկիչներից մեկը բացեց ցանկապատի դուռը, իսկ մյուսը ցեխի վրա շուռ տվեց երեք հարյուրից չորս հարյուր կանանց ու երեխաների համար նախատեսված ենթադրյալ սնունդը: Մի քանիսը մոտեցան և ինչ-որ բան վերցրին: Այդ ժամանակ հսկիչն իրեն տեսավ: Կրկին բացեց ցանկապատի դուռը ու իր կաշվե մեծ կոշիկներով քայլեց թանձր ցեխի վրայով: Ինքը չէր համարձակվում աչքերը բարձրացնել, հուսահատ փորձում էր այնպես անել, որ նա իրեն չնկատի ու չնայի իր աչքերին: Զգաց, որ իր թևերից քաշում, բարձրացնում էին վերև: Այնքան վախեցած էր, որ չէր կարողանում շարժվել: Հսկիչն իրեն ցեխի միջով քարշ տվեց դեպի ցանկապատը, հետո իր դաստակները կապեց սայլին: Մայրը նույն անշարժ դիրքով, ինչպես կծկվել էր նախորդ երեկոյան, մնաց հեռվում: Ինքը փորձեց ճչալ, սակայն ի վիճակի չէր անգամ մի ձայն հանել: Հետո հսկիչը խթանեց ջորուն, ու սայլը սկսեց ընթանալ: Հասակով մեկ ինքն ընկավ գետնին: Հսկիչը բարձրացավ սայլին ու ծխախոտ վառեց, այնուհետև սկսեց քթի տակ երգել մի հին երգ, որն Էդուարդը լսել էր հացահատիկ քաղելու համար դաշտ գնացող կամ այնտեղից վերա-

դարձող գյուղացիներից: Ինքը գետնից վեր կացավ, երբ ջորին մի պահ կանգնեց: Ձեռքերն այրվում էին, թեև ցուրտ էր, իսկ պարանից դաստակներին խորը վերքեր էին բացվել, և արյուն էր հոսում:

Հսկիչն իր գործին էր. նրան միայն հետաքրքրում էր մի ծռված երկաթ, որը խանգարում էր անիվի պտտվելուն: Տղան ասես գոյություն չուներ: Հետո աքսորյալների ճամբարը մնաց հետևում, ու սկսեց թեթև ձյուն մաղել: Ճանապարհին հանդիպեցին կանանց մի երկար շարքի. նրանց նույնպես տեղափոխում էին իրենց ճամբարը: Քայլում էին հնազանդ՝ առանց խոսելու, մի կին գնում էր՝ երեխային գրկած: Ոչ էլ հսկիչներն էին մի բան ասում: Հետո անհայտացան. նրանց հետևից ձյունահողմ էր բարձրացել:

Երբ այլևս չկարողացավ քայլել, հենվեց սայլի հետնամասին: Տղամարդը շուռ տվեց գլուխը ու նայեց իրեն, բայց ոչինչ չասաց: Սայլը թեքվեց դեպի աջ, ու առաջ գնացին մի արահետով, որը բարձրանում էր սոճիների անտառի միջով: Վերջապես հասան մի ավերված տան մոտ: Տղամարդն իրեն տարավ հարդանոց ու թողեց այնտեղ փռված: Հետո մի քիչ ուտելիք բերեց, սակայն ինքը չկարողացավ ուտել, թեև սաստիկ քաղցած էր: Այդտեղ էլ քնեց ու հաջորդ օրը լսեց տանը մոտեցող ձիերի դոփյուններ: Միայն մտածում էր մոր ու քույրերի մասին: Հսկիչը մտավ հարդանոց ու իրեն ստիպեց, որ ոտքի կանգնի: Նա ինչ-որ բան ասաց դռան մոտ կանգնած մեկ այլ տղամարդու: Իրեն քարշ տալով՝ տարան: Էդուարդն ավելի շատ հյուծված էր, քան վախեցած:

Իրեն դրեցին ձիու վրա: Անծանոթ տղամարդը նույնպես նստեց այդ ձիու վրա՝ իրեն պահելով առջևում: Էդուարդի գլուխը պտտվում էր, ու իրեն թվում էր, թե ցանկացած պահի կարող է ձիուց ընկնել: Մի երկու ժամ հետո հասան մի մեծ տան մոտ: Հաստափոր մի մարդ՝ ձեռքերի մատներին մատանիներ, դուրս եկավ տնից ու ինչ-որ բան քրթմնջաց:

Հիշեց, որ իրեն այդ տուն տարան բակի միջով: Մի կին սկսեց զբաղվել իրենով և ուղեկցեց լոգարան, լվացվացրեց ու չոր և մաքուր հագուստ տվեց: Ստիպեց նաև, որ տաք կաթ խմի և մի ափսե ապուր ուտի: Կաթը կուլ տալիս ահավոր քաղց էր զգում: Լավ չէր հասկանում, թե ինչ է կատարվում: Այնուհետև կինը թույլ տվեց, որ մեկնվի բարձիկների վրա և վերմակով ծածկվի: Այդպես իրեն մի քանի օր պահեցին: Սնունդը և տաք տեղում մնալը որոշ չափով վերականգնեցին ուժերը:

Եվ ահա կրկին եկավ նույն կինը, բռնեց իր ձեռքն ու տարավ կիսամութ մի սենյակ: Ներս մտնելուն պես նա սկսեց իրեն մերկացնել: Էդուարդը՝ կարծելով, որ իրեն նոր հագուստ է տալիս, չդիմադրեց: Կինն

իրեն ասաց, որ մտնի անկողին: Էդուարդն այդպես էլ արեց: Այդ ժամանակ տեսավ, որ սենյակ է մտնում այն հաստափոր՝ մատներին մատանիներ շարած մարդը: Ինքն ինչ-որ բան կռահեց և ուզեց մահճակալից ցած թռչել: Տղամարդը մոտեցավ ու ժպտաց՝ ցուցադրելով ոսկեզօծ ատամները: Հանկարծ, առանց մի խոսք ասելու, իրեն այնպիսի ուժեղ ապտակ տվեց, որ տապալեց մահճակալին: Այնուհետև տեսավ, թե ինչպես է այդ մարդը, իր վրա նայելով, արագ մերկանում:

Մի քանի օր շարունակ հաստափորն իրեն բռնաբարեց ու ստիպեց, որ սեռական բնույթի տարբեր գործողություններ կատարի: Էդուարդն ուզում էր ինքնասպան լինել, կյանքից ձեռք քաշել, սակայն հետո գալիս էր այդ կինը, լողացնում իրեն ու անկախ իր սրտխառնոցից՝ ստիպում, որ կուլ տա կաթն ու ապուրը: Հետո կուչ եկած մնում էր սենյակի մի անկյունում՝ չկարողանալով ոչ մի բանի մասին մտածել, նույնիսկ՝ լաց լինել:

Մի քանի շաբաթ անց բերեցին մի ուրիշ երեխայի: Կից սենյակից Էդուարդը լսում էր նրա լացի ձայնը: Գիտեր, որ այդ տղամարդը նրա հետ էլ նույն բանն էր անում, ինչ՝ իր հետ: Մի առավոտ կինը դուռը բաց թողեց: Ներքին ինչ-որ բան իրեն հուշեց, որ վեր կենա. վազեց մինչև դուռն ու դուրս եկավ բակ, որտեղ հաստափորը գործով էր ընկել և թիկունքով էր կանգնած: Ոտքերի ծայրերի վրա անցավ բակը, հասավ դարպասին ու դուրս գալով հայտնվեց ճանապարհին: Մոտերքում շատ ծառեր կային, ու ինքը վազեց դրանց կողմը: Համոզված էր, որ եթե իրեն գտնեն, ապա կսպանեն: Վազեց զառիվայրով, երբեմն սայթաքելով ու քերծվածքներ ստանալով էր իջնում քարքարոտ կիրճով: Վերջապես գտավ մի ճանապարհ, որտեղով շարժվեց այնքան, մինչև որ հասավ ավելի լայն մի ճանապարհի: Ոչ ոքի չտեսավ ու շարունակեց քայլել, թեև բազմաթիվ բռնաբարությունների հետևանքով կոնքերի շրջանում սուր ցավեր ուներ: Իր մանկությունը մնացել էր այնտեղ՝ վերևում: Սարսափելի ու մութ ինչ-որ բան էր մխրճվել ուղեղում: Անհուն ատելությամբ և ահավոր սարսափի զգացումով էր լցվել այն հաստափոր ու մատներին մատանիներ կրող մարդու և իրեն ճամբարից հանած հսկիչի հանդեպ: Հուսահատ վազում էր: Հասավ մի տան մոտ, սակայն վախենում էր, որ այդտեղ ևս կրկնվեր նույն բանը: Ինչ-որ մեկը դուրս եկավ ու նկատեց իրեն: Չէր կարողանում շարժվել և ընկավ: Տղամարդը մոտեցավ իրեն ու վախեցած նայեց: Էդուարդը կորցրեց գիտակցությունը:

Երբ ուշքի եկավ, պառկած էր անկողնում: Գլխում ծագած առաջին միտքն այդտեղից փախչելն էր, սակայն մի աղջիկ թույլ չտվեց: Ինքն ըն-

կավ մեջքի վրա՝ համոզված, որ իր մղձավանջը շարունակվելու է:

Այդուհանդերձ, նրա կասկածը փարատվեց. ոչինչ տեղի չունեցավ: Այդ տանը նրան միայն խնամում էին ու կերակրում: Երբ վրա էր հասնում գիշերը, համակվում էր ահավոր սարսափով ու ճչում: Այդ աղջիկը, լսելով ճիչերը, մտնում էր սենյակ ու փորձում հանգստացնել իրեն:

Այդտեղ նա մնաց մի քանի ամիս: Չնայած այդ տանը մնալն անվտանգ էր, բայց ինքը չէր կարողանում հաղթահարել վախը:

Մի օր աղջիկն իրեն սայլով տարավ Հալեպ, որտեղ էլ ինքը հանդիպեց իր ընտանիքի անդամներին: Սակայն թվում էր, թե իրար հանդիպելն այնքան էլ չուրախացրեց քույրերին: Նրանք ի վիճակի չէին խոսել այն մասին, թե ինչ էր իրենց հետ կատարվել: Էդուարդն էլ, եթե անգամ իրեն տանջեին, չէր պատմի իր գլխով անցածը: Ի վերջո, կարևորն այն էր, որ նրանք կրկին միասին էին:

Քիչ ժամանակ անց բոլորով վերադարձան Բեյրութ: Նրանց ուղեկցեցին մինչև հիվանդանոցի դարպասի մոտ և առանց որևէ բացատրության թողեցին այդտեղ: Մայրը մի կերպ էր քայլում, իսկ քույրերն այլևս չէին զգում ապրելու խինդը: Հայրն ուժասպառ տապալվեց. այլևս մի քայլ անելու ուժ չուներ: Բոլորին տեղավորեցին հիվանդանոցում:

Ահա սրանք էին կյանքի այն դրվագները, որոնք, ինչպես Էդուարդն էր ինքն իրեն ախտորոշել, մանուկ ժամանակ հոգեկան ցնցման պատճառ էին դարձել: Ցնցում, որից ամբողջ ուժով ուզում էր ազատվել: Դրա համար, իր կարծիքով, կար միայն մի ելք. կրկին մտնել իր խորունկ վախերի բույնը՝ գիտակցելով, որ խոսքն ինչ-որ մղձավանջի մասին չէ, այլ պարզապես իրականության: Պետք էր դեմ հանդիման կանգնել մեծ կոշիկներով մարդուն՝ հսկիչին: Միայն այդպես կհաջողվեր ձերբազատվել իրեն տանջող սարսափներից:

Ստամբուլում գիշերվա ժամը տասնմեկին, երբ կայարանի պետը բարձրացրեց դրոշակը՝ թույլ տալով, որ Արևելյան ճեպընթացը մեկնի, Էդուարդը ներքին թեթևություն զգաց: Ոչնչից չպետք է վախենար: Միաժամանակ գիտեր, որ երբ գնացքը հասներ Բուլղարիայի սահմանին՝ հետևում թողնելով Թուրքիան, իրեն շատ ավելի լավ կզգար:

Երկու օր անց հասավ Բեռլին: Կտրել անցել էր Եվրոպայի մի մասը, որպեսզի մասնակցեր մի համաժողովի, որին չէր հավատում: Սակայն նա առավելապես փորձելու էր գտնել այն մարդու հետքը, ում հետ իր կյանքում հազիվ մի երկու անգամ էր խոսել: Նա մտել էր մի երկիր, որից այդ մարդը վախենում էր և դարձել էր այդ երկրի ռասայական քաղաքականության ու անսահման փառամոլության զոհը:

Համաժողովը սկսվելու էր երկու օր հետո, և նա որոշեց գնալ Ունտեր դեն Լինդեն զբոսայգու կողմը, որտեղ գտնվում էր այն գրասենյակը, որը պետք է իրեն տրամադրեր համապատասխան հավաստագիրը: Խնամված ու մաքուր Բեռլինը նախապատրաստվում էր ամառային օլիմպիադային, որի մեկնարկը տրվելու էր օգոստոսի մեկին: Զգացվում էին իշխանությունների թափած ջանքերը, որոնք ուղղված էին զարգացմանը, կարգուկանոնի հաստատմանը և առաջադիմությանը: Նստեց տրամվայ, որն ամբողջովին նոր փոխադրամիջոց էր՝ անթերի համազգեստ ունեցող վարորդով ու հսկիչով: Բարձրացող ու իջնող մարդիկ լավ էին հագնված: Փողոցներն ու պողոտաները զերծ էին անգամ թղթի կտորից: Չկար մի բան, որ հակասեր համաշխարհային նոր կարգուկանոնի երկրի մայրաքաղաքի կերպարին: Երկիր, որը ձգտում էր առաջնորդել ողջ աշխարհին:

Էդուարդն իջավ Հումբոլդտի անվան համալսարանի մուտքի մոտ նախատեսված կանգառում: Պայմանավորված էր իր վաղեմի դասընկերոջ՝ Մարկուս Բաուերի հետ: Ֆրոյդի կրթաթոշակի շրջանակում նրա հետ սովորել էր Վիեննայում:

Մարկուս Բաուերն արդեն տեղում էր. կանգառի նստարանին նստած՝ թերթ էր կարդում: Հագնված էր շատ վայելուչ, ինչը վկայում էր, որ նա պատկանում էր վերնախավին: Էդուարդը ցանկանում էր զրուցել նրա հետ: Երբ Վիեննայում սովորում էին, թեև մտերիմ չէին, բայց ինչ-որ առումով համակրում էին միմյանց: Մարկուսը Բեռլինի ամենաազդեցիկ ընտանիքներից մեկի զավակ էր, և երբ Էդուարդը ստացել էր համաժողովին մասնակցելու հրավեր-նամակը, պարզվել էր, որ դրա կազմակերպիչներից մեկը հենց իր դասընկերն է: Մարկուսին անչափ հետաքրքրել էին Էդուարդի գիտական այն մեկնաբանությունները, որոնք վերաբերում էին բուժում ստացած հոգեկան հիվանդներին հասարակության մեջ կրկին ներգրավելուն, ինչպես նաև այդ բնագավառում նրա ունեցած փորձը:

Ընդ որում՝ Բաուերը Գերմանիայի հոգեբույժների ընկերության ղեկավարներից մեկն էր, ու Էդուարդը մտադիր էր նրանից տեղեկանալ Մաքս Շտեյնբերգի մասին:

Մարկուսը ողջունեց նրան՝ բարձրացնելով ձեռքն ու ժպտալով.

- Ինչպե՞ս ես, Էդուա՛րդ, ի՞նչ կասես Բեռլինի մասին: Հիմա մենք մի սքանչելի քաղաք ենք կառուցում, այդպես չէ՞:

Բաուերը, բեռլինցի լինելով, հպարտ էր ու գոռոզամիտ: Հարուստ պատմություն ուներ ժամանակակից այդ քաղաքը: Համաձայնեց. իրոք,

տպավորիչ քաղաք է: Մտան համաժողովի դահլիճ: Էդուարդը նկատեց, որ իր դասընկերը հարգված ու ճանաչված անձնավորություն է, ում բոլորը ողջունում էին ժպտալով: Մարկուսը նրան առաջարկեց, որ իր նոր ավտոմեքենայով՝ «Դայմլեր Բենցով», մի պտույտ կատարեն քաղաքի կենտրոնով:

Մարկուսի կարծիքով՝ Գերմանիան ապրում էր իր պատմական լավագույն ժամանակաշրջանը, ինչի համար պարտական էին իրենց մեծ առաջնորդին՝ Ադոլֆ Հիտլերին: Էդուարդին ասաց, որ իրեն է հանձնարարված օլիմպիադայի ընթացքում սանիտարական աշխատանքների համակարգումը, և դա մեծ պատասխանատվություն է, ինչպես նաև՝ մեծ պատիվ:

Հետո միասին ճաշեցին ռեստորաններից մեկի՝ Շպրեե գետի վրա բացվող սրահում: Ռեստորանը հիասքանչ էր՝ մաքրամաքուր ու ճաշացանկով հարուստ, «ողողված» «Ռիսլինգ» գինով: Մի քանի բաղեր էին լողում, իսկ մի փոքրիկ առագաստանավ ակոսում էր ջուրը՝ ստեղծելով խաղաղության ու ներդաշնակության պատկեր:

- Այո՛, Էդուա՛րդ: Ֆյուրերի շնորհիվ Գերմանիան աշխարհում վերջապես կգրավի իրեն հասանելիք տեղը: Ինչպես տեսնում ես, այստեղ օրեցօր է ամեն բան դեպի լավը գնում: Գործազրկություն գրեթե չկա, սնկի պես աճում է կենսամակարդակը, կառուցվում են մեծ ենթակառույցներ, ավտոմայրուղիներ, երկաթուղիներ, անգամ՝ օդանավակայաններ: Արդեն կարող ես տեսնել այդ նոր Բեռլինը: Չես պատկերացնի մեր առաջնորդի քաղաքաշինական գաղափարները: Նրան ոգեշնչում է դասական Հունաստանի ճարտարապետությունը: Կասկած չկա, որ Գերմանիան կդառնա քաղաքակիրթ աշխարհի կենտրոնը:

Էդուարդ Բողոսյանը մտածեց, որ հասել է այն պահը, երբ հարկ է շոշափել Մաքս Շտեյնբերգին առնչվող խնդիրը:

- Այո՛, Մարկո՛ւս, ես ցնցված եմ: Ես գիտեի, որ Գերմանիան մեծ ձեռքբերումների է հասել, բայց այս ամենն ինձ համար անսպասելի էր: Ի դեպ, ինչ վերաբերում է դասական աշխարհին: Բանն այն է, որ կինս՝ Էթելն ու ես ծանոթացել ենք արվեստի պատմության մի պրոֆեսորի՝ դասական աշխարհի մասնագետ Մաքս Շտեյնբերգի հետ: Այդ բացառիկ լուսանկարչին կինս հանդիպել է Բաալբեկի ավերակներում: Որոշ ժամանակ առաջ նա աշխատում էր այստեղ՝ Բեռլինի համալսարանում, հետո տեղափոխվել էր Վիեննա, քանի որ ծննդով այդ քաղաքից էր: Բավականին մտերմացել էինք նրա հետ: Յուրահատուկ անձնավորություն է՝ քաջատեղյակ արվեստին ու լուսանկարչությանը: Երբ պատրաստ-

վում էր մեկ այլ պրոֆեսորի հետ գնալ Միացյալ Նահանգներ, նրան… այստեղ՝ Բեռլինում, ձերբակալեցին, և որքան մեզ հայտնի է, նրան տարել են Էստերվեգենի համակենտրոնացման ճամբար…

Մարկուս Բաուերը, անախորժ քմծիծաղը դեմքին, նայեց նրան:

- Այդ Մաքս Շտեյնբերգը կոմունի՞ստ է, հրեա՞, թե՞ երկուսը միասին: Ինչպես գիտես, մեր երկիրը շատ թշնամիներ ունի, ովքեր ուզում են կործանել այն:

- Օ՜հ, ո՛չ, Մարկո՛ւս, նա հրեա է, բայց նրա առումով որևէ վտանգի մասին խոսելն անհեթեթ է: Միայն ուզում եմ գտնել նրան ու ինձ հետ տանել Լիբանան: Նա ինձ մի բան է խոստացել, որը պետք է կատարի:

Սակայն Մարկուս Բաուերին դա չէր հետաքրքրում: Էդուարդը նկատեց, որ իր ընկերը փոխեց իր հետ խոսելու տոնը:

- Ների՛ր ինձ, Էդուա՛րդ, բայց ես նախընտրում եմ այլ բաներից խոսել: Հրեաներն ու նրանց խնդիրներն ինձ ամենևին չեն հուզում: Այդ մարդիկ արժանի չեն, որ նրանց մասին խոսենք: Հասկանո՞ւմ ես:

- Քեզ չեմ հասկանում, Մարկո՛ւս: Ֆրոյդը հրեա է, ինչպես և Էյնշտեյնը, որ հայտնագործել է հարաբերականության տեսությունը, նաև՝ Հայնեն ու Մենդելսոնը և նրանց նման շատերը: Ի վերջո, ես միայն խնդրում եմ, որ ինձ օգնես՝ գտնեմ նրան:

Մարկուս Բաուերը ոտքի կանգնեց գոռոզամտորեն և օտարոտի կեցվածքով: Նրա համար խոսակցությունն ավարտված էր:

- Ցավում եմ, Էդուա՛րդ: Կարծում էի, թե ավելի հետաքրքիր թեմայի շուրջ կխոսենք: Թերևս տեսնվենք համաժողովում: Մնաս բարով:

Սակայն Էդուարդը մտադիր չէր այդքան հեշտ զիջել: Նա ուզում էր գործին բարեկամական ընթացք տալ, բայց արի՛ ու տե՛ս, որ այդ ուղին ճիշտ չէր:

- Մի րոպե, Մարկո՛ւս: Մի բան ունեմ, որ գուցե քեզ կհետաքրքրի: Հիշո՞ւմ ես, թե սա ինչ է,- հարցրեց Էդուարդը և պիջակի ծոցագրպանից հանեց մի նամակ,- դու ես սա Ֆրոյդին գրել: Նրա քարտուղարուհին է ինձ սա ուղարկել, որ վերադարձնեմ քեզ: Իսկապես սա մի հազվագյուտ փաստաթուղթ է, որում դու Ֆրոյդին դիմում ես՝ նրան համարելով ժամանակակից հոգեբուժության հայր: Ուշադրություն դարձրո՛ւ այս հատվածին. «Մեծարգո՛ դոկտոր Ֆրոյդ: Եթե հոգեբուժությունը «հրեական գիտություն է», ապա ինքս էլ եմ ինձ համարում հրեա: Ինձ համար մեծ պատիվ կլինի, եթե ինձ համարեն ձերոնցից մեկը» և այլն, և այլն: Այնպես որ՝ եթե ինձ չօգնես, որ գտնեմ Մաքս Շտեյնբերգին, ապա քեզ խոստանում եմ, որ այս նամակի պատճենները կբաժանվեն համաժողովի մասնակիցներին:

Մարկուս Բաուերը պայթելու վրա էր: Զսպեց իրեն և միայն քրթմնջաց.

- Դու բոզի տղա ես:

Այնուհետև, առանց շրջվելու, քայլեց դեպի Ունտեր դեն Լինդենը: Էդուարդը մտածեց, որ բավական էր որևէ հրեայի վերաբերյալ մի ակնարկ, ում գտնելու համար ընդամենը պետք էր օգնել, որպեսզի դասընկերը ցույց տար իր իսկական դեմքը: Վեր կացավ և ուղղվեց դեպի տաքսիների կանգառը: Փորձն իրոք ուսուցողական էր:

Հաջորդ առավոտյան, երբ բանալին թողնում էր դռնապանին, վերջինս նրան մի նամակ հանձնեց՝ իր սենյակի համարով և առանց հետաղարձ հասցեի: Որոշ կասկածանքով բացեց այն և կարդաց՝ «Ժառանգական կենսաբանության և ռասայական հիգիենայի ինստիտուտ: Ֆրանկֆուրտի համալսարան»: Նամակը մեքենագրված էր ու անստորագիր, ոչ էլ որևէ նշում կար այն մասին, թե ում է ուղարկված: Այդուհանդերձ, հասկացավ, որ գրության հեղինակը Մարկուս Բաուերն է, ով չէր ուզում ներքաշվել այդ գործի մեջ, սակայն մի լավ խորհրդածելուց հետո որոշել էր օգնել՝ երկտողում անգամ չնշելով Մաքս Շտեյնբերգի անունը: Էդուարդն անգամ սենյակ չբարձրացավ: Ուղղվեց դեպի երկաթուղային կայարան և տեղեկացավ, թե երբ է շարժվելու Ֆրանկֆուրտ մեկնող առաջին գնացքը: Ժամը ինն էր, իսկ գնացքը շարժվելու էր տասն անց կեսին: Անձնագիրն ու փողն իր մոտ էին: Տոմս գնեց. վիճակը նետված էր: Յոթ ժամ անց՝ հինգն անց կեսին, նա արդեն Ֆրանկֆուրտի կենտրոնական կայարանի կառամատույցում էր: Երկաթուղային ոստիկանությունը նրան խնդրեց, որ ներկայացնի անձնագիրը՝ բացատրելով, որ դա սովորական ստուգում է՝ պայմանավորված ուղևորների անվտանգությամբ: Նա ինստիտուտից ընդամենը հինգ հարյուր մետր հեռավորության վրա մի հյուրանոց գտավ: Որոշեց ընթրել ու մի պտույտ տալ՝ քաղաքի կենտրոնին ծանոթանալու համար: Ամեն ինչ հավաքված էր ու մաքուր: Գնացքը, որով Ֆրանկֆուրտ էր ժամանել, նոր էր: Մարդիկ խոսում էին ցածրաձայն կամ թերթ էին կարդում: Այդ ամենը ոչ մի նմանություն չուներ Բեյրութի հետ: Մինչ իջնում էր երեկոն, երկար զբոսնեց: Մի շարք հաստատությունների ճակատներին գոթական տառերով, որոնք այնքան հարգի էին գերմանացիների շրջանում, կարելի էր կարդալ. «Հրեաների մուտքը ցանկալի չէ այստեղ»: «Իսկ հայերի՞նը…»,- ինքն իրեն հարցրեց Էդուարդը: Չէ՞ որ հենց նրանք՝ գերմանացիներն էին համագործակցում թուրքերի հետ, երբ զանգվածաբար կոտորում էին հայերին: Իրենց աչքերը փակում կամ ուրիշ տեղ էին նայում, երբ թույլ էին տալիս, որ իրենց դաշնակից կոչվածներն ահավոր ոճիր իրագործեն:

Գուցե և ապագայում որևէ մեկը մի պաստառի վրա գրի՝ «Նացիստների մուտքը ոչ մի տեղ ցանկալի չէ»:

Ինստիտուտը մի դասական շենք էր, սակայն վերջերս բարեփոխվել էր, որպեսզի ծառայի նոր գործունեությանը: Այդ հաստատությունը բացառիկ նշանակություն ուներ նացիստների ռասայական քաղաքականության համար, քանի որ այդտեղ գիտականորեն ապացուցում էին ընտրության ու եվգենիկայի տեսությունները, ռասայական չափանիշները, ստորադաս մարդկանց (այդպես էին անվանում հրեաներին) թերզարգացածությունը: Էդուարդը մտածեց ու հեգնորեն հանգեց այն եզրակացությանը, որ նացիստներին անհնարին կլինի այդ տեսություններն ապացուցելը, սակայն կեղծ քարոզչության շնորհիվ կհասնեն այն բանին, որ կփոխեն ողջ հրեական համայնքի մասին առկա պատկերացումները:

Հաջորդ օրը՝ առավոտյան, նա մոտեցավ ինստիտուտին: Հարցրեց տնօրենին: Ասացին, որ մեկնել է Բեռլին՝ մասնակցելու հենց այդ օրը՝ երեկոյան մեկնարկող հոգեբուժության համաժողովին: Ինչպիսի՜ զուգադիպություն… Չէ՞ որ ինքն էլ է այդ համաժողովի զեկուցողներից: Փոխտնօրենը փոխեց դեմքի արտահայտությունը:

- Կուզենա՞ք շրջել և ծանոթանալ ինստիտուտին,- հավանաբար կարծելով, որ հյուրն իրենց յուրայիններից է, առաջարկեց փոխտնօրենը:

Էդուարդն ընդունեց հրավերը: Փոխտնօրենը սկսեց խոսել ռասայական ակնհայտ տարբերություններից: Նրան ասաց, որ այդ հրեաները ռասայական խառնածիններ են, իրականում՝ արիացիների ճիշտ հակապատկերը: Ինստիտուտում ուսումնասիրում էին այն տարբերությունները, որոնց միջոցով տարբերակելու էին հրեաներին: Իրականացնում էին գիտական բազմաբնույթ փորձեր: Էդուարդին նա ցույց տվեց մի ձողակարկին՝ գանգի չափերը որոշելու համար, և բացատրեց, թե ինչպես են այն օգտագործում: Ընդ որում՝ հենց նախորդ օրը ինստիտուտ էին այցելել վարժարաններից մեկի սաները, ու որքան էլ Էդուարդը չհավատա, բայց հաջողվել էր բացահայտել տասներեքամյա մի հրեուհու, թեև առաջին հայացքից նա արտաքնապես կարող էր գերմանուհու տեղ անցնել: Փոխտնօրենը պարզաբանեց, որ ինստիտուտում իրենք ունեն մի քանի հոգի, որոնց վրա փորձեր են կատարում, այսինքն՝ չափումներ և այլն. «Դուք կեղծ հայելիներով պատուհաններից կարող եք նրանց վրա մի հայացք գցել: Դա Ձեզ կհետաքրքրի՞»:

Դոկտոր Բողոսյանն անմիջապես համաձայնեց: Իհա՛րկե: Մանավանդ որ այդտեղ էր՝ այդ հեղինակավոր կենտրոնում: Փոխտնօրենը

ժպտաց: Այո՛, նրանք իսկապես շատ հպարտ էին իրենց կատարած աշխատանքով:

- Ի դեպ, Դուք իսկապես հա՞յ եք: Հարյուր տոկոսանոց հա՞յ: Էդուարդը հաստատեց՝ հարյուր տոկոսանոց: Որքանով իրեն հայտնի է, իր նախնիները բացառապես զտարյուն հայեր են:

- Շատ հետաքրքիր է,- ասաց փոխտնօրենը՝ դոկտոր Յուլիուս Վերֆելը:

Զտարյուն ռասա… Պարզվում է՝ Էդուարդն ինքն էլ այդ զտարյուն ռասայի մի նմուշ է: Հազվադեպ երևույթ…

- Դուք դեմ չե՞ք լինի, եթե Ձեզ հրավիրեն մարդաբանական չափումների:

- Ո՛չ,- ժպտալով պատասխանեց Էդուարդը,- ուրիշ անգամ: Գուցե համաժողովի ավարտից հետո:

Փոխտնօրենը նրան ուղեկցեց կիսամութ միջանցքով: Երկարավուն պատուհաններից կարելի էր տեսնել հիվանդներին: Յուլիուս Վերֆելը նրանց հատուկ «պացիենտներ» էր անվանում: Ունեին տասներկու հրեաներ, ովքեր ներկայացնում էին աշխարհի տարբեր մասերը՝ աշքենազ, սեֆարդի, արևելյան, աֆրիկացի, ասիացի, միշլինգ (այսինքն՝ կիսով չափ հրեաներ), անգամ՝ պաղեստինցի հրեաներ՝ իսկական բիբլիական հրեաներ: Նաև գնչուներ կային: Ա՜հ, այո՛... Գնչուները նույնպես արժանի էին ուսումնասիրման: Էդուարդն անմեղորեն հարցրեց.

- Նրանք այստեղ իրենց կամքո՞վ են գտնվում, թե՞ բանտարկյալներ են:

- Դե՛ ինչ,- փոխտնօրենը նյարդային հազաց,- խոսքը հանցավոր, մեղսավոր և նման մարդկանց մասին է... Պատկերացնո՞ւմ եք՝ ամեն դեպքում նրանք հրեաներ են կամ գնչուներ, հետևաբար իրավունք չունեն բողոքելու: Վերջ ի վերջո, այս ամենն արվում է՝ ի շահ գիտության:

Էդուարդը գլխի շարժումով համաձայնեց: Իհարկե, նրան հասկանում էր. գիտությունն ամեն ինչից վեր էր: Փոխտնօրենը՝ հպարտ իր հրաշալի ինստիտուտով, գոհունակությամբ ժպտում էր: Նա համոզված էր, որ ֆյուրերի շնորհիվ եվգենիկան կհասնի գերմանական զտարյուն ռասայի ստեղծմանը՝ ի տարբերություն մյուս ազգերի: Յուլիուս Վերֆելը, ցույց տալով «նմուշներին» (ինչպես ինքն էր նրանց անվանում), խոսում էր ցածրաձայն.

- Տեսնո՞ւմ եք այս գնչուհուն: Նա մի արտասովոր նմուշ է: Նրան բերել են Ռումինիայի սահմանից: Նրա ձեռքերի ու ոտքերի մատները վեցն են: Ափսոս, որ տեղափոխման ընթացքում նույն արատն ունեցող նրա

երեխան մահացավ: Ի՜նչպիսի աղետ… Հիմա անցնենք հրեաներին: Ահա սա լեհ հրեա է, ով անօրինական ճանապարհով մտել է Գերմանիա: Ինչպես տեսնում եք, հրաշալի նմուշ է. օժտված է ամենաբնորոշ դիմագծերով: Նայեցե՛ք նրա բերանին, վերին շրթունքին: Մենք հմայված ենք նրանով: Գուցե հարկ լինի ավելի մանրամասն ուսումնասիրել նրանց, որոնց մինչ այժմ հերձել ենք…

- Հերձե՞լ եք: Հերձել եք որևէ հրեայի՞…,- Էդուարդը չկարողացավ զսպել իր ահավոր զարմանքը:

- Օ՜հ, իհարկե: Բնականաբար: Դա նման է դիահերձմանը: Այդպես նրանց ավելի լավ ենք ուսումնասիրում: Լսե՛ք, մենք աշխատում ենք՝ ի շահ գիտության:

Էդուարդը հազիվ զսպեց փսխոցը: Նա այդ նացիստ ծառայողին, ով ամեն ինչ դիտարկում էր իր կուսակցության տեսանկյունից, չէր կարող ասել այն, ինչ մտածում էր: Այդ պահին նա ոչինչ չէր կարող անել, որպեսզի կանխեր այն, ինչ տեղի էր ունենում սարսափների այդ հաստատությունում: Էդուարդը նորից գլխով համաձայնության նշան արեց: Փոխտնօրենն էլ կրկին ժպտաց՝ փոքր-ինչ բռնազբոսիկ: Գուցե Յուլիուս Վերֆելը պետք է ավելի զգուշավոր լիներ, սակայն, ի վերջո, դիմացինը գործընկեր էր, ով, բացի դրանից, Բեռլինի համաժողովի մասնակից էր:

- Լավ, անցնենք հաջորդին: Ահա Ձեր առջև հրեա կին է՝ գրեթե ինֆսուն տարեկան: Սակայն մտավոր ունակությունները շատ լավ վիճակում են: Հիշում է այն ամենը, ինչ տեղի է ունեցել իր կյանքի ընթացքում: Անհավատալի է: Նևրոլոգիական ծառայություններն արդեն իսկ սկսել են մրցակցել՝ մահանալուց հետո նրա ուղեղը հերձելու համար: Աներևակայելի է, այնպես չէ՞: Այդ կնոջը մենք թուղթ ու մատիտներ ենք տվել, և նա նկարում է այն ամենը, ինչ որ հիշում է: Մաքրելու համար անգամ ռետին չի գործածում: Նա հիպերտիմեստիկ սինդրոմի բացառիկ դեպք է: Հրաշալի է: Իսկ հիմա հաջորդը, ով նույնպես շատ հետաքրքրական դեպք է. անտիկ աշխարհի արվեստի պատմության պրոֆեսոր Վիեննայում և Բեռլինում, նաև լուսանկարիչ:

Էդուարդը զգաց, թե որքան ուժգին է իր սիրտը բաբախում, սակայն չպետք է ոչ մի կերպ մատներ իրեն: Տեսնես այդ պահին ինչ մտքեր էին պտտվում Մաքս Շտեյնբերգի գլխում…

- Այո՛, Ձեզ ասում էի, որ այս անհատը շատ հետաքրքրական է: Հրեա համասեռամոլ է: Մի քանի օր հետո նրան ամորձատելու ենք, որպեսզի մի երկու շաբաթվա ընթացքում հետևենք նրա որոշակի ռեակցիաներին: Սա անչափ ուշագրավ դեպք է, այնպես չէ՞, դոկտո՛ր:

Էդուարդը ճակատը համարյա հպել էր կեղծ հայելիներին: Այնտեղ՝ երեք մետր հեռավորության վրա, իր ընկերն էր՝ Մաքսը՝ մեկնված վիրահատական սեղանին, դաստակները, ոտքերի կոճերն ու գոտկատեղը սեղանին կապված. արգելել էին անգամ մի թեթև շարժում անելը:

Էդուարդն անասելի ճիգ գործադրեց, որպեսզի խոսակցությունը շարունակի բնականոն հունով:

- Այո՛, իսկապես շատ հետաքրքիր է: Կարո՞ղ եք ինձ ասել, թե ինչու եք նրան կապած պահում: Նրա ռեակցիաները կատաղի՞ են: Ավելի լավ չէ՞ր լինի ուսումնասիրել նրա բնականոն վարքը:

- Այո՛, ինչ խոսք: Սակայն այս նմուշը, դոկտո՛ր, շատ արժեքավոր է: Երեք անգամ փորձել է ինքնասպան լինել: Ստիպված նրան ուժ գործադրելով ենք կերակրում, այլապես կարող ենք վտանգել ու կորցնել նրան: Նա մեր համեմատական անալիզի բաղկացուցիչ մասն է, մենք շատ ժամանակ ենք նվիրել նրան ու այնքան ջանք ենք թափել, որ չենք թողնի՝ նա հենց այնպես անհետանա: Այդ հրեաները շատ եսասեր են, գիտե՞ք: Թեև եթե ինձ մնար՝ թող բոլորն էլ ջնջվեն երկրի երեսից: Ես նրանց տանել չեմ կարողանում: Դժվար է պատկերացնելը, թե որքան ժամանակ են նրանք չարաշահել մեր մեծահոգությունը: Ի վերջո, ի՞նչ կարծիքի եք, դոկտո՛ր: Թո՛ւյլ տվեք ասել Ձեզ, որ մենք շատ գոհ ենք մեր ձեռքբերումներով: Դուք երբևէ այսպիսի կենտրոն տեսե՞լ եք: Այսպիսին կարող է լինել միայն Գերմանիայում:

Էդուարդը սկսեց շատ արագ խորհել: Մաքսին այդտեղից դուրս բերելու միակ հուսալի հնարավորությունը կարող էր ապահովել իր անեղը կամ Ավգուստուս Նյումանը: Իրենց տրամադրության ներքո նրանք ամենաշատը երկու շաբաթ ժամանակ ունեին:

Փոխտնօրեն Վերֆելը նրան ուղեկցեց մինչև դուռը, սեղմեց ձեռքն ու կրկին ժպտաց և կարծես թե ինչ-որ առումով զղջում էր, որ այդքան անկեղծ էր եղել: Արտասահմանի բժիշկներն անգամ պատկերացում չունեն, թե այնտեղ որքան գործ են անում հանուն եվգենիկայի: Անգամ ֆյուրերն էր իր վերջին ելույթում անդրադարձել այդ հարցին. «Գերմանիայի համար ամենակարևորը ռասան է»: Տերերի՛ ռասան… Փոխտնօրենը վերջին անգամ գլուխը թեթևակի խոնարհեց և փակեց ինստիտուտի դուռը:

Նույն օրը՝ երեկոյան, Էդուարդը վերադարձավ Բեռլին: Գերմանիայում փոստի և հեռագրատան ծառայությունները գործում էին շուրջօրյա: Նա իր կնոջը հեռագրեց. «Էթե՛լ, վերջապես նրան գտանք Ֆրանկֆուրտի Ժառանգական կենսաբանության և ռասայական հի-

գիենայի ինստիտուտում: Հայրդ կկարողանա՞ է մի բան անել: Մաքսին մնում է ընդամենը տասնհինգ օր: Քեզ սիրող ամուսին՝ Էդուարդ»:

Այդքանը լիովին բավարար էր: Մնացած հարցերով կզբաղվեր Էթելը. ինքը լավ գիտեր իր կնոջը: Այնուհետև վերադարձավ հյուրանոց, ցնցուղ ընդունեց և հեռախոսով խնդրեց, որ իր սենյակ բերեն մեկ սենդվիչ ու մեկ շիշ գարեջուր: Քաղցած էր ու հոգնած, բայց՝ հուսադրված: Էթելը միշտ նրան ասում էր՝ «Ճակատագիրը կարելի է փոխել, այնտեղ ոչինչ գրված չէ»:

50. ՈՍԿԵԶՕԾ ՔԱՐԵՐԸ
ՀՈՒՆԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1936թ.

Յոթ օր անց շվեյցարական սահմանի վրա Շտեյնբերգին հանձնեցին Կարմիր խաչին: Նրա հոգեվիճակը շատ փխրուն էր. նա հրաժարվեց անգամ մի բառ արտասանելուց: Շաֆհաուզենում նրան քննող դատական բժիշկը նրա վիճակը որակեց որպես «հոգեկան ուժեղ ցնցում»: Շվեյցարացիները նույն օրը՝ երեկոյան, նրան տեղափոխեցին Բեռն՝ Մեծ Բրիտանիայի դեսպանատուն, որտեղ նրան արդեն սպասում էին: Դեսպանատանը նրան կրկին բուժզննման ենթարկեցին թերապևտներն ու հոգեբանները, ինչից հետո՝ քսանչորս ժամ անց, նա թռչում էր Լոնդոն, ուր նրան սպասում էր Թոմաս Հարդինգը:

Բրիտանական հետախուզության ծառայությունների համար այլ երկրների ծառայությունների հետ, այսպես ասած, «քարտեր» փոխանակելը նորություն չէր: Երբեմն պատահում էր:

Այդուհանդերձ, Թոմասը ստիպված էր մեկ ամբողջ ժամ համոզել SIS[83]-ի պնդաճակատ ղեկավարին: Ի վերջո, այդ ծառայությունը լուրջ խնդրանքներով հաճախ էր դիմել ինչպես Նյումանին, այնպես էլ՝ իրեն: Ըստ այդմ՝ իրենց խնդրանքը՝ Շտեյնբերգին Գերմանիայից հանելը, մի մեծ բան չէր:

Ժառանգական կենսաբանության ինստիտուտի տնօրենը դեռ Բեռլինի համաժողովում էր, երբ եկավ Մաքս Շտեյնբերգին շվեյցարացիներին հանձնելու հրամանը: Առարկելն անիմաստ էր. հրամանը ստորագրված էր մի երրորդ մարդու կողմից, սակայն այն անձամբ ուղարկել էր ինքը՝ Ռեյհարդ Հեյդրիխը՝ Ռեյխի անվտանգության ծառայության՝ SD[84]-ի պետը:

Ինստիտուտի փոխտնօրենը՝ Յուլիուս Վերֆելը, ուղեկցեց երկու տեսուչներին, ովքեր եկել էին Շտեյնբերգին փնտրելու: Նրա կապանքներն արձակեցին ու հենց հիվանդանոցային խալաթի վրայից վերարկու հագցրին: Վերֆելը նրա համար մի զույգ կոշիկ գտավ, որը նրան հագցրին առանց կիսագուլպայի ու կապիչների. կոշիկները, սակայն, ոտքերից դուրս չէին գալիս, որովհետև երկու համար փոքր էին: Անկախ ամեն ինչից՝ Մաքս Շտեյնբերգը չբողոքեց ու ոչ մի խոսք չասաց: Նրա ինքնությունն ապացուցող միակ փաստաթուղթն այդ ինստիտուտի

[83] SIS կամ MI 6՝ զինվորական հետախուզություն, 6-րդ դեպարտամենտ (հղումը՝ հեղինակի):
[84] SD Sucherheitsdienst՝ Երրորդ Ռեյխի քաղաքական ոստիկանություն:

քարտն էր, որի վրա նրա անֆաս ու կիսադեմ լուսանկարներն էին և վեց թվից բաղկացած մի համար, որը համընկնում էր դաստակի վրա դաջված համարակալման հետ: Այնուհետև, նրա թևերն ընկած, իջան աստիճաններով, նրան նստեցրին «Մերսեդեսի» հետնամասի նստատեղին, որտեղ տեղավորվել էր երրորդ տեսուչը, ու առանց հրաժեշտ տալու՝ հեռացան Ժառանգական կենսաբանության ինստիտուտից:

Միակ բանը, որով Վերֆելը կարող էր արդարանալ Մաքս Շտեյնբերգի հանձնման համար, Հեյդրիխի հանձնարարականն էր: Շարունակ մտածում էր, թե ինչ է ասելու իր տնօրենին, ով անձամբ էր ուսումնասիրում Մաքս Շտեյնբերգին: Վերջինիս տվյալները շատ կարևոր էին տնօրենի «Հուդայականությունն ու հոմոսեքսուալիզմը» թեմայով աշխատության համար, որում ցույց էր տրվում հրեաների անառակությունը: Նա սպասում էր, որ իր ուսումնասիրությունը, որն ավարտվելու էր «պացիենտի» ամորձատմամբ և հաջորդ ամիսների ընթացքում մի քանի հորմոնալ անալիզներով, լայն արձագանք կստանա: Այդ հարցը, սակայն, արդեն փակված էր:

Երբ ինքնաթիռը վայրէջք կատարեց Լոնդոնում, Թոմասը մոտեցավ պատգարակի վրա տեղափոխված Մաքս Շտեյնբերգին: Նրա աչքերը փակ էին. հավանաբար հանգստացնող դեղամիջոց էին ներարկել: Թոմասը հանգստացած շունչ քաշեց: Մաքսին տանելու էին ռազմածովային հոսպիտալ, որտեղ բուժզննում էր անցնելու ու որոշ ժամանակ մնալու էր այդտեղ: Ամենակարևորն էլ այն էր, որ նա արդեն դուրս էր պրծել Գերմանիայից:

Թոմաս Հարդինգն ուղղվեց դեպի Բրոդվեյ Բիլդիգսի վրա գտնվող SIS-ի գրասենյակ: Այնտեղ նա անձամբ ողջունեց տնօրենին՝ Հյու Սինկլերին, ով բոլորին հայտնի էր որպես «Quex»: Սինկլերը պարզապես ժպտաց ու ասաց. «Դու ինձ պարտք ես մնում, տե՛ս»: Այդպես էր ընդունված նրանց միջավայրում: Հենց այդտեղից նա մի հեռագիր ուղարկեց Էթելին. գիտեր, որ Էդուարդը դեռ վերադարձի ճանապարհին էր:

«Սիրելի՛ Էթել: Մաքսը լավ է, արդեն Լոնդոնում է: Էդուարդը գերազանց հաջողացրեց, իսկ մենք արեցինք այն, ինչ կարողացանք: Կյանքում մարդ իրեն երբեք չպետք է պարտված համարի: Քո հայր՝ Թ. Հ.»:

Էդուարդը երկու օր անց հասավ Բեյրութ: Մասնակցել էր համաժողովի աշխատանքային երեք օրերի աշխատանքներին և նույնիսկ մնացել էր լրացուցիչ ևս մեկ օր, քանի որ մասնակիցներին ծանոթացնելու էին եվգենիկայի նոր գաղափարներին:

Մարկուս Բաուերին Էդուարդը միայն հեռվից տեսավ: Պարզ էր, որ նա խույս էր տալիս, ոչ էլ ինքը ջանաց, որ նրան մոտենա: Բաուերին ասելիք չուներ:

Թողեց Բեռլինը և գնացքով ճանապարհ ընկավ: Գիշերվա կեսին, երբ գնացքը կայարաններից մեկում կանգ էր առել, արթնացավ և ուղղվեց վագոնի մահճակալին՝ տարօրինակ մի բան զգալով. մղձավանջներն անհետացել էին:

Երբ Բեյրութում նավից իջավ, Էթելը նրան նայում էր գորովանքով ու հարգալից: Էդուարդն արդեն ուրիշ էր, ու կինն անմիջապես դա նկատեց:

- Գիտե՞ս նորությունը… Իսպանիայում քաղաքացիական պատերազմ է սկսվել:

1936 թվականի հուլիսի տասնինն էր:

Պրոֆեսոր Մաքս Շտեյնբերգը գրեթե երեք ամիս մնաց ռազմածովային հոսպիտալում: Այլ հիվանդությունները չհաշված՝ նա տառապում էր սիրտ-անոթային շնչառական սուր անբավարարությամբ: Նրան բուժող բժիշկն ասաց, որ եթե հոսպիտալ չընդունվեր, գուցե և մահանար:

Մաքսն անհաղորդ էր, իրականության հետ առնչվելու ոչ մի ցանկություն չուներ, թեև ընդհանուր առմամբ կարծես իրեն նորմալ էր զգում: Թոմասը նրան տուն տարավ: Մաքսը շարունակում էր իրեն անտարբեր պահել, ասես շրջապատում իրեն ոչ մի բան չէր հետաքրքրում: Այդ ժամանակ Սարան առաջարկեց.

- Թոմա՛ս, սիրելի՛ս, կարծում եմ, որ մեր բարեկամ Մաքսն իրեն լավ կզգա, եթե մենք առաջիկա ուղևորության ժամանակ մեզ հետ նրան Բեյրութ տանենք: Ի՞նչ կարծիքի ես: Նա մեզ շնորհակալ կլինի այդ փոփոխության համար: Ես համոզված եմ:

Թոմասը ոչ մի առարկություն չուներ: Հուլիսի վերջերին նրանք նավ նստեցին՝ Բեյրութ գնալու համար: Դա վերջին ուղևորությունն էր լինելու «Սթար օֆ Ինդիա»-յով, քանի որ հետագա գործարկման համար այն արդեն հին էր: Նրանք կկարոտեն «իրենց նավախցիկը», որտեղ տեղավորվելով՝ իրենք տարիներ շարունակ նավարկել էին:

Նրանք լրացուցիչ նավախցիկ վարձեցին Մաքսի և նրան գիշեր-ցերեկ խնամող բուժակի համար: Մաքսի բրիտանական անձնագիրը Հյու Սինկլերի նվերն էր՝ հակիրճ գրությամբ՝ «Թոմաս Հարդինգի բարեկամները Մեծ Բրիտանիայի բարեկամներն են»:

Ճանապարհորդության ընթացքում Բիսկայան ծոցից մինչև Ալբորանի ծով նրանց ուղեկցեց ռազմածովային մի նավ: Իսպանիայում

բռնկված պատերազմը ստիպում էր հսկել բոլոր նավերը, որոնք տրանզիտով անցնում էին իսպանական կամ հարակից տարածքային ջրերով: Ոչ մի միջադեպ չեղավ, և տասն օր անց մտան Բեյրութ:

Երբ Մաքս Շտեյնբերգը նավից իջավ, նավամատույցում Էթելը մոտեցավ նրան: Այդ պահին կատարվեց արտասովոր մի բան: Մաքսը նրան մոտեցավ՝ շշնջալով. «Ողջույն, Էթե՛լ, քեզ շատ եմ կարոտել»: Էթելը չդիմացավ ու փղձկաց, իսկ Մաքսը հանկարծ դեմքը ծածկեց ձեռքերով ու երեխայի պես սկսեց լալ: Էթելը նրան գրկեց: Այդ պահին Մաքսը հետ եկավ դժոխքից: Ոտք դնելով այն հողին, որտեղ գլխով անցած փորձություններից հետո առաջին անգամ իրեն ապահով զգաց, վերագտնելով այն կնոջը, ում կերպարը վերջին ամիսներին նրա համար ապահովության ու համակրանքի խորհրդանիշ էր դարձել, Մաքսը կարծես կյանքի բուռն զարթոնք ապրեց: Նա Էթելի տանը մնաց մեկ ամիս: Մի քանի օր անց նա արդեն մենակ դուրս էր գալիս և քաղաքում զբոսնում՝ վերստին վերադառնալով կյանքի բնականոն առօրյային:

Որոշ ժամանակ անց Լոնդոնից ստացան մի ծանրոց՝ հասցեագրված Թոմաս Հարդինգին, վրան մակագրված՝ «Փխրուն: Չհարվածել»:

- Սա թերևս Ձերն է,- ասաց Թոմասը՝ դիմելով Մաքսին,- Ձեր փոխարեն՝ ես դա կբացեի:

Ժոզե Շաբրին բերեց պտուտակահանը, աքցանը և օգնեց, որ Մաքսը բացի փայտյա արկղը: Նրա մեջ դրված էր հրաշալի փաթեթավորված ֆոտոխցիկ, որը հենց Մաքսինն էր:

- Հիմա Դուք կարող եք գնալ Բաալբեկ՝ Ձեր ոսկեզօծ, հրաշալի քարերի հետևից,- ասաց Թոմասը:

Ֆոտոխցիկը ձեռք էր բերվել հանրային աճուրդներից մեկի ժամանակ, երբ վաճառքի էր հանվել հրեաներից առգրավված ունեցվածքը: Մամուլում հրապարակվել էր այդ ֆոտոխցիկի վաճառքի մասին: Այն Բեռլինում գնեց Մեծ Բրիտանիայի դեսպանատան մշակութային կցորդը, ով լուսանկարչության մեծ սիրահար էր: SIS-ը միջամտեց այդ գործին, քանի որ ցանկանում էին ուսումնասիրել այդ հազվագյուտ ապարատը և նրա օպտիկական սարքը: Ծառայության սպաներից մեկն էլ, ով ուսումնասիրում էր Մաքս Շտեյնբերգի թղթապանակը, Սինկլերին հայտնեց այդ մասին: Տնօրենն էլ հանձնարարեց, որ Թոմաս Հարդինգի միջոցով այդ ֆոտոխցիկը վերադարձվի տիրոջը:

Մաքսն այնպես հուզվեց, որ ձեռքերի ափերով ծածկեց աչքերը: Այնուհետև ինքն իրեն տիրապետեց և ասաց.

- Լավ: Դուք եք գտել այս խցիկը, իսկ ես, օգտվելով այս սքանչելի լույսից, Ձեր թույլտվությամբ կլուսանկարեմ Ձեր ընտանիքը: Սարա՛, նստե՛ք այստեղ, խնդրեմ: Դուք, Թոմա՛ս, նրա կողքին: Էդուա՛րդ, Դուք Սարայի հետևում կանգնե՛ք, իսկ Դուք, Էթե՛լ, Ջոնին գրկած՝ Ձեր հոր հետևում: Ա՛յ այդպես, շատ լավ է, այդ արմավենին էլ է հոյակապ: Թփուտները հրաշալի են եզրագծում միջավայրը: Մեկ րոպե ձեզ հանգի՛ստ պահեք, բնական, ժպտալը պարտադիր չէ: Վե՛րջ... Երբ լուսանկարը տեսնեք, կհասկանաք: Ուզում եմ ձեզ՝ բոլորիդ, իմ շնորհակալությունը հայտնել այն ամենի համար, որ դուք արեցիք հանուն ինձ: Սկսած նրանից, որ Էդուարդն ինձ գտավ՝ վտանգելով իր կյանքը, Էթելն ինձ օգնեց, որ գոյատևեմ, Դուք, Թոմա՛ս, երկինք ու երկիր իրար խառնեցիք, Դուք նույնպես, Սարա՛, որ կարողացել եք այսպիսի ընտանիք ստեղծել: Աստված թող ձեզ օրհնի: Ա՜հ, չմոռանամ ասել: Հիմա, երբ կրկին ինձ մոտ է լուսանկարչական խցիկը, այն կօգտագործեմ, ինչպես հարկն է: Կմիանամ ֆրանսա-բրիտանական արշավախմբին, որն առաջիկա ամիսներին աշխատելու է Բաալբեկում: Ինձ կենդանի պահեց այդ հրաշալի քարերի պատրանքը:

1936 թվականի սեպտեմբերի վերջերին Ֆրանսիան և Ազգերի լիգան փոխադարձ համաձայնությամբ որոշեցին փոխել «մանդատ» տերմինը: Այն արդեն կոչվելու էր «Բարեկամության ու դաշնության համաձայնագիր Ֆրանսիայի ու Լիբանանի միջև», և նույնը՝ Սիրիայի պարագայում: Այդ համաձայնագիրը սահմանում էր լայն ինքնավարություն: Լիբանանի վեհաժողովը և Սիրիայի խորհրդարանը հավանություն տվեցին այդ որոշմանը, սիրիացիները՝ թեև որոշ դժկամությամբ: Բեյրութում Բարձրագույն կոմիսարը մամուլին մեկնաբանեց, որ դա էթիկայի ու էսթետիկայի հարց էր: Այդ պահից սկսած Ֆրանսիան այլևս լիազոր իշխանություն չէր, այլ Լիբանանի Հանրապետության բարեկամն ու դաշնակիցը:

51. ՍՊԱՌՆԱԼԻՔԸ
1937թ.

Մաքս Շտեյնբերգը հրատարակեց Բաալբեկի ալբոմը, որն արվեստի իսկական ստեղծագործություն էր: Նրա լուսանկարները լի էին դրամատիզմով ու գեղեցկությամբ և արտահայտում էին բոլորի սերը, կարոտն ու հարգանքն այդ քարերի նկատմամբ:

Մաքսը շատ ավելին էր, քան լավ լուսանկարիչը: Նա պատկերի փիլիսոփա էր: Նրա լուսանկարները մղում էին խորհրդածության: Ուժգին ընկճախտից հետո նա վերականգնել էր իր ուժերը:

Ժամանակ առ ժամանակ Մաքսը հայտնվում էր Էթելի ու Էդուարդի տանը, ովքեր նախընտրեցին նրան չպատմել ընտանեկան կահ-կարասուց ու մյուս իրերից, քանի որ ըստ Եվրոպայում ստեղծված իրավիճակի՝ դրանք կարելի էր կորած համարել:

Թոմաս Հարդինգն ու Սարան բավականին երկար ժամանակ անցկացրին Կահիրեում: Պարզապես նրանց համար այնտեղ լավ էր, քաղաքը գիտեին հինգ մատի պես և ապրում էին այն տանը, որը ժամանակին պատկանել էր Սարայի ծնողներին: Նրանք շարունակում էին մուծել կոմունալ վճարները, և այն ժամանակ, երբ այցելում էին Կահիրե, օգտագործում էին այդ տունը: Կահիրեում ձմռանը մեղմ եղանակ էր, մարդիկ՝ բարի ու հաճոյակատար, շատ ծանոթներ ունեին, որոնց հետ կարող էին բիլիարդ խաղալ, թեյ խմել, բայց ավելի շատ այցելել Եգիպտական թանգարան, որտեղ Թոմասը շատ ժամանակ էր անցկացնում:

Մյուս կողմից՝ այլևս չէին ուզում երկար ժամանակ մնալ այն տանը, որը համարում էին Էթելինը, թեև աղջիկն ու Էդուարդը պնդում էին, որ նրանք ավելի հաճախ իրենց մոտ մնան:

Ավգուստուս Նյումանը պարբերաբար լինում էր երկու վայրերում էլ. բավական էր, որ պաշտոնական գործով ուղևորվեր: Նա մտադիր էր աստիճանաբար ձերբազատվել աշխատանքային պարտավորություններից, սակայն միշտ, ի վերջո, նրան համարում էին անփոխարինելի, և ինքը չէր կարողանում մերժել:

Թոմասից նա ոչ մի գաղտնիք չուներ: Նյումանը բարձր էր գնահատում իր բարեկամի հստակ ու գործնական միտքը, ով իր խնդրանքով կարդում էր իր հաշվետվությունները վերադասին ուղարկելուց առաջ: Բանն այն էր, որ Ավգուստուսը գնալով տարիքն առնում էր ու նախընտրում էր, որ դրանք ուրիշը կարդար և ստուգեր:

Կահիրեում գործող բրիտանական Գլխավոր շտաբում անցկացրին խորհրդակցություն՝ նվիրված Գերմանիայի վերազինման հարցին: Խորհրդակցության ժամանակ ներկայացված թվերը մտածելու տեղիք էին տալիս: Հիտլերն արդեն ամեն վայրկյան պատրաստ էր այն բանին, որ մարտի դաշտ հաներ զինված, հանդերձավորված և մարտունակ երկու միլիոն զինվորների: Ամեն ամիս բազմաթիվ գործարաններ արտադրում էին վիթխարի քանակությամբ զենքեր, որոնց թվում՝ նորագույն հրետանի, թեթև սպառազինություն, տանկեր ու ինքնաթիռներ: Դրանք շատ ավելի հզոր էին ու արդիական, քան Մեծ Բրիտանիայի ունեցածն էր:

Անգլիական կառավարությունն ուր որ է հրաժարական էր տալու՝ իր տեղը զիջելով Նևիլ Չամբեռլենի կողմից ձևավորվելիք կառավարությանը: Բոլորն էլ գիտեին, որ ֆինանսների նախարարը դառնալու է վարչապետ, սակայն Գլխավոր շտաբում զգուշավոր վերաբերմունք ունեին այդ խաղաղասերի նկատմամբ:

Թոմասն Էթելին խոստովանել էր, որ չի կարող երկար մնալ նրա տանը, որովհետև այդտեղ որոշ ժամանակ անց հոգնում էր: Նա հասարակական անձ էր, ու բոլորն ուզում էին ողջունել իրեն: Առաջին երեք օրերը տանելի էին, բայց հետո… Հետո նա արդեն Կահիրեի պես բացարձակ խաղաղ վայրի կարիք էր ունենում, որտեղ՝ հասարակական ցանկացած վայրում, կարող էր թերթ կարդալ ու թեյ խմել, և ոչ ոք նրան չէր խանգարի, թեև իր սիրած քաղաքը Բեյրութն էր:

Մայիսի վերջերին Նևիլ Չամբեռլենը դարձավ Մեծ Բրիտանիայի վարչապետ: Ըստ բրիտանական ավանդության՝ Կահիրեի սպայական զորանոցում բաժակ բարձրացրին նրա պատվին և երեք անգամ ուռա՜ գոռացին, սակայն՝ առանց մեծ ոգևորության: Սըր Էդմունդ Ալենբին էր (ում բոլորը կարոտում էին), որ այդ դժվարին ժամանակաշրջանում կլիներ լավագույն վարչապետը, եթե ամիսներ առաջ մահացած չլիներ:

Բեյրութում արտաքուստ ամեն ինչ նույնն էր: Դամասկոսի ամենաարմատականներն ամեն կերպ ջանում էին, որ միջերկրածովյան այդ քաղաքի անդորրի ներքո ֆրանսիացիները մշտապես լարված լինեին: Ի վերջո, Ֆրանսիայի հետախուզական ծառայությունն էր գործում արաբ խռովարարների դեմ, ովքեր ուզում էին ֆրանսիացիներին հնարավորինս շուտ երկրից դուրս քշել: Ընդ որում՝ այդ գործում մուսուլմաններից առավել արմատական էին հույն ուղղափառ եկեղեցու քրիստոնյա արաբները, ովքեր կարծես ատելությամբ էին լցված ֆրանսիացիների հանդեպ:

Վատիկանը շարունակում էր մեծ ազդեցություն ունենալ ողջ Լիբանանի վրա: Հռոմի Պիոս XI Պապը հրապարակեց պապական մի կոնդակ, որում բոլորին ներկայացնում էր այն սարսափելի իրավիճակը, որ Ադոլֆ Հիտլերի օրոք տիրում էր Գերմանիայում: «Խորին տագնապով» անունը կրող կոնդակը Ծաղկազարդի կիրակի օրը կարդացին գերմանական եկեղեցիներից շատերում, նաև՝ մարոնական Սուրբ Գևորգ եկեղեցում՝ խնկարկման ու վառվող մոմերի ծխի մեջ: Լիբանանում մեծ համակրանք չկար Գերմանիայի նկատմամբ:

Այդուհանդերձ, որևէ անկողմնակալ դիտորդի համար Բեյրութը նիրհող քաղաք էր: Մինչ մոտենում էր ամառը, Էթել Հարդինգին իր պատշգամբից հենց այդպիսին էր թվում քաղաքը: Հետճաշյա քնի ժամին դրսում ոչ ոք չէր երևում. թերևս մի թափառական շուն կամ իր փոքրիկ ավանակին հեծած մի գյուղացի, ով փոշոտ փողոցներով գնում էր դեպի մոտակա դաշտերը՝ անցնելով եղեգնուտների միջով, որոնք օրորվում էին արևմուտքի քամուց: Էթելը սկսում էր նկարել պատշգամբում, իսկ կողքին խաղաղ ննջում էր մանկիկը: Հենց որ երեխան արթնանում էր, լուռ հայտնվում էր Նադիման ու նրան տանում բակ՝ խաղացնելու, որպեսզի նրա մայրը կենտրոնացած աշխատեր:

Էթելը լավ էր հիշում, թե ինչպիսին էր Բեյրութը, երբ ինքն իր որդու տարիքին էր. դա գրեթե քսան տարի առաջ էր: Քաղաքն արագորեն փոխվում էր՝ անկախ շների հեռավոր հաչոցներից, ջուր ծախողների ու դանակ-մկրատ սրողների կանչերից:

Եվրոպան շատ հեռու էր թվում ոչ միայն տարածության, այլև ժամանակի առումով: Այդուհանդերձ, այնտեղ կատարվող ցանկացած իրադարձություն անմիջապես իր արձագանքն էր գտնում ողջ Մերձավոր Արևելքում, որը չէր կարող ձեռնպահ մնալ, ցույց տալ, թե ոչինչ տեղի չի ունենում, և համբերել այնքան, մինչև փոթորիկն անցնի: Վերջին ընդհարման՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հիմնական զոհերը եղել էին հայերը: Մաքսի օրինակը Գերմանիայում ստեղծված իրավիճակի վառ վկայությունն էր: Եվ խնդիրն այն չէր, որ Հիտլերի պես խելագարը մենակ ատեր հրեաներին: Ամբողջ երկրում հակահրեական այդպիսի մթնոլորտ ստեղծելու համար նրան անհրաժեշտ էր բնակչության մեծամասնության մեղսավոր աջակցությունը: Էթելը չէր կարողանում ըմբռնել անմարդկային այդ իրողությունը: Էդուարդը նրան պատմել էր Ֆրանկֆուրտի Ժառանգական կենսաբանության ինստիտուտ իր կատարած սահմռկեցուցիչ այցի և դրա փոխտնօրենի մասին, ով հրեաներին ու գնչուներին դիտարկում էր որպես լաբորատորիայի փորձարկվող կենդանիների:

Այդ պատճառով էլ Բեյրութը նման էր ապաստանի, թեև փոքր-ինչ փխրուն՝ մոտալուտ փոթորկի համար: Թեթև դող զգաց: Եղանակը փոխվում էր, և ուժեղ քամին համարյա վայր էր գցում նկարակալը: Տեսավ Էդուարդին, ով մոտոցիկլետով բարձրանում էր զառիվերով: Հպարտ էր իր ամուսնու՝ «գժանոցում» ծավալած աշխատանքով: Բոլորն էլ բարձր էին գնահատում դոկտոր Բողոսյանի ջանքերը: Ի հիշատակ իր հոր՝ նա ցանկացել էր, որ իրեն հենց այդպես՝ դոկտոր Բողոսյան կոչեն:

Նոյեմբերի կեսերին նրանց այցելեց Ավգուստուս Նյումանը: Իր գալու նույն գիշերը նրանց խոստովանեց, որ դարձել է յոթանասունչորս տարեկան և արդեն շատ հոգնած է: Մի քանի ամիս անց նա գնալու էր թոշակի ու իր համար մի բնակարան էր գնելու Լա Կոռնիշ զբոսայգու առափնյա հատվածում: Այդ կլիման նրա համար ավելի բարենպաստ էր, քան Անգլիայինը և, անշուշտ, շատ ավելի, քան Շոտլանդիայինը:

Մի ըմպանակ կոնյակ վայելելով՝ նրանց ասաց, որ Գերմանիայից վատ լուրեր է ստացել: Նյուրնբերգում շքերթի էին դուրս եկել վեց հարյուր հազար զինվորներ: Իրենք այնտեղ՝ Գերմանիայի Գլխավոր շտաբում, իրենց մարդն ունեն, ում հայտնած տեղեկությունների համաձայն՝ մի գաղտնի խորհրդակցության ժամանակ Հիտլերը գլխավոր հրամանատարությանն իրազեկել է Եվրոպան նվաճելու իր մտադրության մասին: Խոսքը վերաբերում էր ռասայական, քաղաքական ու ռազմական տիրապետությանը: Բոլոր հրեաները երկրի երեսից ջնջվելու էին: Սլավոնները էլ կհամարվեն ստորին դասի մարդիկ, և նրանց հետ կվարվեն ու կօգտագործեն ըստ այդմ:

- Եվ չկարծեք, թե մենք այստեղ զերծ կմնանք այդ ամենից: Հիտլերի ծրագրերի մեջ մտնում է նաև Աֆրիկայի հյուսիսի և Արևելքի նվաճումը, առայժմ՝ մինչև Բաղդադ: Նա խեղված ու վտանգավոր մտագար է, սակայն իր թիկունքում ունի մի բանակ, որի նմանը մինչ այժմ հազիվ թե գոյություն ունեցած լինի:

Երբ Նյումանն այցի գնաց իր հին ընկերներին, Էթելը պատշգամբում փաթաթվեց ամուսնուն.

- Ի՞նչ ենք անելու: Ավգուստուսն այն մարդն է, ով տեղեկանում է առաջին ձեռքից, իսկ դու լսեցի՞ր, թե նա ինչ է ասում Հիտլերի մասին:

- Մի՛ անհանգստացիր, Էթե՛լ: Մենք այնպիսի հողի վրա ենք ապրում, որը երբեք նվաճված չի մնացել: Ոչ էլ Հիտլերին դա կհաջողվի: Այդ արյունարբու բռնակալները, ինչպես Թամերլանն ու Ադոլֆ Հիտլերը, չեն ըմբռնում, որ աշխարհը նվաճելու միակ ձևը ճիշտ դրա հակառակն է:

Դաշույնի ուժը երբեք չի հաղթի դատողությանը:

Մութն արագ էր ընկնում, և միայն արևմուտքի կողմում ցոլացող մի թեթև լույս ցույց էր տալիս այն տեղը, որտեղ թաքնվել էր արեգակը: Միջերկրական ծովն առինքնող էր, ու Էթելը մտածեց իր հոր մասին: Թոմաս Հարդինգը միշտ էլ ասել էր, որ Վերսալի համաձայնագիրն իսկական աղետ է, որն աշխարհին իր հետևից վաղ թե ուշ կտանի դեպի նոր ողբերգություն:

52. ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ
ՀՈՒՆՎԱՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1938թ.

Ռաբբի Բահբուտը եկավ Ասֆուրյե՝ Էդուարդ Բողոսյանի հետ խոսելու: Լիբանանի հրեաների համայնքի անդամները հիվանդներին բերում էին հանդերձանք, սնունդ կամ գալիս էին մխիթարելու իրենց դավանակիցներին: Էդուարդը հավանություն էր տալիս եղբայրական այդ զգացմանը, որն անշուշտ գոյություն ուներ նաև հայերի ու արաբների շրջանում:

Հրեական աշխարհն ապրում էր իր պատմական դժվար ժամանակահատվածներից մեկը՝ լի սպառնալիքներով, անախորժություններով ու անորոշ ապագայով:

Այս անգամ ռաբբին ոչ թե այցի էր եկել հիվանդներին, այլ պետք է բժշկին դիմեր մի խնդրանքով. կարո՞ղ էր որպես պացիենտի հոգեբուժարան ընդունել վերջերս՝ մի քանի շաբաթ առաջ Բեյրութ եկած մի հրեայի: Ընդգծեց, որ դա շատ կարևոր է համայնքի համար:

Էդուարդը հասկացավ, որ խոսքն իսկական պացիենտի մասին չէ, այլ մի մարդու, ում ուզում էին թաքցնել: Այդուհանդերձ, ոչ մի մեկնաբանություն չարեց: Եթե այդ մարդը դիմել է իրեն, ուրեմն շատ հուսահատ է: Էդուարդն ինչ-որ ներքին կապ էր զգում հրեաների հետ: Հրեաների համար ոչ ոք ոչինչ չէր անում, մինչդեռ նրանք պայքարում էին հանուն գոյատևման:

Նա նայեց ռաբբիի աչքերին ու համաձայնեց.

- Համաձայն եմ: Ե՞րբ է գալու այստեղ: Ինքս անձամբ հոգ կտանեմ, որ նրան չանհանգստացնեն: Խնդիր չկա:

Ռաբբին թույլ ժպտաց.

- Շնորհակալություն, դոկտո՛ր Բողոսյան: Մարդկանց ավելի լավ են ճանաչում, երբ նրանց օգնության կարիքն են զգում: Անկեղծորեն ասած, այս դեպքում չէինք կարող դիմել որևէ այլ հիվանդանոց կամ վտանգել մի հրեայի կս: Այստեղ ոչ ոք ոչինչ չի հարցնում, ու Դուք մեզ միշտ օգնել եք: Հրեաներս շատ թշնամիներ ունենք, սակայն, փառք Աստծուն, ունենք նաև շատ լավ բարեկամներ: Մենք դա չենք մոռանա: Ի դեպ, հիվանդը դրսում է: Գիտեինք, որ Դուք մեզ հուսախաբ չեք անի, և նրան ասացի, որ գա ինձ հետ:

Էդուարդը չկարողացավ զսպել ժպիտը.

- Այո՛, ռաբբի՛, Դուք հավատ ներշնչող մարդ եք: Գնանք, ես կուղեկցեմ Ձեզ: Մի սենյակ կա, որ միշտ ազատ է անկանխատեսելի դեպքերի համար: Թերևս սա դրանցից մեկն է:

Դուրս եկան բակ: Այնտեղ մի երիտասարդ՝ հազիվ երեսուն տարեկան, սպիտակամաշկ, նոսր մազերով, եղջերազարդ ակնոցներով, եվրոպական արտաքինով, ծառի ստվերի տակ նստած, սպասում էր: Ռաբբին առաջ գնաց՝ ներկայացնելու.

- Բժի՛շկ, ինքն է Ձեր «հիվանդը»: Ահա և դոկտոր Բողոսյանը՝ արտասովոր բժիշկ և հրեաների լավ բարեկամ:

Երիտասարդը գլուխը թեթևակի խոնարհեց: Ո՛չ ժպտաց, ո՛չ մոտեցավ նրան՝ ձեռքը սեղմելու, ո՛չ էլ մի բառ ասաց:

- Լավ, հետևե՛ք ինձ, խնդրում եմ:

Նրանց ուղեկցեց մինչև ընդունարանի մոտ գտնվող մի փոքրիկ սենյակ:

- Դե՛ ինչ, պետք է, որ այստեղ լավ լինի: Ինչպես տեսնում եք՝ սենյակի դուռը կողպեք ունի: Ձեզ խնդրում եմ, որ այն միշտ փակ պահեք: Այս սենյակը հատուկ նպատակների համար է նախատեսված, այդ պատճառով էլ կառուցվել է անհրաժեշտ սանհանգույցով, որից կարելի է օգտվել այս դռնից. բանալին վրան է: Ոչ մի բանի համար չանհանգստանաք: Կերակուրը Ձեզ համար կբերեն այստեղ: Սա նման է մի փոքրիկ հյուրանոցի:

Այդ անձնավորությունը կրկին գլուխը թեթևակի խոնարհեց: Ռաբբի Բահիուտը կարծես թեթևացած էր: Էդուարդը հեռացավ՝ նրանց մենակ թողնելով: Եթե որևէ մեկը հայտնվեր՝ տեղեկություն քաղելու, ապա նրան ոչինչ չէին հայտնի: Շատ դեպքերում հոգեկան հիվանդություններն արտաքին դրսևորումներ չէին ունենում: Ցանկացած մարդ էլ կարող էր «գիժ» լինել, և հնարավոր էր, որ այդ անծանոթը նույնպես այդպիսին էր:

Տասնհինգ օր անց հարգարժան հրեան գնաց Էդուարդի աշխատասենյակ: Սեղմեց նրա ձեռքն ու անսխալ ֆրանսերենով շնորհակալություն հայտնեց, թեև նրա խոսքում գերմանական թեթևակի առոգանություն էր զգացվում: Այնուհետև վերցրեց փոքրիկ ճամպրուկն ու նստեց դրսում իրեն սպասող ավտոմեքենան:

Էդուարդն արել էր այն, ինչ իր խիղճն էր թելադրել: Չգիտեր, թե ով էր այդ մարդը և ումից էր թաքնվում:

Հաջորդ օրը հայտնվեց ռաբբի Բահիուտը:

- Դոկտո՛ր Բողոսյան, Ձեզ հետ ծանոթանալու պահից սկսած Ձեզ համարել եմ մեծահոգի և պատվախնդիր մարդ: Հիմա համոզվեցի, որ իմ գնահատականի առումով չեմ սխալվել: Մարդը, ում Դուք օգնության հասաք, Բրեստ-Լիտովսկից իմ վաղեմի ընկերոջ որդիներից մեկն էր՝ Բեգին Մենախեմը[85]: Հրաշալի տղա է, եկել էր դասախոսության համար

[85] Մենախեմ Բեգինը հետագայում դարձավ Իսրայելի վարչապետ:

նյութեր հայթայթելու: Հետո վերադառնալու է Լեհաստան: Նա լռակյաց, զուսպ մարդ է, սակայն ինձ ասաց, որ երբեք չի մոռանա Ձեր արածը:

Ավգուստուս Նյումանն Էդուարդին պատմում էր նացիստներից մեկի՝ ոմն Ադոլֆ Էյխմանի՝ անցյալ տարվա վերջին Պաղեստին կատարած ուղևորության մասին: SIS-ի հետախուզական ծառայության միջոցով տեղեկացել էին նրա և Երուսաղեմի մուֆտիի՝ Ամին ալ-Հուսեյնի բանակցությունների մասին: Ընդ որում՝ վերջինս գերմանացիներին տվյալներ էր հաղորդում հրեական ներգաղթի վերաբերյալ, ինչին ինքը սկզբունքորեն դեմ էր:

Էյխմանը փորձում էր դիտարկել գերմանացի հրեաներին Պաղեստին ուղարկելու հնարավորությունները: Դա երկու կողմերի համար լավագույն տարբերակը կլիներ: Գերմանիան կազատվեր այն հրեաներից, ովքեր ներգաղթելու էին, նրանցից կվերցներ վիզաների և ուղևորության տոմսերի արժեքները, ինչպես նաև կյուրացներ դուրս քշվածների ունեցվածքը. հրաշալի գործարք նացիստների համար: Այդուհանդերձ, ըստ SIS-ի հաղորդագրության՝ ալ-Հուսեյնին կտրականապես դեմ էր դուրս եկել այդ առաջարկին: Անգամ այդ ժամանակվա «հրեական հարցի» տնօրենին ասել էր, որ լավագույն լուծումը կլիներ հրեաներին վերացնելը կամ աշխատանքային ճամբարներ ուղարկելը: Մի խոսքով, բացի նրանց Պաղեստին ուղարկելուց՝ թող անեին այն, ինչ կամենում են: Ընդ որում՝ հրեաները շարունակում էին այլ երկրներից գալ Պաղեստին, և չնայած դա հարուցում էր արաբների խիստ դժգոհությունը, այնուամենայնիվ եկվորների թիվը գնալով աճում էր:

Էյխմանը գիտեր, որ եթե Գերմանիան չի ուզում զրկվել արաբների աջակցությունից, ապա պետք է հավանություն տա նրանց՝ առավել աչքի ընկնող առաջնորդներից մեկի՝ Ամին ալ-Հուսեյնի դիրքորոշմանը, ում խոստացել էր ֆինանսական, նյութատեխնիկական և դիվանագիտական օգնություն:

Ավգուստուսը պատմեց նաև այն մասին, թե ռազմաքաղաքական շրջանակներում ինչ են մտածում Նևիլ Չամբեռլենի՝ Բրիտանիայի վարչապետի մասին. նրան համարում են թուլամորթ, հստակ դիրքորոշում չունեցող անձնավորություն, ով չի ուզում նայել իրականությանը: Նա մշակում էր այնպիսի ռազմավարություն, որը կխոչընդոտեր հրեաների ներգաղթը Պաղեստին, ինչը նշանակում էր հրեա ժողովրդի ամենադժվար պահին դավաճանել նրան:

Ալ-Հուսեյնին Էյխմանին խոստացել էր արաբ ժողովրդի աջակցու-

թյունը: Մի բան, որը շատ կարևոր էր գերմանական Գլխավոր շտաբի ունեցած հեռահար նպատակների համար: Չէին կարող գործել իրենց շահերին հակառակ:

Այդ ամենի մասին տեղյակ էր «Հագանան»[86] հրեական ինքնապաշտպանության առաջին կազմակերպությունը, երբ հրեաները սկսեցին հաստատվել առաջին բնակավայրերում: Այդ կազմակերպության նպատակն էր պաշտպանել ներգաղթող հրեաներին, քանի որ արաբները մտադիր էին հարձակվել նրանց վրա:

1920-1921 թվականներին արաբների կատարած հարձակումների հետևանքով հրեաները ստիպված ձեռնամուխ եղան ավելի զորեղ կազմակերպության ստեղծմանը: «Բրիտանացիները,- ընդունում էր Նյումանը,- շատ քիչ բան էին անում՝ հանուն հրեա գաղթաբնակների, քանզի չէին ցանկանում արաբներին մինչև վերջ հիասթափություն պատճառել»: Գիտեին, թե գերմանացիներն ինչ մոտեցումներ էին գործադրում, և չէին ուզում ձեռքից բաց թողնել այդ ռազմավարական տարածքը:

Խնդիրը վերլուծում էին Կահիրեի Գլխավոր շտաբում: 1929 թվականին Հեբրոնում տեղի ունեցած անկարգությունները, որոնց արդյունքում զոհվեցին 133 հրեաներ և 116 արաբներ, բեկումնային եղան: Մինչ այդ «Հագանան» թշնամանքով չէր տրամադրված բրիտանացիների հանդեպ: Սակայն այդ պահից սկսած որոշեցին, որ միակ ելքն իրենց ուժերով պատերազմելն է:

SIS-ը գիտեր, որ ավտոմեքենաների վերանորոգման կամ փականագործական աշխատանքների անվան ներքո գործող արհեստանոցներում «Հագանան» արտադրում էր ձեռքի նռնակներ, անգամ հրացաններ՝ կոպիտ, սակայն շատ արդյունավետ:

Էդուարդն ընդհատեց.

- Ավգուստո՛ւս, եթե որևէ վիճահարույց խնդրի դեպքում ստիպված լինես պաշտպանելու բրիտանացիներին կամ հրեաներին, ի՞նչ կանես:

- Չգիտեմ: Ես միշտ եղել եմ հավատարիմ, պաշտպանել եմ իմ երկրի շահերը: Սակայն ես հրեա եմ և թեև հավատացյալ չեմ, բայց իրականում արյունս հրեական է: Նաև չեմ ուզում, որ նախնիներս դուրս գան շիրիմից՝ անիծելով ինձ: Կարծում եմ, որ լավագույնը կանեի Մեծ Բրիտանիայի համար, միայն թե դա վատթարագույնը չլիներ իմ ժողովրդի համար:

Այնուհետև Էդուարդին բացատրեց, որ անկախ ամեն ինչից՝ «Հագա-

[86] Հրեերեն՝ «Պաշտպանություն»: Հրեական ընդհատակյա կազմակերպություն, որը հրեա տարագիրների միջոցով ստեղծվել էր Պաղեստինում (հղումը՝ հեղինակի):

նան» միշտ էլ համագործակցում էր բրիտանացիների հետ.

- Հրեաները միշտ էլ ավելի շատ մոտ են եղել Արևմուտքին: Կան հրեաներ, որ Պաղեստին են ներգաղթել Լոնդոնից կամ Մանչեսթրից: Անգլիացիներ են: Կան նաև գերմանացի, ավստրիացի կամ ռուս հրեաներ: Նրանք չեն էլ փորձում իրենց կապերը խզել այդ երկրների հետ: Ստեղծված խառնաշփոթից բոլորս էլ տուժելու ենք: Թերևս Բեն Գուրիոնը՝ հրեա առաջնորդը, գործել է մշակված քաղաքականությամբ: Տեսնենք, թե մինչև ե՞րբ: «Հագանան» բաժանվել է երկու մասի: Այն, որ կոչվում է «Իրգուն»,[87] մեզ շատ գլխացավանք է պատճառում, և վարչապետը ցանկանում է այդ իրավիճակին հնարավորինս արագ վերջ տալ:

Գործնական տեսանկյունից նայելով՝ Էդուարդը պարտավոր չէր հավատարիմ լինել Մեծ Բրիտանիային: Նա իրեն լիովին ազատ էր զգում: Այդ ժամանակ նրա հավատարմության կարիքն ավելի շատ թույլերն ունեին: Դրա հետ լիովին համակարծիք էր Էթելը: Տարիներ առաջ՝ հուսահատության այն շրջանում, երբ հայերն էին գալիս՝ ապաստան փնտրելու, նա հստակ գիտեր, թե ովքեր էին զոհերը: Վիեննայում ունեցած իր փորձությունից և Գերմանիայում տեղի ունեցող իրադարձությունների ականատեսը լինելուց հետո նա պետք է օգներ հրեաներին: Լիբանանում հրեաների նկատմամբ արաբների դիրքորոշումը նույնը չէր, ինչ մարոններինը կամ ուղղափառ հույներինը: Այդուհանդերձ, մուսուլմաններից շատերն անգամ համաձայն չէին ալ-Հուսեյնի վարած՝ հրեատյաց քաղաքականության հետ: Լիբանանում միշտ էլ ապրել էին հրեաներ, այդ երկիրը մեծահոգի էր և լի բազմազան դավանանքներով: Էդուարդին ներքուստ ահավոր զայրույթ էր համակում, երբ հիշում էր, թե ինչպես էին գերմանացիները վարվում այլ գերմանացիների հետ, որոնց միակ տարբերությունը հրեա լինելն էր: Սրտխառնոց էր զգում... Իրավիճակն էլ ամենևին չէր փոխվել, ընդհակառակը՝ ավելի էր վատացել: Եթե որևէ հրեա ինչ-որ մեկի հետապնդումից խույս տալու նպատակով ցանկանա թաքնվել իր «գժանոցում», ապա ինքը ոչ մի արգելք չի հարուցի:

Մարտին հասավ «Անշլյուս»-ի՝ Ռեյխի կողմից Ավստրիայի բռնազավթման և Գերմանիային միացման մասին լուրը: Դա ոչ ոքի համար անակնկալ չեղավ: Նյումանն այդ մասին զգուշացրել էր դեռ երկու ամիս առաջ: Էթելը թեթևացած շունչ քաշեց, որ Բեյրութում էին, թեև նա մեծ

[87] 1931թ. վերջերին «Հագանայի» ավելի արմատականներն առանձնացան՝ զուգահեռ ստեղծելով «Հագանա Բ»-ն, որը 1937թ. անվանվեց «Իրգուն Ցվայ Լեումի» («Ազգային ռազմական կազմակերպություն») կամ «Իրգուն», որի առաջնորդը Վլադիմիր Ժաբոտինսկին էր (հղումը՝ հեղինակի):

ցավ էր ապրում ավստրիացիների, մանավանդ ավստրիացի հրեաների համար. գրեթե երկու հարյուր հազար մարդիկ զավթիչ նացիստների կողմից «ստորակարգ» դասին էին պատկանում:

Մաքսը նոր էր եկել Դամասկոսից, որտեղ ձեռնամուխ էր եղել լուսանկարչական մեծ նախագծի իրագործմանը: Նրա համար անտանելի էր այն միտքը, որ իր ազգականներն ու բարեկամները նացիստների ձեռքում էին.

- Նրանք կմեռնեն: Հիտլերը ծարավի է հրեական արյան: Հեռախոսով խոսեցի զարմուհիներիցս մեկի հետ, նա ինձ ասաց, որ Վիեննայի բնակչության ինսուլտ տոկոսը փողոց էր դուրս եկել՝ ծափահարելու Հիտլերի մուտքը, իսկ Գեստապոն՝ գաղտնի ոստիկանությունը, արդեն անցել էր իր գործին: Էյխմանը՝ այն նացիստը, ում մասին ինձ պատմել է Էդուարդը, հիմա Հրեական արտագաղթի գրասենյակի պետն է: Ըստ ինձ հասած տեղեկությունների՝ հրեաներին ահաբեկում են՝ սպառնալով, որ կտանեն համակենտրոնացման ճամբարներ, եթե չհանձնեն իրենց ողջ ունեցվածքը: Նրանք իրենց ֆաբրիկաները, բնակարաններն ու այլ սեփականությունները պետք է գրավոր ձևակերպեն նացիստների կողմից մատնանշված մարդկանց անուններով: Այնուհետև՝ բանկերի տնօրենների կողմից արված պաշտոնական հայտարարությունից հետո, նոր սեփականատերերին ուղեկցում են դեպի բանկային չհրկիզվող պահարաններ՝ հրեաների փողերին և ունեցվածքին տիրանալու համար: Վերջում, երբ հրեաներին ընդամենը մնում է մի հին ճամպրուկ՝ մի ձեռք փոխնորդ հագուստով, նրանց մտցնում են մի վագոն՝ աքսորյալների որևէ ճամբար ուղարկելու համար: Ասում են, որ Էյխմանն արդեն Գերմանիայի ամենահարուստ մարդկանցից մեկն է: Թափթփուկնե՞ր... Եթե մի օր հրեաներս արդարադատություն ցանկանանք, ինքներս կհասնենք դրան:

Բեյրութում ամենամեծահասակներն ասում էին, որ Գերմանիան աշխարհը կտանի կործանման: Սուննի արաբներից ոմանք նախընտրում էին լռել՝ հենց այդ կերպ արտահայտելով իրենց դիրքորոշումը: Ինչ վերաբերում էր շիաներին, ապա նրանց մեծամասնությունը գերմանացիների կողմից էր: Դամասկոսում ընդհանուր առմամբ հավանություն էին տալիս գերմանացիների քաղաքականությանը: Դա առավել խորացնում էր արաբների ու ֆրանսիացիների միջև առկա անջրպետը:

Երկու ամիս անց ԱՄՆ նախագահ Ռուզվելտը Էվիան-լե-Բենում գումարեց մի խորհրդակցություն՝ քննարկելու հրեա փախստականների

հարցը: Մասնակցեցին երեսուներկու երկրներ:

Նրանցից և ոչ մեկը սահմանված քվոտայից դուրս չէր ընդունելու անգամ մեկ հրեայի: Ֆրանսիան զգուշացրեց, որ այդ որոշումն առավել կխթանի նացիստների հավակնությունները:

Ձախողված փախուստից առաջ Մաքս Շտեյնբերգն իր ունեցած գումարի մեծ մասը փոխանցել էր «Բանկ դը Պարի է դե Պեյի-Բա»-ի հաշվեհամարին: Դա նրան փրկել էր ֆինանսական աղետից, ու թեև, այո՛, մեծ գումար չէր, սակայն բավական էր Բեյրութում մի փոքրիկ բնակարան գնելու համար, քանի դեռ ինքն ապրուստ վաստակելու միջոց էր որոնում:

- Իմ գործը լուսանկարչությունը չէ, բայց չէ՞ որ պետք է ապրեմ և, ճիշտն ասած, ծանոթանում եմ շատ հետաքրքրական մարդկանց հետ,- այսպես էր Մաքսն արդարանում Էթելի առջև. նրա համար շատ ավելի հաճելի էր բացառապես պատմական վայրեր, ինչպես՝ Բաալբեկը, լուսանկարելը:

Նա սկսեց լուսանկարներ հանել, որոնցում երևում էին ռուս հրեաներ՝ իրենց հատուկ հագուստներով, մյուսներում՝ Բաղդադից, Իրանից, Թուրքիայից, Սալոնիկից եկած հրեաներ: Մեկը մյուսին ասելով՝ գալիս էին նրա մոտ լուսանկարվելու: Բոլորն էլ ուզում էին ունենալ գոնե մի լուսանկար, որը կդրվեր շրջանակի մեջ ու որպես ժառանգության մի մասնիկ՝ կմնար իրենց զավակներին: Նա պայմանավորվեց մի մուսուլմանի՝ արաբ հյուսնի հետ, ով պատրաստում էր եգիպտական «մաշրաբիյա»-ներին շատ նման շրջանակներ: Այդ լուսանկարները բոլորովին այն չէին, ինչ ինքը կուզենար ունենալ իր տանը, սակայն դրանցով էր գումար վաստակում:

Լուսանկարչության և որոշ մարդկանց ներքին գեղեցկության նկատմամբ տածած սերը թաքցնում էր նաև մեկ այլ արհեստ: Այդ մասին գիտեր միայն ռաբբի Բահբուտը: Միայն չգիտեր՝ Մաքսն աշխատում է ինքն ի՞ր, թե՞ «Հագանայի» համար: Այդուհանդերձ, Բահբուտի համար դա ամենևին էլ կարևոր չէր: Մաքսի պատրաստած փաստաթղթերով մի տղամարդ, մի կին կամ մի ամբողջ ընտանիք կարող էին մտնել Պաղեստին: Չէր կարող անխտիր բոլորին օգնել. միայն նրանց, ովքեր գտնվում էին անելանելի վիճակում: Ռաբբին գիտեր, որ Մաքսի այդ կատարյալ ու արհեստավարժ աշխատանքով ամեն բան ավելի դյուրին կստացվեր:

Շուտով Մաքս Շտեյնբերգի բնակարանը վերածվեց անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու գրասենյակի: Մաքսը ոչ ոքի չէր ասել Պաղեստին մտնելու վիզայի կրկնօրինակման ու դրա վրա բրիտանական

Ներքին գործերի նախարարության կնիքը դնելու իր մեծ հմտության մասին: Ցանկացած մարդու համար նա «լուսանկարիչ» Մաքսն էր: Նա սկսեց պատրաստել հարսանիքների, կնունքների, թլփատման և այլ միջոցառումների լուսանկարչական ալբոմներ: Նրան հրավիրում էին նաև Բարձրագույն կոմիսարի նստավայր: Լուր տարածվեց այն մասին, որ նա հրաշալի լուսանկարներ է պատրաստում:

Ռաբբին նրան զգուշացրեց, որ ոչ ոքի մի բառ անգամ չասի. Էթելը Թոմաս Հարդինգի դուստրն էր, իսկ «ծերուկ Ավգուստուսը» դեռ կապեր ունի հետախուզական ծառայությունների հետ: Ըստ այդմ՝ ոչ մեկին ոչ մի խոսք: Մաքսը ժպտում էր: Այդ կասկածամիտ ռաբբիին ինչպե՞ս բացատրեր այդ մարդկանց հետ ունեցած իր հատուկ բարեկամությունը:

Երբեմն մտածում էր այն մասին, որ պետք է լրացնի Բաալբեկի և Պալմիրայի լուսանկարների իր հավաքածուն: Սակայն ռաբբին գալիս էր նոր՝ հույժ կարևոր պատվերով, այնուհետև՝ Հունաստանից կամ Թունիսից նավով ժամանած հրեաներ, ովքեր նույնպես ուզում էին լուսանկարվել: Նրանց մի պահ թողնում էր, որ վիճաբանեն իրենց արտառոց բարբառներով, հետո համապատասխան կեցվածքով կանգնեցնում էր սրահում, որտեղ՝ կավե ծաղկամաններում, ուներ սենյակային բույսեր և թուրքական մի հին բազմոց, որ Էթելն էր տվել: Ոմանք նայում էին ուղիղ Մաքսի աչքերին:

- Ո՛չ,- խնդրում էր նա,- նայե՛ք օբյեկտիվին: Այստե՛ղ:

Նրանք գեղջկական այրող կամ խամրած աչքեր ունեին, իսկ ռաբբիների աչքերը ջրակալված էին, քանի որ ամբողջ կյանքում Թալմուդ[88] էին կարդացել: Ի տարբերություն հրեաների՝ արաբներն էլ, որ նույնպես ուզում էին ունենալ իրենց լուսանկարները, ընդ որում՝ ցանկանում էին նկարվել իրենց խանութներում, իրենց անասունների, ծառաների ու ճորտերի հետ, ահեղ կեցվածք էին ընդունում:

Անցնում էին շաբաթներ ու ամիսներ, իսկ նացիստական մեքենան այդպես էլ կանգ չէր առնում: Սեպտեմբերի վերջերին Նեիլ Չամբեռլենն ու պաշտոնատար այլ անձինք ուղևորվեցին Մյունխեն: Նրանց հետ էր նաև Ավգուստուս Նյումանը, ով փորձեց վարչապետին համոզել, որ տեղի չտար Ադոլֆ Հիտլերի այն սպառնալիքին, որ Գերմանիան իր տարածքին է միացնելու Չեխոսլովակիայի Սուդետի մարզը, որտեղ, նրա կարծիքով, մեծամասնություն են կազմում էթնիկ գերմանացիները:

[88] Եբրայերեն՝ «ուսմունք, ուսուցում», հրեական քաղաքացիական և կրոնական արարողությունների կանոնադրություն:

Ֆյուրերը խոստացավ, որ դա լինելու է իր վերջին բռնակցումը: Այլևս՝ ոչ մի նման բան:

Չամբեռլենը փաստաթուղթը ստորագրեց՝ առանց խորհրդակցելու իր դաշնակցի՝ Դալադիեի հետ և հաշվի չառնելով իր խորհրդականներից շատերի, որոնց թվում՝ նաև Ավգուստուս Նյումանի կարծիքը: Հիտլերը ցանկանում էր այդ խայտառակ գործարքում որպես մեղսակցի ներքաշել Մեծ Բրիտանիային, իսկ Չամբեռլենը ոչ ոքի չէր լսում: Նա միայն առիթի դեպքում կրկնում էր, որ գերադասելի է ցանկացած լուծում, քան պատերազմ սկսելը: Ընդամենը երկու շաբաթ անց Վերմախտը՝ գերմանական բանակը, գրավեց Չեխոսլովակիայի Սուդետի մարզը և Գվարդիա Հլինկային[89] հակասեմիտական ոստիկանություն ստեղծելու կոչ արեց:

Այդ ընթացքում Բեյրութում՝ Լա Կոռնիշի իր բնակարանում, Մաքս Շտեյնբերգը զբաղված էր «ռայզեպաս»՝ անձնագիր կեղծելով: Դիմացի պատին կոճգամերով ամրացրել էր Բաալբեկում տարիներ առաջ արած լուսանկարը, որտեղ Էթելն ու Թոմաս Հարդինգն էին: Չէր մոռանում, որ դա այն հանդիպումն էր, որ փոխեց իր կյանքը: Եվ արևի այդ հրաշալի քաղաքի շնորհիվ ինքը փրկվեց… Հիշում էր, թե ինչպես էին իրեն կապկպել Ֆրանկֆուրտի Ժառանգական կենսաբանության և ռասայական հիգիենայի ինստիտուտում:

[89] Սլովակիայի ժողովրդական կուսակցություն:

53. ԴԱՖՆԻՍ
ՆՈՅԵՄԲԵՐ - ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1938-1939թթ.

Նոյեմբերի տասնմեկին փոստի նորակառույց շենքում տեղադրված տելետայպը (շենքի հանդիսավոր բացումը նախագահ Էդի ներկայությամբ ընդամենը վերջերս էր կատարել Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսարը) սկսեց անդադար հաղորդագրել. այնքան արագ, որ ասես լեփ-լեցուն լցված էր: Փարիզից եկող նորություններն առատությունից ժայթքում էին:

Ողջ Գերմանիայով մեկ նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերվա ընթացքում տեղի էին ունեցել լուրջ անկարգություններ ու հարձակումներ հրեաների դեմ: Գերմանական խոշոր քաղաքներում ավերվել էին երկու հարյուրից ավելի սինագոգներ: Հայտնի գործակալություններից մեկին այդ օրվա նորությունները հաղորդող մի լրագրող այդ գիշերն անվանեց «Kristallnacht»՝ «ջարդված ապակիների գիշեր»: Շատ հրեաներ սպանվել էին, հազարավորների էլ քշել էին համակենտրոնացման ճամբարներ, հրկիզվել էին հարյուրավոր հրեական խանութներ ու տներ, հրշեջներին էլ արգելված էր միջամտելը:

Ռաբբի Բահբուտը համայնքի մի խումբ անդամների ուղեկցությամբ գնաց Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսարի նստավայր՝ նացիստական ռեժիմի դեմ պաշտոնական բողոք ներկայացնելու: Այդ ընթացքում մեծ մուֆտի ալ-Հուսեյնին Երուսաղեմում, Ջաֆֆայում, Հեբրոնում և Պաղեստինի այլ բնակավայրերում համակարգում էր հրեաների դեմ ցույցերը: Այդ սադրանքը հարուցեց հրեաների զայրույթը, և կատաղի մարտեր բռնկվեցին երկու կողմերի միջև:

Էթելը Բեյրութում սպասում էր իր ծնողներին՝ ամանորյա գիշերը միասին նշելու համար: Վերջին պահին հեռագիր ստացավ. նրանք չէին կարող գալ, քանի որ հորը շտապ տեղափոխել են Կահիրեի բրիտանական զինվորական հոսպիտալ: Սարան ավելացրել էր, որ անհանգստանալու ոչ մի հարկ չկա, պարզապես գերհոգնածություն է: Նա չէր կարող նրանց պատմել բժշկի ասածները. Թոմաս Հարդինգը կրծքահեղձուկի նոպա էր ունեցել, և նրանք պետք է սպասեին բուժման արդյունքներին: Բժիշկներին անհանգստացնում էր նրա վիճակը:

Նոր տարվա գիշերը Թոմասն անցկացրեց զինվորական հոսպիտալում, թեև սրտաբանը նրան լավ նորություն հայտնեց՝ ասելով, որ մի քանի օր անց նրան տուն կուղարկի:

Էթելը որոշեց, որ գնա նրանց մոտ, բայց հրաժարվեց այդ մտքից, երբ

Էդուարդը նրան ասաց, որ փոքրիկ Ջոնի հետ Կահիրե գնալը կարող է վատ անդրադառնալ նրա ապաքինման վրա:

Բաղձալի տոնը փոխարկվեց անհանգստության: Անհաջող եղանակը՝ հյուսիսից փչող սաստիկ քամիներն ու խռովահույզ ծովը նավարկության չէին տրամադրում: Մարդիկ չէին զբոսնում Լա Կոռնիշում, իսկ Եվրոպայից հասնող լուրերը գնալով ավելի հուսահատեցնող էին:

Հունվարի վերջերին Թոմաս Հարդինգին հոսպիտալից դուրս գրեցին, ու բժիշկները թույլ տվեցին ուղևորվել Լոնդոն: Պորտ Սայիդում նստեցին ռազմական նավատորմի հածանավ, ու Պաղեստինում Բրիտանիայի Բարձրագույն կոմիսարի կարգադրությամբ նավի կապիտանն իր խցիկը զիջեց Թոմաս ու Սարա Հարդինգներին: Դա բացառիկ արտոնություն էր բացառիկ անձնավորության համար, ով այդպիսի մեծարման արժանացել էր իր ներդրած մեծ ջանքերի շնորհիվ:

Իսպանիայում տիրող քաղաքացիական պատերազմը բարդացնում էր Ջիբրալթարի նեղուցով անցնելը: Կապիտան Ստյուարտը Թոմասին բացատրեց, որ Իսպանիայի տարածքային և հարակից ջրերով անցնող բոլոր նավերը պետք է հայտնեին իրենց տվյալները: Դա դանդաղեցնում էր նավարկությունը, քանի որ երբեմն պատահում էին առանց լույսերի նավեր, որոնք բախման վտանգ էին ստեղծում:

Լոնդոնում Թոմաս Հարդինգին առաջինն այցելեց Ավգուստուս Նյումանը: Նա իր կամքով անցել էր թոշակի, թեև նրան խնդրել էին, որ որպես դիտորդ մասնակցեր Պաղեստինին նվիրված խորհրդակցությանը, որը փետրվարի վերջերին տեղի էր ունենալու «Սենտ Ջեյմս» պալատում: Ոչ ոք անգամ չնչին հույս չուներ, թե արաբներն ու հրեաները որևէ համաձայնության կգային, սակայն անհրաժեշտ էր փորձել:

- Լսի՛ր, Թոմա՛ս, Չամբեռլենը պատվիրել է հրատարակել «Սպիտակ թուղթ» ու այդ գործը հանձնարարել է Մակ Դոնալդին[90], սակայն բնականաբար այն չեն կարող հրատարակել, մինչև որ սպառվեն բոլոր հնարավորությունները: Ամեն դեպքում դա անօգուտ կլինի, և ամենաչնչին հնարավորությունն անգամ բացառվում է, քանի դեռ Պաղեստինում մեծ մուֆտին՝ Ամին ալ-Հուսեյնին է ղեկավարում արաբական քաղաքականությունը: Նա իրեն պահում է այնպես, որ հրեաների նկատմամբ տածած իր ատելությամբ ասես Երրորդ Ռեյխի ևս մի դեսպան լինի: Ի՞նչ արած, հիմա հազարավոր հրեաներ են սպասում Պաղեստին մտնելու համար, իսկ Չամբեռլենը, ով վախկոտ ու անվճռական անձնավորու-

[90] Մակ Դոնալդ՝ Նևիլ Չամբեռլենի առաջին կառավարությունում զբաղեցնում էր գաղութների գծով նախարարի պաշտոնը (հղումը՝ հեղինակի):

թյուն է, շարունակ սպասում է, թե ուրիշներն ինչ կասեն, իսկ արդյունքում գործը տեղից չի շարժվում: Ջ. Վուդհեդի հանձնաժողովը չարդարացրեց սիոնիստների սպասելիքները[91]: Այժմ կան միլիոնից ավելի հրեաներ, ովքեր սպասում են իրենց հերթին. Գերմանիայի, Ավստրիայի, իսկ հիմա նաև Սուդետի հրեաներ: Մեծամասնությունը ցանկանում է մտնել Պաղեստին: Պատկերացրո՛ւ, թե ինչով կավարտվի «Սենտ Ջեյմսի» խորհրդակցությունը:

Թոմաս Հարդինգը, առանց ճիգ գործադրելու, կարող էր պատկերացնել այդ ամենը: Ուներ արաբ ու հրեա բարեկամներ և գիտեր, թե ինչ արագությամբ կաճի ատելությունը: Արաբական աշխարհը չէր ընդունի հրեական պետության ստեղծումը Դար Ալ Իսլամ կոչված վայրի սրտում: Մյուս կողմից հրեաները՝ իշուվները, կարծում էին, որ այդ հողի վրա իրենք բոլոր իրավունքներն ունեն. հազարավոր հրեաներ ի սկզբանե ապրել են այդտեղ: Նրանք հրեա ազգի հինավուրց մշակույթի կրողներն են և գոյություն ունեն անհիշելի ժամանակներից: Նրանք նույնպես չէին գնա զիջման: Ուրեմն՝ ի՞նչ տեղի կունենար:

Ի վերջո, Ավգուստուս Նյումանը ներկա գտնվեց Լոնդոնի թերթերի հայտարարած «Կլոր սեղանին», թեև նկարները ծաղրանքով հուշում էին, որ այնտեղ ամեն ոք կար՝ բացի ջենտլմեններից:

Առաջին իսկ օրից արաբները հրաժարվեցին սեղանի շուրջ նստելուց: Տեղում որոշեցին, որ նրանց առանձին սրահում տեղավորեն, և հենց Նյումանն էր ստիպված մի սրահից մյուսը գնում-գալիս: Նրանք հրաժարվեցին որևէ ճաշկերույթի, անգամ բրիտանական Արտգործնախարարության կազմակերպած ճոխ ընթրիքին մասնակցելուց: Ինչ վերաբերում էր հրեաներին, ապա նրանք ընդունեցին անհաղորդ, անզիջում կեցվածք, թեև գոնե համաձայն էին բանակցել ցանկացած հարցի շուրջ:

Արաբներն առաջին հերթին բարձրաձայնեցին Բալֆուրի հռչակագրի անօրինականության և Սայքս-Պիկո համաձայնագրին իրենց դեմ լինելու մասին: Բրիտանացիները հարկ չհամարեցին անդրադառնալ մի հարցի, որն իրենց համար անցել էր պատմության գիրկը: Հիմնական խնդիրն ալ-Հուսեյնի դիրքորոշումն էր, ով բրիտանացիներին ատում էր այնքան, որքան հրեաներին, կամ՝ ավելի շատ:

Ամեն երեկո մեկ բաժակ հրաշալի թեյի շուրջ Նյումանն ու Թոմասը վերլուծում էին իրավիճակը:

[91] 1938թ. հունվարին Ջ. Վուդհեդի գլխավորած հանձնաժողովն այցելեց Պաղեստին և պատրաստեց մի զեկույց, որը տպագրվեց նույն տարվա նոյեմբերին: Այդ զեկույցը հարուցեց հրեաների զայրույթը (հղումը՝ հեղինակի):

- Իմ կարծիքով՝ այս խորհրդակցությունն այն բազմաթիվ մեծ սխալներից է, որ թույլ է տվել մեր վարչապետը: Մի՞թե կարելի է այդ կերպ կուլ գնալ ու հարմարվել: Նրա խնդիրն այն է, որ ինքը հեռու է իրականությունից: Վախենում է զինված ընդհարումից, ատում է զենքերն ու երդվյալ հակառազմամոլ է: Արաբներն ու հրեաները վաղ թե ուշ իրար վրա կրակ կբացեն: Եթե հրեաներն ուզում են մնալ և կառուցել իրենց երկիրը, ապա դրան միմիայն կհասնեն վիթխարի ֆինանսների գնով: Ինչ վերաբերում է արաբներին, ապա նրանց ամենամեծ խնդիրն այն է, որ մեկը մյուսին չի վստահում: Բեն Գուրիոնին դա քաջ հայտնի է: «Բաժանի՛ր և կտիրես»,- ասում էր Նյումանը:

Ինչպես և նա էր կանխատեսում, խորհրդակցությունն առանց որևէ համաձայնության գալու ավարտվեց մարտի կեսերին: Նեհլ Չամբեռլենն անցկացրեց ևս մի շարք խորհրդակցություններ և շատերի թվում հրավիրեց նաև Նյումանին ու Հարդինգին: Նրա ամենամեծ անհանգստությունն այն էր, թե ինչ կպատահի այն միլիոնավոր հրեաների հետ, ովքեր կփորձեն Պաղեստին մտնել: Ելույթով հանդես եկավ Նյումանը, ով նախապես գիտեր, որ չի ասելու այն, ինչ վարչապետը կկամենար լսել:

- Պարո՛ն վարչապետ, պետք է, որ մենք համաձայնենք հրեաների ներգաղթին: Իրավիճակն այնպիսին է, որ հետադարձի ճանապարհ չկա, մանավանդ եթե հաշվի առնենք նացիստների բռնած դիրքը: Հակառակ դեպքում հրեաների ճակատագիրը կախված կլինի նացիստներից, այսինքն՝ այն, ինչ հիմա կատարվում է Գերմանիայի, Ավստրիայի և Սուդետի մարզի հրեաների հետ: Ոչ ոք չի հավատում, որ գերմանացիները կանգ կառնեն: Իսկ SIS-ից եկող այն հաղորդագրությունները, թե ինչպես են վարվում հրեաների հետ, թե ինչ են մտադիր անել, սահմռկեցուցիչ են: Այլ կերպ ասած՝ կա՛մ նրանք գնում են Պաղեստին, կա՛մ մենք նրանց առջև պետք է բացենք եվրոպական երկրների դռները: Եթե՝ ո՛չ, ապա մենք ենք կրելու սպասվող իրադարձությունների պատմական պատասխանատվությունը:

- Թանկագի՛ն Նյուման, մեզ մի՛ դարձրու հրեաների նկատմամբ Հիտլերի կողմից իրականացվող ոճրագործությունների պատասխանատու: Բալֆուրի հռչակագրի և Սայքս-Պիկո համաձայնագրի շնորհիվ հրեա ժողովուրդը դեռ կարող է որևէ հույս ունենալ: Սակայն հիմա հարկավոր է հրատարակել «Սպիտակ թուղթը», որում նշված կլինեն Պաղեստին ներգաղթելու պայմանները: Ձեր կարծիքով՝ մենք չպե՞տք է հաշվի առնենք միլիոնավոր մուսուլմանների տեսակետները: Չէ՞ որ համաձայն չեն անգամ քրիստոնյա արաբները:

Երբ նրանք դուրս եկան Դաունինգ Սթրիթ 10-ից (բրիտանական վարչապետների նստավայրը), Ավգուստուսը սաստիկ զայրացած էր: Թոմասը փորձում էր նրան հանգստացնել.

- Չամբեռլենն այն խաղաղասերներից է, ով թշնամիներին մղում է պատերազմի: Նրա խնդիրը բացարձակապես անկարող լինելն է: Ոչինչ չգիտի Արևելքի մասին ու ենթարկվում է իր նախարարների ազդեցությանը, ովքեր նրա պես անգետ են, անկարող ու անվճռական: Վախենում են, որ նրանց կմեղադրեն որպես ռազմամոլների: Ի՜նչ խայտառակություն… Ահա թե ինչի կարող է հասցնել գիտելիքների և տեղեկատվության պակասը:

- Թոմա՛ս, հիմա այդ Հիտլերը կանգ չի առնի: Գերմանիան իր պատմության մեջ ունի ամենաուժեղ բանակը: Նրանք համոզված են, որ եվրոպական ոչ մի երկիր ի վիճակի չէ դիմադրել իրենց: Մյուս կողմից հրեաները զրկված են իրենց բոլոր իրավունքներից: Կարո՞ղ ես պատկերացնել հաջորդ քայլը: Ես՝ այո՛: Որտե՞ղ են ապաստանելու այն երկրների հրեաները, որոնք կզավթի Հիտլերը: Հետախուզական ծառայությունները հայտնում են հրեաների դեմ կատարվող իրական ոճրագործությունների մասին: Իսկ հիմա էլ «Սպիտակ թուղթը»… Հասցրի կարդալ սևագիրը, և հենց որ այն տպագրվի, Պաղեստինում լուրջ խնդիրներ կունենանք:

Նյումանը մատը դրել էր վերքին: «Սպիտակ թղթի» բովանդակությունը սպասվածից շատ ավելի վատն էր. առաջարկում էին ստեղծել խառը՝ արաբա-իսրայելական պետություն՝ անշուշտ արաբների մեծամասնությամբ, խիստ սահմանափակել հրեական ներգաղթը Պաղեստին և արգելել, որ հրեաները նոր հողեր գնեն այնտեղ:

Երբ Թոմասը զանգահարեց Նյումանին, հեռախոսին ոչ ոք չպատասխանեց: Հաջորդ օրը նրանից նամակ ստացավ.

«Սիրելի՛ Թոմաս,

ես վճռել եմ կյանքիս վերջին օրերն անցկացնել Պաղեստինում, ինչպես գիտես, իմ հրեական արյունն ի վերջո իրեն զգացնել է տալիս: Հանկարծ զգացի, թե որքան ծեր եմ արդեն, և ինձ որքան քիչ է մնում ապրելու համար: Կյանքս հետաքրքիր է եղել, և մտադիր էի հանգստի անցնել Բեյրութում: Վերջիվերջո կգնամ մի որևէ «կիբուց»՝ կոլեկտիվ համայնք, ու թերևս կարողանամ մի բանի պիտանի լինել, թեկուզ հաշվապահությամբ կզբաղվեմ: Ի դեպ, ուզում եմ իմ ողջ ունեցվածքը նրանց նվիրաբերել: Երբ վճռեմ, թե ուր եմ գնում, քեզ կտամ հասցես: Միշտ հիշի՛ր, որ դու ու քո ողջ ընտանիքը միշտ իմ սրտում կլինեք:

Քո բարեկամ՝ Ավգուստուս Նյուման»:

Թոմասի աչքերը խոնավացան: Կյանքում ամեն բան իր ժամանակն ունի: Խնդիրը միայն համբերելն է. հասել էր Նյումանի թոշակի գնալու պահը: Հարկավոր էր նրան համոզել, որ գրի իր հիշողությունները: Թոմասը չէր մոռանում այն հեռավոր օրը, երբ Բեյրութ հասնելուց ընդամենը մի քանի շաբաթ անց այցի գնաց հայր Դոնելիին ու հենց այդ ժամանակ ծանոթացավ Նյումանի հետ:

Թոմասի կարծիքով՝ թոշակի գնալու համար իրեն նույնպես շատ ժամանակ չէր մնացել: Ընդ որում՝ դա ոչ այնքան իր տարիքով, որքան առողջական խնդիրներով էր պայմանավորված. թեև դեռ չէր լրացել նրա վաթսունամյակը, բայց այդ խնդիրների պատճառով չէր կարողանում շարունակել աշխատանքը: Միշտ մտածել էր, որ երբ անցներ թոշակի, կգնար Բեյրութ: Առողջական վիճակը, սակայն, դա նրան թույլ չէր տալիս:

Ապրիլի վերջերին Նյումանն արդեն Երուսաղեմում էր: Տեղեկացավ, որ հրեաները հիմնել էին անօրինական ներգաղթով զբաղվող մի կազմակերպություն[92], որը ոչ ոքի զարմանք չպատճառեց: Դա եղավ «Սպիտակ թղթի» և «Սենտ Ջեյմս» պալատում տեղի ունեցած խորհրդակցության ձախողման պատասխանը: Ձախողման հետևանքներից էր նաև այն, որ տարվա սկզբին գերմանացիները ստեղծեցին Հրեական ներգաղթի հաստատությունը, որի ղեկավարները Հայնրիխ Մյուլլերն ու Ադոլֆ Էյխմանն էին:

Ողջ Եվրոպայով մեկ լարվածություն էր զգացվում, Հիտլերի ճառերը գնալով դառնում էին ավելի ագրեսիվ: Լոնդոնյան մամուլը քննադատում էր Չամբեռլենին: Մինչև ե՞րբ պետք է թույլ տալ, որ նացիստներն իրականացնեն իրենց ծրագրերը, չէ՞ որ պետք է նախազգուշացնել, որ այդպես չի կարող շարունակվել: Ո՞վ է կատվի վզին զանգ կախելու: Ռենանիան, Ավստրիան, Սուդետը, Չեխոսլովակիան… Ի՞նչ կպատահի, եթե նրանք ներխուժեն Լեհաստան:

Վարչապետի պատասխանը կտրուկ էր՝ պատերազմ: Օրեր անց Թոմասին հրավիրեցին գաղտնի խորհրդակցության: Ներկա էին քառասունութ հոգի, որոնց կարծիքը ողջ Մեծ Բրիտանիայում ամենածանրակշիռն էր համարվում: Թոմաս Հարդինգը հրավիրված էր որպես Մերձավոր Արևելքի և Միջին Արևելքի փորձագետ: Ինչպես նրան, այնպես էլ մյուս փորձագետներին հրավիրել էին, որպեսզի Գերմանիայի հետ զինված ընդհարման դեպքում կարողանային օգտվել նրանց փորձառությունից: Դեռ ոչ ոք չէր ուզում գործածել «պատերազմ» բառը: Խու-

[92] Mossad le' Aliyah Bet՝ Անօրինական ներգաղթի կազմակերպություն (հղումը՝ հեղինակի):

սափում էին նաև «համընդհանուր պատերազմ» կամ նմանօրինակ որակական այլ արտահայտություններից: Այնինչ Ուինսթոն Չերչիլը, կանխատեսելով առաջիկա արհավիրքը, տարիներ շարունակ խոսում էր անխուսափելի պատերազմից:

Խորհրդակցության բոլոր մասնակիցները հուսախաբ էին: Թոմասը մասնակցեց երեք նիստերի և հասկացավ, որ վերջին կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը կարող է համեմատվել ջայլամի քաղաքականության հետ: Անձամբ ինքն ատում էր պատերազմը: Նրան լիուլի բավական էր այն, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մասնակցել էր Պաղեստինի ռազմարշավին. ավելին նրան պետք չէր:

Վերսալի դաժան պայմանագիրն այն սերմնահատիկն էր, որից ծնունդ առավ չարիքը: Սակայն վատթարն այն էր, որ Անգլիան քնել էր իր դափնիներին: Ինչպես նավատորմը, այնպես էլ ամբողջ բանակը հին էին: MI 6-ը սեղանին դրեց մի անհույս հաշվետվություն, ըստ որի՝ եթե Անգլիան պատերազմի Գերմանիայի դեմ, ապա հաղթանակի հասնելու հավանականությունն ավելի նվազ կլինի, քան պատերազմի մեջ մտած կամավորականների գումարտակի դեպքում: Գերմանացիներն ամեն օր արտադրում էին վերջին սերնդի տասնյակ հրասայլեր, ինչպես նաև ինքնաթիռներ, սուզանավեր ու ծանր հրետանի:

Տուն վերադառնալուց հետո Թոմասը հոգնածություն զգաց: Իրադարձություններն ընթանում էին շատ արագ, ապագան երևում էր մութ ու դժոխային:

Մի քանի շաբաթ անց Էթելը հասավ Անգլիա: Ջոնը հոր հետ մնացել էր Բեյրութում: Թոմասը տեղյակ էր այն երաշխավորություններից, որոնք իր հաշվետվություններում Նյումանը ներկայացրել էր Էթելի համար: Ահա թե ինչու էր Էթելը ժամանել Անգլիա: Այդ մասին, սակայն, Թոմասը չէր կարող խոսել ո՛չ Սարայի և ո՛չ էլ իր դստեր հետ: Նա հպարտ էր, բայց և՝ անհանգստացած:

Իր բոլոր բարեկամների ու ծանոթների կարծիքով՝ Էթելն Անգլիա էր ուղևորվել, քանի որ իր հայրն առողջական լուրջ խնդիրներ ուներ: Ինչ-որ առումով դա այդպես էր: Ընդ որում՝ դա նաև նրան Լոնդոն կանչած անձնավորության առաջին նախապայմանն էր. MI 6-ի կամ արտասահմանյան հետախուզական ծառայության համար պատրվակները պետք է իրական լինեին: Էթելին հրահանգել էին թռչել նոր՝ Դամասկոս-Հռոմ-Լոնդոն երթուղով, կանգառը՝ Հռոմում: Փորձարկում էին բրիտա-

նական տրանսպորտային նոր ինքնաթիռ, որը պետք է չորս հազար կիլոմետրն անցներ տասներկու ժամում: Անգամ Էդուարդին և իր մտերիմ բարեկամներին Էթելն իր մեկնումը բացատրել էր հոր առողջական վիճակով: Անշուշտ, իր ուղևորության համար դա համոզիչ առիթ էր:

MI 6-ը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Էթել Բողոսյանի նկատմամբ, թեև այդ ծառայության փաստաթղթերում նա հիշատակվում էր որպես Էթել Հարդինգ: Նա երիտասարդ, առողջ կին էր՝ օժտված մտավոր ներուժով, կատարելապես խոսում էր արաբերեն, գերմաներեն, ֆրանսերեն, բավականաչափ լավ՝ հայերեն: Տարածաշրջանում ճանաչված անձնավորություն էր և վստահելի մարդու համբավ ուներ: Ընտանիքի մայր լինելն ամենևին խոչընդոտ չէր, այլ ընդհակառակը՝ նրան լրացուցիչ առավելություն էր ընձեռում, այն է՝ որևէ մեկը չէր կասկածի, որ նա ներքաշված է գաղտնի գործունեության մեջ:

Գնդապետ Մայքլ Բաքլիին հանձնարարված էր զրուցել Էթելի հետ: Ընդամենը կես ժամ էր նրա հետ զրուցել, երբ հասկացավ, որ Ավգուստուս Նյումանի տեղեկատվությունը շատ սեղմ էր: Էթելը խորապես տեղյակ էր Լիբանանի, Սիրիայի, Պաղեստինի և Թուրքիայի պատմությանը: Այն հարցին, թե ինչպես էր Էթելը հասել իմացության այդ մակարդակին, նա պատասխանեց, որ դա երկու պրոֆեսորների հետ ունեցած մասնավոր դասերի շնորհիվ է: Էթելը նկատի ուներ իր հորն ու Ավգուստուս Նյումանին, որոնց զրույցներն ու մեկնաբանությունները լսել էր դեռ մանուկ հասակից:

Նրան ավելի պարզ հարց տրվեց.

- Ձեզ համարո՞ւմ եք անգլուհի:

- Իհարկե՛: Առանց որևէ կասկածի:

Սակայն ավելացրեց, որ իրեն նաև համարում է լիբանանուհի: Շատ է կապված Լիբանանին: Ինչպես ինքը, այնպես էլ իր որդին ծնվել են այնտեղ: Իր ամուսինը ծագումով հայ է՝ ծնված Թուրքիա կոչված տարածքում, սակայն նա ոտքից գլուխ իրեն համարում է լիբանանցի:

- Կզոհեի՞ք Ձեր կյանքը հանուն Մեծ Բրիտանիայի:

Էթելը նայեց իր խոսակցի աչքերին.

- Այո՛: Անկասկած:

Խոսակիցը հատուկ շեշտադրմամբ հարցրեց.

- Գիտակցո՞ւմ եք արդյոք, որ ինչ-որ ժամանակ, երբ ինչ-որ ծայրահեղ պահ լինի, կարող եք կանգնել բարոյական երկընտրանքի առջև, օրինակ՝ ենթադրյալ, բայց առաջիկայում հնարավոր ընդհարում Գերմանիայի հետ:

- Այո՛,- պատասխանեց Էթելը: Կարծում էր, որ կարող է պատահել, քաջատեղյակ է:

Այդ օրերին Էթելն ապրում էր իր ծնողների տանը: Հայրը նրան ասաց, որ Գերմանիայի հետ պատերազմն ամիսների հարց է, և նրան խորհուրդ տվեց, որ հնարավորինս շատ մթերք պահեստավորի: Թոմասը շատ լավ էր հիշում, թե Բեյրութում ինչ կատարվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Բրիտանիան շրջափակում էր իրականացրել: Բավականաչափ փորձառու էր՝ հասկանալու համար այն, որ պատմությունը միշտ կրկնվում է:

Հայրն իր դստերը խորհուրդ տվեց երկու այծ գնել: Թվում էր, թե դա հիմարություն է, սակայն այծերը ցանկացած բան կաթի վերածելու ընդունակ են և հարկ եղած պահին շատ օգտակար են, մանավանդ որ տանը փոքրիկ երեխա է լինում:

Էթելը չէր կարծում, որ իրավիճակն այդ աստիճան կբարդանա, սակայն որպեսզի հայրն իրեն լավ զգա, խոստացավ, որ այդպես էլ կանի. Բեյրութ հասնելուն պես մթերքի ցուցակ կկազմի, կգնի ու կպահեստավորի:

Մեկ ամիս անց Էթելը Սաութամփթոնում նավ նստեց՝ Բեյրութ ուղևորվելու համար: Նույն այն կինն էր, ով մի քանի շաբաթ առաջ էր եկել Լոնդոն: Միակ տարբերությունն այն էր, որ ընդունվել էր MI 6-ի շարքերը: Երդումը նրան ստիպում էր, որ դա գաղտնի պահի նույնիսկ իր ամուսնուց՝ խնդիրներից խուսափելու և իր ընտանիքը վտանգի չենթարկելու նպատակով: Էթելը քաջ գիտակցում էր, թե ինչ պատասխանատվություն է ստանձնել այդ իրավիճակում, երբ ցանկացած պահի կարող էր պատերազմ բռնկվել:

Ըստ նրան տրված փաստաթղթի՝ Էթելը Օքսֆորդի համալսարանի դասախոս էր. դա՝ որպես հարգանքի տուրք իր հորը: Ոչ մի այլ գործառույթի մասին այդ փաստաթղթում չէր հիշատակվում: Նրան մի նամակ էին ուղարկելու, ըստ որի՝ նա 1940-1941 թվականների աշնանն ու ձմռանը պետք է մասնակցեր համալսարանի գիտարշավի՝ Բաալբեկում ու Պալմիրայում իրականացվելիք պեղումներին: Պետք է նաև ուղևորվեր Դամասկոս, Երուսաղեմ ու մասնակցեր այն հավաքներին, որոնց մասին իրեն տեղյակ կպահեին: Այդ ամենից զատ՝ նա, ըստ իրեն տրված հրահանգների, Բեյրութում շարունակելու էր իր առօրյա կյանքը՝ պահպանելով նախկինում վարած ապրելակերպը:

Ինչ վերաբերում էր նրա պարտականություններին, ապա պետք է նախազգուշական միջոցներ ձեռնարկեր MI 6-ի կամ բրիտանական բա-

նակի ու նավատորմի այլ գործակալների համար, երկրում տիրող իրավիճակի մասին հաղորդեր ծածկագրված զեկույցներ և պատասխաններ նրանց, ովքեր խնդրանքով կդիմեին իրեն:

Բեյրութ վերադառնալիս կստանար ռադիոընդունիչ և այն կներկայացներ այնպես, թե իբր գնել է Լոնդոնում: Դա թանկարժեք մի քմահաճույք էր, բայց Բողոսյանները դա կարող էին իրենց թույլ տալ: Նա ամուսնուն կասեր, որ միշտ երազել է մի այնպիսի բարձրակարգ ռադիոընդունիչ ունենալու մասին, որի շնորհիվ կարող էր լսել «ԲիԲիՍի» և այլ եվրոպական ռադիոկայանների հաղորդումները: Այն կտեղադրեր այնպիսի տեղում, որ բոլորը տեսնեն ու լսեն: Սովորական և այդ ռադիոընդունիչի միջև տարբերությունն այն էր, որ եթե անջատված վիճակում միաժամանակ սեղմեին աջ ու ձախ կողմերի վերջին կոճակները, ապա միջից հայտնվում էին ստեղնաշարը և բարձրախոսը՝ տեղեկություն ստանալու և հաղորդելու համար: Դրսի ալեհավաքը նույնն էր և որսում էր երկար ալիքներն ու հարկ եղած պահին հաղորդում:

Միակ մարդը, ով տարածաշրջանում տեղյակ էր լինելու Էթել Բողոսյանի՝ որպես MI 6-ի գործակալ լինելուն, Երուսաղեմում գործող գնդապետներից մեկն էր՝ իրենց ծառայության ղեկավարը:

Երբ Բեյրութում իջավ նավից, այնտեղ էին Էդուարդն ու Ջոնը: Վերջինս, կրկին մորը տեսնելով, գոհ ժպտաց: Հետո ամեն բան ընթացավ առաջվա պես: Արտաքուստ նիրհող այդ քաղաքի որոշ թաղամասերով անցնում էին այծերի հոտերը, իսկ ժամանակ առ ժամանակ հասնում էին ուղտերի քարավանները:

Օգոստոսի վերջերին Բեյրութի թերթերը հայտնեցին գերմանախորհրդային պայմանագրի մասին լուրը: Ըստ դրա՝ Գերմանիան և ԽՍՀՄ-ը չպետք է միմյանց վրա հարձակվեին:

Այուբ Թաբիթն իր մտերիմների շրջանում, որոնց շարքում էր նաև Էդուարդ Բողոսյանը, որոշ մեկնաբանություններ արեց այդ պայմանագրի վերաբերյալ.

- Դա հակաբնական մի բան է: Ա՜յ քեզ աղետ.. Կրկին պատերազմ կլինի:

Բոլորն էլ հասկանում էին, որ նա իրավացի է, թեև չէին ցանկանում խոստովանել:

Ընդամենը մեկ շաբաթ անց բժիշկ Թաբիթը եկավ իր նոր՝ «Սիտրոյեն» մակնիշի ավտոմեքենայով:

- Էթե՛լ, Էդուարդը տա՞նն է: Գերմանիան ներխուժել է Լեհաստան: Ահավո՜ր աղետ…

Էթելն այդ լուրը հենց նոր էր լսել իր ռադիոընդունիչով: Գիտեր, թե դա ինչ է նշանակում. Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան անմիջապես պատերազմ կհայտարարեն, և աշխարհը կրկին կմխրճվի կրակի հորձանուտը, ու ոչ ոք չի կարողանա կանխատեսել դրա վերջը:

Մեկ ժամ անց նա լսեց Էդուարդի մոտոցիկլետի հռնդյունը: Նա վազելով տուն մտավ ու գրկեց կնոջը: Դուրս եկան պատշգամբ ու տեսան այծապահին, ով քշելով տանում էր սպիտակ այծերի իր հոտը: Էդուարդը ժպտաց ու վազելով ցած իջավ: Մի փոքր անց վերադարձավ՝ իր հետ բերելով երկու ճերմակ այծերի:

- Քո հայրը ողջամիտ մարդ է,- ասաց Էդուարդը և մատնացույց արեց կենդանիներին,- Ջոնի համար են:

Էթելը, երեխային գրկած, իջավ ներքև, ու Ջոնն անմիջապես ուզեց հպվել, շոյել այծերին, որոնք որևէ կերպ չընդդիմացան երեխայի ցանկությանը՝ ասես հասկանալով, որ վերադարձել է Դաֆնիսը: Դիտելով այդ տեսարանը՝ Էթելը հանգիստ շունչ քաշեց. Բեյրութը հատուկ վայր էր՝ ընտրված աստվածների կողմից, ու այդտեղ իրենց ոչինչ չէր պատահի:

54. ԱՆՍՊԱՍԵԼԻՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1939թ.

Լոնդոնի իր տանը Թոմաս Հարդինգն իմացավ կանխատեսված իրադարձության վերաբերյալ լուրը. գերմանական զորքերը ներխուժել էին Լեհաստան: Այդ մասին նա ուներ նաև գաղտնի տեղեկություն: Անգլիական մամուլն ու ողջ երկիրը շոկի մեջ էին: Երկու օր անց՝ սեպտեմբերի 3-ին, Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան Գերմանիային պատերազմ հայտարարեցին: Վերսալի պայմանագրից մինչ այդ պահն ընկած ժամանակահատվածը սոսկ մի ակնթարթ էր թվում:

Հազիվ մեկ շաբաթ էր անցել, երբ նա ստացավ Պորտ Սայիդ մեկնելու հրամանը: Պետք է Պաղեստինում լիներ Բարձրագույն կոմիսարիատի լիազոր ներկայացուցիչը, նստավայրը՝ Երուսաղեմում: Նա պետք է պատրաստեր անհրաժեշտ հաշվետվություններ և պահպաներ իրեն հանձնարարված կապերը:

Թոմասն այդ հրամանի կապակցությամբ որոշեց ոչ մի հայտարարություն չանել իր առողջության վերաբերյալ: Դժվար ժամանակներ էին բոլորի համար, ու նա վճռեց գործի դնել իր ողջ եռանդը: Մյուս կողմից նա մտածում էր, որ վատ չէ կրկին Պաղեստինում լինելը, այսինքն՝ Բեյրութին մոտ բնակվելը, որտեղ Էթելն էր ապրում: Սարան էլ ուզում էր, որ նրա հետ լինի, և համոզված էր, որ միասին կհաղթահարեին ամեն ինչ՝ թե՛ լավը, թե՛ վատը:

Ավելի ուշ Թոմասն իմացավ, որ իր հրամանը տրվել էր Պաղեստինում գլխավոր հրամանատարի՝ սըր Հարոլդ Մաք Մայլի հատուկ խնդրանքով, ում հետ ինչ-որ շփում էր ունեցել տարիներ առաջ: SIS-ը համոզված էր, որ գերմանացիները Աֆրիկայի հյուսիսում ռազմարշավ են նախաձեռնելու, ինչը վերածվելու էր իսկական մղձավանջի: Թոմասը կարոտով էր հիշում Ալենբիին, ով Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հաղթել էր պաղեստինյան ճակատում: Նա շատ լավ էր հիշում Մեգիդոյի ճակատամարտը, որին ինքը ներկա էր եղել: Եվ ահա այժմ կրկին տարածվում է պատերազմի հուրը, որը շատ մարդկանց կյանքը կայրի:

Ֆրանսիական «Դորնիե» արտադրության ինքնաթիռը նրանց վերցրեց Լոնդոնին մոտակա ռազմակայանից: Կանգառները Մարսելում և Մալթայում էին լինելու: Սարան դեռ ինքնաթիռ չէր նստել:

Նրանք կրկին Պաղեստինում էին: Ամուսիններին մի առանձնատուն հատկացրին Երուսաղեմում՝ բարձրաստիճան հրամանատարությու-

նից ոչ հեռու: Տունն ուներ պարտեզ, մուտքի մոտ մի ժամապահ կանգնեցրին, մեկ ուրիշին էլ՝ առաջին հարկում՝ Թոմասի գրասենյակի մոտ: Բանն այն էր, որ արաբները կարող էին ինչ-որ սադրիչ քայլ ձեռնարկել. այդ օրերին բոլոր նախազգուշական միջոցները բավարար չէին: Նա հեռագիր ուղարկեց Էթելին՝ հայտնելով, որ գտնվում են Երուսաղեմում՝ Բեյրութի հարավում՝ մայրուղով ընդամենը հարյուր հիսուն մղոն հեռավորության վրա: Երուսաղեմ գալով՝ Թոմասն իրեն ավելի լավ էր զգում: Մտածեց Ավգուստուս Նյումանին հանդիպելու մասին:

Պաղեստինում խնդիրը նացիստների և մեծ մուֆտի ալ-Հուսեյնի առաջնորդությամբ գործող և առավել արմատական դիրքորոշում ունեցող արաբների միջև ձևավորված հարաբերությունն էր: Հայտնի էր, որ որոշ արաբներ տեղեկություններ էին հաղորդում Մերձավոր Արևելքում բրիտանական ուժերի կազմի և նրանց տեղակայման վերաբերյալ: Մյուս կողմից Դամասկոսում սիրիացի կոմունիստներն իրենց կապերը խզել էին ազգայնամոլների հետ: Թոմասին մի նոր տեղեկություն հասավ նորաստեղծ գաղտնի կազմակերպության՝ արաբական սոցիալիստական վերածննդի «ԲԱԱՍ» կուսակցության մասին: Այն ղեկավարում էին մի ուղղափառ քրիստոնյա արաբ՝ Միշել Աֆլաքը, և մի արաբ սունի՝ Սալահ ալ-Դին Բիթարը: Սկզբունքային առումով նրանք դեմ էին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հովանավորչությանը, որոնց համարում էին գաղութարար տերություններ:

Աշխատանքների համակարգմանը նվիրված հանդիպման ժամանակ Թոմասն իմացավ, որ իր դուստրը MI 6-ի գործակալ է դարձել: Նա գիտեր, որ Էթելը ներգրավված է հետախուզական ծառայությունների աշխատանքում, բայց չէր կարծում, որ նա համալրել է MI 6-ի գործակալների ցանցը: Այդ նորությունը նրան նյարդայնացրեց, սակայն խորհեց այն մասին, որ այդ դժվարին պահին բոլորն էլ պետք է օգնեն Մեծ Բրիտանիային:

Էթելն ուղևորվեց Երուսաղեմ ու հորը ողջունեց գրկախառնությամբ: Սարան գտնվում էր խաղից դուրս և ոչինչ չպետք է իմանար իր խորթ աղջկա գործունեության մասին: Երբ միասին հասան տուն, Էթելը Սարային ասաց, որ նրանց՝ այդտեղ գտնվելու լուրը ստանալուն պես որոշեց գալ տեսության: Մայրը ժպտաց, սակայն անհանգստացած էր առկա իրավիճակից, միաժամանակ՝ գոհ, որ ինքն ու իր ընտանիքը գտնվում են ընդհարումից հեռու:

Էթելը չէր կարող նրանց պատմել իսկական եղելությունը: Բանն այն էր, որ սիրիացի ազգայնամոլները, երբ Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան

պատերազմ հայտարարեցին Գերմանիային, փորձում էին նացիստների հետ բարելավել իրենց հարաբերությունները: Էթելը տեղյակ էր Լիբանանի վարչապետի՝ սեպտեմբերի կեսերին այդ պաշտոնին նշանակված Աբդուլլահ Բայհումի և Միշել Աֆլաքի միջև առկա գաղտնի նամակագրությունից: Բայհումը գոնե առաջիկայում հրաժարվում էր Ֆրանսիայի դեմ նախատեսվող որևէ դավադրության մեջ մտնելուց: Ինչ վերաբերում էր Էմիլ Էդիհ, ապա թվում էր, թե նա առավել անհանգստացած էր իր խնդիրներով: Այնքան էլ բարենպաստ ժամանակաշրջան չէր ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ էլ Մերձավոր Արևելքում վարած նրա քաղաքականության համար:

Անկախ ամեն ինչից՝ Պաղեստինում կյանքը շատ ավելի լավ էր, քան Եվրոպայում: Շարունակվում էր հրեա ներգաղթողների հոսքը, և գնալով աճում էր նրանց ու արաբների միջև առկա լարվածությունը: Հրեաները Լիբանան շատ ավելի քիչ էին գալիս, հիմնականում՝ այդտեղից Պաղեստին անցնելու համար: Լուրերը, որ հասնում էին Լեհաստանից, Գերմանիայից և այն վայրերից, որտեղ իշխում էին նացիստները, սարսափելի էին: Պատմության ընթացքում մարդկանց մի մասը երբեք այդպես չէր վարվել այլ մարդկանց հետ:

Հոկտեմբերին հրամանատարությանը կցված բժիշկը Թոմաս Հարդինգին ախտորոշեց սուր տախիկարդիա ու հիվանդության պատճառով անորոշ ժամանակով ազատեց աշխատանքային պարտականություններից:

Թոմասը որոշեց գնալ Բեյրութ: Այնտեղ հրաշալի բժիշկ բարեկամներ ուներ, և բացի դրանից՝ եթե նրան վիճակված էր մահանալ, ապա Լիբանանն ամենահարմար վայրն էր: Այնտեղ գնալու թույլտվություն խնդրեց: Երկու օր անց նա Բեյրութում էր՝ իր տանը:

Հոկտեմբերի վերջին՝ մի առավոտ, Թոմասը դուրս եկավ զբոսանքի: Հասնելով Լա Կոռնիշ՝ զգաց, որ շատ հոգնած է ու նստեց դարավանդում: Սուր շնչահեղձություն ունեցավ և երբ փորձեց վեր կենալ, ընկավ գետնին: Ինչ-որ մեկը շտապօգնություն կանչեց:

Երբ Սարան ու Էթելը հասան հիվանդանոց, Թոմաս Հարդինգն արդեն վախճանվել էր: Այդ օրը լրանում էր նրա՝ Բեյրութ գալու երեսուն տարին, ու Սարան տորթ էր թխել այդ օրը նշելու համար: Ճակատագիրը, սակայն, Թոմասի համար այլ բան էր նախատեսել:

Կնոջը հասցեագրված մի նամակ գտան, որում արտահայտել էր իր ցանկությունը. հուղարկավորությունը լինի ոչ թե հանրային, այլ միայն ընտանեկան:

Դա անիրական էր: Ցավալի լուրը վառոդի հոտի պես տարածվեց ողջ Բեյրութով մեկ: Նրա աճյունը տեղափոխեցին իրենց առանձնատան առաջին հարկ, և այն մարդկանց հոսքը, ովքեր ցանկանում էին իրենց ցավակցությունը հայտնել ընտանիքին, անվերջանալի էր:

Ավգուստուս Նյումանը Բեյրութ հասավ այն ժամանակ, երբ քրիստոնեական գերեզմանոցի՝ անգլիացիների համար նախատեսված հատվածում արդեն հողին էին հանձնել Թոմասի աճյունը: Իրիկնամուտ էր, ու այդտեղից նշմարվում էր ծովը: Օրը խաղաղ էր, տերև անգամ չէր շարժվում: Նյումանը կանգնեց նրա շիրմի առջև: Մարմարյա սպիտակ տապանաքարը՝ անուն-ազգանունով, ծննդյան ու մահվան տարեթվերով, նրանից մնացած միակ հուշն էր: Բազմաթիվ ծաղկեպսակների ծաղիկները սկսել էին թոշնել, և նրանց վրա տարածվում էր կրետների բզզոցը:

Նյումանը նայեց հեռավոր լեռներին: Լեռնաժերպերում դեռ պահպանվում էին ձյան վերջին հետքերը: Երևում էր նաև Սպիտակ լեռը, որն այնքան սիրում էր Թոմաս Հարդինգը:

55. ԼՅՈՒԴՎԻԳ ՖՈՆ ԳՅՈՏՑ

1940թ.

Թոմաս Հարդինգի մահը ծանր կորուստ եղավ Էթելի համար: Հայրն այնքան բան էր արել նրա համար, որ ինքը չէր կարող հիշել մի երջանիկ պահ, որն առնչություն չունենար հոր հետ: Թոմասը միշտ հոգ էր տարել այլոց մասին, միշտ փորձել էր դրական մթնոլորտ ստեղծել:

Այդ ամենին քաջատեղյակ էին Ավգուստուս Նյումանը, Այուբ Թաբիթը, Մաքս Շտեյնբերգը, Էդուարդ Բողոսյանը, ինչպես նաև նրանք, ովքեր քիչ էին առնչվել Թոմասի հետ, սակայն անչափ գնահատում էին նրա մեծահոգությունն ու մարդասիրությունը: Նրանցից մեկն էլ Զակի էլ-Ուաշն էր, ով, լուր ստանալով, գնաց Բեյրութ՝ իր ցավակցությունը հայտնելու Էթելին:

Կյանքն ու պատերազմը, սակայն, շարունակվում էին առանց դադարի: 1940 թվականի հունիսին նացիստները մտան Փարիզ, և ինքը՝ Հիտլերը, Բեռլինից նույնպես այնտեղ ուղևորվեց նորությունների լուսանկարչական ռեպորտաժի համար, որը դիտեցին Գերմանիան և աշխարհի բոլոր երկրները:

Քիչ օրեր անց Ֆրանսիայի ղեկավար, մարշալ Պետենը հրադադարի խնդրանքով դիմեց Գերմանիային և իր կառավարությունը տեղափոխեց Վիշի: Անմիջապես հայտնի դարձավ, որ այդ կառավարությունը համագործակցել է գերմանացիների հետ: Բեյրութում Բարձրագույն կոմիսար Գաբրիել Պյուոն բրիտանացիներին մեղադրեց Կատրուի գոլիստների ռազմավարությանն աջակցելու համար:

Սիրիան ու Լիբանանն իրենց հավատարմությունը հայտնեցին Ֆրանսիային: Բեյրութում գիտեին, թե ինչ էր տեղի ունենում: Սիրիացիները ֆրանսիական համաձայնագիրը չեղյալ հայտարարելու պահանջով դիմեցին Ազգերի լիգային:

Բեյրութում փորձում էին պահպանել իրենց առօրյա կենսակերպը, ինչը, սակայն, շատ դժվար էր: Մարդիկ վախենում էին շրջափակումից, քանի որ քաղաքը դա ապրել էր Առաջին աշխարհամարտի ընթացքում: Բոլորը սկսեցին տենդագին ձևով մթերք կուտակել ու դավեր նյութել: Դամասկոսի արաբները Վիշիի կառավարության կողմնակիցներն էին: Նրանց հակառակ՝ Բեյրութի բնակչության մեծամասնությունը դաշնակիցների կողմնակիցն էր: Բարդ ժամանակաշրջան էր, և ոչ ոք ոչ ոքի չէր վստահում:

Էթելը լիովին իրազեկված էր առկա բարդ իրավիճակի վերաբերյալ:

Հունիսին նա իր բրիտանական անձնագրի շնորհիվ գնաց Երուսաղեմ: Էթելն իր գործուղումը հիմնավորեց «ընտանեկան խնդիրներով», և Բարձրագույն կոմիսարը չհամարձակվեց մերժել նրան: Այնտեղ նա հանդիպեց դեսպանատան մի ներկայացուցչի՝ Ալեկ Կիրկբրայդի հետ: Հանդիպման նպատակը դրուզական Ջեբել գավառի և Արաբական լեգեոնի ներկայացուցիչների միջև կապեր հաստատելն էր: Դա միակ ուղին էր, որպեսզի վերահսկեին նրանց, ովքեր փորձում էին անկայուն վիճակ ստեղծել՝ հօգուտ նացիստական բլոկի՝ Բեռլինի, Հռոմի և Տոկիոյի: Էթելը գիտեր, թե ինչպես կարելի էր կապ հաստատել դրուզների հետ:

Դրանք դժվարին ամիսներ էին: Թե՛ մի կողմը, թե՛ մյուսն աշխատում էին իրավիճակը փոխել իրենց օգտին: Բեյրութում ստեղծված լարվածությունն ազդում էր նախագահի՝ Էդի վրա, ով ցանկանում էր, հարմարվելով նոր իրավիճակին, բարեփոխել այն:

Հոկտեմբերին Լոնդոնից ժամանեց գեներալ Կատրուն, ով պետք է ակտիվ քարոզարշավ ծավալեր՝ հանուն դե Գոլի կողմնակիցների և «Ազատ Ֆրանսիա» դիմադրության շարժման: Բրիտանական հատուկ ծառայության տարածքային բոլոր գործակալներին հանձնարարվեց աջակցել այդ ռազմավարությանը: Էթելն էլ Բեյրութում գտնվելու ընթացքում պետք է թաքցներ Կատրուին:

Նոյեմբերին Ֆրանսիայից՝ Վիշիից, ժամանեց Բարձրագույն նոր կոմիսար, գեներալ Անրի Դենցը: Նրա հետ եկել էին մի խումբ գերմանացի խորհրդականներ: Քիչ անց այդ մասին Էթելը լուր ուղարկեց Երուսաղեմ՝ ի գիտություն SIS-ի: Բարձրագույն կոմիսարի անձնակազմում գտնվող իր իրազեկիչների շնորհիվ նա իմացավ, որ գերմանացիներին թույլ էին տվել, որ օգտագործեին Հալեպին մոտակա օդանավակայանը, Լիբանանի նավահանգիստները, Սիրիայի ծովեզերքն ու երկաթուղին:

Այդ նույն երեկո Էթելը մի հեռախոսազանգ ստացավ Բարձրագույն կոմիսարի գրասենյակից: Նրան երկու ժամ անց հանդիպում էին նշանակել: Պետք է ներկայանար ինչ-որ զրույցի: Էթելի մտքով սոսկ մի բան էր անցնում. այն, որ իրեն բացահայտել են, ու այդ դեպքում չգիտեր, թե ինչ կարող էր տեղի ունենալ: Նա, սակայն, երբ այդ մասին խոսեց տարածաշրջանի MI 6-ի պատասխանատուի հետ, վերջինս նրան ներկայանալու թույլտվություն տվեց:

Էդուարդը պնդում էր, որ ուղեկցեր նրան, սակայն խնդրել էին, որ Էթելը մենակ ներկայանա: Չնայած դրան՝ Էդուարդը կնոջն ուղեկցեց մինչև դուռը և նրան սպասեց փողոցում: Էթելին ընդունեց Բարձրագույն կոմիսարի քարտուղարը, ով ասաց, որ նորանշանակ կոմիսարի

հետ եկած գերմանացի սպաներից մեկը ցանկանում է հանդիպել նրան: Քարտուղարի կարծիքով՝ խոսքն անձնական խնդրի մասին է:

Էթելը խիստ հուզված էր: Գաղափար անգամ չուներ, թե ով է գերմանացի այդ սպան: Նստեց այցելուների համար նախատեսված սրահներից մեկում ու սպասեց:

Մի քանի րոպե անց մտավ մի երիտասարդ սպա: Էթելը զարմանքով նայեց նրան: Գլխավոր շտաբի այդ կապիտանը շատ նման էր իր հորը, իսկ և իսկ Թոմաս Հարդինգն էր այն լուսանկարում, երբ նոր էր եկել Բեյրութ: Չգիտեր, թե ինչ անի կամ ինչ ասի: Գերմանացի զինվորականը չհապաղեց և ներկայացավ կատարյալ անգլերենով.

- Դու Էթել Հարդինգն ես: Թերևս ես քո խորթ եղբայրն եմ: Անուն-ազգանունս Լյուդվիգ ֆոն Գյոտց է, ես Թոմաս Հարդինգի և Աննա Լեֆեբրի որդին եմ: Մայրս մտերիմ է եղել մեր հոր հետ, արդյունքում՝ քսանվեց տարի առաջ ծնվել եմ ես:

Էթելը, որ զարմանքից քար էր կտրել, ստիպված նստեց: Ինչեր ասես, որ Բարձրագույն կոմիսարի գրասենյակ գալու ճանապարհին չէր մտածել: Սակայն այդ մեկը… Չգիտեր՝ ինչ անի… Չէր համարձակվում մոտենալ ու գրկել նրան: Սակայն դույզն-ինչ կասկած չուներ, որ երիտասարդ այդ գերմանացին Թոմաս Հարդինգի որդին է:

Էթելին նա պատմեց, որ այդ ամենի մասին իմացել է մոր մահից հետո, ով կտակին կից թողել էր մի ծրար, որի մեջ եղել է իր՝ որպես Թոմաս Հարդինգի որդին լինելու պաշտոնական հավաստագիրը: Ինքը կրում էր ֆոն Գյոտց ազգանունը, քանի որ նախքան իր ծնվելը մայրն ամուսնացել էր այդ մարդու հետ: Նամակում մայրն իրեն բացատրել էր, թե ով է Թոմաս Հարդինգը և ինչ առնչություն ունի Լիբանանի հետ: Ֆոն Գյոտցն ընդամենը երկու օր առաջ էր եկել Բեյրութ և երբ պարզել էր, որ իր հոր դուստրը դեռ այդտեղ է, հանդիպում էր խնդրել:

Այդ ժամանակ Էթելը մոտեցավ ու գրկեց նրան: Շատ հուզված էր ոչ միայն եղբորը գտնելու, այլև այն բանի համար, որ հայրը մահացել էր՝ որդու մասին ոչինչ չիմանալով: Կամ գո՞ւցե գիտեր… Նա հիշում էր, որ հորից մի անգամ լսել է Աննա Լեֆեբր անունը: Իրավիճակն իրոք արտառոց էր. իր եղբայրը թշնամի խմբավորման մեջ էր, սակայն լինելով մեծահոգի ու նրբանկատ՝ եկել էր իր հետ ծանոթանալու:

Քիչ անց Էթելը նստեց Լյուդվիգի դիմաց, նայեց նրա աչքերի մեջ ու հարցրեց.

- Իսկ հիմա ի՞նչ անենք:

- Ոչինչ, Էթե՛լ: Ես գերմանացի սպա եմ ու պարտավոր եմ կատարել պարտքս: Վաղը մեկնում եմ Դամասկոս, հետո գնալու եմ Թեհրան: Գուցե մենք այլևս չտեսնենք միմյանց: Ես չգիտեմ, թե ինչ տեղի կունենա, բայց ուզում եմ, որ իմանաս՝ ես կտակ եմ գրել: Գերմանիայում հիմա դա պարտադիր է արտասահմանում զինվորական հանձնարարություն ունեցող սպաների համար: Մենք ապրում ենք մշտապես մեզ ուղեկցող վտանգի պայմաններում: Ինչպես տեսնում ես, ես մինուճար զավակ եմ և արել եմ այն, ինչ մայրս է ինձ համար արել: Ես նոտարական փաստաթղթով քեզ նշանակել եմ որպես միակ ժառանգորդի: Եթե անգամ մեկս մյուսին չենք ճանաչում, այնուամենայնիվ դու իմ քույրն ես: Մեր հայրը նույն անձնավորությունն է, և ինչպես իր նամակում մայրս է ինձ բացատրել, նա մեծ մարդ է եղել: Նրա մասին ավելին չգիտեմ: Միայն այս նկարն ունեմ…

Լյուդվիգը բացեց բաց դեղնավուն մի ծրար ու հանեց մի լուսանկար: Էթելն անմիջապես ճանաչեց իրենց տան պատշգամբը, որտեղ գեղեցկագույն մի կին գրկել էր իր հորը, և երկուսն էլ ժպտալով նայում էին լուսանկարչական խցիկին: Նրանց հետևում նշմարվում էր ամենահաս Սպիտակ լեռը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Կապիտան ֆոն Գյոտցը զոհվեց «Աֆրիկա Կորպսի» մարտական գործողությունների ընթացքում՝ 1943 թվականի ապրիլին: Էթելը մինչ այն պահը, երբ նրա մահը ծանուցող հեռագիր ստացավ գերմանական բանակի տեղեկատվության ծառայությունից, նրանից որևէ լուր չուներ: Հետագայում՝ 1946 թվականին, Էսսենից մի նոտար Էթելի հետ կապի մեջ մտավ: Թեև Լյուդվիգ ֆոն Գյոտցի ֆինանսական բոլոր միջոցներն ու դրամագլուխը պատերազմի ընթացքում ոչնչացել էին, այնուամենայնիվ դաշնակիցների ռմբակոծություններից փրկվել էին նրա հայրական տունը, գործարանները, ու լիովին կանգուն էր մնացել գյուղի առանձնատունը: Այդ ամենը գտնվում էր Էթելի տրամադրության ներքո: Մնում էր, որ նա հանձնարարականներ տար կամ նշանակեր իր ներկայացուցչին, ով կստանձներ իր սեփականության կառավարումը:

Եղբոր մահվան լուրը ստանալուց հետո Էթելն այնպես էր լալիս, որ կարծես ամբողջ կյանքում ճանաչել էր նրան: Նա Թոմաս Հարդինգի մի մասն էր, ով կուլ էր գնացել դաժան ընդհարմանը:

Ավգուստուս Նյումանը վախճանվեց Իսրայելի պետության անկախության հռչակումից երկու օր անց՝ 1946 թվականի մարտի 14-ին: Նա ասես սպասում էր այդ երազանքի իրականացմանը: Իր ողջ ունեցվածքը նա կտակեց նորաստեղծ պետությանը՝ բացի կաշեկազմ և մանր ձեռագրով գրված օրագրից, որում շարադրված էր այն ամենը, ինչ նա արել էր և ինչ մտահոգացումներ էր ունեցել վերջին քառասուն տարիներին: Օրագրում գրված շատ բաներ նա քննարկել էր Թոմաս Հարդինգի հետ, այդ իսկ պատճառով Երուսաղեմից մի նոտար այն ուղարկեց Էթելին:

Էդուարդ Բողոսյանը Միջերկրական ծովում անհետ կորավ 1942 թվականին, երբ ուղևորվում էր Կիպրոս, որպեսզի Լիբանան գալու փաստաթղթերը ձևակերպելու գործում օգներ մի հայ ընտանիքի: Նրանք փախստականներ էին Սալոնիկից և կրում էին Բողոսյան ազգանունը: Էթելը համակվեց անհուն վշտով, սակայն որոշեց Բեյրութում մնալ մինչև պատերազմի ավարտը: Նա համոզված էր, որ Ջոնի համար այդտեղ ավելի ապահով է, քան Լոնդոնում: Բացի դրանից՝ այդ քաղաքում կարևոր առաքելություն ուներ կատարելու և չէր ուզում ու չէր էլ կարող հեռանալ այդտեղից:

Մաքս Շտեյնբերգը 1946 թվականին գաղթեց Միացյալ Նահանգներ: Նրան հաջողվեց որպես պրոֆեսոր աշխատանքի անցնել Հարվարդի համալսարանում, ինչպես նաև արվեստի հանրահայտ ամսագրերից մի քանիսում հրապարակել իր լուսանկարչական աշխատանքները: 1952 թվականին նա վճռեց բռնել հայրենադարձության՝ նորանկախ Իսրայել վերադառնալու ճանապարհը: Այդտեղ նա աշխատանքի անցավ Հրեական համալսարանում: Վիեննայի կահույքապահոցը, որտեղ Էթել ու Էդուարդ Բողոսյանները պահ էին տվել նրա ունեցվածքը, 1945 թվականի փետրվարին հիմնովին կործանվել էր հրդեհող ռումբից: Պահոցի բանալին, որը ժամանակին Էթելը հանձնել էր նրան, Շտեյնբերգը միշտ պարանոցին գցած պահեց:

1948 թվականին Էթել Հարդինգը, ով արդեն իր հին ազգանունն էր կրում այն բանից հետո, երբ Բեյրութի դատական ատյաններն արձակեցին նրա ամուսնուն՝ Էդուարդ Բողոսյանին զոհված ճանաչելու վճիռը, որդու՝ Ջոնի հետ վերադարձավ Լոնդոն, որպեսզի նա միջնակարգ կրթություն ստանա Անգլիայում: 1951 թվականին Էթելը հաղթող ճանաչվեց Քեմբրիջի համալսարանի արաբերենի ամբիոնի հայտարարած մրցույթում և անցավ դասախոսական աշխատանքի: 1953 թվականին նա սկսեց գրել իր գիրքը՝ նվիրված Լիբանանի Հանրապետության կազմավորմանը:

Տարիներ անց, երբ լրագրողները նրան այդ տարիներին առնչվող հարցեր էին ուղղում, նա ասում էր, որ ամեն օր՝ իրիկնամուտին, հիշում է մայրամուտը. սակայն՝ որտե՞ղ, հստակորեն չէր մտաբերում: Հայացքի առջև միայն հառնում էին մայրամուտի արևով լուսավորված դղյակի ավերակները, իսկ դրանց հետևում՝ ասես հեռվում՝ օդի մեջ ծփացող Սպիտակ լեռը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ **3**

Ի-ԻՆ ՄԱՍ
ԼԵՎԱՆՏԻ ԵՐԿԻՐԸ
1. ԼԻԱԿԱՏԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 7
2. ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԻՈՒԹՅՈՒՆ 21
3. ԿԱՐՈԼԻՆ ՎԵՅԼԵՐ 49
4. ԿՅԱՆՔ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 66
5. ԿԱՐՈԼԻՆԻ ԵՐԱԶՆԵՐԸ 86
6. ԳԻՏԱՐՇԱՎ ԴԵՊԻ ՄԻՋԱԳԵՏՔ 101
7. ԴԱԺԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 120
8. ՈՐՈՆՈՒՄԸ 142
9. ԲԵՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՑԻ 154
10. ՄԵՔՔԱ ԵՎ ՄԵԴԻՆԱ 191
11. ՓՈԹՈՐԻԿ ՀՈՐԻԶՈՆՈՒՄ 207
12. ՈՐՈՇՈՒՄ 214
13. ՀՐԱՇՔԸ 226
14. ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ 244
15. ԱՂԱՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ 253
16. ՍԱՅՔՍ-ՊԻԿՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ 269
17. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԻՐԱՔ 274
18. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 285
19. ԴԻՏՈՐԴԸ 300
20. ՄԵԾ ԼԻԲԱՆԱՆ 310
21. ՍԱՐԱ 319
22. ԵՐԿԻՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ 324
23. ԱՔԱՂԱՂԸ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ 335
24. ՈՒՄՄԱՆ 351
25. ՃԱՆՃԵՐԻ ՏԻՐԱԿԱԼԸ 356
26. ՀԵՌԱՎՈՐ ԵՐԱԶ 363
27. ԱՐԵՎԵԼՔԻ ՄՈԳԱԿԱՆ ՀՄԱՅՔԸ 372
28. ԿԱՍԿԱԾՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ 380
29. ԿՐԿԻՆ ԲԱԱԼԲԵԿ 390
30. ԱՄԵՆ ԻՆՉ ԳՐՎԱԾ Է 398
31. ԼՈՆԴՈՆ 407

32. ՃԻՇՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 413
33. ԳԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ՏԱՐԱԾՔԸ 422
34. ԴԱՄԱՍԿՈՍԻ ՌՄԲԱԿՈԾՈՒՄԸ 430
35. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 437

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՄԵԾ ԼԻԲԱՆԱՆԸ

36. ՄՈՐԵԽԻ ՏԱՐԻՆ 445
37. ԷԹԵԼ ՀԱՐԴԻՆԳ 451
38. ԷԴՈՒԱՐԴ ԲՈՂՈՍՅԱՆ 457
39. ՎԻԵՆՆԱ 463
40. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ 471
41. ԿԱՀՈՒՅՔՆԵՐԻ ՊԱՀՈՑԸ 477
42. ԱՇԽԱՐՀԸ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ 488
43. ԱՆԳԼԻԱՑՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ 496
44. ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԴԱՍ 500
45. ԱՆՊԵՏՔ ԹՂԹԻ ԿՏՈՐ 509
46. ՊԱՆԴՈՐԱՅԻ ԱՐԿՂԸ 514
47. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ 522
48. ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԼ-ԲԱՆՆԱՅԻ ՀԵՏ 531
49. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ 537
50. ՈՍԿԵԶՕԾ ՔԱՐԵՐԸ 553
51. ՍՊԱՌՆԱԼԻՔԸ 558
52. ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ 563
53. ԴԱՖՆԻՍ 572
54. ԱՆՍՊԱՍԵԼԻՆ 583
55. ԼՅՈՒԴՎԻԳ ՖՈՆ ԳՅՈՏՑ 587
ՎԵՐՋԱԲԱՆ 591

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. Հ. Գուարչ

«ՍՊԻՏԱԿ ԼԵՌԸ»

Ամալյային՝ կնոջս, ընկերուհուս, բարեկամուհուս

Համակարգչային ձևավորումը՝ Կարինե Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Պալոմա Հեռնանդես Վիսիանայի,
Արմեն Պատվականյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 37,25:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015